ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1918-1939

9(Ա)7
Ն-93

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1918—1939 թթ.

Թույլատրված է ՍՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության կողմից որպես դասագիրք պետական համալսարանների պատմության ֆակուլտետների ուսանողների համար

ՀՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т Востоковед. АН Арм. ССР

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1983

ԳՄԴ 63.3(0) 61y73
Ն 930

Գրախոսներ՝ Բաշկիրական պետական համալսարանի
բնդհանուր պատմության ամբիոն,
ՌԻՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ՝
Ի. Ս. ԳԱԼԿԻՆ (գլխավոր խմբագիր), Ա. Դ. ԿՈԼՊԱԿՈՎ, Ն. Ֆ. ՄՈՉՈՒԼՍԿԻ, Մ. Ի. ՕՐԼՈՎԱ,
Վ. Պ. ՍՄԻՌՆՈՎ, Օ. Ս. ՍՈՐՈԿՈ-ՑՅՈՒՊԱ, Ե. Ֆ. ՅԱԶԿՈՎ

Ն 930 Նորագույն պատմություն. 1918—1939 թթ.։ Դասագիրք բուհերի
պատմ. ֆակ. համար/խմբ. կոլեգիա՝ Ի. Ս. Գալկին (գլխ. խմբ.) և
ուրիշ.— Եր.։ Երևանի համալս. հրատ., 1983.— 664 էջ։
Վերնախորագր.՝ Երևանի պետ. համալս.։

Համալսարանական դասընթացի ծրագրի համաձայն դասագրքի առաջին մասում շարադրվում է Եվրոպայի և Ամերիկայի երկրների 1918—1939 թթ. պատմությունը։ Հատուկ գլուխներ են նվիրված կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի վերլուծությանը, միջազգային հարաբերություններին և բանվորական շարժմանը։ Առավել կարևոր թեմաներին կից տրված են պատմագրական ակնարկներ։

Հ $\frac{0504040000-04}{704(02)-83}$ 17—82

ԳՄԴ 63.3(0) 61y73
9(Մ)71

Դասագիրքը պատրաստել է Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի նոր և նորագույն պատմության ամբիոնի կոլեկտիվը

НОВЕЙШАЯ ИСТОРИЯ
1918—1939 гг.
(на армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1983

© Издательство «Высшая школа», 1974
© Երևանի համալսարանի հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1983

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասագրքում լուսաբանվում է համաշխարհային պատմության այն ժամանակաշրջանը, որը կոչվում է նորագույն պատմություն։ Նորագույն պատմության ելակետը Ռուսաստանում 1917 թ. տեղի ունեցած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակն է, որը դրեց նոր դարաշրջանի՝ կապիտալիզմից սոցիալիզմին և կոմունիզմին մարդկային հասարակության անցնելու դարաշրջանի սկիզբը։ Այդ անցումը տեղի է ունենում երկու հասարակական սիստեմների՝ խորտակվող կապիտալիստական սիստեմի և ծագող առաջադիմական սոցիալիստական սիստեմի հակամարտության պայմաններում։

Նորագույն պատմության սկիզբը կապիտալիստական երկրներում նշանավորվեց 1917—1923 թթ. հեղափոխական վերելքով, որը հասցրեց էական քաղաքական ու սոցիալական փոփոխությունների։ 1924 թվականից սկսվեց կապիտալիզմի կարճատև կայունացումը, որին հետևեց 1929—1933 թթ. համաշխարհային դաժան տնտեսական ճգնաժամը, որը խորը կերպով ցնցեց կապիտալիզմը։

Նորագույն պատմության դասագրքի առաջին մասն ավարտվում է այն իրադարձությունների լուսաբանությամբ, որոնք բնութագրում են կապիտալիստական երկրների 1934—1939 թթ. ներքին ու արտաքին քաղաքականությունը։ Իմպերիալիստական լագերում գոյություն ունեցող հակասությունների ուժեղացումը, որը տեղի ունեցավ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով, 1939 թ. հասցրեց երկրորդ համաշխարհային պատերազմին։

Համաշխարհային պատմության՝ երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելուց մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը քննարկվում է նորագույն պատմության դասագրքի երկրորդ մասում։

* * *

Նորագույն ժամանակի համաշխարհային պատմության պրոբլեմների գիտական մշակման համար առաջնակարգ և հիմնարար նշանակություն ունեն Վ. Ի. Լենինի աշխատությունները։

Վ. Ի. Լենինը ոչ միայն մարքսիզմի գաղափարների շարունակողն էր, այլև սոցիալիստական հեղափոխության և մեր դարաշրջանի սոցիալիստական վերափոխությունների մեծ տեսաբանը, ինչպես նաև արդիականության մեծ պատմաբանը։ Լենինի հարյուրավոր մեծ ու փոքր աշխատությունները, որոնք նա գրել է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից մինչև իր մահը՝ 1924 թ., ընկած ժամանակամիջոցում, լենինյան գաղափարների, մտքերի անգնահատելի հարստությունը վկայում են այն մասին, որ Լենինը սուր կերպով արձագանքում էր արդիականության բոլոր էական իրադարձություններ-

ին, նրանց մեջ որսալով ապագա զարգացման ուղենիշները, էքսկուրսներ կատարելով մարդկային հասարակության հեռավոր անցյալը։

Լենինի ստեղծագործության մեջ հատկապես կարևոր է Ռուսաստանում տեղի ունեցած պրոլետարական մեծ հեղափոխության օրինաչափ բնույթի և համաշխարհային զարգացման մեջ այդ հեղափոխության բացած նոր դարաշրջանի խոր հիմնավորումը։ Այդ դարաշրջանի գլխավոր շարժիչ ուժերի լենինյան վերլուծությունը, հասարակական զարգացման հիմնական տենդենցների բնութագրումը, նոր պետական և հասարակական-քաղաքական ինստիտուտների և տնտեսական կազմակերպությունների հանճարեղ ստեղծումն անանց նշանակություն են ունեցել և ունեն ժամանակակից հասարակության գիտական պատմագրության զարգացման և կատարելագործման համար։

Մեր երկրում Վ. Ի. Լենինի երկերի լիակատար ժողովածուի հրատարակությունը հետազոտողներին հնարավորություն է տալիս պարզել Վլադիմիր Իլիչի մղած հետևողական պայքարն ինչպես աջ օպորտունիզմի, ռեֆորմիզմի և ռևիզիոնիզմի, այնպես էլ կոմունիստական շարժման մեջ «ձախության» մանկական հիվանդության, աղանդավորության ու դոգմատիզմի, կեղծ հեղափոխական ճոռոմախոսության դեմ։ Լենինի նշանակալի թվով աշխատություններ վերաբերում են Կոմունիստական ինտերնացիոնալի գաղափարական և կազմակերպչական կառուցվածքին, Կոմինտերնի կոնգրեսներին Վ. Ի. Լենինի մասնակցությանը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի համար և բանվորական շարժման մեջ բուրժուական նացիոնալիզմի դրսևորումների դեմ նրա մղած պայքարին։

Վ. Ի. Լենինի երկերը նաև չափազանց կարևոր աղբյուր են, որոնք լուսաբանում են առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո առաջացած միջազգային հարաբերությունների տարբեր ասպեկտները։ Լենինի աշխատություններում մենք գտնում ենք կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական ձևերի վերլուծությունը, առանց որի չի կարելի հասկանալ և բացահայտել հաշտության Վերսալ-վաշինգտոնյան սիստեմը ստեղծած իմպերիալիստական տերությունների քաղաքականության աղբյուրներն ու շարժիչ ուժերը։ Լենինյան աշխատություններում լուսաբանված են իմպերիալիստական տերությունների քաղաքականության առանձնահատկությունները, տրված է ետպատերազմյան ժամանակաշրջանում կապիտալիստական աշխարհի հիմնական հակասությունների վերլուծությունը։

Պատմագրության ասպարեզում մարքս-լենինյան տեսության հետագա զարգացում հանդիսացան ՍՄԿԿ ծրագրային փաստաթղթերը, ՍՄԿԿ համագումարների և Կենտկոմի պլենումների որոշումները։ ՍՄԿԿ-ի և միջազգային կոմունիստական ու բանվորական կուսակցությունների խորհրդակցությունների նյութերում տրված է նորագույն ժամանակի համաշխարհային զարգացման տենդենցների տեսական լուսաբանությունը, որը հեշտացնում է նորագույն ժամանակի համաշխարհային պատմության գծով նոր պատմական հետազոտությունների և ընդհանրացնող աշխատությունների ստեղծումը։

Մարքս-լենինյան տեսության զարգացման մեջ արժեքավոր ներդրում են կատարել կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ծրագրային փաստաթղթերը, ինչպես նաև միջազգային կոմունիստական շարժման ղեկավարների՝ Ա. Գրամշիի, Գ. Գեորգիու-Դեժի, Գ. Դիմիտրովի, Ժ. Դյուկլոյի, Խ. Դիասի, Պ. Դատտի, Դ. Իբարուրիի, Բ. Կունի, Յա. Կադարի, Վ. Պիկի, Հ. Պոլիտի, Մ. Թորեզի, Պ. Տոլյատտիի, Է. Թելմանի, Վ. Ուլբրիխտի, Ու. Ֆոստերի աշխատությունները (տե՛ս մատենագիտական տեղեկատուն)։

Նորագույն պատմության ուսումնասիրության ասպարեզում արագ առաջադիմության կարևորագույն արդյունքը եղավ ընդհանրացնող կոլեկտիվ աշխատությունների, տեղեկատու հրատարակությունների և ուսումնական ձեռնարկների ստեղծումը ՍՍՀՄ-ում։ Այդ աշխատություններից ամենից առաջ հարկավոր է առանձնացնել ֆունդամենտալ «Համաշխարհային պատմությունը», որի 8—10-րդ հատորները լուսաբանում են նորագույն ժամանակի պատմության ամբողջ ժամանակաշրջանը։ Այդ աշխատության մեջ ցույց է տրված, թե ինչպես Հոկտեմբերյան հեղափոխության և կապիտալիստական երկրներում նրան հետևած հեղափոխական ճգնաժամի ազդեցության ներքո խարխլվեց իմպերիալիստների տիրապետությունը և ինչպես էին իմպերիալիստները փորձում վերականգնել աշխատավոր զանգվածների շահագործումն իրենց երկրներում և ուժեղացնել գաղութների ժողովուրդների կեղեքումը։ «Համաշխարհային պատմության» մեջ բացահայտված է Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ազդեցությունն առաջադիմական ուժերի աճի վրա, որն անընդհատ աճող և սրվող իմպերիալիստական հակասությունների պայմաններում հասցրեց աշխարհի կապիտալիստական սիստեմի նոր ցնցումների, որոնք ցայտունորեն արտահայտվեցին կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ և երրորդ փուլերում։

«Համաշխարհային պատմության» սինթեզող աշխատության հրատարակումը խթան հանդիսացավ առանձին երկրների վերաբերյալ ընդհանրացնող աշխատություններ և նորագույն պատմության ուսումնական ձեռնարկներ ստեղծելու համար (տե՛ս մատենագիտական տեղեկատուն)։

Նորագույն պատմության ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների ուսումնասիրության համար կարևոր աղբյուր են ՍՍՀՄ արտգործմինիստրության պատմադիվանագիտական վարչության հրատարակած փաստաթղթերը («Документы внешней политики СССР»)։ Նորագույն ժամանակի միջազգային հարաբերությունների պատմության գծով եղած ընդհանուր աշխատություններից, որոնք առավել լիակատարությամբ են լուսաբանում իրադարձությունները, անհրաժեշտ է առանձնացնել Ա. Ա. Գրոմիկոյի, Ի. Ն. Զեմսկովի, Վ. Ա. Զորինի, Վ. Ս. Սեմյոնովի, Ս. Դ. Սկազկինի և Վ. Մ. Խվոստովի խմբագրությամբ լույս տեսած «История дипломатии»-ի III հատորի երկրորդ հրատարակությունը, ինչպես նաև Բ. Ն. Պոնոմարյովի, Ա. Ա. Գրոմիկոյի և Վ. Մ. Խվոստովի խմբագրությամբ լույս տեսած «История внешней политики СССР» աշխատությունը, մ. 1-ին, 1917—1945 թթ.։

Ինչպես մասնակի պրոբլեմներին նվիրված սովետական պատմաբանների առանձին մենագրությունները, այնպես էլ սովետական գիտնականների ընդհանրացնող աշխատությունները պատմական մատերիալիզմի տեսանկյունից տալիս են համաշխարհային պատմական պրոցեսի մեկնաբանությունը։ Այդ աշխատություններում բացահայտվում է ժողովրդական զանգվածների բազմակողմանի դերը մարդկային հասարակության առաջընթացում, պարզաբանվում դասակարգային պայքարի ներգործությունը պատմական պրոցեսի ընթացքի վրա։ Ընդ որում ընդգծվում է, որ պատմական պրոցեսի ընդհանուր առաջընթացում լինում են և՛ հապաղումներ, և՛ ետընթացություն, սակայն ամբողջությամբ վերցրած համաշխարհային պատմական զարգացման մեջ տեղի է ունենում շարժում մարդկային հասարակության զարգացման ստորին ձևերից դեպի ավելի բարձր ձևերը։

Սովետական պատմաբանների աշխատություններում մեծ նշանակություն է տրվում բանվորական շարժման դերին, բուրժուական նացիոնալիզմի ու ռա-

սիզմի դեմ մղվող պայքարին։ Սովետական պատմագրությունը ձգտում է ցույց տալ բոլոր ժողովուրդների ավանդը համաշխարհային քաղաքակրթության մեջ, նա մերժում է և՛, այսպես կոչված, «եվրոպոցենտրիզմը», և՛ նացիոնալիստական ու ռասիստական կոնցեպցիաների մյուս բոլոր տարատեսակները, այդ թվում «ասիացենտրիզմը», «ատլանտիզմը» և այլն։

Սովետական պատմագրությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից բացահայտում է իմպերիալիստական տերությունների գաղութային քաղաքականության ագրեսիվ և ռեակցիոն էությունը և լուսաբանում ժողովուրդների հայրենասիրական ազատագրական ավանդույթներն ու նրանց սոցիալ-դասակարգային հեղափոխական շարժումները։ Սովետական պատմաբանների աշխատություններում արժանի տեղ է հատկացվում առանձին երկրների հասարակության արտադրողական ուժերի զարգացմանը, նրանց սոցիալ-տնտեսական կառուցվածքի փոփոխություններին, նրանց քաղաքական, իրավական ու գաղափարական վերնաշենքի բոլոր ձևերին։ Սովետական պատմաբանների աշխատությունների կարևորագույն պրոբլեմը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի զարգացման ու խորացման, համաշխարհային սոցիալիստական սիստեմի ստեղծման և նրա՝ հասարակական զարգացման վճռական ուժի վերածվելու պրոցեսի, բազմակողմանի լուսաբանումն է։

Այն ժամանակ երբ սովետական պատմական գիտությունը, հենվելով մարքսիստական-լենինյան տեսության վրա, տարեցտարի ավելի ու ավելի արդյունավետ է զարգանում, պատմագիտական միտքը և պատմական գիտությունը կապիտալիստական երկրներում ապրում են գաղափարական ճգնաժամ, որը բարդանում է կապիտալիստական աշխարհը ցնցող քաղաքական ու սոցիալական սուր կատակլիզմներով։

Բուրժուական պատմագիտության ճգնաժամի հիմքը միասնական համապարփակ կապիտալիստական սիստեմի խորտակումն էր հեղափոխական ուժերի հարվածներից։ Դա անխուսափելիորեն հասցրեց կապիտալիզմի պատմության ջատագովական տեսությունների խարխլման, տեսություններ, որոնք լուսաբանում էին նրա կարծեցյալ անսասանությունը։ Պատմությունը պատմական պրոցեսի նախաբեմ հանեց նրա իսկական ստեղծողին՝ պրոլետարիատին, կապիտալիստական հասարակության գերեզմանափորին։

Կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի խորացումը և իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը ծնեցին բուրժուական գաղափարախոսության նոր տարատեսակներ, որոնք կապիտալիստական արտադրահարաբերությունների անկման պրոցեսի արտահայտությունն են և արտացոլումը։

Ժամանակակից կապիտալիզմի համար ամենաճակատագրական գաղափարներից մեկը զարգացման մարքսիստական գաղափարն է, մարդկային հասարակության դինամիկայի, մասնավորապես հասարակության կապիտալիստական սիստեմի դինամիկայի օրենքը, որին ժամանակակից բուրժուական քաղաքագետները ու գիտնականները հակադրում են կապիտալիստական կայունությունը, քանի որ դինամիկայի օրենքի գործողությունն անխուսափելիորեն տանում է դեպի կապիտալիստական սիստեմի կործանում։

Սակայն ժամանակակից բուրժուական շատ պատմաբաններ ու փիլիսոփաներ չեն կարող չնկատել կապիտալիստական հասարակության անտագոնիստական խոր հակասությունները։ Նրանք փորձում են ապացուցել, որ այդ անհաղթահարելի հակասությունները հատուկ են ոչ միայն կապիտալիստական հասարակությանը, այլև ընդհանրապես մարդկային բնությանը, որ սոցիալական հակասությունների լուծման վտանգը կախված է ոչ թե կապիտալիստական հասարակության վրա, այլ ամբողջ մարդկային գոյության վրա։ Նման դատողությունների քաղաքական իմաստը կապիտալիստական կարգերի դեմ բանվոր դասակարգի պայքարի ջլատման ցանկությունն է։

Բուրժուական պատմագրության գաղափարական ճգնաժամն արտահայտվում է նաև բուրժուական պատմաբանների լագերում սկսված շերտավորմամբ։ Բուրժուական պատմաբանների առավել ռեակցիոն շրջաններն ավելի ու ավելի հաճախ են սկսել մասնակի թեմաների դիմել, պատմական հետազոտություններում բռնել են «քաղաքականացման» ու բացահայտ ջատագովության ուղին։ Կատարելագործելով հետազոտությունների տեխնիկան և ամեն տարի հրապարակելով մենագրություններ ու ընդհանրացնող բազմահատոր աշխատություններ, աջ թևի բուրժուական պատմաբանները բացահայտորեն պատմությունը վերածել են ռեակցիոն կառավարող դասակարգերի ծառայի։ Բուրժուական քաղաքագետները պատմությունն օգտագործում են կապիտալիստական կարգերի պահպանման և սոցիալիզմի ու մարքս-լենինյան գաղափարախոսության դեմ պայքարելու նպատակով մասսաների վրա մշտական գաղափարական ներազդման համար։

Բուրժուական պատմաբանների մյուս մասը, ջանալով հաղթահարել մեթոդաբանական դիրքերի անօգտակարությունը, դիմում է սոցիալ-տնտեսական պատմության, բանվորական ու սոցիալիստական շարժման ուսումնասիրությանը, ձեռնարկում համաշխարհային պատմական պրոցեսի կարևոր պրոբլեմների սիստեմատիկ լուսաբանման փորձեր։ Պատմության մատերիալիստական ընբռնման մարքսիստական մեթոդաբանության հետևողական զարգացումն սկսել է ավելի ու ավելի մեծ ազդեցություն գործել կապիտալիստական երկրներում առաջադեմ պատմաբանների շարքերի ձևավորման ու համախմբման վրա։ Եվրոպական ու ամերիկյան երկրների պատմագրության մեջ առաջադիմական լագերի ուժեղացումը պատմագրական մտքի և պատմագրության ժամանակակից զարգացման բնորոշ գծերից մեկն է։

Որպես հանրագումար կարելի է ասել, որ ժամանակակից պատմագիտության մեջ տեղի ունեցող պրոցեսների էական գիծը մարքս-լենինյան և բուրժուական պատմագրությունների միջև գոյություն ունեցող պայքարն է։ Մի կողմից, սոցիալ-քաղաքական պրոցեսների ազդեցության տակ տեղի է ունենում բուրժուական պատմագրության մեթոդաբանական հիմքերի ճգնաժամի հետագա խորացում, որը բնութագրվում է հասարակության առաջադիմական զարգացման գաղափարներից անսքող կերպով հրաժարվելով (Առնոլդ Թոյնբին Անգլիայում, Պիտիրիմ Սորոկինն ԱՄՆ-ում և այլն)։ Ավելի ու ավելի հաճախ է նրկատվում «հասարակական առաջադիմություն» հասկացության փոխարինում «սոցիալական փոփոխություններ» հասկացությամբ, որն, ըստ էության, ժխտում է հասարակական զարգացման առաջընթաց բնույթը։ Այդ պատճառով չի ընդունվում և դուրս է մղվում պատմական տերմինաբանությունը, օրինակ, «դասակարգ», «զարգացում» և այլ տերմիններ։ Ավելի ու ավելի պարզորոշ ու բացահայտ է հանդես գալիս այնպիսի փիլիսոփայական-պատմագիտական հոսանքների մարտնչող իդեալիստական հիմքը, ինչպիսիք են նեոթոմիզմը, էկզիստենցիալիզմը, պրագմատիզմը։

Մյուս կողմից, ավելի բարձր մակարդակի է հասել սովետական պատմագիտությունը, որը հաջողությամբ իրացնում է իրեն ընձեռված հնարավորությունները՝ առաջավոր մեթոդաբանության հիման վրա ստեղծելու նոր և նորագույն ժամանակի հասարակական զարգացման լիակատար, գիտականորեն հավաստվող պատկերը։ Անգնահատելի է սովետական պատմագիտության դերը

սոցիալիզմի մյուս երկրներում մարքս-լենինյան պատմագիտության առաջացման, ձևավորման ու զարգացման վրա ունեցած ազդեցության ասպարեզում։ Մարքս-լենինյան պատմական մեթոդաբանությունն ավելի ու ավելի լայնորեն է թափանցում կապիտալիստական աշխարհի արտասահմանյան երկրների առավել առաջադեմ պատմաբանների պատմական հետազոտությունների մեջ՝ առաջադրելով նորանոր հարցեր, առաջարկելով նոր լուծումներ, նրանց հրավիրելով մարքսիստ պատմաբանների հետ արդյունավետ երկխոսությունների և գիտական համագործակցության։ Արտասահմանյան պատմաբանների հետ երկխոսություն սկսելով, մարքսիստ պատմաբանը միշտ պետք է հիշի, որ գաղափարախոսության հարցերում կոմպրոմիսներ չեն կարող լինել. կոմունիստական կուսակցականությունը պատմաբանից պահանջում է գիտության մեջ անկոմպրոմիս պայքար մղել ընդդեմ մարքս-լենինյան տեսությունը «մաքրելու», «ուղղելու» հակակոմունիստների ամեն տեսակ փորձերի։ Մարքսիզմ-լենինիզմն անհաշտ պայքարի է կոչում ընդդեմ բուրժուական գաղափարախոսության, նրա բոլոր տարատեսակների դեմ։

ԳԼՈՒԽ 1

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը և կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու սկիզբը

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ամբողջ մարդկության ճակատագրում դրեց արմատական շրջադարձի, սոցիալական շահագործման և ազգային կեղեքման հեղափոխականորեն ոչնչացման, ամբողջ աշխարհում կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու սկիզբը։ «Կապիտալիզմի և նրա հետքերի ոչնչացումը, կոմունիստական հասարակակարգի հիմքերի հաստատումը կազմում են համաշխարհային պատմության այժմ սկսված նոր դարաշրջանի բովանդակությունը»[1], նշում էր Վ. Ի. Լենինը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը կանխորոշված էր ոչ միայն Ռուսաստանի, այլև ամբողջ մարդկության նախորդ հասարակական զարգացմամբ։ Հաղթական սոցիալիստական հեղափոխության դարաշրջանի սկսվելը հնարավոր դարձավ այն պատճառով, որ «ընդհանրապես տեխնիկայի, հատկապես հաղորդակցության ճանապարհների հսկայական առաջադիմությունը, կապիտալի և բանկերի հսկայական աճը հասցրին նրան, որ կապիտալիզմը հասունացավ և գերհասունացավ։ Նա անցկացրեց իր ժամանակը։ Նա մարդկության զարգացման ամենառեակցիոն արգելք դարձավ»[2]։ Կապիտալիզմի գերհասունացումն արտահայտվում էր այն բանում, որ նրա իմպերիալիստական փուլում վաղուց ի վեր ձևավորված կապիտալիստական արտադրահարաբերությունները վերածվեցին արտադրողական ուժերի զարգացման արգելակի։ Փորձելով դուրս գալ անհաշտելի հակասությունների աքցանից, իմպերիալիզմը կանգնեց ժողովուրդներին աղետներ ու կործանում բերող իմպերիալիստական պատերազմների սանձազերծման, բանվոր դասակարգի նկատմամբ մոնոպոլիաների կեղեքումն ուժեղացնելու և իմպերիալիստական պետության կողմից նրա ստրկացման ուղուն։ Ուժեղացավ ազգային ու գաղութային ճնշումը։ Իմպերիալիզմի բերած աղետներից մարդկային հասարակությանը կարող էր փրկել միայն պրոլետարիատը, ժամանակակից մարդկային հասարակության ամենաառաջավոր, կազմակերպված և հեղափոխական դասակարգը, որն արտահայտում էր բոլոր աշխատավոր զանգվածների շահերը. վրա հասավ բուրժուազիայի դեմ պրոլետարիատի մղած պայքարի շեշտակի սրման ժամանակաշրջանը։ Այդ սրումը կապված էր շարքային բանվորական զանգվածների ակտիվացման, պրոֆեսիոնալ շարժմանը, գործադուլային պայքարին նրանց մասնակցության, միջազգային բանվորական շարժման մեջ հեղափոխական տենդենցի աճի հետ։ Բացահայտելով իմպերիալիզմի փուլում կապիտալիզմի երկրների տնտեսական ու քաղաքա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 491։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 642։

կան անհավասարաչափ զարգացման օրենքը, Վ. Ի. Լենինը հանգեց այն եզրակացության, որ տարբեր երկրներ սոցիալիզմին կհասնեն ոչ միաժամանակ, և պարտադիր չէ, որպեսզի իմպերիալիզմի ճակատը ճեղքվի ամենազարգացած երկրում։ Այդ եզրակացությունը, արմատապես փոխելով նոր կարգերի հաղթանակի մասին եղած պատկերացումները, պայքարի հստակ հեռանկար բացեց ռուսական և միջազգային պրոլետարիատի առջև[3]։

Այն բանի հաստատումը, որ իմպերիալիզմը հղի է հեղափոխություններով, եղավ Ռուսաստանում տեղի ունեցած հաղթական Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որի հետևանքով իմպերիալիզմն անդառնալիորեն կորցրեց աշխարհում ունեցած իր անբաժան տիրապետությունը։ Առաջին համաշխարհային պատերազմը և Հոկտեմբերյան հեղափոխությունը դրեցին կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սկիզբը։ Նրա կարևորագույն առանձնահատկությունը հենց Սովետական Ռուսաստանի անջատումն էր կապիտալիզմի սիստեմից։

Պատահական չէր, որ սոցիալիստական հեղափոխության իրականացումը բաժին ընկավ հենց ռուսական պրոլետարիատին, որը դաշնակցում էր գյուղացիական զանգվածների հետ։ Ռուսաստանն իմպերիալիզմի սիստեմի ամենաթույլ օղակն էր։ Այստեղ ամենաբարձր լարվածության էին հասել բանվոր դասակարգի և բուրժուազիայի, գյուղացիության և կալվածատերերի, ճնշված ժողովուրդների և իմպերիալիստական պետության միջև գոյություն ունեցող հակասությունները։ Բոլշևիկների կուսակցության գլխավորած, պայքարի դաժան դպրոց անցած պրոլետարիատի ղեկավարությամբ այդ հակասությունների և սոցիալական կոիվների միաձուլումը հասցրեց սոցիալիստական հեղափոխության հաղթանակին և պրոլետարիատի դիկտատուրայի աշխարհում առաջին պետության ստեղծմանը։ Վ. Ի. Լենինը լիակատար հիմք ուներ հայտարարելու. «Մենք ստեղծեցինք պետության սովետական տիպը, դրանով համաշխարհային-պատմական նոր դարաշրջան սկսեցինք, պրոլետարիատի քաղաքական տիրապետության դարաշրջանը, որը եկել է փոխարինելու բուրժուազիայի տիրապետության դարաշրջանին»[4]։

Բնութագրելով Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության միջազգային նշանակությունը, Վ. Ի. Լենինն ամենից առաջ նշում էր նրա բոլոր նվաճումների հեղափոխականացնող ներգործությունը մյուս երկրների վրա։ Ամբողջ աշխարհի միլիոնավոր աշխատավորների մտքերում ու սրտերում ահազանգի կոչի պես արձագանք գտավ 1917 թ. հոկտեմբերի 26-ի (նոյեմբերի 8) Սովետների II համագումարի ընդունած պատմական դեկրետը հաշտության մասին։ Սովետների երկիրը միջազգային թատերաբեմում բարձրացրեց խաղաղության պայքարի դրոշը, վճռականորեն մերժեց զավթողական պատերազմների, կողոպուտի ու բռնությունների քաղաքականությունը։ Հենց նույն ժամանակ՝ հոկտեմբերի 26-ին, Հողի մասին դեկրետով բավարարվեցին աշխատավոր գյուղացիության դարավոր ակնկալությունները։ Կալվածատերերին, եկեղեցական գերատեսչությանը և ցարական ընտանիքին պատկանող հողերը բռնագրավվեցին և հանձնվեցին գյուղացիական դեպուտատների սովետների տնօրինությանը՝ հողազուրկ ու սակավահող գյուղացիներին բաժանելու համար։

Վիթխարի հեղափոխականացնող նշանակություն ունեցան սովետական

[3] Տե՛ս «Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ»։ Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի թեզիսները։ Երևան, 1970։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 237։

կառավարության հետագա դեկրետները, որոնք հռչակեցին պատմության մեջ դեռևս չեղած հասարակական ու ազգամիջյան նոր հարաբերությունների՝ իսկական իրավահավասարության, արդարության ու ինտերնացիոնալիզմի հարաբերությունների ստեղծումը։ 1917 թ. նոյեմբերի 15-ին ստորագրվեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որը հռչակում էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հավասարությունն ու սուվերենությունը, ինքնորոշման նրանց իրավունքը, ամեն տեսակի ազգային արտոնությունների վերացումը։ Այդ սկզբունքների փայլուն արտահայտությունը եղավ Լեհաստանի և Ֆինլանդիայի ժողովուրդներին կամավոր կերպով անկախություն ընձեռելը։ Այդ պատմական սկզբունքների հիման վրա տեղի ունեցավ սովետական երկրի եղբայրական ժողովուրդների համախմբումը միասնական ընտանիքում։

1917 թ. նոյեմբերի 24-ին սովետական կառավարությունը հրապարակեց դասերի և քաղաքացիական աստիճանների վերացման մասին դեկրետը։ Դա վիթխարի քաղաքական նշանակություն ունեցող ակտ էր։ Դեկրետով սահմանվում էր «Ռուսաստանի ամբողջ բնակչության համար մեկ ընդհանուր՝ Ռուսաստանի Հանրապետության քաղաքացիների անվանում»։ Սակայն իսկական հավասարությունը չէր կարող իրականացվել առանց Ռուսաստանի կանանց իրավական վիճակը փոխելու։ Ամուսնության, երեխաների մասին 1917 թ. դեկտեմբերին ընդունված դեկրետներով կանանց տրվում էին տղամարդկանց հետ համահավասար իրավունքներ։ Նույնքան մեծ էր նաև 1918 թ. փետրվարի 2-ին Վ. Ի. Լենինի ձեռքով գրված խղճի, եկեղեցական ու կրոնական ընկերությունների ազատության մասին դեկրետի ազդեցությունը։

Լենինյան այդ առաջին դեկրետները, տնտեսության ու քաղաքականության ասպարեզում կատարված այնպիսի հեղափոխական վերափոխությունների զուգակցությամբ, ինչպիսին էր բանկերի, խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղիների ազգայնացումը, ամբողջ աշխարհի շահագործվողներին ու ճնշվածներին ակնառու կերպով համոզում էին, որ Հոկտեմբերյան հեղափոխության մի քանի հիմնական գծեր «ունեն ո՛չ թե տեղական, ո՛չ թե ազգային առանձնահատուկ, ո՛չ թե միայն ռուսական, այլ միջազգային նշանակություն»[5]։

Հեղափոխության բոցերում ծնունդ առավ քաղաքական իշխանության նոր ձևը՝ սովետները, որոնք առաջնակարգ դեր խաղացին պրոլետարական դիկտատուրայի հաղթանակի կայունացման գործում։ Ստեղծելով պետության նոր տիպ՝ սովետական սոցիալիստական պետություն, Հոկտեմբերյան հեղափոխությունը համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա, որը դարձավ «նոր ձևով դեմոկրատական (պրոլետարների ու առհասարակ չունևորների համար) և նոր ձևով դիկտատուրական (ընդդեմ բուրժուազիայի) պետություն»[6]։

Պրոլետարիատի դիկտատուրայի հիմքը, նրա բարձրագույն սկզբունքը բանվոր դասակարգի դաշինքն է գյուղացիության, բոլոր աշխատավորների հետ՝ այդ դաշինքում պրոլետարիատի ղեկավար դերի պահպանմամբ հանդերձ։ Նման դաշինքը հենվում է օբյեկտիվ հիմքի՝ բանվոր դասակարգի, գյուղացիության և բոլոր աշխատավորների արմատական տնտեսական ու քաղաքական շահերի ընդհանրության վրա։

[5] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 5։

[6] Վ. Ի. Լենին, նույն, հ. 33, էջ 45։

Հոկտեմբերյան հեղափոխությունն ամբողջ աշխարհին ցույց տվեց, որ պրոլետարիատի դիկտատուրան բոլոր աշխատավորներին գլխավորող բանվոր դասակարգի իշխանությունն է և որ այդ իշխանության նվաճման համար անհրաժեշտ է հեղափոխական եղանակով տապալել իմպերիալիստական բուրժուազիային, այլ ոչ թե ռեֆորմիստական եղանակով «կատարելագործել» կապիտալիզմը կամ հարմարվել նրան։ Հոկտեմբերյան հեղափոխությունը ցույց տվեց, որ «բոլշևիզմը որպես տակտիկայի օրինակ պիտանի է բոլորի համար»[7]։

Պրոլետարիատի դիկտատուրայի ամենաէական գիծն է նրա կողմից կազմակերպական ու տնտեսական ֆունկցիայի իրականացումն ի շահ բանվոր դասակարգի, որն անհրաժեշտ է հիմնական խնդրի լուծման՝ մարդու կողմից մարդու ամեն տեսակ շահագործում ոչնչացնելու, սոցիալիզմ կառուցելու համար։ Քանի որ խոշոր սոցիալիստական տնտեսությունը հիմնված է արտադրության միջոցների հանրային սեփականության վրա, ապա օբյեկտիվորեն պահանջվում է կառավարման որակապես նոր ժողովրդական սիստեմ, որը կառուցված է դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի վրա։ Կառավարման նման սիստեմի ստեղծման միակ արդյունավետ միջոցն էլ հենց պրոլետարիատի դիկտատուրան է։

Սովետական Ռուսաստանում պրոլետարիատի դիկտատուրայի պետության ծնունդն իբրև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության արդյունք, նշանակում էր դեմոկրատիայի՝ աշխարհում նոր, պատմականորեն պայմանավորված ձևի՝ պրոլետարական դեմոկրատիայի հաստատում։ Դեմոկրատիայի այդ նոր տիպը ծնունդ առավ հասարակական զարգացման ընթացքում, որը հող նախապատրաստեց պրոլետարական հեղափոխության և սոցիալիստական հասարակական վերափոխությունների համար։ «Մաքուր դեմոկրատիան» բանվորներին հիմարացնող լիբերալի ստահոդ ֆրազ է։ Պատմությունը գիտե բուրժուական դեմոկրատիան, որ գալիս է փոխարինելու ֆեոդալիզմին, և պրոլետարական դեմոկրատիան, որ գալիս է փոխարինելու բուրժուականին»[8], գրում էր Վ. Ի. Լենինը։ Այդ նոր դեմոկրատիայի պատմական կոչումն է ամեն կերպ նպաստել հասարակության սոցիալիստական վերակառուցման իրականացմանը։ Հանուն դրա նա սահմանափակում և ճնշում է սոցիալիզմին թշնամաբար տրամադրված ուժերին։ Սակայն մի բուռ շահագործողների դեմ ուղղված այդ բռնությունը կատարվում է հանուն բնակչության գերակշռող մեծամասնության շահերի և ծառայում է հասարակական առաջադիմությանը։

Այսպիսով, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության իրականացումը մարդկության առջև բացեց մեծ պայքարի և հաղթանակների հեռանկարը, որն ավարտվելու է ամբողջ մոլորակի մասշտաբով նոր, արդարացի հասարակարգի կառուցմամբ։ Ձևակերպելով այդ պատմական տենդենցը, Վ. Ի. Լենինն ընդգծում էր մեկ երկրում ստեղծված պրոլետարիատի դիկտատուրան (դեռևս թույլ, որպեսզի կարողանա վճռորոշ ներգործություն ունենալ ամբողջ հասարակական զարգացման վրա) ինտերնացիոնալ պրոլետարիատի դիկտատուրայի վերածելու (որը տարածվի մի շարք առաջավոր երկրների վրա և ընդունակ լինի որոշելու համաշխարհային քաղաքականությունը) առաջնակարգ կարևորությունը[9]։ Սովետական երկրում, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ

[7] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 377։

[8] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 308։

[9] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 169—170։

հեղափոխության հաղթանակից հետո, համաշխարհային պատմական պրոցեսի զարգացման երկու էտապների վերաբերյալ Լենինյան հանճարեղ միտքը փայլուն կերպով հաստատվեց հետագա տասնամյակներում։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ազդեցությունը զարգացած կապիտալիստական երկրներում հեղափոխական շարժման աճի վրա

Հոկտեմբերյան հեղափոխության կայծերն ընկան աշխարհի շատ երկրների բարեբեր հողի վրա, ուր հաղթական ռուսական պրոլետարիատի օրինակի ազդեցությամբ հզոր հեղափոխական վերելք ծավալվեց։ Նրա հիմքում ընկած էր աշխատանքի և կապիտալի միջև եղած հակասությունների չտեսնված սրումը, որն առանձնապես խստորեն արտահայտվեց համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին։

Մի շարք երկրներում տեղի ունեցան դեմոկրատական հեղափոխություններ։ Այդ երկրներից մեկը իմպերիալիստական Գերմանիան էր։ Գերմանական իմպերիալիստների սանձազերծած առաջին համաշխարհային պատերազմը երկիրը հասցրեց աղետի եզրին։ Սրված հեղափոխական իրադրությունը Գերմանիայում 1918 թ. նոյեմբերին վերաճեց բուրժուադեմոկրատական հեղափոխության։ Այդ հեղափոխությունը, ինչպես և 1919—1923 թթ. գերմանական պրոլետարիատի դասակարգային մարտերը, պատմական մեծ նշանակություն ունեցան ոչ միայն գերմանական ժողովրդի, այլև մյուս կապիտալիստական երկրների ժողովուրդների ճակատագրի համար։

Առաջին համաշխարհային պատերազմում ավստրո-հունգարական հաբսբուրգյան միապետության ջախջախումը և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությունը ծայրահեղորեն սրեցին վաղուց ի՛ վեր այստեղ գոյություն ունեցած սոցիալական ու ազգային սուր հակասությունները։ 1918 թ. հոկտեմբերին Ավստրո-Հունգարիայում տեղի ունեցած բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը վերացրեց Հաբսբուրգների կայսրությունը, և նրա ավերակների վրա կազմավորվեցին ինքնուրույն բուրժուական պետություններ։ Հունգարիայում հեղափոխական պրոցեսի զարգացումը հասցրեց երկրում Հունգարական Սովետական Հանրապետության հռչակմանը (1919 թ. մարտ), որը գոյություն ունեցավ 133 օր և ակնառու կերպով ապացուցեց, որ պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը հանուն հասարակության սոցիալիստական վերակառուցման ամենևին էլ «ռուսական առանձնահատկություն» չէ, այլ պատմական օբյեկտիվ օրինաչափության արտացոլում, իրեն վերապրած կապիտալիստական սիստեմի անկման նշան։ Այդ նույն ժամանակ էլ սովետական հանրապետություն հռչակվեց Սլովակիայում։

Համաշխարհային պատերազմը քայքայել ու արյունաքամ էր արել Բուլղարիային, նրան նետել տնտեսական փլուզման գիրկը, բազմակի ուժեղացրել աշխատավոր զանգվածների տառապանքներն ու թշվառությունը։ 1918 թ. սեպտեմբերի 22-ին բուլղարական բանակի զինվորները Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ ապստամբություն բարձրացրին, որը պատմության մեջ մտավ որպես Վլադայան ապստամբություն (Վլադայա բնակավայրի անունով, որը ապստամբության կենտրոններից մեկն էր)։ Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց։

1918 թ. սկզբին Հարավային Ֆինլանդիայում հաղթանակեց բանվորական հեղափոխությունը։ Հելսինկիում նիստեր գումարած ժողովրդական լիազորների խորհուրդն իր առջև նպատակ դրեց Ֆինլանդիայում ստեղծել սոցիալիստական հասարակարգ։ Միայն բազմամսյա արյունալի մարտերից հետո տեղական հակահեղափոխական բուրժուազիային հաջողվեց գերմանական իմպերիա-

լիզմի ռազմական աջակցությամբ գերակշռության հասնել ֆիննական պրոլետարիատի ստեղծած կարմիր գվարդիայի նկատմամբ։

Անգլիական իմպերիալիզմի կողմից ստրկացված Իռլանդիայում 1919 թ. սկսվեց բուրժուադեմոկրատական հեղափոխություն, որն ընդունեց ժողովրդական հակաիմպերիալիստական ազատագրական պատերազմի ձև։ Երկրում ստեղծվում էին խորհուրդներ, լայնորեն քննարկվում էր հեղափոխական Ռուսաստանի փորձը։ Երկու տարի տևած ծանր պայքարից հետո իռլանդացիները բրիտանական կառավարող շրջաններից նշանակալի զիջումներ կորզեցին։ Կղզու հիմնական մասը Իռլանդական ազատ պետության անվան տակ դարձավ դոմինիոն։

Այն երկրներում, ուր հեղափոխական պայթյուններ չեղան, հեղափոխական վերելքն այնքան ուժեղ էր, որ լրջորեն սասանեց տիրող դասակարգերի դիրքերը։ Անգլիայում, Ֆրանսիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում պատերազմի տարիներին զգալիորեն աճեցին մոնոպոլիաների շահույթները, բայց դրա փոխարեն բանվորների մեծ մասի կենսամակարդակն ավելի ցած էր, քան մինչ պատերազմը։ Շահագործման աճը և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությունը շեշտակիորեն սրեցին բանվոր դասակարգի դասակարգային պայքարն այդ երկրներում։ Ո՛չ պատերազմում Անտանտի իմպերիալիստների տարած հաղթանակը, ո՛չ ծայրահեղ իմպերիալիստների շովինիստական գաղափարախոսություն հանդիսացող ջինգոյիզմի սանձարձակ պրոպագանդան իրենց՝ «Ամեն ինչի համար գերմանացին կվճարի», «Մենք Գերմանիայից, ինչպես կիտրոնից, կքամենք ամեն ինչ, և դեռ ավելին» լոզունգներով հանդերձ, ո՛չ սոցիալ-ռեֆորմիստների պառակտիչ քաղաքականությունն ի վիճակի չեղան մարելու պրոլետարական ինտերնացիոնալիզմի խոր զգացումը հաղթած երկրների բանվոր դասակարգի շրջանում։

Ակտիվորեն հանդես գալով իրենց անմիջական շահերի համար, անգլիական, ֆրանսիական և ամերիկյան պրոլետարներն անձնուրաց պայքար էին մղում ի պաշտպանություն Սովետական Ռուսաստանի։ Սովետների երկրի հեղափոխությունը նրանք ընկալեցին որպես իրենց կենսական գործը։ Սովետական Ռուսաստանի դեմ իմպերիալիստական ինտերվենցիան սկսվելուց անմիջապես հետո այստեղ «Ձեռքնե՞րդ հեռու Ռուսաստանից» լոզունգի ներքո առաջացավ և սկսվեց ընդլայնվել զանգվածային շարժում։ «Բանվորների ու գյուղացիների Ռուսաստանը շրջափակում են այն պատճառով, որ մեր դասակարգը, բանվո՛ր դասակարգն է այնտեղ իշխանության գլուխ կանգնած», ասվում էր «Ձեռքներդ հեռու Ռուսաստանից» անգլիական ազգային կոմիտեի 1920 թ. մայիսմեկյան թռուցիկում։ Անգլիական պրոլետարիատի վճռական գործողությունները ներգործեցին այդ երկրի իմպերիալիստական շրջանների քաղաքականության վրա, որոնք 1920 թ. նոր ինտերվենցիա էին պատրաստում Սովետական Ռուսաստանի դեմ։

Սովետական Ռուսաստանի դեմ սկսված իմպերիալիստական ինտերվենցիան նույնքան խոր զայրույթ առաջացրեց նաև ֆրանսիական ժողովրդի լայն խավերում։ Սովետական Ռուսաստանի հետ համերաշխության շարժումը զուգակցվում էր ֆրանսիական պրոլետարիատի՝ տրանսպորտայինների, նավահանգստային բանվորների, մետաղագործների, հանքափորների, տեքստիլագործների և բանվոր դասակարգի մյուս ջոկատների դասակարգային պայքարի հետ։ «Կորչի՞ Կլեմանսոյի կառավարությունը» հեղափոխական կոչն ուղեկցվում էր «Կեցցե՞ Սովետական Ռուսաստանը», «Կեցցե՞ Լենինը» լոզունգներով։

Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որոնց համար պատերազմը ամերիկյան բուրժուազիայի վերնախավին հրեշավոր չափերով հարստացնող «մեծ բիզնես» էր, ժողովրդական զանգվածները ծանր զրկանքներ էին կրում այնպես, ինչպես մյուս երկրներում։ Հենց Ամերիկան է դարձել, գրում էր Վ. Ի. Լենինն ամերիկյան բանվորներին ուղղված իր նամակում, «առաջին երկրներից մեկը մի կողմից՝ լկտիացած, ապականության ու ցոփության մեջ խեղդվող մի բուռ միլիարդատերերի, և մյուս կողմից՝ հավերժապես ծանր աղքատության մեջ ապրող միլիոնավոր աշխատավորների միջև եղած անդունդի խորության տեսակետից»[10]։

Ի հակակշիռ ԱՄՆ-ի կառավարող իմպերիալիստական շրջանների հակասովետական կուրսի, ամերիկյան առաջավոր բանվորները հիացմունքով ողջունեցին Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը և ակտիվորեն պաշտպանում էին «Ձեռքներդ հեռո՛ւ Ռուսաստանից» լոզունգը։ ԱՄՆ-ում նույնպես Սովետական Ռուսաստանի պաշտպանությունը լայնորեն զուգակցվում էր պրոլետարիատի անմիջական շահերի համար մղվող բանվորական շարժման հետ։

Հեղափոխական վերելքն ընդգրկեց նաև Ճապոնիան։ 1918 թ. մոտ 10 մլն մարդ մասնակցեց, այսպես կոչված, բրնձի խռովություններին։ Բողոքելով պարենամթերքի և ամենից առաջ հիմնական սննդամթերքի՝ բրնձի բարձր գների դեմ, շարժման մասնակիցները գրավում էին բրնձի պահեստները, ավերում և հրկիզում էին դրանք։ 1919 թ. լայնորեն ծավալվեց բանվորների գործադուլային շարժումը՝ 8-ժամյա բանվորական օրվա համար։

Իտալիան առաջին համաշխարհային պատերազմից դուրս եկավ ծայրահեղորեն քայքայված և արյունաքամ։ Հարյուր հազարավոր զորացրված զինվորներ լրացրին գործազուրկների բանակը։ Երկրում տիրող ինֆլյացիան, սովը պայքարի էին հանում միլիոնավոր զանգվածների։ 1919 թ. գործադուլներին մասնակցեց 1,5 մլն բանվոր։ Ձեռնարկություններում ստեղծվում էին ֆաբրիկագործարանային խորհուրդներ։ Լենինի անունը բոլորի շուրթերին էր։ Ժողովրդականություն էր վայելում «Գործենք այնպե՛ս, ինչպես Ռուսաստանում» լոզունգը։ Աշխատավորների բուռն բողոք առաջացրեց Իտալիայի մասնակցությունը Սովետական Ռուսաստանի դեմ կազմակերպված ինտերվենցիային։ Բողոքի զանգվածային միտինգներից ու ցույցերից Ջենովայի, Թուրինի, Նեապոլի նավաստիներն ու բանվորներն անցան ակտիվ պայքարի, խոչընդոտելով ինտերվենտներին սպառազինություն ուղարկելուն։ Իտալիայում հեղափոխական վերելքն ամենաբարձր կետին հասավ 1920 թ., երբ ֆաբրիկաներն ու գործարանները գրաված Թուրինի բանվորների նախաձեռնությունն սկսեց տարածվել երկրի մյուս արդյունաբերական կենտրոններում։ Սակայն համազգային բնույթ ընդունած հեղափոխական ճգնաժամը քայքայվեց արհմիությունների ռեֆորմիստական առաջնորդների պառակտիչ քաղաքականությամբ։ Ռեակցիոն բուրժուազիան հակահարձակման անցավ բանվոր դասակարգի դեմ և, հենվելով տեռորիստական կազմակերպությունների վրա, Իտալիայում ճանապարհ հարթեց ֆաշիստական դիկտատուրայի համար։

Աճում էր զանգվածային պայքարն Իսպանիայում, ուր դաժան սոցիալական կեղեքումն ուղեկցվում էր ազգային փոքրամասնությունների՝ կատալոնցիների, հելլիսիացիների, բասկերի ճնշմամբ։ Երկիրն ընդգրկեց զանգվածային գործադուլային շարժումը։ Այստեղ նույնպես պրոլետարիատը ջերմորեն հանդես եկավ իմպերիալիստական ինտերվենցիայից Սովետական Ռուսաստանի

[10] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 57։

պաշտպանությամբ։ Սակայն իսպանական պրոլետարիատի հեղափոխական պոռթկումը չլատվեց անարխո-սինդիկալիստական առաջնորդների տակտիկայի հետևանքով։ Դրանից օգտվեցին Իսպանիայի ռեակցիոն շրջանները։ Ի վերջո 1923 թ. Իսպանիայում հաղթանակեց Պրիմո դե Ռիվերայի ռազմամիապետական դիկտատուրան։

Ռումինիայի ժողովրդական զանգվածների 1919—1920 թթ. հեղափոխական լայն ելույթներում ակտիվ մասնակցություն էին ունենում տասնյակ և հարյուր հազարավոր բանվորներ ու գյուղացիներ։ Ավելի քան 500 գյուղացիների գնդակահարությամբ և 22 գյուղերի հրկիզմամբ ավարտվեց 1919 թ. գյուղացիական ապստամբությունը։ Ջախջախումով ու դաժան բռնություններով վերջացավ նաև 1920 թ. Ռումինիայում տեղի ունեցած հոկտեմբերյան 200-հազարանոց բանվորական գործադուլը։

Սուր դասակարգային բախումներ եղան նաև Նիդերլանդներում, Շվեդիայում, Հունաստանում։ Հեղափոխական վերելքն ընդլայնվում էր, ընդգրկելով նաև աշխարհի այլ երկրներ։

Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման զարգացման վրա

Ռուսաստանում Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների ժողովրդական զանգվածներին դարձրեց «համաշխարհային քաղաքականության և իմպերիալիզմի հեղափոխական կործանման ակտիվ գործոն»[11]։ Այստեղ բուռն կերպով ծավալվում է հակաիմպերիալիստական պայքար, սկսվում են հակագաղութային հեղափոխություններ։ Հեղափոխական շարժման մեջ մտան այնպիսի ուժեր, որոնք նախապատրաստվում էին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այդ երկրների տնտեսական ու քաղաքական կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններով։ Մետրոպոլիաների հետ տնտեսական կապերի կտրուկ կրճատումը խթան հանդիսացավ գաղութներում ու կիսագաղութներում վերամշակող և թեթև արդյունաբերության զարգացման, կապիտալիստական տարրերի ընդհանուր ուժեղացման համար։ Հնդկաստանում, Չինաստանում, Ինդոնեզիայում, Մալայայում, աֆրիկյան մի շարք երկրներում արդյունաբերական ձեռնարկությունների աճի հետ մեկտեղ ամրապնդվեց ազգային բուրժուազիան, ուժեղացավ արդյունաբերական պրոլետարիատի ձևավորման պրոցեսը։ Համաշխարհային պատերազմի ռազմաճակատների ռազմական գործողությունների ընթացքում իմպերիալիստներն ստիպված էին կռվող բանակների մեջ ներգրավել գաղութային ժողովուրդների ներկայացուցիչներին, նրանց ձեռքը զենք տալ։ Այդ ամենը նպաստում էր իմպերիալիզմի գաղութային սիստեմի ճգնաժամի հասունացմանը։

Իրենց ազատագրության համար պայքարի ելնող ճնշված ժողովուրդներին վիթխարի և անշահախնդիր օգնություն էր ցույց տալիս երիտասարդ սովետական երկիրը։ Նա ակտիվորեն աջակցում էր Թուրքիայում Մուստաֆա Քեմալի ղեկավարությամբ տեղի ունեցող ազգային-ազատագրական շարժմանը։ 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև ստորագրվեց բարեկամության պայմանագիր։ Սովետական կառավարությունը ձեռնամուխ եղավ Իրանից ռուսական զորքերի դուրս բերմանը, միաժամանակ հայտարարելով նրա լիակատար անկախությունը ճանաչելու մասին։ Այդ գործողությունները հիացմունքով ընդունվեցին ժողովրդի կողմից, հասցրին Իրանում ազատագրական պայքարի ուժեղացմանն ընդդեմ իմպերիալիստական ճնշման, ընդդեմ շարունակվող անգլիական օկուպացիայի։ Ազատագրական պայքարի վերելքը Գիլյանի պրովինցիայում նույնիսկ հասցրեց Գիլյանի Սովետական Հանրապետության հռչակմանը, որը հանդիսացավ հակագաղութային, իր հիմքով բուրժուադեմոկրատական, շարժման վրա Ռուսաստանի հեղափոխական իրադարձությունների խոր ազդեցության արտացոլումը։

Հոկտեմբերը նպաստեց ազգային-ազատագրական շարժման զգալի աճմանն Աֆղանստանում։ Սովետական Ռուսաստանը ոչ միայն համակրանքով էր վերաբերվում իր երկրի անկախության ու սուվերենության համար «երիտաֆղանցիների» շարժմանը, այլև 1921 թ. փետրվարին կնքեց սովետաաֆղանական պայմանագիր, որը կանխորոշեց երկու հարևան երկրների սուվերեն ժողովուրդների երկարատև բարեկամական կապերը։

Քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտը, Սիբիրում Կոլչակի սպիտակգվարդիական բանակի ջախջախումը վիթխարի ազդեցություն գործեցին չին ժողովրդի հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական պայքարի զարգացման վրա։ «Մենք օգնության ենք հասնում ոչ միայն մեր աշխատավոր դասակարգերին, այլև չին ժողովրդին»,— ասվում էր չին ժողովրդին և Հյուսիսային ու Հարավային Չինաստանի կառավարություններին ուղղված սովետական կառավարության 1919 թ. հուլիսի 25-ի դիմումի մեջ։ Այդ հայտարարությունը հաստատվեց պրակտիկ գործերով։ Այն ժամանակ երբ իմպերիալիստական տերությունների Վաշինգտոնի կոնֆերանսը 1921 թ. սանկցիա տվեց Չինաստանի կողոպտման վերաբերյալ իմպերիալիստների գործարքին, 1921 թ. նոյեմբերին Իրկուտսկում, իսկ հետո Մոսկվայում Հեռավոր Արևելքի՝ Չինաստանի, Ճապոնիայի, Մոնղոլիայի և Արևելյան ու Հարավ-Արևելյան Ասիայի մյուս երկրների ժողովուրդների ներկայացուցիչների համագումարում որոշումներ ընդունվեցին իմպերիալիստական զավթումների դեմ այդ երկրների և ամենից առաջ Չինաստանի ժողովուրդների պայքարի ծավալման անհրաժեշտության մասին, ինչպես նաև իմպերիալիստներին օգնող ֆեոդալական ու միլիտարիստական կլիկների վերացման մասին։

Չնայած տնտեսական քայքայման արտակարգ դժվարին պայմաններին և համաշխարհային ռեակցիայի չդադարող ճնշմանը, սովետական երկիրը մշտական ու գործուն օգնություն էր ցույց տալիս չինական հեղափոխությանը։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Մոնղոլիայում ծավալված ազգային-ազատագրական շարժումն առավել մեծ հաջողությունների հասավ 1921 թ.։ Այստեղ հաղթանակեց ժողովրդական հեղափոխությունը։ 1921 թ. նրա առաջնորդ Սուխե Բատորն այցելեց Մոսկվա և եղավ Վ. Ի. Լենինի մոտ։ Սուխե Բատորի հետ ունեցած զրույցի ժամանակ Վ. Ի. Լենինը հիմնավորեց Մոնղոլիայի զարգացման ոչ կապիտալիստական ուղու հնարավորությունը։ Լենինն առանձնահատուկ ձևով ընդգծեց, որ դաշինքը Սովետական Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ ժողովրդական Մոնղոլիայի անկախության գլխավոր պայմանն է։ 1921 թ. նոյեմբերի 5-ին Մոնղոլիան Սովետական Ռուսաստանի հետ կնքեց առաջին քաղաքական պայմանագիրը, որը սովետական և մոնղոլական ժողովուրդների միջև սերտ համագործակցության հիմքը դրեց։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը խոր ազդեցություն ունեցավ Հնդկաստանի ազգային-ազատագրական պայքարի զարգացման վրա։ Հնդկաստանի ազատագրության համար մղվող պայքարն ստացավ իսկապես համաժողովրդական բնույթ։ Այն գլխավորեց ազգային բուրժուազիան և

[11] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 585։

ՀՍՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍ-ՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ИВ-Т ИСТ. СССР

նրա «Ազգային կոնգրես» կուսակցությունը։ Սակայն հակաիմպերիալիստական կուրսի իրականացման անհետևողականությունը, պայքարի հեղափոխական մեթոդները չընդունելը և լայն զանգվածների նախաձեռնությունը ծավալելու հանդեպ ունեցած երկյուղը 1923 թ. հասցրին երկրում ազատագրական պայքարի ժամանակավոր անկման։

Հոկտեմբերյան հեղափոխության և Աֆրիկայի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ազդեցության տակ գաղութային սիստեմի փլուզման սկզբնական նշանները պարզորոշ դրսևորվեցին հատկապես զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող երկրներում։

1919 թ. Եգիպտոսում սկսվեցին բուռն ցույցեր, գործադուլներ և անգլիական զորքերի հետ ընդհարումներ։ Շարժումը դաժանորեն ճնշվեց։ Ազատագրական շարժումն այստեղ նոր ուժով արտահայտվեց 1921 թ. վերջին, նրան մասնակցեց երիտասարդ բանվոր դասակարգը, որը պայքարին ավելի վճռական բնույթ տվեց։ Անգլիական կառավարությունն ստիպված էր զիջումների դիմել, հայտարարելով Եգիպտոսի պրոտեկտորատի վերացման մասին և այն հռչակելով «անկախ թագավորություն»։ Սակայն այդ «անկախությունը» մնաց թղթի վրա և լոկ քողարկում էր երկրի նկատմամբ իմպերիալիստական տիրապետության նոր ձևը։

Համանման պրոցեսներ էին տեղի ունենում պատերազմի տարիներին և հետպատերազմյան առաջին տարիներին նաև Լատինական Ամերիկայի երկրներում։ Ազգային կապիտալիզմի բուռն աճն այստեղ զուգակցվում էր առանձին երկրների տնտեսական ու հասարակական կյանքի վճռորոշ բնագավառներում օտարերկրյա մոնոպոլիաների դիրքերի պահպանմամբ ու ընդլայնմամբ։ Այդ ամենը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազատագրական գաղափարների լայն տարածման պայմաններում տանում էր դեպի ազգային-ազատագրական և դասակարգային պայքարի վերելք (հատկապես այնպիսի երկրներում, ինչպիսիք են Արգենտինան, Բրազիլիան, Կուբան, Մեքսիկան, Չիլին)։ Սովետական Ռուսաստանի պաշտպանության լայն շարժման հետ զուգակցվող այդ պայքարի ընթացքում լատինաամերիկյան բանվորական շարժման ավանգարդն սկսում էր ընկալել լենինիզմի հեղափոխական գաղափարները։

ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման համաշխարհային պատմական նշանակությունը

Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունն արտահայտվեց ոչ միայն կապիտալիստական և գաղութային երկրներում հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների զարգացման վրա նրա ունեցած անմիջական ներգործությամբ։ Ամբողջ աշխարհի ժողովուրդների վրա վիթխարի հեղափոխականացնող ազդեցություն ունեցավ աշխարհում առաջին բանվորագյուղացիական կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը։ Ամենալայն զանգվածներ ներգրավելով, սովետական պետությունը երկրում իրագործեց տնտեսական ու սոցիալական արմատական վերափոխություններ՝ սոցիալիստական ինդուստրացում և գյուղացիության արտադրական կոոպերացում։ Համաշխարհային-պատմական նշանակություն ունեցավ հանրային սեփականության, որպես սոցիալիզմի տնտեսական հիմքի մասին, նրա զարգացման ուղիների ու ձևերի մասին մարքս-լենինյան ուսմունքի կենսագործումը ՍՍՀՄ-ում։ Լենինը սովորեցնում էր, իսկ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման փորձը հաստատում, որ սոցիալիզմի նյութական բազա կարող է լինել միայն ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում պետական մասշտաբով հանրայնացված և գիտության ու տեխնիկայի նվաճումների վրա հիմնված, բարձր զարգացած ինդուստրիալ արտադրությունը։

Ամբողջ աշխարհում հսկայական արձագանք առաջացրեց սոցիալիստական տնտեսության պլանավորման ու կառավարման հիմնական սկզբունքների վերաբերյալ լենինյան ուսմունքի կենսագործումը։ Լենինի անմիջական ղեկավարությամբ ՍՍՀՄ-ում դրվեցին տնտեսությունը բոլոր օղակներում պլանայնորեն վարելու հիմքերը, պայմաններ ստեղծվեցին արտադրության անարխիայի բոլոր դրսևորումների իսպառ վերացման, կապիտալիստական արտադրական ցիկլին հատուկ ցնցումներից ապահով, առողջ տնտեսական սիստեմ կառուցելու համար։

ՍՍՀՄ-ում հաստատված սոցիալիստական հարաբերություններն աշխարհին գործնականում տվեցին նյութական բարիքների բաշխման նոր համակարգ։ Յուրաքանչյուր աշխատող, յուրաքանչյուր աշխատանքային կոլեկտիվ նյութական վարձատրություն է ստանում ըստ իր աշխատանքային գործունեության արդյունքների, ըստ միասնական հասարակական աշխատանքում իր ռեալ ներդրման։ Բաշխումը ՍՍՀՄ-ում մի հզոր լծակ է, որը նպաստում է արտադրության աճին, աշխատանքի որակի, նրա արտադրողականության բարձրացմանը, աշխատավորների նախաձեռնության զարգացմանը։ Սովետական Միության օրինակով ամբողջ աշխարհի աշխատավորները կարող էին համոզվել տնտեսության սոցիալիստական կազմակերպման լենինյան սկզբունքների բարձր արդյունավետության մեջ։ Արդյունաբերական արտադրության ծավալով ՍՍՀՄ-ը դեռ նախապատերազմյան ժամանակաշրջանում աշխարհում հինգերորդից անցավ երկրորդ տեղը։ Արդյունաբերական արտադրանքի միջին տարեկան աճն ամբողջ սովետական ժամանակաշրջանում կազմեց 9,9 տոկոս՝ նույն ժամանակամիջոցում ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Արևմտյան Գերմանիայի ունեցած 2—4 տոկոսի դիմաց[12]։

Գիտությունն ու կրթությունը ՍՍՀՄ-ում վիթխարի թափ ստացան և հիմք ծառայեցին կուլտուրական հեղափոխության իրականացման համար։ Վերջինիս հիմնական բովանդակությունն էր՝ ժողովրդական լուսավորության վերելքը, բոլոր պայմանների ստեղծումը աշխատավորների ամենալայն զանգվածներին քաղաքականությանը, գիտելիքներին, գեղագիտական արժեքներին հաղորդակից դարձնելու համար. սոցիալիստական գիտական գաղափարախոսության տարածումը և նրա սկզբունքների հիման վրա ժողովրդի ամբողջ հոգևոր կյանքի կազմակերպումը. մանրբուրժուական հայացքների ու բարքերի հաղթահարումը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը աշխարհին ավետեց միջազգային հարաբերությունների հանդեպ նոր մոտեցման ծնունդը, մոտեցում, որը հենվում է մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների վրա։ Իմպերիալիստական մյուս տերությունների հետ ցարական Ռուսաստանի կընքած գաղտնի պայմանագրերի հրապարակումն ու չեղյալ հայտարարելը, պայմանագրեր, որոնք մասնավորապես նախատեսում էին Արևելքի երկրների բաժանում ու ստրկացում, բացահայտեց ու մերկացրեց իմպերիալիստների թալանչիական քաղաքականությունը։ 1917 թ. դեկտեմբերի 3-ին հրապարակված «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին» ուղղված

[12] «Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ». ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներ, Երևան, 1970, էջ 33։

դիմումը հայտարարում էր Թուրքիայի և Իրանի բաժանման վերաբերյալ ցարական պայմանագրերից սովետական պետության հրաժարվելու մասին և հաստատում էր բոլոր ժողովուրդների ինքնորոշման և ազատ գոյության իրավունքը։ Դիմումում ասվում էր. «...Կոստանդնուպոլսի գավթման վերաբերյալ տապալված ցարի գաղտնի պայմանագրերը, որոնք հաստատվել էին տապալված Կերենսկու կողմից, այժմ պատռված և ոչնչացված են։ Ռուսաստանի Հանրապետությունը և նրա կառավարությունը, ժողովրդական կոմիսարների խորհուրդը դեմ են ուրիշի հողերի գավթմանը»[13]։ Սովետական պետությունը խնդիր դրեց բոլոր ժողովուրդներին օգնել բացահայտորեն, պատերազմի և խաղաղության հարցերը լուծել ի լուր ամենքի։

Ելնելով սկզբնապես մի քանի կամ նույնիսկ մեկ, առանձին վերցրած երկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության վերաբերյալ լենինյան ուսմունքից, սովետական պետությունը, որը կենսականորեն շահագրգռված էր կայուն և տևական խաղաղությամբ, հռչակեց տարբեր հասարակական-քաղաքական և պետական կարգեր ունեցող երկրների խաղաղ գոյակցության սկզբունք։ Այդ սկզբունքը սոցիալիզմի և կապիտալիզմի միջև դասակարգային պայքարի ձևերից մեկն է, որն ամենևին չի նշանակում, թե հակոտնյա պետությունները պետք է պատերազմի միջոցով լուծեն իրենց գաղափարական ու քաղաքական վեճերը։

Ղեկավարվելով տարբեր հասարակական-քաղաքական կարգեր ունեցող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքների մասին լենինյան ուսմունքով, մեր կուսակցությունը սովետական պետության զարգացման բոլոր տարիների ընթացքում հետևողականորեն պայքարել և պայքարում է այդ սկզբունքների իրագործման համար։ ՍՄԿԿ XXIV համագումարում ընդունվեց խաղաղության ծրագիրը։ ՍՄԿԿ-ի ակտիվ և նպատակասլաց արտաքին քաղաքական գործունեությունը հասցրեց Սովետական Միության միջազգային հեղինակության հետագա բարձրացմանը։

Այսպիսով, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը աշխարհին տվեց սոցիալական-պրոբլեմների արմատական լուծման օրինակ։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը համաշխարհային սոցիալիստական հեղափոխության առաջին հաղթական ակտն է։ Այն արմատապես փոխեց խոշորագույն տերության քաղաքական ու սոցիալ-տնտեսական դեմքը, միջազգային ազատագրական շարժումը բարձրացրեց նոր, ավելի բարձր մակարդակի, «Ամբողջ աշխարհին մատնանշեց սոցիալիզմի ուղիները և բուրժուազիային ցույց տվեց, որ մոտենում է նրա տիրակալության վերջը»[14]։ Ռուսաստանում կատարված վերափոխությունները սկզբնավորեցին մոլորակի սոցիալական դեմքի հեղափոխական փոփոխությունը, հուսալի բազա ստեղծեցին միջազգային ազատագրական շարժման զարգացման համար։ Սովետական օրինակը վիթխարի հեղափոխականացնող ազդեցություն ունեցավ մնացած ամբողջ աշխարհի վրա։ Այսուհետև, ասում էր Լենինը, երկու լագերների, սոցիալիստական և կապիտալիստական լագերների միջև մղվող պայքարը «կազմում է համաշխարհային քաղաքականության, ժողովուրդների բոլոր փոխհարաբերությունների առանցքը»[15]։

---

[13] «Внешняя политика СССР». Сборник документов, т. I, (1917—1920), М., 1944, стр. 20.

[14] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 36։

[15] «Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ». ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներ, էջ 20։

Սոցիալիզմի վերածումը համաշխարհային սիստեմի՝ մարքսիզմ-լենինիզմի հաղթանակն է

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, հատկապես կապիտալիստական սիստեմից Եվրոպայի և Ասիայի ժողովրդադեմոկրատական երկրների անջատվելուց հետո ծավալվեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլը։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի այդ փուլում կազմավորվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմը։ Նրա զարգացումն ու ամրապնդումը հզոր գործոն եղավ, որը նպաստեց ամբողջ աշխարհում սոցիալիզմի համար, ինչպես նաև իմպերիալիստական կախումից գաղութների և կախյալ երկրների ժողովուրդների ազատագրության համար պայքարող ուժերի աճին։ Այդ տարիներին արագացավ գաղութային սիստեմի փլուզումը, մեծացավ համաշխարհային տնտեսության կապիտալիստական սիստեմի անկայունությունը, խորացավ բուրժուական դեմոկրատիայի՝ որպես բուրժուազիայի դասակարգային տիրապետության ձևերից մեկի ճգնաժամը, ինչպես նաև բուրժուական մշակույթի և արվեստի ճգնաժամը. ավելի պարզորոշ դրսևորվեցին դրանց հակաժողովրդական, հակահումանիստական ուղղվածությունը, ժողովրդից և աշխատավորական լայն զանգվածների ակնկալություններից դրանց կտրվածությունը։

Նոր աստիճանի բարձրացավ կապիտալիստական երկրների աշխատավորների դասակարգային պայքարը, զգալիորեն ընդլայնվեց ու ամրապնդվեց միջազգային բանվորական և կոմունիստական շարժումը։ Ամբողջ աշխարհում ազատագրական ուժերի մեծ հենարանն ու բազան, կապիտալիստական սիստեմի հակոտնյան համաշխարհային սոցիալիստական սիստեմն է, որը վերածվել է հասարակական զարգացման վճռական գործոնի։ ՍՄԿԿ XXI համագումարը, տալով երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում տեղի ունեցած փոփոխությունների մանրամասն վերլուծությունը, հանգեց ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակի վերաբերյալ եզրակացության։ ՍՄԿԿ XXII համագումարն ընդունեց կուսակցության նոր, երրորդ ծրագիրը, որը կողմնորոշեց դեպի ՍՍՀՄ-ում կոմունիստական հասարակարգի կառուցումը։ Մեր երկրում կոմունիզմի շինարարության հարցերի մշակման գործում տեսական ու գործնական վիթխարի ներդրում կատարեցին ՍՄԿԿ XXIII և XXIV համագումարները։ Եվ չնայած այն բանին, որ սովետական երկիրը քայքայվեց իմպերիալիստական ինտերվենցիայից և կրեց երկրորդ համաշխարհային պատերազմի չլսված դժվարությունները, Սովետական Միության սոցիալիստական տնտեսությունը վստահորեն ու անշեղորեն բարձր տեմպեր է վերցնում կոմունիստական հասարակարգի նյութական հիմքի ստեղծման ասպարեզում։

Մյուս սոցիալիստական երկրների հետ միասին Սովետական Միությունը կազմում է սոցիալիստական պետությունների համագործակցությունը, որը ամբողջ աշխարհում խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի անխորտակելի պատվարն է։ Անգնահատելի է իրենց մոտ սոցիալիստական ու կոմունիստական հասարակարգ կառուցող սոցիալիստական երկրների օրինակի նշանակությունը։ Նրանց ձեռք բերած հաջողությունները մարդկանց մտքերն ու սրտերը նվաճում են ոչ միայն մարքսիզմ-լենինիզմի գաղափարների ուժով, այլև սոցիալիստական երկրների ժողովուրդների նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման գործնական արդյունքներով։ Սոցիալիզմի երկրների աշխատավորները չեն զգում տնտեսական ճգնաժամերի աղետները, չգիտեն ինչ է գործազրկությունը։ Նշելով սոցիալիստական շինարարության փորձի հե-

դափոխականացնող նշանակությունը, Վ. Ի. Լենինը գրում էր. «...եթե առաջներում մենք պրոպագանդա էինք մղում ընդհանուր ճշմարտություններով, ապա այժմ մենք պրոպագանդա ենք մղում աշխատանքով: Սա նույնպես քարող է, բայց սա քարող է գործողությամբ»[16]։

Համաշխարհային զարգացման վրա սոցիալիզմի հեղափոխականացնող ներգործությունը հարկավոր է քննել դինամիկայում, այսինքն՝ այդ ներգործությունը քննել իրրև անընդհատ աճող այնպիսի ուժ, որն ուղղակի կախման մեջ է գտնվում աշխարհի ազատագրական ուժերի ընդհանուր աճից։

Սոցիալիստական երկրների միջազգային հեղինակության ամրապնդման համար մեծ նշանակություն ունի սոցիալիստական համագործակցության ռազմական հզորությունը և ամենից առաջ ՍՍՀՄ հզոր զինված ուժերը՝ պատերազմի և ագրեսիայի իմպերիալիստական քաղաքականության ուղու այդ գորեղ խոչընդոտը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և նրա ծնունդ՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության միջազգային նշանակությունը հաստատվում է նրանով, որ սոցիալիստական պետության զարգացման բոլոր փուլերում նրա կենսական գործն է եղել և կա սոցիալիզմի նվաճումների պաշտպանությունը հակահեղափոխության և համաշխարհային իմպերիալիզմի ուժերի ոտնձգություններից։ Ամեն մի հեղափոխություն, Լենինի խոսքերով, միայն այն դեպքում ինչ-որ բան արժե, եթե կարողանում է իրեն պաշտպանել։ «Կապը միջազգային սոցիալիզմի հետ խախտում է նա, ով սկսում է թեթևամտորեն վերաբերվել այն երկրի պաշտպանությանը, որտեղ պրոլետարիատն արդեն հաղթանակել է»[17]։

Սովետական մարդիկ, զարգացնելով ժողովրդական տնտեսությունը և բարձրացնելով երկրի պաշտպանունակությունը, իրենց ինտերնացիոնալ բարձրացնելով երկրի պաշտպանունակությունը, իրենց ինտերնացիոնալ պարտքն են համարում անել հնարավոր ամեն ինչ ամբողջությամբ վերցրած համաշխարհային սոցիալիստական համագործակցության, նրա մեջ մտնող յուրաքանչյուր երկրի տնտեսական և ռազմաքաղաքական ամրապնդման համար։ Հակահեղափոխության արտահանման իմպերիալիստական քաղաքականությանը մեր համագործակցությունը հակադրում է իր անխորտակ հզորությունն ու ժողովուրդների հեղափոխական նվաճումները պաշտպանելու վճռականությունը[18]։

Սոցիալիստական երկրների միջպետական կապերի ամրապնդումը արդիականության գլխավոր խնդիրներից մեկն է։ Ինքը՝ կյանքն է առաջադրում եղբայրական երկրների ավելի սերտ տնտեսական մերձեցման պահանջը։ Այդ խնդրի հաջող լուծմանն է կոչված ծառայելու նրանց ժողովրդատնտեսական պլանների կոորդինացումը։ Համաձայնեցված գործողությունների և կոորդինացման միջոցով եղբայրական կուսակցություններն ստեղծագործական ավանդ են ներդնում Հոկտեմբերյան մեծ հեղափոխության գաղափարների և «աշխատավորների միջազգային կոոպերատիվի»[19] ստեղծման վերաբերյալ Լենինի գաղափարների զարգացման ասպարեզում։

Սոցիալիստական երկրների համագործակցության կառուցման ու ամրապնդման հիմքում ընկած են մարքս-լենինյան տեսությունն ու Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության մեծ գաղափարները, որովհետև համաշխարհային սոցիալիստական սիստեմի կազմավորումը բարդ և բազմակողմանի պրոցես է, որը կապված է օբյեկտիվ և սուբյեկտիվ կարգի դժվարությունների հաղթահարման հետ։ Եղբայրական հարաբերություններ ու համագործակցություն են հաստատվում ամենևին էլ ոչ միատեսակ տնտեսական մակարդակներ, պատմամշակութային ավանդույթներ ու կապեր, սոցիալական կառուցվածքներ ունեցող երկրների միջև[20]։ Նման պայմաններում մանրբուրժուական տարրերը ամենուրեք, ուր նրանց հաջողվում է ազդեցություն գործել, փորձում են խոչընդոտել սոցիալիստական վերափոխությունների նորմալ ընթացքը, միմյանց հակադրել սոցիալիզմի երկրներին, աշխուժացնել օպորտունիստական, ռևիզիոնիստական, նացիոնալիստական հայացքները, որոնք օգտագործում է իմպերիալիզմը։ Այդպիսի վտանգը մեծանում է այնտեղ, ուր նահանջ է թույլ տրվում մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներից[21]։ «Ձախ» ռևիզիոնիզմը գրոհում է գիտական կոմունիզմի տեսության ու պրակտիկայի վրա, ջանում այն փոխարինել ռեակցիոն-ուտոպիստական ու ռազմաղորանոցային «սոցիալիզմով»։ Նրա մանրբուրժուական-նացիոնալիստական էությունը մատնում է առանձին երկրների մեսիանական դերի քարոզը, մարերի զանգվածային մբշակումը հեգեմոնիզմի, շովինիզմի, մարտնչող հակասովետիզմի ոգով։ Մյուս կողմից, աջ ռևիզիոնիստները պրոպագանդում են, այսպես կոչված, լիբերալացված սոցիալիզմի կոնցեպցիան, որը ժխտում է մարքս-լենինյան կուսակցությունների ղեկավար դերը, սոցիալիստական դեմոկրատիան փոխարինում բուրժուական բովանդակությամբ քաղաքական լիբերալիզմով, վերացնում կենտրոնացված պլանավորումը և ժողովրդական տնտեսության ղեկավարումը, ձգտելով սանձաղրծել շուկայական տարերքն ու մրցակցությունը[22]։

Կոմունիստները տեսնում են համաշխարհային սոցիալիստական սիստեմի զարգացման դժվարությունները։ Սակայն սոցիալիստական սիստեմը հիմնվում է նրա մեջ մտնող երկրների սոցիալ-տնտեսական կարգի ընդհանրության, արմատական շահերի և նպատակների համընկնման վրա։ Այդ ընդհանրությունը եղած դժվարությունները մարքսիզմ-լենինիզմի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների հիման վրա հաղթահարելու, սոցիալիզմի սիստեմի միասնության հետագա ամրապնդման երաշխիքն է[23]։

Լենինիզմը իմպերիալիզմի դեմ, աշխարհի հեղափոխական վերափոխման համար ժողովուրդների պայքարի դրոշն է

Առանձին երկրների շրջանակներում և միջազգային մասշտաբով սոցիալիզմի կառուցումն ու զարգացումն ազդում են կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հետագա զարգացման վրա։ Սոցիալիստական սիստեմի հզորությունն ու հեղինակությունը հեշտացնում են կապիտալիստական երկրների պրոլետարիատի դասակարգային պայքարի ծավալումը և հարաճուն ազդեցություն գործում դաղութատիրության ու նեոդաղութատիրության կապանքներից ճնշված ժողովուրդների ազատագրման վրա։ Զգալիորեն աճել ու ամ-

---

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 247։

17 Վ. Ի. Լենին, հիշ, հ. 36, էջ 358։

18 Տե՛ս «Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ». ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներ, էջ 27։

19 Տե՛ս նույն տեղում, էջ 40։

20 Տե՛ս նույն տեղում, էջ 40։

21 Տե՛ս նույն տեղում, էջ 41։

22 Տե՛ս նույն տեղում, էջ 41։

23 Տե՛ս «Международное Совещание коммунистических и рабочих партий. Документы и материалы. 5—17 июня 1969 г.», М., 1969, էջ 305:

բապնդվել է համաշխարհային կոմունիստական շարժումը. եթե 1935 թ. ամբողջ աշխարհում կոմունիստների թիվը մոտ 4 մլն էր, ապա 1968 թ. այն անցավ 50 միլիոնից։ Սակայն ներքին ու միջազգային, օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների բարդ միահյուսումը դանդաղեցրեց հեղափոխական պրոցեսի զարգացումը։ Զարգացնելով պետական-մոնոպոլիստական կարգավորումը, իմպերիալիստները մանևրում են, սովորել են որոշ չափով սահմանափակել «իրենց համար առավել ավերիչ և սոցիալապես վտանգավոր այնպիսի երևույթներ, ինչպես արտադրության անարխիան, տնտեսական ճգնաժամերը, մասսայական գործազրկությունը»[24]։ Եվ թեկուզ մոնոպոլիստական միավորումների տիրապետությունը մնում է ժամանակակից կապիտալիզմի գլխավոր գիծը, սակայն «ժամանակակից կապիտալիզմը, նախ և առաջ, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմն է, որը հարմարվում է երկու համաշխարհային սիստեմների պայքարի պայմաններին»[25]։

Բայց որքան էլ որ մոնոպոլիստական կապիտալը հարմարվում է, օգտագործելով սոցիալական ու «դասակարգային պարտնյորության» ամեն տեսակ դեմագոգիկ տեսություններ, դասակարգային մարտերը կապիտալի երկրներում սաստկանում են, հաճախ վերածվելով վիթխարի ուժի քաղաքական ելույթների, որի օրինակ կարող են ծառայել Իտալիայում, Ֆրանսիայում և մի շարք այլ երկրներում վերջին տարիներս տեղի ունեցած հսկայական գործադուլները։ Եվ պրոլետարիատի այդ ելույթներին հակադրվում են մոնոպոլիստների և բուրժուական պետության՝ որպես բանվոր դասակարգի վրա բուրժուազիայի հարձակման կազմակերպչի, միացյալ ուժերը։ Մի շարք կապիտալիստական երկրներում պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը փորձում է լայն ճակատով հարձակվել պրոլետարիատի և հասարակության մյուս աշխատավոր ու միջին խավերի ոչ միայն տնտեսական, այլև տարրական դեմոկրատական իրավունքների ու ազատությունների դեմ։ Այդ պայմաններում կապիտալիստական երկրների կոմկուսներն անձնազոհ պայքար են մղում գյուղացիության և քաղաքի ու գյուղի միջին խավերի հետ բանվոր դասակարգի սերտ դաշինքի համար։ Կոմկուսներն իրենց առջև խնդիր են դնում ստեղծել լայն հակամոնոպոլիստական ճակատ՝ համադեմոկրատական խնդիրների իրականացման, իսկ վերջին հաշվով սոցիալիզմի հաղթանակի համար պայքարելու նպատակով։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի զարգացման ժամանակակից էտապում հեղափոխական ուժերի հետագա ամրապնդումն ու վերջնական հաղթանակը, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի սիստեմի տապալումն անհնարին են առանց ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը միասնական հեղափոխական պրոցեսի մեջ ներգրավելու։ Համաշխարհային հեղափոխական պայքարում ազգային-ազատագրական շարժումը ներկայումս կարևոր դեր ունի։ Ազգային-ազատագրական հեղափոխություններն երկրագնդի շատ շրջաններում խորտակում են իմպերիալիզմի հեգեմոնիան։ Սակայն չի կարելի գաղութների և կիսագաղութների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը համաշխարհային հեղափոխական պրոցեսի առաջատար ուժ համարել հենց միայն այն բանի համար, որ ազգային-ազատագրական շարժումը մեծ մասամբ ընթանում է ազգային մանր և միջին բուրժուազիայի հեգեմոնիայի ներքո։ Նման շարժումը ճանաչել հակաիմպերիալիստա-

[24] «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության 50 տարին». ՍՄԿԿ Կենտկոմի թեզիսներ, Երևան, 1967, էջ 72։

[25] Նույն տեղում, էջ 71։

կան պայքարի առաջատար ուժ՝ նշանակում է մանր և ազգային բուրժուազիային առաջադրել համաշխարհային հեղափոխական պրոցեսի հեգեմոնի դերը, որն անխուսափելիորեն կհասցներ կապիտալիզմի գլխավոր դասակարգային հակասության՝ աշխատանքի և կապիտալի միջև եղած հակասության նսեմացմանը։ Եվ եթե ազգային-ազատագրական հեղափոխությունների դերը ներկայումս աճել է, ապա դա տեղի ունեցավ այն պատճառով, որ այդ հեղափոխությունները կատարվեցին իմպերիալիզմի դեմ սոցիալիստական սիստեմի մղած պայքարի հետ սերտ փոխկապակցության պայմաններում։

Համաշխարհային իմպերիալիզմի դեմ մղած պայքարում հեղափոխական ուժերի հաղթանակը կախված է համաշխարհային հեղափոխական պրոցեսի գլխավոր հոսանքների փոխգործողությունից. 1) նոր հասարակության կառուցման ասպարեզում սոցիալիստական սիստեմի ժողովուրդների հաջողություններից, 2) ինդուստրիալ զարգացած կապիտալիստական երկրների աշխատավորների դասակարգային պայքարից, 3) ազգային-ազատագրական հակաիմպերիալիստական շարժման վերելքից։ Սխալ և վնասակար է համաշխարհային հեղափոխական շարժման այդ հիմնական հոսանքները քննել մեկուսացած, մեկը մյուսից անջատ։ Բանվոր դասակարգի և նրա ավանգարդի՝ կոմունիստական կուսակցությունների մեծ միսիան է ամեն կերպ ամրապնդել համաշխարհային հեղափոխական շարժման բոլոր հոսանքների միասնությունը՝ համաշխարհային սոցիալիստական սիստեմի, որպես իմպերիալիստական ռեակցիայի դեմ հաջող պայքարի վճռական պայմանի, առաջատար դերի պահպանմամբ հանդերձ։

Լենինիզմը և նրա մարմնացումը հանդիսացող Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը համաշխարհային հեղափոխական պրոցեսը հարստացրին կոմունիստական կուսակցությունների քաղաքականության մեջ ազգայինի և ինտերնացիոնալիստականի փոխհարաբերությունների պրոբլեմի դիալեկտիկական լուծումով։ Բանվոր դասակարգը կարող է իր պատմական խնդիրները կատարել, եթե միայն նա բոլոր շահագործվողների ու ճնշվածների գլուխ է անցնում և եթե անխոնջ կերպով պայքարում է ազգային, դասակարգային, սոցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրների առաջադիմական լուծման համար։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմը բանվոր դասակարգի աշխարհայացքի և գաղափարախոսության կարևորագույն և էական գիծն է։ Առանց պրոլետարական ինտերնացիոնալիզմի քաղաքականություն վարելու չի կարող միջազգային բանվորական և կոմունիստական շարժման իսկական միասնություն լինել։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները մոռանալը անխուսափելիորեն հանգեցնում է բուրժուական նացիոնալիզմի։ Վ. Ի. Լենինը ավել է ինտերնացիոնալիզմի գիտական ըմբռնումը. «Ես պետք է դատեմ,— ասում է Լենինը,— ոչ թե «իմ» երկրի տեսակետից (քանի որ դա խղճուկ բթամտի, նացիոնալիստական քաղքենու դատողություն է, որը չի հասկանում, թե ինքը խաղալիք է իմպերիալիստական բուրժուազիայի ձեռքին), այլ համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը նախապատրաստելու, պրոպագանդելու, մոտեցնելու գործին իմ մասնակցության տեսակետից։

Ահա թե ինչ է ինտերնացիոնալիզմը, ահա թե որն է ինտերնացիոնալիստի, հեղափոխական բանվորի, իսկական սոցիալիստի խնդիրը»[26]։

Դեռ կոմունիստական շարժման արշալույսին Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը

[26] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 37, էջ 368։

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» գրում էին. «Կոմունիստները մնացած պրոլետարական կուսակցություններից տարբերվում են լոկ նրանով, որ ...զանազան ազգերի պրոլետարների պայքարից առանձնանում և պաշտպանում են ամբողջ պրոլետարիատի ընդհանուր, ազգությունից անկախ շահերը»[27]։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմը վերացական հասկացություն չէ։ Կոնկրետ-պատմական կատեգորիա լինելով, այն իր բովանդակությամբ զարգանում է հեղափոխական շարժման հետ միասին։ Եթե Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստն» ուղեկցվում էր «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգով, արտահայտելով տարբեր երկրների բանվորների համերաշխության կոչը դասակարգային ընդհանուր շահերի համար մղվող պայքարում, ապա, երբ Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ բանվորների հետ իմպերիալիզմի դեմ պայքարի ելան տարբեր երկրների ու ազգությունների աշխատավորներն ու ճնշվածները, Վ. Ի. Լենինն առաջադրեց «Բոլոր երկրների պրոլետարներ և ճնշված ժողովուրդներ, միացե՛ք» լոզունգը։

Այսպես, ելնելով պատմականության գիտական սկզբունքից, մարքսիստ-լենինյաններն ամեն մի պատմական էտապի համար գտնում են պրոլետարական ինտերնացիոնալիզմի այնպիսի չափանիշներ, որոնք այն վերածում են դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարի գլխավոր խնդիրների լուծման կարևոր գործոնի։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո, երբ պրոլետարիատի դիկտատուրան սահմանափակված էր միայն մեկ երկրի շրջանակներով և Սովետական Միությունը միջազգային հեղափոխական շարժման պատվար էր հանդիսանում, Կոմինտերնի II կոնգրեսի բանաձևում բնորոշվեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի հետևյալ չափանիշը. «Բոլոր ուժերով ու միջոցներով օգնել ՍՍՀՄ-ի ամրապնդմանը, պայքարել ՍՍՀՄ-ի թշնամիների դեմ։ Ինչպես խաղաղության պայմաններում, այնպես էլ ՍՍՀՄ-ի դեմ ուղղված պատերազմի պայմաններում ՍՍՀՄ-ի ամրապնդման, նրա հզորության ուժեղացման, պայքարի բոլոր ասպարեզներում և բոլոր տեղամասերում նրա հաղթանակի ապահովման շահերը լիովին և անխզելիորեն համընկնում են ամբողջ աշխարհի շահերի հետ՝ շահագործողների դեմ նրանց մղած պայքարում, համընկնում են իմպերիալիզմի դեմ պայքարող գաղութային և ճնշված ժողովուրդների շահերի հետ, պայմանավորում և նպաստում են համաշխարհային պրոլետարական հեղափոխության հաղթանակին, ամբողջ աշխարհում սոցիալիզմի հաղթանակին։ Այդ պատճառով ՍՍՀՄ-ին ցույց տրվող օգնությունը, նրա պաշտպանությունը և նրա բոլոր թշնամիների դեմ նրա հաղթանակին նպաստելը պետք է որոշեն պրոլետարիատի յուրաքանչյուր հեղափոխական կազմակերպության, յուրաքանչյուր իսկական հեղափոխականի, յուրաքանչյուր սոցիալիստի, կոմունիստի, անկուսակցական բանվորի, աշխատավոր գյուղացու, յուրաքանչյուր ազնիվ մտավորականի և դեմոկրատի, յուրաքանչյուրի գործողությունները, ով ցանկանում է շահագործման, ֆաշիզմի և իմպերիալիստական լծի տապալում, իմպերիալիստական պատերազմներից փրկություն, ով ցանկանում է եղբայրություն ու խաղաղություն ժողովուրդների միջև, սոցիալիզմի հաղթանակ ամբողջ աշխարհում»։

Ներկայումս, երբ առաջացել է սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի բարձրագույն չափանիշն է պայքարը հանուն համաշխարհային սոցիալիզմի գիրքերի ամրապնդման, հանուն սոցիալիստական համագործակցության երկրների համախմբման, ընդդեմ նրա պառակտման փորձերի։ Յուրաքանչյուր սոցիալիստական երկրի նվաճումը, ամբողջությամբ վերցրած, սոցիալիստական սիստեմի ընդհանուր սեփականությունն է, այն յուրաքանչյուր ժողովրդի կոնկրետ ավանդն է համաշխարհային սոցիալիզմի գիրքերի կայունացման գործում։ Իսկ համաշխարհային սոցիալիստական սիստեմի զարգացումը համաշխարհային իմպերիալիզմի դեմ գլոբալ մասշտաբով մղվող դասակարգային սուր պայքարի օրգանական մասն է։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմն իր մեջ ներառնում է իր շահերի, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի մղած պայքարի պաշտպանության, ինչպես և ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման ըստ ամենայնի պաշտպանության պահանջ։ Պրոլետարական ինտերնացիոնալիստները հետևողական անկոմպրոմիս պայքար են մղում ընդդեմ շովինիստական ու ռասիստական գաղափարախոսության։

Այսպիսով, սոցիալիզմի համար մղվող պայքարի բարդ կոմպլեքսում ազգայինի և ինտերնացիոնալիստականի փոխհարաբերությունների պրոբլեմը կարելի է լուծել միայն պրոլետարական դասակարգային դիրքերից։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմի հասկացությունն իր դասակարգային էությունից զրկելու ամեն տեսակի փորձերն անխուսափելիորեն տանում են դեպի նացիոնալիզմ, որը հեղափոխական գործի մահացու թշնամին է, որովհետև նացիոնալիզմը «բաժանման ու մասնատման իր տակտիկայով նա ոչնչի է հավասարեցնում բոլոր ազգերի, բոլոր ռասաների, բոլոր լեզուների պրոլետարների մերձեցման ու միավորման մեծ պատգամը»[28]։

Ժամանակակից միջազգային կոմունիստական շարժումը կարող է հաջողությամբ զարգանալ ու հաղթանակել, եթե նրա առանձին ազգային ջոկատները, կոմունիստական կուսակցությունները խստիվ պահպանեն լենինյան հետևյալ սկզբունքները.

ա) իրենց ամբողջ գործունեությունն ուղղեն պրոլետարիատին նախապատրաստելու «իշխանությունը նվաճելու հենց պրոլետարիատի դիկտատուրայի ձևով»[29].

բ) դառնան «հեղափոխական պրոլետարիատի ավանգարդը... ոչ թե հեռանալով մասսաներից, այլ նրանց ավելի ու ավելի մոտենալով, նրանց բարձրացնելով-հասցնելով հեղափոխական գիտակցության ու հեղափոխական պայքարի»[30].

գ) եթե դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների վրա հիմնված, բանվոր դասակարգին, աշխատավորներին հեղափոխական պայքարում համախմբելու ընդունակ կուսակցություններն անհաշտ են օպորտունիզմի և պառակտչության ամեն մի ձևի հանդեպ[31].

դ) եթե այդ կուսակցություններն անխոնջ կերպով յուրացնում են մարքսիզմ-լենինիզմի ընդհանուր սկզբունքները կոնկրետ պայմաններում կիրառելու բարդ արվեստը, ընդունակ են ցանկացած իրադրության մեջ պաշտպանելու բանվորական շարժման վերջնական նպատակները։ Լենինը վճռականորեն դա-

[27] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, Երևան, 1950, հ. 1, էջ 27։

[28] Վ. Ի. Լենին, Եվ, հ. 7, էջ 401։

[29] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 222։

[30] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 241։

[31] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու (ռուս.), հ. 30, էջ 58։

տապարտում էր «ինչպես մասնակի պահանջները ծրագրի մեջ մտցնելը օպորտունիզմ ներկայացնելու փորձերը, այնպես էլ հիմնական հեղափոխական խնդիրը սքողելու և մասնակի պահանջներով փոխարինելու ինչ-որ փորձեր»[32]։

Կոմունիստները մերժում են ինչպես սոցիալ-ռեֆորմիստական հարմարվողականությունը, այնպես էլ ձախլիկ «ռևոլուցիոնարիզմը», որը չի ցանկանում հաշվի առնել օբյեկտիվ իրադրությունը և հղի է դաժան պարտություններով ու ծանր կորուստներով։ Ջարգանալով լենինյան գաղափարների հիման վրա, ժամանակակից համաշխարհային կոմունիստական շարժումը դարձել է մեր դարաշրջանի հզոր, ամենաազդեցիկ քաղաքական ուժը։ Կոմունիստական շարժման զարգացման ասպարեզում խոշոր ուղենիշներ են դարձել միջազգային խորհրդակցությունները։ Դրանց փաստաթղթերում մշակված են լենինյան գաղափարական ժառանգության և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության գաղափարների արդիական հարցերը։

Ժամանակակից պայմաններում, երբ սոցիալիզմի և կապիտալիզմի հակամարտությունը, ինչպես նշված է Կոմունիստական և բանվորական կուսակցությունների 1969 թ. միջազգային խորհրդակցության նյութերում,— ընդունել է համընդհանուր, գլոբալ, իսկապես համաշխարհային բնույթ և ընդգրկել հասարակական կյանքի բոլոր կողմերը՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական, գաղափարական,— անչափ աճել է կոմունիստական շարժման վերափոխիչ դերը և սոցիալական առաջադիմության համար նրա պատմական պատասխանատվությունը։ «Կոմունիստները միշտ դտնվում են աշխատավորների կենսական իրավունքների, խաղաղության համար պայքարող մարտիկների ավանգարդում։ Նրանք բարձր են պահում սոցիալիստական հեղափոխության անպարտելի դրոշը»[33],— ասվում է խորհրդակցության նյութերում։

---

32 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու (ռուս.), հ. 54, էջ 348։

33 «Международное Совещание коммунистических и рабочих партий». Документы и материалы, стр. 65.

ԳԼՈՒԽ 2

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԳՆԱԺԱՄԻ ԱՌԱՋԻՆ ԷՏԱՊԸ (1918—1939 ԹԹ.)

Առաջին համաշխարհային պատերազմը և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը դրեցին կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի առաջին էտապի սկիզբը։ 1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ բանվորների և գյուղացիների հաղթանակը իրականացրեց իմպերիալիզմի ճակատի ճեղքումը վիթխարի երկրում, կապիտալիզմն արդեն համաշխարհային տնտեսության համընդգրկող սիստեմ չէր ներկայացնում։ Սկսած 1917 թ. մարդկության համաշխարհային զարգացումը բընորոշվում է երկու սիստեմների՝ սոցիալիզմի ծնունդ առնող սիստեմի և իմպերիալիզմի պատմականորեն դատապարտված սիստեմի միջև մղվող պայքարով։ Հետագայում, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, հատկապես Եվրոպայում և Ասիայում կապիտալիստական սիստեմից ժողովրդադեմոկրատական երկրների անջատվելուց հետո, ծավալվեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ էտապը։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամն այն բանի վկայությունն է, որ կապիտալիզմը որպես հասարակական սիստեմ սպառել է իրեն։ Ընդհանուր ճգնաժամի զարգացման անխուսափելի արդյունքը համաշխարհային կապիտալիզմի կործանումն է և սոցիալիզմի ու կոմունիզմի հաղթանակը։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բնորոշ գծերն են՝ կապիտալիզմի տնտեսական ու քաղաքական զարգացման անհավասարաչափության ուժեղացումը, բանվորական զանգվածների շահագործման աճը և աշխատանքի ու կապիտալի միջև եղած հիմնական հակասության խորացումը, համաշխարհային կապիտալիստական շուկայի նեղացումը, իմպերիալիստական տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունների խորացումը, իմպերիալիզմի գաղութային սիստեմի խորտակումը։ Հարկավոր է նշել նաև կապիտալիզմի խորացող անընդունակությունը ռացիոնալ կերպով օգտագործելու իր իսկ ստեղծած արտադրողական ուժերը, ձեռնարկությունների խրոնիկական թերբեռնվածությունը և գործազուրկների մշտական բանակի առկայությունը, ինչպես նաև ռեակցիայի ուժեղացումը գաղափարախոսության, քաղաքականության և մշակույթի ասպարեզում։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ազդեցությամբ առաջացած հեղափոխական վերելքի ժամանակաշրջանը (1918—1923 թթ.)

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով սկսվեց հեղափոխական պայքարի վերելքը ինչպես զարգացած կապիտալիստական, այնպես էլ կախյալ և գաղութային երկրներում։ Հեղափոխական շարժման ավանգարդում ընթանում էր կապիտալիստական երկրների բանվոր դասակարգը։ Նրա պայքարի գլխավոր ուղղությունը և երբեմն տարերային պրոլետարական շարժման օբյեկտիվ նպատակը ոչ միայն թալանչիական իմպերիալիստական պատերազմի ավարտումն էր, այլև կապիտալիստական սիստեմի վերացումը։

1918—1923 թթ. հեղափոխական վերելքը խորապես օրինաչափ երևույթ էր։ Նրա հիմքում ընկած էր սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառների մի ամբողջ կոմպլեքս։ Մի կողմից, այն պայմանավորված էր, ամբողջությամբ վերցրած, իմպերիալիզմի թուլացմամբ, որը տեղի ունեցավ իմպերիալիստական պատերազմի և հաղթական Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով, որը նրա սիստեմից անջատեց մի վիթխարի երկիր՝ այդ սիստեմի նախկինում առավել կարևոր հիմքերից մեկը։ Մյուս կողմից, այն կապված էր յուրաքանչյուր երկրի մասշտաբով իմպերիալիստական դարաշրջանին հատուկ հիմնական հակասությունների և առաջին հերթին աշխատանքի ու կապիտալի, ինչպես նաև իմպերիալիզմի ու նրա կողմից կեղեքված գաղութների ու կիսագաղութների ժողովուրդների միջև գոյություն ունեցող հակասությունների շեշտակի սրման հետ։

Պատմական իրադրությանը համապատասխան մասսաների գրոհը բուրժուադեմոկրատական հեղափոխությունների վերածվեց Գերմանիայում, Ավստրիայում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում (իր զարգացման առաջին փուլում), Իռլանդիայում։ Համանման բնույթ էր կրում Վլադայան ապստամբությունը Բուլղարիայում, հեղափոխական շարժումը Ռումինիայում, Հունաստանում, Իսպանիայում, մասամբ Լատինական Ամերիկայի (օրինակ, Արգենտինայում), Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներում, ուր ժողովուրդների առջև կանգնած էին օտարերկրյա մոնոպոլիաների և տեղական ռեակցիայի դեմ հակաիմպերիալիստական պայքարի ընդլայնման ու խորացման խնդիրներ։ Հունգարիայում, Բավարիայում, Սլովակիայում, Ֆինլանդիայում սոցիալիստական հեղափոխություններ իրականացնելու փորձեր ձեռնարկվեցին, բայց դրանք պարտություն կրեցին։

Մյուս զարգացած կապիտալիստական երկրներում (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, հատկապես Իտալիա, Նիդեռլանդներ, Շվեդիա) մասսայական շարժումը ծավալվում էր աշխատավորների կենսական պահանջների ու իրավունքների համար մղվող պայքարի հունով, որի մեջ ներհյուսվում էին կապիտալիստական աշխարհակարգի սոցիալական վերակառուցման, սոցիալական արդարության նոր հասարակության ստեղծման պահանջները։ Այդ պայքարին առանձնահատուկ իմաստ էր տալիս նրա գրեթե համատարած զուգակցումը բանվորների և գյուղացիների պատմության մեջ առաջին պետության՝ Սովետական Ռուսաստանի պաշտպանության համար ծավալված լայն շարժման հետ։

1917—1923 թթ. հեղափոխական իրադարձությունները և առաջին հերթին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, չնայած դրանց չափազանց լայն սոցիալ-քաղաքական սպեկտրին, ամբողջությամբ վերցրած հանդիսանում էին համաշխարհային իմպերիալիզմի դեմ գրոհի սկզբնական ժամանակաշրջանը։ Դրանց այլատեսակությունը չխանգարեց դրանց բոլորին դառնալու իմպերիալիզմի տիրապետության դեմ ժողովուրդների սոցիալական մեծ հեղափոխության բաղադրամասեր, հեղափոխություն, որը նշանավորեց պատմության նոր դարաշրջանի, մարդկային հասարակության՝ կապիտալիզմից սոցիալիզմին ու կոմունիզմին անցնելու դարաշրջանի սկիզբը։ Այդ իրադարձությունները փայլուն կերպով հաստատեցին սոցիալական հեղափոխության՝ Վ. Ի. Լենինի մշակած գիտական կոնցեպցիան։ Համաշխարհային պրոլետարիատի առաջնորդն ընդգծում էր, որ սոցիալական հեղափոխությունը որպես կենդանի երևույթ անիմաստ է «առանց փոքր ազգերի ապստամբության գաղութներում ու Եվրոպայում, առանց մանր բուրժուազիայի մի մասի հեղափոխական պոռթկումների՝ նրա բոլոր նախապաշարմունքներով հանդերձ, առանց պրոլետարական ու կիսապրոլետարական անգիտակից մասսաների շարժման՝ ընդդեմ կալվածատիրական, եկեղեցական, միապետական, ազգային և այլ ճնշման...»։ Օբյեկտիվորեն դա հակակապիտալիստական պայքար է։ Նա սովորեցնում էր, որ «հեղափոխության գիտակից ավանգարդը, առաջավոր պրոլետարիատը, արտահայտելով այլազան ու այլաձայն, խայտաբղետ ու արտաքնապես մասնատված մասսայական պայքարի այդ օբյեկտիվ ճշմարտությունը, կկարողանա միավորել այդ պայքարը և ուղղություն տալ նրան, նվաճել իշխանությունը, գրավել բանկերը, էքսպրոպրիացիայի ենթարկել բոլորի համար (թեև տարբեր պատճառներով) ատելի տրեստներն ու իրագործել դիկտատորական այլ միջոցներ, որոնք բոլորը միասին հանգեցնում են բուրժուազիայի տապալմանն ու սոցիալիզմի հաղթանակին, մի հաղթանակ, որը բնավ միանգամից չէ, որ «մաքրվելու» է մանր բուրժուական խարամներից»[1]։

Հեղափոխական ալիքի վերելքի պայմաններում միջազգային հեղափոխական շարժման գլխավոր շտաբի աչքի ընկնող դերը կատարում էր Կոմունիստական ինտերնացիոնալը։ Կապիտալի դեմ հեղափոխական գրոհի տարիներին (1919—1920 թթ.) կոմունիստների ջանքերն ուղղելով բուրժուազիայի իշխանության տապալմանը, նա սթափ հաշվի էր առնում աշխարհում տեղի ունեցող և նշմարվող փոփոխությունները։ Այսպես, Կոմինտերնի երրորդ կոնգրեսը (1921 թ. ամառ) նկատեց հեղափոխական ալիքի որոշակի անկումը, որպես առաջնակարգ նշանակության խնդիր երիտասարդ կոմունիստների առջև դրեց աշխատավորների լայն զանգվածներին իր կողմը գրավելը, գալիք մարտերում հաղթանակի հասնելու համար։

Կապիտալիզմի և իմպերիալիզմի դիրքերի դեմ հեղափոխական ճնշումը տեղի էր ունենում հետպատերազմյան տնտեսական քայքայման, կապիտալիստական երկրների տնտեսական կյանքի կազմալուծման, նրանց միջև հաստատված առևտրական ու ֆինանսական կապերի խախտման պայմաններում։ Միջազգային հարաբերությունների ասպարեզում դրանք եղան արտաքին-քաղաքական ծայրահեղ անկայունության, դիվանագիտական սուր, իսկ երբեմն էլ ռազմական կոնֆլիկտների (օրինակ, հույն-թուրքական պատերազմը և այլն) տարիներ, հակասովետական մոլեգին կամպանիայի և սովետական երկրի կյանքին կոպիտ ռազմական միջամտության տարիներ։ Կապիտալիստական աշխարհը դեռ ոչ մի կերպ չէր կարողանում հարմարվել նոր իրավիճակին՝ աշխարհի պառակտմանը երկու լագերի, իմպերիալիստական հին համաձայնությունների ու դաշինքների ամբողջ սիստեմի ճգնաժամին, մի ամբողջ շարք նոր սուվերեն պետությունների առաջացմանը, ազդեցության նոր ոլորտներին, իմպերիալիզմի գաղութային սիստեմում ճեղքվածք առաջանալուն։ Այդ ամենը լրացուցիչ դժվարություններ էր առաջացնում համաշխարհային բուրժուազիայի համար, նրան ստիպում մոբիլիզացնելու բոլոր ուժերն ու միջոցները հեղափոխական ուժերի սոցիալական մարտահրավերը դիմագրավելու համար։

Մասսայական հեղափոխական շարժման պրոցեսում տեղի էր ունենում ինտերնացիոնալիստական հոսանքների գաղափարական ու կազմակերպական ձևավորվումը ինքնուրույն հեղափոխական պրոլետարական կուսակցությունների ու խմբերի։ 1918 թ. հունվարին կազմավորվեց Արգենտինայի ինտերնացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը, որը 1920 թ. սկսեց կոչվել Արգենտինայի կոմկուս։ 1918 թ. կոմկուսներ կազմավորվեցին նաև Ավստրիայում, Հունգարիայում, Հոլանդիայում, Հունաստանում, Լեհաստանում, Ֆինլանդիա-

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 30, էջ 67—68։

յում, 1919 թ.՝ Բուլղարիայում, Դանիայում, Մեքսիկայում, ԱՄՆ-ում, Հարավսլավիայում, 1920 թ.՝ Ավստրալիայում, Անգլիայում, Բելգիայում, Ինդոնեզիայում, Իրանում, Իսպանիայում, Թուրքիայում, Ուրուգվայում, Ֆրանսիայում, 1921 թ.՝ Իտալիայում, Չինաստանում, Պորտուգալիայում, Ռումինիայում, Մոնղոլիայում (ժողովրդա-հեղափոխական կուսակցություն), Լյուքսեմբուրգում, Նոր Զելանդիայում, Չեխոսլովակիայում, 1922 թ.՝ Բրազիլիայում, Կանադայում, Չիլիում, Ճապոնիայում, 1923 թ.՝ Նորվեգիայում։

Հեղափոխական վերելքի ժամանակաշրջանի միջազգային բանվորական շարժման համաշխարհային-պատմական նվաճումը եղավ Կոմունիստական ինտերնացիոնալի կազմավորումը 1919 թ. մարտին, որն իր IV կոնգրեսի պահին, 1922 թ. վերջին, իր շարքերում միավորում էր աշխարհի 58 կոմունիստական կուսակցություններ։

Հեղափոխական շարժումը կապիտալիստական երկրներում ուղեկցվում էր մասսայական բանվորական կազմակերպությունների բուռն աճով, քաղաքական ակտիվ կյանքում աշխատավորների և մանր բուրժուազիայի վիթխարի մասսաների ներգրավումով, բայց այդ մասսաները մեծ մասամբ գնում էին սոցիալ-շովինիստների և ցենտրիստների ետևից, որոնք քարոզում էին հարմարվողական ռեֆորմիստական ծրագիր։ Իրենց արմատական շահերը գիտակցելու և ռեֆորմիստական պատրանքների գերությունից փրկվելու գործում մասսաներին կարող էին օգնել միայն հետևողական հեղափոխական կուսակցությունները։ Սակայն երիտասարդ կոմկուսները, դրանց թվում նույնիսկ Արևմտյան Եվրոպայում ամենախոշոր Գերմանիայի կոմունիստական կուսակցությունն, այդ տարիներին դեռ լիակատար չափով նոր տիպի մարքսիստական-լենինյան կուսակցություններ չէին դարձել։ Նրանք դեռ այդպիսին պետք է դառնային սոցիալ-դեմոկրատիզմի ու ցենտրիզմի բեռան դեմ ծանր պայքար մղելով, ձախլիկ խելացնորությունների՝ «ձախության մանկական հիվանդության» հաղթահարման միջոցով։

Կապիտալիզմի երկրների պրոլետարիատի հեղափոխական դասակարգային ինքնագիտակցության աճման պրոցեսը ծանր ու տառապալից էր։ Երիտասարդ կոմունիստական կուսակցություններին ու խմբերին դիմակայում էր ոչ միայն մինչև ատամները զինված իմպերիալիզմը, այլև սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ծախու պարագլուխները, որոնք հեղափոխական շարժումը խեղդողների գործակիցների դեր կատարեցին և իրենց խայտառակեցին համաշխարհային հեղափոխական շարժման առջև։ «...Հեղափոխության առաջին պահին շատերը հույս ունեին, որ Արևմտյան Եվրոպայում սոցիալիստական հեղափոխություն կսկսվի իմպերիալիստական պատերազմի վերջանալու հետ անմիջականորեն կապված մոմենտից, որովհետև այդ մոմենտին, երբ մասսաները զինված էին, հեղափոխությունը կարող էր ավելի մեծ հաջողությամբ առաջանալ նաև Արևմուտքի որոշ երկրներում։ Այդ կարող էր տեղի ունենալ, եթե բանից դուրս չգար, որ Արևմտյան Եվրոպայում ավելի խոր է պառակտումը պրոլետարիատի շարքերում, մեծ է նախկին սոցիալիստական առաջնորդների դավաճանությունը»[2],— նշում էր Վ. Ի. Լենինը։

Լենինը միջազգային պրոլետարիատի ավանգարդին՝ կոմունիստական կուսակցություններին, սովորեցնում էր դասեր առնել դասակարգային մարտերից ու ծավալված հեղափոխական գրոհից, որը 1923 թ. վերջին բուրժուազիային հաջողվեց ճնշել։ 1923 թ. արյան մեջ խեղդված Համբուրգի բանվորների ապստամբությունը Արևմտյան Եվրոպայի հեղափոխական հրդեհի վերջին բռնկումն էր։ Նուտափույթ համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հարցը ժամանակավորապես հանվեց։ Կապիտալիստական երկրների պրոլետարիատի և կոմունիստական կուսակցությունների առջև կանգնեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի կարևորագույն պահանջներից մեկը՝ ամեն ինչ արա քո սեփական երկրում սոցիալիստական հեղափոխության իրականացման համար և միաժամանակ պաշտպանիր Սովետական Միությանը՝ համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հայրենիքին ու հենարանին։

1918—1923 թթ. հեղափոխական վերելքը չափազանց նշանակալից քաղաքական ու սոցիալական փոփոխություններ ծնեց։ Հեղափոխությունները ոչընչացրին Հոհենցոլերների դինաստիան Գերմանիայում և Հաբսբուրգներինը՝ Ավստրո-Հունգարիայում։ Պրոլետարիատի ճնշման տակ շատ երկրներում անցկացվեցին որոշ սոցիալական ռեֆորմներ՝ ագրարային վերափոխություններ, ընտրական իրավունքների ընդլայնում, սոցիալական ապահովության և 8-ժամյա աշխատանքային օրվա սահմանում և այլն։ Եվ չնայած բուրժուազիան հետագայում ետ վերցրեց բանվոր դասակարգին արած այդ զիջումներից մի քանիսը, այնուամենայնիվ հետպատերազմյան հեղափոխական ճգնաժամի տարիներին մոնոպոլիստական կապիտալի տիրապետությանը հասցրած հզոր հարվածներն անհետևանք չմնացին։ Բուրժուազիան ստիպված էր մանևրել, վերակառուցել իր կուսակցություններն ու մյուս դասակարգային կազմակերպությունները և պետական մեքենայի, բուրժուական դիկտատուրայի սասանված ապարատը։ Նորագույն ժամանակի սկզբում համաշխարհային իմպերիալիզմի զարգացման ընդհանուր տենդենցի համար չափազանց հատկանշական եղավ արդեն 20-ական թվականներին մի քանի կապիտալիստական երկրների կառավարող շրջանների քաղաքական ռեակցիայի ծայրահեղ ձևերի հակումը, բուրժուական պառլամենտարիզմից նահանջելը, ֆաշիստական ու կիսաֆաշիստական դիկտատուրաներ (Իտալիա, Իսպանիա, Հունգարիա, Պորտուգալիա, Լեհաստան) հաստատելը։ Դրա հիմքում ընկած էր հեղափոխական շարժման նոր վերելքի հանդեպ եղած սարսափը, պրոլետարիատի և միջին խավերի զանգվածներին ճնշելու և խաբելու ավելի կատարյալ զենք ստեղծելու ձգտումը։

1918—1923 թթ. ժամանակաշրջանում համաշխարհային զարգացման գլխավոր արդյունքն այն էր, որ սովետական պետությունը ոչ միայն պաշտպանեց իր գոյությունը, քաղաքացիական պատերազմում ջախջախելով հայրենական հակահեղափոխությանը և ետ մղելով միջազգային իմպերիալիստական ինտերվենցիայի արշավանքը, այլև ձեռնամուխ եղավ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի իրականացմանը։

Կապիտալիզմի ժամանակավոր մասնակի կայունացման ժամանակաշրջանը (1924—1929 թթ.)

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի առաջին փուլի երկրորդ շրջանը (1924—1929 թթ.) ժամանակավոր մասնակի կայունացման շրջան եղավ։ Նրա բնորոշ գծերն էին հեղափոխական ալիքի տեղատվությունը, համաշխարհային հեղափոխական պրոցեսի դանդաղումը, կապիտալիստական էկոնոմիկայի մուտքը վերելքի փուլ, արտաքին-քաղաքական հակասությունների ժամանակավոր թուլացումը, դրանց որոշակի կայունացումը Վերսալ-Վաշինգտոնյան և միջազգային մի շարք այլ համաձայնագրերի բազայի վրա։

Հաղթահարելով առաջին համաշխարհային պատերազմի առաջացրած քաոսն ու ավերվածությունները, հաղթելով «իրենց սեփական բանվորներին

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 532։

ամեն մի երկրում»[3], կապիտալիստական աշխարհը թևակոխեց կայունացման գոտին, որի էական տարրը վալյուտայի կայունացումը և վարկա-դրամային սիստեմի ամրապնդումն էր պատերազմում հարստացած ԱՄՆ-ի օժանդակությամբ։ Այդ ժամանակաշրջանը նշանավորվեց կապիտալի հետագա համակենտրոնացմամբ ու կենտրոնացմամբ, մոնոպոլիաների աճով, որն ուղեկցվում էր արտադրական ապարատի տեխնիկական ու կազմակերպչական վերակառուցմամբ։ Դրա հետ մեկտեղ հետպատերազմյան արդյունաբերական բումի պայմաններում ևս քիչ չէին այն բանի նշանները, որ տնտեսական վերելքը չի կարող կայուն ու տևական լինել. չափազանց նշանակալի արտադրական կարողությունների թերբեռնվածությունը դարձել էր խրոնիկական, չափազանց դանդաղորեն էր նվազում գործազրկությունը՝ այն այդպես էլ չվերացվեց մինչև 20-ական թվականների վերջը, երբ վերստին սկսեց սրընթաց վեր բարձրանալ, շարունակում էր ծանր վիճակում մնալ գյուղատնտեսությունը, ընդ որում մի քանի զարգացած կապիտալիստական երկրներում (ԱՄՆ) այդպես էլ այն դուրս չեկավ ճգնաժամի գոտուց։

Ազդեցության նոր ոլորտները գլխավոր իմպերիալիստական հաղթող տերությունների միջև բաժանելու հիման վրա միջազգային հարաբերությունների բնագավառում ձևոք բերվեց ժամանակավոր status quo։ Եվրոպայում գերմանական ռեպարացիաների հարցի կապակցությամբ առաջացած քաղաքական սուր ճգնաժամը վերացվեց 1924 թ. Դաուեսի պլանն ընդունելուց հետո, որի համաձայն Գերմանիան ազատվում էր ռեպարացիոն վճարումների մեծ մասից և ի լրացումն դրա անգլիական ու ամերիկյան խոշոր փոխառություններ էր ստանում իր արդյունաբերական պոտենցիալի վերականգնման համար։ Այդ համաձայնության աստառը Արևմուտքի երկրների կառավարող շրջանների ձգտումն էր՝ քայքայել ՍՍՀՄ-ի ինդուստրացումը, դեպի Արևելք ուղղել գերմանական առևտրական, ինչպես նաև քաղաքական էքսպանսիան։ 1925 թ. հոկտեմբերին կնքելով Լոկարնոյի համաձայնագիրը, իմպերիալիստական պետությունները երաշխավորեցին Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև և Բելգիայի ու Գերմանիայի միջև Վերսալյան պայմանագրով հաստատված սահմանների անձեռնմխելիությունը։ Բայց նրանք հրաժարվեցին երաշխավորել Գերմանիայի ու Լեհաստանի և Գերմանիայի ու Չեխոսլովակիայի միջև գոյություն ունեցող սահմանները, մի բան, որը բացահայտորեն խրախուսում էր Գերմանիայի էքսպանսիան դեպի Արևելք։

Կայունացման ժամանակաշրջանի սկիզբը նշանավորվեց կապիտալիստական պետությունների կողմից ՍՍՀՄ-ը ճանաչելու գոտիով, նրա հետ դիվանագիտական ու առևտրական հարաբերություններ հաստատելով։ Այդ գործողությունները հարկադրական էին, դրանք վկայում էին աշխարհում սոցիալիզմի օջախը ճակատային գրոհով վերցնելու, միջազգային հեղափոխական շարժման գլխավոր հենարանը վերացնելու համաշխարհային իմպերիալիզմի փորձերի ձախողման մասին։

Միջազգային հարաբերությունների ասպարեզում առավել սուր հակասությունների հարթեցումը չէր կարող երկարատև լինել։ Այն չէր կարող առավել կամ նվազ երկարատև ժամկետով մեղմացնել և առավել ևս վերացնել միջիմպերիալիստական անլուծելի հակասությունները։ «Կայունացնող» նոր համաձայնագրերն իրենց մեջ պարունակում էին նոր, առավել դաժան, քան անցյալում, կոնֆլիկտների սերմնահատիկներ։ Վերսալը, Դաուեսի պլանը, Լոկարնոն

[3] Վ. Ի. Լենին, հատ. 37, էջ 183։

անխուսափելիորեն տանում էին դեպի առաջին համաշխարհային պատերազմում «տուժածների» ու «խաբվածների» նոր բլոկի առաջացում։ Դաուեսի պլանն անհրաժեշտ ֆինանսական հիմք էր ստեղծում Գերմանիայի վերականգնման և նրա ռազմատնտեսական պոտենցիալի ծավալման համար՝ որպես այդ նոր բլոկի հիմքի ու հեգեմոնի։ Խաղաղ օվկիանոսում խորացան ճապոնա-ամերիկյան հակասությունները։

Ժամանակաշրջանի (1924—1929 թթ.) բնորոշ գիծը եղավ աշխատավոր մասսաների վրա սոցիալ-դեմոկրատիայի ազդեցության որոշակի ընդլայնումը։ Հեղափոխական ալիքի ժամանակավոր անկման, գրաղվածության աճի, բանվորների որոշակի մասի կյանքի և աշխատանքի պայմանների որոշ բարելավման պայմաններում աջ սոցիալիստական գաղափարախոսները՝ Կ. Կաուցկին, Ռ. Հիլֆերդինգը և մյուսները դառնում են «կազմակերպված կապիտալիզմից», «տնտեսական դեմոկրատիայի», կապիտալիստների ու բանվորների «սոցիալական պարտնյորության» տեսությունների ակտիվ տարածողներ։ Նրանք պնդում էին, որ մոնոպոլիաների աճը նշանակում է «կազմակերպված կապիտալիզմի» փուլի սկզբնավորում, արտադրության անարխիայի հաղթահարում։ Արտադրության և աշխատանքի պետական-մոնոպոլիստական կարգավորման մեջ աջ սոցիալ-դեմոկրատները տեսնում էին պլանային տնտեսության սոցիալիստական հիմունքների սկիզբը։ Սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխները աշխատավոր մասսաներին ներշնչում էին «երրորդ ուղու» գոյության մասին վնասակար գաղափարը, որին հետևելով բանվոր դասակարգն իբր կարող է սոցիալիզմին հասնել առանց իմպերիալիստների հեղափոխականորեն տապալման և առանց պրոլետարիատի դիկտատուրայի։

Սակայն ռեֆորմիստների գործունեությունը, թեկուզ և այն հասցրեց գործադուլային պայքարի որոշակի անկման և միջազգային բանվորական շարժման մեջ համաձայնողական թևի մասսայական բազայի ամրապնդման, իհարկե, չէր կարող «վերացնել» կապիտալիզմի հիմնական հակասությունը՝ հակասությունն աշխատանքի և կապիտալի միջև։ Հենց կապիտալիզմի բնույթով պայմանավորված այդ հակասությունն անխուսափելիորեն պետք է վերստին սրվեր։ Նույնիսկ կապիտալիզմի ամենամեծ «ծաղկման» փուլերում բնակչության ավելի ու ավելի մեծ մասի պրոլետարականացումը, զանգվածային գործազրկությունը բանվոր դասակարգի նոր հեղափոխական ելույթներ էին կանխատեսում։ 1924 թ. հակաֆաշիստական կեսմիլիոնանոց գործադուլն Իտալիայում, 1925 թ. մասսայական ցույցերն ու գործադուլները Ֆրանսիայում, 1926 թ. ընդհանուր գործադուլն Անգլիայում, որը կազմալուծեց երկրի տնտեսական կյանքը, 1927 թ. խոշոր գործադուլն ու բանվորների զինված պայքարն Ավստրիայում՝ այդ բոլոր ելույթները խոսում էին կապիտալիստական կայունացման խախուտ լինելու, նրա սասանվելու մասին։

Իմպերիալիստական սիստեմին հասցված ուժեղագույն հարված էր Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներում ազգային-հեղափոխական և ազատագրական շարժման տարեցտարի ուժեղանալը, որը վկայում էր կապիտալիզմի ևս մեկ գլխավոր հակասության՝ գաղութների և մետրոպոլիաների միջև գոյություն ունեցող հակասության նոր սրման մասին։ Ազատագրական շարժման վերելք տեղի ունեցավ 1925—1927 թթ. Սիրիայում և Ինդոնեզիայում, 1925—1926 թթ.՝ Բրազիլիայում։ Կապիտալիստական կայունացման սասանմանը նպաստում էր Չինաստանի ազգային-ազատագրական հեղափոխությունը։ Իր սուր ծայրով այն ուղղված էր իմպերիալիստների և նրանց պաշտպանող ֆեոդալական-կոմպրադորական ռազմամոլ կլիկների դեմ։

Կապիտալիստական կայունացումը հիմքից խարխլվում էր նաև առանձին երկրների զարգացման ուժեղացած անհամաչափությամբ։ Այն ժամանակ, երբ ԱՄՆ-ի, Ճապոնիայի և Գերմանիայի տնտեսական հզորությունն արագորեն աճում էր, Անգլիայի տեսակարար կշիռը համաշխարհային արտադրության մեջ նվազում էր, իսկ ֆրանսիական էկոնոմիկան դոփում էր տեղում։

Համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացման տեմպի բացահայտորեն նկատելի դանդաղման պայմաններում սրությամբ կանգնեց կապիտալիստական երկրներով շրջապատված ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման հարցը։ «Անհավանականը փաստ դարձավ՝ սոցիալիստական հանրապետությունը կապիտալիստական շրջապատման մեջ է»[4],— գրում էր Լենինը։ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի շինարարությունը միջազգային նշանակություն ունեցող գործոնի վերածվեց, և դրան աջակցելը ամբողջ կոմունիստական շարժման համար առաջնակարգ գործ դարձավ։

Ելնելով լենինյան ուսմունքից, ՍՄԿԿ-ն սովետական ժողովրդին կողմնորոշում էր դեպի սոցիալիզմի կառուցումը մեկ երկրում անկախ այն բանից, թե բանվոր դասակարգն ուրիշ երկրներում արդյոք կանցնի՞ իշխանության գլուխ։ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման այդ խնդիրը ամբողջ աշխարհում սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարի շահերին համապատասխանում էր այն պատճառով, որ՝ ա) ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման և սովետական պետության ամրապնդման օրինակը հիմնական հեղափոխականացնող ազդեցություն էր գործում մարդկության զարգացման վրա, բ) ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցումը և սովետական պետության ամրապնդումը նշանակում էր համաշխարհային հեղափոխական շարժման հենարանի և բազայի ստեղծում և կայունացում։

Այդ պատճառով Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը իր երկրում սոցիալիզմի կառուցումը դիտում էր որպես իր ինտերնացիոնալ պարտքը։ «Այժմ միջազգային հեղափոխության վրա մեր գլխավոր ներգործությունը,— գրում էր Լենինը դեռ 1921 թ.,— կատարում ենք մեր տնտեսական քաղաքականությամբ։ Բոլորը Սովետական Ռուսաստանյան հանրապետությանն են նայում, աշխարհի բոլոր երկրների բոլոր աշխատավորներն առանց որևէ բացառության և առանց որևէ չափազանցության... Պայքարն այդ ասպարեզն է տեղափոխվել համաշխարհային մասշտաբով։ Կլուծենք մենք այդ խնդիրը՝ և այդ ժամանակ մենք միջազգային մասշտաբով շահել ենք հաստատապես և վերջնականորեն»[5]։

Սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսության և նրանից բխող ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման և հաղթանակի հնարավորության ընդունման դեմ, այսպես կոչված պերմանենտ հեղափոխության դրոշով հանդես եկան տրոցկիստները. նրանք կուսակցության վզին փաթաթում էին մի այնպիսի քաղաքականություն, որի նպատակն էր զինված միջոցներով Արևմուտքում հեղափոխություններ հրահրել։ Կուսակցությունը մերժեց Տրոցկու կապիտուլյանտական դիրքը։ ԿԻԳԿ VII ընդլայնված պլենումը, դատապարտելով տրոցկիստական գիծը, ընդգծեց ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման առանձնահատուկ միջազգային նշանակությունը։ «Սովետական երկիրը,— ասվում էր պլենումի բանաձևում,— օբյեկտիվորեն հանդիսանում է միջազգային հեղափոխության գլխավոր կազմակերպիչ կենտրոնը»[6],— և սոցիալիզմի կառուցումը ՍՍՀՄ-ում «ազգային սահմանափակության» քաղաքականություն չէ։

ՍՍՀՄ-ի նկատմամբ ամբողջ աշխարհի աշխատավորության սերն ու համակրանքը հատկապես դրսևորվեցին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության տասներորդ տարեդարձի տոնակատարության օրերին։ Բանվոր դասակարգը, բոլոր երկրների ճնշվածներն ու շահագործվողները նշեցին բանվորների և գյուղացիների աշխարհում առաջին պետության տասնամյա պանծալի հոբելյանը։ Այդ օրերին արտասահմանյան երկրների աշխատավորների տասնյակ պատվիրակներ այցելեցին Սովետական Միություն և սեփական աչքով համոզվեցին, որ սովետական ժողովուրդը խաղաղության մեծ մարտիկ է, որ նա համակված է իր երկրում սոցիալիզմի շինարարության աշխատանքային խանդավառությամբ։ Մեծ Հոկտեմբերի տասնամյակի տոնակատարության օրերին՝ 1927 թ. նոյեմբերին, Մոսկվայում կայացավ Սովետական Միության բարեկամների կոնգրեսը, որին մասնակցում էին աշխարհի 48 երկրներից ժամանած 947 պատվիրակներ։ Կոնգրեսն ընդունեց «Կոչ» ընդդեմ իմպերիալիստական պատերազմի և հայտարարեց, որ ՍՍՀՄ-ի դեմ պատերազմն ամբողջ աշխարհի աշխատավորները կդիտեն որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն։ Տարեցտարի աճում էր Սովետական Միության հեղինակությունը, և ոչ մի պրովոկացիա չէր կարող խափանել սոցիալիզմի կառուցումը ՍՍՀՄ-ում։ Կրախի մատնվեց նաև իմպերիալիստների կազմակերպած ՍՍՀՄ-ի տնտեսական բլոկադան։

Կոմունիստական ինտերնացիոնալի՝ 1928 թ. կայացած VI կոնգրեսը որոշեց ՀամԿ(բ)Կ-ի, որպես Կոմունիստական ինտերնացիոնալի սեկցիայի, պարտականությունները. պաշտպանել հեղափոխական ու բանվորական շարժումը կապիտալիստական երկրներում, ազգային-հեղափոխական շարժումները ճնշված և գաղութային երկրներում։ Միևնույն ժամանակ Կոմինտերնի ծրագիրը որոշեց նաև միջազգային պրոլետարիատի պարտականությունները ՍՍՀՄ-ի հանդեպ՝ նպաստել սոցիալիստական շինարարությանը ՍՍՀՄ-ում և բոլոր միջոցներով նրան պաշտպանել իմպերիալիստական տերությունների հարձակումից։ Կապիտալիզմի ժամանակավոր կայունացումը չէր կարող փոխել ՍՍՀՄ-ում սոցիալիստական հարաբերությունների զարգացման ու կայունացման վճռական փաստը։ Այն չէր կարող լինել ոչ այլ ինչ, եթե ոչ այդ ճգնաժամի հետագա խորացման, մարդկային հասարակության սոցիալական վերակառուցման համար պայքարող ուժերի նոր հաջողության նախերգանք։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը (1929—1933 թթ.)

1929—1933 թթ. կապիտալիստական աշխարհն ապրում էր համաշխարհային տնտեսական դաժան ճգնաժամ։ Իր հետևանքներով այն կապիտալիզմի պատմությանը հայտնի ճգնաժամերից ամենախորն ու ամենաավերիչն էր։ Այս կամ այն չափով ընդգրկելով աշխարհի բոլոր կապիտալիստական երկրները, ճգնաժամը կապիտալիստական էկոնոմիկան ետ նետեց XX դարի սկզբի մակարդակը։ Ճգնաժամի տարիներին արդյունաբերական արտադրության ծավալը կապիտալիստական երկրներում կրճատվեց 38 տոկոսով, իսկ գյուղատնտեսական արտադրությունը նվազեց մեկ երրորդով։ Կազմալուծվեց նաև համաշխարհային կապիտալիստական վարկադրամային համակարգը։ Տնտեսական ճգնաժամի ծանրությունն ընկավ ամենից առաջ աշխատավոր զանգվածների ուսերին։ Խիստ աճեց գոր-

[4] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու (ռուս.), հ. 44, էջ 484։

[5] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու (ռուս.), հ. 43, էջ 341։

[6] «Коммунистический Интернационал в документах», 1933, стр. 680.

ծաղուրկների բանակը, նրանց թիվը կազմում էր մոտ 30 մլն մարդ, քայքայվեցին միլիոնավոր գյուղացիներ, նրանց տնտեսությունները վաճառվեցին պարտքերի դիմաց։ Շարժվելով դեպի քաղաքները, նրանք լրացնում էին գործազուրկների բանակը։ Քայքայվեցին նաև միլիոնավոր արհեստավորներ ու մանր առևտրականներ։ Տնտեսական ճգնաժամն առավել կործանարար ուժով ազդեց գաղութային ու կախյալ երկրների միլիոնավոր գյուղացիների դրության վրա։ Տնտեսական ճգնաժամը շոշափեց նաև միջազգային հարաբերությունների բնագավառը։ Շեշտակիորեն սրվեց իրացման շուկաների համար մղվող պայքարը. արտաքին առևտրական մրցակցությունը հասցրեց աշխարհը ազդեցության ոլորտների բաժանելու մասին նախկինում ձեռք բերված համաձայնությունների խախտման։ Դադարեց պահպանվել պայմանագրերի Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմը։

1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամի հսկայական մասշտաբները բացատրվում են նրանով, որ դա ոչ թե սովորական ցիկլային ճգնաժամ էր, այլ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում տեղի ունեցած ճգնաժամ. կապիտալիզմի ծայրահեղ լարված ներքին հակասությունները խորանում էին արտաքին-քաղաքական ամենասուր հակասություններով, այսինքն՝ արտադրության զարգացումը կապիտալիզմին հասցրեց այն սահմանագծին, երբ նա արդեն անընդունակ դանվեց գործել արտադրության հին մեխանիզմի հիման վրա։ Համաշխարհային տնտեսական ճգնաժամը բացահայտեց կապիտալիզմի գերհասունությունը, կապիտալիզմ, որին հրաժարվեցին ծառայել ազատ ապրանքային շուկայի և դրամական շրջանառության օրենքների հետ կապված տնտեսական հարաբերությունները։

Ամբողջ կապիտալիստական աշխարհն ընդգրկած տնտեսական ճգնաժամի ավերիչ հետևանքներն առանձնահատուկ տպավորություն էին գործում Սովետական Միության անշեղորեն զարգացող տնտեսության բարձր տեմպերի ֆոնի վրա։ Սովետական երկրում առաջին հնգամյա պլանի կատարման հետևանքով ցայտուն կերպով բացահայտվեց երկու սոցիալ-տնտեսական սիստեմների՝ սոցիալիստականի և կապիտալիստականի, զարգացման ուղիների հակադրությունը։ Այն ժամանակ երբ տնտեսական ճգնաժամը կապիտալիստական աշխարհին նետեց XX դարի սկզբի արտադրության մակարդակը, սովետական երկրի պլանային տնտեսությունը 1918 թ. համեմատությամբ ավելացավ 259 տոկոսով։ Սովետական Միությունը վստահորեն և հաստատակամորեն ոտք դրեց երկրի ինդուստրացման ուղին։ Սոցիալիստական և կապիտալիստական տնտեսության վիճակի հակադրությունն ի ցույց դրվեց ամբողջ աշխարհի առջև։ Կապիտալիզմի երկրներում՝ մեռյալ հանքեր, հանգած դոմենյան վառարաններ, ֆաբրիկաների ու գործարանների ամայացած կորպուսներ և տասնյակ միլիոնավոր գործազուրկներ։ Սոցիալիզմի երկրում՝ 1500 նոր խոշոր ձեռնարկություններ և դրանց թվում Խարկովի տրակտորային գործարանը, Կուզնեցկի մետալուրգիական կոմբինատը, Բերեզնիկիի քիմիական կոմբինատը, Դնեպրի հիդրոէլեկտրակայանը խանդավառ աշխատանքի էին կոչում սոցիալիզմի հարյուր հազարավոր ազատ աշխատավորների։ Այն ժամանակ, երբ կապիտալիստական աշխարհում տեղի էր ունենում միլիոնավոր աշխատավոր գյուղացիների քայքայման պրոցես, ՍՍՀՄ-ում միլիոնավոր մանր և մանրագույն սակավարտադրողական գյուղացիական տնտեսություններ անցան կոոպերացման ուղին և ստեղծեցին խոշոր կոլեկտիվ տնտեսություններ։ Սովետների մեծ երկիրն այդպես էր գործով ապացուցում, որ կապիտալիզմի կապանքներից ազատագրված աշխատավորները կարող են ստեղծել և ստեղծում են նոր հասարակու-

թյուն, որին հայտնի չեն կապիտալիզմի խոցերը՝ շահագործումը, ճգնաժամերը, գործազրկությունը։ Առաջին հնգամյա պլանի կատարումն ամբողջ աշխարհի առջև ցուցադրեց պլանային սոցիալիստական տնտեսության առավելությունը կապիտալիստական էկոնոմիկայի նկատմամբ՝ նրա արտադրության անարխիայով հանդերձ։

Տնտեսական ճգնաժամի խորացման իրադրության պայմաններում շեշտակիորեն սրվեց դասակարգային պայքարը։ 1929—1933 թթ. 15 խոշոր երկրներում տեղի ունեցավ 20 հազ. գործադուլ, որոնց մասնակցեց մինչև 10 մլն մարդ։ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Կանադայում վիթխարի չափեր ընդունեցին գործազուրկների շարժումները, որոնք անցնում էին «Աշխատանք և հաց» լոզունգների ներքո։ Նշանակալի չափեր ընդունեցին գյուղացիական հուզումները Լեհաստանում, Հարավսլավիայում, Չեխոսլովակիայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում։ Եռանդուն կերպով պայքարի մեջ մտան քաղաքային բազմամարդ միջին խավերը։ Բանվոր դասակարգի մեծացող ակտիվության պայմաններում աճում էր կոմունիստների ազդեցությունը, ստվարանում էին կոմունիստական կուսակցությունների շարքերը։ Այսպես, մեկ տարում՝ 1931-ից մինչև 1932 թվականը, Գերմանիայի կոմունիստական կուսակցության անդամների թիվը 100 հազարից հասավ մինչև 300 հազարի։

Կապիտալիզմի հարաբերական կայունացման կրախը, տնտեսական խոր ճգնաժամը և հեղափոխական շարժման ուժեղացումը դեռ չէին նշանակում, թե վրա է հասել կապիտալիզմի «ավտոմատիկ կրախը»։ 1929—1933 թթ. ճգնաժամի դասերը կառավարող դասակարգերին հասցրին տնտեսական կյանքի մեջ կապիտալիստական պետության ինտենսիվ միջամտության միջոցով տնտեսական քայքայումը հաղթահարելու ձգտմանը։ 1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամը բեկման պահ եղավ, երբ համաշխարհային պատերազմի տարիներին իր դերը կատարած և կապիտալիզմի կայունացման տարիներին թուլացած պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը վերածվեց աշխարհի կապիտալիստական կարևորագույն երկրների տնտեսական զարգացման գլխավոր գործոնի։

Սակայն պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը կյանքի կոչվեց ոչ թե միայն 1929—1933 թթ. տնտեսական իրադրության կարիքներից, այլև կապիտալիստական տնտեսության հետ սոցիալիստական տնտեսության սկսած մրցակցությունից և կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի չափազանց սուր հակասությունների, ինչպես ներքին՝ սոցիալ-տնտեսական ու քաղաքական, այնպես էլ արտաքին՝ միջիմպերիալիստական անտագոնիզմների ամբողջ միագումարից։ Պետական-մոնոպոլիստական կարգավորումն անցնելը կապիտալիստական էկոնոմիկային վերադարձրեց կապիտալիստական տնտեսության ընդլայնված վերարտադրության հետագա իրականացման հնարավորությունը։ Դա նշանակում էր, որ գտնվել են կիսամիջոցներ, որոնք ժամանակավորապես մեղմացնում են կապիտալիստական որոշ հակասություններ, և երկարացվել է կապիտալիզմի գոյությունը։

Կապիտալիզմի պետական-մոնոպոլիստական տիրապետությունը դասակարգային ուժերի հարաբերակցությանը, պատմական ու քաղաքական ավանդույթներին և մյուս կոնկրետ պայմաններին համապատասխան, կապիտալիզմի տարբեր երկրներում տարբեր կերպարանք է ընդունել։ Պետական-մոնոպոլիստական կարգավորման առավել բնորոշ ձևերն էին Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսը» ԱՄՆ-ում և տոտալիտար էկոնոմիկան ֆաշիստական Գերմանիայում։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի թե՛ մեկ և թե՛ մյուս տարբերակը

ձևավորվեց այն երկրներում, ուր դասակարգային պայքարը ծայր աստիճան սրվեց և կապիտալիստական տիրապետության համար սպառնալիք ստեղծվեց։

Սակայն, եթե ԱՄՆ-ում մոնոպոլիստական բուրժուազիայի հիմնական մասը, երկրում պառլամենտարիզմն ու բուրժուադեմոկրատական ազատությունները պահպանելով, շեշտը դրեց սոցիալական մանևրման վրա, ապա Գերմանիայում մոնոպոլիստները վերցրին բացահայտ տեռորիստական դիկտատուրայի կուրս։ Նրանք իշխանությունը հանձնեցին քաղաքական ռեակցիայի, նացիոնալիզմի և ռևանշիզմի ծայրահեղ ձևերի երկրպագուներին. հանուն իրենց դիրքերի պահպանման ու հեղափոխական բանվորական շարժման ջախջախման, նրանք դիմեցին բոլոր դեմոկրատական ինստիտուտների լիակատար վերացմանը։ Ֆաշիզմը, որպես մոնոպոլիստական բուրժուազիայի, կալվածատերերի, դինվորականության առավել ռեակցիոն շրջանների դավակ, ճգնաժամի և նրան հաջորդած տարիներին տարածվեց նաև շատ այլ եվրոպական, ինչպես նաև լատինաամերիկյան երկրներում (Ֆրանսիա, Իսպանիա, Անգլիա, Ավստրիա, Բուլղարիա, Ֆինլանդիա, Իռլանդիա, Ռումինիա, Հունաստան, Բրազիլիա)։ Սակայն իրենց իշխանության ծարավը ֆաշիստներին հաջողվեց հագեցնել սոսկ այն դեպքերում, ուր բանվորական ու դեմոկրատական շարժումը պառակտված էր ու թուլացած, իսկ բուրժուազիան իր դասակարգային տիրապետությունը պահպանելու համար նախկինում իր իսկ ստեղծած քաղաքական ինստիտուտները վերջնականապես անարդյունավետ համարեց։ Այդ տեսակետից առավել հատկանշական եղան այն իրադարձությունները, որոնք նախորդեցին Գերմանիայում ֆաշիստների իշխանության գլուխ անցնելուն։ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության՝ հակակոմունիզմով կուրացած պարագլուխները համառորեն մերժում էին սպառնացող ֆաշիստական հեղաշրջման վտանգի դեմ պայքարելու համար միասնական բանվորական ճակատ ստեղծելու մասին Գերմանիայի կոմունիստական կուսակցության բազմաթիվ առաջարկությունները։ Նրանք գերմանական ժողովրդին ներշնչում էին, թե իբր Գերմանիային սպառնում է «ձախից», կոմունիստներից եկող վտանգը՝ դրանով օբյեկտիվորեն նպաստելով ֆաշիզմի հաղթանակին։

Գերմանական կոմունիստները գերագնահատում էին հեղափոխական գործողությունների, սոցիալիստական հեղափոխություն կատարելու համար բանվոր դասակարգի կազմակերպվածության և գիտակցականորեն պատրաստ լինելու աստիճանը։ Նրանք գտնում էին, որ ճգնաժամը մասսաներին ընդհուպ մոտեցրել է դրան։ Ելնելով ԿԻԳԿ XI Պլենումի որոշումներից և սխալմամբ նույնացնելով իմպերիալիստական բուրժուազիայի տիրապետության բուրժուադեմոկրատական և ֆաշիստական մեթոդները, ԳԿԿ-ն ֆաշիզմի դեմ մղած պայքարում որպես անմիջական նպատակ առաջադրում էր պրոլետարիատի դիկտատուրայի լոզունգը և ուշացումով հանգեց ընդհանուր դեմոկրատական պահանջները, որպես իր ստրատեգիայի միջանկյալ լոզունգներ, առաջին պլան մղելու անհրաժեշտության վերաբերյալ եզրակացությանը։ Այդ էր հրամայաբար պահանջում օբյեկտիվ իրականությունը, և դա պրոլետարիատի դիկտատուրայի, որպես վերջնական նպատակի, լոզունգը օրակարգից չէր հանում։

Վերլուծելով անցյալի դասակարգային մարտերը և հեղափոխական ելույթները և որոշելով համաշխարհային հեղափոխական շարժման հեռանկարները, Վ. Ի. Լենինը քննադատում ու մերժում էր ցանկացած պահին, եթե հասունացել են սոսկ օբյեկտիվ նախադրյալները, հեղափոխական դասակարգի կողմից հեղաշրջում կատարելու հնարավորության մասին անհիմն, ոչ հասուն հայացքը։ «Ո՛չ,— ասում էր Լենինը,— մարդկային հասարակությունն այնպես խելացի ու այնպես «հարմար» չի կառուցված առաջավոր տարրերի համար։ Հեղաշրջումը կարող է հասունանալ, իսկ այդ հեղաշրջման հեղափոխական կերտողների ուժը կարող է անբավարար լինել նրա իրականացման համար»[7]։ Այդպես էր Գերմանիայում 1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում։ ԳԿԿ-ին՝ կապիտալիստական աշխարհում ամենամասսայական և ազդեցիկ այդ կոմունիստական կուսակցությանը հատուկ սխալները որոշ չափով կիսում էին կապիտալիստական աշխարհի նաև մի շարք այլ կոմկուսներ։

Այսպիսով, համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին վերստին վերելք ապրող հեղափոխական շարժմանը դիմակայում էր իմպերիալիստական ռեակցիայի, ֆաշիզմի և պատերազմի ուժերի հարձակումը։ Ստեղծված կոնկրետ իրականությունը պահանջում էր բոլոր ուժերի միավորում՝ ֆաշիզմին վճռական հարված հասցնելու համար։ Գերմանիայում հիտլերյան ֆաշիզմի հաղթանակի դաժան դասերը և ֆաշիզմի տարածումը մի քանի այլ երկրներում շատ բան սովորեցրին կոմունիստական կուսակցություններին, որոնք սկսեցին համառորեն ուղիներ որոնել ռեակցիային հակահարված հասցնելու նպատակով բոլոր հակաֆաշիստներին համախմբելու համար։ Նրանց շարքերում տեղի էր ունենում ձախ աղանդավորական սխալների և այդ սխալները մարմնավորողներից սահմանազատվելու արդյունավետ պրոցես։ Եվ թեկուզ աջ սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխները շարունակում էին մերժել գործողությունների միասնության վերաբերյալ առաջարկությունները, կոմունիստները քայլ առ քայլ հասնում էին բանվորների միասնությանը՝ անկախ նրանց կուսակցական և պրոֆեսիոնալ պատկանելիությունից։ Կոմունիստների նախաձեռնությամբ 1933 թ. հունիսին Փարիզում հրավիրված հակաֆաշիստական բանվորական կոնգրեսը խթան հանդիսացավ հակաֆաշիստների համաշխարհային միասնական ճակատի ստեղծմանը։ 1933 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին Լայպցիգում կազմակերպված ֆաշիստական դատաստանում բոցաշունչ հեղափոխական Գեորգի Դիմիտրովի ելույթը, որը բոլոր հակաֆաշիստական ուժերին միասնության կոչ էր անում, նպաստեց ամբողջ աշխարհում հակաֆաշիստական շարժման ակտիվացմանը։

Գերմանիայում ֆաշիզմի իշխանության գլուխ անցնելը նշանակում էր Եվրոպայի ուղիղ կենտրոնում նոր պատերազմի ամենավտանգավոր օջախի ստեղծում։ Մյուս օջախը ձևավորվում էր Հեռավոր Արևելքում, որտեղ միլիտարիստական Ճապոնիան Արևմուտքի իմպերիալիստական տերությունների թողտվությամբ, տերություններ, որոնք հույս ունեին ճապոնական արշավանքի սուր ծայրն ուղղել ՍՍՀՄ-ի դեմ, ագրեսիա սանձազերծեց ընդդեմ Չինաստանի։ Նման պայմաններում հենց իմպերիալիզմի էությունից և նրան հատուկ անտագոնիստական հակասություններից բխող երևույթ եղավ այն, որ Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմը ստեղծող երկրներն իրենց նյութական օգնությամբ և քաղաքական թողտվությամբ նպաստեցին համաշխարհային տիրապետության համար մղած պայքարում՝ իրենց գոյության ամբողջ ժամանակաշրջանում ամենաահեղ մրցակցի՝ գերմանական «երրորդ ռայխի» առաջացմանն ու աճին։

---

[7] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 11, էջ 452։

Աշխարհը նոր իմպերիալիստական պատերազմի նախօրյակին (1934—1939 թթ.)

30-ական թվականների կեսերին Սովետների երկիրը վերածվեց հզոր ինդուստրիալ-ագրարային տերության, որտեղ կատարվեց Լենինի պատգամը՝ հասցնել Ռուսաստանին նստեցնելու «խոշոր ինդուստրիայի, էլեկտրիֆիկացման ձին»[8], որպեսզի դրսից կատարված հարձակման դեպքում հնարավոր լինի հակահարված տալ թշնամուն։ Սովետական երկրում արտադրության միջոցների նկատմամբ սոցիալիստական սեփականության զարգացման ու ամրապնդման և մարդու կողմից մարդու շահագործման լիակատար վերացման հիման վրա առաջացավ սովետական հասարակության գաղափարական-քաղաքական անխախտ միասնությունը։ Իրենց բացահայտ հակասովետական ու հակակոմունիստական ուղղվածությամբ հանդերձ իմպերիալիստական ռեակցիայի ակտիվացման և ֆաշիզմի հարձակման կապակցությամբ ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության հաջողությունները բացառիկ կարևոր նշանակություն ունեին համաշխարհային հեղափոխական և առաջադիմական շարժման բազայի ընդլայնման համար։

Երկրում հաղթանակած սոցիալիստական հարաբերությունների պայմաններում ՍՍՀՄ-ի անշեղորեն զարգացող էկոնոմիկան աշխարհում գոյություն ունեցող դասակարգային ուժերի հարաբերակցությունը փոխեց ի վնաս կապիտալիզմի։ Անչափ աճեց Սովետական Միության հզորությունը, երկրի ինդուստրացումը տարեցտարի ուժեղացնում էր սոցիալիստական պետության ռազմաարդյունաբերական պոտենցիալը, որը նշանակում էր երկրի պաշտպանունակության մեծացում, երկիր, որը համաշխարհային սոցիալիզմի բաղադրամասն էր։ Սովետական Միության ամրապնդումը ոգևորում էր կապիտալիստական երկրների աշխատավոր զանգվածներին և հուսալի կողմնացույց ծառայում վերահաս պատերազմի և ֆաշիզմի հարձակման դեմ նրանց մղած պայքարում։

Գերմանիայում հիտլերյան ֆաշիստների կողմից իշխանության գրավմամբ և մյուս երկրներում ֆաշիստների գործունեության կտրուկ ակտիվացմամբ համաշխարհային քաղաքականության մեջ նշմարվեց ծայրահեղ իմպերիալիստական ռեակցիայի ուժերի և նրանց հարվածային ջոկատի՝ ֆաշիզմի ավելի ու ավելի պարզորոշ հակադրումը ոչ միայն ՍՍՀՄ-ին ու միջազգային բանվորական շարժմանը, այլև աշխարհի բոլոր խաղաղասեր ու դեմոկրատական ուժերին։ Դրա վկայությունն էին 1934 թ. իրադարձությունները, հատկապես ֆաշիզմի հետ զոտեմարտերը Ֆրանսիայում, Ավստրիայում և Իսպանիայում։ Պրոլետարիատի հակաֆաշիստական դեմոկրատական մյուս ուժերի միացյալ ջանքերը թույլ տվեցին ֆաշիզմը պարտության մատնել Ֆրանսիայում ու Իսպանիայում։ 1934 թ. վերջին բոլոր դեմոկրատական ուժերի միացյալ գործողություններով ջախջախվեց իռլանդական ֆաշիզմը։ Այդ նույն ժամանակ ավստրիական բանվորների անչափ գործողություններն ավարտվեցին նրանց պարտությամբ, որը կործանարար ազդեցություն ունեցավ երկրի ճակատագրի համար։

Հաշվի առնելով 1934 թ. Ֆրանսիայի և Իսպանիայի իրադարձությունների փորձը, Կոմունիստական ինտերնացիոնալը և կոմունիստական կուսակցությունները սկսեցին մշակել միասնական բանվորական և ժողովրդական ճակատների տակտիկան։ Դրա հիմքում դրվեցին միասնական բանվորական ճակատի մասին լենինյան գաղափարները։ Կոմունիստական կուսակցությունների քաղաքականության, տակտիկայի ու ստրատեգիայի ասպարեզում նոր կողմնորոշման մասին առաջարկություններով Կոմինտերնի նախագահության անունից Գեորգի Դիմիտրովը հանդես եկավ Կոմունիստական ինտերնացիոնալի VI կոնգրեսում, որը կայացավ Մոսկվայում 1935 թ. հուլիս-օգոստոսին։ Որոշելով կոմկուսների գործունեության նոր կողմնորոշումը, Կոմինտերնի VII կոնգրեսը նշեց, որ ֆաշիզմի հարձակումն էականորեն փոխել է դասակարգային ուժերի տեղաբաշխումն աշխարհում և կապիտալիստական երկրների բանվորական շարժման մեջ օբյեկտիվորեն առաջին պլան է մղել պայքարի հակաֆաշիստական, համադեմոկրատական խնդիրները։ Ստեղծված իրադրության մեջ մի շարք երկրների աշխատավոր զանգվածներին անհրաժեշտ էր ընտրություն կատարել «ոչ թե պրոլետարական դիկտատուրայի և բուրժուական դեմոկրատիայի միջև, այլ բուրժուական դեմոկրատիայի և ֆաշիզմի միջև»[9]։ Այստեղից էլ՝ ֆաշիզմի դեմ պայքարելու համար պահանջվում էր ոչ միայն սոցիալիզմի կողմնակիցների, այլև բոլոր այն ուժերի համախմբում, որոնք հանդես էին գալիս հանուն դեմոկրատիայի, խաղաղության և ընդդեմ պատերազմի սպառնալիքի։ Միահամուռ կերպով ընդունվեց, որ բանվոր դասակարգի տնտեսական ու քաղաքական անմիջական շահերի, ֆաշիզմի դեմ բանվոր դասակարգի պաշտպանությունը պետք է դառնար ելակետ և լիներ բոլոր կապիտալիստական երկրների բանվորների միասնական ճակատի գլխավոր բովանդակությունը[10]։ Բավոր դասակարգի գործողությունների միասնության քաղաքականության բովանդակության նման փոփոխությունն ամենևին էլ չէր նշանակում հրաժարում բանվոր դասակարգի պայքարի վերջնական նպատակից՝ սոցիալիզմին հասնելուց։ Այն նոր մոտեցումներ էր նշում սոցիալիզմի համար մղվող պայքարի նկատմամբ։

Դրա հետ մեկտեղ Կոմինտերնի VII կոնգրեսը նշեց և հատուկ ընդգծեց, որ «սոցիալիզմի հաղթանակով ՍՍՀՄ-ը դարձավ պետական-քաղաքական, տնտեսական ու կուլտուրական մեծ ուժ, որը ներգործում է համաշխարհային քաղաքականության վրա, դարձավ բոլոր երկրների ժողովուրդների և նույնիսկ միջազգային խաղաղության պահպանմամբ շահագրգռված պետությունների ձգողականության և համախմբման կենտրոն, դարձավ բոլոր երկրների աշխատավորների հենարան ընդդեմ պատերազմի սպառնալիքի, ամբողջ աշխարհի աշխատավորության համախմբման հզոր գենք ընդդեմ համաշխարհային ռեակցիայի»[11]։ Այդ պատճառով կոնգրեսն ամբողջ աշխարհի կոմունիստներին, միջազգային պրոլետարիատին և դեմոկրատներին կոչ արեց. «բոլոր ուժերով ու միջոցներով օգնել ՍՍՀՄ-ի ամրապնդմանը, պայքարել ՍՍՀՄ-ի թշնամիների դեմ»[12]։ Միանգամայն ակնհայտ էր դառնում, որ «կոմունիստական կուսակցությունների կենտրոնական լոզունգը պետք է լինի պայքարը խաղաղության համար»[13]։ Եվ քանի որ խաղաղության պաշտպանության գործում առաջատար դերը պատկանում է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը, ապա ՍՍՀՄ-ի՝ սոցիալիզմի ու խաղաղության շահերը պաշտպանող երկրի պաշտպանությունը հանդիսանում էր երկրագնդի բոլոր աշխատավորների ընդհանուր խնդիրը։

Բոլոր հակաֆաշիստական ուժերի մոբիլիզացման ու համախմբման նոր քաղաքականությունը չհապաղեց հաջողություններ բերել Կոմունիստական ին-

---

[8] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 598։

[9] Г. Димитров, Избранные произведения, т. 1, стр. 468.

[10] Տե՛ս «Резолюции VII Всемирного конгресса Коммунистического Интернационала», 1935, էջ 13։

[11] Նույն տեղում, էջ 41։

[12] Նույն տեղում։

[13] Նույն տեղում, էջ 30։

տերնացիոնալի VII կոնգրեսից հետո, առաջին իսկ տարիներին։ Բանվորական ու հակաֆաշիստական շարժման բարձրակետը եղավ 1936—1939 թթ. հեղափոխական պատերազմն Իսպանիայում, որի ընթացքում ժողովրդական ճակատի քաղաքականությունն Իսպանիան վերածեց նոր տիպի դեմոկրատական հանրապետության, որտեղ հաստատվեց բանվորների, գյուղացիների, ազգային մանր և միջին բուրժուազիայի դեմոկրատական դիկտատուրա։ Ռեակցիոն ուժերը խռովություն բարձրացրին, որն ակտիվորեն պաշտպանեցին Գերմանիայի և Իտալիայի ֆաշիստական կառավարությունները։ Իսպանիան վերածվեց առաջադիմական-դեմոկրատական ուժերի խոշոր մարտադաշտի՝ ընդդեմ ռեակցիայի ու ֆաշիզմի։ Կոմունիստական ինտերնացիոնալը կազմակերպեց Իսպանական հանրապետության հետ համերաշխության միջազգային հակաֆաշիստական կամպանիա, ընդդեմ իտալագերմանական ֆաշիստական ինտերվենցիայի։ Աշխարհի գրեթե բոլոր երկրներից հազարավոր հակաֆաշիստ կամավորներ եկան Իսպանիա և կազմավորված ինտերնացիոնալ բրիգադներում զինված պայքար մղեցին ֆաշիզմի դեմ։ Այդ հակաֆաշիստական պայքարում կոմունիստներն առաջատար դեր էին խաղում։ Ի պաշտպանություն Իսպանական հանրապետության հանդես եկավ Սովետական Միությունը, որը պարենի, դեղամիջոցների, սպառազինության և ռազմամթերքի մատակարարումով զգալի օգնություն ցույց տվեց հակաֆաշիստ մարտիկներին։ Մեծ օգնություն ցույց տվեցին նաև սովետական զինվորական մասնագետները՝ որպես մարտիկներ և որպես իսպանական հանրապետական զինվորական հրամանատարության օգնականներ։

Իսպանական հանրապետությունը պարտություն կրեց բացառապես այն պատճառով, որ Ազգերի լիգան փաստորեն հրաժարվեց սանկցիաներ կիրառել Իսպանիայում իտալագերմանական ֆաշիստական ագրեսորների նկատմամբ, ինչպես նաև այն պատճառով, որ Սոցիալիստական բանվորական Ինտերնացիոնալի պարագլուխները խախտեցին Իսպանական հանրապետության պաշտպանության համար գործողությունների միասնության վերաբերյալ Կոմունիստական ինտերնացիոնալի ղեկավարների հետ եղած պայմանավորվածությունը։

Չնայած Իսպանական հանրապետության կրած պարտությանը, Իսպանիայում հակաֆաշիստական պայքարի փորձը հաստատեց մեծագույն կարևորություն ունեցող այն դրույթը, որ ժողովրդական ճակատը, նոր դեմոկրատիան կապող հանգույց են պաշտպանողական հակաֆաշիստական պայքարի և վերջնական նպատակի՝ սոցիալիզմի համար մղած պայքարի միջև։

Միասնական բանվորական և ժողովրդական ճակատների քաղաքականությունը մեծ հաջողություններ բերեց Ֆրանսիայում։ Ժողովրդական ճակատը ոչ միայն Ֆրանսիայում փակեց ֆաշիստների իշխանության գլուխ անցնելու ճանապարհը, այլև ժողովրդական ճակատի ժամանակաշրջանում ֆրանսիական աշխատավորների ձեռք բերած նվաճումները շատ դեպքերում անշրջելի եղան և ռեակցիային հետագայում չհաջողվեց դրանք վերացնել։ Ժողովրդական ճակատի քաղաքականության իրականացման ընթացքում ֆրանսիական պրոլետարիատն իրեն դրսևորեց որպես համադեմոկրատական պայքարի առաջատար ուժ, որպես ազգի գլխավոր շարժիչ ուժ։

Մյուս կապիտալիստական երկրներում ժողովրդական ճակատի քաղաքականությունը նույնպես կարևոր դեր խաղաց ռեակցիայի և բուրժուական կառավարությունների քաղաքականության մեջ հանդես եկած ֆաշիստական տենդենցների դեմ պայքարելու համար առաջադեմ ուժերին միավորելու գործում։

Ժողովրդական ճակատի քաղաքականության հաջողությունները զգալիորեն թուլանում էին սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխների պառակտիչ քաղաքականության հետևանքով, պարագլուխներ, որոնք չէին ցանկանում կոմունիստների հետ կայուն դաշինքի մեջ մտնել հանուն իրենց երկրների ազգային արմատական շահերի։

Հակաֆաշիստական դեմոկրատական ուժերի միասնական ճակատին, հակասովետական հանցավոր գործարքի հիման վրա, հակադրվեց մինչև ատամները զինված միջազգային իմպերիալիստական ճակատը։ Այսպես ծնունդ առավ մյունխենյան քաղաքականությունը, որը ֆաշիստական ագրեսորներին խրախուսում էր ՍՍՀՄ-ի վրա հարձակվելու, և ծանր հարված եղավ միջազգային բանվորական շարժման և դեռ ոչ բավարար չափով ամրապնդված համադեմոկրատական մասսայական հակապատերազմական շարժման համար։

Նման պայմաններում 30-ական թվականների երկրորդ կեսին տեղի էր ունենում մարդկության՝ երկրորդ համաշխարհային պատերազմին անշեղորեն մոտենալու ողբերգական պրոցեսը։ Այն պայմանավորված էր իմպերիալիստական աշխարհի զարգացման օրինաչափություններով, կապիտալիստական երկրների տնտեսական ու քաղաքական զարգացման անհավասարաչափությամբ, աշխարհի նոր բաժանման համար մղված պայքարում նրանց միջև գոյություն ունեցող անլուծելի հակասությունների ավելի ու ավելի սրմամբ։ Դեպի պատերազմ էր տանում ինչպես համաշխարհային տիրապետության ձգտող ֆաշիստական պարագլուխների խելահեղ ավանտյուրիստական քաղաքականությունը, այնպես էլ նրանց մտադրությունների նկատմամբ բուրժուադեմոկրատական կարգերը պահպանած Արևմուտքի իմպերիալիստական տերությունների հանցավոր թողտվությունը, տերություններ, որոնց պարագլուխները կուրացած էին սովետական պետության նկատմամբ ունեցած դասակարգային ատելությունից։ Բոլոր առաջադեմ ուժերի հետ դաշնակցած համաշխարհային սոցիալիզմն այդ ժամանակաշրջանում դեռ վճռական ազդեցություն չէր գործում պատմական զարգացման ընթացքի վրա. դա էլ հենց վերջին հաշվով որոշեց հետագա տարիների ողբերգական իրադարձությունները։

Նման իրադրության մեջ առանձնահատուկ կարևոր նշանակություն էր ստանում համաշխարհային հեղափոխական շարժման գլխավոր հենարանի՝ Սովետական Միության ըստ ամենայնի ամրապնդումը։ Հոկտեմբերյան հեղափոխության զավակ սովետների երկրի հզորությունից ու աննկունությունից էր այժմ կախված համաշխարհային հեղափոխության և մարդկային առաջադիմության ճակատագիրը։ Այդ պատմական միսիան հիանալի հասկանում էին Սովետական Միության աշխատավորները, որոնց ղեկավարում էր կոմունիստական կուսակցությունը։ Սովետական ժողովուրդը 1937 թ. կատարեց ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա վեհաքանչ պլանը։ Երկիրը վիթխարի քայլ կատարեց ինդուստրիալ զարգացման ասպարեզում. արդյունաբերության համախառն արտադրանքը 1937 թվականին 1932 թ. համեմատությամբ ավելացավ ավելի քան կրկնակի և 1913 թ. համեմատությամբ՝ 6 անգամ։ Հիմնականում ավարտվեց արդյունաբերության տեխնիկական վերակառուցումը, որի հետևանքով արտադրանքի 80 տոկոսը տալիս էին նոր և վերակառուցված ձեռնարկությունները։ Երկրորդ հնգամյա պլանի կատարման կարևորագույն արդյունքը եղավ սոցիալիստական սեկտորի անբաժան տիրապետությունը արդյունաբերության մեջ, որին բաժին էր ընկնում ամբողջ արտադրանքի 99,9 տոկոսը։

Սովետական ժողովրդի տնտեսական ու սոցիալ-քաղաքական մեծ նվա-

ճումներն արտացոլվեցին և օրենսդրականորեն ամրապնդվեցին 1936 թ. ընդունված ՍՍՀՄ նոր սահմանադրության մեջ։ Այն ժամանակ, երբ կապիտալի երկրներում ռեակցիան ոտնահարում էր մարդու տարրական դեմոկրատական իրավունքները, ՍՍՀՄ-ում սոցիալիստական սահմանադրությունը աշխատավորների համար երաշխավորում էր ազատությունը, հավասարությունը, աշխատանքի, կրթության, վճարովի հանգստի իրավունքը։

Ամեն կերպ ամրապնդելով Սովետական Միությունը՝ համաշխարհային հեղափոխական և դեմոկրատական ուժերի հենարանը, սովետական ժողովուրդը մարտնչողների առաջին շարքերում համառորեն և անշեղորեն հանդես էր գալիս ընդդեմ ֆաշիստական ագրեսիայի սանձազերծման, չինական բանակի սպառազինման համար փոխառություններ տրամադրելով՝ վիթխարի օժանդակություն ցույց տվեց չին ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին ընդդեմ ճապոնական իմպերիալիզմի։ Սովետական զինվորական մասնագետներն ու օդաչուներն օգնում էին չին ժողովրդին ինտերվենտների դեմ մղված պայքարում։

Եռ մղելով 1938 թ. Խասան լճի մոտ և 1939 թ. Խալխինգոլ գետի մոտ կատարված ռազմական պրովոկացիաները, սովետական ժողովուրդը շարունակում էր փոխըմբռնողության հասնել այն բոլոր պետությունների հետ, որոնց սպառնում էր ֆաշիստական ռազմական ագրեսիան, ակտիվորեն հանդես էր գալիս կոլեկտիվ անվտանգության սիստեմ ստեղծելու համար։ Սակայն այն մերժվեց Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կառավարող շրջանների կողմից։ Նախապատերազմյան ժամանակաշրջանում ՍՍՀՄ-ը վերածվեց ֆաշիզմի ու պատերազմի դեմ հանդես եկող հեղափոխական և դեմոկրատական ուժերի համախմբման կենտրոնի։ Ֆաշիստական ագրեսորներին աջակցող մյունխենյան քաղաքականությունը ռեակցիայի ու ֆաշիզմի հարվածներն ուղղում էր ոչ միայն ՍՍՀՄ-ի, այլև միջազգային հեղափոխական ու դեմոկրատական շարժման դեմ։ Մարդկությանը ֆաշիստական սարսափից փրկելու համար բոլոր երկրների հակաֆաշիստ-դեմոկրատներին մնում էր մեկ հույս՝ Սովետական Միությունը։ Երկրորդ համաշխարհային պատերազմում տված վիթխարի զոհերի գնով, պատերազմ, որն ավարտվեց ֆաշիստական խմբավորման ջախջախմամբ, Սովետական Միությունը կատարեց այդ համաշխարհային-պատմական միսիան։

ԳԼՈՒԽ 3

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ։ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1919—1923 ԹԹ.

Հոկտեմբերի ազդեցությամբ հեղափոխական շարժման վերելքը կապիտալիստական աշխարհում

Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը, որը սկզբնավորեց կապիտալիզմի կործանման և սոցիալիզմի հաղթանակի դարաշրջանը, ամբողջ աշխարհի հասարակական պայքարի վրա վճռորոշ ներգործություն ունեցավ։

Հոկտեմբերի ուղղակի ազդեցությամբ իմպերիալիզմի զարգացմամբ առաջացած և պատերազմով ու նրա հետևանքներով սրված դասակարգային հակասությունների հողի վրա աշխարհում սկիզբ առավ չտեսնված հեղափոխական վերելք։ 1918—1920 թթ. մի շարք կապիտալիստական երկրներում գոյություն ուներ հեղափոխական խոր ճգնաժամի իրադրություն. բուրժուազիայի իշխանությունը թուլացել էր, նրա պետական ապարատը զգալիորեն կազմալուծվել էր, ավելի ու ավելի անբարեհույս էր դառնում բանակը, բուրժուազիայի միջազգային կապերը նույնպես կայուն չէին, այդ նույն ժամանակ ձեռքում զենք ունեցող աշխատավորների հեղափոխական պայքարն այնպիսի ուժ ու թափ էր ստանում, որպիսին պատմությանը դեռ հայտնի չէր։ Օբյեկտիվորեն պրոլետարիատի՝ նոր առաջացած պատմական իրադրությունից բխող գլխավոր խնդիրներն էին իմպերիալիստական պատերազմի ավարտումը և բուրժուազիայի տիրապետության տապալումը։ Պայքարի մեջ ներգրավվող միլիոնավոր զանգվածներն աստիճանաբար սկսում էին հասկանալ այդ նպատակները։

Ռուսաստանում պրոլետարիատի հաղթանակից և մյուս երկրներում հեղափոխական վերելքից ահարեկված իմպերիալիստական բուրժուազիան մոլեգին ջանքեր էր գործադրում, որպեսզի ճնշի պրոլետարիատի հարձակումը, ոչնչացնի սովետական իշխանությունը Ռուսաստանում։ Արդեն 1918 թ. գարնանը Անգլիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, ԱՄՆ-ի իմպերիալիստները ռազմական ինտերվենցիա կազմակերպեցին Սովետական Ռուսաստանում՝ օգնելով սպիտակգվարդիական հակահեղափոխությանը։ Իր երկրներում իմպերիալիստական բուրժուազիան փորձում էր ինչպես հակահեղափոխական բռնության, այնպես էլ սոցիալ-քաղաքական մանևրների ու զիջումների միջոցով կանգնեցնել հեղափոխական շարժման աճը։

Նման իրադրությունում բուրժուազիայի համար ուղղակի օգնություն եղավ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մեծ մասի ղեկավարության դիրքորոշումը։ Այդ ժամանակ սոցիալ-դեմոկրատական կուսակցություններում հաշվվում էր ավելի քան 3 մլն անդամ։ Նրանց հետևից էր գնում խաղաղությանն ու սոցիալիզմին ձգտելու մասին սոցիալ-դեմոկրատական պարագլուխների ֆրազներին դեռևս հավատացող բանվորների զգալի մասը։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների առաջնորդները հանդես եկան ընդդեմ պրո-

լեւտարական հեղափոխության, ընդդեմ Հոկտեմբերի գործի։ Նրանք աշխատավորներին ահաբեկում էին, որ հեղափոխությունը և նրա հետ կապված քաղաքացիական պատերազմը մարդկային մեծ զոհերի պատճառ կլինեն, կհասցնեն հասարակության արտադրողական ուժերի կործանման, սովի ու քայքայման։ Սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխները մասսաներին ներշնչում էին, որ «բոլշևիկյան նմուշով» կատարված հեղափոխությունն իրր կհասցնի դեմոկրատական ազատությունների կորստյան։ Սովետական իշխանությունը նրանք դրպարտչորեն պատկերում էին որպես այնպիսի ուժիմ, որն իրր մասսաներին ոչ պակաս տառապանքներ ու աղետներ է բերում, քան կապիտալիզմը։ Աջ սոցիալ-դեմոկրատիան փորձում էր մասսաներին ապացուցել, որ դեպի «իսկական» սոցիալիզմ է տանում միայն մեկ ուղի՝ բուրժուական դեմոկրատիայի պառլամենտական սիստեմի աստիճանական զարգացումն ու «բարելավումը»։ Զգտելով բանվորական զանգվածներին ետ պահել հեղափոխական գործողություններից, սոցիալ-դեմոկրատական պարագլուխներն իսկական արշավանք կազմակերպեցին պրոլետարական դիկտատուրայի լոզունգի դեմ։

Այդ արշավանքի նախաձեռնողը եղավ Կ. Կաուցկին, որը մի շարք հոդվածներում և հատկապես 1918 թ. օգոստոսին գրած «Պրոլետարիատի դիկտատուրա» գրքույկում փորձեց նենգափոխել մարքսիստական ուսմունքը պրոլետարիատի դիկտատուրայի մասին, արատավորել, զրպարտել բոլշևիզմի քաղաքականությունը։ Կաուցկին ժխտում էր Մարքսի եզրակացությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայի անհրաժեշտության մասին, հայտարարելով, թե պրոլետարիատի դիկտատուրայի հասկացությունն իսկ Մարքսի մոտ իրր եղել է պատահականորեն ասված մի փոքրիկ խոսք։ Կաուցկին թեզիս էր առաջադրում այն մասին, որ ամեն մի դիկտատուրա (իսկ դա նշանակում է, որ նաև պրոլետարականը) չարիք է, իսկ ամեն մի դեմոկրատիա (նշանակում է նաև բուրժուականը) ամենավիթխարի բարիք՝ հասարակության համար։

«Դեմոկրատիայի պաշտպանության» կեղծ դրոշի ներքո սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների պարագլուխները փորձում էին պաշտպանական պատնեշ ստեղծել ընդդեմ վերահաս սոցիալիստական հեղափոխության։ Նման կովանների և բոլշևիկների հասցեին արված ամենաչարանենգ զրպարտության միջոցով նրանք ձգտում էին խաբել աշխատավորներին, խանգարել նրանց անցմանը հեղափոխական պայքարին։ Իսկ այն դեպքերում, երբ սոցիալ-դեմոկրատիայի աջ պարագլուխներին այդ չէր հաջողվում, նրանք կանգնում էին բուրժուական ռեակցիային ուղղակիորեն աջակցելու ուղու վրա և հաճախ իրենք էլ էին մասնակցում հեղափոխական բանվորների զինված հաշվեհարդարներին։

Չնայած սոցիալ-դեմոկրատների առաջնորդների դավաճանությանը և բանվոր դասակարգի խոր պառակտվածությանը, հեղափոխական բանվորական շարժումը զարգանում էր բուռն տեմպերով՝ 1918 թ. հետևողականորեն ընդգրկելով Ֆինլանդիան, Բուլղարիան, Ավստրո-Հունգարիան, Գերմանիան։

1918 թ. հոկտեմբեր-նոյեմբերին ազգային-ազատագրական շարժման և սկիզբ առած բուրժուադեմոկրատական հեղափոխությունների հարվածների տակ փլուզվեց ավստրո-հունգարական կայսրությունը. Հաբսբուրգների միապետության իշխանությունը տապալվեց։ Ավստրիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորության (Հարավսլավիայի) նոր կազմավորված բուրժուական պետություններում բանվորներն ու գյուղացիները տեղերում ստեղծում էին սովետներ, պահանջում անհապաղ

իրագործել այնպիսի արմատական վերափոխություններ, որոնք աշխատավորների համար երաշխավորեին հաց, խաղաղություն, դեմոկրատական ազատություններ։

1918 թ. նոյեմբերին հեղափոխությունն ընդգրկեց Գերմանիան։ Նոյեմբերի 9-ին «Սպարտակ» խմբի և հեղափոխական ավագների կոչով հանդես եկած զինված բանվորներն ու զինվորները գրավեցին Բեռլինը։ Հոհենցոլերների միապետությունը փլուզվեց։ Գերմանիայի շատ քաղաքներում բանվորների և զինվորների սովետները մեծ ազդեցություն ունեին։ Սակայն Գերմանիայի նոյեմբերյան հեղափոխությունը, որը որոշակի չափով անցկացվեց պրոլետարական միջոցներով ու մեթոդներով, դուրս չեկավ բուրժուադեմոկրատական հեղաշրջման շրջանակներից։ Սոցիալ-դեմոկրատիայի աջ պարագլուխներին հաջողվեց խաբել ու պառակտել հեղափոխական բանվորական շարժումը, իրենց ազդեցությանը ենթարկել սովետների մեծամասնությանը։ Իսկ երբ հեղափոխական բանվորներն սկսեցին պայքարել հեղափոխությունը սոցիալիստականի վերածելու համար, սոցիալ-դեմոկրատական կառավարության առաջնորդներ Էբերտը, Շայդեմանը և Նոսկեն ռեակցիոն զինվորականության հետ գործարքի մեջ մտան և նրա օգնությամբ 1919 թ. հունվարին պարտության մատնեցին գերմանական պրոլետարիատին։

Սակայն չնայած պրոլետարիատի առանձին պարտություններին, մի շարք երկրներում հեղափոխական ճգնաժամի իրագրությունը շարունակում էր գոյություն ունենալ։ Բուրժուական ռեժիմների վրա գրոհելու հաջողությունը շատ բանով կախված էր նրանից, թե պրոլետարիատի ավանգարդը կարո՞ղ է արդյոք կարճ ժամկետում համախմբվել այնպիսի կուսակցությունների մեջ, որոնք ընդունակ լինեն ղեկավարել ծավալվող դասակարգային մարտերը։ Այդպիսի պայմաններում հրամայական, կենսական անհրաժեշտություն էր Կոմունիստական ինտերնացիոնալի անհապաղ ստեղծումը, բոլոր երկրներում նոր տիպի պրոլետարական կուսակցությունների կազմավորումը։

Կոմունիստական Ինտերնացիոնալի կազմավորումը

Նոր, հեղափոխական Ինտերնացիոնալի ստեղծման անհրաժեշտության հարցը դրեցին Լենինը և բոլշևիկներն առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց անմիջապես հետո, II Ինտերնացիոնալի կրախի կապակցությամբ։ Միջազգային կոմունիստական կազմակերպության կազմավորման համար այդ պահին ստեղծվել էին խոր նախադրյալներ։ Դրանցից գլխավորն այն էր, որ նոր պատմական դարաշրջանը սոցիալիստական հեղափոխությունների իրականացման խնդիրը օրակարգի հարց դարձնելով, դրանով իսկ բանվոր դասակարգի համար ծնեց նաև պահանջ՝ ունենալ ազգային և միջազգային մասշտաբի այնպիսի մարտական կազմակերպություն, որը կարողանար հաջողությամբ ղեկավարել սոցիալիստական հեղափոխությունները և ապահովել բոլոր երկրների բանվոր դասակարգի առավել արդյունավետ փոխօգնությունը։ II Ինտերնացիոնալը և նրա կուսակցություններն այդ նպատակների համար ամենևին պիտանի չէին օպորտունիստական վերաբերման և պառլամենտական լեգալ գործունեությանը հարմարեցված իրենց կազմակերպչական-տակտիկական սկզբունքների պատճառով։

Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման կարևորագույն նախադրյալ էին նաև կոմունիստական շարժման՝ Վ. Ի. Լենինի և բոլշևիկների մշակած գաղափարական, տակտիկական և կազմակերպչական հիմունքները։ Ելնելով իմպերիալիզմի, նրա հակասությունների զարգացման գիտական վերլուծությունից, Լենինը բացահայտեց պատմական նոր պայմաններում համաշխարհային

հեղափոխական պրոցեսի օրինաչափությունները ու առանձնահատկությունները, հեղափոխականներին զինեց իմպերիալիստական դարաշրջանում դասակարգային պայքարի օրինաչափությունների իմացությամբ։ Նա ստեղծագործաբար զարգացրեց սոցիալիստական հեղափոխության մարքսիստական տեսությունը, այն հարստացրեց բուրժուադեմոկրատական հեղափոխությունը պրոլետարիատի հեգեմոնիայի, բուրժուադեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու մասին հետևություններով։ Առանձնահատուկ կարևոր նշանակություն ուներ լենինյան դրույթն այն մասին, որ իմպերիալիզմի զարգացման անհավասարաչափության պատճառով անհնարին է պրոլետարիատի միաժամանակյա հաղթանակը բոլոր կապիտալիստական երկրներում, որ սոցիալիստական հեղափոխությունների հաղթանակը հնարավոր է սկզբնապես մի քանի կամ նույնիսկ մեկ, առանձին վերցրած երկրում։ Այդ հետևությունը նոր հեռանկարներ էր նշում միջազգային բանվորական շարժման համար, ազատություն տալիս առանձին երկրների բանվոր դասակարգի նախաձեռնությանը։

Պատմական նշանակություն ունեցավ լենինյան դրույթն այն մասին, որ կապիտալիզմից անցումը սոցիալիզմին տեղի կունենա ոչ այլ կերպ, քան այն դարաշրջանի ձևով, որն առաջավոր երկրներում բուրժուազիայի դեմ պրոլետարիատի մղած հեղափոխական պայքարը միավորում է ճնշված երկրներում տեղի ունեցող մի շարք դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժումների հետ։ Հստակորեն բնորոշվեց ազգային-ազատագրական շարժումների նշանակությունը որպես իմպերիալիզմի դեմ մղվող համաշխարհային ընդհանուր պայքարի բաղկացուցիչ մաս։ Ռուսաստանում և ամբողջ աշխարհում մղված հեղափոխական պայքարի փորձով Լենինն ու բոլշևիկները նաև հարստացրին մարքսիստական ուսմունքը կուսակցության մասին, գյուղացիության հետ բանվոր դասակարգի դաշինքի մասին, պատերազմի, պետության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի մասին։ Լենինի և բոլշևիկների մշակած գաղափարական, տակտիկական և կազմակերպական սկզբունքները կայուն բազա նախապատրաստեցին Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադրման և գործունեության համար։

III Ինտերնացիոնալի ստեղծման կարևոր նախադրյալներից մեկը եղավ միջազգային բանվորական շարժման մեջ հեղափոխական ինտերնացիոնալիստական կուսակցությունների և խմբերի գոյությունը, որոնք ավելի ու ավելի սերտորեն էին մերձենում բոլշևիկների հետ։

Հոկտեմբերից հետո նոր, առավել բարենպաստ պայմաններ առաջացան III Ինտերնացիոնալի կազմավորման համար։ 1917 թ. վերջին—1918 թ. սկզբին բոլշևիկների կուսակցությունը մի շարք գործնական քայլերի դիմեց հեղափոխական ինտերնացիոնալիստների միջազգային կոնֆերանսի նախապատրաստման նպատակով։ 1918 թ. հունվարի 24-ին Պետրոգրադում կայացավ միջազգային խորհրդակցություն, որին մասնակցեցին բոլշևիկների, Շվեդիայի, Նորվեգիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի ձախ սոցիալ-դեմոկրատների, լեհական, ռումինական, հարավսլավյան և չեխական ինտերնացիոնալիստների ներկայացուցիչները։ Խորհրդակցությունը հանդես եկավ ձախ սոցիալիստների՝ հետևյալ պայմաններով միջազգային կոնֆերանս գումարելու օգտին. 1) կուսակցությունների և կազմակերպությունների համաձայնությունը կանգնելու իրենց կառավարությունների դեմ հեղափոխական պայքար մղելու ուղին անհապաղ հաշտության համար, 2) Հոկտեմբերյան հեղափոխության և սովետական իշխանության պաշտպանություն։

Սովետական Ռուսաստանի վրա իմպերիալիստական Գերմանիայի հարձակման, ներքին հակահեղափոխության զինված ելույթների, Անտանտի երկրների սկսած ռազմական ինտերվենցիայի պատճառով սովետական հանրապետության դրությունը չափազանց ծանրացավ։ Այդպիսի պայմաններում միջազգային ինտերնացիոնալիստական կոնֆերանսի գումարման պլանն իրականացնելն անհնարին դարձավ։ Այդ ժամանակ պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների տարածման գործում մեծ դեր էր խաղում 1918 թ. գարնանը ՌԿ(բ)Կ Կենտկոմին առընթեր ստեղծված օտարերկրյա խմբերի ֆեդերացիան։ Այն ակտիվ աշխատանք էր կատարում Սովետական Ռուսաստանում գտնվող ռազմագերիների և ինտերվենտների բանակների զինվորների շրջանում։ Ֆեդերացիան ռազմագերիների թվից հազարավոր կոմունիստներ դաստիարակեց, աջակցում էր ինտերնացիոնալ զորամասերի ստեղծմանը, որոնք հետո կարմիր բանակի կողմում մասնակցեցին զինված պայքարին։ Ֆեդերացիայի անդամները, Սովետական Ռուսաստանից վերադառնալով, դառնում էին հեղափոխական պայքարի ակտիվ մասնակիցներ։ Նրանք կարևոր դեր խաղացին մի շարք երկրների կոմունիստական կուսակցությունների ստեղծման գործում։

Հեղափոխական վերելքի պայմաններում միջազգային բանվորական շարժման մեջ խիստ ուժեղացավ օպորտունիստների և հեղափոխական խմբերի տարանջատման պրոցեսը։ Շատ երկրներում առաջացան կոմունիստական կուսակցություններ։ Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը, որը ստեղծվեց Կ. Լիբկնեխտի և Ռ. Լյուքսեմբուրգի գլխավորած «Սպարտակ միության» և մյուս ձախ խմբերի բաղայի վրա, անմիջապես սկսեց նշանակալի դեր խաղալ իր երկրի և միջազգային բանվորական շարժման մեջ։ Այդ ժամանակ սկսեցին ավելի ու ավելի հետևողական հեղափոխական-ինտերնացիոնալիստական դիրքեր գրավել բուլղարական տեսնյակները (Դ. Բլագոև, Վ. Կոլարով), Շվեդիայի, Նորվեգիայի, Հունաստանի, Հարավսլավիայի ձախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, Արգենտինայի ինտերնացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը, Մեքսիկայի սոցիալիստական բանվորական կուսակցությունը։ Առաջացան կոմունիստական խմբեր ու խմբակներ, Իտալիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Չեխոսլովակիայի, ԱՄՆ-ի և մի շարք այլ երկրների սոցիալ-դեմոկրատական կուսակցություններում ուժեղացան ձախ հոսանքները։ Առաջին կոմունիստական խմբերը կազմավորվեցին նաև Արևելքի ճնշված երկրներում։ Կոմունիստական կուսակցությունների և խմբերի առաջացումը եղավ III Ինտերնացիոնալի փաստացի ձևավորման սկիզբը, միջազգային բանվորական շարժման մեջ նոր գոտու սկիզբը. թատերաբեմ էին ելնում պրոլետարիատի այնպիսի քաղաքական կուսակցություններ, որոնք ձգտում էին աշխատավորներին տանել սոցիալիստական հեղափոխության ուղիով։

1918 թ. վերջին ծավալվեց Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման անմիջական նախապատրաստությունը։ Կոմունիստները պետք է շտապ միջոցներ ձեռնարկեին այն կապակցությամբ, որ սոցիալ-դեմոկրատիայի աջ պարագլուխները փորձում էին վերականգնել 1914 թ. քայքայված օպորտունիստական II Ինտերնացիոնալը։ 1918 թ. դեկտեմբերին անգլիական լեյբորիստական կուսակցությունը հանդես եկավ 1919 թ. հունվարին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միջազգային կոնֆերանս գումարելու առաջարկությամբ։ Ի պատասխան դրան ՌԿ(բ)Կ Կենտկոմը դեկտեմբերի 24-ին ռադիոհեռագիր ուղարկեց, որը կոչ էր անում հրաժարվել սոցիալ-շովինիստների կողմից նախապատրաստվող կոնֆերանսին մասնակցելուց և ինտերնացիոնալիստներին

առաջարկում էր իսկույն ևեթ համախմբվել հեղափոխական Ինտերնացիոնալի շարքերում։

Դեկտեմբերի վերջին Վ. Ի. Լենինի անմիջական մասնակցությամբ պատրաստվեց «Կոմունիստական ինտերնացիոնալի առաջին համագումարին» դիմումի նախագիծը, ուր շարադրվում էին հեղափոխական նոր Ինտերնացիոնալի հիմնական սկզբունքներն ու նպատակները և եղբայրական կուսակցություններին, կազմակերպություններին ու խմբերին ուղղված կոչ էր պարունակում մասնակցելու նրա հիմնադիր կոնգրեսի աշխատանքներին։ 1919 թ. հունվարին դիմումի նախագիծը քննարկվեց և ընդունվեց ութ կոմունիստական և ձախ սոցիալիստական կուսակցությունների՝ Մոսկվայում կայացած խորհրդակցությունում։ 1919 թ. հունվարի 24-ին «Պրավդայում» հրապարակված դիմումը պաշտոնական կոչ եղավ Կոմինտերնի հիմնադիր կոնգրեսի անցկացման համար։

Սոցիալ-շովինիստական և ցենտրիստական կուսակցությունների ներկայացուցիչները 1919 թ. փետրվարի 3—10-ը Բեռնում կոնֆերանս անցկացրին, որի նպատակն էր խանգարել կոմունիստական շարժման աճին, դատապարտել բոլշևիկներին ու Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխությունը, ինչպես նաև հասնել ռեֆորմիստական կուսակցությունների որոշակի համախմբմանը և վերականգնել II Ինտերնացիոնալը։ Կոնֆերանսը, գունազարդելով իմպերիալիստական բուրժուազիայի քաղաքականությունը, հայտարարեց, որ Անտանտի տերությունները պատերազմ էին մղում հանուն դեմոկրատիայի, հանուն ազգերի ազատության և միջազգային պայմանագրերի իրականացումն ապահովելու։ Նա պաշտպանեց աշխարհի վերափոխման այն պլանները, որոնք առաջադրվել էին հաղթող երկրների իմպերիալիստական կառավարությունների կողմից, այդ թվում նաև գաղութների հարցի գծով, հանդես գալով միայն դրանց շահագործման ավելի մեղմ ձևերի օգտին։ Կոնֆերանսում աջ սոցիալիստներ Տրուլստրան, Վելսը, Բերնշտայնը, ինչպես նաև Բրանտինգը, Կաուցկին և ուրիշներ հարձակվում էին պրոլետարիատի դիկտատուրայի լոզունգի և բոլշևիկների քաղաքականության վրա, փորձելով ապացուցել, որ սոցիալիզմին կարելի է հասնել միայն բուրժուական դեմոկրատիայի պառլամենտական սիստեմը զարգացնելով։

Կոնֆերանսի ցենտրիստական թևը, հաշվի առնելով Հոկտեմբերյան հեղափոխության վիթխարի հեղինակությունը բանվորական զանգվածների շրջանում, առաջարկեց չարտահայտել իր վերաբերմունքը Սովետական Ռուսաստանում տիրող դրության վերաբերյալ։ Կոնֆերանսն իր որոշումներում ձեռնպահ մնաց սովետական երկրի նկատմամբ բացահայտ հարձակումներ գործելուց, բայց այդ որոշումների ոգին հակակոմունիստական էր։ Որոշ ժամանակ անց անգլիական լեյբորիստների պարագլուխներից մեկը՝ Ռ. Մակդոնալդը գրում էր. «ամբողջ II Ինտերնացիոնալը հակաբոլշևիկյան է։ Գործնականում նա միակ ռեալ հենարանն է բոլշևիզմի դեմ, չհաշված ռազմական բռնությունները»։

Սակայն աջ սոցիալիստներն անզոր էին խանգարելու հեղափոխական պրոլետարական ավանգարդի համախմբմանը։ 1919 թ. փետրվարին ճեղքելով-անցնելով քաղաքացիական պատերազմի ռազմաճակատների միջով, սկսեցին Մոսկվա, Կոմինտերնի I կոնգրես ժամանել պատվիրակները։ Իտալիայից, Ֆրանսիայից, Անգլիայից, ԱՄՆ-ից մեկնած մի շարք պատվիրակների չհաջողվեց Սովետական Ռուսաստան գալ, առանձին պատվիրակներ ձերբակալվեցին ճանապարհին, մի քանիսն էլ ուշացումով ժամանեցին։

1919 թ. մարտի 1-ին Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ անցկացվեց մի խումբ պատվիրակների խորհրդակցություն, որտեղ քննարկվեցին առաջիկա կոնգրեսի բացման, կառուցվածքի և օրակարգի հարցերը։ Գերմանիայի կոմկուսի ներկայացուցիչներ Գ. Էբերլայնը, վկայակոչելով իր կուսակցության հանձնարարությունը, հանդես եկավ III Ինտերնացիոնալի անհապաղ ստեղծման դեմ։ Իր կարծիքը նա հիմնավորում էր տակտիկական նկատառումներով, մասնավորապես կոմունիստական կուսակցությունների ու խմբերի աննշան թվով։ Բայց դրանում արտացոլվեց նաև դեռ մինչև վերջ չհաղթահարված խոնարհումը տարերայնության առջև, որը հատուկ էր գերմանական ձախերին։ Գ. Էբերլայնի առարկությունների կապակցությամբ խորհրդակցությունը որոշում ընդունեց այն մասին, որ կոմունիստների միջազգային ֆորումը բացվելու է որպես միջազգային կոմունիստական կոնֆերանս։

Այդ կոնֆերանսը բացվեց Մոսկվայի Կրեմլում, Լենինի նախագահությամբ, 1919 թ. մարտի 2-ի երեկոյան։

Մի շարք նոր պատվիրակների ժամանումից հետո մարտի 4-ին օրակարգում վերստին դրվեց անհապաղ Կոմունիստական ինտերնացիոնալ ստեղծելու հարցը։ Այս անգամ լենինյան տեսակետը հաղթանակեց։ Անուն առ անուն քվեարկելու ընթացքում միջազգային կոնֆերանսը միահամուռ (ձեռնպահ մնաց միայն գերմանական պատվիրակը) ընդունեց պատմական որոշում՝ «վերակառուցվել որպես III Ինտերնացիոնալ և ընդունել Կոմունիստական ինտերնացիոնալ անվանումը»։ Մարտի 4-ին կոմունիստների միջազգային ֆորումն արդեն աշխատում էր որպես Կոմունիստական ինտերնացիոնալի I կոնգրես։ Ընդամենը կոնգրես էր եկել 21 երկրից 35 կազմակերպության 52 պատվիրակ։ Հեղափոխական պրոլետարների միջազգային կոնգրեսում առաջին անգամ մասնակցում էին ճնշված երկրների՝ Իրանի, Չինաստանի, Կորեայի, Թուրքիայի ներկայացուցիչները։

I կոնգրեսի աշխատանքի կենտրոնում էին գտնվում Վ. Ի. Լենինի զեկուցումը և թեզիսները բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին։ Լենինը տվեց կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտության գիտական հիմնավորումը։ Նա պրոլետարական դիկտատուրան բնութագրեց որպես սոցիալիստական վերակառուցման համար, տապալված շահագործողական դասակարգերի կատաղի դիմադրության դեմ բանվոր դասակարգի պայքարի գլխավոր զենք։ Զեկուցման և թեզիսների մեջ ընդգծվում էր, որ պրոլետարական դիկտատուրան իսկական դեմոկրատիա է աշխատավորության համար, բնակչության վիթխարի մեծամասնության համար, որը երբեք չի եղել ամենադեմոկրատական բուրժուական ռեժիմների ժամանակ։ «Պրոլետարիատի դիկտատուրան անխուսափելիորեն պետք է իր հետ բերի,— ասում էր Լենինը,— ընդհանրապես ասած, ոչ միայն դեմոկրատիայի ձևերի և հիմնարկների փոփոխում, այլ դրանց հենց այնպիսի փոփոխում, որը կապիտալիզմից ճնշվածների՝ աշխատավոր դասակարգի կողմից դեմոկրատիզմի փաստական օգտագործման աշխարհում դեռ չտեսնված ընդլայնում է տալիս»[1]։

Վ. Ի. Լենինը բացահայտեց բուրժուական դեմոկրատիայի էությունը, որպես բուրժուազիայի քողարկված դիկտատուրա։ Բուրժուական դեմոկրատիան, նշվում էր թեզիսներում, դեմոկրատիա է հարուստների համար, փոքրամասնության համար. այդ դեմոկրատիայի պայմաններում միլիոնավոր աշխատա-

[1] Վ. Ի. Լենին, երկ, հ. 37, էջ 616—617։

վորներ սահմանափակված են օրենքով հռչակված ազատությունների՝ ժողովների, խոսքի, մամուլի և այլ ազատությունների օգտագործման մեջ. բուրժուական դեմոկրատիայի ժամանակ կապիտալը կարող է անպատիժ և գաղանաբար հաշվեհարդար տեսնել բանվոր դասակարգի հեղափոխական առաջնորդների հետ, ինչպես դա տեղի ունեցավ, օրինակ, Կ. Լիբկնեխտի և Ռ. Լյուքսեմբուրգի հետ Գերմանիայում։ Բացահայտելով բուրժուական դեմոկրատիայի դասակարգային սահմանափակությունը, Լենինը նշում էր առանց սոցիալիստական հեղաշրջման աշխատավորության ազատագրությանը հասնելու անհնարինությունը։

Լենինի զեկուցման մեջ և թեզիսներում համոզիչ կերպով ցույց տրվեց «դեմոկրատիա» և «դիկտատուրա» հասկացությունների նկատմամբ ոչ դասակարգային վերաբերմունքի անհիմն լինելը, մերկացվում էին սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդների կեղծ փաստարկներն ի պաշտպանություն «ընդհանրապես դեմոկրատիայի» և ընդդեմ «ընդհանրապես դիկտատուրայի» որպես սոցիալիզմի ուղղակի դավաճանություն և փաստացի անցում բուրժուազիայի կողմը։ Պրոլետարիատի դիկտատուրայի դեմ հենց բուրժուական «դեմոկրատիայի» պաշտպանությունն է հանդիսանում աջ սոցիալիստական գաղափարախոսության էությունը։

Վ. Ի. Լենինն ընդգծեց սովետների և սովետական իշխանության վիթխարի նշանակությունը որպես պրոլետարիատի դիկտատուրայի ձևի, որը հենց կյանքից է ծնունդ առել և ակնառու կերպով մարմնավորում է դեմոկրատիայի բարձրագույն, պրոլետարական տիպը։ Նա նշեց նաև սովետների միջազգային նշանակությունը որպես կազմակերպության նոր տիպի, որն ընդունակ է աշխատավորներին միավորելու կապիտալի դեմ հաղթական պայքար մղելու համար։

Վ. Ի. Լենինի զեկուցումն ու թեզիսները, որոնք ընդունվեցին կոնգրեսի կողմից, դարձան Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադիր փաստաթուղթը։ Կոնգրեսը քննարկեց և ընդունեց Կոմունիստական ինտերնացիոնալի պլատֆորմը, որը շարադրում էր Կոմինտերնի և կոմկուսների խնդիրները կապիտալիզմի տապալման համար մղվող հեղափոխական պայքարում, ինչպես նաև պրոլետարական դիկտատուրայի հիմնական քաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրները։ Իր պլատֆորմում և «Ամբողջ աշխարհի պրոլետարներին» մանիֆեստում Կոմինտերնը հռչակում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները, բոլոր երկրների մարտնչող պրոլետարների ամենասերտ կապի, ինչպես նաև իմպերիալիզմի դեմ իրենց մղած պայքարում գաղութների շահագործվող ժողովուրդներին պաշտպանելու անհրաժեշտությունը, այն երկրների միջև եղբայրական փոխօգնության անհրաժեշտությունը, որտեղ հաղթանակել է պրոլետարիատի իշխանությունը։

Կոմինտերնի կոնգրեսը որոշումներ ընդունեց նաև սոցիալ-դեմոկրատիայի և Բեռնի կոնֆերանսի նկատմամբ վերաբերմունքի, միջազգային դրության և Անտանտի երկրների քաղաքականության, սպիտակ տեռորի և մի քանի այլ հարցերի մասին։ III Ինտերնացիոնալի գործունեությունը ղեկավարելու համար որոշվեց ստեղծել Գործադիր կոմիտե (ԿԻԳԿ)։

Կոմինտերնի I կոնգրեսի պատմական նշանակությունն այն էր, որ նա դրեց բոլոր երկրների կոմունիստական ուժերի գաղափարական ու կազմակերպչական համախմբման սկիզբը։ Կոմունիստական ինտերնացիոնալի հանդես գալով միջազգային պրոլետարիատը հզոր զենք ստացավ իր ձեռքը, որի օգնությամբ, ինչպես գրում էր Լենինը, նա սկսեց «կենսագործել Մարքսի մեծագույն լոզունգը, լոզունգ, որն ամփոփում է սոցիալիզմի ու բանվորական

շարժման դարավոր զարգացումը, մի լոզունգ, որն արտահայտվում է պրոլետարիատի դիկտատուրա հասկացությամբ»[2]։ Ի դեմս Կոմինտերնի ձևավորվեց համաշխարհային կոմունիստական շարժման ղեկավար կենտրոն, որն ապահովում էր նրա գաղափարական ու կազմակերպական աճը, նրա ինտերնացիոնալ համախմբվածությունն ու ամենաակտիվ դերը նոր դարաշրջանի դասակարգային մարտերում։

Համաշխարհային հեղափոխական շարժումը 1919—1920 թթ.

1919—1920 թթ. հեղափոխական շարժումն աշխարհում շարունակում էր ծավալվել բուռն տեմպերով։ Մի շարք երկրներում հեղափոխական պրոլետարները գրոհի էին անցնում, ձգտելով տապալել բուրժուազիայի իշխանությունը։ 1919 թ. մարտին Հունգարիայում հաստատվեց սովետական իշխանություն, որը գոյություն ունեցավ մի քանի ամիս։ Որոշ ժամանակով սովետական իշխանություն հաստատվեց 1919 թ. ապրիլին Բավարիայում, իսկ հունիսին՝ Սլովակիայում։

1919—1920 թթ. սուր դասակարգային ընդհարումներ, հզոր գործադուլային մարտեր տեղի ունեցան Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում, Իսպանիայում, Ճապոնիայում և շատ այլ երկրներում։

Արագորեն աճում էր ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը, որն ուղղված էր իմպերիալիզմի դեմ և օբյեկտիվորեն հանդիսանում էր միջազգային բանվորական շարժման դաշնակիցը։ Չինաստանում 1919 թ. գարնանը սկսվեց հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական պայքարի («մայիսի 4 շարժում») վերելք։ 1919 թ. մարտին Կորեայում ապստամբություն տեղի ունեցավ ընդդեմ ճապոնական գաղութային լծի։ Ամրիտսարի գնդակոծությունը Հնդկաստանում (1919 թ. ապրիլ) չկարողացավ մարել անգլիական գաղութարարների դեմ ուղղված ազատագրական պայքարի վերելքը։ 1920 թ. հունվարին ազգային-բուրժուական հեղափոխություն սկսվեց Թուրքիայում։ Հակաիմպերիալիստական պայքարն ընդգրկեց Իրանը, Աֆղանստանը, Հյուսիսային Աֆրիկան։ Հեղափոխական ելույթներ տեղի ունեցան Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում։

Այդ տարիներին հեղափոխական պայքարի կարևոր տեղամաս եղավ միջազգային բանվոր դասակարգի շարժումն ի պաշտպանություն Սովետական Ռուսաստանի և մյուս սովետական հանրապետությունների։ Սովետական իշխանությունը Ռուսաստանում ճնշելու համար ուղարկված ֆրանսիական զինվորներն ու նավաստիները 1919 թ. ապրիլին ապստամբություն բարձրացրին Սևաստոպոլում ու Օդեսայում և հրաժարվեցին կրակել ռուս բանվորների վրա։ Ֆրանսիայի կառավարությունն ստիպված էր էվակուացնել իր ինտերվենցիոն բանակը։ Իսկ հենց Ֆրանսիայում բանվորները քաղաքական գործադուլների ընթացքում կառավարությունից պահանջում էին դադարեցնել Սովետական Ռուսաստանի նկատմամբ ամեն տեսակի թշնամական գործողությունները։

1919 թ. հուլիսի 21-ին Կոմինտերնի գործկոմի կոչով գործադուլներ անցկացվեցին ի պաշտպանություն Ռուսաստանի և Հունգարիայի սովետական հանրապետությունների։ Սովետական Ռուսաստանի պաշտպանության շարժումն ավելի ու ավելի զանգվածային ու զորեղ էր դառնում։ Այն մեծ թափի հասավ Անգլիայում, ուր 1919 թ. աշնանն ստեղծվեց «Ձեռքերդ հեռո՛ւ Սովետական Ռուսաստանից» շարժման ազգային կոմիտե, որը հենվում էր տեղական շատ խմբերի վրա։ Այդ շարժումն առանձնահատուկ ուժ ստացավ 1920 թ. գարնա-

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 371։

նը, երբ սպիտակ պանական Լեհաստանը Անտանտի իմպերիալիստների աջակցությամբ հարձակվեց Սովետական Ռուսաստանի վրա։ Անգլիայում բողոքի զանգվածային ցույցեր բռնկվեցին, շատ նավահանգիստների բանվորներ հրաժարվում էին զենք, պարենամթերք բեռնել Լեհաստան տանելու համար։

Եվրոպական շատ երկրներում, ԱՄՆ-ում, Լատինական Ամերիկայի երկրներում այդ տարիներին առաջացան Սովետական Ռուսաստանի օգնության կոմիտեներ, որոնք կարևոր դեր խաղացին պրոլետարական դիկտատուրայի առաջին երկրի հետ միջազգային պրոլետարիատի համերաշխության շարժման մեջ։ Սովետական Ռուսաստանի հետ համերաշխության՝ իր ուժով ու զանգվածների ընդգրկումով վիթխարի շարժումը վկայում էր այն մասին, որ հեղափոխական բանվորական շարժումը Հոկտեմբերի գործը դիտում էր որպես իր սեփական գործ։ Հանրագումարի բերելով 1917—1920 թթ. բուռն եռամյակի արդյունքները, Վ. Ի. Լենինը խոսում էր պրոլետարական այդ համերաշխության մեծ նշանակության մասին, համերաշխություն, որը նպաստեց այն բանին, որ Սովետական Ռուսաստանը դիմացավ թշնամիների հետ տեղի ունեցած գոտեմարտին։ «Բոլոր երկրների բանվորների և աշխատավորների հետ մեր համախմբման ուժն ավելի մեծ, ամուր և հզոր գտնվեց, քան կապիտալիստական երկրների համախմբումը, նրանց միջև եղած շղթայակցությունը»[3]։

Հեղափոխական սուր պայքարի պայմաններում արագորեն աճեց բանվորական կազմակերպությունների թիվը և միևնույն ժամանակ առաջ ընթացավ և խորացավ տարանջատումը կոմունիստների և ռեֆորմիստների միջև։ Կոմինտերնի գործունեությունը նպաստում էր այդ տարանջատմանը և նոր կոմունիստական կուսակցությունների ստեղծմանը։ Կոմինտերնի I և II կոնգրեսների միջև ընկած ժամանակաշրջանում (1919 թ. մարտից մինչև 1920 թ. հուլիս) կոմունիստական շարժումը նկատելիորեն ամրապնդվեց։ 1919 թ. մայիսին բուլղարական տեսչակների կուսակցությունը վերակազմվեց կոմունիստականի։ Կոմկուսներ ձևավորվեցին Հարավսլավիայում, ԱՄՆ-ում, Մեքսիկայում, Դանիայում, Իսպանիայում, Ինդոնեզիայում, Իրանում, Մեծ Բրիտանիայում և մի շարք այլ երկրներում։ Արգենտինայի, Հունաստանի, Ռումինիայի, Իտալիայի, Շվեդիայի, Նորվեգիայի և մի շարք այլ երկրների ձախ սոցիալիստական կուսակցությունները հայտարարություն արեցին Կոմինտերնին իրենց միանալու մասին։ Բանվորական շարժման բոլոր իսկապես առաջավոր տարրերը, այդ թվում անարխո-սինդիկալիստական կազմակերպությունների լավագույն մասը ձգտում էին դեպի Կոմինտերն՝ նրա մեջ տեսնելով իրենց ղեկավար կենտրոնը։

1919 թ. նոյեմբերին Բեռլինում կայացած երիտասարդական կոմունիստական կազմակերպությունների միջազգային կոնգրեսում ստեղծվեց Երիտասարդության Կոմունիստական ինտերնացիոնալը (ԿԻՄ), որը դարձավ Կոմինտերնի լիիրավ սեկցիան։

Չնայած աջ սոցիալիստական և ցենտրիստական պարագլուխները հակակոմունիստական պրոպագանդա էին մղում, այդ ժամանակ ռեֆորմիստական բանվորական կազմակերպություններում հեղափոխական վերելքի իրադրության ներգործությամբ նկատվում էր անդամ-մասսաների զգալի մասի շարժումը դեպի ձախ։ Դա հատկապես բնորոշ էր մի շարք ցենտրիստական կուսակցությունների համար, որոնց մեջ ուժեղանում էին հեղափոխական տրամադրություններն ու ելույթներն ընդդեմ ռեֆորմիստ առաջնորդների, հանուն Կոմինտերնի հետ միանալու։ Իտալիայի, Ֆրանսիայի, Չեխոսլովակիայի և մի շարք այլ երկրների սոցիալիստական կուսակցություններում սկիզբ առավ գաղափարական-քաղաքական խոր վերակառուցման պրոցեսը, որի ընթացքում այդ կուսակցությունների անդամների մեծամասնությունը կանգնում էր հեղափոխական ծրագրի կողմը։ Մի շարք երկրների կոմունիստական կուսակցությունների ձևավորումը ընթանում էր հենց այդ ուղիով։ Սակայն սոցիալիստական կուսակցությունների հեղափոխական վերափոխմանը, նրանց իսկապես կոմունիստականի վերածմանն ամեն կերպ խոչընդոտում էին աջ և ռեֆորմիստ պարագլուխները։ Այնուամենայնիվ դեպի ձախ ընթացող շարքային անդամների ճնշման տակ 1920 թ. ռեֆորմիստների վերականգնած II Ինտերնացիոնալից դուրս եկան շատ կուսակցություններ, այդ թվում Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, Ավստրիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, Անգլիայի անկախ բանվորական կուսակցությունը, Ֆրանսիայի, Իսպանիայի, ԱՄՆ-ի սոցիալիստական կուսակցությունները։ Այդ կուսակցությունների անդամ առաջավոր բանվորները պահանջում էին, որ իրենց կազմակերպությունները միանան Կոմինտերնին։ Այդ պայմաններում ցենտրիստ շատ պարագլուխներ որոշեցին մանևրել և համաձայնել մտնելու Կոմինտերնի մեջ, որպեսզի փորձեն ներսից փոխել նրա բնույթն ու քաղաքականությունը։

Իր շարքերն ընդունելով ձախ ընթացող սոցիալ-դեմոկրատական մասսաներին, Կոմինտերնը չէր կարող թույլ տալ, որպեսզի նրա մեջ ընդունվեին այնպիսի տարրեր, որոնք ռեֆորմիզմի և ցենտրիզմի գաղափարախոսության և պրակտիկայի կրողներ էին։ Այդպիսի տարրերի ընդունվելն սպառնում էր քայքայել III Ինտերնացիոնալի հեղափոխական հիմքերը, խանգարել նոր տիպի կուսակցության ստեղծմանը։

Վ. Ի. Լենինի «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գիրքը

1919—1920 թթ. դասակարգային մարտերի արդյունքները ցույց տվեցին, որ կոմկուսները, որոնց ազդեցությունն աճում էր, այնուամենայնիվ ի վիճակի չէին կապիտալիստական երկրների պրոլետարիատի մեծամասնությանը դուրս բերել ռեֆորմիստական կազմակերպությունների ազդեցությունից։ Կոմկուսները դեռևս իրենց հետևից չէին տանում բանվոր դասակարգի և մյուս աշխատավորների բավականաչափ հզոր զանգվածներին, և դա այն ժամանակաշրջանի հեղափոխական մարտերի գլխավոր թուլություններից մեկն էր։ Իրենք իսկ կոմկուսները դեռ սակավափորձ էին, լիովին չէին տիրապետում քաղաքական պայքարի գիտությանն ու արվեստին։ Կոմկուսների շարքերն էին գալիս այնպիսի խմբեր ու խավեր, որոնք դեռևս ազատագրված չէին ռեֆորմիստական պատրանքներից ու սխալներից։ Այդ պատճառով կոմունիստական շարժման ամրապնդման ու զարգացման կարևորագույն պայմանը օպորտունիզմի և ցենտրիզմի հետ վճռական խզումը մինչև վերջ հասցնելն էր։ Լենինը բազմիցս ընդգծում էր, որ բանվոր դասակարգը չի կարող իր պատմական միսիան կատարել, եթե նրա գլուխ կանգնած լինեն ռեֆորմիստական և ցենտրիստական առաջնորդները։ «Նրանց հետ պետք է խզել կապերը,— գրում էր Լենինը։— Հանցանք է նրանց խզելը...»[4]։

Այդ նույն ժամանակ էլ շատ կոմկուսներում հանդես եկավ «ձախ» վտանգը։ Այսպես, Գերմանիայում ձախ-անարխիստական տարրերը կտրականապես առարկելով սոցիալ-դեմոկրատական բանվորներին նվաճելու կոմկուսների

[3] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու (ռուս.)։ հ. 44, էջ 484։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 455։

կուրսի դեմ, դուրս եկան ԳԿԿ-ից և 1920 թ. ապրիլին ստեղծեցին իրենց առանձին, այսպես կոչված, կոմունիստական բանվորական կուսակցությունը։ «Ձախ» աղանդավորությունը, որը ժխտում էր մասսաների մեջ ամենօրյա աշխատանքի անհրաժեշտությունը, զգալի տարածում գտավ նաև մի շարք այլ կոմկուսներում։ Այն լուրջ խոչընդոտ էր դառնում կոմունիստական շարժման ճանապարհին։

Բանվորական և կոմունիստական շարժման արմատական պրոբլեմները Վ. Ի. Լենինը քննարկեց «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գրքում, որը նա գրեց 1920 թ. գարնանը։ Այդ գիրքը դարձել է կոմունիստների ստրատեգիայի և տակտիկայի իսկական հանրագիտարան։ Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ Հոկտեմբերյան հեղափոխությունն ունի միջազգային նշանակություն, որ Հոկտեմբերի հիմնական գծերը պատմականորեն անխուսափելիորեն կրկնվելու են միջազգային մասշտաբի մյուս սոցիալիստական հեղափոխություններում։ Այդ հիմնական գծերից, այսինքն՝ օրինաչափություններից, Լենինն ամենից առաջ առանձնացնում էր պրոլետարիատի դիկտատուրան, կոմունիստական կուսակցության ղեկավար դերը հեղափոխության մեջ և գյուղացիության ու մյուս կիսապրոլետարական խավերի հետ բանվոր դասակարգի կայուն դաշինքի անհրաժեշտությունը։ Գրքում ընդգծվում էր, որ կոմունիստական կուսակցությունների ստրատեգիայի և տակտիկայի որոշման ժամանակ անթույլատրելի է որևէ սուբյեկտիվիզմ, որ միայն օբյեկտիվ իրադրության, տվյալ հասարակության, տվյալ պետության և համաշխարհային թատերաբեմում գոյություն ունեցող դասակարգային փոխհարաբերությունների ամբողջականության մանրամասն ու լրջմիտ հաշվառումը կարող է հիմք ծառայել կոմունիստների ճիշտ քաղաքականության համար։ Լենինը կոմունիստներին ուսուցանում էր դասակարգային պայքարի հարցերին մոտենալ ինչպես տվյալ դարաշրջանի զարգացման հիմնական տենդենցների տեսանկյունից, այնպես էլ կոնկրետ առանձահատուկ գործոնների ռեալիստական վերլուծության տեսանկյունից։

Այդ առնչությամբ Լենինը ուշադրություն էր դարձնում ազգային պայմանների և առանձնահատկությունների հետ կոմունիստական քաղաքականության ինտերնացիոնալ սկզբունքների զուգակցման վրա։ Կոմունիստները ամեն բանից վեր դասում են բանվորական շարժման ընդհանուր ինտերնացիոնալ խնդիրները։ Բայց ինտերնացիոնալ քաղաքականության միասնությունը ամենուրեք միանման շաբլոններ ամենևին չի պահանջում, ընդհակառակը, պահանջում է կոմունիզմի հիմնական սկզբունքների կիրառման ձև, «որը մասնավորություններում ճիշտ ձևափոխեր այդ սկզբունքները, դրանք ճիշտ հարմարեցներ, կիրառեր ազգային ու ազգային-պետական տարբերությունների նկատմամբ»[5]։ Միևնույն ժամանակ կոմկուսների քաղաքականությունը պետք է հաշվի առնի նաև սուբյեկտիվ գործոնը՝ բանվոր դասակարգի և մյուս աշխատավորների պայքարի գնալու գիտակցական պատրաստականությունը, ակտիվորեն դաստիարակի այդ պատրաստականությունը։

Վերլուծելով բոլշևիկյան կուսակցության պայքարի հիմնական փուլերը, Լենինն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում մասսաների հետ կապերի ամրապնդման, այդ մասսաներին հեղափոխությանը մոտեցնելու, իր շարքերում աջ օպորտունիզմի, որպես հեղափոխական քաղաքականությանը խոչընդոտող գլխավոր վտանգի, հաղթահարման, ինչպես նաև «ձախ» օպորտունիզմի և աղանդավորության հաղթահարման համար ռուս կոմունիստների մղած պայքարի փորձի վրա։

Գրքում տրվեց Արևմուտքի երկրներում երիտասարդ կոմունիստական շարժման մեջ գոյություն ունեցող «ձախության» պատճառների սպառիչ վերլուծությունը։ «Ձախության» խորքային, սոցիալական պատճառը բանվորական և կոմունիստական շարժման վրա մանրբուրժուական հեղափոխականության ազդեցությունն էր։ Պատերազմի տարիներին և նրանից հետո բանվորական շարժման մեջ լցվեցին սնանկացած մանր բուրժուաների վիթխարի զանգվածներ։ Իսկ սնանկացած մանր սեփականատերը, որը զգացել է կյանքի շեշտակի և արագ վատացումը, կորցրել իր գոյության նյութական հիմքը, հեշտորեն է անցնում ծայրահեղ հեղափոխականության, նա բանվորական շարժման մեջ մղտցրնում է խռովարարության, անարխիզմի ոգի, բայց ընդունակ չէ երկարատև, դիմացկունություն պահանջող, կազմակերպված պայքարի։

Հաճախ «ձախության» պատճառ են եղել նաև կոմունիստների քաղաքական անփորձությունը, նրանց ձգտումը հնարավորին չափ արագ ու արմատականորեն լուծել դասակարգային պայքարի բոլոր հարցերը։ Հեղափոխության մոտալուտության միտքն անգամ ձախության տրամադրություններ էր ծնում կոմունիստների մի մասի մեջ։ Նման պայմաններում հեղափոխական բանվորների առելությունն օպորտունիստական քաղաքականության նկատմամբ հաճախ ընդունում էր բանվորական շարժման նախորդ ժամանակաշրջաններում կուտակված պայքարի ձևերի ժխտման կերպարանք։

Վ. Ի. Լենինը վերլուծեց «ձախ» կոմունիստների հիմնական սխալները. 1) կուսակցության դերի և կուսակցական կարգապահության ժխտում, 2) ռեֆորմիստական արհմիություններում աշխատելու անհրաժեշտության ժխտում, 3) բուրժուական պառլամենտներում աշխատելու անհրաժեշտության ժխտում, 4) կոմպրոմիսների ժխտում։ Վ. Ի. Լենինը խստագույն քննադատության ենթարկեց «ձախ» կոմունիստների մանրբուրժուական ավանտյուրիզմը և մասսաների մեջ աշխատանք կատարելու նկատմամբ ունեցած արհամարհանքը։ Նա ցույց տվեց, որ աղանդավորության էությունը մասսաների նկատմամբ ցուցաբերվող անվստահությունն է, նրանց մոտենալ չկարողանալը։ Ռեֆորմիստական արհմիություններում աշխատելուց հրաժարվելու մասին հեղափոխական ֆրազները Լենինն անվանում էր աններելի հիմարություն, բուրժուազիային կատարած ծառայություն, որովհետև նման դեպքում կոմունիստները ռեֆորմիստական արհմիությունները կհանձնեին աջ սոցիալիստական պարագլուխների և բուրժուազիայի լիակատար հսկողությանը։ Գրքում նշվում է նաև, որ քանի որ մասսաները դեռ հավատում են բուրժուական պառլամենտին, կոմունիստները պարտավոր են պառլամենտական ամբիոնն օգտագործել այն բանի համար, որպեսզի մերկացնեն բուրժուական քաղաքականությունը, նպաստեն մասսաների դաստիարակությանը։ Լենինը կոմկուսներին խորհուրդ էր տալիս սովորել ստեղծելու մի այնպիսի պառլամենտարիզմ, որը նրան կապեր պառլամենտից դուրս աշխատավորների մղած պայքարին։ Պայքարը հզոր և փորձված թշնամու՝ իմպերիալիզմի դեմ կոմունիստներից պահանջում է, նշում էր Լենինը, ուժերի մեծագույն լարում և կոմպրոմիսների, համաձայնությունների պարտադիր օգտագործում այն խավերի հետ, որոնք կարող են դառնալ պրոլետարիատի թեկուզ ժամանակավոր դաշնակիցներ։ Լենինյան աշխատության մեջ մեծ ուժով բացահայտվում էր կոմունիստական կուսակցության դերը որպես մասսաների ղեկավարի և կազմակերպչի։ Ամբողջ գրքի միջով կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ կոմկուսները պետք է իրենց կողմը գրավեն մասսա-

---

[5] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 98։

ներին, որ հենց դա է կոմկուսների հաջող պայքարի վճռական նախադրյալը։ Կոմունիստները պետք է աշխատեն բոլոր կազմակերպություններում, որոնք միավորում են աշխատավորներին, սովորեն տիրապետել հասարակական պայքարի բոլոր ձևերին, մասսաներին սովորեցնեն իրենց սեփական քաղաքական փորձով։ Լենինն այդ գրքում զարգացրեց կոմունիստական քաղաքականության մասին ուսմունքը որպես գիտություն և արվեստ։ Գրքի ամենակարևոր գաղափարներից մեկն այն միտքն էր, որ Արևմուտքի երկրների կոմկուսները պետք է սոցիալիստական հեղափոխության մոտեցման այնպիսի ուղիներ որոնեն, որոնք համապատասխանեն այդ երկրներում մղվող դասակարգային պայքարի պայմաններին։

««Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գիրքը վիթխարի դեր խաղաց կոմունիստական շարժման գաղափարական-քաղաքական զարգացման գործում։ Այն կապիտալիստական երկրների երիտասարդ կոմկուսների առջև բացահայտեց բոլշևիզմի հարուստ ու բազմակողմանի փորձը, Հոկտեմբերյան հեղափոխության փորձը, կոմունիստական շարժման ուշադրությունը շրջեց դեպի պրոլետարիատի մեծամասնության նվաճման խնդիրը։

Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսը

Կոմինտերնի II կոնգրեսը բացվեց 1920 թ. հուլիսի 19-ին Պետրոգրադում, իսկ հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 7-ը աշխատեց Մոսկվայում։ Կոնգրեսում ներկայացված էին 27 կոմկուսների, ինչպես նաև մի շարք կոմունիստական խմբերի պատվիրակներ։ Կոնգրեսի աշխատանքին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էին Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցության, Իտալիայի և Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունների, մի քանի սինդիկալիստական կազմակերպությունների պատվիրակներ։

Կոնգրեսի առաջին նիստում Վ. Ի. Լենինը հանդես եկավ միջազգային դրության և Կոմունիստական ինտերնացիոնալի մասին զեկուցումով։ Զեկուցման մեջ տրվեց հեղափոխական ճգնաժամի վերլուծությունը և դրա հիման վրա որոշվեցին կոմունիստական շարժման հիմնական խնդիրները։ Լենինն ընդգծեց, որ համաշխարհային իմպերիալիզմը պետք է ընկնի, երբ աշխարհի գլխավոր հեղափոխական ուժերը՝ Սովետական Ռուսաստանը, կապիտալիստական երկրների բանվորական շարժումը և ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը միավորվեն ընդհանուր հեղափոխական գրոհի մեջ։ Համաշխարհային քաղաքականության բոլոր իրադարձությունները, նշվում էր զեկուցման մեջ, այժմ անխուսափելիորեն կենտրոնանում են իմպերիալիզմի և Սովետական Ռուսաստանի հակամարտության շուրջը։

Վ. Ի. Լենինը կոմունիստներին նախազգուշացրեց, որ պետք չէ թերագնահատել հեղափոխական ճգնաժամի ուժն ու խորությունը, որ չի կարելի հավատալ օպորտունիստներին, որոնք իրադրությունը պատկերում են որպես սոսկ հասարակ «անհանգստություն», որը շուտով կհարթվի։ Միաժամանակ Լենինը նշում էր «ձախ» կոմունիստների հայացքների սխալը, որոնք գտնում էին, թե ճգնաժամը բուրժուազիայի համար բացարձակապես անելանելի վիճակ է ստեղծել, ընդգծում էր, որ բուրժուազիան փորձելու է ուժի միջոցով ճնշել շահագործվողների շարժումը կամ նրանց քնեցնելու է ինչ-որ զիջումներով։ Կոմկուսները և հեղափոխական պրոլետարիատը, ասում էր Լենինը, պետք է հեղափոխական ճգնաժամի իրադրությունը օգտագործեն պետական իշխանության նվաճման նախապատրաստությունն ուժեղացնելու համար։

Այդ խնդրի կապակցությամբ կոնգրեսի կենտրոնական հարցերից մեկը

բոլոր երկրներում իսկական հեղափոխական, մասսայական կոմունիստական կուսակցությունների ստեղծման հարցն էր, կուսակցություններ, որոնք ընդունակ լինեին գլխավորելու պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող պայքարը։ Կոնգրեսը մերժեց «ձախ» կոմունիստների և անարխո-սինդիկալիստական տարրերի հայացքները, որոնք ժխտում էին կարգապահ քաղաքական կուսակցության անհրաժեշտությունը պրոլետարիատի համար։ Կոնգրեսը վճռականորեն դատապարտեց նաև ցենտրիստական տարրերի դիրքը, որոնք փաստորեն առաջարկում էին կոմկուսները վերածել ամորֆ կազմակերպության, որոնք միավորեին տարբեր քաղաքական հոսանքներ։ «Կոմունիստական կուսակցության դերը պրոլետարական հեղափոխության մեջ» բանաձևում նշվում էր, որ կոմկուսը միավորում է բանվոր դասակարգի գիտակից, առավել հեղափոխական մասին և դրանով իսկ հանդիսանում կազմակերպական-քաղաքական մի լծակ, որի օգնությամբ բանվոր դասակարգի առավել առաջավոր մասը պրոլետարիատի և կիսապրոլետարիատի ամբողջ զանգվածին տանում է ուղիղ ճանապարհով։ Հին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների կրախը ոչ մի դեպքում չի վկայում ընդհանրապես պրոլետարական կուսակցականության կրախի մասին։ «Կոմունիստական կուսակցությունը, ասվում էր բանաձևում, բանվոր դասակարգին հարկավոր է ոչ միայն մինչև իշխանությունը նվաճելը և ոչ միայն իշխանությունը նվաճելու ժամանակ, այլև այն բանից հետո, երբ իշխանությունն անցել է բանվոր դասակարգի ձեռքը»։

Կուսակցության գլխավոր կազմակերպչական սկզբունքը, նշվում էր բանաձևում, պետք է լինի դեմոկրատական ցենտրալիզմը, այսինքն՝ բարձրագույն բջջի ընտրովիությունը ստորինի կողմից, որոշումների ձևավորման դեմոկրատական բնույթը, բարձրագույն բջջի դիրեկտիվների բացարձակ պարտադիր լինելը ստորինի համար։ Այդ սկզբունքն ապահովում էր կուսակցության կամքի միասնությունը և գործողության միասնությունը։

Կոմունիստական կուսակցության դերի, նրա բնույթի մասին հարցը գլխավորը եղավ նաև Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ ընդունվելու պայմանների քննարկման ժամանակ։ «Ձախ» կոմունիստները կտրուկ հանդես էին գալիս Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությանը և Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը Կոմինտերնի մեջ ընդունելու դեմ՝ նրանց ամբողջապես օպորտունիստական համարելով և չնկատելով, որ նրանց շարքերում միավորված են հեղափոխականորեն տրամադրված բանվորների մեծ մասսաներ։ Մյուս կողմից, իտալական սոցիալիստական կուսակցության պատվիրակության ղեկավար Սերրատին և ցենտրիստական ուղղության ներկայացուցիչները պահանջում էին III Ինտերնացիոնալի դռները լայնորեն բացել բոլոր այն կուսակցությունների համար, որոնք ցանկանում էին նրա մեջ ընդունվել, առարկում էին ցենտրիստ առաջնորդներին կուսակցություններից անհապաղ վտարելու դեմ։

Վ. Ի. Լենինը վճռական հակահարված տվեց Կոմինտերնի շարքերը նրան խորթ օպորտունիստական տարրեր խցկելու փորձերին։ Դրա հետ մեկտեղ նա նշեց, որ չի կարելի հրաժարվել այն կուսակցությունների հետ բանակցություններ վարելուց, որոնք հեղափոխական բանվորներ են միավորում։

Կոնգրեսի հաստատած՝ Կոմինտերնի մեջ ընդունվելու «21 պայմանը» խոչընդոտում էր ռեֆորմիստական և ցենտրիստական խմբերի թափանցմանը կոմկուսների և Կոմինտերնի շարքերը։ «21 պայմանում» ասվում էր, որ Կոմինտերնը «չի կարող հաշտվել այն բանի հետ, որ ակնհայտ օպորտունիստները, ինչպես, օրինակ, Տուրատին, Կաուցկին և մյուսները, իրավունք ունենան

համարվելու III Ինտերնացիոնալի անդամներ»։ Նման կարգն այն բանին կհասցներ, որ III Ինտերնացիոնալը խիստ կնմանվեր կործանված II Ինտերնացիոնալին։ «21 պայմանում» շարադրվում էր կոմունիստական կուսակցության գաղափարական, տակտիկական և կազմակերպչական հիմունքների համառոտ բնութագիրը՝ պրոլետարիատի դիկտատուրայի, որպես հեղափոխական պայքարի և մարքսիզմի տեսության գլխավոր սկզբունքի, ճանաչում. լիակատար խզում ռեֆորմիստների և ցենտրիստների հետ և կուսակցության շարքերից նրանց վտարում. պայքարի լեգալ և անլեգալ մեթոդների զուգակցում, սիստեմատիկ աշխատանք գյուղում, արհմիություններում,. պառլամենտում. յուրաքանչյուր սովետական հանրապետության անձնուրաց պաշտպանություն, ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների աջակցություն. դեմոկրատական ցենտրալիզմ՝ որպես կուսակցության գլխավոր կազմակերպական սկզբունք, Կոմինտերնի կոնգրեսների և Կոմինտերնի գործկոմի որոշումների պարտադիր լինելը կուսակցության համար։

Կոմկուսների բնույթի և դերի մասին հարցի կապակցությամբ կոնգրեսի ընդունած որոշումներում արտացոլվեց լենինյան ուսմունքը նոր տիպի կուսակցության վերաբերյալ, որը նպաստեց Կոմինտերնի միասնության ապահովմանը մարքս-լենինյան սկզբունքների հիման վրա։

Արտակարգ կարևոր նշանակություն ունեին II կոնգրեսի որոշումները համաշխարհային հեղափոխական պրոցեսի շարժիչ ուժերի, իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում պրոլետարիատի դաշնակիցների հարցերի վերաբերյալ։

Կոնգրեսը ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը դիտում էր որպես իմպերիալիզմի դեմ ընդհանուր պայքարի կարևոր բաղկացուցիչ մաս։ Ազգային-գաղութային պրոբլեմն իր հիմնական բովանդակությամբ հանդիսանում էր գաղութների և կիսագաղութների բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող բազմամիլիոն գյուղացիության հետ միջազգային բանվոր դասակարգի դաշինքի հարց։ Ազգային և գաղութային հարցերի գծով թեզիսների նախագիծը, որը գրել էր Լենինը, ինչպես նաև կոնգրեսում նրա ելույթները, որպես վճռական խնդիրներից մեկի, ընդգծում էին Սովետական Ռուսաստանի, կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի պայքարի և ճնշված ժողովուրդների ազատագրական շարժման միջև սերտ դաշինք ստեղծելու անհրաժեշտությունը։ Լենինը և նրա կողմնակիցները մերժեցին այդ հարցում մարքսիստական գիծը նենգափոխելու բոլոր տեսակի փորձերը։ Լենինը վճռականորեն առարկում էր Արևելքի երկրներում մղվող ազատագրական պայքարի առաջադիմական և հեղափոխական հնարավորությունները նսեմացնելու դեմ, ոչ պրոլետարական զանգվածներին որպես համատարած ռեակցիոն զանգված դիտելու փորձերի դեմ։ Միևնույն ժամանակ նա հանդես էր գալիս նաև ընդդեմ առանձին պատվիրակների այն պնդումների, թե իբր համաշխարհային իմպերիալիզմի կրախը կախված է բացառապես գաղութներում և կիսագաղութներում մղվող պայքարի թափից։ Նշելով, որ ազգային-ազատագրական շարժումներն իրենց դասակարգային բովանդակությամբ բուրժուադեմոկրատական են, Լենինը հիմնավորում էր դրանց աջակցելու անհրաժեշտությունը, քանի որ դրանք ծառայում են որպես իմպերիալիզմի կործանման միջոց, այդ շարժումների վրա ինչպես միջազգային, այնպես էլ ազգային մասշտաբներով պրոլետարիատի ազդեցության անհրաժեշտությունը։ II կոնգրեսից հետո շուտով Կոմինտերնն առաջադրեց «Պրոլետարներ բոլոր երկրների և ճնշված ժողովուրդներ, միացե՛ք» լոզունգը, որը ջերմորեն պատշաղանեց Վ. Ի. Լենինը։

Կոնգրեսի ընդունած թեզիսներում ասվում էր, որ կոմունիստները պաշտ-

պանում են ճնշված երկրների ազգային-ազատագրական շարժումները, նրանք կարող են ժամանակավոր համաձայնության գալ գաղութների բուրժուական դեմոկրատիայի հետ, նրա հետ դաշինքի մեջ մտնել։ Բայց այդուհանդերձ կոմկուսները պետք է պահպանեն իրենց գաղափարական և կազմակերպական ինքնուրույնությունը։ Կոնգրեսն Արևելքի երկրների կոմունիստների առջև դրեց կայուն կոմունիստական կուսակցություններ և մասսայական հեղափոխական-դեմոկրատական կազմակերպություններ ստեղծելու, հակաֆեոդալական պայքարի մեջ ներգրավված գյուղացիական մասսաների շրջանում ակտիվ աշխատանքի, տարբեր ազգությունների աշխատավորներին բաժանող նացիոնալիստական վերապրուկներն ու նախապաշարմունքները արմատախիլ անելու խնդիրներ։

Սոցիալիստական պետության առաջացումը Ռուսաստանում և համաշխարհային հեղափոխական շարժման մեջ նրա ունեցած աչքի ընկնող դերն ազգային ազատագրության համար պայքարող ժողովուրդների առջև բացում էին զարգացման կապիտալիստական փուլը շրջանցելով սոցիալիզմին անցնելու հեռանկարը։ Նման զարգացումը հնարավոր էր առաջավոր երկրների պրոլետարիատի օգնության և աջակցության դեպքում։ II կոնգրեսի ընդունած լենինյան այդ դրույթը հարստացրեց գիտական կոմունիզմի տեսությունը, նշեց սոցիալիզմի ուժերի հետ դաշինք կազմած ազգային-ազատագրական շարժման զարգացման առավել առաջադիմական ուղին։

Կոնգրեսն ընդունեց ագրարային հարցի վերաբերյալ թեզիսներ, որոնք նույնպես գրել էր Լենինը։ Այդ հարցի առանձնահատուկ կարևորությունը բացատրվում էր նրանով, որ Արևմուտքի երկրների կոմկուսները հաճախ թերագնահատում էին աշխատավոր գյուղացիության հետ պրոլետարիատի կայուն դաշինքի նշանակությունը։ Հունգարիայի և Բավարիայի սովետական հանրապետությունների փորձը ցույց էր տալիս, որ կոմունիստները հաճախ վտանգավոր էին համարում գյուղացիներին հողով ապահովելը, քանի որ դա մեծացնում էր մանր բուրժուազիայի խավը, որը, նրանց կարծիքով, միշտ գնալու է ընդդեմ սոցիալիստական հեղափոխության։

Վ. Ի. Լենինը ագրարային հարցի վերաբերյալ թեզիսների ուրվագծում նշում էր, որ աշխատավորների ոչ պրոլետարական զանգվածների համար չկա փրկության այլ միջոց, քան դաշինքը պրոլետարիատի հետ։ Բայց արդյունաբերական բանվորներն էլ չեն կարող կատարել մարդկությանը կապիտալի և պատերազմների լծից ազատագրելու իրենց համաշխարհային պատմական միսիան, եթե նրանք ամփոփվեն համքարական, պրոֆեսիոնալ նեղ շահերի մեջ, եթե նրանք իրենց շուրջը չմիավորեն բոլոր շահագործվողներին։ Ագրարային հարցի վերաբերյալ թեզիսներում որոշվեց կոմկուսների և պրոլետարական իշխանության քաղաքական գիծը գյուղացիության տարբեր խավերի նկատմամբ։ Ընդգծվում էր, որ բատրակները, կիսապրոլետարները, մանր գյուղացիությունն ի վիճակի են ակտիվորեն պաշտպանելու պրոլետարիատին, գործնականում տեսնելով, որ պրոլետարական իշխանությունը պաշտպանում է նրանց շահերը։ Միջակ գյուղացիության վերաբերյալ ասվում էր, որ հաղթանակած պրոլետարիատը պետք է այդ խավի դրությունը ևս անմիջականորեն բարելավի և մանր ու միջակ գյուղացիության համար երաշխավորի ոչ միայն հողամասերի պահպանումը նրանց ձեռքում, այլև դրանց մեծացումը սովորաբար նրանց կողմից վարձակալվող ամբողջ տարածության չափով։ Կոնգրեսը նշեց, որ պրոլետարական իշխանությունը պետք է անհապաղ իրականացնի կալվածատերերի և խոշոր հողատերերի հողի բռնագրավում։ Նրանց տնտեսու-

թյունների տեղում, որպես կանոն, պետք է ստեղծվեն խոշոր սոցիալիստական տնտեսություններ։ Այդ նույն ժամանակ կոնգրեսն արտահայտվեց հօգուտ այն բանի, որպեսզի թույլատրվի կալվածատիրական հողերի մի մասի բաժանումը մանր և միջակ գյուղացիների միջև, դրա մեջ տեսնելով պրոլետարիատի հանդեպ մանր սեփականատերերի վստահության ամրապնդման ուղիներից մեկը։ Թեզիսներում ասվում էր, որ կոլեկտիվ հեղափոխությանն անցնելը պրոլետարական իշխանությունը պետք է իրականացնի միայն վիթխարի զգուշությամբ և աստիճանականությամբ, օրինակի ուժով, միջակ գյուղացիության նկատմամբ առանց որևէ բռնություն կիրառելու։

Ագրարային հարցի վերաբերյալ Կոմինտերնի II կոնգրեսի ընդունած լենինյան թեզիսները դարձան այն փաստաթուղթը, որը գյուղացիության հետ պրոլետարիատի դաշինքի համար մղվող պայքարի հարցերի գծով դրույթներ էր պարունակում հետագա ամբողջ ժամանակաշրջանում Կոմինտերնի գործունեության համար։

Հանուն մասսաների մղվող պայքարում կոմկուսների տակտիկայի հարցերին էին նվիրված կոնգրեսի՝ «Կոմունիստական կուսակցությունը և պառլամենտարիզմը» որոշումը և արհմիութենական հարցի մասին բանաձևը։ Կոնգրեսը կոմկուսներին կողմնորոշեց դեպի ակտիվ գործունեության ծավալումը արհեստակցական միություններում և նախազգուշացրեց, որ արհեստակցական միություններից ամեն ձևով հեռանալը, հատուկ միություններ ստեղծելու ամեն մի արհեստական փորձ վիթխարի վտանգ են կոմունիստական շարժման համար։

II կոնգրեսն ընդունեց Կոմինտերնի կանոնադրությունը, որը որոշում էր III Ինտերնացիոնալի կառուցվածքն ու կազմակերպումը։ Ինտերնացիոնալի գերագույն օրգանը Կոմինտերնի մեջ մտնող բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների համաշխարհային կոնգրեսն էր։ Կոնգրեսների միջև ընկած ժամանակաշրջանում Ինտերնացիոնալի աշխատանքը ղեկավարում էր Գործադիր կոմիտեն (ԿԻԳԿ)։ ԿԻԳԿ-ի որոշումները պարտադիր էին Կոմինտերնի բոլոր սեկցիաների համար։ II կոնգրեսն, այսպիսով, ավարտեց տարբեր երկրների կոմկուսների միավորումը միասնական միջազգային կենտրոնացված կազմակերպության մեջ։ Նման կենտրոնացումը պայմանավորված էր մի շարք պատճառներով։ Նախ, Սովետական Ռուսաստանի և մյուս երկրների հեղափոխական շարժման դեմ իմպերիալիստների մղած դաժան զինված պայքարի իրադրությամբ։ «Սրված քաղաքացիական պատերազմի իրադրության մեջ գործող Կոմունիստական ինտերնացիոնալը,— նշում էր II կոնգրեսը,— պետք է ավելի կենտրոնացված ձևով կառուցվի, քան II Ինտերնացիոնալն էր»։ Երկրորդ, կենտրոնացումն անհրաժեշտ էր այն բանի համար, որպեսզի ավելի արագ ու ավելի արդյունավետ ձևով օգնություն ցույց տրվեր կոմունիստական կուսակցությունների ձևավորմանը, հատկապես այն երկրներում, որտեղ գոյություն ուներ հեղափոխական սուր ճգնաժամ։ Վերջապես, կենտրոնացումն անհրաժեշտ էր՝ ելնելով սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստ առաջնորդների տեսությունից ու պրակտիկայից հեղափոխական բանվորների առավել վճռականորեն տարանջատվելու շահերից։ Լենինն ու Կոմինտերնը դրա հետ միասին ընդգծում էին իր քաղաքականությունը միջազգային խնդիրների հաշվառման հիման վրա կառուցելու յուրաքանչյուր կոմկուսի գիտակից, կամավոր պատրաստականության նշանակությունը, նշում բոլոր կոմկուսների իրավունքների ու պարտականությունների հավասարությունը։

II կոնգրեսի որոշումները նպաստեցին առաջավոր բանվորների՝ կոմունիզմի կողմն անցնելուն, նոր կոմունիստական կուսակցությունների արագ ձևավորմանը։ 1920 թ. դեկտեմբերին Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցության ձախ թևը, որը կազմում էր կուսակցության մեծամասնությունը, ԳԿԿ-ի հետ միաձուլվեց Գերմանիայի միացյալ կոմունիստական կուսակցության (ԳՄԿԿ) մեջ։ Այդ նույն ժամանակ Թուրում կայացած համագումարում ֆրանսիական սոցիալիստական կուսակցությունը ձայների մեծամասնությամբ որոշում ընդունեց Կոմինտերնին միանալու մասին։ Այդպես ծնվեց Ֆրանսիայի կոմունիստական կուսակցությունը։ 1921 թ. հունվարին առաջացավ Իտալիայի կոմկուսը։ 1921 թ. սկզբին կապիտալիստական երկրներում կոմունիստների բանակը հաշվվում էր մոտ 760 000 մարդ։ 1921 թ. կազմավորվեցին Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Չինաստանի և մի շարք այլ երկրների կոմկուսները։

Բուրժուազիայի անցումը հակահարձակման ընդդեմ բանվոր դասակարգի

1920 թ. վերջին—1921 թ. սկզբին պրոլետարիատի և բուրժուազիայի միջև գոյություն ունեցող ուժերի հարաբերակցությունը նկատելիորեն փոխվեց։ Իմպերիալիստական ինտերվենցիայի և ներքին հակահեղափոխության դեմ մղված պայքարում Սովետական Ռուսաստանը պաշտպանեց իր գոյությունը, որը պատմական մեծ նվաճում եղավ՝ ցույց տալով նոր հասարակարգի անհաղթահարելիությունը և կապիտալիզմի կործանման սկսված պրոցեսի խորացումը։ Սակայն մյուս երկրների աշխատավորների հեղափոխական գրոհը թեկուզև սասանեց բուրժուազիայի իշխանությունը, սակայն բավարար չգտնվեց այն կործանելու համար։ Հեղափոխական մարտերը, որոնք ծավալվեցին 1920 թ. երկրորդ կեսին—1921 թ. սկզբին կապիտալիստական մի շարք երկրներում, ավարտվեցին պրոլետարիատի պարտությամբ։ Անհաջողության մատնվեց ֆաբրիկաների ու գործարանների գրավման համար Հյուսիսային Իտալիայի բանվորների հզոր ելույթը (1920 թ. սեպտեմբեր)։ Ժանդարմերիայի և զորքերի միջոցով դաժանորեն ճնշվեց ընդհանուր քաղաքական գործադուլը Ռումինիայում (1920 թ. հոկտեմբեր)։ Պարտությամբ վերջացավ Չեխոսլովակիայի բանվորների ընդհանուր գործադուլը (1920 թ. դեկտեմբեր), որի ժամանակ մի շարք ինդուստրիալ կենտրոններում իշխանությունը փորձում էին իրենց ձեռքը վերցնել սովետները։ Գերմանական ռեակցիան հրահրեց, իսկ հետո արյան մեջ խեղդեց միջին Գերմանիայի առաջավոր բանվորների ելույթը (1921 թ. մարտ)։ 1921 թ. գարնանը պարտությամբ ավարտվեց անգլիական հանքափորների գործադուլը։ Մյուս երկրներում տեղի ունեցած շատ գործադուլային ելույթները նույնպես պարտության մատնվեցին։

Կապիտալի երկրների մեծ մասում բուրժուազիան հակահարձակման անցավ պրոլետարիատի դեմ։ Սպիտակ տեռորը մոլեգնում էր Ֆինլանդիայում, Հունգարիայում, Լեհաստանում, Հարավսլավիայում, Լատվիայում, Էստոնիայում։ Իտալիայում, Գերմանիայում և այլ երկրներում քաղաքական թատերաբեմում հանդես եկան ֆաշիստական կուսակցություններն ու խմբերը, որոնք արտահայտում էին բացահայտ տեռորիստական դիկտատուրա հաստատելու ծայրահեղ ռեակցիայի ձգտումը։ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում կազմակերպվեցին կոմունիստների սիստեմատիկ հալածանքներ։ Դասակարգային սուր մարտերում բանվորների խլած տնտեսական ու սոցիալական զիջումները կրճատվեցին, իսկ մի քանի երկրներում էլ ամբողջովին վերացվեցին։ Այս բոլոր փաստերը վկայում էին այն մասին, որ բանվոր դասակարգի հեղափոխական պայքարում սկսվել է անկում, համաշխարհային հեղափոխական պրոցեսի զարգացման տեմպերը դանդաղեցին։ Դրա կարևորագույն պատճառներից մեկը բուրժուա-

զիայի ուժերի գերակշռությունն էր, նրա միջազգային կապերը, հակահեղափոխական գործողությունների նրա կողմից կատարվող կոորդինացիան։ Եվրոպական ու ամերիկյան բուրժուազիան դրա հետ մեկտեղ քաղաքական տեսակետից չափազանց փորձված էր, բռնության ու ճնշման մեթոդները կարողանում էր զուգակցել խուսանավելու, զիջումների, դեմագոգիկ խոստումների քաղաքականության հետ։

Կապիտալիստական երկրներում հեղափոխական ուժերի կրած պարտությունը շատ տեսակետներից բացատրվում էր նաև սոցիալ-դեմոկրատիայի և արհմիությունների աջ և ցենտրիստ պարագլուխների դավաճանական քաղաքականությամբ։ Հենվելով կուսակցական ու արհմիութենական ապարատի վրա, այդ պարագլուխները բանվոր դասակարգի մեծամասնությանը պահեցին ռեֆորմիզմի դիրքերում։ Այնտեղ, ուր պայքարը սրվում էր, աջ սոցիալ-դեմոկրատները չէին խորշում դաշինքի մեջ մտնել բուրժուական հակահեղափոխության հետ և նրա հետ միասին, ինչպես այդ անում էր Գ. Նոսկեն Գերմանիայում, մասնակցում էին հեղափոխական շարժման ճնշմանը։ Սոցիալ-դեմոկրատական առաջնորդները, որոնք աշխատավորներին խաբում էին աստիճանական ռեֆորմների լոզունգներով, դառնում էին, ինչպես գրում էր Վ. Ի. Լենինը, բուրժուազիայի ավելի լավ պաշտպաններ, քան իրենք՝ բուրժուաները։ Պրոլետարական հեղափոխության գաղափարին թշնամի սոցիալ-դեմոկրատական քաղաքականությունը խորապես պառակտեց բանվոր դասակարգին, նրան թուլացրեց կապիտալի դեմ մղվող պայքարում։

Կապիտալիստական երկրների կոմունիստական կուսակցությունները 1918—1920 թթ. հեղափոխական շարժման վերելքի ժամանակաշրջանում փաստորեն դեռ գտնվում էին ձևավորման փուլում կամ նոր էին կազմավորվում։ Նրանք գործում էին վիթխարի հեղափոխական եռանդով, բայց, որպես կանոն, սակավափորձ էին և սակավաթիվ, իրենց քաղաքականության մեջ լուրջ սխալներ էին թույլ տալիս, ոչ միշտ էին կարողանում մասսաներին պայքարի մոբիլիզացնելու համար օգտագործել համադեմոկրատական և մասնակի պահանջները։

Սոցիալ-դեմոկրատիան 1920—1921 թթ.

Հեղափոխական ալիքի սկսված անկման առնչությամբ աջ սոցիալ-դեմոկրատիան սկսեց վերականգնել բանվորական շարժման մեջ նախկինում կորցրած իր մի քանի դիրքեր։ Ընդ որում նա հենվում էր արհմիութենական շարժման մեջ ունեցած համեմատաբար ուժեղ ազդեցության վրա։

Դեռևս 1919 թ. հուլիսին 14 երկրների արհմիությունների Ամստերդամում կայացած միջազգային կոնգրեսում ռեֆորմիստական հիման վրա ստեղծվեց Արհմիությունների միջազգային միավորումը (Ամստերդամյան Ինտերնացիոնալ)։ 1919 թ. վերջին այդ միավորումն ուներ 23 մլն անդամ։ Այնտեղ գլխավոր դերը կատարում էին անգլիական տրեդ-յունիոնների աջ պարագլուխները։ Ամստերդամյան Ինտերնացիոնալի ղեկավարությունն սկզբից ևեթ սկսեց կիրառել հեղափոխական բանվորներին արհմիություններից վտարելու քաղաքականություն, ձգտելով բանվոր դասակարգի պայքարը սահմանափակել ռեֆորմիստական պահանջների շրջանակներով։

Համաձայնողական էր սոցիալ-դեմոկրատիայի քաղաքականությունը նաև բուրժուական պառլամենտներում ու կառավարություններում։ 1918 թ. վերջից հետպատերազմյան հեղափոխական վերելքի պայմաններում մի շարք երկրների սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ սկսեցին իշխանության գալուխ անցնել, կամ ստեղծելով զուտ սոցիալ-դեմոկրատական կառավարություններ (Գերմանիայում 1918—1919 թթ.), կամ բուրժուական կուսակցությունների հետ մտնելով կոալիցիոն կառավարությունների մեջ (Գերմանիայում 1919—1920 թթ., ինչպես նաև Ավստրիայում, Շվեդիայում, Դանիայում, Բելգիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Հարավսլավիայում)։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, դառնալով կառավարական, մասսաների մեջ պատրանքներ էին տարածում այն մասին, թե իբր դրանով իսկ բանվոր դասակարգը իր ներկայացուցիչների միջոցով արդեն մասնակցում է իշխանության իրականացմանը։ Աշխատավորների ճնշման ներքո սոցիալ-դեմոկրատական մինիստրները դիմեցին մասնակի առանձին պահանջների իրականացման, որոնք որոշ չափով բարելավում էին մասսաների տնտեսական և սոցիալական դրությունը։ Նրանք չէին զլանում նոր ռեֆորմների մասին խոստումներ տալուց։ Սակայն աջ սոցիալ-դեմոկրատական պարագլուխներն այդ անում էին աշխատավորներին հանգստացնելու, կապիտալիզմի դեմ հեղափոխական պայքարից նրանց հեռացնելու նպատակով։ Գերմանիայում և մի շարք այլ երկրներում նրանք առաջադրեցին արդյունաբերության «սոցիալացման» լոզունգ, խոստանալով կապիտալի ձեռքից նրա կառավարումն աստիճանաբար հանձնել հասարակության ձեռքը։ «Սոցիալացման» լոզունգի շուրջ մեծ աղմուկ բարձրացվեց, որի նպատակն էր մասսաների մեջ ներշնչել այն միտքը, թե իբր սոցիալ-դեմոկրատիան սկսում է գործնականորեն իրականացնել շարժումը դեպի սոցիալիզմ։

Իրականում սոցիալ-դեմոկրատիան բուրժուազիային օգնում էր իր կարգերը պահպանելու կապիտալի համար առավել վտանգավոր ժամանակ՝ հեղափոխական խոր ճգնաժամի ժամանակաշրջանում։ Լենինը սոցիալ-դեմոկրատիայի այդ քաղաքականության մասին գրում էր. «Բանվորներին կերակրեցին ռեֆորներով և էլ ավելի շատ ռեֆորմների խոստումներով, «բոցավառ կոչերով» և հեղափոխական ֆրազներով բանվորներին հանգստացրին և խաբեցին նրանց»[6]։

Սոցիալ-դեմոկրատիայի քաղաքականության գլխավոր բովանդակությունը հանգում էր հին կարգերի հեղափոխական տապալման անհրաժեշտության ժխտմանը և բուրժուական պառլամենտական դեմոկրատիայի աստիճանական կատարելագործման ճանաչմանը, որպես նոր հասարակարգի ստեղծման միակ ուղի։ Սոցիալ-դեմոկրատիայի այդ կուրսը արտահայտվեց նրա ծրագրային փաստաթղթերում։ 1920 թ. հուլիսին Ժնևում կայացած կոնգրեսում սոցիալիստական ինտերնացիոնալը ձևավորվեց որպես աջ սոցիալիստական դիրքերում գտնվող միավորում։ Սոցիալիստական ինտերնացիոնալը միավորում էր 15 կուսակցություն։ Նրա մեջ առավել մեծ ազդեցություն ունեին անգլիական լեյբորիստական և գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները։ Ժնևի կոնգրեսում ընդունված «Սոցիալիզմի քաղաքական սիստեմի վերաբերյալ» բանաձևը, քողարկելով կապիտալիզմի իսկական դասակարգային հակասությունները, հասարակական պայքարում գլխավոր էր հռչակում դեմոկրատիայի և դիկտատուրայի միջև գոյություն ունեցող հակասությունը։ Պառլամենտական դեմոկրատիայի (այսինքն՝ բուրժուական դեմոկրատիայի) պաշտպանության թեզիսն էլ կոչված էր արդարացնելու բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության քաղաքականությունը։ «Սոցիալացման» լոզունգը Ժնևի կոնգրեսը փաստորեն մեկնաբանում էր որպես բուրժուական պետության կողմից կապիտալիստական սեփականության աստիճանական փրկանում։ Սոցիալ-տնտեսական հարաբերությունների արմատական փոփոխու-

[6] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 25։

թյան անհրաժեշտության մասին նույնիսկ խոսք էլ չկար։ Սոցիալ-դեմոկրատիայի քաղաքականությունն, այսպիսով, ոչ մի ոտնձգություն չէր կատարում կապիտալիստական կարգի հիմքերի դեմ։

Մի շարք երկրներում հեղափոխական բանվորական ելույթների պարտությունը աջ սոցիալիստներն օգտագործեցին այն բանի համար, որպեսզի ուժեղացնեն կոմունիստների, պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի դեմ կատարվող հարձակումները։ Նրանք մասսաների մեջ պրոպագանդում էին այն կապիտուլյանտական թեզը, թե իբր կյանքն «ապացուցեց» հեղափոխական պայքարի անհեռանկար լինելը։ Չնայած որ բուրժուազիան իր դիրքերի կայունացումից հետո սկսեց կառավարություններ կազմել արդեն առանց սոցիալ-դեմոկրատիայի մասնակցության, վերջինս շարունակում էր պաշտպանել բուրժուական քաղաքականության հիմնական ուղղվածությունը, թեև խոսքով քննադատում էր այս կամ այն առավել ռեակցիոն կառավարական միջոցառումները։ Համերաշխվելով իմպերիալիստական տերությունների արտաքին քաղաքականության հետ և Ազգերի լիգան ներկայացնելով որպես երկրագնդի վրա խաղաղության ապահովման գործիք, աջ սոցիալ-դեմոկրատիան միևնույն ժամանակ զրպարտում էր Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը։ Աջ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների շարքերն սկսեցին համալրվել ինչպես բանվորների նվազ գիտակից մասի, այնպես էլ բնակչության միջին խավերից ելածների հաշվին։ Ամբողջությամբ վերցրած, 1921 թ. սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցություններում կար մոտ 8 մլն անդամ։

Ցենտրիստական դիրքերում կանգնած սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մի մասը 1921 թ. որոշակի շրջադարձ կատարեց դեպի աջ։ Այդ կուսացությունններից մի քանիսը հեղափոխական շարժման տեղատվության ազդեցությամբ, ինչպես նաև հակակոմունիստական զրպարտանքի ազդեցությամբ վերանայեցին Կոմինտերնին միանալու իրենց նախկին որոշումները։

Բայց ցենտրիստական կուսակցություններն այն ժամանակ չմտան Սոցիալիստական ինտերնացիոնալի մեջ։ Նրանք հաշվի էին առնում, որ պրոլետարիատի զգալի մասը մերժում է աջ սոցիալիստների կուրսը։ Ցենտրիստական կուսակցությունների ներքնախավերում դեռ ուժեղ էին ձախ, հեղափոխական տրամադրությունները։ Ցենտրիստական կուսակցությունների համար բնորոշ էին խոսքով մարքսիզմի և պրոլետարիատի կողմից տնտեսական ու քաղաքական իշխանությունը գրավելու անհրաժեշտության ճանաչումը, մերձակա պահանջների արմատական ծրագրերի առաջադրումը։ Իսկ գործնականում այդ կուսակցությունների ղեկավարությունը հակվում էր ռեֆորմիստների հետ համաձայնությանը, նրանց քաղաքականության պաշտպանությանը։

1921 թ. փետրվարին Վիեննայում կայացած միջազգային կոնֆերանսում 11 երկրների ցենտրիստական կուսակցությունների ներկայացուցիչները ստեղծեցին սոցիալիստական կուսակցությունների միջազգային միավորում, որն ստացավ «Երկուսուկես ինտերնացիոնալ» անունը։ Այդ ինտերնացիոնալում ընկրսեցին առաջատար դեր կատարել Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, Ավստրիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և Անգլիայի անկախ բանվորական կուսակցությունը։ Վիեննայի կոնֆերանսում ցենտրիստական առաջնորդները դատապարտում էին իմպերիալիզմն ու նրա քաղաքականությունը, տեսականորեն ճանաչում հեղափոխության անհրաժեշտությունը, բայց տեղնուտեղը խոսում Արևմուտքում գործնականորեն նրա անհնարինության մասին, բարձր էին գնահատում Հոկտեմբերյան հեղափոխությունը, բայց վերապահություն էին անում այն մասին, որ նրա փորձն իբր զուտ ազգային, միայն ռուսական նշանակություն ունի։ Երկուսուկես ինտերնացիոնալի առաջնորդները խոսքով քննադատում էին ռեֆորմիստներին, փորձում էին II և III ինտերնացիոնալների միջև ինչ-որ միջանկյալ դիրք գրավել, ցանկանում էին հաշտեցնել բուրժուական դեմոկրատիան ու սովետները, բայց ամեն մի լուրջ իրավիճակի դեպքում գործով ծառայություն էին մատուցում ռեֆորմիստներին։ Օբյեկտիվորեն Երկուսուկես ինտերնացիոնալը խաղում էր խոչընդոտի դեր, որը հեղափոխականորեն տրամադրված բանվորներին ետ էր պահում բուրժուազիայի դեմ վճռական հեղափոխական պայքար մղելուց, կոմունիստական դիրքերն անցնելուց։

Կոմինտերնի III կոնգրեսը

Բուրժուազիայի հարձակման անցնելու հետևանքով ստեղծված նոր պայմանները Կոմինտերնից և կոմկուսներից նոր քաղաքականություն էին պահանջում։ Առաջին պլան էին մղվում աշխատավորների տնտեսական շահերի, հեղափոխական վերելքի տարիներին ձեռք բերած սոցիալական ու քաղաքական նվաճումների պաշտպանության խնդիրները, Սովետական Ռուսաստանի ըստ ամենայնի պաշտպանությունը և ապագա հեղափոխական մարտերին խնամքով նախապատրաստվելը։ Կարևոր պրոբլեմներից մեկն էր դառնում ամենալայն զանգվածների ներգրավումը պայքարի մեջ և այդ պայքարի ընթացքում աշխատավորության մեծամասնության գրավումը կոմունիստների կողմը։

Սակայն շատ կոմունիստներ այդ ժամանակ դեռևս չէին հասկանում, որ իրադրությունը փոխվել է, պահանջում էին անհապաղ հեղափոխական գործողություններ, ժխտում մասսաների մեջ աշխատելու և աշխատավորների ամենօրյա կարիքների համար պայքարելու անհրաժեշտությունը։ Այդպիսի դիրքերում էին կանգնած Գերմանիայի, Իտալիայի, Հունգարիայի և այլ կոմկուսների մի շարք գործիչներ։ Այդ գործիչների ձախլիկ հայացքները Կոմինտերնի Գործկոմում օգտվում էին Զինովևի, Բուխարինի, Ռադեկի պաշտպանությունից։ Նման պայմաններում կոմունիստական և բանվորական շարժման մեջ ակտիվացան «ուլտրաձախ» խմբերն ու կուսակցությունները, որոնք հանդես էին գալիս ծայրահեղ ձախլիկ դիրքերից և Կոմինտերնի գծին հակադրում իրենց ավանտյուրիստական կիսաանարխիստական գիծը։ «Ուլտրաձախությունն» առավել խտացված արտահայտություն գտավ Գերմանիայի կոմունիստական բանվորական կուսակցությունում։ Շարունակելով պայքարը մի շարք կոմկուսներում տեղ գտած սոցիալ-դեմոկրատիզմի վերապրուկների դեմ, Կոմինտերնի հերթական կոնգրեսը պետք է հիմնական հարվածն ուղղեր ձախ-աղանդավորական սխալների դեմ։

Կոմինտերնի III կոնգրեսը տեղի ունեցավ Մոսկվայում, 1921 թ. հունիսի 22-ից հուլիսի 12-ը։ Նրա աշխատանքին մասնակցում էին պրոլետարական 103 կազմակերպությունների, այդ թվում 48 երկրների կոմկուսների ներկայացուցիչներ։ Կոնգրեսն ամենալուրջ ուշադրություն դարձրեց միջազգային դրության գնահատականին։ ՌԿ(բ)Կ տակտիկայի մասին Վ. Ի. Լենինի զեկուցման մեջ, վիճաբանություններում և կոնգրեսի որոշումներում նշվեց, որ իշխանության համար պրոլետարիատի մղած պայքարն ընդհատում, տեմպերի դանդաղում է ապրում, այն ժամանակ երբ բուրժուազիան բոլոր երկրներում հարձակման է անցել։ Սակայն կապիտալիզմը չի վերականգնել իր կայունությունը, և պրոլետարական շարժման զարգացման հեռանկարները մնում են հեղափոխական, գոյություն ունեն մի շարք երկրներում դասակարգային պայքարի սրման հնարավորություններ։ Կոնգրեսը մերժեց «ձախ» կոմունիստների այն

կարծիքը, թե տնտեսական ճգնաժամը մշտապես հանդիսանում է «հեղափոխության հայրը» և որ 1920—1921 թթ. ճգնաժամն ինքնաբերաբար հասցնելու է հեղափոխական վերելքի։

Եվրոպայի պրոլետարիատի ժամանակավոր պարտությունների իրադրության ժամանակ հատուկ կարևորություն էր ստանում Սովետական Ռուսաստանում պրոլետարական իշխանության կայունացման խնդիրը։ Վ. Ի. Լենինի ղեկուցման մեջ ընդգծվում էր, որ սովետական հանրապետության նվաճած դադարն անհրաժեշտ է օգտագործել առաջին պրոլետարական պետության քաղաքական, տնտեսական և ռազմական ամրապնդման համար։ Այդ կապակցությամբ նշվում էր, որ ՌԿ(բ)Կ մշակած նոր տնտեսական քաղաքականության (Նէպ) էությունն այն է, որ ամրապնդվի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի բազան, առանց որի չի կարող կայուն պրոլետարական իշխանություն լինել։ Այդ քաղաքականությունը, ասում էր Լենինը, համաշխարհային հեղափոխության պրոբլեմներից մեկն է, քանի որ այն իրենից ներկայացնում է քաղաքի և գյուղի մանր բուրժուական զանգվածների նկատմամբ պրոլետարական ղեկավարության գործնական ստուգում։ Կոնգրեսը մերժեց ՌԿ(բ)Կ-ի հասցեին «ուլտրաձախերի» արած անհեթեթ մեղադրանքները, «ուլտրաձախեր», որոնք հայտարարում էին, թե Սովետական Ռուսաստանն իր կանգնում է հեղափոխական նպատակներից հրաժարվելու ուղուն, և իր որոշումներում ընդգծեց, որ «Սովետական Ռուսաստանը մնում է համաշխարհային հեղափոխության առաջին և ամենակարևոր ամրոցը»։

Կոնգրեսը մշակեց կոմկուսների քաղաքական գիծը, որը համապատասխանում էր դասակարգային պայքարի նոր իրադրությանն աշխարհում։ Նա կոմկուսներին կողմնորոշեց ոչ թե դեպի բուրժուական ռեժիմների անմիջական գրոհը, այլ դեպի կոմկուսների և պրոլետարիատի բազմակողմանի, խնամքով, հիմնավոր նախապատրաստությունն ապագա հեղափոխական մարտերին։ Նա կոմունիստների գործունեության գլխավոր լոզունգ հռչակեց «Դեպի մասսանե՛ր» լոզունգը։ Կոնգրեսը նշեց մասսաների համար կոմկուսների պայքարելու, կուսակցությունները մասսայականի վերածելու, բանվոր դասակարգի մեծամասնությանն իր ետևից տանելու և նոր մարտերին նրան նախապատրաստելու ընդունակ կուսակցություն դարձնելու ուղիները։ Այդ քաղաքական գծի մշակումն անցնում էր կոմկուսների շարքերում եղած ձախ-դոգմատիկ տարրերի հետ սուր ընդհարումների պայմաններում, տարրեր, որոնք չէին հասկանում մասսաների մեծամասնությունը նվաճելու անհրաժեշտությունը և կոմկուսներին հրում էին պարտության դատապարտված չնախապատրաստված վաղաժամ ելույթների վտանգավոր ուղին։ Կոնգրեսում ձախլիկ դիրքերից հանդես եկան մի շարք կուսակցությունների պատվիրակներ, որոնք պաշտպանում էին այսպես կոչված «հարձակման տեսությունը», որը կոմկուսներից պահանջում էր անհապաղ վճռական գործողություններ, անկախ պայմաններից և այն բանից, թե մասսաներն, արդյոք, կգնա՞ն կուսակցության ետևից։ «Հարձակման տեսության» կողմնակիցները փորձում էին որպես նմուշ ներկայացնել 1921 թ. Գերմանիայում տեղի ունեցած մարտյան ելույթը, չնայած այն բանին, որ բուրժուազիայի հրահրած այդ ելույթն ավարտվեց պրոլետարիատի պարտությամբ և վկայում էր հենց այն մասին, որ չի կարելի զինված պայքարի ելնել վաղաժամ և առանց անհրաժեշտ նախապատրաստության։

Վ. Ի. Լենինը Կոնգրեսի հուլիսի 1-ի նիստում ճառով հանդես եկավ ի պաշտպանություն Կոմունիստական ինտերնացիոնալի տակտիկայի, որտեղ նա բնութագրեց կոմունիստական շարժման հիմնական քաղաքական գիծը։ Նա

ցույց տվեց, որ «ձախ» օպորտունիզմը վերածվել է վիթխարի վտանգի, որ եթե չպայքարել նման «ձախ» հիմարությունների դեմ, ապա ամբողջ շարժումը դատապարտված է կործանման։ Վ. Ի. Լենինն իր ճառում հիմնավորեց ոչ միայն բանվոր դասակարգի մեծամասնությանը, այլև ընդհանրապես աշխատավորների մեծամասնությանն իրենց կողմը գրավելու անհրաժեշտությունը կոմկուսների համար։ Շահագործվողների մեծամասնության նկատմամբ պրոլետարիատի հեղափոխական կուսակցության ազդեցությունը սոցիալիստական հեղափոխության կայուն հաղթանակի անքակտելի նախադրյալն է։ Այդ գաղափարը դրվեց կոնգրեսի որոշումների հիմքում, որը կոմկուսներին նպատակամղեց ամենաակտիվ ու բազմակողմանի աշխատանք կատարելու մասսաների շրջանում, այդ մասսաների ներգրավմանը դասակարգային պայքարի մեջ։

Ցույց տալով ձախերի «հարձակման տեսության» տեսական սնանկությունն ու քաղաքական վնասը, Լենինը նշեց նաև ցենտրիզմի դեմ մղվող պայքարի չափազանցումը հաղթահարելու անհրաժեշտությունը։ Այդ չափազանցումն արտահայտվում էր նրանում, որ «ձախերը» ցենտրիզմի մեջ էին մեղադրում կոմունիստական շարժման մի շարք նվիրված գործիչների, ինչպես նաև ցենտրիստական էին հռչակում բանվորների այն զանգվածներին, որոնք դեռ հաստատուն կերպով չէին կանգնել կոմունիստական պլատֆորմի վրա։ Ցենտրիզմի դեմ մղվող պայքարի չափազանցումը կոմկուսներին խանգարում էր նվաճել այդ զանգվածներին։ Լենինը կոնգրեսի պատվիրակներին բացատրում էր, որ այդ թերությունը կարող է վիթխարի վնաս բերել։ Ի հակակշիռ դրան և որպես մասսաներին նվաճելու հմուտ տակտիկայի գործնական օրինակ, Լենինը բարձր էր գնահատում Գերմանիայի կոմկուսի Կենտկոմի «Բաց նամակը» (1921 թ. հունվար), որը բոլոր բանվորական կազմակերպություններին կոչ էր անում համատեղ հանդես գալ աշխատավորների կենսական կարիքների համար մղվող պայքարում։

III կոնգրեսի որոշումներում ընդգծվում էր, որ կոմկուսները պետք է բանվոր դասակարգի մերձակա պահանջների համար մղվող պայքարի գլուխ կանգնեն և այդպիսով միավորեն պրոլետարիատի մեծամասնությանը։ III կոնգրեսը դրեց միասնական բանվորական ճակատի քաղաքականության հիմքերը, որը վիթխարի դեր խաղաց բանվորական և կոմունիստական շարժման պատմության մեջ։

Կոնգրեսը վիթխարի նշանակություն էր տալիս կոմկուսների և բոլոր հեղափոխական ուժերի գործողությունների միջազգային կոորդինացմանը։ Տակտիկայի վերաբերյալ թեզիսի մեջ մտցվեց հատուկ բաժին, որը նվիրված էր այդ հարցին։ Այնտեղ նշվում էր, որ «Կոմունիստական ինտերնացիոնալի համաշխարհային-քաղաքական խնդիրը ոչ միայն աչքի ընկնող իրադարձությունների կապակցությամբ ցույցեր կազմակերպելու մեջ է, այլև հոծ ճակատով անցկացվող, չընդհատվող ընդհանուր պայքարում կոմունիստների միջազգային կապի մշտական ուժեղացման մեջ»[7]։ Պրոլետարական մարտական համերաշխության գործում, նշում էր կոնգրեսը, «Սովետական Ռուսաստանի անվերապահ պաշտպանությունը մնում է, ինչպես և նախկինում, բոլոր երկրների կոմունիստների կարևորագույն պարտականությունը»[8]։

Կոնգրեսը քննարկեց կոմկուսների կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ հարցը, ինչպես նաև մասսայական կազմակերպություններում՝ արհ-

[7] «В. И. Ленин и Коммунистический Интернационал», 1970, стр. 352.
[8] Նույն տեղում, էջ 351—352։

միություններում, կանանց և երիտասարդական կազմակերպություններում կոմունիստների աշխատանքի վերաբերյալ հարցերը։ Նա պահանջեց, որպեսզի կոմկուսներն արհմիությունների ամենօրյա պայքարին ամենաակտիվ մասնակցության միջոցով նրանց գրավեն կոմկուսների կողմը։ Կոմինտերնը հայտարարեց, որ կոմունիստներն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մասշտաբով արհմիութենական շարժման կողմնակիցներ են, որ նրանք պայքարելու են դրա պառակտման դեմ։ Սակայն Կոմինտերնի III կոնգրեսը չէր կարող հաշվի չառնել այն, որ արհմիությունների Ամստերդամյան ինտերնացիոնալը հակակոմունիստական դիրք էր գրավել և սկսել էր իր շարքերից վտարել ձախ արհմիություններին։ Այդ ձախ արհմիությունները, ինչպես և արհմիութենական շարժման մեջ գոյություն ունեցող անարխո-սինդիկալիստական միությունները, որոնք անցնում էին հեղափոխական դիրքերը, ձգտում էին միավորել իրենց ուժերը։

Կոմինտերնի III կոնգրեսում արհմիութենական շարժման խնդիրների քննարկումը համընկավ Մոսկվայում հեղափոխական արհեստակցական և արտադրական միությունների միջազգային առաջին կոնգրեսի բացման հետ։ Կոնգրեսը տեղի ունեցավ Մոսկվայում, հուլիսի 3—19-ը։ Նրան մասնակցում էին 42 երկրներից եկած պատվիրակներ։ Կոնգրեսում որոշում ընդունվեց հեղափոխական արհմիությունների միջազգային մարտական միավորում՝ Արհմիությունների Կարմիր ինտերնացիոնալ (Պրոֆինտերն) ստեղծելու մասին։ Կոնգրեսը մերժեց արհմիությունների «չեզոքության» ռեֆորմիստական տեսությունը, որը քողարկում էր բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության քաղաքականությունը, և հանդես եկավ կապիտալի դեմ մղվող պայքարում պրոլետարիատի դասակարգային շահերի հետևողական պաշտպանության օգտին։ Դրա հետ մեկտեղ Պրոֆինտերնի ստեղծումը չէր նշանակում իբրև հին արհմիութենական շրջանակները փշրելու և արհեստականորեն սակավաթիվ կարմիր արհմիություններ ստեղծելու կոչ։ Պրոֆինտերնի կոնգրեսի որոշման մեջ նշվում էր, որ «ոչ թե ոչնչացում, այլ միությունների, այսինքն՝ հին միություններում գտնվող բազմամիլիոն մասսաների նվաճում՝ ահա թե ինչի շուրջ պետք է ընթանա և կազմավորվի հեղափոխական պայքարը»։

Պրոֆինտերնը գործում էր Կոմունիստական ինտերնացիոնալի հետ սերտ համագործակցությամբ, սովետական արհմիությունները միավորում էր կապիտալիստական երկրների ազգային հեղափոխական արհմիութենական կենտրոնների հետ՝ միջազգային բանվոր դասակարգի շահերի համար մղվող պայքարում։ Պրոֆինտերնի ստեղծումը նպաստեց հեղափոխական տենդենցի ուժեղացմանը կապիտալիստական երկրների արհմիութենական շարժման մեջ։

Կոմինտերնի և կոմկուսների պայքարը հանուն միասնական բանվորական ճակատի

III կոնգրեսից հետո Կոմինտերնը և կոմկուսները մեծ աշխատանք ծավալեցին բուրժուազիայի ձեռնարկած գրոհի, ֆաշիստական վտանգի և պատերազմի սպառնալիքի աճման դեմ պրոլետարական մասսաներին համախմբելու համար։ Օպորտունիստների հետ վճռականորեն տարանջատվելուց և կոմունիստական կուսակցությունների՝ որպես պրոլետարիատի ավանգարդի, ստեղծումից հետո կոմունիստների համար կարևորագույն խնդիրներից մեկը դարձավ բանվոր դասակարգին իր կողմը գրավելը։ Կոմկուսները ձգտում էին այդ նպատակին հասնել, մասնակցելով բանվորական մասսաների մերձակա պահանջների համար մղվող պայքարին։ Հասնելով բանվոր դասակարգի տարբեր ջոկատների ջանքերի միավորմանը, Կոմինտերնի Գործկոմը 1921 թ. դեկտեմբերին ընդունեց

միասնական բանվորական ճակատի տակտիկայի թեզիսներ։ Միասնական ճակատը նշանակում էր բոլոր այն բանվորների գործողությունների միասնություն, որոնք, անկախ այս կամ այն քաղաքական ուղղությանը պատկանելուց, ցանկանում էին պայքարել ընդդեմ կապիտալի։ Թեզիսներում նշվում էր, որ կոմունիստական կուսակցությունները մնալով կազմակերպորեն ինքնուրույն և գաղափարապես անկախ, դեպի միասնական ճակատ են ընթանում կապիտալի հարձակման դեմ մասսաների դիմադրությունն ուժեղացնելու, նրանց գիտակցական մակարդակը բարձրացնելու, նրանց դասակարգային ակտիվ պայքարի, և վերջին հաշվով, կապիտալիզմի տապալման համար մղվող պայքարի մեջ ներգրավելու նպատակով։ Կոմկուսներն ու Կոմինտերնը ռեֆորմիստական կուսակցությունների ղեկավարության, ինչպես նաև ռեֆորմիստական ինտերնացիոնալների հետ համաձայնությունները հնարավոր համարելով հանդերձ, հիմնական ուշադրությունը դարձնում են գործնական պայքարում իրենց իսկ՝ մասսաների միասնության վրա, իսկ միասնական գործողություններից ռեֆորմիստական պարագլուխների հրաժարվելու դեպքում նրանց մերկացնում են որպես պրոլետարական շարքերի պառակտիչների։ Միասնական ճակատին հասնելու համար կոմունիստներն առաջին պլան են մղում բոլոր ուղղությունների բանվորներին հասկանալի մերձակա անմիջական պահանջները։ Այդ պահանջների համար մղվող պայքարի ընթացքում կոմունիստները մասսաներին դաստիարակում են հենց մասսաների սեփական փորձով և այդ մասսաներին հասցնում բուրժուազիայի իշխանությունը տապալելու անհրաժեշտության ըմբռնմանը։ Վ. Ի. Լենինի առաջարկությամբ միասնական ճակատի տակտիկայի թեզիսների մեջ մտցվեց մի լրացում, որը նվիրված էր Ռուսաստանի բանվորների գործողությունների միասնության համար բոլշևիկների մղած պայքարի փորձին։ Բնորոշելով միասնական ճակատի բովանդակությունը, Լենինը գրում էր. «Միասնական ճակատի տակտիկայի նպատակն ու իմաստն այն է, որպեսզի կապիտալի դեմ պայքարի մեջ ներքաշել բանվորների ավելի ու ավելի լայն զանգվածի, կանգ չառնելով այդպիսի համատեղ պայքար մղելու առաջարկությամբ նույնիսկ 2-րդ և $2^1/_2$ ինտերնացիոնալների առաջնորդներին կրկնակի անգամ դիմելու առջև»[9]։

Միասնական բանվորական ճակատի քաղաքականության մշակումը լուրջ առաջընթաց քայլ եղավ միջազգային կոմունիստական ու բանվորական ամբողջ շարժման զարգացման ասպարեզում։ Այդ քաղաքականությամբ զինված կոմկուսներն ուժեղացնում էին մասսաների շրջանում կատարվող աշխատանքը. աճեց կոմունիստների, որպես պրոլետարական շարքերի միասնության կողմնակիցների, հեղինակությունը։

Կոմինտերնը ձգտում էր միջազգային մասշտաբով ստեղծել միասնական բանվորական ճակատ։ ԿԻԳԿ-ն հանդես եկավ ռեակցիայի հարձակման դեմ բոլոր ինտերնացիոնալների ընդհանուր գործողությունների վերաբերյալ մի շարք կոնկրետ առաջարկություններով։ Կոմինտերնը ջերմորեն պաշտպանեց բոլոր բանվորական կազմակերպությունների միջազգային կոնֆերանս գումարելու մասին կապիտալիստական երկրների պրոլետարների կողմից քննարկվող գաղափարը։ $2^1/_2$ Ինտերնացիոնալի ղեկավարությունը հաշվի առնելով գործողությունների միասնության հասնելու պրոլետարիատի ուժեղ ձգտումը, հանդես եկավ II և III ինտերնացիոնալներին ուղղված պաշտոնական առաջարկությամբ՝ բանակցություններ սկսել բոլոր բանվորական կուսակցությունների

---

[9] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու (ռուս.), հ. 45, էջ 131։

ընդհանուր կոնգրես գումարելու մասին։ ԿԻԳԿ I ընդլայնված պլենումը (1922 թ. փետրվարի 21-ից մարտի 4-ը) պաշտպանեց այդ առաջարկությունը։

Համաշխարհային բանվորական կոնգրեսի նախապատրաստման հարցը քննարկելու համար գումարվեց երեք ինտերնացիոնալների ներկայացուցիչների կոնֆերանս։ Այն տեղի ունեցավ Բեռլինում 1922 թ. ապրիլի 2—5-ը։ Վ. Ի. Լենինն ակտիվորեն մասնակցում էր այդ կոնֆերանսին Կոմինտերնի պատվիրակության նախապատրաստմանը։ Նա Կոմինտերնի պատվիրակությանը խորհուրդ տվեց օրակարգում դնել միայն այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են բանվորական զանգվածների անմիջական համատեղ պրակտիկ գործողությանը, լինել ճկուն, բայց միաժամանակ թույլ չտալ սկզբունքային քաղաքական զիջումներ։

Բեռլինի կոնֆերանսում Կոմինտերնի պատվիրակությունն առաջարկում էր, որպեսզի միջազգային բանվորական կոնգրեսում ներկայացվեն աշխարհի բոլոր բանվորական կազմակերպությունները և որպեսզի օրակարգի մեջ մտցվեն կապիտալի և ռեակցիայի հարձակման դեմ, նոր պատերազմների նախապատրաստության դեմ բանվորների գործողությունների միասնության հարցեր, ինչպես նաև Սովետական Ռուսաստանին օգնելու, Վերսալի պայմանագրի և պատերազմից ավերված մարզերի վերականգնման վերաբերյալ հարցեր։

II Ինտերնացիոնալի պատվիրակությունը հայտարարեց, որ ինքը համաձայն է բանվորական կոնգրեսի գումարմանը, եթե Կոմինտերնն ու Սովետական Ռուսաստանը լուրջ զիջումների դիմեն, այսինքն՝ եթե կարմիր բանակը դուրս բերվի Վրաստանից, եթե էսէռների դատավարությանը, որպես պաշտպանների, թույլ տրվի մասնակցել II Ինտերնացիոնալի ներկայացուցիչներին, եթե կոմունիստները հրաժարվեն արհմիություններում իրենց բջիջները ստեղծելուց։ $2^1/_2$ Ինտերնացիոնալի ներկայացուցիչները փաստորեն հանդես եկան այդ պահանջների պաշտպանությամբ, պահանջներ, որոնք ուղղված էին այն բանին, որպեսզի ԿԻԳԿ պատվիրակությանը հրահրեին հրաժարվելու ընդհանուր համաձայնությունից։

Կոնֆերանսում սուր վիճաբանություններ ծավալվեցին։ Կոմինտերնի պատվիրակությունը ընդհանուր համաձայնության հասնելու համար միակողմանի լուրջ զիջումների դիմեց, խոստանալով, որ սովետական կառավարությանը կխնդրի մահավճիռ չկայացնել էսէռական տեռորիստների նկատմամբ և ապահովել II և $2^1/_2$ ինտերնացիոնալների ներկայացուցիչների մասնակցությունը դատարանում։ Վ. Ի. Լենինն այդ քայլը գնահատում էր որպես սխալ, որպես քաղաքական մեծ զիջում։ Անհրաժեշտ համարելով վավերացնել Բեռլինում ձեռք բերված համաձայնությունը, նա պահանջեց սկզբունք դարձնել հակառակորդին քաղաքական զիջումներ չանելը, եթե դրա փոխարեն Կոմինտերնը կամ Սովետական Ռուսաստանը հավասարազոր զիջումներ չեն ստանում։

Երեք ինտերնացիոնալների կոնֆերանսն ընդունեց դեկլարացիա, որը նշում էր բանվորական կազմակերպությունների համատեղ ելույթների հնարավորությունը։ Դեկլարացիան պարունակում էր կոչ՝ Ջենովայի տնտեսական կոնֆերանսի ժամանակ (1922 թ. ապրիլի 20 և մայիսի 1) համատեղ ցույցեր անցկացնել 8-ժամյա բանվորական օրվա համար, գործազրկության դեմ, ի պաշտպանություն ռուսական հեղափոխության, Ռուսաստանի սովյալներին օգնելու, կապիտալիստական պետությունների կողմից Սովետական Ռուսաստանի հետ նորմալ փոխհարաբերությունների, միասնական պրոլետարական ճակատի համար պայքարի լոզունգների ներքո։ Կոնֆերանսն արտահայտվեց հօգուտ համաշխարհային բանվորական կոնգրեսի շուտափույթ գումարման։ Ստեղծվեց

Կազմակերպչական կոմիտե, որի մեջ մտան երեքական ներկայացուցիչ յուրաքանչյուր ինտերնացիոնալից, հետագա կոնֆերանսներն ու կոնգրեսը նախապատրաստելու համար։

Բեռլինի կոնֆերանսի որոշումները վկայում էին այն մասին, որ պրոլետարիատի գործողությունների միասնության միջազգային համաձայնությունները հնարավոր են։ Կապիտալիստական երկրների աշխատավորների՝ 1922 թ. ապրիլի 20-ի և մայիսի 1-ի ելույթները ցույց տվեցին, որ միասնական բանվորական ճակատի քաղաքականությունը մեծ ուժի է վերածվում։ Սակայն աջ սոցիալիստներն ու ցենտրիստ առաջնորդները բանվոր դասակարգի միասնության զարգացում չէին ցանկանում։ Հակառակ համաձայնեցված որոշումների, նրանք պայմանավորվեցին Հաագայում գումարել համաշխարհային բանվորական կոնգրես առանց կոմունիստների։ Այդ որոշումը Կոմինտերնի ներկայացուցիչներին ստիպեց դուրս գալ կազմակերպչական կոմիտեից։ Այսպես, II և $2^1/_2$ ինտերնացիոնալների պարագլուխների պառակտիչ քաղաքականությունը ձախողեց 1922 թ. գարնանը միջազգային մասշտաբի միասնական բանվորական ճակատ ստեղծելու հնարավորությունը։

Կոմունիստական շարժմանն ընդդիմանալու հիման վրա ռեֆորմիստների և ցենտրիստների մերձեցումը, իսկ այնուհետև նաև գործարքը հասցրին այն բանին, որ 1922 թ. դեկտեմբերին II և $2^1/_2$ ինտերնացիոնալները որոշեցին միավորվել։ Պաշտոնապես այդ միավորումը տեղի ունեցավ 1923 թ. մայիսին Համբուրգի կոնգրեսում։ Այդ կոնգրեսում ստեղծված Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալը փաստորեն ընդունեց աջ ռեֆորմիստների պլատֆորմը և հանդես եկավ հակասովետական հայտարարություններով։ Այսպես վերջնականորեն ձևավորվեց երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում գործած սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միջազգային միավորումը, որը հանդես եկավ որպես II Ինտերնացիոնալի ռեֆորմիստական քաղաքականության ժառանգորդ և շարունակող։

1922 թ. վերջին Բեռլինում տեղի ունեցած կոնգրեսում ստեղծվեց անարխո-սինդիկալիստական ինտերնացիոնալ, որը միավորեց Եվրոպայի և Ամերիկայի մի շարք արհմիութենական կազմակերպություններ։ Այդ միավորման մեջ առավել կարևոր դեր էր խաղում աշխատանքի իսպանական ազգային կոնֆեդերանսը (ԱԱԿ)։ Միավորման մեջ մտնում էին նաև Հոլանդիայի, Գերմանիայի, Իտալիայի, Արգենտինայի, Չիլիի, Մեքսիկայի և մի քանի այլ երկրների անարխո-սինդիկալիստական միությունները։ Անարխո-սինդիկալիստական ինտերնացիոնալը ժխտում էր քաղաքական պայքարը, պառլամենտական գործունեությունը և այդ դիրքերից էլ հանդես էր գալիս ընդդեմ բանվոր դասակարգի քաղաքական պայքարի և ընդդեմ պրոլետարիատի դիկտատուրայի։ Եվ չնայած որ այդ Ինտերնացիոնալի ազդեցությունը, բացի Իսպանիայից, ամենուրեք սկսեց ընկնել, ցուցադրելով անարխո-սինդիկալիզմի՝ որպես ինքնուրույն հոսանքի, անկումը, այնուամենայնիվ այդ Ինտերնացիոնալը բանվոր դասակարգի պառակտման գործոններից մեկն էր։

Միջազգային բանվորական շարժման մեջ պառակտիչ քաղաքականություն էր վարում նաև քրիստոնեական արհմիությունների Ինտերնացիոնալը, որը վերականգնվեց 1920 թ. հունիսին Հաագայի կոնգրեսում։ Նա միավորեց այն արհմիությունները, որոնք ընթանում էին Գերմանիայի (1,1 մլն անդամ), Իտալիայի (1,1 մլն անդամ), Բելգիայի (200 հազ. անդամ), Հոլանդիայի (150 հազ. անդամ) և մի քանի այլ երկրների բուրժուական քրիստոնեական կուսակցությունների ետևից՝ ընդամենը 3 մլն մարդ։ Բուրժուազիան հաճախ քրիստոնեա-

կան արհմիությունների անդամներին օգտագործում էր որպես շտեյկբրեխերներ։

Հաշվի առնելով բանվոր դասակարգի տարբեր քաղաքական հոսանքների խոր պառակտման փաստը, Կոմինտերնն առանձնահատուկ նշանակություն էր տալիս միասնական բանվորական ճակատի քաղաքականությանը, ընդգծում, որ նոր դարաշրջանում այն վճռական նշանակություն է ունենալու։

Կոմինտերնի IV կոնգրեսը

1922 թ. նոյեմբերի 5-ից դեկտեմբերի 5-ը տեղի ունեցավ Կոմինտերնի IV կոնգրեսը (կոնգրեսի առաջին նիստը կայացավ Պետրոգրադում, հաջորդները՝ Մոսկվայում)։ Նրա աշխատանքին մասնակցում էին 66 պրոլետարական կազմակերպությունների, այդ թվում 58 երկրների կոմկուսների ներկայացուցիչներ։

Այդ ժամանակ բուրժուազիան աջ սոցիալ-դեմոկրատիայի օգնությամբ ամրապնդել էր իր դասակարգային տիրապետությունը։ Մի շարք երկրներում հաստատվել էին ռեակցիոն ռեժիմներ։ Իտալիայում 1922 թ. վերջին ռեակցիան աշխատավորներին պարտության մատնեց, հենվելով ֆաշիստական տեռորիստական կազմակերպությունների վրա։ Կոմինտերնի IV կոնգրեսը նշելով բուրժուազիայի ուժեղացած հարձակումը, միաժամանակ նշում էր, որ իրադրությունը դասակարգային պայքարի թատերաբեմում մնում է լարված և ցանկացած խոշոր կոնֆլիկտ կարող է խախտել ժամանակավոր հավասարակշռությունը, ստեղծել սուր ճգնաժամ։ Կոնգրեսին ուղղված նամակում Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ կոմկուսների գլխավոր խնդիրն առաջվա պես բանվորների մեծամասնության նվաճումն է։ Կոնգրեսն իր որոշումներում արձանագրեց, որ անկայուն հավասարակշռության պայմաններում հսկայական նշանակություն է ստանում սուբյեկտիվ գործոնը, այսինքն՝ բանվոր դասակարգի և նրա ավանգարդի գիտակցականության, պայքարին պատրաստ լինելու և կազմակերպվածության աստիճանը, այդ պատճառով լիակատար ուժի մեջ է մնում III կոնգրեսի պահանջը՝ հասնել կոմունիստների ազդեցության տարածմանը բանվոր դասակարգի մեծամասնության շրջանում և նրա վճռական մասի ներգրավմանը պայքարի մեջ։

Վ. Ի. Լենինը կոնգրեսում հանդես եկավ «Ռուսական հեղափոխության հինգ տարին և համաշխարհային հեղափոխության հեռանկարները» զեկուցմամբ։ Դա նրա վերջին ելույթն էր Կոմինտերնի կոնգրեսի առջև։ Խոր հեղափոխական լավատեսությամբ էր Վ. Ի. Լենինը խոսում համաշխարհային հեղափոխության հեռանկարների մասին։ Նա ընդգծում էր, որ այդ հեռանկարները սքանչելի կլինեն, եթե կոմկուսները սովորեն հեղափոխական աշխատանք կատարել մասսաների մեջ, ստեղծագործաբար յուրացնեն բոլշևիկյան տակտիկան։ Զեկուցման առթիվ ընդունված բանաձևում նշվում էր, որ Սովետական Ռուսաստանը «համաշխարհային պրոլետարիատի համար մնում է պատմական հեղափոխական փորձի ամենահարուստ գանձարանը»։

Կոնգրեսը կարևոր ավանդ մուծեց միջազգային կոմունիստական շարժման ստրատեգիայի ու տակտիկայի զարգացման մեջ, Եվրոպայի երկրներում սոցիալիստական հեղափոխության նկատմամբ մոտեցման ուղիների որոշման մեջ։ Նա, որպես պրոլետարիատի դիկտատուրային անցնելու հնարավոր ձևի, առաջադրեց բանվորական կառավարության լոզունգ, այսինքն՝ այնպիսի կառավարության, որը կազմված լինի զանազան բանվորական կուսակցությունների ներկայացուցիչներից։ Մշակելով բանվորական կառավարության վերաբերյալ հարցը, Կոմինտերնը հենվում էր միասնական բանվորական ճակատի համար մղված պայքարի փորձի և այդպիսի կառավարություններ ստեղծելու

հնարավորության վերաբերյալ մի շարք կոմկուսների եզրակացությունների վրա։ Կոմկուսները բանվորական կառավարությունը հակադրում էին բուրժուական կուսակցությունների հետ կոալիցիայի մեջ մտնելու փորձերին, որոնք կատարվում էին բուրժուական ռեժիմներն ամրապնդելու նպատակով։ Նշվեց, որ դեռևս պրոլետարիատի դիկտատուրայի կառավարություն չհանդիսացող բանվորական կառավարության խնդիրը պետք է լինի խոր հեղափոխական-դեմոկրատական վերափոխությունների իրականացումը, մասնավորապես բանվոր դասակարգի զինումը և բուրժուական հակահեղափոխական կազմակերպությունների զինաթափումը, արտադրության նկատմամբ վերահսկողության սահմանումը, հարկերի գլխավոր ծանրությունը ունևոր դասակարգերի վրա փոխադրելը և այլն։

«Բանվորական կառավարություն» լոզունգը, նշվում էր կոնգրեսի որոշումներում, որպես ագիտացիոն լոզունգ կարող է կիրառվել գրեթե ամենուրեք։ Բայց որպես անմիջական քաղաքական գործողության լոզունգ այն առավել մեծ նշանակություն ուներ այն երկրների համար, որտեղ բուրժուական իշխանության վիճակը հատկապես անկայուն էր։ Կոնգրեսը կոմկուսներին կոչ էր անում նման երկրներում պատրաստ լինել ոչ կոմունիստական բանվորական կուսակցությունների ու կազմակերպությունների հետ միասին կազմելու բանվորական կառավարություն, իսկ որոշակի պայմանների ու երաշխիքների դեպքում պաշտպանել ոչ կոմունիստական բանվորական կառավարությունները։ Բանվորական կառավարության լոզունգը նշում էր սոցիալիստական հեղափոխությանը մոտենալու կոնկրետ ուղին համադեմոկրատական խոր վերափոխությունների միջոցով, որոնք սահմանափակում են կապիտալի իշխանությունը և ուժեղացնում բանվոր դասակարգի դիրքերը։

Կոմինտերնի IV կոնգրեսը նշեց մի շարք երկրներում ֆաշիստական վտանգի աճը և եզրակացրեց, որ ֆաշիզմն ուղղված է ոչ միայն բանվոր դասակարգի, այլև ընդհանրապես բուրժուական դեմոկրատիայի հիմքերի դեմ։ «Կոմունիստական կուսակցությունների կարևորագույն խնդիրներից մեկը,— նշում էր կոնգրեսը,— միջազգային ֆաշիզմի դեմ դիմադրության կազմակերպումն է»։ Ֆաշիստական բանդաների դեմ մղվող պայքարում նրանք պետք է ընթանան բանվոր դասակարգի գլուխ անցած, այստեղ էլ եռանդուն կերպով կիրառելով միասնական ճակատի տակտիկան։ Այսպես, քաղաքական պայքարի թատերաբեմում ֆաշիզմի հանդես գալով Կոմինտերնն անմիջապես նշեց նրա առանձնահատուկ վտանգը և կոմկուսներին ակտիվ պայքարի կոչ արեց նրա դեմ։

Կոնգրեսը մեծ ուշադրություն դարձրեց արհմիություններում կոմունիստների կատարած աշխատանքին, ինչպես նաև ընդունեց «Ագրարային ծրագրի ուրվագիծը», որը կոնկրետացնում էր II կոնգրեսի որոշումները և նշում գյուղացիական հարցի վերաբերյալ կոմկուսների լոզունգները երկրների տարբեր խմբերի համար։

IV կոնգրեսում քննարկվեց Կոմինտերնի ծրագրի նախապատրաստման հարցը։ Լենինի խորհուրդների համաձայն ընդգծվեց, որ ծրագիրը պետք է պարունակի անցողիկ և մասնակի պահանջների անհրաժեշտության տեսական հիմնավորումը։ Դա կարևոր նշանակություն ուներ, քանի որ կոմունիստների մի մասը թերագնահատում էր այդպիսի պահանջների դերը մասսաներին վճռական մարտերին մոտեցնելու գործում։

Ընդհանրացնելով գաղութային ու կախյալ երկրներում ազգային-ազատագրական պայքարի փորձը, կոնգրեսն առաջադրեց իմպերիալիստական կեղեքիչներին դիմակայող բոլոր տարրերին միավորող միասնական հակաիմպե-

ռիալիստական ճակատի ստեղծման լոզունգը և նշեց գաղութներում ու կիսագաղութներում հակաիմպերիալիստական, հակաֆեոդալական, դեմոկրատական հեղափոխության ծրագիրը։ Նշելով իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում ազգային բուրժուազիայի անհետևողականությունը, կոնգրեսը միաժամանակ մատնացույց արեց ազգային բուրժուազիայի և գաղութարարների միջև եղած հակասությունները, ազգային բուրժուազիայի շահագրգռվածությունը հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական հեղափոխության հիմնական խնդիրների իրագործման մեջ։ Նշվում էր հակաիմպերիալիստական պայքարում բանակցության նաև այլ խավերի հնարավոր մասնակցությունը։ Սակայն Արևելքի երկրներում հեղափոխական-ազատագրական շարժման գլխավոր շարժիչ ուժը բազմամիլիոն գյուղացիական զանգվածներն էին։ Կոմունիստները պետք է հասնեն այն բանին, նշում էր կոնգրեսը, որպեսզի ազգային-հեղափոխական այն կուսակցությունները, որտեղ պետք է աշխատեն կոմունիստները, ընդունեն արմատական ագրարային ծրագիր, որն ընդունակ լինի պայքարի հանելու գյուղացիական զանգվածներին։ Նշվում էր, որ ազգային-ազատագրական շարժումը իր զարգացման համեմատ պետք է անխուսափելիորեն լուծի նաև սոցիալական հարցեր՝ ֆեոդալական լծի ոչնչացումը, աշխատավորների շահերի պաշտպանությունը։

Կոնգրեսը կարևորագույն խնդիր էր համարում գաղութների կոմկուսների և պրոլետարիատի վերածումը ընդհանուր հակաիմպերիալիստական ճակատի ինքնուրույն գործոնի։

Կոնգրեսը բարձր գնահատեց միջազգային բանվորական օգնության (Միջբանօգ) շարժումը, որը սովետական երկրին լուրջ աջակցություն էր ցույց տալիս քայքայման ու սովի դեմ մղվող պայքարում։ Այդ շարժումը վերածվեց Սովետական Ռուսաստանի հետ միջազգային պրոլետարական համերաշխության վառ ցույցի, նպաստեց տարբեր երկրների բանվորների ինտերնացիոնալ համախմբվածության ոգու ամրապնդմանը։

Կոմինտերնի IV կոնգրեսի որոշումները տոգորված էին հաղթանակած սոցիալիստական հեղափոխության երկրի, միջազգային բանվորական և ազգային ազատագրական շարժման բոլոր հեղափոխական և հակաիմպերիալիստական ուժերի սերտ դաշինքի գաղափարով։

1923 թ. հեղափոխական մարտերը

1923 թ. աշնանը մի շարք եվրոպական երկրներում տեղի ունեցան դասակարգային խոշոր մարտեր։ Բուլղարիայում, ի պատասխան ֆաշիստական հեղաշրջման, կոմկուսը եռանդուն պայքար մղեց բանվոր դասակարգի, գյուղացիության և հակաֆաշիստական մյուս ուժերի դաշինք ստեղծելու համար։ 1923 թ. սեպտեմբերին երկրում տեղի ունեցավ պատմության մեջ առաջին բանվորագյուղացիական հակաֆաշիստական ապստամբությունը, որն անցավ կոմունիստների ղեկավարությամբ և Բուլղարական հողագործական ժողովրդական միության ակտիվ մասնակցությամբ։ Այն իր առջև նպատակ էր դնում տապալել ֆաշիստական դիկտատուրան, ստեղծել բանվորագյուղացիական կառավարություն և անցկացնել հեղափոխական-դեմոկրատական վերափոխություններ։ Չնայած այն բանին, որ ապստամբությունը պարտություն կրեց, այն մեծ դեր խաղաց երկրում հեղափոխական շարժման զարգացման գործում՝ ցույց տվեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ուժը, հանդիսացավ հակաֆաշիստական ճակատի ստեղծման կարևոր փորձ, ռեակցիայի և ֆաշիզմի դեմ դեմոկրատական և պրոլետարական պայքարի միացման դպրոց։

1923 թ. նոյեմբերին Լեհաստանում, Վերին Սիլեզիայում բռնկվեց ընդհանուր գործադուլ, որը հետո ընդգրկեց երկրի մի շարք այլ շրջաններ։ Կրակով քաղաքում գործադուլը վերաճեց ոստիկանության հետ զինված ընդհարման։ Կոմկուսը ձգտում էր աշխատավորներին տանել դեպի կառավարության տապալում։ Սակայն իշխանությունների հետ սոցիալ-դեմոկրատական պարագլուխների կայացրած գործարքը հասցրեց այն բանին, որ բանվորները զինաթափվեցին և գործադուլը ճնշվեց։

Դասակարգային պայքարը 1923 թ. աշնանը արտակարգ սրության հասավ Գերմանիայում։ Ընդհանուր գործադուլից հետո, որը հասցրեց 1923 թ. օգոստոսին Կունոյի կառավարության տապալմանը, կոմկուսը աշխատեց զինված ապստամբության նախապատրաստման ուղղությամբ։ Սակայն սեպտեմբերին այդ հարցը ԿԻԳԿ հատուկ խորհրդակցությունում քննարկելու ժամանակ ԳԿԿ-ի ղեկավար Բրանդլերը գերագնահատեց կուսակցության ուժն ու բանվոր դասակարգի պատրաստականությունը իշխանությունը գրավելու գործում։ Միաժամանակ կոմունիստների մշակած ելույթի պլանում թերագնահատվում էին գյուղվարությունները, ինչպես նաև բուրժուազիայի և սոցիալ-դեմոկրատիայի դիմադրությունը։ Պրոլետարական ելույթի նախապատրաստման ժամանակ ԳԿԿ բրանդլերյան ղեկավարությունը թույլ տվեց ինչպես աջ օպորտունիստական, այնպես էլ ձախ-աղանդավորական բնույթի լուրջ սխալներ։ Նա անհրաժեշտ ջանքեր չձեռնարկեց պրոլետարիատին զինելու համար և չկարողացավ օգտագործել Սաքսոնիայի և Թյուրինգիայի բանվորական կառավարություններում ունեցած դիրքերը՝ հեղափոխական շարժմանը առավել արդյունավետ օգնություն ցույց տալու համար։ Երբ ռայխսվերի զորամասերը շարժվում էին Սաքսոնիայի և Թյուրինգիայի բանվորական շարժումը ճնշելու, ապստամբություն տեղի ունեցավ միայն Համբուրգում (1923 թ. հոկտեմբեր)։ Եռօրյա մարտերից հետո բանվորները նահանջեցին։

1923 թ. աշնանային իրադարձությունները 1918—1923 թթ. հետպատերազմյան հեղափոխական վերելքի ժամանակաշրջանի վերջին խոշոր մարտերն էին։ Թեև Եվրոպայի երկրների բանվոր դասակարգը չկարողացավ այդ տարիներին հաղթանակի հասնել և մի շարք պարտություններ կրեց, այդ ժամանակաշրջանը կարևորագույն փուլ հանդիսացավ միջազգային բանվորական և կոմունիստական շարժման զարգացման մեջ։ Հոկտեմբերյան հեղափոխությամբ բանվոր դասակարգի պայքարը նոր աստիճանի բարձրացավ՝ բուրժուական կարգերի վճռական գրոհի աստիճան։ Շատ երկրներում ձևավորվեցին կոմունիստական կուսակցություններ՝ հեղափոխական պրոլետարիատի մարտական ավանգարդը։ Նրանք դարձան կարևորագույն քաղաքական ուժ, որը հետևողականորեն պաշտպանում էր աշխատավորների շահերը։ Ստեղծվեց հեղափոխական բանվորական շարժման համաշխարհային կազմակերպչական, գաղափարատեսական և քաղաքական կենտրոն՝ Կոմունիստական ինտերնացիոնալը։ Առաջավոր պրոլետարները դասակարգային մարտերում մեծ դպրոց անցան, հասկացան սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդների համաձայնողական և դավաճանական դիծը։ Աշխատավորները բուրժուազիայից կորզեցին տնտեսական ու քաղաքական որոշակի զիջումներ։ Այդ շրջանի մարտերում ձևավորվեց ու ամրապնդվեց բոլոր երկրների առաջավոր պրոլետարների համերաշխությունը Սովետական Ռուսաստանի՝ պրոլետարական դիկտատուրայի առաջին երկրի հետ։

Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ Կոմինտերնը մշակեց համաշխարհային հեղափոխական բանվորական շարժման ստրատեգիան ու տակտիկան, այդ թվում նաև միասնական բանվորական ճակատի քաղաքականությունը, որը կոմունիստներին հզոր զենք տվեց մասսաների համար մղվող պայքարում։

ԳԼՈՒԽ 4

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը արմատական փոփոխություններ մտցրեց միջազգային հարաբերությունների մեջ, հակասությունների այն սիստեմի մեջ, որոնց պայքարով պայմանավորվում է այդ հարաբերությունների զարգացումը, կյանքի կոչեց արտաքին քաղաքականության նոր տիպ՝ սոցիալիստական արտաքին քաղաքականությունը, որն արմատականորեն տարբերվում է իմպերիալիստական արտաքին քաղաքականությունից և դիմակայում նրան։

Արտաքին քաղաքականության երկու տիպ

Սոցիալիստական արտաքին քաղաքականության հիմնադիրը, որը մշակել է նրա տեսական հիմունքներն ու սկզբունքները և մի շարք տարիների ընթացքում ղեկավարել սովետական պետության դիվանագիտական գործունեությունը, Լենինն էր։ Լենինյան ուսմունքի կարևորագույն բաղկացուցիչ մասերից մեկը՝ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաշրջանում գոյություն ունեցող համաշխարհային հակասությունների վերլուծությունն է։

Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ Հոկտեմբերյան հեղափոխությունն աշխարհը բաժանելով երկու սիստեմի՝ սոցիալիստականի և կապիտալիստականի, կյանքի կոչեց դարաշրջանի նոր հակասություն՝ մահացող կապիտալիզմի և աճող սոցիալիզմի հակասությունը. այդ հակասությունն արտահայտվեց նաև միջազգային հարաբերությունների ասպարեզում։ Համաշխարհային պատմության գլխավոր պրոցես դարձավ պայքարը երկու հակադիր հասարակական սիստեմների միջև։ Վ. Ի. Լենինը կուսակցության IX համագումարում ասում էր. «Այժմ երկու լագերներ լիակատար գիտակցությամբ կանգնած են մեկը մյուսի դեմ, համաշխարհային մասշտաբով, առանց ամենափոքր իսկ չափազանցման»[1]։ Այդ հակասությունը դարձավ և մինչ այժմ էլ մնում է ժամանակակից աշխարհի հիմնական հակասությունը, այն գործում է մշտապես՝ իմպերիալիստական տերություններին մղելով դեպի պայքարի միասնական ճակատի ստեղծումն ընդդեմ սոցիալիզմի, ընդդեմ Սովետական Միության, ընդհուպ մինչև պատերազմները, որոնց միջոցով կապիտալիզմը մեկ անգամ չէ, որ փորձել է ոչընչացնել սոցիալիստական երկիրը։ Այդ հակասության հետ մեկտեղ գործում է նաև այլ տենդենց, որը, ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, մեկ իմպերիալիստներին հակադրում էր մյուսներին[2]։ Այդ միջիմպերիալիստական հակասությունները գոյություն ունեին նաև մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, սակայն կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամն ուժեղացրեց դրանք։ Ճգնաժամը հավասարապես ծայրահեղորեն սրեց կապիտալիստական աշխարհում բուրժուազիայի և աշխատավորների միջև գոյություն ունեցող հակասությունները, ինչպես

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 575։

[2] Տե՛ս նույն տեղում։

նաև գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների և իմպերիալիստական գաղութատեր տերությունների հակասությունները։ Այդ հակասությունների գործողությունը տարածվում է համապատասխան պետությունների ոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքականության պրոբլեմների վրա։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ձևավորված միջազգային հարաբերությունների բազմակողմանի վերլուծության հիման վրա Վ. Ի. Լենինը ձևակերպեց աշխարհում առաջին սոցիալիստական պետության արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունքները։ Այլ սոցիալիստական երկրների հետ, երկրներ, որոնց առաջացմանը Վ. Ի. Լենինը խորը և, ինչպես ցույց տվեց պատմությունը, հիմնավոր կերպով հավատում էր, ինչպես նաև ամբողջ աշխարհի աշխատավորության հետ վարած հարաբերություններում դա՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմն է։ Կապիտալիստական երկրների հետ վարած հարաբերություններում, երկրներ, որոնք որոշակի պատմական ժամանակաշրջանի ընթացքում՝ մինչև ամբողջ երկրագնդում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը, գոյություն են ունենալու սոցիալիստական պետության կողքին, դա՝ տարբեր սոցիալ-տնտեսական կարգ ունեցող երկրների խաղաղ գոյակցությունն է։

Մշակելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի հարցը, Վ. Ի. Լենինը հիմնվում էր այն բանի վրա, ինչն այդ ասպարեզում արել էին Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը։ Գիտական կոմունիզմի հիմնադիրները ցույց տվեցին, որ տարբեր երկրների պրոլետարների ինտերնացիոնալ համերաշխությունը թելադրվում է հենց նրանց կյանքի և բուրժուազիայի դեմ մղած պայքարի պայմաններից։ Տարբեր երկրների բանվորները բախվում են միացյալ դասակարգային թշնամու՝ միջազգային բուրժուազիայի հետ։ Այդ պատճառով նրանց դասակարգային պայքարը ստանում է ինտերնացիոնալ բնույթ, թեև այն մղվում է առանձին երկրների կոնկրետ պայմաններում։ Հետևաբար, այդ պայքարը կարող է հաջող լինել միայն բանվոր դասակարգի ինտերնացիոնալ համերաշխության առկայության դեպքում։

Ցանկացած երկրի բանվոր դասակարգ, նշում էր Վ. Ի. Լենինը, լուծելով իր ազգային հեղափոխական խնդիրները, դրանով իսկ աջակցություն է ցույց տալիս միջազգային պրոլետարիատին, կատարում իր ինտերնացիոնալ պարտքը։ Միևնույն ժամանակ մյուս երկրների հեղափոխական շարժումը տվյալ երկրի բանվոր դասակարգի համար բարենպաստ միջազգային պայմաններ է ստեղծում հեղափոխական վերափոխությունների և սոցիալիստական հեղափոխությունը ազգային-պետական շրջանակներում հաջող իրականացնելու համար։

Տարբեր սոցիալ-տնտեսական կարգեր ունեցող պետությունների խաղաղ գոյակցության կոնցեպցիան Վ. Ի. Լենինը մշակել է դեռ մինչև Ռուսաստանում տեղի ունեցած սոցիալիստական հեղափոխության հաղթանակը և, Հոկտեմբերից հետո կոմունիստական կուսակցությունն այն հռչակեց որպես Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը։ Խաղաղ գոյակցության սկզբունքը նախատեսում է խաղաղության պահպանում պետությունների միջև եղած հարաբերություններում, հրաժարում պատերազմից՝ որպես վիճելի հարցերի լուծման միջոցի, ինչպես նաև պետությունների համագործակցություն քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում։ Վ. Ի. Լենինը խաղաղ գոյակցությունը հասկանում էր որպես դիալեկտիկական երևույթ, որն իր մեջ պարունակում է և՛ համագործակցության տարրեր, և՛ պայքարի տարրեր՝ որպես երկու մասի բաժանված աշխարհի նոր պայմաններում վերջին հաշվով կապիտալիզմի տապալմանն ուղղված դասակար-

գային պայքարի շարունակման յուրահատուկ ձև։ Իսկ ինչ վերաբերում է գաղափարական ոլորտին, ապա այստեղ բացառված է որևէ համագործակցություն, այստեղ հետևողական ու համառ դասակարգային պայքարն ընթանում է ավելի ու ավելի աճող լարվածությամբ։ Խաղաղ գոյակցության նման ըմբռնման դեպքում այդ սկզբունքի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի միջև ոչ մի հակասություն չկա և չի էլ կարող լինել։ Խաղաղ գոյակցության քաղաքականությունն ուղղված է միջազգային խաղաղության պահպանմանը։ Այն լիովին և ամբողջությամբ համապատասխանում է այն նպատակներին, որոնք հետապնդում են իսկական ինտերնացիոնալիստ-լենինյանները։

Սովետական պետության առաջին արտաքին քաղաքական ակտը՝ 1917 թ. նոյեմբերի 8-ի (հոկտեմբերի 26-ի) Համառուսաստանյան II համագումարի ընդունված Հաշտության դեկրետը, հիմնվում էր սոցիալիստական արտաքին քաղաքականության լենինյան սկզբունքների վրա։ Դեկրետի հիմքում դրված խաղաղության և ժողովուրդների ազատության գաղափարը խորը ինտերնացիոնալիստական է։ Դեկրետում նշվում էր, որ ուժեղ երկրների կողմից թույլ ժողովուրդներին ստրկացնելու նպատակով մղվող պատերազմը շարունակելը մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություն է։ Դեկրետը առաջին համաշխարհային պատերազմի բոլոր մասնակիցներին առաջարկում էր անհապաղ բանակցություններ սկսել՝ առանց անեքսիաների ու կոնտրիբուցիաների, ընդհանուր արդարացի դեմոկրատական հաշտություն կնքելու մասին, հռչակում էր գաղտնի դիվանագիտության վերացում, հաշտության վերաբերյալ բանակցությունների բացեիբաց վարում, ռուսական կալվածատերերի և կապիտալիստների օգտին ցարական ու ժամանակավոր կառավարությունների կողմից կնքված գաղտնի պայմանագրերի վերացում և դրանք հրապարակելու անհրաժեշտություն։ Սովետական Ռուսաստանը պատերազմող երկրների կառավարություններին ու ժողովուրդներին առաջարկում էր անհապաղ զինադադար կնքել, որի ընթացքում պետք է նախապատրաստվի հաշտության կնքումը։ Դեկրետն ուղղված էր ոչ միայն կռվող երկրների կառավարություններին, այլև ժողովուրդներին, որոնց սովետական կառավարությունը դիտում էր որպես խաղաղության համար մղվող պայքարում իր դաշնակիցների։

Սովետական պետությունը ձգտում էր մշակել կապիտալիստական երկրների հետ խաղաղ գոյակցության ձևեր։ Վ. Ի. Լենինը սովետների II համագումարում հայտարարեց, որ բուրժուակալվածատիրական Ռուսաստանի կառավարությունների կողմից կնքված գաղտնի պայմանագրերում կան տնտեսական համաձայնություններ և մի քանի այլ դրույթներ, որոնք խոսում են բարիդրացիական հարաբերությունների օգտին, որ այդ բոլոր դրույթները սովետական իշխանությունն ընդունում է։ Ուրիշ երկրների հետ Ռուսաստանի կնքած երկկողմանի և բազմակողմանի շատ համաձայնագրեր հետագայում հաստատվեցին սովետական կառավարության կողմից։

Ժողովուրդների միջև հարաբերությունների՝ Հաշտության դեկրետում շարադրված սկզբունքները սովետական կառավարությունն իր երկրում գործողության մեջ դրեց։ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայում» հռչակվում էին Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարությունն ու սուվերենությունը, ազատ ինքնորոշման նրանց իրավունքն ընդհուպ մինչև անջատումն ու ինքնուրույն պետությունների ստեղծումը, ազգային ու կրոնական բոլոր տեսակի արտոնությունների ու սահմանափակումների վերացումը։ Շուտով սովետական կառավարությունը ճանաչեց Ֆինլանդիայի անկախությունը, վերացրեց Պրուսիայի և Ավստրո-Հունգարիայի հետ ցարիզմի կնքած

պայմանագրերը Լեհաստանի բաժանման վերաբերյալ, և ընդգծեց, որ ճանաչում է լեհ ժողովրդի ինքնուրույնության ու միասնության անքակտելի իրավունքը։

Հաշտության դեկրետը և սովետական կառավարության մի քանի այլ ակտեր հեղաշրջում առաջացրին միջազգային հարաբերություններում։ Միջազգային հարաբերությունների սիստեմում սկսեց գործել սոցիալիստական արտաքին քաղաքականությունը։

Իմպերիալիստական տերությունների կառավարությունները շտապեցին հանդես գալ մեծախոսոտում դեկլարացիաներով, որոնք պետք է թուլացնեին Հաշտության դեկրետի ազդեցությունն իրենց երկրների աշխատավորների վրա և այդ կառավարություններին ներկայացնեին որպես խաղաղության համար մարտնչողների ու հետպատերազմյան արդարացի խաղաղ կարգավորման կողմնակիցների։

1918 թ. հունվարի 5-ին Անգլիայի պրեմիեր-մինիստր Լլոյդ-Ջորջը հանդես եկավ պատերազմի նպատակների մասին մի հայտարարությամբ, որը պետք է հանգստացներ հասարակական կարծիքը և անգլիական բանվորների աչքում արդարացներ պատերազմը շարունակելը։ Լլոյդ-Ջորջի հռչակած պատերազմի նպատակներն առաջին հայացքից իսկապես այլ ձևով էին երևում, որը բացատրվում էր լենինյան Հաշտության դեկրետին դրանք հակադրելու՝ անգլիական պրեմիեր-մինիստրի ցանկությամբ։ «Մենք գերմանական ժողովրդի դեմ ագրեսիվ պատերազմ չենք մղում,— ասում էր նա,— Հավասարապես մենք չենք կռվում Ավստրո-Հունգարիան ոչնչացնելու կամ Թուրքիայից նրա մայրաքաղաքը կամ Փոքր Ասիայի հարուստ ու հիանալի հողերը խլելու նպատակով»։ Լլոյդ-Ջորջը հանդես էր գալիս Լեհաստանի անկախության և Ավստրո-Հունգարիայի ժողովուրդների «իսկապես դեմոկրատական սկզբունքների վրա հիմնված ինքնավարության» օգտին։ Բելգիայի անկախությունը պետք է վերականգնվի։ Սակայն, ինչպես նկատում է անգլիական պատմաբան Թեյլորը, Լլոյդ-Ջորջի ձևակերպած պատերազմի նպատակները «այնքան էլ իդեալիստական չէին, որքան կարող էին թվալ առաջին հայացքից»։ Նրանք նախատեսում էին, որ հաղթողները խլելու են Գերմանիայի գաղութները, ճիշտ այնպես, ինչպես և նեղուցները Թուրքիայից, որոնք պետք է «ինտերնացիոնալացվեն և չեզոքացվեն»։ Թուրքիան պետք է կորցներ իր տիրապետության տակ գտնվող բոլոր այն տերիտորիաները, որոնք բնակեցված էին ոչ թուրքական բնակչությամբ։ Այդ տերիտորիաները ենթադրվում էր բաժանել Անգլիայի և Ֆրանսիայի միջև։ Լլոյդ-Ջորջը ջանում էր կանխագործել հաշտության ամերիկյան ծրագիրը, որը ձևակերպել էր պրեզիդենտ Վիլսոնը մի քանի օր անց, և հետագայում պնդում էր, որ երկու ծրագրերն էլ «ըստ էության նույնն են»։

1918 թ. հունվարի 8-ին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը հանդես եկավ համանման հայտարարությամբ՝ հայտնի «14 հիմնական սկզբունքներով»։ Վիլսոնը փորձում էր ամերիկյան արտաքին քաղաքականության իմպերիալիստական էությանը դեմոկրատական տեսք տալ։ 1-ին կետում հռչակվում էր «հաշտության բաց բանակցություններին» ԱՄՆ-ի կողմնակից լինելը։ Իրականում ԱՄՆ-ը չէր հրաժարվում գաղտնի բանակցություններից և գաղտնի դիվանագիտությունից, այլ դեմ էր միայն այն պայմանագրերին ու համաձայնագրերին, որոնք ռազմավարի բաժանման մասին կնքել էին Անգլիան, Ֆրանսիան և այլ տերություններ՝ առանց Ամերիկայի մասնակցության։ 2-րդ կետը խոսում էր «ծովերի ազատության» մասին, որի տակ հասկացվում էր բոլոր ծովային ուղիների բացումը ամերիկյան նավագնացության համար. դա ծովում ամերիկյան

տիրապետության հաստատման մի հայտ էր, որն ուղղված էր Անգլիայի դեմ։ Հակաանգլիական սուր ծայր ուներ 3-րդ կետը «առևտրի ազատության» մասին, որը պահանջում էր տարիֆային խոչընդոտների վերացում, այսինքն՝ ամերիկյան ապրանքների համար դռների բացում դեպի բոլոր երկրների շուկաները։ «Ազգային սպառազինությունների կրճատման» մասին 4-րդ կետը իրենից ներկայացնում էր ԱՄՆ-ում տեղի ունեցող սպառազինությունների մրցավազքի դեմագոգիկ քողարկում։ Նկատի էր առնվում, որ այդ հարցով զբաղվելու է հատուկ միջազգային հանձնաժողովը, որտեղ իշխելու է ԱՄՆ-ը։ 5-րդ կետում պարունակվող գաղութային վեճերի «ազատ կարգավորման» պահանջը չէր նշանակում, թե ԱՄՆ-ը հանդես է գալիս ընդդեմ գաղութատիրության, դա գաղութների բաժանման պահանջ էր հօգուտ ամերիկյան իմպերիալիզմի։

6-րդ կետը պարունակում էր Գերմանիայի գրված ռուսական բոլոր տերիտորիաներից նրա էվակուացում, Ռուսաստանին՝ իր քաղաքական զարգացումն ինքնուրույն որոշելու հնարավորության տրամադրում։ Սակայն 14 կետերին կից գաղտնի մեկնաբանությունից երևում էր, որ իրականում ԱՄՆ-ը նկատի ուներ թույլ չտալ «բոլշևիզմի տարածում», այսինքն՝ նախատեսում էր սովետական իշխանության տապալում, ինչպես նաև Ռուսաստանի բաժանում մի շարք պետությունների՝ նրա թուլացման և հետագայում ամերիկյան ազդեցությանը ենթարկելու նպատակով։ Այդ կետի երկդիմությունն ակնհայտ դարձավ, երբ ԱՄՆ-ը չհապաղեց հանդես գալու որպես հակասովետական ինտերվենցիայի կազմակերպիչներից մեկը։

7-րդ կետը խոսում էր Բելգիայի ազատագրման և նրա սուվերենության վերականգնման մասին։ 8-րդ կետը նախատեսում էր, որ Գերմանիան պետք է Էլզաս-Լոթարինգիան վերադարձնի Ֆրանսիային։ 9-րդ կետում խոսքը վերաբերում էր Իտալիայի սահմանների որոշ փոփոխությանը. 10-րդ կետը խոսում էր Ավստրո-Հունգարիայի կազմի մեջ մտնող ժողովուրդներին ինքնավարություն տրամադրելու մասին։ 11-րդ կետը նախատեսում էր, որ Գերմանիան պետք է ազատի Ռումինիայի, Սերբիայի և Չերնոգորիայի օկուպացված տերիտորիաները։ 12-րդ կետը խոսում էր Թուրքիայում բնակվող ժողովուրդների ինքնավարության և սևծովյան նեղուցները բոլոր երկրների նավերի համար բացելու մասին։ Լեհական անկախ պետության ստեղծման մասին խոսվում էր 13-րդ կետում։ Այդ կետերը նպատակ ունեին Անտանտի հակառակորդ Գերմանիային ստիպել հրաժարվելու պատերազմի ընթացքում զավթած տերիտորյալ ավարից և ապահովել Եվրոպայում սահմանների ճշտումը հօգուտ հաղթողների։ Դրանք միաժամանակ արտացոլում էին ԱՄՆ-ի ձգտումը կապեր հաստատելու ազգային-ազատագրական պայքարի բոցերում ծնունդ առած նոր երկրների հետ, պայքար, որն ընդգրկել էր ավստրո-հունգարական և թուրքական կայսրությունների տերիտորիաները, խանգարել այնտեղ հեղափոխական շարժման զարգացմանը և դրանցից մի քանիսին օգտագործել Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու համար։ Ինչ վերաբերում է թուրքական տերիտորիաներին, ապա ԱՄՆ-ը պլաններ էր կազմում դրանց մի մասը զավթելու համար, օգտագործելով մանդատների սիստեմը։

14-րդ կետը նախատեսում էր Ազգերի լիգայի ստեղծում իբրև թե պետությունների անկախությունն ու տերիտորյալ ամբողջականությունը երաշխավորելու համար։ Այդ կետն արտահայտում էր ամերիկյան իմպերիալիզմի նաև էքսպանսիոնիստական մտադրությունները, որովհետև նկատի էր առնվում ստեղծել այնպիսի Լիգա, որտեղ ԱՄՆ-ը իշխող ուժ լիներ, իսկ մյուս տերությունները, ներառյալ Անգլիան ու Ֆրանսիան, երկրորդական դեր խաղային։

Այսպիսով, Վիլսոնի «14 կետերը» նախատեսված էին ոչ միայն նրա համար, որպեսզի չեզոքացնեին սովետական դիվանագիտության առաջին ակտերը, այլև հանդիսանում էին ԱՄՆ-ի հակառակորդների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի թուլացման ու ետմղման միջոցով համաշխարհային քաղաքականության ասպարեզում ամերիկյան հեգեմոնիա հաստատելու քողարկված ծրագիր։

ԱՄՆ-ը և Անտանտի տերություններն, իհարկե, չպաշտպանեցին համաշխարհային պատերազմը դադարեցնելու և ընդհանուր արդարացի հաշտություն կնքելու վերաբերյալ սովետական առաջարկությունները։ Սովետական կառավարությունը բազմիցս դիմեց դաշնակից տերություններին, անհապաղ ընդհանուր դեմոկրատական հաշտության հասնելու նպատակով, Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ համատեղ բանակցություններ վարելու առաջարկությամբ, բայց ամեն անգամ թշնամական լռության էր հանդիպում։ Այդ պայմաններում այլ բան չէր մնում անելու, քան դիմել սկզբում սեպարատ զինադադար, իսկ հետո սեպարատ հաշտություն կնքելուն։

Հաշտության կոնֆերանսում, որը բացվեց 1917 թ. դեկտեմբերի 22-ին Բրեստ-Լիտովսկում, Սովետական Ռուսաստանի պատվիրակության դիմաց կանգնած էին Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի պատվիրակությունները։ Սովետական պատվիրակությունը կոնֆերանսի քննարկմանը ներկայացրեց ընդհանուր դեմոկրատական հաշտության հասնելու կոնկրետ ծրագիր։ Ծրագիրը նախատեսում էր հրաժարում պատերազմի ընթացքում զավթված տերիտորիաները բռնությամբ միացնելուց. այն ժողովուրդների քաղաքական ինքնուրույնություն, որոնք այն կորցրել են պատերազմի ընթացքում. իրենց պետական պատկանելիության կամ ինքնուրույնության հարցը հանրաքվեի միջոցով լուծելու հնարավորության երաշխիքներ ազգային այն խմբերին, որոնք մինչև պատերազմը քաղաքական ինքնուրույնություն չեն ունեցել. ազգային փոքրամասնությունների իրավունքների հատուկ օրենսդրական երաշխիքներ. հրաժարում կոնտրիբուցիաներից։ Գաղութային հարցերն առաջարկվում էր լուծել ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքի համաձայն։ Հաշտության սովետական ծրագիրը տոգորված էր ժողովուրդների ազատության ապահովման գաղափարով, որը բացահայտորեն չէր բավարարում գերմանական իմպերիալիստներին։ Օգտվելով Ռուսաստանի ժամանակավոր թուլությունից, ինչպես նաև այն բանից, որ Անտանտի երկրները և ԱՄՆ-ը չէին մասնակցում բանակցություններին, գերմանական պատվիրակությունը խուսափեց ընդհանուր հաշտության պայմանները քննարկելուց և սկսեց սովետական պատվիրակությանը թելադրել զավթողական, ստրկացուցիչ, ծայրահեղ անարդարացի հաշտության պայմաններ։ Ընդ որում նա օգտագործում էր ուկրաինական Կենտրոնական ռադայի պատվիրակության դավաճանական վարքագիծը, որը բոլշևիկների դեմ մղած պայքարում օգնություն ստանալու համար դիմեց Գերմանիայի հետ անիրավահավասար համաձայնագրի կնքմանը։

Երիտասարդ սովետական պետությունը խաղաղության ծայրահեղ կարիք էր զգում։ Այն բանից՝ կլինի՞, արդյոք, խաղաղություն, թե՞ ոչ, կախված էր սովետական իշխանության ճակատագիրը։ Նրան հարկավոր էր կարճատև դադար, որպեսզի ամրապնդվի, ստեղծի նոր բանակ, որն ընդունակ լիներ ներքին հակահեղափոխությունից և արտաքին իմպերիալիստական ինտերվենցիայից պաշտպանել Հոկտեմբերի նվաճումները։ Վ. Ի. Լենինը հասկանում էր այդ և դրա համար Բրեստ-Լիտովսկում սովետական պատվիրակության ղեկավար Տրոցկուն ցուցում տվեց մինչև վերջին հնարավորությունը պաշտպանել հաշ-

տության սովետական առաջարկությունները, իսկ եթե գերմանացիները վերջնագիր ներկայացնեն, ապա հանուն հեղափոխության նվաճումների պահպանման ստորագրել նրանց պայմանները։ Խախտելով իր կառավարության դիրեկտիվները, Տրոցկին ի պատասխան գերմանական վերջնագրի հայտարարեց, որ Ռուսաստանը դադարեցնում է պատերազմը, բայց հաշտություն չի ստորագրում։ Դա ուղղակի դավաճանություն էր, և գերմանացիները չհապաղեցին օգտվել դրանից։

1918 թ. փետրվարի 18-ին Գերմանիան վերսկսեց ռազմական գործողությունները ռուսական ճակատում և, ի պատասխան գերմանական պայմաններով հաշտություն կնքելու սովետական կառավարության պատրաստակամության վերաբերյալ Լենինի ուղարկած հեռագրի, վերջնագրային ձևով ներկայացրեց նոր, ավելի ծանր պայմաններ։ Դա Տրոցկու դավաճանության գինն էր։ Սովետական կառավարությունը ստիպված էր ընդունել նոր վերջնագիրը և, մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում հաշտության պայմանագիրն ստորագրվեց, իսկ մարտի 15-ին այն վավերացրեց սովետների համառուսաստանյան համագումարը։ Նախկինում Ռուսաստանի մեջ մտնող մեծ տերիտորիաներ (46 մլն բնակչությամբ մոտ 1 մլն կմ²) անջատվում էին սովետական պետությունից։

Դա ծանր, ծայրահեղ անարդարացի հաշտություն էր։ Վ. Ի. Լենինն այն անվանում էր լկտի հաշտություն։ Այն վկայում էր գերմանական իմպերիալիզմի արտակարգ ագրեսիվ բնույթի մասին։ Սակայն Սովետական Ռուսաստանի համար դա, իհարկե, անհրաժեշտ հաշտություն էր, այնպիսի հաշտություն, որը կնքվեց հանուն սովետական իշխանության պահպանման։ Հաշտության համար Վ. Ի. Լենինի մղած պայքարն այդ ժամանակ համապատասխանում էր ինչպես Սովետական Ռուսաստանի ազգային արմատական շահերին, այնպես էլ միջազգային մասշտաբով սոցիալիզմի համար մղվող պայքարի շահերին։ Ջնայած Բրեստի հաշտության ամբողջ ծանրությանը, Լենինը լավատեսորեն էր նայում ապագային։ Նա հավատում էր, որ այդ հաշտությունը երկար չի տևի, որ Գերմանիայի հեղափոխությունը կօգնի այն վերացնելու։ Այդպես էլ եղավ։ 1918 թ. նոյեմբերին Գերմանիայում բուրժուադեմոկրատական հեղափոխություն սկսվելուց հետո սովետական կառավարությունը չեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։

ՎԵՐՍԱԼ-ՎԱՇԻՆԳՏՈՆՅԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտումը։ Կոմպիենի զինադադարը

Բրեստ-Լիտովսկի պայմանագրից հետո Գերմանիայի կառավարող շրջանները հենվելով նրա դրույթների վրա, իսկ հաճախ էլ հակառակ դրանց ձգտում էին շարունակել զավթողական քաղաքականությունը Արևելքում և միաժամանակ շահել պատերազմն Արևմուտքում։ Նրանք շտապում էին, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ազդեցությունը գերմանական բանակի վրա գնալով ավելի ու ավելի շատ էր զգացվում և նա ուր որ է կարող էր հրաժարվել պատերազմը շարունակելուց. այդ նույն ժամանակ էլ Հոկտեմբերի գաղափարների և Գերմանիայի ներսում պատերազմի առաջացրած մեծ դժվարությունների ազդեցությամբ երկրում հասունանում էր հեղափոխությունը։

Կուտակելով իր բոլոր ռեսուրսները, գերմանական հրամանատարությունը 1918 թ. մարտին արևմտյան ռազմաճակատում հարձակման դիմեց։ Նրա մտադրությունների համաձայն, այն պետք է դառնար վճռական, և սկզբում թվում էր, որ այդպես էլ լինելու է. գերմանացիները Ֆրանսիայում 65 կմ առաջացան դեպի ռազմաճակատի խորքը։ Ապա հուլիսին հետևեց ևս մեկ ցատկ, երբ գերմանական զորքերը դուրս եկան դեպի Մարնա գետը և անցան այն։ Բայց դրանով էլ Գերմանիայի հաջողությունները վերջացան։ Համախմբելով իրենց ուժերը, պայմանավորվելով միասնական հրամանատարություն ստեղծելու մասին, դաշնակիցներն օգոստոսին անցան հակահարձակման, որը շարունակվեց ընդհուպ մինչև Գերմանիայի կապիտուլացումը։ Անտանտի զորքերը հարձակման անցան նաև Բալկանյան ռազմաճակատում, ուր 1918 թ. սեպտեմբերի վերջին Գերմանիայի դաշնակից Բուլղարիան պատերազմից դուրս եկավ, Սալոնիկում Անտանտի հետ զինադադար կնքելով։ Աշնանն անգլիական զորքերը հարձակում ծավալեցին Միջագետքի և Սիրիայի ռազմաճակատներում, որի հետևանքով Թուրքիան կապիտուլացվեց, 1918 թ. հոկտեմբերի 30-ին զինադադար ստորագրելով։ Հետո հերթը հասավ Ավստրո-Հունգարիային։ Լաթակարկատ միապետությունն ընկավ՝ ազգային-ազատագրական շարժման և Անտանտի զորքերի հարվածների տակ։ 1918 թ. նոյեմբերի 3-ին ավստրո-հունգարական հրամանատարությունը ստորագրեց Անտանտի թելադրած զինադադարի պայմանները։

Սեպտեմբերի 29-ին Գերմանիայի զինվորական ու քաղաքացիական ղեկավարների խորհրդակցությունը որոշում ընդունեց զինադադար ու հաշտություն որոնել։ Սկսվեց բարդ մանևրումը, որի օգնությամբ գերմանական կառավարությունը ձգտում էր ձեռք բերել զինադադարի հնարավորին չափ մեղմ պայմաններ։ Ստեղծվեց կառավարություն արքայազն Մաքս Բադենցու գլխավորությամբ, որը լիբերալի համարում ուներ, մի բան, որը նրան ավելի ընդունելի պետք է դարձներ ԱՄՆ-ի և Անտանտի համար։ Ի պատասխան զինադադարի մասին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին Մաքս Բադենցու հղած դիմումի, ամերիկացիները պահանջեցին հաստատել, որ գերմանական կառավարությունն ընդունում է «14 հիմնական սկզբունքներում» և Վիլսոնի հետագա ելույթներում ձևակերպված բոլոր պայմանները։ Շուտով Վիլսոնը պահանջեց, որ Գերմանիան մինչև զինադադարի պայմանների քննարկումը հրաժարվի ստորջրյա պատերազմից և դադարեցնի նահանջի ժամանակ իր զորքերի կողմից կատարվող ավերվածությունները։ Գերմանիան ընդունեց Վիլսոնի պայմանները, որոնք հավանություն գտան Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից։ Իրադարձություններն արագացան գերմանական զինվորական նավաստիների ապստամբությամբ, որոնք նոյեմբերի 4-ին գրավեցին Քիլը, ապա և Համբուրգը, Լյուբեկն ու Բրեմենը։ Դա Գերմանիայում հեղափոխության սկիզբն էր, որը շուտով ընդգրկեց ամբողջ երկիրը։ Նոյեմբերի 7-ին գերմանական պատվիրակությունն էրցբերգերի գլխավորությամբ անցավ ռազմաճակատի գիծը, ուղևորվելով դաշնակիցների ներկայացուցիչ ֆրանսիական մարշալ Ֆոշի մոտ՝ զինադադարի վերաբերյալ բանակցություններ վարելու համար։ Պատվիրակությանը հասցրին Կոմպիենի անտառում գտնվող Ռետոնդ կայարանը, որտեղ պահեստի գծերի վրա կանգնած էր Ֆոշի շտաբային վագոնը։ Այստեղ գերմանական պատվիրակներին հանձնվեցին դաշնակիցների առաջարկած զինադադարի պայմանները։

Գերմանական պատվիրակները փորձեցին այդ պայմանների վերաբերյալ դաշնակիցներին բանակցությունների մեջ ներքաշել։ Իրենց ծառայություններն առաջարկելով Սովետական Ռուսաստանի և Եվրոպայում հեղափոխության դեմ պայքարելու համար, նրանք ձգտում էին հասնել ներկայացված պայմանների մեղմացմանը։ Այդ խոստումների առթիվ ինչ-որ զիջումներ նրանց արվեցին, բայց ընդհանուր առմամբ Ֆոշն իրեն խստորեն էր պահում։ Մտածելու համար

էրցբերգերին տրվեց 72 ժամ։ Նոյեմբերի 9-ին Վիլհելմ II-ը փախավ Հոլանդիա, և Բեռլինում կազմվեց սոցիալ-դեմոկրատական կառավարություն՝ Էբերտի գլխավորությամբ։ Նոր կառավարությունը համաձայնվեց ստորագրել զինադադարը։

Կոմպիենի զինադադարի պայմանները ծանր էին Գերմանիայի համար, թեև գերմանական իմպերիալիզմն ու զինվորականությունը լիովին արժանի էին դրան։ Գերմանիային պարտավորեցրին զորքերը դուրս բերել Բելգիայի, Ֆրանսիայի և Լյուքսեմբուրգի իր գավթած տերիտորիաներից, ինչպես նաև Էլզաս-Լոթարինգիայից։ Գերմանացիները պետք է իրենց զորքերը դուրս բերեին Ավստրո-Հունգարիայից, Թուրքիայից, Ռումինիայից, էվակուացնեին Հռենոսի ձախ ափը։ Հռենոսի աջ ափին ստեղծվում էր չեզոք գոտի։ Գերմանիան պետք է դաշնակիցներին տար 5 հազ. շոգեքարշ, 150 հազ. բեռնատար ավտոմեքենա, 5 հազ. ծանր և դաշտային հրանոթ, 1700 ինքնաթիռ և ռազմական նշանակություն ունեցող որոշ քանակությամբ այլ զույք։ Գերմանական գերության մեջ գտնվող դաշնակից զինվորները ենթակա էին ազատման, իսկ գերմանական գերիները մնում էին դաշնակիցների ձեռքում։ Զինադադարի պայմաններն այնպես էին կազմված, որ Գերմանիային զրկեին դաշնակիցներին արդյունավետ ռազմական դիմադրություն ցույց տալուց այն դեպքում, եթե Գերմանիան հանդգներ խախտել զինադադարը։ Այդ նույն ժամանակ, ինչպես գտնում էին դաշնակիցները, բավարար ուժեր էին թողնվում Գերմանիայի տրամադրության տակ՝ երկրում հեղափոխության դեմ պայքարելու և սովետական իշխանությունը տապալելու նպատակով Սովետական Ռուսաստանում կազմակերպված ինտերվենցիային ակտիվորեն մասնակցելու համար։ Զինադադարի պայմանների 12-րդ հոդվածը նախատեսում էր, որ գերմանական զորքերը պետք է մնան Ռուսաստանում և նրա տերիտորիայից դուրս են բերվելու միայն այն բանից հետո, երբ դաշնակիցները գտնեն, որ դրա ժամանակը հասել է։ Այսպես, արդեն Կոմպիենում Ռուսաստանի նախկին դաշնակիցները Գերմանիայի հետ հակահեղափոխական գործարքի մեջ մտան, որն ուղղված էր հեղափոխական Ռուսաստանի դեմ։

ԱՄՆ-ը և Անտանտի երկրները սովետական իշխանության ստեղծման պահից ի վեր կատաղի պայքար ծավալեցին աշխատավորների պետության դեմ, որն իր նպատակն էր հռչակել սոցիալիստական հասարակության կառուցումը։ Նրանք լի էին վճռականությամբ զենքի ուժով ճնշելու սոցիալիզմի օջախը։ Սովետական Ռուսաստանի դեմ զինված պայքարի նախապատրաստման կենտրոն դարձավ Անտանտի գերագույն ռազմական խորհուրդը։ 1917 թ. դեկտեմբերի 23-ին Անգլիան և Ֆրանսիան կոնվենցիա ստորագրեցին Ռուսաստանի տերիտորիայում անգլիական ու ֆրանսիական զորքերի ապագա գործողությունների շրջանների սահմանազծման մասին։ Անգլիացիների գործողության գոտու մեջ մտցվեցին Կովկասն ու Կուբանի և Դոնի կազակային մարզերը, ֆրանսիական գոտու մեջ՝ Ուկրաինան, Բեսարաբիան և Ղրիմը։

Մինչև Արևմուտքում ռազմական գործողություններն ավարտելը ո՛չ Գերմանիան, ո՛չ էլ նրա հակառակորդները՝ Անտանտն ու ԱՄՆ-ը, չէին կարող քիչ թե շատ զգալի քանակությամբ զինված ուժեր առանձնացնել Սովետական Ռուսաստանում, բայց այդուհանդերձ ինտերվենցիան նրանք սկսեցին դեռ մինչև Գերմանիայի պարտությունը։ Այսպես, դեռ 1918 թ. հենց սկզբին միացան երկու հակահեղափոխական ուժերը՝ ռուսական հակահեղափոխությունը, որը զգալի մարդկային ռեսուրսներ ուներ, և Անտանտի տերություններն ու ԱՄՆ-ը, որոնք պատրաստ էին սպիտակգվարդիական կադրերին սպառազինություն,

հանդերձանք, դրամ, հրահանգիչներ մատակարարել և աջակցություն ցույց տալու համար նույնիսկ որոշ ռազմական կոնտինգենտներ ուղարկել։ 1918 թ. մարտին Մուրմանսկում անգլիական ինտերվենտներն ափ հանեցին հրետանի ունեցող իրենց առաջին ջոկատը։ Նրանց հետևեցին ֆրանսիական ինտերվենտները։ Խարսխակայանում կանգ առան անգլիական և ֆրանսիական ռազմանավերը։ Հունիսին ինտերվենտները գրավեցին Արխանգելսկը։

Միաժամանակ Ճապոնիան մեծ պատրաստակամություն էր դրսևորում սովետական Հեռավոր Արևելքում ինտերվենցիա ծավալելու համար։ Նրան գայթակղում էին Հեռավոր Արևելքի հարստությունները, որոնք նա հույս ուներ գավթել բոլշևիկների հետ մղած պայքարի ընթացքում։ ԱՄՆ-ը, վախենալով Ճապոնիայի ուժեղացումից և մտադրվելով իր հսկողությունը սահմանել սովետական Հեռավոր Արևելքի ռեսուրսների նկատմամբ, հանդես եկավ այն բանի դեմ, որպեսզի այստեղ ինտերվենցիան իրականացնեին բացառապես կամ գերազանցապես ճապոնացիները։ Միջիմպերիալիստական հակասություններն այսպես էին ազդում ինտերվենտ տերությունների հակասովետական քաղաքականության վրա։ 1918 թ. հունվարին արդեն Վլադիվոստոկի նավահանգստում էին գտնվում Ճապոնիայի, ԱՄՆ-ի և Անգլիայի հածանավերը։ Ապրիլի 5-ին ճապոնական զորքերը «ճապոնական հպատակների կյանքի և գույքի պաշտպանության» գաղութատիրական պատրվակով ափ դուրս եկան Վլադիվոստոկում։ Հունիսին սովետական իշխանությունը քաղաքում տապալվեց և իրականացվեց ճապոնական, անգլիական և ամերիկյան զորքերի նոր դեսանտների ափհանում։

Այդ պահին ինտերվենցիային մասնակցում էր նաև չեխոսլովակյան կորպուսը։ Այն կազմվել էր դեռ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ ավստրո-հունգարական բանակի՝ Ռուսաստանում գտնվող գերի զինծառայողներից։ Կորպուսում կար 50 հազ. մարդ։ Սովետական կառավարությունը ջանում էր կորպուսին օգնել շուտափույթ հայրենիք հասնելու համար և նրա անձնակազմին թույլ տվեց Ռուսաստանից մեկնել Վլադիվոստոկի վրայով, քանի որ Եվրոպայում դեռ շարունակվում էր պատերազմը։ Սակայն կորպուսի ռեակցիոն սպայությունն Անտանտի տերությունների ցուցումով կոնտակտի մեջ մտավ սպիտակգվարդիականների հետ և խռովություն բարձրացրեց սովետական իշխանության դեմ։ Քանի որ կորպուսի զորամասերով բեռնված էշելոնները խռովարարները դիտավորյալ կերպով ձգել էին մեծ տարածության վրա, 1918 թ. ամռան մոտերքին Պենզայիեն, Ուրալը և Սիբիրը կտրվեցին Սովետական Ռուսաստանից։ Անգլիան փակեց ինտերվենցիայի օղակը՝ իր զորքերը շարժելով Անդրկովկասն ու Թուրքեստանը գրավելու համար։ Գերմանիայի դեմ ռազմական գործողությունների ավարտմամբ Անտանտն ու ԱՄՆ-ը հնարավորություն ստացան զգալիորեն ընդլայնել ինտերվենցիան ընդդեմ Սովետական Ռուսաստանի։ 1919 թ. հունվարին Փարիզում բացված հաշտության կոնֆերանսն անմիջապես վերածվեց սովետական իշխանության դեմ զինված պայքարի շտաբի՝ Ռուսաստանում բուրժուակալվածատիրական կարգերը վերականգնելու նպատակով։

Փարիզի հաշտության կոնֆերանսը

Առաջին համաշխարհային պատերազմն իմպերիալիստական էր, իսկ այդ նշանակում էր, որ այն ավարտող հաշտությունը պետք է դառնար իմպերիալիստական հաշտություն։ Դեռ զինադադարի պայմանների վերաբերյալ բանակցությունների ժամանակաշրջանում զգալի չափով ջրի երես ելան այն հակասությունները, որոնք պառակտում էին հաղթողներին։ Նրանցից յուրաքանչյուրը

ձգտում էր զինադադարի վերաբերյալ փաստաթղթի մեջ մտցնել այնպիսի պայմաններ, որոնք ուժեղացնեին նրա դիրքերը հաշտության կոնֆերանսում։

Հաղթող տերությունների հնարավորությունները հաշտության կոնֆերանսում որոշվում էին նրանց ուժերի հարաբերակցությամբ։ Ֆինանսական ու տնտեսական հզորությամբ առավելություն ուներ ԱՄՆ-ը, որը պարտապան երկրից վերածվեց վարկատու երկրի։ Անտանտի երկրները ԱՄՆ-ից մոտ 10 միլիարդ դոլար պարտք էին վերցրել։ Հենվելով Անգլիայի և Ֆրանսիայի՝ ԱՄՆ-ից ունեցած ֆինանսական կախման վրա, ինչպես նաև պատերազմի ժամանակ ստեղծված մեծաթիվ բանակի և արագորեն աճող ռազմական նավատորմի վրա, Վիլսոնը հույս ուներ հասնել այնպիսի խաղաղ կարգավորման, որն առաջին հերթին համապատասխաներ ամերիկյան իմպերիալիզմի շահերին։

Ամերիկյան իմպերիալիզմի պլանները խառնեց հեղափոխությունը, որը սկզբում հաղթանակեց Ռուսաստանում, իսկ հետո տարածվեց Կենտրոնական Եվրոպայի մի քանի երկրներում։ Բացի այդ, Անգլիան ու Ֆրանսիան մարդկային կյանքերով ու նյութական կորուստներով ավելի թանկ վճարելով հաղթանակի համար, քան ԱՄՆ-ը, լի էին վճռականությամբ իրենք օգտվելու նրա պրոտուղներից։ Անգլիան մի շարք առավելություններ ուներ իր պարտնյորների համեմատությամբ։ Դեռ մինչև հաշտության կոնֆերանսը նա ըստ էության Եվրոպայում արդեն հասել էր այն նպատակներին, հանուն որոնց նա կռվեց։ Գերմանական ահեղ նավատորմն այլևս գոյություն չուներ, նրա նավերը ներկալված էին անգլիական Սկապա Ֆլոու նավահանգստում։ Անգլիական ապրանքների համար համաշխարհային շուկաներում վտանգավոր գերմանական մրցակցությունը վերացված էր, իսկ ռազմական պարտությունը, ինչպես կարծում էին այն ժամանակ, Գերմանիայի էկոնոմիկան երկար ժամանակով քայքայեց։ Գրեթե բոլոր գերմանական գաղութները զավթվել էին Անգլիայի կամ նրա դոմինիոնների զորքերի կողմից։ Այդ պատճառով Անգլիան հաշտության կոնֆերանսում ձգտում էր իր համար ապահովել արդեն ձեռք բերված ամրապնդումը և թույլ չտալ, որ Ֆրանսիան օգտվելով Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի պարտությունից և իմպերիալիստական խաղից Ռուսաստանի դուրս գալուց, տիրապետող դիրքի հասնի Եվրոպական մայրցամաքում։

Իսկ Ֆրանսիան բացահայտորեն ձգտում էր դրան։ Նա համեմատաբար թույլ էր տնտեսական ու ֆինանսական տեսակետից, բայց հենվում էր իր բանակի վրա, որն այն ժամանակ ամենաուժեղն էր և չափազանց կարևոր ստրատեգիական դիրքեր էր գրավում ամենից առաջ Հոլանդիայում, ինչպես նաև Բալկաններում ու Մերձավոր Արևելքում։ Հենվելով այդ նույն առավելության վրա, Ֆրանսիան մտադիր էր Եվրոպայում հեգեմոնիայի հասնել։ Նրա գլխավոր հակառակորդն Անգլիան էր, որը նույն նպատակն էր հետապնդում։ Իտալիան, որը մի շարք խոշոր պարտություններ էր կրել, չէր կարող հույսալ, որ իր ձայնը հաշտության կոնֆերանսում բարձր կհնչի, բայց դա չէր չափավորում իտալական իմպերիալիստների ախորժակը։ Հեռավոր Արևելքում Ճապոնիան, որը Եվրոպայում չէր կռվել, պատերազմից օգտվեց գերմանական տիրույթները Չինաստանում և Գերմանիային պատկանող Մարշալյան, Մարիանյան ու Կարոլինյան կղզիները զավթելու համար։ Ճապոնիան հաշտության կոնֆերանսում ձգտում էր իր ձեռքում պահել թալանվածը և բախվում էր ԱՄՆ-ի հետ, որը հավակնում էր իշխող դեր կատարել Հեռավոր Արևելքում և Չինաստանում, ինչպես նաև դեմ չէր զավթելու այդ շրջանի կղզիներում գտնվող գերմանական տիրույթները։

Փարիզի հաշտության կոնֆերանսի աշխատանքի կազմակերպումը ծայրա-

հեղորեն ոչ դեմոկրատական էր։ Այն ոչ մի կերպ չէր համապատասխանում Վիլսոնի առաջին սկզբունքին, որը պահանջում էր «բաց» դիվանագիտություն։ Նա ինքն էլ բացահայտորեն հեռացավ այդ պահանջից։ Կոնֆերանսի գործերն ըստ էության տնօրինում էր մեծ եռյակը, այսինքն՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը, Անգլիայի պրեմիեր-մինիստր Լլոյդ-Ջորջը և Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Կլեմանսոնը, որոնք գլխավորում էին իրենց երկրների պատվիրակությունները հաշտության կոնֆերանսում։ Կոնֆերանսը բացվեց 1919 թ. հունվարի 18-ին։ Այնտեղ ներկայացված էին 17 պետություններ։ Ռուսաստանը Փարիզ չէր հրավիրվել, թեև հենց նրա ժողովուրդներն էին կրել եռյակ դաշինքի դեմ մղված պատերազմի ամենամեծ ծանրությունը և տվել ամենամեծ զոհերը։ Մասնակից երկրներից շատերը փաստորեն հեռացված էին կոնֆերանսի որոշումների նախապատրաստումից։ Այդ աշխատանքն ամբողջապես կենտրոնացված էր Տասի խորհրդում, Հինգի խորհրդում և Չորսի խորհրդում։ Տասի խորհրդում, որը գործեց կոնֆերանսի առաջին ամսվա ընթացքում, մտնում էին ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կառավարությունների ղեկավարները և արտաքին գործերի մինիստրները։ Մարտին հրաժարվեցին նույնիսկ այդպիսի «լայն» օրգանից, և որոշումները պատրաստվում էին Չորսի խորհրդում, որտեղ ներկայացված էին միայն ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարները, ընդ որում իտալացու ներկայությունն ավելի շուտ անվանական էր։ Գերմանիայի հետ պայմանագիր ստորագրելուց հետո Հինգի խորհուրդը՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի արտաքին գործերի մինիստրները և Ճապոնիայի հատուկ ներկայացուցիչը, ավարտեց նրա դաշնակիցների հետ կնքվելիք պայմանագրերի նախապատրաստումը։

Ամբողջ կոնֆերանսի ընթացքում նրա առաջատար հինգ մասնակիցների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում էր գտնվում «ռուսական հարցը», այսինքն՝ այն պրոբլեմների կոմպլեքսը, ինչպիսիք էին ռազմական ինտերվենցիայի կազմակերպումն ընդդեմ Սովետական Ռուսաստանի, նրա տրնտեսական բլոկադան և քաղաքական մեկուսացումը, նյութական, ռազմական, ֆինանսական ու քաղաքական աջակցությունը Ռուսաստանի տերիտորիայում գործող սպիտակգվարդիական հակահեղափոխությանը։ Փարիզյան «հաշտարարները» համերաշխ էին այն բանում, որ իրենց նպատակն է բոլշևիզմի ոչնչացումը, բայց տարակարծիք էին միջոցների ընտրության հարցում։ Ֆրանսիացիները, ինչպես նաև Անգլիայի պատվիրակության մի քանի անդամներ հանդես էին գալիս գերմանական զորքերի հետ համատեղ գործող, դաշնակից զորքերի մասնակցությամբ, Ռուսաստանում բացահայտ զինված ինտերվենցիան շարունակելու օգտին։ Պրեզիդենտ Վիլսոնն ու պրեմիեր-մինիստր Լլոյդ-Ջորջը երկյուղում էին, որ բացահայտ ինտերվենցիան կարող է նպաստել սոցիալիստական հեղափոխության տեղափոխմանը դեպի այն երկրները, որոնք իրականացնում են ինտերվենցիան։ Ի վերջո այդ տեսակետը գերիշխեց, և Փարիզի կոնֆերանսի ղեկավարներն իրենց ջանքերը կենտրոնացրին քողարկված ձևով, այսինքն՝ ԱՄՆ-ի և Անտանտի երկրների կողմից լայն աջակցություն ստացող ներքին հակահեղափոխության միջոցով ինտերվենցիայի իրականացմանը։

Կոնֆերանսում առավել սուր պայքար ծավալվեց Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի պայմանների ձևակերպման ժամանակ։ Ֆրանսիայի ներկայացուցիչները, վախենալով գերմանական հարձակման կրկնությունից, ձգտում էին Գերմանիային առավելագույն չափով թուլացնել տերիտորյալ, ռազմական և տնտեսական տեսակետներից։ ԱՄՆ-ի և Անգլիայի ներկայացուցիչնե-

ը դեմ էին դրան. նրանք ձգտում էին պահպանել համեմատաբար ուժեղ Գերմանիան որպես Եվրոպայում Ֆրանսիայի ազդեցության հակակշիռ և որպես Սովետական Ռուսաստանի դեմ ուղղված պայքարի գործիք։

Ֆրանսիան ձգտում էր Գերմանիայի տերիտորյալ անդամահատմանը։ Նա ցանկանում էր Գերմանիայից անջատել Հռենոսի ձախ ափի տերիտորիան, այնտեղ «ինքնավար պետություն» ստեղծելով։ Անգլիացիներն ու ամերիկացիները կտրականապես ընդդիմանում էին, և ֆրանսիացիները ստիպված էին կոմպրոմիսի դիմել։ Հռենոսի ձախ ափը և աջ ափի 50 կմ լայնությամբ գոտին ապառազմականացվում և մնում էր Գերմանիայի կազմում։ Ապառազմականացված գոտու մի քանի կետեր 15 տարի ժամկետով օկուպացվում էին դաշնակից զորքերի կողմից։ ԱՄՆ-ը և Անգլիան խոստացան Ֆրանսիայի հետ ստորագրել օգնության պայմանագրեր՝ Գերմանիայի կողմից նրա վրա հարձակվելու դեպքում։ Այդ խոստումը չկատարվեց։

Ֆրանսիան պատերազմի ժամանակ իր հանքերը գերմանացիների կողմից ավերվելու դիմաց որպես փոխհատուցում պահանջում էր իրեն միացնել Սաարի ածխային ավազանը։ Անգլիացիների ու ամերիկացիների առարկությունները հասցրին կոմպրոմիսային լուծման։ Սաարը 15 տարով հանձնվում էր Ֆրանսիային, որից հետո հանրաքվեն պետք է որոշեր նրա ճակատագիրը։ Ֆրանսիան ջանում էր ստեղծել իրենից կախում ունեցող ուժեղ լեհական պետություն, և այդ պատճառով պահանջում էր Լեհաստանին հանձնել ամբողջ Վերին Սիլեզիան։ Այդ հարցում նույնպես ԱՄՆ-ն ու Անգլիան առարկում էին, և հետագայում անցկացված հանրաքվեն հասցրեց Վերին Սիլեզիայի բաժանմանը Գերմանիայի և Լեհաստանի միջև։

Ֆրանսիան ձգտում էր առավելագույն ռեպարացիաներ սահմանել Գերմանիայի համար այն նպատակով, որպեսզի ծածկի իր ռազմական վնասները և տնտեսապես թուլացնի Գերմանիային։ Նա պահանջում էր, որ Գերմանիան պարտավորագիր ստորագրի ռեպարացիաներ վճարելու այնպիսի գումարով, որը հետագայում կսահմանի ռեպարացիոն հանձնաժողովը։ Անգլիան և ԱՄՆ-ը դեմ էին դրան և ձգտում էին պայմանագրում միանգամից նշել ռեպարացիաների որոշակի և համեմատաբար ոչ այնքան բարձր գումար։ Այդ հարցի առթիվ առաջացած վիճաբանությունները բազմիցս սպառնացին ձախողել հաշտության կոնֆերանսը։ Ի վերջո հաղթանակեց ռեպարացիոն հարցի վերաբերյալ ֆրանսիական տեսակետը։

Գերմանիայի հետ պայմանագիրը (Վերսալյան հաշտության պայմանագիրը) ստորագրվեց 1919 թ. հունիսի 28-ին Վերսալյան Մեծ պալատի հայելապատ դահլիճում։ Դա 15 մասից և 440 հոդվածից բաղկացած մի մեծ հատոր էր։ Տերիտորյալ որոշումները սահմանում էին Գերմանիայի սահմանները Ֆրանսիայի, Բելգիայի, Լյուքսեմբուրգի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Չեխոսլովակիայի, Լեհաստանի և Դանիայի հետ։ Գերմանիայից անջատվում էր տերիտորիայի $^1/_8$ մասը, որտեղ ապրում էր նրա բնակչության $^1/_{10}$ մասը։ Ֆրանսիային էին վերադարձվում Էլզասն ու Լոթարինգիան, Բելգիային հանձնվում Էյպեն, Մալմեդի և Մորենե շրջանները։ Հռենոսի երկու ափերին սահմանվում էր ապառազմականացված գոտի, որտեղ Գերմանիային արգելվում էր ամրություններ կառուցել և զինված ուժեր պահել։ Գերմանիայի՝ Հռենոսից դեպի Արևմուտք ընկած մի քանի տերիտորիաներ օկուպացվում էին հաղթող տերությունների զորքերով 5-ից մինչև 15 տարի ժամկետով։ Ֆրանսիան իրավունք էր ստանում օգտագործել Սաարի քարածուխը, Սաարի կառավարման գործը 15 տարով հանձնվում էր Ազգերի լիգային։ Գերմանիան Լեհաստանին էր վերադարձնում Վերին Սիլեզիայի մի մասը։ Դանցիգ (Գդանսկ) քաղաքը հայտարարվում էր «Ազգերի լիգայի պաշտպանության տակ գտնվող ազատ քաղաք»։ Դանիային էր անցնում Շլեզվիգի հյուսիսային մասը։ Հաշտության պայմանագիրը Գերմանիային պարտավորեցնում էր հարգել Ավստրիայի սուվերենությունը, այսինքն՝ արգելում էր նրա միացումը Գերմանիային։ Գերմանիան հրաժարվում էր իր գաղութներից, որոնց բախտը հետագայում որոշելու էր Ազգերի լիգան։ Չինաստանում Գերմանիան հրաժարվում էր ամեն տեսակի արտոնություններից ու առավելություններից և Շանդունի իրավունքները հանձնում էր Ճապոնիային։

Պայմանագիրը ռազմական լուրջ սահմանափակումներ էր նախատեսում Գերմանիայի համար։ Նրա բանակը չպետք է գերազանցեր 100 հազ. մարդուց, գլխավոր շտաբը վերացվում էր, զինված ուժերը պահպանվում էին միայն այնպիսի չափերով, որոնք անհրաժեշտ էին «ներքին կարգը պահպանելու» համար։ Ընդհանուր զինվորական ծառայությունը վերացվում էր, բանակը պետք է կոմպլեկտավորվեր կամավոր հավաքագրման միջոցով։ Գերմանիային արգելվում էր ունենալ ծանր հրետանի, տանկեր, սուզանավեր, դիրիժաբլներ և ռազմական ավիացիա։ Ռազմածովային նավատորմը սահմանափակվում էր 6 զրահակիրներով, 6 թեթև հածանավերով և 12 հակաականակիրներով, իսկ նրա անձնակազմի թիվը՝ 15 հազ. մարդով։

Ի հիմնավորումն Գերմանիայից ռեպարացիաներ վերցնելու, պայմանագիրը հռչակում էր Գերմանիայի և նրա դաշնակիցների բացառիկ մեղավորությունը առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծման գործում և հաղթողների իրավունքը՝ փոխհատուցելու պատերազմի պատճառով իրենց հասցված վնասը։ Ռեպարացիաների գումարը պայմանագիրը չէր նշում, այն պետք է սահմաներ հատուկ ռեպարացիոն հանձնաժողովը, որի նախագահ դարձավ մի ֆրանսիացի։ Ռեպարացիաների գումարի շուրջ կատաղի պայքար ծավալվեց. ֆրանսիացիները ձգտում էին առավելագույն գումարի, գերմանացիները փորձում էին ռեպարացիաները նվազագույնի հասցնել։ Ի վերջո նշվեց 132 մլրդ. մարկ գումար՝ ոսկով։

1919 թ. հուլիսի 9-ին Գերմանիան վավերացրեց Վերսալյան հաշտության պայմանագիրը։ Մինչև 1920 թ. հունվարն այն վավերացրին Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան։ ԱՄՆ-ը հույս ուներ, որ Լիգան իր ձեռքին զենք կդառնա համաշխարհային հեգեմոնիայի համար մղած պայքարում։ Բայց ըստացվեց այլ կերպ. Լիգայում սկզբից ևեթ սկսեցին տեր ու տնօրինություն անել Անգլիան ու Ֆրանսիան, և դա եղավ այն պատճառներից մեկը, որի հետևանքով ԱՄՆ-ը չվավերացրեց Վերսալյան հաշտության պայմանագիրը և այդպես էլ չմտավ Ազգերի լիգա։ Հետագայում նա Գերմանիայի հետ սեպարատ հաշտության պայմանագիր կնքեց։

Ավստրո-Հունգարիան տրոհվեց մի շարք պետությունների, որոնք ձևավորվեցին հիմնականում ազգային հատկանիշի համաձայն՝ Չեխոսլովակիա, Սերբա-խորվաթա-սլովենյան պետություն (Հարավսլավիա), Հունգարիա և Ավստրիա։ Դաշնակիցները Ավստրիայի և Հունգարիայի հետ ստորագրեցին հաշտության պայմանագրեր, որոնք մշակվեցին սուր պայքարի պայմաններում։ Ավստրիայի հետ պայմանագիրը, որը հայտնի է որպես Սեն-Ժերմենյան հաշտության պայմանագիր, ստորագրվեց 1919 թ. սեպտեմբերի 10-ին։ Ավստրիան ճանաչվում էր հանրապետություն՝ 84 հազ. կմ² տերիտորիայով և մոտ 6,7 մլն բնակչությամբ. որոշվեցին նրա սահմանները բոլոր հարևանների, ներառյալ և նոր կազմավորված պետությունների հետ։ Նրան արգելվեց հետագայում միանալ Գերմանիային կամ որևէ այլ պետության։ Ավստրիական բանակը եռամսյա

ժամկետում ենթակա էր զորացրման։ Ավստրիային թույլատրվում էր զինված ուժեր ունենալ՝ թվով ոչ ավելի քան 30 հազ. մարդ։ Նա պետք է հաղթողներին ռեպարացիա վճարեր։

1919 թ. նոյեմբերի 27-ին Բուլղարիայի հետ ստորագրված հաշտության պայմանագիրը (Նեյիի հաշտության պայմանագիր) լրջորեն թուլացրեց երկիրը։ Նրանից անջատվեց Արևմտյան Թրակիան (որը հետագայում հանձնվեց Հունաստանին). դրանով իսկ Բուլղարիան կորցրեց ելքը դեպի Էգեյան ծով։ Բուլղարական տերիտորիայի մի մասը (2566 կմ²) հանձնվում էր Հարավսլավիային։ Զինվորական ծառայությունն արգելվում էր, բանակը սահմանափակվում էր 20 հազ. մարդով, որոնք կամավոր էին հավաքագրվում։ Ռազմական ավիացիա և ռազմածովային նավատորմ (բացի 4 ականակիրներից ու 6 կատերներից) Բուլղարիան չէր կարող ունենալ։ Հաղթողների օգտին սահմանվեց 2250 մլն մարկ ոսկով ռեպարացիա։

Հաշտության պայմանագրի կնքումը Հունգարիայի հետ ձգձգվեց այն կապակցությամբ, որ այդ երկրում 1919 թ. մարտին ստեղծվեց սովետական հանրապետություն։ Անտանտը և ԱՄՆ-ը կազմակերպեցին ինտերվենցիա, Հունգարական հանրապետության դեմ նետելով ռումինական, չեխոսլովակյան և հարավսլավյան զորքեր, ինչպես նաև զորքեր ֆրանսիական գեներալ Ֆրանշե դ'Էսպերեի հրամանատարությամբ։ 1919 թ. օգոստոսի 1-ին Հունգարական Սովետական հանրապետությունն ընկավ։ 1920 թ. հունիսի 4-ին դաշնակիցները հաշտության պայմանագիր ստորագրեցին Հունգարիայի բուրժուական կառավարության հետ (Տրիանոնյան հաշտության պայմանագիր)։ Հունգարիան ճանաչում էր նոր սահմանները Ավստրիայի, Հարավսլավիայի, Ռումինիայի և Չեխոսլովակիայի հետ և նրանց օգտին հրաժարվում էր մի շարք տերիտորիաներից։ Ռումինիային էին հանձնվում Տրանսիլվանիան և Բանատի մի մասը, Հարավսլավիային՝ Խորվաթիան, Չեխոսլովակիային՝ Սլովակիան և Անդրկարպատյան Ուկրաինան, Ավստրիային՝ Բուրգենլանդը։ Հունգարիայի տերիտորիան կրճատվեց երեք, իսկ բնակչությունը՝ երկուսուկես անգամ։ Բանակը պետք է կոմպլեկտավորվեր ազատ վարձով և չպետք է գերազանցեր 35 հազ. մարդուց։ Արգելվում էր ավիացիա, տանկեր և ծանր հրետանի ունենալ։ Նախատեսվում էր ռեպարացիաների վճարում հաղթողներին։

Միջիմպերիալիստական հակասությունների և Թուրքիայում ծավալված ազգային-ազատագրական պայքարի կապակցությամբ այդ երկրի հետ պայմանագրի նախապատրաստումն ավարտվեց միայն 1920 թ.։ Թուրքիայի սուլթանական կառավարության հետ պայմանագիրը կնքվեց 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում (Ֆրանսիա) և հայտնի է որպես 1920 թ. Սևրի հաշտության պայմանագիր։ Պայմանագիրն արձանագրեց թուրքական տիրույթների բաժանումը իմպերիալիստական տերությունների միջև, ընդլայնեց կապիտուլյացիաների ռեժիմը և ըստ էության Թուրքիային զրկեց սուվերենությունից։ Սովետական Ռուսաստանի կողմից պաշտպանություն գտած թուրք ժողովրդի հաղթանակն ընդդեմ Թուրքիայում անգլո-հունական ինտերվենցիայի, վերացրեց Սևրի հաշտության պայմանագիրը, և 1923 թ. այն փոխարինվեց Լոզանի հաշտության պայմանագրով։

Վերսալյան հաշտության պայմանագրի առաջին մասը նախատեսում էր Ազգերի լիգայի ստեղծում և պարունակում էր այդ կազմակերպության կանոնադրությունը։ Ազգերի լիգայի ստեղծման գաղափարը ծագել է պատերազմի տարիներին որպես համաշխարհային պատերազմի հանդեպ ժողովուրդների ատելության և ապագայում պատերազմների կրկնությունից խուսափելու նրանց

ցանկության արտահայտություն։ Դաշնակից երկրների կառավարություններն այդ գաղափարին արձագանքեցին, որպեսզի հեշտացնեն Գերմանիայի դեմ մղվող պատերազմը մինչև հաղթական ավարտը հասցնելու անհրաժեշտության պրոպագանդան։ Ավելի ուշ Ազգերի լիգայի ստեղծման լոզունգը հակադրվում էր ընդհանուր դեմոկրատական հաշտության գաղափարին, որն առաջադրեց Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը։

Փարիզի հաշտության կոնֆերանսում տերությունները ձգտում էին այնպիսի լիգա ստեղծել, որպեսզի այն արդյունավետ միջոց լիներ Սովետական Ռուսաստանի և մյուս երկրներում հեղափոխական ազատագրական շարժման դեմ մղվող պայքարում։ Հաղթող երկրների հաշվարկներով Ազգերի լիգան պետք է իրենց օգներ հեգեմոնիա հաստատելու հետպատերազմյան աշխարհում։ Հենց վերջին խնդրի կապակցությամբ էլ հիմնադիր երկրների միջև ծավալվեց կատաղի պայքար։ Ֆրանսիացիները պնդում էին, որ լիգայի անդամները պետք է ունենան առավելագույն կոնկրետ պարտավորություններ և գրտնում էին, որ այն պետք է ունենա միջազգային զինված ուժեր և իր գլխավոր շտաբը։ Անգլիացիներն էլ երկյուղում էին, որ այդ բոլորը Ֆրանսիան կօգտագործի իր շահերի օգտին, և հանդես էին գալիս հօգուտ այն բանի, որ լիգայի անդամների պարտավորությունները ձևակերպվեին հնարավորին չափ ավելի անորոշ, որպեսզի ապագայում հնարավոր լիներ դրանց ցանկացած մեկնաբանություն տալ։

Համաձայնությունը ձեռք բերվեց անգլո-ամերիկյան առաջարկությունների բազայի վրա։ Ազգերի լիգայի նպատակ հռչակվեց միջազգային համագործակցության զարգացումը և միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովումը։ Լիգայի անդամները պարտավորություն էին ստանձնում հարգել և արտաքին ագրեսիայից պաշտպանել Լիգայի բոլոր անդամների տերիտորյալ անձեռնմխելիությունը։ Լիգայի այն անդամների դեմ, որոնք կդիմեին պատերազմի, կանոնադրությունը տնտեսական և այլ սանկցիաներ էր նախատեսում։

Անգլիան ու Ֆրանսիան ԱՄՆ-ի աջակցությամբ Ազգերի լիգայի հիմնումն օգտագործում էին, որպեսզի նրա օգնությամբ բաժանեին գերմանական գաղութները։ Որոշվեց ստեղծել, այսպես կոչված, մանդատային սիստեմ, ըստ որի գաղութները հանձնվում էին «առաջավոր» ազգերի խնամակալությանը, ազգեր, որոնք այդ խնամակալությունն իրականացնում էին որպես մանդատ ունեցողներ և Ազգերի լիգայի անունից։ Գաղութների բաժանումը կատարվեց 1919 թ. մայիսին։ Ազգերի լիգան այսպես օրինականացրեց ավարի բաժանումը հաղթողների միջև։

Փարիզի հաշտության կոնֆերանսի մշակած դրույթները դարձան հետպատերազմյան միջազգային հարաբերությունների վերսալյան սիստեմի հիմքը։ Այդ սիստեմն ի վիճակի չէր ապահովելու խաղաղությունն ու ժողովուրդների անվտանգությունը։ Այն ծվատվում էր ամենասուր հակասություններից։ Նրա ռեակցիոն բնույթն ամենից առաջ բացահայտում էր այն, որ նա ուղղված էր Սովետական Ռուսաստանի և համաշխարհային հեղափոխական շարժման դեմ։ Դրանում իր արտահայտությունն էր գտնում դարաշրջանի հիմնական՝ սոցիալիզմի և կապիտալիզմի միջև եղած հակասությունը։ Վերսալյան հաշտությունը չվերացրեց և չէր էլ կարող վերացնել իմպերիալիստական պետություններին բաժանող չափազանց սուր հակասությունները։ Բուրժուական աշխարհում գլխավոր հակասություն դարձավ անգլո-ամերիկյան հակասությունը, որը հետագայում, 30-ական թվականների սկզբին ետին պլան մղվեց անգլո-գերմանական հակասության համեմատությամբ։ Հաշտության նոր սիստեմը չթուլաց-

րեց, այլ ավելի շուտ ուժեղացրեց Եվրոպայում հեգեմոնիայի համար մղվող անգլո-ֆրանսիական պայքարը, որը 20-ական թվականների կեսերին ավարտվեց Անգլիայի ոչ տևական հաղթանակով։ Իմպերիալիստական հաշտությունը չէր կարող հաղթողների ու պարտվողների միջև չծնել անհաշտելի հակասություն, որը շուտով հասցրեց ռազմական բլոկների նոր սիստեմի ստեղծմանը, իսկ հետո էլ երկրորդ համաշխարհային պատերազմին։ Գաղութատիրության սիստեմի պահպանումն ու զարգացումն ըստ Փարիզի հաշտության կոնֆերանսի դրույթների, նշանակում էր հակասությունների խորացում գաղութատեր երկրների և գաղութների բազմամիլիոն ժողովուրդների միջև։ Այդ հակասությունների ամբողջ գումարը պետք է շուտով պայթեցներ հետպատերազմյան խաղաղ կարգավորման վերսալյան սիստեմը։ Լենինը նշում էր. «Ստացվել է այնպիսի դրություն, որ աշխարհի բնակչության $^{7}/_{10}$ գտնվում է ստրկացված վիճակում։ Այդ ստրուկները ցրված են ամբողջ աշխարհով մեկ և մատնված մի բուռ երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի հոշոտմանը։ Եվ ահա թե ինչո՞ւ այդ ամբողջ միջազգային իրավակարգը, կարգը, որը պահվում է Վերսալի հաշտությամբ, գտնվում է հրաբխի վրա...»[3]։

Վաշինգտոնի կոնֆերանսը

Եվրոպական տերությունների և ԱՄՆ-ի՝ Եվրոպայում տեղի ունեցող պատերազմով զբաղված լինելը Ճապոնիան օգտագործեց եռանդուն կերպով Չինաստանում հաստատվելու համար։ Պատերազմը խթանեց ճապոնական արդյունաբերության զարգացումը, և Ճապոնիան սկսեց իր մրցակիցներին՝ ԱՄՆ-ին և Անգլիային, եռանդուն կերպով դուրս մղել չինական շուկաներից։ Դա սրեց հակասությունը Հեռավոր Արևելքում։ Այստեղ հիմնական դարձան ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև գոյություն ունեցող հակասությունները։ «Այդ երկրների տնտեսական զարգացումը մի քանի տասնամյակների ընթացքում,— ասում էր Վ. Ի. Լենինը,— նախապատրաստել է անհաշիվ վառելանյութ, որն անխուսափելի է դարձնում այդ տերությունների կատաղի գոտեմարտը խաղաղ օվկիանոսին և նրա ափերին տիրելու համար։ Հեռավոր Արևելքի ամբողջ դիվանագիտական ու տնտեսական պատմությունը միանգամայն անտարակուսելի է դարձնում, որ անհրաժեշտ է կապիտալիզմի հողի վրա կանխել Ճապոնիայի և Ամերիկայի միջև հասունացող սուր կոնֆլիկտը»[4]։ Չինաստանում ճապոնական ֆինանսական թափանցումը կասեցնելու համար 1918 թ. ամերիկյան խոշոր բանկերի մի խումբ որոշեց Չինաստանին փոխառություններ տրամադրելու կոնսորցիում ստեղծել։ Կոնսորցիում ընդունվելու համար հրավիրվեցին Անգլիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի բանկերը։ Անգլիական և ֆրանսիական բանկերը, որոնց նույնպես մտահոգել էր ճապոնական ֆինանսական էքսպանսիան Չինաստանում, հաճույքով ընդունեցին հրավերը։ Ճապոնացիները ստիպված էին համաձայնություն տալ մասնակցելու կոնսորցիումին։ Չինաստանում ազգայինազատագրական շարժման վերելքն առաջատար իմպերիալիստական տերությունների բանկիրներին խանգարեց իրացնելու Չինաստանում կոլեկտիվ ֆինանսական ներխուժման իրենց պլանները։ Ազդեցին նաև այն հակասությունները, որոնք այդ երկրներին բաժանում էին հեռավորարևելյան քաղաքականության մեջ։

Չնայած պացիֆիստական անզուսպ ֆրազաբանությանը, որով ուղեկցվում էր Փարիզի հաշտության կոնֆերանսը, նրա ավարտից անմիջապես հետո ծավալվեց ռազմածովային սպառազինությունների մրցավազք, որի գլխավոր մասնակիցներն էին Անգլիան, ԱՄՆ-ը և Ճապոնիան։ Ի պատասխան Վիլսոնի առաջադրած «ծովերի ազատության» պահանջին, Լլոյդ-Ջորջը հայտարարեց, որ Անգլիան «իր վերջին գինեյն էլ կծախսի, որպեսզի պահպանի իր նավատորմի գերակշռությունը Միացյալ Նահանգների նավատորմի նկատմամբ»։ Ամերիկացիները դրան պատասխանեցին ռազմածովային շինարարության ընդարձակված ծրագրով։ Ճապոնիան նույնպես ընդունեց իր նավատորմի ընդլայնման ծրագիր։ Սակայն մի շարք երկրներին հարվածած 1920—1921 թթ. տնտեսական ճգնաժամը, մասսաների հակապատերազմական ուժեղ տրամադրությունները, Անգլիայի չցանկանալը բանը հասցնելու Ամերիկայի հետ հարաբերությունների հետագա վատացմանը, որից նա ֆինանսական կախման մեջ էր գտնվում, ԱՄՆ-ին, Անգլիային և Ճապոնիային դրդեցին այդ հարցի շուրջ պայմանավորվելու փորձ կատարել։

Անգլիայի, ԱՄՆ-ի և Ճապոնիայի հարաբերությունները չափազանց բարդացնում էր անգլո-ճապոնական դաշինքը, որը գոյություն ուներ դեռ 1902 թ. և ենթակա էր երկարաձգման 1921 թ.։ Այդ դաշինքը մինչև առաջին համաշխարհային պատերազմն ուղղված էր Ռուսաստանի և Գերմանիայի դեմ, իսկ պատերազմից հետո Ճապոնիայի հիմնական հակառակորդը, բացի իր «դաշնակից» Անգլիայից, դարձան Միացյալ Նահանգները, և այդ պատճառով դաշինքն օբյեկտիվորեն ուղղվեց ԱՄՆ-ի դեմ։ Այդ դաշինքի վրա էր հենվում Ճապոնիան՝ իր էքսպանսիոնիստական քաղաքականությունն իրականացնելով Չինաստանում և Հեռավոր Արևելքում։ ԱՄՆ-ը շահագրգռված էր անգլո-ճապոնական դաշինքի վերացմամբ։ ԱՄՆ-ը Ճապոնիայի նավատորմին, իսկ քանի դեռ գոյություն ուներ անգլո-ճապոնական դաշինքը, նաև այդ շրջանում գտնվող անգլո-ճապոնական միացյալ նավատորմին դիմակայելու ընդունակ զորեղ ռազմածովային նավատորմի կարիք էր զգում։ Այսպիսով, սերտ կապ գոյություն ուներ Հեռավոր Արևելքում տիրող վիճակի, անգլո-ճապոնական դաշինքի և ռազմածովային սպառազինությունների ասպարեզում մղվող անգլո-ամերիկա-ճապոնական պայքարի միջև։

Լոնդոնում այն հետևությանը հանգեցին, որ ավելի լավ կլինի այդ բոլոր հարցերի շուրջը պայմանավորվել ԱՄՆ-ի հետ։ Դա հնարավոր դարձրեց ԱՄՆ-ի նախաձեռնությամբ 1921 թ. նոյեմբերի 12-ին կոնֆերանսի գումարումը՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ճապոնիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի և Չինաստանի մասնակցությամբ։ Սովետական Ռուսաստանը, թեև նա ոչ միայն եվրոպական, այլև ասիական ու խաղաղօվկիանոսյան տերություն է, Վաշինգտոն՝ կոնֆերանսի չհրավիրվեց, այնպես, ինչպես և Հեռավորարևելյան Հանրապետությունը։ Սովետական կառավարությունը բողոքեց այդ իմպերիալիստական կամայականության դեմ և հայտարարեց, որ չի ճանաչելու կոնֆերանսի որոշումները և իրեն գործողությունների լիակատար ազատություն է վերապահելու բոլոր այն հարցերում, որոնք կքննարկվեն կոնֆերանսում։

Վաշինգտոնի կոնֆերանսն արձանագրեց Հեռավոր Արևելքում իմպերիալիստական տերությունների միջև գոյություն ունեցող ուժերի այն հարաբերակցությունը, որն առաջացել էր առաջին համաշխարհային պատերազմից հետո։ Կոնֆերանսում անմիջապես լուծվեց անգլո-ճապոնական դաշինքի հարցը։ Անգլիական պատվիրակությունը Վաշինգտոն ժամանեց, արդեն հաշտվելով այդ դաշինքից հրաժարվելու անհրաժեշտության հետ։ Հարցի լուծումը խթանվում էր ոչ միայն նրանով, որ այդ բանին էր համառորեն ձգտում ԱՄՆ-ը, այլև անգ-

---

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 402—403։

[4] Վ. Ի. Լենին, նույն, հ. 36, էջ 404։

լիական դոմինիոնների գրաված դիրքի առնչությամբ։ Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան և Հարավ-Աֆրիկյան Միությունը նույնպես անհրաժեշտ էին համարում դաշինքի վերացումը։ Նրանք երկյուղում էին, որ դաշինքի պահպանումը կարող է ապագայում անգլիական դոմինիոններին ստիպել հանդես գալու Ճապոնիայի կողմից՝ Ճապոնիայի և ԱՄՆ-ի միջև պատերազմ ծագելու դեպքում։ Իսկ այդ նրանց ամենևին ձեռնտու չէր։ 1921 թ. դեկտեմբերի 13-ին ստորագրվեց չորս տերությունների պայմանագիրը, որի հոդվածներից մեկը նախատեսում էր անգլո-ճապոնական դաշինքի գործողության դադարեցում։ Դա Անգլիայի խոշոր պարտությունն էր, ԱՄՆ-ի մեծ հաջողությունը։

Ըստ չորս տերությունների պայմանագրի, ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և Ճապոնիան համաձայնվեցին հարգել իրենցից յուրաքանչյուրի իրավունքը խաղաղ օվկիանոսի շրջանի կղզիներում գտնվող իրենց տիրույթների նկատմամբ և պայմանավորվեցին փոխադարձ կոնսուլտացիաների մասին, եթե այդ իրավունքները որևէ այլ տերության կողմից վտանգի ենթարկվեին։ Պայմանագրում գլխավորը կղզիներում գտնվող տիրույթների փոխադարձ երաշխիքի վերաբերյալ հոդվածներն էին, որոնք նշանակում էին, որ Միացյալ Նահանգները ճանաչում են խաղաղ օվկիանոսի՝ նախկինում Գերմանիային պատկանած կղզիների այն բաշխումը, որը կատարվեց Փարիզի հաշտության կոնֆերանսում։ Դրանով իսկ վերացվում էին Հեռավոր Արևելքում ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի միջև եղած մի քանի հակասություններ և ԱՄՆ-ի ղեկավարությամբ ստեղծվում էր հեռավորարևելյան քաղաքական Անտանտ։ Քանի որ այդ ժամանակ չորսի պայմանագրի մասնակիցներն աշխարհի այդ շրջանում իմպերիալիստական զորեղ հակառակորդներ չունեին, այդքանով էլ պայմանագիրն ուղղված էր, նախ, Սովետական Միության դեմ և, երկրորդ, Չինաստանի դեմ, ուր 1919 թ. մայիսից դեմոկրատական հեղափոխություն էր ծավալվում։

Պայմանագիրը դարձավ հիմք, որի վրա ձեռք բերվեցին կոնֆերանսի ընդունած մյուս համաձայնագրերը։ Ռազմածովային սպառազինությունների հարցի քննարկման ժամանակ անգլիացիներն ու ճապոնացիները ջանում էին իրենց համար ձեռք բերել ռազմածովային շինարարության բարենպաստ հնարավորություններ։ Իսկ ամերիկացիներն աշխատում էին լուրջ սահմանափակումներ մտցնել, որպեսզի արգելակեն Անգլիայի և Ճապոնիայի ծովային նավատորմի աճի տեմպերը։ Համաձայնությունը ձեռք բերվեց ամերիկյան առաջարկությունների բազայի վրա, Անգլիան և Ճապոնիան զիջեցին։ 1922 թ. փետրվարի 6-ին հինգ տերություններ՝ ԱՄՆ-ը, Անգլիան, Ճապոնիան, Ֆրանսիան և Իտալիան, պայմանագիր կնքեցին ծովային սպառազինությունների սահմանափակման մասին։ Այդ տերությունների գծային նավատորմների միջև սահմանվում էր հարաբերակցություն հետևյալ համամասնությամբ՝ 5:5:3:1,75: 1,75։ ԱՄՆ-ը, Բրիտանական կայսրությունը և Ճապոնիան համաձայնեցին ստատուս-քվո պահպանել խաղաղօվկիանոսյան կղզիներում գտնվող տիրույթների ամրությունների և ծովային բազաների նկատմամբ։ Սուզանավերի թիվը սահմանափակելու վերաբերյալ պայմանավորվելու փորձերն ապարդյուն ավարտվեցին։

Հինգ տերությունների պայմանագիրը նշանակում էր ԱՄՆ-ի առաջին հաղթանակն Անգլիայի նկատմամբ՝ ծովերում իշխելու համար մղված պայքարում։

1922 թ. փետրվարի 6-ին Վաշինգտոնի կոնֆերանսն ընդունեց ինը տերությունների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, Իտալիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի և Չինաստանի պայմանագիրը, որը հռչակում էր Չինաստանի սուվերենության և տերիտորյալ ամբողջականության հարգման

սկզբունքը։ Դա մի դատարկ դեկլարացիա էր, որը չէր ամրապնդվում որևէ գործնական միջոցառումով։ Պայմանագիրը չէր վերացնում Չինաստանի հետ իմպերիալիստական տերությունների կնքած անիրավահավասար պայմանագրերի սիստեմը։ Միաժամանակ պայմանագիրը բոլոր ազգերին պարտավորեցնում էր Չինաստանի ամբողջ տերիտորիայում կատարվող առևտրի և արդյունաբերության զարգացման ասպարեզում հետևել «հավասար հնարավորությունների» սկզբունքին։ Դա արդեն Չինաստանի համատեղ թալանման վերաբերյալ կոնկրետ համաձայնագիր էր մի խումբ իմպերիալիստական տերությունների միջև, որոնք կարողացան իմպերիալիստական Ճապոնիային ստիպել Չինաստանում որոշ չափով նեղվել՝ հօգուտ իրենց։ Ճապոնիան ստորագրեց պայմանագիրը, բայց պայքարը հանուն Չինաստանի կողոպտման գերադասելի և մենաշնորհային իրավունքի շդադարեցրեց։

Վաշինգտոնում ձեռք բերված համաձայնագրերն այն համաձայնագրերի լրացումն ու զարգացումն էին, որոնք մշակվել էին Փարիզի հաշտության կոնֆերանսում։ Դրանցով ավարտվում էր հետպատերազմյան հաշտության վերսալ-վաշինգտոնյան սիստեմի ստեղծումը։ Ինչպես և փարիզյան համաձայնագրերը, Վաշինգտոնի պայմանագրերն ուղղված էին Սովետական Ռուսաստանի և Չինաստանում մղվող հեղափոխական շարժման դեմ։ Դրանք միայն ժամանակավորապես կարգավորեցին Վաշինգտոնի կոնֆերանսի մասնակիցներին բաժանող հակասությունները և, ինչպես և վերսալյան սիստեմի պայմանագրերը, կարճատև կյանք ունեցան։

Սովետական Ռուսաստանի պայքարը հանուն խաղաղության։ Ջենովայի և Հաագայի կոնֆերանսները

1920 թ. Սովետական Ռուսաստանը վռնդեց օտարերկրյա ինտերվենտներին։ Ռուսաստանի աշխատավորները հերոսական ջանքերով չափազանց ծանր պայքարում ավարտեցին այն գործը, որը սկսվել էր 1917 թ. հոկտեմբերին և պաշտպանեցին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նվաճումները։ Վ. Ի. Լենինն այն ժամանակ ասում էր, որ մենք մեզ համար նվաճեցինք այնպիսի պայմաններ, որոնց դեպքում կարող ենք գոյություն ունենալ կապիտալիստական տերությունների կողքին։ Սովետական երկիրը դադար առավ, սկսվեց բուրժուական աշխարհի հետ նրա հարաբերությունների նոր գոտին։

Լենինն ուսուցանում էր, որ նվաճված դադարը կարող է չափազանց կարճատև լինել, որ բուրժուական աշխարհը ռազմարշավով անխուսափելիորեն նորից է հարձակվելու սովետական երկրի վրա, որ դադարը հարկավոր է օգտագործել Սովետական Ռուսաստանում սոցիալիստական հասարակություն կառուցելու համար և, որ դրա համար Սովետական Ռուսաստանի աշխատավորներն ունեն անհրաժեշտ պայմաններ։ Լենինի առաջարկությամբ կուսակցության X համագումարը 1921 թ. մարտին որոշում ընդունեց «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու մասին։ Երկրի ներսում սոցիալիզմի և կապիտալիզմի միջև մղվող պայքարը փոխադրվեց տնտեսական ոլորտը։ Իմպերիալիստական տերությունների ղեկավարները նէպը համարեցին նահանջ և որոշեցին, որ եթե իրենք դրսից ճնշում գործադրեն սովետական երկրի վրա տնտեսության ասպարեզում, ապա վերջ ի վերջո կհասնեն կապիտալիզմի վերականգնմանը Ռուսաստանում։ Երկրի ներսում գտնվող կապիտալիստական տարրերը դասակարգային դաշինքով այդպես մեկ անգամ էլ միացան արտաքին բուրժուական աշխարհի հետ՝ սոցիալիզմի դեմ մղվող համատեղ պայքարում։ Իմպերիալիստական տերությունները ռազմական ինտերվենցիայից, որը ոչ մի հաջողության չհասցրեց, անցան տնտե-

սական ինտերվենցիայի միջոցներին, հուսալով, թե այն ցանկալի արդյունք կտա իրենց։ Նրանց դրան էր մղում նաև 1920—1921 թթ. տնտեսական ճգնաժամը, որից դուրս գալը նրանք հույս ունեին լրջորեն հեշտացնել Սովետական Ռուսաստանի ռեսուրսների շահագործման հաշվին։

Այդ ռեսուրսներին նրանք մոտենում էին, պահանջելով վճարել ցարական Ռուսաստանի և ժամանակավոր կառավարության պարտքերը, ինչպես նաև վերացնել օտարերկրյա կապիտալ ներդրումների ազգայնացումը Ռուսաստանում։ Այդ պայմանների ընդունումը երկրի էկոնոմիկան ուղղակի կախման մեջ կդներ օտարերկրյա կապիտալից, որը կօգտագործվեր Սովետական Ռուսաստանի հասարակական կարգերը փոխելու համար։ Սովետական կառավարությունը չափազանց բարդ դրության մեջ ընկավ։ Երկրի տնտեսությունը վերականգնելու համար նա արտաքին աշխարհի հետ տնտեսական կապերի և առևտրի կարիք էր զգում։ Նա ձգտում էր այդ աշխարհի հետ նորմալ դիվանագիտական հարաբերություններ հաստատել, որը, նախ, պետք է ամրապնդեր նվաճված դադարը և կապիտալիստական աշխարհի հետ ունեցած հարաբերությունները փոխադրեր խաղաղ գոյակցության ռելսերի վրա և, երկրորդ, նպաստեր փոխշահավետ առևտրական հարաբերությունների զարգացմանն արտաքին աշխարհի հետ։ Այդ պատճառով սովետական կառավարությունը մանևրում էր, աշխատելով իր նպատակներին հասնել առանց այնպիսի զիջումներ անելու, որոնք շոշափեին սովետական հասարակարգի հիմքերը։

1921 թ. հոկտեմբերին սովետական կառավարությունը մեծ տերություններին ուղարկեց մի նոտա, որն առաջարկություն էր պարունակում կոնֆերանս գումարելու մասին՝ Եվրոպայում խաղաղություն և տնտեսական համագործակցություն հաստատելու հարցերը քննարկելու համար, չբացառելով նաև ռուսական պարտքերի հարցը։ Իմպերիալիստական աշխարհում սուր պայքար ծավալվեց այդ հարցի առթիվ։ Այն շրջանները, որոնք պատրաստ չէին հրաժարվելու սովետական իշխանության դեմ զինված պայքարի պլաններից, հանդես էին գալիս կոնֆերանս գումարելու դեմ։ Այդպիսին էր ֆրանսիական կառավարության դիրքը։ Բուրժուազիայի ագրեսիվորեն տրամադրված մասը, որը հանդես էր գալիս հօգուտ կոնֆերանսի գումարման, առաջարկում էր վերջնագրային ձևով սովետական կառավարությունից պահանջել մի շարք նախնական պայմաններ ընդունելու։ Առավել ռեալիստորեն տրամադրված գործիչները, ամենից առաջ Անգլիայի պրեմիեր մինիստր Լլոյդ-Ջորջը, հանդես էին գալիս կոնֆերանս գումարելու և սովետական կառավարության ներկայացուցիչներին բանակցությունների համար այնտեղ հրավիրելու օգտին։

1922 թ. հունվարի 7-ին իտալական կառավարությունը մի քանի տերությունների հանձնարարությամբ սովետական կառավարությանն ուղարկեց Ջենովայի միջազգային կոնֆերանսին մասնակցելու հրավեր։ Հաջորդ օրը Մոսկվան պատասխանեց համաձայնությամբ։ Կոնֆերանսին նախապատրաստվելու ընթացքում, փետրվարի 22-ին ՌՍՖՍՀ-ն, Ադրբեջանական ՍՍՀ-ն, Հայկական ՍՍՀ-ն, Վրացական ՍՍՀ-ն, Ուկրաինական ՍՍՀ-ն, Բելոռուսական ՍՍՀ-ն, Բուխարայի Ժողովրդական Սովետական Հանրապետությունը, Խորեզմի Սովետական Հանրապետությունը և Հեռավորարևելյան Հանրապետությունը համաձայնագիր կնքեցին, որով ՌՍՖՍՀ կառավարությանը հանձնարարեցին ներկայացնել իրենց շահերը Ջենովայում։ Այսպես ստեղծվեց սովետական հանրապետությունների միասնական դիվանագիտական ճակատը Ջենովայի կոնֆերանսի նախօրեին։

Կոնֆերանսը բացվեց 1922 թ. ապրիլի 10-ին։ Այնտեղ ժամանեցին 29

երկրների (իսկ անգլիական դոմինիոններն էլ հաշվի առնելով 34 երկրների) ներկայացուցիչներ։ ԱՄՆ-ը հրաժարվեց կոնֆերանսին մասնակցել իր արտաքին քաղաքականության «մեկուսացման» կուրսն ուժի մեջ մտնելու պատճառով։

Գ. Վ. Չիչերինը սովետական պատվիրակության անունից հրապարակեց պետությունների միջև կայուն խաղաղություն հաստատելու ծրագիր։ Սովետական արտաքին գործերի ժողկոմի առաջադրած դրույթները՝ կոնֆերանսին խրնամքով նախապատրաստվելու ուղղությամբ կուսակցության Կենտկոմի և Վ. Ի. Լենինի կատարած աշխատանքի արդյունքն էին։ Սովետական պատվիրակությունը հայտարարեց Սովետական Ռուսաստանի պատրաստակամության մասին՝ բոլոր երկրների հետ տնտեսական կապեր հաստատելու փոխադարձության, իրավահավասարության և լիակատար, անվերապահ ճանաչման հիման վրա։ «Մնալով կոմունիզմի սկզբունքների տեսակետի վրա,— հայտարարեց Գ. Վ. Չիչերինը,— ռուսական պատվիրակությունը գտնում է, որ ներկայիս պատմական դարաշրջանում, որը հնարավոր է դարձնում հին և ծնունդ առնող նոր սոցիալական կարգի զուգահեռ գոյությունը, սեփականության այդ երկու սիստեմները ներկայացնող պետությունների միջև տնտեսական համագործակցությունը հրամայողական անհրաժեշտություն է ընդհանուր տնտեսական վերականգնման համար»։ Սովետական պատվիրակությունն առաջադրեց սպառազինությունների ընդհանուր կրճատման վերաբերյալ առաջարկություն։ Դա տարբեր սոցիալ-տնտեսական սիստեմներ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքի ներգործուն հռչակումն էր սովետական կառավարության կողմից, խաղաղության սովետական քաղաքականության մանիֆեստը։ Ընդհանուր խաղաղության հաստատմանը նպաստելու համար սովետական կառավարությունը պատրաստ էր ճանաչել ցարական կառավարության նախապատերազմյան պարտքերը և հակապահանջներ չներկայացնել այն վնասների համար, որոնք սովետական հանրապետությանը պատճառել էին իմպերիալիստական տերությունները։ Ընդ որում նա արդարացի պայման առաջադրեց, որպեսզի կապիտալիստական երկրները սովետների երկրին փոխառություն տրամադրեին ժողովրդական տնտեսության վերականգնման համար և որպեսզի սովետական պետությունն իրավական ճանաչում ստանար։

Կոնֆերանսի կազմակերպիչները սովետական պատվիրակությանը հանձնեցին վաղօրոք պատրաստված մի հուշագիր, որը պահանջներ էր պարունակում սովետական կառավարության կողմից ցարական և ժամանակավոր կառավարությունների բոլոր պարտքերը վճարելու, օտարերկրացիների ազգայնացված սեփականությունն իրենց վերադարձնելու, «ռուսական պարտքի հանձնաժողով» ստեղծելու, Սովետական Ռուսաստանում օտարերկրացիների համար հատուկ ռեժիմ սահմանելու, արտաքին առևտրի մենաշնորհը երկրում վերացնելու մասին։ Եթե իմպերիալիստական տերությունների այդ պահանջներն իրականացվեին, դրանք կապահովեին կապիտալիզմի վերականգնումը սովետական երկրում։

Սովետական պատվիրակությունը մերժեց այդ պահանջները և առաջադրեց հակահավակնություններ, պահանջելով, որ իմպերիալիստական տերությունները Ռուսաստանին հատուցեն օտարերկրյա ինտերվենցիայի պատճառած վնասները։ Նշվեց 39 մլրդ. ռուբլու գումար[5]։ Սովետական պատվիրակներն ընդ-

[5] Ցարական Ռուսաստանի և Կերենսկու կառավարության պատերազմական և նախապատերազմյան պարտքերի գումարը, որն իմպերիալիստները պահանջում էին վճարել, կազմում էր 19 մլրդ ռուբլի։

գծեցին, որ եվրոպական տնտեսության վերականգնման կարևոր պայմաններից մեկը սովետական պետության իրավաբանական ճանաչումն է բուրժուական երկրների կողմից։ Հայտնվեց ազգայնացված ձեռնարկություններից մի քանիսը վարձակալությամբ կամ կոնցեսիայով հանձնելու սովետական կառավարության պատրաստակամությունը։

Սովետական կառավարությունը հաստատակամորեն պաշտպանում էր իր երկրի շահերը, և կոնֆերանսի կազմակերպիչները չկարողացան նրա վրա փաթաթել կապիտուլյացման մշակված պայմանները։ Դա ուժեղացրեց տարաձայնությունները մեծ տերությունների միջև։ Ֆրանսիան ձգտում էր ձախողել կոնֆերանսը։ Անգլիան և Իտալիան փորձում էին ինչ-որ դրական ելք գտնել։ Կոնֆերանսն ավարտվեց մայիսի 19-ին։ Որոշվեց երկու հանձնաժողով ստեղծել կոնֆերանսում քննված հարցերի քննարկումը շարունակելու համար. հանձնաժողովները պետք է շուտով հավաքվեին Հաագայում։

Իմպերիալիստական տերությունների համար Ջենովայի կոնֆերանսն ավարտվեց ձախողումով՝ նրանք չհասան իրենց նպատակներին։ Սովետական կառավարության համար դա հաջողություն էր։ Նա կոնֆերանսի ամբիոնն օգտագործեց իր խաղաղասիրական կոնստրուկտիվ ծրագիրը լայնորեն շարադրելու համար, որն այն պայմաններում արտակարգ կարևոր էր։ Բացի այդ, նա կոնֆերանսն օգտագործեց Գերմանիայի հետ չափազանց կարևոր պայմանագիր կնքելու համար։ Գերմանիայի և ՌՍՖՍՀ-ի միջև դիվանագիտական ու հյուպատոսական հարաբերությունների անհապաղ վերսկսման մասին պայմանագիրը ստորագրվեց 1922 թ. ապրիլի 16-ին Ռապալոյում (Ջենովայի արվարձան)։ Երկու տերությունները հրաժարվում էին միմյանց հատուցելու ռազմական կամ այլ վնասները, որոնք պատերազմի ժամանակ պատճառվել էին նրանց կամ նրանց քաղաքացիներին։ Նշանակություն ուներ նաև Ռուսաստանում եղած գերմանական պետական և մասնավոր սեփականության ազգայնացման ճանաչումը Գերմանիայի կողմից։ Դրանով իսկ ճեղքվեց այդ կարևոր հարցի կապակցությամբ բուրժուական միասնական ճակատը և նախօրինակ ստեղծվեց ուրիշ երկրների հետ ունեցած հարաբերություններում այն լուծելու համար։ Սովետական կառավարությունը հայտարարեց Գերմանիայից ռեպարացիաներ ստանալուց իր հրաժարվելու մասին։ Երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունները պետք է զարգանային առավելագույն բարենպաստության սկզբունքի հիման վրա։ Ռապալոյում կնքված պայմանագիրը Սովետական Ռուսաստանի իրավաբանական ճանաչումն էր խոշոր տերություններից մեկի կողմից. նրա մեջ փաստորեն արձանագրվեց սեփականության երկու սիստեմների՝ սոցիալիստականի և կապիտալիստականի իրավահավասարությունը։ ՀԿԳԿ-ն 1922 թ. մայիսի 17-ի որոշման մեջ բարձր գնահատեց սովետագերմանական պայմանագիրը և սովետական կառավարությանն առաջարկեց բուրժուական երկրների հետ իր ունեցած հարաբերություններում միայն այդօրինակ պայմանագրերի դիմել։ Ռապալոն լենինյան դիվանագիտության խոշոր հաջողությունն էր, դիվանագիտություն, որը հմտորեն էր օգտագործում պարտվողների և հաղթողների միջև եղած հակասությունները հօգուտ Սովետական Ռուսաստանի շահերի, հօգուտ սոցիալիզմի շահերի։

Ջենովայի կոնֆերանսի շարունակությունը եղավ հունիսի 15-ից հուլիսի 20-ը Հաագայում տեղի ունեցած կոնֆերանսը։ Այստեղ, ի տարբերություն Ջենովայի, մասնակցում էին ոչ թե քաղաքագետները, այլ փորձագետները, բուրժուական ֆինանսական ու արդյունաբերական աշխարհի ներկայացուցիչները, Ռուսաստանում ազգայնացված ձեռնարկությունների նախկին տերերը։ Բայց

Սովետական Ռուսաստանի նկատմամբ բուրժուական աշխարհի վարած գիծը մնում էր նախկինը։ Փորձագետները պնդում էին վերադարձնել Ռուսաստանում օտարերկրացիների ունեցած սեփականությունը կամ փոխհատուցել դրանց համար։ Սովետական պատվիրակությունը չէր կարող դրան համաձայնել, բայց առաջարկեց մեծ թվով տարբեր տնտեսական օբյեկտներ կոնցեսիայով հանձնել օտարերկրյա կապիտալին։ Ընդ որում, նկատի էր առնվում, որ սովետական ժողովրդական տնտեսության մեջ հրամանատարական բարձունքները գտնվում են պետության ձեռքում։ Այսպիսով, սովետական կառավարությունը պատրաստ էր իրեն դե-յուրե ճանաչելու պայմանով սկզբունքորեն ճանաչել նախապատերազմյան պարտքերը և ազգայնացված ունեցվածքի նախկին տերերին փոխհատուցել կոնցեսիաներ տրամադրելու միջոցով։ Դա ճկուն դիվանագիտություն էր, կոմպրոմիսների դիմելու պատրաստականություն։ Սակայն իմպերիալիստական տերությունների փորձագետներն ըստ էության պահանջում էին սովետական կառավարության կապիտուլյացում այդ կարևորագույն հարցերի բնագավառում։ Ի վերջո Հաագայի կոնֆերանսն անպտուղ եղավ։

Ջենովայի և Հաագայի կոնֆերանսների ընթացքում համոզիչ կերպով ցուցադրվեց սովետական կառավարության ռեալիստական մոտեցումը միջազգային պրոբլեմների լուծման գործում։ Բուրժուական աշխարհի հետ խաղաղ գոյակցությունն ապահովելու նպատակով սովետական կառավարությունը հանդես եկավ մի շարք քաղաքական ու տնտեսական պրոբլեմների լուծման կոմպրոմիսային ծրագրով։ Սակայն իմպերիալիստական կառավարությունները ձգտում էին ոչ թե Սովետական Ռուսաստանի հետ գոյակցության, այլ նրա խեղդմանը և դրա համար էլ մերժելով սովետական խելացի առաջարկությունները, երկու կոնֆերանսներն էլ ձախողեցին։ Ի վերջո, նրանք սխալվեցին իրենց հաշիվներում։ Նրանք հարկադրված էին շուտով դիմել և՛ ՍՍՀՄ-ի հետ առևտուր անելուն, և՛ դիվանագիտական հարաբերություններ հաստատելով հանդերձ նրան ճանաչելուն, բայց նրա կողմից կատարված այնպիսի զիջումներ, որոնք նրանք չընդունեցին Ջենովայում և Հաագայում, նրանք այլևս երբեք չստացան։

1922 թ. վերջին կազմվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, որը միավորեց նախկին ցարական Ռուսաստանի տերիտորիայում առաջացած բոլոր սովետական հանրապետությունները։ Միասնական միութենական պետության մեջ սովետական հանրապետությունների միավորումը նրանց հաջողությունների ու աճի արդյունքն էր։ Այն թելադրվում էր նրա պաշտպանունակության ամրապնդման նկատառումներով և միասնական արտաքին քաղաքականություն վարելու անհրաժեշտությամբ, արտաքին քաղաքականություն, որը, ինչպես ցույց տվեց Ջենովայի կոնֆերանսը, չափազանց արգասավոր էր։

Միջազգային հարաբերությունները Մերձավոր Արևելքում։ Լոզանի կոնֆերանսը

Փարիզի հաշտության կոնֆերանսում «Թուրքական ժառանգությունը» բաժանելու ժամանակ հաղթողները գժտվեցին և երկար ժամանակ չէին կարողանում Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի պայմաններ մշակել։ Այն հողերի թվին, որոնց համար պայքար էր գնում, պատկանում էին բուն Թուրքիայի տերիտորիաները և նախկին Օսմանյան կայսրության մասերը՝ Արաբիան, Սիրիան, Պաղեստինը, Միջագետքը, Եգիպտոսը և արաբներով բնակեցված մի քանի այլ շրջաններ։ Այդ տերիտորիաներն իմպերիալիստների համար երկակի հետաքրքրություն էին ներկայացնում՝ որպես Մերձավոր Արևելքի և Միջերկրական ծովի արևելյան շրջանում գտնվող ծայրահեղ կարևոր ստրատեգիական դիրքեր և որպես նավթի հարուս-

տագույն աղբյուրներ։ Պատերազմի ժամանակ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Ռուսաստանը մի շարք համաձայնագրեր կնքեցին «Թուրքական ժառանգության» բաժանման մասին, և հիմա նրանք բոլորը, բացի Ռուսաստանից, որը 1917 թ. վերջ էր տվել իմպերիալիստական քաղաքականությանը, մտադիր էին պոկել ավարի իրենց բաժինը, ինչպես նաև ինչ-որ բան փախցնել իր պարտնյորի բաժնից։ Մթնոլորտն է՛լ ավելի էր շիկանում այն կապակցությամբ, որ ԱՄՆ-ը հավակնություններ հայտնեց Մերձավոր Արևելքի բաժանմանը մասնակցելու մասին, իսկ Հունաստանը, որին պաշտպանում ու հրահրում էր անգլիական կառավարությունը, հավակնում էր Թուրքիայի մի քանի տերիտորիաների և կղզիներում գտնվող նրա տիրույթների նկատմամբ։ Առավել ամուր էին Անգլիայի դիրքերը, որովհետև նրա զորքերն ու նավատորմը իշխում էին այդ շրջանում։

Միայն 1920 թ. օգոստոսի 10-ին հաջողվեց Թուրքիայի հետ կնքել հաշտության պայմանագիր (Սևրի), որն իմպերիալիստական հաշտության աղաղակող օրինակ էր։ Իմպերիալիստներն իրենց միջև բաժանեցին ոչ միայն նախկին Օսմանյան կայսրության բոլոր տիրույթները, ընդ որում ավարի առյուծի բաժինն Անգլիային հասավ, այլև անդամահատվեց բուն Թուրքիայի տերիտորիան։ Հաշտության պայմանագիրը Թուրքիայում վերականգնում էր կապիտուլացիաների ռեժիմը հօգուտ հաղթող տերությունների։ Երկրի տնտեսությունը և ամենից առաջ ֆինանսները, դրվում էին անգլո-ֆրանս-իտալական հատուկ հանձնաժողովի վերահսկողության տակ։

Պայմանագրի գաղութարարական բնույթը այն պատճառներից մեկը եղավ, որ վերջին հաշվով այդ պայմանագիրը ծնվեց մեռած վիճակում։ Թուրքիային այդ հաշտությունը թելադրած հաղթող երկրները քաղաքականապես կարճատես գտնվեցին։ Նրանք չտեսան, որ Մերձավոր Արևելքում և ամենից առաջ Թուրքիայում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությամբ հասունանում էր ազգային-ազատագրական շարժումը։ Թուրքիայում այդ շարժումը գլխավորեց Քեմալ փաշան։ Շարժման մասնակիցները հանդես էին գալիս 1918 թ. որոշված սահմանների պահպանման օգտին, հանուն անկախության ու սուվերենության, հանուն կապիտուլացիաների ռեժիմի վերացման և երկրի ֆինանսների նկատմամբ իմպերիալիստական տերությունների վերահսկողության վերացման։

Սովետական Ռուսաստանն արժեքավոր օժանդակություն ցույց տվեց քեմալական շարժմանը։ 1921 թ. մարտի 16-ին ՌՍՖՍՀ-ի և Թուրքիայի միջև կնքվեց բարեկամության և եղբայրության մասին պայմանագիրը։ Թուրքիայի հետ նույնանման պայմանագրեր ստորագրեցին Ուկրաինայի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական հանրապետությունները։ Այդ պայմանագրերով սովետական հանրապետությունները քեմալական կառավարությանը ճանաչում էին որպես անկախ Թուրքիայի միակ օրինական իշխանություն, ճանաչում էին այն սահմանները, որոնք պաշտպանում էին քեմալականները։ Պայմանագրերը հռչակում էին, որ իմպերիալիստների դեմ մղվող պայքարում երկու կողմերը գործում են եղբայրության ու համերաշխության ոգով։ Սովետական հանրապետությունները հրաժարվում էին Թուրքիայի համար անձեռնտու համաձայնագրերից, որոնք նա անցյալում կնքել էր ցարական Ռուսաստանի հետ։ Ինքը ծայրահեղ դժվար նյութական վիճակում գտնվելով, Սովետական Ռուսաստանը Թուրքիային այն ժամանակվա համար մեծ օգնություն ցույց տվեց սպառազինությամբ, ռազմամթերքով և ոսկով։ Սովետական օգնությունը կարևոր ավանդ եղավ իմպերիալիստների դեմ Թուրք ժողովրդի տարած հաղթանակի գործում, երբ իմպերիալիստները փորձ ձեռնարկեցին զենքի ուժով ճնշելու Թուրքական ազգային-ազատագրական շարժումը։ Որպես գլխավոր հարվածային ուժ հանդես էր գալիս հունական բանակը, որին հանդերձավորել էր անգլիական կառավարությունը։ Սկզբում մի քանի հաղթանակներ տանելով, հույները 1921 թ. օգոստոս-սեպտեմբերին գլխովին ջախջախվեցին Թուրքական ազգային-ազատագրական զորքերի կողմից և շպրտվեցին դեպի ծովը։

1922 թ. հոկտեմբերի 11-ին զինադադար ստորագրվեց։ Սևրի պայմանագիրը պատմության աղբանոց նետվեց։ Ռազմական գործողությունները Թուրքիայի և Հունաստանի միջև դադարեցվում էին։ Դաշնակիցները ստիպված էին նոր բանակցություններ սկսել Քեմալի կառավարության հետ։ Թուրքիայի հետ հաշտության նոր պայմանագիր մշակելու համար 1922 թ. նոյեմբերի 20-ին Լոզանում գումարվեց միջազգային կոնֆերանս։

Լոզան ժամանեցին Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի, Ճապոնիայի, Ռումինիայի, Հարավսլավիայի և Թուրքիայի ներկայացուցիչները։ Սովետական պատվիրակությանը, որը ներկայացնում էր ՌՍՖՍՀ-ին, Ուկրաինային և Վրաստանին, թույլ տրվեց կոնֆերանսին մասնակցել միայն սևծովյան նեղուցների ռեժիմի վերաբերյալ հարցի քննարկմանը մասնակցելու համար։ Թուրքական կառավարության պատվիրակությունը մոռանալով, որ Թուրքիան դեռ անցյալ տարի էր սովետական հանրապետությունների հետ կնքած պայմանագրով պարտավորվել իմպերիալիստների դեմ մղվող պայքարում գործել Սովետական Ռուսաստանի հետ եղբայրության ու համերաշխության ոգով, սկսեց հաճոյանալ անգլիացիների առջև, որոնք առաջատար դեր էին խաղում կոնֆերանսում։ Թուրքական պատվիրակությունը չպնդեց սովետական պատվիրակությանը կոնֆերանսում լիակատար իրավունքներ տալու մասին։ Իմպերիալիստների հետ Թուրքերի կատարած այդ սիրախաղը սովետական պատվիրակությանը զրկեց կոնֆերանսի ամբողջ ընթացքում Թուրքիային գործուն աջակցություն ցույց տալու հնարավորությունից։ Թուրքական կառավարության այդ վարքագիծը բացատրվում էր նրանով, որ քեմալական հեղափոխությունն ուներ բուրժուական բնույթ և Թուրքական բուրժուազիան, որը զինված պայքարի թեժ ժամանակաշրջանում սովետական հանրապետությունների օգնությունն էր որոնում, հաղթանակ նվաճելուց հետո շրջվեց դեպի իր երեկվա թշնամիների՝ իմպերիալիստական կառավարությունների կողմը։

Նեղուցների հարցում Սովետական Ռուսաստանի դիրքը Վ. Ի. Լենինը շարադրեց 1922 թ. հոկտեմբերի 27-ին անգլիական թղթակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ։ Լենինն ասաց, որ նեղուցների վերաբերյալ սովետական ծրագիրը համապատասխանում է Թուրքիայի ազգային շահերին. այն նախատեսում է բոլոր ռազմանավերի համար նեղուցների փակում խաղաղ և պատերազմական ժամանակ և առևտրական նավագնացության լիակատար ազատություն։ Սովետական պատվիրակությունը Լոզանում զարգացրեց և հիմնավորեց այդ ծրագիրը։

Դրան հակադրվեց անգլիական ծրագիրը, որը ցանկացած դրոշակի ներքո նավերի ազատ անցում էր պահանջում ոչ միայն խաղաղ, այլև պատերազմի ժամանակ, եթե պատերազմում Թուրքիան չեզոքություն էր պահպանում։ Պատերազմում Թուրքիայի մասնակցության դեպքում նեղուցներով անցնելու իրավունքից օգտվում են միայն չեզոք երկրների ռազմանավերը։ Նեղուցները ենթակա էին ապառազմականացման, և նրանց նկատմամբ պետք է սահմանվեր ինչպես սևծովյան, այնպես էլ մի քանի այլ երկրների միջազգային հանձնաժողովի հսկողություն։ Դրանով իսկ Անգլիան պահանջում էր այնպիսի պայման-

ներ, որոնք նրան թույլ տային մշտապես ռազմածովային սպառնալիքի տակ պահել սովետական պետության սևծովյան ափերը։ Ֆրանսիացիներն ու իտալացիները պաշտպանեցին անգլիական նախագիծը, իսկ թուրքերը խուսափեցին սովետական առաջարկությունները պաշտպանելուց և ի վերջո, ըստ էության, հավանություն տվեցին անգլիական նախագծին։ Դա զգալի չափով կանխորոշեց գործի ընթացքը։ Լոզանի կոնֆերանսը հավանություն տվեց նեղուցների ռեժիմի վերաբերյալ Անտանտի և Թուրքիայի ներկայացուցիչների մշակած կոնվենցիային, որը խախտում էր սևծովյան երկրների, ինչպես և հենց Թուրքիայի կենսական շահերը։ Հետագայում Սովետական Միությունը չվավերացրեց նեղուցների վերաբերյալ Լոզանի կոնվենցիան և նրա համար այն օրինական ուժ չուներ։

Լոզանի կոնֆերանսում ստորագրվեց նաև հաշտության պայմանագիր մի կողմից Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Ռումինիայի և Հարավսլավիայի և մյուս կողմից Թուրքիայի միջև։ Այդ պայմանագիրը Թուրքիայի համար շատ ավելի ձեռնտու էր, քան Սևրինը։ Թուրքիայի հակառակորդները հրաժարվեցին կապիտուլյացիաներից և անիրավահավասար հարաբերությունների այլ ձևերից։ Թուրքիան միջազգային ճանաչում ձեռք բերեց որպես քեմալական կառավարության գլխավորությամբ սուվերեն անկախ պետություն։ Թուրքերը մի շարք տերիտորյալ հարցերում դիջման դիմեցին իրենց պարտնյորներին. ըստ էության հրաժարվեցին Մոսուլի նավթային շրջանից։

1918—1923 թթ. միջազգային հարաբերությունների սովետական պատմագրությունը

Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած վեց տարվա միջազգային հարաբերությունների պատմությունը ուսումնասիրելու համար ամենից առաջ հարկավոր է դիմել Վ. Ի. Լենինի այն աշխատություններին, որոնք նվիրված են այդ պրոբլեմի ամենատարբեր ասպեկտներին։ Վ. Ի. Լենինի մոտ մենք գտնում ենք իմպերիալիզմի վերլուծությունը, առանց որի հնարավոր չէ ըմբռնել հաշտության Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմը ստեղծած մեծ տերությունների քաղաքականության արմատները, աղբյուրները և շարժիչ ուժերը։ Վ. Ի. Լենինի աշխատություններում կարելի է գտնել առաջատար երկրների քաղաքականության առանձնահատկությունները, հետպատերազմյան աշխարհում գործած հակասությունների վերլուծությունը, ինչպես նաև այդ տարիների խոշորագույն միջազգային կոնֆերանսների և դրանցում մշակված փաստաթղթերի գնահատականը։ 1918—1920 թթ. որպես գործուն և զարգացող ուժ համաշխարհային թատերաբեմ ելավ սովետական արտաքին քաղաքականությունը, որը դեռ այդ ժամանակ լուրջ ներգործություն էր ունենում միջազգային հարաբերությունների զարգացման վրա։ Այդ քաղաքականության, նրա առավել կարևոր գործողությունների (Բրեստի հաշտություն, Ջենովայի կոնֆերանս և այլն) սկզբունքների մշակումը մենք գտնում ենք Վ. Ի. Լենինի աշխատություններում։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների ուսումնասիրման չափազանց կարևոր աղբյուր է ՍՍՀՄ Արտգործմինիստրության պատմադիվանագիտական վարչության կողմից լույս ընծայվող «Документы внешней политики СССР», հ. I—VI (Մ., 1957—1962) հրապարակումը։ Դա Սովետական Միության դիվանագիտական փաստաթղթերի մինչև այժմ լույս տեսած հրապարակումներից առավել լիակատար է և խնամքով նախապատրաստվածը։ Հրատարակությունն ունի տեղեկատու լավ ապարատ, որը բազմաթիվ ճշգրտված տեղեկություններ է պա-

րունակում տվյալ ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների վերաբերյալ։

1918—1923 թթ. միջազգային հարաբերությունների պատմության վերաբերյալ սովետական գրականությունը չափազանց ընդարձակ է։ Այդ թեմայով հատկապես շատ գրքեր ու գիտական հոդվածներ են հրապարակվել վերջին 15 տարվա ընթացքում։ Ընդհանուր աշխատանքներից պետք է նշվի «История дипломатии»-ն՝ Ա. Ա. Գրոմիկոյի, Ի. Ի. Զեմսկովի, Վ. Ա. Զորինի, Վ. Ս. Սեմյոնովի, Ս. Դ. Սկազկինի և Վ. Մ. Խվոստովի խմբագրությամբ։ Լայն ճանաչում գտած այդ աշխատությունը հեղինակներն ըստ էության նորից են գրել՝ հաշվի առնելով պատմագիտության վերջին նվաճումները։ Բ. Ն. Պոնոմարյովի, Ա. Ա. Գրոմիկոյի, Վ. Մ. Խվոստովի խմբագրությամբ լույս տեսած «История внешней политики СССР», մ. I, 1917—1945 թթ. (Մ., 1966) աշխատությունը այդ պրոբլեմի գծով լավագույն գիրքն է։ Նրա արժեքն այն է, որ նա հաշվի է առնում տվյալ ասպարեզում հայրենական ու արտասահմանյան գիտության ժամանակակից նվաճումները և գիտական շրջանառության մեջ է մտցնում ՍՍՀՄ արտաքին քաղաքականության արխիվից վերցված չհրապարակված փաստաթղթեր։ Այդ ընդհանուր աշխատություններից յուրաքանչյուրում կան մի շարք գլուխներ, որոնք նվիրված են 1918—1923 թթ. միջազգային հարաբերություններին և ՍՍՀՄ արտաքին քաղաքականությանը։

Անհատական ուսումնասիրությունների թվից մինչև այժմ չեն հնացել և ինչպես այնտեղ բերված փաստական նյութի, այնպես էլ շարադրանքի գրական լավ ոճի տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում Բ. Ե. Շտեյնի «Русский вопрос» на Парижской мирной конференции» (Մ., 1949) և «Русский вопрос» в 1920—1921 гг.» (Մ., 1958) գրքերը։

ԳԼՈՒԽ 5

ԳԵՐՄԱՆԻԱՆ 1918—1939 ԹԹ.

1918 Թ. ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Հեղափոխական իրադրության հասունացումը: Հեղափոխության պատմական խնդիրները

Գերմանիայում հեղափոխական իրադրություն սկսեց հասունանալ դեռ համաշխարհային պատերազմի ընթացքում: Տնտեսական քայքայումը, ծանր զոհողությունները ու զրկանքները հեղափոխականացնում էին գերմանական բանվոր դասակարգին: Գերմանիայում դասակարգային պայքարի զարգացման վրա մեծ ազդեցություն գործեցին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխական իրադարձությունները և հատկապես Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը: 1917 Թ. ապրիլյան գործադուլից ի վեր Գերմանիայում ծավալվեց զանգվածային շարժում, որը որոշակի մակընթացություններով ու տեղատվություններով շարունակվում էր 1917 և 1918 ԹԹ.: Առավել խոշոր էր 1918 Թ. գործադուլը, որն ընդգրկեց ավելի քան 50 քաղաք, պայքարին մասնակցեց մոտ մեկուկես միլիոն բանվոր: Գերմանիայում Ռուսաստանի օրինակով սկսեցին սովետներ ստեղծվել: Հունվարյան գործադուլը վկայում էր Գերմանիայի բանվորական շարժման նոր փուլի մեջ մտնելու, «բուրգֆրիդենի» քաղաքականության ճգնաժամի մասին: Եթե 1916 Թ. արդյունաբերության մեջ տեղի ունեցավ 240 աշխատանքային կոնֆլիկտ, ապա 1917 Թ. դրանց թիվը կազմեց արդեն 562, իսկ 1918 Թ.՝ 773: 1918 Թ. նոյեմբերի սկզբին հեղափոխական վերելքը հասավ իր բարձրակետին:

Մասսաների հեղափոխական տրամադրությունների աճը և պատերազմի հաղթական ավարտի վերաբերյալ եղած հույսերի խորտակումը կառավարող շրջաններում հասցրին տարաձայնությունների սրմանը «թիկունքի խաղաղեցման» և «պատվավոր հաշտություն» ձեռք բերելու մեթոդների վերաբերյալ: Պանգերմանական-պրուսական ռազմատենչ խմբավորումը պահանջում էր ուժեղացնել քաղաքական բռնությունները. լիբերալ-միապետական տարրերը անհրաժեշտ էին համարում մի քանի զիջումներ կատարել մասսաներին և փորձել պատերազմն ավարտել քաղաքական-դիվանագիտական ուղիով: Սակայն միայն 1918 Թ. գարնանային-ամառային հարձակողական մարտերում գերմանական զորքերի կրած ծանր պարտություններից հետո ստրատեգիական վերակողմնորոշման անհրաժեշտությունն ակնհայտ դարձավ ինչպես գերմանական բուրժուազիայի զգալի մասի, այնպես էլ գերագույն հրամանատարության համար: 1918 Թ. սեպտեմբերին գեներալիտետը պահանջեց ստեղծել մի այնպիսի պառլամենտական կառավարություն, որն ընդունակ լիներ զինադադար կնքելու: Այդ պայմաններում առաջին պլան մղվեցին գերմանական բուրժուազիայի լիբերալ-միապետական խմբավորումը և նրա քաղաքական ներկայացուցիչները, որոնք հանդես էին գալիս վերևից ռեֆորմներ կատարելու օգտին՝ հեղափոխությունը կանխելու նպատակով: 1918 Թ. հոկտեմբերի 3-ին Գերմանիայում կազմվեց նոր կառավարություն: Այն գլխավորեց Բադենի դահի ժառանգորդ, արքայազն Մաքս Բադենցին, որն անգլոֆիլի, լիբերալ ռեֆորմների և ԳՍԴԿ-ի հետ համագործակցելու կողմնակցի համարում ուներ: Բուրժուազիայի «չափավոր» թևի ներկայացուցիչների հետ նոր կաբինետի կազմի մեջ մտան և կայզերին հավատարմության երդում տվեցին երկու սոցիալ-դեմոկրատներ՝ Ֆ. Շայդեմանը և Գ. Բաուերը: Հոկտեմբերի 3-ի լույս 4-ի գիշերը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին զինադադարի վերաբերյալ խնդրանքի նոտա ուղարկվեց: Հեղափոխությունը կանխելու նպատակներին էր ծառայում նաև Մաքս Բադենցու հրուշակած Գերմանիայի «պառլամենտացումը», որն արտահայտվեց Պրուսիայում ընտրական իրավունքի ռեֆորմի վերաբերյալ օրենքի ընդունման (3-դասյա ընտրական սիստեմի վերացման), ռայխստագի իրավասության ընդլայնման (պատերազմ հայտարարելու և հաշտություն կնքելու իրավունք, կանցլերի պատասխանատվություն ռայխստագի առջև և այլն) մեջ: Ռեֆորմները չէին շոշափում ո՛չ խոշոր հողատիրության, ո՛չ էլ Հոհենցոլերների ռեժիմի հիմքերը, դրանք չէին լուծում Գերմանիայում օրակարգի հարց դարձած բուրժուադեմոկրատական հեղափոխության խնդիրները:

Դրա հետ մեկտեղ պատերազմն արագացրեց սոցիալիզմի նյութական նախադրյալների հասունացումը Գերմանիայում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հենց Գերմանիայում պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը Վ. Ի. Լենինին հիմք տվեց կարևոր տեսական եզրակացություն անելու այն մասին, որ «պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը սոցիալիզմի նյութական լիակատար նախապատրաստումն է, նրա նախադուռն է...»[1]: Գերմանիայում, գրում էր Վ. Ի. Լենինը, «տեսնում ենք «վերջին խոսքը» ժամանակակից խոշոր կապիտալիստական տեխնիկայի և պլանաչափ կազմակերպության»[2], այսինքն այն պայմանների գումարը, որոնք սովետական պետության առկայության դեպքում տալիս են սոցիալիզմ: Մի կողմից բուրժուադեմոկրատական հեղափոխության չլուծված խնդիրների յուրատեսակ զուգակցությունը և, մյուս կողմից, սոցիալիզմի հասունացած նյութատեխնիկական նախադրյալների առկայությունը Վ. Ի. Լենինին թույլ տվեցին ձևակերպելու գերմանական բանվոր դասակարգի գլխավոր խնդիրը՝ «միավորել դեմոկրատիայի համար մղվող պայքարը և սոցիալիստական հեղափոխության համար մղվող պայքարը, առաջինը ենթարկելով երկրորդին»[3]: Այդ բարդ խնդրի լուծման համար պահանջվում էր հեղափոխական պրոլետարական կուսակցության կողմից ղեկավարվող հեղափոխության համախմբված քաղաքական բանակի առկայություն: Պատմությունը Գերմանիայի բանվոր դասակարգին, որը կազմում էր երկրի աշխատող բնակչության մոտ 50 տոկոսը, դարձրեց գերմանական հեղափոխության գլխավոր շարժիչ ուժը: Պրոլետարիատի բնական դաշնակիցը դարձան մանր գյուղացիությունը և գյուղատնտեսական բանվորները (մոտ 7 մլն) հեղափոխության կարևոր ռեզերվն էին, ամենից առաջ նրա բուրժուադեմոկրատական փուլում, պատերազմից քայքայված քաղաքային մանր բուրժուական խավերը:

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 417:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 414:

[3] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու (ռուս.), հ. 49, էջ 347:

Քաղաքական ուժերի տեղաբաշխումը բանվորական շարժման մեջ հեղափոխության նախօրյակին

Գերմանական հեղափոխության հաջողությունը վճռական չափով կախված էր գերմանական պրոլետարիատի գիտակցականությունից և կազմակերպվածությունից։ Սակայն հեղափոխության նախօրյակին Գերմանիայի բանվոր դասակարգը պառակտված էր երեք քաղաքական հոսանքի, որոնց արտահայտիչներն էին Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (ԳՍԴԿ), Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (ԳԱՍԴԿ) և վերջինիս մեջ մտնող «Սպարտակ» խումբը։

Գերմանական բանվոր դասակարգի մեծ մասը գտնվում էր ԳՍԴԿ-ի ազդեցության տակ։ Պատերազմի տարիներին կանգնելով սոցիալ-շովինիզմի և բուրժուազիայի հետ համագործակցելու ուղին, ԳՍԴԿ-ն վերածվում էր բուրժուական բանվորական կուսակցության։ Նրա պարագլուխներն անդադար կրկնում էին, որ զարգացման «ռուսական ուղին» Գերմանիայի համար ընդունելի չէ։ Նրանք ամենից առաջ հանդես էին գալիս ընդդեմ սովետների՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի մարմինների, պնդելով, թե կարելի է սոցիալիզմ կառուցել առանց նախապես բանվոր դասակարգի քաղաքական իշխանություն հաստատելու։ ԳՍԴԿ-ի հիմնական քաղաքական գիծն արտացոլվեց 1918 թ. մայիսին կուսակցության վարչության հրապարակած «Գործողությունների ծրագրի» նախագծում։ Ըստ էության նախագիծը սահմանափակվում էր պատերազմի ընթացքում վերացված բուրժուադեմոկրատական ազատությունների վերականգնման և պառլամենտական սիստեմի մի քանի ռեֆորմների պահանջով։ «Գործողությունների ծրագիրը» չէր շոշափում խոշոր կապիտալի և յունկերության իշխանության հիմքերը և նույնիսկ չէր պահանջում միապետության վերացում և հանրապետության հաստատում։ Երբ 1918 թ. սեպտեմբերի վերջին—հոկտեմբերի սկզբին Գերմանիայում հեղափոխական իրադրություն առաջացավ, ԳՍԴԿ-ի և ռեֆորմիստական արհմիությունների վերնախավն առանց վարանելու իր համաձայնությունը տվեց մասնակցելու Մաքս Բադենցու կառավարությանը. հրաժարվելը, Ֆ. Էբերտի հայտարարությամբ, կնշանակեր «Գերմանիայի բախտի հանձնում հեղափոխության կուսակցության ձեռքը»։ Ռեֆորմիստական պրոպագանդան արքայազն Բադենցու կառավարությունը բնութագրեց որպես զարգացման նոր փուլի՝ Գերմանիայի «դեմոկրատական ժողովրդական պետության վերածման» սկիզբ։

Գերմանական բանվորական շարժման մեջ ռեֆորմիզմի գաղափարական-քաղաքական դիրքերի պահպանմանը նպաստեց նաև ԳԱՍԴԿ-ի՝ այսինքն մի կուսակցության գործունեությունը, որն իր մեջ ներառնում էր ինչպես ԳՍԴԿ-ին ձգտող աջ ցենտրիստական տարրերին, այնպես էլ օպոզիցիոն տրամադրված պրոլետարական զանգվածներին։ 1917 թ. վերջին Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ազդեցությամբ կուսակցության տեղական կազմակերպություններում սկսեց ձևավորվել հեղափոխական թևը։ Սակայն ԳԱՍԴԿ-ի քաղաքականության վրա որոշիչ ազդեցություն էին գործում աջ ցենտրիստական ուժերը։ Կուսակցության ղեկավարությունը (Կ. Կաուցկի, Գ. Հաազե, Ռ. Հիլֆերդինգ), ինչպես և ԳՍԴԿ պարագլուխները, ձգտում էին մասսաների հեղափոխական շարժումը սահմանափակել լեգալ բողոքի շրջանակով։ Ռուսաստանում գոյություն ունեցող պայմաններից տարբերվող պայմանների պատրվակով նրանք ժխտում էին նաև բոլշևիկների փորձը Գերմանիայում օգտագործելու օրինաչափականությունը։ Կ. Կաուցկին փորձում էր ապացուցել, թե պատերազմի առաջացրած ավերվածություններն անբարենպաստ պայմաններ են

ստեղծել սոցիալիզմի իրականացման համար, և «անցման էկոնոմիկայի պայմաններում պրոլետարիատի տիրապետությանն անցնելը... չպետք է լինի մեր նպատակը»։ Մարքսիզմն աղավաղելով, Կաուցկին պնդում էր, թե պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը հակասում է դեմոկրատիայի սկզբունքներին։ Ի տարբերություն ԳՍԴԿ պարագլուխների, որոնք ոտնձգություն չէին կատարում միապետական կարգի դեմ, ԳԱՍԴԿ-ն առաջադրում էր բուրժուական հանրապետության հռչակման պահանջ, սակայն ցույց չէր տալիս դրա համար պայքարելու կոնկրետ ուղիները։

Գերմանիայի բանվորական շարժման մեջ մեծ դեր էր խաղում «Սպարտակ» խումբը, որի գլուխ կանգնած էին Կ. Լիբկնեխտը և Ռ. Լյուքսեմբուրգը։ Վ. Ի. Լենինը գրում էր, որ նա փրկեց «գերմանական սոցիալիզմի և գերմանական պրոլետարիատի պատիվը»[4]։ Պատերազմի տարիներին, հատկապես Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությամբ ուժեղացավ գերմանական ձախերի էվոլյուցիան դեպի լենինիզմ, թեև դա հակասական և անհավասարաչափ զարգացող պրոցես էր։ 1918 թ. հունվարյան գործադուլի ընթացքում սպարտակցիները սովետներ ստեղծելու կոչ էին անում։ Սակայն սպարտակցիներն այն ժամանակ դեռ թերագնահատում էին կազմակերպության նշանակությունը դասակարգային պայքարում, որի հետևանքով նրանց դիրքերը թույլ էին Բեռլինի սովետներում (որոնք ստեղծվեցին հունվարյան գործադուլի ընթացքում)։ ԳԱՍԴԿ-ին պատկանելը սահմանափակում էր «Սպարտակի», որպես ինքնուրույն քաղաքական ուժի գործունեությունը։

Հոկտեմբերյան հեղափոխության դասերը և բուն Գերմանիայում հեղափոխական պայքարի փորձը սպարտակցիներից պահանջեցին վերանայել իրենց հայացքները։ Դեռ 1917 թ. վերջին հակապատերազմական պայքարը նրանք սերտորեն միացնում էին հեղափոխության նախապատրաստման հետ։ «Սպարտակի» շատ անդամներ սկսեցին հասկանալ հեղափոխական պրոլետարական կուսակցություն ստեղծելու անհրաժեշտությունը։

Իմպերիալիզմի և պատերազմի դեմ մղվող պայքարում նկատելի դեր էին կատարում Բրեմենի, Համբուրգի, Հանովերի և մյուս քաղաքների ձախ սոցիալ-դեմոկրատական խմբերը (ձախ ռադիկալները)։ Գերմանիայում հեղափոխական կուսակցության ստեղծումը «անհետաձգելի անհրաժեշտություն» համարելով, նրանք, սակայն, այն ներկայացնում էին որպես անարխո-սինդիկալիստական կազմակերպության տարատեսակություն, որն իր մեջ համատեղում էր թե՛ կուսակցությունը, թե՛ արհմիությունը։

Հեղափոխական հանգուցալուծման մոտիկության զգացումն ուժեղացրեց ձախերի միասնության ձգտումը, ավելի ու ավելի էր գիտակցվում գործողությունների ծրագիր մշակելու անհրաժեշտությունը։ 1918 թ. հոկտեմբերի 7-ին գումարվեց սպարտակցիների և ձախ ռադիկալների անլեգալ կոնֆերանս, որը ծրագրային բնույթ կրող կոչ ընդունեց։ Նրանում առաջադրվում էին պատերազմը դադարեցնելու և արմատական դեմոկրատական վերափոխություններ անցկացնելու, այդ թվում պաշարողական դրության և աշխատանքային պարհակի օրենքի վերացման, քաղաքական բանտարկյալների ազատման, բանկային կապիտալի, հանքարդյունաբերության, մետալուրգիական ձեռնարկությունների ազգայնացման, աշխատանքային օրվա կրճատման, աշխատավարձի մինիմումի սահմանման, գերմանական առանձին պետությունների վերացման և այլ պահանջներ։ Հետևապես, ծրագիրը նպատակամղված էր դեպի դեմոկրատական

[4] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու (ռուս.), հ. 50, էջ 196։

հեղափոխության ծավալումը և սոցիալիստական հեղափոխության վերաճելու նախադրյալների ստեղծումը։ Կոնֆերանսը բանվորներին կողմնորոշեց դեպի զինված ապստամբության նախապատրաստումը, կոչ արեց ստեղծել բանվորների և զինվորների սովետներ։ Դրա հետ մեկտեղ ագրարային հարցում սխալներ թույլ տրվեցին. պահանջելով բռնագրավել ոչ միայն խոշոր, այլև միջակ հողային սեփականատերերի ունեցվածքը և գյուղատնտեսական արտադրության ղեկավարումը հանձնել չքավորների և բատրակների պատգամավորների ձեռքը, ծրագիրը չէր առաջադրում գյուղատնտեսական բանվորներին և մանր գյուղացիներին հողով ապահովելու լոզունգ, որը դժվարացնում էր նրանց ներգրավումը պրուսական յունկերության և կայսերական պետական ապարատի դեմ մղվող պայքարի մեջ։ Ամբողջությամբ վերցրած, կոնֆերանսն արտահայտում էր ցենտրիզմից ձախերի գաղափարական-քաղաքական սահմանազատման խորացող պրոցեսը։ Այն կարևոր քայլ հանդիսացավ «Սպարտակի» ինքնուրույն պրոլետարական կուսակցության վերածվելու ճանապարհին։

Կոնֆերանսից հետո սպարտակցիները զգալիորեն ընդլայնեցին ագիտացիոն գործունեությունը։ Մշակվեց Բեռլինում ընդհանուր գործադուլի պլան, որը պետք է վերաճեր զինված ապստամբության։ Ընդհակառակը, ԳՍԴԿ պարագլուխները հուսահատ փորձեր էին ձեռնարկում հեղափոխական ելույթները կանխելու համար, բայց դա նրանց ուժից վեր էր։ Մասսաները դուրս եկան ռեֆորմիստական պարագլուխների հսկողությունից։ Գերմանիայում սկսվեց հեղափոխությունը։

Նոյեմբերյան հեղափոխությունը

Հեղափոխությունը սկսվեց 1918 թ. նոյեմբերի 3-ին Քիլում՝ նավաստիների զինված ապստամբությամբ և անցավ երեք փուլ. նոյեմբերի սկզբից մինչև Էբերտ-Հաազեի կառավարության ստեղծումը (նոյեմբերի 10), երկրորդ փուլն ավարտվեց սովետների I համագումարով (1918 թ. դեկտեմբերի սկիզբ), երրորդը՝ 1919 թ. հունվարյան ապստամբությամբ։ Հեղափոխությունը սկսվելու անմիջական առիթ հանդիսացավ գերագույն հրամանատարության փորձը՝ բլոկադայի ճեղքում կազմակերպել անգլիական նավատորմի վրա գրոհելու համար՝ պատերազմի ընթացքը փոխելու հաշվով։ Նավաստիները հասկացան այդ մանևրը. նրանք հրաժարվեցին հրամանը կատարել։ Ապստամբության ղեկավարների մասսայական ձերբակալությունների մասին լուրերը վառոդի տակառի մեջ ընկած կայծ դարձան։ Քիլի բանվորները պաշտպանեցին նավաստիներին։ Նոյեմբերի 3-ին Քիլում մասսայական ցույց տեղի ունեցավ «Կեցցե՛ Ինտերնացիոնալը», «Կեցցե՛ գերմանական հանրապետությունը», «Կորչի՛ կայզերը» լոզունգներով։ Ցույցը ցրելու քաղաքի պարետատան փորձերին բանվորները, զինվորներն ու նավաստիները պատասխանեցին զինված ապստամբությամբ։ Նոյեմբերի 4-ի գիշերը նավերում ու զորանոցներում ստեղծվեցին նավաստիների ու զինվորների սովետներ։ Նրանք պահանջում էին անհապաղ ավարտել պատերազմը, հրաժարեցնել Հոհենցոլերներին, ազատել ձերբակալված նավաստիներին և բոլոր քաղաքական բանտարկյալներին։ Նոյեմբերի 4-ին ստեղծված Քիլի բանվորական սովետը (կազմված ԳՍԴԿ-ի և ԳԱՍԴԿ-ի ներկայացուցիչներից) կոչ արեց նոյեմբերի 5-ին ընդհանուր գործադուլ սկսել։ Քաղաքի իշխանությունները ստիպված էին ճանաչել բանվորների և զինվորների սովետները։ Նավերի և Քիլի հասարակական շենքերի վրա ծածանվում էին կարմիր դրոշները։ Նոյեմբերի 7—8-ը հեղափոխական ալիքը, ներգրավելով բոլոր խոշոր քաղաքները և արդյունաբերական կենտրոնները, մոտեցավ Բեռլինին։ «Անդորրությունն» ու «կարգը» պահպանելու մասին կանցլերի բոլոր կո-

չերն ապարդյուն անցան։ Զորքերը կամ բացահայտ կերպով անցնում էին հեղափոխության կողմը, կամ չեզոք մնում։ Կառավարությունն ու ԳՍԴԿ ղեկավարությունը մոլեգնորեն ուղի էին փնտրում հեղափոխության զարգացումն արգելակելու համար, և այդ նպատակով փորձեցին արագացնել կայզերի հրաժարականը։ «Եթե կայզերը չհրաժարվի,— նոյեմբերի 7-ին կանցլերին նախազգուշացնում էր Ֆ. Էբերտը,— այդ դեպքում սոցիալական հեղափոխությունն անխուսափելի է։ Բայց ես այն չեմ ցանկանում, և հետո ատում եմ այն, ինչպես մեղք»։

Դրությունը Բեռլինում ավելի ու ավելի էր սրվում։ Սպարտակցիների նախաձեռնությամբ նոյեմբերի 8-ին Հեղափոխական ավագների գործկոմը (Բեռլինի մետաղագործների արհմիության հեղափոխականորեն տրամադրված ներկայացուցիչների անլեգալ օրգան) որոշում ընդունեց Բեռլինի բանվորներին ու զինվորներին կոչ անել նոյեմբերի 9-ին ընդհանուր գործադուլ և զինված ապստամբություն սկսել հետևյալ լոզունգներով. քաղաքական բանտարկյալների ազատում, առանձին գերմանական պետությունների և դինաստիաների վերացում, բոլոր ձեռնարկություններում և զորամասերում բանվորների և զինվորների սովետների ընտրություն, սովետական հանրապետության հետ նոյեմբերի 5-ին խզված հարաբերությունների անհապաղ վերականգնում։

Նոյեմբերի 9-ի առավոտյան Բեռլինի փողոցներն ու հրապարակները լցվեցին ցուցարարներով։ Զինվորները հրաժարվում էին կրակել բանվորների վրա։ Դեռևս հուսալով ձգձգել հեղափոխության զարգացումը, Մաքս Բադենցին կատարեց իր վերջին մանևրը՝ հայտարարեց կայզերի և գահաժառանգի հրաժարվելու, խնամակալություն նշանակելու և Ազգային սահմանադիր ժողովի ընտրությունների մասին։ Միաժամանակ կանցլերը հրաժարական տվեց և իր փոխանորդ նշանակեց աջ սոցիալ-դեմոկրատ Ֆ. Էբերտին։ Ֆ. Էբերտը դիմեց Բեռլինի բնակչությանը «անդորրությունը և կարգը» պահպանելու կոչով։ Սակայն հեղափոխության զարգացումը ձգձգելու և միապետությունը փրկելու այդ փորձն էլ հաջողությամբ չպսակվեց։ Արդեն նոյեմբերի 9-ի կեսօրին Բեռլինը գտնվում էր հեղափոխական բանվորների ու զինվորների ձեռքում, որոնք գրավեցին ոստիկանական վարչությունը, գլխավոր հեռագրատունը և այլ կարևորագույն հասարակական շենքեր։ Ազատվեցին քաղաքական բանտարկյալները։ Կայզերը փախավ արտասահման։

Քանի որ չհաջողվեց հեղափոխությունը սահմանափակել Գերմանիայում բուրժուապառլամենտական միապետություն հռչակելով, ԳՍԴԿ աջ ղեկավարությունը փոխեց տակտիկան։ Խնդիր դրվեց գլխավորել շարժումը և այն սահմանափակել բուրժուադեմոկրատական վերափոխությունների շրջանակներով։ Դեռ նոյեմբերի 9-ին կուսակցության կենտրոնական օրգան «Ֆորվերտսէ թերթի հատուկ թողարկման մեջ կոչ հրապարակվեց գործադուլ սկսել «սոցիալական» հանրապետություն ստեղծելու լոզունգով։ Միաժամանակ ԳՍԴԿ վարչությունը ԳԱՍԴԿ ղեկավարության հետ բանակցություններ սկսեց «հեղափոխական կառավարություն» ստեղծելու մասին։

Այն ժամանակ, երբ ռեֆորմիստական պարագլուխները «հեղափոխությունը սանձելու» պլաններ էին կազմում, ձեռնարկություններում և զորանոցներում տեղի էին ունենում Բեռլինի բանվորների և զինվորների սովետների ընդհանուր ժողովի ներկայացուցիչների ընտրություններ՝ բանվորների և զինվորների պատգամավորների սովետի գործկոմ և բանվորական կառավարություն ստեղծելու, ինչպես նաև նրա քաղաքականությունը որոշելու նպատակով։ Սպարտակցիները դիմեցին Բեռլինի սովետներին մի հատուկ կոչով, որտեղ շարադրը-

վում էր բուրժուադեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու ծրագիրը։ Սակայն նոյեմբերի 10-ին Բուշ կրկեսում գումարված Բեռլինի սովետների ընդհանուր ժողովում ԳՍԴԿ ղեկավարությանը հաջողվեց, գործողության մեջ դնելով կուսակցության և արհմիությունների ճյուղավորված ապարատը, օգտագործելով տատանվողներին, անկախականների անհետևողական քաղաքականությունը և «Սպարտակի» կազմակերպական թուլությունը, ինչպես նաև մասսաների քաղաքական անփորձությունը, աջակցություն ձեռք բերել։ Ժողովը հավանություն տվեց Ֆ. Էբերտի և Գ. Հաազեի գլխավորությամբ կառավարության՝ Ժողովրդական լիազորների խորհրդի (ԺԼԽ) ստեղծմանը։ Բուշ կրկեսում ընդունված «Աշխատավոր ժողովրդին» կոչում Գերմանիան հրաշակվում էր սոցիալիստական հանրապետություն։ «Հեղափոխական կառավարության» առջև դրվում էին հետևյալ խնդիրները. զինադադարի և հաշտության կնքում, արտադրության վճռական միջոցների հանրայնացում, հարաբերությունների վերականգնում եղբայրական Սովետական հանրապետության հետ։ Այդ դիմումն արտահայտում էր հեղափոխական բանվորների և զինվորների տրամադրություններն ու պահանջները։ Այն, ինչպես և Գերմանիայի բոլոր մասերում ստեղծված սովետների շատ այլ հայտարարություններն ու կոչերը, վկայում էին, որ գերմանական բանվոր դասակարգը ձգտում է սոցիալիզմին։ Սակայն գտնվելով ռեֆորմիստական գաղափարախոսության և պառլամենտական-դեմոկրատական պատրանքների ազդեցության տակ, նա հստակ պատկերացում չուներ սոցիալիզմի իրականացման միջոցների և ուղիների մասին։ Տապալելով միապետությունը, ստեղծելով հանրապետություն և կազմելով սոցիալիստներից բաղկացած կառավարություն, բանվորները գտնում էին, որ իրենց համար արդեն ապահովել են քաղաքական իշխանությունը և պայմաններ ստեղծել սոցիալիզմի կառուցման համար։ Մինչդեռ ԺԼԽ-ի կառավարությունը սոսկ անվամբ էր «սոցիալիստական»։ Նրա գործունեության օբյեկտիվ բովանդակությունը ծառայում էր բուրժուազիայի տիրապետության պահպանման նպատակներին։ ԺԼԽ-ի ստեղծումը և սոցիալ-դեմոկրատների մինիստրական պորտֆելներ ստանալը չշոշափեց հին պետական ապարատի հիմքերը. կայզերական մինիստրները, չինովնիկներն ու սպայությունը մնում էին իրենց պոստերում։ Իշխանության բնույթի մասին պերճախոս վկայում էր ԺԼԽ-ի նոյեմբերի 12-ի ծրագրային հայտարարությունը, որի բովանդակությունը շրջանցում էր նոյեմբերի 10-ի Բեռլինի սովետների ժողովի հիմնական պահանջները։ Հռչակելով «սոցիալիստական ծրագիր իրականացնելու» մտադրություններ, ԺԼԽ-ն սահմանափակվում էր արդեն նվաճված բուրժուադեմոկրատական ազատությունների արձանագրմամբ՝ վերացնում էր «կալվածատան ծառայանու մասին» կիսաֆեոդալական օրենքը, խոստանում էր սահմանել 8-ժամյա աշխատանքային օր, գործազրկության համար նպաստ և ընդհանուր ընտրական իրավունք 20 տարին լրացած տղամարդկանց և կանանց համար։ Կառավարության ծրագիրը դուրս չէր գալիս բուրժուական ռեֆորմների շրջանակներից։ Ընդորում, պահպանելով յունկերական հողատիրությունը, այն հրաժարվում էր նաև բուրժուադեմոկրատական խնդիրների հետևողական լուծումից։

Հավատալով կառավարության «սոցիալիստական» բնույթի վերաբերյալ ֆրազաբանությանը, աշխատավորների մեծամասնությունը գտնում էր, որ հեղափոխությունը հիմնականում ավարտվել է և որ սեփականության հարաբերություններում արմատական փոփոխությունները հետագայում կանցկացվեն կառավարության ու ազգային ժողովի կողմից։ Այդ պատրանքներն ամրապնդվում էին նրանով, որ, նոյեմբերի 11-ին ստորագրելով զինադադարը, ԺԼԽ-ն

կատարեց ժողովրդական զանգվածների կարևորագույն պահանջը՝ պատերազմի դադարեցումը։ Բանվոր դասակարգի միայն «Սպարտակի» գլխավորած փոքրամասնությունն էր հասկանում, որ հեղափոխությունն ամենևին չի ավարտվել, քանի որ իրական իշխանությունը մնում էր խոշոր կապիտալի ձեռքում։ Այսպիսով, ԳՍԴԿ աջ օպորտունիստական ղեկավարությանը, որը կանգնեց հակահեղափոխության ուղին, հաջողվեց պառակտել բանվոր դասակարգի գործողությունների տարերայնորեն առաջացած միասնությունը։

Սովետներ, թե՞ ազգային սահմանադիր ժողով։ Հակահեղափոխության ուժերի մոբիլիզացումը

Նոյեմբերի 10—11-ից հետո որոշվեց իրադարձությունների զարգացման երկու տենդենց, երկու հնարավոր ուղի՝ բուրժուա-դեմոկրատական հեղափոխության վերաճում սոցիալիստականի կամ բուրժուական հանրապետության կայունացում։ Այդ երկու հնարավորություններն արտացոլվեցին Սովետների իշխանություն, թե՞ ազգային սահմանադիր ժողով այլընտրանքում։

«Սպարտակի» պարագլուխները Նոյեմբերյան հեղափոխությունը բնութագրեցին որպես «բուրժուաքաղաքական ռեֆորմ», որը միայն ձևով էր պրոլետարական շարժում։ Արդեն «Դի Ռոտե Ֆանեի» առաջին արտակարգ թողարկման մեջ (9. XI) «Սպարտակը» բանվորներին և զինվորներին կոչ էր անում շարունակել պայքարը, հայտարարելով, որ չնայած կայզերի արտաքսմանը և հանրապետության հռչակմանը, հեղափոխության հիմնական խնդիրները դեռ լուծված չեն։ Սպարտակցիների գլխավոր լոզունգն էր «Ամբողջ իշխանությունը Սովետներին» կոչը։ «Սպարտակի» պարագլուխները Էբերտ-Հաազեի կառավարության անհապաղ տապալման պահանջներ չէին առաջադրում։ Ձախերի ծրագրային փաստաթղթերում ձևակերպվում էր, թեև ոչ միշտ հետևողականորեն, հեղափոխության «աստիճանական» զարգացման (բուրժուադեմոկրատականից սոցիալիստականի) գաղափարը։ Հիմնական ջանքերն ուղղվեցին մասսաների մոբիլիզացմանը՝ անմիջականորեն հակաիմպերիալիստական և դեմոկրատական խնդիրների լուծման և սոցիալիստական հեղափոխության համար պայմաններ ստեղծելու նպատակով։

Հաշվի առնելով հեղափոխության առաջին օրերի դասերը, սպարտակցիների կոնֆերանսը 1918 թ. նոյեմբերի 11-ին որոշում ընդունեց «Սպարտակի» միության» ստեղծման, այսինքն՝ ԳԱՍԴԿ-ի ներսում իր Կենտրոնական բյուրոյով, մամուլի օրգանով («Դի Ռոտե Ֆանեն») հեղափոխական ուժերի ավելի համախմբված կազմակերպության ստեղծման մասին։ Ամբողջ երկրում սկսվեց «Սպարտակ» միության կողմնակիցների միավորումը, նրա տեղական կազմակերպությունների հիմնումը։ Սպարտակցիները, ամենից առաջ Ռ. Լյուքսեմբուրգը, հուսալով ԳԱՍԴԿ-ի ղեկավարության փոփոխման հնարավորությունը, պահանջում էին կուսակցության արտակարգ համագումարի գումարում։

Նոյեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանում մարքսիստական կուսակցության բացակայությունը Գերմանիայում չէր կարող չազդել դասակարգային պայքարի ընթացքի վրա։ Դրանով ամենից առաջ կարելի է բացատրել ռեֆորմիստական պատրանքներից մասսաների ազատագրման դանդաղ տեմպը։ «Սպարտակի» անբավարար հեղափոխական փորձը, նրա կազմակերպչական թուլությունը և քաղաքական-գաղափարական անհասունությունը խանգարեցին նրան մեծամասնություն նվաճելու սովետներում և գլխավորելու մասսաներին՝ բուրժուադեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու համար մղվող պայքարում։

Գերմանիայում պրոլետարական հեղափոխության զարգացմանը խանգա-

ում էր տնտեսական հզորության հասած գերմանական բուրժուազիան, որը հենվում էր ռեֆորմիստների աջակցության վրա։ Բուրժուական հակահեղափոխությունը, կայզերական գեներալիտետը և ԳՍԴԿ-ի վերնախավը միավորվեցին սովետները վերացնելու նպատակով, բուրժուական հանրապետության ձևով պահպանելով խոշոր կապիտալի դասակարգային տիրապետությունը։ Այդ ուժերի գլխավոր քաղաքական պահանջն էր «Ազգային ժողովի գումարում» լոզունգը։ Արդեն նոյեմբերի 10-ին Ֆ. Էբերտի և բանակի գերագույն հրամանատարության միջև համաձայնություն ձևոք բերվեց հեղափոխական ուժերի դեմ մղվող պայքարում համագործակցելու վերաբերյալ։

Հեղափոխական ժամանակաշրջանում հնարավորություն չունենալով ուժով ճնշելու մասսաների շարժումը, խոշոր բուրժուազիան գործի դրեց զիջումների և կոմպրոմիսների փորձված տակտիկան. Գերմանիայի տիրող դասակարգերի տակտիկայում առաջատար տենդենցը ԳՍԴԿ-ի և ռեֆորմիստական արհմիությունների պարագլուխների օգտագործումն էր՝ հեղափոխության խորացումը կանխելու համար։ Նոյեմբերի 15-ին արհմիությունների ռեֆորմիստական պարագլուխները և մոնոպոլիստական կապիտալի ներկայացուցիչները համաձայնագիր ստորագրեցին «Գործարար համագործակցության» մասին։ Ֆինանսական մագնատները բանվորների օգտին դիմեցին զիջումների, որոնցից նրանք անցյալում հրաժարվում էին. ճանաչվում էր արհմիությունների իրավունքը՝ ներկայացնելու բանվոր դասակարգի շահերը, սահմանվում էր կոլեկտիվ պայմանագրերի և արբիտրաժային քննությունների սիստեմ, ձեռնարկություններում ստեղծվում էին ֆաբգործկոմներ, հայտարարվում էր 8-ժամյա աշխատանքային օր մտցնելու մասին և այլն։ Գերմանական մոնոպոլիաներին սպառնացող ազգայնացումը կանխելու այդ նույն դերը խաղաց նոյեմբերի վերջին ստեղծված «Սոցիալացման գծով հանձնաժողովը»։ Սակայն այն ոչ մի իրական իրավունքներ ու լիազորություններ չուներ։ Ավելին, նրա շեֆ Կ. Կաուցկին մշտապես նախազգուշացնում էր «չկանխամտածված քայլերի» դեմ, հայտարարելով «ավերակների սոցիալացման» վտանգի մասին։ Սակայն բանվոր դասակարգի մեծամասնությունը թյուրիմացության մեջ ընկավ ռեֆորմիստների նետած «Սոցիալացում է տեղի ունենում» լոզունգով։

Գերմանական ներքին հակահեղափոխության համախմբման համար կարևոր նշանակություն ունեցավ բուրժուական կուսակցությունների վերակազմումը։ Դեն նետելով հնացած լոզունգները, նրանք հանդես եկան իմպերիալիստական ուժերի ընդհանուր տակտիկայի համապատասխան, «դեմոկրատիայի» և «ժողովրդայնության» դրոշի ներքո։ Կաթոլիկական կենտրոնը, որը հիմնականում ներկայացնում էր խոշոր բուրժուազիային, շինովնիկությանը, ինչպես նաև Հարավ-Արևմտյան Գերմանիայի քաղաքի և գյուղի մեծաթիվ մանր բուրժուական խավերին, հանդես եկավ Քրիստոնեական-դեմոկրատական կուսակցության ցուցանակով (Մ. Էրցբերգերի և Ի. Վիրտի գլխավորությամբ)։ Պրոգրեսիստները և նացիոնալ-լիբերալների «չափավոր» թևը, որն արտահայտում էր բուրժուական մտավորականության լայն շրջանների, ինչպես նաև մշակող և մասամբ ծանր արդյունաբերության ձեռնարկատերերի շահերը, հայտարարեցին Գերմանական դեմոկրատական կուսակցության ստեղծման մասին։ Նացիոնալ-լիբերալների աջ թևը, որն արտահայտում էր ֆինանսական կապիտալի և ծանր ինդուստրիայի շահերը, հիմնեց Գերմանական ժողովրդական կուսակցությունը, որի պարագլուխը երկար տարիներ ճկուն և հեռատես բուրժուական քաղաքագետ Գ. Շտրեզեմանն էր։ Գերմանական ազգային ժողովրդական կուսակցության ցուցանակի տակ հանդես եկավ պահպանողականների նախկին

կուսակցությունը։ Նրա պարագլուխները (Վեստարպը, իսկ հետո՝ Հուգենբերգը) ձգտում էին կուսակցության դիրքերն ամրապնդել, իրենց ներկայացնելով գերմանական ժողովրդի ընդհանուր ազգային շահերի արտահայտիչներ։ Մի շարք բուրժուական կուսակցությունների ծրագրային հայտարարություններում հավաստիացումներ էին հնչում «իշխանության գոյություն ունեցող ձևի հետ համագործակցելու», հանրապետությունը ճանաչելու պատրաստականության մասին և այլն։

Գերմանական հակահեղափոխության պլաններում նշանակալի տեղ էր գրավում արտաքին-քաղաքական մաներումը։ ԺԼԽ-ն և նրա թիկունքին կանգնած բուրժուական շրջանները ձգտում էին համագործակցության հասնել Անտանտի և ԱՄՆ-ի հետ՝ Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում։ Դրանով նրանք հույս ունեին մեղմել զինադադարի և հաշտության պայմանները։ Իրենց հերթին հաղթող տերությունների կառավարող շրջանները տնտեսական ու քաղաքական ճնշում էին գործադրում Գերմանիայի վրա, ընդգծելով, որ սպարտակցիների հաղթանակի դեպքում Գերմանիայի համար կմերժվի պարենամթերքով օգնություն ցույց տալը և չի երաշխավորվի հաշտության պայմանագրի կնքումը։ Գերմանական իմպերիալիստական և ռեֆորմիստական պրոպագանդան լայնորեն օգտագործում էր այդ հայտարարությունները։ «Հա՛ց կամ բոլշևի՛զմ» լոզունգի տակ տեղի էր ունենում «Սպարտակի» սանձարձակ հալածանք։ Միաժամանակ Էբերտ-Հաազեի կառավարությունը հրաժարվեց Սովետական Հանրապետության հետ նորմալ դիվանագիտական հարաբերությունները վերականգնելուց և մերժեց սովետական ժողովրդի եղբայրական պարենային օգնությունը։

Հակահեղափոխության գլխավոր ղեկավար կենտրոն դարձավ բանակի գլխավոր հրամանատարության շտաբը։ Նոյեմբերի վերջին-դեկտեմբերի սկզբին այն արդեն պատրաստ էր սովետների զինված ջախջախմանը, իր տրամադրության տակ ունենալով ռեակցիոն միլիտարիստական զորամասեր՝ «կամավորական զորքերը»։ Դեկտեմբերի 6-ին Բեռլինում հակահեղափոխական խռովության փորձ ձեռնարկվեց մայրաքաղաքի սովետի գործկոմը ձերբակալելու, ապա և հեղափոխական կազմակերպությունները ջախջախելու նպատակով։ Նույնանման փորձեր կատարվեցին Գերմանիայի նաև մյուս քաղաքներում։ Թեև այդ ելույթները հակահարվածի արժանացան հեղափոխական բանվորների կողմից, վերջիններս չկարողացան հակահեղափոխությանը վճռական հարված տալ՝ պայքարի տարերայնության, անջատ-անջատ գործելու և միասնական ղեկավարության բացակայության պատճառով։ Բանվորների մեծամասնությունը դեռ չէր հասկացել ռեֆորմիստ պարագլուխների հակահեղափոխական դերը և շարունակում էր պաշտպանել Էբերտ-Հաազեի կառավարությանը։ Այդ հանգամանքը վճռական չափով կանխորոշեց սովետների բնույթն ու դերը գերմանական հեղափոխության մեջ։

Այդ մասին առավել պերճախոսությամբ վկայում էր Բեռլինի սովետի գործկոմի գործունեությունը։ Գլխավորվելով ձախ անկախական Ռ. Մյուլլերի և աջ սոցիալ-դեմոկրատ Բ. Մոլկենբուրի կողմից, նա չկարողացավ դառնալ հեղափոխական իշխանության մարմին։ Հստակ պատկերացում չունենալով հեղափոխության մեջ սովետների դերի մասին, Գործկոմը «սովետներ, թե՞ սահմանադիր ժողով» հարցին նվիրված բանավեճում փորձում էր սովետների սիստեմը միացնել բուրժուական պառլամենտարիզմի հետ։ Ռեֆորմիստների ազդեցության տակ գտնվող տեղական սովետների մեծ մասը սահմանափակվում էր ձևական բնույթ կրող հսկիչ ֆունկցիաներով։ Շատ դեպքերում սովետների

անվան տակ ստեղծվում էին զանազան «կոմիտեներ», որոնց կազմի մեջ մըտնում էին խոշոր բուրժուազիայի, զինվորականության ներկայացուցիչներ և կայզերական շինովնիկներ։ Այդպիսին էր, մասնավորապես, Քյոլնի այսպես կոչված Հասարակական փրկության կոմիտեն, օբերբուրգոմիստր Կ. Ադենաուերի գլխավորությամբ։ Բանակում, որպես կանոն, սովետներ էին ստեղծվում գլխավոր հրամանատարության կարգադրությամբ և հաճախ ղեկավարվում էին հակահեղափոխականորեն տրամադրված սպաների կողմից։ Նոյեմբերի 12-ին ԺԼԽ-ն կոչ արեց «գյուղացիական սովետներ» ստեղծել (բաղկացած կալվածատերերից, գյուղացիներից ու բատրակներից)՝ սեփականության նկատմամբ «ինքնակամ միջամտությունը» կանխելու նպատակով։

Միայն այն սովետների կողմից, որոնց գլուխ կանգնած էին սպարտակցիներ, ձախ ռադիկալներ կամ ձախ անկախականներ, փորձեր ձեռնարկվեցին փշրելու պետական հին ապարատը և սահմանափակելու մոնոպոլիաների իշխանությունը։

Ավելի եռանդուն էին գործում ձեռնարկություններում ստեղծված սովետները։ Շատ դեպքերում նրանց հաջողվում էր բարելավել բանվորների դրությունը, հասնել աշխատավարձի բարձրացման, կրճատել աշխատանքային օրը, հսկողություն սահմանել արտադրության նկատմամբ։ Այսպես, Լայնավերկի քիմիական ձեռնարկության (ուր զբաղված էր 16 հազ. մարդ) բանվորական սովետը գործում էր որպես իշխանության լիազոր օրգան։ Նրա օրինակին հետևեցին Միջին Գերմանիայի նաև մի քանի այլ ձեռնարկություններ։ Սակայն այդ սովետների հեղափոխական գործողությունները սահմանափակվում էին տեղական շրջանակներով և չէին կարող ամրապնդել կամ երկար ժամանակով ապահովել ընդունված միջոցառումների արդյունավետությունը։

Այսպիսով, թեև Գերմանիայում սովետներն առաջացան որպես պայքարի ելնող մասսաների օրգաններ և ձևի տեսակետից ընդհանուր շատ բան ունեին Ռուսաստանի սովետների հետ, դրանք չդարձան հեղափոխության մարմիններ՝ հեղափոխական պրոլետարական կուսակցության բացակայության և ռեֆորմիստների գերակշռող ազդեցության պատճառով։ Այդ մասին պերճախոս վկայում էին սովետների I համագումարի (16—21. XII. 1918 թ.) կազմը և նրա ընդունած որոշումները։ Վճռական ձայն ունեցող 489 պատվիրակների կեսից ավելին պատկանում էր ԳՍԴԿ-ին, 90-ը՝ ԳԱՍԴԿ-ին (նրանցից 10-ը սպարտակցիներ էին, ընդ որում Կ. Լիբկնեխտը և Ռ. Լյուքսեմբուրգը մանդատներ չէին ստացել)։ Համագումարի ռեֆորմիստական մեծամասնությունը քվեարկեց օրենսդիր և գործադիր ամբողջ իշխանությունը ԺԼԽ-ին հանձնելու օգտին։ Բանվորների և զինվորների պատգամավորների՝ համագումարում ընտրված կենտրոնական սովետին (բաղկացած էր ԳՍԴԿ-ի անդամներից) տրվում էր «պառլամենտական վերահսկողության» և կառավարության կարևորագույն օրենքների քննարկման միայն անորոշ իրավունք։ Գլխավոր հարցի՝ ո՞ւմ պետք է պատկանի իշխանությունը՝ սովետներին, թե՞ սահմանադիր ժողովին, վերաբերյալ բանավեճն ավարտվեց ազգային սահմանադիր ժողով գումարելու մասին որոշում ընդունելով, որն ըստ էության կանխորոշեց Գերմանիայում բուրժուապառլամենտական կարգերի հաստատումը։

Սովետների համագումարը սահմանագիծ եղավ Նոյեմբերյան հեղափոխության զարգացման մեջ։ Դեկտեմբերի երկրորդ կեսին առաջացած դասակարգային ուժերի հարաբերակցությունը վկայում էր հակահեղափոխության ուժերի նշմարվող գերակշռության մասին։

Դեկտեմբերի 24—25-ը գեներալիտետը, հենվելով «կամավորական» զոր-

քերի վրա, փորձ ձեռնարկեց զինաթափելու և վերացնելու ժողովրդական ծովային դիվիզիան՝ Բեռլինի հեղափոխական ուժերի կարևոր հենակետը։ Բանվորների միջամտության հետևանքով այդ գործողությունը հաջողություն չունեցավ։ Ավելին, հակահեղափոխության ելույթի դեմ ամբողջ Գերմանիայում ծավալված մասսայական բողոքների ազդեցությամբ փլուզվեց շայդեմանականների և ցենտրիստների կառավարական բլոկը. անկախականների պարագլուխները ձգտելով պահպանել իրենց ազդեցությունը մասսաների մեջ, հայտարարեցին ԺԼԽ-ից դուրս գալու մասին։

Գերմանիայի կոմունիստական կուսակցության ստեղծումը

Հեղափոխության դասերն առավել մեծ ակնհայտությամբ վկայում էին, որ պրոլետարիատի ավանգարդի ամբողջ հերոսականությունը և հեղափոխությունը մինչև հաղթանակը հասցնելու «Սպարտակի» ձգտումը չեն կարող փոխհատուցել հեղափոխական պրոլետարական կուսակցության բացակայությունը։ 1918 թ. վերջին վերջնականապես անհետացան ԳԱՍԴԿ-ի ղեկավարության փոփոխման հնարավորության ուղղությամբ սպարտակցիների ունեցած հույսերը։ Ձախ խմբերի շարքերում մշակվում էին մարքսիստական կուսակցության ծրագրային հիմունքները, սպարտակցիների և ձախ ռադիկալների համագերմանական կոնֆերանսի լարված նախապատրաստություն էր կատարվում ծրագրային և կազմակերպչական հարցերի քննարկման համար։

1918 թ. դեկտեմբերի 20-ին Բեռլինում դեպուտատների պալատի շենքում հավաքվեցին 83 պատվիրակներ (տեղական 26 կազմակերպություններից)։ Դեկտեմբերի 30-ին կոնֆերանսը վերակազմվեց որպես Գերմանիայի կոմունիստական կուսակցության (ԳԿԿ) հիմնադիր համագումար։ Ձախ ռադիկալ խմբերը, որոնք դեկտեմբերի կեսին միավորվել էին «Գերմանիայի կոմունիստ-ինտերնացիոնալիստներ» կազմակերպության մեջ, միացան ԳԿԿ-ին։

Համագումարի աշխատանքում կենտրոնական տեղ գրավեց կուսակցության ծրագրի քննարկումը, որի հիմնավորմամբ հանդես եկավ Ռ. Լյուքսեմբուրգը։ Ռ. Լյուքսեմբուրգը քննադատեց «սոցիալիզմի մեջ կապիտալիզմի խաղաղ ներաճման» ռեֆորմիստական տեսությունները և ԳՍԴԿ-ի ու ԳԱՍԴԿ-ի պարագլուխների ռեֆորմիստական պրակտիկան, հիմնավորեց բանվոր դասակարգի պատմական դերը սոցիալիզմի իրականացման գործում, արտադրության հիմնական միջոցների հանրայնացման անհրաժեշտությունը, որպես սոցիալիստական վերափոխությունների նախադրյալ։ ԳԿԿ ծրագիրն ընդհանուր առմամբ ճիշտ պատասխան էր տալիս կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում պետության և հեղափոխության հիմնական հարցերին, ներառյալ նաև պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտության ճանաչումը։ Այն պարունակում էր նաև դեմոկրատական բնույթի պահանջներ՝ կոչ էր անում վերակառուցել սովետները, զինաթափել հակահեղափոխությանը և զինել պրոլետարիատին։ Սակայն ագրարային հարցում կրկնվեցին սպարտակցիների հոկտեմբերյան մանիֆեստի սխալները։

Այնուհետև համագումարը քննարկեց ԳԿԿ-ի վերաբերմունքը ազգային ժողովի և տնտեսական պայքարի նկատմամբ։ Հակառակ Կ. Լիբկնեխտի, Ռ. Լյուքսեմբուրգի և մի քանի ուրիշ պատվիրակների վճռական առարկություններին, համագումարի մեծամասնությունն արտահայտվեց ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու և ռեֆորմիստական արհմիություններում կոմունիստների աշխատելու դեմ։ Ադանդավորական տարրերն առաջադրեցին «Կորե՛ք արհմիություններից» լոզունգը։ Այդ սխալ դիրքը վկայում էր դասակարգային ուժերի իրական հարաբերակցությունը սթափ գնահատելու անկարողության

մասին։ Գերմանական կոմունիստների շրջանում տարածված էին պատկերացումներն այն մասին, թե բուրժուազիան ի վիճակի չէ պատերազմում կրած պարտությունից և հեղափոխական ճգնաժամից ելք գտնելու։ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելը և այլ հարցեր դիտվում էին որպես ուժերի շեղում գլխավոր նպատակից՝ իշխանության համար մղվող պայքարից։

ԳԿԿ-ի ստեղծումը շրջադարձային սահմանագիծ եղավ Գերմանիայի բանվորական շարժման զարգացման մեջ, նշանակում էր պրոլետարիատի ավանգարդի խզում օպորտունիզմից ու ցենտրիզմից, խթանեց կոմունիստական կուսակցությունների ձևավորման պրոցեսը Եվրոպայի մյուս երկրներում, կարևոր նախադրյալներ ստեղծեց Կոմունիստական ինտերնացիոնալի կազմավորման համար։

Բանվոր դասակարգի պարտությունը։ Նոյեմբերյան հեղափոխության բնույթը

Բուրժուազիան և ԳՍԴԿ-ի ռեֆորմիստ ղեկավարությունը գործադուլային շարժման ալիքի աճման և կոմկուսի ստեղծման մեջ տեսնում էին երկրում ուժերի հարաբերակցության փոփոխման վտանգ։ Այդ պատճառով հակահեղափոխությունը որոշեց վաղաժամ ելույթ հրահրելով, կոմկուսին ջախջախել և այն վերացնել ավելի շուտ, քան հեղափոխական ուժերի աճման այդ տենդենցը կսկսեր վճռական ներդրություն ունենալ դասակարգային պայքարի ընթացքի վրա։

Հունվարի սկզբին Բեռլինի պոլիցեյ պրեզիդենտի պոստից հանվեց ձախ անկախական Է. Էյխհորնը։ Կառավարության գործողությունները բանվորների բուռն դայրույթ առաջացրին։ Հեղափոխական ավագները, ԳԱՍԴԿ և ԳԿԿ Բեռլինի ղեկավարությունը բանվորներին ու զինվորներին կոչ արեցին զանգվածային քաղաքական գործադուլի և ցույցերի դիմել հետևյալ լոզունգներով՝ Էյխհորնի վերականգնում պաշտոնում, հակահեղափոխության զինաթափում և բանվորների զինում։ Հունվարի 5-ին ավելի քան 100 հազ. ցուցարարներ լցվեցին Բեռլինի փողոցները՝ պահանջելով. «Կորչի՞ Էբերտ-Շայդեմանի կառավարությունը»։ Վիթխարի զանգվածային ցույցի ազդեցությամբ այդ նույն օրը կայացած իրենց խորհրդակցությունում հեղափոխական ավագները պահանջեցին տապալել կառավարությունը։ Նրանց պաշտպանեց ԳԱՍԴԿ Բեռլինի ղեկավարությունը։ Այդ պայմաններում Կ. Լիբկնեխտը և Վ. Պիկը, որոնք խորհրդակցությանը մասնակցում էին որպես ԳԿԿ ներկայացուցիչներ, նույնպես արտահայտվեցին ի պաշտպանություն հեղափոխական ավագների լոզունգի։ Ընդունվեց ուժերի հարաբերակցությանը չհամապատասխանող որոշում՝ պրոլետարիատին կոչ անել զինված ապստամբության՝ ԺԼԿ-ի տապալման և իշխանության զավթման համար։ Սակայն պայքարը ղեկավարելու համար ստեղծված գործողության կոմիտեն, որտեղ վճռական դերքեր էին գրավում անկախականները, ի վիճակի չեղավ կազմակերպելու մասսաներին։ Մի քանի օրվա ընթացքում զինված բանվորները, գործելով տարերայնորեն, գրավեցին բազմաթիվ կարևոր պետական հիմնարկներ ու թերթերի խմբագրություններ։ Հունվարի 6-ին Բեռլինում ընդհանուր գործադուլ ծավալվեց։ Հարյուր հազարավոր ցուցարարներ լցվեցին փողոցները, պահանջելով վճռական գործողություններ։ Բայց գործողության կոմիտեի անդամների մեծամասնությունը վախեցավ ընդունված որոշումների հետևանքներից և հավանություն տվեց ԳԱՍԴԿ-ի ցենտրիստ ղեկավարության գծին, որը կառավարության հետ բանակցություններ էր սկսել «հետագա արյունահեղությունը կանխելու նպատակով»։ Իսկ ԳԿԿ-ն չափազանց փոքրաթիվ էր և բավարար ազդեցություն չուներ, որպեսզի դառնար

դրության տերը։ Այդ պայմաններում ԳԿԿ Ցենտրալեն[5] հունվարի 8-ի նիստում իր ներկայացուցիչներին ետ կանչեց գործողության կոմիտեից, միաժամանակ իր համերաշխությունը հայտնելով պայքարող մասսաներին։ Ի պաշտպանություն Բեռլինի պրոլետարիատի՝ հանդես եկան Բրաունշվեյգի, Համբուրգի, Բրեմենի, Հալլեի և մյուս քաղաքների բանվորները։ Սակայն բանվորները չունեցան միասնական ղեկավարություն։ Հեղափոխական ավանգարդին չհաջողվեց շարժման մեջ ներգրավել կարևոր արդյունաբերական շրջանների բանվորների մեծամասնությանը։ Իսկ բանակը շեղոք ու սպասողական դիրք գրավեց։ Ցենտրիստների մանևրների հետևանքով միասնական ճակատը մայրաքաղաքում քայքայվեց։ Հունվարի 8-ին Նոսկեի հրամանատարությամբ սկսվեց հակահեղափոխական ուժերի ներխուժումը Բեռլին։ Մի քանի օր կատաղի մարտեր էին տեղի ունենում։ Բանվորները հերոսական դիմադրություն էին ցույց տալիս Նոսկեի՝ թվապես և սպառազինությամբ իրենց գերազանցող բանդաներին։ Հունվարի 12-ին Բեռլինն ընկավ «կարգապահության ուժերի» ձեռքը։ 1919 թ. հունվարի 15-ին Կ. Լիբկնեխտը և Ռ. Լյուքսեմբուրգն սպանվեցին հակահեղափոխական վարձկանների կողմից։

Հակահեղափոխական ուժերի հաղթանակը, բուրժուական մամուլի սանձարձակ հակակոմունիստական հիստերիան տեռորի էին ենթարկում ու բարոյալքում պրոլետարական ու մանր բուրժուական խավերին։ Պրոլետարիատի պարտությունը ապահովեց բուրժուական կուսակցությունների հաջողությունը 1919 թ. հունվարի 19-ին կայացած ազգային ժողովի ընտրություններում։ Նրանք ստացան մանդատների մոտ 56 տոկոսը։

Եվ այսպես, Նոյեմբերյան հեղափոխությունը դնաց վարընթաց գծով։ Սկզբում գործողությունների միասնությամբ միավորված հեղափոխական զանգվածները դուրս եկան ռեֆորմիստ պարագլուխների հսկողությունից և հեղափոխություն սկսեցին։ Պայքարի ընթացքում ստեղծված սովետները շատ տեղերում հեղափոխության մարմիններ էին։ Միապետության տապալումից, Էբերտ-Հաազեի կառավարության ստեղծումից, զինադադար կնքելուց, «Գործարար համագործակցության» վերաբերյալ համաձայնագիր ստորագրելուց հետո հեղափոխության զարգացումն արդելակվեց։ Գերմանիայի բանվոր դասակարգը, դանվելով ռեֆորմիստական գաղափարախոսության և ցենտրիզմի ազդեցության տակ, ի վիճակի չեղավ հասկանալու հակահեղափոխության մանևրները, պայքարի առաջին հաջողություններն ընկալեց իբրև սոցիալիստական հեղափոխության հաղթանակ։ Միայն պրոլետարիատի ավանգարդը, որին ներկայացնում էր «Սպարտակը», առաջադրեց բուրժուադեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու լոզունգ։ Բանվոր դասակարգի պառակտվածության արտացոլում եղավ սովետների իշխանություն կամ ազգային ժողով ալտերնատիվը։ Չնայած 1918 թ. վերջին տեղի ունեցած գործադուլային շարժման վերելքին, հեղափոխական ուժերի ամրապնդմանը (ԳԿԿ-ի ստեղծման հետևանքով), 1919 թ. հունվարի ընթացքում պրոլետարական զանգվածների հերոսական պայքարին, չհաջողվեց արգելակել հեղափոխության զարգացման վայրընթաց գիծը և փոխել ուժերի հարաբերակցությունը։

Նոյեմբերյան հեղափոխությունը բուրժուադեմոկրատական բնույթ էր կրում։ Այն չքայքայեց գերմանական իմպերիալիզմի և միլիտարիզմի տիրապե-

[5] ԳԿԿ Ցենտրալե-կուսակցության ղեկավար մարմինը Կենտկոմի պլենումների և համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում, նրա կազմի մեջ մտնում էին քաղբյուրոն և կազմբյուրոն։

տությունը։ Չհաջողվեց լիակատար ծավալով լուծել նաև հեղափոխության բուրժուադեմոկրատական խնդիրները, մասնավորապես վերացնել յունկերական հողատիրությունը։ Հեղափոխությունից հետո էլ կալվածատերերը (բոլոր տնտեսությունների 1,5 տոկոսը) տիրում էին հողի գրեթե 34 տոկոսին, իսկ մանր գյուղական սեփականատերերի 57,3 տոկոսն ուներ 4 տոկոսից էլ պակաս հողատարածություն։ Բատրակների թիվը հասնում էր ավելի քան 3 մլն մարդու (գյուղական բնակչության 23 տոկոսը)։

Դրա հետ մեկտեղ Նոյեմբերյան հեղափոխությունը, որը որոշակի չափով կատարվեց պրոլետարական մեթոդներով, գերմանական աշխատավորությանը քաղաքական լայն իրավունքներ տվեց։ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո այն ամենահզոր պրոլետարական շարժումն էր Եվրոպայում։

Նոյեմբերյան հեղափոխության պատմագրությունը

Նոյեմբերյան հեղափոխությունը կարևոր տեղ է գրավում մարքսիստական պատմագրության մեջ։ Նոյեմբերյան հեղափոխության պատմության գիտական մշակման հիմքերը դրել է Վ. Ի. Լենինը։ Նա բացահայտեց Գերմանիայի դասակարգային ուժերի հարաբերակցությունը, հեղափոխական զարգացման բովանդակությունը և հեռանկարներն իմպերիալիզմի դարաշրջանում։ Բացատրելով գերմանական բանվորական շարժման թուլության արմատական պատճառները, Լենինն ամենից առաջ նշում էր օպորտունիզմից հեղափոխական ուժերի գաղափարական ու կազմակերպական սահմանազատման ձգձգված պրոցեսը. «Կան այնպիսի դավաճանների կուսակցություններ, ինչպես Շայդեմանները» կամ «այնպիսի լակեյական հոգիների կուսակցություններ, ինչպես Կաուցկին։ Չկա հեղափոխական կուսակցություն... այդ պակասը... մնում է որպես մեծ դժբախտություն ու մեծ վտանգ»[6],— գրում էր նա։ Կանգ առնելով Նոյեմբերյան հեղափոխության բնույթի բնութագրման վրա, Լենինն այն անվանում էր բուրժուա-դեմոկրատական. Ժողկոմսովետի 1918 թ. 12. XI-ի նիստում նա հայտարարում էր, որ Գերմանիայում «հիմնականում, ինչպես երևում է, այնուամենայնիվ փետրվար է, այլ ոչ թե հոկտեմբեր»[7]։

Երկու պատերազմների միջև և 1945 թ. հետո ՍՍՀՄ-ում հրապարակվել են զգալի քանակությամբ գրքեր ու հոդվածներ, որոնք լուսաբանում են Նոյեմբերյան հեղափոխության խնդիրները, նրա բնույթն ու շարժիչ ուժերը[8]։ Սակայն մինչև 50-ական թվականների վերջը պատմական գրականության մեջ միասնական կարծիք չկար Նոյեմբերյան հեղափոխության բնույթի հարցի վերաբերյալ. որոշ պատմաբաններ այն համարում էին պարտություն կրած պրոլետարական հեղափոխություն, մյուսները՝ բուրժուադեմոկրատական, երրորդները՝ չավարտված բուրժուական հեղափոխություն։ 50-ական թվականների վերջերին ԳԴՀ-ի և ՍՍՀՄ-ի պատմագիտական գրականության մեջ ծավալված բանավեճը (հեղափոխության 40-ամյակի կապակցությամբ) և նոր հետազոտությունների հանդես գալը թույլ տվեցին ավելի ճիշտ գնահատական տալ Նոյեմբերյան հեղափոխությանը։

Հեղափոխության բուրժուադեմոկրատական բնույթի վերաբերյալ մարքսիստական պատմագրության մեջ առավել լրիվ և այժմ ընդհանուր ճանաչման արժանացած տեսակետը հիմնավորված է Ս. Յա. Դրաբկինի «Ноябрьская революция в Германии» (Մ., 1967) մենագրության մեջ։

Երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում գերմանական մարքսիստական պատմագրության ամենախոշոր հետազոտությունը «Գերմանական հեղափոխության պատկերազարդ պատմությունն»[9] է, որը հրատարակվել է նրա 10-ամյա հոբելյանի առթիվ։ Նոյեմբերյան հեղափոխության իրադարձությունների գնահատականի հարցում գերմանական մարքսիստ պատմաբաններն ընդհանուր շատ բան ունեն սովետական պատմագրության հետ։ Նոյեմբերյան հեղափոխության պրոբլեմների խոր մարքսիստական մշակումն սկսվեց ԳԴՀ-ի ստեղծումից հետո։ Մեծ նշանակություն ունեցավ նոր արխիվային աղբյուրների ներգրավումը, ինչպես նաև հեղափոխության գլխավոր հարցերի գծով 50-ական թվականների վերջերին տեղի ունեցած բանավեճերը և Վ. Ուլբրիխտի ելույթները[10]։ Նոյեմբերյան հեղափոխության 50-ամյակի առթիվ ԳԴՀ-ում հրապարակվեց հեղափոխության «Պատկերազարդ պատմության»[11] նոր, լիովին վերամշակված հրատարակությունը։

Նոյեմբերյան հեղափոխությունը գերմանական բուրժուական և ռեֆորմիստական պատմագրության կենտրոնական պրոբլեմներից մեկն է։ Վայմարյան հանրապետության բուրժուական պատմաբանների և ռեֆորմիստական պատմագրության համար ընդհանուրը հեղափոխության պատմական օրինաչափության ժխտումն էր։ Այն մեկնաբանվում էր որպես պատերազմում Գերմանիայի կրած պարտության արդյունք։ Այսպիսով, պարտության պատճառներն ըստ էության նույնացվում էին հեղափոխության պատճառների հետ։ Լայն տարածում էր գտել «դաշույնով թիկունքին հասցրած հարվածի» վերաբերյալ վարկածը։ Գերմանական բանակն իբր ստիպված եղավ զենքը վայր դնել «գերմանական բոլշևիկների» և «ռուսական գործակալների»՝ «մարքսիստների դավաճանության» հետևանքով[12]։ Սակայն եթե ծայրահեղ ռեակցիոն պատմաբանները (Գ. Բելով, Դ. Շեֆեր և ուրիշներ) պարտության համար մեղադրում էին ոչ միայն սպարտակցիներին, այլև ռեֆորմիստներին և լիբերալ բուրժուազիային, ապա չափավոր թևը (Հ. Դելբրյուկ, Ֆ. Մայնեկե և ուրիշներ)՝ գերմանական բանվորների միայն հեղափոխական մասին, բարձր գնահատելով ԳՍԴԿ-ի օպորտունիստական թևի ծառայությունները[13]։ Նրանք պնդում էին, որ հեղափոխությունը կարելի էր կանխել, ժամանակին կանգնելով ռեֆորմների ուղու

---

[6] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 127։

[7] «Известия ВЦИК», 1918, 12 ноября.

[8] Հիմնական հետազոտությունների ցուցակը տե՛ս Ն. Ֆ. Ֆարբմանի „Изучение в СССР новейшей истории германского рабочего движения" (Обзор литературы) հոդվածում։ „Германское рабочее движение в новейшее время" (Մ., 1962) գրքում. տե՛ս նաև Ս. Յա. Դրաբկինի „Ноябрская революция в Германии" (Մ., 1967) մենագրության մատենագիտական հավելվածը։

[9] Տե՛ս „Illustrierte der deutschen Revolution". B., 1929.

[10] Տե՛ս **В. Ульбрихт.** О характере Ноябрьской революции. «Вопросы истории», 1958, № 8. Նույնի՝ О Ноябрьской революции 1918 г. в Германии. «Новая и новейшая история», 1959, № 1.

[11] Տե՛ս „Illustrierte Geschichte der Novemberrevolution in Deutschland. Von Inst. f. Marximus-Leninismus beim ZK d. SED", 1968.

[12] Տե՛ս **H Tiedemann,** Sowjetrussland und die Revolutionisierung Deutschland. 1917—1919. B. 1936; **W. Kloeber.** Von Weltkrieg zur nationale Revolution. Deutsche Geschichte 1914—1933. Leipzig. 1943.

[13] Տե՛ս **F. Mainecke.** Nach der Revolution. München u. Berlin. 1919. **N. Onken.** Die inneren Ursachen der Revolution. „Annalen fur soziall Politik, 1918, № 3/4.

վրա։ Ռեակցիոն ուղղության պատմաբաններն, ընդհակառակը, հեղափոխության կանխման վճռական պայմանը տեսնում էին քաղաքական ռեակցիայի ուժեղացման մեջ («Ռեֆորմները չեն կարող պաշտպանել հեղափոխությունից»,— հայտարարում էր Ա. Վաալը)։

Ռեֆորմիստական ուղղության առավել խոշոր հետազոտությունը Ա. Ռոզենբերգի աշխատությունն էր Վայմարյան հանրապետության ծագման ու պատմության մասին[14]։ Հեղափոխության պատճառների, ինչպես և նրա ընթացքի լուսաբանման մեջ հեղինակը հակասական է և անհետևողական, բայց ըստ էության, ինչպես և բուրժուական պատմաբանները, նա հեղափոխությունը համարում էր «պատահական» երևույթ։ Ա. Ռոզենբերգը ժխտում էր գերմանական բանվոր դասակարգի մոտ սոցիալիստական ձգտումների առկայությունը հեղափոխության նախօրյակին, ելնում էր սովետների և բուրժուական դեմոկրատիայի զուգակցման միջոցով հեղափոխության զարգացման «երրորդ ուղու» և Գերմանիայում «սոցիալական դեմոկրատիայի» պետության ստեղծման հնարավորության վերաբերյալ ցենտրիստական կոնցեպցիաներից։ Այդ հնարավորությունը, ըստ հեղինակի կարծիքի, մերժում էին, մի կողմից, սպարտակցիները, իսկ մյուս կողմից, ԳՍԴԿ-ի օպորտունիստական վերնախավերը, որոնք դաշինք էին կնքել «հին կարգերի» ուժերի հետ, մի բան, որը պայմանավորեց Վայմարյան հանրապետության թուլությունը և հեշտացրեց նրա կործանումը։ Ա. Ռոզենբերգի ցենտրիստական կոնցեպցիան լայն տարածում է գտել ԳՖՀ-ի ռեֆորմիստական պատմագրության մեջ[15], ամենից առաջ այսպես կոչված նեոցենտրիստական ուղղությանը պատկանող պատմաբանների շրջանում (Ե. Կոլբ, Պ. Երտցեն, Ե. Մատիաս և ուրիշներ)[16]։ Նեոցենտրիստական կոնցեպցիայի դեմ հանդես են գալիս ինչպես աջ ռեֆորմիստական ուղղության ներկայացուցիչները (այդ թվում նաև ԳՍԴԿ-ի նախկին գործիչներն իրենց հուշերում), այնպես էլ բուրժուական մի քանի պատմաբաններ[17]։ Նրանց նպատակն է՝ արդարացնել Նոյեմբերյան հեղափոխության մեջ ԳՍԴԿ-ի օպորտունիստական թևի գործունեությունը, թե, որը «Գերմանիան փրկեց բոլշևիզմից»։ ԳՖՀ-ի բուրժուական պատմագրությունը Նոյեմբերյան հեղափոխության արմատական պրոբլեմների լուսաբանման մեջ հիմնականում զարգացնում է այն կոնցեպցիաները, որոնք ձևակերպվել են Վայմարյան հանրապետության ժամանակաշրջանում[18]։

[14] Տե՛ս A. Rosenberg. Entstehung und Geschichte der Weimarer Republik. Frankfurt-am-Main, 1955:

[15] Տե՛ս Л. В. Овчинникова. Неоцентристское направление в социал-реформистской историографии ФРГ о так называемом третьем пути развития Ноябрьской революции в Германии. «Вестник Московского университета», серия «История», 1964, № 2:

[16] Տե՛ս E. Kolb. Arbeiterräte in der deutschen Innenpolitik 1918/19. Düsseldorf 1963:

[17] Տե՛ս W. Hoegner. Die Verratene Republik. München. 1958; K. D. Erdmann. Die Geschichte der Weimarer Republik als Problem der Wissenschaft. „Vierteljahreshafte fur Zeitgeschichte", 1956, H. 3:

[18] Տե՛ս K. Bracher. Die Auflösung der Weimarer Republik. Stuttgart u. Düsseldorf, 1957; H. Heidegger. Die deutsche Sozialdemokratie und der nationale Staat 1870—1920. Göttingen, 1956.

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՎԱՅՄԱՐՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բուրժուական հանրապետության կազմավորումը Գերմանիայում։ Վայմարյան սահմանադրությունը

1919 թ. փետրվարի 6-ին Վայմարում (այստեղից էլ Վայմարյան հանրապետությունը) բացվեց ազգային սահմանադիր ժողովը։ Քաղաքական անկայունության իրադրության պայմաններում, հասկանալով Գերմանիայի համար ծանր հաշտության պայմանագրի ստորագրման անհրաժեշտությունը, գերմանական բուրժուազիան, չնայած ժողովում ունեցած իր իշխող դիրքին, հրաժարվեց զուտ բուրժուական կառավարություն ստեղծելուց։ Հանրապետության ժամանակավոր պրեզիդենտ ընտրվեց սոցիալ-դեմոկրատ Ֆ. Էբերտը։ Ֆ. Շայդեմանի գլխավորած նոր կառավարության կազմի մեջ մտան ԳՍԴԿ-ի, Կենտրոնի և Գերմանական դեմոկրատական կուսակցության («Վայմարյան կոալիցիա») ներկայացուցիչները։

Բուրժուական հանրապետության կազմավորումը տեղի էր ունենում հրանոթների որոտի ուղեկցությամբ, բարիկադային մարտերի պայմաններում։ 1919 թ. փետրվարից Գերմանիայում սկսվեց նոր հեղափոխական վերելք, որն ընդգրկեց երկրի բոլոր արդյունաբերական կենտրոնները և արտացոլեց բանվոր դասակարգի հիասթափությունը հեղափոխության անավարտվածությունից։ Բեռլինում տեղի ունեցած հունվարյան ապստամբությունից հետո Բրեմենում և մի քանի այլ քաղաքներում հռչակվեցին սովետական հանրապետություններ։ Փետրվարի կեսերին մոտ 200 հազ. բանվորներ ընդգրկած հզոր գործադուլային շարժում բռնկվեց Հռենոս-Վեստֆալյան շրջանում։ Փետրվարի վերջին գործադուլներն ընդգրկեցին Միջին Գերմանիան, մարտի սկզբին ընդհանուր գործադուլ ծագեց Բեռլինում, ապրիլին նորից պայքարի ելան Ռուրի 300 հազ. բանվորներ։ Ապրիլի 13-ին Բավարիայում հռչակվեց սովետական հանրապետություն, որը գոյություն ունեցավ երկու շաբաթ։ Իշխանությունն անցավ կոմունիստ Եվգենի Լևինեի գլխավորած կառավարության (սոցիալ-դեմոկրատներից, անկախականներից և կոմունիստներից կազմված գործողությունների կոմիտե) ձեռքը։ Հեղափոխական կառավարությունը սկսեց իրականացնել պրոլետարիատի դիկտատուրայի ծրագիր. ձեռնարկություններում սահմանվեց բանվորական վերահսկողություն, ազգայնացվեցին բանկերը, կազմավորվեց կարմիր բանակ և միջոցներ ձեռնարկվեցին բուրժուազիային զինաթափելու համար, պարենի պաշարները բռնագրավվում էին և բաժանվում բանվորներին։

Պայքարի ելնելով, գերմանական պրոլետարիատը պահանջում էր փոխել սեփականության հարաբերությունները (սոցիալացում), արտադրության նկատմամբ սահմանել վերահսկողություն և ստեղծել սովետական իշխանություն, որպես Նոյեմբերյան հեղափոխության նվաճումների պահպանման ու ընդլայնման երաշխիք։ Դրա հետ մեկտեղ բանվոր դասակարգի մեծամասնությունը դեռևս չէր հավատում «օրինական ճանապարհով», ազգային ժողովի միջոցով սոցիալացում կատարելու հնարավորությանը։ Այդ պատրանքները սնվում էին ԳՍԴԿ պարագլուխների քաղաքականությամբ, որոնք առաջադրեցին սովետների սիստեմը սահմանադրության մեջ մտցնելու, այսինքն՝ բուրժուազիայի դիկտատուրայի և պրոլետարիատի դիկտատուրայի համատեղման պահանջ[19]։ Այդ հանգամանքները, ինչպես նաև ԳԿԿ-ի անփորձությունը և թուլությունը, որոնք

[19] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 481։

նրան թույլ չտվեցին պայքարի կազմակերպող կենտրոն դառնալ համազգային մասշտաբով, պայմանավորեցին պրոլետարիատի հեղափոխական ելույթների ցրվածությունը և անհավասարաչափությունը։ 1919 թ. առաջին կեսի արյունալի մարտերում հակահեղափոխությունը ծանր պարտությունների մատնեց հեղափոխական ավանգարդին և ջլատեց հեղափոխության խորացման փորձերը։

Սակայն հեղափոխական վերելքը, որն ուղեկցում էր Վայմարյան հանրապետության ստեղծմանը, վճռական նշանակություն ուներ Գերմանիայում սոցիալական հիմնարկություններով համեմված բուրժուական հանրապետության հաստատման համար, որի մասին, մասնավորապես, վկայում են «սոցիալացման» վերաբերյալ օրենքները, սովետների ամրապնդումը սահմանադրության մեջ (ֆաբգործկոմների ձևով)։

1919 թ. մարտին ազգային ժողովն ընդհանուր օրենք ընդունեց «սոցիալացման» վերաբերյալ, որը հայտարարություններ էր պարունակում «դրա համար հասունացած արդյունաբերական ձեռնարկությունները» հասարակական սեփականության վերածելու («օրինական ճանապարհով» կամ փոխհատուցման միջոցով) և անհրաժեշտության դեպքում նյութական բարիքների արտադրության ու բաշխման կարգավորման հնարավորության մասին։ «Ածխային տընտեսության կարգավորման» վերաբերյալ այդ նույն օրն ընդունված օրենքը կոնկրետացնում էր սոցիալացման մեկնաբանությունը՝ այն չէր շոշափում սեփականության հարաբերությունները։ Ածխային արդյունաբերության նկատմամբ ընդհանուր հսկողություն սահմանելու համար ստեղծվեց կայսերական ածխային խորհուրդ, որը «հասարակության օգտին» պետք է կարգավորեր ածխի հանույթի, իրացման, գների, աշխատանքի պայմանների և աշխատավարձի հարցերը։ Ավելի ուշ համանման բնույթի օրենքներ ընդունվեցին արդյունաբերության մի քանի այլ ճյուղերի կարգավորման մասին։ 1920 թ. փետրվարին ընդունվեց արտադրական խորհուրդների մասին օրենքը, որը ճանաչում էր ֆաբրիկագործարանային կոմիտեների սահմանափակ իրավունքը՝ մասնակցելու աշխատանքի վարձակալման, արձակման և այլ հարցերի լուծմանը. նրա իրականացումը, սակայն, կախված էր պրոլետարական զանգվածների քաղաքական ակտիվության մակարդակից։ Այդ միջոցառումները, որոնք ռեֆորմիստական պրոպագանդայի կողմից ռեկլամվեցին որպես սոցիալացման սկիզբ, համապատասխանում էին ամբողջապես կապիտալիստական դասակարգի շահերին, արտացոլում պետական-մոնոպոլիստական կարգավորման՝ պատերազմի տարիներին ձևավորված մեթոդները եռպատերազմյան վերականգնման պայմաններին հարմարեցնելու ձգտումը։

Սահմանադրությունը, որը Վայմարյան ազգային ժողովն ընդունեց 1919 թ. հուլիսի 31-ին և ուժի մեջ մտավ օգոստոսի 11-ին, համապատասխանում էր ուժի մեջ մտավ բուրժուական հանրապետության ... երկրում առաջացած քաղաքական ուժերի հարաբերակցությանը։ Եթե բանվոր դասակարգը բավականաչափ համախմբված ու կազմակերպված չէր, որպեսզի հասներ սոցիալիստական ծրագրի իրականացմանը, ապա բուրժուազիան ևս չէր կարող յոլա գնալ առանց իր դասակարգային տիրապետությունը դիմակավորելու։ Իրադրության այդ հակասականությունը իր արտացոլումը գտավ սահմանադրության առաջին հոդվածի պարադոքսալ ձևակերպման մեջ՝ «գերմանական կայսրությունը հանրապետություն է»։ Այդ նույն հոդվածն ասում էր, որ «պետական իշխանությունը ելնում է ժողովրդից», մյուս հոդվածներում հրաչակվում էին «աշխատանքի պաշտպանության», «մարդուն վայել գոյության ապահովման» և այլ սկզբունքներ։ Սահմանադրությունը սահմանում էր ընդհանուր ընտրական իրավունք տղամարդկանց ու կանանց համար (20 տարին լրացած), «ժողովրդական ներկայացուցչություն», բուրժուադեմոկրատական իրավունքներ ու ազատություններ, համաժողովրդական հարցում (հանրաքվե)։ Ընդլայնվեց հանրապետության օրենսդիր մարմնի՝ ռայխստագի իրավունակությունը. կառավարությունը կազմվում էր պառլամենտի մեծամասնության կողմից և պատասխանատու էր նրա առջև։ Սակայն ռայխստագի իրավունքները սահմանափակվում էին երկրորդ պալատով՝ ռայխսրատով և պրեզիդենտով։ Երկրամասերի ներկայացուցիչներից կազմված ռայխսրատը վերահսկիչ մարմին էր և ուներ վետոյի իրավունք։

Արտակարգ լայն, գրեթե միապետական լիազորություններ էր ստանում գործադիր իշխանության ղեկավարը՝ պրեզիդենտը. կայզերի փոխարեն ռեակցիոն ուժերը ձգտում էին Գերմանիայի գլուխ կանգնեցնել սահմանադրական ինքնակալի։ Պրեզիդենտը նշանակում ու ազատում էր կանցլերին ու մինիստրներին, կարող էր ցրել ռայխստագը և նոր ընտրություններ նշանակել։ Նա բանակի գլխավոր հրամանատարն էր (1919 թ. սկսվեց կանոնավոր բանակի և նավատորմի՝ ռայխսվերի ստեղծումը) և պետությունը ներկայացնում էր արտասահմանում։ Սահմանադրության 48 հոդվածը նրան իրավունք էր տալիս հրապարակել արտակարգ դեկրետներ, օգտագործել հարկադրման բոլոր միջոցները (ընդհուպ մինչև զինված ուժ գործադրելը), ինչպես նաև դադարեցնել սահմանադրության կարևորագույն հոդվածների գործողությունը։ Հետևապես գործադիր իշխանությունը սահմանադրական հիմքեր էր ստանում դիկտատուրա հռչակելու համար։ Պրեզիդենտի դիկտատորական լիազորությունները նրան օրենսդիր իշխանությունից վեր էին բարձրացնում, նա անկախ էր ռայխստագից և փաստորեն հակադրված էր նրան, ընտրված լինելով (7 տարով) ընդհանուր քվեարկությամբ։

Ամբողջությամբ վերցրած, սակայն, Վայմարյան սահմանադրությունը, որն արտացոլում էր Նոյեմբերյան հեղափոխության հետևանքով երկրում կատարված քաղաքական տեղաշարժերը, գերմանական պրոլետարիատի և Գերմանիայի բոլոր դեմոկրատական ուժերի խոշոր նվաճումն էր։

Վայմարյան ազգային ժողովում ծավալված վիճաբանությունների հետ միաժամանակ Փարիզում տեղի էր ունենում (այլ պրոբլեմների թվում) Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի քննարկում՝ որոշվում էր Վայմարյան հանրապետության միջազգային իրավական վիճակը։ Վերսալյան պայմանագրով պարտված Գերմանիան մեղավոր հռչակվեց պատերազմի սանձազերծման գործում և պետք է հատուցեր նրա ծախսերը։ Շայդեմանի կառավարությունը հրաժարվեց ստորագրել վերսալյան դիկտատը և հրաժարական տվեց։ Գերմանիայի ռազմական թուլությունը և ամենից ավելի՝ վախը երկրի հեղափոխական վերելքի հանդեպ, սոցիալ-դեմոկրատ Բաուերի նոր կառավարությանը ստիպեցին արագացնել հաշտության ստորագրումը և բոլոր ուժերը փոխադրել «ներքին թշնամու» դեմ պայքարելու համար։ 1919 թ. հունիսի 28-ին Վերսալյան հաշտությունը ստորագրվեց և հուլիսի 9-ին վավերացվեց ազգային ժողովի կողմից։

Գերմանական բուրժուազիայի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները

Վայմարյան հանրապետության առաջին տարիներին գերմանական բուրժուազիայի քաղաքականության մեջ ձևավորվեցին նպատակներով ընդհանուր առմամբ միասնական, բայց տակտիկայի ընտրության հարցերում տարբերվող երկու՝ ավանտյուրիստական-միլիտարիստական և ճկուն պառլամենտարիզմի տենդենց։ Առաջինի հենարանը Գերմանական ժողովրդական կուսակցության աջ

թևի (Ստիննեսի խումբ) հետ մեկտեղ, Գերմանական ազգային ժողովրդական կուսակցությունը և ծայրահեղ ազգայնական խմբերն էին, երկրորդինը՝ «վայմարյան կոալիցիայի» բուրժուական կուսակցությունները, ինչպես նաև Գերմանական ժողովրդական կուսակցության չափավոր թևը։ Ավանտյուրիստական-միլիտարիստական տենդենցի հիմքում ընկած էին հռենոս-վեստֆալյան ծանր ինդուստրիայի տերերի և յունկերության շահերը, ճկուն պառլամենտարիզմի քաղաքականությանը աջակցություն էին ցույց տալիս էլեկտրատեխնիկայի և քիմիայի կոնցեռնները։

Գերմանական դեմոկրատական կուսակցությունը և Կենտրոնը հանրապետությունն ընդունեցին որպես կատարված փաստ և հեղափոխության շնորհիվ բանվոր դասակարգի ձեռք բերած սոցիալ-տնտեսական նվաճումները դիտում էին որպես «չարյաց փոքրագույնը»։ Գերմանական բուրժուազիայի այդ մասը տնտեսական ու սոցիալական հարաբերությունների կարգավորմանը նշանակություն էր տալիս իբրև նոր պայմաններում բուրժուազիայի իշխանության ամրապնդման միջոց։ Արտաքին քաղաքականության ասպարեզում երկու կուսակցություններն իրականացնում էին Վերսալի պայմանագրի կատարման քաղաքականություն, դրանում տեսնելով գերմանական իմպերիալիզմի վերականգնման իրական ուղին։ Ավանտյուրիստական-միլիտարիստական ուժերը, որոնք հեղափոխության շրջանում ստիպված էին կոմպրոմիսների դիմել, 1919 թ. երկրորդ կեսից անցան հակահարձակման։ Գերմանական ժողովրդական կուսակցության ծրագիրը (1919 թ. հոկտեմբեր) արդեն միապետությունը հռչակում էր գերմանական ժողովրդին առավել հարմար պետական ձև։ Ազգայնական ռեակցիան հույս ուներ չափավոր քաղաքականության կողմնակիցների և ԳՍԴԿ-ի կողմից վերսալյան դիկտատի ստորագրումն օգտագործել «վայմարյան կոալիցիայի» կուսակցությունների վարկաբեկման և բնակչության շովինիստական մշակման համար։ Ռեպարացիաների վճարման անհրաժեշտությունը նա դիտում էր որպես առավել ծանրակշիռ փաստարկ հօգուտ «տնտեսման» և «ինքնասահմանափակման», որոնց տակ նկատի էր առնվում հեղափոխության սոցիալական նվաճումների վերացումը (8-ժամյա աշխատանքային օրվա, ֆարգործկոմների իրավունքների, սոցիալական ապահովագրության և այլն)։

Ֆինանսական օլիգարխիայի քաղաքական պատվախնդրություններն իրենց համար իրական տնտեսական հիմք ունեին։ Պատերազմի տարիներին հարստանալով, գերմանական մոնոպոլիաները հետպատերազմյան ինֆլյացիայի տարիներին անցան հզոր արդյունաբերական միավորումների ստեղծմանը, իրենց հսկողության տակ կենտրոնացնելով ածխի հանույթը, մետալուրգիական ձեռնարկությունները, մեքենաշինական գործարանները և այլն։ Հենց այդ ժամանակ ստեղծվեց Ստիննեսի վիթխարի ուղղաձիգ կոնցեռնը, որն իր մեջ առավ (մոտավորապես 1923 թ.) 2890 ձեռնարկություն։ Տնտեսական հզորությունը Ստիննեսին թույլ էր տալիս ներքին ու արտաքին քաղաքականության որոշման գործում դիկտատորի դերի հավակնություններ հայտնել։ Բուրժուազիայի աջ թևը քաղաքականապես շրջափակել էր վայմարյան ռեժիմը, հրաժարվելով մասնակցել կառավարությանը, հույս ունենալով «անհնարին դարձնել հանրապետությունը», այն ներսից պայթեցնել, իսկ հետո վերացնել։

Հակահեղափոխական դավադրության կենտրոն դարձավ «ազգային միավորումը», որը ստեղծվեց 1919 թ. ամռանը Կ. Լիբկնեխտի և Ռ. Լյուքսեմբուրգի սպանության մասնակից մայոր Պաբստի կողմից։ «Միավորումը» սերտ կապ էր պահպանում «ազգային ակումբի» հետ, որի անդամներն էին խոշոր արդյունաբերողները՝ Ե. Բորզիգը, Ե. Կիրդորֆը, Հ. Ստիննեսը, Ե. Ֆեգլերը, ինչպես նաև Լյուդենդորֆի շուրջը համախմբված միլիտարիստական կլիկի ներկայացուցիչները։ Դավադիրներն ունեին սեփական զինված ուժեր՝ «կամավորական» զորամիավորումներ։ Մշակվեցին գործողությունների ծրագիր, նոր արտակարգ սահմանադրության նախագիծ, որը նախատեսում էր Բիսմարկի ոգով պրուսական-գերմանական դեսպոտիզմի վերականգնում և Վերսալյան պայմանագրի պայմանների վերանայում։ Խռովարարական կառավարության ղեկավար էր նախատեսվում արևելապրուսական յունկեր Կապպը, որը միապետական էր և ծայրահեղ աննեքսիայի կողմնակից։ 1920 թ. մարտի 10-ին խռովարարները պրեզիդենտ Էբերտին և ռազմական մինիստր Նոսկեին պահանջ ուղարկեցին՝ դադարեցնել զորքերի կրճատումը և զինաթափումը (Վերսալի պայմանագրի պահանջների համաձայն), իսկ մարտի 12-ի լույս 13-ի գիշերը խռովարարների զորքերը մտան Բեռլին։ Սոցիալ-դեմոկրատ Բաուերի կառավարությունը, որն իր ձեռքի տակ տեղեկություններ ուներ նախապատրաստվող խռովության մասին, բայց ոչ մի արդյունավետ միջոց չձեռնարկեց այն կանխելու համար, հեռացավ Բեռլինից։ Կապպն իրեն հռչակեց ռայխսկանցլեր և ցրեց ազգային ժողովը։ «Կարգի, ազատության և գործի» նոր կառավարությունը ձեռնամուխ եղավ նախահեղափոխական սիստեմի վերականգնմանը։ Կապպի կողմնակիցներն ակտիվացան երկրի մյուս շրջաններում։

Նոյեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանության համար ոտքի ելավ բանվոր դասակարգը։ Հակահեղափոխության վտանգի առջև կազմավորվեց միասնական պրոլետարական ճակատ՝ կոմունիստներից սկսած մինչև քրիստոնեական արհմիությունները. նույնիսկ ԳՍԴԿ աջ պարագլուխներն ստիպված էին միանալ պայքարին։ Ընդհանուր գործադուլն ընդգրկեց մոտ 12 մլն. բանվորներ ու ծառայողներ, կաղմալուծեց ամբողջ երկիրը։ Ընդվզողների առաջին շարքերում էին գտնվում կոմունիստները։ Մի շարք տեղերում գործադուլները վերաճեցին բարիկադային մարտերի և զինված կռիվների։ Դրանք հատկապես կատաղի բնույթ էին կրում Բեռլինում, Միջին Գերմանիայում, Սիլեզիայում, Թյուրինգիայում և երկրի հյուսիսում։ Հակահեղափոխությանը հասցրած զինված հակահարվածի կուլմինացիոն կետը եղավ Ռուրի մարզում մղված պայքարը։ Միապետության վերականգնման փորձերի դեմ հանդես եկան գյուղատնտեսական բանվորները, խռովարարներին շաջակցեց նաև մանր և միջին բուրժուազիայի նշանակալի մասը։ Մեկուսացվելով ու ջախջախվելով, խռովարարները ստիպված էին փախչել արտասահման։

Կապպի խռովության ջախջախումը ցույց տվեց, որ միլիտարիստական հակահեղափոխությունն անուժ է ընդդեմ բանվոր դասակարգի գործողությունների միասնության։ Գերմանական բուրժուազիան ստիպված էր անցնել հանրապետական դիրքերը։ 1920 թ. հունիսին Գերմանական ժողովրդական կուսակցության ղեկավարությունը հայտարարություն արեց ԳՍԴԿ-ի մասնակցությամբ կառավարության մեջ մտնելու սկզբունքային համաձայնության մասին։ Ռայխստագի ընտրություններից (1920 թ. հունիս) հետո ստեղծվեց հեղափոխությունից հետո առաջին զուտ բուրժուական կառավարությունը՝ Կենտրոնի կուսակցության պարագլուխ Ֆերենբախի գլխավորությամբ։ Դրա հետ մեկտեղ Գերմանիայի տիրող դասակարգերի ներսում շարունակվում էր պայքարը Վերսալյան հաշտության վերացման մեթոդների, ինչպես նաև հեղափոխության միջոցով բանվոր դասակարգի ձեռք բերած սոցիալական նվաճումների նկատմամբ վերաբերմունքի հարցի շուրջը։ Ավանտյուրիստական-միլիտարիստական դծի կողմնակիցները ծարավի էին ուանշի՝ պահանջում էին վերադառնալ «իր

տան տեր ու տնօրենի» սկզբունքներին (աշխատանքային օրվա նախապատերազմյան տևողությանը, հեղափոխության սոցիալական նվաճումների վերացմանը), արտաքին քաղաքականության մեջ՝ «աղետների քաղաքականության» անցկացմանը, այսինքն՝ ռեպարացիոն մուծումների սարոտաժին, ուշադրություն չդարձնելով դրանց հետևանքներին։

Այդ կուրսին առավել կամ նվազ հետևողականությամբ հետևում էր Ֆերենբախի կառավարությունը։ Երբ 1921 թ. մայիսին Լոնդոնի կոնֆերանսում սահմանվեց ռեպարացիաների ընդհանուր գումարը (132 մլրդ. ոսկե մարկ), և դաշնակիցները վերջնագրային ձևով պահանջեցին ընդունել ռեպարացիոն հանձնաժողովի առաջարկությունները, սպառնալով Ռուրի օկուպացումով, Գերմանիայում բռնկվեց քաղաքական ճգնաժամ։ Ֆերենբախի կաբինետը, որը հրաժարվեց ընդունել հաղթողների պահանջը, հրաժարական տվեց։ 1921 թ. հունիսի 26-ին վերականգնվեց «վայմարյան կոալիցիան»՝ Կենտրոնի ձախ թևի պարագլուխ Ի. Վիրտի գլխավորությամբ, որն Անտանտի տերություններին տեղեկացրեց վերջնագրի պայմաններն ընդունելու մասին։ Դրա հետ մեկտեղ Գերմանիայի պետական ու քաղաքական գործիչների մի մասը (նրանց թվում կանգներ Ի. Վիրտը, արտաքին գործերի մինիստր Վ. Ռատենաուն) ավելի ու ավելի էր գիտակցում Սովետական Ռուսաստանի հետ նորմալ հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը, ընդ որում տատանվելով սոցիալիստական պետության նկատմամբ դասակարգային թշնամության և «արևվելյան կողմնորոշման», որպես Գերմանիայի նկատմամբ հաղթողների իմպերիալիստական պլանների հակակշռի, տնտեսական նպատակահարմարության և քաղաքական անհրաժեշտության գիտակցման միջև։ Արդեն 1921 թ. մայիսի 6-ին, այսինքն՝ ռեպարացիոն վճարումների մասին վերջնագիրը ներկայացնելու հաջորդ օրը, սովետական երկրի հետ համաձայնագիր ստորագրվեց առևտրի վերսկսման վերաբերյալ։ Ռապալոյի պայմանագիրը, որը ստորագրվեց 1922 թ. ապրիլի 16-ին, դրեց Գերմանիայի և ՍՍՀՄ-ի միջև գրեթե տասնամյա արդյունավետ համագործակցության սկիզբը։

Ծայրահեղ միլիտարիստական-ազգայնական ուժերը կատաղի պայքար ծավալեցին «կատարման քաղաքականության» դեմ։ 1921 թ. օգոստոսին սպանվեց Կենտրոնի կուսակցության պարագլուխ Մ. Էրցբերգերը, որը ստորագրել էր Կոմպիենի զինադադարը, 1922 թ. ամռանը՝ Վ. Ռատենաուն։ Միաժամանակ քողարկվելով «ազգային զոհաբերությունների» անհրաժեշտությամբ, խոշոր կապիտալը ջանում էր տանուլ տրված պատերազմի հետևանքները գցել աշխատավոր զանգվածների ուսերին։ 1920—1922 թթ. աշխատավարձն ապահովում էր կյանքի գնի ոչ ավել քան 50—60 տոկոսը։ Շեշտակիորեն կրճատվեց պարենային ապրանքների սպառումը՝ 1913 թ. մակարդակի 30—60 տոկոսի չափով (հաց, միս, շաքար)։ Բանվոր դասակարգի ծանր տնտեսական դրությունը Վայմարյան հանրապետության առաջին տարիներին ծավալված բացառիկ լարված գործադուլային շարժման գլխավոր պատճառն էր։ Պաշտոնական տվյալներով, գործադուլների թիվը (տարեկան միջինը) 4—5 անգամ գերազանցում էր կայունացման և 30-ական թվականների տնտեսական ճգնաժամի տարիներին եղած գործադուլների թիվը։ 1919 թ. կրճատվել է ավելի քան 32 մլն աշխատանքային օր, 1921—1922 թ.՝ յուրաքանչյուր տարի մոտ 28 մլն։ Գերմանական պատմության շատ տասնամյակների ընթացքում առաջին անգամ բացահայտ դասակարգային պայքարի մեջ ներգրավվեցին միլիոնավոր բատրակներ։

1922 թ. երկրորդ կեսին Ռուրի մոնոպոլիստները ռևանշիստական մյուս խմբերի համագործակցությամբ բռնեցին ռեպարացիոն վճարումների սարոտաժի և երկրի ներսում ինֆլյացիան խթանելու ուղին։ Ի. Վիրտի «կատարման» կաբինետն ի վիճակի չդտնվեց կազմալուծելու այդ ուժերի գործունեությունը։ 1922 թ. նոյեմբերին Ի. Վիրտի կառավարության հրաժարականը և Կունոյի «գործարար կաբինետի» ստեղծումը նշանավորեցին «աղետների քաղաքականության» հաղթանակը։ Գերմանիայի ղեկի մոտ բացահայտորեն կանգնեց խոշոր բուրժուազիան, որը վերցրեց «Ստիննեսի ծրագրի» կատարման կուրս։

ԳՍԴԿ-ն և ԳԱՍԴԿ-ն Վայմարյան հանրապետության առաջին տարիներին

Հեղափոխության հետևանքով փոխվեց վարձու աշխատանքով զբաղվողների հասարակական-քաղաքական դրությունը, մարդիկ, որոնք կազմում էին Գերմանիայի 22 մլն աշխատող բնակչությունը (33 միլիոնից)։ Բանվոր դասակարգը վերածվեց երկրի քաղաքական կյանքի ավելի հզոր գործոնի, քան գերմանական պատմության նախորդ ժամանակաշրջանում։ Պրոլետարիատի քաղաքական ակտիվության աճն արտահայտվեց նրա մասսայական կազմակերպությունների թվի կտրուկ ավելացման մեջ։ Եթե 1918 թ. Համագերմանական արհեստակցական միության (ՀԱՄ) մեջ հաշվվում էր 1,6 մլն անդամ, ապա 1920 թ.՝ ավելի քան 8 մլն, մոտ 1,5 մլն բանվորներ մտնում էին բուրժուական արհեստակցական միությունների միավորման մեջ։ Գերմանական գյուղատնտեսական բանվորների ռեֆորմիստական միությունը, որը 1913 թ. ուներ 18 հազ. անդամ, 1919—1920 թթ. մեծացավ և հասավ մինչև 800 հազարի։ 1919 թ. ստեղծվեցին ծառայողների միությունը (Աֆա-Բունդ) և Զինովնիկների գերմանական միությունը։ 1921 թ. Աֆա-Բունդը համագործակցության մեջ մտավ ՀԱՄ-ի հետ. 1922 թ. Զինովնիկների գերմանական միության պառակտման հետևանքով ստեղծվեց Զինովնիկների համագերմանական ռեֆորմիստական միությունը, որը նույնպես համաձայնագիր կնքեց ՀԱՄ-ի հետ։ Դրանում արտացոլվեց հակաիմպերիալիստական ուժերի միավորման օբյեկտիվ տենդենցը։

Հեղափոխության և հանրապետություն ստեղծվելու հետևանքով ԳՍԴԿ-ի քաղաքական դերն էականորեն փոխվեց, այն վերածվեց «պետական», կառավարական կուսակցության։ Վայմարյան հանրապետության գլուխ կանգնած էր սոցիալ-դեմոկրատ, պրեզիդենտ Ֆ. Էբերտը. ԳՍԴԿ-ն ռայխստագի ամենազորեղ ֆրակցիան էր, նրա պարագլուխները կառավարություններ էին կազմում կամ մտնում (հազվադեպ բացառությամբ) կառավարական կոալիցիայի կազմի մեջ։ Պրուսիայում, ինչպես և գերմանական մյուս երկրամասերում, սոցիալ-դեմոկրատները կարևոր պոստեր էին գրավում կառավարության մեջ և պետական ապարատի մյուս օղակներում։ Զգալիորեն ավելացավ ԳՍԴԿ թվակազմը (մոտ 2 անգամ, մինչև 1 մլն մարդու), ընդլայնվեց նրա սոցիալական բազան՝ կուսակցության մեջ մտան ոչ քիչ թվով մանր բուրժուական տարրեր։ Այդ բոլորն իր արտացոլումը գտավ ԳՍԴԿ-ի ծրագրում և նրա գործնական քաղաքականության մեջ։ 1921 թ. Գյոռլիցում ընդունվեց կուսակցության նոր ծրագիրը, որտեղ Վայմարյան բուրժուական հանրապետությունը ռեկլամվում էր որպես գոյություն ունեցող հասարակության՝ սոցիալիստականի փոխանցման ձև։ Էկոնոմիկայում կատարված սոցիալիստական վերափոխությունները ռեֆորմիզմի տեսաբանները ներկայացնում էին որպես «տեխնիկատնտեսական էվոլուցիայի» հաջողությունների արդյունք։ Սոցիալիզմին հասնելու «դեմոկրատական ուղու» կարևորագույն նախադրյալ էր հռչակվում ռայխստագում մեծամասնություն նվաճելը։

Պետության ու հեղափոխության մարքսիստական տեսությունից հրաժարվելը տրամաբանորեն իր հետևից բերեց ԳՍԴԿ-ի անցում Վայմարյան հանրա-

պետության հողի վրա պոզիտիվ-պետական գործունեության։ ԳՍԴԿ-ի և ՀԱՄ-ի պարագլուխները քիչ ջանքեր չգործադրեցին «վայրի» գործադուլները կանխելու համար, օգտագործելով միջնորդական քննարկման հիմնարկությունը, անհրաժեշտ էին համարում (հանուն արտադրության բարձրացման և ռեպարացիոն վճարումների կատարման) հրաժարվել 8-ժամյա աշխատանքային օրվա վերաբերյալ կարգադրության «սխեմատիկ» կիրառումից։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության պարագլուխների քաղաքական իդեալը՝ կոալիցիոն կառավարությունն էր՝ ԳՍԴԿ-ից մինչև Գերմանական ժողովրդական կուսակցությունը։ Այն բնութագրվում էր որպես «իշխանության համար պայքարելու ժամանակակից պայմաններին համապատասխանող ձև»։

ԳԱՍԴԿ-ն, ինչպես և նախկինում, մասսաներին զսպում էր արտապառլամենտական գործողություններից։ ԳԿԿ-ի ստեղծումից և ԳՍԴԿ-ի դիրքերի թուլացումից հետո 1919 թ. գարնան հեղափոխական վերելքի պայմաններում, երբ կուսակցության մեջ ուժեղանում էր ձախ թևը, ԳԱՍԴԿ-ն կարող էր այդ խնդիրը կատարել, միայն օպոզիցիայի անցնելով։ Ավելին, ԳԱՍԴԿ-ի մի քանի պարագլուխներ լայնորեն օգտագործում էին կոմկուսի լոզունգները, հայտարարում սովետները և պրոլետարիատի դիկտատուրան ճանաչելու մասին։ Դրա հետ մեկտեղ անկախականներն առաջարկում էին հաշվի նստել ազգային ժողովի, որպես օրինական հիմնարկության, գոյության փաստի հետ։ Դրա հետ է առնչված 1919 թ. գարնանը բուրժուական հանրապետության մեջ սովետների սիստեմն «արմատախիլ» անելու լոզունգի երևան գալը։

ԳԱՍԴԿ-ի ձախացումը, նրա օպոզիցիոն ելույթներն ուժեղացրին նոր անդամների հոսքը կուսակցության մեջ (1920 թ. նրանում ընդգրկված էր 900 հազ. անդամ)։ Կուսակցության ձախ թևի ազդեցությամբ Լայպցիգում կայացած (1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր) արտակարգ համագումարում ընդունվեցին գործողությունների ծրագիրը, որը սովետների բազայի վրա պրոլետարիատի դիկտատուրայի պահանջ էր պարունակում, և II Ինտերնացիոնալից դուրս գալու ու III Ինտերնացիոնալի հետ կապեր հաստատելու մասին որոշումը։ Սակայն ցենտրիստ պարագլուխներին հաջողվեց խոչընդոտել կուսակցության անհապաղ միացմանը Կոմունիստական ինտերնացիոնալին։ ԳԱՍԴԿ ներկայացուցիչների մի մասը (Կրիսպինը, Դիտմանը և մյուսները) Կոմինտերնի II կոնգրեսում հանդես եկան Կոմունիստական ինտերնացիոնալ ընդունվելու 21 պայմանների ընդունման դեմ։ Տեղի ունեցավ պատվիրակության պառակտում, որը կանխորոշեց կուսակցության պառակտումը։ 1920 թ. հոկտեմբերին Հալլեում կայացած համագումարում պատվիրակների մեծամասնությունը քվեարկեց Կոմունիստական ինտերնացիոնալ ընդունվելու օգտին (237-ը ընդդեմ 156-ի) և, հետևաբար, ԳԿԿ-ին միանալու օգտին։ Կուսակցության փոքրամասնությունը, չենթարկվելով համագումարի որոշմանը, ստեղծեց նոր կուսակցություն նախկին անունով, իսկ հետո հեղափոխական ալիքի սկսված անկման պայմաններում միավորվեց ԳՍԴԿ-ի հետ (1922 թ.)։

Այսպիսով, եռապատերազմյան տարիներին փոքրամասնության կազմակերպչական-քաղաքական ազդեցությունը զգալիորեն ընդլայնվեց, որի մասին, մասնավորապես, վկայում էր ռեֆորմիստական կազմակերպությունների թվի աճը։ Պատերազմի տարիներին և եռապատերազմյան ժամանակաշրջանում տեղի ունեցավ Գերմանիայի բանվոր դասակարգի զգալի նորացում, խիստ նվազեց դասակարգային պայքարում կոփված նրա պրոլետարական կորիզի տեսակարար կշիռը։ Մանրբուրժուական ռեֆորմիզմի գաղափարները պարարտ հող

էին գտնում միջին խավերի շրջանում, որոնք կազմում էին երկրի աշխատող բնակչության 1/4-ը։

Մյուս կողմից, բանվորական շարժման աճն իսկ, պրոլետարիատի կազմի փոփոխումը, ինչպես նաև հեղափոխության հետևանքով աճած մանր բուրժուական զանգվածների քաղաքական ակտիվությունը ԳՍԴԿ-ի ռեֆորմիստական վերասերման և բուրժուազիայի հետ նրա պարագլուխների համագործակցության իրագրության մեջ պայմաններ էին ստեղծում բանվորական շարժման մեջ կոմունիզմի «ձախության» հիվանդության տարածման համար։

Բանվորական շարժման վիճակն այդ տարիներին ընդհանուր առմամբ վկայում էր Գերմանիայում սոցիալիստական հեղափոխությունն անմիջականորեն անցնելու, դեպի սովետական իշխանություն, պրոլետարիատի դիկտատուրա «թռիչք գործելու» անհնարինության մասին, հեղափոխության հասարակական ուժ և նրա քաղաքական բանակ ստեղծելու համար անցումնային ժամանակաշրջանի (հեղափոխական-դեմոկրատական փուլի) անհրաժեշտության մասին։

ԳԿԿ-ի՝ նոր տիպի կուսակցության զարգացման սկիզբը

Հունվարյան ապստամբությունից և Կ. Լիբկնեխտի ու Ռ. Լյուքսեմբուրգի զոհվելուց հետո ԳԿԿ-ի դրությունն արտակարգ ծանր էր։ Կուսակցության առաջնահերթ խնդիրն էր դաղափարական տատանումների հաղթահարումը, լենինիզմի և Հոկտեմբերյան հեղափոխության փորձի յուրացումը, օբյեկտիվ իրադրությանը համապատասխան ստրատեգիայի և տակտիկայի մշակումը։ Դեռ 1919 թ. գարնանը ԳԿԿ ղեկավարությունը կուսակցությանը կողմնորոշում էր դեպի դեմոկրատական պահանջների առաջադրում և պրոլետարական կազմակերպություններում կուսակցության դիրքերի ամրապնդում։

Դրա հետ մեկտեղ 1919 թ. գարնան հեղափոխական վերելքը և ԳԿԿ-ի գաղափարական ոչ հասունությունը պայմանավորեցին տատանումներն ու սխալները օբյեկտիվ իրականության և կուսակցության քաղաքականության գնահատման մեջ։ Լայնորեն տարածված էր այն կարծիքը, թե պրոլետարական հեղափոխությունը մոտակա շաբաթների կամ ամիսների հարց է։ Հատուկ վտանգ էր ներկայացնում մանրբուրժուական անարխիստներ Գ. Լանդաուերի և Ֆ. Վոլֆհայմի գործունեությունը կուսակցության մեջ։ Նրանց կողմնակիցները չէին ճանաչում դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքները, հանդես էին գալիս ընդդեմ կուսակցության, որպես պրոլետարիատի կազմակերպման բարձրագույն ձևի, պրոպագանդելով ինչ-որ ամորֆ կուսակցական-արհմիութենական միավորման ստեղծում։ Անարխո-սինդիկալիստական տարրերը հրաժարվում էին աշխատել ռեֆորմիստական արհմիություններում, ժխտում բուրժուական պառլամենտի օգտագործումը և մասնակի պահանջների ու նպատակների համար պայքարելու անհրաժեշտությունը։

ԳԿԿ-ի առողջ, իսկապես հեղափոխական ուժերը համառ պայքար էին տանում «ձախ» օպորտունիզմի դեմ։ Դրա կարևոր ուղենիշը եղավ ԳԿԿ II համագումարը (1919 թ. հոկտեմբեր, Հայդելբերգ), որտեղ մերժվեցին ազանդավորական դոգմաները, ընդգծվում էր պայքարի համար մասսաների սիստեմատիկ նախապատրաստման անհրաժեշտությունը՝ նրանց լուսավորելու և ռեֆորմիստական պատրանքներից ազատագրելու համար բուրժուական դեմոկրատիայի բոլոր հնարավորությունների, այդ թվում պառլամենտական հիմնարկությունների օգտագործման, մասսայական կազմակերպություններում, ամենից առաջ արհմիություններում ակտիվ աշխատանքի և այլ միջոցներով։ Այսպիսով, ԳԿԿ Հայդելբերգյան համագումարը կարևոր ճշգրտումներ կատարեց հիմնադիր հա-

մագումարի որոշումներում։ ԳԿԿ III համագումարից (1920 թ. փետրվար) հետո, որը հաստատեց II համագումարի որոշումները, ձախ տարրերը վտարվեցին ԳԿԿ-ից։ 1920 թ. ապրիլին նրանք միավորվեցին Գերմանիայի կոմունիստական բանվորական կուսակցության (ԳԿԲԿ) մեջ, որի գաղափարական սկզբունքներն ու տակտիկան Վ. Ի. Լենինը ոչնչացնող քննադատության ենթարկեց «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» աշխատությունում։ Արդեն 1921 թ. վերջին ԳԿԲԿ-ն վերածվեց ազանդի, բանվորների լավագույն մասն այն լքեց։

Կոմկուսի զարգացման մեջ կարևոր փուլ եղավ պայքարը Կապպի խռովության դեմ։ Միապետական հակահեղափոխության ջախջախումը համոզիչ կերպով վկայեց բանվոր դասակարգի գործողությունների միասնության արդյունավետության մասին։ ԳԿԿ-ի առջև ծառացավ միասնական պրոլետարական ճակատի ձևավորման ուղիների ինտենսիվ որոնման խնդիրը, ավելի ու ավելի էր գիտակցվում պրոլետարիատի դիկտատուրային հասնելու ճանապարհին՝ տարբեր տեսակի բանվորական կառավարությունների ձևով անցման փուլի անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը։

Միապետական հակահեղափոխության և մոնոպոլիաների հարձակման դեմ մղվող պայքարում պրոլետարիատի գործողությունների միասնությունն արագացրեց ձախ անկախականների խղումը ցենտրիստների հետ և նրանց կազմակերպական միավորումը ԳԿԿ-ի հետ։ Միավորիչ համագումարում (1920 թ. դեկտեմբերին) ստեղծվեց Գերմանիայի միացյալ կոմունիստական կուսակցությունը (ԳՄԿԿ)։ Նրա նախագահներ ընտրվեցին Պ. Լևին (ԳԿԿ-ից) և Ե. Դեյմիգը (ձախ անկախականներից)։ Համագումարի որոշումները կոմունիստներին կողմնորոշեցին դեպի գործունեության ակտիվացումը բանվորների մասսայական կազմակերպություններում, ամենից առաջ արհմիություններում։ Ագրարային ծրագրում ուղղվում էին հիմնադիր համագումարի մի քանի սխալներ, թեև ոչ բավարար չափով հետևողականորեն. առաջադրվում էին խոշոր հողատիրության անհատույց վերացման պահանջներ, դրա հետ մեկտեղ բացակայում էին գյուղացիներին հողով ապահովելու, նրանց վարկեր տրամադրելու վերաբերյալ պահանջները։

Մասսայական ԳԿԿ-ի ստեղծումը (մոտ 300 հազ. անդամ) վկայում էր գերմանական պրոլետարիատի հեղափոխական ավանգարդի կողմից լենինիզմը հաջողությամբ յուրացնելու մասին։ Կոմկուսի քաղաքականության մեջ շրջադարձային սահմանագիծ եղավ նրա «Բաց նամակով» դիմումը (7. I. 1921 թ.) ԳՍԴԿ-ի, ԳԱՍԴԿ-ի և ՀԱՄ-ի ղեկավար ինստանցիաներին՝ գործողությունների միասնության կոչով։ Որպես պայքարի ամենամերձակա կոնկրետ նպատակներ առաջադրվում էին պահանջներ՝ արտադրության ու բաշխման նկատմամբ վերահսկողություն սահմանելու, ինքնապաշտպանության պրոլետարական կազմակերպություններ ստեղծելու, գներն իջեցնելու, Սովետական Ռուսաստանի հետ հարաբերությունները նորմալացնելու մասին և այլն։ Վ. Ի. Լենինը «Բաց նամակը» գնահատում էր որպես «օրինակելի քաղաքական քայլ»[20]։ Չնայած որ ռեֆորմիստ պարագլուխները մերժեցին կոմկուսի առաջարկությունը, ԳԿԿ-ի ղեկավարությունը շարունակում էր ուղիներ որոնել բանվորական շարժման միասնության համար։

ԳԿԿ-ի կողմից նոր ստրատեգիայի և տակտիկայի մշակումը տեղի էր ունենում աջ և «ձախ» օպորտունիզմի դեմ մղվող սուր պայքարի պայմաններում։

[20] Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու (ռուս.), հ. 44, էջ 25։

Ռեֆորմիստների կողմից գործողությունների միասնության մերժումը ակտիվացրեց ուլտրաձախ տարրերին։ Բեռլինի կազմակերպության ղեկավարությունը (Ռ. Ֆիշեր, Ա. Մասլով) հայտարարեց, որ կուսակցությունը բավականաչափ ուժեղ է, որպեսզի ակտիվ ելույթներ սկսի, հենվելով սոսկ իր սեփական ուժերի վրա։ Այդ նույն ժամանակ ուժեղացավ աջ օպորտունիզմի վտանգը։ ԳԿԿ Կենտկոմի 1921 թ. փետրվարի վերջին տեղի ունեցած նիստում Պ. Լևին հանդես եկավ Կոմինտերնի մեջ մտնելու 21 պայմանի դեմ։ Կենտկոմի մեծ մասը դատապարտեց Պ. Լևի դիրքը։ Ի պատասխան Պ. Լևին Ե. Դեյմիգի և ուրիշ մի քանիսի հետ դուրս եկավ Ցենտրալեի կազմից։ Կուսակցության նոր նախագահներ ընտրվեցին ուլտրաձախների ներկայացուցիչ Գ. Բրանդլերը և Վ. Շտեկերը։ Ուժեղացնելով իրենց դիրքերը ԳԿԿ ղեկավարության մեջ, ուլտրաձախները կուսակցության վրին փաթաթեցին մի քաղաքականություն, որն ստացավ «հարձակման տեսություն» անունը։ Դրա էությունը կայանում էր հարձակման պահի որոշման ժամանակ օբյեկտիվ պայմաններն ու դասակարգային ուժերի հարաբերակցությունն անտեսելու մեջ։ Բրանդլերը (ինչպես և Բեռլինի կազմակերպության ղեկավարությունը) պնդում էր, որ կոմկուսը պետք է կողմնորոշվի դեպի կառավարության տապալումը մոտակա ժամանակում։ Ընդ որում, այդ ծրագրի իրականացման նախապատրաստման համար ոչ մի կոնկրետ միջոցառում չէր անցկացվում։

Հակահեղափոխական ուժերը, որոնք ԳԿԿ-ի դեմ նոր հարված էին նախապատրաստում, որոշեցին կոմկուսի ելույթ հրահրել Մանսֆելդի շրջանում (Միջին Գերմանիա), ուր բանվոր դասակարգը դեռ զինաթափված չէր և լուրջ քաղաքական ուժ էր ներկայացնում. պրուսական լանդտագի ընտրությունների ժամանակ (1921 թ. փետրվար) կոմունիստներն այստեղ ստացան ձայների ավելի քան 40 տոկոսը։ Պրովոկացիայի անմիջական կատարողներն էին սոցիալ-դեմոկրատներ՝ ներքին գործերի մինիստր Կ. Զեերինգը և պրուսական Սաքսոնիա երկրամասի օբեր-պրեզիդենտ Օ. Գերզինգը։ 1921 թ. մարտի 19-ին նրանց կարգադրությամբ լավ զինված ոստիկանական զորամասերը ձեռնարկություններում հափշտակումները կանխելու պատրվակով մտան Մանսֆելդի շրջանի արդյունաբերական կենտրոնները։ Իշխանությունների գործողությունները զայրույթ առաջացրին բանվորների մեջ։ Մարտի 21-ին ԳԿԿ-ի տեղական ղեկավարության և Մանսֆելդի հանքերի բանվորների գործադուլային կոմիտեի կոչով սկսվեց ընդհանուր գործադուլ, որը մարտի 23-ին վերաճեց զինված ապստամբության։ Մարտերը տևեցին մինչև ապրիլի սկիզբը։ Պայքարի ընթացքում կազմավորվեցին պրոլետարական մարտական զորամասեր։ Հակահեղափոխությունը ճնշեց ապստամբությունը, սակայն նրան չհաջողվեց հասնել իր գլխավոր նպատակին՝ կոմկուսի ոչնչացմանը։ ԳԿԿ-ի առջև խնդիր ծառացավ հաշվի առնել մարտյան կռիվների դասերը և շարունակել գործողությունների միասնության քաղաքականությունը, որն սկսվել էր «Բաց նամակով»։ Ձախ արկածախնդրության հետևանքների ծանրությունը խորանում էր Պ. Լևի դավաճանությամբ։ Անտեսելով պրովոկացիայի փաստը, նա ոստիկանական վարկածի ոգով մարտյան ապստամբությունը բնութագրեց որպես «խռովություն»։ 1921 թ. ապրիլին Պ. Լևին վտարվեց կոմկուսից։ ԳԿԿ-ում սուր բանավեճ ծավալվեց ապստամբության բնույթի և դասերի վերաբերյալ։ Վիթխարի նշանակություն ունեցավ այդ հարցի քննարկումը Կոմինտերնի III կոնգրեսում, Վ. Ի. Լենինի օգնությունը։ ԳԿԿ Իենայում կայացած համագումարը (1921 թ. օգոստոս) բանավեճը հանրագումարի բերեց, դատապարտեց «հարձակման տեսությունը», ինչպես և կուսակցության մեջ գոյություն ունեցող աջ օպորտունիստական տեն-

դենցները, հանձնարարեց «Բաց նամակի» ոգով քաղաքականության իրականացում։

Արդեն 1921 թ. ԳՍԴԿ-ի, ԳԱՍԴԿ-ի և ՀԱՄ-ի ղեկավարությանն ուղղված դիմումներում ԳԿԿ-ն արտահայտվեց հօգուտ սոցիալ-դեմոկրատական կառավարության պաշտպանության, եթե այն վճռականություն հանդես բերի գործելու բանվոր դասակարգի շահերի օգտին, և հօգուտ որոշակի պայմաններով այդպիսի կառավարության մեջ մտնելու։ Հունիսի 27-ին Ռատենաուի սպանությունից հետո, կոմկուսի և երկու սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միջև ստորագրվեց «Բեռլինի համաձայնագիրը», որի հիմքն էին կազմում կառավարությանն ուղղված պահանջները՝ հակահեղափոխական կազմակերպություններն արգելելու և ցրելու և հանրապետությունը պաշտպանելու նպատակով օրենսդրական միջոցառումներ ընդունելու մասին։ Երեք բանվորական կուսակցությունների և արհմիությունների կոչով 1922 թ. հուլիսի 4-ին Գերմանիայում տեղի ունեցան զանգվածային ցույցեր, իսկ երկրի շատ մասերում՝ ընդհանուր գործադուլներ։

Դրա հետ մեկտեղ ԳԿԿ-ի գործունեության մեջ շարունակվում էին դրսևորվել ինչպես աղանդավորական, այնպես էլ օպորտունիստական բնույթի սխալներ։ Ուլտրաձախ տարրերը սաբոտաժի էին ենթարկում գործողությունների միասնության տակտիկայի անցկացումը, պահանջելով ԳՍԴԿ-ի՝ որպես կուսակցության, լիակատար կապիտուլացում և նույնիսկ «ջախջախում»։ Բանվորական կառավարությունը մեկնաբանվում էր որպես պրոլետարիատի դիկտատուրայի «հոմանիշ». դրանով իսկ ժխտվում էր իշխանության համար մղված պայքարում միջանկյալ փուլերի անհրաժեշտությունը։ Աջ օպորտունիստական տրամադրությունները դրսևորվում էին ռեֆորմիստ պարագլուխների հետ «ցանկացած գնով» համաձայնության հասնելու պատրաստակամության մեջ։ Բանվորական կառավարության մեջ աջերը հակված էին տեսնելու ոչ թե բուրժուադեմոկրատական հեղափոխության՝ պրոլետարականի վերաճելու ժամանակաշրջանի պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա, այլ պետության առանձնահատուկ, «կայուն» տիպ։ Գ. Բրանդլերը (գլխավորում էր ԳԿԿ քաղբյուրոն), հրաժարվելով «հարձակման տեսությունից», սկսեց բաժանել Վայմարյան սահմանադրության շրջանակներում Գերմանիայում պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու հնարավորության վերաբերյալ հայացքները։

ԳԿԿ-ի հեղափոխական ուժերը (Կ. Ցետկին, Վ. Պիկ, Վ. Ուլբրիխտ և ուրիշներ) հենվելով Կոմինտերնի IV կոնգրեսի որոշումների վրա, համառ պայքար տարան ինչպես «ձախ», այնպես էլ աջ հակուստով ղեկավարվող օպորտունիզմի դեմ։ Ամբողջությամբ վերցրած ԳԿԿ-ն խոշոր քաղաքական ուժ էր ներկայացնում։ Դասակարգային պայքարի նրա փորձը սիստեմատիկաբար հարստանում էր նոր գաղափարներով ու պրակտիկայով և բավարարում էր պրոլետարիատի զանգվածային ելույթները կազմակերպելու և ղեկավարելու համար։

Վայմարյան հանրապետության առաջին տարիների հեղափոխական վերելքն իր հիմքում պաշտպանական բնույթ էր կրում։ Դրա հետ միասին բուրժուադեմոկրատական ազատությունների պաշտպանության համար մղվող պայքարը եղավ նոյեմբերյան հեղափոխության չիրականացրած խնդիրների լուծման համար ծավալված շարժման անբաժանելի մասը։ Դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարի միահյուսումը վճռական նշանակություն ուներ գերմանական հանրապետության ամրապնդման համար։ Սակայն դասակարգային ուժերի հարաբերակցությունը մնում էր անկայուն։ Մոնոպոլիստական

բուրժուազիան և ազգայնական հակահեղափոխությունը չէին հաշտվում նոյեմբերյան հեղափոխության քաղաքական ու սոցիալական նվաճումների հետ։ Նոր բախումն անխուսափելի էր, այն կանխորոշված էր 1918 թ. վերջի—1919 թ. սկզբի դասակարգային կոմպրոմիսի բնույթով։ Պրոլետարիատը կարող էր պահպանել հեղափոխության նվաճումները՝ նոր ընդհարման ժամանակ միայն հաղթանակ տանելով, ռեակցիայի ուժերը կարող էին կորցրած դիրքերը վերադարձնելու հույսեր ունենալ՝ միայն բաց ճակատամարտում բանվոր դասակարգին ջախջախելով։ Այդ պայմաններում ցանկացած լուրջ կոնֆլիկտ կարող էր դառնալ հեղափոխական նոր վերելքի ելակետ։

Ռուրի կոնֆլիկտը և դրա հետևանքները

1923 թ. հունվարի 11-ին, վկայակոչելով Գերմանիայի կողմից ռեպարացիոն վճարումների սաբոտաժը, ֆրանս-բելգիական զորքերը ներխուժեցին Գերմանիայի ինդուստրիալ սիրտը՝ Հռենոս-Ռուրյան մարզը։ Օկուպացիայի հետևանքով Գերմանիան զրկվեց քարածխի ամբողջ հանույթի ավելի քան 70 տոկոսից, չուգունի և չմշակված պողպատի ձուլվածքի ավելի քան 50 տոկոսից։ Արևմտյան Գերմանիան կտրվեց երկրի մյուս շրջաններից, տասնամյակներով ձևավորված տնտեսական կապերը խախտվեցին։

Ռուրի ճգնաժամը ԳԿԿ-ի առջև ընդհանուր քաղաքական և տակտիկական բնույթի բարդ խնդիրներ դրեց։ Հաշվի առնելով, որ կոնֆլիկտը ծագել է միջիմպերիալիստական հակասությունների բազայի վրա, ԳԿԿ-ն առաջադրեց երկու ճակատով պայքարելու լոզունգ, ընդդեմ ֆրանսիական և գերմանական իմպերիալիզմի՝ «Զարկեք Կունոյին և Պուանկարեին Ռուրում և Շպրեեի վրա»։ ԳԿԿ Լայպցիգում կայացած VIII համագումարում (1923 թ. հունվարի վերջ—փետրվարի սկիզբ) մշակվեցին Ռուրի կոնֆլիկտի առաջ բերած տնտեսական ու քաղաքական ճգնաժամն օգտագործելու քաղաքականության հիմնական ուղղությունները՝ մասսաներին սոցիալիստական հեղափոխությանը մոտեցնելու համար։ Այդ քաղաքականության հիմքն էր կազմում պայքարը հանուն միասնական պրոլետարական ճակատի ստեղծման և դրա հիման վրա բանվորական կառավարության ստեղծման։

Ֆրանսիական մոնոպոլիաների հետ միասին գերմանական կառավարող «վերնախավերը», որոնք մեղավոր էին Ռուրի կոնֆլիկտի առաջացման համար, ազգայնական աղմկալից կամպանիա ծավալեցին «Հայրենիքը վտանգի մեջ է» լոզունգի ներքո։ Կունոյի կառավարությունը «պասսիվ դիմադրություն» հայտարարեց ֆրանսիական ներխուժման դեմ (հրաժարումն օկուպացված շրջանների ձեռնարկություններում, երկաթուղում աշխատելուց)։ Բուրժուական մամուլը «քաղաքացիական խաղաղության», միասնական «ազգային ճակատի» ստեղծման կոչ էր անում երկիրը «ժառանգական թշնամուց» պաշտպանելու համար։ Ազգային-հայրենասիրական դեմագոգիայով բուրժուազիան քողարկում էր իր ձգտումը՝ մոբիլիզացնելու գերմանական ժողովրդին ի պաշտպանություն խոշոր կապիտալի շահույթների։ «Ազգային միավորումը» ֆրանսիական մոնոպոլիաների վրա ճնշում գործադրելու միջոց էր՝ նրանց հետ գործարքի առավել շահավետ պայմաններ սակարկելու նպատակով։

ԳՍԴԿ-ի և արհմիությունների ղեկավար ինստանցիաները բոլոր վճռական հարցերում աջակցություն էին ցույց տալիս կառավարությանը։ Բուրժուական պրոպագանդային ռեֆորմիստների մասնակցությամբ հաջողվեց բուրժուական նացիոնալիզմի դրոշի ներքո Գերմանիայի լայն զանգվածներին միաժամանակ ներգրավել Ռուրի իմպերիալիստական կոնֆլիկտի մեջ։

Սակայն «ազգային միավորման» քաղաքականությունը չափազանց կոն-

յունկտուրային հիմք ուներ։ Ռուրի օկուպացիայի և «պասսիվ դիմադրության» հետևանքով արդեն 1923 թ. կեսերին արտադրությունն ընկավ։ Տնտեսական աղետի աճն ուժեղանում էր մոնոպոլիաների հակաազգային քաղաքականությամբ։ Կառավարությունը Ռուրի մագնատներին վիթխարի վարկեր էր տրամադրում «պասսիվ դիմադրությունը» պահպանելու համար. բանվորներին նպաստ էր վճարում, ծածկում արտադրության ծախքերը և այլն, սակայն այդ միջոցների զգալի մասը բուրժուազիան օգտագործում էր վայրուտային սպեկուլացիաների համար։ Դրա հետևանքով խիստ ուժեղացավ ինֆլյացիան, ծայր առավ գների արագ աճը։ Որակյալ բանվորների աշխատավարձը ապրիլից մինչև հունիս մոտավորապես մեկ երրորդով արժեզրկվեց։ Կառավարության կողմից «պասսիվ դիմադրության» ֆինանսավորումը հասցրեց ռայխսբանկի ոսկու պաշարի սպառմանը (աշնան մոտերքին՝ կիսով չափ), զգալիորեն ավելացավ պետական բյուջեի դեֆիցիտը, որն առաջացավ նաև ունևոր դասակարգի կողմից հարկերը սաբոտաժի ենթարկելու հետևանքով (դրանք վճարվում էին ուշացումով, արժեզրկված մարկերով)։

Այսպիսով, Ռուրի ճգնաժամը և մոնոպոլիաների քաղաքականությունը երկիրը դրեցին տնտեսական աղետի եզրին, խթանեցին քաղաքական ճգնաժամի զարգացումը։ Նացիոնալիզմի ալիքն սկսեց ընկնել, ընդլայնվում էր մասսաների հեղափոխական նախաձեռնությունը։

«Քաղաքացիական խաղաղության» ավերակույտերի վրա սկսեց ստեղծվել պրոլետարական ճակատը։ Ամռան ամիսներին ծավալվեց գործադուլային շարժումը։ Ռուրի հանքափորների, մետաղագործների մայիսյան գործադուլը (մոտ 400 հազար մասնակից) եղավ ամբողջ Գերմանիան ընդգրկած հզոր գործադուլային ալիքի սկիզբը։ 1923 թ. ամռանը տեղի ունեցած բատրակների գործադուլներում գրեթե նույնքան մարդ մասնակցեց, որքան Նոյեմբերյան հեղափոխությունից հետո ընկած ամբողջ նախորդ ժամանակաշրջանում։ 1923 թ. հունիսին դասակարգային պայքարի հզոր օջախ դարձավ Սիլեզիան. երկու գործադուլներին (գյուղատնտեսական բանվորների, հանքափորների և մետաղագործների) մասնակցեց ավելի քան 250 հազ. մարդ։ Հուլիսին խոշոր գործադուլներ բռնկվեցին Բեռլինում, դրանք ներգրավեցին ավելի քան 200 հազ. մետաղագործների և շինարարական բանվորների։ Օգոստոսին դասակարգային պայքարը տարածվեց ամբողջ երկրում։

Օգոստոսյան գործադուլը։ «Մեծ կոալիցիայի» կառավարության ստեղծումը։ Հեղափոխական իրադրությունը Գերմանիայում

Կունոյի կառավարությունը չկարողացավ դադարեցնել ինֆլյացիայի աճը, անընդունակ գտնվեց երկիրն ապահովելու վճարման միջոցներով. թղթադրամի ամենօրյա պահանջը կազմում էր 15 բիլիոն մարկ, իսկ բանկերը կարող էին տրամադրել յոթ անգամ պակաս։ Դրա հետևանքով միլիոնավոր բանվորներ աշխատավարձ չստացան, երկրում աճում էր հզոր համազգային շարժումը, այն ծավալվում էր, փշրելով «օրինականության» շրջանակները, ԳՍԴԿ-ի և արհմիությունների ռեֆորմիստ պարագլուխների գլխի վրայով, չնայելով ոստիկանական տեռորին։

Պայքարը, որը տարերայնորեն սկսվեց կյանքի տարրական պայմանների բավարարման համար, եռանդուն պաշտպանություն գտավ ԳԿԿ-ի կողմից։ Կոմկուսի ջանքերով այդ խայտարղետ լայն շարժումը որոշակի միօրինակություն էր ստանում, ԳԿԿ-ի լոզունգները դառնում էին լայն զանգվածների պահանջ։ Օգոստոսի 11-ին Բեռլինի ֆաբգործկոմների ընդհանուր ժողովը որոշում ընդունեց ընդհանուր գործադուլի մասին։ Բեռլինում սկիզբ առած գործադուլը համերկրանական բնույթ ընդունեց, պայքարին մասնակցում էր ավելի քան 3 մլն մարդ։ Բանվորները պահանջում էին Կունոյի կառավարության հրաժարականը, տնտեսական օգնության տրամադրում, աշխատավարձի բարձրացում և այլն։ Կառավարությունն ի վիճակի չեղավ կատարելու իր պարտականությունները։

Կունոյի հրաժարականը նշանակում էր «աղետների քաղաքականության» ձախողում։ Վերստին առաջին պլան մղվեցին ճկուն պառլամենտական քաղաքականության կողմնակիցները։ Նրանց առավել ակտիվ օղակը Գերմանական ժողովրդական կուսակցության շափավոր թևն էր և նրա պարագլուխ Գ. Շտրեզեմանը։ Քաղաքական տակտիկայի նրբությամբ Շտրեզեմանը հիշեցնում էր Լլոյդ Ջորջին։ Նա հայտարարում էր, որ Վերսալի վերանայմանը և Գերմանիայի հզորության վերածնմանը կարելի է հասնել մանևրման քաղաքականությամբ։ «Երկերեսանի Յանուս» մականունը, որը տրվել էր Շտրեզեմանին, ոչ նվազ չափով համապատասխանում էր նաև նրա ներքին քաղաքականության կոնցեպցիային. պաշտպանելով գերմանական իմպերիալիզմի շահերը, դիմել կոմպրոմիսների, «քաջություն ունենալ ոչ ժողովրդական լինելու»։ Օգոստոսի 13-ին Շտրեզեմանը կազմեց «մեծ կոալիցիայի» կառավարությունը. բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչների հետ կաբինետի մեջ մտան չորս սոցիալ-դեմոկրատ, այդ թվում Ռ. Հիլֆերդինգը (ֆինանսների մինիստր) և Ռ. Շմիդտը (փոխկանցլեր)։ Շտրեզեմանի կառավարությունը հույս ուներ երկրի դրության կայունացմանը հասնել, չդիմելով արտակարգ լիազորությունների։ Նա փորձում էր շարունակել պասսիվ դիմադրությունը և իրացնել դեռևս Կունոյի ժամանակ մշակված և օգոստոսյան գործադուլի նախօրյակին ռայխստագի ընդունած ֆինանսատնտեսական օրենքները, որոնք նախատեսնում էին բյուջեի հաշվեկշռում՝ հին հարկերի բարձրացման, նորերի սահմանման և ոսկե փոխառության թողարկման միջոցով։

Սակայն կառավարությունն ի վիճակի չեղավ իրացնելու իր ծրագիրը։ Մոնոպոլիստական կապիտալը և խոշոր հողատերերը սաբոտաժի ենթարկեցին էկոնոմիկայի կայունացման ուղղությամբ ձեռնարկված բոլոր միջոցառումները։ Ազգայնական ուժերը Շտրեզեմանին մեղադրում էին «ձախից» եկող թշնամու հանդեպ ցուցաբերած թողտվության համար այն բանում, որ նրա կառավարությունը դարձել է ԳՍԴԿ-ի «գերին»։ Չնայած օպոզիցիայի խայտարղետությանը, իր էությամբ այն ուղղված էր ոչ միայն կոնկրետ քաղաքական այն ուժերի դեմ, որոնք կանգնեցին Գերմանիայի ղեկի մոտ, այլև վայմարյան բուրժուական դեմոկրատիայի ամբողջ սիստեմի, որպես Նոյեմբերյան հեղափոխության արդյունքների առավել ընդհանուր արտահայտության դեմ։ Սեպտեմբերի վերջերին քաղաքական վերակողմնորոշման պրոցեսն ուժեղացավ նաև «մեծ կոալիցիայի» մեջ մտնող կուսակցությունների մեջ. նրանք ճանաչեցին դիկտատորական գործողությունների և «Ստիննեսի ծրագրի» հիմնական պահանջների իրացման անհրաժեշտությունը, որպես երկրի ներքին դրության կայունացման և Ռուրի կոնֆլիկտի վերացման վճռական պայմանի։ Այդ վերակողմնորոշման արտահայտություն եղան «պասսիվ դիմադրության» վերացումը սեպտեմբերի 26-ին, ռազմական արտակարգ դրություն մտցնելը երկրում և «մեծ կոալիցիայի» կուսակցական-քաղաքական բաղայի քայքայումը։ Առկա էին տիրող դասակարգերի քաղաքականության ճգնաժամի բացահայտ նշաններ։ Դրա հետևանքն ու արտահայտությունը եղավ Շտրեզեմանի առաջին կաբինետի հրաժարականը (3. X. 1923 թ.)։

Սակայն կառավարական ճգնաժամն ավարտվեց որոշակի կոմպրոմիսով.

փոքր-ինչ վերափոխված ձևով «մեծ կոալիցիան» վերաստեղծվեց (Հիլֆերդինգը փոխարինվեց Գերմանական ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Լյութերով)։ Հրաժարվելով «ազատների քաղաքականության» ծայրահեղություններից, բայց ընդունելով Ռուրի մագնատների սոցիալ-տնտեսական գլխավոր պահանջները, Գերմանիայի կառավարող վերնախավն «օրինական» ուղի ընտրեց դրանք իրացնելու համար՝ սահմանադրության 48-րդ կետով քողարկված ռայխսվերի դիկտատուրայի և ԳՍԴԿ-ի հետ համագործակցության ուղին։

Հոկտեմբերի 13-ին ռայխստագը ԳՍԴԿ-ի դեպուտատների աջակցությամբ ֆինանսական, տնտեսական ու սոցիալական պրոբլեմները լուծելու համար օրենք ընդունեց Շտրեզեմանի կառավարությանը արտակարգ լիազորություններ տրամադրելու մասին։ «Կարգուկանոնի» բոլոր ուժերը մոբիլիզացվեցին և գործողության մեջ դրվեցին պայքարի ելած հեղափոխական զանգվածներին ջախջախելու համար։ Սակայն կառավարության արտակարգ միջոցառումները չկարողացան անհապաղ ու անմիջական ներգործություն ունենալ երկրի տնտեսության վիճակի և ներքաղաքական դրության վրա։ Ավելին, ընդհանուր քաոսն ուժեղացավ։ 1923 թ. հոկտեմբերին ֆինանսատնտեսական ճգնաժամը հասավ իր բարձրակետին։ Հարկերը չէին ծածկում պետության ծախքերի նույնիսկ 1 տոկոսը։ Ձեռնարկատերերը կրճատում կամ լիովին սեղմում էին արտադրությունը, հետաձգված ձեռնարկությունների միայն 6 տոկոսն էր «նորմալ» աշխատում։ Գերմանիայում հաշվվում էր ավելի քան 6 մլն բացարձակ կամ մասնակի գործազուրկ։ Ռեալ աշխատավարձը նվազեց մինչև նախապատերազմյան մակարդակի 30—40 տոկոսը։ Վիթխարի չափերի հասան մանրբուրժուական զանգվածների սնանկացումն ու պրոլետարականացումը։ 1923 թ. աշնանը Գերմանիայում առկա էր կեղեքվող դասակարգերի կարիքի և թշվառության սովորականից բարձր խորացում։ Ստեղծվում էր արտակարգ իրավիճակ, որը մասսաներին մղում էր ինքնուրույն գործողությունների։ Տարերային հուզումներով բռնկված էր ամբողջ երկիրը։ Զափազանց հատկանշական էր ԳՍԴԿ-ի և ռեֆորմիստական արհմիությունների թվակազմի նվազումը՝ մոտ կիսով չափ։ Գերմանիայում բարենպաստ օբյեկտիվ պայմաններ էին առաջանում հեղափոխական ուժերի հաղթանակի համար։

ԳԿԿ-ի պայքարը ճգնաժամից հեղափոխական ուղիով դուրս գալու համար

Հեղափոխական իրադրության հասունացումը ԳԿԿ-ի առջև խնդիր դրեց մասսաներին տանել դեպի հեղափոխություն։ Հենվելով VIII համագումարի որոշումների վրա, կոմկուսը վերցրեց միասնական պրոլետարական ճակատի ձևավորման կուրս։ Այդ նպատակի իրականացման կարևոր միջոց եղավ կոմունիստների աջակցությամբ Սաքսոնիայում ձախ սոցիալ-դեմոկրատական կառավարություն ստեղծելու համաձայնագիրը (1923 թ. ապրիլ)։ Թեև համաձայնագիրը կրում էր կոմպրոմիսային բնույթ, այն նախադրյալներ էր ստեղծում հեղափոխական պայքարի ծավալման համար։ ԳԿԿ-ի նախաձեռնությամբ երկրում ձևավորվում էին գործողությունների միասնության մարմիններ՝ պրոլետարական հարյուրյակներ (բանվորական ինքնապաշտպանություն), հսկիչ կոմիտեներ, ակտիվանում էր հեղափոխական ֆաբգործկոմների գործունեությունը։ Իրենց բնույթով ու մերձակա նպատակներով դրանք մասսաների ինքնօգնության ոչ սահմանադրական կազմակերպություններ էին, որոնց նպատակն էր պարենամթերքի ապահովումը, գների իջեցումը, բանվորական ժողովների ու ցույցերի պաշտպանությունը և այլն։ Սակայն հեղափոխական ճգնաժամի խորացման ընթացքում գործողությունների միասնության մարմինները բարենպաստ պայմանների

դեպքում կարող էին դառնալ գերմանական հեղափոխության կազմակերպական բազայի հիմք։

1923 թ. ամռանը ԳԿԿ-ն սկսեց մասսաներին կողմնորոշել դեպի «բանվորական կառավարությո՛ւն» լոզունգի վերածումը «բանվորա-գյուղացիական կառավարությո՛ւն» լոզունգի։ Նախատեսվում էր զարգացման երկու փուլ՝ պրոլետարական և կիսապրոլետարական լայն զանգվածների մոբիլիզացում հանուն Նոյեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանության և հարձակման, վճռական ճակատամարտի հետագա անցում հանուն քաղաքական իշխանության։ Այդ ընդհանուր կողմնորոշմանն էր ենթարկված նաև տակտիկան՝ մի կողմից, բանվոր դասակարգի գործողությունների միասնության ձևերբերում և համագեմոկրատական պահանջների բազայի վրա միջին խավերի հետ համագործակցություն (կամ նրանց չեզոքացում), մյուս կողմից, իշխանության համար մղվող պայքարի ռազմատեխնիկական նախադրյալների ստեղծում, զինված ուժերի կազմակերպում։

1923 թ. ամռան և աշնան ընթացքում ԳԿԿ-ին հաջողվեց էականորեն փոխել ուժերի հարաբերակցությունը ռեֆորմիստական արհմիություններում։ Կոմկուսն իր ետևից տանում էր արհմիությունների մոտ 4 մլն անդամների և չկազմակերպված բանվորների առավել ակտիվ մասին։ 1923 թ. աշնանը ԳԿԿ-ի թվակազմը վերստին հասավ 300 հազ. անդամի։

Հեղափոխության քաղաքական բանակի հիմքը պետք է դառնային գործողությունների միասնության մարմինները։ Պրոլետարական հարյուրակները, շարունակելով մնալ որպես գործողությունների միասնության մասսայական մարմիններ, աստիճանաբար վերածվում էին հեղափոխության զինված բանակի. 1923 թ. աշնան մոտերքին դրանց թվակազմը հասավ 130 հազ. մարտիկի։ 1923 թ. աշնանը վերցվեց գործողությունների կոմիտեների ստեղծման կուրս։ Դրանք մտահղացված էին որպես իրենց բնույթով ու ֆունկցիաներով քաղաքական սովետներին մոտիկ մարմիններ և, որպես կանոն, կազմավորվում էին միջկուսակցական հիմքի վրա։ ԳԿԿ-ին չհաջողվեց երկրամասի կամ գավառի մասշտաբով նույնիսկ ձևական համաձայնություն հասնել ԳՍԴԿ-ի և ռեֆորմիստական արհմիությունների հետ, բացառությամբ Սաքսոնիայի և Թյուրինգիայի։ Սակայն պրոլետարական «ներքնախավերում» գործողությունների միասնությունը լայն թափ էր ընդունում։ Գործողության կոմիտեներ էին ստեղծվում ամենուրեք։ Սաքսոնիայում և Թյուրինգիայում 1923 թ. հոկտեմբերին ստեղծվեցին բանվորական կառավարություններ՝ ձախ սոցիալ-դեմոկրատների և կոմունիստների մասնակցությամբ։ Բանվորական կառավարությունների ծրագրերը հակամոնոպոլիստական բնույթ էին կրում, ամենից առաջ համապատասխանում էին Նոյեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանության համար մղվող զանգվածային պայքարի ծավալման խնդիրներին, բայց բանվոր դասակարգի պասակտվածությունը խանգարեց դրանց իրականացմանը։

1923 թ. ամենաօրհասական ամիսներին ԳՍԴԿ-ի պարագլուխները գտնվելով Շտրեզեմանի կառավարության կազմում, դարձան նրա հակահեղափոխական քաղաքականության ակտիվ համամասնակիցները։ Հեղափոխակն ճգնաժամի ելքի վրա ազդեցին նաև ԳԿԿ-ի թույլ տված սխալները։ Լայպցիգի համագումարի ընդհանուր ստրատեգիական-տակտիկական գիծը հետևողականորեն չպահպանվեց կուսակցության պրակտիկ գործունեության մեջ։ Կուսակցության քաղաքական ստրատեգիայի «աքիլլեսյան գարշապարը» «վճռական հարվածի» համար «ուժեր կուտակելու» տակտիկան էր, որը ելնում էր նախապես, հին հասարակարգի ընդերքում, մինչև հեղափոխության սկսվելը նրա

ծայթքման ուժեր ստեղծելու և դրանք լիակատար պատրաստության բերելու հնարավորության վերաբերյալ պատկերացումներից, մասնակի ելույթների և գործադուլային մարտերի թերագնահատումը որպես գլխավոր խնդրին՝ իշխանության համար մղվող պայքարին, հեղափոխության բանակի «մոտեցման» հուսալի միջոցի։ «Վճռական հարվածի» համար «ուժեր կուտակելու» տակտիկան արգելակում էր պայքարի ծավալումը, ռեֆորմիստներին թույլ էր տալիս անպատիժ կերպով սարոտաժի ենթարկել ԳԿԿ-ի հետ ստորագրված համաձայնագիրը և ձախողել միասնական պրոլետարական ճակատի ստեղծումը։ Եթե ԳՍԴԿ-ն հրաժարվեց օգտագործել 1923 թ. բարենպաստ օբյեկտիվ իրադրությունը ճգնաժամից հեղափոխական ուղիով ելնելու համար, ապա ԳԿԿ-ն ի վիճակի չեղավ կազմալուծել ռեֆորմիստների դիմադրությունը և գերմանական բանվոր դասակարգին հեղափոխության հանել։

Հակահեղափոխության հաղթանակը։ 1919—1923 թթ. զարգացման արդյունքները

Երկրում ռազմական դիկտատուրա հաստատելով և արտակարգ լիազորություններ ստանալով, Գերմանիայի կառավարող «վերնախավերը» սկսեցին պրոլետարիատի ելույթների դեմ ուղղված ճնշումը։ Հիմնական հեղափոխական օջախները (Սաքսոնիա, Թյուրինգիա) գրավվեցին ռայխսվերի կողմից, բանվորական կառավարությունները ցրվեցին, Է. Թելմանի ղեկավարությամբ Համբուրգում տեղի ունեցած բանվորների ապստամբությունը (23—25. X. 1923 թ.) ճնշվեց։ Հաղարավոր կոմունիստներ և ակտիվ բանվորներ ձերբակալվեցին, բանտարկվեցին, կոմկուսը զրկվեց լեգալ մամուլից, իսկ 1923 թ. նոյեմբերի 23-ին արգելվեց։

Հարված հասցնելով «ձախից եկող թշնամուն», գերմանական մոնոպոլիստական բուրժուազիան սկսեց կորցնել հետաքրքրությունը ԳՍԴԿ-ի հետ բացահայտ համագործակցության նկատմամբ։ Բացի այդ, կառավարության կազմում սոցիալ-դեմոկրատների առկայությունը արգելակում էր «կարգուկանոնի» բոլոր ուժերի միավորմանը, քանի որ բուրժուազիայի ծայրահեղ աջ թևը և յունկերությունը հանդես էին գալիս ընդդեմ «մեծ կոալիցիայի»։ Մյուս կողմից, իրեն վարկաբեկելով բուրժուազիայի հետ համագործակցությամբ, ԳՍԴԿ-ի ղեկավարությունն էլ էր հասկանում, օպոզիցիայի անցնելով, մասսաների մեջ իր դիրքերն ամրապնդելու անհրաժեշտությունը։ Նոյեմբերի 2-ին ԳՍԴԿ-ն հայտարարություն արեց կառավարությունից իր դուրս գալու մասին։

Սակայն երկրի ընդհանուր տնտեսական ու քաղաքական դրությունը մինչև տարվա վերջը շարունակում էր մնալ անկայուն։ Տիրապետության մեթոդների ու ձևերի հարցի շուրջ մղվող պայքարը շարունակվում էր։ Դրա արտահայտությունն էր 1923 թ. նոյեմբերի 8-ի հիտլերյան «գարեջրատնային խռովությունը» Մյունխենում։ Սակայն ֆաշիստական դիկտատուրա հաստատելու փորձը երկրի ներսում և արտաքսահմանում լուրջ աջակցություն չգտավ։ Այդ տարիների գերմանական բուրժուազիան, որպես ստեղծված իրադրության մեջ առավել անվտանգ ու ճկուն միջոց, գերադասեց պառլամենտական դեմոկրատիան՝ սահմանադրության շրջանակներում ռազմական դիկտատուրայի զուգակցմամբ։ Մյուս կողմից, ազգայնական ու ֆաշիստական ուժերի հաղթանակի մեջ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարող շրջաններն էլ էին սպառնալիք տեսնում Վերսալյան հաշտության համար։ Այդ հանգամանքները և դեմոկրատիայի ու խաղաղության նկատմամբ գերմանական ժողովրդի վառ արտահայտված կամքը որոշեցին ֆաշիստական խռովության ճակատագիրը։ 1923 թ. նոյեմբերի կառավարական ճգնաժամը (ռայխսկանցլերի պոստից Շտրեզեմանի հրաժարական տալը) ավարտվեց Կենտրոնի կուսակցության պարագլուխ Վ. Մարքսի զուտ բուրժուական կաբինետի կազմումով։

1923 թ. հեղափոխական ճգնաժամը Գերմանիայում հետպատերազմյան հեղափոխության զարգացման գագաթնակետն էր։ Հետպատերազմյան առաջին տարիների քաղաքական անկայունության ու հեղափոխական պայթյունների հիմքում ընկած էր երեք գործոն. գերմանական մոնոպոլիստական բուրժուազիան և խոշոր հողատերերը, միապետականներն ու ազգայնական տարրերը, մերժելով նոյեմբերյան հեղափոխության պատմական օրինաչափությունը և նրա հետևանքները դիտելով որպես հեղափոխական մասսաներին կատարած ժամանակավոր զիջում, իրենց գլխավոր ջանքերն ուղղում էին հեղափոխության արդյունքների վերանայմանը և խոշոր կապիտալի անսահմանափակ տիրապետության հաստատմանը. բանվոր դասակարգի մեծամասնությունը լի էր վրճռականությամբ պաշտպանելու հեղափոխության արդյունքները, իրականացնելու և զարգացնելու Վայմարյան հանրապետության սոցիալ-քաղաքական դեկլարացիաները. դրա հետ մեկտեղ գերմանական պրոլետարիատի ավանգարդը ձգտում էր նպաստավոր պայմանների առկայության դեպքում պայքար ծավալել հանուն իշխանության։

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Գերմանական էկոնոմիկայի կայունացումն ու վերականգնումը։ Խոշոր բուրժուազիայի դիրքերի ամրապնդումը

1923 թ. գերմանական պրոլետարիատի կրած պարտությունն ամրապնդեց խոշոր բուրժուազիայի քաղաքական տիրապետությունը։ Կապիտալիստական կայունացմանը նպաստում էին 1923—1924 թթ. սահմանագծին գերմանական կառավարության ձեռնարկած ֆինանսատնտեսական ու սոցիալական միջոցառումները և օտարերկրյա կապիտալի օգնությունը։ Օգտագործելով արտակարգ լիազորությունները և պաշարողական դրության ռեժիմը, Գ. Շտրեզեմանի, ապա և Վ. Մարքսի կառավարությունները հրապարակեցին օրենսդրական բնույթի ավելի քան 60 կարգադրություններ, որոնք ստեղծեցին պետության ֆինանսական, հարկային և սոցիալական քաղաքականության իրավական նոր հիմք։ Վալյուտայի կայունացման նպատակով իրականացվում էր դաժան խնայողության կուրս։ Ավելի քան $^1/_3$-ով կրճատվեց պետական ապարատը, իջեցվեց ծառայողների և չինովնիկների աշխատավարձը։ 1923 թ. վերջին ամիսներին դադարեցվեցին ռեպարացիոն վճարումները, խիստ կրճատվեցին սոցիալական ծախսերը։ Հարկերի ոսկով հաշվարկմանն անցնելը հիմք ստեղծեց բյուջեի հաշվեկշռման համար։ Արդեն 1923 թ. դեկտեմբերին հարկային եկամուտները հասան մինչև 312,3 մլն ոսկե մարկի (հոկտեմբերին՝ 14,5 մլն մարկ), իսկ 1924 թ. հունվարին՝ մինչև 503,5 մլնի։ Իշխանության մարմինները գործադուլների արգելման իրավունք ստացան։ 1923 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետը փաստորեն վերացնում էր 8-ժամյա աշխատանքային օրը։ Կառավարության կարգադրությունները ձեռնարկատերերին ըստ էության անսահմանափակ ազատություն էին տրամադրում աշխատանքից արձակելու համար։ Այսպիսով բավարարվեցին մոնոպոլիստական կապիտալի պահանջները էկոնոմիկայի կայունացման համար «պայմաններ ստեղծելու» մասին։

Ռեպարացիաների հարցի կարգավորման վերաբերյալ կառավարության սկսած բանակցություններն ավարտվեցին «Դաուեսի պլանի» ընդունմամբ։ Այն

սահմանում էր ռեպարացիոն վճարումների չափը՝ 1924/1925 թ. 1 մլրդ մարկ ոսկով, ապա մուծումներն ավելանում էին (1928/1929 թ. 2,5 անգամ)։ Որպես այդ վճարումների աղբյուր նախատեսվում էին տուրքերն ու հարկերը մասսայական սպառման ապրանքներից, պահումները երկաթուղիների և արդյունաբերական ձեռնարկությունների շահույթներից։ Պետական բյուջեն, ռայխսբանկը և երկաթուղիները դրվում էին օտարերկրյա վերահսկողության տակ, որն իրականացնում էր միջազգային ռեպարացիոն հանձնաժողովը։ Իրենց հերթին օտարերկրյա տերությունները, ամենից առաջ ԱՄՆ-ը համաձայնվեցին Գերմանիային փոխառություններ տրամադրել։ 1924-ից մինչև 1929 թ. Գերմանիան ստացավ ավելի քան 10 մլրդ մարկ երկարաժամկետ և ավելի քան 6 մլրդ մարկ կարճաժամկետ օտարերկրյա վարկեր, որոնք օգտագործվեցին արդյունաբերության մոդեռնացման համար։ Արտադրության թարմացումն ու ընդլայնումը տեղի էր ունենում նոր տեխնիկական հիմքի վրա։ Հատկապես բուռն կերպով էին զարգանում երիտասարդ ճյուղերը՝ էլեկտրատեխնիկան ու քիմիան։ 1928 թ. արդյունաբերական արտադրությունը գերազանցեց 1913 թ. մակարդակը։

Ուժեղացավ արտադրության և կապիտալի համակենտրոնացումն ու կենտրոնացումը։ 20-ական թվականների վերջերին կարտելների թիվը Գերմանիայում, նախապատերազմյան ժամանակի համեմատությամբ, աճեց գրեթե 2 անգամ։ 1925 թ. ստեղծվեց Եվրոպայում ամենահզոր «ԻԳ ֆարբենինդուստրի» քիմիական կոնցեռնը, որը կենտրոնացրեց սինթետիկ ազոտի արտադրության ավելի քան 80 տոկոսը, սինթետիկ բենզինի և ներկերի գրեթե 100 տոկոսը։ Մի այլ մոնոպոլիստական հսկա՝ «Պողպատի տրեստը» (մոտ 300 ձեռնարկություն և գրեթե 200 հազ. բանվոր) վերահսկում էր երկաթի ու պողպատի արտադրության ավելի քան 40 տոկոսը, չուգունի արտադրության 43 տոկոսը և այլն։ Գերմանական կոնցեռնները ղեկավար դեր էին կատարում ավելի քան 50 միջազգային ֆինանսական միավորումների ստեղծման գործում։ Մի քանի խոշոր բանկեր վերահսկում էին բանկային կապիտալի մոտ 63 տոկոսը (1928 թ.)։ Կայունացման սկզբին վերացվեց պատերազմի ընթացքում և հետպատերազմյան առաջին տարիներին ստեղծված պետական-մոնոպոլիստական կարգավորման մեխանիզմը, թուլացավ պետության ուղղակի միջամտությունը կապիտալիստական վերարտադրության ասպարեզում։

Գերմանական բանվորների տնտեսական դրությունը կայունացման ժամանակաշրջանում որոշ չափով բարելավվեց ինֆլյացիայի տարիների համեմատությամբ, կրճատվեց գործազրկությունը։ Բարձրացավ ռեալ աշխատավարձը, թեև, հատկապես կայունացման առաջին տարիներին, այն խիստ ետ էր մնում կենսական մինիմումից (1924 թ. շաբաթական միջին ռեալ աշխատավարձը հավասար էր 26,40 մարկի, կյանքի գինը՝ 41,20 մարկի, 1928 թ.՝ համապատասխանաբար 42,70 և 49)։ Կորցնելով դաղութները, գերմանական իմպերիալիզմը սկսեց շահագործել գերմանական բանվոր դասակարգին, ամենից առաջ աշխատանքի լարվածության բարձրացման և աշխատանքային օրվա տևողության ավելացման միջոցով։ 1927 թ. ռայխստագն օրինականացրեց 1922 թ. սահմանված աշխատանքային շաբաթվա ավելացումը՝ գերմանական բանվորների ավելի քան կեսը աշխատում էր շաբաթվա մեջ 48 ժամից ավելի, իսկ $^1/_3$-ը՝ 52 ժամից ավելի։

Այսպիսով, 20-ական թվականների երկրորդ կեսին գերմանական խոշոր բուրժուազիային հաջողվեց հաղթահարել հետպատերազմյան քաոսը, կայունացնել և մոդեռնացնել էկոնոմիկան, զգալիորեն ընդլայնել արտադրությունը

և պայմաններ նախապատրաստել հզոր ռազմաարդյունաբերական պոտենցիալի վերստեղծման համար։ Սակայն կայունացումը հաստատուն չէր։ Չնայած օտարերկրյա կապիտալի խոշոր դեղաբաժնի ներարկմանը, Գերմանիայի տնտեսական կոնյունկտուրան կայուն չէր։ 1925/1926 թթ. միջանկյալ ճգնաժամը առաջ բերեց արդյունաբերական արտադրության ինդեքսի անկում 18,6 կետով։ Սկսած 1927 թ. դանդաղեցին արտադրության աճի տեմպերը, կրճատվեց ապրանքաշրջանառությունը։ Ընկավ արդյունաբերական սարքավորումների պահանջարկը. հիմնական կապիտալի թարմացման պրոցեսը մոտենում էր ավարտին։ Աճեց գործադուլների ալիքը, մեծացավ գործազրկությունը (1928 թ. նոյեմբերից մինչև 1929 թ. փետրվարը գրեթե 2 անգամ, մինչև 3 մլն մարդ)։ Պարզորոշ գծագրվում էին տնտեսական ճգնաժամի նշանները։

Իմպերիալիստական տենդենցների ուժեղացումը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ

Գերմանական մոնոպոլիաների տնտեսական ու քաղաքական հիմքերի վերականգնումը ուղեկցվում էր երկրի ներսում քաղաքական ռեակցիայի ուժեղացմամբ և արտաքին քաղաքականության մեջ իմպերիալիստական տենդենցների աճով։ Վ. Մարքսի կառավարությունը, որը կազմվեց 1923 թ. վերջին, սկզբնավորեց զուտ բուրժուական մինիստրությունների ժամանակաշրջանը (մինչև 1928 թ. կեսը). խոշոր բուրժուազիան և յունկերությունն անմիջականորեն կանգնեցին պետության ղեկի մոտ. ԳՍԴԿ-ն անցավ օպոզիցիայի։ 1924 թ. դեկտեմբերին կայացած ռայխստագի ընտրություններից հետո ստեղծվեց Լյութերի կառավարությունը, որի կազմի մեջ հեղափոխությունից հետո առաջին անգամ մտան Գերմանական ազգային ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները։ Կայզերական գեներալ, միապետական Հինդենբուրգի ընտրվելը (Ֆ. Էբերտի մահից հետո) Վայմարյան հանրապետության պրեզիդենտ, մարդ, որը չէր թաքցնում իր ծայրահեղ ազգայնական հայացքները, վկայում էր իմպերիալիստական ռեակցիայի դիրքերի ամրապնդման մասին։ Դեռ մասնակի կայունացման տարիներին Գերմանիայի առավել ռեակցիոն իմպերիալիստական շրջաններն աշխարհի նոր վերաբաժանման պլաններ կազմելով, նացիզմը դիտում էին որպես իրենց ստրատեգիական ռեզերվ և նրան զգալի ֆինանսական օգնություն ցույց տալիս։ 1925—1927 թթ. ֆաշիստական շարժման մեջ տեղի էր ունենում տարբերակման պրոցես։ Իրար մեջ մրցակցող ֆաշիստական մի քանի քաղաքական ու ռազմական խմբավորումներ դադարեցրին իրենց գոյությունը, մյուսները ձուլվեցին 1925 թ. ձևավորված Հիտլերի Նացիոնալ-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցության (ՆՍԴԱՊ) մեջ։

Կայունացման տարիները եղան Գերմանիայի միջազգային դիրքերի ամրապնդման ժամանակաշրջան։ Արտաքին-քաղաքական մանևրման շտրեզեմանյան տակտիկան հասավ իր նպատակին. «Դաուեսի պլանն» ապահովեց գլխավոր խնդրի՝ Գերմանիայի արդյունաբերական պոտենցիալի վերստեղծման լուծումը, հիմքեր ստեղծեց կապիտալիստական աշխարհում ուժերի փոփոխման համար։ Լոկարնոյի պակտը (1925 թ.) երաշխավորեց Գերմանիայի արևմտյան սահմանները, հնարավորություն թողնելով գերմանական ագրեսիան Արևելք ուղղելու համար։ Գերմանիայի մտնելն Ազգերի լիգա (1926 թ.) որպես իրավահավասար անդամ, նրա վրայից ռազմական վերահսկողության հանումը (1927 թ. հունվար) վկայում էին եվրոպական և համաշխարհային քաղաքականության մեջ Գերմանիայի խաղացած դերի զգալի մեծացման մասին։ Դեռ 1925 թ. Գերմանիայի կառավարող շրջաններում ձևակերպվեց «մինիմում-ծրագիրը», որի էությունը հանգում էր նախապատերազմյան դիրքերի վե-

բականգնմանը, գաղութների վերադարձմանը, արևելյան սահմանների փոփոխմանը, Ավստրիայի միացմանը։ 20-ական թվականների վերջին գործնական քայլեր կատարվեցին զինված ուժերի վերստեղծման ուղղությամբ. «իրավահավասարության» վերաբերյալ ճառերի քողարկմամբ գերմանական կառավարությունը ձեռնամուխ եղավ 4 զրահակիրների շինարարությանը, հասավ ռեպարացիաների վճարման նոր պայմանների վերաբերյալ բանակցությունների վերսկսմանը։ Միաժամանակ հարց դրվեց Հռենոսի գոտուց օկուպացիոն զորքերի վաղաժամկետ դուրս բերման և Վերսալի պայմանագրի ռազմական սահմանափակումների թուլացման մասին։

Կայունացման տարիները եղան «Ռապալոյի քաղաքականության» ծաղկման ժամանակաշրջան։ Սովետական Միության դեմ մղվող պայքարում Գերմանիան «մայրցամաքային սրի» վերածելու արևմտյան տերությունների հաշիվները բախվում էին գերմանական կառավարող շրջանների խուսափողական դիրքին, կառավարողներ, որոնք իրենց սեփական ագրեսիվ պլաններն էին նյութում և պահանջում Վերսալի լիակատար վերանայում՝ որպես վարձատրություն հակասովետական գործարքին մասնակցելու համար։ ՍՍՀՄ-ի հետ համաձայնությունը դիտվում էր որպես լուրջ խաղաքարտ արևմտյան տերությունների հետ մղվող բանակցություններում։ Հենց դրա մեջ էր «Արևելքի և Արևմուտքի միջև հավասարակշռելու» շտրեզեմանյան քաղաքականության իսկական իմաստը։ Իհարկե, Գերմանիայում կային նաև ուրիշ, դեմոկրատական ուժեր, որոնք անկեղծորեն շահագրգռված էին Սովետական Ռուսաստանի հետ տնտեսական ու քաղաքական հարաբերություններն ամրապնդելու մեջ, և առաջին հերթին բանվոր դասակարգը, առաջադեմ մտավորականությունը։ Գերմանիայի ռապալյան քաղաքականությունը տարբեր քաղաքական, տնտեսական և ռազմական ուժերի ու տենդենցների հավասարազոր ուժն էր։ Սակայն, չնայած այդքան հակասական հանգամանքներին, Գերմանիայի և ՍՍՀՄ-ի միջև կնքված (1925 թ.) առևտրական պայմանագիրը և չեզոքության մասին պայմանագիրը (1926 թ.) օբյեկտիվորեն լուրջ հարված էին պատերազմի սանձազերծման իմպերիալիստական պլաններին և նպաստեցին խաղաղության պահպանմանը Եվրոպայում։

Բանվորական շարժումը։ ԳՍԴԿ-ի և ԳԿԿ-ի քաղաքականությունն ու գործունեությունը

Կապիտալիզմի մասնակի կայունացման ժամանակաշրջանում Գերմանիայում պրոլետարիատի պայքարի գլխավոր ձևը դարձավ տնտեսական պայքարը։ Բանվոր դասակարգի առավել խոշոր ելույթներից մեկը եղավ հանքափորների գործադուլը 1924 թ. մայիսին, որն ընդգրկեց ամբողջ Ռուրի մարզը, Վերին Սիլեզիան, Սաքսոնիայի ածխային շրջանները և ընդունեց գրեթե ընդհանուր բնույթ։ Գործադուլ արեց մոտ մեկ միլիոն բանվոր։ 1924 թ. ընթացքում կորցված աշխատանքային օրերի թիվը 2,5 անգամ ավելի էր, քան նախորդ տարում։ Սակայն հետագա ժամանակաշրջանում, հատկապես 1926 թ. գործադուլների թիվը կրճատվեց։ Գործադուլային շարժման նոր աշխուժացում նշմարվեց միայն 1927 թ. (1926 թ. համեմատությամբ գործադուլների թիվն ավելացավ 2 անգամ, կորցված աշխատանքային օրերի թիվը՝ գրեթե 5 անգամ)։ 1928 թ. այդ տենդենցն ընդհանուր առմամբ պահպանվեց։

Կայունացման ժամանակաշրջանում բանվորական շարժման վիճակի վրա բացասական ազդեցություն էին ունենում «բարգավաճման դարաշրջանի» և «կազմակերպված կապիտալիզմի» վրա հասնելու վերաբերյալ ռեֆորմիստական տեսությունները։ Դրանց հիմքը ԳՍԴԿ Գյոռլիցյան ծրագրի կենտրոնական գաղափարն էր՝ Վայմարյան հանրապետությունը «ժողովրդական» պետություն ճանաչելը և Վայմարյան սահմանադրության շրջանակներում սոցիալիստական հասարակության աստիճանական կառուցման հնարավորության ընդունումը։ «Կազմակերպված կապիտալիզմի» և «տնտեսական դեմոկրատիայի» ծավալուն կոնցեպցիան ձևակերպվեց ՀԱՄ-ի կոնգրեսներում (1925, 1928 թթ.) և ԳՍԴԿ համագումարներում (1925, 1927 թթ.)։ Մարքսիզմի բռնաշտանական ռևիզիայի ընդհանուր տենդենցի համապատասխան, ռեֆորմիստները էկոնոմիկայի և սոցիալական հարաբերությունների պետական-մոնոպոլիստական կարգավորումը, ինչպես նաև արտադրության և կապիտալի համակենտրոնացման ու կենտրոնացման՝ կայունացման տարիներին ուժեղացած պրոցեսները մեկնաբանում էին որպես «ազատ մրցակցության կապիտալիստական սկզբունքի սկզբունքային փոխարինում պլանային արտադրության սոցիալիստական սկզբունքով» (Հիլֆերդինգի արտահայտությունը)։ Կապիտալիստական ռացիոնալացումը ռեֆորմիստները դիտում էին որպես «կազմակերպված կապիտալիզմի» կարևորագույն նախադրյալ։ Այդ պրոցեսի առաջմղումը հռչակվում էր բանվորական շարժման «անմիջական խնդիր»։

«Տնտեսական դեմոկրատիայի» էությունը հանգեցվում էր պարիտետային տնտեսական խորհուրդների, տարիֆային պայմանագրերի, արբիտրաժի և այլ սիստեմի միջոցով ձեռնարկատերերի հետ բանվորների դասակարգային համագործակցության արմատավորմանը։ Այդպես էին ռեֆորմիստները պատրանքներ տարածում առանց բանվոր դասակարգի քաղաքական իշխանություն հաստատելու, պետության տնտեսության ու քաղաքականության մեջ աշխատավորների կողմից վճռական դիրքեր «գրավելու» հնարավորության մասին։ «Տնտեսական դեմոկրատիայի» բաղկացուցիչ տարր էր հռչակվում «քաղաքական դեմոկրատիան», բոլոր մակարդակներում բանվորների «համամասնակցությունը» պետության կառավարմանը։

1925 թ. (Հայդելբերգի համագումարում) ընդունվեց ԳՍԴԿ նոր ծրագիրը, որը պարունակում էր Էրֆուրտյան ծրագրի կարևորագույն տեսական սկզբունքները։ Դրա հետ մեկտեղ օրվա պահանջները (գործողությունների ծրագիր) ամբողջապես հենվում էին «կազմակերպված կապիտալիզմի» և «տնտեսական դեմոկրատիայի» կոնցեպցիաների վրա։ Ծրագրում կենտրոնական տեղ էին գրավում արտադրության (տրեստների, կարտելների) նկատմամբ վերահսկողության, տնտեսության կառավարման գործում բանվորների «համամասնակցության», պետական ապարատի դեմոկրատացման, սոցիալական օրենսդրության ընդլայնման մասին լոզունգները։ Ռեֆորմիստական այդ կոնցեպցիաներն ընկած էին ԳՍԴԿ-ի և ՀԱՄ-ի պրակտիկ գործունեության հիմքում։ Ռեֆորմիստները սարոտաժի էին ենթարկում գործադուլները. աշխատանքային կոնֆլիկտների դեպքում նրանք, որպես կանոն, ենթարկվում էին պետական արբիտրաժին. ՀԱՄ-ի կողմից հավանության արժանացած տարիֆային պայմանագրերի 90 տոկոսում նշված էր 9—10-ժամյա և նույնիսկ ավելի երկարատև աշխատանքային օր։ Հրաժարվելով համագործակցել ԳԿԿ-ի հետ, ռեֆորմիստները կոալիցիայի էին դիմում բուրժուական կուսակցությունների հետ։

Երբ 1925 թ. հարց առաջացավ հանրապետության պրեզիդենտի ընտրությունների մասին, ԳՍԴԿ-ն «վայմարյան կոալիցիայի» կուսակցությունների հետ քվեարկեց Կենտրոնի կուսակցության պարագլուխ Վ. Մարքսի օգտին, հրաժարվելով իր սեփական թեկնածուն առաջադրելուց։ Իրեն համարելով «պետական կուսակցություն» և հետևելով «տնտեսական դեմոկրատիայի» տեսությանը, ԳՍԴԿ-ի ղեկավարությունը խրախուսում էր Վայմարյան հանրապետու-

թյան մեջ ԳՍԴԿ-ի «ինտեգրացման» տենդենցը։ Կուսակցության ավելի քան 300 հազ. անդամներ (նրա կազմի մոտ 1/3-ը) զբաղեցնում էին պետական տարբեր պաշտոններ, ինչպես նաև վարձատրվող պոստեր կուսակցության մեջ, արհմիություններում և այլն։ Ընտրություններից հետո, 1928 թ. մայիսին վերջապես Գերմանիայի կանցլեր դարձավ ԳՍԴԿ-ի պարագլուխ Գ. Մյուլլերը։

Արտաքին քաղաքականության ասպարեզում ԳՍԴԿ-ն պաշտպանում էր «արևմտյան» կողմնորոշումը և Վերսալյան պայմանագրի «կատարման քաղաքականությունը»։ Վայմարյան բուրժուական հանրապետությունը որպես «ժողովրդական» պետություն ճանաչելն ընկած էր «հայրենիքի պաշտպանության» ռեֆորմիստական կոնցեպցիայի հիմքում։ Ռայխսվերը դիտվում էր որպես հանրապետության պաշտպանության գործիք և խաղաղության պահպանման գործոն։ Սպառազինությունների «իրավահավասարության» աղգայնական լոզունգը, թեև տատանումներով, աջակցություն էր գտնում ԳՍԴԿ-ի ղեկավարության կողմից։

1923 թ. բանվոր դասակարգի կրած պարտությունից հետո ԳԿԿ-ն լուրջ դժվարություններ էր ապրում։ Բանվոր դասակարգի շահերին ԳՍԴԿ-ի և ՀԱՄ-ի պարագլուխների դավաճանությունից առաջացած զայրույթը, դժգոհությունը ԳԿԿ-ի բրանդլերյան ղեկավարության քաղաքականությունից, գործազրկությունն ու 1923 թ. աշնանային պարտությունից հետո արհմիություններից կատարվող մասսայական փախուստը պայմաններ ստեղծեցին կոմկուսի մեջ ուլտրաձախ տրամադրությունների տարածման համար։ ԳԿԿ Ֆրանկֆուրտյան համագումարում (1924 թ. ապրիլ) աղանդավորական տարրերի ազդեցությամբ ընդունվեցին այնպիսի որոշումներ, որտեղ ըստ էության ժխտվում էին միջանկյալ փուլերը պրոլետարիատի դիկտատուրային հասնելու ճանապարհին, ուլտրաձախ ոգով էր մեկնաբանվում «բանվորական կառավարության» լոզունգը։ Ռեֆորմիստական արհմիություններ կոմունիստների վերադառնալու մասին առաջարկությունը մերժվեց։ Համագումարում ընդունված գործողությունների ծրագիրը բովանդակում էր նաև մասնակի պահանջներ։ Սակայն դրանց իրականացումը պայմանավորվում էր վերջնական նպատակին հասնելով՝ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճումով։ Գնահատելով Գերմանիայում ստեղծված դրությունը, համագումարը սխալմամբ եզնում էր ամենամոտ ժամանակներում հեղափոխական իրադրության սրման անխուսափելիությունից։ Ֆրանկֆուրտյան համագումարում ԳԿԿ-ի ղեկավարության մեջ վճռական դիրքեր գրավեց ուլտրաձախերի կլիկը՝ Ռ. Ֆիշերի և Ա. Մասլովի գլխավորությամբ։

Ղեկավարության մեջ ուլտրաձախերի գտնվելը (1924 թ. ապրիլից մինչև 1925 թ. նոյեմբեր) վիթխարի վնաս հասցրեց ԳԿԿ-ին, խիստ թուլացրեց նրա դիրքերը մասսաների մեջ։ 8 ամսում (1924 թ. մայիսից մինչև 1924 թ. դեկտեմբեր) կոմկուսը կորցրեց մոտ 2 մլն ընտրողներ։

Արդեն 1924 թ. կուսակցության լենինյան կորիզը (Է. Թելման, Վ. Պիկ, Վ. Ուլբրիխտ, Ֆ. Հեկերտ, Ե. Շնելլեր, Կ. Յետկին և ուրիշներ) պայքար ծավալեց ինչպես աջ օպորտունիզմի, այնպես էլ այդ պահին գլխավոր վտանգ հանդիսացող ուլտրաձախերի արկածախնդրական քաղաքականության դեմ, պահանջեց անհապաղ փոխել կուսակցության արհմիութենական քաղաքականությունը՝ այն համարելով գլխավոր օղակը, որը թույլ կտա շտկել ԳԿԿ-ի քաղաքական գիծը մասսաների նկատմամբ։ Բայց դրա համար անհրաժեշտ էր ստեղծել ԳԿԿ-ի իսկապես հեղափոխական ղեկավարություն։ 1925 թ. աշնանը կուսակցության մեջ ծավալվեց սուր պայքար, որն ավարտվեց (Կոմունիստական ինտերնացիոնալի օժանդակությամբ) ԳԿԿ-ի ղեկավարությունից, ապա և կուսակցությունից ուլտրաձախերի վտարումով։ ԳԿԿ-ի նոր կազմված Կենտկոմը գլխավորեց Է. Թելմանը։ Կարևոր քայլ կատարվեց ԳԿԿ-ն նոր տիպի կուսակցության վերածելու ճանապարհին։ Դրան հետևած կուսակցության գաղափարական աճը, տակտիկական ճիշտ կողմնորոշումը ԳԿԿ-ին թույլ տվեցին քաղաքական ակտիվ աշխատանք կատարել մասսաների մեջ, խոշոր կամպանիա կազմակերպել իշխանների ունեցվածքի անհատույց բռնագրավման համար և անցկացնել Աշխատավորների կոնգրես։

1925 թ. վերջին աջ սոցիալ-դեմոկրատ Օ. Բրաունի գլխավորած պրուսական կառավարությունը Հոհենցոլերների տապալված դինաստիայի հետ համաձայնագիր կնքեց Նոյեմբերյան հեղափոխության ժամանակ բռնագրավված արքայական կալվածքների համար դրամական փոխհատուցման մասին։ Դրանից անմիջապես հետո գերմանական մյուս երկրամասերի նախկին իշխանները սկսեցին պահանջել հատուցման նույնանման պայմաններ։ Պետությանը ներկայացրած նրանց հավակնությունները կազմեցին մոտ 2,5 միլդ մարկ գումար։ ԳԿԿ-ի ղեկավարությունը հանդես եկավ արքայական ու իշխանական պահանջների դեմ և հրապարակեց օրենքի նախագիծ տապալված դինաստիաների սեփականության լիակատար և անհատույց օտարման մասին, պահանջելով ժողովրդական հանրաքվե անցկացնել այդ օրինագծի ընդունման համար։ «Ոչ մի պֆենիգ իշխաններին»—այսպիսին էր կոմկուսի լոզունգը։ Կոմունիստների նախաձեռնությամբ Բեռլինում ստեղծվեց Կազմկոմիտե քվեարկությունն անցկացնելու համար, որին ակտիվորեն մասնակցեցին առաջադեմ մտավորականության ներկայացուցիչները։ Միասնական ճակատի կոմիտեներ էին ստեղծվում նաև մյուս քաղաքներում ու բնակավայրերում։ Կուսակցական ներքնախավերի ճնշման տակ ԳՍԴԿ-ի ղեկավարությունն ստիպված էր համաձայնություն տալ հանրաքվեի գաղափարին, և 1926 թ. մարտին ԳԿԿ-ն, ԳՍԴԿ-ն և ՀԱՄ-ը համատեղ կոչով դիմեցին ընտրողներին՝ պաշտպանել տապալված դինաստիաների ունեցվածքի անհատույց բռնագրավման վերաբերյալ պահանջը։ 1926 թ. ապրիլի 20-ին 14,5 մլն ընտրողներ (քվեարկությանը մասնակցած 15,6 մլնից, ձայնի իրավունք ունեցողների 36,4 տոկոսը) արտահայտվեցին հօգուտ անհատույց բռնագրավման։

Թեև չհաջողվեց անհրաժեշտ մեծամասնություն հավաքել օրենքն ընդունելու համար (ձայնի իրավունք ունեցողների ավելի քան 50 տոկոսը), հանրաքվեի շուրջ ծավալված պայքարը և նրա արդյունքները վկայում էին, որ ԳԿԿ-ին հաջողվել է ժողովրդական լայն զանգվածներին շարժման մեջ դնել և վերստին քաղաքական ակտիվ ուժ դառնալ երկրում։

Կոմկուսի առջև կանգնած էր ձեռք բերված հաջողություններն ամրապնդելու խնդիրը։ 1926 թ. աշնանից սկսվեց Աշխատավորների կոնգրեսի, ինչպես նաև գործազուրկների համագերմանական կոնֆերանսի նախապատրաստությունը, որոնց նպատակն էր մոբիլիզացնել գյուղի և քաղաքի պրոլետարական զանգվածներին, ինչպես նաև առաջադեմ մտավորականությանը մոնոպոլիաների հարձակմանը հակահարված տալու համար։ Չնայած ռեֆորմիստների սաբոտաժին, 1926 թ. դեկտեմբերի սկզբին տեղի ունեցան գործազուրկների կոնֆերանսը և Աշխատավորների կոնգրեսը, որոնք միջոցառումներ մշակեցին աճող գործազրկության և կապիտալիստական ռացիոնալացման դեմ, աշխատավորության բոլոր խավերի դրության բարելավման համար պայքարելու նպատակով։ Ակտիվացավ կոմկուսի աշխատանքը մասսայական կազմակերպություններում, հատկապես արհմիություններում. հեղափոխական օպոզիցիան ռե-

ֆորմիստական արհմիություններում (ԱՀՕ) զգալի չափով գտնվում էր ԳԿԿ-ի ազդեցության տակ։ ԳԿԿ XI համագումարը (1927 թ. մարտ) կոչ արեց վճռական պայքար ծավալել ռեֆորմիզմի գաղափարախոսության ու պրակտիկայի դեմ, հանուն մարքսիզմ-լենինիզմի հեգեմոնիայի բանվորական շարժման մեջ։ Ընդ որում, ԳՍԴԿ-ն բնութագրվում էր որպես «բուրժուազիայի իշխանության գլխավոր հենարան», իսկ սոցիալ-ռեֆորմիզմը՝ որպես «կոմունիստական կուսակցության գլխավոր թշնամի բանվորական շարժման մեջ»։ Կայունացման վերջին տարիներին ԳՍԴԿ-ում սկսեց աճել օպոզիցիան ընդդեմ կուսակցության ղեկավարության։ Նշելով ԳՍԴԿ-ի ձախ պարագլուխների օբյեկտիվորեն ցենտրիստական դերը, համագումարը նրանց բնութագրեց որպես «օպորտունիզմի երկրորդ գլխավոր ձև» և «վերջին խոչընդոտը ընդդեմ պրոլետարական միասնական ճակատի»։ ԳԿԿ Էսսենի համագումարը կուսակցական զանգվածներին ճիշտ կողմնորոշեց դեպի հեղափոխական ակտիվության բարձրացումը, ԳՍԴԿ-ի շարքային անդամների հետ համագործակցությունը, պայքարն ընդդեմ ռեֆորմիզմի, այդ թվում նաև նրա «ձախ» ղեկտավորման։ Սակայն գլխավոր հարվածը համաձայնողական կուսակցությունների դեմ ուղղելու լոզունգը, հաճախ ծանրության փոխադրումը ձախ սոցիալ-դեմոկրատների դեմ մղվող պայքարի վրա բարդացնում էին միասնական պրոլետարական ճակատի ստեղծումն ընդդեմ ընդհանուր թշնամու՝ մոնոպոլիստական բուրժուազիայի։

1927 թ., կապիտալիստական կայունացման պայմաններում, ԳԿԿ-ում սկսեցին ակտիվանալ աջ օպորտունիստական տարրերը։ Նրանց առաջադրած գործողությունների ծրագրի սկզբունքային դրույթները հիմնվում էին անցումային պահանջների վրա, որոնց իրականացումը չէր առնչվում դասակարգային պայքարի ծավալման և հեղափոխական բանվորադյուղացիական կառավարության ստեղծման հետ, ռեֆորմիստների ոգով գերագնահատվում էր կապիտալիստական ստաբիլիզացիայի կայունությունը։ Ջանալով ամրապնդել իրենց դիրքերը կուսակցական ապարատում, աջերը փորձ ձեռնարկեցին փոխելու ԳԿԿ-ի ղեկավարությունը։ 1928 թ. վերջին աջերի պարագլուխները վտարվեցին կուսակցությունից և Կոմինտերնից (Բրանդլեր, Թելհայմեր և ուրիշներ)։

ԳԿԿ-ի պատմության մեջ կարևոր նշանակություն ունեցավ XII համագումարը (1929 թ. հունիս), որի որոշումներում կոմկուսը նախազգուշացնում էր ֆաշիզմի և պատերազմի աճող սպառնալիքի մասին։ Մեծ թափ ընդունեց ռազմականացման (զրահակիրների կառուցում և այլն) և «Ռապալոյի քաղաքականությունից» Գերմանիային դուրս մղելու ծայրահեղ իմպերիալիստական ուժերի փորձերի դեմ մղվող պայքարը։ Դրա հետ միասին ԳԿԿ-ի գործունեության մեջ երևան էին գալիս ուժեղացող աղանդավորական տրամադրությունները, որոնք իրենց արտահայտությունն էին գտնում «դասակարգն ընդդեմ դասակարգի» լոզունգներում, ԳՍԴԿ-ն որպես սոցիալ-ֆաշիստական կուսակցություն բնութագրելու մեջ, հեղափոխական ճգնաժամի հասունացման տեմպերի գերագնահատման, քաղաքական իշխանության համար բանվոր դասակարգի մղած պայքարում մասնակի պահանջների և անցումային լոզունգների թերագնահատման մեջ։

Եվ այսպես, կապիտալիստական կայունացման տարիներին Գերմանիան վերստին առաջատար տեղերից մեկը գրավեց կապիտալիստական տերությունների շրջանում։ Գերմանական իմպերիալիզմի վերածնունդը խախտում էր միջազգային ասպարեզում պատերազմի հետևանքով առաջացած ուժերի հարաբերակցությունը, սասանում Վերսալյան պայմանագրի, «Դաուեսի պլանի» և Լոկարնոյի համաձայնագրերի վրա հիմնված Եվրոպայի «խաղաղեցումը»։

Մյուս կողմից, կապիտալիստական կայունացումը Գերմանիայում կրում էր ժամանակավոր բնույթ։ Արդյունաբերական արտադրության բարձր մակարդակը ձեռք բերվեց ի հաշիվ օտարերկրյա փոխառությունների և գերմանական ժողովրդի լայն զանգվածների դաժան շահագործման, զգալի գործազրկության և բնակչության համեմատաբար ցածր կենսամակարդակի պահպանման, որը նեղացնում էր ներքին շուկայի տարողունակությունը, տանում դեպի կայունացման ձախողում և տնտեսական ճգնաժամ։

Կայունացման տարիներին գերմանական բուրժուազիայի քաղաքական դիրքերի ամրապնդումը տեղի էր ունենում պրոլետարական հեղափոխության քաղաքական բանակի հասունացման պայմաններում։ Կայունացման վերջին տարիներին բանվորական շարժումն արդեն հաղթահարել էր 1923 թ. պարտության հետևանքները, երկրում ծավալվեց մասսայական գործադուլային շարժում։

1929—1933 ԹԹ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Տնտեսական ճգնաժամը և նրա սոցիալ-քաղաքական հետևանքները

1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամը Գերմանիայում ծավալվեց առանձահատուկ ուժով։ Արտադրության անկումը շարունակվեց գրեթե երեք տարի, արդյունաբերության մեջ այն կրճատվեց մինչև 40 տոկոսով (1932 թ.)։ Գործազուրկների թիվը հասավ 7,5 մլն մարդու։ Ռեալ աշխատավարձն իջավ 25—40 տոկոսով։ Պաշտոնապես գրանցված գործազուրկների միայն 15—20 տոկոսն էր նպաստ ստանում։ Ծանրը էր նաև քաղաքային միջին խավերի դրությունը։ Հարյուր հազարավոր ծառայողներ ու չինովնիկներ մնացին առանց գոյության միջոցների, տասնյակ հազարավոր մանր արտադրողներ ամեն տարի ընկնում էին սնանկացումների հորձանուտը (1930—1933 թ. եղան մոտ 31 հազ. սնանկացումներ), մանրածախ առևտրի շրջանառությունը նվազեց ավելի քան $^1/_3$-ով։ Սուր ճգնաժամ էր ապրում գյուղատնտեսությունը։ Տարեցտարի աճում էր գյուղացիական տնտեսությունների հարկադրական վաճառքի թիվը (միայն 1931 և 1932 թթ. ընթացքում գործեր են հարուցվել 50 հազ. տնտեսությունների նկատմամբ)։ Ճգնաժամը խորապես ցնցեց երկրի ֆինանսավարկային համակարգը, սնանկացրեց մի շարք բանկեր, իր հետևից բերեց շահույթների կրճատում։ 1931—1932 թթ. միջին հաշվով դիվիդենդներն ընկան ավելի քան 2 անգամ (1929 թ. մակարդակի համեմատությամբ)։ Ի տարբերություն հաղթող տերությունների, Գերմանիայի հնարավորությունները ճգնաժամի հաղթահարման գործում ներքին շուկայի համեմատաբար նեղ լինելու, արտասահմանից ֆինանսական կախում ունենալու, գաղութների բացակայության հետևանքով սահմանափակ էին։ Բուրժուական պրոպագանդան հայտարարում էր, որ ճգնաժամի պրոբլեմը՝ «շրջանի քառակուսի մակերեսի վերաբերյալ խնդրի լուծում է», որ երկրի ««վերածնունդն» անհնարին է առանց Վերսալի վերանայման և նոր «կենսական տարածության» նվաճման։

30-ական թվականների տնտեսական ճգնաժամը սասանեց Վայմարյան հանրապետության քաղաքական կառուցվածքը։ Իմպերիալիստական ուժերի գրոհներն ուղղվում էին բանվոր դասակարգի սոցիալական իրավունքների և բուրժուական պառլամենտարիզմի դեմ։ Գերմանական արդյունաբերության կայսերական միությունը 1929 թ. դեկտեմբերին մի հատուկ հայտարարությամբ պահանջեց վերականգնել «իր տան մեջ տեր ու տնօրենի» սկզբունքը և պակա-

սեցնել աշխատավարձը որպես ճգնաժամը հաղթահարելու վճռական նախադրյալ։ Ընդգծվում էր, որ այդ ծրագիրը չի կարող իրականացվել պառլամենտական մեթոդներով և կպահանջի դիկտատորական գործողություններ, քանի որ բանվորական կուսակցությունները ռայխստագում կխանգարեն համապատասխան օրենքների ընդունմանը։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը մեղադրվում էր երկրի էկոնոմիկայի համար «վտանգավոր» «սոցիալիստական էքսպերիմենտներ» կատարելու փորձերի մեջ։ Նրա «տնտեսական դեմոկրատիայի» տեսությունը բնութագրվում էր որպես սոցիալացման «առաջին աստիճան»։ Այդ հանգամանքներն էլ զգալի չափով պայմանավորեցին 1930 թ. մարտին Գ. Մյուլլերի կոալիցիոն կառավարության հրաժարականը։ Նոր կառավարությունը, որը կանգնեց բուրժուական դեմոկրատիայի վերացման ուղու վրա, գլխավորեց Կենտրոնի կուսակցության պարագլուխ Գ. Բրյունինգը։

Տնտեսական ճգնաժամը բարձրացրեց միջին խավերի ակտիվությունը և առաջ բերեց նրանց քաղաքական վերակողմնորոշումը։ Աղքատության անդունդ գահավիժած և զգալի չափով պրոլետարականացած մանրբուրժուական զանգվածները մոլեգնորեն որոնում էին գոյություն ունեցող պետական կարգի վերափոխման ուղիներ ու ձևեր։ Պատմական մտահորիզոնի և դասակարգային գիտակցության ցածր մակարդակը պայմանավորեց նրանց քաղաքական իդեալի պարադոքսայնությունը, մասնավորապես մինչմոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանի վերածնման հույսերը։ Այն բանի գիտակցումը, որ Վայմարյան հանրապետությունը խոշոր կապիտալի դիկտատուրա է, պայմանավորեց հակամոնոպոլիստական և հակահանրապետական տրամադրությունների բուռն աճը բնակչության այդ մասի շրջանում։ Մյուս կողմից, քանի որ հանրապետությունը հեղափոխության արդյունք էր և զուգորդվում էր ԳՍԴԿ-ի գործունեության հետ, դժգոհությունն ընդունում էր «մարքսիստական սոցիալիզմի» դեմ ուղղված խռովության ձև։ Միջին խավերի շատ ներկայացուցիչներ, հատկապես մանր և միջին արտադրողները, որոնք վարձու աշխատանք էին օգտագործում, թշնամություն էին հանդես բերում բանվոր դասակարգի դեմ, պահանջելով վերջ տալ արհմիությունների «ճնշմանն» ու «մոնոպոլիային»։ Բուրժուական դեմոկրատիային հակադրվում էր այնպիսի ուժեղ պետական իշխանություն, որն ընդունակ լիներ միջին խավերին պաշտպանելու մոնոպոլիաների անսահման իշխանությունից և արհմիությունների «կամայականություններից»։ Մանր բուրժուաների շատ պահանջների վրա մեծ կնիք դրեցին նսեմացված ազգային արժանապատվության զգացումները, որպես վերսալյան դիկտատի հետևանք. նրանց հակամոնոպոլիստական լուզունգներն անփոփոխ կերպով ունեին ազգայնական բաղադրամաս («Ազգային հեղափոխություն և ազգային սոցիալիզմ»)։ Այսպիսով, տնտեսական ճգնաժամի հետևանքը եղավ Վայմարյան հանրապետության քաղաքական հիմքից մի կարևոր տարրի դուրս ընկնելը՝ միջին խավի զգալի մասի անցումը հակահանրապետական դիրքերը։ Բուրժուական հանրապետությունից հիասթափված մանրբուրժուական զանգվածները, որոնք գաղափարապես դեռ շատ հեռու էին պրոլետարական սոցիալիզմից, քաղաքական ու պետական իդեալ էին փնտրում նացիոնալ-սոցիալիզմի տոտալիտար տեսություններում։

Դժգոհությունը հանրապետությունից, «կազմակերպված կապիտալիզմի» ռեֆորմիստական տեսություններից և պացիֆիզմից ընդգրկեց նաև բանվոր դասակարգի մի մասին։ Այդ էր վկայում, մասնավորապես, ԳԿԿ-ի թվակազմի և ընտրությունների ժամանակ նրա օգտին տրվող ձայների թվի աճը, ԳՍԴԿ-ի և ռեֆորմիստական արհմիությունների շարքերի կրճատումը։ Բանվորների որոշ

մասը, հատկապես բուրժուական արհմիություններում կազմակերպված բանվորները, որոնք բավարարված չէին հետպատերազմյան զարգացման արդյունքներից, հաճախ ընկնում էին նացիոնալ-սոցիալիստական պրոպագանդայի ցանցը։ Սակայն կազմակերպված բանվորների ճնշող զանգվածը, չնայած վարանումներին ու կասկածանքներին, շարունակում էր մնալ ռեֆորմիզմի հենարանը։

Ֆաշիստական վտանգի աճը

Ֆաշիզմը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի զավակն է։ Մոնոպոլիստական բուրժուազիան պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության և կազմակերպվածության աճի պայմաններում հրաժարվում է նախկինում իր իսկ հռչակած սկզբունքներից, իր տիրապետության պահպանման և կայունացման ուղին փնտրում է քաղաքական ռեակցիայի ուժեղացման և դիկտատուրայի մեջ։ Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաշրջանին բնորոշ այդ տենդենցը զարգացման առանձնակի նպաստավոր պայմաններ ստացավ հետպատերազմյան Գերմանիայում։

Վերսալյան հաշտությունը թուլացրեց գերմանական իմպերիալիզմի միջազգային դիրքերը, չշոշափելով, սակայն, նրա հզորության հիմքերը երկրի ներսում։ Պատրաստվելով արտաքին-քաղաքական ռևանշի, Գերմանիայի միլիտարիստական-իմպերիալիստական ուժերը ռայխսվերի հետ միասին ստեղծում էին բազմաթիվ ռազմականացված միավորումներ, այդ թվում յուրահատուկ ռազմաքաղաքական կազմակերպություններ, որպես երկրի քաղաքական կյանքի վրա զինվորականության ներգործման գործիքի։ 1919 թ. ստեղծված ֆաշիստական կուսակցությունը հենց նման տիպի հիբրիդային կազմակերպություն էր, որը պահվում էր ռայխսվերի հաշվին։ Որպես ռայխսվերի քաղաքական գործակալ, նրա մեջ ընդունվեց նաև ենֆրեյտոր Ադոլֆ Հիտլերը, որը շուտով աչքի ընկավ որպես քաղաքական հռետոր և ճարպիկ պոլիտիկան։ Ռազմական դիկտատուրայի համար քաղաքական մասսայական հենարանի անհրաժեշտության գիտակցմանը համեմատ աճում էր ֆաշիստական կուսակցության նշանակությունը, ընդլայնվում ու բազմանում էին նրա կապերը։ Արդեն 20-ական թվականների սկզբին նացիստներն սկսեցին նպաստներ ստանալ Գերմանիայի ֆինանսական մագնատներից։ Բավարական արդյունաբերողների մի խմբի հետ միասին Հիտլերի վարկատուներն էին Գերմանական գործատուների միությունների միավորման նախագահ Բորզիգը, Ֆ. Տիսսենը, Հ. Ստիններսը և ուրիշներ։ ՆՍԴԱՊ-ի քաղաքական կապերի ընդլայնումը, ռևանշի քաղաքականության իրականացման ուղիների ու տեմպերի հարցի շուրջ միլիտարիստների լագերում առաջացած տարաձայնությունները պայմանավորեցին ֆաշիստական կուսակցության, որպես քաղաքական կազմակերպության, որոշակի ինքնուրույնությունը։

Մյունխենյան խռովության (1923 թ.) ձախողումից և կապիտալիստական կայունացման վրա հասնելուց հետո նացիստական կուսակցությունը սուր ճգնաժամ էր ապրում՝ քայքայվում էր նրա մասսայական բազան, վատացան հարաբերությունները ռայխսվերի հետ։ Այդ տարիներին ՆՍԴԱՊ-ը մոնոպոլիստական կապիտալի և գեներալիտետի կողմից դիտվում էր որպես պահեստի քաղաքական տարբերակ։ Կայունացման վերջին տարիներին և հատկապես տնտեսական ճգնաժամի սկսվելով կառավարող շրջանների վերաբերմունքը նացիստական կուսակցության նկատմամբ փոխվեց։ Արդեն 1927 թ. նրա հետ կապ հաստատեց խոշորագույն արդյունաբերող, ածխային սինդիկատի հիմնադիր Է. Կիրդորֆը։ Նացիստական կուսակցության անդամ ընդունվեց «Պողպատի տը-

ռեստ» կոնցեռնի ղեկավարներից մեկը՝ Ֆ. Տիսսենը, որպես ընդունելության վճար նա ՆՍԴԱՊ-ին տվեց 300 հազ. մարկ։ Մոնոպոլիաների աջակցությունը ֆաշիստական կուսակցությանը թույլ տվեց արդեն 20-ական թվականների վերջին լայն պրոպագանդիստական կամպանիա ծավալել։ Աճեց կուսակցության թվակազմը՝ 1927 թ. 100 հազարից մինչև 300 հազարի՝ 1933 թ. սկզբին։ 1930 թ. սեպտեմբերին տեղի ունեցած ռայխստագի ընտրություններում ՆՍԴԱՊ-ը ստացավ մոտ 6,5 մլն ձայն և դարձավ պառլամենտի երկրորդ (ԳՍԴԿ-ից հետո) ֆրակցիան։

Որո՞նք էին նացիստների ազդեցության այդքան սրընթաց աճի պատճառները։

ՆՍԴԱՊ-ի մասսայական բազան էին հանդիսանում կյանքի հունից դուրս նետված և Վայմարյան հանրապետության քաղաքական ռեժիմից հիասթափված միջին խավերը։ Բնակչության այդ մասի քաղաքական գիտակցության մակարդակին առավել մեծ չափով համապատասխանում էին հենց ՆՍԴԱՊ-ի ծրագրային հայտարարությունները, ինչպես նաև մասսաների վրա ազդելու՝ խրնամքով մշակված գաղափարական ու կազմակերպական սիստեմը։ ՆՍԴԱՊ-ի ծրագիրը պահանջում էր ստեղծել «առողջ միջին խավ», նրան ազատել «տոկոսային ստրկությունից» և «մոնոպոլիաների կամայականություններից», անհապաղ մունիցիպալացնել հանրախանութները՝ մանր կրպակատերերին վաճառասեղաններ հատկացնելով հանդերձ։ Սակավահող գյուղացիներին ու բատրակներին ֆաշիստները ջանում էին իրենց կողմը գրավել՝ կալվածատիրական հողերն ընդհանուր օգտագործման համար անվարձահատույց օտարման ենթարկելու, հողային ռենտան վերացնելու և այլ լոզունգներով։ Մանր բուրժուական զանգվածների նսեմացված ազգային զգացմանը դուր էին գալիս Վերսալյան հաշտության վերացման, գաղութների վերադարձման և «Մեծ Գերմանիայի» ստեղծման պահանջները։ Այդ պահանջները, մանր բուրժուական և ֆեոդալական սոցիալիզմի էկլեկտիկ կոնգլոմերատի զուգակցությամբ հանդերձ, մոտ ու հասկանալի էին քաղաքի ու գյուղի մանր բուրժուային։ Քաղաքային մանր բուրժուազիային ֆաշիստական կուսակցության օգտին մոբիլիզացնելու նպատակով 1932 թ. ստեղծվեց այսպես կոչված Արդյունագործական միջին խավի մարտական միությունը։ Նրա ծրագիրը պահանջում էր վերադառնալ միջնադարի համքարական սիստեմին, խոշոր առևտրական ձեռնարկությունները հանձնել մանր առևտրականներին ու արհեստավորներին։

Նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսության գլխավոր բաղկացուցիչ մասը հակամարքսիզմն էր, որը թույլ էր տալիս ՆՍԴԱՊ-ի հովանու տակ միավորել սոցիալական տարբեր ուժերին՝ սկսած մանր բուրժուաներից, մինչև կայզերական արիստոկրատիան։ Այդ բազայի վրա կառուցվում էր ֆաշիստական կուսակցության ազգային ու սոցիալական դեմագոգիայի ամբողջ սիստեմը։ Որպես գիտական սոցիալիզմի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ալտերնատիվ առաջադրվում էր «ազգային սոցիալիզմը»։ Իմպերիալիստական Վերսալյան հաշտությունը ֆաշիստական պրոպագանդայի կողմից մատուցվում էր որպես գերմանական պրոլետարիատի շահերի՝ Անտանտի պետությունների բանվոր դասակարգի դավաճանության վկայություն և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների «ստահոդության» ապացույց։ «Հաղթող երկրների բանվոր դասակարգն ապրում է Գերմանիայի կողոպտմամբ,—հայտարարում էին նացիստական ագիտատորները։—Միայն ռևանշ-պատերազմը կարող է փոխել այդ անարդարությունը»։ «Կատարման քաղաքականությունը» բընութագրվում էր որպես «հանցագործ» և «հակաազգային»։ Երբ 1928 թ. մշակվեց նոր ռեպարացիոն «Յունգի պլանը», ամբողջ երկրով մեկ ծավալվեց «Յունգի պլանի» դեմ ուղղված «ժողովրդի կամքի արտահայտման» ազգայնական ազմկալից կամպանիան։ Հանրաքվեի ժամանակ Գերմանիայի վրա հորդաց ազգայնական ու ռևանշիստական պրոպագանդայի հեղեղը։ Թեև բավականաչափ ձայներ չստացվեց «Յունգի պլանը» մերժելու համար, հանրաքվեի հետևանքով նացիստներն իրենց համար ստեղծեցին «Վերսալի շղթաներից» Գերմանիայի ազգային ազատագրման համար «մարտնչողների» լայն ռեկլամ։ ՆՍԴԱՊ-ը հանդես էր գալիս որպես մի ուժ, որը պատրաստ էր ամենածայրահեղ միջոցների դիմել, ընդհուպ մինչև պատերազմի սանձազերծումը՝ հանուն ազգի «պատվի» և «ազատության»։

ՆՍԴԱՊ-ի հաջողություններում ոչ նվազ կարևոր դեր խաղաց նրա սոցիալական դեմագոգիան։ «Ազգային սոցիալիզմը» «ամբողջ ժողովրդի» շահերը ներկայացնելու հավակնություններ էր հայտնում, բայց քանի որ վարձու բանվորները կազմում էին Գերմանիայի բնակչության հիմնական մասը, նրանց ֆաշիզմի գիրկը ներքաշելու համար հարկավոր էր հատուկ լոզունգներ առաջադրել։ ՆՍԴԱՊ-ի դեռ 1920 թ. ծրագիրը պահանջում էր տրեստների ազգայնացում, «ոչ աշխատանքային եկամուտների» վերացում, ձեռնարկությունների շահույթներին բանվորների մասնակցություն, ծերության ապահովում, մոր ու մանկան շահերի պաշտպանություն, ժողովրդական կրթության սիստեմի բարելավում, «ժողովրդական բանակի» ստեղծում և այլն։ Բայց սոցիալական դեմագոգիան, հենց ֆաշիստական բոնդերի վկայությամբ, միայն մի «վանդակ էր՝ թռչունին բռնելու», բանվորներին մարքսիզմից անջատելու համար։ Սակայն հետպատերազմյան առաջին տարիներին ՆՍԴԱՊ-ին չհաջողվեց ճեղք առաջացնել կազմակերպված պրոլետարիատի շարքերում։ Ռեֆորմիստական արհմիությունները կանգնած էին հակաֆաշիստական դիրքերում։ Որևէ լուրջ հաջողություն չունեցան նաև ֆաշիստական արհմիություններ ստեղծելու փորձերը։ ՆՍԴԱՊ-ում բանվորական խավը 1930 թ. կազմում էր մոտ 20 տոկոս, բայց հետո սկսեց նվազել։

Հիտլերականները հատուկ ուշադրություն էին դարձնում «կորուսյալ սերընդի»՝ երիտասարդության մշակմանը։ Պատանիների շրջանում աշխատանքի կազմակերպումը մտածվել էր ամենայն մանրամասներով՝ հաշվի էր առնվում կենսական անփորձությունը և հակումը ռոմանտիկ մտածելակերպին, սերը համազգեստի, սպորտի նկատմամբ և այլն։ Խոշորագույն կազմակերպությունը՝ Հիտլերյան երիտասարդության միությունն ամենուրեք ստեղծել էր իր բջիջները։ Հատուկ ֆաշիստական կազմակերպություններ էին ստեղծվում դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում և այլն։ Դրա հետևանքով ՆՍԴԱՊ-ի զգալի մասը (որոշ կազմակերպություններում մինչև 50 տոկոսը) կազմում էին 18-ից մինչև 25 տարեկան երիտասարդները։

Մասսաների վրա գաղափարական ու կազմակերպական ներգործման խրնամքով մշակված միջոցառումները լրացվում էին բռնության և այլախոհներին ահաբեկելու ապարատների ստեղծմամբ։ Վերականգնվեցին ու վերակազմվեցին «գարեջրատնային խռովությունից» հետո քայքայված դրոհային ջոկատները (ՍԱ). 1933 թ. մոտերքին դրանց թիվն աճեց մինչև կես միլիոն անդամի։ Կարևոր գործիք էին դառնում պահնորդական ջոկատները (ՍՍ). եթե 1929 թ. նրանք ընդգրկում էին 280 մարդ, ապա 1933 թ. սկզբին՝ 52 հազ.։

Հենվելով մոնոպոլիստական կապիտալի ֆինանսական ու քաղաքական հարաճուն աջակցության, վերահսկման ենթակա կազմակերպությունների լայ-

նորեն ճյուղավորված սիստեմի և պրոպագանդիստական հզոր ապարատի վրա, նացիստական կուսակցությունը նետվում էր դեպի իշխանություն։

Բրյունինգի կաբինետի քաղաքականությունը։ Պապենի կառավարությունը

1930 թ. սեպտեմբերին կայացած ընտրություններից հետո հիտլերականների քաղաքական պատվամոլությունն այնքան աճեց, որ նրանք սկսեցին կառավարություն կազմելու հավակնություն հայտնել։ Սակայն Գերմանիայի կառավարող վերնախավերի ներսում դեռևս միասնություն չկար ապագա դիկտատորական ռեժիմի բնույթի վերաբերյալ, զգացվում էր տարբեր մոնոպոլիստական խմբերի միջև ծավալվող մրցակցությունը. բացի այդ, ավանդական բուրժուական կուսակցությունները դեռ հույսեր էին փայփայում ֆաշիստական շարժումն իրենց ծառայեցնելու ուղղությամբ։ Տարաձայնությունների առարկա էին նաև Վայմարյան հանրապետության վերացման տեմպերն ու մեթոդները։ Ֆ. Տիսսենի, Կիրդորֆի, Ֆլիկի, Ֆեգելերի, Կրուպպի գլխավորած մոնոպոլիստական խմբավորումը պահանջում էր արագացնել դիկտատորական ռեժիմի հաստատումը և պաշտպանում էր իշխանության նկատմամբ եղած ֆաշիստական հավակնությունները։ Ֆինանսական կապիտալի մյուս մասը, որը ներկայացնում էր էլեկտրատեխնիկական կոմպանիաների, «ԻԳ ֆարբենինդուստրի» քիմիական կոնցեռնի, «Պոզպատի տրեստի» (Վոլֆի-Շտրաուսի-Կլեննկերի մոնոպոլիստական խումբը) շահերը, որը սերտ կապեր ուներ ֆրանսիական և անգլո-ամերիկյան ֆինանսական կապիտալի հետ, ավելի անվտանգ ու նպատակահարմար էր համարում աստիճանաբար և սահմանադրական ուղիով հանրապետության բուրժուապառլամենտական հիմնարկությունների գործողության ջլատումը։ Գերմանական խոշոր բուրժուազիայի և յունկերության որոշ մասը, որի մեջ նողկանք էր առաջացնում Հիտլերի, այդ պլեբեյի ու արկածախնդրի պատվամոլությունը, գերադասում էր պետական կառավարման ղեկը տրամադրել Կենտրոնի կուսակցությանը։ Այդ իրադրության մեջ էլ ստեղծվեց կղերական Բրյունինգի կաբինետը, որը ավելի մեծ չափով արտահայտում էր գերմանական մոնոպոլիստական կապիտալի «չափավոր» և տակտիկապես ավելի ճկուն թևի դիրքը։ Լինելով կայզերական սպա, Բրյունինգը 1918 թ. նոյեմբերին փորձում էր զենքը ձեռքին պաշտպանել միապետությունը։ Կանցլեր դառնալով, նա Հինդենբուրգի մեջ տեսնում էր ոչ այնքան պրեզիդենտի, որքան ֆելդմարշալի և նրան այնքան ավելի հարգալից էր վերաբերվում, որքան նա ավելի նվազ հարգանք էր տածում պառլամենտի և սահմանադրության նկատմամբ։ Բրյունինգի կաբինետն առաջին պրեզիդենտական կաբինետն էր։ Ռայխստագում մեծամասնություն չունենալով, այն գոյություն էր ունենում սոսկ «պրեզիդենտի վստահությամբ», կառավարում էր Հինդենբուրգի արտակարգ դեկրետների օգնությամբ։ 1930 թ. հրապարակվել է 5, 1931 թ.՝ 44, իսկ 1932 թ.՝ 66 արտակարգ դեկրետ։ Ռայխստագի օրենսդիր ֆունկցիաները գրեթե զրոյի հավասարվեցին՝ 1932 թ. այն միայն 5 օրենք ընդունեց։

Արտակարգ դեկրետների էությունը համապատասխանում էր ֆինանսական օլիգարխիայի շահերին ու պլաններին՝ ճգնաժամի ծախսերը դնել աշխատավոր զանգվածների վրա, օգնություն ցույց տալ մոնոպոլիստական կապիտալին ու յունկերությանը։ Ի շրջանցումն ռայխստագի՝ Բրյունինգի կառավարությունն անցկացրեց բանվորների, ծառայողների և չինովնիկների աշխատավարձի կրճատում, վատացրեց սոցիալական ապահովության պայմանները, պակասեցրեց գործազրկության համար տրվող նպաստներն ու թոշակները, ավելացրեց ուղղակի և անուղղակի հարկերը։ Այդ նույն ժամանակ խոշոր արդյունաբերողներն ու առևտրականները ստացան վիթխարի վարկեր, 6,3 մլրդ մարկ ընդհանուր գումարի արտահանության երաշխիքներ ու արտոնություններ. մոտ 4 մլրդ մարկ ստացան խոշոր հողատերերը։

1930 թ. սեպտեմբերի 14-ի ընտրությունների արդյունքներում ՆՍԴԱՊ-ի վաղեմի հովանավորներ Տիսսենը, Բորզիգը, Կիրդորֆը տեսնում էին ֆաշիստական կուսակցության հետ իրենց հույսերը կապելու հեռանկարայնության հաստատումը։ Հիտլերականներին սկսեցին ուղղակի աջակցություն ցույց տալ մոնոպոլիստական կապիտալի նաև այն շրջանները, որոնք նախկինում թերահավատորեն էին գնահատում իր համար մասսայական բազա ստեղծելու ՆՍԴԱՊ-ի ընդունակությանը («Պոզպատի տրեստի» գլխավոր դիրեկտոր Շախտը, Ֆեգելերը և ուրիշներ)։ Արդեն 1930 թ. աշնանը նրանք վճռականորեն պահանջեցին կողմնորոշվել դեպի «ազգային ուժերը»։ Ռուրի ածխարդյունաբերողները սկսեցին նացիստների դրամարկղը մուծել 5-ական պֆենիգ՝ վաճառված ածխի յուրաքանչյուր տոննայից։ Ամրապնդվում էին կապերը ՆՍԴԱՊ-ի և ռայխսվերի միջև։ Ջանքեր էին գործադրվում համախմբելու ծայրահեղ ռեակցիայի բոլոր ուժերն իշխանության համար պայքարելու նպատակով։ Այդ նպատակին ծառայեց 1931 թ. հոկտեմբերին Հարցբուրգում հրավիրված կոնֆերանսը, որտեղ ներկայացված էին ազգայնական օպոզիցիայի բոլոր երանգները՝ Հուգենբերգից մինչև Հիտլերը, մոնոպոլիստական կապիտալի և բանկերի ղեկավար գործիչները, ինչպես նաև գեներալիտետը։ «Հարցբուրգյան ճակատի» ստեղծման արդյունքը եղավ ՆՍԴԱՊ-ին ցույց տրված ֆինանսա-քաղաքական օգնության ուժեղացումը, Բրյունինգի կառավարության քաղաքական բազայի թուլացումը։

Կառավարող լագերում ուժերի հարաբերակցության հետագա փոփոխությունը և պրոֆաշիստական թևի դիրքերի ամրապնդումն իր արտահայտությունը գտավ 1932 թ. ապրիլին տեղի ունեցած հանրապետության պրեզիդենտի ընտրությունների արդյունքներում։ Երկրորդ տուրում ֆելդմարշալ-պրեզիդենտն ստացավ 19,3 մլն ձայն, Հիտլերը՝ 13,4 մլն։ Հինդենբուրգը պրեզիդենտական պոստը պահպանեց՝ նրա թեկնածությանը ԳՍԴԿ-ի ցույց տված աջակցության հետևանքով։ Մոնոպոլիստական կապիտալի վճռական մասը վերցրեց ֆաշիստական դիկտատուրայի հաստատման կուրս։ Այդ մասին է վկայում Բրյունինգի կառավարության հրաժարականը 1932 թ. մայիսին և կղերական Պապենի «բարոնների կաբինետի» կազմումը։ Նրան պաշտպանում էր Հոենոսի ծանր ինդուստրիայի մոնոպոլիստների բլոկը, որը կողմնորոշվում էր դեպի ՆՍԴԱՊ-ը, «ԻԳ ֆարբենինդուստրին», «Պոզպատի տրեստը» և ռայխսվերը։ Սակայն ռայխստագում Պապենի կաբինետի դիրքերը ծայրահեղ անկայուն էին, նա շարունակեց արտակարգ դեկրետների օգնությամբ կառավարելու՝ Բրյունինգի ժամանակ սկսված պրակտիկան։ Պրոֆաշիստական ուժերի ամրապնդման գործում առանձնահատուկ նշանակություն ունեցավ 1932 թ. հուլիսի 20-ին Պրուսիայում տեղի ունեցած պետական հեղաշրջումը. մինիստր-պրեզիդենտ, սոցիալ-դեմոկրատ Կ. Զեերինգը, ինչպես և ԳՍԴԿ մյուս անդամները, որոնք պատասխանատու պոստեր էին գրավում Պրուսիայի պետական ապարատում, հանվեցին և փոխարինվեցին ռեակցիոն ու պրոֆաշիստական տրամադրություններ ունեցող չինովնիկներով։ Դա Վայմարյան հանրապետության սահմանադրության և պառլամենտական պրակտիկայի բացահայտ, կոպիտ խախտում էր։

1932 թ. հուլիսի 31-ին տեղի ունեցած ընտրություններից հետո, որոնց հետևանքով ֆաշիստական կուսակցությունը ստացավ 13,8 մլն ձայն, սկսվեց

Վայմարյան Հանրապետության ճգնաժամի նոր փուլը։ Հիտլերականներին հաջողվեց գրեթե լիովին «կլանել» միջանկյալ բուրժուական կուսակցությունները. եթե 1930 թ. սեպտեմբերի ընտրություններին նրանք հավաքեցին 6,4 մլն ձայն և ստացան 109 մանդատ, ապա հուլիսի 31-ին այդ կուսակցություններին տրված ձայների քանակը կրճատվեց գրեթե 6 անգամ։ 1932 թ. աշնանը Կենտրոնն էլ սկսեց կորցնել իր կողմնակիցներին։ Բուրժուական «հին» կուսակցությունների քայքայումն արտահայտում էր Վայմարյան Հանրապետության կուսակցական-քաղաքական բազայի ճգնաժամը։ Այն խորացնում էին դիկտատորական ռեժիմի հաստատման ուղիների ու ձևերի շուրջ իշխող դասակարգերի ներսում եղած հակասությունները, վախը քաղաքացիական պատերազմի հանդեպ՝ ֆաշիստական դիկտատուրայի հաստատման դեպքում։ Դրա հետևանքով 1932 թ. հուլիսին տեղի ունեցած ընտրություններից հետո Պապենին չհաջողվեց կազմել այնպիսի կառավարություն, որը հենված լիներ պառլամենտի մեծամասնության պաշտպանության վրա. 1932 թ. սեպտեմբերի 12-ին Պապենի կաբինետը ստացավ անվստահության քվե։ Դրանից անմիջապես հետո պրեզիդենտական դեկրետով ռայխստագը ցրվեց։ Վայմարյան Հանրապետության ճգնաժամն ուժեղացրեց ֆաշիստական դիկտատուրայի հաստատման սպառնալիքը։

Գերմանիայի դեմոկրատական ուժերի պայքարը ֆաշիզմի դեմ

Գերմանիայում կային բավականաչափ հզոր հակաֆաշիստական ուժեր, որոնք ընդունակ էին կանխելու ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը։ Դրանց հիմքը կազմում էր գերմանական բանվոր դասակարգը։ Հակաֆաշիստական երկու գլխավոր քաղաքական ուժերը՝ ԳԿԿ-ն և ԳՍԴԿ-ն իրենց հետևից տանում էին պրոլետարիատի վճռական մասին, ռայխստագում տնօրինում էին ձայների $^1/_3$-ին, օբյեկտիվ հնարավորություն ունեին պառլամենտից դուրս, դեմոկրատական զանգվածների վրա հենվելով, վճռական հարված հասցնել ծայրահեղ իմպերիալիստական ռեակցիային։ Սակայն բանվոր դասակարգի պառակտվածությունը, որն ամենից առաջ ԳԿԿ-ի հետ համագործակցելուց ԳՍԴԿ-ի և ՀԱՄ-ի պարագլուխների հրաժարվելու հետևանքն էր, այն միջոցների անարդյունավետությունը, որոնց օգնությամբ ռեֆորմիստները հույս ունեին փակել ֆաշիզմի ճանապարհը, խորացնում էին Վայմարյան Հանրապետության ճգնաժամը և նպաստում նացիստների հաղթանակին։

ԳՍԴԿ-ի պարագլուխները հրաժարվեցին օգտագործել գերմանական իմպերիալիզմի դիրքերի թուլացումը՝ ուժերի հարաբերակցությունը բանվոր դասակարգի օգտին արմատականորեն փոխելու համար։ Ճգնաժամից դուրս գալը հնարավոր է միայն կապիտալիստական տնտեսության շրջանակներում, հայտարարում էր ՀԱՄ-ի պարագլուխ Ֆ. Տարնովը, ԳՍԴԿ-ն «պետք է հոգատար բժիշկ դառնա հիվանդացած կապիտալիզմի անկողնի մոտ»։ Մոնոպոլիաների օգտին Բրյունինգի իրականացրած պետական-մոնոպոլիստական կարգավորման քաղաքականությունը մատուցվում էր որպես «ապագայի սոցիալիստական շինարարության համար ամուր հիմքի և փայտամածների» ստեղծում։ ԳՍԴԿ-ի տեսաբանները ֆաշիստական շարժումը դիտում էին սոսկ որպես ճգնաժամի և ապադասակարգայնացված մանր բուրժուաների դժգոհության արդյունք, պատրանքներ էին տարածում նացիստներին «պատասխանատվություն սովորեցնելու» և «քաղաքակրթելու» հնարավորության մասին՝ նրանց իշխանության գլուխ անցնելու դեպքում։ Անտեսվում էր ֆաշիստական շարժման էությունը, դասակարգային բնույթը՝ որպես ֆինանսական կապիտալի առավել

ռեակցիոն, առավել շովինիստական և առավել իմպերիալիստական տարրերի շահերի ու քաղաքականության արտահայտություն։

Այդ ընդհանուր գաղափարական սկզբունքները պայմանավորում էին ռեֆորմիստական կազմակերպությունների պրակտիկ գործունեությունը։ ԳՍԴԿ-ի ղեկավարությունն ավելի քան երկու տարի թույլ չէր տալիս Բրյունինգի կաբինետի անկումը, այն դիտելով որպես ալտերնատիվ Հիտլերի կառավարությանը։ ԳՍԴԿ-ի պարագլուխները հռչակեցին «Ավելի լավ է Բրյունինգը, քան Հիտլերը» լոզունգը։ Նրանք չէին ցանկանում տեսնել այն, որ Բրյունինգի քաղաքականությունը փաստորեն մաքրում էր ֆաշիզմի ճանապարհը։ Պրուսական կառավարությունում, ինչպես նաև իշխանության տեղական մարմիններում ԳՍԴԿ-ի ներկայացուցիչները գործնականորեն մասնակցում էին նաև արտակարգ օրենսդրության իրականացմանը, խորացնելով պառլամենտարիզմի ճգնաժամը։ Իր հետևանքներով նույնքան սխալ ու կործանարար էր Հինդենբուրգի՝ Վայմարյան Հանրապետության պրեզիդենտ վերընտրվելու օգտին ԳՍԴԿ-ի քվեարկելը։ Մերժելով պրեզիդենտության հակաֆաշիստ թեկնածու առաջադրելու մասին ԳԿԿ-ի առաջարկությունը, ռեֆորմիստ ղեկավարությունը «Ավելի լավ է Հինդենբուրգը, քան Հիտլերը» նույն լոզունգով բացահայտ բլոկի մեջ մտավ ռեակցիոն ուժերի հետ։ Կայզերական ֆելդմարշալին նրանք ներկայացնում էին որպես «Հանրապետության պահապանի» և նույնիսկ Գերմանիայում «սոցիալիզմի երաշխավորի»։

ԳՍԴԿ-ի պարագլուխների հակակոմունիզմը խանգարում էր հակաֆաշիստական ուժերի միավորմանը, ռեֆորմիստական կազմակերպություններին դատապարտում պասսիվության։ Դա առավել պերճախոսությամբ արտահայտվեց 1932 թ. հուլիսին Պրուսիայում տեղի ունեցած հեղաշրջման ժամանակ։ ԳՍԴԿ-ի ղեկավարությունը նախապես տեղեկացված էր սոցիալ-դեմոկրատներին Պրուսիայի ղեկավար պոստերից հեռացնելու՝ պրեզիդենտի մտադրությունների մասին, բայց նա ոչինչ չարեց դիմադրություն կազմակերպելու համար։ ԳՍԴԿ-ի ղեկավարությունը, որը որոշել էր «չլքել լեգալության ու սահմանադրության ոտքի տակի հողը», հաշվի չնստեց կուսակցության և արհմիությունների շարքային անդամների տրամադրությունների հետ, որոնք անհամբերությամբ սպասում էին գործողության կոչի։ Համագերմանական գործադուլ հայտարարելու մասին ԳԿԿ-ի առաջարկությունը մերժվեց։ ԳՍԴԿ-ի ղեկավարության մեղքով այսպե՛ս բաց թողնվեց ֆաշիզմի ուղին փակելու հնարավորությունը։

Պրուսիայում տեղի ունեցած պետական հեղաշրջումը վատացրեց հակաֆաշիստական ուժերի դիրքերը, բայց դեռևս ուշ չէր կանխելու իշխանությունը Հիտլերին հանձնելու փորձերը։ Սակայն ռեֆորմիստների պարագլուխները շարունակում էին ընթանալ կապիտուլյացման ուղիով։

Իր բարձրության վրա չդտնվեց նաև ԳՍԴԿ-ի ձախ օպոզիցիան։ Քննադատելով կուսակցության ղեկավարության քաղաքականությունը, այն փորձում էր ԳՍԴԿ-ի և ԳԿԿ-ի միջև ինչ-որ «միջին ուղի» ընտրել, որը միայն ուժեղացրեց հակաֆաշիստական ուժերի պառակտումը։ 1931 թ. հոկտեմբերին ձախ սոցիալ-դեմոկրատների ստեղծած Սոցիալիստական բանվորական կուսակցության (ՍԱՊ) որոշ պարագլուխներ տրամադրված էին հակակոմունիստորեն և ի դեմս ՍԱՊ-ի ձգտում էին խոչընդոտ ստեղծել ԳԿԿ-ի ազդեցության աճին։

Գերմանիայում միակ քաղաքական ուժը, որը հետևողական ու անհաշտ պայքար էր ծավալել ֆաշիզմի դեմ, ԳԿԿ-ն էր։ ԳԿԿ Կենտկոմի դեռևս 1929 թ. հոկտեմբերին տեղի ունեցած պլենումում, ապա և Կենտկոմի քաղբյուրոյի 1930 թ. հունիսին ընդունած որոշումներում ֆաշիստական շարժումը բնութա-

գրվում էր որպես մոնոպոլիստական բուրժուազիայի ծայրահեղ իմպերիալիստական ուժերի գործիք։ Ի տարբերություն ԴՍԴԿ-ի, կոմկուսը սկզբից ևեթ ակտիվ պայքար ծավալեց Բրյունինգի կառավարության պրոֆաշիստական քաղաքականության և հակաբանվորական արտակարգ դեկրետների դեմ։ Գերմանական պրոլետարիատի 1930—1931 թթ. տնտեսական մի շարք խոշոր ելույթներում՝ Բեռլինի մետաղագործների, Ռուրի հանքափորների, Մանսֆելդի արդյունաբերական շրջանի գործադուլներում ղեկավար դեր էր կատարում արհմիութենական հեղափոխական օպոզիցիան (ԱՀՕ)։ Ռեֆորմիստական արհմիությունների օպոզիցիոն ուժերի ակտիվությունը կենտրոնացնելու և բարձրացնելու նպատակով, 1929 թ. վերջին գումարվեց ԱՀՕ-ի համագերմանական կոնֆերանս, որը կոչ արեց գործադուլային պայքար ծավալել կառավարության հակաբանվորական քաղաքականության դեմ։ 1930 թ. ԴԿԿ-ն մշակեց «Գերմանական ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրման ծրագիրը»։ Որպես ֆաշիստական դիկտատուրայի ալտերնատիվ ԳԿԿ-ն առաջադրեց Գերմանիայում սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման լոզունգ։ Ծրագիրը բացահայտում էր ֆաշիզմի էությունը, որպես հակաբանվորական, հակասոցիալիստական և հակաազգային ուժ։ Կոմկուսը պահանջում էր հանրայնացնել արտադրության կարևոր ճյուղերը, ընդլայնել սոցիալական ապահովությունը, վերացնել գործազրկությունը, բարձրացնել աշխատավարձը, իջեցնել գները և այլն։ ԳԿԿ ծրագրում կենտրոնական տեղ էր գրավում իմպերիալիստական Վերսալյան հաշտության դեմ պայքարի հարցը (ազգային հարց)։ Կոմկուսը դեմոկրատական ուժերին կոչ արեց իրենց ձեռքը վերցնել Վերսալի շղթաներից երկիրն ազատագրելու գործը։ Ազգային պրոբլեմի լուծումը կապվում էր Գերմանիայում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և Սովետական Միության հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու հետ։

1931 թ. ԴԿԿ-ն մշակեց և հրապարակեց գյուղացիությանն օգնություն ցույց տալու ծրագիր, գործազրկության վերացման պլան, ինչպես նաև բնակչության միջին խավերին օգնություն ցույց տալու հատուկ ծրագիր։ Գյուղացիության օգնության ծրագիրը պահանջում էր անհատույց բռնագրավել կալվածատիրական հողը, այն անվճար հանձնել սակավահող գյուղացիներին ու բատրակներին, վերացնել անուղղակի հարկերը, չեղյալ համարել մանր գյուղացիների բոլոր պարտքերը, վերացնել սակավահող գյուղացիներից վերցվող հարկերը և կրճատել միջին գյուղացիական տնտեսություններից գանձվող հարկերը, պետական օգնություն ցույց տալ աշխատավոր գյուղացիությանը, մասնավորապես գյուղում ստեղծել սոցիալական ապահովության պետական սիստեմ և այլն։ ԳԿԿ-ի մշակած գործազրկության վերացման պլանը նախատեսում էր զբաղվածության ավելացման միջոցառումների սիստեմ՝ աշխատանքային շաբաթվա կրճատում մինչև 40 ժամի՝ աշխատավարձի պահպանմամբ հանդերձ, ծերության թոշակի ավելացում, բանվորների աշխատավարձի ավելացում, որը պետք է բարձրացներ նրանց գնողունակությունը և պայմաններ ստեղծեր գործազուրկներին արտադրական պրոցեսի մեջ ներգրավելու համար. կոմունիստները պահանջում էին միջոցներ ձեռնարկել արտադրությունը կրճատելու դեմ, խիստ ընդլայնել բնակարանային շինարարությունը, բարեկարգել ճանապարհներն ու ջրային ուղիները և այլն։ Այդ ծրագրի ֆինանսավորման համար ԳԿԿ-ն առաջարկում էր վերացնել ռազմական նպատակներով կատարվող ծախսերը, խիստ ավելացնել ունևոր դասակարգերի վրա դրված հարկերը, կրճատել բարձրաստիճան չինովնիկների աշխատավարձը, դադարեցնել ռեպարացիաների վճարումը և այլն։ Կոմկուսի ծրագրային փաստաթղթերը նպատակ ունեին քայքայել նացիստական կուսակցության դիրքերը, ստեղծել բանվոր դասակարգի և քաղաքի ու գյուղի մանրբուրժուական բոլոր աշխատավոր զանգվածների դաշինքի հիմքը։ Միաժամանակ ղեկավարելով կոմունիստների գործունեությունը հակաֆաշիստական ուժերի համախմբման ուղղությամբ։ 1930 թ. սեպտեմբերին ստեղծվեց ֆաշիզմի դեմ պայքարի միությունը, որը 1931 թ. դեկտեմբերին ընդգրկում էր 100 հազ. անդամ։ Թեև ԳԿԿ-ի գործունեության օբյեկտիվ պայմաններն արտակարգ ծանր էին (ոստիկանական բռնություններ, ֆաշիստական տեռոր), 1929—1930 թթ. նրան հաջողվեց ամրապնդել իր դիրքերը մասսաների մեջ, որի մասին, մասնավորապես, վկայում էին ռայխստագի 1930 թ. սեպտեմբերի 14-ի ընտրությունների արդյունքները. կոմկուսը ստացավ 4,6 մլն ձայն (1,33 միլիոնով ավելի, քան 1928 թ.)։

Դրա հետ մեկտեղ կոմկուսի ազդեցության աճին, ինչպես նաև հակաֆաշիստական ճակատի ստեղծման համար նրա պայքարին խանգարում էին ստրատեգիական և տակտիկական բնույթի սխալները։ Ստրատեգիական բնույթի սխալն այն էր, որ իբրև ֆաշիստական դիկտատուրայի ալտերնատիվ առաջադրվում էր (որպես պայքարի մերձակա նպատակ) սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի լոզունգ։ 1931 թ. հունվարին ԳԿԿ-ն առաջադրեց ժողովրդական հեղափոխության լոզունգ։ Դա արտահայտում էր այն բանի գիտակցումը, որ պրոլետարիատը կարող է հաղթանակել միայն աշխատավոր միջին խավերի հետ դաշինք կնքած։ Դրա հետ մեկտեղ ժողովրդական հեղափոխության լոզունգը մեկնաբանվում էր որպես սոցիալիստական հեղափոխության հոմանիշ։ Դրա մեջ արտահայտվում էր պրոլետարական հեղափոխության ճանապարհին եղած միջանկյալ փուլերի անխուսափելիության և անցումային նպատակներ առաջադրելու, սոցիալիզմի համար պայքարը դեմոկրատիայի համար պայքարի հետ զուգակցելու անհրաժեշտությունը կոմկուսի կողմից չհասկանալը։ 30-ական թվականներին, երբ ֆաշիզմը վերածվեց գլխավոր վտանգի, գերմանական բանվոր դասակարգի անհետաձգելի խնդիրը՝ նոյեմբերյան հեղափոխության բուրժուա-դեմոկրատական նվաճումների պաշտպանությունն էր։ Բայց ամենօրյա պայքարի ծանրության կենտրոնը փոխադրելով վերջնական նպատակների վրա, կոմկուսը չէր կարող իր դրոշների տակ համախմբել բանվորների ռեֆորմիստորեն տրամադրված մասին և մանրբուրժուական լայն զանգվածներին։

Տակտիկական բնույթի սխալները պայմանավորված էին ֆաշիզմի սպառնալիքի պայմաններում ռեֆորմիզմի քաղաքական ֆունկցիաների ոչ ճիշտ ըմբռնմամբ։ Ռեֆորմիստական կազմակերպությունները հաճախ դիտվում էին որպես ֆաշիզմի «ձախ թև», ԳՍԴԿ-ն՝ որպես «սոցիալ-ֆաշիստական» կուսակցություն։ Այդ բնութագիրը, որն արտացոլում էր ԳՍԴԿ-ի պարագլուխների սանձարձակ հակակոմունիզմի նկատմամբ ԳԿԿ-ի արձագանքը, հաշվի չէր առնում, որ օբյեկտիվորեն իր դասակարգային բնույթով ռեֆորմիստական կազմակերպությունները բուրժուական դեմոկրատիայի գործիք էին։ ԳՍԴԿ-ն և ՀԱՄ-ը պրոֆաշիստական ուժեր համարելը դժվարացնում էր հակաֆաշիստական միասնական ճակատի ստեղծումը։ Դրությունը խորանում էր ԳԿԿ-ի ղեկավարության մեջ ձախ աղանդավորական ազդեցիկ խմբի (Գ. Նայման, Գ. Ռեմմելե, Պ. Մերկեր) առկայությամբ, որը կուսակցության վրին սխալ տակտիկա էր փաթաթում։ Այսպես, «փոքրիկ ցերգիբելների» (Բեռլինի պոլիցայ-պրեզիդենտ սոցիալ-դեմոկրատ Ցերգիբելի անունից) մասին Նայմանի տեսությունը, որը շարքային սոցիալ-դեմոկրատներին նույնացնում էր կուսակցական առաջնորդների

հետ, հակասում էր միասնական ճակատի, որպես ռեֆորմիստական կազմակերպությունների պրոլետարական «ներքնախավերի», հետ համագործակցության (միասնական ճակատ ներքևից) քաղաքականության կոմկուսի պաշտոնական մեկնաբանությանը։ Նման ուղղվածություն ուներ նաև Նայմանի լոզունգը «բանվորական կարմիր ճակատի» (հակաֆաշիստական միասնական ճակատի փոխարեն) ստեղծման մասին։ Արմատախիլ չէին արվել նաև ռեֆորմիստական արհմիությունների մասին եղած աղանդավորական հայացքները։ Սխալներ էին թույլ տրվում ֆաշիստական շարժման էության գնահատականի հարցում. կոմունիստների մի մասի մեջ տարածված էր նաև մանրբուրժուական բնույթի մասին տեսակետը։ ԳԿԿ-ի պրոպագանդայում հաճախ ցանկացած բուրժուադիկտատորական ռեժիմ (մասնավորապես Բրյունինգի) նույնացվում էր ֆաշիստական դիկտատուրայի հետ։ Այսպես, 1930 թ. դեկտեմբերին ԳԿԿ Կենտրոնական օրգան «Դի Ռոտե Ֆանեն» գրում էր. «Ֆաշիստական դիկտատուրան այլևս չի սպառնում, այն կատարված փաստ է»։ Դրա հետևանքով ուշադրությունը շեղվում էր գլխավոր վտանգից՝ հիտլերյան ֆաշիզմից։ Մինչև 30-ական թվականների սկիզբը արմատախիլ չէր արված գերմանական ժողովրդի նսեմացված ազգային զգացման թերագնահատումը։ Թեև Բալանչիական Վերսալյան հաշտության վերացման հարցը կանգնած էր «Ազգային և սոցիալական ազատագրման ծրագրի» կենտրոնում, նրա գործնական լուծումը սովորաբար առնչվում էր Գերմանիայում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետ։ «Ֆաշիզմ կամ պրոլետարական դիկտատուրա», «Յունգի շղթանակի հետ։ «Ֆաշիզմ կամ պրոլետարական դիկտատուրա», «Յունգի շղթաներ կամ Սովետական Գերմանիա»—գրում էր «Դի Ռոտե Ֆանեն» 1930 թ. սեպտեմբերի 15-ին։

Դասակարգային համագործակցության քաղաքականությունը, որն անց էր կացնում ԳՍԴԿ-ի և ՀԱՄ-ի ղեկավարությունը, ինչպես նաև ԳԿԿ-ի սխալները, որոնք պայմանավորեցին ԳԿԿ-ի ազդեցության դանդաղած աճը մասսաների մեջ, ունեցան այն հետևանքը, որ գործադուլային շարժումը թուլացավ։ Ճգնաժամի առաջին տարիներին ԳԿԿ-ին չհաջողվեց բանվոր դասակարգին մասսայական պայքարի հանել ընդդեմ արտակարգ օրենսդրության։ Դա բարենպաստ պայմաններ ստեղծեց ֆաշիզմի դիրքերի ամրապնդման համար։

1931—1932 թթ. կառավարող վերնախավերում տեղի ունեցող ուժերի վերախմբավորման և պրոֆաշիստական թևի ուժեղացման պայմաններում ԳԿԿ-ի առջև խնդիր ծառացավ կարճ ժամկետում հաղթահարել այն դիրքորոշումները, որոնց սխալ լինելը գիտակցում էր կուսակցության ղեկավարության մարքսիստորեն առավել հասունացած մասը։ ԳԿԿ Կենտկոմի 1932 թ. կայացած պլենումում աղանդավորական խումբը պարտություն կրեց, հետագայում նրա պարագլուխները հեռացվեցին ԳԿԿ-ի ղեկավարությունից։ 1932 թ. գարնան և աշնան ընթացքում ԳԿԿ-ն պրակտիկ գործունեության մեջ ուղղեց ԳՍԴԿ-ի վերաբերյալ, միասնական ճակատի ըմբռնման մեջ թույլ տված բազմաթիվ սխալ դիրքորոշումները, ակտիվացավ կոմունիստների գործունեությունը բնակչության միջին խավերի շրջանում։ ԳԿԿ-ն դիմեց ԳՍԴԿ-ի ղեկավարությանը, առաջարկելով համատեղ առաջադրել հանրապետության պրեզիդենտի թեկնածու։ ԳԿԿ Կենտկոմն իր պատրաստակամությունն էր հայտնում ցանկացած կազմակերպության հետ համագործակցել ֆաշիզմի դեմ՝ մասսաների անմիջական շահերի պաշտպանության համար մղվող պայքարում։

Հակաֆաշիստական ուժերի համախմբման համար ԳԿԿ-ի գործունեության նոր փուլ բացեց ԳԿԿ Կենտկոմի 1932 թ. մայիսին կայացած պլենումը, որը որոշում ընդունեց «հակաֆաշիստական գործողություն» անցկացնելու մասին։

Դրա էությունը հակաֆաշիստական լայն շարժման ծավալումն էր, հակաֆաշիստական ճակատի կազմակերպական կենտրոնների ստեղծումը։ 1932 թ. հունիսից շատ քաղաքներում, ձեռնարկություններում ու գյուղերում կոմունիստների, սոցիալ-դեմոկրատների և անկուսակցական բանվորների մասնակցությամբ սկսեցին ստեղծվել հակաֆաշիստական ուժերի միասնական կոմիտեներ։ 1932 թ. հուլիսի 10-ին Բեռլինում տեղի ունեցավ «հակաֆաշիստական գործողության» համագերմանական կոնգրես, ուր ներկայացված էին 1465 պատվիրակ (այդ թվում 132 սոցիալ-դեմոկրատ և 954 անկուսակցական)։ Կոնգրեսում ընտրված Համագերմանական ժամանակավոր կոմիտեն անցկացրեց «հակաֆաշիստական շաբաթներ». ամբողջ Գերմանիայում հակաֆաշիստական լոզունգներով տեղի ունեցան մասսայական ցույցեր ու միտինգներ։ 1932 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին «հակաֆաշիստական գործողության» նշանաբանով ծավալվեց տնտեսական ու քաղաքական գործադուլների ալիքը. ԱՀՕ-ի ղեկավարությամբ տեղի ունեցավ 1100 գործադուլ, որոնց ընթացքում համախմբվում էր կոմունիստների, սոցիալ-դեմոկրատների և անկուսակցական բանվորների գործողությունների միասնությունը։ «Հակաֆաշիստական գործողության» շարժումը հանդիսացավ հակաֆաշիստական ժողովրդական ճակատի սաղմը։ Այդ կամպանիայի ընթացքում ԳԿԿ-ն զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը մասսաների մեջ, մեծացավ կուսակցության թվակազմը (1931 թ. 195 հազարից մինչև 360 հազարի՝ 1932 թ. վերջին)։ 1932 թ. նոյեմբերին ռայխստագի ընտրությունների ժամանակ կոմունիստներն ստացան մոտ 6 մլն ձայն։ Թեև կոմկուսը դեռ չէր հաղթահարել գաղափարական ու քաղաքական մի քանի լուրջ սխալներ (պրոլետարիատի դիկտատուրայի լոզունգը շարունակում էր մնալ որպես ստրատեգիական մերձակա նպատակ, լիովին չէր ճշգրտվել դիրքը ռեֆորմիստական կազմակերպությունների նկատմամբ), նրա պրակտիկ գործունեության մեջ սկսվեց նոր փուլ. դեմոկրատիայի պաշտպանության և հակաֆաշիստական ուժերի համագործակցության հարցերը դառնում էին կոմունիստների գործունեության գլխավոր բովանդակությունը։ 1932 թ. երկրորդ կիսամյակում ԳԿԿ-ի միայն Բեռլինի կոմիտեն ռեֆորմիստական ինստանցիաներին ուղարկեց մոտ տաս դիմում, որտեղ ֆաշիզմի դեմ համատեղ պայքարի կոչ էր արվում։ ԳԿԿ-ն գտնվում էր բանվոր դասակարգի առավել ակտիվ մասի մեծամասնությունը նվաճելու ուղու վրա։

Հիտլերի նշանակվելը ռայխսկանցլեր

1932 թ. աշնանն սկսեցին ի հայտ գալ ֆաշիստական շարժման ճգնաժամի նշանները։ Կանցլերի պոստն ստանալու Հիտլերի անհաջող փորձերից հետո (1932 թ. օգոստոս-սեպտեմբերին) նացիստական կուսակցության մեջ ուժեղացան կենտրոնախույս տենդենցները։ ՆՍԴԱՊ-ի՝ մոլորության մեջ գցված ուղեկիցների մի մասը հրաժարվեց վստահել նրան։ Դրա հետևանքով նոյեմբերի 6-ի ընտրություններում ֆաշիստական կուսակցությունն ստացավ 11,3 մլն ձայն՝ 2,4 միլիոնով պակաս, քան հուլիսի 31-ին։ Ապա հետևեցին ֆաշիստների պարտությունները համայնքների ընտրություններում։ ՆՍԴԱՊ-ը ճգնաժամ էր ապրում։ Գերմանիայի ֆինանսական մագնատներն իրենց հաշիվ էին տալիս ՆՍԴԱՊ-ի քայքայման հետևանքների մասին, որը տեղի էր ունենում բանվոր դասակարգի և ԳԿԿ-ի աճող ակտիվության պայմաններում և որոշեցին արագացնել իշխանության հանձնումը Հիտլերին։ Սակայն 1932 թ. նոյեմբերյան ընտրություններից հետո կառավարող շրջանները դեռ համաձայնության չէին եկել իշխանությունը նացիստներին վստահելու աստիճանի և ձևերի մասին։ Նոր կառավարությունը գլխավորեց գեներալ Շլայխերը։ Մինչդեռ 1932 թ. վեր-

ջին վերջնականապես պրոհիտլերյան դիրքերն անցան գերմանական խոշոր արդյունաբերողները և գեներալիտետի զգալի մասը։ Շախտի նախաձեռնությամբ պրեզիդենտ Հինդենբուրգին ուղերձներ ուղարկվեցին, որոնք ստորագրված էին Գերմանիայի մի քանի տասնյակ խոշոր գործարարների կողմից, որոնք պահանջում էին Հիտլերին անհապաղ նշանակել ռայխսկանցլեր։ Զուգահեռաբար անդրկուլիսյան լարված հանդիպումներ ու բանակցություններ էին տեղի ունենում նացիստական կառավարության կազմի և ծրագրի որոշման նպատակով։ Համաձայնություն կայացավ ֆինանսական կապիտալի և ֆաշիստական կուսակցության գլխավոր նպատակների վերաբերյալ՝ հեղափոխական շարժման ճնշում, էկոնոմիկայի կարգավորում՝ հօգուտ խոշոր կապիտալի, Վերսալի վերանայում։ 1933 թ. հունվարի 30-ին Հինդենբուրգը Հիտլերին նշանակեց ռայխսկանցլեր։ Ֆաշիստական կուսակցությունը զավթեց պետական իշխանության վճռական լծակները։

Գերմանական ժողովրդի համար այդ ճակատագրական պահին ԳԿԿ-ն վերջանապես դիմեց ԳՍԴԿ-ին և ռեֆորմիստական արհմիություններին՝ կոչ անելով ընդհանուր գործադուլ հայտարարել և փակել նացիստների ճանապարհը։ Բայց ռեֆորմիստ պարագլուխները հրաժարվեցին պայքարից, շարունակելով հույսը դնել ռայխստագի առաջիկա ընտրությունների վրա։ ԳԿԿ-ն ի վիճակի չէր, առանց ԳՍԴԿ-ի և ՀԱՄ-ի և հակառակ նրանց, պայքարի հանել լայն զանգվածներին և ձախողել ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը։

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՖԱՇԻԶՄԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ (1933—1939 ԹԹ.)

Վայմարյան հանրապետության քաղաքական կառուցվածքի վերակազմավորումը

Ֆաշիստական առաջին կառավարությունը կոալիցիոն էր։ Նրա կազմի մեջ մտան 4 ներկայացուցիչ ՆՍԴԱՊ-ից՝ Հիտլերի գլխավորությամբ և 11-ը՝ բուրժուական կուսակցություններից։ Կաբինետի բնույթը որոշվում էր ինչպես երկրում դասակարգային ուժերի հարաբերակցությամբ (հարկ էր լինում հաշվի նստել հակաֆաշիստական օպոզիցիայի հետ), այնպես էլ հիտլերականների ձգտումով՝ իշխանության զավթումը քողարկել սահմանադրության պահպանման քողով։ Կառավարությունը կազմելով, նացիստներն իրենց առջև խնդիր դրեցին վերացնել Վայմարյան հանրապետության քաղաքական սիստեմը և ստեղծել պետական նոր մեխանիզմ, որը կարող էր ապահովել ֆաշիզմի նպատակների իրականացումը։ Հաշվի առնելով, որ 1932 թ. նոյեմբերին ընտրված ռայխստագում ՆՍԴԱՊ-ը չուներ մեծամասնություն և, հետևաբար, սահմանադրական ճանապարհով այդպիսի փոփոխություններ հնարավոր չէր կատարել (դրա համար պահանջվում էր ձայների $^2/_3$-ը), նացիստները պահանջեցին ռայխստագը ցրել՝ հույս ունենալով նոր ընտրություններում վճռական հաղթանակ տանել։ Պրեզիդենտական հրամանագրով ռայխստագը ցրվեց և ընտրությունները նշանակվեցին 1933 թ. մարտի 5-ին։

Նախընտրական պայքարի ընթացքում Հիտլերի կառավարության գործունեությունը նպատակ ուներ բարոյալքել և ահաբեկել հակաֆաշիստական ուժերին, նրանց թույլ չտալ կազմակերպված ելույթ ունենալ։ Նացիստները դիմեցին քաղաքական ու սոցիալական ճարպիկ դեմագոգիայի, և գործում էին որոշակի շրջահայեցությամբ։ Վախենալով ընդհանուր գործադուլից, նրանք չհանդգնեցին ԳԿԿ-ն անմիջապես օրենքից դուրս հայտարարել։ Մյուս կողմից,

նացիստներն ուժեղացնում էին հակակոմունիստական հիստերիան, որպես Գերմանիայի «վերածնման» նախադրյալ հռչակելով «կոմունիզմի արմատախիլ անելը»։ Արդեն փետրվարի սկզբին արգելվեցին «հակակառավարական» ցույցերն ու միտինգները։ Ոստիկանությունը ցուցում ստացավ զենք գործադրել «կարգը խանգարողների» դեմ։ Ֆաշիստական ՍԱ և ՍՍ ջոկատները հայտարարվեցին պետական ապարատի մաս և օժտվեցին օժանդակ ոստիկանության իրավունքներով։

Սակայն փետրվարի վերջին ակնհայտ դարձավ, որ ուժերի հարաբերակցության մեջ վճռական շրջադարձ տեղի չի ունեցել հօգուտ նացիստական կուսակցության, և հիտլերականները որոշեցին դիմել վիթխարի պրովոկացիայի՝ ռայխստագի հրկիզմանը (27. II. 1933)։ ԳԿԿ-ին մեղադրելով հրկիզման և «կոմունիստական ապստամբության» նախապատրաստման մեջ, նրանք ձգտում էին ահաբեկել մանրբուրժուական զանգվածներին և «օրինական հիմքերի» պատրանք ստեղծել կոմկուսը ջախջախելու համար։ Մասսայական ձերբակալությունների ընթացքում հիտլերյան խուզարկուները մարտի 3-ին բռնեցին Է. Թելմանին։ Մարտի 9-ին ձերբակալվեց Գ. Դիմիտրովը։ Ռայխստագի պրովոկացիոն հրկիզումն առիթ ծառայեց երկու արտակարգ դեկրետներ հրապարակելու համար՝ «Ընդդեմ պետական դավաճանության և դավաճանական գործողությունների» և «Ժողովրդի ու պետության պաշտպանության մասին», որոնք վերացնում էին քաղաքացիների իրավունքների վերաբերյալ Վայմարյան սահմանադրության կարևորագույն հոդվածները։

Չնայած ընտրական մեքենայություններին ու տեռորին, նացիստները ռայխստագում չունեին ձայների $^2/_3$-ը, որն անհրաժեշտ էր սահմանադրական ճանապարհով արտակարգ լիազորություններ ստանալու համար։ ՆՍԴԱՊ-ը հավաքեց 17,2 մլն ձայն (43,9 տոկոս), ավելի քան 22 մլն ընտրողներ քվեարկեցին նացիստների դեմ, ընդ որում 12 միլիոնից ավելին՝ հօգուտ ԳԿԿ-ի և ԳՍԴԿ-ի։ Թեև ԳԿԿ-ն գտնվում էր կիսալեգալ դրության մեջ, նա ստացավ մոտ 5 մլն ձայն (81 մանդատ)։ Այդ ժամանակ հիտլերականները կոմունիստներին զրկեցին դեպուտատական լիազորություններից և մարտի 23-ին ռայխստագում անցկացրին Հիտլերի կաբինետին արտակարգ լիազորություններով օժտելու վերաբերյալ օրենք։ Կառավարությունը դուրս բերվեց պառլամենտի հսկողությունից և իրավունք ստացավ օրենքներ հրապարակել (այդ թվում նաև այնպիսի օրենքներ, որոնք փոխում էին սահմանադրությունը) առանց ռայխստագի համաձայնության։ Վերջինս զրկվեց պետության բարձրագույն օրենսդիր հիմնարկության իր դերից և ֆաշիստական խեղկատականոցի վերածվեց։ 1933 թ. մարտի 23-ի օրենքը դարձավ ֆաշիստական օրենսդրության և Վայմարյան հանրապետության քաղաքական սիստեմի վերացման իրավական հիմքը։

Հաշվեհարդար կատարելով ԳԿԿ-ի հետ, հիտլերյան կառավարությունը վերացրեց ոչ ֆաշիստական բոլոր քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները։ 1933 թ. մայիսին ցրվեցին արհմիությունները և մասսայական մյուս կազմակերպությունները, հունիսին՝ ԳՍԴԿ-ն. ռայխստագում և իշխանության տեղական մարմիններում ԳՍԴԿ-ի դեպուտատների լիազորություններն ուժը կորցրած հայտարարվեցին։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության և արհմիությունների շատ ֆունկցիոներներ նետվեցին համակենտրոնացման ճամբարները։ 1933 թ. հունիս-հուլիսին ինքնալուծարքի մասին հայտարարություններ արեցին Գերմանիայի բուրժուական կուսակցությունները։ 1933 թ. հուլիսի 14-ին օրենք հրապարակվեց քաղաքական նոր կուսակցությունների կազմավորման արգելման մասին։ «Կուսակցության և պետության

միասնության ապահովման մասին» օրենքը (1933 թ. դեկտեմբեր) ֆաշիստական կուսակցությանը հռչակում էր «գերմանական պետական մտքի կրող»։ Ֆաշիստական կուսակցության մարմիններն սկսեցին կատարել պետական ֆունկցիաներ, և ֆյուրերության սկզբունքը տարածվեց ամբողջ պետական ապարատի վրա։ 1933 թ. գարնան ու ամռան ընթացքում ամբողջ մամուլն ունիֆիկացվեց և դրվեց ֆաշիստական չինովնիկների հսկողության տակ։ Ինֆորմացիայի միջոցների ունիֆիկացումը, քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների ոչնչացումը, որոնք բուրժուական դեմոկրատիայի կարևորագույն անկապտելի հատկանիշներն էին, նշանակում էին Վայմարյան հանրապետության պառլամենտական սիստեմի քաղաքական հիմքերի վերացում։

Գերմանիայի քաղաքական կառուցվածքի ֆաշիստականացման բաղկացուցիչ մասը եղավ վարչական կենտրոնացումը։ Կայսրությունում և մարզերում քաղաքական ռեժիմի ունիֆիկացման վերաբերյալ օրենքի (1933 թ. ապրիլ) հիման վրա ստեղծվեց շտաատհալտերների՝ երկրամասերում կառավարության տեղապահների (որպես կանոն, դրանք լինում էին ՆՍԴԱՊ-ի երկրամասային կազմակերպությունների ղեկավարները՝ հաուպտլայտերները) ինստիտուտը։ «Կայսրության նոր կառուցվածքի մասին» օրենքը (1934 թ. հունվար) վերացնում էր լանդտագները. երկրամասերի կառավարություններն անմիջականորեն ենթարկվում էին կայսերական կառավարությանը, իսկ շտաատհալտերները՝ ներքին գործերի մինիստրին։ Ստեղծվեց պետական կառավարման ծայրահեղ կենտրոնացված սիստեմ, որը ենթակա էր ֆաշիստական կուսակցությանը։ Ֆաշիստական ընտրանիի ձեռքում պետական իշխանության կենտրոնացման ավարտական ակտը պրեզիդենտի լիազորությունների հանձնումն էր (1934 թ. օգոստոսին Հինդենբուրգի մահից հետո) ցմահ «ֆյուրեր և ռայխսկանցլեր» Ադոլֆ Հիտլերին։

Այսպիսով, ֆաշիստական տիրապետության երկու տարվա ընթացքում բազմակողմանիորեն վերակազմվեց Վայմարյան հանրապետության քաղաքական ու վարչական կառուցվածքը, ստեղծվեց կառավարման նոր պետական ապարատ՝ ֆինանսական կապիտալի առավել իմպերիալիստական ու շովինիստական տարրերի առաջնորդ դիկտատուրայի ապարատը։

Պատերազմի նախապատրաստման օգտին պետական-մոնոպոլիստական կարգավորման ֆաշիստական սիստեմը

1933—1934 թթ. պետական-մոնոպոլիստական կարգավորման համընդգրկուն սիստեմի միջոցով վերակառուցվեց Գերմանիայի սոցիալ-տնտեսական կառուցվածքը։ Այդ սիստեմի գլխավոր ուղղությունները որոշվեցին հարկադիր կարտելների ստեղծման օրենքով (1933 թ. հուլիս)։ Էկոնոմիկայի գործնական ղեկավարման համար ստեղծվեց Գերմանական տնտեսության գլխավոր խորհուրդ, որի կազմի մեջ մտան ֆինանսական օլիգարխիայի առաջատար ներկայացուցիչները։ Պետական-մոնոպոլիստական կարգավորման մեխանիզմի հետագա զարգացման կարևոր քայլը արդյունագործական տնտեսության կազմակերպության ստեղծումն էր, որը հարկադրման միջոցով միավորեց արդյունաբերության համապատասխան ճյուղերի արդյունաբերողներին ու ձեռնարկություններին։

Կազմակերպությունը բաժանվեց վեց (հետո յոթ) կայսերական խմբերի՝ արդյունաբերության, էներգետիկայի, առևտրի, արհեստների, բանկային և ապահովագրական գործի։ Ֆունկցիոնալ բաժանման հետ մեկտեղ ստեղծվում էր նաև ռեգիոնալ կառուցվածքը՝ օկրուգային և շրջանային տնտեսական պալատները, որտեղ ներկայացված էին ճյուղային տնտեսական խմբերի ստորին մար-

մինները։ Օկրուգային տնտեսական պալատները միավորվում էին էկոնոմիկայի մինիստրությանը ենթակա կայսերական տնտեսական պալատի միջոցով։ Կայսերական խմբերի և օկրուգային տնտեսական պալատների գլուխ կանգնեցվեցին ֆինանսական օլիգարխիայի խոշորագույն ներկայացուցիչները (Կրուպպ, Տիսսեն և ուրիշներ), որոնք օժտված էին պետական իշխանության առանձնաշնորհումներով։ Ճյուղային և ռեգիոնալ կազմակերպություններին լայն իրավունքներ էին ընձեռվում, դրանք վերահսկում էին երկրի տնտեսական կյանքի բոլոր կողմերը՝ ցրում և ստեղծում էին արդյունաբերական միավորումներ, կարգավորում պատվերների, վարկերի, հումքի բաշխումը, հսկում արդյունաբերության ծավալը, նրա զարգացման ուղղությունները, գների մակարդակը և այլն։

«Նոր պլանի» համաձայն (1934 թ. սեպտեմբեր) պետական-մոնոպոլիստական վերահսկողություն սահմանվեց ներմուծման և արտահանության, ինչպես նաև վալյուտային ֆոնդի վրա։

1933 թ. ընթացքում գյուղատնտեսության ասպարեզում գործող կազմակերպությունների բազայի վրա ստեղծվեց Պարենամթերքի կայսերական դասը, որը գլխավորեց պարենամթերքի և հողագործության մինիստր Դարրեն (որը միաժամանակ նացիստական կուսակցության համանման բաժնի շեֆն էր)։ Պարենամթերքի կայսերական դասի տրամադրության տակ էր գյուղատնտեսության կենտրոնացված վերահսկողության և ամենից առաջ պատերազմի նախապատրաստման շահերին ծառայող պետական-մոնոպոլիստական կարգավորման համապարփակ ապարատը։ Ֆաշիստական Գերմանիայի ագրարային օրենսդրության հիմքը «ժառանգական տնտեսությունների վերաբերյալ օրենքն» էր (1933 թ. սեպտեմբեր)։ Գյուղատնտեսական բնակչությունը բաժանվում էր երկու կարգի՝ գյուղացիների և գյուղական տնտեսատերերի։ «Արիական» ծագում ունեցող հողային սեփականատերերը (7,5-ից մինչև 125 հա) հռչակվում էին գյուղացիներ, «ժառանգական տնտեսատերեր», մնացած բոլորը՝ գյուղական տնտեսատերեր։ «Ժառանգական տնտեսությունը» (գյուղատնտեսական ձեռնարկությունների 21 տոկոսը, որին պատկանում էր 1939 թ. մշակովի հողերի 38 տոկոսը) ենթակա չէր բաժանման կամ պարտքի դիմաց վաճառման և հանձնվում էր միայն ավագ որդուն։ Ի դեմս «ժառանգական տնտեսությունների» սեփականատերերի նացիստները ջանում էին ստեղծել գյուղում ֆաշիստական դիկտատուրայի սոցիալական հենարանը, իսկ այդ տնտեսությունների կրտսեր շառավիղներից դաստիարակել գաղութարարների և դինվորների կադրեր։ Գյուղատնտեսական բնակչության հիմնական զանգվածը՝ գյուղական տնտեսատերերն, իրենց ուսերի վրա կրում էին ֆաշիստական իշխանությունների կամայականությունների և պետական կարգավորման ամբողջ ծանրությունը։

Ջախջախելով պրոլետարական դասակարգային կազմակերպությունները, նացիստներն ստեղծեցին «Գերմանական աշխատանքային ճակատը» (ԳԱՃ), որը հավակնություն ուներ իրականացնելու կապիտալի և աշխատանքի «սոցիալական պարտնյորության» ֆաշիստական գաղափարը։ ԳԱՃ-ը հարկադրանքի միջոցով իր շարքերն էր ներգրավել բանվորներին, ծառայողներին և ձեռնարկատերերին (ավելի քան 20 մլն անդամ) և դիտվում էր որպես նացիոնալ-սոցիալիստական կուսակցությանը հարող և նրա վերահսկողությամբ աշխատող կազմակերպություն։ «Ազգային աշխատանքի» կազմակերպման մասին» օրենքը (1934 թ. հունվար) ձեռնարկատիրոջը (ձեռնարկության «ֆյուրերին») տրամադրում էր անսահմանափակ իշխանություն. տվյալ ձեռնարկության բանվոր-

ների համար նա բարձրագույն ինստանցիա էր հռչակվում վարչական և արտադրական հարցերի լուծման ժամանակ. ֆարգործկոմները վերացվում էին, դրանց փոխարեն ստեղծվեցին «վստահելիների խորհուրդներ», որպես ձեռնարկության «ֆյուրերին» առընթեր խորհրդակցական մարմիններ։

Գերմանիայում ֆաշիստական դիկտատուրայի առաջին իսկ տարիներից սկսեց առաջանալ արտատնտեսական հարկադրման սիստեմը։ 18—25 տարեկան պատանիների և աղջիկների համար սահմանվեց (1935 թվականից) աշխատանքային պարհակ։ 1934 թվականից բոլոր որակյալ մետաղագործ բանվորները (ավելի ուշ նաև մի քանի ուրիշ կատեգորիաների բանվորներ) զրկվեցին տեղից-տեղ փոխադրվելու ազատությունից և աշխատանքի էին ուղարկվում միայն աշխատանքի հատուկ բյուրոների միջոցով։ Պատերազմի նախօրյակին աշխատանքային օրվա տևողությունը հասնում էր 10—14 ժամի։

Պետական-մոնոպոլիստական կարգավորման վիթխարի ապարատը վերահսկում էր տնտեսական կյանքի և սոցիալական քաղաքականության բոլոր ոլորտները։ Վարչական միջոցառումների հետ միասին (դաժան հսկողություն էկոնոմիկայի, վալյուտայի նկատմամբ, արտաքին առևտրի ռեգլամենտացում, հսկողություն գների և աշխատավարձի նկատմամբ և այլն) լայնորեն կիրառվում էին կարգավորման անուղղակի մեթոդներ (ֆիսկալային միջոցառումներ, պետական ներդրումներ և այլն), նշանակալի դեր էր խաղում պետության ձեռնարկչական գործունեությունը։ 1936 թ. «4-ամյա պլանի» հռչակումից հետո, մի շարք պետական կարգավորող մարմիններ (այդ թվում էկոնոմիկայի մինիստրությունը) ենթարկվեցին 4-ամյա պլանի գլխավոր լիազոր Հ. Գյորինգին, որը դիկտատորական իրավունքներ ստացավ էկոնոմիկայի բնագավառում. նրա կարգադրություններն օրենքի ուժ ունեին և պարտադիր էին պետական և կուսակցական բոլոր մարմինների համար։ Պատերազմի նախօրյակին (1939 թ.) ստեղծվեց պաշտպանության գծով մինիստրների խորհուրդը, որն իր հսկողության տակ դրեց էկոնոմիկայի և սոցիալական հարաբերությունների՝ ռազմական տեսակետից կարևոր բոլոր բնագավառները։

Գերմանիայի էկոնոմիկան նախապատերազմյան տարիներին բնութագրվում էր արդյունաբերության ծանր և ռազմական ճյուղերի (ուր ուղղվում էր բոլոր ներդրումների $^4/_5$-ը) արագ զարգացմամբ և ավտարկիայի տենդենցով։ Ռազմական թեքումը ոչ միայն արտահայտում էր նացիստների ռևանշիստական նպատակները, այլև դիտվում որպես ֆաշիստական ռեժիմի կայունացման կարևոր գործոն։ Տնտեսական «բարգավաճման» գլխավոր պայմանը ֆաշիստական կառավարությունը տեսնում էր արդյունաբերության՝ սպառողականության արտադրությանն անցնելու և ռազմական շինարարության ծավալման մեջ։ 1935 թ. կեսերին ծանր արդյունաբերությունը հասավ մինչճգնաժամային մակարդակին, իսկ 1939 թ. կեսերին այն անցավ գրեթե 50 տոկոսով։ Ռազմական ծախսերը (1933—1939 թթ.) ավելացան 10 անգամ և 1938/39 թթ. կազմեցին բյուջեի 58 տոկոսը։ Իսկ սպառման միջոցների արտադրությունը այդպես էլ չհասավ 1928 թ. մակարդակին։ 1936 թ. ընդունվեց 4-ամյա պլանը։ Դրա նպատակը պաշտոնապես բնորոշվեց հետևյալ կերպ. «Գերմանական բանակը պետք է չորս տարում պատրաստ լինի գործողության համար։ Գերմանական էկոնոմիկան պետք է չորս տարում պատրաստ լինի պատերազմին»։ Նոր պլանի առանցքը սեփական հումքային բազայի ստեղծումն էր՝ ռազմական արտադրության կարիքներն ապահովելու համար։ Պետությունը վիթխարի վարկեր էր տրամադրում (ամենից առաջ «ԻԳ ֆարբենինդուստրիին») սինթետիկ վառելիքի (գորշ ածխից), սինթետիկ կաուչուկի, ալյումինի արտադրության առ-

պարեզում հետազոտություններ ծավալելու համար, վարկավորում համապատասխան գործարանների շինարարությունը, երաշխավորում 10 տարվա ընթացքում սինթետիկ արտադրանքի բարձր գներով իրացումը։

Արդյունաբերական ձեռնարկությունները բաժանվեցին «ռազմական տեսակետից վճռականների» և «ռազմական տեսակետից կարևորների»։ Դրանք առաջին հերթին էին մատակարարվում հումքով, բանվորական ուժով, վարկերով։ Իսկ այն ձեռնարկությունները, որոնք չէին դասվել այդ կատեգորիաների շարքը, լուրջ դժվարություններ էին կրում։ Ռազմական մոնոպոլիաների օգտին նացիստներն անտեսում էին այն ճյուղերի կարիքները, որոնք սպասարկում էին բնակչությանը։ Արգելված էր, օրինակ, կապիտալներ ներդնել ջուտի, թղթի, բրդի, բամբակի գործվածքեղենի ճյուղերում։ Քանի որ պատերազմի նախապատրաստման շահերը դրված էին ֆաշիստական պետության քաղաքականության առաջին պլանում, ապա արդյունաբերության այն ճյուղերը, որոնք ռազմականացման բազա էին հանդիսանում (ամենից առաջ ծանր ինդուստրիան), էական արտոնություններ ունեին և վիթխարի շահույթներ էին ստանում։ Օրինակ, «ԻԳ ֆարբենինդուստրի» կոնցեռնի շահույթը 1932 թ. մինչև 1938 թ. ավելացավ գրեթե 4 անգամ. Կրուպպը, որը 1932 թ. շահույթներ չուներ, ֆաշիստական ռեժիմի առաջին վեց տարիներին ռազմական արտադրության հաշվին ստացավ 380 մլն մարկ։ Արդյունաբերական հին ընտրանիի հետ միասին ռազմականացումը և պատերազմի նախապատրաստությունը հարստացնում էին նաև ֆաշիստական նորահարուստներին։

Խոշոր մոնոպոլիաների հովանավորության պետական քաղաքականությունը արտահայտվում էր նաև արտադրության և կապիտալի հարկադիր կենտրոնացում անցկացնելու մեջ։ Այդ նույն նպատակին էր նշանակալիորեն ծառայում «արիականացումը», այսինքն՝ հրեական ծագում ունեցող անձանց սեփականության բռնագրավումը, որը հարստացրեց ֆաշիստական ընտրանուն և նրա կողմնակիցներին (այսպես առաջացավ մասնավորապես «Հ. Գյորինգ» կոնցեռնը)։ Ամբողջությամբ վերցրած, 30-ական թվականների վերջին 6 բանկեր և 70 խոշորագույն փայատիրական ընկերություններ վերահսկում էին Գերմանիայի արդյունաբերական պոտենցիալի ավելի քան $^2/_3$-ը։

Հարկադիր սինդիկացման հետևանքը եղավ հարյուր հազարավոր մանր ու միջին սեփականատերերի սնանկացումը։ 1933 —1939 թթ. 700 հազ. արհեստագործական ձեռնարկություններ ստիպված էին լիկվիդացնել իրենց «դեշեֆտները». գրեթե 1,5 մլն գյուղացիներ լքեցին գյուղատնտեսական արտադրությունը։ Էականորեն չբարելավվեց նաև արդյունաբերական պրոլետարիատի դրությունը։ Թեև գործադրկությունը ռազմական արտադրության ծավալման և աշխատանքային պարհակ սահմանելու հետևանքով նվազեց, բայց բանվորների աշխատավարձի միջին տարեֆային դրույթները չփոխվեցին ճգնաժամի ժամանակաշրջանի համեմատությամբ։ Դրա հետ մեկտեղ բանվորական շատ ընտանիքների վաստակը, հատկապես ռազմական արտադրության հետ կապված ճյուղերում, ինչպես նաև արտաժամյա աշխատանքի և ընտանիքում զբաղվածների թվի ավելացման հետևանքով, ավելացավ միջին հաշվով 8,6 տոկոսով (1936 թ. մինչև 1939 թ.), իսկ առանձին ճյուղերում՝ զգալիորեն ավելի, միաժամանակ կյանքի գինն աճեց 7 տոկոսով։ Աշխատավարձի բաժինը ազգային եկամտի մեջ 1932 թ. 64 տոկոսից կրճատվեց մինչև 57 տոկոսի՝ 1938 թ.։

Ֆաշիստական Գերմանիայի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կառուցվածքի վերլուծությունը վկայում է այն մասին, որ, նախ, երկրում ամբողջ լիիշխանությունը կենտրոնացված էր նացիոնալ-սոցիալիստական կլիկի ձեռ-

քում, իսկ աշխատավորության ճնշող զանգվածը զրկվեց բազմամյա պայքարում նվաճած դեմոկրատական իրավունքներից ու ազատություններից. երկրորդ, էկոնոմիկայի և սոցիալական հարաբերությունների բոլոր ոլորտներն ընդգրկած պետական-մոնոպոլիստական սիստեմում վճռական դիրքերը գրաված էին արդյունաբերական խոշորագույն մագնատների ձեռքում, որոնք օրենքով օժտված էին պետական իշխանության արտոնություններով. երրորդ, քաղաքական, վարչական և տնտեսական վերակառուցման հետևանքը եղավ տոտալիտար դիկտատուրայի մեխանիզմի՝ «թիկունքի» մոբիլիզացման գործիքի ստեղծումն ագրեսիվ պատերազմի նախապատրաստության նպատակով։

Ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը Գերմանիայի տիրող դասակարգերի ներսում կարևոր տեղաշարժեր առաջացրեց։ Նախկինում ծանր արդյունաբերության տերերը իշխանությունը բաժանում էին թեթև ու մշակող արդյունաբերության ձեռնարկատերերի, մեծածախ առևտրականների, նավատերերի հետ, և բուրժուական հանրապետությունը հանդիսանում էր նրանց համատեղ քաղաքական տիրապետության ձևը։ Ֆաշիստական ռեժիմի պայմաններում բուրժուական դիկտատուրայի տնտեսական ու քաղաքական բազան նեղացավ։ Արդեն իշխում էր ոչ թե ամբողջ բուրժուազիան, այլ միայն նրա մեկ ֆրակցիան՝ արդյունաբերական վերնախավը, որի շահերն անմիջականորեն կապված էին ռազմական արտադրության հետ։ Իսկ տեքստիլ արդյունաբերության, թեթև արդյունաբերության և այլ ֆաբրիկանտները, այսինքն՝ բուրժուազիայի այն մասը, որն անմիջականորեն կապված չէր ռազմական արտադրության հետ, երկրի քաղաքական կյանքում սկսեց երկրորդական դեր խաղալ։ Գերմանական ֆինանսական կապիտալի առավել ագրեսիվ և ռեակցիոն ներկայացուցիչների և ՆՍԴԱՊ-ի վերնախավի ձեռքում կենտրոնացվեցին Գերմանիայի ներքին ու արտաքին քաղաքականության վճռական լծակները։

Դիմադրություն նացիստական իշխանությանը։ ԳԿԿ-ի պայքարը հակաֆաշիստական ճակատի ստեղծման համար

Ֆաշիստական ռեժիմի՝ որպես ֆինանսական կապիտալի առավել ռեակցիոն, առավել շովինիստական և առավել իմպերիալիստական տարրերի դիկտատուրայի բնույթը կանխորոշում էր ֆաշիզմին թշնամի ուժերի առկայությունը և ֆաշիստական իշխանության դեմ ուղղված դիմադրության շարժումը։ «Երրորդ ռայխի» գոյության բոլոր 12 տարիներին ֆաշիզմի հակառակորդների պայքարը չէր դադարում, թեև տարբեր ժամանակաշրջաններում նրա ինտենսիվությունն ու ձևերը, ինչպես և օպոզիցիայի ուժերը միանման չէին։

1933—1934 թթ. գերմանական ազգի մեծ մասը դեմ էր ֆաշիզմին։ Այդ մասին պերճախոսությամբ վկայում էին ռայխստագի 1933 թ. մարտի 5-ի ընտրությունների արդյունքները։ Հիտլերի առավել հետևողական հակառակորդը բանվոր դասակարգն էր։ Հիտլերականների՝ ձեռնարկություններում ստեղծած «վստահելիների խորհուրդների» 1934 թ. կայացած ընտրություններին մասնակցեց բանվորների և ծառայողների 40 տոկոսից ոչ ավելին, ընդ որում ֆաշիստներն ստացան ձայների միայն 7—20 տոկոսը։ Նման իրավիճակ ստեղծվեց նաև 1935 թ., որը նացիստներին ստիպեց ընդհանրապես հրաժարվել «վստահելիների խորհուրդներ» ընտրելուց։ Երկրի տարբեր մասերում գործադուլներ և սաբոտաժի այլ գործողություններ էին տեղի ունենում արտադրության մեջ։ 1935 թ. միայն երեք ամսում ֆաշիստական իշխանությունները գրանցեցին 13 գործադուլ և աշխատանքը դադարեցնելու 39 այլ ձևեր։

Հաշվի առնելով այդ տրամադրությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ սոցիալ-դեմոկրատ բանվորների մեծամասնությունը, առանց ԳՍԴԿ-ի և ՀԱՄ-ի կենտրոնական ինստանցիաների սանկցիայի, պատրաստ չէր կոմունիստների հետ գործողությունների միասնության, ԳԿԿ Կենտկոմը բազմիցս (1933 թ. հունվարի 31-ին, մարտի 1-ին, մարտի 14-ին) դիմեց ԳՍԴԿ-ի և ռեֆորմիստական արհմիությունների ղեկավարությանը՝ համատեղ պայքարի կոչ անելով ընդդեմ ֆաշիստական դիկտատուրայի։ Սակայն ռեֆորմիստները շարունակում էին մերժել համագործակցությունը կոմկուսի հետ և հակաֆաշիստական ակտիվ պայքարը։ ԳՍԴԿ-ի ղեկավարությունը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ կուսակցությունը «հաստատակամորեն կանգնած է սահմանադրության և օրինականության հողի վրա» և գործելու է սոսկ սահմանադրական միջոցներով։ Ռեֆորմիստական պարագլուխները միաժամանակ քաղաքական նուրբ խաղ էին խաղում բանվոր դասակարգի արտապառլամենտական գործողություններ թույլ չտալու նպատակով։ Նրանք երդվում էին «բոլոր միջոցներով» պաշտպանել ժողովրդի քաղաքական ու սոցիալական իրավունքները, այդ նույն ժամանակ հավատացնելով, որ ընդհանուր գործադուլ հայտարարելը ավյալ պահին տակտիկապես բանական չէ և միայն «ուժերի անիմաստ ծախսում» կլինի։ Դրա հետևանքով ստեղծվում էր այն կեղծ տպավորությունը, թե ռեֆորմիստական ղեկավարությունը ֆաշիզմի դեմ պայքարի կողմնակից է և դրա համար ամեն ինչ պատրաստ է, մնում է միայն հարկավոր ժամին ազդանշան տալ։ Բանվորների զգալի մասը հավատում էր այդ հայտարարություններին։ Սպասողական տակտիկան, լեգալ օպոզիցիայի դերում հանդես գալու հնարավորության վերաբերյալ պատրանքները պահպանվեցին նաև այն ժամանակ, երբ Հիտլերն անցավ պրովոկացիաների և հակասահմանադրական գործողությունների։ Թեև սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան 1933 թ. մարտի 23-ին քվեարկեց Հիտլերին արտակարգ լիազորություններ տրամադրելու դեմ, նա չհանդգնեց մերկացնելու դրանց «սահմանադրական բնույթի» ֆաշիստական ֆարսը։ Ամեն կերպ փորձելով հաճոյանալ Հիտլերին, ԳՍԴԿ-ի աջ պարագլուխները հայտարարեցին II Ինտերնացիոնալից դուրս գալու մասին, սահմանազատվեցին արտասահման վտարանդված սոցիալ-դեմոկրատական ֆունկցիոներներից, ստեղծելով կուսակցության նոր վարչություն, որը լոյալ էր Հիտլերի հանդեպ։ Եվ նույնիսկ 1933 թ. մայիսի 17-ին (մայիսի 2-ին) արհմիությունների ջախջախումից հետո ռայխստագի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան հավանություն տվեց Հիտլերի կառավարության ռևանշիստական արտաքին-քաղաքական ծրագրին։ ԳՍԴԿ-ի և ՀԱՄ-ի ղեկավար ինստանցիաների դիրքը զգալիորեն թեթևացրեց ֆաշիստական կառավարության դրությունը, օբյեկտիվորեն նրան օգնեց օրհասական ժամանակաշրջանում իշխանության գլուխ մնալու։ Դրա հետևանքով բաց թողնվեց հակաֆաշիստական ուժերի միացյալ գործողություններով նացիստական ռեժիմը տապալելու հնարավորությունը, երբ այն դեռ բավարար չափով կայուն չէր։

Արևմտագերմանական բուրժուական պատմագրության մեջ տարածում է գտել այն տեսակետը, ըստ որը նացիզմին դիմադրություն ցույց տված գլխավոր և առավել արդյունավետ ուժը արտոնյալ խավերի ներկայացուցիչներն էին, գեներալիտետը, այդ թվում Հիտլերի մերձավոր օգնականները։ Իհարկե, իշխող դասակարգերի դիրքը անփոփոխ չէր մնում ֆաշիստական ռեժիմի 12 տարիների ընթացքում։ Այդ դիրքը նույնը չէր Հիտլերի իշխանության գլուխ անցնելու պահին և նրա արտաքին-քաղաքական ու ռազմական հաջողությունների տարիներին, ռազմական անհաջողությունների ու պարտությունների ժամանակաշրջանում։ Ջրբաժան գիծն անցնում էր նաև բուրժուազիայի՝ որպես դա-

սակարգի, ներսում, մտավորականության ներսում, որոնց մեջ Հիտլերի ֆանատիկոս կողմնակիցների հետ միասին կային և նրա հաշվենկատ համակրողներ ու հակառակորդներ։ Սակայն, ամբողջությամբ վերցրած, գերմանական բուրժուազիայի մեծ մասը պաշտպանում էր ֆաշիստական ռեժիմը, չնայած ժամանակ առ ժամանակ առաջացող տատանումներին ու դժգոհությանը։ Բացառություն չէր կազմում նաև եկեղեցական ընտրանու դիրքը, որն օրհնում էր հիտլերյան ռեժիմը և հավատացյալներին լոյալության կոչ անում։

Դեմոկրատորեն տրամադրված բուրժուական մտավորականության և լիբերալ շրջանների մեծ մասը չեղոքությամբ էր նայում «խռովարար դրքերի» նացիստական խարույկներին, սահմանադրական իրավունքների ու ազատությունների ոտնահարմանը, «գերմանական նոր մշակույթի» անվան տակ վանդալիզմի ու խավարամտության արմատավորմանը։ Նրանցից շատ քչերը հանդգնեցին բացահայտ բողոքելու. որոշակի մասը գերադասեց վտարանդիության դիմել, և վտարանդիներից միայն մի քանիսն էին արտասահմանում շարունակում պայքարը ֆաշիստական գաղանությունների դեմ։ Ընդհանուր առմամբ, բուրժուական օպոզիցիան փոքրաթիվ էր, անկազմակերպ, վարակված հակակոմունիզմով, և նրա դժգոհությունը, որպես կանոն, սալոնային խոսակցությունների շրջանակից այն կողմ չէր անցնում։

Առավել հակասական էր մանրբուրժուական զանգվածների՝ մանր արտադրողների, առևտրականների, արհեստավորների և մյուսների դիրքը, այն ուժերի, որոնք կազմում էին ֆաշիստական շարժման զանգվածային բազան և 1930—1933 թթ. նացիստական կուսակցության ընտրողների հիմնական կոնտինգենտն էին։ Նրանք ցնծում էին, երբ Հիտլերը նշանակվեց ռայխսկանցլեր։ Գրոհային ջոկատների թվաքանակը 1933—1934 թթ. ավելացավ 7 անգամ՝ մինչև 3 մլն մարդու։ Այդ ժամանակաշրջանում «Արհեստագործական միջին խավի մարտական միության» անդամները փորձեր էին ձեռնարկում ինքնակամ իրականացնելու ՆՍԴԱՊ-ի ծրագրային հայտարարությունները։ Սակայն այդ ինքնագործունեությունն անհապաղ առաջ բերեց հիտլերյան կառավարության եռանդուն հակամիջոցառումները, կառավարություն, որը մոնոպոլիստական կապիտալի պահանջով հանգեց եկավ տնտեսական կյանքին նման միջամտության դեմ։ «Մարտական միությունը» ցրվեց։ Գլխավորապես մանր բուրժուաներից, աշխատանքը կորցրած ծառայողներից, սնանկացած առևտրականներից և ուրիշներից բաղկացած գրոհային ջոկատների անդամների հիասթափությունն ու դժգոհությունը, ինչպես և միջին խավերի ընդհանուր ծանր դրությունը, «երկրորդ հեղափոխության» անհրաժեշտության պահանջները օգտագործեցին Հիտլերի նախկին գործակիցները (գրոհային ջոկատների շտաբի պետ է. Ռեմը և ուրիշներ), որոնք նրա կողմից ետին պլան էին մղվել։ Ռեմը հույս ուներ, ՍԱ-ի վրա հենվելով, ղեկավար դեր խաղալ զինված ուժերում։ Սակայն այդ հավակնությունները հանդիպեցին ռայխսվերի գեներալիտետի հակահարվածին։ Նրանց ճնշման տակ, ինչպես նաև մրցակիցներին վերացնելու և սեփական դիրքերն ամրապնդելու համար 1934 թ. հունիսի 30-ին Հիտլերը կազմակերպեց «երկար դանակների դիշերը», ոչնչացնելով իր մոտ 2 հազ. մրցակիցների ու հակառակորդների, այդ թվում նաև Ռեմին։ ՆՍԴԱՊ-ի ներսում օպոզիցիայի ճնշումը, տոտալիտար դիկտատուրայի մեխանիզմի գործողության ոլորտի ընդարձակումը, տնտեսական ու արտաքին-քաղաքական կարգի նպաստավոր հանգամանքների հետ միասին արագացնում էր ֆաշիստական ռեժիմի կոնսոլիդացիան։ Եվ չնայած հետագայում, հատկապես 1937—1938 թթ., բախումներ էին առաջանում ֆաշիստական Գերմանիայի կառավարող «վերնախավերում», դրանք, սակայն, սկզբունքային բնույթ չէին կրում, վերաբերում էին տակտիկական հարցերին, ամենից առաջ պատերազմիսանձազերծման ուղիների ու մեթոդների ընտրությանը։

Հիտլերյան ռեժիմի կոնսոլիդացումը և հակաֆաշիստական պայքարի նվազման տենդենցը Գերմանիայի պրոլետարական կուսակցություններում ուժեղացրեցին Վայմարյան հանրապետության կրախի և նացիստական դիկտատուրայի հաստատման պատճառների ու դասերի քննադատական վերլուծման պրոցեսը։ ԳԿԿ-ի և ԳՍԴԿ-ի 1934—1935 թթ. կատարած ստրատեգիական ու տակտիկական վերակողմնորոշումը նախադրյալներ ու պայմաններ էր ստեղծում հակաֆաշիստական շարժման նոր փուլի առաջացման համար։ Այդ պրոցեսն առավել հետևողականորեն ու հաջողությամբ էր անցնում կոմունիստական շարժման մեջ։ ԳԿԿ-ն Գերմանիայի միակ քաղաքական կուսակցությունն էր, որն անհաշտ պայքար հայտարարեց ֆաշիստական դիկտատուրային և բոլոր ուժերը նետեց այն տապալելու համար։ Կոմկուսի գործունեության վերակառուցումը տեղի էր ունենում ֆաշիստական սանձարձակ տեռորի ծանր պայմաններում։ Մինչև 1933 թ. հունիսի սկիզբը ԳԿԿ-ի 22 օկրուգային վարչություններից 17-ը բանտարկված էր. մինչև 1935 թ. կեսերը ԳԿԿ-ի ղեկավար ֆունկցիոներների կեսն ընկավ գեստապոյի ձեռքը։ Այդ պայմաններում ԳԿԿ-ի առաջատար պարագլուխների մի մասը (Վ. Պիկ, Ֆ. Դալեմ և ուրիշներ) վտարանդիության դիմեցին, ներգրավվելով միջազգային հակաֆաշիստական շարժման մեջ։ Գերմանիայի ներսում կազմվեց օպերատիվ ղեկավար կենտրոն, որի կազմի մեջ սկզբում մտան Վ. Ուլբրիխտը, Ի. Շեերը, Գ. Շուբերտը, Ֆ. Շուլտեն և ուրիշներ։ Հեշտ չէր մասսայական կուսակցությունը փոխադրել անլեգալ դրության։ Ստեղծվում էին ոչ մեծ խմբեր (3—5-ական մարդ), տարբեր ուղիներ էին որոնվում մասսաների հետ կապ պահպանելու համար։

Ոչ պակաս բարդ էր գաղափարական-քաղաքական վերակողմնորոշման պրոցեսը։ Անցյալի բեռը և պայքարի պայմաններն արգելակում էին նոր ստրատեգիայի ու տակտիկայի մշակմանը։ ԳԿԿ-ի ղեկավարության (քաղբյուրո) մեծ մասն ընդհուպ մինչև 1934 թ. վերջը—1935 թ. սկիզբը չկարողացավ ազատվել աղանդավորական ու դոգմատիկական հայացքներից։ Անտեսելով ֆաշիստական ռեժիմի կոնսոլիդացման փաստը և գերագնահատելով պայքարի իրական հնարավորությունները, Ֆ. Շուլտեն, Գ. Շուբերտը և մյուսները Հիտլերի իշխանության գլուխ անցնելը դիտում էին որպես ժամանակավոր նահանջ, հայտարարում մոտ ժամանակներում հեղափոխական նոր վերելքի անխուսափելիության մասին։ Նրանք մերժում էին մասնակի պահանջները և առաջադրում պրոլետարիատի դիկտատուրայի և սովետական Գերմանիայի համար պայքարի ընդհանուր ստրատեգիական հեղափոխական լոզունգներ։ Թերագնահատվում կամ ժխտվում էր կոմունիստների աշխատանքը ֆաշիստական կազմակերպություններում (ԴԱՃ և այլն)։

Աղանդավորական դիրքերի դեմ սկզբից ևեթ պայքար ծավալեց ԳԿԿ-ի մարքսիստական-լենինյան կորիզը, որը գլխավորում էին Վ. Պիկը և Վ. Ուլբրիխտը։ Ֆրանսիայում, Գերմանիայում և մյուս երկրներում մղվող հակաֆաշիստական պայքարի դասերը, Կոմինտերնի և ամենից առաջ Գ. Դիմիտրովի օգնությունը, որը Լայպցիգի դատավարությունում ցույց տվեց կոմկուսի քաղաքականության և մարքսիզմ-լենինիզմի պաշտպանության փայլուն օրինակներ, նպաստեցին ԳԿԿ-ի նոր ստրատեգիական ու տակտիկական շրջադարձի ավարտմանը։ 1935 թ. սկզբին ԳԿԿ քաղբյուրոյում առաջացավ մարքսիստական մեծամասնություն, որը սուր քննադատության ենթարկեց կուսակցության գոր-

քաղաքական ու սոցիալական կազմը։ Նրա ղեկավարների թվին էին պատկանում օբեր-լեյտենանտ Գ. Շուլցե-Բոյզենը, առաջադեմ մտավորական Ա. Խառնակը, կոմունիստներ Վ. Խուդեմանը, ԳԿԿ Կենտրոնական օրգան «Դի Ռոտե Ֆանեի» նախկին խմբագիր Վ. Գուդդրոֆը և ուրիշներ։ Խումբը հրատարակում էր սեփական թերթ, կապեր ուներ մտավորականության ու չինովնիկության շրջանում, հենակետեր՝ Բեռլինի շատ ձեռնարկություններում։ Պատերազմից առաջ Դիմադրության խմբեր առաջացան Հյուսիսային Գերմանիայում, Թյուրինգիայում (Պոզերի խումբը), Սաքսոնիայում (Գ. Շումանի խումբը) և այլն։ Դրանց ակտիվության մասին վկայում են, մասնավորապես, հակաֆաշիստական բնույթի մի քանի տպագիր հրատարակությունների մասսայական տպաքանակները։ 1936 թ., օրինակ, նացիստները բռնագրավեցին ավելի քան 200 հազ. անլեգալ գրքույկ և համանման բովանդակությամբ ավելի քան 1,4 մլն օրինակ այլ հրատարակություններ։ Պատերազմի նախօրյակին Գերմանիայի ներսում տեղ գտան հակաֆաշիստական մի քանի լուրջ գործողություններ, որոնց հիտլերականները պատասխանեցին տեռորի ուժեղացումով և մահապատիժը երիտասարդության վրա տարածելով։

Ֆաշիստական իշխանության կազմակերպչական- քաղաքական գործիքները

Սակայն հակաֆաշիստական Դիմադրությունը համազգային բնույթ չընդունեց։ Առաջին մեկուկես-երկու տարում, ֆաշիստական ռեժիմի մեխանիզմի ձևավորման և նրա կոնսոլիդացիայի սկզբի ժամանակաշրջանում դրան խանգարեց հակաֆաշիստական ուժերի պառակտվածությունը։ Հետագա տարիներին գործողության մեջ մտավ այն գործոնների նոր կոմպլեքսը, որոնք ապահովեցին հիտլերյան դիկտատուրայի հարաբերական կայունությունը՝ ռեժիմին ցույց տրված ամենափոքր դիմադրության անողոք ճնշումը, բնակչության գաղափարական ու քաղաքական մշակման նուրբ մեթոդները, ինչպես նաև ֆաշիստների սոցիալական մանևրումը։ «Գործազրկության վերացում» լոզունգը նացիստների ռեկլամային հաջողանկարն էր, և ամենևին էլ գերմանական ամեն մի բանվոր չէր, որ կարող էր անմիջապես հասկանալ կապը պատերազմի նախապատրաստության և աշխատանքով ապահովված լինելու միջև։ Նույնիսկ հարկադիր աշխատանք մտցրնելը շատերի կողմից ընկալվում էր որպես աշխատանք տրամադրելու ձև։ «Ժողովրդական ընդհանրության» և ֆաշիստական պետության վերդասակարգային բնույթի վերաբերյալ պատրանքների տարածմանը նպաստում էին «Ազգային աշխատանքի կարգավորման մասին» օրենքով հայտարարված «գործատուների և բանվորների իրավունքների ու պարտականությունների հավասարությունը», ինչպես նաև բարեգործական կազմակերպությունների սիստեմի ստեղծումը։ Ֆաշիստական պետության «սոցիալական» բնույթի վերաբերյալ պատկերացումներն արմատավորվում էին նաև ԴԱՃ-ի հովանու տակ ստեղծված «Ուժ՝ ուրախության միջոցով» կազմակերպության կողմից։ Նրա գործունեության ոլորտներն ու ձևերը չափազանց բազմազան էին՝ սիրողական ներկայացումների բեմադրությունից մինչև հանգստյան տների կառուցումն ու տուրիստական միջոցառումների կազմակերպումը։ Դրանք աչքի էին ընկնում մատչելիությամբ և համեմատաբար էժանությամբ, որը «Ուժ՝ ուրախության միջոցով»-ին թույլ էր տալիս զգալի չափով մենաշնորհի ենթարկել և նացիստների հսկողության տակ դնել ժողովրդի լայն խավերի ազատ ժամանակն ու հանգիստը։

Վճռականորեն կանխելով մանր բուրժուազիայի ոտնձգությունները խոշոր սեփականության նկատմամբ, ֆաշիստական իշխանությունները դրա հետ

մեկտեղ հաշվի էին առնում միջին խավերի նշանակությունը որպես «նացիոնալ-սոցիալիզմի» մասսայական բազայի, և իշխանության գլուխ անցնելով, մի շարք կիսամիջոցներ ձեռք առան նրանց իրենց հետ պահելու համար՝ ընդլայնվեցին վարկեր ու փոխառություններ ստանալու հնարավորությունները, օրենք հրապարակվեց մանրածախ առևտրի պաշտպանության մասին, միջոցառումներ ձեռնարկվեցին հանրախանութների «անազնիվ» մրցակցության սահմանափակման ուղղությամբ և այլն։ Գյուղական սեփականատերերի համար որոշ չափով թեթևացվում էր պարտքի վճարումը և սահմանափակվեցին հարկադիր վաճառքները պարտքերի դիմաց։ ՆՍԴԱՊ-ի անդամների զգալի մասը ստացավ «տաքուկ տեղեր» և այլ արտոնություններ ու ողորմություններ։ Միջին խավերի հարյուր հազարավոր ներկայացուցիչներ ուղղակի կամ անուղղակի շահ ունեին հակասեմիտիզմի քաղաքականությունից, հրեական ունեցվածքի թալանից։ Հետևաբար, թեև միջին խավերի դրությունը՝ որպես սոցիալական խավի, ամբողջությամբ վերցրած չէր բարելավվում, այլ, ընդհակառակը, վատանում էր, նրանց շատ ներկայացուցիչներ ամրապնդեցին իրենց դիրքերը և շահագրգռված էին գոյություն ունեցող ռեժիմի պահպանմամբ։

Սոցիալական մանևրումը լրացվում էր բնակչության բոլոր խավերի ու խմբերի գաղափարական ու քաղաքական մշակման խնամքով կազմված սիստեմով։ Ֆաշիստական պրոպագանդայի տեսական հիմքերն էին գեոպոլիտիկան և ռասայական տեսությունը, որոնք նացիստները բարձրացրել-հասցրել էին պետական քաղաքականության մակարդակին։ Ֆաշիստական գեոպոլիտիկայի հիմնադիր, Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Կ. Գաուսհոֆերը աշխարհագրական գործոնին (ամենից առաջ «կենսական տարածության») վճռական նշանակություն էր տալիս հասարակության զարգացման գործում և ճգնաժամերի ու գերմանական ժողովրդի այլ դժբախտությունների պատճառը փորձում էր գրեթե բացառապես հանգեցնել Գերմանիայի «գերբնակվածությանը»։ «Գերմանացիները ժողովուրդ են առանց տերիտորիայի» հայտարարությունը դարձավ ֆաշիստական պրոպագանդայի պաշտոնական նշանաբանը, որը կոչված էր գերմանական ժողովրդին ներշնչել «կենսական տարածության» ընդարձակման համար պատերազմի անխուսափելիության ու արդարացիության միտքը։ Գեոպոլիտիկան ուղղակիորեն առնչվում էր ռասայական տեսության հետ։ Եթե առաջինը ծառայում էր պատերազմի և ուրիշի տերիտորիաների զավթման գաղափարական նախապատրաստման նպատակներին, ապա ռասիզմը դարձավ ոչ արիական ժողովուրդների սարկացման ու ոչնչացման իրավական ու բարոյական «հիմնավորումը»։ ՆՍԴԱՊ-ի Նյուրնբերգում կայացած (1935 թ.) համագումարում ռասայական քաղաքականությունը հռչակվեց ֆաշիստական պետության պաշտոնական դոկտրինա, իսկ հետագայում դարձավ սկզբում հրեաների, ապա մյուս «ոչ արիական» ժողովուրդների նկատմամբ նրա պրակտիկ գործունեության կարևորագույն տարրը։ Մշակույթի և ինֆորմացիայի նացիստական ունիֆիկացումը, դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչների նկատմամբ կիրառվող բռնությունները, ինչպես և ֆաշիստական կրթության և դաստիարակության ընդհանուր հակահումանիստական բնույթը նպաստավոր հող էին ստեղծում ազգայնականության ու շովինիզմի համար։

Ֆաշիստական ռեժիմի հարաբերական կայունությունն ապահովվում էր տեռորի ու բռնության վիթխարի ապարատի, ինչպես և բնակչության պետական-քաղաքական կազմակերպման բարդ սիստեմի միջոցով։ ՆՍԴԱՊ-ին ենթակա մասսայական կազմակերպությունների ցանցը ֆաշիստական պետության գործիքն էր նրա տնտեսական ու քաղաքական նպատակների իրակա-

նացման ասպարեզում, իրենց ամբողջությամբ դրանք համընդգրկուն վերահսկողություն էին իրականացնում ազգի կյանքի նույնիսկ ամենամասնավոր բոլոր դրսևորումներում։ Այդ կազմակերպչական կառուցվածքի գլխավոր մեխանիզմն ինքը՝ ֆաշիստական կուսակցությունն էր։ 1937 թ. սկզբին պետական ու կոմունալ հիմնարկությունների բոլոր ղեկավարների 60 տոկոսից ավելին ՆՍԴԱՊ-ի անդամներ էին։ Կուսակցության մոտ 500 հազ. ֆունկցիոներներ (սկսած բլոկլյայտերներից՝ տան կամ մի խումբ տների համար պատասխանատուներից, մինչև ռայխսլյայտերները) իրենց հսկողության տակ էին պահում իշխանության վճռական լծակները։ Այդ նույն նպատակին էր ծառայում նաև վիթխարի բյուրոկրատական ապարատը. ֆաշիստական Գերմանիայի ծառայողների ու չինովնիկների թիվը 1933 թ. մինչև 1939 թ. աճեց ավելի քան կրկնակի անգամ և պատերազմի նախօրյակին կազմեց երկրի աշխատող բնակչության 18 տոկոսից ավելին։

Բնակչության նկատմամբ հսկողության լայն ճյուղավորված և խիստ կենտրոնացված սիստեմը գործնականորեն ընդգրկում էր յուրաքանչյուր մարդու։ Հատուկ ուշադրություն էր դարձվում երիտասարդությանը։ Դպրոցականները սկզբում մտնում էին «Յունգֆոլկ» նացիստական կազմակերպության մեջ, ապա ընդունվում «Հիտլերյուգենդ» կամ «Գերմանական աղջիկների միություն»։ Հետագայում նրանք ֆաշիստական մշակում էին անցնում աշխատանքային ճամբարներում, բանակում, ՍԱ և ՍՍ ջոկատներում, ԳԱՃ-ում և այլն։ Հիմարացման ֆաշիստական սիստեմը թույլ էր տալիս դաստիարակել ֆաշիստական ռեժիմին կուրորեն կողմնակից երիտասարդության ամբողջ սերունդ։

Ճնշման ու բռնության հիտլերյան մեքենայի անքակտելի մասն էին կազմում պետական անվտանգության գլխավոր կայսերական վարչությունը (նրա կազմի մեջ մտնում էր պետական գաղտնի ոստիկանությունը՝ գեստապոն), ինչպես նաև ՍԱ, ՍՍ ջոկատները և համակենտրոնացման ճամբարները։ Ամբողջ Գերմանիան ծածկված էր գաղտնի ոստիկանության բաժանմունքների ցանցով, վերածվել էր տոտալ լրտեսության ամենուրեք թափանցող սիստեմի։ Դեռ մինչև պատերազմը սկսվելը ստեղծվեցին Բուխենվալդի, Դախաուի, Ռավենսբրյուկի, Մաուտհաուզենի, Ֆլոսենբուրգի, Զակսենհաուզենի համակենտրոնացման ճամբարները. ֆաշիզմի 12 տարիների ընթացքում ճամբարների միջով անցել է մոտ 18 մլն մարդ (գերմանացիներ և օտարերկրյա քաղաքացիներ. 11 միլիոնը սպանվել են), տեղի է ունեցել հակաֆաշիստների 86 մասսայական դատավարություն։ Ֆաշիստական ռեժիմի այդ բոլոր հրեշավոր գործիքները հիտլերյան տոտալիտար դիկտատուրային օգնում էին ճնշելու իրեն ցույց տրվող դիմադրությունը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծումը ֆաշիստական Գերմանիայի կողմից

Ռազմաարդյունաբերական պոտենցիալի վերականգնման և Գերմանիայի միջազգային դիրքերի ամրապնդման համեմատ նրա կառավարող շրջանները քայլառքայլ զիջումներ էին ձեռք բերում հաղթող տերություններից։ Ռեպարացիոն վճարումների կրճատումը, ապա և լիակատար վերացումը, Հռենոսի մարզից զորքերի ժամկետից շուտ դուրս բերումը, Գերմանիայի նկատմամբ վերահսկողության վերացումը վկայում էին կապիտալիստական աշխարհում ուժերի հարաբերակցության փոփոխման մասին, արտահայտում էին ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի կառավարող շրջանների ձգտումն ընդառաջ գնալու գերմանական մոնոպոլիստական կապիտալի շահերին։

Ֆաշիստական դիկտատուրայի հաստատումից հետո Վերսալի լիակատար

վերանայման, Եվրոպայում և ամբողջ աշխարհում գերմանական հեգեմոնիայի հաստատման լոզունգը դառնում էր ֆաշիստական Գերմանիայի արտաքին քաղաքականության գլխավոր գիծը։ Արդեն 1933 թ. հոկտեմբերին Գերմանիան լքեց զինաթափման կոնֆերանսը և հայտարարեց Ազգերի լիգայից դուրս գալու մասին, որը ֆաշիստների կողմից միջազգային պարտավորությունների բացահայտ անտեսում եղավ։ Անսահմանափակ ռազմականացման և պատերազմի նախապատրաստության՝ Գերմանիայի վերցրած կուրսի մասին էին վկայում ընդհանուր զինծառայություն մտցնելը, հզոր զինված ուժեր ստեղծելը, Լոկարնոյի համաձայնագրերից հրաժարվելը և նման բնույթի այլ գործողություններ։ Ֆաշիստական արտաքին քաղաքականության նպատակներն ապահովող տակտիկատրատեգիական կարևորագույն միջոցը՝ Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության սիստեմի ստեղծման սաբոտաժն էր։ Բազմակողմանի ռեգիոնալ համաձայնագրերի փոխարեն ֆաշիստական դիվանագիտությունը եվրոպական պետությունների վզին փաթաթում էր երկկողմանի պայմանագրեր, ջանալով մեկուսացնել ագրեսիայի զոհերին, նրանց մարտունակությունը ներսից քայքայել «հինգերորդ զորասյուներ» ստեղծելու միջոցով։ Միաժամանակ Գերմանիան դարձավ «Հակակոմինտերնական պակտի»՝ Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմը բռնությամբ վերացնելու ձգտող ագրեսիվ պետությունների (Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա) այդ բլոկի ստեղծման նախաձեռնողը։ Հենվելով Եոյակ դաշինքի վրա և օգտագործելով արևմտյան տերությունների վարած «չմիջամտելու» և թողտվության քաղաքականությունը, ֆաշիստական Գերմանիան 1938 թ. մարտին ագրեսիա սկսեց Ավստրիայի դեմ։ Օգտագործելով ֆաշիստական «հինգերորդ զորասյունը» և Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի կառավարող շրջանների հակասովետական մտադրությունները, Հիտլերը Մյունխենի կոնֆերանսում հասավ Սուդետյան մարզի միացմանը Գերմանիային, զավթելով Կլայպեդան (1939 թ.), նա ամրապնդեց Գերմանիայի դիրքերը Բալթիկ ծովում։

Այսպիսով, 1938—1939 թթ. Եվրոպայում տեղի ունեցավ ուժերի հարաբերակցության էական փոփոխություն։ Ավստրիայի, Սուդետների և Կլայպեդայի մարզի զավթման հետևանքով գերմանական իմպերիալիզմը ստեղծեց ռազմատնտեսական հզոր պոտենցիալ, զգալիորեն ընդարձակեց իր ֆինանսական և հումքային ռեսուրսները։ Գերմանիային անցան Ավստրիայի ոսկու պաշարը և արտասահմանում գտնվող ավստրիական ակտիվների զգալի մասը, նրա առևտրական կապերը, որի հետևանքով ամրապնդվեցին Գերմանիայի տնտեսական ու քաղաքական դիրքերը Հարավ-Արևելյան Եվրոպայում։ 1938 թ. Գերմանիան արդյունաբերական արտադրությամբ դուրս եկավ առաջին տեղը Եվրոպայում և երկրորդ տեղը աշխարհում (ԱՄՆ-ից հետո), երրորդ տեղը գրավեց համաշխարհային առևտրում։ Նախապատերազմյան վեց տարվա ընթացքում նրա տեսակարար կշիռը համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ ավելացավ 1932 թ. 8,3 տոկոսից մինչև 13,3 տոկոսի՝ 1939 թ., իսկ Ավստրիայի ու Չեխոսլովակիայի հետ միասին՝ մինչև 15 տոկոսի։ Ջուգունի և պողպատի արտադրությամբ Գերմանիան անցավ Անգլիայից ու Ֆրանսիայից միասին վերցրած, ալյումինի արտադրությամբ գրավեց երկրորդ տեղը աշխարհում, ածխի հանույթով՝ երրորդ տեղը։ Ֆաշիստական դիկտատուրայի տարիներին զգալիորեն աճեց Գերմանիայի ռազմական հզորությունը. 1935 թ. մինչև 1939 թ. Գերմանիայում պատրաստվեց մոտ 5,5 մլն զինվոր, մշակվեց հզոր ռազմածովային նավատորմի շինարարության ծրագիր։

Եվ այսպես, կապիտալիստական զարգացման անհավասարաչափության

օրենքի գործողության հետևանքով 30-ական թվականների վերջին ուժերի հարաբերակցությունը կապիտալիստական աշխարհում փոխվեց։ Գերմանիան հանդես եկավ որպես ուժերի նոր հարաբերակցությանը համապատասխան ազդեցության ոլորտների, հումքի աղբյուրների ու վաճառահանման շուկաների վերաբաժանման նախաձեռնող։ Հենվելով մոգեռնացված հզոր արդյունաբերության վրա, գերմանական մոնոպոլիաները սկսեցին նեղել իրենց իմպերիալիստական մրցակիցներին։ «ԻԳ Ֆարբենինդուստրիի», Կրուպպի՝ «Արտադրված է Գերմանիայում» գրոշմանիշով արտադրանքը կարելի էր հանդիպել ամբողջ աշխարհի շուկաներում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Գերմանիայի ապրանքափոխանակությունը Հարավ-Արևելյան Եվրոպայի երկրների հետ ավելացավ 3 անգամ, մեծացավ Գերմանիայի տեսակարար կշիռը Լատինական Ամերիկայի հետ կատարվող առևտրում։ Չինաստանում կատարված կապիտալ ներդրումների չափերով Գերմանիան գտնվում էր (1937 թ.) երրորդ տեղում (Ճապոնիայից ու Անգլիայից հետո)։ Արտաքին առևտրում լայնորեն օգտագործելով կլիրինգային (անկանխիկ) վճարումների սիստեմը, Գերմանիան իր պարտնյորներին (հատկապես Հարավ-Արևելյան Եվրոպայի պետություններին) վերածում էր հումքային կցորդի՝ ստրկացնում տնտեսապես, ապա և քաղաքականապես։

1937 թ. տնտեսական ճգնաժամը (իր էկոնոմիկան ռազմական ռելսերի վրա դրած Գերմանիայում շարունակվում էր վերելքը) խիստ սրեց միջիմպերիալիստական հակասությունները և մրցակցային պայքարը համաշխարհային շուկաներում։ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կառավարությունները շտապ միջոցներ ձեռք առան իրենց շուկաները գերմանական մրցակցությունից պաշտպանելու համար։ Դրա հետևանքով գերմանական արտահանությունը զգալիորեն կրճատվեց (դեպի Ֆրանսիա՝ 33 տոկոսով, Անգլիա՝ 24 տոկոսով և այլն). ամբողջությամբ վերցրած 1938 թ. այն նվազեց ավելի քան 500 մլն մարկով։ Գերմանիայի արտահանության հնարավորությունները սահմանափակվում էին նաև վիթխարի ռազմական ծախսերով, արդյունաբերությունը ռազմական ռելսերի վրա փոխադրելով և սպառողական ապրանքների արտադրության կրճատումով։ Գերմանական առևտրական պարտնյորների աչքում իրեն ավելի ու ավելի էր վարկաբեկում նաև կլիրինգի սիստեմը. Գերմանիան ոչինչ չուներ հումքի անընդհատ ավելացող ներմուծման համար վճարելու։ Միջոցները չէին բավարարում նաև սպառազինությունների հետագա ֆինանսավորման համար, չնայած հարկերի ավելի քան կրկնակի ավելացմանը։ Գերմանիայի ոսկու պաշարները լիովին սպառվեցին։ Նման պայմաններում Գերմանիան չէր կարող դիմանալ համաշխարհային շուկաներում երկարատև մրցակցային պայքարին և ազդեցության ոլորտների վերաբաշխման միակ միջոցը տեսնում էր պատերազմի մեջ։ Բնութագրելով Գերմանիայի դրությունը, Բեռլինում անգլիական դեսպանը 1939 թ. մայիսին գրում էր. «Արդյոք նա (Գերմանիան) կարո՞ղ է ևս մեկ ձմեռ անցկացնել առանց կրախի։ Իսկ եթե ոչ, ապա Հիտլերն արդյոք պատերազմը չի՞ գերադասի այդ կրախին»։ Գերմանիայի միջազգային դիրքերի թուլացման, երկրի ներսում տնտեսական ու քաղաքական դրության սրման պայմաններում պատերազմը դիտվում էր որպես «կենսական տարածության» նվաճման և ֆաշիստական ռեժիմի կայունացման միակ ուղի։

Որոշելով ագրեսիայի ժամանակի և ուղղության հարցը, ֆաշիստական կառավարությունը հաշվի էր առնում ինչպես Գերմանիայի և մյուս իմպերիալիստական պետությունների միջև գոյություն ունեցող հակասությունների սրությունը, այնպես էլ վերջիններիս փորձերը Գերմանիային պատերազմի հրահրելու ընդդեմ ՍՍՀՄ-ի, հույսեր փայփայելով նրանց փոխադարձ թուլացման մասին. նա հաշվի էր առնում նաև Սովետական Միության հզորությունը։ Այս բոլորը պայմանավորում էր պատերազմի սանձազերծման պլանները՝ սկզբում Եվրոպական մայրցամաքի թշնամի կապիտալիստական պետությունների ջախջախում, ապա և արշավ դեպի Արևելք։ 1938—1939 թթ. ավարտվեց ֆաշիստական Գերմանիայի կենտրոնական ապարատի վերակառուցումը պատերազմի սանձազերծմանն անմիջականորեն նախապատրաստվելու նպատակով, ուժեղացվեց պետական իշխանության մարմինների կենտրոնացումը. առաջատար հիմնարկությունների (ռազմական էկոնոմիկայի, արտաքին գործերի, վերմախտի) գլուխ կանգնեցվեցին Հիտլերի ագրեսիվ քաղաքականության առավել հետևողական կողմնակիցները, հեռացվեցին այսպես կոչված վերնախավային օպոզիցիայի ներկայացուցիչները, որոնք սկզբունքորեն համաձայն լինելով Գերմանիայի կողմից նոր համաշխարհային պատերազմի սանձազերծման անխուսափելիությանը, անհրաժեշտ էին համարում ավելի խնամքով պատրաստվել դրան։

Ավարտելով նախամոբիլիզացիոն միջոցառումները, ֆաշիստական կառավարությունը ջանում էր միաժամանակ արագացնել ագրեսիվ պետությունների ռազմաքաղաքական բլոկի հետագա կոնսոլիդացումը, «Հակակոմինտերնական պակտը» վերածել ինչպես ՍՍՀՄ-ի, այնպես էլ Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ ուղղված եռակողմ ռազմական դաշինքի։ 1939 թ. մայիսին Բեռլինում ձևակերպվեց ռազմական դաշինքը՝ ստորագրվեց «Իտալիայի ու Գերմանիայի միջև դաշինքի ու բարեկամության վերաբերյալ պակտը» («Պողպատե պակտը»)։ Թեև մինչև 1940 թ. սեպտեմբերը Գերմանիան ռազմական համաձայնագիր չուներ Ճապոնիայի հետ, գերմանա-իտալա-ճապոնական եռյակ դաշինքը իրականություն էր, այն ժամանակ երբ հակադիր լագերը դեռ միայն սկսում էր էկոնոմիկայի նախապատերազմական պատրաստությունը և հակագերմանական կոալիցիայի ձևավորումը։ 1939 թ. սեպտեմբերի 1-ին հարձակվելով Լեհաստանի վրա, ֆաշիստական Գերմանիան սանձազերծեց երկրորդ համաշխարհային պատերազմը։

Ֆաշիստական դիկտատուրայի հաստատման պատճառների լուսաբանումը պատմագրության մեջ

Ֆաշիզմի էության և Գերմանիայում ֆաշիստական դիկտատուրայի հաստատման պատճառների մարքսիստական գնահատականը տրվել է դեռևս 30-ական թվականներին Կոմունիստական ինտերնացիոնալի փաստաթղթերում, հետագայում հիմնավորվել է սովետական պատմական գրականության[21] և գերմանական մարքսիստական պատմագրության մեջ[22]։ ԿԻԳԿ XIII պլենումի (1933 թ.) և Կոմինտերնի VII կոնգրեսի որոշումներում նշվում էր, որ ֆաշիզմն իրենից ներկայացնում է «ֆինանսական կապիտալի առավել ռեակցիոն, առավել շովինիստական և առավել իմպերիալիստական տարրերի» բացահայտ տեռորիստական դիկտատուրա։

Ընդգծելով ֆաշիստական դիկտատուրայի տարբերությունը ռեակցիոն ռեժիմների այլ ձևերից, ԿԻԳԿ XIII պլենումը նշում էր, որ «ֆաշիզմը փորձում է

---

21 Տե՛ս **А. А. Галкин**. Германский фашизм. М., 1966; **Г. Л. Розанов**. Германия под властью фашизма. М., 1961; **Л. И. Гинцберг**. На пути в имперскую канцелярию. Германский фашизм рвется к власти. М., 1972.

22 Տե՛ս "Geschichte der deutschen Arbeiterbewegung". Bd. V. B., 1966.

մանը բուրժուազիայի շրջանում մասսայական բազիս ապահովել մոնոպոլիստական կապիտալի համար, դիմելով հալից ընկած գյուղացիությանը, արհեստավորներին, ծառայողներին և, մասնավորապես, խոշոր քաղաքների ապադասակարգայնացված տարրերին, ջանալով թափանցել նաև բանվոր դասակարգի մեջ»[23]։ Մարքսիստական պատմագրության մեջ, Կոմինտերնի որոշումներում և կոմունիստական կուսակցությունների փաստաթղթերում բնութագրված են նաև այն պայմանները, որոնք ապահովեցին ֆաշիստական շարժման հաջողությունը Գերմանիայում։ Կոնյունկտուրային բնույթ ունեցող հանգամանքների (տնտեսական ճգնաժամ) և առաջին համաշխարհային պատերազմում պարտված Գերմանիայի առանձնահատուկ դրության հետ մեկտեղ, որոնք սնունդ էին տալիս ազգայնական տրամադրություններին, որ ճարպկորեն օգտագործվեցին նացիստների կողմից մասսաների մշակման համար, նշվում են նաև ԳՍԴԿ-ի և ՀԱՄ-ի ռեֆորմիստական ղեկավարության քաղաքականության կործանարար հետևանքները։ Հրաժարվելով սոցիալիստական հեղափոխությունից և աշխատավորների շահերի պաշտպանությունից, նրանք նպաստեցին Վայմարյան հանրապետության վարկաբեկմանը լայն մասսաների աչքում, ռեֆորմիզմից նրանց հիասթափվելուն։ Ֆաշիզմի դեմ պայքարի արդյունավետ ձևերի անտեսումը, մասնավորապես ԳԿԿ-ի հետ համագործակցությունից հրաժարվելը պայմանավորեց հակաֆաշիստական ուժերի պառակտումը, ծայրահեղ իմպերիալիստական տարրերի համար հեշտացրեց տեռորիստական դիկտատուրայի հաստատումը։

Բուրժուական և մասամբ ռեֆորմիստական պատմագրության մեջ ժխտվում է ֆաշիզմի դասակարգային էության մարքսիստական բնորոշումը և գերմանական ֆինանսական կապիտալի պատասխանատվությունը Հիտլերի իշխանության գլուխ անցնելու համար։ Մարքսիստ պատմաբաններին, որոնք ուշադրությունը կենտրոնացնում են ֆաշիզմի ամենից առաջ սոցիալ-տնտեսական վերլուծության վրա, մեղադրելով պատմական հայացքների «նեղության» մեջ, բուրժուական պատմաբանները այդուհանդերձ կամ ընդհանրապես հրաժարվում են ֆաշիզմի նկատմամբ տարբեր դասակարգերի ու սոցիալական խմբերի ունեցած վերաբերմունքի ուսումնասիրումից, կամ էլ սահմանափակվում առանձին անձանց գործողությունների նկարագրությամբ և բուրժուազիայի մի քանի ներկայացուցիչների մեղքն ընդունելով։ Նույնիսկ Գ. Հալգարտենը[24], որը ֆաշիստական դիկտատուրայի հաստատումից հետո վտարանդվել էր Գերմանիայից, ֆաշիստական շարժման հետ Ստիննեսի և մյուս մոնոպոլիստների ունեցած սերտ կապերի համողիչ ապացույցներ բերելով, հայտարարում է այդ պրոբլեմից մինչև վերջ գլուխ հանելու անհնարինության մասին։ Ավելին, բուրժուական որոշ պատմաբաններ փորձում են պնդել, թե իբր ֆաշիզմի հաղթանակը հնարավոր դարձավ ոչ թե պահպանողական ուժերի հետ նրա դաշինքի շնորհիվ, այլ Նոյեմբերյան հեղափոխությունից հետո վերջիններիս թուլացման հետևանքով, և միապետության մեջ տեսնում են ֆաշիստական դիկտատուրայի ալտերնատիվը[25]։

[23] «XIII Пленум ИККИ. Тезисы и постановления». М., 1934, էջ 6—7։

[24] Տե՛ս G. Hallgarten. Hitler, Reichswehr und Industrie. Frankfurt-am-Main, 1955։

[25] Տե՛ս F. Glum. Der Nationalsozialismus. Werden und Vergehen. München, 1962. H. J. Schoeps. Unbeweltigte Geschichte. Stationen deutschen Schicksals seit 1763, B., 1964; W. Görlirz. Adolf Hitler. Göttingen, 1960։

Իսկ ի՞նչ ուժերի վրա է բուրժուական պատմագրությունը դնում Գերմանիայում ֆաշիստական դիկտատուրայի հաստատման պատասխանատվությունը։

Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվելուց հետո, առաջին տարիներին բուրժուական պատմական գրականության և հրապարակախոսության մեջ ֆաշիստական շարժման հաջողությունները բացատրվում էին «գերմանական ազգի ճակատագրի փոփոխականությամբ» և առանձնահատուկ «ազգային ոգով». լայն տարածում գտավ ֆաշիզմի հանցագործությունների համար գերմանական ժողովրդի «կոլեկտիվ մեղավորության» տեսակետը։ Ֆ. Մայնեկեն պնդում էր, որ ֆաշիզմի ակունքները գտնվում են «գերմանացի մարդու հոգևոր բնության մեջ եղած ռացիոնալ և իռացիոնալ սկզբունքների» միջև տեղ գտած կոնֆլիկտում։ «Պատմական պատահականությունների» մի ամբողջ սերիայի հետևանքով, գրում էր Ֆ. Մայնեկեն, այդ կոնֆլիկտը մակերես է դուրս եկել և ֆաշիստական դիկտատուրայի ձև ընդունել Հիտլերի «ամեն բան վճռող դիվային անձի» գլխավորությամբ[26]։

50-ական թվականներին՝ «սառը պատերազմի» ժամանակաշրջանում, «մեղավորների» և «մեղքի» հարցի դրվածքը տարբերակվում էր երկու առաջատար պատմագրական տեսակետներում. որոշ պատմաբաններ ֆաշիստական դիկտատուրայի հաստատման վճռական նախադրյալները հանգեցնում էին Հիտլերի «դիվային անձին», մյուսները գլխավոր պատասխանատվությունը դնում էին լայն մասսաների վրա («մասսաների դարի» տեսակետ)։ «Մեկ մարդը,— գրում էր Գ. Ռիտտերը,— կարողացավ Եվրոպան ահավոր աղետի հասցնել..., միայն իր կամքի ուժով նա տառացիորեն ամբողջ աշխարհը բոցերի մեջ նետեց»[27]։ Նման դատողությունները օբյեկտիվորեն (հաճախ նաև սուբյեկտիվորեն) հետապնդում էին գերմանական ֆինանսական օլիգարխիայի արդարացման նպատակ և կեղծում Հիտլերի իշխանության գլուխ անցնելու իսկական հանգամանքներն ու պատճառները։ Հենց նույն քաղաքական նշանակությունն ուներ նաև երկրորդ վերսիան։ Ելնելով հասարակական զարգացման մեջ ժողովրդական զանգվածների խաղացած դերի աճի իրապես գոյություն ունեցող տենդենցից, այդ տեսակետի ներկայացուցիչները (Կ. Միշ, Հ. Ֆրեյեր, Վ. Կոնցե և ուրիշներ)[28] փորձում են «ներքնախավերի» քաղաքական ակտիվության բարձրացումը ներկայացնել որպես կույր, տարերային ուժի ներխուժում պատմական պրոցեսի մեջ, որի հետևանքը եղավ «տոտալիտար» ռեժիմների հաստատումը։ «Տոտալիտարային» շարժումը բնութագրվում է որպես «դեմոկրատական դարի» ծնունդ[29]։ ԳՖՀ-ի ժամանակակից բուր-

[26] Տե՛ս F. Meinecke. Die deutsche Katastrophe, Wiesbaden, 1946, S. 89։

[27] G. Ritter. Geschichte als Bildungsmacht. Stuttgart, 1949, S. 16։

[28] Տե՛ս K. Misch. Deutsche Geschichte im Zeitalter der Massen von frazösischen Revolution bis zum Gegenwart. Stuttgart, 1952: H. Freyer. Theorie des gegenwärtigen Zeitalter. Stuttgart, 1956; W. Konze. Die Strukturgeschichte des technischindustriellen Zeitalter als Aufgabe für Forschung und Unterricht. Köln-Opladen, 1957; K. D. Bracher, W. Sauer, G. Schulz. Die nationalsozialistische Machtergreifung. Köln, 1960։

[29] K.-D. Bracher. Deutschland zwischen Demokratie und Dictatur. München, 1964, S. 146։

ժուական մի քանի պատմաբանների ուսումնասիրություններում «մասսաների դարի» և ֆաշիստական շարժման հաջողություններում Հիտլերի անձի խաղացած բացառիկ դերի տեսակետներն ըստ էության շաղկապվեցին, և ինքը՝ Հիտլերը, ներկայացված է որպես «մասսաների դարի» արդյունք, իսկ ֆաշիստական գաղափարախոսությունը՝ որպես «մասսաների հակադեմոկրատական պոտենցիայի» իրացում։ Ֆրանց-Վիլինգն, օրինակ, ֆաշիզմը դիտում է որպես «ժամանակակից մասսայական շարժում», որը սերտորեն կապված է Հիտլերի հետ, որը կյանքի է կոչվել, ստեղծվել, ձևավորվել է մասսաների կողմից. «նա եկավ որպես պրոլետար, որպես անանուն ճակատային, որպես ժողովրդի մարդ, արտահայտելով նրա ձգտումներն ու հույսերը»[30]։ Նման դատողությունների վրա է կառուցվում բուրժուական պատմագրության մեջ տարածված վերսիան ֆաշիզմի և սոցիալիզմի «նույնության» և «տոտալիտարիզմի» երկու տարբերաևների գոյության մասին։ Դրանք էլ հանդիսանում են ԳԿԿ-ի մասին հերյուրանքների և ֆաշիստական շարժմանը «նպաստելու» մեջ նրան մեղադրելու «տեսական հիմքը»։ Ձախից եկող հեղափոխությունը նախապատրաստեց աջից եկող հեղափոխությունը»,— գրում է Կ. Միլկեն[31]։

ԳՖՀ-ի բուրժուական և ռեֆորմիստական պատմագրության մեջ լայն տարածում է գտել ռեֆորմիստ պատմաբան Ա. Ռոզենբերգի[32] առաջին անգամ ձևակերպած տեսակետը Վայմարյան հանրապետության կործանման ճակատագրական կանխորոշվածության մասին։ Վայմարյան հանրապետության «քայքայման» պատճառները նրանք որոնում են նրա ծագման փուլում։ Ընդ որում բուրժուական պատմաբանները (Թ. Էշենբուրգը[33] և մյուսները) ընդգծում են գերմանական բուրժուազիայի (ինչպես և ԳՍԴԿ-ի) անպատասխանատվությունը բուրժուադեմոկրատական վերափոխություններին, հայտարարելով, որ անգլո-սաքսոնական քաղաքական սիստեմը խորթ է գերմանական ժողովրդի ավանդույթներին ու ոգուն։ Վայմարյան հանրապետությունը շտապ «իմպրովիզացվեց» 1918—1919 թթ. արտաքին հանգամանքների ճնշման տակ, փոխառնելով Գերմանիայի համար ոչ պիտանի պետական նմուշներ, որն էլ պայմանավորեց նրա անկայունությունը և հետագա անկումը։ Նեոցենտրիստական ուղղության ռեֆորմիստական պատմաբանները (Գ. Կոլբ, Պ. Երտցեն, Ե. Մատիաս) Ա. Ռոզենբերգի օրինակով Վայմարյան հանրապետության ի սկզբանե թուլության պատճառները տեսնում են սոցիալական վերափոխությունների անավարտվածության և պետության մեջ բանվոր դասակարգի ոչ լիովին «ինտեգրացման» մեջ, որոնք ամենից առաջ սովետների սիստեմը որպես լիիրավ ինստիտուտ պետական մեխանիզմի մեջ մտցնելուց հրաժարվելու հետևանք էին[34]։ Նոյեմբերյան հեղափոխության չօգտագործված հնարավորությունների պատասխանատվությունը նրանք դնում են ամենից առաջ ԳՍԴԿ-ի աջ ղեկավարության վրա, որը գերադասեց բլոկն ու կոմպրոմիսը հին ռեժիմի ուժերի հետ։ Աջ ռեֆորմիստական պատմաբանները, հանդես գալով «չարյաց փոքրագույնի» քաղաքականության դիրքերից, ընդհակառակը, ԳՍԴԿ-ին և արհմիություններին մեղադրում են «դասակարգային սահմանափակվածության» և նույնիսկ պրոլետարական շահերով «կուրանալու» մեջ, որն իբր 1930 թ. խանգարեց «հանուն Վայմարյան հանրապետության պահպանման» «մեծ կոալիցիան» իշխանության գլուխ պահելու գործին[35]։ Գրեթե նույնանման՝ Վայմարյան հանրապետության հանդեպ «ոչ կոնստրուկտիվ օպոզիցիայի մեջ լինելու», մեղադրանքներ են ուղղվում նաև ԳԿԿ-ի հասցեին։

---

[30] Տե՛ս G. Franz-Willing. Die Hitlerbewegung. Der Ursprung. 1919—1922. Hamburg-Berlin, 1962, S. 236—237։

[31] K. Mielcke. Geschichte der Weimarer Republik. Braunschweig. 1951, S. 15.

[32] Տե՛ս A. Rosenberg. Entstehung und Geschichte der Veimarer Republik. Frankfurt-am-Main, 1955։

[33] Տե՛ս Th. Eschenburg. Die Inprovisierte Demokratie der Weimarer Republik-Schloss-Layphein, 1954! F. Friedensburg. Die Weimarer Republik. Hannover, 1957։

[34] Տե՛ս G. Kolb. Die Arbeiterräte in der deutschen Innenpolitik 1918—1919. Düsseldorf, 1962; P. V. Oertzen. Betriebsräte in der Novemberrevolution, Düsseldorf, 1963։

[35] H. Timm. Die deutsche Sozialpolitik und der Bruch der grossen Koalition im März 1930. Düsseldorf, 1952.

ԳԼՈՒԽ 6

ԱՆԳԼԻԱՆ 1918—1939 ԹԹ.

ԱՆԳԼԻԱՆ 1918—1923 ԹԹ.

Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքներն Անգլիայի համար

Պատերազմի հետևանքով Անգլիային հաջողվեց Գերմանիային, որպես հիմնական մրցակցի, ժամանակավորապես դուրս մղել համաշխարհային շուկաներից, գաղութներից և ծովից։ Նա զավթեց 2619 հազ. կմ² գաղութային նոր տիրույթներ՝ 9 մլն բնակչությամբ։ Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ Բրիտանական կայսրությունն ընդգրկում էր երկրագնդի ցամաքի քառորդ մասը (34,7 մլն կմ²) և աշխարհի բնակչության քառորդ մասը (525 մլն մարդ, այդ թվում դոմինիոնները՝ 33 մլն, գաղութները՝ 467 մլն, ենթամանդատային և կախյալ տերիտորիաները՝ 25 մլն)։ Մետրոպոլիայի տարածությունը 140 անգամ փոքր էր գաղութների տարածությունից, իսկ մետրոպոլիայի ամեն բնակչին ընկնում էր գաղութների 10 բնակիչ։

1914—1918 թթ. ռազմական և նրա հետ կապված ճյուղերում, որոնց տեսակարար կշիռն արդյունաբերության մեջ խիստ աճեց, կառավարական պատվերներն ապահովում էին արտադրության և զբաղվածության բարձր մակարդակը։ Անգլիական մոնոպոլիաները վիթխարի շահույթներ էին ստանում։ Կառավարությունը վերահսկում էր արդյունաբերության ու տրանսպորտի բոլոր կարևորագույն ճյուղերը։ Կապերն ուժեղացնելով պետական ապարատի հետ, մոնոպոլիստական կապիտալը 1916 թ. ստեղծեց իր հզոր կենտրոնը՝ Բրիտանական արդյունաբերության ֆեդերացիան, ուր մտնում էին 18 հազ. ֆիրմաներ, որոնք ունեին 5 մլրդ ֆունտ ստերլինգ ընդհանուր կապիտալ։ Այդ տարիներին գործազրկությունն Անգլիայում նվազեց մինչև ծայրահեղ աննշան չափերի։ Աջ տրեդյունիոնիստական և լեյբորիստական պարագլուխների օգնությամբ անգլիական բուրժուազիային հաջողվեց հասնել գործադուլային շարժման խիստ նվազմանը։ Այդ նույն ժամանակ ուժեղացավ արդյունաբերության բանվորների, այդ թվում նաև պատերազմի ժամանակ այնտեղ ներգրավված մեծ թվով կանանց ու երեխաների շահագործումը։ Բայց առաջին համաշխարհային պատերազմում Անգլիայի տարած հաղթանակը զգալիորեն «Պյուռոսի հաղթանակ» էր։ Անգլիան, ինչպես և ամբողջ կապիտալիստական աշխարհը, ընկավ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի աքցանը։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հետևանքով Ռուսաստանի դուրս գալը իմպերիալիզմի ազդեցության ոլորտից Անգլիայի համար նշանակում էր նաև իրացման ընդարձակ շուկայի, էժան հումքի տարողունակ ռեզերվուարի և կապիտալի ներդրման կարևոր ոլորտի կորուստ։ Կապիտալիզմի զարգացման անհավասարաչափության ուժեղացումը ևս մեկ ծանր հարված հասցրեց նրան։ Տարեցտարի աճում էր ամերիկյան ու ճապոնական ապրանքների մրցակցությունը աշխարհի շուկաներում։ ԱՄՆ-ի վարկատուից Անգլիան վերածվեց նրա պարտապանի (ԱՄՆ-ին ունեցած պարտքը կազմում էր 5,5 մլրդ դոլլար)։

Անգլիայում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի կարևորագույն արտահայտությունը պատերազմից անմիջապես հետո նշմարված Բրիտանական գաղութային կայսրության ճգնաժամն էր՝ ամենից առաջ ստրկացված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման ուժեղացման հետևանքով։ Պատերազմի ընթացքում անգլիական գաղութներում ու դոմինիոններում իր դիրքերն ամրապնդեց ազգային բուրժուազիան, մեծացավ պրոլետարիատի թվաքանակը, որն ուժեղացնում էր կենտրոնախույս տենդենցները Բրիտանական կայսրությունում։ Բացի այդ, ավելի ու ավելի ակտիվորեն էին Անգլիայի գաղութներն ու դոմինիոնները թափանցում ԱՄՆ-ի և մյուս երկրների մոնոպոլիաները։

Պատերազմի տարիներին Անգլիայի առևտրական նավատորմի 70 տոկոսի կորուստը դժվարացնում էր անդրծովյան շուկաների հետ նրա նախկին գործարար կապերի վերականգնումը։ Մինչև 1918 թ. Անգլիայի արտաքին առևտուրը կրճատվեց ավելի քան կրկնակի։ Տառապալից ծանր էր ընթանում անգլիական էկոնոմիկայի ետպատերազմյան խաղաղ վերակառուցման պրոցեսը։ Դրա անմիջական հետևանքը եղավ գործազրկության ծայր առած աճը։ Աշխատավորները ստիպված էին տանել պատերազմի հետևանքների հիմնական ծանրությունը։ Նրանց վրա էր հիմնականում դրված նաև պետական պարտքի մարումը, պարտք, որը 1914 թ. 650 մլն ֆունտ ստերլինգից աճել էր մինչև 8 մլրդ ֆունտ ստերլինգի։ Դրա հետևանքը եղավ դասակարգային հակասությունների աճը երկրում։

Պատերազմի վերջին տարիներին «քաղաքացիական խաղաղության» քայքայման գործում մեծ դեր խաղաց Հոկտեմբերյան մեծ հեղափոխության օրինակը։ Սկսվեց մասսայական բանվորական շարժման իր թափով ու խորությամբ չտեսնված վերելք։ Ջանալով վերականգնել կապիտալիստական սիստեմի միասնությունը, որի վերջը դրեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, անգլիական կառավարող շրջանները ԱՄՆ-ի և մյուս կապիտալիստական երկրների իմպերիալիստական ուժերի հետ միասին հանդես եկան որպես հակասովետական ինտերվենցիայի նախաձեռնողներ։ Բայց դրա իրականացումը հասցրեց միայն անգլիական իմպերիալիզմի թուլացմանը, անգլիական բանվորների պայքարի ակտիվացմանը, բանվորներ, որոնք հանդես էին գալիս ի պաշտպանություն աշխարհում առաջին պրոլետարական պետության և պահանջում բուն Անգլիայում վերափոխություններ կատարել հօգուտ աշխատավորության։

Երկրում սկսված հեղափոխական շարժման վերելքը հասցրեց լեյբորիստական կուսակցության ուժեղացմանը։ 1918 թ. նոյեմբերի կեսերին, բաժանվելով կառավարական կոալիցիայից, որը գոյություն ուներ պատերազմի ժամանակ, նրա պարագլուխները դեկլարատիվ կերպով առաջադրեցին Սովետական Ռուսաստանում ինտերվենցիայի դադարեցման և բանվոր դասակարգի շահերի պաշտպանության լոզունգներ։ Լեյբորիստների 1918 թ. «Աշխատանքը և սոցիալական նոր կարգը» ծրագիրը, որպես հասարակության արմատական վերափոխման միջոց, առաջարկում էր հողի և արդյունաբերության մի շարք ճյուղերի ազգայնացում։ Դրա հիման վրա լեյբորիստական պարագլուխները սոցիալիզմի մասին հայտարարություններ էին անում որպես կուսակցության նպատակի։ Նման դեկլարացիաների երևան գալու փաստն ինքնըստինքյան վկայում էր անգլիական բանվորների մեջ սոցիալիզմի նկատմամբ համակրանքի աճման մասին, բայց, ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, լեյբորիստական ղեկավարությունը մեկ քայլ անգամ չնահանջեց իր ռե-

ֆորմիստական հայացքներից, չմտածելով կապիտալիստական հասարակության հիմքերի արմատական փոփոխության մասին։ Կուսակցության նոր ծրագիրը տրեդ-յունիոնների ներկայացուցիչներին թույլ էր տալիս գլխավոր դեր խաղալ կուսակցական քաղաքականության որոշման ժամանակ։ Դա արտահայտում էր տրեդ-յունիոնների անդամների թվի վիթխարի աճը (1914 թ.՝ 4 մլն, 1919 թ.՝ 8 մլն), ինչպես նաև այն փաստը, որ նրանք կազմում էին հենց լեյբորիստական կուսակցության ճնշող մեծամասնությունը (1914 թ. նրա 1612 հազ. անդամներից 1572 հազարը տրեդյունիոնիստներ էին, 1918 թ. 3013 հազարից՝ 1960 հազարը)։ Կոլեկտիվ անդամության հետ միասին, որը շարունակում էր մնալ հիմնականը, սահմանվեց կուսակցության անհատական անդամություն։ Կուսակցության մեջ բանվորների զգալի զանգվածի մուտքը սակայն, չէր ապահովում իսկական բանվորական քաղաքական կուսակցության դերի կատարումը նրա կողմից։ Վ. Ի. Լենինը Կոմինտերնի II կոնգրեսում (1920 թ.) տվեց լեյբորիստական կուսակցության հետևյալ գնահատականը. «Իհարկե, Բանվորական կուսակցությունը մեծ մասամբ կազմված է բանվորներից։ Սակայն կուսակցությունն իսկապես քաղաքական բանվորական կուսակցություն է, թե ոչ— դա կախված է ոչ միայն այն բանից, թե կազմված է արդյոք կուսակցությունը բանվորներից, այլ նաև այն բանից, թե ով է ղեկավարում նրան և որն է նրա գործողությունների ու նրա քաղաքական տակտիկայի բովանդակությունը... Այս միակ ճիշտ տեսակետից բանվորական կուսակցությունը ամբողջովին բուրժուական կուսակցություն է, որովհետև թեև նա կազմված է բանվորներից, բայց նրան ղեկավարում են ռեակցիոներները և այն էլ ամենավատ ռեակցիոներները, որոնք գործում են միանգամայն բուրժուազիայի ոգով»[1]։

Այդ նույն ժամանակ երկրում ծավալվող հեղափոխական վերելքը ուժեղացրեց մոնոպոլիստական կապիտալի հիմնական ուժերի կոնսոլիդացումը պահպանողական կուսակցության շուրջը, որը 1918 թ. դեկտեմբերին կայացած պառլամենտական ընտրություններում հանդես էր գալիս ավելի ու ավելի խորացող ճգնաժամ ապրող լիբերալների կուսակցության մի մասի հետ բլոկ կազմած։ Հեղափոխական վերելքը կնիք էր դնում նաև նախընտրական պայքարի ամբողջ բնույթի վրա։ Անգլիական բուրժուազիան ջանում էր ընտրությունների ժամանակ ստեղծել շովինիստական շմոլքի, հաղթանակով արբենալու իրադրություն։ Աշխատավոր զանգվածներին դեմագոգիկ բնույթի շատ խոստումներ տրվեցին։ Մասսաներին ապակողմնորոշելու նպատակով հատկապես ակտիվ էր գործում Լլոյդ Ջորջը։ Նախընտրական կամպանիայի ընթացքում առաջադրված լոզունգների մեջ կար մեկը, որը խոստանում էր «երկիրը հերոսներին վայել դարձնել»։ «Ամեն ինչի համար կվճարեն բոշերը,— հավաստիացնում էր Լլոյդ Ջորջը,— Գերմանիան կիտրոնի պես կքամվի», իսկ «կայզերը կախաղան է բարձրացվելու»։ Խոստացվեց բնակարանային լայն շինարարություն, օգնություն գյուղատնտեսությանն ու արդյունաբերության հիմնական ճյուղերին և այլն։

Վ. Ի. Լենինը 1919 թ. մարտի 12-ին Պետրոգրադի սովետի նիստում ասում էր. «Համաձայնության երկրներում այժմ նկատվում է մասսաների արթնացում, որը նրանց կառավարություններն ամեն կերպ ջանում են խեղդել։ Այս նպատակներով դեռևս անգիտակից մասսաների ամբողջ ուշադրությունն ուղղվում է «հայրենասիրության» կողմը։ Մասսաներին կերակրում են խոստումներով և գայթակղեցնում հաղթական հաշտության օգուտներով, նրանց անհամար օգուտներ են խոստանում հաշտությունը կնքելուց հետո։ Նրանց պատրանքներով են սնում»[2]։

1918 թ. ընտրություններին Անգլիայի պատմության մեջ առաջին անգամ պետք է մասնակցեին կանայք։ Երկրի առաջադեմ ուժերը դեռ վաղուց էին պայքարում կանանց ընտրական իրավունքներ տրամադրելու համար։ Բայց այդ շարժումը, որն ստացավ «սուֆրաժիստական» անունը, երկար ժամանակ ոչ մի արդյունք չէր տալիս։ Միայն Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո, որը հռչակեց և իրականացրեց կանանց լիակատար իրավահավասարությունը տղամարդկանց հետ, 1917 թ. դեկտեմբերին համայնքների պալատն ընդունեց օրենք, որը ընտրական իրավունքներ էր տրամադրում կանանց, բայց միայն 30 տարեկան հասակից։ Կառավարությունն, այդ միջոցառումն իրականացնելով, հույս ուներ ավելի մեծ չափով ամրապնդել իր դիրքերն ընտրություններում, ակնկալելով, որ կանայք իրենց ձայնը կտան իր կողմնակիցներին։ Ընտրական ռեֆորմով նաև վերացվեց ընտրություններին մասնակցողների ունեցվածքային ցենզը, իսկ ընտրական տարիքը նվազեցվեց մինչև 21 տարեկանի (տղամարդկանց համար)։ Ընտրական սիստեմի ռեֆորմի հետևանքով ընտրողների թիվը 1918 թ. գրեթե կրկնակի ավելացավ՝ 8-ից մինչև 21 միլիոն։

Իրականացվեցին ժողովրդականություն վայելող մի քանի այլ միջոցառումներ. կրթության մասին օրենքը նախատեսում էր պարտադիր տարրական ուսուցում մինչև 14 տարեկանների համար, մի օրենքով որոշակի դեպքերի համար սահմանվում էին աշխատավարձի նվազագույն դրույքներ և այլն։

Անգլիական բուրժուազիային հաջողվեց հաղթանակից հետո երկրում առաջացած շովինիստական շմոլքի վրա խաղալ և ընտրությունների ժամանակ ապահովել պահպանողական-լիբերալ կոալիցիայի հաջողությունը։ Լլոյդ Ջորջն էլ գլխավորեց նոր ստեղծված կառավարությունը, թեև ամենաաջի ընկնող պոստերն այնտեղ գտնվում էին պահպանողական պարագլուխների (Ու. Չերչիլ, Օ. Չեմբեռլեն, Բոնար Լոու, Քերզոն, Բիրկենհեդ և ուրիշներ) ձեռքում։

Միջպատերազմյան ժամանակաշրջանում պահպանողականները գրեթե անընդհատ իշխում էին երկրի քաղաքական կյանքում (բացառությամբ 1924 թ. և 1929—1931 թթ., երբ իշխանության գլուխ էին կանգնած առաջին և երկրորդ լեյբորիստական կառավարությունները)։

Իսկ ինչո՞վ է բացատրվում պահպանողականների այդքան երկար քաղաքական գերակշռությունը։

1. Պահպանողականները հմտորեն օգտագործեցին միջպատերազմյան ժամանակաշրջանի քաղաքական իրադրությունը, երբ լիբերալների կուսակցությունը ծանր ճգնաժամ էր ապրում և մի քանի պառակտում տարավ, իսկ լեյբորիստական կուսակցությունը դեռ միայն պայքարում էր երկկուսակցական պառլամենտական մեխանիզմում որպես երկրորդ կուսակցություն հաստատվելու համար։

2. Պահպանողականները քաղաքական մեծ ճկունություն հանդես բերեցին, որն արտահայտվեց այն բանում, որ նրանք, կանգնած լինելով իշխանության գլուխ, գերադասում էին կառավարել ոչ թե բացահայտորեն, անմիջականորեն իրենց անունից, այլ քողարկվելով կոալիցիայի դրոշի ներքո՝ 1918—1922 թթ. լիբերալների հետ, 1931—1939 թթ. ազգային-լեյբորիստնե-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 313։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 4—5։

ի և ազգային-լիբերալների հետ (ընդ որում վերջին դեպքում կոալիցիան բացարձակ ֆիկցիա էր)։

3. Պահպանողականները միջպատերազմյան ժամանակաշրջանում ընտրական կամպանիայի ընթացքում լայնորեն ու հմտորեն օգտագործում էին սոցիալական ու ազգային դեմագոգիայի միջոցները։ Ընտրողների ավելի լայն շրջան ընդգրկելու համար նրանք իրենց պլատֆորմի մեջ մտցրին գործադրկության դեմ պայքարի, բնակարանային շինարարության հարցեր և տնտեսական հրատապ այլ պրոբլեմներ։ Նրանք հմտորեն սպեկուլյացիայի էին ենթարկում միջպատերազմյան շրջանում լայնորեն տարածված պացիֆիստական տրամադրությունները, առաջադրելով «Ամենից առաջ անվտանգություն» լոզունգը։ Դա, մասնավորապես, նրանց օգնում էր արդարացնելու «շմիջամտելու» քաղաքականությունը, դեպի Արևելք «ագրեսիայի կանալիզացման» քաղաքականությունը։

4. Մոնոպոլիաների վրա խիստ տպավորություն էր գործում հատկապես պահպանողական կուսակցության վճռականությունը բանվորական շարժման դեմ մղվող պայքարում («սև ուրբաթը», 1926 թ. ընդհանուր գործադուլի ջախջախումը և հետագա այլ վճռական միջոցառումներն ընդդեմ արհմիությունների, աշխատավորության հաշվին կիրառված անխնա տնտեսումը համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին, ճգնաժամից կապիտալիստական ելքի ապահովումը, անգլիական գաղութներում ազգային-ազատագրական շարժման ճնշումը, պահպանողականների հետևողական հակասովետիզմը)։

Պահպանողականների հակասովետիզմը, որն արտացոլում էր անգլիական ռեակցիոն բուրժուազիայի դիրքերը, վառ կերպով արտահայտվեց սովետական պետության ստեղծումից անմիջապես հետո Սովետական Ռուսաստանում կատարված ինտերվենցիայում Անգլիայի ունեցած մասնակցության մեջ։ Պահպանողական-լիբերալ կոալիցիոն կառավարությունը, որն ստեղծվեց 1918 թ. ընտրություններից հետո, շարունակում էր հակասովետական ինտերվենցիան։ Սակայն նրա քաղաքականությունն ավելի ու ավելի մեծ չափով էր երկրի ներսում դիմադրության հանդիպում բանվոր դասակարգի կողմից, դիմադրություն, որը վերածվեց աշխատավորների հզոր շարժման ի պաշտպանություն Սովետական Ռուսաստանի։

Սովետական Ռուսաստանի պաշտպանության շարժումը և անգլիական աշխատավորների պայքարը սոցիալական վերափոխությունների համար

1919 թ. սկզբին Սովետական Ռուսաստանի պաշտպանության շարժումը կազմակերպչական ձևավորում ստացավ։ «Ձեռքներդ հեռո՛ւ Ռուսաստանից» լոզունգի ներքո ամբողջ երկրում ստեղծվում էին հատուկ կոմիտեներ։ Բրիտանական սոցիալիստական կուսակցության, Լոնդոնի բանվորական կոմիտեի, սոցիալիստական բանվորական կուսակցության և մի շարք այլ կազմակերպությունների հրավիրած «Ձեռքներդ հեռո՛ւ Ռուսաստանից» շարժման կոնֆերանսը, որը կայացավ 1919 թ. հունվարի 18-ին Լոնդոնում, առաջադրեց Ռուսաստանում դինված ինտերվենցիայի դեմ ընդհանուր գործադուլ կազմակերպելու խնդիր։ 1919 թ. ապրիլի 3-ին տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսի և լեյբորիստական կուսակցության միացյալ կոնֆերանսը կառավարությունից պահանջեց անգլիական զորքերն անհապաղ դուրս բերել Սովետական Ռուսաստանից։ Ընդհանուր քաղաքական գործադուլի լոզունգը նվաճում էր Անգլիայի ավելի ու ավելի լայն աշխատավորական զանգվածների համակրանքն ու պաշտպանությունը։ Բանվորական մասսաների այդ որոշակիորեն արտահայտված տրամադրություններին դիմակայում էին լեյբորիստական պարագլուխները։ Անգլո-սովետական հարաբերությունների հարցը դարձավ 1919 թ. հունիսի վերջին Սաուտպորտում կայացած լեյբորիստական կուսակցության կոնֆերանսի գլխավոր հարցը։ Համապատասխան բանաձևի ընդունմանը խանգարելու իրենց գործադրած բոլոր ջանքերի ձախողումից հետո լեյբորիստական աջ պարագլուխներն այդ կոնֆերանսում ստիպված էին միանալ Սովետական Ռուսաստանի դեմ ցանկացած ձևով կատարվող ինտերվենցիան դադարեցնելու պահանջին։ Նրանք ստիպված էին նաև համաձայնել 1919 թ. հուլիսի 21-ին և 22-ին Լոնդոնում և երկրի այլ արդյունաբերական կենտրոններում բողոքի միտինգների ու ցույցերի կազմակերպմանը՝ ընդդեմ ինտերվենցիայի Սովետական Ռուսաստանում։ Ընդ որում, սակայն, լեյբորիստական պարագլուխները ձգտում էին մասսաների շարժումն ի պաշտպանություն սովետական հանրապետության պահել իրենց հսկողության տակ, որպեսզի սահմանափակեն նրա թափը և թույլ չտան այդ պայքարի ընթացքում աշխատավորների հեղափոխականացում։ Երբ սկսվեց Անտանտի երկրորդ արշավանքը Սովետական Ռուսաստանի դեմ, հանքափորների, տրանսպորտայինների և երկաթուղայինների շրջանում վերստին շարժում ծավալվեց ինտերվենցիայի դեմ մղվող պայքարում ընդհանուր գործադուլն օգտագործելու համար։ Սակայն տրեդ-յունիոնների՝ 1919 թ. սեպտեմբերի 9-ին Գլազգոյում գումարված կոնգրեսում արհմիութենական աջ առաջնորդներին նորից հաջողվեց հետաձգել ընդհանուր գործադուլի մասին որոշումը։

Շուտով ստեղծվեց «Ձեռքներդ հեռո՛ւ Ռուսաստանից» ազգային կոմիտե։ Նրա կազմի մեջ մտան նաև կոմունիստական շարժման ներկայացուցիչները, Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցության ապագա ականավոր գործիչները՝ Ռ. Դալլասները, Թոմ Մանը և ուրիշներ։ Սակայն կոմիտեի ղեկավարության մեջ կարևոր դիրքեր էին գրավում լեյբորիստական պարագլուխները, մի հանգամանք, որը ծայրահեղորեն սահմանափակեց կոմիտեի գործունեությունը, այն հանգեցնելով սոսկ Ռուսաստանի մասին ինֆորմացիայի տարածմանը և նրա հետ խաղաղություն պահպանելու պրոպագանդմանը՝ առևտրի ընդլայնման նպատակով։ Սովետական Ռուսաստանի պաշտպանության համար մղվող պայքարը տարածվեց նաև բանակում, զինվորների ու նավաստիների շրջանում, որոնք պահանջում էին զորացրում և հակասովետական ինտերվենցիայի դադարեցում։

Անգլիական կառավարությունը համոզվելով օտարերկրյա ինտերվենցիայից հեղափոխության նվաճումները պաշտպանելու Սովետական Ռուսաստանի ժողովրդի անհողդողդ վճռականության մեջ, ինչպես նաև հաշվի առնելով իր երկրում տիրող ներքին դրությունը, ստիպված էր բացահայտ զինված հակասովետական ինտերվենցիայից անցնել քողարկված ինտերվենցիայի և 1919 թ. վերջին—1920 թ. սկզբին իր զորքերը դուրս բերել Ռուսաստանից։

Խաղաղության համար, հակասովետական ինտերվենցիայի դեմ անգլիական բանվոր դասակարգի մղած պայքարը սերտորեն միահյուսվում էր երկրում սոցիալական վերափոխությունների, նրա կենսամակարդակի համար մղված պայքարի հետ։ Ամենօրյա պրակտիկայում դրանք բացարձակապես անբաժանելի էին։

1919—1921 թթ. Անգլիայում տեղի ունեցած գործադուլային պայքարի վիթխարի թափի մասին վկայում են հետևյալ տվյալները.

Տարիներ	«Արդյունաբերական կոնֆլիկտների» (գործադուլների և լոկաուտների) քանակը	Դրանց մեջ ներգրավված բանվորների թիվը, հազ.	«Կորցված օրերի» թիվը, հազ.
1919	1413	2586	34 903
1920	1715	2024	27 111
1921	763	1829	86 872

Հետևաբար, երեք տարում «արդյունաբերական կոնֆլիկտների» թիվը կազմեց 3891, կորցվեց գրեթե 150 մլն աշխատանքային օր (գործադուլների մասնակիցների թիվը կազմեց 6,5 մլն մարդ), այն դեպքում երբ 1918 թ. տեղի ունեցավ 1165 «արդյունաբերական կոնֆլիկտ» և «կորցվեց» 5762 հազ. աշխատանքային օր։

Անգլիական բանվոր դասակարգի ելույթների համար նորը և բնորոշը պայքարի՝ պարզորոշ արտահայտված քաղաքական բնույթն էր. կենսամակարդակի բարձրացման և աշխատանքի պայմանների բարելավման վերաբերյալ պահանջների հետ բանվորներն առաջադրում էին արդյունաբերության մի շարք ճյուղերի ազգայնացման, ինչպես նաև հակասովետական ինտերվենցիայի դադարեցման լոզունգներ։

Պայքարի ավանգարդում գնում էին անգլիական հանքափորները, որոնց գրությունը ծայրահեղ ծանր էր։ Նրանք պահանջում էին կրճատել բանվորական շաբաթը, ավելացնել աշխատավարձը և ազգայնացնել ածխային արդյունաբերությունը։ Վերջին պահանջն առաջադրվում էր նաև անցյալում, բայց հետպատերազմյան նոր իրադրության պայմաններում այն վկայում էր դեպի արմատական սոցիալական վերափոխությունները բանվորների ունեցած ձգտման մասին։ Այդ մասին էր, մասնավորապես, խոսում այն փաստը, որ Մեծ Բրիտանիայի ածխահատների ֆեդերացիան պահանջում էր պետական սեփականություն սահմանել ածխահանքերի նկատմամբ՝ «բանվորների ու պետության միացյալ վերահսկողությամբ ու կառավարմամբ հանդերձ»։ Ածխահատների պահանջները պաշտպանեցին երկաթուղայինների ու տրանսպորտայինների արհմիությունները, որոնք ածխահատների հետ միավորվեցին «Եռյակ միության» մեջ, որը սպառնում էր ընդհանուր գործադուլ հայտարարել։ Սակայն տարբեր մանևրների օգնությամբ, որոնց իրականացման ժամանակ կառավարությանը օգնության հասան լեյբորիստական կուսակցության և տրեդյունիոնների պարագլուխները, ընդհանուր գործադուլը հաջողվեց կանխել։

1919 թ. սեպտեմբերի 26-ին սկսվեց երկաթուղայինների ընդհանուր գործադուլը, որի պատճառը նրանց աշխատավարձը նվազեցնելու կառավարության կատարած փորձն էր։ Գործադուլին մասնակցեց ավելի քան մեկ միլիոն մարդ։ Պայքարի ընթացքում առաջադրվեցին նոր պահանջներ, այդ թվում երկաթուղու կառավարման գործում բանվորների մասնակցության պահանջ։ Դա գործադուլին քաղաքական բնույթ տվեց։ Բայց այստեղ ևս կառավարությանը օգնության հասան բանվորական աջ պարագլուխները, որոնք մասնակի զիջումների գնով հասան գործադուլի ավարտմանը։

Անգլիական փորձառու բուրժուազիայի մանևրելու քաղաքականության պատճառով, որը զիջումների օգնությամբ բանվորներին շեղում էր հեղափոխական պայքարից, այդ տարիներին վերջիններիս չհաջողվեց լիապես օգտագործել իրենց առջև բացված հնարավորությունները։ Ահաբեկված բանվոր դասակարգի պայքարի հղոր թափից և Սովետական Ռուսաստանի հանդեպ նրա

բացահայտ համակրանքի դրսևորումից, ինչպես նաև այն փաստից, որ հեղափոխական խմորումը սկսում է ընդգրկել նաև բանակը, անգլիական կառավարող դասակարգերն իրականացրին մի շարք միջոցառումներ, որոնք անմիջականորեն ուղղված էին այն բանին, որպեսզի թուլացնեն աշխատավոր զանգվածների պայքարը։ Կառավարությունը ստիպված էր շտապ զորացրում կատարել, չնայած բանակը ռազմական ժամանակների չափերով պահպանելու մոնոպոլիստական շրջանների ձգտմանը սովետական հանրապետության դեմ պայքարելու և գաղութներում ազգային-ազատագրական շարժումը ճնշելու համար։ Մինչև 1920 թ. գարունը զորացրվեց ավելի քան 3,5 մլն զինվոր ու նավաստի։ Զորացրվածներին կառավարությունը կարճ ժամկետով չնչին նպաստներ էր վճարում։ Էլ ավելի չնչին ու կարճատև էին այն նպաստները, որոնք վճարում էին ռազմական ձեռնարկություններում աշխատանքից ազատվելիս։

Արդյունաբերության մի շարք ճյուղերում բանվորները հասան 8-ժամյա աշխատանքային օրվա սահմանման (ածխահատների համար 7-ժամյա) և աշխատավարձի որոշ չափով ավելացման։ Մասնակիորեն բավարարվեցին 1919 թ. աշնանը գործադուլ արած երկաթուղայինների պահանջները։

Սակայն, վերջին հաշվով, զգալապես լեյբորիստական ու տրեդյունիոնիստական աջ պարագլուխների համաձայնողական քաղաքականության հետևանքով Անգլիայի բանվոր դասակարգը չկարողացավ օգտագործել պատերազմից հետո առաջացած նպաստավոր օբյեկտիվ իրադրությունն ուժերի հարաբերակցությունը պրոլետարական զանգվածների օգտին էապես փոխելու համար։ Անգլիական պրոլետարիատի մասսայական պայքարը տարերային բնույթ էր կրում։ Դրանում արտահայտվում էր բանվորական շարժման սուբյեկտիվ գործոնի թուլությունը. երկրում չկար իսկական հեղափոխական պրոլետարական կուսակցություն։

Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը և նրա մասնակցությունը հակասովետական ինտերվենցիայի դեմ մղված պայքարին

Անգլիական աշխատավորների հետպատերազմյան տարիների կարևորագույն նվաճումը կոմունիստական կուսակցության ստեղծումն էր։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի կազմավորումն անգլիական բանվորական շարժման ձախացման հետևանքը եղավ։ Դեռ 1918—1919 թթ. Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ բրիտանական սոցիալիստական կուսակցության մեջ (10 հազ. անդամ), որը որպես կոլեկտիվ անդամ, մտնում էր լեյբորիստական կուսակցության կազմի մեջ, ավելի ու ավելի մեծ տարածում էին գտնում կոմունիստական գաղափարները։ Դուրս գալով II Ինտերնացիոնալից, բրիտանական սոցիալիստական կուսակցությունը 1919 թ. հոկտեմբերին հարեց Կոմինտերնին։ Մարքսիստական գաղափարները ոչ քիչ թվով կողմնակիցներ ունեին նաև այնպիսի փոքրաթիվ, սինդիկալիզմի որոշ ազդեցության տակ գտնվող կազմակերպություններում, ինչպիսիք էին սոցիալիստական բանվորական կուսակցությունը (նրա կողմնակիցների հիմնական մասը գտնվում էր Շոտլանդիայում, ուր նրանք մասնակցում էին գործադուլային պայքարին) և Հարավ-Ուելսյան սոցիալիստական ընկերությունը։ Դեպի մարքսիզմ էին հակվում նաև բանվորական սոցիալիստական ֆեդերացիայի՝ սուֆրաժիստական շարժման անկումից հետո առաջացած մեկ այլ փոքրաթիվ կազմակերպության անդամները։ Այդ կազմակերպությունը գլխավորում էր Սիլվիա Պանկհերստը։ Բանվորական մասսաների հետ սերտ կապեր ունեին շոպստյուարդների (ֆաբրիկագործարանային ավագների) կազմակերպությունները։ Վ. Ի. Լենինը դրանց անվա-

նում էր խորապես պրոլետարական ու մասսայական կազմակերպություններ։ Շոպստյուարդներն ակտիվորեն մասնակցում էին գործադուլային պայքարին, թեև այն դեռևս չէին կապում կապիտալիզմի հիմքերի դեմ մղվող ընդհանուր պայքարի հետ։ Դրանց ղեկավարները (նրանցից առավել ականավորը Ու. Գալլախերն էր) սկզբում ընդհանրապես ժխտում էին բանվորական քաղաքական կուսակցության անհրաժեշտությունը։ Այդ բոլոր կազմակերպությունները թույլ էին տալիս աղանդավորական սխալներ, որոնք Վ. Ի. Լենինի կողմից հետագայում բնութագրվեցին որպես ««Ձախության» մանկական հիվանդություն կոմունիզմի մեջ»։ Դրա գլխավոր գծերն էին. 1) բանվոր դասակարգի քաղաքական կուսակցության դերի թերագնահատումը հեղափոխական պայքարում, 2) հակապառլամենտարիզմը, 3) հրաժարումը տրեդ-յունիոններում աշխատելուց, 4) քաղաքական կոմպրոմիսների հնարավորության ժխտումը։ Ամենալուրջ վեճեր էր առաջացնում այն հարցը, թե Մեծ Բրիտանիայի ապագա կոմունիստական կուսակցությունն, արդյոք, պե՞տք է մտնի լեյբորիստական կուսակցության մեջ (ԲՍԿ-ն, օրինակ, խիստ քննադատության էր ենթարկվում այն բանի համար, որ մտել էր լեյբորիստական կուսակցության կազմի մեջ)։ Կոմկուս ստեղծելու վերաբերյալ այդ երկու կազմակերպությունների միջև տեղի ունեցող բանակցությունները երկար ժամանակ դրական արդյունքի չէին հասնում։ «Ձախ» սխալների հաղթահարման գործում անգլիական կոմունիստներին վիթխարի օգնություն ցույց տվեց Վ. Ի. Լենինը և նրա ««Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» աշխատությունը, որը հրատարակվեց 1920 թ. հունիսին և շուտով թարգմանվեց անգլերեն, ինչպես նաև Վ. Ի. Լենինի պատասխանը (1920 թ. հուլիսի 8-ին) Մեծ Բրիտանիայի կոմկուսի ստեղծման գծով միացյալ ժամանակավոր կոմիտեի նամակին։ Այդ պատասխանը հաղորդվեց ռադիոյով, հրապարակվեց ԲՍԿ օրգան «Կոչ»-ում, ինչպես նաև կարդացվեց Մեծ Բրիտանիայի կոմկուսի հիմնադիր համագումարում, որը տեղի ունեցավ 1920 թ. հուլիսի 31-ից օգոստոսի 1-ը Լոնդոնում։ Համագումարը միահամուռ պատմական որոշում ընդունեց Մեծ Բրիտանիայի կոմկուսի ստեղծման մասին։

Լեյբորիստական կուսակցության նկատմամբ վերաբերմունքի հարցում Մեծ Բրիտանիայի կոմկուսի գիծը որոշելու համար մեծ նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի ճառը Կոմինտերնի II կոնգրեսում («Ճառ Բրիտանական բանվորական կուսակցության մեջ մտնելու մասին»)։ Նշելով այլ սոցիալիստական կուսակցություններից լեյբորիստական կուսակցության ունեցած տարբերությունները իր կազմակերպչական կառուցվածքով, որն իր կազմի մեջ մտած կազմակերպությունների համար հնարավորություն էր ստեղծում որոշակի ազատությամբ շարադրելու և պաշտպանելու իրենց հայացքները, Վ. Ի. Լենինն արտահայտվեց լեյբորիստական կուսակցության մեջ կոմկուսի մտնելու օգտին, «քանի որ Բանվորական կուսակցությունը բավականաչափ ազատություն է տալիս քննադատության համար»։ «Նման պայմաններում հեղափոխական լավագույն տարրերի մեծագույն սխալը կլիներ չանել ամեն հնարավոր բան, որպեսզի մնալ այդ կուսակցության մեջ»։ Իսկ եթե, ընդգծում էր Վ. Ի. Լենինը, բանվորական աջ պարագլուխները կոմկուսին վտարեն, ապա «դա հիանալի ազդեցություն կունենա անգլիական բանվորական մասսայի վրա»[3]։ Հաշվի առնելով Վ. Ի. Լենինի մեկնաբանությունները և ելնելով բան-

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 317։

վոր դասակարգի միասնության շահերից, կոմկուսը շուտով հարց դրեց իրեն լեյբորիստական կուսակցության մեջ ընդունելու մասին։

Մեծ Բրիտանիայի կոմկուսը դեռևս չէր միավորում երկրում եղած բոլոր հեղափոխական տարրերին (շոպստյուարդները կուսակցության մեջ մտան միայն 1921 թ. հունվարի վերջին Մեծ Բրիտանիայի կոմկուսի II հիմնադիր համագումարում, իսկ լեյբորիստական կուսակցության կազմի մեջ մտնող Անկախ բանվորական կուսակցության ձախ տարրերը՝ 1921 թ. ապրիլին)։

Մեծ Բրիտանիայի կոմկուսի կազմավորումը վիթխարի կարևորություն ունեցող իրադարձություն էր անգլիական բանվորական շարժման համար։ Երիտասարդ կոմկուսը մարտական մկրտություն ստացավ իր կազմավորումից անմիջապես հետո՝ Սովետական Ռուսաստանում ինտերվենցիայի դեմ անգլիական բանվոր դասակարգի՝ 1920 թ. նոր աստիճանի բարձրացած պայքարում։ Դեռ 1920 թ. գարնանը, երբ պանական Լեհաստանի զորքերը հարձակվեցին սովետական հանրապետության վրա, անգլիական բանվորները վերստին վճռականապես հանդես եկան ի պաշտպանություն Սովետական Ռուսաստանի, իսկ հուլիսի 13-ին տրեդ-յունիոնների հատուկ կոնգրեսը կարևորագույն որոշում ընդունեց ընդհանուր գործադուլ անցկացնելու անհրաժեշտության մասին այն դեպքում, եթե կառավարությունը վերսկսի ինտերվենցիան Սովետական Ռուսաստանում (անգլիական կառավարությունը դեռ այն ժամանակ էր սպառնում բացահայտորեն միջամտել պատերազմին հօգուտ Լեհաստանի)։ Իսկ երբ 1920 թ. օգոստոսի 3-ին սովետների երկրի հասցեին ուղղված վերջնագրում նա բացեիբաց հայտարարեց իր այդ մտադրության մասին, Անգլիայում, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, «չլսված քաղաքական ճգնաժամ»[4] սկսվեց։ Ամբողջ երկրով մեկ ծավալվեց բանվորական ցույցերի ու միտինգների ալիքը։ Միասնական պոռթկումով անգլիական պրոլետարիատը հանդես եկավ Սովետական Ռուսաստանի վրա Անգլիայի կառավարության ձեռնարկած իմպերիալիստական գրոհի դեմ։ Հենց նոր ծնունդ առած Մեծ Բրիտանիայի կոմկուսն ակտիվորեն պայքարի մեջ մտավ, օգոստոսի 6-ի մանիֆեստում բանվորներին բացատրելով ստեղծված դրության լրջությունը. օգոստոսի 7-ի մանիֆեստում նա շարադրեց հակասովետական ինտերվենցիայի դադարեցման վերաբերյալ կառավարությանն ուղղված կոնկրետ պահանջների ծրագիրը։ Մեծ Բրիտանիայի կոմկուսը և «Ձեռքերդ հեռո՛ւ Ռուսաստանից» կոմիտեն բանվորական մասսաներին կոչ էին անում բողոքի մասսայական ցույց կազմակերպել։ Կոմկուսն առաջարկեց գործողության կենտրոնական բանվորական խորհուրդ ստեղծել կառավարության նկատմամբ հսկողություն իրականացնելու համար։ Այդպիսի խորհուրդ ստեղծվեց օգոստոսին, բայց լեյբորիստական պարագլուխները, որոնք ձգտում էին գրոյի հավասարեցնել շարժման մարտական բնույթը, այնտեղ զավթեցին ղեկավարությունը և կոմունիստներին թույլ չտվեցին նրա կազմի մեջ մտնել (այդ օրերին լեյբորիստական պարագլուխները մերժեցին Մեծ Բրիտանիայի կոմկուսին ընդունվելու լեյբորիստական կուսակցության շարքերը)։ Բայց գործողության տեղական շատ խորհուրդներում (երկրում առաջացավ մոտ 400 այդպիսի խորհուրդ) բանվորները հանդես եկան համախմբված։ Բուրժուական մամուլն սկսեց խոսել իբր երկրում ստեղծված «երկիշխանության» մասին։ Լլոյդ Ջորջը ստիպված էր օգոստոսի 16-ին հայտարարել, որ կառավարությունն իբր ընդհանրապես մտադիր չի եղել պատերազմ սկսել սովետական պետության դեմ. 1921 թ. Անգլիան առևտրական համա-

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 375։

ձայնագիր է ստորագրել սովետական հանրապետության հետ, այսպիսով դեֆակտո ճանաչելով նրան։

Ազգային-ազատագրական շարժման վերելքը անգլիական գաղութներում

Անգլիական կառավարության դրությունը բարդացավ նաև Անգլիայի գաղութներում ազգային-ազատագրական շարժման վերելքով։ Ավելի ուժգին բորբոքվեց Հնդկաստանի ժողովուրդների պայքարը բրիտանական իմպերիալիստական տիրապետության դեմ։ Խոշոր գյուղացիական հուզումներ ու սովյալների խռովություններ ծագեցին Սինդում, Միացյալ պրովինցիաներում և Բիհարում։ Չնայած ամենադաժան բռնություններին, անգլիական գաղութարարները չկարողացան խեղդել ազգային-ազատագրական շարժումը և ստիպված էին որոշ մանևրերի դիմել։ 1918 թ. անգլիական կառավարությունը «սահմանադրություն» մտցրեց (Մոնֆորդի սահմանադրությունը, որն իր անվանումը ստացել է Հնդկաստանի գործերի գծով մինիստր Մոնտեգյուի և Հնդկաստանի փոխարքա Չելմսֆորդի անուններից)։ Այն հնդկական բուրժուազիայի վերնախավին մասնակիորեն թույլ էր տալիս իշխանության կազմի մեջ մտնել։ Բայց դա անգլիական իշխանություններին չէր խանգարում լայնորեն օգտագործել զինված ուժերը ազգային-ազատագրական շարժումը ճնշելու համար։ 1919 թ. ապրիլի 13-ին Ամրիտսար քաղաքում գեներալ Դայերի զորքերը գնդակոծեցին անզեն ամբոխին։ Սպանվեց 400 և վիրավորվեց մոտ 1200 մարդ։ Երբ 1921 թ. Մալաբարյան օկրուգում գյուղացիներն ապստամբեցին, անգլիական կառավարությունը դաժան հաշվեհարդար կատարեց նրանց հետ։

Պատերազմն ավարտվելուց հետո անընդհատ հուզումներով էր ներգրավված Եգիպտոսը։ Գաղութային ամենադաժան ստրկացման քաղաքականությունը 1919 թ. հասցրեց Եգիպտական բնակչության ազգային-ազատագրական ապստամբությանը։ Անգլիական զորքերը ճնշեցին ապստամբությունը, բայց 1921 թ. այն վերստին բռնկվեց։ Եվ գաղութարարները երկրում նորից արյուն հեղեցին։ Վերջիվերջո անգլիական կառավարող շրջանները ստիպված էին զիջումների դիմելու։ 1922 թ. փետրվարի 28-ին նրանք հայտարարություն արեցին պրոտեկտորատի վերացման մասին, որը սահմանվել էր 1914 թ., ինչպես նաև Եգիպտոսի «անկախության» ճանաչման մասին։ Իսկ փաստացիորեն անգլիական իմպերիալիստները շարունակում էին տեր ու տնօրինություն անել Եգիպտոսում, այնտեղ պահելով իրենց բանակը։ Նրանք առաջվա պես վերահսկողություն էին իրականացնում Եգիպտոսի պետական ապարատի և արտաքին քաղաքականության ու նրա էկոնոմիկայի նկատմամբ։

Հետպատերազմյան տարիներին ազգային-ազատագրական պայքարը ծավալվում էր Անգլիայի կողմից զավթված նաև արաբական, իրանական ու թուրքական տերիտորիաներում։ Ազգային անկախության համար մղվող պայքարը տարածվեց նաև անգլիական հնագույն գաղութ Իռլանդիայում։ Այդ պայքարը համառ ու արյունահեղ եղավ։ Իռլանդացիների նկատմամբ ամենադաժան բռնություններ կիրառվեցին։ Սակայն անգլիական կառավարությունը ստիպված էր զիջումների դիմել, Իռլանդիայի 26 կոմսություններին դոմինիոնի ստատուս տրամադրելով։ Սակայն այդուհանդերձ նա երկիրը պառակտեց և նրա հյուսիս-արևելյան մասը՝ Օլստերը (վեց կոմսություն) պահեց որպես իր գաղութային կցորդ։ Անգլիան «Իռլանդական ազատ պետության» (իռլանդական դոմինիոնի անունը) տերիտորիայում պահպանում էր ռազմածովային բազաները, երկիրը կապված էր Անգլիայի հետ տնտեսական պարտավորություններով։ Պահպանվում էր երդումն անգլիական գահին։

Բռնությունների ու մի քանի զիջումների օգնությամբ անգլիական իմպերիալիստները կարողացան ճնշել ետպատերազմյան տարիներին բորբոքված ազգային-ազատագրական շարժումը և պահպանել գաղութային վիթխարի կայսրությունը։

Անգլիական կառավարող շրջանների արտաքին քաղաքականությունը

Անգլիական կառավարող շրջանները ձգտում էին ամրապնդել իրենց դիրքերը նաև միջազգային հարաբերությունների բնագավառում։ Նրանք օգտագործելով Անգլիայի դրությունը, որպես հաղթող առաջատար երկրներից մեկի կարողացան հասնել իրենց պլանների իրականացմանը։ Պայմանագրերի Վերսալյան սիստեմը մշակվեց անգլիական իմպերիալիզմի շահերի ու նպատակների հաշվառումով, իմպերիալիզմ, որի ներկայացուցիչները Փարիզի հաշտության կոնֆերանսում առաջատար դեր էին կատարում։ Դրան չէին խանգարում այդ կոնֆերանսում ի հայտ եկած միջիմպերիալիստական ամենասուր, ամենից առաջ Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի հետ ունեցած, հակասությունները։

Պահպանելով և զգալիորեն բազմապատկելով իր գաղութային տիրույթները, ամրապնդելով պատերազմում ձեռք բերված հաղթանակով ապահովված իր հիմնական մրցակցի՝ Գերմանիայի, ժամանակավոր դուրսմղումը, Անգլիան կարողացավ հասնել այն բանին, որպեսզի ԱՄՆ-ը՝ նրա նոր անդրօվկիանոսյան հզոր մրցակիցը, աշխարհի ետպատերազմյան կառուցվածքի իրականացման ժամանակ դիվանագիտական տեսակետից վճռական դեր չխաղա եվրոպական գործերում։ Այն բանում, որ ԱՄՆ-ի կառավարող շրջանները չգոհացան Փարիզի հաշտության կոնֆերանսի արդյունքներից, զգալի ծառայություն ուներ Անգլիան։ Ճիշտ է, անգլիական իմպերիալիզմն ստիպված էր հաշտվել հետպատերազմյան առաջին տարիներին Եվրոպայում հաստատված Ֆրանսիայի ազդեցության ժամանակավոր գերակշռության հետ։

Միայն մեկ հարցում Անգլիան Փարիզում գործեց ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի հետ լիակատար համերաշխությամբ՝ Վերսալյան սիստեմի հակասովետական ուղղվածության ապահովման, հակասովետական ինտերվենցիայի իրականացման գործում, որն ավարտվեց լիակատար ձախողմամբ։ Վերսալյան սիստեմի անկայունությունը չհապաղեց դրսևորվել Թուրքիան բրիտանական իմպերիալիզմի գաղութի վերածելու պլանների ձախողման մեջ։ Քեմալական հեղափոխությունը հասցրեց այն բանին, որ Անտանտի երկրների կողմից 1920 թ. մշակած այսպես կոչված Սևրի պայմանագիրն այդպես էլ ուժի մեջ չմտավ։ Ուրիշի ձեռքով ուղղակի զինված ինտերվենցիա իրականացնելու անգլիական կառավարության փորձը (դեպի Թուրքիա շարժվեց հունական բանակը) լիակատար կրախի մատնվեց։

Անգլիան ստիպված էր զիջումներ կատարել նաև ԱՄՆ-ին, որը ձգտում էր ռևանշ վերցնել Փարիզի հաշտության կոնֆերանսում իր պլանների ձախողման համար, և համաձայնվել Վաշինգտոնի կոնֆերանսում անգլիական և ԱՄՆ-ի նավատորմների պարիտետին (գծանավերի ու ավիակիրների գծով), ինչպես նաև ճանաչել «բաց դռների» ու հավասար հնարավորությունների սկզբունքը Չինաստանի նկատմամբ։ Բայց անգլիական իմպերիալիստների (ինչպես և մյուս երկրների իմպերիալիստների) համար ամենածանր հարվածը եղավ երիտասարդ սովետական հանրապետությունը խեղդելու նրանց փորձերի ձախողումը։

Անգլիական իմպերիալիստական շրջանները մեծ հույսեր էին կապել 1922 թ. Ջենովայի և Հաագայի կոնֆերանսների հետ, ակնկալելով տնտեսական

ինտերվենցիայի միջոցով հասնել Սովետական Ռուսաստանի տնտեսական ստրկացմանը և կապիտալիզմի վերականգնմանը, սակայն այստեղ նույնպես նրանց հաշիվները ձախողվեցին։ Սովետական կառավարությունը ձախողեց նախատեսված տնտեսական բլոկադան։

Բանվորական շարժման ժամանակավոր անկումը Անգլիայում

1920 թ. վերջին բանվորական շարժումն Անգլիայում սկսեց անկում ապրել։ 1920 թ. աշնանը (կարճատև «բումից» հետո) երկրում տնտեսական ճգնաժամ սկսվեց, որը շարունակվեց նաև 1921 թ.։ Կառավարությունն անցկացրեց արտակարգ լիազորությունների օրենք, որը նրան իրավունք էր տալիս երկրում արտակարգ դրություն հայտարարել և բանվորների դեմ զորքեր, ոստիկանություն ու շտեյկրրեխերներ օգտագործել։ Կառավարության քաղաքականությանը նպաստում էր լեյբորիստական կուսակցության պարագլուխների գործունեությունը։ Նրանց մեղքով երկաթուղայիններն ու տրանսպորտայինները օգնության չհասան 1921 թ. գարնանը գործադուլ արած ածխահատներին, որը կանխորոշեց հանքափորների պարտությունը (այդ իրադարձությունը ստացավ «սև ուրբաթ» անունը)։ Դրանից անմիջապես հետո բուրժուազիան ամբողջ ճակատով հարձակման անցավ բանվոր դասակարգի դեմ։ Իսկ բանվորները սահմանափակվում էին պաշտպանական մարտերով։ Անգլիական պրոլետարիատի պարտությունը պայմանավորված էր ամենից առաջ լեյբորիստական և տրեդ-յունիոնիստական աջ պարագլուխների դավաճանական քաղաքականությամբ։ Մեծ Բրիտանիայի երիտասարդ կոմկուսը միայն նոր էր ոտքի կանգնում և դեռ չէր հասցրել սերտ կապեր հաստատել բանվոր դասակարգի հետ, որը Անգլիայի սոցիալական կարգի առանձնահատկությունների պատճառով և ամենից առաջ բանվորական արիստոկրատիայի զգալի խավի առկայության առնչությամբ գտնվում էր ռեֆորմիստական գաղափարախոսության ուժեղ ազդեցության տակ։ Անգլիական բուրժուազիայի դիրքերի ամրապնդմանը նպաստեց նաև 1920—1921 թթ. տնտեսական ճգնաժամի ավարտումը, թեև դրանից հետո վրա հասած դեպրեսիան պայմաններ չստեղծեց նոր տնտեսական վերելքի համար։ Գործազուրկների բանակը 1922—1923 թթ. էլ հաշվվում էր մոտ 1,5 մլն մարդ։ Արտադրական ապարատը լիովին չէր ծանրաբեռնված։ Անգլիան լուրջ դժվարություններ էր կրում արտաքին առևտրի ասպարեզում։ Կայունացմանն անցնելու պայմաններում պահպանողականներն այլևս անհրաժեշտ չէին համարում բլոկը լիբերալների հետ և 1922 թ. հոկտեմբերին կայացած ընտրությունների ժամանակ հրաժարվեցին դրանից։ Ընտրություններում հաղթանակ տանելով, նրանք ստեղծեցին միակուսակցական կառավարություն Բոնար Լոուի գլխավորությամբ, որի մահից հետո այդ պոստում նրան փոխարինեց Ստենլի Բոլդուինը։ Պահպանողական կառավարության առաջին իսկ քայլերն ուղղված էին երիտասարդ սովետական պետության դեմ։ 1923 թ. մայիսին արտաքին գործերի մինիստր Քերզոնը սովետական կառավարությանը ներկայացրեց վերջնագիր, որը մի շարք լիովին անհիմն մեղադրանքներ էր պարունակում և սպառնում էր խզել 1921 թ. անգլո-սովետական առևտրական համաձայնագիրը։

Քերզոնի վերջնագիրը Անգլիայի բանվորների զայրույթի նոր պոռթկում առաջացրեց։ Հակասովետական քաղաքականությունը զգալիորեն թուլացրեց պահպանողական կուսակցության դիրքերը 1923 թ. արտահերթ ընտրություններում։

Մասնակի կայունացման առանձնահատկություններն Անգլիայում։ Առաջին լեյբորիստական կառավարությունը

Ժամանակավոր կայունացումն Անգլիայում չհասցրեց արտադրության քիչ թե շատ էական վերելքի, որն այս կամ այն մասշտաբներով տեղի ունեցավ կապիտալիստական մի շարք այլ երկրներում։ Մինչև 1929 թ. արդյունաբերական արտադրությունը հազիվ հասավ 1913 թ. մակարդակին։ Գործազուրկների բանակը հաշվվում էր ավելի քան 1 մլն մարդ։ Արտադրական սարքավորումների հետամնացությունը և արդյունաբերության արխայիկ կազմակերպումը տանում էին դեպի Անգլիայի բաժնի նվազումը կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրության մեջ։ Անգլիայի առևտրական հաշվեկշռի պասսիվությունը ստացավ խիստ արտահայտված բնույթ։

Մյուս կողմից, հենց կայունացման ժամանակաշրջանում Անգլիայում տեղի ունեցավ բանվոր դասակարգի ամենախոշոր ելույթը՝ ընդհանուր գործադուլը, որը իբրև Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ ծավալված ամենաբարձր (1918—1920 թթ. ժամանակաշրջանից անմիջապես հետո) կուլմինացիոն կետ, միաժամանակ եղավ կապիտալիստական աշխարհում մասնակի կայունացման սասանման ահեղ նշանը։

Քաղաքական ասպարեզում առավել բնորոշ երևույթը նախկին երկկուսակցական սիստեմի ճգնաժամի դրսևորումն էր, որը մի կողմից, կապված էր լիբերալների կուսակցության հետագա քայքայման հետ, իսկ մյուս կողմից լեյբորիստական կուսակցության ուժեղացման հետ, որը ջանում էր երկկուսակցական մեխանիզմում փոխարինել լիբերալների կուսակցությանը (որը և տեղի ունեցավ հետագայում)։

1924 թվականը անգլիական երկկուսակցական մեխանիզմում լիբերալների կուսակցությունը լեյբորիստների կուսակցությամբ փոխարինելու պրոցեսի առաջին փուլն էր։ Երկկուսակցական սիստեմի՝ նման ուղիով նշմարվող ճգնաժամը հաղթահարվեց պատմական կարճ ժամկետներում և հիմնականում անհիվանդագին՝ կառավարող դասակարգերի համար։ Բանվորական կուսակցության հանդես գալը կապված էր արդյունաբերական հեղաշրջման ընթացքում և հետագա տասնամյակներում անգլիական հասարակության կառուցվածքի արմատական փոփոխությունների հետ։ Բանվոր դասակարգն այնտեղ դառնում էր ավելի ու ավելի գերակշռող և իրեն ավելի ու ավելի ակտիվորեն էր դրսևորում քաղաքական կյանքում, մասնավորապես ընդհանուր ընտրություններում։ Այդ նույն ժամանակ անգլիական մոնոպոլիստական բուրժուազիան կորցնում էր հետաքրքրությունը լիբերալների կուսակցության հանդեպ, որը զրկվում էր իր մասսայական բազայից և այլևս չէր կարող հարկավոր ուղղությամբ ազդել բանվորների նշանակալից զանգվածների վրա։

Նոր պայմաններում բուրժուազիայի զգալի մասի շրջանում լիբերալ կուսակցության ժողովրդականությանը չէր նպաստում նաև Ֆրիտրեդի՝ բանվորների ու ձեռնարկատերերի հարաբերություններին և ազատ առևտրին պետության չմիջամտելու լիբերալների ավանդական դոկտրինան։ Բուրժուազիայի շրջանում հասունանում էին համաշխարհային շուկաներում խիստ սրված մրցակցային պայքարի պայմաններում բուրժուական պետական ապարատն ավելի ակտիվորեն օգտագործելու և պրոտեկցիոնիզմին անցնելու գաղափարները։ Անգլիական մոնոպոլիստական կապիտալը շարունակում էր իր ուժերը համախմբել ամենից առաջ պահպանողականների կուսակցության շուրջը։

Մյուս կողմից, կառավարող դասակարգերին դուր էր գալիս լեյբորիստական աջ պարագլուխների քաղաքականությունը, որոնք հավատարիմ ծառայում էին մոնոպոլիաներին՝ ձախողելով բանվորների պայքարը։ Արդեն ետպատերազմյան վերելքի ժամանակաշրջանում նրանք զգալի չափով համոզվեցին, որ սոցիալիզմի, բանվորների շահերի պաշտպանության մասին նրանց խոսքերի ու գործերի միջև գոյություն ունի խզում։

Այդ բոլորը բացատրում է այն փաստը, որ 1923 թ. վերջին կայացած ընտրություններում, երբ լեյբորիստական կուսակցությունը պառլամենտում երկրորդ տեղը գրավեց (նրան էին պատկանում 191 մանդատ, լիբերալների կուսակցությանը՝ 158, պահպանողականներին՝ 258, նախկին կազմում եղած 344-ի փոխարեն), նրան հանձնարարվեց կառավարության կազմումը, որն իր գործունեությունը սկսեց 1924 թ. հունվարի 23-ին և գոյություն ունեցավ մինչև 1924 թ. նոյեմբերը։

Լեյբորիստական կուսակցության հաջողությունն ընտրություններում (լեյբորիստական կուսակցության օգտին քվեարկեց 4.348.000 ընտրող, լիբերալների կուսակցության օգտին՝ 4.252.000, պահպանողական կուսակցության օգտին՝ 5.340.000), բացի ընդհանուր պատճառներից, որոնք այդ ժամանակաշրջանում պայմանավորեցին նրա ուժեղացումը, որպես բանվորներից կազմված, սոցիալիստական նպատակներ հռչակող կուսակցության, ապահովվեց ժողովրդականություն վայելող այնպիսի լոզունգների հռչակմամբ նրա կողմից, ինչպես ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, գործազրկության վերացումը, բնակարանային հարցի լուծումը, արդարացի աշխատավարձի սահմանումը, ներքին պետական պարտքը մարելու նպատակով «կապիտալի վրա հարկ» նշանակելը, «տնտեսական բարեկեցության» վերադարձնելն Անգլիային, «ամբողջ աշխարհում խաղաղության» ապահովումը և այլն։

Անգլիական մոնոպոլիաները, իրականացնելով լեյբորիստական պարագլուխների «առաջին փորձարկումը», որպես կապիտալիստական նավի նավավարների, չհիասթափվեցին։ Հիմնականում լեյբորիստական աջ պարագլուխներից կազմված (Ռ. Մակդոնալդ՝ պրեմիեր մինիստր, Ա. Հենդերսոն, Ֆ. Սնոուդեն, Թոմաս, Կլայն և ուրիշներ) առաջին լեյբորիստական կառավարության գործունեությունը չափավոր-ռեֆորմիստական էր և չէր շոշափում մոնոպոլիաների շահերը։ Նախընտրական լայնախոստում լոզունգները, օրինակ, «կապիտալի վրա հարկ սահմանելը», գործազրկությունը վերացնելը և այլն, մոռացության մատնվեցին։ Բնակարանային շինարարության ասպարեզում գործը սահմանափակվեց սոսկ պլաններ կազմելով, դրա փոխարեն Հնդկաստանում, Եգիպտոսում, Իրաքում և մյուս գաղութներում ու կախյալ երկրներում ազգային-ազատագրական շարժման դեմ մղվող պայքարում լեյբորիստական կառավարությունն ակտիվորեն կանգնեց Անգլիայի իմպերիալիստական շահերի պաշտպանության դիրքերում։ Եգիպտոսին և Մերձավոր Արևելքի երկրներին անկախություն, Հնդկաստանին դոմինիոնի ստատուս տրամադրելու, մի շարք գաղութներում ինքնավարությունն ընդարձակելու մասին լեյբորիստական պարագլուխների տված խոստումները չէին կատարվում։ Փաստորեն լեյբորիստական կառավարությունը բրիտանական կայսրության երկրներում անց էր կացնում պահպանողականների ամենավատթար ավանդույթների ոգով քաղաքականություն։

Ինքնավարության փոխարեն Հնդկաստանը ստացավ աշխատավորների դեմ

կիրառվող բռնությունների ուժեղացում, հնդկական ազգային-ազատագրական շարժման ձախ թևի նկատմամբ իրագործվեցին դաժան հալածանքներ։

1924 թ. օգոստոսին անգլիական կառավարությունը Եգիպտոսում ու Սուդանում կենտրոնացրեց զորքերի լրացուցիչ կոնտինգենտներ, ձգտելով հավերժացնել ռազմաքաղաքական ու տնտեսական վերահսկողությունն այդ տերիտորիաներում։

Իրաքում Մակդոնալդի կառավարությունը Մոսուլի և Հարավային Քուրդիստանի նավթաբեր շրջանն Անգլիային ամրացնելու նպատակով բաղմիցս դիմեց ավիացիայի կիրառմանն ընդդեմ այդ երկրում բնակվող արաբների և քրդերի։ Այդ քաղաքականությունը սուր դժգոհություն առաջացրեց նույնիսկ լեյբորիստական կուսակցության շարքերում։

Լեյբորիստական կառավարությունը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց ՍՍՀՄ-ի հետ։ Սովետական երկրի իրավաբանական ճանաչումը տեղի ունեցավ 1924 թ. փետրվարին։ 1924 թ. ապրիլ-օգոստոսին կայացավ անգլո-սովետական կոնֆերանս։ Այնտեղ տարվող բանակցությունները՝ Ռուսաստանի ցարական և Ժամանակավոր կառավարությունների պարտքերի, ազգայնացված սեփականության, ՍՍՀՄ-ին փոխառություն տրամադրելու հարցերի նկատմամբ լեյբորիստական կառավարության գրաված դիրքի առթիվ սպառնում էին փակուղի մտնել։ Բանակցությունների ձախողման դեմ հանդես եկան Անգլիայի աշխատավոր զանգվածները. մի շարք ձեռնարկություններում, ի նշան բողոքի, բանվորները դադարեցրին աշխատանքը։ Երկրի կոմունիստական մամուլը պահանջում էր բանակցությունները հաջող ավարտի հասցնել։

Միայն 1924 թ. օգոստոսի 8-ին ՍՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի միջև ստորագրվեցին ընդհանուր քաղաքական և առևտրական պայմանագրերը։ Նախատեսվում էր փոխառությունների տոմսեր ունեցող անգլիացիների պահանջների մասնակի բավարարում սովետական կառավարության կողմից։ Իսկ ռազմական պարտքերի վճարման և ինտերվենցիայի գծով պահանջների վերաբերյալ բոլոր հարցերի քննարկումը հետաձգվեց։ Սովետական կողմը համաձայնվեց Ռուսաստանում նախկին սեփականատեր բրիտանական հպատակների հետ բանակցություններ վարել, հիմնավորված պահանջների համար հատուցում տալու մասին պայմանավորվածության հասնելու նպատակով։ Սակայն այդ պահանջները ենթակա էին բավարարման միայն այն դեպքում, եթե անգլիական պառլամենտը հավանություն տար պայմանագրի 12-րդ հոդվածով նախատեսված փոխառության տրամադրմանը ՍՍՀՄ-ին։

Անգլո-սովետական պայմանագրում խոսվում էր երկու կողմերի համար առավելագույն բարենպաստման ռեժիմ սահմանելու մասին։ Լինելով սովետական խաղաղասեր արտաքին քաղաքականության նշանակալից հաջողությունը, 1924 թ. օգոստոսի 8-ին ստորագրված պայմանագրերը պետք է ապահովեին անգլո-սովետական հարաբերությունների նոր փուլը։ Նրանց կնքումը հավասար հիմունքներով նշանակում էր ՍՍՀՄ-ի դեմ տնտեսական ինտերվենցիայի բոլոր փորձերի և Սովետական Ռուսաստանում կապիտալիստական կարգերը վերականգնելու անգլիական իմպերիալիզմի ձգտումների ձախողում։

Այդ պայմանագրերի ստորագրումը դժգոհություն առաջացրեց Անգլիայի առավել ռեակցիոն ուժերի մեջ (նրանց ճնշումն այն բանին հասցրեց, որ պայմանագրերը չվավերացվեցին)։

Դիմելով ՍՍՀՄ-ի հետ պայմանագրերի ստորագրմանը, լեյբորիստական

կառավարությունը այդ նույն ժամանակ պաշտպանեց Դաուեսի՝ ըստ էության հակասովետական պլանը։

Մակդոնալդի կառավարության ներքին քաղաքականության մեջ ցայտուն կերպով դրսևորվեց նրա հակաբանվորական ուղղվածությունը, ամենից առաջ բանվորների գործադուլային պայքարի ձախողման ձգտման, բորբոքված կոնֆլիկտներում ձեռնարկատերերի շահերի պաշտպանման մեջ։

Մեծ Բրիտանիայի կոմկուսի պայքարը 1924 թ.։ Առաջին լեյբորիստական կառավարության հրաժարականը

Կոմկուսը պաշտպանելով բանվորների իսկական շահերը, մերկացնում էր լեյբորիստական կառավարության հակաբանվորական քաղաքականությունը։ Նրա նախաձեռնությամբ 1924 թ. առաջացավ Փոքրամասնության ազգային շարժումը (ՓԱՇ), տրեդ-յունիոնների ռեֆորմիստական ղեկավարության դեմ ուղղված հեղափոխական արհմիութենական օպոզիցիայի շարժումը։ 1924 թ. օգոստոսին կայացած նրա ազգային առաջին կոնֆերանսում, որը ներկայացնում էր 250 հազ. բանվորների, ընտրվեց Կենտրոնական գործադիր կոմիտե, որի գլխավոր քարտուղար ընտրվեց Հարրի Պոլլիտը՝ Մեծ Բրիտանիայի կոմկուսի ղեկավարներից մեկը (1929 թ. նա ընտրվեց կոմկուսի գլխավոր քարտուղար)։ ՓԱՇ-ի ազդեցությունը որոշակի չափով արտահայտվեց Գուլլում կայացած (1924 թ. սեպտեմբեր) տրեդ-յունիոնների 56-րդ կոնգրեսի որոշումներում, կոնգրես, որտեղ ընդունվեց Ինդուստրիալ բանվորի խարտիան, որը պահանջներ էր պարունակում հողի, հանքերի, երկաթուղիների ազգայնացման, 44-ժամյա աշխատանքային շաբաթվա, արդյունաբերության բոլոր ճյուղերում աշխատավարձի երաշխավորված մինիմումի մասին և այլն։ ՍՍՀՄ-ի արհմիությունների հետ մերձենալու մասին այդ կոնգրեսի ընդունած որոշումը հասցրեց Միասնության անգլո-ռուսական կոմիտեի ստեղծմանը, որը Սկարբորոյում (1925 թ. սեպտեմբեր) հավանություն գտավ Մեծ Բրիտանիայի կոմկուսի կողմից։

Կոմկուսը ձգտում էր ակտիվորեն մասնակցել գործադուլային պայքարին։ 1924 թ. հունվարին, ի պատասխան աշխատավարձը նվազեցնելու երկաթուղային մագնատների փորձերի, գործադուլ արեցին երկաթուղային բանվորները։ Փետրվարին գործադուլ արեցին նավահանգստային բանվորները, որոնք պահանջեցին օրական 2 շիլինգով ավելացնել աշխատավարձը և սահմանել երաշխավորված աշխատանքային շաբաթ։ Արհմիութենական առաջնորդների, մասնավորապես Էռնեստ Բևինի դավաճանության հետևանքով գործադուլն ավարտվեց «կոմպրոմիսային» համաձայնությամբ. աշխատավարձն ավելացավ ոչ թե 2 շիլինգով, այլ 1 շիլինգով։ Նավահանգստային բանվորների կոնֆերանսում Բևինը հայտարարեց, որ «եթե գործադուլը չավարտվի, բանվորական կառավարությունը հարկադրված կլինի շտրեյկբրեխերներ օգտագործել և նրանց ռազմական աջակցություն ցույց տալ»։

1924 թ. մարտին ծագեց քաղաքային տրանսպորտի բանվորների գործադուլը։ Սկզբում գործադուլ արեցին Լոնդոնի տրամվայի բանվորները։ Նրանց միացան վարորդները և ավտոբուսային պարկի սպասարկող անձնակազմը։ Գործադուլավորները պահանջում էին 8 շիլինգի հավելում շաբաթվա աշխատավարձին։ Այդ գործադուլի ժամանակ լեյբորիստական կառավարության վերաբերմունքը ցայտուն կերպով արտահայտվեց համայնքների պալատում պրեմիեր մինիստր Մակդոնալդի մարտի 27-ի ճառում, որը հայտարարեց բանվորների դեմ մղվող պայքարում արտակարգ դրության օրենքը կիրառելու կառավարության պատրաստակամության մասին։ Մարտի 28-ի գործադուլն ավարտվեց «համաձայնությամբ»։ Նրանք, ովքեր աշխատում էին արհեստանոցներում, շաբաթական ստանում էին 4 շիլինգի հավելում, մնացածները՝ 5—6 շիլինգի։

1924 թ. հուլիսին գործադուլ արեցին շինարար բանվորները։ Գործադուլն ավարտվեց օգոստոսի 22-ի մի համաձայնագրի կնքմամբ, ըստ որի բանվորների աշխատավարձն ավելանում էր (մինչև 1926 թ. փետրվարի 1-ը) ժամը կես պենսով։ Հենց այդ ժամանակ էլ սկսվեց Կովենտ-Գարդենի մեծածախ շուկայի բեռնակիրների գործադուլը, որոնք պահանջում էին 4 ֆունտ 5 շիլինգի շաբաթական երաշխավորված աշխատավարձ։ Տրեդ-յունիոնների ղեկավարության համաձայնողական դիրքի պատճառով գործադուլն ավարտվեց բանվորների պարտությամբ։

Այսպիսով, թեև լեյբորիստական կառավարությունը ձգտում էր ձախողել բանվորների պայքարը, սարսափի էր ենթարկում գործադուլային շարժումը, նա այնուամենայնիվ լիովին չարդարացրեց այն հույսերը, որոնք նրա հետ կապել էին անգլիական կապիտալիստները։ Ձեռնարկատերերի փորձերը՝ իշխանության մեջ լեյբորիստների գտնվելն օգտագործել բանվորների դեմ ճընշումն ուժեղացնելու համար հանդիպում էին անգլիական պրոլետարիատի տոկուն դիմադրությանը։

Պահպանողականները, որոնք որոշ ժամանակ իշխանությունը զիջել էին լեյբորիստներին, սպասում էին այն վերստին ետ ստանալու պահին։ Պահպանողականների աջ թևը հատուկ ջանքեր էր գործադրում լեյբորիստական կառավարության հրաժարականի կամպանիան անցկացնելու ժամանակ, դժգոհ լինելով ՍՍՀՄ-ի հետ կնքված ընդհանուր քաղաքական և առևտրական պայմանագրերից։ Նա այդ հարցի առթիվ բլոկի մեջ մտավ աջ լիբերալների մի խմբի հետ, որը 1924 թ. հոկտեմբերի 1-ին պառլամենտում առաջարկություն մտցրեց անգլո-սովետական պայմանագրերը մերժելու մասին։ Դա լրջորեն քայքայում էր լեյբորիստական կառավարության դիրքերը, որը պահպանվում էր լիբերալների ձայների շնորհիվ։ Այդ նույն ժամանակ լեյբորիստական պարագլուխները, զգալով մասսաների հարաճուն դժգոհությունն իրենց կառավարումից, առիթ էին որոնում օպոզիցիայի նստարաններին անցնելու համար՝ մեծացնելով իրենց քաղաքական կապիտալը։ Լեյբորիստական կառավարության հրաժարականի համար անմիջական, զգալիորեն Մակդոնալդի կողմից ստեղծված առիթ դարձավ, այսպես կոչված, Քեմպբելի գործը. լեյբորիստական մինիստրների ցուցումով սկսվեց Մեծ Բրիտանիայի կոմկուսի ղեկավարներից մեկի՝ Քեմպբելի քրեական հալածանքը այն կապակցությամբ, որ նա ագիտացիա էր տանում ընդդեմ նոր պատերազմի նախապատրաստման իմպերիալիստական քաղաքականության և բանվորների գործադուլային շարժման դեմ մղվող պայքարում զորքերի օգտագործման։ Բայց հետո մասսաների զայրույթի պատճառով հարկ եղավ Քեմպբելին ազատել։ Պահպանողականների համար այդ էլ բավական էր, որպեսզի համայնքների պալատում քվեարկության դնեին կառավարությանը վստահություն հայտնելու հարցը, նրան մեղադրելով «բրիտանական հղորության հիմքերի» դեմ ուղղված պրոպագանդան պաշտպանելու մեջ։ Լիբերալները չպաշտպանեցին անվստահության քվեն, առաջարկելով կոմիտե ստեղծել այդ հարցը հետաքննելու համար։ Լեյբորիստական կառավարությունը կարող էր շարունակել իր գործունեությունը։ Բայց լեյբորիստական պարագլուխները չէին ցանկանում ձեռքից բաց թողնել այսպիսի պատրվակը։ Հոկտեմբերի 9-ին Մակդոնալդը թագավորին հանձնեց կառավարության հրաժարականի վերաբերյալ դիմումը։

Պառլամենտը ցրվեց, իսկ հոկտեմբերի 29-ին հակակոմունիստական հիստերիայի իրադրության մեջ տեղի ունեցան ընտրություններ, որոնք պահպանողականների համար տեղերի գերակշռող մեծամասնություն ապահովեցին համայնքների պալատում (415). լեյբորիստները կորցրին 40 տեղ՝ 191-ի փոխարեն միայն 151 թեկնածու անցկացնելով։ Լիբերալներին հաջողվեց ստանալ միայն 44 մանդատ։ Իշխանություն վերադարձավ Բոլդուինի պահպանողական կառավարությունը։ Լեյբորիստների կուսակցության այդ օրերին տեղի ունեցած հերթական համագումարում Մակդոնալդը ներկայացավ որպես «կոմունիստների զոհ», որն ապահովեց համագումարում այնպիսի բանաձևի ընդունումը, որը մեկ անգամ ևս հաստատում էր լեյբորիստական կուսակցության մեջ Մեծ Բրիտանիայի կոմկուսին ընդունելու մերժումը։ Ընդունված որոշումներում հակադեմոկրատական այլ սահմանափակումներ ևս կային՝ արգելվում էր պառլամենտում կամ իշխանության որևէ այլ տեղական մարմինում ընտրվելու համար կոմկուսի անդամներին առաջադրել որպես լեյբորիստական թեկնածուներ, ինչպես նաև նրանց որպես անհատ անդամներ ընդունել լեյբորիստական կուսակցության մեջ։

Իսկ պահպանողականները, ստանալով իշխանությունը, շարունակում էին հարձակումը բանվոր դասակարգի դեմ։ 1925 թ. անգլիական ֆինանսիստների եկամուտների առավել կայունությունն ապահովելու համար անցկացվեց վալյուտայի կայունացում՝ սահմանվեց անգլիական ֆունտ ստերլինգի «ոսկե ստանդարտ», որը հարվածեց աշխատավորության շահերին։ Մյուս կապիտալիստական երկրների մրցակցությունն ավելի մեծ չափով ճաշակող անգլիական բուրժուազիայի ձգտումը՝ հատուցել «կորուստները» «իր» բանվորների շահագործումն ուժեղացնելու հաշվին, հատկապես արտահայտվեց աշխատավորների՝ առաջին հերթին հանքափոր բանվորների կենսամակարդակի վրա ուղղակի հարձակումներ կատարելու մեջ։

«Կարմիր ուրբաթը» (1925 թ.)

Բոլդուինի կառավարությունը ստիպված էր միջամտել այն կոնֆլիկտին, որն առաջացավ ածխի արդյունաբերության մեջ, որպեսզի հետաձգի նրա հետագա սրումը։ Դա Բոլդուինի «հեռավոր նշանակետի» քաղաքականությունն էր. 1925 թ. կառավարող շրջանները պատրաստ չէին ընդհանուր գործադուլի ջախջախմանը, գործադուլ, որը հակառակ դեպքում անխուսափելի կդառնար։

Անգլիական ածխային արդյունաբերության անմխիթար դրությունն այդ ժամանակ բարդանում էր արտաքին շուկաներում Գերմանիայի մրցակցության սրումով, որն ինչ-որ ձևով կապված էր Դաուեսի պլանի իրագործման հետ։ Իսկ հանքատերերը չէին ուզում հրաժարվել իրենց եկամուտներից և մտադրվեցին չտեսնված հարձակում իրականացնել հանքափորների դեմ, որոնք առանց այն էլ կազմում էին բանվոր դասակարգի առավել ընչազուրկ ջոկատներից մեկը։ 1925 թ. հունիսին առաջադրված նրանց ծրագիրը հանգում էր հետևյալին. 1) բանվորների հետ համազգային պայմանագրերի փոխարեն ըստ օկրուգների պայմանագրերի սահմանում (որն անխուսափելիորեն կթուլացներ բանվորների դիմադրությունը ձեռնարկատերերի հարձակման հանդեպ), 2) աշխատավարձի իջեցում (13-ից մինչև 48 տոկոսով), 3) աշխատավարձի մինիմումի վերացում։ Դա վերջնագիր էր. բանվորական կազմակերպությունների չհամաձայնվելու դեպքում ձեռնարկատերերը սպառնում էին լոկաուտ հայտարարել (1925 թ. օգոստոսի 1-ից)։ Կառավարությունը համերաշխվեց այդ հակաբանվորական ծրագրի հետ։ «Բոլոր բանվորները պետք է համաձայնվեն

աշխատավարձի իջեցմանը, որպեսզի օգնեն մեր արդյունաբերությանը ոտքի կանգնելու»,— այդ օրերին հայտարարեց պրեմիեր մինիստր Բոլդուինը։

Բայց բանվորները վճռականություն հանդես բերեցին։ Նրանք հասկանում էին, որ մյուս ճյուղերի ձեռնարկատերերը չեն հապաղի հետևելու ածխահանքերի տերերի օրինակին և հարձակումը ընդհանուր բնույթ կընդունի։ Տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսի գլխավոր խորհուրդը ստիպված էր կոչ անել բոյկոտի ենթարկելու ածխի բեռնումն ու բեռնաթափումը, հատուկ կոմիտե ստեղծելով երկաթուղայինների ու տրանսպորտայինների տրեդ-յունիոնների ղեկավարության հետ համատեղ գործողությունների վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերելու համար։ Ընդհանուր գործադուլը պետք է սկսվեր հուլիսի 31-ին։ Այդ պայմաններում ժամանակ շահելու և հաջողությունն ապահովելու համար բոլոր ուժերը մոբիլիզացնելու նպատակով կառավարությունը հուլիսի 31-ին հանքատերերին 20 մլն ֆունտ ստերլինգի սուբսիդիա տվեց, դրանով իսկ հետաձգելով կոնֆլիկտը։ Դա եղավ «կարմիր ուրբաթը» (ի տարբերություն 1921 թ. «սև ուրբաթի»)։ Բանվորները ցնծալից նշում էին հաղթանակը։

Հաղթանակը, սակայն, եղավ սոսկ ժամանակավոր։ Վճռական մարտերն առջևում էին։ Դրանցից կարելի էր խուսափել միայն լիակատար կապիտուլյացման գնով։ Այլ ալտերնատիվ էր այդ մարտերի մեջ կազմ ու պատրաստ մտնելը։ Կոմկուսը սկզբից ևեթ բանվորներին նախազգուշացնում էր, որ բուրժուազիան նահանջել է միայն նրա համար, որպեսզի ուժեր հավաքի։ Մեծ Բրիտանիայի կոմկուսը հայտարարեց պայքարին բազմակողմանիորեն պատրաստվելու, բոլոր ուժերը մոբիլիզացնելու, ամբողջ բանվոր դասակարգի գործողությունների միասնությունն ապահովելու անհրաժեշտության մասին։

Պահպանողականների կառավարությունն իրեն հաշիվ էր տալիս Մեծ Բրիտանիայի կոմկուսի հեղափոխական դերի վերաբերյալ։ Այն գլխատելու համար նա 1925 թ. դեկտեմբերին ձերբակալեց կուսակցության 12 ղեկավարների։ Կառավարող շրջանները ենթադրում էին, որ նման ձևով նրանք լիովին կկազմալուծեն նրա գործունեությունը։ Բայց նրանք սխալվեցին։ Դրանից հետո էլ կոմունիստները պրոպագանդում էին ընդհանուր գործադուլին նախապատրաստվելու անհրաժեշտությունը։ Բանվոր դասակարգի պայքարի նախապատրաստման պլանը, որն առաջարկեց Մեծ Բրիտանիայի կոմկուսը 1926 թ. հունվարին, այլ միջոցառումների հետ նախատեսնում էր բանվորների մասսայական մուտքը արհմիություններ, հեղինակավոր ֆաբրիկա-գործարանային կոմիտեների և արհմիությունների խորհուրդների ստեղծում, կենտրոնական ապարատի նախապատրաստումն ընդհանուր գործադուլի անցկացման համար, բանվորական ինքնապաշտպանության դրուժինաների ստեղծում, համագործակցություն կոոպերատիվների հետ, պրոպագանդայի ուժեղացում, հատկապես բանակում և նավատորմում։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի գործունեությանը աջակցություն էր ցույց տալիս ՓԱՇ-ը։

Պատրաստվելով վճռական ճակատամարտին, կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում շտրեյկբրեխերական մեքենայի պատրաստմանը։ Ստեղծվում էին շտրեյկբրեխերական կազմակերպություններ։ Դրանցից գլխավորը կոչվում էր «Մատակարարմանն աջակցող կազմակերպություն»։ Գիշերները ֆաբրիկաներ էին գալիս շտրեյկբրեխերներ և սովորում աշխատել դազգահների վրա, որպեսզի գործադուլի դեպքում փոխարինեն բանվորներին։ Ստեղծվում էին ածխի, հումքի և պարենի պաշարներ։ Հատուկ լիազորություններով օժտված կառավարության անդամներ դրվեցին շրջանների գլուխ. ամ-

բողջ երկիրը բաժանվեց այդպիսի շրջանների։ Համապատասխան ձևով վերատեղաբաշխվեցին զորամասերը, ուժեղացվեց ոստիկանությունը։

Հանքափորների հետ գլխավոր ճակատամարտի գաղափարական նախապատրաստության նպատակով կառավարությունը ստեղծեց հատուկ «Թագավորական հանձնաժողով», որը պետք է «հաշտեցներ» հասարակական կարծիքը հանքափորների կենսամակարդակի իջեցման այդքան շեշտակի միջոցառումների հետ։ Իրենց հերթին լեյբորիստական կուսակցության և տրեդ-յունիոնների պարագլուխներն այն օգտագործեցին իրենց անգործունեությունն «արդարացնելու» համար։ Երբ հանձնաժողովի հաշվետվությունը 1926 թ. մարտին պատրաստ էր, լեյբորիստական պարագլուխները (Մակդոնալդը, Թոմասը և ուրիշներ) հայտարարեցին, որ պատրաստ են այն ընդունել որպես ձեռնարկատերերի հետ համաձայնության հիմք, չնայած այն բանին, որ բոլոր հիմնական հարցերում այն պաշտպանում էր հանքատերերի պահանջները։

Իսկ հանքափորների ֆեդերացիան վճռականորեն արտահայտվեց հանձնաժողովի եզրակացություններն ընդունելու դեմ։ Հանքափորներին պաշտպանեց ՓԱՇ-ի կոնֆերանսը, որը տեղի ունեցավ 1926 թ. մարտի 20-ին։ Այլ ճյուղերի բանվորները պայքարելու պատրաստականություն էին հայտնում ի պաշտպանություն հանքափորների շահերի։ Այդ իրադրության մեջ ապրիլի 29-ին գումարված տրեդ-յունիոնների գործկոմների կոնֆերանսը ձայների ճնշող մեծամասնությամբ որոշում ընդունեց ընդհանուր գործադուլ անցկացնելու մասին։

1926 թ. ընդհանուր գործադուլը

9 օր տևած ընդհանուր գործադուլն սկսվեց մայիսի 3-ի կեսգիշերին։ Առաջին իսկ օրերին գործադուլ արեց մոտ 2,5 մլն մարդ, իսկ հետո գործադուլավորների թիվը հասավ 5 միլիոնի։ Արդյունաբերական ձեռնարկություններն ու տրանսպորտը դադարեցրին աշխատանքը։ Ավտոմեքենաները կարող էին ազատորեն երթևեկել միայն այն դեպքում, եթե վարորդներն անցաթղթեր՝ «տրեդ-յունիոնների կոնգրեսի թույլտվություն» ունեին։ Գրեթե լիովին դադարեց թերթերի լույս ընծայումը։ Տրեդ-յունիոնների անդամների հետ մեկտեղ գործադուլի մեջ ներգրավվեցին նաև չկազմակերպված բանվորները։ Գործադուլավորներն իրենք էին պիկետավորում ձեռնարկություններն ու փողոցները։ Գլխավոր խորհուրդը ջանում էր գործադուլը ներկայացնել որպես զուտ «տնտեսական» և միջոցներ էր ձեռնարկում, որպեսզի պայքարը պահպանի տնտեսական ուղղվածությունը։ Գործադուլի կազմակերպման ու ղեկավարման ամբողջ աշխատանքը կատարվում էր գլխավորապես պայքարի ընթացքում առաջացած գործողության խորհուրդների կողմից, որոնց թիվը ամբողջ երկրում հասնում էր ավելի քան հարյուրի։ Գործադուլային ապարատի ստեղծման և գործադուլի կազմակերպման մեջ իրենց ավանդը մուծեցին Մեծ Բրիտանիայի կոմկուսն ու ՓԱՇ-ը։ Իսկ ինչ վերաբերում է տրեդ-յունիոնիստական աջ պարագլուխներին, ապա նրանք ընդհանուր գործադուլն սկսվելուց միայն երկու օր հետո որոշեցին ձեռնամուխ լինել գործադուլային կազմակերպչական կոմիտեի ստեղծմանը, որի գլուխ կանգնեց Էռնեստ Բևինը։

Մինչդեռ գործադուլը բանվորների նորանոր զանգվածներ էր ընդգրկում և տարերայնորեն վերաճում էր քաղաքականի։

Անգլիական բանվորների պայքարն ամբողջ աշխարհում առաջ բերեց պրոլետարական համերաշխության հզոր ալիք։ Բանվորները Գերմանիայում, Բելգիայում, Հոլանդիայում դադարեցրին ածխի բեռնումը անգլիական նավերը, կազմակերպում էին Անգլիայի գործադուլավոր պրոլետարիատի հետ հա-

մերաշխության գործադուլներ։ Մի քանի երկրներում սկսվեց միջոցների հանգանակություն հօգուտ անգլիական բանվորների։ ՍՍՀՄ-ի աշխատավորները իրենց աշխատավարձի մի մասը փոխանցեցին անգլիական գործադուլավորների ֆոնդը, բայց Գլխավոր խորհուրդը չկամեցավ ընդունել նրանց հավաքած միջոցները։ ՀԱՄԿԽ-ն ստիպված էր դրանք հանձնել անմիջականորեն անգլիական հանքափորների գործադուլային կոմիտեին։

Հաշվի առնելով լեյբորիստական պարագլուխների դիրքը, անգլիական կառավարությունը համոզված էր իր հաղթանակում։ Մայիսի 5-ին համայնքների պալատում, իսկ մայիսի 8-ին ռադիոյով Բոլդուինը հայտարարեց, որ գործադուլը պետք է դադարեցվի գործադուլավորների կողմից առանց որևէ նախնական պայմաններ առաջադրելու։ Իսկ կառավարող շրջաններում տարածվող կարծիքները գործադուլի զուտ քաղաքական բնույթի մասին, այն մասին, որ «սկսվում է հեղափոխություն», «քաղաքացիական պատերազմ», և նույնիսկ այն մասին, որ «Տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսին արված գործադուլի կոչը օտարերկրյա ծագում ունի», նպատակ ունեին արդարացնելու արտակարգ լիազորությունների վերաբերյալ օրենքը, մասսայական ձերբակալություններն ու բռնությունները կառավարության կողմից ակտիվորեն օգտագործելը։ Դրանք պետք է նաև ահաբեկեին բանվորական աջ պարագլուխներին և նրանց ստիպեին ապահովել ընդհանուր գործադուլի ձախողումը։ Մայիսի 11-ին Անգլիայի գերագույն դատարանը վճիռ կայացրեց այն մասին, որ ընդհանուր գործադուլը «լեգալ չէ և այն անձինք, ովքեր գործադուլի կոչ են անում կամ մասնակցում նրան, չեն պաշտպանվում աշխատանքային կոնֆլիկտների վերաբերյալ 1906 թ. օրենքով»։ Բանվորների աջ պարագլուխները չհապաղեցին օգտագործելու այդ որոշումը որպես ընդհանուր գործադուլը դադարեցնելու իրավական լրացուցիչ առիթ։ Տառացիորեն հաջորդ օրը, մայիսի 12-ին, գլխավոր խորհրդի անդամները, հանդիպելով Բոլդուինի հետ, հայտարարություն արեցին գործադուլի դադարեցման մասին։ Գործադուլը դադարեցնելու մասին ցուցումներն ուղարկվեցին երկրի բոլոր շրջանները։

Բանվորական աջ պարագլուխները դադարեցնելու ահազանգ տվեցին և ընդհանուր գործադուլը ձախողեցին այնպիսի պայմաններում, երբ այն շարունակում էր ընդլայնվել, և Անգլիայի բանվոր դասակարգը լի էր վճռականությամբ շարունակելու պայքարը։ Այսպես, հանքափորները գործադուլ արեցին ընդհուպ մինչև 1926 թ. դեկտեմբերը։ Գործադուլի ընթացքում բանվորները մնացին առանց ղեկավարության։ Այդ նույն ժամանակ կառավարությունը, գործադուլը որպես վտանգ դիտելով գոյություն ունեցող կարգերի համար, մոբիլիզացրեց բուրժուական հասարակության բոլոր ուժերը, լայնորեն օգտագործեց արտակարգ լիազորությունները։ Կառավարող դասակարգերը պատրաստ էին և համախմբված՝ պայքարելու համար, գործում էին առանց տատանվելու, վճռականորեն ու նպատակասլաց։ Կոմունիստական կուսակցությունը ճիշտ քաղաքականություն էր վարում, բայց նա դեռ բավարար աղդեցություն չուներ, որպեսզի իր հետևից տաներ բանվոր դասակարգի մեծամասնությանը հակառակ աջ պարագլուխների քաղաքականության։

1926 թ. ընդհանուր գործադուլը, չնայած պարտությանը, կարևորագույն իրադարձություն եղավ անգլիական բանվոր դասակարգի պատմության մեջ, որը առաջին անգամ ցույց տվեց, թե ինչպիսի ուժ է տալիս բանվոր դասակարգին համերաշխությունը, որը դրսևորվեց այդպիսի վիթխարի մասշտաբներով։ Այն անգլիական պրոլետարիատի դասակարգային խոշորագույն ելույթն էր, անգլիական պատմության մեջ առաջին ընդհանուր գործադուլը։

Իզուր չէ, որ հետագա տարիներին, ընդհուպ մինչև մեր օրերը, անգլիական բանվորներն իրենց ամենօրյա պայքարում հաճախ են անդրադառնում 1926 թ. ընդհանուր գործադուլի իրադարձություններին, օգտագործում նրա փորձն ու դասերը։ Նրանք հիշում են այն «ինն օրերը, որոնք ցնցեցին Բրիտանիան»։ Այդ չեն մոռանում նաև նրա կառավարող դասակարգերը։

1926 թ. ընդհանուր գործադուլի պատմագրությունը

1926 թ. ընդհանուր գործադուլն արտացոլվել է տարբեր ուղղությունների՝ բուրժուական, լեյբորիստական, առաջադիմական պատմագրության մեջ։ Անգլիական բուրժուական պատմագրության հիմքերը դրվեցին դեռ իրադարձությունների ընթացքում, Բոլդուինի կողմից ընդհանուր գործադուլին տրված գնահատականի ձևով, որպես «հեղափոխության», «սահմանադրության դեմ ուղղված մարտակոչի», որը սպառնալիք է ստեղծում օրինական իշխանության համար, Անգլիան հրում «դեպի քաղաքացիական պատերազմի եզրը»։ Այդ գնահատականները հետագայում փոխադրվում էին անգլիական բուրժուական պատմաբանների (Մերիոտի, Սոմմերվելի, Մակկոուբիի)[5] աշխատությունները, պատմաբաններ, որոնք հանդես էին գալիս որպես նույնիսկ չափավոր դասակարգային կոմպրոմիսների հակառակորդներ, որն արտահայտվեց նաև ընդհանուր գործադուլի գնահատականում։

Աջ լեյբորիստական պատմագրությունն ընդհանուր գործադուլի գնահատականում շատ բանով մոտենում է բուրժուական պատմաբանների տեսակետին։ Այսպես, Կոուլը (ինչպես նաև անգլիական բուրժուական պատմաբան Մոուվատը) ընդգծում է 1926 թ. ընդհանուր գործադուլի անմտությունը, այն համարում «շեղում իրադարձությունների գլխավոր ուղղությունից», թեկուզև, ի տարբերություն բուրժուական պատմագրության, մերժում է նրա ոչ սահմանադրական բնույթի մասին թեզը։ Այդ գնահատականը անխզելիորեն կապված է անգլիական բանվորական շարժման զարգացման նրա մշակած ընդհանուր սխեմայի հետ, շարժում, որը, նրա կարծիքով, իր զարգացման մեջ անցել է չորս փուլ (1. «խռովարարական ժամանակաշրջան»— նապոլեոնյան Ֆրանսիայի հետ պատերազմների և չարտիստական շարժման սկզբնավորումից մինչև ավարտը. 2. 1848 թվականից մինչև XIX դարի 80-ական թվականները—կապիտալիզմի պայմաններում բանվորների «ակլիմատիզացման» փուլ. 3. XIX դարի 80-ական թվականներից մինչև առաջին համաշխարհային պատերազմը— «սոցիալիզմի՝ որպես բանվորների աճող զանգվածի հավատի խորհրդանշանի հանդես գալու, լեյբորիզմի վերելքի ժամանակ. 4. «նորագույն ժամանակ»— առաջին համաշխարհային պատերազմից և Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո— այդ փուլում լեյբորիստական կուսակցությունը պառլամենտում ներկայացնում է բանվորական շարժման բոլոր տեսակները և դառնում է «ազգային ուժ»)[6]։

Այդ սխեմայից երևում է, որ 1926 թ. ընդհանուր գործադուլին՝ դասակարգային պայքարի այդ հզոր պայթյունին, 4-րդ փուլում տեղ չի հատկացվում։ Բացի այդ, Կոուլը հռչակում է գործադուլային շարժման ակտիվության կախումը տնտեսական կոնյունկտուրայից, առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած տարիները բաժանելով ժամանակաշրջան-

[5] Տե՛ս Marriot J. A. R. Modern England. L., 1934; Sommervell D. C. British Politics since 1900. L., 1950; Maccoby S. Radicalism: The End? L., 1961։

[6] Տե՛ս G. D. K. Cole, A. Short History of the British Working Class Movement. 1789—1925, vol. 1, L., 1925, p. 12.

ների (1918—1921 թթ., 1921—1924 թթ., 1924—1928 թթ. և այլն)։ Քանի որ երրորդ ժամանակաշրջանում (1924—1928 թթ.) տնտեսության մեջ առկա էր լճացածությունը, «բում» չկար, ըստ Կոուլի սխեմայի, այդ շրջանում պետք էր սպասել տնտեսական պայքարի և բանվորների համերաշխության թուլացման։ Չէ՞ որ, ըստ Կոուլի, «ուղղակի գործողության» դարաշրջանն ավարտվեց 1921 թ. «սև ուրբաթով»[7]։

Ուշադրություն է գրավում աջ լեյբորիստական հեղինակ Ռ. Միլիբենդի «Պառլամենտական սոցիալիզմ» գիրքը։ 1926 թ. ընդհանուր գործադուլի լուսաբանման մեջ գրքի առավել ուժեղ կողմը լեյբորիստական աջ ղեկավարության քննադատությունն է, ղեկավարություն, որն, ինչպես ընդգծում է հեղինակը, հանդես էր գալիս ընդդեմ քաղաքական գործողության բոլոր ձևերի, որը, նրա կարծիքով, դուրս էր գալիս «պառլամենտական սիստեմի շրջանակներից ու պայմաններից»[8]։

Ընդհանուր գործադուլի խոր վերլուծությունը տալիս է մարքսիստական պատմագրությունը։ Դեռ 1926 թ. հրապարակ եկան երեք աշխատություններ, որոնց հեղինակները կոմունիստներ էին՝ Պալմ Դատտը[9], Փեյջ Առնոտը[10] և Էմիլ Բերնսը[11]։ Նրանք դրեցին գործադուլի մարքսիստական լուսաբանման հիմքը, մեզ հասցրին բանվորների պայքարի պաթոսը։ Աշխատություններում օգտագործված են բազմաթիվ փաստաթղթեր, որոնք մերկացնում են Գլխավոր խորհրդի և լեյբորիստական կուսակցության պարագլուխների վարքագիծը, բացահայտում Մեծ Բրիտանիայի կոմկուսի դերը։ Ինչպես ընդգծում էր Պալմ Դատտը, «հենց իր պարտությամբ էլ այն (1926 թ. ընդհանուր գործադուլը— խմբ.) ազդեցիկ հեղափոխական դաս և ապագայի նկատմամբ խթան է հանդիսանում»։

Ընդհանուր գործադուլի 25-ամյակի առթիվ Անգլիայում հրապարակվեց Ջ. Մերրեյի «1926 թ. ընդհանուր գործադուլն Անգլիայում» մարքսիստական աշխատությունը[12]։ Դրա մեջ բացահայտված է ընդհանուր գործադուլի պատմական դերը և մերկացվում են լեյբորիստական ու բուրժուական պատմագրության հերյուրանքները, իբրև թե գործադուլն իրեն չի արդարացնում որպես բանվոր դասակարգի պայքարի զենք։ Մերրեյը համոզիչ կերպով ցույց է տալիս Բոլդուինի կառավարության գործողության դասակարգային բնույթը, բանվորական աջ պարագլուխների դավաճանական քաղաքականությունը, պարագլուխներ, որոնք, ինչպես կրակից, վախենում էին բանվորների հեղափոխականացման հեռանկարներից, մերժում գործադուլը, իսկ հետո ձախողում այն։ 1926 թ. ընդհանուր գործադուլի պարտության գլխավոր պատճառ Մերրեյը համարում է գործադուլի քաղաքական ղեկավարության բացակայությունը։

Մինչև 1969 թ. Անգլիայում լույս տեսավ «Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցության պատմության» 2-րդ հատորը՝ «Ընդհանուր գործա-

[7] Տե՛ս G. D. K. Cole, A History of the Labour Party from 1914, L., 1948, p. 117

[8] Р. Милибенд, Парламентский социализм. М., 1964, էջ 8.

[9] Տե՛ս R. P. Dutt, The Meaning of the General Strike. Communist Party of Great Britain, 1926։

[10] Տե՛ս R. P. Arnot, The General Strike. May 1926. Its origin and History. Labour Research Department. L., 1926։

[11] Տե՛ս Em. Burns, The General Strike. May 1926. Trades Councils in Action Labour Research Department. L., 1926։

[12] Ռուսերեն թարգմանությամբ հրապարակի վրա կա՝ Дж. Мэррей, Всеобщая забастовка 1926 г. в Англии. М., 1954։

դուլը», որտեղ տրվում է 1926 թ. իրադարձությունների մարքսիստական-լենինյան խոր վերլուծությունը[13]։

Ընդհանուր գործադուլն արտացոլվել է նաև սովետական պատմագրության մեջ, որտեղ այդ պրոբլեմին նվիրվել են մի շարք աշխատություններ[14]։

Անգլիան 1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամի նախօրյակին

Օգտագործելով ընդհանուր գործադուլի պարտությունը, անգլիական բուրժուազիան հարձակման անցավ բանվոր դասակարգի դեմ։ Կառավարող դասակարգերի կողմից վրիժառության բացահայտ ակտ եղավ 1927 թ. «Արդյունաբերական կոնֆլիկտների և տրեդ-յունիոնների մասին» չափազանց ռեակցիոն օրենքը, որը արգելում էր ընդհանուր և համերաշխության գործադուլները։

Ընդհանուր գործադուլի ջախջախումից հետո տրեդ-յունիոնների աջ պարագլուխները դիմեցին ձեռնարկատերերի հետ ավելի սերտ համագործակցության հաստատմանը կապիտալիստական ռացիոնալիզացում անցկացնելու նպատակով, որպեսզի «մեծացնեն բրիտանական ինդուստրիայի մրցակցային ուժը համաշխարհային շուկաներում»։ Քողարկման համար տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսի նախագահի հայտարարության մեջ ասվում էր «արդյունաբերության արտադրողականությունն ավելացնելու և բանվորների կենսամակարդակը բարձրացնելու մասին»։ Բանվորական աջ պարագլուխների նախաձեռնությունը մոնոպոլիստների կողմից հավանության արժանացավ, որոնց անունից Ալֆրեդ Մոնդը (հետագայում լորդ Մելչետ), «Կայսերական քիմիական տրեստի» հիմնադիրը, բանակցություններ վարելուն պատասխանեց համաձայնությամբ։ Ձեռնարկատերերի և բանվորական աջ պարագլուխների միացյալ առաջին նիստը տեղի ունեցավ 1928 թ. հունվարին։ Մշակվեցին «մոնդիզմ» անունը ստացած քաղաքականության հիմունքները, որոնք տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսի զեկուցագրում 1928 թ. սեպտեմբերին ներկայացվեցին տրեդ-յունիոնների կոնգրեսին։ Դրա մեջ հռչակվում էր հրաժարումը բանվոր դասակարգի ակտիվ պայքարի քաղաքականությունից, որպես «անօգուտ, բացահայտորեն անհաջողության դատապարտված քաղաքականության, որն անխուսափելիորեն տանում է դեպի արյունահեղություն ու դժբախտություն»։

Արհմիությունների մի քանի ոչ էական իրավունքների ճանաչման գնով տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսի ղեկավարությունը համաձայնվեց հարկադիր հաշտեցման սիստեմ մտցնել։ Առաջարկվում էր գլխավոր խորհրդի և ձեռնարկատերերի ներկայացուցիչներից ստեղծել ազգային արդյունաբերական խորհուրդ։ Ըստ էության, խոսքը վերաբերում էր արհմիութենական ապարատի մերձեցմանը կապիտալիստական արդյունաբերության ապարատի հետ՝ «ավելի բարձր արտադրողականության» հասնելու համար։ Պատահական չէ, որ տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսի 1928 թ. սեպտեմբերին կայացած կոնգրեսում 768 հազ. ձայն տրվեց ընդդեմ մոնդիզմի քաղաքականության (մեծամասնությունը կազմեց 2920 հազ.)։

Արտադրության աճ չապահովելով (1929 թ. սկսվեց տնտեսական ճգնաժամը), մոնդիզմը հասցրեց աշխատանքի պայմանների վատացման արդյունաբերության բոլոր ճյուղերում, աշխատանքի տեմպերի շեշտակի բարձրացման, գործարքային աշխատավարձի չափերի նվազման, բանվորների շահագործման ուժեղացման։

Դեռ տնտեսական ճգնաժամին նախորդած տարիներին սրվեցին հակասությունները կապիտալիստական պետությունների միջև, ուժեղացավ պայքարը հանուն իրացման շուկաների ու հումքի աղբյուրների։ Անգլիական կապիտալիզմի ռեակցիոն շրջանները ջանում էին այդ հակասությունները լուծել առաջին հերթին ՍՍՀՄ-ի հաշվին։ Բոլդուինի կառավարությունը հակասովետական բլոկ էր ստեղծում, նոր ինտերվենցիա պատրաստելով սովետական երկրի դեմ։ Ռեակցիայի ուժերն Անգլիայում, գործելով ԱՄՆ-ի ռեակցիոն շրջանների հետ ձեռք-ձեռքի տված, ջանում էին պայմաններ ստեղծել Սովետական Միության դեմ մղվող պայքարում Գերմանիային որպես գործիք օգտագործելու համար։ Անգլիական ու ամերիկյան մոնոպոլիաները վիթխարի կապիտալներ էին ներդնում գերմանական տնտեսության մեջ, դրանով նպաստելով Գերմանիայի ռազմաարդյունաբերական պոտենցիալի վերածնմանը՝ հույս ունենալով նման ուղիով բազա նախապատրաստել Սովետական Միության դեմ զինված ագրեսիայի համար։

Անգլիայում հակասովետական ակտիվ կամպանիա ծավալվեց։ Պահպանողական կառավարության ֆինանսների մինիստր Չերչիլը պահանջում էր «վճռական միջոցներ ձեռնարկել» ՍՍՀՄ-ի դեմ։ Պահպանողական կուսակցության մի շարք «պնդաճակատներ» պնդում էին խզել դիվանագիտական հարաբերությունները սովետական երկրի հետ։ 1926 թ. հունիսին նրանք պառլամենտ մտցրին մի բանաձև, որն առաջադրում էր այդ պահանջը։ Լսվում էին հակասովետական տարրերի վայնասունները «Անգլիայի ներքին գործերին ՍՍՀՄ-ի միջամտության մասին», նրանք մշտարթուն հսկողություն էին պահանջում Անգլիայում սովետական ներկայացուցիչների գործունեության նկատմամբ, և նույնիսկ այդ նպատակով ստեղծեցին հատուկ «զգոնության կոմիտե»։

1926 թ. հունիսին լույս տեսավ մի «Սպիտակ գիրք», որը պարունակում էր այնպիսի կեղծիքներ, որոնք նրա հեղինակները փորձում էին ներկայացնել որպես 1925 թ. հոկտեմբերին Մեծ Բրիտանիայի կոմկուսի շենքում կատարված խուզարկության ժամանակ հայտնաբերված փաստաթղթեր։ 1926 թ. հունիսի 25-ին պառլամենտական վիճաբանությունների ժամանակ «պնդաճակատները» վճռականապես պահանջեցին խզել դիվանագիտական և առևտրական հարաբերությունները ՍՍՀՄ-ի հետ, կեղծ հայտարարություններ արվեցին այն մասին, որ Սովետական Միությունը չի պահպանում անգլո-սովետական առևտրական պայմանագրի պայմանները և որ ընդհանրապես հնարավոր չէ նրա հետ հարաբերություններ պահպանել։

Անգլիան այդ ժամանակ հանդես եկավ որպես կապիտալիստական աշխարհի հակասովետական ուժերի ղեկավար, իսկ կառավարող պահպանողական կուսակցության դեռ 1926 թ. հոկտեմբերին տեղի ունեցած կոնֆերանսում ընդունված բանաձևում ասվում էր ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների խզման անհրաժեշտության մասին։ Հակասովետական կամպանիան էլ ավելի մեծ թափ ստացավ 1926 թ. վերջին և 1927 թ. առաջին ամիսներին։ 1926 թ. նոյեմբերի 15-ին «պնդաճակատները» հակասովետական տարրեր հանեցին Լոնդոնի փողոցները։ «Ցույցը», որի շարքերում հաջողվեց ներգրավել ոչ ավելի, քան երկու հազար մարդ, պահանջեց խզել դիվանագիտական հարաբերությունները ՍՍՀՄ-ի հետ։ Պահպանողական մամուլը հրապարակեց Լեսլի Ուրկվարտի շրջաբերական նամակը՝ ուղղված «Ռուս-ասիա-

---

[13] Տե՛ս „History of the Communist Party of Great Britain. Vol. 2. L., 1969։

[14] Տե՛ս А. Лепешинская, Английская всеобщая забастовка 1926 г. М.-Л., 1930; П. В. Гурович. Всеобщая стачка в Англии. М., 1959։

կան միացյալ ընկերության» նախկին փայատերերին, նրանց կոչ անելով հասնել այն բանին, որպեսզի պառլամենտի անդամները պաշտպանեն Սովետական Միության հետ դիվանագիտական հարաբերությունների խզման պահանջը։ Շուտով, Լոնդոնում սովետական լիազոր ներկայացուցչության վրա կատարված հարձակումից հետո, որը տեղի ունեցավ 1927 թ. փետրվարի 12-ին անգլիական կառավարության ցուցումով, 1927 թ. փետրվարի 23-ին Բոլդուինի կառավարությունը սովետական կառավարությանն ուղարկեց «նախազգուշացման նոտա», հող նախապատրաստելով ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելու համար։

1927 թ. անգլիական ռեակցիոներները հակասովետական ելույթների մի ամբողջ սերիա անցկացրին, իսկ շուտով, «Արկոսի» (Անգլիայի հետ առևտրի սովետական ընկերություն) վրա կատարված պրովոկացիոն հարձակումից հետո, 1927 թ. մայիսին անգլիական կառավարությունը հայտարարեց սովետական պետության հետ դիվանագիտական հարաբերությունների խզման մասին, չնայած որ անգլիական աշխատավորները բազմաթիվ միտինգներում վճռականորեն բողոքում էին պահպանողականների հակասովետական քաղաքականության դեմ։

Բայց պրովոկացիաների չենթարկվող սովետական կառավարության անհողդողդ խաղաղասիրական հաստատակամ քաղաքականությունը, կապիտալիստական երկրների միջև գոյություն ունեցող խոր հակասությունները, ինչպես նաև սոցիալիստական պետության պաշտպանության համար այդ երկրների աշխատավորության մղած պայքարը ձախողեցին իմպերիալիստական երկրների միասնական հակասովետական ինտերվենցիոնիստական ճակատ ստեղծելու պլանները։ Պահպանողականների քաղաքականությունը փաստորեն շուռ եկավ Անգլիայի շահերի դեմ։ Անգլիայում ստացված սովետական պատվերների ծավալը նվազեց 4 անգամ՝ 1924—1925 թթ. 23,5 մլն ֆունտ ստերլինգից մինչև 5,8 մլն ստերլինգի՝ 1927—1928 թթ., իսկ Անգլիայի բաժինը սովետական ներմուծման մեջ 1927—1928 թթ. կրճատվեց մինչև 5,5 տոկոսի (1925—1926 թթ. այն կազմում էր 18,6 տոկոս)։

ԱՆԳԼԻԱՆ 1929—1933 ԹԹ.

Տնտեսական ճգնաժամի զարգացումն Անգլիայում

Տնտեսական ճգնաժամի առանձնահատկությունն Անգլիայում ամենից առաջ այն էր, որ արտադրության անկումը (առ 1932 թ. մոտավորապես 23 տոկոսով) փոքր-ինչ ավելի նվազ էր, քան մի շարք այլ երկրներում։ Դա գլխավորապես բացատրվում էր նախորդ տարիներին արտադրության շոշափելի վերելքի բացակայությամբ։ Բայց մի շարք կարևոր ճյուղերում (չուգունի և պողպատի, մեքենաների արտադրություն, ածխի հանույթ, նավաշինություն և այլն) անկումը ճգնաժամի տարիներին միջինից բարձր էր։ Ճգնաժամը հասցրեց առաջին հերթին մանրածախ գների զգալի նվազմանը։ 1931 թ. առաջին անգամ պասսիվ դարձավ ոչ միայն առևտրական, այլև վճարման հաշվեկշիռը՝ 110 մլն ֆունտ ստերլինգի չափով. արտասահմանյան ներդրումներից ստացված եկամուտները և մյուս «անտեսանելի» եկամուտներն արդեն չէին կարող ծածկել առևտրական հաշվեկշռի նախկինում ևս գոյություն ունեցած պասսիվությունը։ Անգլիական իմպերիալիզմին կորուստ պատճառեց արտասահմանյան ներդրումների արժեզրկումը (24 տոկոսով)։ Նվազեցին նոր, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին կապիտալ ներդրումներ։ Լոնդոնն ավելի ու ավելի մեծ չափով էր կորցնում համաշխարհային դրամական կենտրոնի իր երբեմնի դերը։ Երկրում տիրում էր ինֆլյացիան։ Ֆունտ ստերլինգը նախկինի մեկ երրորդից պակաս արժեր։

Ճգնաժամը մոնոպոլացման, խոշոր մոնոպոլիաների կողմից մանր ու միջին ձեռնարկությունների կլանման նոր ալիք առաջ բերեց։ Այսպես, տնտեսական ճգնաժամի հետևանքով զգալիորեն նվազեց սև մետալուրգիայի ֆիրմաների թիվը, որոնք վերահսկում էին չուգունի և պողպատի ազգային արտադրության հիմնական մասը։ Մոնոպոլիաները ձգտում էին բարձր մակարդակի վրա պահել իրենց շահույթները, ընթանալով բանվորների աշխատավարձի իջեցման ուղիով։

Նախկինում չտեսնված չափերի հասավ գործազրկությունը։ Նույնիսկ պաշտոնական, նվազեցված տվյալներով, 1932 թ. մոտերքին գործազուրկների թիվը անցնում էր 3 մլն մարդուց։ Մի շարք ճյուղերում գործազրկությունն ընդգրկեց բոլոր բանվորների կեսից ավելին։ Աշխատանքից զրկվեց նույնիսկ բանվորական արիստոկրատիայի մի մասը։

Լեյբորիստական երկրորդ կառավարության իշխանության գլուխ անցնելը

Տնտեսական ճգնաժամի այդ ծանր իրադրությանը հարկ եղավ բախվել լեյբորիստական երկրորդ կառավարությանը, որն իշխանության գլուխ անցավ նրա սկսվելուց առաջ (1929 թ. հունիսին)։ Որ 1929 թ. ընդհանուր ընտրություններում ընտրողները գերադասեցին լեյբորիստներին, դա բնական էր. իրենց կառավարման տարիներին պահպանողականներն իրենց լրջորեն վարկաբեկեցին։ Իսկ լեյբորիստները վերջստին առաջադրեցին բազմախոստում ծրագիր (այն կոչվում էր «Աշխատանքը և ազգը») գործազրկության վերացման, «կապիտալի վրա հարկ» սահմանելու, 1927 թ. «արդյունաբերական կոնֆլիկտների և տրեդ-յունիոնների մասին» օրենքի վերացման, հանքափորների 7-ժամյա աշխատանքային օրվա վերականգնման (որը 1928 թ. փոխարինվել էր 8-ժամյա աշխատանքային օրով), հողի, ածխային արդյունաբերության, տրանսպորտի, էներգետիկ արդյունաբերության (փրկագնով) ազգայնացնելու մասին և այլն։ Արտաքին-քաղաքական ասպարեզում նրանց ծրագրում մեծ դեր խաղաց ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման լոզունգը։

Պահպանողականներն, ըստ էության, այդ ծրագրին կարող էին հակադրել միայն 1928 թ. իրենց կողմից անցկացված ընտրական ռեֆորմի վկայակոչումները, ռեֆորմ, որն ընտրական իրավունքներ տրամադրեց 21 տարին լրացած կանանց (ըստ 1918 թ. ռեֆորմի կանայք ընտրություններին մասնակցելու իրավունք ստացան միայն 30 տարին լրանալուց հետո)։ Ընտրողների թիվն ավելացավ 8 մլն մարդով, հասնելով ընդամենը 29 միլիոնի, այդ թվում կանայք՝ 15.278 հազ.։ Ինչ վերաբերում է «գործազրկության դեմ պայքարելու» վերաբերյալ պահպանողականների լոզունգներին, ապա հազիվ թե դրանց որևէ մեկը հավատար. պահպանողականներն այդ նպատակով բացարձակապես ոչինչ չարեցին իշխանության գլուխ իրենց գտնվելու տարիներին։ Պահպանողականների հեղինակությունն ընկավ նաև ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների խզման պատճառով։

Լեյբորիստներին այս անգամ հաջողվեց համայնքների պալատում ավելի շատ տեղեր ստանալ՝ 287 (պահպանողականները պառլամենտ անցկացրին իրենց 260 թեկնածուների)։ Պալատում 59 լիբերալ դեպուտատների առկայությունը լեյբորիստների ստացած մեծամասնությունը դարձնում էր հարաբերական։ Դարձյալ Մակդոնալդի գլխավորած կառավարության մեջ մտան

լեյբորիստական աջ գործիչները՝ Հենդերսոնը, Սնոուդենը, Կլայնսը, Բոնֆիլդը, Մորիսոնը և ուրիշներ։

Առաջին իսկ ամիսներից նոր կառավարության առջև ծառացան բարդ պրոբլեմներ, որոնք կապված էին տնտեսական ճգնաժամի զարգացման հետ։ Առանձնապես սուր բնույթ էր ստանում զբաղվածության պրոբլեմը։ «Գործազրկության դեմ պայքարի» նոր մինիստրությունը Թոմասի գլխավորությամբ (նրա օգնականներից մեկը դարձավ Օսվալդ Մոսլին, որը շուտով գլխավորեց ֆաշիստական շարժումն Անգլիայում) մի շարք միջոցներ ձեռնարկեց (աննշան գումարների առանձնացում հասարակական աշխատանքների համար, գործազուրկների տեղափոխում ճգնաժամից խիստ տուժած շրջաններից, «գործազուրկների արտահանում» այլ երկրներ, գործազուրկների վերաբնակեցում հողերում՝ նրանց համար աննշան հողամասերի հատկացմամբ և այլն), որոնք սակայն, ոչ մի արդյունք չտվեցին։ Այսպես, «գործազուրկների արտահանումը» Կանադա, որտեղ նույնպես սկսվում էր տնտեսական ճգնաժամ, հասցրեց նրանց շուտափույթ վերատեղափոխմանը դեպի Անգլիա, քանի որ Կանադայում ևս նրանք շարունակեցին մնալ գործազուրկի վիճակում։ Ընտրությունների ժամանակ խոստացված գործազրկության նպաստների ավելացման փոխարեն կառավարությունը կանգնեց դրանց կրճատման, ինչպես նաև բանվորների որոշ կատեգորիաներին այդ նպաստներից զրկելու ուղու վրա, օգտագործելով օրենքի մեջ եղած ամեն տեսակի վերապահումները գործազրկության ապահովագրման մասին։ Բայց նա ստիպված էր բանվորների ճնշման տակ 1930 թ. որոշ չափով ավելացնել այն անձանց թիվը, որոնք ենթակա էին գործազրկության գծով ապահովագրման, և այն անձանց, որոնք իրավունք էին ստացել «հավակնել» նպաստ ստանալու ավելի երկար ժամկետով, քան այդ նախատեսվում էր նախկինում։ Կառավարության գանձատան կանցլեր (ֆինանսների մինիստր) Սնոուդենը հետագայում իր հուշերում գրում էր, որ այդ ակտը պետք է լիներ «ապահովագրում հեղափոխությունից»։ Նվազեցված պաշտոնական տվյալների համաձայն, 1929 թ. 917 հազ. բանվորների շաբաթական աշխատավարձն իջեցվեց 91 հազ. ֆունտ ստերլինգով, 1930 թ. 1100 հազ. բանվորներինը՝ 116 հազ. ֆունտ ստերլինգով, իսկ 1931 թ. 3 մլն բանվորներինը՝ 405 հազ. ֆունտ ստերլինգով։ Այդ նույն ժամանակ կառավարությունը մոնոպոլիաներին օգնում էր կապիտալիստական անխնա ռացիոնալիզացիա իրականացնելու գործում։ Թղթի վրա մնացին լեյբորիստների տված խոստումները՝ վերացնելու «1927 թ. նոդկալի օրենքը» (լեյբորիստական պարագլուխներն այդպես անվանեցին այն նախընտրական կամպանիայի ընթացքում), չվերականգնվեց հանքափորների 7-ժամյա աշխատանքային օրը (ածխահանքերի վերաբերյալ 1930 թ. դեկտեմբերի 1-ի լեյբորիստական օրենքով Անգլիայի ամբողջ ածխային արդյունաբերության մեջ ուժի մեջ էր մտցվում 7,5-ժամյա աշխատանքային օրը, բայց այդուհանդերձ չէր երաշխավորվում նախկին աշխատավարձի պահպանումը)։

Մինչդեռ տնտեսական ճգնաժամի պայմաններում էլ մոնոպոլիաները շարունակում էին վիթխարի եկամուտներ ստանալ։ Այսպես, 176 կոմպանիաների մաքուր եկամուտը 1930 թ. կազմեց 54,5 մլն ֆունտ ստերլինգ՝ 1929 թ. 49,4 մլն ֆունտ ստերլինգի դիմաց։ Լեյբորիստական կառավարությունը հրաժարվեց անցկացնել արդյունաբերության մի շարք ճյուղերի և հողի խոստացված ազգայնացումը։

Նա ամեն կերպ ձգձգում էր ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը, թեև լեյբորիստական պարագլուխները ջանալով

նախընտրական կամպանիայի ընթացքում իրենց կողմը գրավել աշխատավոր զանգվածների համակրանքը, խոստացել էին իշխանության վերադառնալու տառացիորեն հաջորդ օրն իսկ իրականացնել այդ միջոցառումը։

ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը բացատրվում էր, սակայն, ոչ միայն նրանով, որ այդ էին պնդում աշխատավոր զանգվածները։ Անգլիական բուրժուազիան շահագրգռված էր ՍՍՀՄ-ի հետ առևտուր անել, քանի որ դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո առևտրական հարաբերությունները Անգլիայի ու ՍՍՀՄ-ի միջև խիստ կրճատվեցին, որի հետևանքով ամենից առաջ Անգլիային վնաս հասցվեց։

Սակայն 1929 թ. հուլիսի 2-ին կառավարությունը հայտարարեց, որ նա սոսկ «ուսումնասիրում է այն պայմանները», որոնց հիման վրա կարող են վերսկսվել դիվանագիտական հարաբերությունները ՍՍՀՄ-ի հետ, և «այդ հարցի վերաբերյալ կոնտակտ է պահպանում դոմինիոնների և Հնդկաստանի կառավարությունների հետ»։ Անգլո-սովետական դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հարցի լուծման ձգձգման նպատակը լեյբորիստական կառավարության ձգտումն էր՝ հասնել սովետական կառավարության կողմից մի շարք նախնական պայմանների ճանաչմանը, բոլոր վիճելի հարցերի, այդ թվում անգլիական բուրժուազիայից ցարական և ժամանակավոր կառավարությունների վերցրած պարտքերի հարցի լուծմանը։

Իսկ սովետական կառավարությունը լիովին օրինաչափ էր համարում, որ սկզբում պետք է լիովին վերականգնվեն դիվանագիտական հարաբերությունները, իսկ հետո լիակատար իրավահավասարության հիման վրա կարող են արդեն բանակցություններ վարվել բոլոր վիճելի հարցերի վերաբերյալ։

Բախվելով ՍՍՀՄ-ի հաստատակամ դիրքին, լեյբորիստական կառավարությունն այդ նույն ժամանակ ուժեղ ճնշում էր զգում անգլիական բանվորների կողմից։ Նա խստորեն քննադատվեց տրեդ-յունիոնների 61-րդ կոնգրեսում, որը կայացավ 1929 թ. սեպտեմբերին։ Կոնգրեսն ընդունեց հատուկ բանաձև, որն առաջարկեց մեքենաշինարարների ներկայացուցիչը և որը պահանջում էր «ապահովել դիվանագիտական հարաբերությունների վերսկսումը ՍՍՀՄ-ի և Անգլիայի միջև»։

1929 թ. հոկտեմբերի 3-ին սովետական և անգլիական կառավարությունների միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին։ Նրանց ստորագրած արձանագրությունը նախատեսում էր բանակցություններ վարելու և վիճելի հարցերը կարգավորելու պրոցեդուրան։ Այն պայմանները, որոնց հիման վրա ձեռք բերվեց այդ պայմանավորվածությունը, վկայում էին սովետական դիվանագիտության զգալի հաջողության մասին։

1929 թ. նոյեմբերի 5-ին ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման վերաբերյալ բանաձևը համայնքների պալատում ընդունվեց 324 ձայնով, ընդդեմ 199-ի, իսկ 1930 թ. ապրիլին ստորագրվեց անգլո-սովետական առևտրական ժամանակավոր համաձայնագիրը։ Բայց Սովետական Միության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո էլ լեյբորիստական կառավարությունը չէր խոչընդոտում հակասովետական զրպարտչական լայն կամպանիաների անցկացմանն Անգլիայում։

Լեյբորիստներն էական ոչ մի նորություն չմտցրին գաղութային քաղաքականության մեջ. ազգային-ազատագրական շարժումը գաղութներում անողոք կերպով ճնշվում էր։ Կառավարությունը բրիտանական մոնոպոլիաների

համար ապահովեց գաղութների բնակչության ուժեղ շահագործումը, ճգնաժամի ծանրությունը փոխադրում էր Անգլիային ենթակա ժողովուրդների վրա։ Այսպես, լեյբորիստական կառավարությունը դաժանորեն հաշվեհարդար էր տեսնում Հնդկաստանի ազգային-ազատագրական շարժման հետ, ուր ռազմական դրություն մտցվեց։ Շարունակվում էր հնդկական արհմիութենական շարժման 32 գործիչների դատավարությունը։

1929 թ. ընտրություններին լեյբորիստական կուսակցությունն առաջադրեց Հնդկաստանին դոմինիոնի իրավունքներ տրամադրելու լոզունգ։ Սակայն այդ խոստումը ևս չկատարվեց։ Հնդկաստանի սահմանադրության նախագիծը, որը մշակվեց 1930 թ., կոչված էր հավերժացնելու երկրի գաղութային վիճակը։

Ոչ նվազ բացահայտ իմպերիալիստական քաղաքականություն էին վարում լեյբորիստական պարագլուխները նաև Եգիպտոսի նկատմամբ, որի ժողովրդական զանգվածները տառապում էին անգլիական իմպերիալիստների ուժից վեր ճնշումից։

Այդ նույն ժամանակ Անգլիան ստիպված էր լուրջ զիջումների դիմել դոմինիոնների նկատմամբ, որն արտահայտվեց 1931 թ. ընդունված Վեստմինստերյան ստատուտում։ Ձևականորեն ճանաչվեց դոմինիոնների ինքնուրույնությունը ներքին ու արտաքին քաղաքականության ասպարեզում և նրանց սուվերենությունը Բրիտանական կայսրության շրջանակներում։ Սակայն լայնորեն ազդարարված ազգերի բրիտանական համագործակցությունը փաստորեն մետրոպոլիայի կառավարող դասակարգերի բլոկն էր դոմինիոնների բուրժուազիայի վերնախավի հետ, բլոկ, որն ուղղված էր ազգային-ազատագրական շարժումների դեմ։ «Համագործակցության» մեջ Անգլիայի կառավարող դասակարգերը, ինչպես և առաջ, ձգտում էին իրենց համար ապահովել ղեկավար դերը։

Մասսաների պայքարը լեյբորիստական կառավարության հակաբանվորական քաղաքականության դեմ

Լեյբորիստական կառավարության վրա հույս դրած բանվորներն սկսեցին արագորեն հիասթափվել նրա գործունեությունից։ Հիասթափությունը թափանցեց նաև լեյբորիստական կուսակցության շարքերը։ Կառավարության քաղաքականության մերկացման գործում ակտիվ դեր էր խաղում Մեծ Բրիտանիայի կոմկուսը, որը, ճիշտ է, զգալիորեն թուլացել էր դեռ 1926 թ. ընդհանուր գործադուլի ջախջախումից հետո, իսկ տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում հիմնականում վերածվեց «գործազուրկների կուսակցության» (կոմունիստներին ազատում էին առաջին հերթին), որն իր շարքերում հաշվվում էր մոտ 2000 անդամ։ Բայց 1930 թ. հունվարի 1-ից կոմկուսը կարողացավ ապահովել իր ամենօրյա կենտրոնական օրգան «Դեյլի Ուորկեր» թերթի լույս ընծայումը, որը դարձավ անգլիական բանվոր դասակարգի մարտական օրգանը։ Այն զգալի դեր խաղաց լեյբորիստական կառավարության հակաբանվորական քաղաքականության դեմ մղված պայքարում։

Բուրժուազիայի տնտեսական հարձակումը հանդիպեց բանվոր դասակարգի հակահարվածին։ 1930 թ. գործադուլների մասնակիցների թիվը կազմեց 307 հազ., իսկ 1931 թ.՝ 490 հազ. մարդ։ Տնտեսական ճգնաժամի պայմաններում ակտիվորեն էր գործում գործազուրկների ազգային շարժումը, որին ղեկավարում էր կոմկուսը։ Գործազուրկների բազմաթիվ ցույցերի հետ մեկտեղ 1930 թ. գարնանը անցկացվեց գործազուրկների ազգային արշավ դեպի Լոնդոն («սովյալ արշավ»)։ Երկրի բոլոր ծայրերից գործազուրկների շարա-

սյուները շարժվում էին դեպի Լոնդոն։ Գործազուրկների երթը Գլազգոյից դեպի Լոնդոն, օրինակ, տևեց մեկ ամսից ավելի։ Փոքրամասնության ազգային շարժումը և Գործազուրկների ազգային շարժումը գործազուրկների երթի ճանապարհին ստեղծում էին Հանդիպումների կոմիտեներ, դրանց օգնություն ցույց տալիս, ագիտացիոն աշխատանք էին կատարում լեյբորիստական կառավարության մերկացման ուղղությամբ, կառավարություն, որը չկատարեց գործազրկության դեմ պայքարելու մասին խոստումները։ Լեյբորիստական ղեկավարությունը մերժեց հանդիպումների և արշավի մասնակիցներին օգնություն ցույց տալու կազմակերպման մեջ ներգրավվելու Գործազուրկների ազգային շարժման առաջարկությունը։ Ապրիլի 30-ի գիշերը երկրի բոլոր ծայրերից շարասյուները ժամանեցին Լոնդոն, իսկ մայիսի 1-ին 30.000 գործազուրկներ դուրս ելան Լոնդոնի փողոցները։ Մայիսի 1-ին մարտական ցույցեր անցկացվեցին Անգլիայի նաև մի շարք այլ քաղաքներում։

1930 թ. սեպտեմբերից Մեծ Բրիտանիայի կոմկուսը և Փոքրամասնության ազգային շարժումը պայքար էին մղում բանվորական խարտիայի ծրագրի կատարման համար, որի խնդիրը բանվոր դասակարգի միասնության հաստատումն էր։ Բանվորական խարտիան պահանջում էր ավելացնել գործազրկության նպաստները և վերացնել բոլոր սահմանափակումներն ու վերապահումները, որոնց օգնությամբ աշխատանքը կորցրած բանվորներին զրկում էին նպաստից, նպաստներ վճարել գործազրկության ամեն օրվա համար (գոյություն ունեցող օրենսդրությունը պարունակում էր մի շարք վերապահումներ. այսպես, աշխատանքը կորցրած բանվորը նպաստի իրավունք էր ստանում ոչ միանգամից, այլ «սպասման շրջանը» լրանալուց հետո), 7-ժամյա աշխատանքային օր։ Խարտիան հանդես էր գալիս ընդդեմ «քրտնաքամ սիստեմի», ազատումների, արտաժամյա աշխատանքների, գործազրկության գծով ապահովագրական ֆոնդում բանվորների մուծումների ավելացման (այդ ֆոնդը կազմվում էր այսպես կոչված եռակուսակցական սիստեմով՝ բանվորների, ձեռնարկատերերի և պետության մուծումներից), հանուն առանց բանվորների մուծումների սոցիալական ապահովության, երաշխավորված շաբաթվա և աշխատավարձի համազգային մինիմումի, 1927 թ. օրենքի վերացման և այլն։ Բանվորական խարտիան որոշակի դեր խաղաց ընդդեմ լեյբորիստական կառավարության քաղաքականության անգլիական բանվոր դասակարգի կենսական շահերի համար մղված պայքարում նրա մոբիլիզացման գործում։

Լեյբորիստական կուսակցության և արհմիությունների աջ պարագլուխները ջանում էին բոլոր ուժերով կոմկուսին մեկուսացնել բանվորական զանգվածներից։ 1929 թ. տրեդ-յունիոնների հերթական կոնգրեսում ընդունվեց մի որոշում, որը տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսին հարող բոլոր արհմիություններին հանձնարարում էր միջոցներ ձեռնարկել արհմիություններում կոմունիստներին բոլոր պոստերից հանելու համար։ Տրեդ-յունիոնների ռեֆորմիստական ղեկավարությունը վարչական միջոցներ էր ձեռնարկում, ընդհուպ մինչև վտարումը, ընդդեմ Փոքրամասնության ազգային շարժման։

Այդ պայմաններում աղանդավորական սխալները շարունակում էին կոմունիստներին խանգարել մասսաների մեջ ավելի ամուր դիրքեր նվաճել. առաջվա պես թերագնահատվում էր ամենօրյա աշխատանքը մասսայական կազմակերպություններում (առաջին հերթին տրեդ-յունիոններում), մերժվում էր ձախ լեյբորիստների հետ համատեղ գործողությունների գաղափարը, լեյբորիստական աջ պարագլուխներին կպցվում էր «սոցիալ-ֆաշիստների» պիտակ։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի 12-րդ համագումարում, որը կայացավ

1932 թ. նոյեմբերին Բատերսիում, նշվում էր, որ կուսակցության ամենակարևորագույն խնդիրը, որը բխում է նրա նախորդ տարիների փորձից, մնում է աղանդավորության հաղթահարումը։ Անհրաժեշտ էր հաղթահարել խզումը բանվորների մասսայական շարժումից, կայուն կապեր հաստատել ձեռնարկությունների և արհմիությունների բանվորական զանգվածների հետ։

Լեյբորիստական կուսակցության 1931 թ. ճգնաժամը, լեյբորիստական կաբինետի անկումը

Լեյբորիստական կառավարության գործունեությունը, բանվորական շարժման ձախ թևի դեմ ուղղված նրա գործողությունները ավելի ու ավելի մեծ դժգոհություն էին առաջացնում կուսակցության մեջ և տրեդ-յունիոններում։ Տասնյակ հազարավոր բանվորներ հեռանում էին լեյբորիստական կուսակցության և տրեդ-յունիոնների շարքերից։ Պառլամենտի միջանկյալ ընտրություններում խիստ աճեց արսենտեիզմը։ Սակայն կուսակցական ճգնաժամի բնորոշ նշանը՝ անդամների թվի նվազումը, լեյբորիստական կուսակցությունում արտահայտվում էր շափազանց մեղմ ձևով, որը կապված էր ամենից առաջ նրա կառուցվածքի առանձնահատկությունների հետ (կոլեկտիվ անդամություն)։ Լեյբորիստական կուսակցության 30-րդ համագումարում (1930 թ. հոկտեմբեր) կառավարությունը լուրջ քննադատության ենթարկվեց գործազրկությունը վերացնելու անընդունակության համար (աշխատանքի մինիստր Թոմասը նույնիսկ գործկոմի կազմում էլ չընտրվեց), Հնդկաստանի նկատմամբ իմպերիալիստական քաղաքականություն վարելու համար և այլն։ Կառավարությանը վստահություն հայտնելու դեմ տրվեցին կուսակցության 334.000 անդամների ներկայացնող պատվիրակների ձայները։ Աշխատավորության շրջանում լեյբորիստական պարագլուխների ազդեցության անկման հետ միաժամանակ սրվեց լեյբորիստական կուսակցության ղեկավարության ճգնաժամը։ Ֆաշիզմի գաղափարների, պառլամենտական սիստեմից հրաժարվելու, կապիտալիզմը փրկելու նպատակով «իշխանությունն ուժեղացնելու» ակտիվ ջատագով դարձավ ոչ այլ ոք, քան լեյբորիստական կառավարության անդամներից մեկը՝ Օսվալդ Մոսլին, որը ստեղծեց «Նոր կուսակցությունը» (այն դարձավ 1932 թ. սեպտեմբերին ստեղծված «Ֆաշիստների բրիտանական միության» հիմքը)։

Հիասթափությունը լեյբորիստական կառավարության գործունեությունից և օպոզիցիոն տրամադրություններն ուժեղանում էին Անկախ բանվորական կուսակցության շարքերում, որը մտնում էր լեյբորիստական կուսակցության կազմի մեջ։ Մակդոնալդը, որը ԱԲԿ-ի անդամ էր, ստիպված էր 1930 թ. փետրվարին հեռանալ նրա շարքերից։ ԱԲԿ-ում ընդլայնվում էր լեյբորիստական կուսակցության շարքերից դուրս գալու շարժումը։

Լեյբորիստական կուսակցության և երկրորդ լեյբորիստական կառավարության ճգնաժամը կանխորոշված և պայմանավորված էր մի շարք գործոններով. տնտեսական ճգնաժամը որոշակիորեն սասանեց լեյբորիստական կուսակցության հիմքը, քանի որ ամբողջությամբ վերցրած աշխատավորական զանգվածների դրության վատացման հետ որոշակի չափով թուլացան բանվոր դասակարգի նաև վերնախավի՝ բանվորական արիստոկրատիայի դիրքերը. լեյբորիստական կառավարության քաղաքականությունը, որն ուղղված էր մոնոպոլիաների շահերի պաշտպանությանը, ճգնաժամի ծանրությունը Անգլիայի աշխատավոր զանգվածների և գաղութների ժողովուրդների վրա դնելու ձգտումը, ՍՍՀՄ-ի հետ իսկական բարեկամական հարաբերություններ հաստատելուց հրաժարվելն ուժեղացնում էին անգլիական աշխատավորության դժգոհությունը լեյբորիստական պարագլուխների քաղաքականությունից։

Տնտեսական ճգնաժամի հետևանքների դեմ պայքարի՝ լեյբորիստների ձեռնարկած միջոցների անարդյունավետությունը Մակդոնալդի կառավարությանը զրկեց նաև լիբերալների կուսակցության պաշտպանությունից։ Լիբերալների այն խմբին, որը բացահայտ հանդես եկավ լեյբորիստական կառավարության դեմ, գլխավորեց Ջոն Սայմոնը, որը դեռ 1931 թ. սկզբին սահմանազատվեց Լլոյդ Ջորջից և նրան մեղադրեց «սոցիալիստների» հետ դաշինք կնքելու մեջ։ Սայմոնը և նրա համախոհները գտնում էին, որ կառավարությունն անբավարար ակտիվությամբ էր աշխատավորների հաշվին ելք որոնում ճգնաժամից։ Բացի այդ, լիբերալների մի մասը հանդեց այն եզրակացության, որ անհրաժեշտ է պրոտեկցիոնիզմ մտցնել և վերացնել ոսկու ստանդարտը, միջոցառումներ, որոնց իրականացումը լեյբորիստական կառավարությունը չէր նախատեսել։

Անգլիական կապիտալիզմի խարխլված դիրքերն ամրապնդելու միջոցների հարցում լուրջ վեճեր էին լինում նաև պահպանողական կուսակցության մեջ։ Որպես ճգնաժամից դուրս գալու գլխավոր միջոց ընդունելով բանվոր դասակարգի հաշվին «տնտեսելու» անհրաժեշտությունը, պահպանողականներն ավելի ու ավելի վճռականորեն էին առաջադրում պրոտեկցիոնիզմ մտցնելու և ոսկու ստանդարտը վերացնելու լոզունգը։

Ջանալով ընդառաջ գնալ իշխող դասակարգերի պահանջներին, լեյբորիստական կառավարությունը կազմեց, այսպես կոչված, ազգային խնայողության կոմիտե՝ բանկիր Մեյի գլխավորությամբ։ 1931 թ. օգոստոսի 1-ին նա հրապարակեց մի հաշվետվություն, որտեղ խոսվում էր նոր բյուջեում ծախսերը տարեկան 120 մլն ֆունտ ստերլինգով կրճատելու անհրաժեշտության մասին։ Հանձնարարվում էր անհապաղ «տնտեսել» 96,5 մլն ֆունտ ստերլինգ, ընդ որում այդ գումարի երկու երրորդը՝ գործազրկության նպաստները 20 տոկոսով կրճատելու և այն բոլորի «կարիքի ստուգում» սահմանելու միջոցով, որոնք ստանում էին «փոխանցիկ նպաստ» (բացի ապահովագրական ֆոնդում բանվորական մուծումներ կատարելու համապատասխան սահմանված ժամկետի)։ Առաջարկվում էր նաև 20 տոկոսով պակասեցնել ուսուցիչների աշխատավարձը և մի շարք այլ միջոցառումներ։ Խոսքն արդեն վերաբերում էր «տնտեսման» կոնկրետ պլանին, ընդ որում այն կոմիտեի առաջարկած, որը ստեղծել էր հենց լեյբորիստական կառավարությունը։ Այն դեպքում, եթե լեյբորիստական կառավարությունն ընդունակ չէր գտնվի իրագործելու կոմիտեի հանձնարարականները, կառավարող դասակարգերի շրջանում մշակվում էր պահպանողական կուսակցության (լիբերալների և լեյբորիստների մի մասի մասնակցությամբ) բազայի վրա բլոկ («ազգային կոալիցիա») կազմելու պրլան, բլոկ, որը պատրաստ լիներ դիմելու նախատեսված միջոցառումների անվերապահ և լիակատար իրականացմանը։

Լեյբորիստական կուսակցության ճգնաժամը լեյբորիստական կառավարությանը թույլ չտվեց իրականացնելու «տնտեսման» պլանը, թեև նրա անդամների զգալի մասը անհրաժեշտ էր համարում ընդունել Մեյի հանձնաժողովի հանձնարարականները։ Վճռական դեր խաղաց «տնտեսման» ծրագրից դժգոհելու ուժեղ ալիքը, որն օգոստոսի սկզբին ծավալվեց ամբողջ երկրով մեկ։ «Դեյլի Հերալդը» լեյբորիստական կուսակցության անդամներից անթիվ նամակներ էր ստանում, որոնցում բողոքում էին Մեյի պլանի դեմ։ Տեղի ունեցան բանվորական մի շարք կոնֆերանսներ, միտինգներ ու ցույցեր, այդ թվում գործազուրկների ցույցեր ու միտինգներ, որոնցով նրանք բողոքում էին «տնտեսման» մեթոդների դեմ։ Բանվորների հաշվին «տնտեսելու» դեմ ակ-

տիվորեն հանդես եկան Մեծ Բրիտանիայի կոմկուսը, ՓԱՇ-ը և ԳԱՇ-ը։ «Դեյլի Ուորկերը» կոչ էր անում մոբիլիզացնել բանվոր դասակարգի ուժերը «ընդդեմ երկրի պատմության մեջ ամենամեծ կապիտալիստական հարձակման»։

Իրադրությունը բարդացավ նաև 1931 թ. օգոստոսի սկզբին «բանկիրների խռովության» պատճառով առաջացած ֆինանսական սուր ճգնաժամի կապակցությամբ։ Խիստ ընկավ ֆունտ ստերլինգի արժեքը, ուժեղացավ կապիտալների հոսքը։ Հարց բարձրացավ ԱՄՆ-ից ու Ֆրանսիայից փոխառություն ստանալու մասին։ Բայց ԱՄՆ-ի և Ֆրանսիայի բանկիրները լեյբորիստական կառավարությանը պահանջ ներկայացրին՝ ապահովել երկրի «ֆինանսական դրության կայունությունը», տալ փոխառության «երաշխիքներ»։

1931 թ. օգոստոսի 23-ի լեյբորիստական կաբինետի նիստում հարց ծագեց, թե Նյու Յորքի ֆեդերալ ռեզերվային բանկի կողմից անգլիական կառավարությանը փոխառություն տրամադրելու համար արդյոք կարո՞ղ է բավարար երաշխիք լինել գործազուրկների նպաստների պակասեցումը 10 տոկոսով։ Նյու Յորքից անհապաղ պատասխան ստացվեց, որ մի շարք այլ միջոցառումներ իրականացնելու հետ մեկտեղ նման երաշխիքը կարող է բավարար ճանաչվել։ Բայց կաբինետի միայն 11 անդամ (21-ից) արտահայտվեց հօգուտ գործազուրկների նպաստների կրճատման։ Քվեարկությունից անմիջապես հետո Մակդոնալդը մեկնեց Թագավորի մոտ կառավարության հրաժարականի վերաբերյալ հայտարարությամբ հանդերձ։ Լեյբորիստական կուսակցությունն անցավ օպոզիցիոն դրության, որն օբյեկտիվորեն կառավարող դասակարգերի «ուժերի համակենտրոնացման» բաղկացուցիչ ու անհրաժեշտ մասն էր։

«Ազգային կառավարությունը»։ Անգլիական կապիտալիզմի դիրքերի ամրապնդման միջոցառումները

Լեյբորիստական կաբինետի հրաժարականից հետո կազմվեց «ազգային» կառավարություն։ Ընդամենը 10 մարդուց բաղկացած նոր կաբինետում ներգրավված էին չորս նախկին լեյբորիստներ (Մակդոնալդ, Թոմաս, Սնոուդեն, լորդ Սենկի), որոնք կոալիցիայում ներկայացնում էին լեյբորիստական կուսակցությունից պառակտված Մակդոնալդի կողմնակիցների խումբը՝ «ազգային լեյբորիստները», չորս պահպանողականներ (Բոլդուին, Ն. Չեմբեռլեն, Կանլիֆ Լիստեր, Ս. Խոր) և երկու լիբերալ (Գ. Սամուել և Ռիդինգ), որոնք կառավարության մեջ մտան որպես նոր ստեղծված «ազգային լիբերալների» կուսակցության ներկայացուցիչներ (լիբերալների կուսակցության հերթական պառակտումից հետո)։ Լեյբորիստական կուսակցության նոր ղեկավարությունը (Ա. Հենդերսոն) շտապեց սահմանազատվել «դավաճաններից», որոնք գործում էին «առանց կուսակցության սանկցիայի», նրանց հեռացնելով կուսակցությունից։ Սենկին՝ «ազգային» կառավարության լորդ-կանցլերը, ելույթ ունենալով օգոստոսի 28-ին, նոր դերաբաշխումը բացահայտեց հետևյալ արտահայտությամբ. «Պարոն Մակդոնալդը փրկեց ազգը, պարոն Հենդերսոնը փրկեց լեյբորիստական կուսակցությունը, իսկ լեյբորիստական կուսակցությունը հետագայում կարող է փրկել ազգը»։

Նոր կառավարությունը գործում էր վճռականորեն։ Անհապաղ սկսեց իրագործվել 85 մլն ֆունտ ստերլինգ գումարի «տնտեսման» ծրագիրը։ Մակդոնալդը ժողովրդական զանգվածներին կոչ արեց «ավելի ամուր ձգել գոտին»։ Բացի այդ, մտցվեցին մի շարք նոր հարկեր։ Կառավարող դասակարգերը ջանում էին ժողովրդական զանգվածներին համոզել այդ միջոցառումների անհրաժեշտությունը, վկայակոչելով երկրի «օրհասական դրությունը»։ Փորձելով բանն այնպես ներկայացնել, թե «բոլորը հավասար զոհաբերություն են կա-

տարում», Մակդոնալդն իր պրեմիերական ռոճիկը կրճատեց 20 տոկոսով, Թագավորն իր «մասնավոր եկամուտը» պակասեցրեց 10 տոկոսով։

Բայց «տնտեսման» դեմ բողոքների նոր ալիք բարձրացավ։ Աշխատավորության ակտիվ պայքարը շարունակվեց 1931 թ. ամբողջ աշնան ընթացքում։ Սեպտեմբերի 8-ին, պառլամենտի արտակարգ նստաշրջանի (որը պետք է հավանություն տար «տնտեսման» միջոցառումներին) բացման օրը պառլամենտի շենքի շուրջը տեղի էին ունենում բողոքի բազմահազարանոց ցույցեր։ Բանվորները տանում էին «Ձեռքներդ հեռո՛ւ նպաստներից», «Կորչի՛ «ազգային» կառավարությունը» լոզունգներ։ «Տնտեսման» դեմ մղված պայքարի ցայտուն դրվագն էր ծովայինների ապստամբությունն Ինվերգորդոնում. նրանց ռոճիկը նույնպես կրճատվել էր. սասանվեց անգլիական իմպերիալիզմի ամենակարևոր հենարաններից մեկը՝ նավատորմը։

«Ազգային» կառավարությունը ստիպված էր զիջումների դիմել. ծովայինների ռոճիկը կրճատվեց ոչ թե 25, այլ 10 տոկոսով։

Այդ իրադրության մեջ լեյբորիստական ղեկավարությունը մի քանի գործողությունների դիմեց «տնտեսումից» թեկուզև արտաքնապես սահմանազատվելու նպատակով (մասնավորապես, 1931 թ. աշնանը նա ձևականորեն հրաժարվեց մոնդիզմի քաղաքականությունից)։ Սակայն այդ միջոցառումները չամրապնդեցին կուսակցության դիրքերը. 1931 թ. հոկտեմբերի ընտրություններում լեյբորիստները պառլամենտ անցկացրին միայն 46 դեպուտատ, կորցնելով 243 տեղ։ 1932 թ. լեյբորիստական կուսակցությունից դուրս եկավ Անկախ բանվորական կուսակցությունը։

«Ազգային» կառավարությունը շարունակում էր աշխատավարձի հաշվին «տնտեսման» քաղաքականությունը. 1932 և 1933 թթ. վերստին կրճատվեց բանվորների նշանակալի մասի աշխատավարձը։ Տնտեսական ճգնաժամի ծանրությունը բանվորական զանգվածների վրա դնելու նույն նպատակին էին ծառայում «ազգային» կառավարության երկու այլ արմատական միջոցառումներ. 1931 թ. սեպտեմբերի 21-ին նա վերացրեց ֆունտ ստերլինգի ոսկե ստանդարտը, դրանով իսկ որոշ չափով ուժեղացնելով անգլիական արդյունաբերության արտադրանքի մրցունակությունը համաշխարհային շուկաներում, ուր արդեն իշխում էր ինֆլյացիան. բացի այդ, Անգլիան, ազատ առևտրի այդ ավանդական երկիրն անցավ պրոտեկցիոնիզմի։ Օտտավայում կայացած կայսերական տնտեսական կոնֆերանսում (1932 թ. օգոստոս) կայսրության ներսում առևտրի համար մտցվեցին պրեֆերենցիալ (գերադասական) տուրքեր, որոնք ընդհանուր մաքսային տարիֆներից ավելի քիչ էին (ոչ պակաս քան 10 տոկոսով)։ Դրանով Անգլիան ձգտում էր Բրիտանական կայսրության երկրները մաքսային պատնեշով պատսպարել մյուս երկրների մրցակցությունից և ապահովել այդ ժամանակ զգալիորեն կրճատված ներկայսերական առևտրի աճը։

«Ազգային» կառավարության արտաքին քաղաքականությունը բնութագրվում էր պարզորոշ արտահայտված հակասովետական տենդենցներով. 1932 թ. հոկտեմբերին չեղյալ հայտարարվեց 1930 թ. անգլո-սովետական առևտրական համաձայնագիրը և արգելվեց սովետական կարևորագույն ապրանքների ներմուծումը։ Սակայն սովետական կառավարության ձեռնարկած հակամիջոցառումներն արդեն 1933 թ. հուլիսին հասցրին Անգլիա կատարվող սովետական արտահանության վրա դրված էմբարգոյի վերացմանը, իսկ 1934 թ. ապրիլի 16-ին ՍՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի միջև ստորագրվեց առևտրական ժամանակավոր համաձայնագիր։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում Անգլիայում տեղի ունեցած քաղաքական պայքարի պրոբլեմների պատմագրությունը

Տնտեսական ճգնաժամի տարիների քաղաքական կյանքի կենտրոնական իրադարձությունը եղավ ուժերի վերախմբավորումն Անգլիայի կառավարող լագերում։ Այդ իրադարձության լուսաբանման նկատմամբ տարբեր մոտեցումը բնորոշ է անգլիական պատմագրության տարբեր ուղղություններին։ Պահպանողական կուսակցության դիրքերից (լեյբորիստներին թշնամի) այն բնութագրվում է Սոմմերվելի աշխատությունում[15]։ Ճգնաժամի ծանրությունը աշխատավորների վրա դնելու լեյբորիստական կառավարության ջանքերն անբավարար համարելով, Սոմմերվելը պնդում է, որ նա «ոչինչ չէր անում, որպեսզի լուծեր ճգնաժամը», և նրա կառավարման տարիները «բացարձակ անօգտակարության ժամանակաշրջան էին»։ Հեղինակի կարծիքով, լեյբորիստական կառավարության «անգործունեությունը» գալիս էր այն բանից, որ «իրադարձություններն իրենց թափով գերազանցում էին այն մարդկանց, որոնց հարկ եղավ դրանց հետ գործ ունենալ»։

Ընդունելով, որ «ազգային» կառավարությունն ըստ էության պահպանողական էր, Սոմմերվելը խելացի է համարում «ազգային կոալիցիայի» տեսանելիության ստեղծումը «ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս վստահությունն» ապահովելու և ամենավճռական միջոցառումներ ձեռնարկելու նպատակով։

Ընդհանուր առմամբ այդ նույն դիրքերից է տրված երկրորդ լեյբորիստական կառավարության գործունեության գնահատականը Ու. Չերչիլի կողմից՝ երկրորդ համաշխարհային պատերազմի մասին նրա հուշերի առաջին հատորում[16]։ 1931 թ. լեյբորիստական կուսակցության պարտության պատճառները նա տեսնում է այն բանում, որ նա «իր ծրագրի հիմքում դրեց հարձակումը կապիտալի վրա»։ Ի տարբերություն պահպանողական ուղղության մի քանի պատմաբանների, Չերչիլը որոշակի համակրանքով է բնութագրում Մակդոնալդին և Սնոուդենին, որոնք ոգեշնչված էին, նրա կարծիքով, հայրենասիրական խոր զգացումներով։

Այդ նույն ոգով է լեյբորիստական պարագլուխների մասին գրում իր հուշերում նաև «ազգային լիբերալ» լորդ Սայմոնը[17]։

1931 թ. իրադարձությունները «ազգային լեյբորիստների» դիրքերից են լուսաբանվում Ռ. Բոսսեթի «1931 թվական. քաղաքական ճգնաժամ» հատուկ հետազոտության մեջ[18]։ Հեղինակը բացահայտորեն պաշտպանում է Մակդոնալդին և ազգային լեյբորիզմը, իսկ լեյբորիստական կուսակցության օպոզիցիայի անցնելը հայտարարում փախուստ պատասխանատվությունից՝ լուրջ ճգնաժամի պայմաններում, որը սոսկ ապացուցեց, որ կուսակցությունը դեռ չի հասունացել պետություն կառավարելու համար։

Աջ լեյբորիստական պատմագրության մեջ առաջին պլան է մղվում 1931 թ. իրադարձությունների համար Մակդոնալդի պատասխանատվության թեզը։ Այսպես, լեյբորիստական պատմաբան Ֆրենսիս Վիլյամսը երկրորդ լեյբորիստական կառավարության պարտության պատասխանատվությունը դնում է

[15] Տե՛ս Sommervell D. C. British Politics Since 1900. L., 1950։

[16] Տե՛ս Winston S. Churchill, The Second World War, vol. 1. The Gathering Storm. 1., 1949։

[17] Տե՛ս Viscount Simon, Retrospect. The Memories. L., 1952, p. 168։

[18] Տե՛ս Basset. R. Nineteen Thirty-One Political Crises. L., 1958։

Մակդոնալդի և Սնոուդենի վրա[19], ընդ որում չժխտելով տնտեսական ճգնաժամի անբարենպաստ իրադրությունը և լեյբորիստական կուսակցության այն ժամանակվա ամբողջ ղեկավարության սնանկությունը, որն անընդունակ գտնվեց ճգնաժամի հաղթահարումն իրականացնել «կարգավորվող էկոնոմիկայի» օգնությամբ։

Երկրորդ լեյբորիստական կառավարության անկումը դրանց մերձակա դիրքերից է շարադրվում լեյբորիստական կուսակցության եռահատոր պատմության մեջ և Կոուլի աշխատություններում[20]։

Կոուլը 1931 թ. իրադարձությունների պատասխանատվությունը դնում է Մակդոնալդի և Սնոուդենի վրա, որոնք «փառասիրությունից մղված» գործարքի դիմեցին պահպանողականների և լիբերալների հետ։ Վիլյամսի նման Կոուլն ափսոսում է, որ լեյբորիստական կառավարությունը չէր իրականացնում այն միջոցառումները, որոնք հետո անցկացրեց «ազգային» կառավարությունը (ոսկու ստանդարտի վերացում և անցում պրոտեկցիոնիզմին)։ Նա ստիպված է ընդունել, որ լեյբորիստական կառավարությունը «փորձում էր անտարբերությամբ խնայողություն կատարել գործազուրկների հաշվին»։ Մշտապես «կորցնելով ոտքի տակի հողը», նա դեռ մինչև 1931 թ. ֆինանսական ճգնաժամն «իր համար գերեզման փորեց»։

Երկրորդ լեյբորիստական կառավարության գործունեության և անկման պատճառների հետաքրքիր վերլուծություն է տալիս ձախ լեյբորիստ Ռ. Միլիբենդը[21]։ Հեղինակը քննադատում է լեյբորիստական աջ պարագլուխներին, ցույց տալիս նրանց՝ բանվոր դասակարգի շահերի օգտին գործել չցանկանալը, պահպանողական ուժերի հետ կոմպրոմիսների դիմելու հակումը։ Միլիբենդը մերկացնում է այն պնդումները, թե իբր գործազուրկների հաշվին կատարվող «տնտեսումը» անհրաժեշտ էր «երկիրը փրկելու համար»։ Նա ընդգծում է, որ երբ ընդունվեցին «տնտեսման» միջոցառումները, «ամբողջ երկրով մեկ ընդլայնվեց բողոքի հզոր շարժումն ընդդեմ կառավարական քաղաքականության, որը նշանավորվեց գործազուրկների արշավներով, ցույցերով ու խնդրագրերով»։

Մարքսիստական պատմագրության մեջ (Հ. Պոլլիտ, Ռ. Պալմ Դատտ) լեյբորիստական կուսակցության 1931 թ. ճգնաժամը բնութագրվում է որպես լեյբորիստական կուսակցության մեջ տեղի ունեցած «առաջին խոշոր աղետ», նրա մեջ դասակարգային շահերի քողարկված հակասության զարգացման արդյունք[22]։ Դրա հետ մեկտեղ նշվում է, որ այդ իրադարձությունն էլ չէր նշանակում մարքսիստների առաջարկած սոցիալիզմի անգլիական ուղուց տարբերվող ուղու հանդեպ անգլիական բանվոր դասակարգի հավատի կորուստ։ Ա. Հատտի[23] աշխատություններում երկրորդ լեյբորիստական կառավարության

[19] Տե՛ս Williams F. Fifty years March. The Rise of the Labour Party. L., 1950, pp. 322—333։

[20] Տե՛ս „The British Labour Party. Its history, growth policy and leaders Edited by Herbert Tracey". Vol. 1. L., 1948, p. 176. G. D. H. Cole. History of the Labour Party from 1914. L., 1948, p. 243; A Short History of the British Working classe movement. 1789—1947. L., 1948, p. 431։

[21] Տե՛ս Р. Милибенд. Парламентский социализм. М., 1964.

[22] Տե՛ս «Общественные деятели Англии в борьбе за передовую идеологию». М., 1954, стр. 37.

[23] Տե՛ս Allen Hutt. The post-war History of the British Working Class. L., 1938; „British trade unionism. An outline History". L., 1952; „The Condition of the Working Class in Britain". L., 1933; „This final crisis", L., 1935։

գործունեությունը սուր քննադատության է ենթարկվում։ Նա, գրում է հեղինակը, ավելի հավատարմորեն էր ծառայում կապիտալիստների շահերին և օգնում բուրժուազիային ճգնաժամի ծանրությունը բանվորների ուսերին դնելու, քան առաջին լեյբորիստական կառավարությունը, մի բան, որը և վճռական նախադրյալ էր ժողովրդի մեջ լեյբորիստների հեղինակության անկման և լեյբորիստական կուսակցության ճգնաժամի համար։

Գործազուրկների ծանր դրության և երկրորդ լեյբորիստական կառավարության քաղաքականության դեմ նրանց մղած պայքարի ճշմարտացի պատկերը տալիս են Ու. Հենինգտոնի աշխատությունները[24]։

Սովետական պատմագրության մեջ լեյբորիստական կուսակցության 1931 թ. ճգնաժամի հարցը քննարկվում է Ն. Ֆ. Մոչուլսկու մենագրությունում[25]։

ԱՆԳԼԻԱՆ 1934—1939 ԹԹ.

Երկրի տնտեսական զարգացումը։ Բանվոր դասակարգի դրությունը

1934—1939 թթ. Անգլիայի տնտեսական զարգացման գլխավոր առանձնահատկությունը արդյունաբերական արտադրանքի զգալի աճն էր (մինչև 20 տոկոսով)։ Ընդարձակվում էր արդյունաբերության էլեկտրաէներգետիկական բազան, արտադրությունը մեծանում էր ավտոմոբիլային, շինարարական, պողպատաձուլական, երկաթամշակման և մի շարք այլ ճյուղերում։ Դրա հետ մեկտեղ լճացման վիճակում էին գտնվում ածխի, բամբակի և բրդի գործվածքեղենի արդյունաբերությունը և նավաշինությունը։ Որոշակի դժվարություններ էր կրում նաև մետալուրգիան։ Նույնիսկ 1937 թ. անգլիական արտահանության արժեքը (որը 1932 թ. համեմատությամբ աճել էր գրեթե 50 տոկոսով) 29 տոկոսով ցածր էր 1929 թ. մակարդակից։ Վճարման հաշվեկշռի պասսիվությունը թեկուզև կրճատվել էր (1931 թ.՝ 110 մլն, 1937 թ.՝ 56 մլն ֆունտ ստերլինգ), բայց շարունակում էր մնալ զգալի։ Հիմնական կապիտալի թարմացումը մասնակի բնույթ էր կրում և հարաճուն չափով (ինչպես և ընդհանրապես արդյունաբերական արտադրության աճը) կապված էր պատերազմի նախապատրաստության հետ։ Նախապատերազմական իրադրությունը բացատրում է նաև այն փաստը, որ կապիտալ ներդրումների աճն ամենից առաջ տեղի էր ունենում երկրի ներսում կատարվող կապիտալ ներդրումների հաշվին (1931 թ.՝ 89, 1934 թ.՝ 150, 1936 թ.՝ 217 մլն ֆունտ ստերլինգ). «անդրծովյան» կապիտալ ներդրումներն աճեցին աննշան չափով (1931 թ.՝ 41, 1936 թ.՝ 61 մլն ֆունտ ստերլինգով)։

Սակայն ամբողջությամբ վերցրած, անգլիական տնտեսական կոնյունկտուրան կայուն չէր։ Դրա առավել ցայտուն վկայությունը տնտեսական ճգնաժամն էր, որն սկսվեց 1937 թ. վերջին։ Արտադրության անկումը զգալի էր, կրճատվեցին կապիտալ ներդրումները, ընկան մեծածախ գները, կրճատվեցին արտահանությունն ու ներմուծումը, աճեց առևտրական և վճարման հաշվեկշռի պասսիվը։

Արդեն 1938 թ. վերջին Անգլիայում սկիզբ առավ արտադրության աճը, և 1939 թ. կեսերին ձեռք բերվեց նրա մինչճգնաժամային մակարդակը։ 1937 թ. ճգնաժամի հաղթահարումը կապված էր ռազմական արտադրության զգալի աճի հետ. 1935/36 բյուջետային տարում ռազմական բյուջեն կազմում էր 136,9 մլն ֆունտ ստերլինգ, 1938/39 թթ.՝ 254,4 մլն, իսկ 1939/40 թթ.՝ 626,4 մլն ֆունտ ստերլինգ։ 1939 թ. արդյունաբերական վերելքը ռազմական արտադրության վերելք էր, որի պայմաններում է՛լ ավելի ամրապնդվեցին անգլիական մոնոպոլիստական կապիտալի դիրքերը։

Տնտեսական զարգացման առանձնահատկությունները դրսևորվեցին բանվոր դասակարգի դրության մեջ. 1934—1939 թթ. բնորոշվում էին զբաղվածության գրեթե ընդհանուր և գրեթե անընդհատ աճով։ Զբաղված բանվորների թիվն այդ տարիներին աճեց բոլոր ճյուղերում (բացի բամբակի գործվածքեղենի արտադրությունից, որտեղ այն որոշ չափով կրճատվեց)։ Արտադրության աճը, ռազմական արդյունաբերության ծավալումն առաջ էին բերում որակյալ տղամարդ բանվորների թվի ավելացման պահանջ։ Որոշակի ամրապնդվեցին նաև բանվորական արիստոկրատիայի դիրքերը։ Փոքր ինչ ավելացավ նաև բանվորների ընդհանուր ռեալ աշխատավարձը. եթե 1924—1932 թթ. այն 1900 թ. մակարդակից ցածր էր 2 տոկոսով, ապա 1933—1939 թթ. 1900 թ. մակարդակը գերազանցեց 4 տոկոսով. ընդ որում շահեցին հիմնականում արդյունաբերության ռազմական կամ պատերազմի հետ կապված ճյուղերի բանվորական վերնախավերը։

Սակայն չնայած արտադրության աճին, Անգլիան շարունակում էր մնալ մասսայական գործազրկության երկիր, թեև գործազուրկների ընդհանուր թիվը որոշ չափով կրճատվել էր։ Պաշտոնական տվյալներով, լիովին գործազուրկների թիվը ապահովագրվածների շրջանում կազմում էր՝ 1934 թ.՝ 2086, 1935 թ.՝ 1858, 1936 թ.՝ 1622, 1937 թ.՝ 1665 հազ. մարդ։ Գործազրկությունը հատկապես մեծ էր ածխային արդյունաբերության, նավաշինության, շինարարության և այլ բնագավառներում։ Առավել մասսայական ու տևական գործազրկության կենտրոնատեղին էին «երկրի աղքատ շրջանները»՝ Շոտլանդիան, Ուելսը, Անգլիայի հյուսիսը, հյուսիս-արևելքը և հյուսիս-արևմուտքը։ Գործազուրկների հաշվառմամբ հանդերձ անգլիական բանվորների ռեալ աշխատավարձը 1900 թ. մակարդակից չէր անցնում։ Աշխատանքի պայմանների մեջ արտահայտվում էր նաև այդ տարիներին կիրառվող կապիտալիստական ռացիոնալիզացիան, որն ուժեղացնում էր բանվորների շահագործումը։

Աշխատավորների բաժինը Անգլիայի ազգային եկամտի մեջ նվազեց, այն ժամանակ երբ շահագործող վերնախավի բաժինը 1924 թ. 33 տոկոսից 1938 թ. ավելացավ և կազմեց 36 տոկոս։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին բնակչության 10 տոկոսը տնօրինում էր կապիտալների 85 տոկոսը, իսկ բնակչության 1 տոկոսը՝ բոլոր կապիտալների կեսը։

«Ազգային» կառավարության քաղաքականությունը

1934—1939 թթ. իշխանության գլուխ էր կանգնած «ազգային» կառավարությունը։ 1935 թ. նոյեմբերին, օգտագործելով տնտեսական դրության բարելավումը և սպեկուլացիայի ենթարկելով «ընդհանուր և կայուն խաղաղության» լոզունգները, «ազգային կոալիցիան» հերթական ընդհանուր ընտրություններ անցկացրեց և այնտեղ հաղթանակ տարավ։ Դեռ մինչև ընտրությունները կառավարության գլուխ կանգնեց Ս. Բոլդուինը, Մակդոնալդն այլևս պետք չէր։ 1937 թ. մայիսից կառավարությունը գլխավորեց Ն. Չեմբեռլենը։ Ճգնաժամից Անգլիայի դուրս գալուց հետո էլ «ազգային» կառավարությունները շարունակում էին հակաբանվորական քաղաքականություն վարել։ Գործազրկության ապահովագրման ակտը (1934 թ.) զգալիորեն վատացրեց գործազուրկներին նպաստով ապահովելու պայմանները. դրանց նկատմամբ կառավարական վերահսկողությունն ուժեղացավ, իշխանության տեղական

[24] Տե՛ս Wal. Hannington. A short History of the Unemploed. L., 1938։

[25] Տե՛ս Н. Ф. Мочульский. Кризис лейбористской партии 1931 года. М., 1956.

մարմինների ֆունկցիաները փաստորեն զրոյի հավասարեցվեցին, նպաստ ստանալը դժվարանում էր բյուրոկրատական բարդ պրոցեդուրայի պատճառով։ 1934 թ. ընդունվեց «խռովության հրահրման մասին օրենքը»։ Իրենց պարտականությունների կատարումից զինվորներին շեղելու փորձերի համար այն նախատեսում էր երկամյա բանտարկության պատիժ։ Արդարացնելով այդ օրենքը, կառավարության ներկայացուցիչները փորձում էին վկայակոչել իբր III Ինտերնացիոնալի կողմից անցկացվող «խռովարարական պրոպագանդան» անգլիական զինված ուժերում, հայտարարում էին ոստիկանական ուժերն ու բանակը «քաղաքականությունից դուրս» դնելու անհրաժեշտության մասին։ «Հասարակական կարգուկանոնի վերաբերյալ ակտը», որը ուժի մեջ մտավ 1937 թ. հունվարի 1-ին, արգելում էր համազգեստ կրելը և սահմանափակում միտինգներ տնօրինողների իրավունքները։ Ոստիկաններին իրավունք էր տրվում ոչ միայն մասնակցել ժողովներին, այլև դրանք փակել, եթե, նրանց կարծիքով, ժողովներում արտասանվող ճառերը «խռովարարական բնույթ» էին կրում։ Ընդլայնվում էին ներքին գործերի մինիստրի լիազորությունները. նա կարող էր այս կամ այն շրջանում ցույցերի անցկացումն արգելել մինչև երեք ամիս ժամկետով։

Զևականորեն այդ ակտի ընդունման համար առիթ ծառայեց բրիտանական ֆաշիստների գործունեությունը, բայց փաստորեն այն կիրառվում էր ամենից առաջ բանվոր դասակարգի և նրա կազմակերպությունների դեմ։ «Ազգային» կառավարությունը էական ոչինչ չարեց, որպեսզի բարելավի դրությունը «աղքատ շրջաններում» և մեղմացնի գործազրկությունը երկրում, հոգատարություն չէր ցուցաբերում բանվորների աշխատանքի պահպանության մասին (ամբողջ երկրով մեկ թնդաց Գրեսֆորդի հանքերի աղետը, որը տեղի ունեցավ 1934 թ. սեպտեմբերի 22-ին, որտեղ զոհվեց 265 մարդ), հրաժարվում էր կրճատել աշխատանքային շաբաթը և սահմանել վարձատրվող արձակուրդների մասին օրենք։ Միայն այն բանից հետո, երբ բանվորները պայքարի ընթացքում արդեն ձեռք էին բերել ձեռնարկատերերի համաձայնությունը մեկ շաբաթվա վարձատրվող արձակուրդի մասին, 1938 թ. օգոստոսին, պառլամենտն ընդունեց մի ակտ, որն օրինականացնում էր այդ հաղթանակը։ «Արդյունաբերական կոնֆլիկտների և տրեդ-յունիոնների վերաբերյալ» 1927 թ. օրենքը շարունակում էր ուժի մեջ մնալ։

Անգլիայի կառավարող շրջանների տնտեսական քաղաքականությունը 1934—1939 թթ. վկայում էր երկրի էկոնոմիկայում և սոցիալական հարաբերություններում հոգուտ մոնոպոլիաների՝ պետության միջամտության, պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի տենդենցների զարգացման մասին։ Դեռ 1935 թ. մարտին կառավարությունը հռչակեց սպառազինությունների ընդարձակ ծրագիր, որը հետագայում անընդհատ ընդլայնվում էր։ Երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվելուց մի քանի ամիս առաջ ընդհանուր զինվորական ծառայություն մտցվեց։

Պատերազմին նախապատրաստվելու և Անգլիայի իմպերիալիստական շահերը պաշտպանելու խնդիրներին ծառայեցվեց նաև «ազգային» կառավարության կայսերական-գաղութային քաղաքականությունը։ 30-ական թվականներին դրա առավել բնորոշ գիծը դոմինիոնների բուրժուազիայի հետ դաշինքն ամրապնդելու համար ամեն ինչ անելու ձգտումն էր՝ ամենից առաջ բանվորական և ազգային-ազատագրական շարժումը ճնշելու և պատերազմի դեպքում Բրիտանական կայսրության բոլոր ուժերը մոբիլիզացնելու հնարավորությունն

ապահովելու նպատակով։ Այդ դաշինքն ուղղված էր Բրիտանական կայսրության բնակչության ճնշող մեծամասնության դեմ։

Բրիտանական կառավարող շրջանների քաղաքականության իմպերիալիստական, հակաժողովրդական բնույթը հատկապես վառ կերպով դրսևորվեց Հնդկաստանում իրենց տիրապետությունը հավերժացնելու ձգտման մեջ, մի այնպիսի երկրում, որտեղ անողոք կերպով ճնշվում էր Անգլիային շհնազանդվելու ամեն մի դրսևորում, օրենքից դուրս էին հայտարարվում բոլոր առաջադիմական ուժերը։ Հնդկաստանում իմպերիալիստական իշխանության մեխանիզմը կատարելագործելու նպատակով «ազգային» կառավարությունը նրա համար մշակեց նոր սահմանադրություն՝ 1935 թ. «Հնդկաստանի կառավարման վերաբերյալ ակտը», որը պահպանելով և ամրապնդելով իմպերիալիստական լուծն անգլիական այդ խոշորագույն գաղութում, միաժամանակ մի շարք զիջումներ էր պարունակում հնդկական բնակչության արտոնյալ խավերի համար։ Նոր «սահմանադրության» մեջ ոչինչ չէր ասվում Հնդկաստանի համար դոմինիոնի ստատուսի մասին, որը նրան խոստացվել էր մինչ այդ։

Պատերազմի նախօրեին, 1939 թ. մայիսին անգլիական կառավարությունը լորդերի պալատ մտցրեց մի բիլլ, որն ավելի էր ընդլայնում Հնդկաստանի գեներալ-նահանգապետի իշխանությունը, ըստ էության այն դարձնելով դիկտատորական այն դեպքում, եթե գտնվեր, որ «Հնդկաստանի անվտանգությանը պատերազմ է սպառնում»։

Անգլիական իմպերիալիզմն առաջվա պես տերունտնօրենություն էր անում Եգիպտոսում, որտեղ գտնվում էին անգլիական օկուպացիոն զորքերը։ Երկրի էկոնոմիկան, նրա ֆինանսներն անգլիական մոնոպոլիաների հսկողության տակ դրվեցին։ 1936 թ. Եգիպտոսին Անգլիայի փաթաթած ստրկացուցիչ պայմանագիրը պահպանում էր անգլիական տիրապետությունը երկրում։

«Անհնազանդ դոմինիոնի»՝ Իռլանդիայի դեմ Անգլիան դեռ 30-ական թվականների սկզբին էր մաքսային պատերազմ մղում, որն ուղղված էր Անգլիայի տնտեսական լծի ուժեղացմանը և տնտեսական քաոսի հրահրմանն այդ երկրում՝ ֆիաննա ֆոյլ կուսակցությանը իշխանությունից հեռացնելու նպատակով, կուսակցություն, որն այդ ժամանակ կանգնած էր հակաիմպերիալիստական դիրքերում։ Բրիտանական իմպերիալիզմն ընդհարվեց իռլանդական ժողովրդի ազգային-ազատագրական ուժեղ պայքարի հետ։

1937 թ. իռլանդական պառլամենտն ընդունեց նոր սահմանադրություն, որն Իռլանդիան հռչակում էր «սուվերեն և անկախ պետություն»։ Սակայն Իռլանդիայի կախումն Անգլիայից փաստորեն շարունակում էր պահպանվել։ Անգլիական թագի հսկողության տակ էր մնում Իռլանդիայի արտաքին քաղաքականությունը։ Պահպանվում էր երկրի անդամահատումն երկու մասի՝ հարավային և հյուսիսային, որը անմիջականորեն գտնվում էր Անգլիայի տիրապետության տակ։ 1938 թ. Անգլիայի կառավարող շրջանները ստիպված էին Իռլանդիայի հետ համաձայնագիր կնքել, որը նախատեսում էր մաքսային պատերազմի դադարեցում, Իռլանդիայի տերիտորիայի վերջնական ազատում (բացառյալ Օլստերի հյուսիս-արևելյան վեց կոմսությունները) անգլիական զորքերից, և համագործակցության հաստատում պաշտպանության հարցերի գծով։ Այդ համաձայնագիրը որոշակի չափով նորմալացնում էր Անգլիայի հարաբերությունները հարևան երկրի հետ։

Իսկ գաղութային տիրույթներում, օրինակ, Յամայկայում, Տրինիդադում, Տոբագոյում և մյուսներում ազգային-ազատագրական շարժումը ճնշվում էր ուժի միջոցով։

Կայսերական միասնության ամրապնդման համար «ազգային» կառավարությունը 1937 թ. անցկացրեց Բրիտանական կայսրության արտաքին քաղաքականության և ռազմական նախապատրաստությունների հարցերին նվիրված կայսերական կոնֆերանս։ Նախապատերազմյան շրջանում Անգլիայի և դոմինիոնների միջև գոյություն ունեցող հակասությունները ետին պլան մղվեցին (որին նպաստեց նաև մաքսային բլոկի ստեղծումը կայսրության շրջանակներում), կենտրոնական հարց դարձան Անգլիայի հակասությունները գաղութների ժողովուրդների հետ։

Ռեակցիոն ներքին և կայսերա-գաղութային քաղաքականության հետ մեկտեղ «ազգային» կառավարությունը 30-ական թվականների երկրորդ կեսին անց էր կացնում ագրեսիվ ուժերի խրախուսման քաղաքականություն։

1934—1939 թթ. ավելի ու ավելի էին սրվում Անգլիայի հակասությունները Գերմանիայի, Իտալիայի, Ճապոնիայի հետ։ Առանձնապես սրվում էին անգլո-գերմանական հակասությունները։ Համաշխարհային տիրապետություն նվաճելու հիտլերականների պլանները չէին կարող իրագործվել առանց բրիտանական իմպերիալիզմի դիրքերը քայքայելու։ Անգլիայի կառավարող շրջանները, որոնք մոլեգնել էին սոցիալիզմի երկրի նկատմամբ ունեցած ատելությունից, հուսով էին, որ իրենց կհաջողվի իրենց իմպերիալիստական հակառակորդների ագրեսիան ուղղել ՍՍՀՄ-ի դեմ։ Այդ գաղափարն էլ ընկավ անգլիական իմպերիալիզմի ամբողջ արտաքին քաղաքական ստրատեգիայի հիմքում։

Անգլիայի ռեակցիոն շրջանները ձգտում էին թույլ չտալ Ֆրանսիայի և ՍՍՀՄ-ի մերձեցում, խանգարել նրանց միջև փոխադարձ օգնության պակտի կնքմանը, որը կարող էր դառնալ կոլեկտիվ անվտանգության սիստեմի կարևոր հիմքերից մեկը։ Երբ 1935 թ. մարտի 16-ին Գերմանիայում հայտարարվեց ընդհանուր զինվորական ծառայություն մտցնելու մասին (ի խախտումն Վերսալյան պայմանագրի), Անգլիան միայն սահմանափակվեց ձևական բողոք հայտնելով, որի վրա Հիտլերն ուշադրություն չդարձրեց։ Անգլիան ոչինչ չձեռնարկեց նաև կեղծված հանրաքվեից հետո Սաարի մարզը Գերմանիային միացնելու առթիվ։ Իսկ 1935 թ. հունիսի 18-ին Անգլիան Գերմանիայի հետ կնքեց ծովային համաձայնագիր, որը նացիստներին իրավունք տվեց ստեղծել իր հզորությամբ Բրիտանական կայսրության ռազմածովային նավատորմի ջրատարողության 35 տոկոսին հավասար նավատորմ։ Ճանաչելով իր ջրատարողությամբ մոտավորապես ֆրանսիական նավատորմին հավասար նավատորմի շինարարության՝ Գերմանիայի իրավունքը, Անգլիան առանց Ֆրանսիային տեղյակ պահելու և համաձայնության դիմեց Վերսալյան պայմանագրի խախտմանը։ Այդ նույն համաձայնագրով էլ Գերմանիան իրավունք ստացավ կառուցել անգլիական ստորջրյա նավատորմի մինչև 45 տոկոսի չափով ստորջրյա նավատորմ։ Այդ «սահմանափակումը» փաստորեն կեղծ բնույթ էր կրում, քանի որ այն դեպքում, եթե Գերմանիան ցանկանար ստորջրյա մեծ նավատորմ կառուցել, նա պարտավորվում էր այդ մասին միայն «ինֆորմացիա տալ» անգլիական կառավարությանը։ Իսկ վերջինս իրեն սփոփում էր այն մտքով, որ հիտլերականները ռազմածովային նավատորմը Բալթիկայում կօգտագործեն Սովետական Միության դեմ։

Անգլիայի կողմից ծովային համաձայնագրի կնքումը Գերմանիայի հետ ոգեշնչեց ֆաշիստական Իտալիային ագրեսիվ գործողություններ ծավալելու Եթովպիայի (Հաբեշստանի) դեմ, որն Անգլիայի կողմից վճռական հակազդեցության չհանդիպեց։ Աֆրիկայում նրա կողմից իտալական զավթումների ճանաչումը ևս մեկ օղակ եղավ ագրեսորներին խրախուսելու շղթայում։ 1936 թ. մարտի 7-ին, ի խախտումն Վերսալյան պայմանագրի, գերմանական զորքերը մտան Հռենոսի մարզ։ Անգլիական կաբինետը նույնիսկ չդիմեց այն բանին, որպեսզի, ի պատասխան Գերմանիայի այդ գործողությունների, Անգլիայի, Ֆրանսիայի և Բելգիայի ռազմական շտաբների բանակցություններ սկսի, թեև նրա նիստում այդպիսի առաջարկություն եղավ։

1936 թ. կեսերին, ջանալով խորտակել ֆաշիստական խռովարարների դեմ Իսպանիայում պայքարի ելած ժողովրդական ճակատի ուժերը, Գերմանիան և Իտալիան ինտերվենցիա ձեռնարկեցին։ Չնայած որ այդ ինտերվենցիան լուրջ վնաս էր հասցնում Միջերկրական ծովում անգլիական շահերին և սպառնալիքի տակ դնում անգլիական միջերկրածովյան կոմունիկացիաները, անգլիական կառավարությունը շարունակում էր «չմիջամտելու» քաղաքականություն վարել։ Անգլիական կառավարող շրջաններն անչափ նպաստեցին 1936 թ. սեպտեմբերի 9-ին Լոնդոնում իր աշխատանքներն սկսած «Չմիջամտելու միջազգային կոմիտեի» վերածմանը մի այնպիսի վարագույրի, որը քողարկում էր իտալա-գերմանական ինտերվենցիան Իսպանիայում։

Ոչ պակաս հետևողականությամբ էր Անգլիան իրականացնում այն քաղաքականությունը, որն ուղղված էր ագրեսորի հետ գործարքի մեջ մտնելուն նաև Հեռավոր Արևելքում։ Սկզբից ևեթ Անգլիայի անհրաժեշտ հակազդեցությանը չհանդիպեց Ճապոնիան, որը պատերազմ սանձազերծեց Չինաստանի դեմ։ Նա հակազդեցության չհանդիպեց նաև այն բանից հետո, երբ 1937 թ. հուլիսի 7-ին ճապոնական զորքերը լայն մասշտաբով ռազմական գործողություններ ծավալեցին։

Ագրեսորների հետ գործարքի քաղաքականության օղակներից մեկը եղավ Հիտլերի հետ բանակցություններ վարելու համար Չեմբեռլենի կողմից անգլիական մինիստր լորդ Հալիֆաքսին 1937 թ. նոյեմբերին Գերմանիա ուղարկելը։ Այդ այցելության նպատակն էր Հիտլերին Անգլիայի հետ սերտ մերձեցում առաջարկելը, որի համար որպես հատուցում խոստանում էին համաձայնվել Ավստրիայի, Չեխոսլովակիայի և Դանցիգի զավթմանը Գերմանիայի կողմից։ 1937 թ. դեկտեմբերի կեսերին Չեմբեռլենն անձամբ հանդիպեց Ռիբենտրոպի հետ (այն ժամանակ Լոնդոնում գերմանական դեսպան) և նրան հավաստիացրեց, որ «ամբողջ ուժով պաշտպանում է անգլո-գերմանական համագործակցությունը»։

1938 թ. մարտին Ավստրիայի զավթումից հետո Անգլիան ոչ մի հակազդեցություն ցույց չտվեց հիտլերականներին. Չեմբեռլենը միայն սահմանափակվեց համայնքների պալատում արած մի հայտարարությամբ այն մասին, որ Գերմանիայի գործողությունները «արժանի են լուրջ դատապարտման»։ Անգլիական կառավարությունը չպաշտպանեց ՍՍՀՄ կառավարության խաղաղ նախաձեռնությունը, որը մարտի 17-ին կոչ էր անում միջոցառումներ քննարկել ագրեսիայի հետագա զարգացումը թույլ չտալու և նոր համաշխարհային պատերազմի վտանգը վերացնելու համար։

Անգլիայի և Ֆրանսիայի պրեմիեր մինիստրների և արտաքին գործերի մինիստրների՝ 1938 թ. ապրիլի վերջին Լոնդոնում կայացած հատուկ կոնֆերանսում, որը քննարկում էր Չեխոսլովակիայի ճակատագրի հարցը, Չեմբեռլենը ֆրանսիական ներկայացուցիչներին ուղղակի հայտարարեց, որ «եթե Գերմանիան ցանկանում է Չեխոսլովակիան ոչնչացնել, ապա ինքը միջոցներ չի տեսնում դրան խանգարելու համար»։

1938 թ. հուլիսին Լոնդոնում գերմանական դեսպան Դիրքսենը բնութա-

գրելով անգլիական կառավարության դիրքը, հաղորդում էր Բեռլին, որ անգլիական կառավարությունն իր առջև նպատակ է դրել համաձայնության գալ Գերմանիայի հետ և սուդետական հարցում հանդես է բերում գերմանական շահերի առավելագույն ըմբռնողություն։

1938 թ. օգոստոսի սկզբին Չեմբեռլենը Պրագա ուղարկեց լորդ Ռենսիմենի միսիան, որն իր մեկուկեսամսյա «գործունեությունից» հետո կազմեց մի հուշագիր, որը խոսում էր Չեխոսլովակիայի սուդետական մարզը Գերմանիային միացնելու պահանջի «բնական» լինելու մասին։

Դրանից հետո Հիտլերը սկսեց առանց ձևականությունների Չեխոսլովակիային սպառնալ ռազմական հաշվեհարդարով։ Չեմբեռլենի անձնական այցելությունները, որոնք նա կատարեց ֆաշիստական դիկտատորին (առաջինը՝ 1938 թ. սեպտեմբերի 15-ին, երկրորդը՝ սեպտեմբերի 22—23-ը), իրականացվեցին Չեխոսլովակիայի կողմից հիտլերյան պահանջների ընդունումն ապահովելու ուղղակի նպատակով։

Չեխոսլովակիային Անգլիայի դավաճանելը համապատասխանում էր Անգլիայի ռեակցիոն ուժերի գաղտնի պլաններին՝ ֆաշիստական ագրեսիան «կանալիզացնել» արևելյան ուղղությամբ, որպեսզի վերջին հաշվով Գերմանիան ընդհարվի ՍՍՀՄ-ի հետ։ «Գերմանիային կանգնեցնելը» նրանց պլանների մեջ չէր մտնում։ Դրա դեմ վճռականորեն հանդես էին գալիս Չեմբեռլենի կառավարության անդամները։ 1938 թ. սեպտեմբերին կաբինետի նիստերից մեկում Հիտլերի զավթողական ախորժակները բավարարելու նպատակով Չեխոսլովակիան անդամահատելու հարցը քննարկելու ժամանակ Տ. Ինսկիպը, որը զբաղեցնում էր պաշտպանության կոորդինացման մինիստրի պոստը, հայտարարեց. «Խոսքն այն մասին չէ, որպեսզի պատերազմ մղել Չեխոսլովակիայի պահպանման համար..., այլ այն պատերազմի մասին է, որի նպատակն է կանգնեցնել Հիտլերին։ Այդպիսի պատերազմը վիթխարի տառապանքներ ու վնաս կհասցնի և Հիտլերի հնարավոր ոչնչացման հետ մեկտեղ, այն, անկասկած, կարող է այլ, ավելի մեծ բան ևս ոչնչացնել։ Դրա հետևանքը կարող են լինել Եվրոպայի դրության մեջ կատարված փոփոխությունները, որոնք հաճելի չեն լինի ոչ մեկի համար, բացի Մոսկվայից և բոլշևիկներից»։

Անգլիայի ռեակցիոն շրջանները վախենում էին, որ ֆաշիզմի դեմ վճռական պայքարը իր սուր ծայրով կշրջվի կապիտալիստական կարգերի դեմ, և գերադասում էին հակասովետական գործարքները Հիտլերի հետ։

Հերթական հակասովետական գործարք եղավ Մյունխենյան գործարքը 1938 թ. սեպտեմբերին, ուր Անգլիան ու Ֆրանսիան դավաճանեցին Չեխոսլովակիային, նրա տերիտորիայի մի մասը տալով Գերմանիային։ Պրոֆաշիստական շրջաններն Անգլիայում ցնծում էին։ Նրանց թվում էր, թե իրենց արտաքին քաղաքական ստրատեգիան հաջողությամբ է պսակվել։ Այդ քաղաքականության տրամաբանական շարունակությունը եղավ սեպտեմբերի 30-ին անգլո-գերմանական դեկլարացիայի ստորագրումը, որը փաստորեն Անգլիայի և հիտլերյան Գերմանիայի միջև կնքված չհարձակման պակտ էր։

Մյունխենից անմիջապես հետո Չեմբեռլենի կառավարությունը Գերմանիայի հետ վարած քաղաքական բանակցությունները կապեց տնտեսական հարցերի գծով բանակցությունների հետ։ Անգլիայում գտնվող գերմանական տնտեսական պատվիրակությանը անգլիական կառավարության տնտեսական խորհրդատու Լեյթ Ռոսսի կողմից առաջարկություն արվեց գումարել Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Գերմանիայի կոնֆերանս՝ նրանց միջև «տնտեսական համագործակցության» հարցը քննարկելու համար։ Հենց այդ պատվի-

րակության անդամներին էլ Անգլիայի գաղութների մինիստրությունը հայտնեց, որ Անգլիան պատրաստ է քննելու գերմանական գաղութային հավակնությունները (հասկանալի է, որ Անգլիան ենթադրում էր դրանք բավարարել ոչ թե իր, այլ ուրիշի հաշվին)։ 1938 թ. հոկտեմբերի երկրորդ կեսին Չեմբեռլենի անունից մինիստրներ Խորը և Բյուրգինը Լոնդոնում Գերմանիայի դեսպան Դիրքսենին առաջարկություն արեցին, որ նախատեսում էր ձևական ռազմական դաշինքի կնքում Մյունխենի մասնակիցների միջև։

Անգլիական կառավարությունը շտապեց գործողության մեջ դնել 1938 թ. ապրիլի 16-ի անգլո-իտալական համաձայնագիրը, ըստ որի Իսպանիայից իր զորքերը («կամավորներին») ետ կանչելու վերաբերյալ իտալական դիկտատորի տված կեղծ խոստման փոխարեն Անգլիան ճանաչում էր Հաբեշստանի զավթումը Իտալիայի կողմից։ Չեմբեռլենն ու Հալիֆաքսը Իսպանիայից զորքերը ետ կանչելու մասին Իտալիայի համաձայնությունը չստացան նաև 1939 թ. հունվարին, երբ նրանք բանակցությունների համար ժամանեցին Հռոմ։

Անգլիական կառավարությունը հրաժարվեց օգնել հանրապետականների էվակուացմանը Իսպանիայից, այսինքն՝ հրաժարվեց նրանց փրկել ֆաշիստների հաշվեհարդարից։

1939 թ. մարտին նա վերստին ակտիվացրեց անգլո-գերմանական տընտեսական բանակցությունները, բայց այդ ամսին էլ Գերմանիան զավթեց ամբողջ Չեխոսլովակիան։

Անգլիական կառավարությունը ագրեսիայի այդ նոր խոշոր ակտի կապակցությամբ անհրաժեշտ գտավ այնպիսի տեսք ընդունել, թե իբր ինքը ագրեսիային հակազդելու նպատակով մտադիր է իրականացնել «նոր քաղաքականություն»։ Անգլիան երաշխիքներ տվեց Լեհաստանին, ապա և Հունաստանին ու Ռումինիային։ Բայց աշխարհը Չեխոսլովակիայի օրինակով արդեն գիտեր անգլիական երաշխիքների գինը։

Այդպիսի իրադրության մեջ, 1939 թ. մարտին սկսվեցին Անգլիայի բանակցությունները ՍՍՀՄ-ի հետ։ Սակայն դրանք դիտավորյալ կերպով ձախողվեցին անգլիական կառավարող շրջանների կողմից, որը նպաստեց հիտլերականների կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծմանը։

Անգլիական աշխատավորների պայքարը նախապատերազմյան տարիներին

Անգլիական բանվորների տնտեսական պայքարը 1934—1939 թթ. մեծ լարվածությամբ աչքի չէր ընկնում։ Գործադուլների թիվը մեծ չէր, դրանք ընդգրկում էին բանվորների համեմատաբար ոչ մեծ մասը։ Գործադուլների հետևանքով կորցված աշխատանքային օրերի թիվն այդ ժամանակաշրջանի ցանկացած տարում չէր գերազանցում 1918—1932 թթ. միջին տարեկան մակարդակը (բացառությամբ 1927—1928 թթ.)։ Տնտեսական կոնֆլիկտներում տրեդ-յունիոնների պարագլուխները գերադասում էին կոմպրոմիսային ելքը, որն զգալիորեն սահմանափակում էր գործադուլների արդյունքները։

Այդ տարիներին բանվորական շարժման մեջ մարտական ոգի մտցրին գործազուրկները։ 1934—1935 թթ. պայքար ծավալվեց ընդդեմ գործազրկությունից ապահովագրվելու մասին բիլլի (1934 թ.), որը կառավարությանն ստիպեց հետաձգել այդ ակտի մի շարք հոդվածների կիրառումը, հոդվածներ, որոնք չափազանց վատացնում էին գործազուրկների դրությունը։ 1934 թ. սկզբին անցկացվեց գործազուրկների «սովյալ արշավ» դեպի Լոնդոն։ Գործազուրկների շարժմանն ակտիվ օգնություն ցույց տվեցին Մեծ Բրիտանիայի կոմկուսը, ՓԱՇ-ը և ԳԱՇ-ը։ Հակառակ լեյբորիստների սաբոտաժին, հաճախ

ստեղծվում էր գործազուրկների տարբեր կազմակերպությունների գործողությունների միասնություն։ Այդ տարիների բանվորական շարժման մեջ որոշակի դեր խաղաց պայքարը «կոմպանիական յունիոնիզմի», այսինքն՝ ձեռնարկատերերի կողմից «ոչ քաղաքական», «դեղին» կամ «գրպանային» տրեդ-յունիոններ ստեղծելու դեմ, միայն աջ լեյբորիստների ջանքերով հաջողվեց կանխել այդ ընթացքում հասունացած հանքափորների ընդհանուր գործադուլը։

Անգլիական բանվորները չափազանց ակտիվորեն հանդես եկան ֆաշիզմի դեմ։ 1934 թ. մոտերքը ֆաշիստների բրիտանական միությունը (20 հազ. անդամ) ուժեղացավ և մեծ ակտիվություն էր հանդես բերում։ Կառավարական մարմինների հանդես բերած բացահայտ թողտվության պայմաններում անց էին կացվում բազմաթիվ միտինգներ, ժողովներ և ցույցեր, որոնց նպատակն էր ահաբեկել և տեռորի ենթարկել բնակչությանը. «սևվերնաշապիկավորները» ծեծում ու վնասվածք էին պատճառում նրանց, ովքեր համարձակվում էին զայրույթ հայտնել Մոսլիի կողմնակիցների գործողությունների դեմ։

Բանվորական աջ պարագլուխներն ընդհանուր առմամբ հակաֆաշիստական դիրք գրավելով, ֆաշիզմի էության վերլուծման ժամանակ ուշադրությունը սևեռում էին նրա գաղափարախոսների առաջադրած ծրագրի («դիկտատուրա» հաստատելու կոչ), այլ ոչ թե ֆաշիզմի դասակարգային էության վրա։ Պրոպագանդվում էր մի «տեսություն», որի համաձայն կոմունիստական շարժման աճն իբր անխուսափելիորեն տանում է դեպի ֆաշիզմի ակտիվացում, և վկայակոչելով այդ «կովանը», տրեդ-յունիոնիստական ու լեյբորիստական ղեկավարությունը նույնիսկ վտանգի դեմ հանդիման հրաժարվում էր գործողությունների միասնությունից։

Անգլիական կոմունիստներն իրենց դրսևորեցին որպես ֆաշիզմի դեմ պայքարող անվեհեր մարտիկներ։ Կոմկուսը դասակարգային ճիշտ գնահատական տվեց ֆաշիզմի էությանը և զգալի դեր խաղաց Անգլիայում նրա ազդեցության թուլացման գործում։ Ֆաշիզմը Անգլիայում հաջողություն չունեցավ նաև բանվորական արիստոկրատիայի շրջանում, որը հիմնականում գոհ էր իր դրությունից բուրժուա-դեմոկրատական կարգերի պահպանման պայմաններում։ Այդ հանգամանքը, ինչպես նաև շարքային բանվորների տրամադրությունը կանխորոշեց բանվոր դասակարգի խոշորագույն և առավել ազդեցիկ կազմակերպությունների՝ տրեդ-յունիոնների, լեյբորիստական կուսակցության, կոոպերատիվների հակաֆաշիստական դիրքը։ Դրա հետևանքով անգլիական «սևվերնաշապիկավորները» չկարողացան իրենց համար կայուն սոցիալական բազա ստեղծել բանվոր դասակարգի շրջանում։ Բացի այդ, անգլիական ֆաշիստները իրենց գործունեությունը ծավալեցին այնպիսի ժամանակաշրջանում, երբ Գերմանիայում արդեն հաստատվել էր ֆաշիստական դիկտատուրա, որն անգլիական աշխատավորությանը պարզ պատկերացում էր տալիս, թե ինչի էին ուզում Անգլիան հասցնել բրիտանական ֆաշիստները։ Հիտլերյան Գերմանիայում բանվորական կազմակերպություններին, արհմիություններին, կոոպերատիվներին, առաջադիմական բոլոր ուժերին վիճակված ճակատագիրը, ֆաշիստական տեռորի մոլեգնումը՝ այս բոլորը որպես ահեղ նախազգուշացում կանգնած էր անգլիական բանվորների և բանվորական արիստոկրատիայի, ինչպես նաև միջին մանրբուրժուական խավերի աչքի առջև, նրանց ստիպելով ծայրահեղ անվստահությամբ վերաբերվել Մոսլիի և նրա կողմնակիցների դեմագոգիային։

Եթե գերմանական ֆաշիստներն իրենց սոցիալական բազայի ընդլայնման պայքարում կարողացան օգտվել «գերմանական ժողովրդի ազգային ազա-

տագրման» լոզունգներից, ազգայնական անզուսպ պրոպագանդայից, ապա բրիտանական ֆաշիստների միջոցների զինանոցում այդպիսի զենք չկար։ Նրանք զուրկ էին նաև այն փաստարկներն օգտագործելու հնարավորությունից, որոնց դիմում էին իտալական ֆաշիստները։ Վերջիններս փորձում էին իտալական ժողովրդի տառապանքները «բացատրել» նրանով, որ Իտալիային իբր կողոպտեցին առաջին համաշխարհային պատերազմից հետո, և դրա հիման վրա բորբոքել ազգայնական տրամադրություններ։ Անգլիայի աշխատավոր զանգվածների շրջանում ֆաշիստական ազդեցության տարածմանը խոչընդոտում էին նաև անգլիական ժողովրդի մեջ խոր արմատներ ձգած դեմոկրատական ավանդույթները։

Այդ իսկ հանգամանքների բերումով ֆաշիստներն Անգլիայում որոշ հաջողություն ունեցան միայն ռեակցիոն սպայության, մանրբուրժուական խավերի աննշան խավի, բանվորական արիստոկրատիայի՝ արտոնյալ վիճակից զրկված և ճգնաժամի հետևանքով սովորական ուղուց դուրս նետված առանձին ներկայացուցիչների, ինչպես նաև ապադասակարգայնացված տարրերի շրջանում։

Անգլիայի կառավարող դասակարգերն այդ տարիներին ի վիճակի գտնվեցին ապահովելու իրենց տիրապետությունը, չհրաժարվելով կառավարման բուրժուա-դեմոկրատական ավանդական ձևերից, այդ թվում նաև լեյբորիստական և տրեդ-յունիոնիստական աջ առաջնորդներին ակտիվորեն օգտագործելուց, առավել ևս որ այդ առաջնորդները շարունակում էին զգալի ազդեցություն ունենալ բանվորների շրջանում։

Մի կողմից, Անգլիայի, մյուս կողմից, Գերմանիայի և Իտալիայի միջև իմպերիալիստական հակասությունների սրման պայմաններում հիտլերականների և իտալական ֆաշիստների հետ անգլիական ֆաշիստների ունեցած բացահայտ կապերն անգլիական կառավարող շրջանների համար ֆաշիզմը դարձնում էին օգտագործման համար ավելի նվազ ընդունելի։

Անգլիական բանվորների պայքարը «ազգային» կառավարության արտաքին քաղաքականության դեմ

1934—1939 թթ. անգլիական պրոլետարիատի պայքարում մեծ դեր խաղացին արտաքին քաղաքականության հարցերը։ 30-ական թվականների կեսերի իրադրությունը ծայրահեղորեն բարդացնում էր բանվորական կազմակերպությունների տակտիկան, նոր մոտեցում պահանջում մի շարք պրոբլեմների, մասնավորապես պատերազմի հարցի լուծման նկատմամբ։

Նոր պայմաններում կոմկուսը հրաժարվեց ցանկացած այն պատերազմին անկոմպրոմիսային հակազդեցություն ցույց տալու նախկին դիրքից, որը կմղեր Անգլիան։ Նոր պատերազմը կանխելու նպատակով, բոլոր ժողովուրդների շահերին համապատասխան նա հանդես եկավ ի պաշտպանություն կոլեկտիվ անվտանգության սիստեմի։ Որպես կոլեկտիվ անվտանգության ստեղծման ճանապարհին առաջին քայլ՝ կոմկուսը պահանջեց, որպեսզի Անգլիան միանա Ֆրանս-սովետական պակտին։ Արդեն 30-ական թվականների կեսերին անգլիական կոմունիստները հնարավոր էին համարում այնպիսի իրադրություն, երբ բուրժուական Անգլիան ստիպված կլիներ ՍՍՀՄ-ի հետ դաշինք կնքած կռվել ֆաշիզմի դեմ։ Այդ նույն ժամանակ կոմկուսը նախապատերազմյան բոլոր տարիներին անողոք կերպով մերկացնում էր «ազգային» կառավարությանը որպես կոլեկտիվ անվտանգության թշնամու, վճռականորեն հանդես էր գալիս բանվորական աջ պարագլուխների կողմից սերմանվող պատրանքների դեմ, պարագլուխներ, որոնք դեկլարատիվ կերպով հանդես էին գալիս Ազգերի լի-

գայի միջնորդած կոլեկտիվ անվտանգության օգտին։ Ի տարբերություն լեյբորիստական աջ պարագլուխների, կոմկուսը կոլեկտիվ անվտանգության ապահովման նպատակով անհապաղ ակտիվ մարտական գործողությունների էր կոչում, հաշվի առնելով, որ առանց բանվոր դասակարգի հզոր ճնշման «ազգային» կառավարությունը չի դիմի կոլեկտիվ անվտանգության պակտի կնքմանն ընդդեմ ֆաշիստական պետությունների։ Իսկ այն դեպքում, եթե այդպիսի պակտ այնուամենայնիվ կնքվի, նրա կատարումը երաշխավորված չի լինի, քանի դեռ իշխանության գլուխ կանգնած կլինի «ազգային» կառավարությունը։ Լեյբորիստական ղեկավարության դիրքը քննադատում էին նաև ձախ լեյբորիստները, որոնք գլխավորապես միավորված էին լեյբորիստական կուսակցության մեջ մտնող Սոցիալիստական լիգայում (առաջացել է լեյբորիստական կուսակցությունից Անկախ բանվորական կուսակցության դուրս գալուց հետո)։ Բայց իմպերիալիստական պատերազմում կառավարությանը լեյբորիստական կուսակցության կողմից աջակցություն ցույց տալու հնարավորությունից անհանգստացած (ինչպես այդ եղավ 1914—1918 թթ.), ձախ լեյբորիստները ուշադրության կենտրոնում դրեցին ցանկացած պատերազմի դեմ (որը նրանց միայն իմպերիալիստական էր թվում) պայքարելու լոզունգները, սխալմամբ, դոգմատիկորեն բացառելով Անգլիայում բուրժուական կառավարություն լինելու դեպքում հակաֆաշիստական պատերազմ մղելու հնարավորությունը։ Այդ կապակցությամբ Սոցիալիստական լիգան սկզբունքորեն մերժում էր բուրժուական կառավարության պայմաններում Անգլիայի վարած պատերազմին անգլիական բանվոր դասակարգի ցույց տված աջակցության հնարավորությունը, նույնիսկ եթե դա լիներ ՍՍՀՄ-ի հետ կնքած դաշինքի պատերազմ ընդդեմ ֆաշիստական ագրեսորների։ Ցանկանալով տեսնել այն բանը, որ այդ ժամանակաշրջանի Անգլիայում նախադրյալներ չկային մոտիկ ապագայում հեղափոխական իրադրության ստեղծման համար, Սոցիալիստական լիգան որպես պատերազմի դեպքում անմիջական խնդիր առաջադրում էր իշխանության գրավումն անգլիական բանվոր դասակարգի կողմից։

Պատերազմի նկատմամբ վերաբերմունքի հարցում Սոցիալիստական լիգայի դոգմատիկ սխալները բաժանում էր նաև Անկախ բանվորական կուսակցությունը։

Եթովպիայի վրա Իտալիայի հարձակվելուց հետո պատերազմի նկատմամբ վերաբերմունքում եղած տարբերությունները չհապաղեցին դրսևորվել։ Անկախ բանվորական կուսակցությունը և Սոցիալիստական լիգան սխալ, «չեզոքության» դոգմատիկ դիրք գրավեցին, հանդես գալով Ազգերի լիգայի սանկցիաների դեմ։ Լեյբորիստական կուսակցության ղեկավարության դիրքը, որը պաշտպանում էր իտալական ագրեսորների դեմ Ազգերի լիգայի հռչակած սանկցիաների քաղաքականությունը, բայց բավարար պայքար չէր մղում դրանց արդյունավետ կիրառման համար, քննադատության ենթարկվեց ձախ լեյբորիստների կողմից։

Իտալա-Եթովպական պատերազմի ժամանակ կոմկուսը առաջադրեց անգլիական բանվոր դասակարգի ակտիվ գործողությունների ծրագիր ի պաշտպանություն Եթովպիայի, պահանջելով սանկցիաների անվերապահ և վճռական կիրառում։ Այդ ծրագրի իրագործման ապահովումը, նշում էր կոմկուսը, պահանջում է բոլոր բանվորների գործողությունների միասնություն։

Անգլիական բանվորական շարժման մեջ սուր պայքար ծավալվեց Իսպանիայի քաղաքացիական պատերազմի առթիվ։ Իսպանական հերոսական հանրապետականների պաշտպանության գործում անձնուրաց ակտիվ մարտնչող

եղավ Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցությունը, որն ընդգծում էր, թե իրենք դեմոկրատիան պաշտպանում են ոչ միայն սոսկ Իսպանիայի, այլև Եվրոպայի բոլոր երկրների ժողովուրդների համար։ Կոմկուսը պահանջում էր վերջ տալ կեղծ «չեզոքությանը», որը միայն քաղարկում էր ֆաշիստներին ցույց տրվող աջակցությունը։ Նա կազմակերպում էր մասսայական միտինգներ, որոնց մասնակիցները պահանջում էին, որպեսզի բրիտանական կառավարությունը իսպանական օրինական կառավարությանը զենք և դեղորայք մատակարարի, որպեսզի Իսպանիայից դուրս բերվեն Գերմանիայի և Իտալիայի ինտերվենցիոն զորքերը։ Միջոցների հանգանակություն էր անցկացվում հերոսական իսպանական ժողովրդի օգնության ֆոնդի համար։

Ի պաշտպանություն հանրապետական Իսպանիայի՝ կոմկուսի կազմակերպած միտինգում, որը տեղի ունեցավ 1936 թ. օգոստոսի 23-ին Հայդ պարկում, մասնակցեց 100000 մարդ։

Կոմկուսը քննադատում էր տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսի որոշումը, որը պաշտպանում էր Իսպանիայի իրադարձությունների նկատմամբ իրագործվող «չեզոքությունը»։

Իսպանական ժողովրդի և ֆաշիզմի դեմ նրա մղած պայքարի հանդեպ Անգլիայի աշխատավորության տածած ջերմ համակրանքն արտահայտվեց նաև այն բանում, որ շատ անգլիացիներ մեկնում էին Իսպանիա որպես կամավորներ, որպեսզի զենքը ձեռքներին պայքարեին իսպանական խռովարարների և ինտերվենտների դեմ։ Ինտերնացիոնալ բրիգադի բրիտանական գումարտակի ստեղծման նախաձեռնությունը հանդես բերեց կոմկուսը։ Իսպանական հանրապետության կողմում կռվում էին ընդհանուր թվով 2000 անգլիացիներ։

Ինչ վերաբերում է լեյբորիստական կուսակցությանը, ապա նա երկար ժամանակ հրաժարվում էր Իսպանական հանրապետության օգնության լայն կամպանիա ծավալել։ Նրա պաշտոնական քաղաքականությունը դարձավ «չեզոքության» կառավարական քաղաքականության պաշտպանությունը։ Ձայների մեծամասնությամբ այդ քաղաքականությանը հավանություն տված լեյբորիստական կուսակցության կոնֆերանսը, որը կայացավ 1936 թ. հոկտեմբերին՝ այդ քաղաքականությունից զայրացած կուսակցության շարքային անդամների տրամադրությունների ճնշման տակ, ստիպված էր այնուամենայնիվ ընդունել հայտարարություն, որը պահանջում էր հետաքննել ֆաշիստական տերությունների կողմից «չմիջամտելու» խախտումները, իսկ եթե փաստերը հաստատվեն, անհապաղ միջոցառումներ ձեռնարկել իսպանական կառավարության զենք գնելու իրավունքները վերականգնելու համար (հետագայում բանվորական աջ պարագլուխները ստիպված էին ձևականորեն հրաժարվել «չմիջամտելու» քաղաքականությունից)։

Լեյբորիստական ղեկավարությունը պաշտպանելով «չմիջամտելու» կառավարական քաղաքականությունը, այդ հարցում իրեն մասսայական պաշտպանություն ապահովելու համար օգտագործում էր Անգլիայում տարածում գտած պացիֆիստական տրամադրությունները. բանվորական աջ պարագլուխները փորձում էին «չմիջամտելու» պաշտպանությունն արդարացնել նրանով, թե իբր մի ուրիշ դիրքորոշում՝ կնշանակեր Անգլիայի ներգրավում պատերազմի մեջ։ Թույլ տալով, որ իսպանական հարցում իրեն կառավարական քաղաքականության ազդեցության ոլորտը ներգրավեն, լեյբորիստական օպոզիցիան ամրապնդեց «ազգային» կառավարության դրությունը։ Լեյբորիստական պարագլուխները ձախողեցին իսպանական հանրապետականներին պաշտպանե-

լու բանվոր դասակարգի գործողությունների միջազգային միասնությունը, վճռական ազդեցություն գործելով Սոցիալիստական ինտերնացիոնալի և Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի (Ամստերդամի ինտերնացիոնալ) դիրքի վրա, որտեղ նրանք ղեկավար դեր էին խաղում։ Միջազգային ռեֆորմիստական այդ կազմակերպությունները բացասականորեն վերաբերվեցին Կոմինտերնի նախաձեռնությանը, որն այդ ուղղությամբ դրսևորվեց 30-ական թվականների երկրորդ կեսին։

Լեյբորիստական կուսակցության և տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսի ղեկավարությունը չօգտագործեց այն իրադրությունը, որն առաջացավ Հիտլերի կողմից Ավստրիան զավթելու ժամանակաշրջանում ցայտուն կերպով արտահայտված անգլիական կառավարության՝ ագրեսորի «խաղաղեցման» քաղաքականության և Իդենի հրաժարականի (1938 թ. մարտ) կապակցությամբ, որպեսզի պարտության մատնի «ազգային» կառավարությանը՝ բանվորների ելույթներ կազմակերպելով։ Ռեակցիոն ամբողջ կաբինետի հրաժարականի լոզունգը, որն առաջադրեց կոմկուսը, չէր կարող կենսագործվել առանց նմանօրինակ ելույթների։

Մյունխենի համաձայնագրի ստորագրման նախօրյակին (1938 թ.) կայացած տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսի համագումարը թեև առաջադրեց ՍՍՀՄ-ի և Ֆրանսիայի հետ Մեծ Բրիտանիայի դաշինքի լոզունգ և պահանջեց պառլամենտի անհապաղ գումարում, բայց դրանք չամրապնդեց ակտիվ պայքարով՝ այդ պահանջների կատարումն ապահովելու նպատակով։

Այդ տագնապալի օրերին կոմկուսը մերկացնում էր Չեմբեռլենի քաղաքականությունը, որը գործարքի մեջ էր մտել Հիտլերի հետ։ Պաշտպանելով պառլամենտ գումարելու լեյբորիստների պահանջները, կոմունիստներն առաջարկում էին նախապես գումարել բանվորական կազմակերպությունների կոնֆերանս՝ դրությունը քննարկելու և համաձայնեցված որոշումներ ընդունելու նպատակով։ Համանման պահանջ առաջադրեցին նաև ձախ լեյբորիստները, որոնք նշեցին մի շարք կոնկրետ միջոցառումներ, որպեսզի կառավարությանն ստիպեն հրաժարվելու Հիտլերի հետ գործարքից։ Բայց բանվորական աջ առաջնորդները, որոնք չէին ցանկանում դեկլարացիաներից այն կողմ անցնել, մերժեցին այդ առաջարկությունները։

Փաստորեն լեյբորիստական պարագլուխները հավանություն տվեցին Չեմբեռլենի մասնակցությանը Չեխոսլովակիայի անդամահատմանը. 1938 թ. սեպտեմբերի 28-ին, Մյունխենի նախօրյակին, էտլին համայնքների պալատում արտասանած ճառում ողջունեց «հետագա քննարկումների հնարավորությունը, որոնք կարող են կանխել պատերազմը»։ Միայն մեկ դեպուտատ՝ Ու. Գալլախերը, որը ներկայացնում էր կոմկուսին, ճիշտ գնահատական տվեց նախապատրաստվող գործարքին՝ գոչելով. «խայտառակությո՜ւն», «Դա պատերա՜զմ է»։ Գնահատելով Մյունխենյան համաձայնագիրը, կոմկուսն իրավացիորեն նշում էր, որ այն չկանխեց պատերազմը, այլ մոտեցրեց։ Լեյբորիստական պարագլուխները խոսքով դատապարտում էին Մյունխենյան համաձայնագիրը, բայց միաժամանակ հրաժարվեցին նույնիսկ անվստահության քվե առաջադրել կառավարությանը, որը հավանություն էր տվել մյունխենյան գործարքին, ընդգծելով, որ Մյունխենի շնորհիվ իբր հաջողվեց խուսափել պատերազմից։

Արդեն 1939 թ. գարնանը, երբ Հիտլերը զավթեց ամբողջ Չեխոսլովակիան, անգլիական բանվորները կարող էին համոզվել լեյբորիստական պարագլուխների հավաստիացումների թեթևամտությանը։ Անգլիական բանվոր դասակարգը բողոքում էր ագրեսիայի այդ նոր ակտի դեմ, իսկ հետո, երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդած ամիսներին, ակտիվորեն հանդես եկավ Անգլիայի և ՍՍՀՄ-ի միջև պակտի կնքման օգտին։ Երբ 1939 թ. օգոստոսի 24-ին, Չեմբեռլենը, որը ձախողեց այդ պակտի կնքումը, համայնքների պալատում տեղի ունեցած վիճաբանություններում հանդգնեց հայտարարել, որ չհարձակման վերաբերյալ սովետա-գերմանական պակտի լուրը «չափազանց տհաճ բնույթի սյուրպրիզ է», Հարրի Պոլիտը նրան հակահարված տվեց «Դեյլի Ուորկերի» էջերում։ Նա գրում էր. «Իհարկե, դա նրա համար սյուրպրիզ է, որովհետև Չեմբեռլենը ենթադրում էր, որ Սովետական Միությունը գոյություն ունի հատկապես այն բանի համար, որպեսզի կրակից շագանակներ հանի նրա համար։ Այդ քաղաքականությունն էլ լիակատար կերպով սնանկացավ»։

Կոմկուսի պայքարը բանվոր դասակարգի միասնության և Ժողովրդական ճակատի համար

Լեյբորիստների կուսակցությունը օպոզիցիայի անցնելուց հետո Մեծ Բրիտանիայի կոմկուսը, հաղթահարելով աղանդավորական սխալները, ակտիվացրեց բանվոր դասակարգի միասնության համար մղվող պայքարը։ Դեռ 1932 թ. նա հանդես եկավ Անգլիայի բոլոր բանվորական կազմակերպությունների միասնական ճակատ ստեղծելու առաջարկությամբ, իսկ 1933 թ. մարտին դիմեց լեյբորիստական կուսակցությանը, տրեդ-յունիոնների բրիտանական կոնգրեսի Գլխավոր խորհրդին, կոոպերատիվ կուսակցությանը և Անկախ բանվորական կուսակցությանը՝ միասնական գործողությունների կոչ անելով «ազգային» կառավարության դեմ մղվող պայքարում, ի պաշտպանություն անգլիական բանվոր դասակարգի շահերի և Գերմանիայի ու Ավստրիայի բանվորների հակաֆաշիստական պայքարի։ Այդ կոչին արձագանքեց միայն Անկախ բանվորական կուսակցությունը, որի հետ Մեծ Բրիտանիայի կոմկուսը 1933 թ. մարտի 17-ին համաձայնագիր կնքեց գործողությունների միասնության մասին, որը նպաստեց հակաֆաշիստական մասսայական ցույցի անցկացմանը 1934 թ. սեպտեմբերի 9-ին և գործազուրկների պայքարի ակտիվացմանը։ 1934 թ. փետրվարին Մեծ Բրիտանիայի կոմկուսը և Անկախ բանվորական կուսակցությունը վերստին լեյբորիստական կուսակցության գործկոմին առաջարկեցին ստեղծել միասնական պրոլետարական ճակատ, բայց մերժում ստացան. ավելին, լեյբորիստների ղեկավարությունը Մեծ Բրիտանիայի կոմկուսի հետ համագործակցությունն անհամատեղելի հայտարարեց լեյբորիստական կուսակցության անդամության հետ։ Մեծ Բրիտանիայի կոմկուսի XIII համագումարի (1935 թ. փետրվար) առաջադրած գործողությունների միասնության կոչին նույնպես լեյբորիստական կուսակցության պարագլուխները պատասխանեցին միայն հակադեմոկրատական սահմանափակումների ուժեղացմամբ։ 1935 թ. մարտին ուղարկվեցին «սև շրջաբերականներ», որոնք կոմունիստների նկատմամբ արհմիություններում խտրականություն էին հրահանգավորում։

Չնայած դրան Մեծ Բրիտանիայի կոմկուսը շարունակում էր պայքարը բանվոր դասակարգի միասնության համար։ Կոմկուսը այն դիտում էր որպես Ժողովրդական ճակատի ստեղծման նախադրյալ։ 1935—1937 թթ. Ժողովրդական ճակատի լոզունգն առաջադրվում էր միայն ամենաընդհանուր ձևով։ Անկախ բանվորական կուսակցությունը, ինչպես և ձախ լեյբորիստները, որոնց հետ 1935—1936 թթ. բանակցություններ էին վարվում գործողությունների միասնության մասին, դեմ էին Ժողովրդական ճակատին (չխոսելով այլևս աջ լեյբորիստական պարագլուխների մասին)։

1935 թ. նոյեմբերի ընդհանուր ընտրություններում Մեծ Բրիտանիայի կոմկուսը քայլ կատարեց դեպի միասնությունը, հօգուտ լեյբորիստների, իր թեկնածուներին հանելով բոլոր օկրուգներում, բացի երկուսից (դրանցից մեկում պառլամենտ ընտրվեց Ու. Գալլախերը), բայց այդ քայլը միակողմանի եղավ, Մեծ Բրիտանիայի կոմկուսը դարձյալ հարց բարձրացրեց իրեն լեյբորիստական կուսակցության շարքերն ընդունելու մասին։ Լեյբորիստական կուսակցության 1936 թ. կոնֆերանսում հօգուտ Մեծ Բրիտանիայի կոմկուսի ընդունման տրվեց 592 հազ. ձայն (դեմ 1728 հազ.)։ Հօգուտ Մեծ Բրիտանիայի կոմկուսի հետ գործողությունների միասնության տրամադրությունների աճի ցուցանիշ եղավ միասնության կամպանիան, որը ծավալեցին կոմկուսը, Սոցիալիստական լիգան և Անկախ բանվորական կուսակցությունը։ Կամպանիայի նպատակն էր ապահովել բանվորական շարժման գործողությունների միասնությունը, իշխանության վերադարձնել լեյբորիստական կառավարությանը, ընդունել մասսայական պայքարի մարտական ծրագիր հանուն անմիջական կարիքների, հանուն խաղաղության և Անգլիայի, Ֆրանսիայի ու ՍՍՀՄ-ի միջև պակտի, ընդդեմ ռեակցիայի ու ֆաշիզմի, հանուն վերջնական նպատակին՝ սոցիալիզմին հասնելու հետագա առաջընթացի։ Կամպանիայի ընթացքում, որը ջերմ արձագանք գտավ բանվորական շարժման մեջ, մասսայական շատ միտինգներ անցկացվեցին։ Բայց արդեն 1937 թ. մարտին լեյբորիստական կուսակցության գործկոմը Սոցիալիստական լիգայի անդամ լինելն անհամատեղելի հայտարարեց լեյբորիստական կուսակցության շարքերում մնալու հետ, որը հասցրեց Սոցիալիստական լիգայի ինքնացրմանը, որի անդամները միայն այդպես կարող էին հնարավորություն ունենալ մնալու լեյբորիստական կուսակցության շարքերում։ Իսկ հունիսի սկզբներից արգելվեցին միտինգներում ձախ լեյբորիստների համատեղ ելույթները կոմունիստների և Անկախ բանվորական կուսակցության անդամների հետ։ Միասնության կամպանիան ձախողվեց։

1938 թ. Ս. Կրիպսի գլխավորությամբ սկսվեցին ձախ լեյբորիստների ակտիվ ելույթները հօգուտ երկրում եղած բոլոր օպոզիցիոն ուժերի միավորման։

Այդ պայմաններում որոշակի դրական ներդրում կատարեց անգլիական կոոպերատիվ շարժումը։ Այն զարգանում էր սկսած XIX դարի առաջին կեսից և լայն թափ ստացավ քննարկվող ժամանակաշրջանում։ 30-ական թվականների սկզբին Մեծ Բրիտանիայում գոյություն ունեին 1188 տարբեր սպառողական կոոպերատիվ ընկերություններ՝ 6.590.020 անդամների ընդհանուր թվով։

Կոոպերատիվ շարժման քաղաքական արտահայտությունը Կոոպերատիվ կուսակցությունն էր, որն առաջացավ 1917 թ.։ Նրա ստեղծման առիթ ծառայեց կոոպերատիվների դժգոհությունը պատերազմական ժամանակի օրենսդրությունից, որը ոտնահարում էր կոոպերատիվ բիզնեսի շահերը։ Կոոպերատիվ շարժման մասնակիցների քաղաքական ակտիվությունը մեծ չէր։ 1935 թ. դրա գրեթե 7 մլն մասնակիցների 3 տոկոսից պակաս մասն էր գտնվում գիլդիաներում, խմբակներում, քաղաքական խորհուրդներում։

Կոոպերատիվ կուսակցության ներկայացուցիչների մասնակցությունն առաջին և երկրորդ լեյբորիստական կառավարություններին ուժեղացրեց նրա կապերը լեյբորիստական կուսակցության հետ։ Կոոպերատիվ կուսակցությունը պառլամենտում իր թեկնածուներին (դեռ 1918 թվականից կուսակցությունն իր ներկայացուցիչներն ուներ այնտեղ) պատվիրեց պաշտպանել լեյբորիստական կուսակցությանը։ Դա լեյբորիստական կուսակցությանն օգնում էր կոոպերատիվների անդամների մասսաներին պահելու ռեֆորմիստական, օպորտունիստական քաղաքականության ազդեցության տակ։

1929—1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո և նրա ազդեցությամբ կոոպերատիվների շարքային անդամների ճնշման տակ վերանայված Կոոպերատիվ կուսակցության ծրագիրը պահանջում էր անգլիական բանկի ազգայնացում, հասարակական վերահսկողության սահմանում բանկային ամբողջ սիստեմի, վերահսկողության սահմանում բոլոր մոնոպոլիաների նկատմամբ և դրանց հանձնումը հասարակական սեփականությանը։

Ծրագրում իր արտահայտությունը գտած հակամոնոպոլիստական ուղղվածությունն, անշուշտ, դրական երևույթ էր, թեև սպառողական կոոպերացիան կապիտալիստական Անգլիայում իր էությամբ ոչ այլ ինչ էր, քան կապիտալիստական ձեռնարկություն։ Դրա հետ մեկտեղ հարկավոր է նշել, որ կոոպերատիվ շարժումը անմասնակից չէր մնում բանվորների և ձեռնարկատերերի միջև ծագած խոշոր կոնֆլիկտների պահին։

1926 թ. ընդհանուր գործադուլի և 1932 թ. բամբակի գործվածքեղենի արդյունաբերության մեջ առաջացած կոնֆլիկտի ժամանակաշրջանում կոոպերատիվ շարժման ապարատն ու կազմակերպություններն օգտագործվեցին պայքարի մեջ մտնող բանվորներին ամենաանհրաժեշտ կենսական պարագաներով ապահովելու համար։ 30-ական թվականների երկրորդ կեսին էլ կոոպերատիվ շարժումն անտարբեր չէր մնում քաղաքական խոշոր հարցերի նկատմամբ։ Նա, օրինակ, ակտիվ մասնակցություն ունեցավ իսպանական հանրապետականներին օգնություն կազմակերպելու գործում։ Կոոպերատիվ կուսակցության օրգան «Ռեյնոլդ Նյուս» թերթը մարտի 20-ին արտահայտվեց խաղաղության միացյալ ալյանս ստեղծելու օգտին։ Այդ ալյանսի ծրագիրը մոտ էր ժողովրդական կառավարության այն ծրագրին, որն առաջադրեց Մեծ Բրիտանիայի կոմկուսը։ 1938 թ. ապրիլին Կոոպերատիվ կուսակցության կոնֆերանսում խաղաղության ալյանսի մասին արված առաջարկությունը պաշտպանվեց 2343 հազ. ձայնով, ընդդեմ 1947 հազ. ձայնի։ Խաղաղության ալյանսի ստեղծման օգտին հանդես եկավ լիբերալների կուսակցության օրգան «Նյուս Քրոնիկլ» թերթը։ Խաղաղության ալյանսի վերաբերյալ կոոպերատորների լոզունգը պաշտպանեց Մեծ Բրիտանիայի կոմկուսը, որը դրա մեջ դիտում էր այն ձևը, որտեղ կարող էր մարմնավորվել Ժողովրդական ճակատի ծրագիրը։ Բախվելով Խաղաղության ալյանսի օգտին ծավալված շարժմանը (դրա մասին առաջարկությունը պաշտպանություն գտավ բանվորական շատ կազմակերպությունների կողմից), լեյբորիստական ղեկավարությունը, որը մինչև վերջերը (1938 թ. մարտին) հավատացնում էր, թե Ժողովրդական ճակատը կհասցրնի պատերազմի ու արյունահեղության, և ակնարկներ անում, որ Ժողովրդական ճակատի գաղափարը «ներշնչվել է Մոսկվայի կողմից», դրա դեմ դիմեց «ձախ» փաստարկումների։ Նա սկսեց հավատացնել, թե Ժողովրդական ճակատը «սոցիալիզմի դավաճանություն է», «համագործակցություն կապիտալիստների հետ», «դաշինք բանվոր դասակարգի վաղեմի թշնամիների՝ լիբերալների հետ»։ Իսկ գործնականում, բանվորական աջ պարագլուխների պատկերացմամբ, Ժողովրդական ճակատը սոսկ նշանակում էր զուտ ընտրական բլոկ։ Որպես այդպիսին նրանք այն մերժում էին։ Լեյբորիստական պարագլուխների ճնշման տակ 17-րդ կոոպերատիվ կոնգրեսը 1938 թ. հունիսին մերժեց Խաղաղության ալյանսի գաղափարը։

Չնայած դրան, Մեծ Բրիտանիայի կոմկուսը շարունակեց պայքարը դեմոկրատական ուժերի միավորման համար։ Կուսակցության XV համագումարը

(1938 թ. սեպտեմբեր) Ժողովրդական ճակատի հարցը դրեց քաղաքական պայքարի կենտրոնում։ Հաշվի առնելով իրադրության սրումը երկրի ներսում և պատերազմի վտանգի աճը, Հ. Պոլիտը համագումարում ունեցած իր ելույթում ընդգծեց բուրժուական դեմոկրատիայի պաշտպանության անհրաժեշտությունը, որն աշխատավորության պայքարի ավելի բարենպաստ պայմաններ էր ապահովում կապիտալիզմի պայմաններում։

Հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիայի կոմկուսը դեպի իր XV համագումարը եկավ՝ որոշակի չափով ուժեղացնելով իր դիրքերը։ Մինչև XIII համագումարը (1935 թ.) նրա շարքերում հաշվվում էր 6500 անդամ, մինչև XIV համագումարը (1937 թ.)՝ 12250, մինչև XV համագումարը՝ 15750 (առ 1939 թ. փետրվարի 23-ը Մեծ Բրիտանիայի կոմկուսում կար մոտ 18 հազ. անդամ)։

Մեծ Բրիտանիայի կոմկուսի քաղաքականությունը որոշակի ազդեցություն ունեցավ ձախ լեյբորիստների վրա, որոնք 1939 թ. սկզբին պաշտպանում էին Ժողովրդական ճակատի գաղափարը։ Այն ժամանակ նրանց պարագլուխ Ս. Կրիպսը այդ հարցի վերաբերյալ հուշագիր ուղարկեց լեյբորիստական կուսակցության ղեկավարությանը։ Բայց արդեն հունվարի 25-ին լեյբորիստական կուսակցության գործկոմը Կրիպսին վտարեց կուսակցության շարքերից։

Ցանկանալով աշխատավորությանը վանել Ժողովրդական ճակատի գաղափարից, լեյբորիստական պարագլուխները կանգ չէին առնում նույնիսկ Ժողովրդական ճակատը որպես «ֆաշիզմի նուրբ ձև» ներկայացնելու առջև, իսկ 1939 թ. մայիսին ջախջախելով կուսակցության մեջ եղած ձախ ուժերին, հասան դրա դատապարտմանը լեյբորիստական կուսակցության կոնֆերանսում։

Ամբողջ Չեխոսլովակիան Հիտլերի կողմից գավթվելուց հետո Մեծ Բրիտանիայի կոմկուսի և Ժողովրդական ճակատի՝ լեյբորիստական կուսակցության մեջ եղած կողմնակիցների, որոնք պահանջում էին «ազգային» կառավարության հրաժարականը, գործունեությունը զգալիորեն ակտիվացավ։ Մարտի 29-ին Հ. Պոլիտը Մեծ Բրիտանիայի կոմկուսի Կենտկոմի անունից նամակով դիմեց էտլիին, Սինկլերին (լիբերալների պարագլուխ) և Չերչիլին, կոչ անելով՝ դիմել ժողովրդի օգնությանը, ապրիլի 3-ին համայնքների պալատում անվստահություն հայտնել Չեմբեռլենին, պահանջել նրա անհապաղ հրաժարականը, հայտարարություն անել այնպիսի նոր կառավարություն կազմելու պատրաստակամության մասին, որտեղ ներկայացված լինեն երկրի բանվորական ու դեմոկրատական շարժման բոլոր ջոկատները։

Օգոստոսի 29-ին Ռ. Գալլախերը համայնքների պալատում առաջարկություն մտցրեց դիմել բոլոր երկրների, այդ թվում նաև Սովետական Միության, պառլամենտներին՝ կոչ անելով միավորել ջանքերը պատերազմը կանխելու նպատակով։ Այդ առաջարկությունը մտցվեց պալատի՝ սեպտեմբերի 5-ի օրակարգի մեջ։ Սակայն այդ ժամանակ արդեն վառվում էր երկրորդ համաշխարհային պատերազմի բոցը։

Անգլիայի 1934—1939 թթ. պատմության պատմագրությունը

Անգլիական բուրժուական պատմագրությունը ջանում էր խուսափել Անգլիայի նախապատերազմյան ժամանակաշրջանի ներքին պատմության առավել սուր պրոբլեմների վերլուծությունից։ Նա չի բացահայտում աշխատավորության զգալի մասի ծանր դրության պատճառները, նվազեցնում է գործազուրկների տառապանքները, չի տալիս Մեծ Բրիտանիայի կոմկուսի գործունեության օբյեկտիվ բնութագիրը, ավելին, փորձում է նույնացնել կոմկուսի և ֆաշիստների քաղաքականությունը։ Բուր-

ժուական պատմագրությանը բնորոշ այդ արատները հատուկ են Մոուատի «Միջպատերազմյան Բրիտանիան» գրքին[26]։

Լեյբորիստական աջ պատմագրությունը նույնպես չի փորձում պարզել այն իսկական պատճառները, որոնք անգլիական բանվորական շարժմանը խանգարեցին հասնելու Անգլիայի առջև այն տարիներին կանգնած խնդիրների իրագործմանը։ Այսպես, Ֆ. Ուիլյամսը[27], անդրադառնալով նախապատերազմյան ժամանակաշրջանում անգլիական բանվորական շարժման ողբերգությանը, դրա պատճառները տեսնում է բանվոր դասակարգի թուլության մեջ, որի պատճառով հնարավոր չեղավ պահպանողականներին ստիպել փոխելու Անգլիայի համար վտանգավոր կուրսը։ Այդ նույն պատճառով էլ հեղինակը փորձում է լեյբորիստական ղեկավարությունից ևս վերցնել պատասխանատվությունը բացթողումների համար։

Լեյբորիստական կուսակցության 3-հատորանոց պատմության մեջ պընդվում է, որ այդ կուսակցությունն իր առջև խնդիր էր դնում փոխել կառավարությունը և կանխել պատերազմը, բայց նմանապես ոչ մի լուրջ փորձ չի կատարվում բացատրելու, թե ինչո՞ւ այդ խնդիրը չիրագործվեց[28]։ Էտլիի կենսագրության մեջ (հատոր 3) այն փաստը, որ նա եղել է միասնական և Ժողովրդական ճակատի հակառակորդ, բացատրվում է ոչ թե «կուսակցության ձախ թևի նկատմամբ ունեցած կանխակալությամբ», այլ լեյբորիստական կուսակցության «անկախությունը» պահպանելու ձգտմամբ։

Լեյբորիստական կուսակցության իր պատմության մեջ Էմմանուիլ Շինուելը գովում է կուսակցության ձախ թևի ջախջախումը աջ ղեկավարության կողմից։ Նա գրում է. «Ձախերի դեմ տարած հաղթանակը հասցրեց լեյբորիստական կուսակցության միասնությանը՝ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, նրա մեջ ստեղծելով այլ իրադրություն 1914 թ. հուլիսի համեմատությամբ», երբ տեղ էին գտել «կասկածներ ու անվճռականություն»[29]։

Լեյբորիստական աջ պատմագրությունը, հետևաբար, ջանում է արդարացնել բանվորական աջ պարագլուխների քաղաքականությունը և նախապատերազմյան ժամանակաշրջանի պատմության իսկական վերլուծության փոխարեն տալիս է սոսկ լեյբորիստական կուսակցության պառլամենտական գործունեության շարադրանքը, լիովին անտեսելով, ինչպես և բուրժուական պատմագրությունը, աշխատավոր զանգվածների պայքարը և թերագնահատելով դրա նշանակությունը։

Նախապատերազմյան տարիների անգլիական բանվորական շարժման «ողբերգության» պատճառներն այլ կերպ է քննարկում լեյբորիստական ձախ պատմագրությունը։ Այսպես, Ռ. Միլիբենդը, ի տարբերություն Ֆ. Ուիլյամսի, փորձում է լրջորեն հասկանալ այն պատճառները, որոնք անգլիական բանվորական շարժմանը խանգարեցին իրագործելու նրա առջև դրված խնդիրները։ «Բանվորական շարժման ողբերգությունը և գործազուրկների ողբերգությունը, — գրում է Միլիբենդը՝ անդրադառնալով 1934 թ. իրադարձություններին,— կայանում էր նրանում, որ լեյբորիստական պարագլուխները գտնում էին, որ իրենք այնքան էլ շատ բան չեն կարող անել, որպեսզի կառավարությանը ստի-

[26] Տե՛ս Mowat Ch. L. Britain between the Wars. 1918—1940. L., 1955։

[27] Տե՛ս Williams F. Fity years March. The Rise of the Labour Party. L., 1960։

[28] Տե՛ս „The British Labour Party. Its History, Growth, Policy and Leaders", Vol. 1. L., 1948։

[29] Shinwell E. The Labour Story. Being a History of the Labour Party. L., 1963.

պեն փոխել իր իրականացրած կուրսը։ Այդ հայացքը հետագայում դարձավ կարևոր գործոն, որը ջլատեց բանվորական շարժումը, երբ վճռվում էին զգալիորեն ավելի կարևոր հարցեր, որը հասցրեց էլ ավելի ահավոր հետևանքների»[30]։

Հեղինակը լեյբորիստական ղեկավարությանը քննադատում է գործունեության միայն պառլամենտական ձևերը պաշտպանելու համար, որը բանվոր դասակարգին դատապարտեց պարտության և չկարողացավ փոխել իրադարձությունների ընթացքը, այսինքն՝ բանվորական շարժման թուլության գլխավոր պատասխանատվությունը դրվում է լեյբորիստական կուսակցության ղեկավարության վրա։

Միլիբենդը Մեծ Բրիտանիայի կոմկուսը դիտում է որպես երկրի բանվորական շարժման անբաժանելի մասը և նշում է, որ նրան հատուկ էր ժամանակին համապատասխանող ոգին։ «Կոմկուսը,— գրում է Միլիբենդը,— գտնվում էր ֆաշիզմի դեմ մղվող պայքարի ավանգարդում»։

Լեյբորիստական ձախ պատմագրության շարքին կարող են դասվել Կոուլի մի քանի աշխատությունները, որոնք լուսաբանում են նախապատերազմյան տարիները։ Նա քննադատում է լեյբորիստական աջ ղեկավարության հակակոմունիստական դիրքը։ Կոմունիստները, գտնում էր Կոուլը, «անկեղծորեն փորձում են բանվոր դասակարգի ուժեղ շարժում ստեղծել դեմոկրատիայի անմիջական պաշտպանության համար»[31]։ Երկրորդ համաշխարհային պատերազմի կանխման վճռական պայմանը հեղինակը համարում էր հակաֆաշիստական պետությունների համագործակցությունը ագրեսիայի դեմ մղվող պայքարում։

Կոուլի քաղաքական հայացքները նախապատերազմյան տարիներին իրենց դրոշմը դրեցին այդ տարիների իրադարձությունների լուսաբանման վրա այն աշխատություններում, որոնք նա գրեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, չնայած նրան, որ այդ պահին հեղինակը վերստին անցավ լեյբորիստական աջ դիրքերը։ Այսպես, «Լեյբորիստական կուսակցության պատմությունը՝ սկսած 1914 թվականից» (1948 թ.) աշխատության մեջ Կոուլն ափսոսանք է հայտնում, որ 30-ական թվականների երկրորդ կեսին միասնություն ձեռք չբերվեց։ «Ֆաշիզմի դեմ ընդհանուր պայքարի նպատակով խստիվ սահմանափակված միասնությունը,— գրում է նա,— կարող էր էականորեն փոխել իրադարձությունների ընթացքը»[32]։

Անգլիայի նախապատերազմյան պատմության մշակման գործում լուրջ ավանդ մուծեցին անգլիական կոմունիստները։ Ա. Հատտը[33] ցույց տվեց, թե ինչպես էր 30-ական թվականների սկզբին կոմկուսը ակտիվորեն պայքարում բանվորական զանգվածներից իր մեկուսացման վերացման համար։ Հեղինակը զգալի ուշադրություն է դարձրել ֆաշիզմի դեմ, բանվոր դասակարգի միասնության, նրա տնտեսական դրության բարելավման համար կոմկուսի մղած պայքարին։ Անդրադառնալով լեյբորիստական պարագլուխների դիրքին, Ա. Հատտը ցույց է տալիս նրանց թշնամությունը բանվոր դասակարգի միասնության հանդեպ, անընդունակությունը ապահովելու բանվորական շարժման մարտական ղեկավարությունը, որը «ազգային» կառավարությանը թույլ տրվեց անցկացնել ռեակցիոն ներքին և կործանարար արտաքին քաղաքականություն։

Իսպանական հանրապետականների կողմում Ինտերնացիոնալ բրիգադի բրիտանական գումարտակի կազմում ֆաշիզմի դեմ կռվող, անգլիական ժողովրդի լավագույն զավակների հերոսական պայքարը լուսաբանել է Մեծ Բրիտանիայի կոմկուսի գործիչներից մեկը՝ Ուիլյամ Ռեստը[34]։ Նա ինքն էլ 1949 թ. լույս ընծայեց մի գիրք, որտեղ լուսաբանեց այն համառ պայքարը, որ մղում էր «Դեյլի Ուորկեր» թերթը, պաշտպանելով կոմկուսի դիրքը և անգլիական բանվորների շահերը[35]։

1938 թ. Մյունխենյան գործարքի առնչությամբ Անգլիայում տեղի ունեցած ներքաղաքական պայքարը, Մեծ Բրիտանիայի կոմկուսի փառավոր դերը ֆաշիստական ագրեսիայի և հիտլերիզմին խրախուսելու քաղաքականության դեմ մղված պայքարում, ինչպես նաև այդ իրադարձությունների արտաքին-քաղաքական ասպեկտները հանգամանորեն շարադրված է անգլիական հայտնի պատմաբան-կոմունիստ Էնդրյու Ռոտշտեյնի գրքում[36]։

20—30-ական թվականներին անգլիական գործազուրկների մղած պայքարն իր մանրամասն լուսաբանությունն է գտել գործազուրկների ազգային շարժման ղեկավար Ուոլ Հեննինգտոնի աշխատություններում[37]։

Սովետական պատմագրության մեջ նախապատերազմյան տարիների անգլիական բանվորական շարժումը լուսաբանվում է Պ. Վ. Գուրովիչի և Ն. Ֆ. Մոչուլսկու մենագրություններում[38]։

---

[30] **Milliband R.**, Parliamentary Socializm. L., 1961, p. 216.

[31] **Cole G. D. H.** The People's Front. L., 1937, p. 42.

[32] **Cole G. D. H.** A History of the Labour Party from 1914. L., 1948.

[33] **Hutt A.** The Post-War History of the British Working Class. L., 1937, p. 241.

[34] *Տե՛ս* **Rust W.** Britons in Spain. L., 1939։

[35] *Տե՛ս* **Rust W.** The Story of the Daily Worker, L., 1949։

[36] *Տե՛ս* **Эндрю Ротштейн**, Мюнхенский сговор. М., 1959:

[37] *Տե՛ս* **Hannington.** Val. Unemoloyed struggles. 1919—1936. L., 1936; „Ten lean years". L., 1940։

[38] *Տե՛ս* **П. В. Гурович**, Английское рабочее движение накануне второй мировой войны. М., 1967; **Н. Ф. Мочульский.** Рабочее движение в Англии накануне второй мировой войны (1934—1939 гг.). М., 1968:

ԳԼՈՒԽ 7

ՖՐԱՆՍԻԱՆ
1918—1939 ԹԹ.

ՖՐԱՆՍԻԱՆ
1918—1923 ԹԹ.

Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական զարգացումը առաջին համաշխարհային պատերազմից հետո

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ֆրանսիայում տեղի ունեցան խոշոր սոցիալ-տնտեսական փոփոխություններ։ Դրանք վկայում էին ֆրանսիական իմպերիալիզմի բնույթի փոփոխման մասին և կապված էին կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի առաջին փուլի զարգացման հետ։

Պատերազմը վիթխարի դժբախտություններ պատճառեց ֆրանսիական ժողովրդին. ավելի քան 2 մլն սպանվածների և հաշմվածների կորուստն արյունաքամ արեց ազգին, առավել հարուստ տաս արդյունաբերական դեպարտամենտներ ավերվեցին ու քայքայվեցին։ Գաղութների կողոպուտի հաշվին հրսկայական «խնայողություններ» կուտակած երկիրը, Եվրոպայի այդ վաշխառուն իմպերիալիստական պատերազմի հետևանքով, չնայած հաղթանակին, վերածվեց ամերիկյան ու անգլիական կապիտալիստների պարտապանի։ Ֆրանսիայի պետական պարտքը կազմում էր ազգային հարստության 50 տոկոսը։ Արդյունաբերական արտադրանքի ծավալն ընկավ մինչև նախապատերազմյան մակարդակի 57 տոկոսը և ընդհանուր առմամբ շարունակում էր նվազել ընդհուպ մինչև 1922 թ.։ Այդ նույն ժամանակ ռազմական արդյունաբերության և նրա հետ կապված ճյուղերի բուռն զարգացման հետևանքով Ֆրանսիայում հանդես եկան ինդուստրիալ նոր շրջաններ (կենտրոնում, հարավ-արևելքում, մասամբ հարավում և արևմուտքում). առաջացան մետալուրգիական, մեքենաշինական, էլեկտրատեխնիկական և այլ ձեռնարկություններ, որոնք հագեցած էին առաջավոր տեխնիկայով։ Տեղի ունեցավ հարստությունների վերաբաշխում հօգուտ ծանր ինդուստրիայի հետ կապված խոշոր ֆինանսական կապիտալի։

Այդ տարիներին տեղի է ունենում արդյունաբերական կապիտալի սերտաճում բանկայինի հետ։ Աճում է արդյունաբերության համակենտրոնացումը։ Կապիտալիստական զարգացման սովորական պատճառների հետ մեկտեղ դրան նպաստեց Էլզասի և Լոթարինգիայի վերադարձնելը, որտեղ արդյունաբերության համակենտրոնացումն ավելի բարձր էր, քան մնացած Ֆրանսիայում, և հատկապես ավերված մարզերի վերականգնումը։ Էլզասի և Լոթարինգիայի ձեռնարկությունների մեծ մասն անցավ մի խումբ մոնոպոլիստների ձեռքը, որոնց գլխավորում էին դը Վանդելների և Շնայդերների կոնցեռները։ Ավերված դեպարտամենտների վերականգնման գործում ակտիվորեն մասնակցեց «Ազգային վարկ» բանկը, որտեղ նույնպես տերությունը էին անում կապիտալի խոշոր մագնատները։ Հետպատերազմյան ժամանակամիջոցում շարունակում էին զարգանալ պետական-մոնոպոլիստական տենդենցները։ Պետությունը մոնոպոլիաների շահերի օգտին բաշխում էր ռեպարացիաները, ավերված մարզերը վերականգնելու և բռնագրավված գերմանական ձեռնարկությունները գնելու նպատակով ստեղծում արդյունաբերողների միավորումներ, վարկավորում գաղութների բնական ռեսուրսների շահագործումը։

Ֆրանսիայի էկոնոմիկայում տեղի ունեցան խոշոր փոփոխություններ. ազգային եկամտի մեջ աճեց արդյունաբերության բաժինը, բնդ որում ավելի ու ավելի կանոր տեղ էր գրավում արտադրության միջոցների արտադրությունը։ Արտահանության մեջ գերակշռում էր ծանր արդյունաբերության ճյուղերի արտադրանքը։ Այդուհանդերձ, չնայած կապիտալների՝ վարկայինից դեպի արտադրողական ոլորտը կատարված զգալի հոսքին, ֆրանսիական իմպերիալիզմը դեռ պահպանում էր վաշխառուական բնույթը։ Պատերազմից հետո կապիտալներն արտահանվում էին գլխավորապես դեպի ֆրանսիական գաղութները, որն ուժեղացնում էր դրանց բնակչության շահագործումը. փոխառությունները մեծ մասամբ տրամադրվում էին դաշնակից եվրոպական պետություններին։

Երկրում կատարված տնտեսական փոփոխությունները լուրջ տեղաշարժերի հասցրին դասակարգերի ներսում։ Ֆրանսիական օլիգարխիայի ընդերքում (200 ընտանիքների) իրենց ազդեցությունն ուժեղացրին արդյունաբերողները։ «Կոմիտե դը Ֆորժ» ձեռնարկատիրական կազմակերպությունը, որի մեջ մտնում էին 250 մետալուրգիական հզոր միավորումների տերեր, վճռական դեր էր խաղում տնտեսության ու քաղաքականության մեջ։ Երկրի ինդուստրացման աճը, արտադրության համակենտրոնացումը հասցրեցին խոշոր ձեռնարկություններում և ծանր արդյունաբերության ճյուղերում աշխատող պրոլետարների տոկոսի մեծացմանը. խոշոր և միջին ձեռնարկություններում 1921 թ. կենտրոնացված էր բոլոր բանվորների կեսից ավելին։ Բանվոր դասակարգի շարքերն անցան քաղաքի ու գյուղի սնանկացած մանրբուրժուական խավերի մեծ թվով ներկայացուցիչներ, նրա մեջ պահպանվեց նաև բանվորական արիստոկրատիան։ Խոր փոփոխություններ տեղի ունեցան գյուղատնտեսության մեջ։ Առաջին համաշխարհային պատերազմը դրեց խրոնիկական ագրարային ճգնաժամի սկիզբը, որն ընդգրկեց մանր և միջին գյուղացիությունը։ Անդրօվկիանոսյան և գաղութներից ներմուծվող էժան գյուղատնտեսական մթերքներն ու ապրանքները շուկայից դուրս էին մղում ֆրանսիական գյուղացիության արտադրանքը։ Մանր գյուղացու համար մեծագույն շարիք էր սակավահողությունը, գյուղացիները քայքայվում էին, բայց 1921 թ. դեռևս կազմում էին բնակչության մեծամասնությունը՝ 53,6 տոկոսը։ Ֆրանսիայում պահպանվել էին նաև քաղաքային մանր բուրժուազիայի և արհեստավորների բազմաթիվ խավերը, մանր ու միջին ռանտիեների տարբեր կատեգորիաները։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Ռուսաստանում և հեղափոխական շարժման վերելքը

1918—1920 ԹԹ. Ֆրանսիայում շեշտակիորեն սրվեց դասակարգային պայքարը, որի պատճառը աշխատավորների ծանր դրությունն էր, նրանց հակապատերազմական տրամադրությունների աճը։ Բանվորական շարժման վերելքի վրա մեծ ազդեցություն ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։ Սովետների Համառուսաստանյան II համագումարի ընդունած հաշտության դեկրետը և կռվող տերություններին ուղղված դիմումը պատերազմը դադարեցնելու վերաբերյալ, ջերմ արձագանք գտան բանվոր դասակարգի առաջավոր խավերի մեջ։ Արդյունաբերական կենտրոններում (Փարիզ, Լուարայի ավազան, Լիոն, Սենտ-Էտիեն և այլն) տեղի էին ունենում մասսայական միտինգներ, ժողովներ։ Դրանց մասնակից-

ներն ընդունում էին բանաձևեր ռուսական հեղափոխության հետ համերաշխության մասին, պահանջում էին հաշտություն կնքել, պայքարել թանկության դեմ, դադարեցնել քաղաքական բռնությունները, խոսքի ու ժողովների ազատություն տալ։ Այդ նույն դեմոկրատական լոզունգներով էլ ծավալվում էին գործադուլները, որոնք մոտ մեկ միլիոն մարդ ընդգրկեցին։ Շարժումը չդադարեց նաև զինադադար կնքելուց հետո (1918 թ. նոյեմբեր), քանի որ երկրում նոր դժվարություններ առաջացան։

Խաղաղ պայմաններին անցնելն ուղեկցվում էր պատերազմի համար աշխատող ձեռնարկությունների մի մասի արտադրության կրճատումով, որը գործազրկության աճ առաջացրեց. գործազուրկների շարքերը լրացնում էին զորացրված զինվորները։ 1919 թ. մարտին գործազուրկների թիվը հասավ մեկ միլիոն մարդու։ Աշխատավորների թշվառությունը խորանում էր թանկության աճով, աշխատավարձի վրա հարկ նշանակելով, ֆրանկի արժեզրկումով։ Մեծ դժգոհություն էր առաջացնում իմպերիալիստական ինտերվենցիան ընդդեմ Սովետական Ռուսաստանի։ Այդ առնչությամբ 1919 թ. ընթացքում շարժումն ընդլայնվեց, ի հայտ եկավ նրա քաղաքական բնույթը։ Աշխատավորները պահանջում էին 8-ժամյա աշխատանքային օրվա մասին օրենք, արհմիությունների իրավունքների ընդլայնում, աշխատավարձի ավելացում, զորքերի դուրս բերում Սովետական Ռուսաստանից։ Առավել վճռականությամբ հանդես էին գալիս երկաթուղայինները, մետալուրգները, կարի և քիմիական արդյունաբերության բանվորները։ Ամբողջությամբ վերցրած 1919 թ. գործադուլային շարժմանը մասնակցեց ավելի քան 1,6 մլն մարդ։

Բանվորական շարժումից վախեցած Կլեմանսոյի կառավարությունը 1919 թ. ապրիլին պառլամենտում շտապ դեկրետ անցկացրեց 8-ժամյա աշխատանքային օրվա մասին։ Շատ ձեռնարկություններում բարձրացվեց աշխատավարձը, արհմիություններն իրավունք ստացան կոլեկտիվ պայմանագրեր կնքել ձեռնարկատերերի հետ։ Բայց այդ զիջումները չթուլացրին գործադուլային պայքարը։ Մայիսմեկյան օրերին տնտեսական պահանջների պաշտպանության համար ծավալված գործադուլները և միջազգային պրոլետարական համերաշխության շարժումն ընդգրկեցին արդյունաբերական գլխավոր կենտրոնները։

Կոմինտերնի կոչով ֆրանսիական պրոլետարիատը միացավ հուլիսի 21-ին նշանակված միջազգային գործադուլին ի պաշտպանություն Ռուսաստանի և Հունգարիայի սովետական հանրապետությունների։ Սակայն սոցիալիստական կուսակցության և ԱԸԿ-ի պարագլուխներն այն չեղյալ հայտարարեցին։

Սովետական Ռուսաստանում ինտերվենցիայի դեմ ծավալված շարժմանն ակտիվորեն մասնակցում էին ֆրանսիական մտավորականության լավագույն ներկայացուցիչները։ Գրողներ Հանրի Բարբյուսը, Ռայմոն Լեֆեբրը, Պոլ Վայան-Կուտյուրիեն կազմակերպեցին Պատերազմի նախկին մասնակիցների հանրապետական ասոցիացիա (ԱՐԱԿ)։ Ասոցիացիայի խնդիրն էր ճշմարտացիորեն լուսաբանել սովետական ժողովրդի կյանքն ու պայքարը, միտինգներ ու ժողովներ կազմակերպել ընդդեմ ինտերվենցիայի։ Սովետական Ռուսաստանի պաշտպանության համար շատ բան արեցին ֆրանսիական հումանիստ գրողներ Ռոմեն Ռոլանն ու Անատոլ Ֆրանսը։ Ինտերվենցիայի դեմ ուղղված շարժումն ընդգրկեց նաև գյուղական բնակչության մի մասին, զորքերին ու նավատորմին։ Սև ծովում գտնվող ֆրանսիական էսկադրայում 1919 թ. ապրիլին ապստամբություն ծագեց։ Կառավարությունը ստիպված էր զորքերն ու նավատորմը ետ կանչել Սովետական Ռուսաստանից։ Նավաստիների ու զինվորների հեղափոխական ելույթները շարունակվեցին նաև հայրենիք վերադառնալուց հետո (Տուլոն, Բրեստ, Ռոշֆոր)։

1920 թ. գործադուլային շարժումը բարձրագույն կետին հասավ ինչպես բանվորների քանակական ընդգրկումով (ավելի քան 2 մլն գործադուլավոր), այնպես էլ գիտակցականության ու կազմակերպվածության աստիճանով։ Պայքարի քաղաքական լարվածությունը երևում էր պահանջների բնույթից. ընդհանուր ներում քաղբանտարկյալներին (հակասովետական ինտերվենցիայի հակառակորդներին), ընդհանուր զինաթափում, հաշտություն Սովետական Ռուսաստանի հետ, հասարակական սպասարկման հիմնարկների (երկաթուղիների, ապահովագրական ընկերությունների և այլն) ազգայնացում, 8-ժամյա աշխատանքային օրվա վերաբերյալ օրենքի կատարում։ Գյուղացիները պահանջում են վարձակալական պայմանագրերի վերանայում, նրանք ստեղծում են իրենց արհեստակցական կազմակերպությունը՝ Գյուղատնտեսության աշխատավորների ազգային ֆեդերացիան։ Մեծ նշանակություն ունեցավ երկաթուղայինների ընդհանուր գործադուլը, որը սկսվեց 1920 թ. փետրվարի 23-ին։ Երկաթուղայինները պահանջում էին աշխատավարձի բարձրացում, 8-ժամյա աշխատանքային օր, երկաթուղիների ազգայնացում, Սովետական Ռուսաստանի դեմ ինտերվենցիայի դադարեցում։ Նրանց միացան մետալուրգները, հանքափորները, նավահանգստային բանվորները։ Սակայն մի քանի շաբաթ անց Երկաթուղայինների ֆեդերացիայի և ԱԸԿ-ի ռեֆորմիստ պարագլուխները սոցիալիստական կուսակցության ղեկավարության օժանդակությամբ հայտարարություն արեցին ընդհանուր գործադուլի դադարեցման մասին, թեև բանվորների հիմնական պահանջները դեռ չէին բավարարվել։ Դա հասցրեց գործադուլի շարունակմանը ֆեդերացիայի նորընտիր ձախ ղեկավարության (Գ. Մոնմուսո, Պ. Սեմար և ուրիշներ) գլխավորությամբ։ Այդ ժամանակ կառավարությունը դիմեց ուժի. Գ. Մոնմուսոյի և մյուս ձախ ղեկավարների դեմ կազմակերպվեց դատավարություն պետական դավադրության մեղադրանքով. երկաթուղիներում տեղի էին ունենում մասսայական արձակումներ։ Այդ բոլի միջոցառումները խիստ թուլացրին արհմիություններին. դրանցում մնացին 57 հազ. անդամներ (կային 320 հազ.)։ 1918—1920 թթ. գործադուլային պայքարի փորձը նպաստեց ռեֆորմիստական պատրանքների մերկացմանը, առաջավոր բանվորներին օգնելով հասկանալու օպորտունիստների հետ կապերը խզելու և նոր տիպի կուսակցություն ստեղծելու անհրաժեշտությունը։

Կոմունիստական կուսակցության ստեղծումը

Ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը կազմավորվեց 1920 թ. գործադուլային շարժման վերելքի պայմաններում՝ սոցիալիստական կուսակցության (ՍՖԻՈ) պառակտման և ներկուսակցական կատաղի պայքարի հետևանքով։ Դեռ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սոցիալիստական կուսակցության մեջ գոյություն ունեին երեք հոսանքներ՝ աջ (սոցիալ-շովինիստներ), ցենտրիստական և ձախ։ Աջերը կանգնած էին իրենց իմպերիալիստական բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության դիրքերում (Մ. Սամբա, Պ. Ռենոդել և ուրիշներ)։ Ցենտրիստները (Ժ. Լոնգե, Ա. Պրեսման, Լ. Ֆրոսսար և ուրիշներ) ձախ ֆրազով քողարկելով իրենց օպորտունիզմը, պնդում էին, թե իբր իրենք պրոլետարիատի դիկտատուրայի և սովետական իշխանության կողմնակիցներ են։ 1918 թ. կուսակցության մեջ ղեկավար պոստերն անցան նրանց ձեռքը, գլխավոր քարտուղար դարձավ Ֆրոսսարը։ Կուսակցության մեջ երրորդ հոսանքը հեղափո-

խականն էր, պատերազմի տարիներին այն ստացավ ինտերնացիոնալիստական կամ ձախ անվանումը (Ֆ. Լորիո, Մ. Կաշեն, Լ. Սոմոնո և ուրիշներ)։ Ձախերը հանդես էին գալիս ընդդեմ իրենց իմպերիալիստական բուրժուազիայի, պայքարում էին ի պաշտպանություն Սովետական Ռուսաստանի։ Բայց նրանք գաղափարապես թույլ էին, հաճախ միանում էին ցենտրիստներին։

1920 թ. փետրվարին սոցիալիստական կուսակցության՝ Ստրասբուրգում կայացած համագումարում ձախերը հարց դրեցին խզել կապերը II Ինտերնացիոնալի հետ և միանալ Կոմինտերնին։ Չնայած ցենտրիստների մանևրներին, պատգամավորների մեծամասնությունը որոշում ընդունեց II Ինտերնացիոնալից դուրս գալու մասին, բայց դեռևս չմիացավ III-ին։ Համագումարը Սովետական Ռուսաստան ուղարկեց ձախ թևի ներկայացուցիչ Մ. Կաշենին և ցենտրիստ Լ. Ֆրոսսարին։ Ֆրանսիական սոցիալիստական կուսակցության պատվիրակները մասնակցեցին Կոմինտերնի II կոնգրեսի աշխատանքին խորհրդակցական ձայնի իրավունքով։ Նրանք երկու հանդիպում ունեցան Վ. Ի. Լենինի հետ և Ֆրանսիա բերեցին Կոմինտերնի գործկոմի նամակը՝ «Ֆրանսիական սոցիալիստական կուսակցության բոլոր անդամներին, Ֆրանսիայի բոլոր գիտակից պրոլետարներին»։ Այդ նամակում անողոք քննադատվում էր սոցիալիստական կուսակցության օպորտունիստական գործունեությունը և համոզմունք հայտնվում, որ «ֆրանսիական պրոլետարիատն իր համար կկոփի հզոր կոմունիստական կուսակցություն և պայքարող պրոլետարիատի միջազգային ընտանիքում կգրավի առաջին տեղերից մեկը»։

1920 թ. դեկտեմբերի 25-ից 30-ը Թուրում տեղի ունեցավ սոցիալիստական կուսակցության XVIII համագումարը, որը քննարկեց պատվիրակության հաշվետվությունը Մոսկվա կատարած ուղևորության մասին։ Համագումարի պատգամավորների մեծամասնությունը հավանություն տվեց Կոմինտերնի քաղաքականությանը։ Փոքրամասնությունը, որը բաղկացած էր աջերից ու ցենտրիստներից, հանդես եկավ Կոմինտերնին միանալու դեմ։ Կատաղի պայքարից հետո ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունվեց Կաշենի բանաձևը Կոմինտերնին միանալու մասին։ Ռեֆորմիստական փոքրամասնությունը Լ. Բլյումի և Պ. Ֆորի գլխավորությամբ հեռացավ համագումարից, դրանով պառակտելով բանվորական շարժումը։ Մնացած մեծամասնությունը ստեղծեց Ֆրանսիական կոմունիստական կուսակցություն (ՖԿԿ)։ ՖԿԿ-ն իր ստեղծման առաջին իսկ օրից պայքարում էր իր շարքերում եղած սոցիալ-դեմոկրատիզմի մնացուկների դեմ։ Այդ պայքարի նշանաբանով անցավ Մարսելի համագումարը, որը տեղի ունեցավ 1921 թ. դեկտեմբերի 25—30-ը (կոմկուսի առաջին համագումարը)։ Համագումարում քննարկվեցին թեզիսներ պատերազմի հանդեպ ունենալիք վերաբերմունքի մասին, որոշվեցին կուսակցության խնդիրները ֆրանսիական իմպերիալիստների ագրեսիվ արտաքին քաղաքականության դեմ մղվող պայքարում, հաստատվեց սովետական պետության պաշտպանության անհրաժեշտությունը, քննարկվեց նաև արհմիությունների վերաբերյալ հարցը։ Մերժվեց կուսակցությունից արհմիությունների «անկախության» անարխո-սինդիկալիստական գաղափարը։ Համագումարը բանաձև ընդունեց արհմիությունների հետ սերտ համագործակցություն հաստատելու մասին։ Մարսելի համագումարը հաստատեց կուսակցության թեզիսներն ագրարային հարցի վերաբերյալ, որոնք զարգացնում էին ֆրանսիական գյուղացիության՝ հասարակության հեղափոխական վերակառուցման պայմաններում տնտեսության վարման սոցիալիստական սիստեմին ատիճանաբար անցնելու գաղափարը։ Վ. Ի. Լենինը հավանություն տվեց այդ թեզիսներին, բայց մի

շարք քննադատական դիտողություններ արեց, մասնավորապես նշելով գյուղատնտեսության մեջ ֆինանսական կապիտալի ներթափանցման թերագնահատումը, հողաբաշխման վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը և այլն[1]։

Պայքարը ռեֆորմիստների և հեղափոխական տարրերի միջև տեղի էր ունենում նաև արհմիություններում։

Լ. Ժուոյի գլխավորությամբ ռեֆորմիստական պարագլուխների համաձայնողական դիրքից ԱԿԿ-ի շարքային անդամների դժգոհությունը հասցրեց այն բանին, որ 1921 թ. վերջին այն կորցրեց իր կազմի մոտ 70 տոկոսը։ Միաժամանակ ԱԿԿ-ում աճում էր ձախ թևի ազդեցությունը, որը գլխավորում էին Պ. Սեմարը և Գ. Մոնմուսոն։ Ձախ ուժերը պառակտում չէին ցանկանում, բայց ԱԿԿ գլխավոր քարտուղար Ժուոն և մյուս ռեֆորմիստները սկսեցին ԱԿԿ-ից հեղափոխական սեկցիաներին մասսայաբար վտարել։ Հեղափոխական արհմիությունների ներկայացուցիչները ստիպված էին միավորվել ինքնուրույն կազմակերպության մեջ։ 1922 թ. հունիսի վերջին նրանք ստեղծեցին նոր արհմիութենական կազմակերպություն՝ Աշխատանքի ունիտար ընդհանուր կոնֆեդերացիան (ԱՈԻԿԿ)։

Ֆրանսիայի քաղաքական զարգացումը

Ֆրանսիայում հեղափոխական վերելքի և Ռուսաստանում տեղի ունեցած սոցիալիստական հեղափոխության հանդեպ ունեցած սարսափը նպաստեց ֆրանսիական բուրժուազիայի ռեակցիոնության աճին։ Պառլամենտի առաջին հետպատերազմյան ընտրությունների ժամանակ, 1919 թ. նոյեմբերին ֆրանսիական ռեակցիան որոշեց ամեն գնով հաղթանակ ապահովել իր համար։ Ֆինանսական օլիգարխիայի ներկայացուցիչներն օգտագործեցին իրենց միավորումները՝ Առևտրի և արդյունաբերության հանրապետական կոմիտեն (Մասկյուրոյի կոմիտե) և Տնտեսական շահերի միությունը՝ թեկնածուներին դրամարկական լայն օժանդակություն ցույց տալու համար։ Պատերազմի ժամանակ հարստացած մեծաքսակները ժլատ չգտնվեցին իրենց ձեռնտու դեպուտատների ընտրությունները ֆինանսավորելու գործում։ «Սև դրամարկղում», ինչպես այն անվանեց ժողովուրդը, հավաքվեց 60 մլն ֆրանկ։

Բոլոր աջ կուսակցությունները միավորվեցին այսպես կոչված միասնական «ազգային բլոկի» մեջ, որն ընտրությունների ժամանակ հանդես եկավ ընդհանուր ծրագրով։

Արտաքին քաղաքականության ասպարեզում «ազգային բլոկը» պահանջում էր շարունակել պայքարն ընդդեմ Սովետական Ռուսաստանի, «կոշտ» կուրս վարել պարտված Գերմանիայի նկատմամբ, ապահովել ֆրանսիական իմպերիալիստների հեգեմոնիան Եվրոպայում։ Ներքին քաղաքականության ասպարեզում ազգայնականները հանդես էին գալիս բանվորների և մանր ծառայողների հաշվին պետական բյուջեի «տնտեսման» օգտին, առաջ էին քաշում ֆինանսների կազդուրման հարցը անուղղակի հարկերի մեծացման և կապիտալի վրա դրված հարկի վերացման միջոցով։ Նրանք պահանջում էին տրանսպորտի նորմալ աշխատանքն ապահովելու անհրաժեշտության պատրվակով վերացնել երկաթուղայինների և ծովայինների համար սահմանված 8-ժամյա աշխատանքային օրը։

«Ազգային բլոկին» հակադրվում էին ձախ կուսակցությունները, ամենից առաջ ռադիկալների և ռադիկալ-սոցիալիստների կուսակցությունը և սոցիա-

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 139։

լիստական կուսակցությունը։ Ռադիկալների կուսակցության մեջ մասսայական հիմքը կազմում էին քաղաքային մանր բուրժուազիան, մանր և միջին գյուղացիությունը, մտավորականության լայն խավերը. այն ղեկավարում էին խոշոր և միջին բուրժուազիայի ներկայացուցիչներն ականավոր քաղաքական գործիչ, ֆրանս-սովետական մերձեցման կողմնակից Էդուարդ Էրիոյի գլխավորությամբ։ Ռադիկալները բավական առաջադիմական ծրագիր ունեին՝ հասարակական օգտագործման խոշոր ձեռնարկությունների (գաղ, էլեկտրաէներգիա և այլն) ազգայնացում, առաջադիմական եկամտահարկ, ֆաբրիկային օրենսդրության իրականացում հօգուտ բանվորների։ Նրանք հանդես էին գալիս ի պաշտպանություն մանր գյուղացիական սեփականության, խոստանում դեմոկրատացնել սենատի ընտրությունները, ընդլայնել քաղաքապետարանների իրավունքները, պայքար ծավալել ընդդեմ կղերականության։

Սոցիալիստական կուսակցությունը (ՍՖԻՈ) առաջադրեց ռեֆորմիստական ընտրական ծրագիր։ Դրանում գլխավոր տեղ էին զբաղեցնում 8-ժամյա աշխատանքային օրվա, սոցիալական ապահովության և ընդհանուր կրթության համար պայքարի խնդիրները։ Ընտրությունների ժամանակ աջերին հաջողվեց իրենց կողմը գրավել քաղաքային մանր բուրժուազիայի և գյուղացիության լայն խավերին, որոնք տարվեցին շովինիզմի ու հակակոմունիզմի ալիքով։ Ազգային բլոկը ստացավ դեպուտատների պալատի տեղերի $^{2}/_{3}$-ը։ Վ. Ի. Լենինը «ազգային բլոկի» հաղթանակը գնահատեց որպես «ամենակատաղի ռեակցիայի» հաղթանակ։ «Ազգային բլոկի» առաջին մինիստրությունը գլխավորեց սոցիալիստական շարժման հայտնի ռեֆորմիստ Ա. Միլլերանը։ Իր ծրագրային ճառում նա խոստացավ պահպանել խաղաղությունը։ Իրականում նրա կառավարությունը եղավ Սովետական Ռուսաստանի դեմ սպիտակ լեհերի և Վրանգելի արշավանքի գլխավոր կազմակերպիչը։ Երկրի ներսում կառավարությունը հարձակում կազմակերպեց բանվորների կենսամակարդակի վրա, բանվորներ, որոնցից Միլլերանը պահանջում էր. «ավելի շատ արտադրել, ավելի քիչ սպառել»։ Երկրի քաղաքական ու գաղափարական կյանքում ուժեղացավ ռեակցիան։

Ֆրանսիական իմպերիալիզմի արտաքին քաղաքականությունը։ 1923 թ. Ռուրի ճգնաժամը

Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ օրերից ֆրանսիական իմպերիալիստական բուրժուազիան ակտիվորեն մասնակցեց հակահեղափոխական ելույթների կազմակերպմանն ընդդեմ Սովետական Ռուսաստանի։ 1918 թ. ֆրանսիական զորքեր ու նավատորմ ուղարկվեց Ռուսաստանի հարավը։ Փարիզի կոնֆերանսում (1919 թ. հունվար) «ռուսական հարցը» հիմնական հարցերից մեկն էր, բայց հաղթող երկրները համաձայնեցված գործողությունների չհասան իրենց միջև եղած անլուծելի հակասությունների առկայության հետևանքով։

1919 թ. հունիսի 28-ին ստորագրվեց Վերսալյան պայմանագիրը։ Ֆրանսիային վերադարձվեցին Էլզասն ու Լոթարինգիան, նա իրավունք ստացավ 15 տարով շահագործելու Սաարի ավազանի ածխահանքերը։ Հաստատվեցին դաշնակիցների կողմից 15 տարով Հռենոսի ձախ ափի օկուպացումը և այդ գետից 50 կմ դեպի արևելք ապառազմականացված գոտու ստեղծումը։ Գերմանիան ռազմական տեսակետից թուլացավ, որը ուժեղացնում էր ֆրանսիական կապիտալիստների դիրքերը։ Ընդարձակվեցին Ֆրանսիայի գաղութային տիրույթները. նա ստացավ Կոնգոյի մի մասը, Տոգոյի և Կամերունի մանդատները (բաժանեց Անգլիայի հետ), ինչպես նաև Սիրիայի և Լիբանանի մանդատները.

132 մլրդ մարկ ռեպարացիաների գումարը (դրանց 52 տոկոսը Ֆրանսիային էր) սահմանվեց ավելի ուշ։

Ֆրանսիայի տիրող դասակարգերը Եվրոպայում հեգեմոնիա հաստատելու հավակնություններ ունեին։ Նրանք այդ ժամանակ ունեին ամենաուժեղ բանակը, հենվում էին իր մեծությամբ Անգլիայից հետո երկրորդ գաղութային կայսրության և եվրոպական փոքր պետությունների հետ դաշինքների սիստեմի վրա։ 1921 թ. փետրվարին Ֆրանսիան ռազմական դաշինք կնքեց Լեհաստանի հետ։ 1921—1922 թ. ստեղծվեց Փոքր Անտանտը՝ Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի և Ռումինիայի ռազմական ու քաղաքական դաշինքը։ Մի կողմից, այդ դաշինքներն ունեին հակասովետական ուղղվածություն, մյուս կողմից, Ֆրանսիան հույս ուներ հենվել դրանց վրա Գերմանիայի դեմ մղվող պայքարում։

Ֆրանսիական կառավարող շրջանների ձգտումները հանդիպում էին իրենց նախկին դաշնակիցների՝ Անգլիայի և ԱՄՆ-ի դիմադրությանը, որոնք չէին ցանկանում Ֆրանսիայի չափից ավելի ուժեղացում և Գերմանիայի թուլացում։ Գերմանական բուրժուազիան ձգտում էր այդ հակասություններն օգտագործել Վերսալի պայմանագրի պայմանները սարոտաժի ենթարկելու, ռեպարացիաների գումարը նվազեցնելու համար։ 1921 թ. մայիսին Լոնդոնի կոնֆերանսում Գերմանիայից գանձվելիք ռեպարացիաների՝ ֆրանսիական փորձագետների առաջարկած գումարն անգլիացիների աջակցությամբ նվազեցվեց։ Դա առաջ բերեց Ֆրանսիայի աջ շրջանների դժգոհությունը։ Նրանք դժգոհ էին նաև Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչներին Ջենովայում նախապատրաստվող կոնֆերանս հրավիրելուց։ Նրանք հանդես էին գալիս Սովետական Ռուսաստանի հետ որևէ բանակցությունների դեմ այնքան ժամանակ, քանի դեռ «չի փոխվել ռեժիմը»։ Աջերի տրամադրությունների առավել ցայտուն արտահայտիչն էր պրեմիեր մինիստր Ռ. Պուանկարեն (1922—1924)։

«Կոմիտե դը Ֆորժի» մագնատների ուղղակի աջակցությամբ իշխանության գլուխ կանգնած Պուանկարեի կառավարության քաղաքականությունը Ֆրանսիային հասցրեց Ռուրի ճգնաժամին, որն առաջացավ մետալուրգիական արքաների շահույթներն ավելացնելու ձգտմամբ։ «Կոմիտե դը Ֆորժի» ներկայացուցիչները երազում էին լոթարինգյան հանքաքարը Ռուրի ածխի հետ միավորելու մասին. գերմանական մոնոպոլիաների հետ պայմանավորվելու նրանց փորձը անհաջողությամբ ավարտվեց, և նրանք պահանջեցին ռազմական միջամտություն։ 1923 թ. հունվարի 11-ին ֆրանս-բելգիական զորքերը, վկայակոչելով Գերմանիայի կողմից ռեպարացիոն մատակարարումների չկատարելը, սկսեցին Ռուրի օկուպացումը։ Ի պատասխան գերմանական կառավարությունը պասսիվ դիմադրություն հայտարարեց։ Ռեպարացիայի հաշվին ածխի մատակարարումները խիստ կրճատվեցին։ Ֆրանսիայում փակվեցին մետալուրգիական ձեռնարկությունները, աճեց գործազրկությունը։ Օկուպացիայի ծախսերը հասցրին ֆրանկի արժեզրկմանը։ Աշխատավորության հարկերն ավելացնելու միջոցով գանձարանը լրացնելու կառավարության փորձ է՛լ ավելի ուժեղացրեց մասսաների դժգոհությունը։ Անգլիան և ԱՄՆ-ը դեմ էին Ռուրի օկուպացմանը։ Ֆրանսիայի դիրքերը թուլացնելու համար անգլիական ու ամերիկյան բանկերը բորսա նետեցին մեծ քանակությամբ ֆրանսիական արժեթղթեր. դա ավելի նվազեցրեց ֆրանկի կուրսը։ Երկրում ծայր առավ Ռուրից զորքերը դուրս բերելու շարժումը։

Օկուպացիայի դեմ մղվող պայքարում ակտիվ դեր խաղաց ֆրանսիական կոմունիստական կուսակցությունը։ Նա ստեղծեց Գործողության կոմիտե, որը

կազմակերպեց բողոքի մասսայական միտինգներ, ցույցեր և գործադուլներ։ Ռուրի տարածքում կոմունիստների ազդեցությամբ ֆրանսիական մի քանի գնդերի զինվորները (Քյոլնում, Դորտմունդում, Դույսբուրգում և այլն) եղբայրանում էին գերմանական բանվորների հետ։ Կառավարությունը սկսեց կոմունիստների ձերբակալությունը։ ՖԿԿ կենտկոմում այդ օրերին ստեղծվեց դժվարին կացություն։ Գլխավոր քարտուղար, նախկին ցենտրիստ Լ. Ֆրոսսարը լքեց կուսակցությունը, վերադարձավ սոցիալիստների մոտ։ Սոցիալիստների պարագլուխները գրավեցին իրենց իմպերիալիստական կառավարությանն աջակցելու դիրք։

Տնտեսական դժվարությունների, երկրում առաջացած դժգոհության և Անգլիայի ու ԱՄՆ-ի ֆինանսական ու դիվանագիտական ճնշման տակ Պուանկարեի կառավարությունը ստիպված էր իր համաձայնությունը տալ գերմանական մուծումների հարցի վերաբերյալ միջազգային կոնֆերանս գումարելու մասին։ «Ազգային բլոկի» Ռուրի արկածախնդրությունն ավարտվեց կրախով։

ՖՐԱՆՍԻԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1924—1929 ԹԹ.)

Երկրի տնտեսական զարգացումը

Ֆրանսիայում, ինչպես և կապիտալիստական բոլոր երկրներում ստաբիլիզացիան անկայուն եղավ։ Ընդհանուր առմամբ արդյունաբերությունը զերազանցեց նախապատերազմյան մակարդակը (1930 թ. մոտերքին արդյունաբերական արտադրության ծավալը 40 տոկոսով զերազանցեց նախապատերազմյան մակարդակը), բայց նրա ոչ բոլոր ճյուղերն էին միատեսակ զարգանում։ Ավելի արագորեն էր ընթանում ծանր արդյունաբերության ճյուղերի զարգացումը (1930 թ. արտադրության միջոցների արտադրությունը 1913 թ. համեմատությամբ բարձրացավ 43 կետով, իսկ սպառման արտադրությունը՝ 14 կետով, տեքստիլ արդյունաբերությունը այդպես էլ չհասավ 1913 թ. մակարդակին)։ Ծանր արդյունաբերության արագ աճը բացատրվում էր պատերազմից ավերված մարզերի շարունակվող վերականգնումով, ֆրանսիական կապիտալիստների ձեռքում լոթարինգյան հանքաքարի և Սաարի քարածխի միացումով, ռեպարացիաների հաշվին Գերմանիայից ոսկի ստանալով (8832 մլն մարկ ոսկով)։ Դրա շնորհիվ արդյունաբերության զարգացման տեմպերը Ֆրանսիայում ամբողջությամբ վերցրած ավելի բարձր էին, քան Գերմանիայում և Անգլիայում։

Մասնակի կայունացման ժամանակաշրջանում նկատվում է արտադրության զգալի համակենտրոնացում, հատկապես ծանր արդյունաբերության մեջ. ռազմական արդյունաբերության մեջ իշխում էին երկու կոնցերններ՝ Շնայդերինն ու Հոշկիսինը, մետալուրգիականում տաս ձեռնարկություններ տալիս էին արտադրանքի 72 տոկոսը, ածխային արդյունաբերության մեջ 17 ձեռնարկություններ տալիս էին ամբողջ արտադրանքի 87 տոկոսը, ավտոմոբիլաշինության մեջ արտադրանքի 75 տոկոսը պատրաստվում էր Սիտրոենի, Պեժոյի և Ռենոյի ֆիրմաներում։

Չնայած ֆրանսիական էկոնոմիկայի ինդուստրացմանը, ռանտիեների բաժինն ազգային եկամտի մեջ մեծանում էր։ Ինչպես և նախորդ տարիներին եկամուտների մեծ մասը ռանտիեները ստանում էին ֆրանսիական արդյունաբերական արժեքներից, գաղութներում կատարած ներդրումներից և ներքին պետական փոխառություններից։ Արժեթղթերից ստացված եկամուտների ամենայա չափը 1928—1930 թթ. կազմում էր 28—30 մլրդ ֆրանկ։ Կապիտալների արտահանությունից ստացված եկամուտները 1929 թ. 50 տոկոսով գերազանցում էին առևտրա-արդյունաբերական ընկերություններից ստացված եկամուտներին։ Կապիտալների արտահանումն ուղղվում էր գլխավորապես դեպի «սեփական» գաղութները։ 1927—1933 թ. այն կազմում էր կապիտալների արտահանության ընդհանուր ծավալի 75 տոկոսը։ Ռանտիեների շահույթների և արդյունաբերական մագնատների եկամուտների ապահովման գործում վիթխարի դեր էր կատարում պետությունը։ 1925 թ. ստեղծված ազգային անտեսական խորհուրդը, մետալուրգիական արդյունաբերության հարցերի գծով հանձնաժողովը և ուրիշներ լուծում էին մասնավոր ձեռնարկատիրական կազմակերպությունների վարկավորման հարցերը, բաշխում Գերմանիայից ստացված բնամթերային մատակարարումները, ռազմական պատվերները և այլն։

Գյուղատնտեսությունը կայունացման տարիներին գտնվում էր ծանր վիճակում։ Գյուղացիությունը տառապում էր սակավահողությունից, հարկերից, գյուղատնտեսության մեջ ֆինանսական կապիտալի ներթափանցումից, ինֆլյացիայից։ Ընդհանուր եկամտի մեջ կրճատվում էր գյուղատնտեսությունից ստացված եկամուտների բաժինը։ 1918 թ. այն կազմեց 23,3 տոկոս, 1930 թ.՝ 14,2 տոկոս։ Խոշոր հողատերերի ձեռքում հողի համակենտրոնացման պրոցեսն իր արտահայտությունը գտավ հետևյալ ցուցանիշներում. գյուղացիական բնակչությունը (այդ թվում նաև ունևոր), որը կազմում էր տնտեսությունների ընդհանուր քանակի 87,5 տոկոսը, տիրում էր հողի 42,5 տոկոսին, իսկ հողային մագնատների 12,5 տոկոսը իր ձեռքում էր պահում հողի 57,5 տոկոսը։

Գյուղատնտեսության մեջ լայնորեն տարածվում էր կապիտալիստական մասնագիտացումը, որը ճակնդեղագործ գյուղացիներին կախման մեջ էր դնում շաքարի տրեստներից, հացահատիկ ու բանջարեղեն արտադրողներից՝ սննդի ինդուստրիայի և այլ մոնոպոլիաներից։ Գյուղացիության կողոպուտը հօգուտ խոշոր կապիտալի իրականացվում էր նաև գյուղատնտեսական մթերքների նկատմամբ ցածր գներ և արդյունաբերական իրերի նկատմամբ բարձր գներ սահմանելով, մեծածախ և մանրածախ գների միջև գոյություն ունեցող տարբերությամբ, ֆրանկի և արժեթղթերի արժեզրկումով։

1924 թ. ընտրությունները։ «Ձախ կարտելի» ներքին և արտաքին քաղաքականությունը

«Ազգային բլոկի» ներքին և արտաքին քաղաքականությունը դժգոհություն առաջացրեց բնակչության լայն խավերի մեջ։ Ընտրությունների նախօրյակին, որոնք պետք է տեղի ունենային 1924 թ. մայիս-հունիսին, նկատվում էր մասսաների տեղաշարժ դեպի ձախ։ Դա ազդեց ռադիկալների և ռադիկալ-սոցիալիստների կուսակցության դիրքի վրա։ Ռադիկալների պարագլուխ է. Էրիոն դարձավ «ձախ կարտելի», այսինքն՝ առաջիկա պառլամենտական ընտրություններին մասնակցելու համար սոցիալիստների և ռադիկալների դաշինքի նախաձեռնող։

«Ձախ կարտելը» հանդես եկավ մի ծրագրով, որը նշում էր առաջադիմական և դեմոկրատական մի շարք միջոցառումների իրականացում, քաղաքական լայն ներում, 1920 թ. գործադուլից հետո ազատված երկաթուղայիններին վերադարձ դեպի նախկին աշխատանքը, արհմիությունների մեջ պետական ծառայողների ընդունվելու իրավունքի ճանաչում, 8-ժամյա աշխատանքային օրվա օրենքի խստիվ պահպանում։ Ծրագիրը խոստանում էր հարկերի դեմոկրատական բաշխում, դատարանի դեմոկրատացում, աշխարհիկ դպրոց,

հովանավորում էր հակակղերականությունը։ Արտաքին քաղաքականության մեջ ձախերի կարտելը խոստանում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել ՍՍՀՄ-ի հետ և կարգավորել Ռուրի կոնֆլիկտը։

Կոմունիստական կուսակցությունն ընդունեց իր ընտրական ծրագիրը։ Դրա կենտրոնում դրվում էր բոլոր բուրժուական կուսակցությունների դեմ բանվորների և գյուղացիների բլոկի վերաբերյալ հարցը։ Կոմկուսի համագումարը դիմեց սոցիալիստների այդ նույն ժամանակ տեղի ունեցող համագումարին, առաջարկելով ընդհանուր ճակատ կազմել ընտրությունների ժամանակ, բայց սոցիալիստները հրաժարվեցին։

Ընտրություններում հաղթանակ տարավ «ձախ կարտելը», որը դեպուտատների պալատ անցկացրեց 313 մարդ, 26 տեղ ստացան կոմունիստները, աջերն անցկացրին 229 դեպուտատ։ «Ձախ կարտելի» կառավարություններն իշխանության գլուխ եղան 1924 թ. հուլիսից մինչև 1926 թ. հուլիսը։ Երկրում եղած սոցիալական հակասությունների աճի պայմաններում կաբինետներն անընդհատ փոփոխվում էին։ Առաջին մինիստրությունը գլխավորեց Էրիոն։ Սոցիալիստները հրաժարվեցին մասնակցել կառավարությանը։ Նրանք պահանջում էին նվազեցնել աշխատավարձից և ոչ մեծ կարողություններից գանձվող հարկերը և անհապաղ հարկ սահմանել կապիտալի վրա, որի դեմ հանդես եկան ռադիկալները։ Էրիոյի կառավարությունը ներկայացրեց եկամտահարկի սահմանափակ նախագիծ, բայց դա էլ առաջ բերեց ֆինանսական օլիգարխիայի դիմադրությունը։ Բանկերը «դրամական պարիսպ» կանգնեցրին Էրիոյի կառավարության ճանապարհին և հրաժարվեցին աջակցել կառավարության թողարկած ներքին փոխառությանը։

Դեմոկրատական մյուս միջոցառումների իրականացման ասպարեզում «ձախ կարտելի» կառավարությունները նմանապես կիսատ-պռատ քաղաքականություն էին իրականացնում։ Քաղաքական լայն ներման խոստումն ավարտվեց մի օրենքով, ըստ որի ներման ենթակա չէին այն անձինք, որոնք մեղադրվել էին «թշնամու հետ ունեցած կապի համար» (այդ կատեգորիայի տակ էին ընկնում բանտարկված զինվորներն ու նավաստիները՝ Սովետական Ռուսաստանում ինտերվենցիայի հակառակորդները)։ Կոմունիստ դեպուտատները քաղաքական լայն ներման նախագիծ մտցրին, բայց բուրժուական բոլոր դեպուտատները սոցիալիստների հետ դեմ քվեարկեցին։ Կառավարությունը քիչ բան արեց 1920 թ. ազատված երկաթուղայիններին վերադարձնելու համար։ Նա աշխատանքում վերականգնեց պետական երկաթուղիներում արձակվածներին, բայց մասնավոր երկաթուղիներում նրանց վերականգնում էին անհատական կարգով, իսկ արձակված բանվորների մեծ մասն ընկնում էր մասնավոր ընկերություններին։ Չլուծվեց նաև մեկ այլ կարևոր հարց՝ արհմիություններ կազմակերպելու պետական ծառայողների իրավունքի հարցը։

Կղերական տարրերի ճնշման տակ Էրիոյի կառավարությունը հրաժարվեց իր հակակղերական ծրագրի զգալի մասից։ Բայց կառավարության համար գլխավոր դժվարությունը ֆինանսական հարցն էր։ 1925 թ. փետրվարին երկրում ստեղծվեց ֆինանսական աղետային վիճակ, հետագա ինֆլյացիան անհնարին ճանաչվեց։ Էրիոն դեպուտատների պալատում հայտարարեց. «մեզ չպետք է ահարեկի կապիտալի վրա հարկ սահմանելու հեռանկարը»։ Պալատը պաշտպանեց Էրիոյի համապատասխան ֆինանսական նախագիծը, բայց նրա կաբինետը այդ հարցում սենատի հավանությունը չստանալով, հրաժարական տվեց։

«Ձախ կարտելի» կառավարության արտաքին քաղաքականությունը նմանապես նվազ հաջող էր։ Սովետական Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը հանդիպեց ռեակցիոն ուժերի կատաղի դիմադրությանը, և Էրիոյի կառավարությունը բազմիցս զիջում էր նրանց։ Գրեթե կես տարի տևեց պայքարը ՍՍՀՄ-ի ճանաչման վերաբերյալ հարցի շուրջը։ Եվ միայն 1924 թ. հոկտեմբերին Էրիոն հայտարարություն արեց սովետական կառավարության ճանաչման մասին, արտահայտելով, սակայն, մի շարք վերապահություններ, որոնք վերաբերում էին «ռուսական պարտքերին»։

Փորձելով վերացնել Ռուրի արկածախնդրության հետևանքները, Էրիոյի կառավարությունը ստիպված էր համաձայնել գերմանական հարցի վերաբերյալ միջազգային կոնֆերանսի գումարմանը։ Կոնֆերանսը գումարվեց Լոնդոնում 1924 թ. հուլիսին, և այնտեղ վճռական դեր կատարեցին ԱՄՆ-ի ու Անգլիայի ներկայացուցիչները։ Կոնֆերանսը որոշում ընդունեց Ռուրից էվակուացվելու մասին։ Ռեպարացիոն հարցերի լուծման համար ստեղծվեց միջնորդական հանձնաժողով, ԱՄՆ-ի ներկայացուցչի նախագահությամբ։ Գերմանիան ամերիկյան և անգլիական բանկիրներից ստացավ 800 մլն մարկի փոխառություն։ Լոնդոնի կոնֆերանսի արդյունքները՝ առաջին քայլը եղան ֆրանսիական իմպերիալիզմի արտաքին քաղաքական դիրքերի թուլացման ճանապարհին։ Երկրորդ քայլը եղավ Լոկարնոյի կոնֆերանսը (1925 թ.), որտեղ Ֆրանսիան, Բելգիան և Գերմանիան փոխադարձաբար ճանաչում էին իրենց միջև գոյություն ունեցող սահմանների անձեռնմխելիությունը։ Այդ պակտի երաշխավորներ եղան Անգլիան և Իտալիան, որը Ֆրանսիային որոշակի կախման մեջ էր դնում այդ երկու երկրներից։ Ֆրանսիան երաշխիքներ չստացավ իր դաշնակիցներ Չեխոսլովակիայի և Լեհաստանի արևմտյան սահմանների համար։ Դա կապված էր գերմանական ագրեսիան արևելք ուղղելու ձգտման հետ։ Լոկարնոյի համաձայնագրերը նպաստեցին Գերմանիայի ուժեղացմանը, որը Ֆրանսիայի գլխավոր թշնամին էր, և սահմանափակեցին Ֆրանսիայի ձգտումները Արևմտյան Եվրոպայում հեգեմոնիայի հասնելու վերաբերյալ։

Գաղութային պատերազմները Մարոկկոյում և Սիրիայում։ Աշտախավորների պայքարը

Չնայած ֆինանսական սուր ճգնաժամին, կառավարությունը հօգուտ ֆինանսական օլիգարխիայի ներկայացուցիչների գաղութային երկու պատերազմ սանձազերծեց՝ Մարոկկոյում և Սիրիայում։

Իսպանական Մարոկկոյում, ռիֆֆերի ցեղերի մեջ ազգային-ազատագրական շարժում սկսվեց։ Մարոկկոն ֆրանսիական կապիտալների ներդրման ոլորտներից մեկն էր. նրա էկոնոմիկայում իշխում էին Փարիզյան—Նիդերլանդական բանկը, «Շնայդեր—Կրեզո» կոնցերնի հետ կապված Մարոկկոյի պետական բանկը և այլն։ Ֆրանսիական կառավարությունը վախենալով Մարոկկոն կորցնելուց և մարոկկացիների պայքարի ազդեցությունը Հյուսիսային և Արևմտյան Աֆրիկայի մյուս գաղութների վրա տարածվելուց, իսպանացիների հետ համատեղ ռազմական գործողություններ սկսեց ապստամբների դեմ։

Նախապատրաստվող պատերազմի մասին առաջին իսկ լուրերի հետ մեկտեղ ՖԿԿ ղեկավարությունը դիմեց Ֆրանսիայի և գաղութների բանվորներին ու գյուղացիներին՝ կոչ անելով «խանգարել այդ նոր սպանդը»։ Կոմունիստները ստեղծեցին գործողության Կենտրոնական կոմիտե, որը գլխավորեց Մ. Թորեզը։ Կոմիտեն բանվորական մի շարք կոնգրեսներ գումարեց Փարիզում, Լիոնում, Լիլլում, Մարսելում, Բորդոյում և այլուր, ավելի քան 40 քաղաքներում տեղի ունեցան խոշոր միտինգներ։

Սոցիալիստական կուսակցության ղեկավարությունը պաշտպանեց գաղու-

թային պատերազմը և իր անդամներին արգելեց մասնակցել նրա դեմ մղվող պայքարին։ Բայց շատ սոցիալիստներ մասնակցեցին հակապատերազմական կոնդրեսներին։ Հակապատերազմական պայքարի մեջ ներգրավվեցին ռեֆորմիստական ԱԸԿ-ի անդամները և առաջադեմ մտավորականության մի մասը։

Սիտրոեն ֆիրմայի բանվորների առաջարկությամբ Փարիզի օկրուգի կոնդրեսում ընդունվեց գաղութային պատերազմների դեմ ուղղված բողոքի 24-ժամյա գործադուլի առաջարկը։ Չնայած կառավարության կիրառած բռնություններին, 1925 թ. հոկտեմբերի 12-ին տեղի ունեցած գործադուլն ընդունեց մասսայական բնույթ, ընդգրկելով 900 հազ. մարդ։ Պայքարը նպաստեց պրոլետարիատի քաղաքական մակարդակի բարձրացմանը, բանվորներին դաստիարակում էր ինտերնացիոնալիզմի ոգով, բայց չէր կարող փոխել կառավարության քաղաքականությունը։ Մարոկկոյի ապստամբությունը և 1925 թ. հունիսին Սիրիայում տեղի ունեցած ապստամբությունը ճնշվեցին։ Գաղութային պատերազմներն էլ ավելի մեծացրին պետական դեֆիցիտը։ Ֆրանկը շարունակում էր ընկնել։

«Ձախ կարտելի» կառավարությունը, որն արտահայտում էր միջին և մանր բուրժուազիայի շահերը, իր դասակարգային էությամբ չէր կարող ընդդիմանալ ֆինանսական օլիգարխիայի պահանջներին։ Այդ հանգամանքը հիասթափություն և քաղաքական տարընթացություն ծնեց նրա կողմնակիցների մեջ, որն արտահայտվեց քաղաքական ճգնաժամային երևույթներում, «ձախ կարտելի» քայքայման, նոր քաղաքական կազմակերպությունների ստեղծման մեջ։

Աջ բլոկը և նրա քաղաքականությունը

Էրիոյի երկրորդ կաբինետի հրաժարականից հետո իշխանության գլուխ անցավ «ազգային միավորման» կառավարությունը, որը դարձյալ գլխավորեց Պուանկարեն։ Ռադիկալ-սոցիալիստների կուսակցության ներկայացուցիչներն այդ կառավարության մեջ մտան ֆինանսական դժվարությունների կապակցությամբ՝ «ազգային միավորման» լոզունգի տակ։

Պուանկարեի կառավարությունն անց էր կացնում պետական ապարատը ֆինանսական օլիգարխիային ենթարկելու քաղաքականություն։ Ֆինանսական ճգնաժամը լուծելու համար ֆինանսական կապիտալի ներկայացուցիչներից ստեղծվեց փորձագետների կաբինետ, որը հանձնարարականներ պատրաստեց կառավարության համար։ Այդ հանձնարարականների հիման վրա Պուանկարեի կաբինետն իրականացրեց ֆինանսական ռեֆորմ, որը նախևառաջ հանգում էր բնակչության լայն խավերից ստացվող հարկերի բարձրացմանը։ Մարդատար տրանսպորտից ստացվող հարկերն աճեցին 32,5 տոկոսով, ապրանքներ փոխադրելու համար հարկերը՝ 11,5 տոկոսով, ավելացան նաև ուղղակի հարկերը։ Դրանց ծանրությունը դրվում էր բանվորների, ինչպես նաև միջին ու մանր բուրժուազիայի վրա, այն դեպքում, երբ խոշոր կարողությունների վրա դրված հարկերը կրճատվեցին գրեթե 50 տոկոսով։ Իրականացվեց ֆրանկի կայունացում նրա նախապատերազմյան ոսկու ստանդարտի $^1/_5$-ի չափով, նոր փոխառություններ կատարվեցին անգլիական ու ամերիկյան բանկերում, հաշվառքի տոկոսը բարձրացվեց 6-ից 7-ի, որը խթանում էր դրսից եկող կապիտալների ներհոսքը։ Խոշոր մոնոպոլիաները (երկաթուղային, նավաշինական կոմպանիաները և այլն) պետությունից ստացան դրամական օժանդակություն և շահույթների ապահովման երաշխիքներ, հատուկ օրենքով ապահովվեց կարտելացման հովանավորությունը։ (1926 թ. համապատասխանորեն փոխվեց քրեական օրենսդրքի 419 հոդվածը, այն հանցագործություն էր

համարում ամեն մի համաձայնություն, որը սահմանափակում էր ազատ մրցակցությունը)։

Ֆրանկի կայունացումը ուղեկցվում էր ռացիոնալացման աճով, աշխատավարձի կրճատմամբ, աշխատանքային օրվա ավելացմամբ։

«Ձախ կարտելի» քաղաքականությունից հիասթափվելը, աշխատավորների դրության վատացումը, բուրժուազիայի հետ սոցիալիստների դասակարգային համագործակցությունը նպաստեցին հին քաղաքական կուսակցությունների հանդեպ անվստահության աճին։ Մանրբուրժուական անկայուն տարրերը և բանվոր դասակարգի հետամնաց խավերը գոյություն ունեցող բուրժուական կուսակցություններից իրենց շահերի պաշտպանություն չգտնելով, նոր կազմակերպությունների մեջ էին ելք որոնում։ Դրանից ձգտում էին օգտվել կաթոլիկ հոգևորականությունը և ռեակցիոն զինվորականությունը, որոնց թիկունքում կանգնած էին ֆինանսական օլիգարխիայի մագնատները։ Այդ ժամանակ էլ հանդես են գալիս ֆաշիստական առաջին կազմակերպությունները։ 1924 թ. առաջացան «Հայրենասիրական լիգան» և «Հայրենասիրական երիտասարդության լիգան»։ 1927 թ. նախկին ճակատայիններից ստեղծվեց ֆաշիստների ռազմականացված մի կազմակերպություն՝ «Մարտական խաչերը»։

1928 թ. քաղաքական կյանքում ռեակցիոն տենդենցների ուժեղացման պայմաններում տեղի ունեցան հերթական պառլամենտական ընտրություններ, որոնք հաղթանակ բերեցին աջ կուսակցություններին։ Երկրի ներսում շարունակվում էր հարձակումն աշխատավորության իրավունքների վրա։ Արտաքին քաղաքականության ասպարեզում իմպերիալիստական բուրժուազիան փորձում էր Եվրոպայում իր դիրքերի թուլացումը փոխհատուցել, հանդես գալով որպես նոր հակասովետական արշավանքի նախաձեռնող։

Բանվորական շարժումը մասնակի կայունացման տարիներին։ Պայքար հանուն ՖԿԿ-ի բոլշևիկացման

Մասնակի կայունացման տարիներին ընդհանուր առմամբ նկատվում էր գործադուլային պայքարի անկում, բայց Ֆրանսիայի պրոլետարիատը բազմիցս հանդես էր գալիս իր իրավունքների պաշտպանությամբ։ Բանվորական շարժման մեջ շարունակվում էր պայքարը հեղափոխական և օպորտունիստական տարրերի միջև։ Ռեֆորմիստական տենդենցներն այդ ժամանակ իրենց համար առավել կամ նվազ բարենպաստ հող էին գտնում։ Արդյունաբերական վերելքը բանվորների մի մասի մեջ պատրանքներ ստեղծեց կապիտալիստական Ֆրանսիայի «հավերժական ծաղկման» մասին։ Այդ տրամադրությունները սերմանում էին սոցիալիստների և ԱԸԿ-ի պարագլուխները։ Նրանք արդարացնում էին կապիտալիստական ռացիոնալացումը՝ պնդելով, թե այն նպաստում է անցմանը դեպի «կազմակերպված կապիտալիզմ»։ Աջ սոցիալիստները պնդում էին, թե իբր կարելի է սոցիալական ազատագրության հասնել առանց կապիտալիստական կարգերի տապալման, ռեֆորմների միջոցով։ ԱԸԿ-ի պարագլուխները հայտարարեցին, թե հասել է ժամանակը, երբ դասակարգային բոլոր կոնֆլիկտները կարող են արբիտրաժի միջոցով լուծվել խաղաղ կերպով։ Սոցիալիստական կուսակցության պարագլուխները չընդդիմացան Ֆրանսիայի ռազմականացմանը, պայքար էին մղում Սովետական Միության դեմ, կանգնած էին հակակոմունիզմի դիրքերում։ ՍՖԻՈ-ի ղեկավարության դիրքը նպաստում էր բանվոր դասակարգի պառակտվածության խորացմանը։ Ֆրանսիական բանվորների մեծամասնությունը այդ ժամանակ գնում էր սոցիալիստների ետևից։ Պրոլետարիատի հեղափոխական խավերը պաշտպանում էին ՖԿԿ-ին։ Մասնակի կայունացման տարիներին ֆրանսիա-

կան կոմկուսի մեջ շարունակվում էր նրա բոլշևիկացման բարդ պրոցեսը։ Ռեֆորմիզմը, որն այդ ժամանակ հանդիսանում էր գլխավոր վտանգը բանվորական շարժման մեջ, հասցրեց աջ թևքման առաջացմանը ՖԿԿ-ում (Ռոսմեր, Մոնատ և ուրիշներ)։ Հետագայում այդ խումբը մարքսիստական-լենինյան ղեկավարության վրա կատարած իր հարձակումներում միացավ տրոցկիստական տարրերի հետ (Բ. Սուվարին և ուրիշներ)։ ՖԿԿ-ն լարված պայքար էր մղում այդ երկու թևքումների դեմ։ Նա կանգնած էր բուրժուազիայի դեմ դասակարգային պայքարի դիրքերում, իր մամուլում բացահայտում էր կապիտալիստական կայունացման մասնակի բնույթը, բանվորներին կոչ անում պայքարել ընդդեմ աշխատանքի ինտենսիֆիկացման, հանուն 8-ժամյա աշխատանքային օրվա օրենքի կատարման, ընդդեմ կենսամակարդակի իջեցման, պայքար էր կազմակերպում գաղութային պատերազմների դեմ։ 1927 թ. խոշոր հավաքույթներ ու ցույցեր եղան ի պաշտպանություն Սակկոյի և Վանցետտիի, որոնք անարդարացի դատապարտվել էին ԱՄՆ-ի կառավարող շրջանների կողմից։ Մասսայական շարժում ծավալվեց ի պաշտպանություն չինական պրոլետարիատի հեղափոխական պայքարի։ Մեծ նշանակություն ունեցավ հակամիլիտարիստական կամպանիան, որն անցկացրեց ՖԿԿ-ն ՍՍՀՄ-ի դեմ պատերազմի սպառնալիքի կապակցությամբ։

1929 թ. աշխուժացավ գործադուլային պայքարը. գործադուլ էին անում հանքափորները, մետալուրգները, շինարարները։ Ուժեղացավ ազգային-ազատագրական շարժումը գաղութային երկրներում՝ Ալժիրում, Թունիսում, Սիրիայում, Հնդկաչինում և այլուր։ Այդ պայմաններում ՖԿԿ-ի գործունեությունը մեծ երկյուղ առաջացրեց կառավարող շրջաններում։ Երբ ՖԿԿ Կենտկոմն սկսեց 1929 թ. օգոստոսի 1-ի հակապատերազմական ցույցի նախապատրաստությունը, կառավարությունը կոմունիստներին մեղադրելով «դավադրության» մեջ, կարգադրություն արեց կուսակցության ղեկավարներին ձերբակալելու մասին։ Ձերբակալվեցին Մ. Թորեզը, Բ. Ֆրաշոնը, Գ. Մոնմուսոն և ուրիշներ։ Կուսակցության ղեկավարությունն անցավ Բարբե-Սելորի օպորտունիստական աղանդավորական խմբի ձեռքը։ Այդ խումբը կուսակցության մեջ ստեղծում էր պասսիվ ենթակայության, ազատ բանավեճերի և քննադատության համար պայմանների վատացման մթնոլորտ։ Առաջին պլան մղելով «Ամենուրեք Սովետնե՛ր» ստրատեգիական լոզունգը, Բարբեի ու Սելորի կողմնակիցները հրաժարվում էին աշխատավորության անմիջական պահանջների համար պայքարելուց, պնդելով, թե «անցել է բիֆշտեքսի համար պայքարելու պահը»։ Նրանք հրաժարվում էին սոցիալական ապահովության համար պայքարելուց, մերժում արհմիութենական աշխատանքը, կոմունիստներին գրգռում ընդդեմ սոցիալիստների։ Նրանց աղանդավորության հետևանքով կոմկուսի թվաքանակը սկսեց նվազել. 1926 թ. 55 հազարից կուսակցության անդամների թիվը 1930 թ. նվազեց մինչև 39 հազարի։ Միայն Կենտկոմի 1930 թ. հուլիսյան պլենումից հետո սկսվեց շրջադարձը կուսակցության գործունեության մեջ։

ՖՐԱՆՍԻԱՆ 1930—1939 ԹԹ.

Տնտեսական ճգնաժամը և լճացումը։ Աշխատավորության դրության վատացումը

Առաջին իմպերիալիստական պատերազմի հետևանքով ավերված շրջանների վերականգնումը, Գերմանիայից ստացվող ռեպարացիոն մուծումները, Վերսալյան պայմանագրի հետևանքով հումքային բազայի ընդլայնումը, երկրի ռազմականացումը դանդաղեցրին տնտեսական ճգնաժամի սկսվելը։ Ճգնաժամը Ֆրանսիայում սկսվեց

1930 թ. և շարունակվեց մինչև 1936 թ.։ 1936 թ. տեղի ունեցավ որոշ վերելք, քանի որ բնակչության գնողունակությունը ժողովրդական ճակատի շարժման կապակցությամբ որոշ չափով բարելավվեց։ 1937 թ. երկիրը ներգրավվեց նոր ճգնաժամի մեջ, որը տևեց գրեթե մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը։

Ինչպես և մյուս կապիտալիստական երկրներում, ճգնաժամի տարիներին Ֆրանսիայում ուժեղացավ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը։ Պետության միջամտությունն արտահայտվեց պրոտեկցիոնիզմի ուժեղացման, բանկերի ու մոնոպոլիաների պետական օժանդակության, գների կարգավորման և գյուղատնտեսական արտադրության սահմանափակման, գաղութների յուրացման գործում պետական միջամտության մեջ։ Խոշոր մոնոպոլիստների պահանջով Ֆրանսիայի կառավարությունը ստեղծեց, այսպես կոչված, պաշտպանված սեկտոր, որն ապահովվեց, չնայած ճգնաժամին, խոշոր շահույթներով։ Նրա մեջ մտան առաջատար բանկերը, խոշոր երկաթուղային կոմպանիաները, մետալուրգիական, քիմիական արդյունաբերության հզոր միավորումները, արտաքին շուկաների հետ կապված առևտրական ֆիրմաները և այլն։ «Պաշտպանված սեկտորի» ձեռնարկությունները պետական գանձարանից վիթխարի դոտացիաներ էին ստանում, դրանք ապահովվում էին պետական պատվերներով, իրացվող արտադրանքի ավելի բարձր գներով և այլ արտոնություններով։ Կատաղի մրցակցության հետևանքով սնանկանում էին միջին և մանր բուրժուազիայի ձեռնարկությունները։ Այստեղ մեծ դեր էր խաղում չկազմակերպված ապրանքարտադրողների, գյուղացիների, արհեստավորների և մանր առևտրականների ապրանքների գների անկումը, ինչպես նաև հարկերի մեծացումը։

Արդյունաբերական ճգնաժամը Ֆրանսիայում միահյուսվեց ագրարային հետ։ Գյուղատնտեսության ծանր վիճակի մասին վկայում էր 1934 թ., 1929—1930 թթ. համեմատությամբ, երկրագործության եկամտաբերության անկումն ավելի քան 50 տոկոսով։ Ճգնաժամի տարիներին իմպերիալիստական երկրների միջև տեղի էր ունենում շուկաների համար մղվող կատաղի պայքար։ Ֆրանսիայի արտաքին առևտուրը, 1929 թ. համեմատությամբ, կրճատվեց ավելի քան 2 անգամ։ Արտաքին շուկաներում ֆրանսիական բուրժուազիայի դիրքերի թուլացումը նրան մղում էր առևտրի ուժեղացմանն ու կապիտալների արտահանմանը դեպի իր գաղութները։ Միջին և մանր բուրժուազիայի քայքայումը տնտեսական ճգնաժամի տարիներին ստեղծեց օբյեկտիվ պայմաններ, որոնք նպաստեցին նրա հեռացմանը ֆինանսական օլիգարխիայից։

Տնտեսական ճգնաժամի ժամանակ բանվոր դասակարգի դրությունը ծայրահեղ չափով վատացավ։ Արտադրության կրճատումը հասցնում էր բանվորների մասսայական արձակմանը։ Ֆրանսիայում հաշվվում էր մոտ 2,3 մլն լիովին գործազուրկ, նրանց մեծամասնությունը ոչ մի նպաստ չէր ստանում։ 1934 թ. վերջերին արդյունաբերական բանվորների 53 տոկոսն աշխատում էր ոչ լրիվ շաբաթվա ընթացքում։ Ամենուրեք կրճատվում էր աշխատավարձը (1934 թ., մինչճգնաժամային մակարդակի համեմատությամբ, այն ընկավ 24 տոկոսով, իսկ ըստ բանվորների առանձին կատեգորիաների՝ 30 տոկոսով)։ 8-ժամյա աշխատանքային օրվա օրենքը մշտապես խախտվում էր, աշխատանքային օրն ավելացավ մինչև 9—10 ժամի, իսկ երբեմն մինչև 12—15 ժամի։ Պրոլետարիատի կենսամակարդակը զգալիորեն ընկավ։ Շատ բանվորներ և նրանց ընտանիքներ օրվա ընթացքում սնվում էին միայն մեկ անգամ։ Ժո-

ղովրդական զանգվածների ծանր դրությունը ճգնաժամի տարիներին առաջ բերեց դասակարգային պայքարի շեշտակի սրում։

Աջ կառավարությունների ներքին և արտաքին քաղաքականությունը 1930—1932 թթ.

1929 թ. հոկտեմբերից մինչև 1932 թ. հունիս որոշ ընդմիջումով իշխանության գլուխ էին կանգնած աջ կուսակցությունների ներկայացուցիչները։ Աջ կառավարությունները վարում էին աշխատավորության լայն խավերի դեմ հարձակման քաղաքականություն։ Կաբինետների անընդհատ փոփոխությունը (1929-ից մինչև 1932 թ. փոխվեց ութ կաբինետ) չփոխեց աջերի ռեակցիոն քաղաքականության ընդհանուր ուղղությունը։ Այդ ժամանակ աջերի ամենաաչքի ընկնող գործիչներից մեկը Ա. Տարդիեն էր։ Նա պատկանում էր բուրժուական Ֆրանսիայի բարձրագույն շրջաններին, դիկտատորական ուժեղ իշխանության կողմնակից էր, Սովետական Միության բացահայտ հակառակորդ։ Ա. Տարդիեի կառավարությունը նպաստում էր երկրի ռազմականացմանը, շարունակում սպառազինությունների մրցավազքը (նրա ժամանակ Ֆրանսիայի ռազմական ծախսերն աճեցին գրեթե 2 անգամ)։ Նա եղավ կոմունիստական կուսակցության դեմ բռնությունների կազմակերպիչը։

1930 թ. Տարդիեի կառավարությունն ստիպված էր հրաժարական տալ, քանի որ նրա արդարադատության մինիստրը խառնված էր եղել անվայել ֆինանսական մեքենայությունների մեջ։ Շուտով իշխանությունն անցավ մի այլ ռեակցիոնների, ծախու գործամոլ և սոցիալիստական շարժման ռենեգատ Պիեռ Լավալի կառավարության ձեռքը։ Լինելով Դիժոնից եկած «գռոշի արժեք ունեցող դաստուսյց», որը հետագայում դարձավ միլիոնատեր, Լավալն ամեն կերպ հովանավորում էր ֆաշիստներին և պայքարում պրոլետարիատի կազմակերպությունների դեմ։ Այն ժամանակ, երբ մոնոպոլիստական բուրժուազիան միլիարդների դրամական օժանդակություն էր ստանում, անց էր կացվում բյուջետային ծախսերի «տնտեսում», աշխատավորների հաշվին մեծացվում էին ուղղակի և անուղղակի հարկերը, կրճատվում էր աշխատավարձը։ Միջին և մանր բուրժուազիայի քայքայումը դժգոհություն առաջացրեց ռադիկալ-սոցիալիստների կուսակցության շարքերում, որի ղեկավարությունն աստիճանաբար օպոզիցիայի անցավ աջերի քաղաքականության նկատմամբ, հատկապես 1932 թ. պառլամենտական ընտրությունների մոտեցման կապակցությամբ։

1930—1932 թթ. աջերի կառավարությունների արտաքին քաղաքականության վրա, որն անց էր կացվում Եվրոպայում Ֆրանսիայի իմպերիալիստական դիրքերի թուլացման պայմաններում, ազդում էր Յունգի պլանի ուժի մեջ մտնելը, պլան, ըստ որի դաշնակից զորքերը դուրս էին բերվում գերմանական մերձհռենոսյան շրջաններից և Գերմանիան ստանում էր ռեպարացիոն մուծումները հետաձգելու իրավունք։ Նա չհապաղեց օգտվել այդ իրավունքից, որը առավել հիվանդագին հարվածեց Ֆրանսիային։ Հետո դադարեցվեց ռեպարացիաների մուծումը։

Բանվորական և ազգային-ազատագրական շարժումը 1930—1932 թթ.

Տնտեսական ճգնաժամի առաջին տարիներին ՖԿԿ-ն շարունակում էր իր գործունեությունը չափազանց բարդ պայմաններում։ 1930 թ. նա դեռ չէր հասցրել ուշքի գալ Բարբե-Սելորի աղանդավորական գործունեության հետևանքներից, որոնք հանդես էին գալիս տրոցկիստ Դորիոյի հետ միասին։

Կուսակցությունը համեմատաբար փոքրաթիվ էր (մոտ 30 հազ.), բավարար կապեր չուներ մասսաների հետ։ Բայց ՖԿԿ-ում կար կոմունիստների մարքսիստական-լենինյան համախմբված կորիզ, ուր գտնվում էին ֆրանսիական բանվորական շարժման փառապանծ ղեկավարները՝ Մ. Թորեզը, Ժ. Դյուկլոն, Մ. Կաշենը, Բ. Ֆրաշոնը, Պ. Վայյան-Կուտյուրիեն և ուրիշներ։ Կենտկոմի՝ 1930 թ. հուլիսին կայացած պլենումում գլխավոր քարտուղար ընտրվեց Մ. Թորեզը, նախկին հանքագործ մի բանվոր, տաղանդավոր հռետոր, խոշոր կազմակերպիչ ու տեսաբան։ Հուլիսյան պլենումից հետո կոմկուսի գործունեության մեջ շրջադարձ սկսվեց։ Մասսաներին իր կողմը գրավելու համար ՖԿԿ-ն առաջին պլան մղեց պայքարը հանուն աշխատավորների անմիջական պահանջների, պայքարն ընդդեմ իմպերիալիստական պատերազմի վտանգի, ի պաշտպանություն Սովետական Միության։ Հաշվի առնելով արհմիությունների գործունեության վիթխարի նշանակությունը, ՖԿԿ-ն կոմունիստների առջև խնդիր դրեց պայքարել բանվորների արհմիութենական միասնության համար։ Մասսաների համար պայքարի գործում կարևոր նշանակություն ուներ ՖԿԿ-ի և ԱՈՒԿԿ-ի աշխատանքը գործազուրկների շրջանում։

Կոմկուսն աշխատում էր սոցիալիստ բանվորներին, ռեֆորմիստական ԱԸԿ-ի անդամներին և չկազմակերպված բանվորներին միավորել բուրժուազիայի հարձակման դեմ պայքարելու համար, այսինքն՝ անց էր կացնում միասնական ճակատի տակտիկա «ներքևից»։ Սակայն գտնելով, որ սոցիալիստական կուսակցության պարագլուխները բուրժուազիայի գլխավոր հենարանն են, կոմկուսը հարվածն ուղղում էր սոցիալիստական կուսակցության ղեկավարության դեմ, որը խանգարում էր միասնական ճակատի իրականացմանը։

Բանվոր դասակարգի միասնության համար մղված պայքարի գործնական փորձը ցույց տվեց սոցիալիստների հետ միասնության հրատապ անհրաժեշտությունը ոչ միայն «ներքևից», այլև «վերևից»։ 1932 թ. դեկտեմբերին Մ. Թորեզը հայտարարեց. «Պրոլետարիատը պահանջում է միասնություն։ Մենք պայքարում ենք հանուն միասնական ԱԸԿ-ի վերականգնման, հանուն բուրժուազիայի դեմ միավորված բանվոր դասակարգի, հանուն միասնական արհմիության, հանուն պրոլետարիատի միասնական կուսակցության»։ Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ ժամանակ սոցիալիստական կուսակցությունը։ 30-ական թվականներին ՍՖԻՕ-ն հաշվում էր մոտ 130 հազ. անդամ։ Նրա ետևից գնում էր ռեֆորմիստական ԱԸԿ արհմիութենական կազմակերպությունը, երիտասարդական և կանանց կազմակերպությունները. 1932 թ. պառլամենտական ընտրություններում նրա օգտին քվեարկեց մոտ 2 մլն մարդ։ Սոցիալիստական կուսակցությունն իրենից ներկայացնում էր մանր բուրժուազիայի բլոկ՝ բանվորների հետ. նրա պարագլուխները՝ Լ. Բլյումը, Պ. Ֆորը, Պ. Ռենոդելը և մյուսները գտնվում էին մանրբուրժուական ռեֆորմիստական դաղափարախոսության ազդեցության տակ։ Երբ վրա հասավ տնտեսական ճգնաժամը, նրանք պառլամենտում հանդես եկան ֆրանսիական մոնոպոլիաների համար բարենպաստ պայմաններ ապահովելու օգտին։ ՍՖԻՕ-յի ղեկավարությունը տնտեսական ճգնաժամի տարիներին վճռականորեն հանդես էր գալիս ընդդեմ գործադուլների կազմակերպման։ Սոցիալիստական լրագրերում խոսվում էր «սոցիալական հաշտության» անհրաժեշտության մասին՝ հանուն «ընդհանուր շահերի»։ Բայց սոցիալիստների տեսական դոգմաները, նրանց պրակտիկ գործունեությունը հակասության մեջ էին ընկնում կապիտալիստական հասարակության մեջ բանվոր դասակարգի ռեալ դրության հետ։

Դա սոցիալիստների կուսակցությանը լուրջ ճգնաժամի հասցրեց։ Ճգնաժամն արտահայտվեց կուսակցության մեջ եղած տարբեր հոսանքների և ֆրակցիաների միջև սուր պայքարի զարգացման, շարքային անդամների և երբեմն ամբողջ կազմակերպությունների՝ ղեկավար օրգաններին չհնազանդվելու մեջ։

Արհմիությունները 30-ական թվականներին սակավաթիվ էին ու տարանջատ։ Վարձու աշխատանքով զբաղված 11 մլն մարդուց միայն մեկ միլիոնից մի փոքրիկ ավել մարդ էր մտնում արհմիութենական կազմակերպությունների մեջ։ 1932 թ. ԱԸԿ-ն հաշվվում էր 650 հազ. անդամ, ԱՈՒԸԿ-ը՝ 250—260 հազ., քրիստոնեական արհմիությունները՝ 200 հազ.։

Բանվորների ծանր դրությունը ճգնաժամի տարիներին, բուրժուազիայի անընդհատ հարձակումը պրոլետարիատին մղում էին գործադուլային պայքարի։ Գործադուլների կազմակերպման մեջ վճռական դեր էին խաղում կոմունիստները։ 1930—1931 թթ. Ֆրանսիայում գործադուլ արեց 1.200.000 մարդ։

Ունիտար արհմիությունների առաջարկությամբ արդյունաբերության տարբեր ճյուղերի գծով գումարվում էին բանվորական համագումարներ աշխատավորության պահանջները քննարկելու համար։ Բանվորական համագումարները նպաստում էին «ներքևից» միասնական ճակատի տակտիկան անցկացնելու համար, քանի որ դրանցում մասնակցում էին կոմունիստները, սոցիալիստները, ԱՈՒԸԿ-ի անդամները, ռեֆորմիստական արհմիությունների անդամները և պրոլետարիատի չկազմակերպված խավերը։

Առաջին խոշոր գործադուլները, որոնց ընթացքում իրականացվեց բանվորների միասնական ճակատ, տեղի ունեցան հյուսիսի հանքափորների և տեքստիլագործների շրջանում։ Երկու գործադուլներն էլ աչքի ընկան բանվորների բարձր կազմակերպվածությամբ, քաղաքական գիտակցականությամբ, ուղեկցվում էին բարիկադային մարտերով։ Գործադուլների հետևանքով ուժեղացավ ԱՈՒԸԿ-ի ազդեցությունը, շատերն ընդունվեցին ՖԿԿ և կոմունիստական երիտասարդական միության մեջ։ Գործադուլների կարևոր պահը գործազուրկների ներգրավումն էր շարժման մեջ։ 1932 թ. գործադուլները շարունակվում էին, դրանք կրում էին ոչ միայն պաշտպանական (պայքար աշխատավարձի նվազեցման դեմ), այլև մի շարք դեպքերում նաև հարձակողական բնույթ։ Բանվորական շարժման ազդեցության տակ կապիտալիստներն ստիպված էին երբեմն զիջումների դիմել, կատարել բանվորների պահանջները։

Տնտեսական ճգնաժամի տարիներին ուժեղացավ ֆրանսիական գաղութների ժողովուրդների պայքարն իրենց ազատագրման համար։ Ֆրանսիական կապիտալների ներթափանցումը դեպի գաղութներ, ճգնաժամը և գաղութների բնակչության ծանր վիճակը հասցրին ազգային-ազատագրական շարժման վերելքին Մարոկկոյում, Հնդկաչինում, Ալժիրում և Սիրիայում։ Ի պաշտպանություն գաղութների ժողովուրդների պահանջների հանդես էին գալիս ֆրանսիական կոմունիստները։ Հասարակայնության վիթխարի ուշադրությանն արժանացան Մ. Թորեզի մերկացնող զայրալից ելույթները դեպուտատների պալատում։ Ֆրանսիական բանվորների գործադուլներն ընդդեմ մոնոպոլիստական բուրժուազիայի հարձակման և ազգային-ազատագրական շարժումը վկայում էին դասակարգային պայքարի սրման մասին՝ Ֆրանսիայում և նրա գաղութներում։

1932 թ. ընտրությունները։ «Ձախ կարտելի» ներքին և արտաքին քաղաքականությունը

1932 թ. եղավ տնտեսական ճգնաժամի հետագա խորացման, աշխատավորության դրության վատացման, գործադուլային պայքարի վերելքի և քաղաքական դրության սրման տարի։

Ա. Տարդիեն՝ մինիստրների խորհրդի նախագահը, ընտրական կամպանիան սկսեց՝ Բյուլիե դահլիճում հանդես գալով աջերի ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքների պաշտպանությամբ։ Նա պնդում էր, որ Ֆրանսիան ավելի նվազ չափով կտուժի ճգնաժամից, եթե հավանություն տա իր «ազգային վերակառուցման» պլանին։ Տարդիեն բուրժուազիայի բոլոր խավերին կոչ արեց «համակենտրոնանալ» ընդդեմ սոցիալիզմի, հանուն գործադիր իշխանության ուժեղացման։ Նա հատուկ ուշադրություն էր դարձնում ռադիկալ-սոցիալիստների կուսակցությանն իր կողմը գրավելուն։ Սակայն ռադիկալները, որոնց գլխավորում էր իր դեմոկրատական հայացքներով հայտնի Է. Էրիոն, մերժեցին համագործակցությունն աջերի հետ։ Էրիոն հայտարարեց. «Մենք ռեակցիայի պահապան շները չենք լինի ընդդեմ սոցիալիզմի»։ Արտահայտելով մանր և մասամբ միջին բուրժուազիայի դժգոհությունը, որը զայրացած էր միլիարդավոր պետական դրամական օժանդակություն ստացող բանկային ու արդյունաբերական խոշոր գործամոլների դեմ, Էրիոն խոսում էր «մեր կուսակցության մեծագույն զայրույթի» մասին ընդդեմ առանց պառլամենտի իրագեկության տրամադրվող խոշոր դրամական օժանդակությունների։ Ընտրությունների նախօրեին ռադիկալ-սոցիալիստները «ձախ կարտել» կազմեցին մանրբուրժուական ձախ խմբավորումների հետ։ «Ձախ կարտելը» հանդես եկավ հետևյալ ծրագրով՝ միջին խավերից վերցվող հարկերի նվազեցում, պայքար ընդդեմ աժիոտաժի և սպեկուլյացիայի, սոցիալական ապահովության սիստեմի ընդարձակում։ Արտաքին քաղաքականության ասպարեզում նրանք խոստանում էին հասնել Վերսալյան հաշտության պահպանմանը և նպաստել Ազգերի լիգայի հեղինակության ամրապնդմանը։

Սոցիալիստական կուսակցությունը ռադիկալներին առաջարկեց ընտրություններին հանդես գալ համատեղ, հետևյալ պահանջների հիման վրա՝ ռազմական ծախսերի անհապաղ կրճատում մինչև 1920 թ. մակարդակը, բյուջետային դեֆիցիտի վերացում առանց դպրոցների, թոշակների, սոցիալական ապահովության, պետական հիմնարկների ծառայողների աշխատավարձի վրա կատարվող ծախսերի կրճատման, ինչպես նաև մասնավոր կոմպանիաների, սոցիալական ապահովության և երկաթուղիների ազգայնացման իրականացում։ Ռադիկալները մերժեցին այդ առաջարկությունները։ Ֆրանսիական կոմունիստական կուսակցությունն ընտրություններին հանդես եկավ իր ընտրական ծրագրով՝ 7-ժամյա աշխատանքային օր առանց աշխատավարձի կրճատման, գործազրկության համար սոցիալական ապահովություն պետության և ձեռնարկատերերի հաշվին, պետության օգնություն աշխատավոր գյուղացիությանը, ընդհանուր քաղաքական ներում և ֆրանսիական ու օտարերկրյա բանվորների իրավունքների հավասարություն, դեմոկրատական ազատություններ և խաղաղության պաշտպանություն։ Բուրժուական կուսակցություններն ու աջ սոցիալիստները զրպարտչական կամպանիա էին տանում ընդդեմ կոմկուսի և նրա թեկնածուների։ Քվեարկության առաջին տուրի արդյունքները ցույց տվեցին, որ «ձախ կարտելը» հաղթանակի մեծ շանսեր ունի։ Այդ ժամանակ 1932 թ. մայիսի 6-ին, երկրորդ տուրի նախօրյակին ֆաշիստական տարրերը կազմակերպեցին պրեզիդենտ Պ. Դումերի սպանությունը սպիտակգվարդիա-

կան Գորգուլովի միջոցով։ Այդ իրադարձությունն օգտագործելով հակասովետական ու հակակոմունիստական զրպարտությունների համար, ֆաշիստները հույս ունեին ընտրողներին հարկադրել պաշտպանելու աջ կուսակցություններին։ Ֆաշիստների հաշիվները չարդարացան։ Պրովոկացիան հակահարվածի հանդիպեց կոմունիստների և բոլոր առաջադիմական տարրերի կողմից։ Քվեարկության երկրորդ տուրում ձախ ուժերը միավորվեցին, տեղի ունեցավ բնակչության մանրբուրժուական տարրերի, միջին բուրժուազիայի մի մասի և բանվոր դասակարգի համախմբում ընդդեմ աջ կուսակցությունների։ Ընտրություններին հաղթանակ տարան ձախերը։ Կառավարության ղեկավար դարձավ Է. Էրիոն։

1932 թ. հուլիսին Էրիոյի կառավարությունը բուռն վիճաբանություններից հետո ավելի քան 2 մլրդ ֆրանկով նվազեցրեց ռազմական ծախսերը, բայց վարչական ծախսերի միաժամանակյա կրճատումը վատացրեց պետական մանրը ծառայողների դրությունը։

1932 թ. սեպտեմբերին օրենք ընդունվեց պետական մի շարք փոխառությունների գծով տոկոսների իջեցման մասին։ Դա հարվածեց մանր ռանտիեներին, նրանցից շատերը սնանկացան, իսկ ֆինանսական մագնատներն այդ գործողության ընթացքում շահեցին։ Բանվորների ու ծառայողների կենսամակարդակը նվազում էր գործազրկության և աշխատավարձի վրա շարունակվող հարձակման հետևանքով։

Արտաքին քաղաքականության ասպարեզում Էրիոյի կառավարության առավել նշանակալից քայլը եղավ չհարձակման պակտի կնքումը Սովետական Միության հետ (1932 թ. նոյեմբեր)։ Ընդհանուր առմամբ «ձախ կարտելի» կառավարության (1932 թ. հունիսից մինչև 1934 թ. փետրվար) քաղաքականությունը, որը պաշտպանություն էր գտնում սոցիալիստների կողմից, չթեթևացրեց բանվորների և միջին խավերի դրությունը։ Ֆինանսների առողջացման, աշխատավորության դրության բարելավման մասին խոստումները չկատարվեցին, որից էլ ձգտում էին օգտվել ֆաշիստական տարրերը։

Ֆրանսիական ֆաշիզմի էությունն ու առանձնահատկությունները

1933—1934 թթ. Ֆրանսիայի վրա կախվեց ֆաշիստական հեղաշրջման սպառնալիքը։ Ֆաշիստները, որոնք թևավորվել էին Գերմանիայում Հիտլերի ունեցած հաջողություններից, ուժեղացրին իշխանության գավթման նախապատրաստությունը։ Ֆրանսիայում, ինչպես և Գերմանիայում ու Իտալիայում, ֆաշիզմի դասակարգային հիմքը 200 ընտանիքներին պատկանող մոնոպոլիստական բուրժուազիան էր։

Մոնոպոլիստական բուրժուազիայի առավել խոշոր միավորումները՝ «Կոմիտե դը Ֆորժը», ածխի արդյունաբերության կոմիտեն, Շնայդեր-Կրեզո ռազմական կոնցեռնը և մյուսները միլիոնավոր ֆրանկի դրամական օժանդակություն էին ցույց տալիս ֆաշիստական կազմակերպություններին՝ «Մարտական խաչերին», «Ֆրանսիստներին», «Հայրենասիրական երիտասարդությունը»։ Ֆինանսական օլիգարխիայի ոչ քիչ ներկայացուցիչներ ֆաշիստական շարժման անմիջական ու ակտիվ մասնակիցներ էին. դրանց թվում էին Ֆրանսուա դը Վանդելը՝ «Կոմիտե դը Ֆորժի» նախագահը, ֆրանսիական բանկի խնամակալը, Փարիզյան միացյալ բանկի դիրեկտորներից մեկը, Էռնեստ Մերսիեն՝ էլեկտրական արդյունաբերության արքան, Փարիզ—Նիդեռլանդական բանկի վարչության անդամը և ուրիշներ։ «Մարտական խաչերը» գլխավորում էր գաղութային զորքերի նախկին գնդապետ կոմս դը լյա Ռոկը՝ Ընդհանուր էլեկտրական կոմպանիայի դիրեկտորը։

Ֆաշիստներին ակտիվ օժանդակություն էին ցույց տալիս խոշոր հողատերերը, աղնվականությունը, որը սերտորեն կապված էր կղերական շրջանների հետ։ Գյուղացիությանը մասսայականորեն ներգրավելու համար ֆաշիստները կազմակերպեցին «Գործողության գյուղացիական կոմիտեներ» և «Գյուղացիական ճակատ» (1934)։ Քայքայվող քաղաքային մանր և միջին բուրժուազիան բարենպաստ հող էր ֆաշիզմի տարածման համար։ Ֆաշիստները թափանցեցին «Նախկին ճակատայինների ազգային միության» ղեկավարության և «Հարկատուների ազգային ֆեդերացիայի» մեջ։ Ֆաշիստական կազմակերպությունների մեջ մտնում էին մեծ թվով զինվորականներ, այդ թվում գլխավոր շտաբի սպաներ։ «Մարտական խաչեր» կազմակերպությունը սերտ կապեր ուներ ոստիկանության և կառավարական շրջանների հետ։ Տարդիեի և Լավալի կառավարությունները պետական գաղտնի ֆոնդերից դրամական օժանդակություն էին ցույց տալիս ֆաշիստների ղեկավարներին։

Ֆրանսիական ֆաշիստների քաղաքական գաղափարներն ուղղված էին պրոլետարիատի և նրա կոմունիստական կուսակցության հեղափոխական պայքարի դեմ, բուրժուա-դեմոկրատական ազատությունների և հիմնարկությունների դեմ։ Ֆաշիստները միասնական ծրագիր չունեին, բայց նրանց բոլոր խմբավորումները պահանջում էին ուժեղ իշխանության հաստատում և պառլամենտական ռեժիմի կոռուպցիան (որն իսկապես ցնցող չափերի էր հասել) դեմագոգիկ կերպով օգտագործում էին գոյություն ունեցող քաղաքական կարգերի վրա հարձակումներ կատարելու համար։ Այսպես, օրինակ, աջերի աջի ընկնող գաղափարախոս Ա. Տարդիեն, որի հայացքները լայն արձագանք էին գտնում Ֆրանսիայի ֆաշիստների շրջանում, Ֆրանսիայի բոլոր դժվարությունները բացատրում էր կենտրոնական պետական իշխանության թուլությամբ և պառլամենտական սիստեմի անկայունությամբ։ Որպես դիկտատուրայի հաստատման առաջին քայլ նա առաջարկում էր սահմանադրության վերանայում՝ գործադիր իշխանության իրավունքների մեծացման իմաստով։ «Մարտական խաչերի» ծրագիրն, ընդհակառակը, ենթադրում էր գոյություն ունեցող կարգերի բռնի փոփոխություն։ Հանդես գալով ծայրահեղ ազգայնականության դիրքերից, դը լյա Ռոկը ժխտում էր դասակարգերի և դասակարգային պայքարի գոյությունը, որը, նրա կարծիքով, հրահրվում էր մարքսիստների կողմից։ Նա պահանջում էր ուժեղ իշխանության հաստատում, քաղաքական կուսակցությունների վերացում։ Բանվորների համար «Մարտական խաչերի» սոցիալական ծրագիրը դեմագոգիկ բնույթ էր կրում՝ սոցիալական ապահովության ընդլայնում, հոսպիտալներ, անվճար սնունդ գործազուրկների համար, ակումբներ երիտասարդության համար և այլն։ Գործնականում բանվորական և գործադուլային շարժմանը հայտարարվում էր անողոք պայքար, ներառյալ զենքի գործադրումը։

Չնայած ֆրանսիական ֆաշիստների հարվածային խոշոր ջոկատների և կազմակերպությունների առկայությանը, նրանց շարժումը զգալիորեն ավելի թույլ էր, քան Գերմանիայում կամ Իտալիայում։ Դա բացատրվում է Ֆրանսիայի տնտեսական ու քաղաքական զարգացման պատմական պայմաններով։ Ֆրանսիական իմպերիալիստների տրամադրության տակ էին գտնվում իրենց գաղութային կայսրության վիթխարի տերիտորիան և ռեսուրսները։ Տնտեսական ճգնաժամի ծախսերի զգալի մասը դրվում էր գաղութային ժողովուրդների վրա։ Ֆրանսիական իմպերիալիզմն առաջին համաշխարհային պատերազմից հետո այնքան չթուլացավ, որքան գերմանականը, միջին դասակարգերը և մանր բուրժուազիան չտեսան այնպիսի կոպիտ սեփականազրկում,

ինչպես Գերմանիայում։ Բացի այդ, Ֆրանսիան առաջին համաշխարհային պատերազմից դուրս եկավ որպես հաղթող և այդ պատճառով այնտեղ այնքան էլ բարենպաստ հող չկար շովինիստական պրոպագանդայի համար։ Ֆրանսիական ֆաշիզմը պառակտված էր տարբեր խմբերի, որոնք հաճախ մրցակցում էին միմյանց հետ։ Ի հակադրություն գերմանական ֆաշիստների, որոնք պրոպագանդում էին խզում բուրժուական հին կուսակցությունների հետ, ֆրանսիական ֆաշիստական խմբավորումների մեծ մասը բացահայտ կերպով հենվում էր աջ կուսակցությունների և կաթոլիկ եկեղեցու վրա։ Մասսաներին վանում էր նաև այն, որ ֆաշիստական ղեկավարության մեջ բացահայտորեն մասնակցում էին ֆինանսական օլիգարխիայի ներկայացուցիչները (Մերսիե, դը Վանդել) կամ ազնվականական շրջաններից ելածները (դը լյա Ռոկ)։ Ֆաշիստների ազդեցությունը զգալիորեն թուլացնում էին ֆրանսիական ժողովրդական զանգվածների, առաջին հերթին բանվոր դասակարգի դարավոր կայուն հեղափոխական, հանրապետական և դեմոկրատական ավանդույթները։

Ֆաշիզմի ազդեցության թուլացման գործում մեծ նշանակություն ունեցավ կոմունիստների գլխավորությամբ պրոլետարիատի հակաֆաշիստական պայքարը, որը նպաստեց ֆինանսական օլիգարխիայից քաղաքային մանր բուրժուազիայի, գյուղացիության և միջին բուրժուազիայի հեռանալուն։

ՖԿԿ-ի պայքարը ֆաշիզմի դեմ, հանուն մասսաների համախմբման։ Ֆաշիստական խռովության փորձ

Ֆաշիստական վտանգի աճը Ֆրանսիայում և նրա սահմաններից դուրս հատուկ սրությամբ դրեց միասնական հակաֆաշիստական ճակատի հարցը։ 1932 թ. Հ. Բարբյուսի և Ռ. Ռոլանի նախաձեռնությամբ Ամստերդամում կայացավ պատերազմի և ֆաշիզմի դեմ պայքարի միջազգային կոնգրես։ ՖԿԿ-ն ակտիվորեն մասնակցեց Ամստերդամի կոնգրեսի կազմակերպմանը, աշխատելով նրան մասնակից դարձնել սոցիալիստներին ու դեմոկրատներին։

1933 թ. հունիսին Փարիզում, Պլեյել դահլիճում բացվեց մի նոր միջազգային հակաֆաշիստական կոնգրես, որին մասնակցում էին բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչները և ֆրանսիական մտավորականության ծաղիկը՝ Հ. Բարբյուսի և Ռ. Ռոլանի գլխավորությամբ։ Կոնգրեսի կոչով ամբողջ երկրով մեկ սկսեցին ստեղծվել ֆաշիզմի և պատերազմի դեմ պայքարի կոմիտեներ. ծնունդ առավ «Ամստերդամ—Պլեյել շարժումը»։ Հակաֆաշիստական կոմիտեների թիվը հատկապես աճեց ռայխստագի պրովոկացիոն հրդեհումից և Լայպցիգի դատավարությունից հետո։ Նրան մասնակցում էին առաջադեմ մարդիկ, անկախ կուսակցական պատկանելությունից և դրդումներից։ Հակաֆաշիստական շարժումն ուղեկցվում էր բանվոր դասակարգի գործադուլային պայքարով։ 1933 թ. առավել խոշոր էին Փարիզում Սիտրոենի գործարաններում և Ստրասբուրգում տեղի ունեցած գործադուլները։ Կոմկուսը և ԱՈՒԲԿ-ն կազմակերպեցին գործադուրկների շարժում, գլխավորեցին պետական մանր պաշտոնյաների պայքարն ընդդեմ նրանց աշխատավարձի նվազեցման, կազմակերպեցին պատերազմի հաշմանդամների դիմադրությունն ընդդեմ նրանց նպաստների և թոշակների կրճատման։ ՖԿԿ-ն վճռական պայքար էր մղում ի պաշտպանություն աշխատավոր գյուղացիների, պաշտպանելով նրանց պահանջները, բողոքելով հացահատիկի սպեկուլյացիայի և պարտքի դիմաց գյուղացիների ունեցվածքի վաճառման դեմ։ Կոմունիստական կուսակցությունը պաշտպանում էր ֆրանսիական գաղութների աշխատավորության ելույթները։

1934 թ. հունվարին ներքին իրադրության լարվածությունը լրացվեց արտաքին քաղաքական բարդություններով։ Ֆաշիստական Գերմանիան Ազգերի լիգայից ցուցադրաբար դուրս գալուց հետո անարգել զինվում էր։ Ֆրանսիայի պրոհիտլերյան ռեակցիոն շրջանները պահանջում էին Գերմանիայի հետ մերձեցում։ Բեռլինում սկսվեցին Հիտլերի բանակցությունները ֆրանսիական դեսպան Ֆրանսուա Պոնսեի հետ։ Գերմանական ֆաշիստները պահանջում էին անհապաղ գերմանացիներին հանձնել Սաարի մարզը։ Այդ ժամանակ Ֆրանսիայում բռնկվեց մի սկանդալ, որը կապված էր սպեկուլյանտ և արկածախնդիր, սպիտակ վտարանդիական Ստավիսկու անվան հետ։ Բորսային գործարքների մի շայկա կազմակերպելով, Ստավիսկին կեղծ արժեքներ ունեցող ակցիաներ բաց թողեց։ Նա իր սպեկուլյացիան կարողացավ իրականացնել լոկ այն պատճառով, որ նրան հովանավորում էին մի քանի ծախու մինիստրներ, սենատորներ, դեպուտատներ, դատական պաշտոնյաներ, խոշոր ժուռնալիստներ։ Ստավիսկու մերկացումից հետո ժողովրդական լայն զանգվածների աչքերի առջև ներկայացավ պառլամենտական ռեժիմի, բուրժուական մամուլի, կառավարության անդամների, ընդհուպ մինչև բարձրագույն դատական մարմինների ծախվածության նողկալի պատկերը։ Կառավարող շրջանների դեմ ուղղված մասսաների զայրույթը ֆաշիստները որոշեցին օգտագործել իշխանությունը զավթելու համար։

1934 թ. հունվարին նրանք «Կորչե՜ն գողերը», «Վռնդեցե՜ք դեպուտատներին» լոզունգներով կազմակերպեցին փողոցային մի շարք ցույցեր։ Ֆաշիստները պահանջում էին աջ ռադիկալ Շոթանի կառավարության անհապաղ հրաժարականը, որի երեք մինիստրները և ինքը՝ պրեմիեր մինիստրը մերկացվել էին Ստավիսկու սպեկուլյացիաներին ունեցած մասնակցությամբ։ Նրանք կոչ էին անում բռնությամբ տապալել «կեղտի և խայտառակության ռեժիմը»։ Ֆաշիստական բանդաները հրկիզում էին թերթերի կրպակները, արմատախիլ անում ծառերը, կոտրում նստարանները, հարձակվում ոստիկանների վրա։ Ստեղծված իրադրությունը ՖԿԿ-ի առջև խնդիր դրեց պայքար կազմակերպել ֆաշիզմի հարձակման դեմ։

1934 թ. հունվարին կայացած Կենտկոմի պլենումում Մ. Թորեզը բացահայտեց Ստավիսկու սկանդալի քաղաքական նշանակությունը և ընդգծեց, որ բուրժուազիան կարող է այն օգտագործել երկիրը ֆաշիստականացնելու համար։ Կուսակցության առջև խնդիր էր դրվում ներքևից միասնական ճակատ անցկացնելու միջոցով նվաճել մասսաներին ֆաշիզմի դեմ պայքարելու համար։ Սակայն կոմկուսը չափազանցնում էր հեղափոխական վերելքը երկրում և որպես հիմնական լոզունգ առաջադրում էր «Իշխանությունը սովետներին» պահանջը, թեև դրա համար պայմանները դեռ չէին ձևավորվել։ Պլենումի որոշումներում մերժվում էր ՍՖԻՈ-ի ղեկավարության հետ որևէ համաձայնության հնարավորությունը։ Դա կապված էր այն բանի հետ, որ սոցիալիստների պարագլուխները հանդես էին գալիս Շոթանի կառավարության պաշտպանությամբ։

Ֆաշիստական ելույթների եռուն շրջանում Շոթանի կառավարությունը ստիպված էր հրաժարական տալ, և կաբինետի կազմումը հանձնարարվեց ռադիկալ Դալադիեին։ Ֆաշիստները ժողովրդին ուղղված կոչ արձակեցին, որտեղ պահանջում էին վերանայել սահմանադրությունը, ցրել պառլամենտը և հրաժարեցնել Դալադիեին։ Նրանք հռչակեցին «հայրենիքը վտանգի մեջ է» լոզունգը և մասսաներին փողոցային ցույցերի, «ազգային հեղափոխության», «իշխանությունը զավթելու» կոչ արեցին։

1934 թ. փետրվարի 5-ին և 6-ին ֆաշիստները խռովություն կազմակեր-

պեցին, փորձելով զավթել պառլամենտն ու տապալել կառավարությունը։ Մոտ 50 հազար զինված ֆաշիստներ փորձում էին ճեղքել-անցնել դեպի Բուրբոնյան պալատը, ուր նիստեր էր անցկացնում դեպուտատների պալատը, բայց հանդիպեցին բանվորների դիմադրությանը։ Այդ բարդ պայմաններում կոմկուսը ճիշտ որոշեց, որ գլխավոր վտանգը ներկայացնում է ֆաշիզմը։ Փետրվարի 6-ին «Յումանիտեն» բանվոր դասակարգին ֆաշիզմի դեմ պայքարի կոչ արեց, բայց թերթի նույն համարում էլ առաջադրվում էր սխալ լոզունգ՝ «Կորչի՛ Դալադիեի կառավարությունը»։ Փետրվարի 7-ին Դալադիեի կառավարությունը, չնայած պառլամենտական մեծամասնությունը նրան վստահություն հայտնեց, հրաժարական տվեց։

Կարինետի կազմումը հանձնարարվեց ռեակցիոներ Գ. Դումերգին, որը նրա մեջ մտցրեց Ֆրանսիայի ֆաշիստականացման կողմնակիցներին՝ Տարդիեին, Լավալին ու Պետենին, և միաժամանակ նաև ռադիկալ-սոցիալիստների ներկայացուցիչներին։ Փարիզում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ լուրերը ֆաշիստների դեմ ուղղված խոշոր ցույցեր առաջացրին։ ՖԿԿ Կենտկոմը որոշեց փետրվարի 9-ին բողոքի հակաֆաշիստական մանիֆեստացիա անցկացնել ընդդեմ ֆաշիզմի և ՍՖԻՕ-ի ու ԱԸԿ-ի ղեկավարությանն առաջարկեց համատեղ հանդես գալ։ Փետրվարի 9-ին Փարիզում անցկացվեց հզոր ցույց, որն ուղեկցվեց ոստիկանության ու ժանդարմերիայի հետ տեղի ունեցած խոշոր ընդհարումներով։ Սպանվեց 6 բանվոր, վիրավորվեց 60 և ծեծի ենթարկվեց ավելի քան հազար մարդ։ Բանվորների ցույցն անցավ «Կորչի՛ ֆաշիզմը», «Հանո՛ւն գործողությունների միասնության» լոզունգներով։ Փարիզի պրոլետարիատի կատաղի մարտերը ցնցեցին ամբողջ Ֆրանսիան և ապահովեցին փետրվարի 12-ի ընդհանուր գործադուլն ու հակաֆաշիստական մանիֆեստացիան։ Կոմկուսը նախապատրաստական մեծ աշխատանք կատարեց ընդհանուր գործադուլի առթիվ։ Հակակոմունիստորեն տրամադրված ռեֆորմիստական պարագլուխները փորձում էին սահմանափակել նրա թափը։ ԱԸԿ-ի ղեկավար Ժուոն Դումերգին, որը նրան խնդրեց ետ վերցնել գործադուլի մասին կոչը, հայտարարեց, որ այն «կրելու է սոսկ խորհրդանշական ցույցի բնույթ»։ Իրականում ընդհանուր գործադուլն անցավ վիթխարի վերելքով և ստացավ ֆաշիզմի դեմ ուղղված մասսայական ելույթի բնույթ։ Նրան մասնակցեց մոտ 4 մլն 500 հազ. աշխատավոր. այն ընդգրկեց 300 քաղաք։ Գործադուլն անցավ քաղաքային մանր բուրժուազիայի և գյուղացիության աջակցությամբ։ Ի վերջո ֆաշիստները պարտություն կրեցին։

Բայց փետրվարյան օրերին բանվորների տարած հաղթանակը դեռևս չէր նշանակում ֆաշիստական վտանգի լիակատար վերացում։ Ֆաշիստների իշխանության գլուխ անցնելու սպառնալիքը մնում էր։ Մոնոպոլիստական բուրժուազիայի կառավարությունն իր մեջ ընդգրկում էր ֆաշիզմի ակտիվ կողմնակիցներին։ Պառլամենտից արտակարգ լիազորություններ ձեռք բերելով, նա հարձակման անցավ աշխատավորների դեմ։ 1934 թ. ապրիլ-մայիսին ընդունվեցին մի շարք դեկրետներ պետական ծառայողների ռոճիկի իջեցման, նախկին ճակատայինների թոշակների ու նպաստների կրճատման հաշվին պետական բյուջեի դեֆիցիտը նվազեցնելու վերաբերյալ։ Նա անցկացրեց «հարկային ռեֆորմ», որը նվազեցնում էր հարուստներից վերցվող հարկերը և 400 մլն ֆրանկով ավելացնում մանր առևտրականների ու աշխատավորների հարկերը։ Շարունակվում էր պետական միջոցների անընդհատ կողոպուտը հօգուտ մոնոպոլիաների, պետական դեֆիցիտն աճեց գրեթե 18 մլրդ ֆրանկով։

ՖԿԿ-ի և ՍՖԻՕ-ի միջև գործողությունների միասնության պակտի ստորագրումը

Փետրվարյան իրադարձություններն ուժեղ թափ հաղորդեցին միասնական ճակատի շարժմանը։ Ամենուրեք, ուր ծագում էր ֆաշիստների ելույթի վտանգ, ստեղծվում էին գործողությունների միասնության կոմիտեներ, որոնք կազմված էին կոմունիստներից, սոցիալիստներից և անկուսակցական բանվորներից։ 1934 թ. փետրվարից մինչև հունիս միայն Փարիզում տեղի ունեցան 930 միտինգ և ֆաշիզմի դեմ բողոքի փողոցային ցույց։ Երկրում բարենպաստ պայմաններ էին ստեղծվում բանվոր դասակարգի պառակտումը հաղթահարելու համար։ Սոցիալիստական կուսակցության համագումարներում, նրա մամուլում, ստորին կազմակերպություններում ոչ միայն կոչեր էին լսվում ՖԿԿ-ի հետ կոնտակտներն ուժեղացնելու մասին, այլև այդ կոնտակտներն արդեն իրականացվում էին գործնականում Ամստերդամ-պլեյելյան շարժման կոմիտեներում, միտինգների, ցույցերի ու գործադուլների ժամանակ, ֆաշիստական խռովության դեմ ուղղված և աշխատավորների անմիջական պահանջների իրականացման համար մղվող պայքարում։ Սոցիալիստական կուսակցության մեծամասնությունը դեռևս հետևում էր Լ. Բլյումին ու Պ. Ֆորին, որոնք բողոքում էին ֆաշիզմի դեմ, բայց չէին ցանկանում գործողությունների միասնություն կոմկուսի հետ։ Սակայն ՍՖԻՕ-ի ներսում Ժ. Ժիրոմսկու գլխավորությամբ առաջացավ ձախ թև, որը հանդես եկավ հօգուտ կոմունիստների հետ միասնական ճակատի։ 1933 թ. ամռանն այդ թևը ներկայացնում էր սոցիալիստական կուսակցության մեկ տասներորդ մասը, 1934 թ. մայիսին Թուլուզի համագումարում ձախերի հետևից գնում էր կուսակցության արդեն երրորդ մասը։

Բանվոր դասակարգի գործողությունների միասնության համար մղվող պայքարում բացառիկ կարևոր ավանդ մուծեց ֆրանսիական կոմունիստական կուսակցության կոնֆերանսը, որը կայացավ 1934 թ. հունիսին Իվրի քաղաքում։ Հանդես գալով քաղաքական դրության վերաբերյալ զեկուցումով, Մ. Թորեզը մատնացույց արեց ֆաշիզմի լուրջ սպառնալիքը և ընդգծեց, որ միասնական ճակատի հարցը պրոլետարիատի համար կյանքի և մահվան հարց է։ Նշելով, որ պրոլետարիատի դիկտատուրայի համար պայքարի լոզունգը մնում է որպես պայքարի վերջնական նպատակ, նա հայտարարեց, որ տվյալ ժամանակաշրջանում հիմնական պրոբլեմն այն չէ, որպեսզի ընտրություն կատարել կոմունիզմի և ֆաշիզմի միջև, այլ այն, որպեսզի ընտրություն կատարել ֆաշիզմի և բուրժուական դեմոկրատիայի միջև։ Այդ կապակցությամբ զեկուցման մեջ մեծ տեղ հատկացվեց բուրժուա-դեմոկրատական ազատությունների և առաջին հերթին բանվոր դասակարգի իրավունքների պահպանման համար մղվող պայքարին։ Բոլոր հակաֆաշիստական ուժերի համախմբումն անհրաժեշտ համարելով, կոմունիստներն առաջադրեցին շարժման մեջ ոչ միայն բանվորներին, այլև գյուղացիներին, կրպակատերերին, արհեստավորներին, ծառայողներին ներգրավելու խնդիրը։

Իվրիում կայացած կոնֆերանսի որոշումները հիմք ծառայեցին միասնական և ժողովրդական ճակատի կազմակերպման համար։ Կոնֆերանսից անմիջապես հետո Մ. Թորեզն ու Բենուա Ֆրաշոնը ֆաշիզմի հարձակման դեմ համատեղ պայքար մղելու վերաբերյալ բանակցություններ վարելու համար հանդիպեցին Լ. Բլյումի և Ժ. Ժիրոմսկու հետ։ 1934 թ. հուլիսի 16-ին սոցիալիստական կուսակցության ազգային խորհուրդը քննարկեց կոմունիստների հետ պակտ կնքելու հարցը։ Լ. Բլյումի խոստովանությամբ, կոմունիստների հետ

միասնական ճակատը դարձավ «անխուսափելի» և «վտանգավոր էր հետագայում ևս հրաժարվելը»։

Ներքևից սկսված ճնշման տակ ՍՖԻՕ-ի ղեկավարությունը որոշում ընդունեց կոմունիստական կուսակցության հետ ստորագրել գործողությունների միասնության վերաբերյալ պակտ, որը և ստորագրվեց 1934 թ. հուլիսի 27-ին։ Երկու կուսակցությունները հայտարարեցին, որ իրենց առջև նպատակ են դրնում ամբողջ աշխատավոր բնակչությանը մոբիլիզացնել ընդդեմ ֆաշիստական կազմակերպությունների, պայքարել դրանց զինաթափման և ցրման համար՝ հօգուտ դեմոկրատական ազատությունների, հանուն ընտրությունների ժամանակ համամասնական ներկայացուցչության սահմանման, ընդդեմ պատերազմի նախապատրաստման, ընդդեմ մասսաներին աղքատության դատապարտող կառավարական օրենքների, ընդդեմ Գերմանիայում և Ավստրիայում ֆաշիստական տեռորի, հանուն Թելմանի և ձերբակալված բոլոր հակաֆաշիստների ազատագրման։ Ստեղծվեց կոորդինացիոն կոմիտե երկու կուսակցությունների միջև կապեր իրականացնելու համար։ ՖԿԿ-ն և ՍՖԻՕ-ն ձեռնարկ էին մնում միմյանց քննադատելուց։ Գործողությունների միասնության վերաբերյալ պակտը նպաստեց հակաֆաշիստական պայքարի ամրապնդմանը, արհմիութենական միասնության իրականացմանը, ուժեղացրեց բանվորների հավատն իրենց ուժերի նկատմամբ, հիմք դարձավ ժողովրդական ճակատի կազմավորման համար։

Ֆաշիզմի դեմ պայքարի և գործողությունների միասնության վերաբերյալ ՍՖԻՕ-ի հետ պակտ կնքելու ուղղությամբ ՖԿԿ-ի գործունեությունը բարձր գնահատեց ընկ. Դիմիտրովը Կոմինտերնի VII կոնգրեսում։

Պայքար հանուն ժողովրդական ճակատի

1934 թ. վերջին և 1935 թ. Ֆրանսիայում դեռևս շարունակվում էր տնտեսական ճգնաժամը, որն ուղեկցվում էր բանվորների դրության վատացմամբ, գյուղացիության, քաղաքի միջին և մանր բուրժուազիայի քայքայմամբ։ Դումերգ-Լավալի կառավարության աջակցությամբ ֆաշիստական լիգաները վերստին ակտիվացրին իրենց գործունեությունը։ «Մարտական խաչերը» և ֆաշիստական մյուս լիգաները կազմակերպում էին միտինգներ ու ցույցեր, արյունալի ընդհարումներ հրահրում Փարիզի արվարձանների բանվորների, Լիլլի, Գրենոբլի, Օլեանի, Մարսելի, Տուլոնի, Բրեստի և տասնյակ այլ քաղաքների աշխատավորների հետ։ Այդ ամենը վկայում էր այն մասին, որ ֆաշիստական հեղաշրջման վտանգը ամենևին չի վերացված։ Այդ ժամանակ հիմնական հարցը քաղաքի և գյուղի միջին խավերի և առաջին հերթին ռադիկալ-սոցիալիստների կուսակցության (որի հետևից գնում էր այդ տարրերի զգալի մասը) դիրքի հարցն էր։ Հաշվի առնելով ֆաշիզմի դեմ մղվող պայքարում միջին խավերի ունեցած դիրքի կարևորությունը, Մ. Թորեզը ՖԿԿ-ի անունից 1934 թ. հոկտեմբերին նախ Փարիզում Բյուլիե դահլիճում կայացած միտինգում, ապա Նանտում տեղի ունեցած ռադիկալների կուսակցության համագումարի նախօրյակին նրանց առաջարկեց միասնություն՝ «Հանուն հացի, ազատության և խաղաղության պայքարի Ժողովրդական ճակատի» շրջանակներում։

Ռադիկալ-սոցիալիստների կուսակցության Նանտի համագումարը մերժեց կոմունիստների առաջարկությունը ժողովրդական ճակատի ստեղծման մասին։ Սակայն նրա որոշումներում գրված էր, որ համագումարը դեմ է սահմանադրության արմատական փոփոխություններին (ինչին որ ձգտում էր Դումերգի կառավարության աջ թևը), կողմնակից է ֆաշիստական լիգաների ցրմանն ու

զինաթափմանը և գյուղացիների ու արհեստավորների պահանջների իրականացմանը։ Դա վկայում էր ռադիկալ-սոցիալիստների հետ ՖԿԿ-ի համաձայնության գալու հնարավորության մասին։

Երբ Դումերգի կաբինետը սկսեց պնդել, որ անհրաժեշտ է փոփոխություններ մտցնել սահմանադրության մեջ, և ցանկացավ պալատը ցրել, ռադիկալ մինիստրները հրաժարական տվեցին, որը հասցրեց կաբինետի անկմանը։ Շուտով իշխանության գլուխ անցավ ֆինանսական օլիգարխիայի դրածո, ֆաշիստականացման կողմնակից Պ. Լավալի կառավարությունը։ 1935 թ. հունիսին Լավալի կաբինետը դեկրետ ընդունեց 11 մլրդ ֆրանկի «տնտեսում» անցկացնելու մասին։ Այդ «տնտեսումն» իրականացվեց մանր պաշտոնյաների, ծառայողների, պետական ձեռնարկությունների բանվորների աշխատավարձը 10 տոկոսով կրճատելու հաշվին, պատերազմի նախկին մասնակիցների և զոհերի թոշակները 10 տոկոսով պակասեցնելու միջոցով։ Նվազեցվեցին կուլտուրական միջոցառումների, առողջապահության և գյուղատնտեսության համար նախատեսված ծախսերը։ Այսպիսով, Լավալի կառավարության քաղաքականությունը, որն անց էր կացվում հօգուտ ֆինանսական օլիգարխիայի շահերի, ուղղված էր ոչ միայն բանվորների, այլև գյուղացիության, քաղաքային մանր բուրժուազիայի, ծառայողների և մտավորականության նրվազ ապահովված խավերի դեմ։ 1934 թ. վերջին—1935 թ. օբյեկտիվ պայմաններ ստեղծվեցին պրոլետարիատի շուրջը բնակչության այդ խմբերի համախմբման համար։ Կոմունիստական կուսակցությունն այդ ժամանակ սիստեմատիկ պայքար էր մղում բոլոր աշխատավորների շահերի պաշտպանության համար, հատուկ ուշադրություն դարձնելով գյուղացիությանը։ Աշխատավոր գյուղացիության կազմակերպման գործում մեծ տեղ գրավեց 1935 թ. սեպտեմբերին ՖԿԿ-ի կողմից առաջադրված «Ֆրանսիական գյուղատնտեսության փրկության ծրագիրը»։ Այդ փաստաթղթի մեջ մտցվեցին աշխատավոր գյուղացիության և գյուղատնտեսական բատրակների հիմնական պահանջները։ Գյուղացիների շրջանում կոմկուսի գործունեությունը, նրանց հանրապետական ավանդույթները հասցրին այն բանին, որ գյուղացիությունը թշնամական դիրք գրավեց ֆաշիզմի նկատմամբ։

Կոմունիստական կուսակցությունը պայքար էր մղում քաղաքային մանր բուրժուազիայի (կրպակատերերի, արհեստավորների և այլն) շահերի պաշտպանության համար, բնակչության այդ խավերին պետական օգնություն ցույց տալու ծավալուն ծրագիր առաջադրում։ Ճգնաժամի տարիներին ստեղծված ծանր դրության, բուրժուական գաղափարախոսության և մշակույթի անկման պատճառով և հատկապես ֆաշիստական Գերմանիայում կատարվող իրադարձությունների ազդեցության տակ առաջադեմ մտավորականությունն ընթացավ դեպի բանվոր դասակարգի հետ մերձեցում։ Ժողովրդական զանգվածների հետ մշակույթի աշխատողների մերձեցման գործում մեծ դեր խաղաց «Հեղափոխական գրողների և արտիստների ասոցիացիան» (ԱԵԱՐ), որը 1932 թ. ստեղծել էին Պ. Վայան-Կուտյուրիեն, Լ. Մուսինակը և Ժ. Ֆրեիլը։ ՖԿԿ-ի բազմակողմանի գործունեությունը նպաստեց նրա խոշոր հաջողությանը 1935 թ. մայիսին տեղի ունեցած մունիցիպալ ընտրություններում։ Ընտրությունների հետևանքով ստեղծվեց Փարիզի արվարձանների «կարմիր գոտին», ուր առաջացան կոմունիստական քաղաքապետարաններ։ ՖԿԿ-ն ընտրություններն անցկացրեց ֆաշիզմի դեմ, հանուն աշխատավորների անմիջական պահանջների, հանուն ֆրանս-սովետական պայմանագրի ստորագրման լոզունգներով։ Մունիցիպալ ընտրություններում կոմունիստների հաջողությունները նպաստեցին

ռադիկալ-սոցիալիստների ավելի վճռական շրջադարձին դեպի ժողովրդական ճակատի շարժումը։

Այդ շրջադարձի գլխավոր պատճառը ֆաշիզմի աճող վտանգն էր։ Ըստ իրենց դասակարգային կազմի և ավանդույթների ռադիկալ-սոցիալիստները բուրժուական դեմոկրատիայի կողմնակիցներ էին, որի պայմաններում միջին և մանր բուրժուազիայի ներկայացուցիչները կարող էին որոշակիորեն ազդել հարկային քաղաքականության վրա, ունենալ ինքնավարության ընտրովի մարմիններ, պաշտպանել կրթության մատչելիությունը, պայքարել կղերականության դեմ և այլն։ ՖԿԿ-ն, որը մամուլում, պառլամենտում, միտինգներում ու ժողովներում բուրժուա-դեմոկրատական ազատությունները պաշտպանում էր ֆաշիստների ոտնձգություններից, նվաճեց այդ խավերի վստահությունը։

Կոմունիստներին, սոցիալիստներին և ռադիկալներին միավորող ժողովրդական ճակատի կազմավորման գործում կարևոր փուլ եղավ Բաստիլի գրավման օրվա տոնակատարությունը։ 1935 թ. հուլիսի 14-ին ՖԿԿ-ի նախաձեռնությամբ ստեղծվեց հուլիսի 14-ի տոնակատարության ազգային կոմիտե, որի մեջ մտան ՖԿԿ-ի, ՍՖԻՕ-ի, ռադիկալ-սոցիալիստների, Ամստերդամ—Պլեյելի ազգային կոմիտեի, սոցիալիստական-հանրապետական միության, մարդու իրավունքների լիգայի, ԱՐԿ-ի, ԱՈԻԿԿ-ի և այլ հակաֆաշիստական կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Հուլիսի 14-ի տոնակատարության կոմիտեն վերակազմվեց ժողովրդական ճակատի ազգային կոմիտեի, և ժողովրդական ճակատի շարժումն ստացավ իր ղեկավար ազգային կենտրոնը։ Հակաֆաշիստական շարժումն ընդգրկեց ամբողջ Ֆրանսիան։

Ներքին ֆաշիզմի վտանգը 1934—1935 թթ. լրացվում էր միջազգային թատերաբեմում ֆաշիստական ագրեսիայի վտանգով։ Գերմանիայի ռազմականացման աճը, հիտլերյան պարագլուխների ելույթները, որոնք պահանջում էին Վերսալյան պայմանագրի վերանայում, լուրջ մտահոգություն էին առաջացնում աշխատավորության մեջ։ Պատերազմի դեմ պայքարելու և ՍՍՀՄ-ի հետ մերձենալու մասին ՖԿԿ-ի լոզունգներն ավելի ու ավելի լայն ժողովրդականություն էին ստանում ժողովրդական զանգվածների շրջանում։ Ֆրանսիական բուրժուազիայի առավել հեռատես գործիչներն սկսում էին հասկանալ, որ հիտլերյան Գերմանիայի հետ հակասությունների սրման պայմաններում պայմանագրերի վերսալյան սիստեմը կարելի է պահպանել միայն Սովետական Միության հետ մերձենալու միջոցով։ Ֆրանսիական բուրժուազիայի այդ խավերի շահերն արտահայտում էր արտաքին գործերի մինիստր Լ. Բարտուն, որը ֆրանս-սովետական համագործակցության և ֆաշիստական Գերմանիայի հնարավոր ագրեսիայի դեմ արևելաեվրոպական պակտ կնքելու կողմնակից էր։ Սովետական կառավարությունը, որը դեռ Ժնևի զինաթափման կոնֆերանսում էր առաջադրել կոլեկտիվ անվտանգության կազմակերպման պլան, դրականորեն վերաբերվեց Բարտուի նախագծերին։ Նման գործունեությունը չէր կարող ֆաշիստների դուրը գալ։ 1934 թ. հոկտեմբերին Ֆրանսիա ժամանած հարավսլավական թագավորի հետ միասին Բարտուն սպանվեց։ Բարտուի փոխարեն արտաքին գործերի մինիստր դարձավ ֆաշիստական պետությունների հետ մերձեցման կողմնակից Լավալը։ 1935 թ. հունվարին Լավալը Մուսոլինիի հետ ստորագրեց մի համաձայնագիր, ըստ որի իտալական ֆաշիստներին ձեռքերի ազատություն էր տրվում Հաբեշստանում։ Լավալի կառավարությունը ֆաշիստական Գերմանիայի ագրեսիային թողտվություն էր անում։ Դա առաջ էր բերում աշխատավորության և բուրժուազիայի մի մասի դժգոհության աճ, որը կառավարությանը ստիպեց շարունակել բանակցությունները ՍՍՀՄ-ի հետ։

Ագրեսորի դեմ համատեղ պայքարելու միջոցով ամբողջ աշխարհում խաղաղությունը պաշտպանելու նպատակին ուղղված Սովետական Միության արտաքին քաղաքականությունը, ՍՍՀՄ-ի հետ մերձենալու վերաբերյալ ֆրանսիական աշխատավորների պահանջը, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև իմպերիալիստական հակասությունների սրումը, ՍՍՀՄ-ի հետ առևտրի հանդեպ ֆրանսիական բուրժուազիայի մի մասի մեջ եղած ձգտումը՝ այս բոլորը միասին վերցրած հասցրին փոխադարձ օգնության ֆրանս-սովետական պայմանագրի ստորագրմանը 1935 թ. մայիսի 2-ին։ Այն երկու պետությունների համար փոխադարձ աջակցություն էր ապահովում ագրեսորի հարձակման դեմ։ Պայմանագրին կից հատուկ արձանագրության մեջ սովետական կողմի առաջարկությամբ նշվեց, որ պայմանագրին կարող են միանալ նաև այլ պետություններ։ Դրանով ստեղծվեց Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության ապահովման հնարավորությունը։ Մայիսի 16-ին պայմանագրին միացավ Չեխոսլովակիան։ Փոխադարձ օգնության մասին ֆրանս-սովետական և սովետա-չեխոսլովակյան պայմանագրերի կնքումը ստեղծում էր ագրեսորների դեմ հաջող պայքարելու պայման։ Սակայն դրանց գործունեությունը խարխլվում էր ֆրանսիական կառավարությունների երկդիմի, իսկ երբեմն էլ թշնամական քաղաքականությամբ։ Ֆրանս-սովետական պայմանագրի վավերացումը երկար ժամանակ ձգձգվում էր (պակտը պառլամենտի կողմից վավերացվեց միայն 1936 թ. փետրվարի 27-ին)։ Ռազմական համաձայնագիրն այդպես էլ չստորագրվեց։

Ժողովրդական ճակատի ծրագիրը և 1936 թ. ընտրությունները

1936 թ. Ժողովրդական ճակատի շարժումը լուրջ հաջողությունների հասավ։ Վերահաս պառլամենտական ընտրությունների կապակցությամբ Ժողովրդական ճակատի կուսակցությունները որոշեցին ընդհանուր ծրագիր մշակել։ Ժողովրդական ճակատի բոլոր կուսակցությունների համար ընդունելի ծրագրի կազմումը կապված էր զգալի դժվարությունների հետ, առավել ևս որ տնտեսական և ֆինանսական ասպարեզում կոմունիստների, սոցիալիստների և ռադիկալների դիրքերը չափազանց տարբերվում էին։ Եթե կոմունիստները (և սկզբունքորեն նույնիսկ սոցիալիստները) հանդես էին գալիս արտադրության միջոցների հանրայնացման օգտին, ապա ռադիկալները մասնավոր սեփականության համոզված կողմնակիցներ էին։ Ֆաշիստական մամուլը ռադիկալներին ահաբեկում էր «կարմիր վտանգով», բայց կոմկուսի ռեալիստական դիրքի շնորհիվ Ժողովրդական ճակատի կազմակերպություններին հաջողվեց հասնել հաջողության՝ ֆաշիզմի դեմ մղվող պայքարի և աշխատավորների ամենօրյա պահանջների համատեղ պաշտպանության հիման վրա։

1936 թ. հունվարին ընդունվեց Ժողովրդական ճակատի ծրագիրը, որի հիմնական դրույթները կայանում էին հետևյալում՝ բուրժուա-դեմոկրատական ազատությունների պաշտպանություն, զինաթափում և ֆաշիստական լիգաների ցրում, ընդհանուր ներման շնորհում, արհմիութենական իրավունքների երաշխիք բոլոր աշխատավորների համար, ռազմական արդյունաբերության ազգայնացում, զենքի մասնավոր վաճառքի վերացում, միջազգային համագործակցություն Ազգերի լիգայի շրջանակներում, կոլեկտիվ անվտանգության կազմակերպում, սանկցիաներ ագրեսորի դեմ, խաղաղության շարժման ծավալում։ Սոցիալ-տնտեսական ասպարեզում նախատեսվում էր ժողովրդական զանգվածների գնողունակության վերականգնում, գործազրկության համար նպաստների ազգային ֆոնդի ստեղծում, աշխատանքային շաբաթի կրճատում առանց աշխատավարձի նվազեցման, թոշակներ զառամյալների համար, գյու-

ղատնտեսական մթերքների գների բարձրացում՝ սպեկուլյացիայի և թանկության դեմ պայքար մղելով հանդերձ, պարտքերի դիմաց բռնի գույքագրման վերացում և մանր առևտրականների պարտքային բեռի թեթևացում, արտակարգ դեկրետների վերացում, դեկրետներ, որոնք ուղղված են ճգնաժամից առավել տուժած բնակչության կատեգորիաների դեմ, դեմոկրատական հարկային ռեֆորմ, վերահսկողություն կապիտալների արտահանության նկատմամբ, հարկերի ավելացում խոշոր ունեցվածքի նկատմամբ և այլն։ Ժողովրդական ճակատի ծրագիրը նախատեսում էր սոցիալական և քաղաքական խոր վերափոխությունների անցկացում հօգուտ բանվորների, գյուղացիների, մանր և միջին բուրժուազիայի։ Այդ ծրագիրը սոցիալիստական չէր և կարող էր իրագործվել կապիտալիստական կարգերի շրջանակներում։ Ծրագրին ռադիկալ-սոցիալիստների կողմից հավանություն տալը հասցրեց նրանց կապերի խզմանը աջ կուսակցությունների հետ և զգալիորեն նպաստեց ժողովրդական ճակատի ամրապնդմանը։

Ժողովրդական ճակատի համար մղված պայքարի արդյունքները վերլուծվեցին ՖԿԿ VIII համագումարում, որը տեղի ունեցավ 1936 թ. հունվարին։ Այդ պահին կոմունիստական կուսակցությունը նշանալիորեն աճել էր՝ 74 հազ. անդամ՝ 1934 թ. 30 հազ. անդամների դիմաց։ Մ. Թորեզի զեկուցման մեջ ընդգծվում էր պրոլետարիատի լիակատար միասնության իրականացման, նրա քաղաքական և արհմիութենական պառակտվածության վերջնական վերացման անհրաժեշտությունը, վերլուծվում էին սոցիալիստների և տրոցկիստների պառակտիչ գործունեության հետևանքով միասնական ճակատի համար մղվող պայքարում առաջացած դժվարությունները, բնորոշվում էր ժողովրդական ճակատի էությունը, ճակատ, որը ընտրական պարզ մանևր չէր, այլ բանվոր դասակարգի դաշինքը միջին խավերի հետ հանուն ֆաշիզմի դեմ մղվող պայքարի և աշխատավորների անմիջական պահանջների։ Մ. Թորեզը նշում էր, որ այդ դաշինքը կոմունիստների կողմից դիտվում է մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների լույսի տակ որպես ոչ միայն ֆաշիզմի դեմ հաղթանակի միջոց, այլև որպես կապիտալիստական շահագործման դեմ մղվող հետագա պայքարի պայման։ Կոմունիստներն ընդգծում էին «ձախ կարտելի» և ժողովրդական ճակատի միջև եղած սկզբունքային տարբերությունը։ Այն դեպքում երբ «ձախ կարտելը» բանվոր դասակարգին ընդդրկում էր բուրժուական քաղաքական խմբավորման մեջ հօգուտ կապիտալի, ժողովրդական ճակատն իրենից ներկայացնում էր մի կազմակերպություն, որի մեջ բանվոր դասակարգն իր պայքարով ներազդում էր միջին խավերի վրա և նրանց ներքաշում կապիտալի և ֆաշիզմի դեմ մղվող պայքարի մեջ։

Համագումարից հետո կոմունիստներն ուժեղացրին պայքարը բանվոր դասակարգի միասնության համար, որը ժողովրդական ճակատի հիմքն էր։ ՖԿԿ-ի համառության շնորհիվ վերացվեց արհմիություններում գոյություն ունեցող պառակտվածությունը։ 1936 թ. մարտին կայացած ԱԸԿ-ի և ԱՈՒԸԿ-ի միավորիչ համագումարում տեղի ունեցավ այդ կազմակերպությունների միաձուլում, որն ուժեղացրեց բանվոր դասակարգի հզորությունը։ Սկսվեց բանվորների և ծառայողների ուժեղ հոսքը դեպի ԱԸԿ։ Շուտով ԱԸԿ-ը միավորում էր 6 մլն մարդ։

1936 թ. տեղի էին ունենում պառլամենտի հերթական ընտրությունները։ Ժողովրդական ճակատում միավորված կոմունիստները, սոցիալիստները, ռադիկալներն ու հակաֆաշիստական մյուս խմբավորումները պաշտպանում էին իրենց ընդհանուր ծրագիրը։ Առաջին տուրում յուրաքանչյուր կուսակցություն

հանդես եկավ ինքնուրույն, իսկ երկրորդ տուրում նրանք բոլորը պաշտպանեցին Ժողովրդական ճակատի այն թեկնածուին, որն ուներ հաջողության առավել մեծ շանսեր։ Չնայած աջերի կատաղի հարձակումներին, Ժողովրդական ճակատի կուսակցությունները փայլուն հաղթանակ տարան։ Նրանք պալատ անցկացրին 380 դեպուտատ, այն դեպքում երբ աջերը՝ միայն 236։ Ժողովրդական ճակատի կուսակցությունների թվում առաջին տեղը գրավեցին սոցիալիստները, որոնց օգտին քվեարկեցին բանվորների և գյուղացիների զգալի խավեր։ Մեծ հաջողությունների հասան կոմունիստները, նրանք անցկացրին 72 դեպուտատ անցյալ ընտրությունների 10 դեպուտատի փոխարեն. սոցիալիստները, կոմունիստները և ռադիկալները միասին վերցրած դեպուտատների պալատում ստացան բացարձակ մեծամասնություն։

Լ. Բլյումի կառավարությունը։ Պայքար հանուն Ժողովրդական ճակատի ծրագրի կատարման

1936 թ. ընտրություններում Ժողովրդական ճակատի տարած հաղթանակից հետո կառավարություն կազմվեց սոցիալիստ Լեոն Բլյումի գլխավորությամբ։ Այն բաղկացած էր սոցիալիստներից և ռադիկալ-սոցիալիստներից։ Կոմունիստական կուսակցությունը հայտարարեց, որ կառավարությանը կպաշտպանի ժողովրդական ճակատի ծրագրի իրականացման համար մղվող պայքարում։

Ընտրություններում Ժողովրդական ճակատի տարած հաղթանակը ուղեկցվում էր աշխատավորության քաղաքական ակտիվության բուռն աճով։ Դեռ մինչև Լ. Բլյումի կառավարության կազմավորումը մասսայական գործադուլային պայքար ծավալվեց Ժողովրդական ճակատի ծրագրի իրագործման համար։ Սկիզբը դրեցին Փարիզի ավիացիոն և ավտոմոբիլային գործարանների բանվորները։ Հետո խոշոր գործադուլներ տեղի ունեցան Լիլլում, Դյունկերկում, Ռուբեում, Մարսելում, Թուլուզում և այլ քաղաքներում։ Միայն Նոր և Պա դե Կալե դեպարտամենտներում գործադուլավորների թիվը հասավ 400 հազարի։ Ամբողջությամբ երկրում 1936 թ. մայիս-հունիսյան օրերին գործադուլ արեց 2 մլն աշխատավոր։ Այդ շարժումն ուղեկցվում էր պայքարի նոր մեթոդներով. բանվորներն ու ծառայողները գրավում էին ձեռնարկություններն ընդհուպ մինչև իրենց պահանջների կատարումը կապիտալիստների կողմից։ Գործադուլներն անցնում էին բանվորների բացառիկ գիտակցականության ու կազմակերպվածության պայմաններում։ Ամենուրեք առաջադրվում էին միևնույն պահանջները, որոնք գրված էին Ժողովրդական ճակատի ծրագրում՝ աշխատավարձի բարձրացում, արհմիութենական իրավունքների իրականացում, արտադրամասային պատվիրակների ընտրություններ, կոլեկտիվ պայմանագրերի կնքում, քառասունժամյա աշխատանքային շաբաթ, վարձատրվող արձակուրդներ և այլն։ Հաշվի առնելով բանվորների մարտական տրամադրությունը, կապիտալիստները զիջումների էին դիմում։ 1936 թ. հունիսին կնքվեց Մատինյոնյան համաձայնությունը (ստորագրվել է «Մատինյոն» հյուրանոցում ԱԸԿ-ի և ֆրանսիական արդյունաբերողների ընդհանուր կոնֆեդերացիայի ներկայացուցիչների խորհրդակցությունում), որի համաձայն ձեռնարկատերերն ընդունեցին պրոլետարիատի հիմնական պահանջները։ Լ. Բլյումի կառավարությունը պառլամենտին առաջարկեց օրենքներ ընդունել քառասունժամյա աշխատանքային շաբաթվա, կոլեկտիվ պայմանագրերի, վարձատրվող երկշաբթյա արձակուրդների մասին, ծառայողների և նախկին ճակատայինների դեմ ուղղված արտակարգ դեկրետների վերացման մասին։ Բոլոր օրենքները հաստատվեցին դեպուտատների պալատի կողմից և մի քանի օր անց արժանացան սենատի հավանությանը։

Պայքարի նոր ձևի՝ բանվորների կողմից ձեռնարկության գրավման կիրառումն առաջ բերեց ռեակցիոն մամուլի պրովոկացիոն աղմուկը՝ մասնավոր սեփականության դեմ հարձակում գործելու մասին։ Գյուղի և քաղաքի միջին խավերի մի մասի մեջ մտահոգություն առաջացավ իր սեփականության համար։ Այդ կապակցությամբ առաջացավ պրոլետարիատից միջին խավերի հեռանալու վտանգ։ 1936 թ. հունիսի 11-ին գումարվեց կուսակցության Փարիզի շրջանի անդամների ինֆորմացիոն խորհրդակցություն, որտեղ «Պայքար հանուն հացի» զեկուցումով հանդես եկավ Մ. Թորեզը։ Նա նշեց գործադուլային պայքարի զուսպ բնույթը, ընդգծեց, որ հարկավոր է հասնել բանվորների պահանջների բավարարմանը, բայց ոչ մի դեպքում չի կարելի ոտնձգություններ թույլ տալ ժողովրդական ճակատի համախմբվածության դեմ։ Կոմունիստական կուսակցության հիմնական խնդիր էր մնում ֆաշիզմի դեմ մղվող պայքարը, որի համար անհրաժեշտ էր մասսաների ամենալայն միավորում։ Նշելով, որ կոմունիստները չպետք է թույլ տան բանվոր դասակարգի մեկուսացում, Մ. Թորեզը կոմկուսի քաղաքականությունը բնորոշեց հետևյալ բանաձևով՝ «Ամեն ինչ ժողովրդական ճակատի համար, ամեն ինչ ժողովրդական ճակատի միջոցով»։

ՖԿԿ-ի ռեալիստական քաղաքականության շնորհիվ միասնությունը պահպանվեց ոչ միայն սոցիալիստների, այլև ռադիկալ-սոցիալիստների հետ, ապահովվեց աշխատավորների մի շարք կարևոր պահանջների կենսագործումը։ 1936 թ. հունիսին հրապարակվեց կառավարության դեկրետը ֆաշիստական լիգաների ցրման մասին, հունիսի 28-ին պալատն ընդունեց ֆինանսական օլիգարխիայի դեմ ուղղված օրենք՝ սահմանվում էր պատիժ հարկերի մուծումից խուսափելու, եկամուտները թաքցնելու և կապիտալները արտասահման փոխադրելու համար. ավելանում էին խոշոր եկամուտներից (75 հազ. ֆրանկից ավել) գանձվող հարկերը։ Կառավարությունը որոշում ընդունեց ռազմական արդյունաբերության մասնակի ազգայնացման մասին և դեկրետ՝ ֆրանսիական բանկի վերակազմավորման մասին։ Ձեռնարկվեցին միջոցառումներ, որպեսզի թեթևացվի գյուղացիության և քաղաքային մանր բուրժուազիայի դրությունը։ Ստեղծվեց պետական «Ազգային հացահատիկային բյուրո», որը գյուղացիներից հացահատիկ էր գնում նրանց ձեռնտու կայուն գներով։ Մանր առևտրականներին արտոնություններ տրվեցին վարկ ստանալու համար։ Այդ դեկրետների ընդունումը թեթևացրեց աշխատավորության վիճակը, բայց ժողովրդական ճակատի ծրագրի շատ կետեր չէին կատարվում։ Մանր առևտրականները և արհեստավորները չհասան վարկային և հարկային սիստեմի լիակատար վերանայմանը, իսկ գյուղացիները՝ հողի վարձակալման գների կրճատմանը և վարկի ընդլայնմանը։

Ժողովրդական ճակատի ծրագրի կենսագործումը հանդիպեց արդյունաբերական մագնատների և խոշոր ֆինանսիստների կատաղի դիմադրությանը, իսկ Բլյումի կառավարությունը վճռական պայքար չէր տանում արդեն ընդունված որոշումները նրանց կողմից սաբոտաժի ենթարկելու դեմ։ Ձեռնարկատերերը հաճախ սաբոտաժի էին ենթարկում կոլեկտիվ պայմանագրերի ստորագրումը, ազատում արհմիութենական ակտիվիստներին, կազմակերպում «կապիտալների փախուստ» դեպի արտասահման. միայն 1936—1937 թթ. նրանք արտասահման փոխադրեցին ավելի քան 100 մլրդ ֆրանկ։ Բավարար վճռականությամբ չէր կենսագործվում ֆաշիստական լիգաների ցրման օրենքը։ Ֆաշիստական կազմակերպությունները շարունակում էին գոյություն ունենալ այլ անունների տակ։ «Մարտական խաչերը» վերակազմվեցին «Ֆրանսիական սոցիալական կուսակցության»։

Հետագայում Լ. Բլյումի կառավարությունը, չնայած ՖԿԿ-ի համառ պահանջներին, սկսեց արգելակել Ժողովրդական ճակատի ծրագրի իրականացումը։ Կապիտուլացվելով ֆինանսական օլիգարխիայի առջև, նա «դադար» հայտարարեց այդ ծրագրի անցկացման գործում։ 1936 թ. սեպտեմբերի 29-ին կառավարությունը իրականացրեց ֆրանկի դեվալվացիա, որը հասցրեց գների աճին և աշխատավորների ռեալ աշխատավարձի նվազմանը։ Արտաքին քաղաքականության ասպարեզում Լ. Բլյումի կառավարությունը նույնպես չէր կարողանում և չէր ցանկանում դիմակայել ռեակցիայի ձգտումներին։ Թեև արտաքին քաղաքականության այն հիմքը, որը հռչակված էր Ժողովրդական ճակատի ծրագրում, հանդիսանում էր կոլեկտիվ անվտանգության գաղափարը, Բլյումի կառավարությունը գործնականում չէր հակադրում ֆաշիստական ագրեսիայի զարգացմանը։ Հանրապետական Իսպանիայի օրինական կառավարության և ֆաշիստական խռովարարների միջև մղվող պայքարում նա Անգլիայի հետ համատեղ անց էր կացնում «չմիջամտելու» քաղաքականություն, որի քողի տակ Հիտլերի և Մուսոլինիի կառավարությունները լայն ինտերվենցիա ծավալեցին Իսպանիայում։ Լ. Բլյումի կառավարությունն իր դիրքը բացատրում էր Եվրոպայում Ֆրանսիայի մեկուսացմամբ, Անգլիայի հետ համատեղ հանդես գալու անհրաժեշտությամբ, ինչպես նաև այն բանով, որ իսպանական հանրապետականներին ցույց տրված օգնությունը կարող է հասցնել համաշխարհային պատերազմի սանձազերծմանը։ Իրականում ֆաշիստական պետությունների դեմ մղվող պայքարում կառավարությունը կարող էր հենվել իր երկրի դեմոկրատական ուժերի վրա, որոնք տրամադրված էին հոգուտ հակաֆաշիստական Իսպանիայի, Սովետական Միության օգնության վրա։

«Չմիջամտելու» քաղաքականությունը, որը բացահայտորեն հակասում էր Ժողովրդական ճակատի ծրագրին, հանդիպեց կոմունիստական կուսակցության վճռական հակահարվածին։ ՖԿԿ-ն մերկացնում էր կառավարող շրջանների քաղաքականության հակաժողովրդական բնույթը, օգնություն կազմակերպում իսպանական բնակչությանը։ Ֆրանսիական շատ բանվորներ Իսպանիայում կռվում էին ինտերնացիոնալ բրիգադներում, որոնք կազմակերպվել էին կոմունիստների կողմից։ «Չմիջամտելու» քաղաքականությունը, որը շատ բանով կանխորոշեց իսպանական հանրապետության պարտությունը, դրեց ՍՍՀՄ-ի հաշվին ֆաշիստական ագրեսորներին «խաղաղեցնելու» կուրսի սկիզբը։ Թեև սովետական կառավարությունը բազմիցս առաջարկում էր ֆրանսո-սովետական պակտը լրացնել երկու երկրների գլխավոր շտաբների միջև ռազմական համաձայնագիր կնքելով, ֆրանսիական ղեկավարները, այդ թվում նաև պրեմիեր մինիստր Լ. Բլյումը և ռազմական մինիստր Է. Դալադիեն ՍՍՀՄ-ի հետ ռազմական համաձայնագիրը համարում էին «անժամանակ»։ Սովետական Միության հետ համագործակցելուց հրաժարվելը և Բլյումի կառավարության կապիտուլյանտական քաղաքականությունը լրջորեն թուլացրին Ֆրանսիայի միջազգային դիրքերը։ Նրա նախկին դաշնակիցներն այլևս Ֆրանսիայի վրա հույս չէին դնում։ Բելգիան հրաժարվեց Լոկարնոյի պակտից և հռչակեց «բացարձակ չեզոքություն»։ Սկսեց փլուզվել Արևելյան և Հարավ-Արևելյան Եվրոպայում ֆրանսիական դաշինքների ողջ սիստեմը, քանի որ այդ շրջանի երկրների բուրժուազիան որոշեց ընթանալ դեպի ֆաշիստական պետությունների հետ մերձեցումը։

Աջ ռադիկալների ռեակցիոն քաղաքականությունը

1937 թ. Լ. Բլյումի կառավարությունը հրաժարական տվեց։ Նրան փոխարինեց աջ ռադիկալ Կ. Շոթանի կառավարությունը, որը կազմված էր ռադիկալներից ու սոցիալիստներից։ Շոթանի կառավարությունը փաստորեն հրաժարվեց Ժողովրդական ճակատի ծրագիրը կատարելուց։ Նա ոչ մի միջոց չձեռնարկեց ֆաշիստական կազմակերպությունների դեմ։ Ֆաշիստական նոր խմբավորումները՝ «կնգուղավորները»[2] և «ֆրանսիական ժողովրդական կուսակցությունը», որին գլխավորում էր կոմունիստական շարժման ռենեգատ, դավաճան Դորիոն, նախապատրաստում էին նոր խռովություն, կազմակերպում պրովոկացիոն պայթեցումներ և հրկիզումներ, դրանցում մեղադրելով կոմունիստներին։

ՖԿԿ IX համագումարը, որը տեղի ունեցավ 1937 թ. դեկտեմբերին Արլում, հատուկ ուշադրություն դարձրեց ֆաշիզմի դեմ մղվող պայքարի ներքին և միջազգային ասպեկտներին։ Կոնգրեսը միջոցառումներ նշեց Ժողովրդական ճակատի կազմակերպչական ամրապնդման վերաբերյալ, ընդգծեց, որ հարկավոր է Ժողովրդական ճակատի կոմիտեներ ստեղծել ձեռնարկություններում, քաղաքային թաղամասերում, գյուղերում, դումարել Ժողովրդական ճակատի մեջ մտնող բոլոր կազմակերպությունների լայն ազգային կոնգրես։ Կոմունիստական կուսակցությունը, որն այդ ժամանակ վերածվել էր բանվոր դասակարգի՝ 341 հազ. անդամ ունեցող մասսայական կուսակցության, համառորեն ընդգծում էր, որ Ժողովրդական ճակատի գործունեության և համախմբվածության հիմքը բանվոր դասակարգի միասնությունն է։ Նա պատրաստակամություն էր հայտնում մարքսիստական հիմունքներով միավորվելու սոցիալիստական կուսակցության հետ և մտնելու Ժողովրդական ճակատի կազմն ու էությունն արտացոլող կառավարության մեջ։ Կոմունիստներն առաջադրեցին ազգային լայն միավորման՝ ֆրանսիական ճակատի գաղափարը, որն իր առջև խնդիր էր դնում համախմբել ֆրանսիական ազգին ընդդեմ ֆինանսական օլիգարխիայի քաղաքականության և ֆաշիզմի։

IX համագումարի որոշումների իրականացումը կարող էր ապահովել Ժողովրդական ճակատի կազմակերպական և քաղաքական ամրապնդումը, սակայն սոցիալիստական և ռադիկալ կուսակցությունների ղեկավարները վախենալով կոմունիստների ուժեղանալուց, արտահայտվեցին Ժողովրդական ճակատի տեղական կոմիտեների ստեղծման և նրա ազգային կոնգրես անցկացնելու դեմ, նրանք դեմ էին կառավարության մեջ կոմունիստների մտնելուն։ Այդ բոլորը ծայրահեղորեն դժվարացնում էր Ժողովրդական ճակատի ծրագրի իրականացումը, կանխորոշում կառավարական կոալիցիայի անկայունությունը և նրա սահումը դեպի առավել ռեակցիոն դիրքեր։ Շոթանի հրաժարականից և նրան փոխարինած Բլյումի երկրորդ կառավարության կարճատև գոյությունից հետո 1938 թ. ապրիլի 10-ին կազմվեց Է. Դալադիեի կաբինետը, որը բաղկացած էր միայն ռադիկալ-սոցիալիստներից։ Անցնելով իշխանության գլուխ, Դալադիեն հասավ արտակարգ լիազորությունների օրենքի ընդունմանը, որի հիման վրա սկսվեց նոր հարձակում աշխատավորների վրա։ 1938 թ. մայիսին կառավարությունը 8 տոկոսով բարձրացրեց ուղղակի և անուղղակի հարկերը, այդ նույն ժամանակ էլ պակասեցվեցին խոշոր արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների եկամուտներից գանձվող հարկերը։ Ֆինանսական օլիգարխիայի շահերին համապատասխան անցկացվեց երրորդ դեվալվացիան։ Աշխատավարձի բարձրացումը, որին հասել էին բանվորներն ու ծառայողները 1936 թ. ամռանը, զրոյի հավասարեցվեց։ Կատարելով ֆինանսական օլիգարխիայի կամքը, կառավարությունը դեկրետ հրապարակեց ռազմական ձեռնարկություններում լրացուցիչ աշխատանքային ժամեր սահմանելու մասին։ Շուտով քառասունժամյա աշխատանքային շաբաթը սկսեց ամենուրեք խախտվել։ Ձեռնարկատերերը կազմակերպում էին արհմիութենական ակտիվիստների և հատկապես կոմունիստների մասսայական արձակումներ։ Թեև աշխատավորների դեմ հարձակումն անց էր կացվում հանուն «ազգային պաշտպանության», փաստորեն Դալադիեի կառավարության քաղաքականությունը թուլացնում էր Ֆրանսիայի պաշտպանունակությունը։ «Զմիջամտելուց» այն անցավ Ֆրանկոյի բացահայտ պաշտպանությանը։ 1938 թ. հունիսին փակվեց իսպանա-ֆրանսիական սահմանը։ Կառավարության հակաազգային քաղաքականությունը նպաստեց ֆաշիզմի հաղթանակին Իսպանիայում, որը թուլացրեց Ֆրանսիայի դիրքերը։

Մյունխենյան դավաճանությունը և Ժողովրդական ճակատի պառակտումը

Ֆրանսիական ռեակցիայի հաջորդ քայլը Չեխոսլովակիային դավաճանելն էր, որին սպառնում էր հիտլերյան Գերմանիան։ Չեխոսլովակիան Ֆրանսիայի դաշնակիցն էր, և նրա անկախության պահպանումը հանդիսանում էր Ֆրանսիայի անվտանգության նախադրյալը։ Չեխոսլովակիայի հարցը շոշափում էր Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության ողջ սիստեմը, քանի որ ՍՍՀՄ-ի, Չեխոսլովակիայի և Ֆրանսիայի միջև կնքված պայմանագրերի հիման վրա սովետական պետությունը պետք է Չեխոսլովակիային օգնություն հասներ այն դեպքում, եթե միաժամանակ հանդես գար Ֆրանսիան։ Ֆրանսիայի ազգային շահերը պահանջում էին պաշտպանել Չեխոսլովակիային, սակայն ֆրանսիական կառավարող շրջանները, հավատարիմ լինելով հիտլերյան Գերմանիային թողտվության իրենց քաղաքականությանը և ձգտելով նրան ուղղել ՍՍՀՄ-ի դեմ, պատրաստ էին դավաճանելու իրենց դաշնակցին։ 1938 թ. սեպտեմբերին, երբ հիտլերյան Գերմանիան պահանջ ներկայացրեց Սուդետյան մարզն իրեն հանձնելու վերաբերյալ, որը մտնում էր Չեխոսլովակիայի կազմի մեջ, ֆրանսիական կոմկուսը գլխավորեց ժողովրդական զանգվածների պայքարն ի պաշտպանություն Չեխոսլովակիայի։

Սեպտեմբերի 20-ին հրապարակվեց կոմկուսի դիմումը ֆրանսիական ժողովրդին։ Նրանում նշվում էր, որ Դալադիեի կառավարության իրականացրած քաղաքականությունը ընդհանուր ոչինչ չունի Ժողովրդական ճակատի ծրագրի հետ, խաղաղության համար մղվող պայքարի հետ։ ՖԿԿ-ի կոչով ծավալվեց մասսայական շարժում հանուն Չեխոսլովակիայի անկախության։ Չեխոսլովակիայի բաժանման սպառնալիքի դեմ ուղղված բողոքով հանդես եկան ԱՐԿ-ն և դեմոկրատական մյուս կազմակերպությունները։ Սոցիալիստական կուսակցության և ռադիկալ-սոցիալիստների կուսակցության մեջ չեխոսլովակյան հարցի շուրջ տեղի էր ունենում սուր պայքար։ Այն դեպքում, երբ սոցիալիստների և ռադիկալների ղեկավարությունը պաշտպանում էր Գերմանիային կատարվող զիջումների քաղաքականությունը, այդ կուսակցությունների շատ շարքային անդամներ դեմ էին հանդես գալիս։ Հաշվի չնստելով աշխատավորության բողոքների հետ, Դալադիեի կառավարությունը շարունակում էր իր քաղաքականությունը։ 1938 թ. սեպտեմբերի 29-ին Մյունխենում կայացած Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի կոնֆերանսում Դալադիեն իր

[2] Անունն առաջացել է la cagoule բառից, որը նշանակում է կնգուղ՝ աչքերի համար բացված ճեղքերով։

ստորագրությունը դրեց անցյալում Ավստրիայի հետ սահմանակցող Սուդետյան մարզը և Չեխոսլովակիայի շրջանները ֆաշիստական Գերմանիային հանձնելու վերաբերյալ որոշման տակ։ Բացի այդ, Չեխոսլովակիայի տերիտորիայի մի մասը անջատվում էր Հունգարիայի և Լեհաստանի։ Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստների հակասովետական ձգտումներով թելադրված մյունխենյան գործարքը Ֆրանսիային զրկում էր Արևելքում ունեցած իր դաշնակիցներից և Գերմանիայի համար հարթում ՍՍՀՄ-ի դեմ պատերազմ սանձազերծելու ուղին։ Հենց այդ պատճառով էլ ֆրանսիական ռեակցիոն մամուլը ողջունեց Մյունխենյան համաձայնագիրը։ Դալադիեի Փարիզ վերադառնալու ժամանակ կազմակերպվեցին ցույցեր «Մյունխենը փրկեց խաղաղությունը», «Մյունխենը նոր դարաշրջան է բացում» լոզունգների տակ։ Լ. Բլյումը, իր իսկ խոսքերով արտահայտված, «փոքրոգի թեթևացման զգացում» էր ապրում։ Միայն ՖԿԿ-ն դատապարտեց մյունխենյան համաձայնագիրը։ Հանդես գալով ՖԿԿ Կենտկոմի անունից հեծանվային արշավարանում, Մ. Թորեզը վճռական բողոք հայտնեց մյունխենյան գործարքի դեմ։ Նա նշեց, որ Ֆրանսիան կարող էր խոչընդոտել պատերազմի ուղին՝ հենվելով ՍՍՀՄ-ի վրա, որը հավատարիմ էր իր տված խոսքին։

1938 թ. հոկտեմբերի 3-ին դեպուտատների պալատում քննարկվում էր կառավարության արտաքին քաղաքականությունը։ ՖԿԿ-ի պառլամենտական ֆրակցիան առաջարկեց դատապարտել մյունխենյան դավաճանությունը։ Դեմ հանդես եկան աջ կուսակցությունների ներկայացուցիչները, ռադիկալներն ու սոցիալիստները։ Սոցիալիստների պառլամենտական ֆրակցիան հայտարարեց, որ ինքը «միահամուռ կերպով ուրախանում է այն բանի համար, որ մյունխենյան կոնֆերանսը կանգնեցրեց դեպի պատերազմ ընթացող շարժումը»։ Միայն կոմունիստական ֆրակցիան և երկու այլ դեպուտատներ՝ սոցիալիստ Բուլիեն և աջ նացիոնալիստ Հանրի դը Կերիլլիսը քվեարկեցին մյունխենյան գործարքի դեմ։

Մյունխենյան դավաճանությունը նպաստեց ժողովրդական ճակատի քայքայմանը։ 1938 թ. հոկտեմբերի վերջին Մարսելում տեղի ունեցավ ռադիկալ-սոցիալիստների համագումարը։ Այն հավանություն տվեց Դալադիեի արտաքին քաղաքականությանը և որոշում ընդունեց ժողովրդական ճակատի հետ կապերը խզելու մասին, որը վկայում էր այն մասին, որ ֆրանսիական բնակչության միջին խավերը պացիֆիստական և հակակոմունիստական պրոպագանդայի միջոցով հրապուրվելով՝ անցել էին ֆինանսական օլիգարխիայի կողմը։ Աջ ռադիկալները հասնելով համագումարի կողմից իրենց քաղաքականությանը տված հավանությանը, սկսեցին աջ կուսակցությունների հետ բլոկի մեջ մտնել։ Դալադիեի կառավարությունը, օգտագործելով աջերի աջակցությամբ դեպուտատների պալատում ստացած լիազորությունները, ընդունեց արտակարգ դեկրետներ, որոնք սահմանում էին նոր հարկեր, կրճատում աշխատավարձը, ավելացնում աշխատանքային օրվա տևողությունը։ Ռեակցիայի հարձակումը առաջ բերեց բանվոր դասակարգի բողոքը։ 1938 թ. նոյեմբերին տեղի ունեցած ԱԸԿ-ի համագումարում դելեգատների մեծ մասը արտահայտվեց պրոլետարիատի միասնական ճակատի օգտին, ընդդեմ կառավարության արտակարգ դեկրետների։ Համագումարը դատապարտեց մյունխենյան դավաճանությունը և պահանջեց օգնություն ցույց տալ հանրապետական Իսպանիային։ Համագումարի որոշմամբ ԱԸԿ-ը նոյեմբերի 26-ին անցկացրեց «ազգային բողոքի օր», իսկ նոյեմբերի 30-ին ընդհանուր գործադուլ հայտարարեց ընդդեմ արտակարգ դեկրետների։ Մի շարք ճյուղերում՝ հան-

քափորների, քիմիական արդյունաբերության բանվորների, նավահանգստային բանվորների, մետաղագործների և այլոց մոտ գործադուլը հաջող անցավ։ Արհմիութենական շարժման աջ պարագլուխները գործադուլը սաբոտաժի էին ենթարկում, կառավարությունը հոչակեց բանվորական ուժի հարկադիր մոբիլիզացիա, ոստիկանություն ուղարկեց բանվորների դեմ։ Ձեռնարկատերերը կազմակերպում էին մասսայական արձակումներ։

Կոմունիստների հերոսական ջանքերը, որոնք ձգտում էին պահպանել բանվոր դասակարգի միասնությունը, որպեսզի դիմակայեն Դալադիեի կառավարության ռեակցիոն ներքին և արտաքին քաղաքականությանը, չստացան ՍՖԻՕ-ի ղեկավարության աջակցությունը։ 1939 թ. մայիսին տեղի ունեցած սոցիալիստական կուսակցության համագումարում հաղթեցին աջ տարրերը։ ՍՖԻՕ-ի համագումարը սոցիալիստական կուսակցության անդամներին արգելեց համագործակցել կոմունիստների հետ։ Ժողովրդական ճակատի շարժումը վերջնականապես պառակտվեց։ Ժողովրդական ճակատի պառակտման պատճառները գտնվում էին պրոլետարիատի միասնության անկայունության մեջ, միասնություն, որը քայքայվում էր ՍՖԻՕ-ի աջ ղեկավարության քաղաքականությամբ, ինչպես նաև միջին խավերի տատանվող դիրքերի մեջ, խավեր, որոնք ահաբեկված էին «կոմունիզմի վտանգով», վարակված ֆաշիզմին թողտվության միջոցով պատերազմից խուսափելու հնարավորության վերաբերյալ պացիֆիստական պատրանքներով։ Ժողովրդական ճակատի անկման գործում մեծ դեր խաղաց նրա կազմակերպական թուլությունը, ժողովրդական զանգվածների մեջ Ժողովրդական ճակատի կոմիտեների բացակայությունը։

1939 թ. մոտերքին իրադրությունը միջազգային թատերաբեմում ծայրահեղ չափով սրվեց. ֆաշիստական պետությունները չմիջամտելու քաղաքականության քողի տակ ֆրանկոյական խռովարարներին օգնեցին ոչնչացնելու Իսպանական հանրապետությունը։ 1939 թ. մարտի 14-ին հիտլերյան Գերմանիան օկուպացրեց Չեխոսլովակիան։ Ֆրանսիայի կառավարությունը, ինչպես և Անգլիայի ու ԱՄՆ-ի կառավարությունները սահմանափակվեցին բողոքով։ Սակայն ֆաշիստական Գերմանիայի շարունակվող ագրեսիան, Ֆրանսիայի շրջապատվելը ֆաշիստական պետություններով, Եվրոպայում դաշինքների ֆրանսիական սիստեմի կրախը, Գերմանիայի և Ֆրանսիայի միջև գոյություն ունեցող իմպերիալիստական հակասությունների աճը, ժողովրդական զանգվածների ճնշումն այնուամենայնիվ ֆրանսիական կառավարող շրջաններին հարկադրեցին բանակցություններ սկսել ՍՍՀՄ-ի հետ։ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները ՍՍՀՄ ժամանեցին, բայց նույնիսկ այդ վճռական պահին էլ նրանք երկակի խաղ էին խաղում։ Ի վերջո ֆրանս-սովետական բանակցություններն ընդհատվեցին։ 1939 թ. սեպտեմբերի 1-ին Լեհաստանի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակումից հետո Ֆրանսիան և Անգլիան ստիպված էին պատերազմի մեջ մտնել նրա դեմ։

Ժողովրդական ճակատի պատմագրությունը

Սովետական պատմագիտության մեջ մարքսիզմ-լենինիզմի մեթոդոլոգիայի հիման վրա մշակված են Ժողովրդական ճակատի հիմնական պրոբլեմները։ Տնտեսական ճգնաժամի կապակցությամբ 30-ական թվականներին աշխատավորների դրության վատացման հարցերը ուսումնասիրված են Վ. Ս. Բոյցովի և Ս. Ա. Ստեգարի հոդվածներում[3]։ Այդ հոդված-

[3] Տե՛ս **В. Бойцов.** Ухудшение экономического положения рабочего класса Франции в результате экономического кризиса (1930—1935 гг.). «Научные доклады высшей школы, Исторические науки». 1958, № 4; **С. А. Стегарь.** Борьба французского пролета-

ների հեղինակները հետազոտելով ֆրանսիական էկոնոմիկայի վիճակը, տալիս են աշխատավորության ծանր դրության պատկերը։ Բանվոր դասակարգի դրության վատացումը, աշխատավարձի շեշտակի պակասեցումը, աշխատանքային շաբաթվա ավելացումը, մասսայական գործադրությունը նպաստեցին նրա միավորման աճին, հեղափոխական շարժման վերելքին, որը լուսաբանվել է Մ. Լ. Կունինայի, Վ. Պ. Անտոնովայի և Լ. Ա. Բիդինսկայայի աշխատություններում[4]։ Բանվորական շարժման վերելքն ուղեկցվում էր ֆրանսիական պրոլետարիատի ձգտումով դեպի արհմիութենական շարժումը։ Տվյալ պրոբլեմն իր ամբողջ բազմազանության մեջ՝ ստորին կազմակերպությունների միավորումը արդյունաբերության տարբեր ճյուղերում, երկրի առանձին շրջաններում և, վերջապես, ԱՈՒԿԿ-ի ու ԱԿԿ-ի վերամիավորումը, ուսումնասիրված է պատմաբաններ Մ. Ն. Կուզմինի և Վ. Դ. Մարկովայի կողմից[5]։ Թվարկված բոլոր աշխատություններում նշվում է ՖԿԿ-ի վճռական դերը միասնական ճակատի կազմակերպման գործում։ Ժողովրդական ճակատի համար մղված պայքարին են նվիրված Մ. Լ. Կունինայի և Վ. Դ. Մարկովայի աշխատությունը, Լ. Պ. Լավրովի հոդվածը և Վ. Ս. Ստեպանովայի դիսերտացիան[6]։ Ֆրանսիական ֆաշիզմի դասակարգային էության պրոբլեմները, փետրվարյան խռովությունը, նրա ձախողումը իրենց աշխատություններում քննարկում են Ա. Յա. Գուրալսկին և Վ. Ի. Անտյուխինա-Մոսկովչենկոն, Յու. Վ. Եգորովը[7]։ Ի հակակշիռ բուրժուական պատմաբանների, սովետական հետազոտողները ընդգծում են, որ ֆաշիզմի հիմնական հենարան է հանդիսանում ֆինանսական կապիտալը, այլ ոչ թե մանրբուրժուական խավերը։ Ժողովրդական ճակատի շարժման ուսումնասիրությունն ուղեկցվում էր սովետական պատմաբաններ Ա. Շնեերսոնի, Բ. Պ. Կուզնեցովի և Ն. Ն. Պետրովի կողմից գյուղացիության դրության և նրա շարժման առանձնահատկությունների ուսումնասիրությամբ[8]։ Ժողովրդական ճակատի շարժման, նրա կազմավորման պրոցեսի ընդհանուր հարցերը, ծրագիրը, 1936 թ. ընտրությունները, աշխատավորների հունիսյան գործադուլը, Լ. Բլյումի, Կ. Շոթանի կառավարության քաղաքականությունը, ժողովրդական զանգվածների պահանջների մի մասի իրականացումը, սոցիալիստների, ռադիկալների և ռադիկալ-սոցիալիստների ղեկավարության դավաճանական քաղաքականությունը, որը Ժողովրդական ճակատին պառակտման հասցրեց, հետազոտված են Պ. Գելբրասի, Վ. Ս. Բոյցովի, Ն. Ն. Պետրովի, Ե. Ա. Կրավչենկոյի, Լ. Ա. Բենդրիկովայի, Յու. Վ. Եգորովի աշխատություններում[9]։

Արտաքին քաղաքականությունն ուսումնասիրված է սովետական պատմաբաններ Զ. Ս. Բելոուսովայի, Ռ. Ս. Վարֆոլոմեևայի, Ե. Ս. Բելոգլովսկու, Մ. Լ. Կունինայի, Ե. Ա. Կրավչենկոյի կողմից գլխավորապես ֆրանս-սովետական հարաբերությունների առումով և ֆրանսիական կառավարող շրջանների դիրքի մասին՝ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին[10]։ Սովետական պատմաբաններն ամբողջ սրությամբ բացահայտեցին ֆրանսիական իմպերիալիստների և նրանց գործակիցների դավաճանական դիրքը ոչ միայն դաշնակցային պարտավորությունների կատարման, այլև իր երկրի ազգային պաշտպանության իրականացման ասպարեզում։

Ժողովրդական ճակատի շարժման մարքսիստական վերլուծություն է պարունակում ՖԿԿ-ի ղեկավարներ Մ. Թորեզի[11] և Ժ. Դյուկլոյի[12] աշխատություններում, ֆրանսիական կոմունիստական կուսակցության պատմության դասագրքում[13], ինչպես նաև Ժողովրդական ճակատի 30-ամյակին նվիրված կոնֆերանսի նյութերում[14]։ Մարքսիստական դիրքերից է գրված կոմունիստ պատ-

---

рната за экономические интересы, за демократические свободы и мир. «Ученые записки заочного педагогического ин-та», т. IV. М., 1959:

4 Sb'u **М. Л. Кунина**. Создание единого рабочего фронта во Франции в 1934 г. «Ученые записки Московского библиотечного ин-та», вып. 2. М., 1956; **В. П. Антонова**. Борьба Коммунистической партии за единый фронт с социалистами в 1934-1935 гг. «Ученые записки Шахтинского педагогического ин-та», т. 1, вып. 1. Шахты, 1956; **Л. А. Бидинская**. Революционное движение промышленного пролетариата во Франции и период экономического кризиса (1930—1934). Диссертация. М., 1954:

5 Sb'u **М. Н. Кузьмин**. Борьба французского рабочего класса за единство профсоюзного движения (1934—1935). «Вестник Ленинградского ун-та», № 20, вып. 4. Л., 1959; **В. Д. Маркова**. Роль Коммунистической партии Франции в борьбе за профсоюзное единство (1936—1939). «Ученые записки Московского областного педагогического ин-та», т. 52, вып. 1. М., 1961:

6 Sb'u **М. Кунина, В. Маркова**. Коммунисты Франции в борьбе за Народный фронт. М., 1961; **Л. П. Лавров**. ФКП в борьбе за единство рабочего класса, за народный фронт против фашизма и реакции в 1932—1936 гг. «40 лет Французской коммунистической партии» ժողովածուից. М., 1961; **В. С. Степанова**. Борьба Французской и коммунистической партии за создание единого пролетарского и Народного фронта (1933—1935). Диссертация. М., 1961;

7 Sb'u **А. Я. Гуральский**. Французский фашизм и его попытка захвата власти в 1934 г. «Труды по новой и новейшей истории», т. 1. М., 1948; **В. И. Антюхина-Московченко**. Провал фашистского мятежа 6 февраля 1934 г. и зарождение Народного фронта во Франции. «Новая и новейшая история», 1959, № 6; **Ю. В. Егоров**. К вопросу о целях фашистского мятежа 6 февраля 1934 г. во Франции. «Очерки всеобщей истории». Л., 1969:

8 Sb'u **А. Шнеерсон**. Аграрный вопрос во Франции. М., 1948; **Б. П. Кузнецов**. Аграрный кризис и крестьянское движение во Франции в 1930—1938 гг. «Французский

ежегодник 1963». М., 1964; **Н. Н. Петров**. Крестьянство и Народный фронт во Франции 1937—1938. «Материалы первой научной конференции Череповецкого педагогического ин-та». Вологда, 1963.

9 Sb'u **П. Гельбрас**. Внешняя и внутренняя политика Франции. М., 1939; **В. С. Бойцов**. Всеобщая забастовка трудящихся Франции в июне 1936 г. «Ученые записки Московского городского педагогического ин-та», т. 93, вып. 5. М., 1959; **В. С. Бойцов**. Положение и борьба рабочего класса Франции в 1936—1937 гг. Диссертация. М., 1960; **Н. Н. Петров**. Борьба Французской коммунистической партии за Народный фронт (июнь 1937—август 1939). М., 1961; **Е. А. Кравченко**. Народный фронт во Франции. М., 1972: **Л. А. Бендрикова**. Франция в 1929—1939. М., 1957; **Ю. В. Егоров**. Народный фронт во Франции. Л., 1972:

10 Sb'u **З. С. Белоусова**. Французская дипломатия накануне Мюнхена. М., 1963; **Р. С. Варфоломеева**. Внешняя политика французской социалистической партии накануне второй мировой войны (1936—1939). М., 1948: **Е. С. Белогловский**. Из истории подготовки советско-французского пакта о взаимной помощи 1936 г. (внешняя политика Луи Барту). «Французский ежегодник 1963». М., 1964; **М. Л. Кунина**. Борьба политических партий во Франции в период подготовки франко-советского договора 1935 г. «Ученые записки Московского библиотечного ин-та», вып. 7. М., 1960; **Е. А. Кравченко**. Основные противоречия в Народном фронте по вопросам внутренней и внешней политики. «Французский ежегодник 1967». М., 1968:

11 Sb'u **M. Thorez**. Oeuvres, t. V–XVIII. P., 1951 - 1958; **М. Торез**. Избранные произведения, т. 1, М., 1959.

12 Sb'u **Ж. Дюкло**. Избранные произведения, т. 1, М., 1959:

13 Sb'u „Histoire du parti communiste français, Dir J. Duclot et F. Billous". P., 1964:

14 Sb'u „Cahiers de 1' Institut Maurice Thores", 1967, № 3—4:

մաբաններ Ժ. Շամբազի և Կ. Վիլլարի աշխատությունը[15], որը նվիրված է ֆրանսիական ֆաշիզմի առանձնահատկություններին և ժողովրդական ճակատի ստեղծմանը։

Իր առջև խնդիր դնելով հետազոտել ժողովրդական ճակատի կազմավորման պատճառները և բացահայտել նրա էությունը, Ժ. Շամբազը գլխավոր ուշադրությունը դարձրել է միասնական ճակատի տակտիկայի իրականացման գործում եղած օբյեկտիվ պայմանների նշանակության վրա։ Հենվելով կոնկրետ փաստերի վրա, նա մերժում է սոցիալիստական և բուրժուական պատմաբանների վարկածը, որոնք պնդում են, թե իբր սոցիալիստները եղել են միասնական և ժողովրդական ճակատի նախաձեռնողներ։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Կ. Վիլլարի աշխատությունը, որը ցույց է տվել ֆրանսիական ֆաշիզմի դասակարգային հիմքը, նրա առանձնահատկություններն ու թուլությունները գերմանական ֆաշիզմի համեմատությամբ։ Սոցիալիստ պատմաբաններ Ժ. Լեֆրանը, Է. Դոլեանը, Պ. Լուին, որոնք կանգնած են մանրբուրժուական ռեֆորմիզմի դիրքերում, հավաքել են հարուստ փաստական նյութեր, մշակել մի շարք մասնավոր հարցեր, բայց ամբողջությամբ վերցրած տենդենցիոզ են լուսաբանել ժողովրդական ճակատի կազմավորման պրոցեսը։ Նրա ստեղծման գործում եղած բոլոր ծառայությունները նրանք վերագրել են սոցիալիստներին[16]։ Այսպես, Ժ. Լեֆրանը նշում է, որ ժողովրդական ճակատի շարժումը չէր սահմանափակվում սովորական պառլամենտական ընտրություններով, ճիշտ է արձանագրում, որ փետրվարյան օրերին ՍՖԻՕ-ի և ԱԸԿ-ի պարագլուխները ստիպված էին գնալ մասսաների հետևից, բայց Բլյումի կառավարության սահմանափակության և անհետևողականության համար ամբողջ մեղքը գցում է ռադիկալների վրա։ Նա արդարացնում է ժողովրդական ճակատի ծրագրի կատարման ընթացքում հայտարարված «դադարը» և արտաքին քաղաքականության մեջ «չմիջամտելը», դրանք բացատրելով «ռադիկալներին հանգստացնելու»՝ Բլյումի ձգտմամբ։ Միաժամանակ Լեֆրանը նենգափոխում է ՖԿԿ-ի դերը, որը վճռական ուժ էր միասնական և ժողովրդական ճակատի առաջացման գործում։ Է. Դոլեանը և Պ. Լուին պնդում են, թե ֆրանսիական աշխատավորության դիմադրությունը ֆաշիզմին եղել է տարերային և պատահական։ Ժողովրդական ճակատի էությունը կոպիտ կերպով նենգափոխում էր տրոցկիստացող պատմաբան Դ. Գերենը, որն այն համարում էր «չհաջողված հեղափոխություն»[17]։ Ժողովրդական ճակատի պատմությունը փոքր տեղ չի գրավում բուրժուական պատմաբանների աշխատություններում։ Ակադեմիկոս Ժ. Շաստենեն[18], բուրժուական պատմագրության աջ թևի այդ ներկայացուցիչը ֆաշիզմը պատկերում է ոչ թե որպես դասակարգային երևույթ, այլ որպես պատերազմի արդյունքներից դժգոհ նրա նախկին մասնակիցների շարժում։ Միասնական ճակատի կազմավորման նախաձեռնությունը հեղինակը վերագրում է սոցիալիստներին։ Ռադիկալների միանալը ժողովրդական ճակատին նա հետևյալ կերպ է բացատրում. փոխադարձ օգնության վերաբերյալ ֆրանս-սովետական պակտի կնքումից հետո կոմունիստները դարձան ազգային պաշտպանության կողմնակիցներ, որը և նրանց մոտեցրեց ռադիկալներին։ Ժողովրդական ճակատը Ժ. Շաստենեն քննարկում է որպես երեք կուսակցությունների ընտրական բլոկ, իսկ պառակտման պատճառները տեսնում է նրա տարրերի բազմատեսակության մեջ։

Շաստենեի տեսակետներին մոտ է կանգնած նշանավոր պատմաբան Ե. Բոննեֆուսը[19], այդ նախկին մինիստրն ու սենատորը։ Ինչպես և Շաստենեն, նա թերագնահատում էր ֆաշիզմի վտանգը երկրում, ժողովրդական ճակատի կազմավորման գործում վճռական դերը հատկացնում էր սոցիալիստներին։ Դրա հետ մեկտեղ Բոննեֆուսը արտահայտում է մի շարք ճիշտ նկատառումներ. ժողովրդական ճակատի առաջացմանը նպաստել է տնտեսական ճգնաժամի զարգացումը։ Ժողովրդական ճակատը դարձավ ժողովրդական հույսերի մարմնավորման սկիզբը։

---

[15] Տե՛ս I. Chambaz et Willard. Le front populaire pour le pain, la liberté et la paix. P., 1961.

[16] Տե՛ս I. Lefranc. Histoire du front populaire (1934—1938). P., E. Dolèans. Histoire du mouvement ouvrier. V. 3. P., 1953; P. Louis. Histoire du mouvement syndical en France. P., 1950.

[17] Տե՛ս D. Guerin, Front populaire. Revolution manquèe, P., 1963.

[18] Տե՛ս I. `hastenet. Declin la troisième, t. VI. P., 1963.

[19] Տե՛ս E. Bonnefous, Histoire politique de la troisième Republique, t. V. P., 1962.

ԳԼՈՒԽ 8

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ 1918—1939 ԹԹ.

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՆ-Ի ՀԱՄԱՐ: ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄՆ-ՈՒՄ 1918—1923 ԹԹ.

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքներն ԱՄՆ-ի համար

Առաջին համաշխարհային պատերազմը չվնասեց Ամերիկյան մայրցամաքին, և երկիրը չտեսավ արտադրողական ուժերի այնպիսի մասսայական ոչնչացում, ինչպիսին եղավ Եվրոպայում։ Ամերիկյան բանակը ռազմական գործողություններին մասնակցեց միայն 1918 թ. ամռանից։ ԱՄՆ-ի մարդկային կորուստները մյուս երկրների համեմատությամբ մեծ չէին, մոտ 120 հազ. սպանված ու հիվանդություններից մահացած և մոտ 230 հազ. վիրավոր։

ԱՄՆ-ի մոնոպոլիստական բուրժուազիան պատերազմի տարիներին առաջացած իրադրությունն օգտագործեց իր հարստացման համար։ Նա վիթխարի եկամուտներ ստացավ ռազմական մատակարարումներից։ Մոնոպոլիաների ընդհանուր մաքուր շահույթը 1914—1919 թթ. ընթացքում կազմեց 33,6 մլրդ դոլլար։ Դա թույլ տվեց նոր խոշոր կապիտալ ներդրումներ կատարել ամերիկյան արդյունաբերության մեջ։ Այդ բազայի վրա սկսված արդյունաբերական վերելքն է՛լ ավելի մեծացրեց ԱՄՆ-ի տեսակարար կշիռը համաշխարհային արդյունաբերական արտադրության մեջ։ 1920 թ. մոտերքին Միացյալ Նահանգներին բաժին էր ընկնում քարածխի համաշխարհային հանույթի մոտ կեսը, չուգունի և պողպատի արտադրության $^3/_5$-ը, ամբողջ աշխարհում արդյունահանված նավթի $^2/_3$-ը, թողարկված ավտոմոբիլների 85 տոկոսը։

Այսպիսով, ԱՄՆ-ի տնտեսական զարգացումն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում նրա համար ամրապնդեց աշխարհի տնտեսական տեսակետից առավել հզոր երկրի վիճակը։

Արմատապես փոխվեց նաև Միացյալ Նահանգների միջազգային ֆինանսական դրությունը։ Մինչ պատերազմն ԱՄՆ-ը մյուս կապիտալիստական տերություններից խիստ ետ էր մնում կապիտալի արտահանության չափերի տեսակետից։ Արտասահմանում ամերիկյան կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը մինչև 1914 թ. կազմում էր ընդամենը 3 մլրդ դոլլար, այն դեպքում, երբ եվրոպական երկրների կապիտալ ներդրումները Միացյալ Նահանգներում հասնում էին 5 մլրդ դոլլարի։ Ջնայած իր բարձր արդյունաբերական պոտենցիային, ԱՄՆ-ն ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմն սկսվելը շարունակում էր մնալ եվրոպական երկրների պարտապանի վիճակում։

Անտանտի երկրների՝ Ամերիկայում կատարած վիթխարի ռազմական պատվերների վճարումը կրճատեց ԱՄՆ-ի պարտքը։ 1919 թ. մոտերքը եվրոպական երկարատև կապիտալ ներդրումները Միացյալ Նահանգներում նվազեցին մինչև 3 մլրդ դոլլարի։ Այդ նույն ժամանակ ԱՄՆ-ը վիթխարի չափով ավելացրեց կապիտալի արտահանությունը։ Դրա գլխավոր ձևը ռազմական փոխառություններն էին։ 20-ական թվականների սկզբին դրանց ընդհանուր գումարը հասավ 11 մլրդ դոլլարի։ Բացի այդ, պատերազմի ժամանակ ավելի քան երկու անգամ ավելացավ ամերիկյան կապիտալիստների մասնավոր կապիտալ ներդրումների գումարն արտասահմանում։ 1919 թ. այն կազմեց մոտ 6,5 մլրդ դոլլար։ Այսպիսով, պատերազմի տարիներին ԱՄՆ-ը պարտատերից վերածվեց խոշորագույն վարկատուի։

Միջազգային տնտեսական հարաբերություններում ԱՄՆ-ի տեսակարար կշռի շեշտակի աճը պայմաններ ստեղծեց համաշխարհային քաղաքականության ոլորտում Միացյալ Նահանգների է՛լ ավելի ակտիվ ներխուժման համար։ Արտահայտելով մոնոպոլիստական բուրժուազիայի էքսպանսիոնիստական ձգտումները, դեմոկրատական կուսակցության կառավարությունը պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի գլխավորությամբ 1917 թ. վերցրեց «համաշխարհային լիդերության» նվաճման կուրս։

Վիլսոնի կառավարության արտաքին քաղաքականությունը 1918—1920 թթ.

ԱՄՆ-ի իմպերիալիստական էքսպանսիայի վճռական ակտիվացման ծրագիրը պրեզիդենտ Վիլսոնը շարադրեց 1918 թ. հունվարի 8-ին կոնգրեսին հղած իր ուղերձում։ Այսպես լուրս աշխարհ եկան Վիլսոնի «Տասնըչորս կետերը»։

Առաջին հայացքից աշխարհի հետպատերազմյան կարգավորման պրեզիդենտի առաջադրած ծրագիրը շափազանց դեմոկրատական տեսք ուներ։ Այնտեղ ասվում էր պատերազմի տարիներին Անտանտի երկրների կնքած գաղտնի պայմանագրերի վերացման անհրաժեշտության, գաղութային երկրների ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչման, մաքսային խոչընդոտների վերացման մասին և այլն։ Իմպերիալիստական պրոպագանդան շեփորահարում էր Ամերիկայի «խաղաղասիրության» մասին։ Բայց իրականում այդ դեմագոգիկ լոզունգների ներքո թաքնված էին ԱՄՆ-ի կառավարող շրջանների իմպերիալիստական ձգտումները։ Հանդես գալով գաղտնի պայմանագրերի դեմ, ԱՄՆ-ի կառավարող շրջանները հույս ունեին աշխարհի վերաբաժանման մասին կնքել այլ, Միացյալ Նահանգների համար ավելի շահավետ, բայց նույնքան էլ իմպերիալիստական պայմանագրեր։ Հույսը դնելով իրենց տնտեսական հզորության վրա, ԱՄՆ-ի իմպերիալիստները ձգտում էին հասնել «հավասար հնարավորությունների» լոզունգների միջազգային ճանաչմանը, որպեսզի պայմաններ ստեղծեն Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներում եվրոպական իմպերիալիստական տերությունների ունեցած դիրքերի վրա հարձակում գործելու համար։ Ամերիկայի իմպերիալիստական պարտնյորների թուլացման համար ԱՄՆ-ը առաջարկում էր նաև «բաց դռների» սկզբունքը մտցնել Գերմանիայի և Թուրքական կայսրության՝ բաժանման ենթակա բոլոր տիրույթներում։

Իմպերիալիստական ակտիվ էքսպանսիայի այդ ծրագրի կատարմանն էր ուղղված ԱՄՆ-ի ներկայացուցիչների գործունեությունը 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսում։ Ամերիկյան իմպերիալիզմը ձգտում էր թույլ չտալ Անգլիայի և Ֆրանսիայի չափից ավելի ուժեղացում։ Այդ նպատակով նա հանդես եկավ հօգուտ բավականաչափ ուժեղ Գերմանիայի պահպանման, որը պետք է գտնվեր Միացյալ Նահանգների ազդեցության տակ։ ԱՄՆ-ի ղեկավարները դիրքի հաստատման հաշիվներից էին ելնում նաև Ազգերի լիգայի կազմակերպման ամերիկյան պլանները, որի եռանդուն պրոպագանդիստն էր պրեզիդենտ Վիլսոնը։

Սակայն համաշխարհային հեգեմոնիային հասնելու իրենց ձգտման մեջ Միացյալ Նահանգները բախվեցին Անգլիայի և Ֆրանսիայի համառ հակադրդության։ 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսի արդյունքներն ան-

բարենպաստ էին ԱՄՆ-ի համար։ Աշխարհի հետպատերազմյան բաժանման գլխավոր օբյեկտները հանձնվեցին Անգլիայի, Ֆրանսիայի և Ճապոնիայի կառավարմանը։ Միացյալ Նահանգները մանդատային տերիտորիաներից ոչ մեկը չստացան։ Ընդունվեցին հետպատերազմյան Եվրոպայում Գերմանիայի ստատուսի հարցի վերաբերյալ ամերիկյան առաջարկությունները։ Ազգերի լիգայում ղեկավար դիրք գրավեցին ոչ թե Միացյալ Նահանգները, այլ Անգլիան և Ֆրանսիան։ 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսում ԱՄՆ-ի պլանների ձախողումը բացատրվում էր այն բանով, որ ամերիկյան իմպերիալիզմի արտաքին քաղաքական դիրքերը դեռ մնում էին համեմատաբար թույլ։ Ե՛վ բանակի ու նավատորմի չափերով, և՛ գաղութային տիրույթների մասշտաբով, և՛ այլ երկրների հետ ունեցած ռազմաքաղաքական կապերի կայունությամբ Միացյալ Նահանգներն այն ժամանակ զգալիորեն զիջում էին իրենց եվրոպական մրցակիցներին։

Փարիզի հաշտության կոնֆերանսում Վիլսոնի կրած դիվանագիտական պարտությունը առաջ բերեց ԱՄՆ-ի ֆինանսական կապիտալի ազդեցիկ շրջանների լուրջ դժգոհությունը։ Մոնոպոլիստական այդ շրջանների հայացքներն արտահայտեց օպոզիցիոն այն զորեղ խումբը, որի գլուխ կանգնած էր հանրապետական կուսակցության նշանավոր գործիչ, արտաքին գործերի գծով սենատական հանձնաժողովի նախագահ Հենրի Կեբոտ Լոջը։ Մեկուսացման դրոշի ներքո Լոջի կողմնակիցները հանդես էին գալիս Վերսալյան պայմանագրի վավերացման դեմ, կոչ անում հրաժարվել Ազգերի լիգայում ԱՄՆ-ի մասնակցությունից։ Նրանք գտնում էին, որ եվրոպական երկրների հետ ԱՄՆ-ի դաշինքի մեջ մտնելը թույլատրելի է միայն այն պայմանով, եթե այնտեղ սկզբից ևեթ ապահովվի Ամերիկայի գերակշռությունը։ Լոջականներն առաջադրեցին ԱՄՆ-ի համար «ձեռքերի ազատության» լոզունգը, հուսալով աստիճանաբար ապահովել Միացյալ Նահանգների ռազմաքաղաքական գերազանցությունը եվրոպական իմպերիալիստական տերությունների միացյալ ճակատի նկատմամբ և դրանով իսկ կարևոր քայլ կատարել համաշխարհային առաջնության հասնելու ճանապարհին։ Լոջի խմբի («մեկուսացման» կողմնակիցներ) և Վիլսոնի կողմնակիցների միջև տեղի ունեցած ընդհարումները համաշխարհային հեգեմոնիայի նվաճման հարցի շուրջ ամերիկյան մոնոպոլիստական բուրժուազիայի տարբեր խմբավորումների պայքարի արտահայտությունն էր։

Սակայն ամբողջությամբ վերցրած, մեկուսացման շարժումը Միացյալ Նահանգներում չափազանց բարդ երևույթ էր։ Այն ներգրավել էր ֆերմերության լայն խավերին, ինչպես նաև քաղաքի մանր ու միջին խավերին, որոնք խիստ օպոզիցիոն էին տրամադրված մոնոպոլիաների նկատմամբ։ Մանրբուրժուական այդ խավերի շահերն արտահայտում էր մեկուսացման կողմնակիցների դեմոկրատական թևը, որին ներկայացնում էին սենատոր հանրապետականներ Ուիլյամ Բորան, Ռոբերտ Լաֆոլետը, Ջորջ Նորրիսը և ուրիշներ։ Դեմոկրատական թևը հանդես էր գալիս ընդդեմ իմպերիալիստական քաղաքականության, միլիտարիզմի և գաղութային զավթումների, կամպանիա մղում եվրոպական գործերում Միացյալ Նահանգների չմիջամտելու օգտին։

Վերսալյան պայմանագրի վավերացման հարցի քննարկման ընթացքում հանրապետական կուսակցության ղեկավարությանը հաջողվեց ձեռք բերել մեկուսացման քաղաքականության կողմնակիցների երկու խմբավորումների աջակցությունը։ Ի վերջո 1920 թ. մարտին սենատը մերժեց Վերսալյան պայմանագիրը՝ Ազգերի լիգայի կանոնադրությամբ հանդերձ։ Դա նշանակում էր, որ

արտաքին քաղաքական այն կուրսը, որը որդեգրել էր Վիլսոնի կառավարությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ձախողվեց։

Խոշոր ռազմաքաղաքական պարտությամբ ավարտվեցին Վիլսոնի կառավարության բոլոր փորձերը՝ հաջողության հասնելու Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում։

Ռուսաստանում սովետական իշխանություն հաստատվելուց անմիջապես հետո Միացյալ Նահանգները մյուս խոշորագույն իմպերիալիստական տերությունների հետ պայքար սկսեցին սովետների երիտասարդ հանրապետության դեմ։ 1918 թ. ամերիկյան զորքերը իմպերիալիստական մյուս պետությունների զինված ուժերի հետ ներխուժեցին Ռուսաստանի հյուսիսը, ինտերվենցիա սկսեցին Հեռավոր Արևելքում։ Սակայն կարմիր բանակը և սովետական ժողովուրդը կործանիչ հակահարված հասցրին ինտերվենտների զորքերին։ Ռազմական պարտությունները, Արևմուտքի կապիտալիստական երկրներում ծավալված հեղափոխական ելույթների հանդեպ ունեցած վախը, Սովետական Ռուսաստանի տերիտորիայում գտնվող օկուպացիոն զորքերում առաջ եկած քայքայումն ու հուզումները, վերջապես, հենց իրենց իսկ իմպերիալիստական տերությունների միջև գոյություն ունեցող սուր հակասությունները՝ այս բոլորը իմպերիալիստներին հարկադրեց հրաժարվել սովետական պետության դեմ բացահայտ զինված ինտերվենցիան շարունակելուց։ 1919 թ. ամռանը ամերիկյան զորքերը դուրս բերվեցին Ռուսաստանի հյուսիսային շրջաններից, իսկ 1920 թ. գարնանը նրանք ստիպված էին հեռանալ նաև սովետական Հեռավոր Արևելքից։

Բայց և այնպես ԱՄՆ-ի կառավարող շրջանները, ինչպես և իմպերիալիստական մյուս տերությունների ղեկավարները, բոլոր ուժերով պաշտպանում էին Ռուսաստանի ներքին հակահեղափոխությանը։ Պաշտոնական Վաշինգտոնը հակասովետական այդ անհաշտելի կուրսի առավել հետևողական անցկացնողներից մեկն էր։ Սովետական կառավարությունը բազմիցս հանդես եկավ Սովետական Ռուսաստանի և մյուս երկրների, այդ թվում նաև ԱՄՆ-ի միջև տնտեսական համագործակցություն հաստատելու առաջարկությամբ։ Նյու Յորքում ստեղծված ՌՍՖՍՀ-ի ոչ պաշտոնական ներկայացուցչությունը Լ. Մարտենսի գլխավորությամբ սովետական կառավարության հանձնարարությամբ սկսեց Միացյալ Նահանգների գործարար շրջանների հետ կապեր հաստատելու աշխատանքը։ Սակայն Վիլսոնի կառավարությունը շարունակում էր անտեսել Սովետական Ռուսաստանի բոլոր առաջարկությունները։ Հետպատերազմյան տարիների լարված իրադրության մեջ Սովետական Ռուսաստանի դեմ ուղղված զինված ինտերվենցիայի խայտառակ քաղաքականությունը, ինչպես նաև սովետական հանրապետության տնտեսական բլոկադա և դիվանագիտական մեկուսացում հաստատելու փորձերն առաջ էին բերում ԱՄՆ-ի բնակչության լայն շրջանների դժգոհությունն ու զայրույթը։

Ներքին դրությունը և դասակարգային պայքարի սրման հիմնական գործոնները

ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական զարգացումն առաջին համաշխարհային պատերազմից հետո, կապիտալիզմի սկսված ընդհանուր ճգնաժամի իրադրության պայմաններում նույնպես ոչ քիչ պայմաններ էր ստեղծում երկրում մասսայական դժգոհության առաջացման և, հետևապես, դասակարգային պայքարի շեշտակի սրման համար։

Տնտեսական վերելքն ԱՄՆ-ում արագացրեց արտադրության և կապիտալի համակենտրոնացման պրոցեսը։ Խոշորագույն մոնոպոլիստական միավո-

ռումների տնտեսական հզորությունն անչափ աճեց. 20-ական թվականների սկզբին ինդուստրիալ բանվորների կեսից ավելին և երկրի արդյունաբերական արտադրության ավելի քան $^{2}/_{3}$-ը գտնվում էին խոշորագույն մոնոպոլիաների տրամադրության տակ։

Գիգանտ տրեստների խմբի տիրապետությունն ամրապնդվում էր բուրժուական պետության ողջ ուժով։ Պատերազմի կարիքների համար երկրի տնտեսական ռեսուրսների ամենաարագ մոբիլիզացման նպատակով Միացյալ Նահանգներում 1917—1918 թթ. ստեղծվեցին ռազմական արդյունաբերության վարչություն և մի քանի ճյուղային ռազմատնտեսական վարչություններ, որոնց ֆունկցիայի մեջ էին մտնում ռազմական պատվերների բաշխումը, արդյունաբերական ձեռնարկությունների ապահովումը հումքով, վառելիքով, տրանսպորտային միջոցներով և բանվորական ուժով։ Անցումը դեպի էկոնոմիկայի ուղղակի պետական կարգավորմանը, որը տեղի ունեցավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, վկայում էր ԱՄՆ-ում պետական-մոնոպոլիստական տենդենցների ուժեղացման մասին։

Պետական կարգավորման սիստեմը դարձավ երկրի տնտեսությունը ֆինանսական օլիգարխիայի շահերին ենթարկելու կարևորագույն միջոցներից մեկը։ Թեև առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, արդյունաբերական վերելքի, գործազրկության կրճատման և արտաժամյա աշխատանքների ամենուրեք տարածման պայմաններում աշխատավարձի մակարդակը արդյունաբերության և տրանսպորտի կարևորագույն ճյուղերում որոշ չափով բարձրացավ, այնուամենայնիվ իր բացարձակ չափերով ԱՄՆ-ի բանվորների ճնշող մեծամասնության աշխատավարձը չափազանց անբավարար էր կյանքի նորմալ պայմաններն ապահովելու համար։ Պաշտոնական տվյալների համաձայն, ամերիկյան բանվորների 83 տոկոսը 1920 թ. ստանում էր տարեկան 1000 դոլլարից պակաս, այն դեպքում երբ հինգ մարդուց բաղկացած ընտանիքի կենսական մինիմումը, ամենահամեստ հաշվարկով, տարեկան կազմում էր 1200-ից մինչև 1500 դոլլար։ Պատերազմի ժամանակ զգալիորեն ուժեղացավ նաև բնակչության մանրբուրժուական զանգվածների քայքայումը։

Այդ ամենն ավելի էր բացահայտում երկրի ազգային հարստության բաշխման գործում եղած անհավասարությունը։ Ամերիկյան բանվորներին ուղղված նամակում (1918 թ.) Վ. Ի. Լենինը տվեց իմպերիալիստական Ամերիկայի աղաղակող սոցիալական հակադրությունների վառ պատկերը։ Նա գրում էր. «Ամերիկան ազատ և կրթված երկրների միջև առաջին տեղն է գրավել մարդկային միավորված աշխատանքի արտադրողական ուժերի զարգացման բարձրության, մեքենաների և նորագույն տեխնիկայի բոլոր հրաշալիքների կիրառման տեսակետից։ Միաժամանակ Ամերիկան դարձել է առաջին երկրներից մեկը, մի կողմից լկտիացած, կեղտի ու փարթամության մեջ խեղդվող մի բուռ միլիարդատերերի և մյուս կողմից հավերժապես աղքատության եղերին ապրող միլիոնավոր աշխատավորների միջև եղած անդունդի խորության տեսակետից»[1]։

Նույնիսկ ԱՄՆ-ի ազգային հարստության բաշխման մասին պաշտոնական տվյալներն էին լիովին հաստատում լենինյան այդ խոսքերը։ Խոշորագույն մոնոպոլիստների վերնախավը, որը կազմում էր երկրի բնակչության 1 տոկոսը, իր ձեռքում կենտրոնացրել էր նրա ազգային հարստության 59 տոկոսը։ Այդ նույն ժամանակ բանվոր դասակարգին, աշխատավոր ֆերմերությանն ու քաղաքային մանր բուրժուազիային, այսինքն՝ բնակչության 87 տոկոսին բաժին էր ընկնում ազգային հարստության միայն 10 տոկոսը։

Միացյալ Նահանգների սոցիալ-տնտեսական զարգացման մեջ տեղի ունեցած խոշոր տեղաշարժերն իրենց ետևից բերեցին լուրջ փոփոխություններ նաև երկրի քաղաքական կյանքում։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացումը ուղեկցվում էր ներքին քաղաքականության մեջ ռեակցիոն տենդենցների ուժեղացմամբ։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և առանձնապես Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Վիլսոնի կառավարությունը հրաժարվեց նախկինում իր հռչակած «նոր ազատության» լիբերալ լոզունգներից և կանգնեց բանվորական ու համադեմոկրատական շարժման նկատմամբ բռնություններ գործադրելու ուղու վրա։ 1919 թ. վերջին 1920 թ. սկզբին ԱՄՆ-ի արդարադատության մինիստր Պալմերի կարգադրությամբ երկրի ամբողջ տերիտորիայում անցկացվեցին «ռադիկալների» ոստիկանական շուրջկալներ։ Հազարավոր բանվորներ և առաջադիմական մտավորականության ներկայացուցիչներ, որոնք բռնվեցին խայտառակ «պալմերյան ռեյդերի» ժամանակ, բանտերը նետվեցին կամ Միացյալ Նահանգների սահմաններից արտաքսվեցին։ Իրենց գործունեությունն ակտիվացրին ամեն տեսակի ռեակցիոն, շովինիստական խմբերն ու միավորումները (ամերիկյան լեգեոն, Կու կլուքս կլանի տեռորիստական ջոկատներ)։

Դեմոկրատական ուժերի վրա մոնոպոլիստական ռեակցիայի հարձակումն անցնում էր «ամերիկանիզմի պաշտպանության» կեղծ լոզունգով։ Ամեն օր հիստերիկ կոչեր էին լսվում Ամերիկան բոլշևիզմից և այլ «օտարերկրյա կործանարար ազդեցությունից» «փրկելու» մասին։ Պաշտոնական գաղափարախոսությունից կատարված փոքր իսկ շեղումները կամ «ամերիկյան ապրելակերպը» փառաբանելուց հրաժարվելը դասվում էին «հակահայրենասիրական» գործողությունների շարքը։ Ռեակցիայի ու շովինիզմի մոլեգնումը առաջ բերեց երկրի բնակչության դեմոկրատական խավերի խոր դայրույթը և դարձավ ԱՄՆ-ում դասակարգային պայքարի սրման ևս մի կարևոր պատճառ։

Միացյալ Նահանգներում մասսայական շարժմանը նպաստող այդ ներքին գործոնների ազդեցությանը միացավ Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարական ազդեցությունը։ ԱՄՆ-ի աշխատավորներին ռուսական հեղափոխության իրադարձություններին ու գաղափարներին ծանոթացնելու գործում մեծ դեր խաղացին իրադարձությունների ականատեսներ, ամերիկյան ժուռնալիստներ և քաղաքական գործիչներ Ջոն Ռիդի, Ալբերտ Ռ. Վիլյամսի, Լուիզա Բրայանտի գրքերը, ինչպես նաև ԱՄՆ-ի ձախ սոցիալիստական մամուլը, որի էջերում 1918 թ. հրապարակվեցին սովետական իշխանության առաջին դեկրետները և Վ. Ի. Լենինի մի քանի հոդվածներ։ Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարական ուժեղ ազդեցությամբ զգալիորեն աճեց ԱՄՆ-ի բանվոր դասակարգի և մյուս դեմոկրատական ուժերի քաղաքական գիտակցականությունը։

Բանվորական շարժումն ԱՄՆ-ում առաջին համաշխարհային պատերազմից հետո

Միացյալ Նահանգներում մասսայական շարժման գլխավոր ձևը բանվոր դասակարգի գործադուլային պայքարն էր։ Եթե 1917 թ. երկրում գործադուլ էր արել 1227 հազ., իսկ 1918 թ.՝ 1240 հազ. բանվոր, ապա 1919 թ. գործադուլավորների թիվը հասավ 4160 հազ. մարդու։ ԱՄՆ-ի ողջ նախորդ պատմության ընթացքում բանվորների գործադուլային պայքարի մասշտաբներն այդքան մեծ չեն եղել։ Լուրջ փոփո-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 58։

խություններ տեղի ունեցան նաև հենց գործադուլային շարժման բնույթի մեջ։ 1919—1920 թթ. խոշոր գործադուլային ելույթների ընթացքում բանվորներն առաջադրում էին ոչ միայն ավանդական տնտեսական պահանջներ, այլև արդյունաբերության ու տրանսպորտի մի շարք ճյուղերի ազգայնացման լոզունգներ։

Բանվորների լայն աջակցությանն արժանացավ երկաթուղիների ազգայնացման պլանը, որն առաջադրեց երկաթուղայինների արհմիության ղեկավարությունը։ ԱՄՆ-ի արհմիութենական ակտիվիստների շրջանում աշխուժորեն քննարկվում էին նաև ածխահանքերի, հիդրոէներգետիկայի ձեռնարկությունների, հեռագրային ու հեռախոսային գծերի և հասարակական օգտագործման այլ ձեռնարկությունների ազգայնացման հարցերը։ Նույնիսկ Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիան չկարողացավ մի կողմ մնալ։ 1920 թ. հունիսին ԱԱՖ-ի հերթական կոնգրեսը ձայների մեծամասնությամբ բանաձև ընդունեց երկաթուղիների ազգայնացման պահանջի վերաբերյալ։

Գործադուլային պայքարի ավանգարդում ընթանում էին պողպատաձուլական արդյունաբերության բանվորները. դրա գագաթնակետը եղավ 1919 թ. պողպատաձուլողների գործադուլը։ Գործադուլի մասնակիցների թիվը հասավ 365 հազ. մարդու։ Բանվորները պահանջում էին սահմանել 8-ժամյա աշխատանքային օր, բարձրացնել աշխատավարձը, ճանաչել արհմիությունները և կնքել կոլեկտիվ պայմանագրեր։ Գործադուլի գլուխ անցավ պողպատաձուլական արդյունաբերության բանվորների կազմակերպման գծով ազգային կոմիտեն, որը հիմնվել էր 1918 թ. Ուիլյամ Ֆոստերի և արհմիութենական շարժման ձախ թևի այլ ներկայացուցիչների նախաձեռնությամբ։ Պողպատի տրեստի և մյուս ընկերությունների ղեկավարները, որոնց ձեռնարկությունները ներգրավվել էին գործադուլների մեջ, կտրուկ կերպով հրաժարվեցին բանակցություններ վարել բանվորների հետ։ Նրանք սկսեցին մասսայականորեն շտեյկբրեխերներ հավաքագրել, գործադուլային շրջանները հասցնելով տասնյակ հազարավոր ոչ որակավոր բանվորներ, որոնք արհմիութենական շարժման շարքերից դուրս էին գտնվում։ Գործադուլը ճնշելու համար կառավարությունը զորքեր ու ոստիկանություն ուղարկեց։ Այդ ծանր պայմաններում բանվորները գրեթե չորս ամիս արիաբար դիմացան։ Միայն 1920 թ. հունվարին նրանք ստիպված էին դադարեցնել պայքարը։ Պողպատ ձուլողների ելույթն անհետ չանցավ. 1920 թ. սկզբին պողպատի տրեստի ձեռնարկություններում մոտ 10 տոկոսով բարձրացվեց աշխատավարձը, իսկ դրանից անմիջապես հետո ձեռնարկատերերը համաձայնեցին նաև աշխատանքային շաբաթվա որոշ կրճատման։

Պողպատ ձուլող բանվորների հետ գրեթե միաժամանակ գործադուլային ակտիվ պայքարի ուղին կանգնեցին հանքափորները։ 1919 թ. սեպտեմբերին հանքափորների միացյալ միության կոնֆեդերացիան պահանջեց 60 տոկոսով բարձրացնել աշխատավարձը, ածխարդյունաբերության մեջ մտցնել 30-ժամյա աշխատանքային շաբաթ, արտաժամյա աշխատանքների համար սահմանել բարձր դրույքներ։ Հավանություն տրվեց նաև ածխահանքերի ազգայնացման անհրաժեշտության վերաբերյալ բանաձևին։ 1919 թ. նոյեմբերի 1-ին, այն բանից հետո, երբ ձեռնարկատերերը մերժեցին հանքափորների արհմիության պահանջները, ավելի քան 400 հազար հանքափորներ դադարեցրին աշխատանքը։ Գործադուլը շարունակվեց մինչև 1920 թ. մարտը, երբ կոմպրոմիսային համաձայնություն ձեռք բերվեց ածխահանքերի բանվորների աշխատավարձը միջին հաշվով 27 տոկոսով բարձրացնելու մասին։

1919—1920 թթ. գործադուլային խոշոր մարտերի ընթացքում ամերիկյան բանվորները որոշակի հաջողություններ հասան։ Չնայած ձեռնարկատերերի դիմադրությանը, որոնց կողմից հանդես էին գալիս և՛ տեղական իշխանությունները, և՛ ֆեդերալ կառավարության մարմինները, ԱՄՆ-ում տեղի ունեցած գործադուլային ելույթների կեսից ավելին այդ տարիներին ավարտվեցին գործադուլավորների լիակատար կամ մասնակի հաղթանակով։ Դա բանվորներին օգնեց որոշ չափով բարելավելու իրենց կյանքի և աշխատանքի պայմանները։

Հետպատերազմյան տարիներին զգալիորեն ամրապնդվեց նաև արհմիութենական շարժումը։ Եթե 1918 թ. աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի կազմի մեջ մտնող բոլոր արհմիություններում հաշվվում էր 2726 անդամ, ապա 1920 թ. մոտերքին ԱԱՖ-ի անդամների թիվը հասավ 4078 հազարի։ Բացի այդ, մի քանի հարյուր հազար մարդ հաշվվում էին երկաթուղայինների ևս չորս ընկերություններում, որոնք գործում էին ԱԱՖ-ից անկախ։ 20-ական թվականների սկզբին արհմիութենական շարժման մեջ ներգրավված էին ընդամենը 5 մլն ամերիկյան բանվորներ։

Դրա հետ մեկտեղ հետպատերազմյան առաջին տարիներին բանվորների մասսայական ելույթների ընթացքում ի հայտ եկավ ամերիկյան պրոլետարիատի գաղափարական և կազմակերպական թուլությունը։ Արհմիութենական շարժման մեջ շարունակում էին ղեկավար դեր կատարել ԱԱՖ-ի պարագլուխները, որոնք արտահայտում էին բանվորական արիստոկրատիայի շահերը, որի տնտեսական դիրքերը զգալիորեն ամրապնդվեցին առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում։ Այդ տարիներին ԱՄՆ-ի մոնոպոլիստական բուրժուազիան, որը վիթխարի գերշահույթներ էր ստանում ռազմական եկամտաբեր մատակարարումներից, ավելի մեծ հնարավորություններ ուներ, քան անցյալում, բանվոր դասակարգի վերնախավերին սիստեմատիկաբար կաշառելու համար։ Արտահայտելով բանվորական արիստոկրատիայի հայացքները, ԱՄՆ-ի արհմիութենական շարժման ռեֆորմիստական պարագլուխներն ԱԱՖ-ի պրեզիդենտ Սեմյուել Գոմպերսի գլխավորությամբ հանդես էին գալիս պայքարի հեղափոխական մեթոդների դեմ և քարոզում պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև դասակարգային համագործակցության անհրաժեշտությունը։

Ռեֆորմիզմի տիրապետությունը ԱՄՆ-ի բանվորական շարժման մեջ սահմանափակում էր ամերիկյան պրոլետարիատի գործադուլային պայքարի հնարավորությունները։ Ռեֆորմիստական պարագլուխները հանդես էին գալիս գործադուլային պիկետների և պայքարի այլ առավել վճռական միջոցների օգտագործման դեմ։ Նրանք բազմիցս ուղղակի գործարքների էին դիմում կապիտալիստների հետ, ձգտելով աշխատանքի լավագույն պայմաններ ձեռք բերել որակյալ բանվորների վերնախավի համար, բախտի քմահաճույքին թողնելով շարքային գործադուլավորների զանգվածներին։ Անբարենպաստ ազդեցություն էր գործում նաև այն, որ արհմիությունների մեծամասնությունը կառուցված էր ոչ թե արտադրական, այլ արտադրամասային սկզբունքով։ Այդ պայմաններում արհմիութենական շարժումից դուրս էին մնում միլիոնավոր ոչ որակյալ բանվորներ։ Նույնիսկ հետպատերազմյան առաջին տարիներին, ԱԱՖ-ի շարքերի բուռն աճի ժամանակաշրջանում, ամերիկյան բանվորների 80 տոկոսը մնում էր արհմիություններից դուրս։ Մյուս կողմից, արհմիութենական շարժման արտադրամասային կառուցվածքը մանրատում էր կազմակերպված բանվորների ուժերը, խանգարում նրանց համերաշխ գոր-

ծողություններին և դրանով իսկ դժվարացնում հաջող գործադուլային պայքարը։

Աշխատավորների պայքարի ևս մեկ կարևոր ուղղություն եղավ Սովետական Ռուսաստանի հետ համերաշխության շարժումը։ Միլիոնավոր ամերիկյան բանվորներ համակրանքով էին հետևում հեղափոխական Ռուսաստանի ժողովուրդների պայքարին։ Ճիշտ է, նրանց մեծամասնությունը դեռ հեռու էր այն մեծ իրադարձությունների իսկական էությունն ըմբռնելուց, որոնք տեղի ունեցան Ռուսաստանում։ Սակայն դասակարգային բնազդական զգացումը, որպես կանոն, բանվորներին մղում էր երիտասարդ սովետական հանրապետության անկեղծ կողմնակիցների լագերը։ Մասսայական միտինգների ու ցույցերի ընթացքում բանվորները պահանջում էին Ռուսաստանից դուրս բերել բոլոր օտարերկրյա զորքերը, ճանաչել սովետական կառավարությանը և բարեկամական հարաբերություններ հաստատել Միացյալ Նահանգների ու սովետների երկրի միջև։ Համերաշխության շարժման զարգացման գործում մեծ դեր խաղաց «Սովետական Ռուսաստանի բարեկամների լիգան», որը ստեղծվեց 1919 թ. հունիսին՝ Նյու Յորքում։

Բանվորներն օգտագործում էին պայքարի նաև այլ մեթոդներ։ 1918 թ. գարնանը սկսվեց կարմիր բանակ մտնելու համար ԱՄՆ-ում կամավորների ջոկատներ կազմակերպելու շարժումը։ Հարյուրավոր ամերիկացիներ ցանկություն հայտնեցին զենքը ձեռքին պաշտպանել պրոլետարական դիկտատուրայի աշխարհում առաջին պետությունը։ Է՛լ ավելի մեծ նշանակություն ունեցան սպիտակգվարդիական բանակների և Անտանտի ինտերվենցիոն զորքերի համար նախատեսված ռազմական նյութերը բեռնելուց բանվորների հրաժարվելու դեպքերը։ 1919 թ. աշնանն այդ ուղու վրա կանգնեցին Սիեթլի նավահանգստային բանվորները, ապա շարժումն ընդգրկեց Բալտիմորի և Ֆիլադելֆիայի նավահանգստային բանվորներին։

Շարժում հանուն աշխատավորների քաղաքական անկախ գործողությունների

Միացյալ Նահանգներում մասսայական շարժման հետպատերազմյան վերելքի բնորոշ գիծը աշխատավորների քաղաքական ինքնուրույն գործողությունների, բանվորական կուսակցության ստեղծման համար ծավալված շարժումն էր։ Այդ շարժումը եղավ մոնոպոլիաների բռնադատումից ժողովրդական զանգվածների զայրույթի, բուրժուական կուսակցությունների քաղաքականությունից աշխատավորների խոր հիասթափման արդյունքը։

Քաղաքական անկախ գործողությունների համար մղվող պայքարում նախաձեռնություն հանդես բերեցին արհմիութենական շարժման ձախ շրջանները։ 1918 թ. նոյեմբերին աշխատանքի՝ Չիկագոյի ֆեդերացիայի ղեկավարությունը մշակեց մանրամասն ծրագիր, որը նախատեսում էր պայքար հանուն մոնոպոլիաների տիրապետության սահմանափակմանն ուղղված սոցիալ-տնտեսական խոր վերափոխումների անցկացման։ Դրանք երկաթուղիների, շոգենավային ընկերությունների, հիդրոէներգետիկայի ձեռնարկությունների, հեռագրային ու հեռախոսային գծերի, հացահատիկային էլևատորների և չօգտագործվող հողի ազգայնացման, խոշոր կապիտալի վրա հարկեր սահմանելն ուժեղացնելու, 8-ժամյա աշխատանքային օր և նվազագույն աշխատավարձ սահմանելու, արհմիություններում միավորվելու և կոլեկտիվ պայմանագիր կնքելու՝ բանվորների իրավունքը ճանաչելու, սոցիալական ապահովության պետական սիստեմ մտցնելու, ԱՄՆ-ի քաղաքական կարգերը դեմոկրատացնելու, Սովետական Ռուսաստանի դեմ ինտերվենցիան դադարեցնելու պահանջներ էին։

Դեմոկրատական այդ ծրագրի հիման վրա 1918—1919 թթ. շարժում ծավալվեց բանվորական ինքնուրույն կուսակցություն կազմակերպելու համար։ 1919 թ. նոյեմբերին Չիկագոյում անցկացվեց համաամերիկյան բանվորական համագումար, որը որոշում ընդունեց ազգային բանվորական կուսակցության ստեղծման մասին։

Աշխատանքի՝ Չիկագոյի ֆեդերացիան և ազգային բանվորական կուսակցությունը, որը ձևավորվեց նրա գաղափարական ազդեցության տակ, դարձան դեմոկրատական շարժման ձախ թևը։ Սակայն դեմոկրատական շարժման մեջ գոյություն ուներ նաև ավելի չափավոր թև։ Նրա գաղափարախոսները հանդես էին գալիս մոնոպոլիաների բռնադատման դեմ, առաջադրում առաջադիմական ռեֆորմների ծրագիր, քաղաքական անկախ գործողությունների ձգտում։ Բայց երկկուսակցական սիստեմին գերի մնալով, նրանք գերադասում էին այդ գործողություններն իրականացնել գոյություն ունեցող բուրժուական կուսակցությունների շրջանակներում։ Նրանք աշխատում էին հասնել այն բանին, որպեսզի հանրապետական և դեմոկրատական կուսակցությունների ցուցակներով իշխանության տեղական մարմիններում և ֆեդերալ կոնգրեսում ընտրվեն իրենց դեպուտատներ։ Տակտիկական այդ գիծը պաշտպանություն էր գտնում մի քանի արհմիությունների, հատկապես երկաթուղայինների ընկերության կողմից, ինչպես նաև ֆերմերության, քաղաքային մանր և միջին բուրժուազիայի և առաջադիմական մտավորականության շրջանում։

Նման տակտիկայի կողմնակիցները հենվում էին անկուսակցական լիգայի, 1915 թ. Դակոտայում ստեղծված ֆերմերական այդ կազմակերպության գործունեության փորձի վրա։ 1918 թ. ընտրություններին լիգան խոշոր հաղթանակ տարավ։ Աշխատելով իր թեկնածուներին առաջադրել հանրապետական կուսակցության ցուցակներով, նա Հյուսիսային Դակոտայում նվաճեց բոլոր հիմնական կառավարչական պաստերը, ներառյալ նաև նահանգապետի պոստը, և բացարձակ մեծամասնություն ապահովեց տեղական օրենսդիր ժողովի երկու պալատներում։

1919—1920 թթ. ընթացքում անկուսակցական լիգայի ղեկավարությամբ Հյուսիսային Դակոտայում անցկացվեցին մի շարք կարևոր դեմոկրատական ռեֆորմներ։ Տնտեսական գործունեությունը ֆինանսավորելու համար ստեղծվեց պետական բանկ։ Հյուսիսային Դակոտայի իշխանությունները սկսեցին հասարակական էլևատորների և ալրաղաց ֆաբրիկաների շինարարությունը, որոնք պետք է դուրս մղեին միջնորդական մոնոպոլիաների ձեռնարկություններին։ Կազմվեց բնակելի տների շինարարության ասոցիացիա, որը ձեռնամուխ եղավ բանվորներին ու ֆերմերներին արտոնյալ վարկեր տալուն՝ նրանց կողմից նոր բնակարաններ ձեռք բերելու համար։ Վերջապես, անցկացվեցին այնպիսի միջոցառումներ, ինչպես պրոդրեսիվ եկամտահարկի սահմանումը, երկաթուղային տարիֆների և պարտքերի դիմաց տոկոսային դրույքների նվազեցումը, բանվորների կողմից աշխատունակությունը կորցնելու դեպքում նրանց համար փոխհատուցման սիստեմ մտցնելը։

Անկուսակցական լիգայի եռանդուն գործողությունները հանդիպեցին մոնոպոլիստական կապիտալի կատաղի դիմադրությանը։ Այդուհանդերձ նրա ժողովրդականությունը տարածվեց Հյուսիսային Դակոտայի սահմաններից հեռու։ 1920 թ. սկզբին անկուսակցական լիգայի բաժանմունքներ գոյություն

ունեին Արևմուտքի 15 նահանգներում։ Դրանցում հաշվվում էին 250 հազ. անդամներ։

Դեմոկրատական շարժման չափավոր թևին էին հարում նաև մանրբուրժուական տարբեր խմբավորումներ, որոնք հայտնի էին առաջադիմականներ ընդհանուր անունով։ Դրանց մեջ առավել ակտիվ դեր էր խաղում «48-ի կոմիտեն», մի կազմակերպություն, որը ձևավորվել էր 1919 թ. առաջադիմական կուսակցության նախկին անդամների ոչ մեծ խմբի բազայի վրա։ Այդ կուսակցությունն ստեղծվել էր 1912 թ. ընտրական կամպանիայի ընթացքում, բայց դրանից հետո ցրվեց։

1918—1920 թթ. դեմոկրատական շարժման մեջ աչքի ընկնող տեղ էր գրավում նաև ձախ հանրապետականների խումբը՝ սենատոր Ռոբերտ Մ. Լաֆոլետի գլխավորությամբ։ Այս խումբն ակտիվորեն պրոպագանդում էր դեմոկրատական հակամոնոպոլիստական ռեֆորմների ծրագիր, որի տեսական հիմքը ամերիկյան հայտնի տնտեսագետ Տորստեյն Վեբլենի հայացքներն էին։ Ձախ հանրապետականները և առաջադիմական այլ հոսանքներ հանդես էին գալիս նաև Սովետական Ռուսաստանի հանդեպ ամերիկյան կառավարության քաղաքականության վճռական դատապարտմամբ։ Դեռ 1918 թ. նրանք ագիտացիա սկսեցին հանուն հակասովետական ինտերվենցիայի դադարեցման, իսկ հետո ներգրավվեցին ԱՄՆ-ի և սովետական պետության միջև դիվանագիտական և առևտրական հարաբերությունների հաստատման համար մղվող կամպանիայի մեջ։

Ռադիկալ ֆերմերական խմբերն ու մանրբուրժուական առաջադիմական հոսանքներն արտահայտում էին կապիտալիստական հասարակության միջին խավերի շահերը։ Միացյալ Նահանգների այն ժամանակվա բնակչության մեջ միջին խավերի տեսակարար կշիռը բավական մեծ էր։ 1920 թ. մարդահամարի տվյալներով նրանք կազմում էին ԱՄՆ-ի աշխատող բնակչության ավելի քան 40 տոկոսը։ Իմպերիալիզմի պայմաններում մանրբուրժուական սոցիալական խմբերի դրությունը նրանց օպոզիցիայի մեջ էր դնում մոնոպոլիաների նկատմամբ։ Իհարկե, լինելով հասարակության միջանկյալ խավերի ներկայացուցիչներ, նրանք դեմոկրատական շարժման մեջ ոչ քիչ պատրանքներ ու նախապաշարումներ էին մացնում։ Բայց առաջավոր բանվորների հետ ունեցած իրենց բոլոր տարաձայնություններով հանդերձ մանրբուրժուական առաջադիմական խմբավորումները նրանց հետ համերաշխ էին մոնոպոլիաների տիրապետությունը սահմանափակելու ձգտման մեջ։ Իսկ դա նշանակում էր, որ Միացյալ Նահանգներում նախադրյալներ էին ստեղծվում հասարակության հակամոնոպոլիստական խավերի միավորման համար։

1920 թ. հուլիսին ազգային բանվորական կուսակցության երկրորդ համագումարում որոշում ընդունվեց ԱՄՆ-ի ֆերմերա-բանվորական կուսակցության մեջ նրա վերակազմվելու մասին։ Նոր կուսակցության կազմի մեջ մտան արհմիութենական շարժման ձախ ուժերը, ինչպես նաև ֆերմերական մի քանի ռադիկալ խմբեր և «48-ի կոմիտեի» անդամների մեծամասնությունը։ ՖԲԿ-ի քաղաքական պլատֆորմը կազմված էր ազգային բանվորական կուսակցության ծրագրի հիման վրա։

Այսպիսով, պլայքարի պրակտիկ փորձն առաջավոր բանվորներին ու ֆերմերներին ցույց էր տալիս, որ անհրաժեշտ է երկկուսակցական սիստեմի շրջանակներում քաղաքական անկախ գործողություններից անցնել կապերն այդ սիստեմի հետ խզելուն և երրորդ կուսակցություն ստեղծելուն։ Այդ պատճառով էլ ֆերմերա-բանվորական կուսակցության առաջացումը մեծ կարևորության

իրադարձություն էր, չնայած որ 1920 թ. նոր կուսակցությունը փոքրաթիվ էր և նվազ ազդեցիկ։

ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցության ստեղծումը

Առաջին համաշխարհային պատերազմից հետո խոր տեղաշարժեր առաջացան ԱՄՆ-ի սոցիալիստական շարժման զարգացման մեջ։ Դեռ պատերազմի տարիներին այնտեղ ամրապնդվեցին ձախ ուժերը։ 1915 թ. ձախ ինտերնացիոնալիստների խմբի նախաձեռնությամբ կազմվեց սոցիալիստական պրոպագանդայի լիգան, որը դարձավ Ամերիկայի սոցիալիստական կուսակցության շարքերում գտնվող բոլոր հեղափոխական տարրերի ձգողական կենտրոնը։

Ամերիկայի սոցիալիստական կուսակցության ռեֆորմիստական ղեկավարությունը Վիկտոր Բերգերի և Մորիս Հիլկվիտի գլխավորությամբ փորձում էր խանգարել ձախ թևի աճող ազդեցությանը։ Սակայն Հոկտեմբերյան հեղափոխության ներգործությամբ հեղափոխական տարրերի գաղափարական աճի պրոցեսն է՛լ ավելի արագացավ։ 1919 թ. մարտին սոցիալիստական պրոպագանդայի լիգայի Նյու Յորքի սեկցիան հրապարակեց «Սոցիալիստական կուսակցության ձախ թևի մանիֆեստն ու ծրագիրը»։

Մանիֆեստը Միացյալ Նահանգների բանվոր դասակարգին կոչ էր անում ընթանալ 1917 թ. ռուսական պրոլետարիատի ցույց տված ուղիով։ Մանիֆեստում շարադրված էր պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման և հասարակության սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարի ծրագիրը։ Ձախ թևի ներկայացուցիչներն անհրաժեշտ էին համարում գումարել կուսակցության արտակարգ համագումար։ Նրանք պահանջում էին, որպեսզի այդ համագումարում որոշում ընդունվի II Ինտերնացիոնալից Ամերիկայի սոցիալիստական կուսակցության դուրս գալու և Կոմինտերնին միանալու մասին։ 1919 թ. գարնանը ձախ թևի թեկնածուները վճռական հաղթանակ տարան կուսակցության ղեկավար մարմինների ընտրություններում։ Նրանց օգտին տրվեց ձայների ընդհանուր թվի մոտ 80 տոկոսը։

Նման իրադրության պայմաններում կուսակցության հին ղեկավարությունը կանգնեց ներկուսակցական դեմոկրատիայի կոպիտ խախտման ուղին։ 1919 թ. մայիսի վերջին նա հապճեպ գումարեց հին ազգային գործկոմի նստաշրջան, որը որոշում ընդունեց ընտրությունների արդյունքների վերացման և կուսակցությունից ձախ թևի կազմակերպությունները վտարելու մասին։ Վտարվեց կուսակցության մոտ 55 հազ. ակտիվ անդամ, այսինքն՝ նրա կազմի ավելի քան կեսը։

1919 թ. հունիսին Նյու Յորքում անցկացվեց սոցիալիստական կուսակցության ձախ կազմակերպությունների համաազգային կոնֆերանսը։ Սակայն կոնֆերանսում լուրջ տարաձայնություններ առաջացան պայքարի հեռանկարների հարցերի վերաբերյալ։ Պատգամավորների մի մասը հանդես եկավ սոցիալիստական կուսակցության հետ կապերն անհապաղ խզելու և շտապ ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցություն ստեղծելու նպատակով ձախ թևի համամերիկյան համագումար գումարելու առաջարկությամբ։ Բայց կոնֆերանսի մասնակիցների մեծամասնությունը, այդ թվում ձախ սոցիալիստների ազդեցիկ պարագլուխներ Ջոն Ռիդն ու Ալֆրեդ Վագենկնեխտը գտնում էին, որ հարկավոր է վերցնել սոցիալիստական կուսակցության անդամների մեծամասնությանը հեղափոխական սոցիալիզմի կողմը գրավելու և այն պրոլետարիատի մարտական կուսակցության վերածելու կուրս։ Կոնֆերանսում չհաջողվեց հասնել միասնական կարծիքի։ Դա հասցրեց ձախ թևի պառակտմանը երկու խմբի։

Սոցիալիստական կուսակցությունը հեղափոխական մարքսիզմի դիրքերը փոխադրելուն թեքելու ապարդյուն փորձերից հետո Ռիդ-Վագենկնեխտի խումբը որոշեց ձախ թևի մի այլ խմբի հետ միանալ՝ համատեղ ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցություն հռչակելու նպատակով։ Այնուամենայնիվ այդ ժամանակաշրջանում չհաջողվեց ձախ թևի բոլոր կազմակերպությունները միավորել մեկ կուսակցության շարքերում։ 1919 թ. սեպտեմբերի 1-ին Չիկագոյում բացված կոմունիստական կուսակցության հիմնադիր համագումարը հրաժարվեց միավորվել Ռիդ-Վագենկնեխտի խմբի անդամների հետ և նրանց առաջարկեց կուսակցության մեջ ընդունվել անհատական կարգով։ Այդ նույն օրն էլ համագումարը որոշում ընդունեց Ամերիկայի կոմունիստական կուսակցության ստեղծման մասին։ ԱԿԿ-ի պատասխանատու քարտուղար ընտրվեց Չարլզ Ռուտենբերգը։

Ռիդ-Վագենկնեխտի խումբը գումարեց իր սեփական համագումարը, որը հռչակեց զուգահեռ կոմունիստական կազմակերպության՝ Ամերիկայի կոմունիստական բանվորական կուսակցության ստեղծումը։ ԱԿԲԿ-ի պատասխանատու քարտուղարի պոստը գրավեց Ալֆրեդ Վագենկնեխտը։

Այսպիսով, 1919 թ. Միացյալ Նահանգներում առաջացան երկու ինքնուրույն կոմունիստական կազմակերպություններ։ Նրանց միջև ծրագրային տարբերություններ չկային։ Նրանք միմյանցից տարբերվում էին գլխավորապես իրենց ազգային կազմով, որը պայմանավորեց մի քանի առանձնահատկություններ նրանց բնույթի և կազմակերպման կառուցվածքի մեջ։ Ամերիկայի կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվեցին առավելապես սոցիալիստ-իմմիգրանտները։ Նրանք միավորվում էին ազգային ֆեդերացիաներում, որոնք որոշակի աստիճանով պահպանում էին ինքնավարություն։ Ընդհակառակը, կոմունիստական բանվորական կուսակցությունը բաղկացած էր գլխավորապես բնիկ ամերիկացիներից և հիմնվում էր խստագույն ցենտրալիզմի սկզբունքների վրա։ ԱԿԿ-ի անդամները, որպես կանոն, տեսականորեն ավելի պատրաստված էին, այն դեպքում երբ ԱԿԲԿ-ի կազմում ավելի շատ կային պրակտիկ աշխատողներ, որոնք սերտորեն կապված էին պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների հետ։ Հետևապես, 1919 թ. առաջացած երկու կոմունիստական կուսակցությունները կարծես ներկայացնում էին Ամերիկայի կոմունիստական շարժման տարբեր կողմերը, որոնց անհրաժեշտ էր գործի հաջողության համար կապել միմյանց հետ։

Հենց այդ պատճառով Կոմինտերնի գործկոմը ամերիկյան կոմունիստներին ուղղված դիմումում նրանց խորհուրդ էր տալիս հնարավորին չափ շուտ միավորել իրենց ուժերը մեկ կուսակցության շրջանակներում։ Սակայն միայն 1921 թ. մայիսին Կոմինտերնի միջնորդությամբ, վերջապես, հաջողվեց ուղիներ գտնել Ամերիկայի միասնական կոմունիստական կուսակցության ստեղծման համար։ Այդ կուսակցության քարտուղարի պոստում ընտրվեց Չարլզ Ռուտենբերգը։ Կոմունիստական կուսակցության առաջացումն առաջընթաց մեծ քայլ էր ԱՄՆ-ի բանվորական շարժման զարգացման մեջ։ Այժմ օրակարգում դրված էր մի այլ կարևոր խնդիր՝ հեղափոխական այդ ավանգարդը կապել բանվորների ու ֆերմերների զանգվածների հետ։

Սակայն դեռ 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին երկու կոմունիստական կուսակցությունները դաժան բռնությունների ենթարկվեցին և ստիպված էին անցնել անլեգալ դրության։ Ընդհատակի պայմաններում թուլացան կոմունիստների առանց այն էլ անկայուն կապերը մասսաների հետ, իսկ երկու կուսակցությունների թվակազմը խիստ կրճատվեց. 1919 թ. սեպտեմբերին նրանց

շարքերում հաշվվում էր 60 հազ. անդամ, իսկ 1920 թ. մայիսին՝ մոտ 10 հազար։

Անբարենպաստ հետևանքներ ունեցան նաև դոգմատիզմն ու աղանդավորությունը, որոնք ամերիկյան կոմունիստները ժառանգեցին դելեոնիզմի տեսական ազդեցության տակ եղած ձախ սոցիալիստներից։ Հաշվի չառնելով կոնկրետ պատմական իրադրության յուրահատկությունները և բացահայտորեն գերագնահատելով ամերիկյան պրոլետարիատի հեղափոխական հնարավորությունները, կոմունիստները սխալմամբ իրենց մերձակա խնդիրն էին համարում կապիտալիզմի ոչնչացումը և ԱՄՆ-ում պրոլետարական դիկտատուրայի հաստատումը։ Նրանք ժխտում էին մասնակի պահանջների համար պայքարելու անհրաժեշտությունը և հրաժարվում համագործակցել այն կուսակցությունների ու կազմակերպությունների հետ, որոնք կապիտալիզմի դեմ հեղափոխական պայքար չէին մղում։ Նման դիրքի արդյունքը եղավ պրոլետարիատի հեղափոխական ավանգարդի մեկուսացումը բանվորների ու ֆերմերների հիմնական զանգվածից։

Հանրապետականների անցումը իշխանության գլուխ և նրանց քաղաքականությունը

1920 թ. ամռանը Միացյալ Նահանգներում սկսվեց խոր տնտեսական ճգնաժամ, որը տարածվեց արդյունաբերության բոլոր ճյուղերում։ Խիստ կրճատվեցին պողպատի ձուլումը, քարածխի արդյունահանումը, մեքենաշինության արտադրանքը, ավտոմոբիլների արտադրությունը և այլն։

Բանվոր դասակարգի՝ նույնիսկ արդյունաբերական վերելքի պայմաններում շափազանց ծանր դրությունը տնտեսական ճգնաժամի սկսվելով է՛լ ավելի վատացավ։ Գործազուրկների թիվը 1921 թ. հասավ 5,7 մլն մարդու։ Վատացան արտադրության մեջ մնացած բանվորների նաև աշխատանքային պայմանները։ Ռեալ աշխատավարձը միջին հաշվով նվազեց 20—25 տոկոսով։

Արդյունաբերության մեջ գերարտադրության ճգնաժամը միահյուսվեց ագրարային ճգնաժամի հետ։ 1921 թ. գարնան մոտերքին գյուղատնտեսական ապրանքների գներն ԱՄՆ-ում իջան 3—4 անգամ։ Դա այն աստիճան նվազեցրեց ֆերմերների եկամուտները, որ նրանցից շատերի համար արտադրական ծախսերի հատուցումն անհնարին դարձավ։ Տասնյակ հազարավոր ֆերմերական տնտեսություններ քայքայվեցին։

Ծանր դրությունից առաջացած բանվորների ու ֆերմերների դայրույթն արտահայտվեց արդեն 1920 թ. ընտրական կամպանիայի ընթացքում։ Այն շրջվեց իշխանության գլուխ կանգնած կուսակցության դեմ։ Դրանից հմտորեն օգտվեցին հանրապետականները։ 1920 թ. ընտրություններում նրանք վճռական հաղթանակ տարան. ԱՄՆ-ի պրեզիդենտի պոստի հանրապետական կուսակցության թեկնածու Ուորեն Գարդինգը հավաքեց ավելի քան 16 մլն ձայն, այն դեպքում երբ դեմոկրատների թեկնածու Ջեյմս Կոքսին հաջողվեց ստանալ միայն 9 մլն ձայն։ Ութամյա ընդմիջումից հետո հանրապետական կուսակցությունը նորից հայտնվեց կառավարման ղեկի մոտ։

Գարդինգի կառավարության մեջ առավել կարևոր դեր էին խաղում ֆինանսների մինիստր Էնդրյու Մելլոնը՝ ԱՄՆ-ի ամենահզոր մոնոպոլիստական խմբերից մեկի ղեկավարը, և առևտրի մինիստր Հերբերտ Հուվերը, որը սերտորեն կապված էր ֆինանսական օլիգարխիայի ազդեցիկ շրջանների հետ։ Նոր վարչակազմի քաղաքականությունը ծայրահեղ ռեակցիոն եղավ։ Միլիոնավոր բանվորներ ու ֆերմերներ այդպես էլ օգնություն չստացան, բայց դրա փոխարեն բոլոր պայմանները ստեղծվեցին մոնոպոլիստների շահույթների ա-

վելացման համար։ Մոնոպոլիաներին Հարդինգի կառավարության տված շրոայլ նվերներից մեկը եղավ 1921 թ. հարկային օրենքը, որը վերացրեց կորպորացիաների գերշահույթների վրա պատերազմի ժամանակ սահմանված հարկը և խիստ պակասեցրեց բարձր եկամուտներ ստացող անձանց հարկերը։ 1922 թ. սեպտեմբերին ուժի մեջ մտավ Ֆորդնի-Մակամբերայի տարիֆային նոր օրենքը, որը նախատեսում էր կարևոր արդյունաբերական ապրանքների՝ Միացյալ Նահանգներ կատարվող արտահանության մաքսերի խիստ բարձրացում։ Դրան հետևեց գների աճը ներքին շուկայում։ Մոնոպոլիաների շահույթներն անմիջապես բարձրացան։

Հարդինգի կառավարությունը հանդես եկավ պետական կարգավորման քաղաքականության դեմ։ «Նորմալ կարգերին» վերադառնալու լոզունգով հանրապետականները կենսագործեցին հասարակության տնտեսական կյանքում պետության չմիջամտելու սկզբունքը։ Կարճ ժամկետում վերացվեցին պետական կարգավորման մարմինները։ Ֆեդերալ գործակալությունները, որոնք պատերազմի տարիներին վերահսկողություն էին իրականացնում ԱՄՆ-ի էկոնոմիկայի կարևորագույն ճյուղերի նկատմամբ, վերացվեցին։ Դա վկայում էր ԱՄՆ-ում պետական-մոնոպոլիստական տենդենցների թուլացման մասին։ Սակայն, չնայած կապիտալիստական պետության տնտեսական ֆունկցիաների կրճատմանը, խոշոր մոնոպոլիստներն անսահմանափակ հնարավորություն պահպանեցին կառավարական ամենատարբեր դրամական խոշոր օժանդակություն ստանալու համար։ Հանուն շահույթների ավելացման խոշոր կապիտալի ներկայացուցիչները կանգ չէին առնում օրենքի ուղղակի խախտման առջև։ 1921—1922 թթ. խոշոր նավթարդյունաբերողներ Դոգենին և Սինկլերը կաշառելով ներքին գործերի մինիստր Ֆոլլին, անօրինական ճանապարհով վարձակալությամբ պետական նավթաբեր շրջաններ ստացան Կալիֆորնիայում և Վայոմինգում։ Մոնոպոլիաների հետ խարդախ գործարքների ուղու վրա կանգնեցին արդարադատության մինիստր Դոգերտին, պատերազմի վետերանների օգնության ֆեդերալ բյուրոյի ղեկավար Ֆորբսը և հանրապետական վարչակազմի այլ բարձրաստիճան գործիչներ։

Հանրապետական վարչակազմի՝ Հարդինգի հետ իրենց մոտիկությամբ հայտնի շատ անդամների գործողություններն այնքան սկանդալային բնույթ ստացան, որ դա սկսեց վարկաբեկել իրեն իսկ՝ պրեզիդենտին։ Եվ միայն անսպասելի մահը, որը տեղի ունեցավ 1923 թ. օգոստոսին, նրան փրկեց մերկացումների խայտառակությունից։

Հարդինգի մահից հետո պրեզիդենտական պոստը զբաղեցրեց փոխպրեզիդենտ Կալվին Կուլիջը։ Սպիտակ տան նոր տերը նույնքան դժգույն ու սովորական քաղաքական գործիչ էր, որքան և Հարդինգը։

Մոնոպոլիստական բուրժուազիայի շահերը վճռական դեր խաղացին նաև երկրի արտաքին քաղաքական կուրսի որոշման գործում։ Հանրապետական պարագլուխները հաշվի առան այն լուրջ պարտությունը, որը կրել էր պրեզիդենտ Վիլսոնի գլխավորած ամերիկյան պատվիրակությունը 1919 թ. Փարիզի կոնֆերանսում։ Ի հակակշիռ Ազգերի լիգայի շրջանակներում «միջազգային համագործակցության» վիլսոնյան լոզունգի, հանրապետական կուսակցության ղեկավարությունը առաջադրեց այնպիսի սկզբունքներ, ինչպես եվրոպական երկրների հետ ռազմաքաղաքական դաշինքներից հրաժարվելը և Միացյալ Նահանգների տնտեսական էքսպանսիայի ակտիվացումը։ Հետևապես, Հարդինգի վարչակազմը ձգտում էր նոր մեթոդներով հասնել միևնույն նպատակին՝ Ամերիկայի համաշխարհային հեգեմոնիայի նվաճմանը։

1921 թ. օգոստոսին ԱՄՆ-ի և Գերմանիայի միջև ստորագրվեց առանձին, երկկողմանի պայմանագիր, ըստ որի Միացյալ Նահանգներն ստացան բոլոր այն իրավունքները, որոնք նրանց տրվել էր Վերսալյան պայմանագրով։ Դրա հետ մեկտեղ համաձայնագրի մեջ հատուկ վերապահում էր արվում, որ ամերիկյան կառավարությունը ոչ մի ձևով իրեն կապված չի համարում այդ պայմանագրի որևէ հոդվածի հետ։

«Ազգերի ազատության» լոզունգի ներքո Միացյալ Նահանգներն ակտիվ պայքար էին մղում թույլ զարգացած երկրներում իրենց դիրքերն ամրապնդելու համար։ Ամերիկյան կապիտալը եռանդուն կերպով արմատավորվում էր Կենտրոնական և մասամբ Հարավային Ամերիկայում։ Խիստ ուժեղացավ ԱՄՆ-ի տնտեսական էքսպանսիան Հեռավոր Արևելքում, հատկապես Չինաստանում։ Այդ բոլորը լուրջ սպառնալիք էր ստեղծում Անգլիայի միջազգային դիրքերի համար։ 20-ական թվականների սկզբից ի վեր անգլո-ամերիկյան անտագոնիզմը միջազգային հակասությունների սիստեմում առաջին պլան մղվեց։ Շեշտակիորեն սրվեցին հակասությունները նաև ԱՄՆ-ի ու Ճապոնիայի միջև։ Միացյալ Նահանգները, որոնք իրենց «կողոպտված» էին համարում Վերսալում, ձգտում էին ինչ գնով էլ լինի ուժանշ վերցնել։ 1919 թ. Փարիզի կոնֆերանսից արդեն երկու տարի անց ամերիկյան դիվանագիտությունը Վաշինգտոնի կոնֆերանսում կարողացավ իր ակտիվում գրանցել առաջին խոշոր հաղթանակը։

1921—1922 թթ. Վաշինգտոնի կոնֆերանսում ԱՄՆ-ի պատվիրակությունը, հենվելով Ամերիկայի աճած տնտեսական հզորության վրա, օգտագործելով ուրիշ երկրների վրա ներգործության այնպիսի կարևոր լծակ, ինչպես ռազմական պարտքերը, մի շարք էական զիջումների հասավ իր իմպերիալիստական պարտնյորների կողմից։ Ընդունվեցին Չինաստանի վերաբերյալ «բաց դռների» դոկտրինան, ծովային սպառազինությունների սահմանափակման և մասնակից երկրների՝ խաղաղ օվկիանոսում գտնվող կղզային տիրույթների անձեռնմխելիության վերաբերյալ պայմանագրերը, մի բան, որը վկայում էր միջազգային հարաբերություններում ԱՄՆ-ի քաղաքական կշռի մեծացման մասին։

Սովետական Ռուսաստանի նկատմամբ Հարդինգի կառավարությունը վերցրեց Սովետների Երկրի տնտեսական բլոկադայի և դիվանագիտական մեկուսացման քաղաքականության շարունակման կուրս։ 1921 թ. մարտի 25-ի նոտայում ԱՄՆ-ի պետական քարտուղար Չարլզ Էվանս Հյուզը հայտարարեց, որ մինչև Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կարգերում «արմատական փոփոխությունների» իրականացումը խոսք անգամ չի կարող լինել Միացյալ Նահանգների և սովետական պետության միջև առևտրական և առավել ևս դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին։

Հյուզի հայտարարության մեջ հռչակված դիրքը հանրապետական վարչակազմն իրականացնում էր նաև հաջորդ տարիներին։ Սակայն սովետական հանրապետության միջազգային մեկուսացման վերաբերյալ ամերիկյան իմպերիալիզմի հաշիվները չարդարացան։ 20-ական թվականների կեսերին կապիտալիստական բոլոր խոշոր տերությունները, բացառությամբ ԱՄՆ-ի, կանգնեցին ՍՍՀՄ-ի դիվանագիտական ճանաչման ուղին։

20-ական թվականների սկզբի բանվորական շարժումը

1920—1921 թթ. տնտեսական ճգնաժամի իրադրության պայմաններում ԱՄՆ-ի մոնոպոլիստական բուրժուազիան հարձակման անցավ բանվոր դասակարգի դիրքերի վրա։ Նա իր առջև խնդիր դրեց բանվորներից խլել վերջերս նրանց ձեռք բերած բոլոր նվաճումները, ամենուրեք հասնել աշխատավարձի կրճատմանը, աշխատանքային օրվա ավելացմանը, աշխատանքի լարվածության բարձրացմանը։

Պրոլետարիատի դրությունը բարդացավ հանրապետականների իշխանության գլուխ անցնելով, երբ ֆեդերալ կառավարության մարմինները բացահայտ թշնամական դիրք գրավեցին բանվորական շարժման նկատմամբ։ ԱՄՆ-ի գերագույն դատարանը վերացրեց այն լիբերալ ռեֆորմները, որոնք «առաջադիմական դարաշրջանում» անց էին կացվել աշխատանքային օրենսդրության ասպարեզում։ Նորից ծայր առավ արհմիությունների հալածանքը, հաճախակի դարձան աշխատանքային կոնֆլիկտների մեջ դատական մարմինների միջամտության դեպքերը։ Այդպիսի պայմաններում գործադուլների անցկացումը բանվորներից իսկապես հերոսական ջանքեր էր պահանջում։

Եվ այնուամենայնիվ, գործադուլների մասնակիցների ընդհանուր թվաքանակն ԱՄՆ-ում 20-ական թվականների սկզբին բավական մեծ էր. 1920 թ. այն կազմեց 1463 հազ. մարդ, ճգնաժամային 1921 թ. նվազեց մինչև 1099 հազ. մարդու, իսկ 1922 թ. արդյունաբերական նոր վերելքի սկսումով, վերըստին աճեց մինչև 1613 հազ. մարդու։ Գործադուլային շարժումն ամենամեծ ուժգնության հասավ 1922 թ. ամռանը, երբ գրեթե միաժամանակ դասակարգային խոշոր մարտեր ծավալվեցին Նոր Անգլիայի տեքստիլ կենտրոններում, ածխային արդյունաբերության մեջ և երկաթուղային տրանսպորտում։ Ընդհանուր առմամբ գործադուլային շարժումը 20-ական թվականների սկզբին շատ ավելի նվազ հաջող էր, քան հետպատերազմյան առաջին տարիներին։ Հատկապես անբարենպաստ եղավ այդ տարիների առավել խոշոր աշխատանքային կոնֆլիկտի՝ երկաթուղայինների 500 հազ. գործադուլի ելքը։ Դա եղավ աշխատավարձի հերթական կրճատման պատասխանը և տևեց ավելի քան երկու ամիս։ Սակայն նրան մասնակցեցին միայն երկաթուղային արհեստանոցների բանվորները, որոնք միավորված էին ԱԱՖ-ի երկաթուղային սեկցիայի վեց արհմիություններում։ Մնացած միությունները, որոնք միավորում էին գրծերի և երթևեկության ծառայության բանվորներին, պայքարից դուրս եկան։ Ոստիկանությունը և ազգային գվարդիայի զորամասերը իրենց վրա վերցրին երկաթուղային տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման գործը։ 1922 թ. սեպտեմբերի 1-ին դատական շրջաբերական հրապարակվեց գործադուլը դադարեցնելու մասին։ Այդպիսի զանգվածային գրոհների հանդեպ երկաթուղային արհեստանոցների բանվորներն առանց դրսի օգնության չէին կարող դիմանալ։ 1922 թ. սեպտեմբերին գործադուլավորները ստիպված էին ենթարկվել երկաթուղային ընկերությունների դիկտատին և վերադառնալ աշխատանքի, հաշտվելով աշխատավարձի իջեցման հետ։

20-ական թվականների մի շարք խոշոր գործադուլների պարտությունն իր հետևից բերեց հետպատերազմյան առաջին տարիների կարևոր շատ նվաճումների կորուստ, որի հետևանքով ԱՄՆ-ի ինդուստրիալ պրոլետարիատի հիմնական կատեգորիաների կյանքի և աշխատանքի պայմաններն զգալիորեն վատթարացան։ Լուրջ վնաս կրեց նաև արհմիութենական շարժումը. մինչև 1923 թ. ԱԱՖ-ի անդամների թիվը կրճատվեց մինչև 2926 հազ. մարդու։ Արհմիութենական շարժման արտադրամասային բնույթն առաջվա պես անհաղթահարելի խոչընդոտներ էր հարուցում նրա շարքերում ֆաբրիկային պրոլետարիատի հիմնական զանգվածի ներգրավմանը։

ԱՄՆ-ում բանվորական շարժման հաջող զարգացման համար անհրաժեշտ էր հաղթահարել բանվոր դասակարգի գաղափարական ու կազմակերպական թուլությունը։ Դա հնարավոր էր միայն բանվորական շարժման ձախ ուժերի, առաջին հերթին կոմունիստների ակտիվ գործունեության դեպքում։

20-ական թվականների սկզբին ամերիկյան կոմունիստներն անցան դոգմատիզմի և աղանդավորության ստալինական հաղթահարման ուղին, որն իր արտահայտությունը գտավ 1921 թ. մայիսին կայացած երկու կոմկուսների միավորիչ համագումարում ընդունված նոր ծրագրում։ Ամերիկայի կոմունիստական կուսակցությունը հայտարարեց, որ նա մտադիր չէ սահմանափակվել միայն բանվորական շարժման վերջնական նպատակների պրոպագանդայով, այլ ակտիվ մասնակցություն է ունենալու բանվոր դասակարգի անհետաձգելի կարիքների համար նրա մղած ամենօրյա պայքարում։

Սակայն ընդհատակի այն պայմանները, որոնց մեջ ստիպված էին գործել ամերիկյան կոմունիստները, դժվարացնում էին կապը մասսաների հետ։ Հարկավոր էր հնարավորություններ գտնել կուսակցության լեգալ աշխատանքը ծավալելու համար։ Այդ նպատակով 1921 թ. դեկտեմբերին ստեղծվեց զուգահեռ լեգալ կոմունիստական կազմակերպություն՝ Ամերիկայի բանվորական կուսակցությունը։ Կոմունիստական նոր կազմակերպությունն անմիջապես վերցրեց աշխատավորների մասսայական կազմակերպությունների հետ սերտ կապեր հաստատելու կուրս։ Հաղթահարելով արհմիություններում աշխատանքը թերագնահատելու ուլտրաձախ տենդենցները, կոմունիստները սերտ կոնտակտների մեջ մտան արհմիութենական պրոպագանդայի լիգայի (ԱՊԼ)՝ տրեդ-յունիոնների հեղափոխական տարրերի այն միավորման հետ, որը 1920 թ. հիմնեց Ռ. Ֆոստերի գլխավորած արհմիութենական առաջավոր գործիչների մի խումբ։ ԱՊԼ-ն Ամերիկայի բանվորական կուսակցության հետ ագիտացիա ծավալեց ԱԱՖ-ի արտադրամասային տրեդ-յունիոնները արտադրական միությունների վերածելու և դրանց մեջ միլիոնավոր ոչ որակյալ բանվորներ ներգրավելու համար։

Մասսայական մյուս կամպանիան, որին 20-ական թվականների սկզբին ակտիվ մասնակցություն ունեցան ամերիկյան կոմունիստները, Սովետական Ռուսաստանի հետ համերաշխության շարժումն էր։ 1921 թ. ամռանը ԱՄՆ-ի առաջադեմ հասարակայնությունն սկսեց Ռուսաստանի սովյալ բանվորների և գյուղացիների օգնության ֆոնդին միջոցներ հավաքելու կամպանիան։ Սովետների Երկրի հետ Ամերիկայի աշխատավորների համերաշխության կարևոր ձև դարձավ նաև պատերազմից քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման գործում երիտասարդ սովետական հանրապետությանն օգնություն ցույց տալու շարժումը։ Այդ շնորհակալ գործում վիթխարի դեր կատարեց Սովետական Ռուսաստանին տեխնիկական օգնություն ցույց տվող ընկերությունը, որն ստեղծեցին կոմունիստական կուսակցության և արհմիութենական շարժման առաջավոր ներկայացուցիչները 1921 թ. հուլիսին։

Արհմիութենական շարժման հետ սերտ կապեր հաստատելու ճանապարհին կատարված առաջին քայլերն ամրապնդեցին կոմունիստների դիրքերը։ 1923 թ. կոմունիստական կուսակցությանը հաջողվեց լեգալ դրության անցնել։ Կոմունիստական շարժման բոլոր ուժերը համախմբվեցին Ամերիկայի միասնական բանվորական կուսակցության շարքերում։ 1923 թ. վերջին այն հաշվվում էր մոտ 25 հազ. անդամ։

Կոմունիստական շարժման գաղափարական աճը և կազմակերպական ամրապնդումը պայմաններ ստեղծեցին ևս մեկ կարևոր խնդրում կոմկուսի քաղաքականության շրջադարձի համար։ Դա մասսայական դեմոկրատական շարժման հանդեպ կոմունիստների վերաբերմունքի հարցն էր։

Դեմոկրատական շարժումը 20-ական թվականների սկզբին

1920—1921 թթ. տնտեսական ճգնաժամը նոր թափ հաղորդեց դեմոկրատական հակամոնոպոլիստական շարժման զարգացմանը։ Այդ շարժման կարևորագույն ուղղություններից մեկը եղավ նեգրական շարժումը։ Նեգր բնակչության արտակարգ ծանր տնտեսական դրությունը, դաժան ռասսայական խտրականությունը, կուկլուքսկլանականների արյունալի տեռորը՝ այս բոլորը առաջ բերեց նեգրերի համառ դիմադրությունը, որը գլխավորում էր նեգրական խոշոր կազմակերպությունը՝ սևամորթ բնակչության առաջադիմությանն աջակցող ազգային ասոցիացիան (ստեղծվել է 1909 թ.)։ Նրա ղեկավարներից մեկը ականավոր նեգր գիտնական, գրող և հասարակական գործիչ Ուիլյամ Դյուբուան էր։

Նեգրերի պայքարի մյուս ուղղությունը մասսայական բուրժուա-ազգայնական շարժումն էր, որի գլուխ կանգնեց նեգրական մանր բուրժուազիայի գաղափարախոս Մարկուս Հարվին։ Առաջին պահին հարվեիզմի ծրագիրը համապատասխանում էր նեգր աշխատավորության հրատապ պահանջներին։ 20-ական թվականների սկզբին Հարվիի շարժումը իր ազդեցության ոլորտում ներգրավեց միլիոնավոր նեգրերի։ Սակայն շուտով Հարվին հրաժարվեց իր արմատական պլատֆորմից։ Հարվեիզմի ծրագրում և պրակտիկ գործունեության մեջ առաջին պլան մղվեց Աֆրիկայում նեգրերի վերաբնակվելու լոզունգը։ Հարվեիզմի քաղաքական վերասերումն իրենից հեռացրեց նեգրական լայն զանգվածներին, որոնք հասկանում էին, որ նեգրական հարցի լուծումը ոչ թե «ե՛տ, դեպի Աֆրիկա՛» ռեակցիոն-ուտոպիական լոզունգի իրականացման փորձերի, այլ մոնոպոլիստական լծի դեմ, հենց Միացյալ Նահանգներում նեգրերի դրության բարելավման համար մղվող պայքարի մեջ էր։

1920—1921 թթ. տնտեսական ճգնաժամն ուժեղացրեց նաև աշխատավորների ձգտումը անկախ քաղաքական գործողությունների նկատմամբ։ Դեմոկրատական շարժման մասսայական բազայի ընդլայնման հիման վրա 20-ական թվականների սկզբին փորձ ձեռնարկվեց ստեղծելու հակամոնոպոլիստական ուժերի համաամերիկյան միավորում։ Չիկագոյում կայացած համագումարում (1922 թ. փետրվար) հիմնվեց դեմոկրատական շարժման կարևորագույն ուղղությունների ազգային ֆեդերացիա, որն ստացավ առաջադիմական քաղաքական գործողության կոնֆերանս (ԱՔԳԿ) անունը։ Նոր միավորման գլուխ կանգնեցին երկաթուղայինների եղբայրության պարագլուխները, որոնք փորձեցին անկախ քաղաքական գործողությունների դիմելու մասսաների ձգտումն ուղղել երկու հին կուսակցությունների ցուցակներով առանձին առաջադեմ թեկնածուներին աջակցություն ցույց տալու ուղին։ Բայց ԱՔԳԿ-ի կազմի մեջ մտան նաև ֆերմերա-բանվորական կուսակցությունը և այլ ռադիկալ խմբեր, որոնք կապված էին արհմիութենական շարժման ձախ շրջանների հետ։ ԱՔԳԿ-ի այդ ձախ թևը պայքար էր մղում աշխատավորների ինքնուրույն մասսայական կուսակցություն ստեղծելու համար։

ԱՔԳԿ-ի ծրագիրը նախատեսում էր մոնոպոլիաների իշխանության սահմանափակմանը և երկրի քաղաքական կարգի դեմոկրատացմանն ուղղված ռեֆորմների անցկացում։ Նրա առաջարկած միջոցառումների թվում էին երկաթուղիների ազգայնացումը, ածխահանքերի և հիդրոէներգետիկայի ձեռնարկությունների նկատմամբ հասարակական վերահսկողության հաստատումը, խոշոր եկամուտներից վերցվող հարկերի բարձրացումը, պրեզիդենտի ուղղակի ընտրությունների սահմանումը, գերագույն դատարանի լիազորությունների սահմանափակումը, քաղաքական բանտարկյալների ազատումը և այլն։ ԱՔԳԿ-ի ծրագիրն, անկասկած, կարող էր սկզբնական հիմք դառնալ դեմոկրատական ուժերի համախմբման համար։ Հենց դրանից էր ելնում Ամերիկայի բանվորական կուսակցության ղեկավարությունը, 1922 թ. մայիսին որոշելով ֆերմերա-բանվորական կուսակցության հետ կոնտակտ հաստատել, որպեսզի նրա հետ ԱՔԳԿ-ում ագիտացիա մղի աշխատավորների լայն կուսակցության ստեղծման համար, որն իր մեջ ներառներ արհմիություններին և ֆերմերների մասսայական կազմակերպություններին։

Առաջադիմական քաղաքական գործողության կոնֆերանսի երկրորդ սեսիայում, որը գումարվեց 1922 թ. դեկտեմբերին Կլիվլենդում, ֆերմերա-բանվորական կուսակցության ներկայացուցիչները, ինչպես նաև աշխատանքի՝ Չիկագոյի ֆեդերացիայի, գերձակների միացյալ միության և այլ ձախ արհմիությունների պատվիրակները հանդես եկան երրորդ կուսակցության կազմավորման օգտին։ Սակայն Կլիվլենդի համագումարը ձայների մեծամասնությամբ մերժեց ձախ թևի պատվիրակների առաջարկությունը և ուժի մեջ թողեց երկաթուղայինների եղբայրության պարագլուխների տակտիկական գիծը։

Ձախ ուժերը փորձեցին գործել ԱՔԳԿ-ից անկախ։ 1923 թ. հուլիսին Աշխատանքի՝ Չիկագոյի ֆեդերացիայի և ֆերմերա-բանվորական կուսակցության կոչով Չիկագոյում անցկացվեց առաջադիմական շարժման ձախ խմբերի ազգային համագումար։ Ընդամենը Չիկագո էր եկել 650 պատվիրակ, որոնք ներկայացնում էին 600 հազ. բանվորների ու ֆերմերների։ Համագումարի աշխատանքին ակտիվորեն մասնակցում էին կոմունիստները։ Ձայների մեծամասնությամբ որոշվեց ֆեդերատիվ ֆերմերա-բանվորական կուսակցության (ՖՖԲԿ) անունով կազմակերպել աշխատավորների քաղաքական նոր կուսակցություն։ Սակայն այդ որոշումն իրագործելու փորձն անհաջող ավարտվեց։ 1923 թ. վերջին ՖՖԲԿ-ի շարքերում մնաց նրա նախկին կազմի ընդամենը մի ոչ մեծ մասը։ Ձախ ուժերի պարտության կարևորագույն պատճառն այն էր, որ դեմոկրատական շարժման մասնակիցների հիմնական զանգվածը պատրաստ չէր երկկուսակցական սիստեմի հետ կապերը խզելուն և ընթանում էր ԱՔԳԿ-ի հետևից։

1924 թ. ընտրական կամպանիայի ընթացքում սուր քաղաքական պայքար ծավալվեց։ Երկու բուրժուական կուսակցությունների ընտրական պլատֆորմները և նրանց թեկնածուները ծայրահեղ ռեակցիոն գտնվեցին։ Հանրապետական կուսակցությունից ԱՄՆ-ի պրեզիդենտի պոստի թեկնածու առաջադրվեց Կալվին Կուլիջը։ Դեմոկրատների ընտրությունն ընկավ Ջոն Դեյսի թեկնածության վրա, որը պահպանողական քաղաքական գործիչ էր, Մորգանների տան իրավախորհրդատուն։

Երկրի դեմոկրատական ուժերը զայրացած էին երկու բուրժուական կուսակցությունների բացահայտ պրոմոնոպոլիստական կուրսից։ ԱՔԳԿ-ի նախընտրական համագումարը 1924 թ. հուլիսին որոշում ընդունեց սենատոր Ռ. Լաֆոլետին պրեզիդենտության թեկնածու առաջադրելու մասին։ Բայց որոշվեց, որ նա պետք է ընտրական կամպանիան տանի ոչ թե որպես երրորդ կուսակցության թեկնածու, այլ որպես իր սեփական պլատֆորմի հիման վրա քվեարկվող անկախ թեկնածու։

1924 թ. ընտրությունների ժամանակ սենատոր Լաֆոլետի ծրագիրը նա-

խատեսում էր երկաթուղիների և հիդրոէներգետիկայի ձեռնարկությունների ազգայնացում, հասարակական վերահսկողության սահմանում բնական ռեսուրսների նկատմամբ, խոշոր կապիտալի հարկերի ավելացում, կազմակերպության և կոլեկտիվ պայմանագիր կնքելու՝ բանվորների իրավունքի ճանաչում, աշխատանքային կոնֆլիկտներին դատարանների միջամտության արգելում, գործադուրկների համար հասարակական աշխատանքների կազմակերպում, ֆերմերներին էժան վարկի տրամադրում, ԱՄՆ-ի քաղաքական կարգի լայն դեմոկրատացում։

Սենատոր Լաֆոլետին պրեզիդենտության թեկնածու առաջադրելը և նրա հակամոնոպոլիստական ընտրական պլատֆորմը հավանություն գտան բանվորական և ֆերմերական շատ կազմակերպությունների կողմից։ Իր գոյության ամբողջ ընթացքում ԱԱՖ-Ն առաջին անգամ պաշտոնապես հավանություն տրվեց ԱՄՆ-ի պրեզիդենտության պոստի անկախ թեկնածուին։ Այսպիսով, 1924 թ. ընտրական կամպանիայի ընթացքում Միացյալ Նահանգներում առաջացավ դեմոկրատական ուժերի լայն կոալիցիա, որը պատմության մեջ մտավ «Լաֆոլետի շարժում» անունով։ Ու. Ֆոստերի գնահատմամբ, դա «մոնոպոլիստական կապիտալի դեմ մղվող պայքարում բանվորների, մանր բուրժուազիայի և ֆերմերների միասնական ճակատ էր, որը գտնվում էր մանր բուրժուազիայի և արհմիութենական պարագլուխների ղեկավարության ներքո»։

Դեմոկրատական այդ կոալիցիայի հանդեպ ունեցած իրենց վերաբերմունքում ամերիկյան կոմունիստները լուրջ սխալներ թույլ տվեցին։ Հրաժարվելով Լաֆոլետին աջակցություն ցույց տալուց, բանվորական կուսակցությունը 1924 թ. հանդես եկավ ԱՄՆ-ի պրեզիդենտի պոստի իր սեփական թեկնածուով։ Իր ընտրական պլատֆորմում նա առաջին պլան մղեց կապիտալիզմի ոչնչացման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման լոզունգները, որոնց ընկալման համար ժողովրդական զանգվածները դեռ պատրաստ չէին։

Լաֆոլետի մարտահրավերն ընդունելով որպես երկկուսակցական սիստեմի խարխլման նշան, հանրապետականներն ու դեմոկրատները, մոռանալով իրենց տարաձայնությունները, համատեղ հարձակվեցին իրենց քաղաքական հակառակորդի վրա։ Նրանք աղավաղում էին Լաֆոլետի հայացքները, նրան անվանում «վտանգավոր ռադիկալ», «կարմիր», «ամերիկյան ինստիտուտները կործանող»։ Այդուհանդերձ, չնայած հակալաֆոլետյան կատաղի կամպանիային, Լաֆոլետն ստացավ 4822 հազ. ձայն, այսինքն քվեարկությանը մասնակցածների ընդհանուր թվի 16,5 տոկոսը։ Սակայն առաջադիմականների թեկնածուին հաջողվեց հաղթանակ տանել միայն մեկ նահանգում՝ Վիսկոնսինում։

1924 թ. ընտրություններին հաղթեցին հանրապետականները։ ԱՄՆ-ի պրեզիդենտ ընտրվեց Կուլիջը, որը ստացավ 15,5 մլն ձայն։ Դեմոկրատների թեկնածու Դեյվիսն ստացավ 8,4 մլն ձայն։

ԱՄՆ-Ը ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1924—1929 ԹԹ.)

ԱՄՆ-ի տնտեսական զարգացման առանձնահատկությունները

1924 թ. Ամերիկայի Միացյալ Նահանգները թևակոխեցին կապիտալիզմի ժամանակավոր մասնակի կայունացման ժամանակաշրջանը։ Երկրում սկիզբ առավ բավական ուժեղ արդյունաբերական վերելք։ Դրա հիման վրա տեղի ունեցավ սոցիալական կոնֆլիկտների որոշակի մեղմացում, բանվորական ու դեմոկրատական շարժման թուլացում։

Ամերիկայում կապիտալիզմի կայունացումն աչքի էր ընկնում զգալի յուրատեսակությամբ։ Միացյալ Նահանգներին ավելի արագ, քան եվրոպական որևէ այլ երկրի, հաջողվեց հաղթահարել առաջին համաշխարհային պատերազմի հետևանքներից ու 1920—1921 թթ. ճգնաժամից առաջացած տնտեսական ցնցումները։ Ի տարբերություն Եվրոպայի հիմնական երկրների, արդյունաբերական վերելքը շարունակվեց մոտ յոթ տարի՝ մինչև 1929 թ.։ Արդյունաբերական վերելքի երկարատևությունը ԱՄՆ-ում բացատրվում էր այն բանով, որ ամերիկյան մոնոպոլիաներն իրենց տրամադրության տակ ունեին զգալի հնարավորություններ հիմնական կապիտալի մասսայական թարմացման համար։ Նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ, արդյունաբերական արտադրությունն ԱՄՆ-ում 20-ական թվականների վերջին ավելացավ 70 տոկոսով։ Նա այն ժամանակ կազմեց ամբողջ կապիտալիստական աշխարհի արդյունաբերական արտադրության 48 տոկոսը։ 1929 թ. Միացյալ Նահանգներն արտադրում էին 10 տոկոսով ավելի արդյունաբերական արտադրանք, քան Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան միասին վերցրած։

20-ական թվականներին հատկապես արագ էին զարգանում ամերիկյան արդյունաբերության նոր ճյուղերը, որոնք սարքավորված էին գիտության ու տեխնիկայի վերջին խոսքով (ավտոմոբիլային, էլեկտրատեխնիկական, քիմիական, ավիացիոն, ռադիոարդյունաբերություն, կինոարդյունաբերություն)։ Այսպես, եթե 1921 թ. Միացյալ Նահանգներում արտադրվեց 1,6 մլն ավտոմոբիլ, ապա 1929 թ.՝ 5,4 մլն մեքենա։ 20-ական թվականների վերջին երկրում շահագործվում էր 26,5 մլն ավտոմեքենա, այսինքն՝ շատ անգամ ավելի, քան աշխարհի մնացած բոլոր երկրներում միասին վերցրած։ Ավտոմոբիլի մասսայական արտադրությունը և ասֆալտապատումը նպաստեց նրա տարածմանը ԱՄՆ-ի բնակչության բավական լայն խավերում, այդ թվում նաև որակյալ բանվորների զգալի մասի շրջանում։ 20-ական թվականներին ավտոմոբիլը դարձավ ամերիկյան «պրոսպերիտիի» խորհրդանշանը։

Կայունացման տարիներին ԱՄՆ-ում տեղի ունեցած արդյունաբերական արտադրության բուռն աճը ձեռք բերվեց արտադրության կապիտալիստական ռացիոնալացման միջոցով։ Դրա մեջ մտնում էր մի կողմից լայն մեքենայացումը, իսկ մյուս կողմից՝ ստանդարտացման արմատավորումը, տիպային դետալների մասսայական պատրաստումը և դրանց հաջորդական հավաքումը կոնվեերային գծերում։ Դա կապիտալիստներին թույլ էր տալիս նվազեցնել բանվորների թվաքանակը, կոնվեերային գծերում թողնել միայն ամենաուժեղ և դիմացկուն աշխատողներին, ավելի արտադրողական և, որ գլխավորն է, շատ ավելի լարված աշխատանքի համար նրանց վճարել որոշ չափով ավելի բարձր աշխատավարձ։ Այսպես, արտադրության կապիտալիստական ռացիոնալացումը ուղեկցվում էր բանվոր դասակարգի շահագործման ուժեղացմամբ։

ԱՄՆ-ի տնտեսական զարգացման հաջողությունների բաղդի վրա 20-ական թվականներին Ամերիկայի բուրժուական պրոպագանդան առաջ քաշեց կապիտալիստական կայունացման տևականության և անխախտության թեզը։ Ամերիկյան «պրոսպերիտիի» պատվին կատարվող գովաբանությունն իր բարձրակետին հասավ 20-ական թվականներին։ 1928 թ. ընտրական կամպանիայի ժամանակ ԱՄՆ-ի պրեզիդենտի պոստի երկու թեկնածուները՝ դեմոկրատ Ալֆրեդ Սմիթը և հատկապես հանրապետական Հերբերտ Հուվերը պնդում էին «հավերժական բարեկեցության դարաշրջանի» սկզբնավորման, «ճգնաժամերի վերացման» մասին և այլն։

Իսկապես, առաջին հայացքից ԱՄՆ-ի տնտեսական զարգացումը 20-ական թվականների երկրորդ կեսին չափազանց կայուն էր թվում։ Տեսական արդյունաբերական վերելքը ուղեկցվում էր ակցիաների արժեքի վիթխարի աճով։ Հինգից ավելի պակաս տարում, 1924 թ. դեկտեմբերից մինչև 1929 թ. սեպտեմբերը Նյու Յորքի բորսայում արժեքավորված բաժնետոմսերի գինը բարձրացավ 27-ից մինչև 90 մլրդ դոլլարի։ 20-ական թվականների վերջին Ամերիկայում իսկական բորսայական վակխանալիա սկսվեց։ Նրա մեջ ներքաշվեցին միլիոնավոր ամերիկացիներ, որոնք հարստանալու հույսով իրենց խնայողություններն արժեթղթերի էին վերածում։

Սակայն իրականում կապիտալիզմի կայունացումն ԱՄՆ-ում, այնպես, ինչպես և մյուս կապիտալիստական երկրներում, ժամանակավոր էր, մասնակի և անկայուն։ Կապիտալիստական կայունացման ժամանակավոր լինելու կարևոր ցուցանիշներն էին արտադրական ապարատի խրոնիկական թերբեռնվածությունը և մշտական զանգվածային գործազրկությունը (3—4 մլն մարդ), ինչպես նաև գյուղատնտեսության ծանր դրությունը, որն այդպես էլ դուրս չեկավ ճգնաժամի վիճակից։ ԱՄՆ-ի էկոնոմիկայի մի շարք կարևոր ճյուղերում 20-ական թվականների երկրորդ կեսին ավելի ու ավելի պարզորոշությամբ էին զգացվում գերարտադրության երևույթները։ Դա աստիճանաբար խարխլում էր ամերիկյան «պրոսպերիտիի» հիմքերը և վերջին հաշվով այն կրախի հասցրեց։

Դասակարգային պայքարի առանձնահատկություններն ԱՄՆ-ում 1924—1929 թթ.

Երկրի տնտեսական զարգացման հարաբերական կայունացման պայմաններում ամերիկյան բուրժուազիային մոտավորապես 1924—1925 թթ. հաջողվեց զգալիորեն լիցքաթափել ներքաղաքական իրադրությունը։ Բանվորական և դեմոկրատական շարժումը լրջորեն թուլացավ։ Բանվոր դասակարգի գործադուլային պայքարը թեակոխեց տեսական անկման ժամանակաշրջան։ Գործադուլավորների թվաքանակը խիստ կրճատվեց. արդեն 1923 թ. այն նվազեց մինչև 757 հազ. մարդու, 1925 թ.՝ մինչև 428 հազարի, 1927 թ.՝ 330 հազարի, իսկ 1929 թ. կազմեց ընդամենը 289 հազ. մարդ։ Փոխվեց նաև գործադուլային շարժման բնույթը. բանվորների պայքարը մեծ մասամբ սահմանափակվում էր տնտեսական պահանջներով։

Հասկանալի է, որ այդ չէր նշանակում, թե Միացյալ Նահանգներում այդ տարիներին դասակարգային խոշոր կոնֆլիկտներ չեղան։ 20-ական թվականների բանվորական շարժման ակտիվ ուժը ԱՄՆ-ի Կոմունիստական կուսակցությունն էր։ Կոմունիստները մեծ դեր էին խաղում արհմիութենական պրոպագանդայի լիգայում, որը միավորում էր ԱԱՖ-ի միությունների ձախ թևին։ ԱՊԼ-ի արհմիությունների ղեկավարությամբ 20-ական թվականների երկրորդ կեսին անցկացվեցին մի քանի խոշոր գործադուլներ։ Երբ 20-ական թվականների վերջերին ԱԱՖ-ի ռեֆորմիստական ղեկավարությունը կանգնեց ձախ ուժերի հալածման ու վտարման ուղին, ԱՊԼ-ն հանդես եկավ արտադրական անկախ արհմիություններ ստեղծելու նախաձեռնությամբ։ 1929 թ. որոշում ընդունվեց ԱՊԼ-ն արհմիութենական միասնության լիգայի վերակազմելու մասին, որը պետք է դառնար ոչ միայն ԱԱՖ-ի ռեֆորմիստական միություններում գոյություն ունեցող ձախ փոքրամասնության խմբերի կոորդինացիոն կենտրոն, այլև անկախ արհմիությունների միավորում։ Ամերիկյան կոմունիստների մեծ ծառայությունը եղավ այն, որ նրանք հանդես եկան ի պաշտպանություն նեգր աշխատավորության իրավունքների։ ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցությունը նեգրական հարցն առաջ քաշեց որպես իր ծրագրի ինքնուրույն հարց, որպես ամերիկյան իրականության կարևորագույն պրոբլեմներից մեկը։ 1925 թ. նոյեմբերին Չիկագոյում կոմունիստների նախաձեռնությամբ կազմակերպվեց ամերիկյան նեգրական բանվորական կոնգրես, որն իր առջև խնդիր դրեց ղեկավարել նեգր բանվորների պայքարն ընդդեմ ռասսայական սեգրեգացիայի, հանուն արհմիութենական շարժման մեջ նեգր բանվորների ներգրավման։

Բայց ամբողջությամբ վերցրած, բանվորական շարժման թափն ԱՄՆ-ում 20-ական թվականների կեսերին նկատելիորեն նվազեց։ Շեշտակիորեն ընկան արհմիությունների հեղինակությունն ու թվաքանակը։ Եթե 1920 թ. Միացյալ Նահանգներում հաշվվում էր արհմիությունների 5 մլն անդամ, ապա 1929 թ. նրանց թիվը կրճատվեց մինչև 3,6 մլն մարդու։ 1925 թ. սկսեց վերանալ նաև քաղաքական անկախ գործողությունների շարժումը։ 1924 թ. ընտրություններում սենատոր Ռ. Լաֆոլետի կրած պարտությունն ԱԱՖ-ի պարագլուխներն օգտագործեցին բանվորների «անկուսակցականության» գոմպերսյան նախասիրված գաղափարի քարոզն ուժեղացնելու համար։ Ըստ էության, դրան էին հակվում նաև երկաթուղային արհմիությունների ղեկավարները, որոնք կանգնած էին ԱՔԳԿ-ի գլուխ։ Երբ 1925 թ. փետրվարին տեղի ունեցավ ԱՔԳԿ-ի հերթական նստաշրջանը, երկաթուղայինների ընկերության պարագլուխները հասան ԱՔԳԿ-ի ամբողջ գործունեությունն անորոշ ժամկետով դադարեցնելու և հին «անկուսակցական» բաղաքականությանը վերադառնալու որոշման ընդունմանը։ Աստիճանաբար, մեկը մյուսի ետևից դադարեցին գոյություն ունենալուց տարբեր նահանգների գրեթե բոլոր ֆերմերա-բանվորական կուսակցությունները։

Կապիտալիզմի մասնակի կայունացման ժամանակաշրջանում ԱՄՆ-ի դեմոկրատական շարժման անկումն արտահայտում էր Ամերիկայի ամբողջ քաղաքական մթնոլորտում տեղի ունեցած փոփոխությունները։ Շատ տասնամյակների ընթացքում առաջին անգամ Միացյալ Նահանգներում տեղի ունեցավ բնակչության հակամոնոպոլիստական տրամադրությունների թուլացում։ Ավելին, կայունացման տարիներին, թերևս, երկրի պատմության մեջ առաջին անգամ կարելի էր նկատել մոնոպոլիաների ուղղակի գովաբանություն, բիզնեսի պաշտամունք, խոշոր կապիտալիստների՝ որպես «ինդուստրիայի նավավարների» և «պրոսպերիտիի ստեղծողների» գովերգություն։ Հայտնի տնտեսագետ Ստյուարտ Չայզի արտահայտությամբ, այդ ժամանակ բիզնեսմենը դարձավ «ամերիկացիների բարձրագույն հեղինակությունը էթիկայի ու վարքագծի հարցերում»։

Փոքր-ինչ այլ կերպ էր ձևավորվում 20-ական թվականներին իրադրությունը գյուղատնտեսության մեջ։ Զգձված ագրարային ճգնաժամն առաջ բերեց ֆերմերական բնակչության մասսայական դժգոհություն և ծնեց գյուղատնտեսությանը կառավարական օգնություն ցույց տալու ուժեղ շարժում։ Շարժման գլուխ անցան ֆերմերական բուրժուազիայի ներկայացուցիչները, որոնք միավորվեցին այսպես կոչված ֆերմերական բլոկի մեջ։ Իր գոյության արդեն առաջին տարիներին ֆերմերական բլոկը որոշակի հաջողությունների հասավ գլխավորապես գյուղատնտեսական վարկային սիստեմի բարելավման և ֆերմերների շրջանում կոոպերատիվ շարժման խրախուսման գործում։ Սակայն դա քիչ էր։ Ֆերմերները պահանջում էին, որպեսզի կառավարությունը միջոցներ ձեռնարկեր գյուղատնտեսական գները բարձրացնելու ուղղությամբ։ Այդ նպատակով 1924 թ. մշակվեց և կոնգրես մտցվեց Մակներիի-Հոուգենի բիլը, որը նախատեսում էր կառավարական մի այնպիսի կազմակերպության ստեղ-

ծում, որը երկրի ներսում բարձր գներով գներ գյուղատնտեսական արտադրանքի «ավելցուկները» և դրանք արտահաներ արտասահման։ Ենթադրվում էր, որ նման գործողությունների հետևանքով երկրի ներսում տեղի կունենա գների բարձրացում։

20-ական թվականների երկրորդ կեսին Մակների-Հուգենի պլանը պաշտպանություն գտավ ֆերմերական բնակչության մեծամասնության կողմից։ Երկու անգամ, 1927 թ. փետրվարին և 1928 թ. մայիսին այն ընդունեցին կոնգրեսի պալատները։ Սակայն Կուլիջի կառավարությունը կտրականապես մերժեց բիլը որպես արտադրության այլ ճյուղերի հետ գյուղատնտեսության «իրավահավասարության» ֆերմերական բուրժուազիայի ներկայացրած հավակնություն։ Առաջադրված նպատակներին հասնել ամերիկյան ֆերմերներին այդպես էլ չհաջողվեց։ Դա բացատրվում էր նրանով, որ գյուղատնտեսական բուրժուազիան վախենալով ֆերմերական զանգվածների ռադիկալանալուց, սահմանափակում էր ֆերմերական շարժման թափը, այն հանգեցնում լոբբիզմի և պառլամենտական այլ կոմբինացիաների և դրանով իսկ այն պարտության դատապարտում։

20-ական թվականների կապիտալիստական կայունացման ժամանակաշրջանում ԱՄՆ-ի բանվորական և դեմոկրատական շարժման անկման գլխավոր պատճառը կապված էր Միացյալ Նահանգների տնտեսական զարգացման առանձնահատկությունների հետ։ Ամերիկայի՝ աշխարհի ֆինանսական կենտրոնի վերածումը ԱՄՆ-ի մոնոպոլիստական բուրժուազիային ապահովեց վիթխարի գերշահույթներ։ Դա նրան հնարավորություն տվեց հատկապես լայն չափերով իրականացնել բանվոր դասակարգի վերնախավի կաշառումը։ Այսպես ընդլայնվեց բանվորական արիստոկրատիայի խավը, որը հիմնական միջոց դարձավ ամերիկյան պրոլետարիատի զանգվածներում բուրժուական գաղափարախոսության տարածման համար։

Կայունացման ժամանակաշրջանում բուրժուազիայի գաղափարական ներգործությունը բանվորների վրա չափազանց արդյունավետ եղավ։ Դա բացատրվում էր նրանով, որ տեսական արդյունաբերական վերելքի պայմաններում տեղի ունեցավ ամերիկյան պրոլետարիատի ռեալ աշխատավարձի որոշակի բարձրացում (միջին հաշվով 25 տոկոսով)։ Իհարկե, այն վերաբերում էր բանվորների ամենևին էլ ոչ բոլոր կատեգորիաներին։ Ամենաչափավոր գնահատականների համաձայն, 1929 թ., ամերիկյան «պրոսպերիտիի» ամենաեռուն ժամանակաշրջանում ԱՄՆ-ի բնակչության մոտ 60 տոկոսը չուներ նվազագույն կենսամիջոցներ։ Այնուամենայնիվ բանվոր դասակարգի տնտեսական դրության որոշ բարելավումը նպաստեց նրա միջավայրում ռեֆորմիստական պատրանքների ուժեղացմանը և տարբեր տեսակի բուրժուական տեսությունների լայն տարածմանը։

20-ական թվականներին հատկապես ակտիվորեն էր պրոպագանդվում «ամերիկյան բացառիկության» տեսությունը։ Ջատագովական այդ տեսության կողմնակիցները պնդում էին, թե ԱՄՆ-ը մտել է իր զարգացման նոր փուլը, թե նա զարգանում է իր, կապիտալիստական մյուս երկրներից տարբերվող ուղիներով։ Դրա հիման վրա եզրակացություն էր արվում այն մասին, որ Ամերիկայում այլևս երբեք տնտեսական ճգնաժամեր չեն լինի և երկրի առջև բացվում է «հավերժական պրոսպերիտիի» հեռանկարը։ Բուրժուական պրոպագանդան պնդում էր, որ էկոնոմիկայի հետագա զարգացման համար անհրաժեշտ է դասակարգային համագործակցություն։

«Դասակարգային ներդաշնակության» քարոզին ձայնակցեցին աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի պարագլուխները։ ԱԱՖ-ի հերթական համագումարը 1925 թ. հավանություն տվեց «բանվոր դասակարգի բարձրագույն ստրատեգիային», որի տակ ենթադրվում էր կապիտալիստների հետ բանվորների համագործակցությունն արտադրության ռացիոնալացման գործում։ Նոր կուրսի գործնական մարմնավորումը եղավ «Բալտիմոր-Օհայո պլանը», որը մշակվեց դեռ 1923 թ. երկաթուղայինների արհմիությունների և Բալտիմոր-Օհայո երկաթուղագծի սեփականատերերի կողմից։ Ըստ այդ պլան-համաձայնագրի, բանվորները պետք է ձեռնարկատերերին օգնեին տեխնիկական կատարելագործումներն արմատավորելու և ավելացնեին աշխատանքի լարվածությունը, այսինքն՝ նպաստեին կապիտալիստական ռացիոնալացմանը։ Ընդսմին պնդում էին, որ արդյունաբերական արտադրանքի աճն ավտոմատիկորեն իր հետևից կբերի նաև աշխատավարձի բարձրացում։

«Բալտիմոր-Օհայո պլանի» օրինակով 20-ական թվականների կեսերին կնքվեցին ուրիշ համաձայնագրեր։ Դրանց արդյունքը եղավ բանվորական շարժման թուլացումը։ Գնահատելով կապիտալիստական հարաբերական կայունացման ժամանակաշրջանում առաջացած իրադրությունը, Ու. Ֆոստերը գրում էր, որ 20-ական թվականներին ԱՄՆ-ի բանվորական շարժումը գրեթե լիովին ընկղմվեց «դասակարգային համագործակցության» ճահճում և նրա մարտական ոգին քայքայվեց ռեֆորմիստական արհմիութենական պարագլուխների կողմից։

Մեծ տարածում գտավ նաև մի այլ ջատագովական տեսություն՝ «կապիտալի դեմոկրատացման» տեսությունը։ Դրա պրոպագանդիստներից մեկը դարձավ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Թոմաս Քարվերը, որը 1926 թ. լույս ընծայեց «Ժամանակակից տնտեսական հեղափոխությունը ԱՄՆ-ում» գիրքը։ Քարվերի գրքում և դրա նման այլ հրատարակություններում պնդվում էր, թե կապիտալի փայատիրական ձևի զարգացումը և փայատերերի թվի աճը իբր տանում են դեպի «տնտեսական հեղափոխություն», այն բանին, որ բանվորները դառնում են ձեռնարկությունների համատերեր, ջնջվում է բանվորների և կապիտալիստների միջև եղած տարբերությունը, իսկ կապիտալիզմը փոխում է իր բնույթը։ Իհարկե, այդ ռեկլամային կամպանիան ոչ մի ընդհանուր բան չուներ իրականության հետ։ Մի քանի բաժնետոմսերի ձեռքբերումը չէր կարող որևէ էական փոփոխություններ մտցնել բանվորների դրության մեջ։ Ամերիկայում իբր տեղի ունեցող «հարստությունների խաղաղ վերաբաշխման» առթիվ բուրժուական պրոպագանդայի հերյուրանքների լիակատար անմտության մասին լավագույն ձևով վկայում էր այն փաստը, որ 20-ական թվականների վերջին ԱՄՆ-ի բանվոր դասակարգի ձեռքում էր գտնվում բաժնետոմսերի միայն մոտ մեկ տոկոսը։ Այդուհանդերձ «կապիտալի դեմոկրատացման» տեսությունը եղավ բանվոր դասակարգի վրա բուրժուազիայի գաղափարական ներգործության կարևոր գենը։ Ամերիկյան պատմաբան Գ. Ֆոլկների իրավացի դիտողության համաձայն, «բանվորների դասակարգային գիտակցության քայքայման գործում բաժնետոմսեր ունենալու հոդերանական արդյունքը վիթխարի եղավ»։

Ամերիկյան պրոլետարիատի զանգվածներում բուրժուա-ջատագովական տարբեր տեսությունների լայն տարածումը վկայում էր ԱՄՆ-ի բանվոր դասակարգի գաղափարական-քաղաքական լուրջ թուլության մասին։

Կապիտալիզմի ժամանակավոր մասնակի կայունացման ժամանակաշրջանում ԱՄՆ-ի բանվորական շարժման անկման վրա ազդեցություն ունեցավ նաև 20-ական թվականներին երկրում տիրող ընդհանուր անբարենպաստ ի-

բադրությունը։ Մոնոպոլիստական ռեակցիան վերսկսեց արհմիությունների հալածանքը, լայնորեն կիրառվում էին դատական կարգադրություններն ընդդեմ գործադուլների, երբեմն կատարվում էին նաև ուղղակի տեռորիստական հաշվեհարդարներ բանվորական շարժման ձախ գործիչների նկատմամբ։ Այդպիսի հաշվեհարդարի առավել աղաղակող օրինակ հանդիսացավ իտալացի երկու իմիգրանտ բանվորների՝ Սակկոյի և Վանցետտիի գործը։ Նրանք ձերբակալվեցին դեռ 1920 թ. հեղափոխական շարժմանն ակտիվորեն մասնակցելու համար և կոշիկի ֆաբրիկայի գանձապահի կողոպտման ու սպանության կեղծ մեղադրանքով դատապարտվեցին մահապատժի։ Ե՛վ Միացյալ Նահանգներում, և՛ նրա սահմաններից դուրս ընդլայնվում էր նրանց պաշտպանության համար ծավալված պայքարը։ Այդուհանդերձ ամերիկյան ռեակցիան մարտահրավեր նետեց համաշխարհային հասարակական կարծիքին։ 1927 թ. օգոստոսի 23-ին Սակկոն ու Վանցետտին իրենց կյանքն ավարտեցին էլեկտրական աթոռի վրա։

ԱՄՆ-ում լայն տարածում գտավ ֆունդամենտալիզմի ռեակցիոն գաղափարախոսությունը։ Հակաէվոլուցիոն այդ ուսմունքի կողմնակիցները հանդես էին գալիս գոյություն ունեցող սոցիալական կարգերի որևէ փոփոխությունների դեմ։ Նրանք մարտնչող կրոնական անհանդուրժողականության քարոզիչներ էին։ Մի քանի նահանգներում, հատկապես հարավում ընդունվեցին օրենքներ, որոնք քրեական հանցագործության էին հավասարեցնում այն հայացքների քարոզը, որոնք ժխտում էին «մարդու աստվածային ծագումը»։ 1925 թ. ամռանը Տեննեսիի նահանգի Դեյտոն քաղաքում կազմակերպվեց ամբողջ աշխարհում աղմուկ բարձրացրած խայտառակ «կապկային դատավարությունը» երիտասարդ դպրոցական ուսուցիչ Ջոն Սկոպսի դեմ, որը հանդգնել էր կասկած հայտնել այդպիսի օրենքներից մեկի սահմանադրական լինելու մեջ։ Խավարամտության ու կրոնական ֆանատիզմի պաշտպանության միսիան իր վրա վերցրեց անցյալում առաջադիմական շարժման մասնակից Ու. Բրայանը, որը դատավարության ժամանակ հանդես եկավ մեղադրողի դերում։ Հենց միայն այդ փաստում զգացվում էր այն փոփոխությունների ամբողջ խորությունը, որոնք տեղի ունեցան ԱՄՆ-ի քաղաքական իրադրության մեջ 20-ական թվականներին։

Անարգելաստ ներքաղաքական իրադրությունը և ամերիկյան պրոլետարիատի գաղափարական-քաղաքական հետամնացությունը պայմանավորեցին նաև ԱՄՆ-ի բանվորական շարժման մեջ եղած ձախ ուժերի թուլությունը։ Ամերիկայի սոցիալիստական կուսակցությունը, որը գտնվում էր ռեֆորմիստների ղեկավարության տակ, 20-ական թվականներին վերածվեց փոքրաթիվ մի աղանդի, որը կտրված էր բանվոր դասակարգից։ Այդ ժամանակ փոքրաթիվ էր նաև ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցությունը. 1929 թ. նրա մեջ հաշվվում էր 9 հազ. անդամ։ Իր պրակտիկ գործունեության մեջ կոմկուսն առաջվա պես թույլ էր տալիս աղանդավորական սխալներ։ Կոմունիստների արհմիութենական աշխատանքում երբեմն զգացվում էր շարդարացված շեշտադրում հատուկ հեղափոխական արհմիություններ ստեղծելու վրա, իսկ աշխատանքը ԱԱՖ-ի միությունների ներսում, ուր կենտրոնացված էին կազմակերպված պրոլետարիատի հիմնական կադրերը, ետին պլան էր մղվում։ Ամերիկյան կոմկուսում առանձնապես դժվարին կացություն ստեղծվեց 20-ական թվականների վերջին։ Բուրժուական գաղափարախոսության ազդեցությամբ նրա շարքերում ձևավորվեց աջ օպորտունիստական ուժեղ խումբը Ջեյ Լովստոնի գլխավորությամբ, որը 1927 թ. մարտին, Ռուտենբերգի մահից հետո զբաղեցրեց կուսակցության գլխավոր քարտուղարի պոստը։ Ձափազանցնելով ամերիկյան կապիտալիզմի ուժը և չտեսնելով կայունացման ժամանակավոր լինելու մասին վկայող գործոնները, Լովստոնը և նրա հետևորդները հանդես էին գալիս որպես «ամերիկյան բացառիկության» տեսության ակտիվ քարոզիչներ։ Լովստոնը գտնում էր, որ ամերիկյան կապիտալիզմը թեակոխել է իբր «երկրորդ արդյունաբերական հեղափոխության» դարաշրջանը, որը տանում է բանվոր դասակարգի դրության կայուն բարելավմանը և ԱՄՆ-ում դասակարգային հակասությունների մեղմացմանը։

Լովստոնի և նրա հետևորդների օպորտունիզմը հակահարված հանդիպեց ամերիկյան կոմկուսի մարքսիստական-լենինյան կորիզի կողմից, որոնք համախմբվել էին Ու. Ֆոստերի շուրջը։ Ճգնաժամը հաղթահարվեց 1929 թ., երբ ամերիկյան կոմունիստները Կոմինտերնի օգնությամբ գաղափարապես ջախջախեցին աջ օպորտունիստներին և Լովստոնին ու նրա կողմնակիցներին վտարեցին իրենց շարքերից։ Այդ իրադարձությունները համընկան 1929—1933 թթ. տնտեսական խոր ճգնաժամն սկսվելու հետ, որը քամուն տվեց և՛ «ամերիկյան բացառիկության» տեսությունը, և՛ ռևիզիոնիզմի տեսական մյուս ուսմունքները։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը 1924—1929 թթ.

Կապիտալիստական հարաբերական կայունացման ժամանակաշրջանում հանրապետական վարչակազմի վարած արտաքին քաղաքականությունն արտահայտում էր ամերիկյան իմպերիալիզմի աճած զավթողական ձգտումները։ Հենվելով Ամերիկայի վիթխարի տնտեսական հզորության վրա, ԱՄՆ-ի ֆինանսական կապիտալի ղեկավար շրջաններն առաջին պլան էին մղում ֆինանսա-տնտեսական էքսպանսիայի մեթոդները։ Նրանք զգալիորեն ամրապնդեցին իրենց դիրքերը միջազգային թատերաբեմում։ 20-ական թվականներին ԱՄՆ-ը առաջին տեղն էր գրավում արտահանության չափերով։ Ձափազանց մեծացան ԱՄՆ-ի արտասահմանյան կապիտալ ներդրումները։ 20-ական թվականների վերջերին ամերիկյան կապիտալիստների մասնավոր ներդրումներն արտասահմանում կազմեցին մոտ 16,5 մլրդ դոլլար, իսկ պետական փոխառությունների հետ ԱՄՆ-ի օտարերկրյա կապիտալ ներդրումների գումարը հասավ 27 մլրդ դոլլարի։

ԱՄՆ-ի տնտեսական էքսպանսիան առանձնապես ակտիվորեն էր կատարվում Լատինական Ամերիկայի երկրներում։ Եթե առաջին համաշխարհային պատերազմից առաջ ԱՄՆ-ի կապիտալ ներդրումները Կենտրոնական և Հարավային Ամերիկայի երկրներում չորս անգամ պակաս էին, քան Անգլիայի կապիտալ ներդրումները, ապա 1929 թ. մոտերքին ԱՄՆ-ի ներդրումները լատինաամերիկյան երկրներում գրեթե հավասարվեցին անգլիական ներդրումներին, կազմելով դրանց ընդհանուր գումարի 95 տոկոսը։ Լատինական Ամերիկայի երկրներում ԱՄՆ-ի տնտեսական դիրքերի ուժեղացումն իր հետևից բերեց ամերիկյան իմպերիալիզմի՝ նույնիսկ ձևականությունների հետ հաշվի չնստող միջամտությունը նրանց ներքին գործերում։ 20-ական թվականների վերջերին լատինաամերիկյան 20 պետություններից 14-ը այս կամ այն չափով գտնվում էին Միացյալ Նահանգների տնտեսական կամ ռազմական վերահսկողության տակ։

Վաշինգտոնի արտաքին քաղաքականության մեջ մեծ տեղ էր գրավում Հեռավոր Արևելքը, առանձնապես Չինաստանը։ Միացյալ Նահանգներին հաջողվեց այստեղ ևս որոշ չափով նեղել իր իմպերիալիստական մրցակիցներին։ Սակայն չինական շուկայում իշխող դիրք առաջվա պես գրավում էր Ճապոնիան։ Այսուհանդերձ, չնայած Չինաստանում ԱՄՆ-ի, Ճապոնիայի և Անգլիա-

յի միջև եղած սուր հակասություններին, այդ երեք խոշորագույն իմպերիալիստական տերությունների կառավարող շրջաններն անհապաղ միավորեցին իրենց ուժերը, երբ 1924 թ. սկսված չինական հեղափոխությունը միջազգային իմպերիալիզմի դիրքերի համար լուրջ սպառնալիք ստեղծեց Չինաստանում։ Հետագա տարիներին իմպերիալիստները հաճախ ուղղակի զինված միջամտություն էին կատարում Չինաստանի ներքին գործերին։

20-ական թվականներին ամերիկյան իմպերիալիզմի դիրքերը զգալիորեն ամրապնդվեցին նաև Եվրոպայում։ ԱՄՆ-ն ակտիվորեն մասնակցեց ռեպարացիոն հարցի լուծմանը։ Դաուեսի պլանի ընդունումը և ամերիկյան փոխառությունների լայն հոսանքը, ԱՄՆ-ի կառավարող շրջանների մտահղացմամբ, պետք է ապահովեին ԱՄՆ-ի կայուն հեգեմոնիայի հաստատումը Գերմանիայում, իսկ հետո նաև ամբողջ Եվրոպայում։ Գերմանիայի հանդեպ ԱՄՆ-ի վարած քաղաքականության մեջ ոչ փոքր դեր էին խաղում ամերիկյան իմպերիալիզմի նաև հակասովետական հաշիվները, Սովետական Միության դեմ մղվող պայքարում Գերմանիային իբրև զենք օգտագործելու ձգտումը։ Ամերիկյան կապիտալիստների բազմամիլիոնանոց փոխառություններն արդեն 20-ական թվականների վերջերին գերմանական բուրժուազիային թույլ տվեցին վերականգնել Գերմանիայի տնտեսական պոտենցիալը և պայմաններ ստեղծել գերմանական իմպերիալիզմի ռազմական հզորության արագ վերածնման համար։

ԱՄՆ-Ը ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1929—1933 ԹԹ.)

Տնտեսական ճգնաժամը և աշխատավորության դրությունը

1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամը կապիտալիզմի ամբողջ պատմության մեջ գերարտադրության ամենախոր ճգնաժամն էր։ Այն առանձին ուժգնությամբ հարվածեց կապիտալիստական աշխարհի գլխավոր երկրին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներին։ Ճգնաժամի վիթխարի կործանարար ուժն արտահայտվեց ամենից առաջ արդյունաբերական արտադրության բացառիկ խիստ անկման մեջ։ 1929 թ. նախաճգնաժամային մակարդակի դիմաց ամերիկյան արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալը կազմեց. 1930 թ.՝ 81 տոկոս, 1931 թ.՝ 69 տոկոս, 1932 թ.՝ 53 տոկոս, 1933 թ.՝ 63 տոկոս։ 1932 թ. ամռանից մինչև 1933 թ. գարունն ընկած ժամանակաշրջանը ճգնաժամի ամենամեծ խորացման ժամանակն էր, և միայն 1933 թ. գարնանից արդյունաբերական արտադրության մակարդակն սկսեց դանդաղորեն բարձրանալ, իրենով նշանավորելով տնտեսական ճգնաժամի՝ լճացմանն անցնելու սկիզբը։

Ճգնաժամն առավել խստորեն արտահայտվեց ծանր արդյունաբերության ճյուղերում։ Շահույթների նախկին մակարդակը պահպանելու ձգտման մեջ մոնոպոլիստական միավորումները վարում էին բարձր գներն արհեստականորեն պահպանելու քաղաքականություն, հանուն դրա իրականացնելով արտադրության վճռական կրճատում։ Այսպես, պողպատի ձուլումը 1929—1932 թթ. նվազեց ավելի քան չորս անգամ։ Այդ ժամանակ ԱՄՆ-ում եղած 285 դոմենյան վառարաններից 1932 թ. կեսերին գործում էր միայն 46-ը։

Ճգնաժամը չտեսնված չափերով վատացրեց բանվոր դասակարգի դրությունը։ Գործազուրկների բանակը զգալիորեն մեծացավ։ «Աշխատանքի պրոբլեմների հետազոտման ասոցիացիայի» (որը առաջադիմական կազմակերպություն էր) տվյալներով, 1932 թ. վերջին ԱՄՆ-ում հաշվվում էր գրեթե 17 մլն լիովին գործազուրկ, այսինքն՝ աշխատանք չուներ յուրաքանչյուր երկրորդ բանվորը։ Չափազանց լայն տարածում գտավ մասնակի գործազրկությունը։ ԱԱՖ-ի վկայությամբ, 1932 թ. լիովին զբաղված էր ամերիկյան բանվորների միայն 10 տոկոսը։

Միլիոնավոր գործազուրկներ և նրանց ընտանիքներ ճգնաժամի տարիներին անելանելի դրության մեջ ընկան։ Սոցիալական ապահովության բացակայությունն ԱՄՆ-ում նրանց մեջ պետությունից օգնություն ստանալու հույս չէր թողնում։ Ապարդյուն աշխատանք որոնելուց և բոլոր խնայողությունները սպառվելուց հետո բանվորները հաճախ հայտնվում էին սովից մեռնելու սպառնալիքի առջև։ Միայն Նյու Յորքում 1931 թ. պաշտոնապես գրանցվել է սովից մահանալու մոտ 2 հազ. դեպք։ Ճգնաժամը հասցրեց ԱՄՆ-ի բանվորական դասակարգի բացարձակ աղքատացմանը։ ԱԱՖ-ի տվյալներով, ամերիկյան բանվորների ռեալ աշխատավարձը 1929—1932 թթ. ընթացքում միջին հաշվով նվազեց 35 տոկոսով։

30-ական թվականների սկզբին աղետային չափերով վատացավ նաև ֆերմերության դրությունը։ Երկրագործության ու անասնապահության կարևորագույն մթերքների գները 1932 թ. մոտերքին 1929 թ. համեմատությամբ, ընդհանուր երեք-չորս անգամ։ Ֆերմերների համար հատկապես ծանր եղավ պարարտանյութերի, դիզելային վառելիքի, տոկոսների և հարկերի վճարումը։ 1932 թ. դրանք կլանում էին ֆերմերական համախառն եկամուտի մինչև 40 տոկոսը։ Ֆերմերական սեփականության էքսպրոպրիացիայի պրոցեսը ճգնաժամի տարիներին բացառիկ արագ տեմպերով էր ընթանում։ Չորս տարում, 1929 թ. մարտից մինչև 1933 թ. մարտը ԱՄՆ-ում սնանկացան և պարտքերն ու հարկերը չվճարելու համար հարկադիր վաճառքի ենթարկվեցին 897 հազ. ֆերմերական տնտեսություններ, այսինքն՝ երկրում եղած ֆերմերական տնտեսությունների ընդհանուր թվի 14,3 տոկոսը։ Սնանկացած ֆերմերները կամ մնում էին նախկին տեղում վարձակալի վիճակում, կամ լցվում աշխատանքի զուր որոնումներով ամբողջ երկրով մեկ շրջող թափառաշրջիկների բանակը։

Ճգնաժամն ընդգրկեց նաև երկրի ամբողջ ֆինանսական սիստեմը։ 1929 թ. հոկտեմբերին Միացյալ Նահանգներում սկսվեց չտեսնված բորսայական խուճապ։ Բաժնետոմսերի կուրսը սրընթաց գահավիժեց։ Բաժնետոմսերի կուրսի անկումը շարունակվեց ավելի քան երեք տարի։ 1933 թ. մարտի մոտերքին բաժնետոմսերի ընդհանուր արժեքը նվազեց մինչև 19 մլրդ դոլլարի, այսինքն՝ 1929 թ. համեմատությամբ չորս և կես անգամ։ Ֆինանսական ճգնաժամը հարվածեց ԱՄՆ-ի ամբողջ բանկային սիստեմին։ Չորս տարում սնանկացավ մոտ 5 հազ. բանկ, այսինքն՝ երկրի բոլոր բանկերի մեկ հինգերորդը։ Միլիոնավոր մանր ավանդատուներ կորցնում էին բազմաթիվ տարիների իրենց խնայողությունները և աղքատների վերածվում։

Այսպիսով, 1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամը վիթխարի չափով վատացրեց աշխատավորների դրությունը։ Բնութագրելով 30-ական թվականների սկզբին երկրում տիրող դրությունը, Ու. Ֆոստերը գրում էր. «Միացյալ Նահանգները, նախկինում գովաբանված կապիտալիստական բարգավաճման այդ երկիրը, դարձավ մի այնպիսի երկիր, որտեղ իշխում էր սովի, հիվանդությունների, թշվառության ու պաուպերիզմի կոշմարը»։

Հուվերի կառավարության ներքին ու արտաքին քաղաքականությունը

Ամերիկյան ժողովուրդը հույս ուներ, որ ծանր տարիներին կառավարությունն իրեն օգնության կհասնի։ Սակայն Վաշինգտոնի կողմից նա ոչ մի օգնություն չստացավ։ «Միլիոնատերերի կառավարությունը», ինչպես անվանում էր Հուվերի կաբինետին ԱՄՆ-ի առաջադիմական հասարակայնությունը, վերցրեց ծայրահեղ ռեակցիոն կուրս, որը նախատեսված էր այն բանի համար, որպեսզի ճգնաժամի ամբողջ ծանրությունը գցի աշխատավորության ուսերին։

Երկար ժամանակ հանրապետական վարչակազմի գործիչները ժխտում էին տնտեսական ճգնաժամի հենց առկայությունը։ Նրանք ամերիկացիներին համոզում էին, թե Միացյալ Նահանգներն ապրում են միայն ժամանակավոր լճացում և որ երկրի տնտեսական մեխանիզմն առողջ է։ Պրեզիդենտ Հուվերն ավելի լավ կիրառման արժանի համառությամբ շարունակում էր պնդել, թե «բարգավաճումը հեռու չէ, այլ փողոցի մյուս կողմում է»։

Ճգնաժամի պայմաններում հատկապես ակնառու կերպով բացահայտվեց հանրապետական կուսակցության պարագլուխների քարոզած «անհողդողդ ինդիվիդուալիզմի» փիլիսոփայության հակաժողովրդական էությունը։ Ելնելով դրա նախադրյալներից, Հուվերի կառավարությունը բացարձակապես անթույլատրելի էր համարում պետության միջամտությունը հասարակության տնտեսական կյանքում։ Այդ պատճառով նա կտրուկ մերժումով էր պատասխանում սոցիալական ապահովության ֆեդերալ սիստեմ ստեղծելու պահանջներին։ Գործազուրկներին օգնություն ցույց տալը դրվում էր բացառապես մասնավոր բարեգործության վրա։ Ժողովրդական տառապանքների հանդեպ որպես ծաղրանք էին հնչում Հուվերի դատողություններն այն մասին, թե գործազուրկներին պետության կողմից օգնություն ցույց տալը աննպատակահարմար է, որովհետև այն «կխարխլի բնակչության հավատն իր սեփական ուժերի նկատմամբ» և «կթուլացնի ամերիկյան բնավորության դիմացկունությունը»։ Հանրապետական վարչակազմի ամբողջ պրակտիկ գործունեությունն այդ ոլորտում հանգեց ոչ մեծ չափերով հասարակական աշխատանքների կազմակերպմանը։

Այդ ժամանակի պահանջներին չէր համապատասխանում նաև ԱՄՆ-ի կառավարող շրջանների ագրարային քաղաքականությունը։ 1929 թ. հունիսին կոնգրեսի հատուկ նստաշրջանն ընդունեց «Գյուղատնտեսական ապրանքների իրացման վերաբերյալ ակտը»։ Դրա համաձայն ստեղծվեց ֆերմերական ֆեդերալ վարչություն, որն իր առջև ինդիր դրեց երկրի ներսում հասնել գների կայունացմանը ցորենի, բամբակի և այլ մթերքների գնման և շուկայից դրանք հեռացնելու միջոցով։ Այդ նպատակով ֆերմերական վարչությանը պետական գանձարանից հատկացվեց 500 մլն դոլլարի դրամական օժանդակություն։ Գյուղատնտեսական ապրանքների գնման գործողությունը ընդմիջումներով տևեց մոտ մեկուկես տարի։ 1931 թ. կեսերին վարչության պահեստներում կուտակվեցին վիթխարի պաշարներ՝ 257 մլն բուշել ցորեն և 1,3 մլն հակ բամբակ։ Կարճ ժամկետում ծախսելով իրեն բաց թողնված բոլոր միջոցները, ֆերմերական վարչությունը մեծ օգուտ տվեց խոշոր ֆերմերության վերնախավին և հատկապես մոնոպոլիստական կորպորացիաներին, որոնց ձեռքում էին կենտրոնացված գյուղատնտեսական արտադրանքի հիմնական պաշարները։ Սակայն կառավարության ձեռքում, առանց շահավետ իրացման հույսի, արտադրանքի վիթխարի պաշարների կուտակումը ծայրահեղ անբարենպաստ ազդեցություն էր գործում շուկայի վրա։ Իսկ երբ 1931 թ. երկրորդ կեսից ֆերմերական վարչությունը դադարեցրեց գնումները և վիթխարի վնասներ կրելով՝ սկսեց վաճառել իր պաշարները, դա հասցրեց արդեն շուկայի լիակատար քայքայմանը և մանր ու միջին ֆերմերների դրության է՛լ ավելի վատացմանը։

Դրա հետ մեկտեղ ճգնաժամն սկսվելու առաջին իսկ նշանների ժամանակ Հուվերի կառավարությունը օգնության հասավ մոնոպոլիաներին։ Մասնավոր կապիտալ ներդրումները խթանելու նպատակով ֆեդերալ կառավարությունը միջոցներ ձեռք առավ վարկի էժանացման ուղղությամբ, իսկ 1929 թ. վերջին անցկացրեց կորպորացիաների եկամուտներից գանձվող հարկերի հերթական նվազեցում։ 1930 թ. հունիսին ուժի մեջ մտավ Հոուլ-Սմուտի տարիֆային ակտը, որն իսկապես դարձավ պրոտեկցիոնիզմի բարձրակետը։ Ներմուծման մաքսերի նոր բարձրացումը մոնոպոլիստներն օգտագործեցին երկրի ներսում արդյունաբերական ապրանքների գները բարձրացնելու համար։

1931 թ. աշնանը տնտեսական կոնյունկտուրայի շեշտակի վատացման և խոշոր բանկերի ավելի հաճախակի դարձած կրախների կապակցությամբ Հուվերի կառավարությունն սկսեց ուղղակի դրամական օժանդակություն ցույց տալ մոնոպոլիաներին։ 1931 թ. հոկտեմբերին Հուվերը հանդես եկավ 500 մլն դոլլար կապիտալով ազգային վարկատու կորպորացիայի ստեղծման նախաձեռնությամբ։ Այդ կապիտալը ենթադրվում էր հավաքել բանկային խմբերի կամավոր մուծումների միջոցով։ Իսկ երբ դա անբավարար եղավ, մոնոպոլիաների փրկության համար նետվեցին պետական խոշոր միջոցներ։ 1932 թ. հունվարին կոնգրեսն ընդունեց Վերականգնման ֆինանսական կորպորացիա (ՎՖԿ) հիմնելու մասին օրենքը։ Մինչև 1933 թ. մարտը, այսինքն՝ մինչև Հուվերյան վարչակազմի լիազորությունների ժամկետի լրանալը, ՎՖԿ-ն տարածեց 2,1 մլրդ դոլլար գումարի փոխառություններ։ Այդ գումարի մոտ երկու երրորդն ընկավ բանկերի, երկաթուղային ընկերությունների և այլ մոնոպոլիաների ձեռքը, իսկ բանվորներին ու ֆերմերներին բաժին հասան խղճուկ փշրանքներ։

Հուվերի կառավարության ներքին քաղաքականությունը և հատկապես ՎՖԿ-ի գործունեությունն այն բանի վկայությունն էին, որ 1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում ԱՄՆ-ում վերստին սկսվեց պետական-մոնոպոլիստական տենդենցների ուժեղացումը։ Ճիշտ է, քանի դեռ իշխանության գլուխ կանգնած էր հանրապետական վարչակազմը, այդ տենդենցներն արտահայտվում էին գլխավորապես մոնոպոլիաներին պետական խոշոր դրամական օժանդակություն ցույց տալու ձևով։

1929—1933 թթ. ճգնաժամին հետևեց ամերիկյան իմպերիալիզմի միջազգային դիրքերի համեմատական թուլացումը։ Խիստ կրճատվեցին ԱՄՆ-ի արտաքին առևտրի շրջանառությունները (մոտ 70 տոկոսով), սկսվեց նրանց կապիտալ ներդրումների արժեզրկումը։ Ճգնաժամի ժամանակաշրջանում կատաղի պայքար ծավալվեց Միացյալ Նահանգների և նրանց իմպերիալիստական մրցակիցների, հատկապես Անգլիայի, միջև հանուն իրացման շուկաների և կապիտալների ներդրման ոլորտների։ Այդ պայքարի արդյունքն ամբողջությամբ վերցրած անբարենպաստ էր ԱՄՆ-ի համար։ Անգլիան Միացյալ Նահանգներին էականորեն դուրս մղեց Կանադայից և Լատինական Ամերիկայից։

ԱՄՆ-ի համար ավելի հաջող եղավ անգլո-ամերիկյան մրցակցության արդյունքը ռազմածովային շինարարության ասպարեզում։ 1930 թ. Լոնդոնի ծովային կոնֆերանսն ԱՄՆ-ի ու Անգլիայի հավասարության սկզբունքը տա-

բածեց ոչ միայն գծային նավատորմի վրա, ինչպես այդ արվեց 1922 թ. Վաշինգտոնի կոնֆերանսում, այլև հածանավերի, էսկադրային ականակիրների և սուզանավերի վրա։

Ամերիկյան իմպերիալիզմի միջազգային դիրքերի ամրապնդման փորձերի հետ մեկտեղ ԱՄՆ-ի կառավարող շրջաններն առաջվա պես շարունակում էին ջանքեր գործադրել բոլոր կապիտալիստական տերությունների միասնական հակասովետական ճակատ ստեղծելու ուղղությամբ։ Հուվերի կառավարությունը շարունակում էր Սովետական Միությանը չճանաչելու քաղաքականությունը։ Նա ամեն ինչ անում էր, որպեսզի դժվարացնի նրա տնտեսական զարգացումը։ Հակասովետական նպատակներ էին ընկած նաև Գերմանիայի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականության հիմքում։ Գերմանական բուրժուազիայի դասակարգային տիրապետության ճակատագրի մասին մտահոգությունը և ի դեմս Գերմանիայի՝ «բոլշևիզմի» դեմ հարվածային ուժ ունենալու ձգտումը ԱՄՆ-ի կառավարող շրջաններին ստիպեցին արտակարգ միջոցների դիմել։ 1931 թ. Հուվերի առաջարկությամբ մեկ տարով դադարեցվեցին միջպետական պարտքերի և ռեպարացիաների գծով մուծումները։ «Հուվերի մորատորիումը» մեկ քայլ եղավ դեպի բոլոր ռեպարացիաները 1932 թ. լիովին վերացնելը։ Ռեպարացիոն մուծումների վերացումը գերմանական իմպերիալիստներին թույլ տվեց արագացված տեմպերով ավարտելու Գերմանիայի տնտեսական պոտենցիալի վերականգնումը և ընդհուպ ձեռնամուխ լինելու աշխարհի բաժանման համար նոր պատերազմի նախապատրաստմանը։

30-ական թվականների սկզբին Միացյալ Նահանգների վարած քաղաքականությունը ոչ քիչ չափով նպաստեց պատերազմի օջախի առաջացմանը Հեռավոր Արևելքում։ Երբ 1931 թ. սեպտեմբերին ճապոնական զորքերը օկուպացրին Մանջուրիան, Հուվերի կառավարությունը ձեռնպահ մնաց այդ ագրեսիան նույնիսկ ձևականորեն դատապարտելուց։ Նման դիրքորոշումը բացատրվում էր ԱՄՆ-ի կառավարող շրջանների այն հույսերով, թե Ճապոնիայի ու ՍՍՀՄ-ի միջև ռազմական կոնֆլիկտ կծագի։ Եվ միայն այն ժամանակ, երբ ճապոնական բանակը շարժվեց ոչ թե դեպի հյուսիս, այլ դեպի հարավ, ԱՄՆ-ի պետական քարտուղար Հ. Ստիմսոնը հանդես եկավ «չճանաչելու դոկտրինայով», որտեղ դատապարտվում էին բոլոր այն գործողությունները, որոնք հակասում էին Չինաստանում «բաց դռների» սկզբունքին։ Այդ «դոկտրինան» Ճապոնիայի և ԱՄՆ-ի միջև եղած հակասությունների սրման վկայությունն էր։ Այնուամենայնիվ Հուվերի կառավարությունը, որը ճապոնա-սովետական կոնֆլիկտի բորբոքման հույսը չէր կորցրել, այդպես էլ վճռական միջոցներ չձեռնարկեց այն ամրապնդելու համար։ Դա Ճապոնիայի համար հեշտացրեց ագրեսիայի նոր ակտերը։

Աշխատավորների մասսայական շարժումը 1929—1933 թթ.

Հասարակության տնտեսական կյանքի քայքայումը, որն առաջացել էր ճգնաժամից, աշխատավորների թշվառության ու աղքատության չլսված սրումը, բուրժուական կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը՝ այդպիսին էր 30-ական թվականներին Միացյալ Նահանգներն ընդգրկած մասսայական ժողովրդական շարժման հզոր ալիքի օբյեկտիվ հիմքը։

Ճգնաժամի ժամանակաշրջանում ԱՄՆ-ի բանվորական շարժման գլխավոր ձևը դարձավ գործազուրկների շարժումը։ Այն անցնում էր կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։ Դեռ 1929 թ. դեկտեմբերին կոմկուսի ղեկավարությունը մշակեց գործազուրկների գործողությունների ծրագիրը։ Կոմունիստները նրանց կոչ էին անում պայքարել սոցիալական ապահովության պետական սիստեմ մտցնելու, կառավարության կողմից գործազուրկներին անհապաղ օգնություն ցույց տալու, հասարակական աշխատանքներում աշխատանքի արդարացի վարձատրման համար։ Շարժումն ընդգրկեց գործազուրկների վիթխարի զանգվածներ։ 1930 թ. մարտի 6-ին կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ամբողջ երկրում անցկացվեցին գործազրկության դեմ բողոքի մասսայական ցույցեր։ Դրանց մասնակցեցին մոտ 1250 հազ. բանվորներ։ 1930 թ. հուլիսին Չիկագոյում տեղի ունեցավ գործազուրկների համազգային առաջին համագումարը։ Այն հավանություն տվեց կոմունիստների առաջադրած գործողությունների ծրագրին։ Ստեղծվեց Գործազուրկների ազգային խորհուրդ, որը միավորեց գործազուրկների տեղական խորհուրդների գործունեությունը։

Չիկագոյի համագումարի որոշումների հիման վրա կոմունիստական կուսակցությունը 1930 թ. ամռանը մշակեց և բանվորների քննարկմանը ներկայացրեց սոցիալական ապահովության վերաբերյալ օրինագիծը, որը նախատեսում էր արդյունաբերական բանվորների միջին աշխատավարձի չափով նպաստների վճարում գործազրկության, ծերության կամ հիվանդությունների համար։ Սոցիալական ապահովության ֆոնդը ենթադրվում էր ստեղծել գլխավորապես խոշոր կապիտալի վրա լրացուցիչ հարկեր դնելու միջոցով։ Սոցիալական ապահովության հիմնարկությունների գործունեությունը պետք է ընթանար բանվորների հսկողությամբ։ Սոցիալական ապահովության մասին «բանվորական բիլլում» շարադրված ծրագիրը լայն արձագանք գտավ երկրի տարբեր շրջաններում տեղի ունեցած բազմաթիվ ցույցերի և գործազուրկների սովյալ արշավների մասնակիցների շրջանում։ 1931 թ. վերջին կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ անցկացվեց գործազուրկների առաջին ազգային սովյալ արշավը դեպի Վաշինգտոն։ 1931 թ. դեկտեմբերի 7, կոնգրեսի հերթական նստաշրջանի բացման օրը արշավի մասնակիցներն անցան ամերիկյան մայրաքաղաքի փողոցներով, պահանջելով անհապաղ օգնություն ցույց տալ գործազուրկներին։

Տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում ԱՄՆ-ում դասակարգային պայքարի մյուս կարևոր իրադարձությունը 1932 թ. ամռանը պատերազմի վետերանների արշավն էր դեպի Վաշինգտոն։ Վետերանների հիմնական զանգվածը կազմում էին գործազուրկները, բայց արշավի մասնակիցների մեջ կային սնանկացած շատ ֆերմերներ, մանր ձեռնարկատերեր, առևտրականներ, ծառայողներ։ Նախկին զինվորներն իրենց ընտանիքների հետ գնում էին Վաշինգտոն, որպեսզի կառավարությունից պահանջեն վճարելու այսպես կոչված բոնուսը, այսինքն՝ փոխհատուցում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում բանակում իրենց կատարած ծառայության համար։ 1932 թ. հունիսին ԱՄՆ-ի մայրաքաղաքում հավաքվեց պատերազմի մոտ 20 հազ. վետերան։ Ներկայացուցիչների պալատը որոշեց բավարարել վետերանների պահանջները։ Սակայն Հուվերի պնդմամբ սենատը մերժեց «բոնուս» վճարելու վերաբերյալ բիլլը, որն ընդունել էր պալատը։ Դա ալեկոծեց պատերազմի վետերանների շարժումը։ Արշավի մասնակիցները սկսեցին պահանջել ոչ միայն «բոնուսը» վճարել, այլև սոցիալական ապահովության սիստեմ մտցնել։ Կապիտոլիումի շուրջը տեղի ունեցած բազմաթիվ ցույցեր, ամայացած կառավարական շենքերի ինքնակամ գավթում՝ այս բոլորը վկայում էր արշավի մասնակիցների մարտական տրամադրությունների աճի մասին։

Այդ ժամանակ, 1932 թ. հուլիսի 28-ին, Հուվերի հրամանով և ամերիկյան

բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Մակարտուրի ղեկավարությամբ վետերանների դեմ նետվեցին կանոնավոր զորքեր, որոնք զինված էին տանկերով, գնդացիրներով և գազի ռումբերով։ Պատերազմի անզեն վետերանների, նրանց կանանց ու երեխաների վրա գազ էին բաց թողնում, ցրում հեծելազորի ու տանկերի օգնությամբ, հրկիզում նրանց ժամանակավոր ճամբարի խրճիթները։ Վաշինգտոնի վրա բարձրանում էր հրդեհների հրացոլքը։ Այդպիսին եղավ հանրապետական վարչակազմի պատասխանը ժողովրդական զանգվածների ելույթներին։ Բայց այդ հաշվեհարդարը չահարեկեց աշխատավորներին։ Գործազուրկների շարժումը նոր ուժով ծավալվեց։ 1932 թ. դեկտեմբերին Վաշինգտոն մտան երկրորդ ազգային սովյալ արշավի մասնակիցները, որոնք պահանջեցին արտակարգ միջոցներ ձեռնարկել բանվորներին ու ֆերմերներին օգնելու համար։

Կոմունիստների հետ գործազուրկների շարժմանը մասնակցում էին սոցիալիստական կուսակցությունը և նրա հետ կապված, ԱԱՖ-ի շարքերում գտնվող ձախ օպոզիցիոն խումբը, որը 1929 թ. ձևավորվել էր որպես «Կոնֆերանս հանուն առաջադիմական բանվորական գործողության»։ Այդ կազմակերպությունների ստեղծած բանվորական ալյանսները և գործազուրկների լիգաները հաճախ դառնում էին բանվոր դասակարգի պայքարի կարևոր զենք։

1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում գործադուլային շարժման զարգացումն ԱՄՆ-ում անցնում էր նվազ ինտենսիվությամբ։ Գործադուլային պայքարը ճգնաժամի պայմաններում ծայրահեղ դժվարացավ։ Ձեռնարկատերերն ամեն բոպե կարող էին աշխատանքից դուրս նետել հարյուրավոր գործադուլավորների, գիտենալով, որ փողոցում կան տասնյակ հազարավոր մարդիկ, որոնք պատրաստ են ամեն տեսակ աշխատանքի։ Գործադուլային պայքարի զարգացմանը բոլոր ուժերով խոչընդոտում էին ԱԱՖ-ի ռեֆորմիստական պարագլուխները, որոնք այդ մասին հատուկ համաձայնագիր էին կնքել կառավարության հետ։ Եվ չնայած դրան, այնուամենայնիվ ԱՄՆ-ի բանվոր դասակարգի գործադուլային պայքարը շարունակվում էր։ 1929 թ. մինչև 1932 թ. ընկած ժամանակաշրջանում երկրում ընդհանուր առմամբ գործադուլ արեց 1138 հազ. բանվոր։ Այդ տարիների առավել խոշոր գործադուլային ելույթները տեղի ունեցան 1931 թ. Պենսիլվանիայի քարածխային շրջաններում, Օհայոյում և Արևմտյան Վիրգինիայում, որտեղ արհմիութենական միասնության լիգայի (ԱՄԼ) ղեկավարությամբ բանվորները կատաղի պայքար էին մղում ձեռնարկատերերի հարձակման դեմ։

ԱՄԼ-ի ակտիվ մասնակցությունն ամերիկյան բանվորների ելույթներին ավելացրեց նրա թվաքանակն ու ազդեցությունը։ 1938 թ. արհմիութենական միասնության լիգայի շարքերում, որին ղեկավարում էր կոմկուսը, հաշվվում էր գրեթե 100 հազ. անդամ։ Սակայն 30-ական թվականների սկզբին ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցության գործունեության մեջ առաջվա պես զգացվում էին աղանդավորական բնույթի սխալները։ Բանվորների շրջանում ծավալած իրենց ագիտացիայում կոմունիստները հաճախ առաջին պլան էին մղում պայքարի վերջնական նպատակները, ոչ միշտ բավարար ուշադրություն դարձնելով բանվոր դասակարգի առօրյա կարիքներին։ ԱՄԼ-ն շեշտը դնում էր անկախ ձախ արհմիությունների ստեղծման վրա, երբեմն արհամարհելով ԱԱՖ-ի ռեֆորմիստական միություններում գոյություն ունեցող ձախ օպոզիցիայի ամրապնդման համար մղվելիք պայքարը։ Դա տանում էր դեպի ԱՄԼ-ի արհմիությունների մեկուսացում կազմակերպված բանվորների հիմնական զանգվածից։

1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամը շարժման մեջ դրեց նաև ամերիկյան ֆերմերության լայն խավերին։ Ֆերմերների դժգոհության գլխավոր կենտրոնատեղին դարձավ ազգային ֆերմերական միությունը, որն արտահայտում էր ոչ միայն գյուղատնտեսական բուրժուազիայի, այլև որոշ չափով նաև մանր ու միջին ֆերմերների շահերը։

1932 թ. գարնանը ազգային ֆերմերական միությունը ֆերմերներին կոչ արեց դադարեցնել գյուղատնտեսական մթերքների վաճառքն այնքան ժամանակ, քանի դեռ գներն ավելի բարձր մակարդակի չեն հասել։ Բոյկոտի շարժումը ղեկավարելու համար ստեղծվեց հատուկ կազմակերպություն՝ ազգային ֆերմերական գործադուլային ասոցիացիա՝ Այովայի ֆերմերական միության պրեզիդենտ Միլո Ռենոյի գլխավորությամբ։

Ասոցիացիայի կոչով 1932 թ. օգոստոսին Այովա նահանգում սկսվեց ֆերմերների գործադուլը, որը հետո տարածվեց նաև Մինեսոտայում, Հյուսիսային և Հարավային Դակոտայում, Նեբրասկայում, Վիսկոնսինում և Միջին Արևմուտքի այլ նահանգներում։ Դեպի քաղաքները տանող ճանապարհներին երևացին գործադուլային պիկետներ։ Ֆերմերները գերաններ, քարեր, հին սայլակներ էին լցնում խճուղիների վրա և կանգնեցնում այն բեռնատար ավտոմեքենաները, որոնք գյուղատնտեսական մթերքներ էին փոխադրում միջնորդ մոնոպոլիաների գնման կետերը։ Ծավալված շարժումից անհանգստացած՝ իշխանությունները նրա դեմ մոբիլիզացրին ոստիկանական ուժեր։ Շատ քաղաքների մատույցներում տեղի էին ունենում ֆերմերների իսկական ճակատամարտեր ոստիկանության և մոնոպոլիաների հատուկ հավաքագրված պահապան ջոկատների հետ։ Պայքարը տևեց ավելի քան երկու ամիս։ Միայն 1932 թ. հոկտեմբերին բռնության, սպառնալիքների ու խոստումների միջոցով իշխանություններին հաջողվեց հասնել գործադուլի դադարեցմանը։

Սակայն ֆերմերական շարժման զարգացումը կանգ չառավ։ 1932 թ. վերջին— 1933 թ. սկզբին հաճախակի դարձան պարտքերի ու հարկերի չվճարման համար ֆերմաների բռնի վաճառքին դիմադրելու դեպքերը։ Ֆերմերները գնում էին վաճառման վայրերը և բռնություն գործադրելու սպառնալիքով ոչ մեկի թույլ չէին տալիս մասնակցել աճուրդին։ Դիմադրության մյուս ձևը «գոռոշային վաճառքներն» էին։ Ֆերմերների թվից առանձնանում էր մի քանի մարդ, որոնք մասնակցում էին աճուրդին, առաջարկելով ծայրահեղ ցածր գներ։ Ուրիշ ոչ մեկի թույլ չէր տրվում մասնակցել վաճառքին։ Երբեմն ֆերմերները վարկատուներին ստիպում էին պարտքի մարման համար ընդունել գրավի գումարի մեկ հարյուրերորդականը կամ նույնիսկ մեկ հազարերորդականը։ Իսկ հետո ունեցվածքը վերադարձնում էին նրա տիրոջը։

Բռնի վաճառքների դեմ մղված պայքարում հատկապես ակտիվ դեր էր խաղում միացյալ ֆերմերների լիգան, որը ղեկավարում էին կոմունիստները։ Հարավում 1931 թվականից գործում էր բնավարձակալ-կրոպերների միությունը, որը ստեղծվել էր կոմկուսի նախաձեռնությամբ։ Կոմունիստների ղեկավարությամբ 1932 թ. դեկտեմբերին անցկացվեց ազգային ֆերմերական կոնֆերանս, որը պահանջեց ստեղծել կարիքավոր ֆերմերներին 500 մլն դոլլարի չափով օգնության ֆոնդ, հետաձգել պարտքերի ու հարկերի վճարումը, արգելել ֆերմաների բռնի վաճառքը։ Այդ ծրագրի իրականացման համար պայքարելու նպատակով ընտրվեց Գործողության ազգային ֆերմերական կոմիտե։

1933 թ. գարնան մոտերքին ԱՄՆ-ի ֆերմերական շարժումն առավել մեծ թափի հասավ։ Պայքարի ընթացքում ծագեց ազգային ֆերմերական գործա-

դուլ անցկացնելու գաղափարը որպես կառավարության վրա ճնշում գործադրելու գործիքի՝ ֆերմերներին օգնության հասնելու համար նրան հարկադրելու նպատակով։ 1933 թ. մարտին ազգային ֆերմերական գործադուլային ասոցիացիան սկսեց գործադուլի նախապատրաստությունը։

Դասակարգային հակասությունների սրումը երկրում ստեղծել էր ծայրահեղ լարված քաղաքական իրադրություն։ Ճգնաժամի ուժեղագույն հարվածները շատ ամերիկացիների ստիպեցին մտածել այն բանի մասին, ինչը դեռ վերջերս, թվում էր, թե ոչ մի կասկած չէր առաջացնում։ «Ամերիկյան ապրելակերպի» առավելության նկատմամբ եղած համոզվածությանը փոխարինեցին կապիտալիստական սիստեմի արժանիքների նկատմամբ առաջացած կասկածները։ Խոշոր կապիտալը վերստին դարձավ սուր քննադատության օբյեկտ։ Մասսաների հակակապիտալիստական խռովահույզ ձգտումներն իրենց արտահայտությունը գտան Սովետական Միության հանդեպ հետաքրքրության աճի, «համընդհանուր բարօրության» համար տնտեսության ազգային պլանավորման գաղափարների լայն ժողովրդականության մեջ։

Այդ պայմաններում էլ ծավալվեց 1932 թ. ընտրական կամպանիան։ Բուրժուական երկու կուսակցությունները դիմեցին մեծագույն դեմագոգիայի, ձգտում էին իրենց ներկայացնել որպես ժողովրդի շահերի պաշտպան։ Ինչ որ բանում նույնիսկ հանրապետականներն էին ստիպված լինում զիջումների դիմել։ Այսպես, օրինակ, 1932 թ. մարտին Հուվերը ստորագրեց Նորիս-Լագարդիայի օրենքը, որը զգալիորեն սահմանափակում էր դատական միջամտությունը աշխատանքային կոնֆլիկտներում։ Այդուհանդերձ հանրապետական վարչակազմի համար դա ոչ թե կանոն էր, այլ բացառություն։ Հանրապետական կուսակցության ընտրական պլատֆորմում ոչ մի բան չկար, որը խոստանար թեկուզև մասնակիորեն բարելավել բանվորների և ֆերմերների թշվառ դրությունը։ Օրվա բոլոր անհետաձգելի պրոբլեմներն այնտեղ լիովին անտեսված էին։

Ի տարբերություն հանրապետականների, դեմոկրատական կուսակցությունն ու պրեզիդենտի պոստի նրա թեկնածու, Նյու Յորքի նահանգի նահանգապետ Ֆրանկլին Ռուզվելտը անհրաժեշտ համարեցին աշխատավորներին որոշ զիջումներ անել, մի շարք լիբերալ ռեֆորմներ անցկացնել, որոնք նախատեսված էին թուլացնելու դասակարգային հակասությունների սրությունը երկրում։ Դեմոկրատական կուսակցության ճկուն տակտիկան, ինչպես նաև դեմոկրատների անհամեմատ ավելի նպաստավոր դրությունը, որը նրանց թույլ էր տալիս ճգնաժամի և նրա առաջացրած թշվառությունների ողջ մեղքը գցել Հուվերի և հանրապետականների վրա, ընտրությունների ժամանակ ապահովեցին Ռուզվելտի հաղթանակը։ 1932 թ. նրա օգտին քվեարկեց 22,8 մլն ընտրող, այն դեպքում երբ Հուվերին հաջողվեց ստանալ միայն 15,8 մլն ձայն։ Իշխանությունն անցավ դեմոկրատների ձեռքը։

ԱՄՆ-Ը Ֆ. ՌՈՒԶՎԵԼՏԻ «ՆՈՐ ԿՈՒՐՍԻ» ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1933—1939 ԹԹ.)

Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսը» և նրա դասակարգային էությունը

1933 թ. մարտի 9-ին, պրեզիդենտի պոստը Ռուզվելտի ստանձնելուց մի քանի օր հետո գումարվեց կոնգրեսի հատուկ նստաշրջան, որի աշխատանքը տևեց ավելի քան երեք ամիս։ Այդ ժամանակամիջոցում կոնգրեսն ընդունեց բազմաթիվ օրենքներ, որոնք ընդգրկում էին ԱՄՆ-ի կյանքի գրեթե բոլոր կողմերը։ Այսպես Ռուզվելտի արդեն «առաջին հարյուր օրվա» ընթացքում դրվեցին կառավարական քաղաքականության հիմքերը, որն ստացավ «Նոր կուրս» անունը։

«Նոր կուրսի» տեսական բազան հանդիսացան պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի գաղափարախոսներից մեկի՝ անգլիական տնտեսագետ Ջոն Մեյնարդ Քեյնսի հայացքները։ Արտահայտելով կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաշրջանում կապիտալիստական երկրների էկոնոմիկայում տեղի ունեցած խոր փոփոխությունները, Քեյնսը և նրա հետևորդները պնդում էին, որ կապիտալիստական վերարտադրության նորմալ ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ է տնտեսության պետական ակտիվ կարգավորում։ Այդ դրույթների համապատասխան Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսի» կարևորագույն խնդիրն այն էր, որպեսզի կապիտալիստական վերարտադրության պրոցեսում կատարած եռանդուն միջամտության միջոցով էկոնոմիկան դուրս բերվեր ճգնաժամից։ «Նոր կուրսը» եղավ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը Միացյալ Նահանգների տնտեսական կյանքի մշտական գործոնի վերածվելու սկիզբը։

«Նոր կուրսի» մյուս, քաղաքական խնդիրն այն էր, որպեսզի սոցիալական մանևրի մեթոդներով հասնել ճգնաժամի ժամանակաշրջանում երկրում ծավալված բանվորական ու ֆերմերական շարժման թուլացմանը։ Ահա թե ինչու «Նոր կուրսի» հիմնական միջոցառումները նախատեսում էին բանվորների ու ֆերմերների իրավունքների որոշ ընդլայնում։ «Նոր կուրսի» քաղաքականությունը բուրժուական ռեֆորմիզմի քաղաքականության տարատեսակություններից մեկն էր, այդ ժամանակ առաջացած նեոլիբերալիզմի գաղափարախոսության մարմնավորումը։ Նա ուղղված էր այն բանին, որպեսզի ժողովրդական զանգվածներին պահեր բուրժուական գաղափարախոսության ազդեցության տակ, նրանց շեղեր խոշոր կապիտալի դեմ մղվող պայքարից և դրանով իսկ ամրապնդեր մոնոպոլիստական բուրժուազիայի դասակարգային տիրապետությունը։

Ռուզվելտի «Նոր կուրսի» գլխավոր բաղկացուցիչ մասը դարձավ արդյունաբերության վերականգնման օրենքը, կամ, կրճատ ՆԻՐԱ-ն, որն ուժի մեջ մտավ 1933 թ. հունիսի 16-ին։ Այն բաղկացած էր երեք մասից։ ՆԻՐԱ-յի առաջին մասում նախատեսվում էր մտցնել արդյունաբերության պետական կարգավորման սիստեմ։ Արդյունաբերական բոլոր միավորումներին կարգադրվում էր մշակել այսպես կոչված «ազնիվ մրցակցության կոդեքսներ»։ ԱՄՆ-ի պրեզիդենտի կողմից հաստատվելուց հետո դրանք ձեռք էին բերում օրենքի ուժ։ Կոդեքսներում սահմանվում էին արտադրության պայմաններն ու ծավալը, իրացման շուկաները, գների այն մակարդակը, որոնցից ցածր չէր կարելի վաճառել պատրաստված արտադրանքը։ Կոդեքսների պայմանների կենսագործման նկատմամբ վերահսկողությունը դրվում էր Վերականգնման ազգային կառավարչության (ՆՐԱ) վրա՝ գեներալ Հ. Ջոնսոնի գլխավորությամբ։ «Ազնիվ մրցակցության կոդեքսները» կազմվեցին ամերիկյան արդյունաբերության բոլոր ճյուղերում։ 1934 թ. կեսերին ԱՄՆ-ում հաշվվում էր մոտ 500 կոդեքս, որոնք ներառնում էին արդյունաբերական այն ձեռնարկությունները, որոնցում ընդգրկված էր վարձու աշխատանքով զբաղված անձանց 95 տոկոսը։ Արդյունաբերության վերականգնման օրենքի իրականացումը ամրապնդեց մոնոպոլիաների դրությունը։ Կոդեքսները կազմելու ժամանակ տոն տալով, խոշորագույն կորպորացիաների ներկայացուցիչները, որպես կանոն, մնացած բոլոր ձեռնարկություններին թելադրում էին արտադրության ու իրացման պայմանները։ Պետական այդպիսի կարգավորման անխուսափելի արդյունքը եղավ

մոնոպոլիստական պրակտիկայի ուղղակի խրախուսումը, ավելի թույլ ընկերություններին ճնշելը և ի վերջո արդյունաբերության հարկադիր կարտելացումը։

Արդյունաբերության վերականգնման օրենքով նախատեսված միջոցառումների երկրորդ խումբը ընդգրկում էր աշխատանքային հարաբերությունների ասպարեզը։ Բանվորական շարժման ճնշման տակ ԱՄՆ-ի կառավարող շրջաններն ստիպված էին դիմելու բանվորների աշխատանքի պայմանների որոշ բարելավման։ ՆԻՐԱ-յի 7ա հոդվածը ձեռնարկատերերին ցուցում էր տալիս կոդեքսները կազմելու ժամանակ սահմանել աշխատավարձի նվազագույն մակարդակ և աշխատանքային շաբաթվա առավելագույն տևողություն։ Այն հռչակում էր նաև արհմիությունների մեջ կազմակերպվելու և կոլեկտիվ պայմանագիր կնքելու բանվորների իրավունք։ Սակայն գործնականում օրենքի այդ դրույթները հաճախ էին շրջանցվում ձեռնարկատերերի կողմից։ Նրանցից շատերը կամ ընդհանրապես հրաժարվում էին կոլեկտիվ պայմանագրեր կնքելուց, կամ էլ արմատավորում կոմպանիաների՝ տերերից կախում ունեցող միություններ և բանվորների վզին փաթաթում նրանց համար անշահավետ աշխատանքային համաձայնագրեր։

Աշխատանքային հարաբերությունների կարգավորման սիստեմում կարևոր դեր էր խաղում աշխատանքի ազգային վարչությունը, որը կազմվեց 1933 թ. օգոստոսին։ Այդ մարմնի գործունեությունը, ինչպես նաև նրա հետնորդի՝ 1934 թ. հունիսին կոնգրեսի կողմից ստեղծված աշխատանքային հարաբերությունների գծով ազգային վարչության գործունեությունը ուղղված էր գործադուլների կանխմանը կամ ձախողմանը։ Թեև աշխատանքային առանձին կոնֆլիկտներում վարչությունը բանվորների կողմն էր կանգնում, սակայն նրա տրամադրության տակ ռեալ միջոցներ չկային, որպեսզի ձեռնարկատերերին ստիպեին կենսագործելու այդ որոշումը։ Խոշոր ընկերություններն անտեսում էին արբիտրաժի մարմինների՝ իրենց համար անձեռնտու որոշումները, նրանց ծառայությանը դիմելով միայն գործադուլները ձախողելու նպատակով։

Արդյունաբերության վերականգնման օրենքի երրորդ մասը նվիրված էր գործազրկության պրոբլեմին։ Կոնգրեսը ներքին գործերի մինիստր Հ. Իկեսի գլխավորությամբ ստեղծեց Հասարակական աշխատանքների կառավարչությունը (ՊՎԱ)։ Նրա ծրագրի իրականացման համար բաց թողնվեց 3,3 մլն դոլլար։ Բացի ՆԻՐԱ-յի գծով նախատեսված միջոցներից Ռուզվելտի կառավարությունը օգտագործում էր գործազուրկներին օգնելու այլ միջոցներ ևս։ 1933 թ. գարնանը սկսվեց գործազուրկ երիտասարդության համար աշխատանքային ճամբարների ստեղծումը։ Նույն ժամանակ էլ արտակարգ օգնության կառավարչությունը (ՖԵՐԱ) Հ. Հոպկինսի գլխավորությամբ ձեռնամուխ եղավ նահանգներին դոտացիա տալուն՝ գործազրկության դեմ պայքարելու համար։ Վերջապես, 1933 թ. նոյեմբերին հիմնվեց քաղաքացիական աշխատանքների կառավարչությունը (ՍՎԱ), որը գործազուրկներին ժամանակավոր զբաղմունք էր տրամադրում ձմեռային ամիսների ընթացքում։

Կառավարության կազմակերպած հասարակական աշխատանքների մասշտաբները զգալի էին։ Այսպես, 1933—1934 թթ. դրանցում զբաղված էր միջին թվով 2,5—3 մլն մարդ։ Այդուհանդերձ հասարակական աշխատանքները կլանում էին գործազուրկների բանակի միայն մի փոքրիկ մասը (15 մինչև 25 տոկոսը), իսկ հիմնական զանգվածը առաջվա պես մնում էր առանց որևէ օգնության։

Ռուզվելտի «նոր կուրսի» կարևոր բաղկացուցիչ մասը եղավ նաև ֆերմերներին օգնելու մասին օրենքը, որն ընդունվեց 1933 թ. մայիսի 12-ին։ Գյուղատնտեսական մթերքների գների բարձրացմանը հասնելու համար ֆերմերներին առաջարկվում էր կառավարության հետ կոնտրակտներ կնքել ցանքատարածությունների և անասունների գլխաքանակի կրճատման մասին։ Կոնտրակտ ստորագրելուն համաձայնվելը դրամական պարգև ստանալու իրավունք էր տալիս։ Կառավարական այդ սուբսիդիաների աղբյուր դարձավ գյուղատնտեսական մթերքների նախնական մշակման հարկը, այսինքն վերջին հաշվով սպառողների վրա դրված հարկը։ Գյուղատնտեսական արտադրության սահմանափակման ծրագրի իրականացման համար ստեղծվեց Գյուղատնտեսության կարգավորման կառավարչությունը (ԱԱԱ)։ ԱԱԱ-յի պրակտիկ գործունեությունն սկսվեց 1933 թ. ամռանը, երբ երկրի հարավային շրջաններում վերահերկվեց 10,4 մլն ակր հասունացած բամբակ։ Հետո սկսվեց ցորենի ու եգիպտացորենի ցանքատարածությունների կրճատումը։ 1933 թ. աշնանը ԱԱԱ-ն գնեց ու ոչնչացրեց 6 մլն խոզ։ Կազմվեցին այսպես կոչված կաթնային կոդեքսները, որոնցում սահմանվում էին կաթի արտադրության պայմանները և նրա գները։ Վերջապես, 1934 թ. մշակվեց բամբակի ու ծխախոտի ցանքատարածությունների հարկադիր կրճատման պլանը։

Այն դեպքում, երբ քաղաքի ու գյուղի աշխատավորությունը տառապում էր սնունդի ամենաանհրաժեշտ առարկաների պակասությունից, ԱՄՆ-ի կառավարությունն ագրարային ճգնաժամի վերացման նպատակով կատարում էր գյուղատնտեսական մթերքների մասսայական ոչնչացում։ Սակայն չնայած այն բանին, որ ԱԱԱ-ն վիթխարի միջոցներ ծախսեց, ամերիկյան ֆերմերության գնողունակությունը չհասավ նույնիսկ նախապատերազմյան մակարդակին։ ԱԱԱ-յի գործողությունները մեծ օգուտներ տվեցին ֆերմերական բուրժուազիայի վերնախավին։ Արտադրության կրճատման համար պարգևային վճարումների մեծ մասը նրա ձեռքն ընկավ։ Միաժամանակ առանց այն էլ ոչ մեծ ցանքատարածությունների կրճատումը մանր ֆերմերների զանգվածի համար հաճախ նշանակում էր սնանկացում։ ԱԱԱ-ի գործունեությունն այսպիսով ուժեղացնում էր ֆերմերության դասակարգային շերտավորումը և արագացնում գյուղատնտեսական արտադրության համակենտրոնացման պրոցեսը։

Ֆերմերներին օգնելու մասին օրենքը նախատեսում էր նաև ֆերմերական իպոտեկային պարտքի վերաֆինանսավորում։ Այդ նպատակով ստեղծվեց ֆերմերական վարկի կառավարչությունը (ՖԿԱ), որն սկսեց պարտատեր ֆերմերներին փոխառություններ տալ ավելի ցածր տոկոսային դրույքներով, քան իպոտեկներով կատարվող տոկոսային մուծումներն էին։ 1933—1935 թ. ՖԿԱ-յի փոխառությունների ընդհանուր գումարը հասավ 2 մլրդ դոլլարի։ Այդ միջոցներն ամրապնդեցին առաջին հերթին առավել ունևոր ֆերմեր-պարտատերերի դրությունը։ Ինչ վերաբերում է մանր ֆերմերներին, ապա վերաֆինանսավորման պայմանները մեծ մասամբ նրանց համար բացառում էին փոխառություն ստանալու հնարավորությունը։ Այդ պատճառով պարտքերն ու հարկերը չվճարելու համար ֆերմաների մասսայական վաճառքը շարունակվում էր նաև ՖԿԱ-յի գործունեության տարիներին. «նոր կուրսի» առաջին երեք տարիներին ԱՄՆ-ում աճուրդով վաճառվեց մոտ 600 հազ. ֆերմա, այսինքն՝ դրանց ընդհանուր թվաքանակի մոտ 10 տոկոսը։

Վերջապես, «նոր կուրսի» քաղաքականության ևս մեկ կարևոր ուղղությունն էին Ռուզվելտի կառավարության ֆինանսական միջոցառումները։ Այդ ասպարեզում նոր պրեզիդենտի առաջին քայլն եղավ այն բանկերի փակումը,

որոնք դեռ շարունակում էին գործել։ Բանկային արտակարգ ակտի պայմանների համաձայն, որն ընդունվեց 1933 թ. մարտի 9-ին, կառավարական փոխառություններ բացելու և ստանալու թույլտվություն էր տրվում միայն «առողջներին», այսինքն՝ առավել խոշոր բանկերին։ Վերականգնման ֆինանսական կորպորացիայի (ՌՖԿ) գործողությունները, որոնք սկսել էր դեռ Հուվերը, զգալիորեն ընդլայնվեցին։ «Նոր կուրսի» առաջին երկու տարիներին ՌՖԿ-ի փոխառությունների ընդհանուր գումարը 6 մլրդ դոլլարից գերազանցեց։ Այդ գումարի մոտ 40 տոկոսն ընկավ խոշորագույն բանկերի ձեռքը։ Նման քաղաքականության հետևանքը եղավ բանկային սիստեմի հետագա համակենտրոնացումը։ 30-ական թվականների կեսերին ԱՄՆ-ում մնացել էր 15 հազ. բանկ, այն դեպքում, երբ 1925 թ. դրանց թիվը հասնում էր 25 հազարի։

Ռուզվելտի կառավարության ֆինանսական մյուս միջոցառումները (ոսկու ստանդարտի վերացումը, ԱՄՆ-ի ոսկու ամբողջ պաշարի կենտրոնացումը պետության ձեռքում, դոլլարի դեվալվացիան) ուղղված էին գլխավորապես կապիտալիստական պետության ֆինանսական ռեսուրսների մեծացմանը և նրա կարգավորող ֆունկցիաների ուժեղացմանը։ Դրա հետ միաժամանակ միջոցներ ձեռնարկվեցին մանր ավանդատուներին ու փայատերերին հանգստացնելու համար. 1933 թ. կոնգրեսի ընդունած ակտերը որոշ չափով սահմանափակեցին բորսայական սպեկուլյացիայի մասշտաբները և կառավարությանը լիազորություններ տվեցին բանկային ավանդների ապահովագրման գծով ֆեդերալ կորպորացիա ստեղծելու համար։

Իսկ ինչպիսի՞ն էին Ռուզվելտի կառավարության «նոր կուրսի» արդյունքները 30-ական թվականների կեսերին։

Էկոնոմիկայի պետական ակտիվ կարգավորումը նպաստեց ճգնաժամային երևույթների որոշ թուլացմանը։ Սակայն ինչպես և ամբողջ կապիտալիստական աշխարհում, 1933 թ. գարնանից Միացյալ Նահանգներում սկսված դեպրեսիան աչքի էր ընկնում արտասովոր երկարատևությամբ և լճացման բնույթով։ Արդյունաբերական արտադրության ծավալը, որը 1933 թ. կազմեց 1929 թ. մակարդակի 63 տոկոսը, 1934 թ. բարձրացավ մինչև 66 տոկոսի, իսկ 1935 թ.՝ մինչև նախաճգնաժամային մակարդակի 79 տոկոսին։ Գործազուրկների բանակը 1935 թ. վերջին դեռևս հաշվվում էր մոտ 14 մլն մարդ։ Միայն 1936 թ. ԱՄՆ-ում սկսվեց արդյունաբերական արտադրության որոշ աշխուժացում։ Բայց այն չափազանց կարճատև եղավ. արդեն 1937 թ. Ամերիկայում, ինչպես և կապիտալիստական շատ այլ երկրներում, ծայր առավ նոր տնտեսական ճգնաժամ, և արդյունաբերական արտադրությունը, հաղթահարելով 1929 թ. մակարդակին, նորից ցած գլորվեց։ Հետևապես, Ֆ. Ռուզվելտի կառավարության ձեռնարկած էկոնոմիկայի կարգավորման փորձերը լավագույն դեպքում կարող էին միայն որոշ չափով մեղմացնել ճգնաժամային ցնցումների ուժը։

«Նոր կուրսի» մյուս խնդիրը՝ երկրում «դասակարգային խաղաղության» հաստատումը 30-ական թվականների կեսերին նույնպես չափազանց հեռու գտնվեց իրագործվելուց։ Ճիշտ է, Ֆ. Ռուզվելտի իշխանության գլուխ անցնելու առաջին ամիսներին աշխատավորության շարժումն ԱՄՆ-ում նկատելիորեն թուլացավ։ Միլիոնավոր բանվորներ ու ֆերմերներ մեծ հույսեր էին կապում «նոր կուրսի» հետ։ Սակայն կառավարության պրակտիկ գործունեությունը 1933—1934 թթ. ժողովրդական զանգվածներին ցույց տվեց, որ «նոր կուրսը» չի արդարացնում իրենց սպասելիքները։ Հույսերին սկսեցին փոխարինել դժգոհությունն ու հիասթափությունը։ Ահա թե ինչու 30-ական թվականների կեսերին ԱՄՆ-ում բարձրացավ մասսայական շարժման ալիքը։

30-ական թվականների բանվորական ու ֆերմերական շարժումը

Գործադուլային շարժման վերելքը նշմարվեց արդեն 1933 թ. երկրորդ կեսին։ Հենց միայն 1933 թ. երկրում գործադուլ էր անում 1168 հազ. բանվոր, այսինքն՝ ավելի շատ, քան տնտեսական ճգնաժամի չորս տարվա (1929—1932 թթ.) ընթացքում՝ ամբողջությամբ վերցրած։ 1934 թ. գործադուլավորների թիվն ավելացավ մինչև 1467 հազ. մարդու։ 1933—1936 թթ. ընթացքում ԱՄՆ-ում ընդհանուր առմամբ գործադուլ արեց ավելի քան 4,5 մլն բանվոր։ ԱՄՆ-ում տեղի ունեցող դասակարգային պայքարի ավանգարդում 30-ական թվականների կեսերին ընթանում էր արդյունաբերական պրոլետարիատը։

«Նոր կուրսի» առաջին տարիներին ամերիկյան բանվորական շարժման ուշադրության կենտրոնում էր գտնվում Ռուզվելտի կառավարության աշխատանքային օրենսդրության անբավարար արդյունավետության պրոբլեմը։ Այդ տարիների գրեթե բոլոր գործադուլային ելույթներում, որպես կանոն, առաջադրվում էին աշխատանքի պայմանների մասին, հատկապես իրենց սեփական արհմիությունները ստեղծելու և կոլեկտիվ պայմանագրեր կնքելու բանվորների իրավունքի մասին ՆԻՐԱ-յի դրույթների ճշտիվ պահպանման պահանջներ։

30-ական թվականների կեսերի ամենախոշոր գործադուլը Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած ընդհանուր գործադուլն էր։ Նրա մասնակիցների հիմնական կորիզն էին կազմում նավաստիներն ու նավահանգստային բեռնակիրները, որոնք պայքար սկսեցին իրենց արհմիության իրավունքները ճանաչելու և աշխատանքի պայմանները բարելավելու համար։ Ստեղծվեց միացյալ գործադուլային կոմիտե խաղաղօվկիանոսյան ծովեզերքի նավահանգստային բեռնակիրների միության պարագլուխ Հարրի Բրիջեսի գլխավորությամբ։ Երբ 1934 թ. հուլիսին ձեռնարկատերերը փորձելով ճնշել գործադուլը, անցան հաշվեհարդար կատարելու տեռորիստական մեթոդներին, գործադուլավորներին օգնելու համար հանդես եկավ ամբողջ պրոլետարական Սան Ֆրանցիսկոն։ Գործադուլի մասնակիցների ընդհանուր թիվը հասավ 127 հազ. մարդու։

Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած իրադարձությունները խուճապ առաջացրին ռեակցիայի ճամբարում։ Տեղական իշխանությունները գործադուլը ճնշելու համար ոստիկանության և ազգային գվարդիայի խոշոր ուժեր նետեցին։ Ձեռնարկատերերի ստեղծած տեռորիստական բանդաները ավերում էին կոմկուսի և ձախ արհմիությունների շենքերը։ Այդ բոլոր պատժիչ միջոցները հավանության արժանացան Վերականգնման ազգային կառավարչության ղեկավար, Սան Ֆրանցիսկո ժամանած Հ. Ջոնսոնի կողմից։ Մյուս կողմից, ԱԱՖ-ի ղեկավարությունը ոչ միայն չպաշտպանեց գործադուլը, այլև բոլոր ջանքերը գործադրեց, որպեսզի հասնի նրա ձախողմանը։ Դա պատճառում առաջացրեց գործադուլային կոմիտեում, որի կազմում կային շատ ռեֆորմիստներ։ Ընդհանուր գործադուլի չորրորդ օրը նրանց հաջողվեց որոշում անցկացնել այն դադարեցնելու մասին։

Այնուամենայնիվ, պրոլետարական համերաշխության ուժը ձեռնարկատերերին ստիպեց մասնակիորեն բավարարել նավաստիների ու նավահանգստային բեռնակիրների պահանջները աշխատավարձի բարձրացման և բանվորների վարձակալման ու ազատման նկատմամբ արհմիության վերահսկո-

ղության իրավունքը ճանաչելու մասին։ Սան Ֆրանցիսկոյի ընդհանուր գործադուլը բանվորներին ցույց տվեց, որ հանդես գալով միասնական ճակատով, նրանք կարող են ոչ քիչ հաջողություններ հասնել։

Սան Ֆրանցիսկոյի գործադուլից հետո գործադուլային շարժումը տարածվեց ամբողջ երկրում։ 1934 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ի տեքստիլ շրջանները ներգրավվեցին ընդհանուր գործադուլի մեջ, որին մասնակցում էին 475 հազ. բանվորներ։ Մեկ տարի անց, 1935 թ. սեպտեմբերին հաջողությամբ անցկացվեց հանքափորների ընդհանուր գործադուլը։ Ամբողջությամբ վերցրած՝ 30-ական թվականներին ԱՄՆ-ում տեղի ունեցած գործադուլային շարժման արդյունքները բարեհաջող էին բանվորների համար։ Ամերիկյան պրոլետարիատի աշխատավարձի ֆոնդը զգալիորեն մեծացավ։ Արդյունաբերության ճյուղերի մեծ մասում սահմանվեց 8-ժամյա աշխատանքային օր։ Մոտ 3,5 մլն բանվորներ նվաճեցին վարձատրվող արձակուրդներ։

30-ական թվականների կեսերին խոշոր տեղաշարժեր կատարվեցին նաև Ամերիկայի արհմիութենական շարժման մեջ։ Գործադուլային պայքարի նոր վերելքն սկսվելու հետ միասին ԱԱՖ-ի արհմիությունների թիվը սկսեց մեծանալ։ Տասնյակ հազարավոր երիտասարդ բանվորներ, որոնք արհմիութենական շարժման շարքերն անցան գործադուլային պիկետների գծերից, թարմ հոսանք մտցրին արտադրամասային միությունների նեխած մթնոլորտի մեջ։ Դրա հիման վրա ԱԱՖ-ի ձախ թևի նշմարվող աճն ավելի ուժեղացավ, երբ 1935 թ. մարտին արհմիութենական միասնության լիգան արհմիութենական շարժման բոլոր ուժերը միավորելու նպատակով հայտարարեց իր ցրման մասին, իսկ նրա կազմի մեջ մտնող արհմիությունների անդամները մտան ԱԱՖ-ի համապատասխան միությունների մեջ։ ԱՄԼ-ի մոտ 125 հազ. անդամներ, որոնք կոմկուսի ղեկավարությամբ անցել էին դասակարգային պայքարի դաժան դպրոց, ակտիվորեն ներգրավվեցին ԱԱՖ-ի տեղական կազմակերպությունների ամենօրյա գործունեության մեջ։

Տրեդ-յունիոնների ձախ թևի ամրապնդումն ուժեղացրեց ԱԱՖ-ի արտադրամասային միություններն արտադրական սկզբունքով վերակառուցելու համար մղվող շարժումը։ Այդ լոզունգն այժմ պաշտպանություն էր գտնում նաև ԱԱՖ-ի որոշ պարագլուխների կողմից։ Արհմիութենական շարժման վերակառուցման կողմնակիցների խումբը գլխավորեց հանքափորների միացյալ միության պրեզիդենտ Ջոն Լյուիսը։ Նրան պաշտպանեցին Ս. Հիլմանը, Դ. Դուբինսկին և ԱԱՖ-ի ուրիշ ականավոր գործիչներ։

ԱՄՆ-ի արհմիութենական շարժման մեջ զգացվող նոր հոսքերն ամենից առաջ պայմանավորված էին բանվոր դասակարգի կառուցվածքում տեղի ունեցած լուրջ փոփոխություններով։ Մասսայական արտադրության զարգացումը, մեխանիզացիայի ուժեղացումը, կոնվեերային գծերի լայն արմատավորումը՝ այս բոլորը մեծացնում էր ոչ որակյալ և սակավ որակյալ բանվորների տեսակարար կշիռը և քայքայում որակյալ վերնախավի դիրքերը։ Արտադրության նոր տեխնոլոգիան և բանվոր դասակարգի կազմի փոփոխությունը պահանջում էին անցում կատարել արհմիութենական միավորումների դեպի նոր, որակապես այլ ձևեր։

Լյուիսի խումբը կարողացավ ժամանակին գնահատել այդ կարևոր պրոցեսների վիթխարի նշանակությունը։ Դրա հետ մեկտեղ հասկանալով, որ մասսայական արտադրական արհմիությունների ստեղծումը կարող է քայքայել ԱԱՖ-ի ղեկավարության դիրքերը, Լյուիսը և նրա կողմնակիցները ձգտում էին այդ շարժումը դնել իրենց հսկողության տակ և թույլ չտալ ինդուստրիալ

յունիոնիզմի ուղին կանգնող միլիոնավոր բանվորների անցումը դեպի բանվորական շարժման հեղափոխական ուժերի դիրքերը։

ԱԱՖ-ի միություններում գոյություն ունեցող ձախ թևի աճը և ուժերի հարաբերակցության փոփոխություններն իրենց արտահայտությունը գտան 1935 թ. հոկտեմբերին կայացած նրա հերթական կոնգրեսի աշխատանքի ընթացքում։ Համագումարի պատգամավորների զգալի մասը, ներառյալ Լյուիսին ու նրա կողմնակիցներին, արտահայտվեց ԱԱՖ-ի անհապաղ վերակառուցման օգտին։ Սակայն ֆեդերացիայի ղեկավարների հիմնական կորիզը նրա պրեզիդենտ Ուիլյամ Գրինի գլխավորությամբ համառորեն պաշտպանում էր ԱԱՖ-ի արտադրամասային հին կառուցվածքը։ Համագումարում ծավալված սուր պայքարն ավարտվեց պահպանողական գծի կողմնակիցների հաղթանակով. ֆեդերացիայի վերակառուցման վերաբերյալ առաջարկությունները մերժվեցին ձայների 68 տոկոսով, ընդդեմ 38 տոկոսի։ Այդ ժամանակ, 1935 թ. նոյեմբերին 8 արհմիությունների ներկայացուցիչներ, որոնք միավորում էին մոտ 1250 հազ. անդամ, Վաշինգտոնում խորհրդակցության հավաքվեցին և ԱԱՖ-ի շրջանակներում ստեղծեցին արտադրական արհմիությունների կոմիտե (ԱԱԿ)՝ Լյուիսի գլխավորությամբ։ Արհմիութենական նոր միավորումը ձեռնամուխ եղավ ինդուստրիալ միությունների ստեղծմանը ծանր արդյունաբերության կարևորագույն ճյուղերում, որոնք ընդհուպ մինչև 30-ական թվականների կեսերը գրեթե բոլորովին ներգրավված չէին արհմիութենական շարժման մեջ։ Սակայն այդ կամպանիան հանդիպեց ԱԱՖ-ի ղեկավարության կատաղի դիմադրությանը։ Չնայած այն բանին, որ արտադրական արհմիությունների կոմիտեի գործունեությունը չէր հակասում աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի կանոնադրությանը, ԱԱՖ-ի գործկոմը պահանջեց անհապաղ ցրել ԱԱԿ-ը, իսկ 1936 թ. սեպտեմբերին ֆեդերացիայի կազմից վտարեց նրան հարած բոլոր արհմիություններին։

Այսուհանդերձ Ու. Գրինի կողմնակիցներին չհաջողվեց կանգնեցնել ինդուստրիալ միությունների բուռն աճի պրոցեսը։ ԱԱԿ-ի ղեկավարությամբ, որտեղ մեծ դեր էին խաղում կոմունիստները, որոնք նախկինում աշխատում էին արհմիութենական միասնության լիգայի կազմում, առաջին անգամ արտադրական խոշոր արհմիություններ ստեղծվեցին պողպատաձուլական, ավտոմոբիլային, նավթի, էլեկտրատեխնիկական, ալյումինի և ծանր արդյունաբերության մյուս ճյուղերում։ ԱԱԿ-ի միությունների թիվն արագորեն աճում էր. 1937 թ. աշնանը նրանց մեջ հաշվվում էր 3,8 մլն անդամ։ Իսկ այդ պահին ԱՄՆ-ի արհմիությունների անդամների ընդհանուր թվաքանակը գերազանցեց 7 մլնից, այսինքն՝ 1933 թ. համեմատությամբ ավելացավ երկուս ու կես անգամ։ Դա ամերիկյան բանվոր դասակարգի խոշոր նվաճումն էր «նոր կուրսի» ժամանակաշրջանում։

Վերջապես, ամերիկյան բանվորների դասակարգային պայքարի կարևոր ուղղությունը 30-ական թվականների կեսերին մնում էր գործադուրկներին օգնություն ցույց տալու համար մղվող շարժումը։ Բանվորական շարժման ձախ ուժերը պահանջում էին մտցնել սոցիալական ապահովության ֆեդերալ սիստեմ։ Այդ պայքարում շարունակում էր ղեկավար դեր կատարել կոմունիստական կուսակցությունը։ Գործադուրկների ազգային խորհուրդը ագիտացիա էր մղում «բանվորական բիլլը» ընդունելու օգտին, որը մշակվել էր կոմկուսի կողմից 1930 թ.։ Զեռնարկատերերի ու կառավարության հաշվին սոցիալական ապահովության սիստեմ մտցնելու՝ այդ բիլլում պարունակող պլանն այնքան ժողովրդականություն սկսեց վայելել, որ 1934 թ. կոնգրեսմեն Է.

Լանդինը, Մինեսոտայի ֆերմերա-բանվորական կուսակցության ներկայացուցիչներից մեկը, «բանվորական բիլը» ԱՄՆ-ի կոնգրես մացրեց։

Լանդինի բիլի պաշտպանությամբ հանդես եկան ամենատարբեր ուղղության բանվորական կազմակերպությունները։ 1935 թ. հունվարին Վաշինգտոնում գումարվեց սոցիալական ապահովության համար պայքարի կոնգրես։ Նրա աշխատանքին մասնակցում էր 2400 պատվիրակ, որոնք ներկայացնում էին մոտ 2 մլն մարդու։ Սոցիալական ապահովության վերաբերյալ օրենքի ընդունման համար մղված պայքարի ընթացքում պայմաններ ստեղծվեցին գործազուրկների շարժման հիմնական ուղղությունների միավորման համար։ 1936 թ. ապրիլին կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ տեղի ունեցավ գործազուրկների ազգային խորհրդի, բանվորական ալյանսի, որին ղեկավարում էին սոցիալիստները, և արհմիությունների ռադիկալ գործիչների խմբի ստեղծած Գործազուրկների ազգային լիգայի միաձուլումը Ամերիկայի միասնական բանվորական ալյանսի մեջ։ Գործազուրկների այդ համազգային կազմակերպության թիվը հասավ 500 հազ. մարդու։

Այսպիսով, «նոր կուրսի» դաղափարախոսների՝ արդյունաբերության ասպարեզում «դասակարգային խաղաղություն» հաստատելու հաշիվները շարդարացան։ Ընդհակառակը, 30-ական թվականների կեսերին ԱՄՆ-ում նկատվեց բանվորական շարժման նոր, ավելի ուժեղ վերելք։

Հաջողությամբ չպսակվեցին նաև գյուղատնտեսության ասպարեզում սոցիալ-քաղաքական հարաբերությունների կայունացման հասնելու Ռուզվելտի կառավարության փորձերը։ Իրենց դրության բարելավման ֆերմերների ունեցած հույսերը, որ նրանք փայփայում էին 1933 թ. գյուղատնտեսական օրենքի ընդունումից հետո անցած առաջին ամիսներին, չարդարացան։ 1933 թ. աշնանը սկսեց արտահայտվել «նոր կուրսի» ագրարային քաղաքականությունից եղած խոր դժգոհությունը։ 1933 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Միջին Արևմուտքում անցկացվեց ֆերմերական նոր գործադուլ, որի մասնակիցները պահանջում էին ավելի վճռական միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսական արտադրանքի գները բարձրացնելու և պարտքերի բեռը թեթևացնելու համար։ «Նոր կուրսի» ժամանակաշրջանում ԱՄՆ-ի ֆերմերական շարժման զարգացման գործում կարևոր դեր էր խաղում կոմունիստական կուսակցությունը։ 1933 թ. նոյեմբերին կոմկուսի ղեկավարությամբ Վաշինգտոնում անցկացվեց ազգային ֆերմերական երկրորդ կոնֆերանսը, որն ընդունեց աշխատավոր ֆերմերությանը օգնություն ցույց տալու վերաբերյալ պահանջների ընդարձակ ծրագիր. այնտեղ կային այնպիսի կետեր, ինչպես իպոտեկային պարտքերի վերացումը, ֆերմաների հարկադիր վաճառման արգելումը, միջնորդ մոնոպոլիաների շահույթների կրճատման միջոցով գյուղատնտեսական գների բարձրացումը, պետության հաշվին մանր ֆերմերներին դրամական նպաստների վճարումը։ Այդ ծրագրի հիման վրա 1934 թ. մայիսին կոմկուսն առաջադրեց ֆերմերներին անհապաղ օգնություն ցույց տալու մասին օրենքի նախագիծ, որը պաշտպանեցին գյուղական բնակչության աշխատավոր լայն զանգվածները։

Բանվորական շարժման ձախ խմբերի մասնակցությամբ ֆերմերական առաջադիմական կազմակերպություններն ամրապնդվեցին։ Կոմունիստների ղեկավարած միավորված ֆերմերների լիգայի բաժանմունքներն այդ ժամանակ գոյություն ունեին 18 նահանգներում։ 1934 թ. հուլիսին ձախ սոցիալիստների օգնությամբ Արկանզաս նահանգում ստեղծվեց Հարավային ֆերմեր-վարձակալների միությունը։ Նոր կազմակերպությունը կապեր հաստատեց

Բնավարձակալ-կրոպպերների միության հետ, որոնք գործում էին կոմկուսի ղեկավարությամբ։ 1936 թ. սկզբին Հարավի մանր ֆերմերության այդ երկու կազմակերպություններում հաշվվում էր մոտ 40 հազ. անդամ։

Կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ քայլեր ձեռնարկվեցին նաև գյուղատնտեսական պրոլետարիատի կազմակերպման ուղղությամբ։ 1935 թ. հունվարին տեղի ունեցավ գյուղատնտեսական բանվորների ազգային առաջին կոնֆերանսը, որը խնդիր առաջադրեց ստեղծել գյուղատնտեսության մեջ և գյուղատնտեսական հումքի վերամշակման արդյունաբերության ասպարեզում զբաղված բոլոր բանվորների համաամերիկյան միասնական արհմիություն։ Ձախ գործիչների անցկացրած եռանդուն կամպանիան հաջողությամբ պսակվեց. 1937 թ. հուլիսին «Ամերիկայի պահածոյի ձեռնարկությունների, փաթեթավորման ֆիրմաների և գյուղատնտեսության միավորված բանվորներ» անունով կազմակերպվեց ԱՄՆ-ի գյուղատնտեսական պրոլետարիատի համազգային արհմիութենական միավորումը։ 1937 թ. վերջերին նրա մեջ հաշվվում էր մոտ 100 հազ. անդամ։

Մասսայական դեմոկրատական շարժումները 30-ական թվականների կեսերին

Իրենց տնտեսական դրության բարելավման համար բանվորների ու ֆերմերների մղած պայքարի հետ մեկտեղ 30-ական թվականների կեսերին վերստին ծավալվեցին դեմոկրատական լայն շարժումներ, որոնք ուղղված էին մոնոպոլիաների կեղեքման դեմ։ Շարժման օբյեկտիվ սոցիալ-տնտեսական բաղան երկրի տնտեսական կյանքի տևական քայքայումն էր, որն առաջացել էր ճգնաժամից ու դեպրեսիայից, մոնոպոլիստական շահագործման ուժեղացումը, աշխատավորների դրության վատացումը։ Միլիոնավոր ընչազուրկներ, որոնք տարիներ ի վեր դաժան զրկանքներ էին կրում, տառապանքով ելք էին որոնում ստեղծված դրությունից դուրս գալու համար։ Նրանց շարքերում աճում էին հակակապիտալիստական տրամադրությունները, ուժեղանում էր ձգտումը դեպի սոցիալական այն կարգերը, որոնք զերծ էին ճգնաժամերից ու գործազրկությունից։ Բայց նրանք չգիտեին, թե ինչպես դրան հասնել և ձեռք էին գցում այն ամենին, ինչ, թվում է, թե փրկություն էր խոստանում թշվառությունից։ Այդպես առաջացան բազմաթիվ «Համադարմանների շարժումները», որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր սոցիալական այս ռեֆորմների կամ այն նախագծի իրականացմանը։

Հատկապես լայն տարածում գտավ Ֆ. Տաունսենդի պլանի ընդունման համար ծավալված շարժումը, որը նախատեսում էր զառամյալներին ամենամսյա նպաստներ վճարել գործարար օպերացիաների վրա դրված հարկի հաշվին։ Ամբողջ երկրում ստեղծված «տաունսենդյան ակումբներում» 1935 թ. սկզբին հաշվվում էր մոտ 500 հազ. անդամ, իսկ Տաունսենդի պլանը կոնգրեսի կողմից ընդունելու խնդրագիրը ստորագրել էին 20 մլնից ավելի ամերիկացիներ։ Այդ նույն տարիներին Խաղաղօվկիանոսյան ծովեզերքի նահանգներում ծավալվեց սոցիալական բողոքի մի այլ մասսայական շարժում, որի մասնակիցները պայքարում էին «Վե՛րջ տանք Կալիֆորնիայում գոյություն ունեցող աղքատությանը» (ԷՊԻԿ) լոզունգի իրականացման համար, որն առաջադրել էր ամերիկյան հայտնի գրող Էպտոն Սինկլերը։ Դեմոկրատական շարժումների շատ մասնակիցների համար բնորոշ էր շահույթներ քաղելու վրա հիմնված հասարակությունը նոր «կոոպերատիվ հասարակությամբ» փոխարինելու անհրաժեշտության համոզմունքը, հասարակություն, որի նպատակը լիներ «համընդհանուր բարօրությանը» հասնելը։

Զանգվածային դեմոկրատական շարժման քաղաքական հիմքը եղավ երկու բուրժուական կուսակցություններից ժողովրդի հիասթափվելը։ Հուվերի կառավարության ռեակցիոն քաղաքականությունը աշխատավորների աչքում հեղինակազրկեց հանրապետական կուսակցությանը։ Սակայն 1934 թ. պարզվեց, որ դեմոկրատ Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսն» էլ բանվորներին ու ֆերմերներին չտվեց այն, ինչ նրանք սպասում էին նրանից։ Ստեղծված դրությունից ելք որոնելու ճանապարհին ամերիկյան հասարակության ռադիկալ շրջանները վերստին կանգնեցին անկախ քաղաքական գործողության ուղին, երրորդ կուսակցություն ստեղծելու համար պայքարելու ուղին։ Երրորդ կուսակցություն ստեղծելու համար ծավալված շարժման մեջ հատկապես ակտիվ դեր էր խաղում անկախ քաղաքական գործողությունների լիգան։ Այն 1929 թ. ստեղծեցին սոցիալիստական կուսակցության որոշակի գաղափարական աղդեցությունը կրող ռադիկալ մտավորականության ներկայացուցիչները։

Անկախ քաղաքական գործողությունների լիգայի ծրագիրը ելնում էր ոչ մոնոպոլիստական բուրժուազիայի գաղափարախոս Տորեստեյն Վեբլենի հայացքներից։ Ժողովրդի թշվառ վիճակի գլխավոր պատճառը Լիգայի գործիչները տեսնում էին ֆինանսական օլիգարխիայի տիրապետության մեջ։ Լիգան պահանջում էր արդյունաբերությունը, տրանսպորտն ու ֆինանսական հիմնարկները հանձնել պետության ձեռքը։ Նա իր վերջնական նպատակն էր համարում կոոպերատիվ հասարակության ստեղծումը, որտեղ նյութական բարիքների արտադրության ու բաշխման պրոցեսը իրականացվեր ժողովրդական զանգվածների կարիքները բավարարելու համար, այլ ոչ թե անձնական օգուտի համար։ Կապիտալիստական սիստեմի վերակառուցման այդ ծրագրի իրականացման պայման պետք է դառնար քաղաքական իշխանության նվաճումը ժողովրդի կողմից։ Իշխանության անցումը ժողովրդի ձեռքը Լիգայի ղեկավարությունը ենթադրում էր իրականացնել ոչ բռնի ուղիով, կոնգրեսում ժողովրդի ներկայացուցիչների կողմից աստիճանաբար մեծամասնություն նվաճելու միջոցով։ Արդեն 1933 թ. անկախ քաղաքական գործողությունների լիգան հայտարարելով, որ «նոր կուրսի» ծրագիրն անբավարար է, որ դեմոկրատական կուսակցության կառավարությունը չի ցանկանում ժողովրդի շահերից բխող արմատական ռեֆորմներ անցկացնել, սկսեց ագիտացիա ծավալել երրորդ կուսակցություն ստեղծելու օգտին։

Անկախ քաղաքական գործողությունների համար մղվող պայքարում կարևոր դեր խաղացած մյուս խումբը Մինեսոտայի ֆերմերա-բանվորական կուսակցությունն էր։ 1930 թ. նրա ղեկավարներից մեկը՝ Ֆլոյդ Օլսոնն ընտրվեց նահանգի նահանգապետ։ Այդ պոստը ՖԲԿ-ի ներկայացուցիչները զբաղեցնում էին 30-ական թվականների ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում։ Մինեսոտայի ֆերմերա-բանվորական կուսակցության կառավարությունը նահանգում անցկացրեց բանվորներին ու ֆերմերներին օգնելու մի շարք կարևոր միջոցառումներ, այդ նույն ժամանակ նրա ներկայացուցիչները ֆեդերալ կոնգրեսում ակտիվ մասնակցություն էին ունենում համաամերիկյան մասշտաբով ժողովրդի սոցիալական նվաճումներն ընդլայնելու համար մղված պայքարում։ 1934 թ. մարտին Մինեսոտայի ֆերմերա-բանվորական կուսակցությունն ընդունեց նոր, առավել արմատական ծրագիր։ Ավանդական հակամոնոպոլիստական լոզունգների հետ մեկտեղ նոր ծրագիրն առաջադրեց արդյունաբերության բոլոր հիմնական ճյուղերի, տրանսպորտի և բանկային սիստեմի ազգայնացման պահանջ։ Անկախ քաղաքական գործողությունների լիգայի ղեկավարների պես Մինեսոտայի ՖԲԿ-ի պարագլուխներն այդ ռեֆորմները դիտում էին որպես կապիտալիստական սիստեմը խաղաղ ձևով կոոպերատիվ հասարակության վերափոխվելու համար մղվող պայքարի ելակետ։

Վերջապես, երրորդ կուսակցության ստեղծման համար պայքարի մարտիկների ճամբարի մեջ էր մտնում Վիսկոնսինի առաջադեմ հանրապետականների մի խումբ։ 20-ական թվականների կեսերից, սենատոր Լաֆոլետի մահից հետո այդ խմբի գլուխ էին կանգնած նրա երկու որդիները՝ Ռոբերտն ու Ֆիլիպը։ Վիսկոնսինի ձախ հանրապետականների ծրագիրն այնքան արմատական չէր, ինչպես Մինեսոտայի ֆերմերա-բանվորական կուսակցության պլատֆորմը։ Նա հակամոնոպոլիստական շարժման ավանդական լոզունգներից այն կողմ չէր անցնում՝ երկաթուղիների և կոմունալ սպասարկման ճյուղերի ազգայնացում, պետական վերահսկողության սահմանում բանկերի ու ռազմական գործարանների վրա, բանվորների ու ֆերմերների իրավունքների ընդլայնում։ Այդուհանդերձ այդ ծրագիրն առաջադիմական բնույթ էր կրում։ Նա ժողովրդական զանգվածներին մատնացույց էր անում նրանց գլխավոր թշնամուն՝ մոնոպոլիաներին։ 1934 թ. մայիսին ձախ հանրապետականների կոնֆերանսում որոշում ընդունվեց հանրապետական կուսակցության հետ կապերը խզելու և Ֆ. Լաֆոլետի գլխավորությամբ Վիսկոնսինի առաջադիմական կուսակցություն ստեղծելու մասին։

Աշխատավորների ինքնուրույն քաղաքական գործողությունների համար մղվող պայքարում առանձին նահանգներում ձեռք բերված առաջին հաջողությունների բազայի վրա ԱՄՆ-ի առաջադիմական ուժերը 30-ական թվականների կեսերին լայն ագիտացիա սկսեցին համազգային երրորդ կուսակցության ձևավորման համար։ Այդ նպատակով 1933 թ. սեպտեմբերին անկախ քաղաքական գործողությունների լիգայի նախաձեռնությամբ ստեղծվեց ֆերմերա-բանվորական քաղաքական ֆեդերացիա։ 1935 թ. հուլիսին այն վերակազմվեց համընդհանուր բարեկեցության ամերիկյան քաղաքական ֆեդերացիայի։ Նոր կազմակերպությունն իր առջև խնդիր դրեց հասնել երկրի բոլոր առաջադիմական ուժերի միավորմանը միասնական կուսակցության շրջանակներում։ Նախատեսվում էր այդ կուսակցությունը ստեղծել 1936 թ. ընտրական կամպանիայի սկզբում։ Երրորդ կուսակցության ծրագրի հիմքում ենթադրվում էր դնել կապիտալիզմի՝ կոոպերատիվ հասարակության աստիճանական վերափոխման գաղափարը։

Փոփոխություններ ԱՄՆ-ի քաղաքական իրադրության մեջ 30-ական թվականների կեսերին

Բանվորական և ֆերմերական շարժման վերելքը, արտադրական արհմիությունների ստեղծումը, մասսայական դեմոկրատական շարժումների վերածնումը՝ այս բոլորը 30-ական թվականների կեսերին էականորեն փոխեց քաղաքական իրադրությունն ԱՄՆ-ում։ Մոնոպոլիստական բուրժուազիայի մի մասի տրամադրություններում տեղի ունեցան փոփոխություններ։ Եվ դա հասկանալի է, չէ՞ որ տնտեսական ճգնաժամի առավել դժվարին ժամանակաշրջանը մնացել էր հետևում։ Տնտեսության կարգավորման համար այժմ արդեն այնպիսի ծայրահեղ անհրաժեշտություն չկար, ինչպես 1932—1933 թթ.։ Ընդհակառակը, տնտեսական կոնյունկտուրայի բարելավմանը զուգընթաց «նոր կուրսը» և հատկապես աշխատանքի կարգավորման վերաբերյալ ՆԻՐԱ-յի հոդվածները սկսեցին ճնշել մոնոպոլիստներին, ինչ-որ չափով սահմանափակելով շահույթները անզուսպ ավելացնելու նրանց ձգտումները։ Զարգացման մասսայական շարժման թուլացման վերաբերյալ խոշոր կապիտալի փայփայած հույսերը։ Ահա թե ինչու արդեն 1934 թ. ԱՄՆ-ի մոնոպոլիստական բուրժուազիայի

մի մասը օպոզիցիայի անցավ «նոր կուրսի» քաղաքականության հանդեպ։ Առավել ռեակցիոն շրջանների ներկայացուցիչները սկսեցին պահանջել հրաժարվելու լիբերալ ռեֆորմներից, անցնել ժողովրդական զանգվածների նկատմամբ բռնությունների մեթոդներին, վերադառնալ հասարակության տնտեսական կյանքին պետության չմիջամտելու սկզբունքներին։

«Նոր կուրսի» դեմ ֆինանսական կապիտալի մի շարք ազդեցիկ խմբերի ելույթը և ռեակցիայի ուժերի՝ դրա հիման վրա սկսված համախմբումը իրենց առավել հստակ արտահայտությունը գտան «Ազատության ամերիկյան լիգայի» ծագման մեջ։ Այս կազմակերպությունը ստեղծվեց 1934 թ. օգոստոսին Դյուպոնների և Մորգանների մոնոպոլիստական խմբերի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Այն միավորեց երկու բուրժուական կուսակցությունների ամենառեակցիոն շրջաններին։ «Ազատության լիգայի» ղեկավարների թվի մեջ մտան դեմոկրատական կուսակցության պահպանողական թևի նշանավոր գործիչներ Ա. Սմիթը և Դ. Ռեսկորը, ինչպես նաև հանրապետական «հին գվարդիայի» պարագլուխներ Դ. Ռիդը և կոնգրեսմեն Դ. Ռոդսվորտը։ «Ազատության ամերիկյան լիգայի» ծրագիրը նախատեսում էր սոցիալական կարիքների համար կառավարական ծախսերի կրճատում, հրաժարումն տնտեսության կարգավորումից, խոշոր կապիտալի վրա դրված հարկերի նվազեցում, բանվորական և դեմոկրատական շարժման ճնշում։ Լիգան սիստեմատիկ պայքար ծավալեց ընդդեմ «նոր կուրսի»։ Ունենալով անսահմանափակ ֆինանսական ռեսուրսներ, նա ելույթներ էր կազմակերպում ռադիոյով, ակտիվ հակառուզվելտական պրոպագանդա էր մղում թերթերի ու ամսագրերի էջերում, լույս էր ընծայում վիթխարի քանակությամբ պամֆլետներ։ «Ազատության լիգայի» հրատարակությունների ընդհանուր տպաքանակը երկու տարում կազմեց մոտ 5 մլն օրինակ։

Իրենց ձգտումներում էլ ավելի հեռու գնացին ֆաշիստական բազմաթիվ կազմակերպություններ, որոնք այդ ժամանակ առաջացան ԱՄՆ-ում («Խակի վերնաշապիկներ», «Արծաթագույն վերնաշապիկներ», «Հանրապետության պահապաններ» և այլն)։ Նրանք ձգտում էին հասնել բանվորական շարժման ճնշմանը, բուրժուական դեմոկրատիայի ռեժիմի վերացմանը, ֆաշիստական տիպի բացահայտ տեռորիստական դիկտատուրայի հաստատմանը։ Խոսքից նրանք պատրաստ էին գործի անցնել։ 1934 թ. վերջին Ամերիկյան լեգեոնի, «Ազատության լիգայի» և «Հանրապետության պահապանների» ծայրահեղական տարրերը իշխանությունը զավթելու նպատակով կառուցում էին «դեպի Վաշինգտոն արշավելու» պլաններ։

Ռեակցիայի հարձակումը և բացահայտ ֆաշիստական խմբավորումների հանդես գալն արտակարգ տագնապալի նախանշան էր։ Այդ գործոնների վիթխարի պոտենցիալ վտանգը կապված էր այն բանի հետ, որ այն ժամանակ երկրում առաջացավ ֆաշիստական շարժման մասսայական բազայի ստեղծման ռեալ սպառնալիք։ Բազմաթիվ «համադարմանների շարժումներում» այսպես թե այնպես արտահայտվում էր գոյություն ունեցող կարգերում արմատական փոփոխություններ կատարելու հանդեպ ժողովրդական զանգվածների ունեցած ձգտումները։ Սակայն կապիտալիստական հասարակության վերակառուցման նրանց առաջադրած պլանները, Ու. Ֆոստերի արտահայտությամբ, «ֆանտաստիկորեն ուտոպիական» էին, վկայելով ամերիկյան ժողովրդի քաղաքական հետամնացության մասին։ Դրա վրա հմտորեն խաղում էին ֆաշիստական բնույթի դեմագոգները, որոնք խոշոր կապիտալի դեմ «մարտնչողների» պատմուճան հագնելով, իրենց կողմն էին գրավում մանրբուրժուական լայն

խավերին և փորձում էին նրանց ուղղել ոչ միայն «նոր կուրսի» քաղաքականության դեմ, այլև հենց բուրժուական դեմոկրատիայի ռեժիմի դեմ։

Ռեակցիոն-ֆաշիստական ուղղություն ունեցող ամենաողորեղ ու զանգվածային շարժումներից մեկը ծնունդ առավ Հարավում։ Նրա գլուխ կանգնեց Լուիզիանա նահանգից սենատոր Հյու Լոնգը։ Մեծագույն դեմագոգիայով և ցուցադրական ռադիկալիզմով ժողովրդականություն նվաճելով հարավային նահանգների սպիտակամորթ ընչազուրկների զանգվածներում, Հ. Լոնգը իրեն ենթարկեց դեմոկրատական կուսակցության տեղական ապարատը և Լուիզիանայում հաստատեց անձնական իշխանության յուրատեսակ ռեժիմ։ Նորաթուխ դիկտատորի նպատակն էր Միացյալ Նահանգների պրեզիդենտի աթոռի նվաճումը և Լուիզիանայի վզին իր փաթաթած կարգերի տարածումն ամբողջ երկրում։ Միլիոնավոր ընտրողների իր կողմը գրավելու համար Հ. Լոնգը 1934 թ. առաջադրեց «հարստությունների բաժանման» ծրագիր։ Բարձր եկամուտներ ունեցող անձանց հարկերն ավելացնելու և 8 մլն դոլլարից գերազանցող առավել խոշոր մասնավոր կարողությունների բռնագրավման հաշվին նախատեսվում էր ստեղծել հատուկ ֆոնդ, որի օգնությամբ հնարավոր լիներ ամենաաղքատ ընտանիքի ամենամյա նվազագույն մակարդակը ավելացնել մինչև 4—5 հազ. դոլլարի։

«Հարստությունների բաժանման» ծրագիրն, իհարկե, մաքուր դեմագոգիա էր։ Այդ մասին բավական պերճախոս կերպով վկայում էր հենց Լոնգի «Իմ առաջին օրերը Սպիտակ տանը» գիրքը, որտեղ մասնավորապես ասվում էր, որ պրեզիդենտ ընտրվելու դեպքում նա «հարստությունների բաժանման» պլանի իրականացումը հանձնարարելու է Դ. Ռոկֆելլերին, Է. Մելլոնին, Ու. Օլդրիչին, Դյուպոններին և ԱՄՆ-ի ֆինանսական օլիգարխիայի մյուս առաջատար ներկայացուցիչներին։

Այդուհանդերձ Հ. Լոնգի՝ ֆերմերների ու քաղաքային մանր բուրժուազիայի միջավայրի քաղաքականապես անփորձ կողմնակիցները ի դեմս նրա տեսնում էին խոշոր կապիտալի դեմ մարտնչողի, աշխատավորների շահերի պաշտպանի։ Արդեն 1935 թ. սկզբին «հարստությունների բաժանման» ընկերության բաժանմունքներում հաշվվում էր 7,5 մլնից ավելի անդամ։ Հերթական ընտրական կամպանիան մոտենալուն զուգընթաց Հ. Լոնգը դառնում էր Ֆ. Ռուզվելտի հիմնական մրցակիցներից մեկը, որը աջից լուրջ սպառնալիք էր ստեղծում «նոր կուրսի» քաղաքականության համար։ Եվ միայն Հ. Լոնգի անակնկալ մահը, որը 1935 թ. սեպտեմբերին սպանվեց իր հակառակորդներից մեկի կողմից, քաղաքական պայքարի թատերաբեմից հեռացրեց այդ վտանգավոր ֆաշիստական դեմագոգին։

Ֆաշիստական բնույթի մյուս զանգվածային շարժումը դետրոյտցի կաթոլիկ քահանա Չարլզ Կոֆլինի գլխավորած շարժումն էր։ Ռադիոյով ունեցած իր շաբաթական քարոզներում Չ. Կոֆլինը հմտորեն հարմարվելով մասսաների հակամոնոպոլիստական տրամադրություններին, մերկացնում էր «անաստված կապիտալիստներին» և կոչ անում երկրում հաստատել «սոցիալական արդարության» հասարակություն։ 1934 թ. աշնանը Կոֆլինի նախաձեռնությամբ հիմնվեց «Սոցիալական արդարության պայքարի ազգային միություն»։ «Ռադիո-հայրի» ելույթները վիթխարի լսարաններ էին հավաքում. 1935 թ. նրա ունկնդիրների թիվը հասնում էր մինչև 12—15 մլն։ Չ. Կոֆլինը և նրա կողմնակիցները փորձում էին միլիոնավոր ամերիկացիների դժգոհությունն ուղղել «նոր կուրսի» դեմ, դեպի ֆաշիստական Իտալիայի «կորպորատիվ կարգերը» հիշեցնող քաղաքական կարգեր հաստատելու համար մղվող պայքարի հունը։

Ռեակցիոն-ֆաշիստական գործիչները մտադիր էին «նոր կուրսի» քաղաքականությանը վճռական մարտ տալ 1936 թ. ընտրական կամպանիայի ընթացքում։ Միավորելով իրենց ուժերը, Չ. Կոֆլինի կողմնակիցները և Հ. Լոնգի հետևորդները օգտագործեցին անկախ քաղաքական գործողության և երրորդ կուսակցության ժողովրդականություն վայելող լոզունգը։ Նրանց հաջողվեց իրենց համար որոշ հենարան ստեղծել ֆերմերության և քաղաքային մանր բուրժուազիայի մասսայական կազմակերպություններում։ Նրանք կոնտակտի մեջ մտան նաև Ֆ. Տաունսենդի հետ։ Դրա հիման վրա 1936 թ. հունիսին կազմավորվեց «Միութենական կուսակցությունը», որը պրեզիդենտի պոստի իր թեկնածու առաջադրեց Հյուսիսային Դակոտայից կոնգրեսմեն, Անկուսակցական լիգայի անդամ Ուիլյամ Լեմկեին, որը ժողովրդականություն էր վայելում Արևմուտքի ֆերմերական շրջաններում։ Ֆ. Տաունսենդի և Ու. Լեմկեի շատ կողմնակիցներ մտնելով Միութենական կուսակցության շարքերը, անկեղծորեն հավատում էին, որ իրենք պայքար են մղում Ամերիկայի կյանքում արմատական փոփոխություններ կատարելու համար։ Սակայն նրանք դաժանորեն խաբվեցին։ Չ. Կոֆլինի և ֆաշիստական մյուս դեմագոգների ձեռքում Միութենական կուսակցությունը դարձավ ռեակցիոն ուժերի վտանգավոր զենք, որը նախատեսված էր այն բանի համար, որպեսզի իրենց դրությունից դժգոհ մասսաներին ուղղեր Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսի» դեմ։

Վերջապես, «նոր կուրսի» քաղաքականությանը դիմադրելու մոնոպոլիստական ռեակցիայի կարևոր գործիք դարձավ գերագույն դատարանը, ԱՄՆ-ի պետական սիստեմում եղած այդ ամենապահպանողական մարմինը, որը յուրացրել էր սահմանադրությունը մեկնաբանողի ֆունկցիաներ։ 1935 թ. մայիսի 27-ին գերագույն դատարանը հայտարարեց Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսի» գլխավոր բաղկացուցիչ մասի՝ ՆԵՐԱ-ի վերացման մասին։ 1936 թ. հունվարի 6-ին այդ նույն բախտին արժանացավ նաև գյուղատնտեսության կարգավորման օրենքը։ 1935 թ. հունվարից մինչև 1936 թ. մայիսը գերագույն դատարանի որոշումներով ոչ սահմանադրական ճանաչվեցին 11 օրենքներ, որոնք ընդունվել էին 1933—1934 թթ. ընթացքում։ Ամերիկյան ժողովրդի կարևորագույն նվաճումները, որոնք ձեռք էին բերվել «նոր կուրսի» առաջին տարիներին, այժմ դրվեցին սպառնալիքի տակ։

«Նոր կուրսի» քաղաքականության վրա մոնոպոլիստական բուրժուազիայի առավել ռեակցիոն շրջանների կատարած հարձակումն արդեն 30-ական թվականների կեսերին դեմոկրատական շարժման պատասխան ալիք առաջացրեց։ Ուժեղացավ անկախ քաղաքական գործողությունների համար մղվող շարժումը։ Առաջադիմական երրորդ կուսակցության գաղափարի կողմնակիցների թիվն ավելացավ արհմիություններում, ֆերմերական ռադիկալ կազմակերպություններում, ամերիկյան նեգրերի առաջավոր խմբերում, որոնք միավորվել էին 1936 թ. փետրվարին կոմկուսի մասնակցությամբ ստեղծված նեգրական ազգային կոնգրեսի շուրջը։ Ամերիկայի բոլոր առաջադիմական ուժերն այն ժամանակ ոտքի կանգնեցին ռեակցիայի և ֆաշիզմի դեմ պայքարելու համար։

ԱՄՆ-ում դեմոկրատական շարժման զարգացման գործում 30-ական թվականների կեսերին մեծ դեր խաղաց կոմունիստական կուսակցությունը։ Դեռ 1933 թ. նրա նախաձեռնությամբ ստեղծվեց պատերազմի և ֆաշիզմի դեմ պայքարի ամերիկյան լիգան։ Երբ 1934 թ. սեպտեմբերին Լիգայի ղեկավարությամբ տեղի ունեցավ հերթական համազգային հակապատերազմական կոնգրեսը, նրա աշխատանքներին մասնակցեց մի քանի հազար պատգամավոր, որոնք ներկայացնում էին ավելի քան 1,8 մլն ամերիկացիների։ Ճիշտ է, ընդ-

հուպ մինչև 1935 թ. ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցության գործունեության մեջ զգացվում էր աղանդավորության ուժեղ ազդեցությունը։ Այնուամենայնիվ այդ տարիներին էլ ֆաշիզմի և իմպերիալիստական պատերազմի սպառնալիքի դեմ կոմունիստների մղած հերոսական պայքարը խոշոր ավանդ եղավ դեմոկրատական շարժման զարգացման գործում։

1935 թ. վերջերից, այն բանից հետո, երբ Կոմինտերնի VII կոնգրեսի որոշումներն ամերիկյան կոմունիստներին օգնեցին հաղթահարելու աղանդավորական սխալները, կոմունիստական կուսակցության դերը ռեակցիայի և ֆաշիզմի դեմ դեմոկրատական ուժերի մղած պայքարում էլ ավելի մեծացավ։ 1935 թ. նոյեմբերին ԱՄՆ-ի կոմկուսը վերցրեց երկրում ժողովրդական ճակատի ստեղծման կուրս, ճակատ, որը պետք է միավորեր բանվորների, ֆերմերների, նեգրերի, առաջադեմ մտավորականության, քաղաքի մանր ու միջին բուրժուազիայի լայն զանգվածներին մոնոպոլիստական ռեակցիայի դեմ մղվող պայքարում։ Ժողովրդական ճակատի քաղաքականությունը հիմնավորվում էր ոչ միայն միջազգային բանվոր դասակարգի փորձի, այլև ամերիկյան առաջադեմ ավանդույթների վրա։ Պատմական նոր պայմաններում նա փորձում էր իրականացնել հակամոնոպոլիստական կոալիցիայի գաղափարը, որն առաջին անգամ առաջադրվեց դեռ XIX դարի վերջի— XX դարի սկզբի դեմոկրատական շարժման ընթացքում։ Հաշվի առնելով այդ շարժումների փորձն ու ավանդույթները, ամերիկյան կոմունիստներն իրենց ջանքերն ուղղեցին ազգային բանվորա-ֆերմերական կուսակցության կազմավորմանը՝ որպես ԱՄՆ-ի պայմաններում ժողովրդական ճակատի յուրահատուկ ձևի։ Ի տարբերություն գոյություն ունեցող ֆերմերա-բանվորական կուսակցությունների, ազգային բանվորա-ֆերմերական կուսակցության մեջ բանվոր դասակարգը պետք է գրավեր ավանգարդային դեր։

Արդեն 1936 թ. ընտրական կամպանիայի սկզբին կոմունիստական կուսակցությունը ոչ քիչ հաջողություններ հասավ երրորդ կուսակցության ստեղծման համար մղվող պայքարում։ Նա սերտ կապի մեջ մտավ Մինեսոտայի ֆերմերա-բանվորական կուսակցության և Վիսկոնսինի առաջադիմական կուսակցության հետ։ Կոմունիստների մասնակցությամբ նոր ֆերմերա-բանվորական կուսակցություններ ստեղծվեցին մի շարք այլ նահանգներում։ Այդ նույն ժամանակաշրջանում կոմունիստական կուսակցությունը փորձեր ձեռնարկեց գործարար կապեր հաստատելու սոցիալիստական կուսակցության հետ, որտեղ 1934 թվականից սկսեց վճռական ազդեցություն ունենալ ձախ սոցիալիստների խումբը՝ Նորման Թոմասի գլխավորությամբ։ Այդ հաջողությունների բազայի վրա 1936 թ. մայիսին Չիկագոյում գումարվեց կոնֆերանս, որը սկզբունքորեն հավանություն տվեց ազգային երրորդ կուսակցության գաղափարին։ Կոնֆերանսի դելեգատները հաստատեցին ապագա կուսակցության պլատֆորմը, որը նախատեսում էր դեմոկրատական կարևոր ռեֆորմների անցկացում (մոնոպոլիաների վերացում, հասարակական սեփականության հաստատում բնական ռեսուրսների նկատմամբ, ձեռնարկատերերի և կառավարության հաշվին սոցիալական ապահովության ֆեդերալ սիստեմի սահմանում, բանվորների աշխատանքային պայմանների բարելավում, ֆերմաների հարկադիր վաճառքի արգելում, գերագույն դատարանի լիազորությունների սահմանափակում և այլն)։ Սակայն չափավոր թևի ճնշման տակ Չիկագոյի կոնֆերանսը մերժեց ձախ ուժերի առաջարկությունն ազգային բանվորա-ֆերմերական կուսակցության անհապաղ կազմավորման մասին։ Նրա

ստեղծման հարցի լուծումը սկզբում հետաձգվեց մինչև 1936 թ. աշունը, իսկ հետո՝ անորոշ ժամանակով։

ԱՄՆ-ում 30-ական թվականների կեսերին երրորդ կուսակցություն ստեղծելու համար մղված պայքարի անհաջող ելքի գլխավոր պատճառներից մեկը արհմիութենական շարժման պարագլուխների բացասական դիրքն էր։ Դրանում համերաշխ էին ինչպես ԱԱՖ-ի ղեկավարությունը, այնպես էլ ԱԱԿ-ի պարագլուխների մեծամասնությունը։ 1936 թ. ապրիլին Դ. Լյուիսի, Ս. Հիլմանի և ԱԱԿ-ի մյուս պարագլուխների նախաձեռնությամբ ստեղծվեց Անկուսակցական բանվորական լիգան։ Նոր կազմակերպությունն իր հիմնական ջանքերն ուղղեց այն բանին, որպեսզի հասնի Ֆ. Ռուզվելտին պրեզիդենտ վերընտրելուն։ Անկուսակցական բանվորական լիգայի քաղաքական դերը չափազանց հակասական եղավ։ Մի կողմից, այն նպաստում էր «նոր կուրսի» նվաճումների պահպանման ու ընդլայնման համար մղվող պայքարում արհմիութենական շարժման մոբիլիզացմանը, մյուս կողմից, Լիգան նպաստում էր Ֆ. Ռուզվելտի բուրժուական լիբերալիզմից բանվոր դասակարգի քաղաքական կախման ուժեղացմանը, մի բան, որը զգալիորեն թուլացրեց երրորդ կուսակցության ստեղծման համար ԱՄՆ-ում ծավալված շարժումը։

Երրորդ կուսակցության համար տեղի ունեցող շարժման զարգացումն արգելակվում էր նաև սոցիալական մանևրման քաղաքականությամբ, որն անց էր կացնում Ռուզվելտի կառավարությունը։ Առաջադիմական առանձին ռեֆորմների իրականացումը, պրոպագանդիստական կամպանիան, որին հմտորեն ու նրբորեն ուղղություն էր տալիս ինքը՝ պրեզիդենտը, իշխող դասակարգի մեջ գոյություն ունեցող հակասությունների խորացումը և դրա հիման վրա «նոր կուրսի» քաղաքականության վրա մոնոպոլիստական ռեակցիայի գնալով ավելի հաճախակի դառնող հարձակումները,— այս բոլորը ուժեղացնում էր բանվորների ու ֆերմերների հավատը երկկուսակցական սիստեմի նկատմամբ։

Ինքնուրույն քաղաքական գործողությունների համար մղվող շարժման անհաջողության մեջ կարևոր դեր խաղաց նաև այն հանգամանքը, որը կոմկուսը այն ժամանակ դեռ չհասցրեց ամրապնդել իր կապերը մասսաների հետ։ Ժողովրդական ճակատի լոզունգը կոմունիստներն առաջադրեցին միայն 1935 թ. վերջին, երբ անկախ քաղաքական գործողությունների շարժման մասնակիցների շրջանում սկսեց ուժեղանալ Ֆ. Ռուզվելտի լիբերալ պլատֆորմը պաշտպանելու դիրքերին անցնելու տենդենցը։

Ձախ տեղաշարժը «նոր կուրսի» քաղաքականության մեջ

Այդուհանդերձ, 30-ական թվականների բանվորական ու դեմոկրատական շարժումը կարևոր դեր խաղաց ԱՄՆ-ի քաղաքական կյանքում։ Մոնոպոլիստական բուրժուազիայի հարձակումը կասեցվեց։ Ֆ. Ռուզվելտը և մոնոպոլիստական կապիտալի առավել ազդեցիկ շրջանները սոցիալական խոշոր կոնֆլիկտների իրադրության պայմաններում անհրաժեշտ էին համարում շարունակել սոցիալական մանևրման քաղաքականությունը։ 30-ական թվականների կեսերին «նոր կուրսի» քաղաքականության մեջ նշմարվեց դեպի ձախ կատարված նկատելի տեղաշարժ. Ֆ. Ռուզվելտի կառավարությունը զգալիորեն ավելի մեծ չափով, քան նախկինում, ստիպված էր հաշվի առնել բանվորների ու ֆերմերների շահերը։

30-ական թվականների կեսերին ԱՄՆ-ի բանվոր դասակարգի կարևորագույն նվաճումը եղավ աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ ազգային ակտը, կամ Վագների օրենքը, որն ուժի մեջ մտավ 1935 թ. հուլիսի

5-ին։ Այն բանվորներին ընձեռեց կազմակերպվելու, իրենց ընտրած արհմիությունն ընդունվելու, բանվորների ընտրովի ներկայացուցիչների և ձեռնարկատիրոջ միջև կոլեկտիվ պայմանագիր կնքելու, գործադուլներ անցկացնելու, պիկետավորելու և բանվորների փոխադարձ օգնության մյուս միջոցներն օգտագործելու իրավունք։ Ձեռնարկատերերին արգելվեց միջամտել բանվորական կազմակերպությունների գործունեությանը, բանվորներին հալածել արհմիություններին մասնակցելու համար, ստեղծել կոմպանիաների միություններ, հրաժարվել բանվորների ընտրած ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելուց՝ կոլեկտիվ պայմանագիր կնքելու վերաբերյալ։ Օրենքի իրականացման նկատմամբ հսկողությունը դրվեց աշխատանքային հարաբերությունների գծով ազգային վարչության վրա, որի որոշումներն այժմ պարտադիր դարձան ձեռնարկատերերի համար և կարող էին վերջիններիս կողմից վիճարկման ենթարկվել միայն դատարանի միջոցով։

«Նոր կուրսի» երկրորդ էտապում ամերիկյան բանվորական շարժման մյուս խոշոր հաղթանակը ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ սոցիալական ապահովության մասին ֆեդերալ օրենքի ընդունումն էր։ Այդ օրենքը, որը Ռուզվելտն ստորագրեց 1935 թ. օգոստոսի 14-ին, նպաստների սիստեմ էր սահմանում գործազրկության, ծերության, հաշմանդամության համար, ինչպես նաև նպաստներ՝ կարիքավոր մայրերին ու նրանց երեխաներին։ Սոցիալական ապահովության ֆոնդը ենթադրվում էր ստեղծել իրենց իսկ բանվորների վրա դրված հարկի և ձեռնարկատերերի եկամուտներից կատարված պահումների հաշվին։ Նոր ակտի թերությունն այն էր, որ նա տարածվում էր ամենևին էլ ոչ բոլոր բանվորների վրա։ Այն չէր ընդգրկում գյուղատնտեսական բանվորներին, առևտրի մեջ, կառավարական հիմնարկություններում, սպասարկման ոլորտում զբաղված անձանց։ Օրենքում լիովին շրջանցվում էր հիվանդության համար ապահովագրման պրոբլեմը։

Վերջապես, այդ նույն 1935 թ. կոնգրեսն ընդունեց օրենք, որը խոշոր հատկացումներ էր նախատեսում գործազուրկների համար 4,9 մլրդ դոլլարի չափով՝ հասարակական աշխատանքներ կատարելու համար։ Այդ ծրագրի իրականացման համար ստեղծվեց հասարակական աշխատանքների իրացման կառավարչություն՝ (ՎՊԱ) Հ. Հոպկինսի գլխավորությամբ։ Կառավարական նոր գործակալության գործողությունները բավական խոշոր չափերի հասան. 1936 թ. մարտի մոտերքին ՎՊԱ-ի զանազան օբյեկտներում զբաղված էր ավելի քան 3,4 մլն մարդ։

30-ական թվականների կեսերին մի շարք փոփոխություններ տեղի ունեցան «նոր կուրսի» նաև ագրարային քաղաքականության մեջ։ Ֆերմերական շարժման ճնշման տակ սկսեց կառավարական օգնություն ցույց տրվել ոչ միայն խոշոր ֆերմերությանը, այլև ինչ-որ չափով նաև գյուղական բնակչության ցածր եկամուտներ ունեցող խմբերին։ Այդ նպատակով 1935 թ. մայիսին Ֆ. Ռուզվելտը հայտարարեց այսպես կոչված Վերաբնակեցման գծով կառավարչության ստեղծման մասին, որը 1937 թ. վերակազմվեց Ֆերմերական տնտեսությունների պահպանության կառավարչության։ Ֆեդերալ այդ հիմնարկությունների գործունեության ծրագիրը նախատեսում էր գյուղատնտեսական միգրանտ-բանվորների համար ճամբարների շնարարություն, մանր ֆերմերների վերաբնակեցում առավել բերրի հողերում, փոխառությունների տրամադրում վարձակալներին ֆերմաներ գնելու համար, մանր ֆերմերների և վարձակալների կոոպերատիվ միավորումների ստեղծում։ Մանր ֆերմերներին ցույց տրված օգնության այդ միջոցառումները կարևոր էին ոչ այնքան իրենց

գործնական արդյունքներով (դրանք մեծ չէին), որքան այն բանով, որ մասսակայն շարժման ճնշման տակ ճանաչվեց աշխատավորների դրության համար կառավարության «սոցիալական պատասխանատվության» սկզբունքը։

ԱՄՆ-ում առաջացած նոր քաղաքական իրադրությունն արտահայտվեց 1936 թ. ընտրական կամպանիայի ընթացքում։ «Նոր կուրսի» քաղաքականության մեջ կատարված ձախ տեղաշարժը կապված էր մոնոպոլիստական բուրժուազիայի շարքերում տեղի ունեցած սահմանազատման պրոցեսի հետ։ Ամերիկյան բուրժուազիայի հիմնական մասը գտնում էր, որ ձգձգված տնտեսական դեպրեսիայի և մասսաների քաղաքական բարձր ակտիվության պայմաններում հարկավոր է շարունակել սոցիալական մանևրման քաղաքականությունը։ 1936 թ. ընտրությունների ընթացքում լիբերալ-բուրժուական այդ շրջանների հայացքների արտահայտիչը Ֆ. Ռուզվելտն էր, որը վերստին առաջադրվեց պրեզիդենտի պոստի համար դեմոկրատական կուսակցության թեկնածու։

Ընտրություններում նրա դեմ հանդես եկան ԱՄՆ-ի ֆինանսական օլիգարխիայի առավել ռեակցիոն շրջանները։ Նրանք պնդում էին, որ զիջումների քաղաքականությունը հասցրել է ոչ թե բանվորական ու ֆերմերական շարժման թուլացմանը, այլ ուժեղացմանը, կապիտալիստական կարգերի գոյության լուրջ սպառնալիքի ստեղծմանը։ Ռուզվելտին մեղադրելով «կարմիրներին խրախուսելու» մեջ, նրանք պահանջում էին հրաժարվել սոցիալական ռեֆորմներից և անցնել ճնշման կոշտ քաղաքականությանը։ Այդ ռեակցիոն կուրսը պաշտպանում էր պրեզիդենտի պոստի հանրապետական կուսակցության թեկնածու, Կանզաս նահանգի նահանգապետ Ալֆրեդ Լենդոնը։

Այսպիսով, 1936 թ. ընտրություններում դեմոկրատների ու հանրապետականների պայքարն արտահայտում էր ԱՄՆ-ի կառավարող շրջաններում գոյություն ունեցող երկու տենդենցների՝ չափավոր-լիբերալ և ռեակցիոն տենդենցների հակամարտությունը։ Ամերիկյան ժողովուրդն ամենևին էլ անտարբեր չէր այն բանի հանդեպ, թե այդ երկու տենդենցներից ո՞րը հաղթանակ կտանի և ի՞նչ ուղիով կընթանա հետագայում Ամերիկայի զարգացումը։ Ահա թե ինչու 1936 թ. ընտրական կամպանիայի ընթացքում դեմոկրատական կուսակցության շուրջը ձևավորվեց մի լայն կոալիցիա, որը ներառնում էր բանվորներին, ֆերմերների, նեգրերի, մտավորականության, քաղաքի մանր ու միջին բուրժուազիայի մեծ մասին, ինչպես նաև մոնոպոլիստական բուրժուազիայի լիբերալ շրջաններին։ Մայրահեղ ռեակցիայի դեմ երկրի դեմոկրատական ուժերի մղած պայքարում մեծ ավանդ մուծեց կոմունիստական կուսակցությունը։ Կոմունիստները գլխավոր ջանքերն ուղղում էին այն բանին, որպեսզի հանրապետականներին պարտության մատնեն։ Նրանք պաշտպանում էին այն ամբողջ առաջադիմականը, որ կար «Նոր կուրսի» քաղաքականության մեջ։ Ի տարբերություն սոցիալիստների, որոնք 1936 թ. կանգնած էին ուտոպիական դիրքերում և ժխտում էին Ռուզվելտի ու Լենդոնի միջև եղած սկզբունքային տարբերությունը, կոմկուսն օբյեկտիվորեն ընթանում էր Ռուզվելտին պաշտպանելու ուղիով։ Այդ նույն ժամանակ կոմունիստական կուսակցությունը պրոպագանդում էր դեմոկրատիայի ընդլայնման և սոցիալիզմի համար պայքարելու առավել բարենպաստ պայմանների ստեղծման համար պայքարի իր սեփական ծրագիրը։ Այդ կապակցությամբ նա առաջադրեց ԱՄՆ-ի պրեզիդենտի և փոխ-պրեզիդենտի պոստի իր թեկնածուներին։

Դեմոկրատական ուժերի օժանդակությունը 1936 թ. ընտրություններում Ֆ. Ռուզվելտի համար ապահովեց համոզիչ հաղթանակ։ Նրա օգտին քվեարկեց 27,8 մլն ընտրող, այն դեպքում, երբ Լենդոնին հաջողվեց ստանալ միայն 16,7 մլն ձայն։ Մոտ 900 հազ. քվե տրվեց միութենական կուսակցության թեկնածու Ու. Լեմկեի օգտին։ Մոնոպոլիստական ռեակցիայի ուժերը պարտություն կրեցին։

1937—1938 թթ. տնտեսական ճգնաժամը և նրա ազդեցությունը «Նոր կուրսի» քաղաքականության վրա

1937 թ. երկրորդ կեսին Միացյալ Նահանգներում, այնպես, ինչպես և կապիտալիստական մի շարք այլ երկրներում ծայր առավ նոր տնտեսական ճգնաժամը։ Նրա առանձնահատկությունն այն էր, որ այն սկսվեց ոչ թե տնտեսական արդյունաբերական վերելքից հետո, ինչպես այդ եղավ 1929 թ., այլ ձգձգված դեպրեսիայից հետո, որը հաղիվ էր փոխարինվել արտադրության որոշ աշխուժացմամբ։ Ամերիկյան արդյունաբերության ընդհանուր ծավալը, որը 1936 թ. հասել էր 1929 թ. մակարդակի 93 տոկոսին, իսկ 1937 թ.՝ 103 տոկոսին, նոր տնտեսական ճգնաժամի սկսվելով նորից կրճատվեց։ 1938 թ. այն կազմեց 1929 թ. մակարդակի միայն 81 տոկոսը։ Այդ ճգնաժամի հետևանքներից Միացյալ Նահանգներին այդպես էլ չհաջողվեց ուշքի գալ ընդհուպ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելը։

Ճգնաժամի ծավալումը խիստ վատացրեց աշխատավորության դրությունը։ Գործազուրկների թիվը, որը 1937 թ. աշնանը նվազել էր մինչև 7,5 մլն մարդու, 1938 թ. ամռան մոտերքին վերստին մեծացավ մինչև 11,5 մլն մարդու։ Ուժեղացավ ֆերմերական դանգվածների սնանկացումը։ Միայն 1937 թվականից մինչև 1939 թ. ներառյալ ԱՄՆ-ում պարտքերն ու հարկերը չվճարելու պատճառով հարկադիր վաճառքի է ենթարկվել մոտ 300 հազ. ֆերմա։

Ճգնաժամի հզոր հարվածները պահանջում էին «Նոր կուրսի» քաղաքականության ակտիվացում, աշխատավորությանն օգնելու արդյունավետ միջոցների ձեռնարկում։ Սակայն այդ բանին հասնելու համար հարկավոր էր հաղթահարել ռեակցիոն ուժերի դիմադրությունը։ Նոր ճգնաժամի սկսվելու հետ միասին այդ դիմադրությունը բազմակի ուժեղացավ։ ԱՄՆ-ի մոնոպոլիստական բուրժուազիայի ազդեցիկ շրջանները որոշեցին օգտվել տնտեսական կոնյունկտուրայի վատացումից, որպեսզի պայքարեն «Նոր կուրսի» լիակատար վերացման համար։ 1937 թ. դեկտեմբերին արդյունաբերողների ազգային ասոցիացիայի համագումարում առաջադրվեցին Վագների օրենքի անհապաղ վերացման, աշխատավարձի և գործազրկության նպաստների նվազեցման, սոցիալական կարիքների համար կառավարական հատկացումների կրճատման պահանջներ։ Պատերազմ հայտարարվեց ժողովրդի ձեռք բերած բոլոր նվաճումների դեմ։

Սակայն ԱՄՆ-ի աշխատավորները մտադիր չէին մարտադաշտից նահանջելու։ Նրանք ոտքի կանգնեցին պաշտպանելու իրենց նվաճած իրավունքները։ Այդ պայքարում առաջատար դեր էր խաղում բանվոր դասակարգը։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին գործադուլային շարժումն ընդգրկեց ամերիկյան պրոլետարիատի լայն խավերին։ Հենց միայն 1937 թ. ԱՄՆ-ում գործադուլ արեց 1860 հազ. բանվոր, այսինքն՝ ավելի, քան երբևիցէ անցյալում, բացառությամբ 1919 թ.։

Ամերիկյան պրոլետարիատի դասակարգային պայքարի հատկապես արդյունավետ գործիք եղան «նստած գործադուլները»։ Վճռական իրադարձությունները ծավալվեցին Ֆլինտ քաղաքում (Միչիգանի նահանգ), որտեղ 1937 թ. սկզբին «Ջեներալ մոտորս» ավտոմոբիլային ընկերության գործարաններում տեղի ունեցած «նստած գործադուլներին» մասնակցեց մոտ 150

հազ. բանվոր։ Գործադուլն աշքի ընկավ պայքարի հստակ կազմակերպումով։ Գործադուլավորների մի մասն ամբողջ ժամանակ մնաց գործարանի ներսում, այն չլքելով ոչ ցերեկը, ոչ էլ գիշերը։ Գործադուլի մնացած մասնակիցները իրականացնում էին շուրջօրյա պիկետավորում, խոչընդոտում էին շարեկցրեխերներ բերելուն, ձեռնարկությունների ներսում գտնվող բանվորներին ապահովում էին ամեն անհրաժեշտ բանով։ Մեկուկես ամիս տևած կատաղի դիմադրությունից հետո «Ջեներալ մոտորսի» կառավարչությունը, որը սկզբում լսել էլ չէր ցանկանում որևէ զիջման մասին, ստիպված էր կապիտուլացվելու։ 1937 թ. փետրվարին նա համաձայնվեց ճանաչել ավտոմոբիլային արդյունաբերության բանվորների միացյալ արհմիությանը և կնքել համազգային պայմանագիր, որը բարելավում էր բանվորների աշխատանքի պայմանները։ Ֆլինտեում տարած հաղթանակից հետո «նստած գործադուլների» ալիքը տարածվեց ամբողջ երկրում։ Նույնիսկ այնպիսի խոշոր մոնոպոլիստական միավորումներ, ինչպիսիք էին Կրայսլերի ֆիրման և «Ջեներալ էլեկտրիկը», ստիպված էին համաձայնության դիմելու բանվորների հետ, իսկ շուտով, հանդիպելով պողպատաձուլական արդյունաբերության մեջ «նստած գործադուլների» սպառնալիքին, նրանց օրինակին հետևեց ամենազոր Պողպատի տրեստը։

1938 թ., ճգնաժամի ծանր պայմաններում գործադուլների մասնակիցների թիվը կրճատվեց մինչև 688 հազարի, բայց նույնիսկ այդ ժամանակ էլ գործադուլային շարժման ցուցանիշներն զգալիորեն ավելի բարձր էին, քան, օրինակ, 1929—1933 թթ. ժամանակաշրջանում։ Իսկ երբ 1939 թ. սկսվեց ճգնաժամի աստիճանական հաղթահարումը, գործադուլավորների թիվն ԱՄՆ-ում նորից ավելացավ մինչև 1170 հազ. մարդու։

Ամերիկյան բանվորական շարժման ուժի և կազմակերպվածության աճը երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին արտահայտվեց նաև արտադրական արհմիությունների բուռն զարգացման մեջ։ Արդեն 1937 թ. ԱԱԿ-ին հարող ինդուստրիալ միությունների թիվը հավասարվեց ԱԱՖ-ի թվի հետ։ Աճում էր բանվորների ձգտումը արհմիութենական շարժման միասնությունը վերականգնելու հանդեպ։ ԱԱԿ-ի ղեկավարությունը բազմիցս փորձեց ԱԱՖ-ի գործկոմի հետ պայմանավորվել պառակտվածությունը հաղթահարելու և ԱԱԿ-ի արհմիություններին Աշխատանքի ամերիկյան ֆեդերացիայի անդամների իրավունքներում վերականգնելու մասին։ Սակայն այդ առաջարկությունները մերժվեցին Ու. Գրինի և նրա կողմնակիցների կողմից։ Այդ ժամանակ ԱԱԿ-ի ղեկավարությունը որոշեց մշտական կենտրոն ստեղծել արտադրական արհմիությունների գործունեության միավորման համար։ Այդ նպատակով 1938 թ. նոյեմբերին Պիտսբուրգում անցկացվեց ԱԱԿ-ի միությունների համագումար, որը հայտարարեց համաամերիկյան արհմիութենական երկրորդ կենտրոնի ստեղծման մասին. այն ստացավ Արտադրական արհմիությունների կոնգրես անունը։ ԱԱԿ-ի առաջին պրեզիդենտ դարձավ Ջոն Լյուիսը։

Երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվելու պահին Արտադրական արհմիությունների կոնգրեսում հաշվվում էր մոտ 4 մլն անդամ։ ԱՄՆ-ի տրեդյունիոնների անդամների ընդհանուր թիվը, ներառյալ նաև ԱԱՖ-ի միությունները և մի քանի այլ անկախ արհմիություններ, 1939 թ. հասավ 9 մլն մարդու։ Դա նպաստեց արհմիութենական շարժման՝ երկրի քաղաքական կյանքի կարևոր գործոնի վերածմանը։

Ամերիկյան պրոլետարիատի կազմակերպվածության և քաղաքական կշռի

բարձրացումը պայմաններ ստեղծեց դեմոկրատական շարժման մեջ բանվորների շատ ավելի ակտիվորեն մասնակցելու համար։ Ռեակցիայի և ֆաշիզմի դեմ մղվող մասսայական պայքարի մեջ սկսեցին ներգրավվել ԱԱԿ-ի և ԱԱՖ-ի տեղական բաժանմունքները։ Իր ֆունկցիաներն զգալիորեն ընդարձակեց անկուսակցական բանվորական լիգան, որն այժմ վերածվեց մշտական կազմակերպության։ 30-ական թվականների վերջերի դեմոկրատական շարժման մեջ մեծ դեր էր խաղում ամերիկյան բանվորական կուսակցությունը, որը ստեղծվեց 1936 թ. որպես անկուսակցական բանվորական լիգայի Նյու Յորքի նահանգում գտնվող սեկցիա։ Արհմիությունների հետ աշխատավորների քաղաքական իրավունքների ընդլայնման պայքարի մարտիկների շարքերում ընթանում էին Մինեսոտայի ֆերմերա-բանվորական կուսակցությունը, Վիսկոնսինի առաջադիմական կուսակցությունը, ԷՊԻԿ կազմակերպությունը, ֆերմերական միությունը, նեգրական ազգային կոնգրեսը և ԱՄՆ-ի բնակչության հակամոնոպոլիստորեն տրամադրված խավերի մյուս կազմակերպությունները։

ԱՄՆ-ում դեմոկրատական շարժման զարգացման գործում 30-ական թվականների վերջերին խոշոր ավանդ մուծեց կոմունիստական կուսակցությունը։ Նրա թվակազմն ու ազդեցությունը զգալիորեն աճեցին. 1934 թ. նրա շարքերում կար 25 հազ. անդամ, 1938 թ.՝ 75 հազ. անդամ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ամերիկյան կոմունիստները ձգտում էին հասնել դեմոկրատական բոլոր ուժերի միավորմանը խաղաղության, սոցիալական օրենսդրության ընդլայնման, ռեակցիային ու ֆաշիզմին սանձահարելու համար մղվող պայքարում։ Այդ նպատակների իրականացմանը պետք է ծառայեր դեմոկրատական ճակատի քաղաքականությունը, որը հռչակվեց կոմունիստական կուսակցության 1938 թ. մայիսին տեղի ունեցած համագումարում։ Կոմունիստները գտնում էին, որ դեմոկրատական ճակատի կազմի մեջ կարող են ընդունվել ոչ միայն բանվորները, ֆերմերները և քաղաքային բնակչության միջին խավերը, այլև խոշոր բուրժուազիայի մի մասը։ Այդ պատճառով կոմկուսը հայտնեց իր պատրաստակամությունը համագործակցելու Ֆ. Ռուզվելտի և դեմոկրատական կուսակցության ներսում նրա հետևից ընթացող լիբերալ տարրերի հետ, որպեսզի նրանց հետ բուրժուական դեմոկրատիայի ռեժիմը պաշտպանի ծայրահեղ ռեակցիոներների հարձակումներից։ Դա, հասկանալի է, որ չէր նշանակում հրաժարումն «նոր կուրսի» քաղաքականության դասակարգային էության սկզբունքային գնահատականից, սոցիալական խոր վերափոխումների սեփական ծրագիր առաջադրելուց։ Ընդհակառակը, դեմոկրատական ճակատը կոմունիստների կողմից դիտվում էր որպես հակամոնոպոլիստական լայն կոալիցիայի ստեղծման պայքարի նախնական էտապ, որպես ժողովրդական ճակատի յուրահատուկ սաղմնային ձև և դեպի նրա բարձրագույն ձևը՝ համազգային բանվորա-ֆերմերական կուսակցությանը տանող անցման աստիճան։

Սակայն ԱՄՆ-ի բանվոր դասակարգի քաղաքական հետամնացությունը, մասսաների ռեֆորմիստական պատրանքները, որոնք էլ ավելի էին ամրապնդվել սոցիալական մանևրման ճկուն քաղաքականության ազդեցության տակ,— այս բոլորը կոմունիստական կուսակցությանը խանգարեց հասնելու բանվոր դասակարգի գլխավորությամբ դեմոկրատական ճակատի ստեղծմանը։

Այնուամենայնիվ, երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ԱՄՆ-ում ծավալված բանվորական ու դեմոկրատական շարժման ընդհանուր թափն այնքան ուժեղ եղավ, որ Ռուզվելտի կառավարությունը վերստին ստիպված էր ընդառաջել մասսաների պահանջներին։ 1938 թ. հունիսի 25-ին Ֆ.

Ռուզվելտը ստորագրեց «աշխատանքի արդարացի պայմանների» մասին օրենքը, որն աշխատավարձի մինիմում և աշխատանքային շաբաթվա մաքսիմալ տևողություն էր սահմանում ֆեդերալ նշանակության արդյունաբերական ձեռնարկություններում զբաղված բանվորների համար։ Ռուզվելտի կառավարությունը ևս մի քանի կարևոր միջոցառումներ անցկացրեց սոցիալական օրենսդրության ասպարեզում։ 1938 թ. նոր խոշոր հատկացումներ հաստատվեցին գործազուրկներին օգնելու համար։ Հասարակական աշխատանքներում զբաղվածների թիվը, որը 1937 թ. նվազել էր մինչև 1,5 մլն., 1938 թ. նորից ավելացավ մինչև 3 մլն։ Աշխատավորների մասսայական կազմակերպությունների աջակցությամբ Ռուզվելտի կառավարությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնք գերագույն դատարանին ստիպեցին փոխել իր դիրքը և հաստատել Վագների օրենքի և «նոր կուրսի» օրենսդրական մյուս ակտերի սահմանադրական լինելը։

Հասկանալի է, որ այս բոլոր միջոցառումների անցկացումը չէր նշանակում և չէր կարող նշանակել «նոր կուրսի» քաղաքականության դասակարգային էության փոփոխում։ Այն առաջվա պես ուղղված էր կապիտալիստական սիստեմի ամրապնդմանը, մասսաների շեղմանը կապիտալիզմի հիմքերի դեմ պայքարելուց։ Այդ իմաստով Ռուզվելտը խոշոր կապիտալի շահերի ավելի հուսալի պաշտպան էր, քան այն ռեակցիոն քաղաքագետները, որոնք դատապարտում էին պրեզիդենտին իր դասակարգի շահերի կործեցյալ «դավաճանության» համար։ Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի մոնոպոլիստական բուրժուազիայի ազդեցիկ շրջանները երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին դարձյալ հանդես եկան «նոր կուրսի» դեմ, որն իր արտահայտությունը գտավ կոնգրեսի ներսում հանրապետականների և աջ դեմոկրատների ռեակցիոն բլոկ ստեղծելու մեջ։ 30-ական թվականների վերջերին այդ բլոկին հաջողվեց խանգարել մի շարք ռեֆորմների անցկացմանը։ Այդպիսի բախտ վիճակվեց, օրինակ, գերագույն դատարանի ռեֆորմի՝ Ռուզվելտի առաջարկած նախագծին, Լինչի դատավարության հետ կապված բոլոր գործերն առանձին նահանգների դատական մարմինների վարումից ֆեդերալ դատարանների վարմանը հանձնելու մասին օրինագծին և այլն։ Մոնոպոլիստական ռեակցիայի դիմադրությունը եղավ երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվելուց առաջ ԱՄՆ-ի սոցիալական օրենսդրությունը դանդաղեցնելու, իսկ հետո էլ գրեթե լիովին դադարեցնելու կարևոր պատճառներից մեկը։

«Նոր կուրսի» քաղաքականության փոփոխման վրա ազդեց ևս մեկ կարևոր պատճառ։ Դա միջազգային իրադրության խիստ բարդացումն էր։ 30-ական թվականների վերջերին ԱՄՆ-ի քաղաքական կյանքում առաջին պլան մղվեցին արտաքին քաղաքականության հարցերը։

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը 1938—1939 թթ.

Արտաքին քաղաքականության բնագավառում Ֆ. Ռուզվելտի կառավարությունը նույնպես հանդիսացավ ավելի ճկուն քաղաքական կուրսի կողմնակից։ Իհարկե, ԱՄՆ-ի կառավարող շրջանների նպատակները Ռուզվելտի իշխանության գլուխ անցնելով չփոխվեցին. դրանք կայանում էին այն բանում, որպեսզի է՛լ ավելի ամրապնդվեին ամերիկյան իմպերիալիզմի դիրքերը համաշխարհային թատերաբեմում։ Սակայն քաղաքական բարդ իրադրությունը, որը ստեղծվել էր 30-ական թվականներին և՛ Ամերիկայում, և՛ նրա սահմաններից դուրս, պրեզիդենտին ստիպում էր այդ գիծն անցկացնել շատ ավելի զգուշորեն, քան այդ արվում էր նախկինում։

Ռուզվելտի կառավարության առաջին խոշոր արտաքին քաղաքական ակտը դիվանագիտական հարաբերությունների հաստատումն էր Սովետական Միության հետ։ ՍՍՀՄ-ին ճանաչելուց ԱՄՆ-ի կառավարող շրջանների հրաժարվելը՝ պայմանավորված էր ամենից առաջ Սովետների Երկրի տնտեսական աճով, նրա քաղաքական ու ռազմական հզորության ամրապնդմամբ։ Այն գործոնների մեջ, որոնք նպաստեցին հարաբերությունների նորմալացմանը ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի միջև, կարևոր դեր խաղաց գործարար շրջանների ձգտումը՝ ընդլայնել առևտուրը Սովետական Միության հետ։ Ռուզվելտի կառավարության դիրքի վրա ոչ քիչ ազդեցություն ունեցավ նաև երկրի բանվոր դասակարգի և դեմոկրատական ուժերի շարժումը հանուն սովետական պետության ճանաչման։ Բայց գլխավոր պատճառը, որը ԱՄՆ-ի կառավարող շրջաններին ստիպեց կանգնել սովետա-ամերիկյան հարաբերությունները նորմալացնելու ուղու վրա, նրանց սեփական ստրատեգիական հաշիվներն էին։ Իմպերիալիստական հակասությունների շեշտակի սրման պայմաններում, երբ ֆաշիստական Գերմանիան և իմպերիալիստական Ճապոնիան դառնում էին Միացյալ Նահանգների ավելի ու ավելի վտանգավոր մրցակիցներ, ամերիկյան արտաքին քաղաքականության ղեկավարները, դիմելով ՍՍՀՄ-ի հետ հարաբերությունների բարելավմանը, հույս ունեին այն օգտագործել որպես Գերմանիայի ու Ճապոնիայի աճող հզորության հնարավոր հակակշիռ։ Իսկ սովետական կառավարությունը երկու մեծ տերությունների հարաբերությունների նորմալացման մեջ որոշակի քայլ էր տեսնում դեպի խաղաղության կայունացումն ամբողջ աշխարհում։ 1933 թ. նոյեմբերի 16-ին ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ։ Դա հանդիսացավ սովետական պետության մեկուսացման քաղաքականության ձախողման ճանաչումը, քաղաքականություն, որը շատ տարիների ընթացքում անց էին կացնում ԱՄՆ-ի ռեակցիոն շրջանները։

Ֆ. Ռուզվելտի կառավարությունն ավելի ճկուն քաղաքական կուրս վերցրեց նաև Լատինական Ամերիկայի երկրների նկատմամբ։ Դա կապված էր այն բանի հետ, որ ԱՄՆ-ի կառավարող շրջաններն այստեղ բախվեցին իրենց դիրքերը շտապ ամրապնդելու անհրաժեշտության հետ, դիրքեր, որոնք զգալիորեն թուլացել էին տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում։ Լատինաամերիկյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման հզոր վերելքի պայմաններում Ռուզվելտի կառավարությունը հռչակեց այսպես կոչված «բարի դրացու» քաղաքականությունը։ ԱՄՆ-ի քաղաքական գործիչների հանդիսավոր դեկլարացիաները լատինա-ամերիկյան պետությունների ներքին գործերին «չմիջամտելու» վերաբերյալ ամրապնդվեցին Միացյալ Նահանգների մի քանի զիջումներով։ 1934 թ. Ֆ. Ռուզվելտի կառավարությունն ամերիկյան զորքերը դուրս բերեց Հաիթիից, ուր նրանք գտնվում էին գրեթե 20 տարի։ Կուբայի հետ կնքված նոր պայմանագրով վերացվեց ստորացուցիչ «Պլատտի ուղղումը», որը շատ տարիներ օգտագործվում էր այդ երկրում ինտերվենցիա կատարելու ԱՄՆ-ի «իրավունքը» հիմնավորելու համար։ Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի շատ երկրների հետ կնքվեցին նրանց համար ավելի նպաստավոր առևտրական համաձայնագրեր։

«Բարի դրացու» քաղաքականության հռչակումը և ԱՄՆ-ի իմպերիալիստական էքսպանսիայի առավել կոպիտ ու բացահայտ ձևերից հրաժարվելը նպաստեցին հակաամերիկյան տրամադրությունների որոշ թուլացմանը լատինաամերիկյան պետությունների ժողովուրդների շրջանում։ Մյուս կողմից, տնտեսական ներթափանցման ավելի ճկուն մեթոդներն ԱՄՆ-ի իմպերիալիստների ձեռքում պայքարի արդյունավետ գործիք հանդիսացան ընդդեմ Անգլիա-

յի ու Գերմանիայի մրցակցության։ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Միացյալ Նահանգների տնտեսական դիրքերը արևմտյան կիսագնդի երկրներում ոչ միայն լիովին վերականգնվեցին, այլև զգալիորեն ամրապնդվեցին։

Ֆ. Ռուզվելտի կառավարության քաղաքականությունը Լատինական Ամերիկայի երկրների հանդեպ պաշտպանություն գտավ ֆինանսական կապիտալի բոլոր հիմնական խմբերի կողմից։ Բանը զգալիորեն ավելի բարդ էր Արևմտյան Եվրոպայում և Հեռավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ ԱՄՆ-ի դիրքը մշակելու հարցում։ Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի ռազմաքաղաքական բլոկի ստեղծումը, նրանց կողմից աշխարհի վերաբաժանման համար նոր պատերազմի նախապատրաստումը՝ այս բոլորը կապիտալիզմի համաշխարհային սիստեմում փոխեց ուժերի հարաբերակցությունը և ԱՄՆ-ի կառավարող շրջանների առջև խնդիր դրեց պայքարի առավել արդյունավետ միջոցներ գտնել ամերիկյան իմպերիալիզմի միջազգային դիրքերն ամրապնդելու համար։ Սակայն ԱՄՆ-ի արտաքինքաղաքական կուրսի մշակումը երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին սուր հակասություններ բացահայտեց մոնոպոլիստական բուրժուազիայի շրջաններում։

ԱՄՆ-ի կառավարող վերնախավում գոյություն ունեցող ուղղություններից մեկի ներկայացուցիչները հետևում էին այն համոզմանը, թե ֆաշիստական պետությունների բլոկի կազմավորումը լուրջ սպառնալիք է ստեղծում Ամերիկայի համար և որ ընդհարումը Միացյալ Նահանգների և այդ բլոկի միջև վերջին հաշվով անխուսափելի է։ Այդ հիման վրա հետևություն էր արվում Արևմտյան Եվրոպայի բուրժուա-դեմոկրատական պետությունների և առաջին հերթին Անգլիայի հետ մերձենալու անհրաժեշտության մասին։ Այդ նույն ընդհատակով «հակաիզոլյացիոնիստական», կամ, իրենց իսկ տերմինոլոգիայով, «ինտերնացիոնալիստական» արտաքին քաղաքական կուրսի կողմնակիցները պատրաստ էին դիմելու սովետա-ամերիկյան հարաբերությունների որոշակի նորմալացմանը։ Այդպիսին էր այն դիծը, որի արտահայտիչը դարձան պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտը և նրա կաբինետի անդամները։

Բայց ԱՄՆ-ի կառավարող շրջաններում կար նաև այլ ազդեցիկ ուղղություն, որն արտացոլում էր ֆինանսական օլիգարխիայի ավելի ռեակցիոն տարրերի տեսակետը։ Այդ հոսանքի ներկայացուցիչները գտնում էին, որ ամերիկյան իմպերիալիզմի միջազգային դիրքերի ապահովման ամենալավագույն միջոցը Միացյալ Նահանգների կողմից «ձեռքերի աղատություն» պահպանելն է, եվրոպական երկրների հետ ռազմաքաղաքական դաշինքներից հրաժարվելը։ Հանդես գալով եվրոպական գործերում «չմիջամտելու» դրոշի տակ, իմպերիալիստական «իզոլյացիոնիզմի» այդ ազդեցիկ խմբի պարագլուխները հույսը դրել էին այն բանի վրա, որ երկու իմպերիալիստական կոալիցիաների ընդհարումը, որը հասունացել էր 30-ական թվականների վերջին Եվրոպայում և Ասիայում, նրանց տանելու է դեպի փոխադարձ թուլացում և ԱՄՆ-ին հնարավորություն է տալու վճռական պահին պայքարի մեջ մտնել և իր պայմանները թելադրել։ Առավել ռեակցիոն «իզոլյացիոնիստների» խումբը, արտահայտելով Գերմանիայի ու Ճապոնիայի մոնոպոլիստական միավորումների հետ անմիջականորեն կապված արդյունաբերական-ֆինանսական շրջանների շահերը, նույնիսկ պահանջում էր համաձայնության գալ ֆաշիստական բլոկի երկրների հետ Սովետական Միության, Չինաստանի, ինչպես նաև Անգլիայի ու Ֆրանսիայի գաղութների հաշվին աշխարհը նոր վերաբաժանման

ենթարկելու մասին։ Իմպերիալիստական «իզոլյացիոնիզմի» տարբեր խմբերի քաղաքական ներկայացուցիչներն էին սենատորներ Ռ. Տաֆտը և Ա. Վանդենբերգը, կոնգրեսմեն Հ. Ֆիշը, գեներալ Ռ. Վուդը և ուրիշներ։

ԱՄՆ-ի կառավարող շրջաններում գոյություն ունեցող «իզոլյացիոնիստական» հոսանքի ուժն ու ազդեցությունը բացատրվում էր ոչ այնքան նրա սեփական քաղաքական կշռով, որքան այն բանով, որ եվրոպական գործերին «չմիջամտելու» լոզունգը պաշտպանություն էր գտնում ավանդական իզոլյացիոնիստների մի մեծ խմբի կողմից, որոնք արտահայտում էին ֆերմերության և քաղաքի միջին խավերի հայացքները։ Այդ խմբի կազմի մեջ էին մտնում սենատորներ Ուիլյամ Բորան, Ջերալդ Նայը, Ռոբերտ Լաֆոլետը և ուրիշ նշանավոր քաղաքական գործիչներ։ Վկայակոչելով ամերիկյան ժողովրդի հակապատերազմական տրամադրությունները, ավանդական իզոլյացիոնիստները երկու իմպերիալիստական կոալիցիաների մոտալուտ ընդհարման դեպքում հռչակում էին ԱՄՆ-ի չեզոքության լոզունգը։ Չնայած այն բանին, որ ավանդական իզոլյացիոնիստները հակամիլիտարիստական, իսկ երբեմն էլ հակաիմպերիալիստական դիրք էին գրավում և տարբերվում էին Տաֆտի ու Վանդենբերգի տիպի ռեակցիոն իմպերիալիստական քաղաքագետներից, այնուամենայնիվ ԱՄՆ-ի «չեզոքության» իզոլյացիոնիստական լոզունգը օբյեկտիվորեն դարձավ ֆաշիստական ագրեսիայի խրախուսման գործիք։ Այդ պատճառով անկախ իրենց սուբյեկտիվ մղումներից, բոլոր իզոլյացիոնիստների գործունեությունը ամբողջությամբ վերցրած ռեակցիոն դեր էր խաղում։

«Իզոլյացիոնիստական» հոսանքի ազդեցությունն այնքան զորեղ եղավ, որ Ֆ. Ռուզվելտի կառավարությունը մի քանի անգամ ստիպված եղավ «իզոլյացիոնիստների» հետ կոմպրոմիսի դիմել և նույնիսկ նրանց առջև ուշադրակի կապիտուլացվել։ 1935 թ. օգոստոսին նրանց պնդմամբ ԱՄՆ-ում ընդունվեց «չեզոքության» օրենքը, որը արգելում էր զենքի ու ռազմական հանդերձանքի մատակարարումները ցանկացած կռվող պետությանը։ Դրա հետևանքով ո՛չ Եթովպիան, ո՛չ հանրապետական Իսպանիան, ո՛չ էլ Չինաստանը հնարավորություն չստացան ԱՄՆ-ում ռազմական նյութեր ձեռք բերելու, որոնք անհրաժեշտ էին ֆաշիստական ագրեսիային հակահարված տալու համար։ Իսկ ֆաշիստական բլոկի պետությունները, որոնք ստեղծել էին սեփական ռազմական արդյունաբերություն, չէին զգում ամերիկյան սպառազինության մատակարարումների հատուկ անհրաժեշտությունը։ Նրանք ավելի շատ շահագրգռված էին այնպիսի կարևոր ստրատեգիական նյութեր ձեռք բերելու մեջ, ինչպիսիք էին նավթը, ավիամոտորները, մետաղի ջարդոնը։ Քանի որ «չեզոքության» վերաբերյալ օրենքը չէր արգելում այդ նյութերի արտահանությունը, ապա և՛ Գերմանիան, և՛ Իտալիան, և՛ Ճապոնիան կարող էին անարգել կերպով դրանք գնել ԱՄՆ-ում։

30-ական թվականների վերջերին, Գերմանիայի և Ճապոնիայի ագրեսիայի մասշտաբների ընդլայնմանը և ԱՄՆ-ի ու ֆաշիստական բլոկի երկրների միջև հակասությունների սրմանը համապատասխան Ֆ. Ռուզվելտը և ԱՄՆ-ի մյուս հեռատես քաղաքական գործիչները մի շարք դեպքերում սկսեցին ավելի վճռական դիրք գրավել։ Նրանք չէին կարող նաև հաշվի չառնել հակաֆաշիստական շարժման աճը հենց Միացյալ Նահանգներում։ Ֆ. Ռուզվելտը հանդես եկավ մի շարք հայտարարություններով, որոնց մեջ դատապարտվում էին ֆաշիստական բլոկի երկրների ագրեսիվ գործողությունները։ Դրանց մեջ առավել կարևորը 1937 թ. հոկտեմբերի 5-ին Չիկագոյում Ֆ. Ռուզվելտի արտասանած ճառն էր, ուր ամերիկյան պրեզիդենտը կոչ էր անում միավորել

բոլոր խաղաղասեր ժողովուրդների ջանքերը ագրեսիվ տերությունների շուրջը «կարանտին» սահմանելու նպատակով։ Զգալիորեն ակտիվացան Միացյալ Նահանգների ռազմական պատրաստությունները։ Վերջապես, 1939 թ. հունվարին Ռուզվելտն առաջարկեց վերանայել «չեզոքության» մասին օրենքը։

Սակայն գործնականում երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը շեշտակի հակասություններ մեջ ընկավ այն սկզբունքների հետ, որոնք հռչակվել էին Ֆ. Ռուզվելտի «կարանտինային ճառում»։ Մերժելով կոլեկտիվ անվտանգության սիստեմ ստեղծելու վերաբերյալ առաջարկությունները, որոնք առաջադրվում էին Սովետական Միության կողմից, ԱՄՆ-ը Անգլիայի ու Ֆրանսիայի հետ շարունակում էր «շմիջամտության» քաղաքականությունը, Գերմանիայի ու Ճապոնիայի «խաղաղեցման» քաղաքականությունը, որը դարձավ ֆաշիստական ագրեսիայի խրախուսման քաղաքականություն։ Դրա լավագույն ապացույցը եղավ 1938 թ. Մյունխենյան խայտառակ գործարքի պաշտպանությունը ԱՄՆ-ի կառավարող շրջանների կողմից։

«Չեզոքության» քաղաքականության պահպանումը զգալիորեն բացատրվում էր ԱՄՆ-ի կառավարող շրջաններում գոյություն ունեցող «իզոլյացիոնիստական» հոսանքի ազդեցությամբ։ Իզոլյացիոնիստների ազդեցության տակ կոնգրեսը 1939 թ. հունիսին նույնիսկ հրաժարվեց «չեզոքության» մասին օրենքը վերանայելուց։ Սակայն Ռուզվելտի կառավարությունն ինքն էլ բավարար վճռականություն հանդես չբերեց «չեզոքության» քաղաքականության վերանայման համար մղվող պայքարում։ Ամերիկյան բուրժուազիայի «հակաիզոլյացիոնիստական» շրջաններին այդ տարիներին ամենևին էլ խորթ չէին ֆաշիստական ագրեսիան Սովետական Միության դեմ ուղղելու ձգտումները։ Ահա թե ինչու, չնայած Ֆ. Ռուզվելտի մի շարք վճռական հայտարարություններին, ԱՄՆ-ի կառավարությունը պաշտպանում էր ֆաշիստական ագրեսորներին «խաղաղեցնելու» քաղաքականությունը։ Այդ կարճատես քաղաքականության հետևանքների համար աշխարհի ժողովուրդները ստիպված էին վարձահատույց լինել երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։

Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսի» պատմագրությունը

Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսի» ամերիկյան բուրժուական պատմագրությունն արտակարգ ընդարձակ է։ Այն իր սկիզբն առնում է քաղաքական այն վիճաբանություններում, որոնք ծավալվեցին ԱՄՆ-ում 30-ական թվականների կեսերին։ Սակայն «Նոր կուրսի» պատմության առավել խոշոր ուսումնասիրությունները հանդես եկան 1950 թ.-ից հետո, երբ պատմաբանները հնարավորություն ստացան օգտվելու Հայդ պարկի (Նյու Յորքի նահանգ) Ֆ. Ռուզվելտի գրադարանի նյութերից, որտեղ պահպանվում է ԱՄՆ-ի 32-րդ պրեզիդենտի անձնական արխիվը և գրագրությունը։ Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսի» ժամանակաշրջանի ավելի խոր ուսումնասիրությանը նպաստեցին նաև «Նոր կուրսի» մի շարք գործիչների հուշերի և օրագրերի (Հ. Իկես, Հ. Մորգենտաու, Ռ. Թագվել, Ֆ. Պերկինս և ուրիշներ) բազմաթիվ հրատարակությունները։

Ամերիկյան պատմաբանների մեծամասնությունը, որոնք իրենց հետազոտությունները նվիրել են Ֆ. Ռուզվելտի կառավարության գործունեության տարբեր ասպեկտներին, պատկանում է նեոլիբերալ ուղղությանը։ Այդ ուսումնասիրությունների մեջ առավել մեծ արժեք են ներկայացնում Ա. Շլեզինգերի, Ֆ. Ֆրեյդելի, Ռ. Հոֆստեդտերի, Է. Գոլդմենի, Դ. Բերնսի, Դ. Պերկինսի, Ու. Լեյխտենբերգի և մյուսների աշխատությունները[2]։ Իրենց պատմական կոնցեպցիայում նեոլիբերալ ուղղության պատմաբանները ելնում են այն բանից, որ Միացյալ Նահանգների պատմական զարգացումն ընթանում է իբր լիբերալ ավանդույթների անշեղ ընդլայնման ուղիով, հասարակական զարգացման կարիքներին կապիտալիզմի աստիճանաբար առաջադիմորեն հարմարվելու ուղիով։ Այդ պատմաբանների բարձր հետաքրքրությունը «Նոր կուրսի» ժամանակաշրջանի հանդեպ կապված է հենց այն բանի հետ, որ Ֆ. Ռուզվելտի գործունեությանն այդ առաջադիմական պրոցեսում նրանք արամադրում են կենտրոնական տեղերից մեկը։ Նրանք ջանում են ապացուցել, որ «Նոր կուրսի» ռեֆորմները հասցրին սոցիալական սուր պրոբլեմների խաղաղ լուծմանը և Ամերիկայի վերածմանը «համընդհանուր բարեկեցության պետության»։

«Նոր կուրսի» նեոլիբերալ պատմագրության արմատական արատներից մեկն այն է, որ 30-ական թվականների ռեֆորմները այդ պրոցեսի պատմաբանների աշխատություններում ներկայացված են ոչ թե որպես դասակարգային պայքարի և զանգվածային ժողովրդական շարժումների արդյունք, այլ որպես պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտի և նրա խորհրդականների գործունեության արդյունք, որտեղ հերթական անգամ իր արտահայտությունն է գտել իբր ամերիկյան քաղաքական սիստեմին հատուկ լիբերալ ավանդույթը։ Այդ պատճառով բուրժուա-լիբերալ պատմաբանների ներկայացմամբ ԱՄՆ-ի 32-րդ պրեզիդենտը որպես «Նոր կուրսի» «ստեղծող» պատվավոր տեղ է գրավում Ամերիկայի պատմության մեջ եղած մեծ ռեֆորմատոր-պրեզիդենտների շարքում (Թ. Ջեֆերսոն, Է. Ջեկսոն, Ա. Լինկոլն, Թ. Ռուզվելտ, Վ. Վիլսոն, Ֆ. Ռուզվելտ)։ Նման մոտեցումը «Նոր կուրսի» վերաբերյալ հարցերի ողջ նեոլիբերալ պատմական գրականությանը տալիս է ջատագովական բնույթ և դրանով իսկ զգալիորեն նվազեցնում նրա գիտական արժանիքը։

Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսի» հետպատերազմյան ամերիկյան պատմագրության մեջ գոյություն ունի նաև ռեակցիոն ուղղություն, որի ներկայացուցիչները հանդես են գալիս ԱՄՆ-ի 32-րդ պրեզիդենտի գործունեության բացասական գնահատականով։ Շարունակելով այն գիծը, որը 30-ական թվականներին սկսել էին Ֆ. Ռուզվելտի քաղաքական հակառակորդները, ԱՄՆ-ի ֆինանսական կապիտալի առավել ռեակցիոն շրջանների ներկայացուցիչները, այդ ուղղության պատմաբանները Ռուզվելտին մեղադրում են նրա քաղաքականության «սոցիալիստական» ուղղվածության մեջ, «ամերիկյան իդեալների» դավաճանության մեջ, «ռադիկալներին խրախուսելու» մեջ։ «Նոր կուրսի» հետպատերազմյան ռեակցիոն պատմագրության համար հատկապես բնորոշ է Է. Ռոբինսոնի «Ռուզվելտյան ղեկավարություն» գիրքը[3]։

Սակայն ամբողջ հետպատերազմյան ժամանակաշրջանի ընթացքում և

---

[2] Տե՛ս **A. M. Schlesinger**, Jr. The Age of Roosevelt, vv. 1-3 („The Crisis of the Order, 1919—1932", „The Coming of the New Deal", „The Politics of Upheaval"). Boston, 1957—1960; F. Freidel, Franklin D. Rossevelt. The Apprenticeship. Boston, 1952; F. Freidel F. D. R. The Ordeal. Boston, 1954; F. Freidel, F. D. R. The Triumph; Boston, 1956; F. Friedel. F. D R. Launching the New Deal. Boston, 1978; R. Hofstadter. The Age of Reform. From Bryan to F. D. R. N. Y., 1955, E. Goldman, Rendezvous with Destiny. N. Y., 1952; I. M. Burns, Roosevelt: the Lion and the Fox. N. Y., 1956; D. Perkins, The New Age ef Franklin D. Roosevelt, 1932—1945. Chicago, 1957, W. E. Leuchtenburg. Franklin D. Roosevelt and the New Deal, 1932—1940 N. Y., 1963.

[3] Տե՛ս **E. Robinson**, The Roosevelt Leadership, 1933—1945. N. Y., 1955.

առանձնապես սկսած 50-ական թվականների երկրորդ կեսից «նոր կուրսի» ամերիկյան բուրժուական պատմագրության զարգացումն անցնում է Ֆ. Ռուզվելտի քաղաքականության ռեակցիոն մեկնաբանության նկատմամբ լիբերալ-բուրժուական մեկնաբանման բացահայտ գերիշխման նշանաբանի տակ։ Է. Ռորինսոնի գիրքը և դրա նման հրատարակությունները նույնիսկ բուրժուական պատմաբանների միջավայրում գնահատվեցին որպես իրենց ոգով ոչ բավարար օբյեկտիվ և ծայրահեղ պահպանողական։ Ժամանակակից ամերիկյան պատմագրության մեջ «նոր կուրսի» նեոլիբերալ կոնցեպցիայի գերիշխումը զգացվում է նաև ԱՄՆ-ի պատմության վերաբերյալ ընդհանուր աշխատությունների մեծ մասում։

Բուրժուա-լիբերալ ուղղության պատմաբանների մեծ մասի աշխատություններում Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսի» անդուսպ ջատագովությունը 60-ական թվականներին հանդիպեց այսպես կոչված նոր ձախերի դպրոցին հարող ռադիկալ պատմաբանների խմբի դիմադրությանը։ Ժամանակակից ամերիկյան պատմագրության մեջ այդ նոր ուղղության հանդես գալը կապված էր 60-ական թվականներին ԱՄՆ-ում դասակարգային պայքարի շեշտակի սրման հետ, զանգվածային դեմոկրատական շարժման ուժեղ վերելքի հետ, նեգրերի ազատագրական պայքարի զարգացման հետ։ «Նոր ձախերի»՝ 60-ական թվականներին ԱՄՆ-ում լույս տեսած բազմաթան աշխատությունների մեջ կան նաև մի քանի խոշոր աշխատություններ, որոնք նվիրված են Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսին»։ Այդ աշխատությունների հեղինակները (Բ. Բեռնստայնը, Լ. Գարդները, Հ. Զիննը, Պ. Կոնկինը և ուրիշներ)[4] ճիշտ են բացահայտում 30-ական թվականներին Ֆ. Ռուզվելտի կառավարության անցկացրած ռեֆորմների սահմանափակությունը, մատնանշում են այն, որ «նոր կուրսը» նպաստեց կապիտալիզմի ամրապնդմանը և այդ պատճառով էլ չէր կարող լուծել ամերիկյան հասարակության առջև կանգնած ֆունդամենտալ պրոբլեմները։ Սակայն «նոր ձախերի» աշխատությունների թույլ կողմը, ամերիկյան մարքսիստ պատմաբանների գնահատմամբ[5], նիհիլիստական մոտեցումն է «նոր կուրսի» պրոբլեմների նկատմամբ, Ֆ. Ռուզվելտի քաղաքականության մեջ եղած դրական կողմերի ժխտումը, 30-ական թվականներին ԱՄՆ-ի քաղաքական կյանքում հանդես եկած զանգվածային շարժումների անած դերի չմերժելը։

Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսի» առավել օբյեկտիվ և բազմակողմանի գնահատական է տրված մարքսիստ պատմաբանների աշխատություններում։ Այդ ժամանակաշրջանի ուսումնասիրության գործում մեծ ավանդ մուծեցին ամերիկյան մարքսիստ պատմաբանների գրքերն ու հոդվածները (Ու. Ֆոստեր, Հ. Ապտեկեր, Գ. Գրին և ուրիշներ)։

Սովետական Միությունում դեռ 30—40-ական թվականներին երևան եկան «նոր կուրսի» պրոբլեմներին նվիրված առաջին խոշոր աշխատությունները[6]։ Այդ պրոբլեմների խոր ուսումնասիրությունը 60-ական թվականներին և 70-ական թվականների սկզբին շարունակվեց Ն. Ն. Յակովլևի, Ն. Վ. Սիվաչևի, Վ. Լ. Մալկովի, Դ. Գ. Նաջաֆովի գրքերում[7], ինչպես նաև բազմաթիվ այլ սովետական պատմաբանների գրքերում ու հոդվածներում։

Սակայն մինչ այժմ «նոր կուրսի» ժամանակաշրջանի ԱՄՆ-ի սոցիալ-քաղաքական պատմության շատ կարևոր ասպեկտներ մարքսիստական պատմագրության մեջ դեռ մնում են անբավարար ուսումնասիրված։ Այսպես, օրինակ, համեմատաբար քիչ ուսումնասիրված են մնում 30-ական թվականների զանգվածային դեմոկրատական շարժումները։ Լրացուցիչ ուսումնասիրության կարիք է զգում ամերիկյան իզոլյացիոնիզմի և երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ԱՄՆ-ի քաղաքական կյանքում նրա խաղացած դերի բարդ պրոբլեմը։ Վերջապես, դեռ միայն ամենաառաջին քայլերն են կատարված 30-ական թվականների վերջերին, Ֆ. Ռուզվելտի «նոր կուրսի» ավարտական ժամանակաշրջանում ԱՄՆ-ում ծավալված ներքաղաքական պայքարի ուսումնասիրության բնագավառում։ Այդ բոլորը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ի պատմության մեջ այդ կարևոր ժամանակաշրջանի ուսումնասիրության ասպարեզում մարքսիստ պատմաբանների հետագա հետազոտությունների համար դեռ շատ մեծ ասպարեզ կա։

---

[4] Տե՛ս B. Bernstein, ed. Tovards a New Past; Dissenting Essays in American History. N. Y., 1968; L. Gardner, Economic Aspects of New Deal Diplomacy. Madison, 1964; H. Zinn, ed., New Deal Thought. N. Y., 1966; P. Conkin, The New Deal. N. Y., 1967.

[5] Տե՛ս H. Aptheker. Attempting a New History. „Political Affairs", Aug., Sept., 1968.

[6] Տե՛ս С. Далин. Экономическая политика Рузвельта. М., 1936; В. Лан. США от первой до второй мировой войны. М., 1947;

[7] Տե՛ս Н. Н. Яковлев. Франклин Рузвельт—человек и политик. М., 1965; Н. В. Сивичев. Политическая борьба в США в середине 30-х годов. М., 1966; В. Л. Мальков и Д. Г. Наджафов. Народ США—против войны и фашизма, 1933—1939. М., 1969; В. Л. Мальков. «Новый курс» в США. Социальные движения и социальная политика. М., 1973;

ԳԼՈՒԽ 9

ԻՏԱԼԻԱՆ
1918—1939 ԹԹ.

Պատերազմի հետևանքներն Իտալիայի համար

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Իտալիան, այն ժամանակ տարածված արտահայտությամբ, իրեն զգում էր «պարտված՝ հաղթողների մեջ»։ Պատերազմի ընթացքում նա կորցրեց մոտ 700 հազ. մարդ սպանված, ավելի քան 1 մլն մարդ հաշմանդամ դարձավ։ Երկրի հյուսիսային մասի բերքառատ պրովինցիաները ռազմական գործողություններից ամայացան։ Առևտրական նավատորմը զրկվեց իր նավերի գրեթե 60 տոկոսից։ Ռազմական ծախսերը հասցրին բյուջեի մեծ դեֆիցիտի. պետական ներքին պարտքն աճեց 1914 թ. 15,3 մլրդ լիրայից մինչև 49,9 մլրդ լիրայի՝ 1919 թ.։ Իտալիան դարձավ պատերազմում իր դաշնակիցների, գլխավորապես Միացյալ Նահանգների (1,5 մլրդ) և Անգլիայի (2,5 մլրդ) պարտատերը։

1915 թ. Լոնդոնում համաձայնագիր ստորագրելով Անտանտի հետ, Իտալիան հույս ուներ ստանալ հյուսիսում՝ Տրենտինոն և Հարավային Տիրոլը, արևելքում Տրիեստը, Իստրիան և Դալմացիան։ Բայց Անգլիան ու Ֆրանսիան շահագրգռված չէին Միջերկրական ծովում Իտալիայի ուժեղացմամբ։ Փարիզի հաշտության կոնֆերանսում նրանք ամեն հնարավոր բան արեցին, որպեսզի սահմանափակեն Իտալիայի տերիտորյալ հավակնությունները։ Իտալական պահանջներին վճռականորեն առարկում էր ամերիկյան պրեզիդենտ Վիլսոնը, որը կաշկանդված չէր Լոնդոնի համաձայնագրի պարտավորություններով։ Փարիզի կոնֆերանսի հետևանքով Իտալիային անցավ Իստրիայի արևմտյան մասը՝ Տրիեստի, Պոլայի և Հորիցիայի հետ միասին, բայց նա ո՛չ Դալմացիան ստացավ, ո՛չ էլ Ֆիումեն, որին հատկապես ձգտում էին իտալական նացիոնալիստները։

Պատերազմի կարիքներն առաջացրին ծանր արդյունաբերության զգալի աճ։ Ագրարային երկրից Իտալիան վերածվեց ագրարային-ինդուստրիալ երկրի։ Առանձնապես ուժեղ զարգացում ստացավ մետալուրգիական, մեքենաշինական և քիմիական արդյունաբերությունը։ Պետական վարկերի օգնությամբ հզոր կոնցերններ դարձան այնպիսի ընկերություններ, ինչպես «Անսալդոն», «Իլվան»՝ ծանր ինդուստրիայի, «Ֆիատը» ավտոմոբիլաշինության մեջ, «Բրեդան» ռազմական հանդերձանքի արտադրության ասպարեզում։ Այդ նույն ժամանակ միջին և հատկապես մանր շատ ձեռնարկատերեր ստիպված էին կրճատել արտադրությունը, իսկ նրանցից մի քանիսն էլ սնանկացան։ Այսպիսով, պատերազմը նպաստեց խոշոր կապիտալի դիրքերի ամրապնդմանը և նրա հզորության աճին։

Պատերազմն ավարտվելուց հետո իտալական արդյունաբերությունը ծանր դրության մեջ ընկավ։ Քանի որ բացակայում էր բավականաչափ տարողունակ ներքին շուկան, իսկ ավանդական արտաքին առևտրական կապերը խզվել էին, ծայր առավ արտադրության շեշտակի անկումը, որը 1920 թ. վերածվեց տնտեսական ճգնաժամի։ Երկրի ֆինանսական տնտեսությունը քայքայված էր. կենտրոնական բանկերի և կառավարության ոսկու պաշարը զգալիորեն կրճատվեց, իսկ շրջանառության մեջ գտնվող թղթադրամների քանակը աճեց 8 անգամ։ Չափազանց ծանր էր գյուղատնտեսության վիճակը, որտեղ բանվորական ձեռքերի պակասը հասցրեց ցանքատարածությունների խիստ կրճատման։ Անկում էր ապրում ցորենի և մյուս հիմնական կուլտուրաների արտադրությունը։ Գյուղում ուժեղացավ շերտավորման պրոցեսը. ունևոր գյուղացիների մի մասը զբաղվելով պարենամթերքի սպեկուլյացիայով, հարստացավ, բայց գյուղացիական տնտեսությունների մեծ մասն աղքատանում էր և սնանկանում։ Պատերազմն առանձնապես կործանարար ազդեցություն ունեցավ քաղաքային բնակչության դրության վրա։ Նույնիսկ 1919—1920 թթ. հաջող գործադուլներից հետո էլ բանվորների ռեալ աշխատավարձը չհասավ նախապատերազմյան մակարդակին։ Ինֆլյացիան խիստ վատացրեց ծառայողների և չինովնիկների դրությունը։ Զորացրված զինվորներն ու սպաները չէին կարողանում իրենց համար աշխատանք գտնել։ 1919 թ. երկրորդ եռամսյակում, պաշտոնական տվյալներով, որոնք բացահայտորեն նվազեցված են, գործազուրկների թիվը հասավ 390 հազ. մարդու։

Դասակարգային պայքարի սրումը

Իտալիայի բանվոր դասակարգը համեմատաբար երիտասարդ էր, քանի որ երկրի ինդուստրացումը տեղի ունեցավ ավելի ուշ, քան Եվրոպայի մյուս երկրներում։ 1921 թ. բոլոր բանվորների կեսից ավելին զբաղված էր գյուղատնտեսության մեջ։ Բանվորները համեմատաբար թույլ էին կազմակերպված, իսկ նրանց գաղափարական մակարդակը դեռ բավարար չափով բարձր չէր։ Պատերազմը սկսվելուց դեռ ոչ շատ առաջ ստեղծված աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի (ԱԸԿ) գլուխ էր կանգնած ռեֆորմիստ Դ՝ Արագոնան, իսկ սոցիալիստական կուսակցության մեջ նշանավոր դեր էին կատարում ռեֆորմիստները՝ Տուրատիի գլխավորությամբ։ Բայց իտալական պրոլետարիատի հեղափոխական ոգին բարձր էր։

Պատերազմի ծանր հետևանքները, գործազրկության աճը և աշխատավոր զանգվածների դրության վատացումը դասակարգային պայքարի սրման գլխավոր պատճառներ հանդիսացան, պայքար, որը վերածվեց 1919—1920 թթ. հեղափոխական ճգնաժամին։ Հեղափոխական տրամադրությունների աճի վրա խոր ազդեցություն ունեցավ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակը։ «Անել այնպես, ինչպես Ռուսաստանում» լոզունգը չափազանց մեծ ժողովրդականություն էր վայելում բանվորական միջավայրում։ Պատերազմի տարիներին իտալական բանվորների առավել վճռական ելույթը՝ 1917 թ. օգոստոսին տեղի ունեցած Թուրինյան զինված ապստամբությունը, ոգեշնչվում էր ռուսական պրոլետարիատի օրինակով։ Պատերազմն ավարտվելուց հետո, երբ իտալական աշխատավորները հնարավորություն ստացան ավելի լավ իմանալու, թե ինչ է կատարվում Ռուսաստանում, Հոկտեմբերի փորձի և գաղափարների ժողովրդականությունն արտասովոր չափով աճեց։ Վ. Ի. Լենինի անունը դարձավ հույսի խորհրդանշան, նրա դիմանկարները կարելի էր տեսնել բանվորական ակումբներում և գյուղացիների տներում։

Պատերազմն ավարտվելուց անմիջապես հետո գործադուլային շարժումը չափազանց լայն թափ ստացավ։ Եթե 1918 թ. անցկացվեց 292 գործադուլ, ապա արդեն 1919 թ. դրանց թիվն աճեց մինչև 1871։ Գործադուլային շարժումն ամենամեծ լարվածության հասավ 1920 թ.։ Այդ տարվա ընթացքում տեղի ունեցավ 2070 գործադուլ, որոնց մասնակցեց ավելի քան 2 մլն մարդ։

Պայքարը տեղի էր ունենում աշխատավարձի բարձրացման, աշխատանքային օրվա կրճատման համար, ընդդեմ գների բարձրացման։ Գործադուլների թափն ու համառությունը ձեռնարկատերերին ստիպում էին զիջումների դիմելու, և գործադուլների զգալի մասն ավարտվեց բանվորների հաղթանակով։

Այդ ժամանակ ակտիվորեն էին հանդես գալիս Իտալիայի հյուսիսային մասի բանվորները, հարավի բատրակներն ու կիսբար վարձակալները։ Գյուղատնտեսական բանվորների արհմիութենական կազմակերպությունը (Ֆեդերտերրա) ձգտում էր հասնել այն բանին, որպեսզի սահմանվի 48-ժամյա աշխատանքային շաբաթ, բանվորական ուժի վարձակալությունը տեղի ունենա արհմիությունների միջոցով, ընդարձակվեն գյուղացիական հողատիրությունները և այլն։ Ի պաշտպանություն այդ պահանջների անց էին կացվում շատ գործադուլներ, իսկ մի շարք շրջաններում գյուղացիները ինքնակամ զավթում էին կալվածատիրական ամայի կամ վատ մշակվող հողերը։ Պայքարը գյուղում այնպիսի չափեր ընդունեց, որ կառավարությունը ստիպված էր բավարարել գյուղացիների մի քանի պահանջները։ Օրենսդրական կարգով սանկցիա տրվեց գյուղացիների զավթած չմշակվող հողակտորների նրանց սեփականության անցմանը, իջեցվեց հողի վարձակալության վճարը և ճանաչվեցին արհմիութենական կազմակերպությունների իրավունքները։

Աշխատավորների հեղափոխական տրամադրությունների վերելքն իր արտահայտությունը գտավ սոցիալիստական կուսակցության շարքերի աճի մեջ։ Պատերազմն ավարտվելուց հետո առաջին երկու տարիներին նրա անդամների թիվը հասավ մոտ 200 հազ. մարդու, որը 4 անգամ գերազանցում էր նրա նախապատերազմյան թվաքանակը։ Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիան, որին ղեկավարում էին սոցիալիստները, դարձավ աշխատավորների առավել մասսայական կազմակերպությունը, որը միավորում էր ավելի քան 2 մլն մարդ։ 1918 թ. սեպտեմբերին կայացած նրա համագումարում սոցիալիստական կուսակցությունն առաջադրեց իշխանության հեղափոխական գրավման պահանջ՝ «խաղաղության և կապիտալիստների ունեզրկման ծրագրի հիման վրա», իսկ հաջորդ համագումարում (1919 թ. հոկտեմբեր) հայտարարեց Կոմունիստական ինտերնացիոնալին իր միանալու մասին։

Սակայն սոցիալիստական կուսակցության ներսում միասնություն չկար։ Նրա մեջ գոյություն ունեցած ֆրակցիաները կուսակցության քաղաքականության կարևորագույն հարցերի կապակցությամբ տարբեր հայացքների էին հետևում։ Կուսակցության աջ թևը ներկայացնում էին ռեֆորմիստները՝ իտալական սոցիալիզմի հին գործիչ Տուրատիի գլխավորությամբ։ Նա ձգտում էր կուսակցությունը տանել պառլամենտական ու արհմիութենական պայքարի ուղիով և հանդես էր գալիս հեղափոխական մեթոդների դեմ։ Ռեֆորմիստների առաջնորդները շարունակում էին ազդեցություն ունենալ աշխատավորության մի մասի վրա և ուժեղ դիրքեր ունեին կուսակցության պառլամենտական ֆրակցիայում, ինչպես նաև ԱԸԿ-ի ղեկավարության մեջ։ Կուսակցության ծայրահեղ թևը կազմում էին արստենցիոնիստները (բոյկոտիստները), որոնք 1919 թ. ամռանը դարձան ինքնուրույն հոսանք։ Նրանք հեղափոխական անհապաղ գործողությունների կողմնակից էին, առաջադրում էին պրոլետարիատի դիկտատուրայի պահանջ և ձգտում էին հասնել ռեֆորմիստների վտարմանը կուսակցության շարքերից։ Բոյկոտիստների պարագլուխ Բորդիգան մի շարք կարևոր հարցերի կապակցությամբ կանգնած էր ձախ, աղանդավորական դիրքերի վրա. նա հանդես էր գալիս բուրժուական պառլամենտին մասնակցելու դեմ, չհասկանալով ժողովրդի լայն զանգվածներին հեղափոխական գործողությունների մեջ ներգրավելու անհրաժեշտությունը։

Կուսակցության մեջ ամենաուժեղ խումբը մաքսիմալիստներն էին, այսինքն՝ մաքսիմում ծրագրի կողմնակիցները։ Նրանք հանդես էին գալիս պրոլետարիատի դիկտատուրայի օգտին, բայց չունեին գործողությունների բավականաչափ հստակ պլան։ Մաքսիմալիստները ղեկավար դիրք էին գրավում կուսակցության կենտրոնական մարմիններում և վերահսկում էին կուսակցական «Ավանտի» թերթը։ Նրանց առաջնորդները՝ Սերրատին, Լաձարին և Ջենարին դատապարտում էին ռեֆորմիստներին, բայց գտնում էին, որ այնպիսի հեղինակավոր պարագլուխներ, ինչպես Տուրատին և Դ'Արագոնան, անփոխարինելի են արհմիությունների ղեկավարության մեջ և պառլամենտում։ Սոցիալիստական կուսակցության մեջ գոյություն ունեցած ֆրակցիաներից ոչ մեկը հետևողականորեն մարքսիստական չէին։ Նման վիճակը թույլատրում էր նրա՝ որպես աշխատավորության առաջնորդի, դերը և իտալական հեղափոխական շարժման համար ծայրահեղ բացասական հետևանքներ ունեցավ։

Կառավարող լագերի ճգնաժամը և ֆաշիզմի ծնունդը

Իտալական բուրժուազիան մինչև պատերազմը չկարողացավ ստեղծել իր ուժեղ քաղաքական կուսակցությունը։ Գոյություն ունեցող քաղաքական միավորումներն իրենցից ներկայացնում էին բուրժուական գործիչների ոչ մեծաթիվ խմբեր, որոնք պաշտպանում էին պառլամենտի այս կամ այն դեպուտատին։ Պառլամենտում առավել մեծ ազդեցություն ունեին լիբերալները, որոնց ձախ թևը գլխավորում էր Ջոլիտին։ Նա ճկուն քաղաքականության կողմնակից էր, հասկանում էր խուսանավելու և ժողովրդական զանգվածներին որոշ զիջումներ անելու անհրաժեշտությունը։ Լիբերալների ձախ թևին էր հարում նաև Օռլանդոն, որը 1917—1919 թթ. եղել էր պրեմիեր։ Բուրժուական մյուս խմբավորումները՝ հանրապետականները, ռադիկալներն ու դեմոկրատները մինչ պատերազմը իրական ուժ չէին ներկայացնում և պառլամենտում աննշան ներկայացուցչություն ունեին։

Հեղափոխական վերելքի աճը երկրում տագնապ առաջացրեց կառավարող դասակարգի շրջանում և նրան ստիպեց հենարան որոնել քաղաքական նոր կազմավորումներում։ Այդ ուղղությամբ նախաձեռնություն հանդես բերեցին կաթոլիկական շրջանները, որոնք 1919 թ. ստեղծեցին Ժողովրդական կուսակցությունը («պոպոլյարների»)։ Նոր կուսակցությունը պետք է իր շուրջը համախմբեր կաթոլիկ աշխատավորների լայն զանգվածներին, իրենց միջավայրում թույլ չտալով սոցիալիստական գաղափարների տարածում։ Այդ նպատակով Ժողովրդական կուսակցության ղեկավար, սիցիլիացի եռանդուն քահանա դոն Ստուրցոն առաջադրեց ռեֆորմների բավական լայն ծրագիր՝ սկսած պետական բյուրոկրատական ցենտրալիզմի դեմ պայքարելուց ընդհուպ մինչև խոշոր լատիֆունդիաների բաժանումը և նրանց հողի հանձնումը գյուղացիներին։ Նոր կուսակցությանը պաշտպանում էր կաթոլիկ եկեղեցու ապարատը, նրան ի սպաս էր դրված ֆինանսական այնպիսի խոշոր միավորում, ինչպիսին էր Հռոմի բանկը։ Դա Ժողովրդական կուսակցությանը թույլ տվեց պրոպագանդիստական լայն կամպանիա ծավալել, այն էլ առաջին հերթին գյուղի աշխատավորության շրջանում, որտեղ կրոնական զգացումներն ավելի ուժեղ էին։ Այն դեպքում, երբ սոցիալիստական կուսակցությունը կողմնորոշվում էր դեպի գյուղատնտեսական պրոլետարիատը և առաջադրում հողի սոցիալացման ծրագիր, Ժողովրդական կուսակցությունը ելնում էր հողը անձնական սեփականություն ստանալու գյուղացու ձգտումներից։ Դրա հետևան-

քով գյուղացիների զգալի մասը աջակցություն էր ցույց տալիս ոչ թե սոցիալիստական, այլ ժողովրդական կուսակցությանը։ Շուտով ժողովրդական կուսակցությունը ստեղծեց սեփական արհմիութենական կազմակերպություն՝ Աշխատավորների իտալական կոնֆեդերացիան, որի մեջ 1920 թ. կար ավելի քան մեկ միլիոն անդամ։

Ժողովրդական կուսակցության կազմավորման հետ մեկտեղ Իտալիայում առաջացավ ֆաշիստական շարժումը։ 1919 թ. մարտի 23-ին Միլանում տեղի ունեցավ «ֆաշի դի կոմբատիմենտո» (մարտական միություններ) նոր կազմակերպության հիմնադիր ժողովը։ Նրա ղեկավար Մուսոլինին, որը 1914 թ. աշնանը վտարվել էր սոցիալիստական կուսակցությունից պատերազմում Իտալիայի մասնակցության օգտին ելույթներ ունենալու համար, այդ նույն ժամանակ էլ հիմնեց «Պոպոլո դ՝ Իտալիա» թերթը։ Այն շովինիստական և հակասոցիալիստական կամպանիա ծավալեց, միաժամանակ հարձակվելով լիբերալ կառավարությունների վրա։ 1919 թ. գարնանը բուռն գործունեություն ծավալած Մուսոլինիի շուրջ համախմբվեց մարդկանց մի խայտաբղետ խումբ, որը բաղկացած էր նախկին սինդիկալիստներից, ռենեգատ-սոցիալիստներից, ֆուտուրիստ գրականագետներից և ռազմաճակատային սպաներից։ Նրանք բոլորը միավորվեցին սոցիալիզմի հանդեպ ունեցած թշնամությամբ, շովինիստական տրամադրություններով, ուժեղ իշխանություն ունենալու ձգտումով։ Ֆաշիստներն սկզբնապես հանդես էին գալիս որպես կուսակցական կազմակերպության հակառակորդներ, աշխատելով իրենց շարժմանը տալ ավելի լայն բնույթ։ Սպեկուլացիա անելով ժողովրդականություն վայելող լոզունգներով և հաճախակի փոխելով դրանք, նրանք աշխատում էին հարմարվել մասսաների տրամադրություններին։ Իրենց ամբողջ պրոպագանդան ֆաշիստներն այդ ժամանակ կենտրոնացնում էին արտաքին քաղաքական հարցերի վրա, հանդես գալով ծայրահեղ շովինիզմի դիրքերից և համերաշխվելով իտալական նացիոնալիստների հետ։ Նացիոնալիստների ղեկավար, հայտնի գրող-դեկադենտ Դ՝ Անունցիոն հանդես էր գալիս ուժի միջոցով Իտալիայի տերիտորիալ հավակնությունների իրականացմանը հասնելու պահանջով։ 1919 թ. սեպտեմբերին նրա գլխավորած նացիոնալիստների ջոկատները գավթեցին Ֆիումեն։ Ֆիումեի և Դալմացիայի անեքսիայի պահանջը ֆաշիստական շարժման հիմնադիր դեկլարացիայի հիմնական կետերից մեկն էր։ Այդ պահանջը չէր իջնում «Պոպոլո դ՝ Իտալիայի» էջերից։

Ինչ վերաբերում է ներքին քաղաքականության հարցերի վերաբերյալ ֆաշիստների լոզունգներին, ապա դրանք այն ժամանակ զգալիորեն պայմանավորված էին մասսաներին սոցիալիստական կուսակցությունից հեռացնելու ձգտմամբ և կրում էին ցուցադրական ռադիկալ բնույթ։ 1919 թ. աշնանը հանդես գալով նախընտրական ծրագրով, ֆաշիստները պահանջեցին գումարել սահմանադիր ժողով, իրենց հռչակում էին 8-ժամյա աշխատանքային օրվա, կապիտալի վրա պրոգրեսիվ հարկ դնելու, թոշակային տարիքը նվազեցնելու և նման այլ բաների կողմնակիցներ։

Չնայած ֆաշիստների սոցիալական դեմագոգիային, խոշոր կապիտալի ներկայացուցիչներն արագորեն հասկացան ֆաշիստական շարժման իսկական բնույթը և սկսեցին նրան ֆինանսական օգնություն ցույց տալ։ 1919 թ. աշնանը ֆաշիստները ձեռնամուխ եղան զինված ջոկատների ստեղծմանը, որոնց համար նրանք կադրեր էին հավաքագրում առաջին հերթին ռազմաճակատային սպաներից, ազգայնականորեն տրամադրված մանր բուրժուազիայից և բուրժուական ուսանողությունից։ Ֆաշիստական շարժումն այն ժամանակ դեռ հեռու էր մասսայականի վերածվելուց. 1919 թ. հոկտեմբերին այն հաշվվում էր ընդամենը 17 հազ. անդամ։

Ֆաբրիկա-գործարանային խորհուրդներ ստեղծելու շարժումը և ֆաբրիկաների զավթումը 1920 թ.

1919—1920 թթ. դասակարգային պայքարն Իտալիայում մեծ սրության հասավ։ Տնտեսական խոշոր գործադուլները ավելի ու ավելի հաճախակի էին միահյուսվում աշխատավորության քաղաքական հզոր ելույթների հետ։ Այսպես, 1919 թ. հուլիսին տեղի ունեցավ համազգային երկօրյա գործադուլ ի պաշտպանություն Սովետական Ռուսաստանի և Հունգարական Սովետական Հանրապետության։ Հակասովետական ինտերվենցիայում Իտալիայի մասնակցության դեմ ուղղված բողոքի լայն շարժման ազդեցության տակ լիբերալ Ֆ. Նիտտիի կառավարությունը ստիպված էր ետ կանչել զորքերը Ռուսաստանից և դադարեցնել Վրաստանում ռազմական էքսպեդիցիայի մինչ այդ սկսված նախապատրաստությունը։ Նա խոստացավ սահմանել 8-ժամյա աշխատանքային օր, իջեցրեց առաջին անհրաժեշտության որոշ ապրանքների գները, քաղաքական բանտարկյալների ներում հայտարարեց և հասարակական աշխատանքներ կազմակերպեց գործազուրկների մի մասի համար։

1919 թ. նոյեմբերին տեղի ունեցան պատերազմից հետո առաջին պառլամենտական ընտրությունները, որոնք պետք է կատարվեին ներկայացուցչության համամասնական սիստեմի հիման վրա։ Սոցիալիստները հավաքեցին երեք անգամ ավելի ձայներ, քան 1913 թ., և պառլամենտում ստացան 156 տեղ։ Նրանք վերածվեցին երկրում ամենախոշոր քաղաքական կուսակցության։ Նշանակալի էր ժողովրդական կուսակցության հաջողությունը, որը ձեռք բերեց 100 տեղ։ Զգալի լուրջ պարտություն կրեց իտալական բուրժուազիայի «ավանդական» կուսակցությունը՝ լիբերալներինը։ Իրենց հարող խմբերի հետ միասին լիբերալները ստացան 200-ից պակաս տեղեր և հիսուն տարվա մեջ առաջին անգամ պառլամենտում կորցրին բացարձակ մեծամասնությունը։ Ֆաշիստները կարողացան պառլամենտ անցկացնել ընդամենը մեկ դեպուտատ։ Ընտրությունները նշանավորեցին կառավարող դասակարգի նախկին խմբավորումների պարտությունը, խմբավորումներ, որոնք երկար տարիներ կառավարում էին երկիրը։ Քաղաքական կյանքի առաջին պլան մղվեց այն կուսակցությունը, որն իր նպատակն էր հռչակում սոցիալիստական հասարակության կառուցումը։ Աշխատավորության լայն զանգվածները սոցիալիստական կուսակցությունից վճռական գործողություններ էին սպասում այդ ուղղությամբ։ Սակայն սոցիալիստները շարդարացրին նրանց ակնկալությունները։ Հրաժարվելով կառավարությանը մասնակցելուց, նրանք այդ նույն ժամանակ մասսաներին հեղափոխական գործողությունների էին կոչում։ Սոցիալիստների անվճռականության և ժողովրդական կուսակցության ցույց տրված աջակցության շնորհիվ լիբերալներին հաջողվեց վերադառնալ իշխանության գլուխ։ 1919 թ. մինչև 1922 թ. Իտալիայում փոխվեց հինգ մինիստրություն, որոնց գլխավորում էին Ֆ. Նիտտին, Ջ. Ջոլիտտին, Ի. Բոնոմին և Լ. Ֆակտան։

Դասակարգային պայքարն այդ ժամանակ էլ ավելի սրվեց։ 1920 թ. գարնանն անցկացվեցին համազգային գործադուլներ. փետրվարին ամբողջ Իտալիայում գործադուլ էին անում քիմիական արդյունաբերության 200 հազ. բանվորներ։ Դրանից անմիջապես հետո համազգային գործադուլ անցկացրին Հռոմի, Նեապոլի, Ջենովայի, Բոլոնիայի և Իտալիայի այլ քաղաքների պետական ձեռնարկությունների բանվորները։ Արտակարգ ուժեղացավ գյուղացիական

շարժումը։ Գյուղում տեղի ունեցած ելույթների թվաքանակը մնում էր 1919 թ. մակարդակի վրա, բայց դրանց մասնակիցներինն աճեց երկու անգամ, գերազանցելով մեկ միլիոն մարդուց։ Այդ ելույթների թվաքանակը նույնպես աճեց կրկնակի։

1920 թ. Իտալիայի բանվոր դասակարգը առաջին անգամ բարձրացրեց հեգեմոնիա նվաճելու հարցը, շարժում ծավալելով հանուն ֆաբրիկա-գործարանային խորհուրդների։ Այդ խորհուրդների գաղափարը պատկանում էր սոցիալիստական կուսակցության Թուրինյան սեկցիային, որի գլուխ էին կանգնած Ա. Գրամշին, Պ. Տոլյատտին և Ու. Տերաչինին։ 1919 թ. մայիսի 1-ից նրանց խումբը հրատարակում էր «Օրդինե նուովո» («Նոր կարգ») շաբաթաթերթը և Իտալիայում առաջինն սկսեց յուրացնել Հոկտեմբերյան հեղափոխության փորձը։ Նրա ճանաչված ղեկավար Անտոնիո Գրամշին հիմնավորեց պատերազմի ժամանակ Իտալիայում ստեղծված ֆաբրիկա-գործարանային հանձնաժողովների՝ ֆաբրիկա-գործարանային խորհուրդների վերածման անհրաժեշտությունը։ Նա առաջարկում էր դրանք դարձնել պետական իշխանության նվաճման համար բանվոր դասակարգի մարտական մարմիններ։ «Օրդինե նուովո» խմբի ծրագիրը, որը վերնագրված էր «Հանուն սոցիալիստական կուսակցության վերափոխման», Վ. Ի. Լենինի առաջարկությամբ Կոմինտերնի II կոնգրեսի մասնակիցների կողմից ճանաչվեց որպես III Ինտերնացիոնալի բոլոր հիմնական սկզբունքներին համապատասխանող։

Ֆաբրիկա-գործարանային առաջին խորհուրդներն ստեղծվեցին «Ֆիատ» գործարաններում, ապա այդ շարժումը տարածվեց Թուրինի մյուս ձեռնարկություններում։ 1920 թ. մարտ-ապրիլին ձեռնարկատերերը կառավարության օգնությամբ փորձեցին ճնշել շարժումը։ Թուրինի բանվորները պատասխանեցին ընդհանուր գործադուլով, որին մասնակցեց մոտ կես միլիոն աշխատավոր։ Թուրինի արդյունաբերությունը տաս օր կազմալուծվել էր, իսկ շարժումը գլխավորող մետաղագործների գործադուլը տևեց մի ամբողջ ամիս։ Թուրինի բանվորների հետ համերաշխության գործադուլները տարածվեցին ամբողջ Պյեմոնտում և Հյուսիսային Իտալիայի մյուս մարզերում։ Սակայն ֆաբրիկային խորհուրդներ ստեղծելու շարժումը Թուրինի սահմաններից այն կողմ չանցավ, որովհետև նրա դեմ հանդես եկան ինչպես ռեֆորմիստները, այնպես էլ սոցիալիստական կուսակցության ղեկավարության մաքսիմալիստները։ Թուրինյան գործադուլի անհաջողությունը չէր նշանակում բանվորական շարժման պարտություն, թեև դրանից հետո պրոլետարիատի մեջ սկսեցին նկատվել հոգնածության նշաններ։

Այդ նույն թվականի օգոստոսին, ի պատասխան լոկաուտ հայտարարելու Միլանի արդյունաբերողների փորձերի, բանվորները գրավեցին բոլոր մետալուրգիական ձեռնարկությունները։ Նրանց օրինակին հետևեցին Թուրինի, Ջենովայի, Հռոմի և մյուս քաղաքների մեքենաշինական արդյունաբերության բանվորները, տեքստիլագործներն ու նավաշինարարները։ Սեպտեմբերի սկզբին շարժման մեջ ընդգրկվեց գրեթե ամբողջ երկիրը։ Ձեռնարկությունները գրաված բանվորներին ակտիվորեն աջակցում էին երկաթուղայիններն ու կապի աշխատողները։ Այդուհանդերձ ֆաբրիկաների զավթման շարժումը չվերաճեց իշխանության նվաճման համար պրոլետարիատի մղած պայքարի։ Սոցիալիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն հեռացավ շարժման ղեկավարությունից, այն հանձնելով աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի ռեֆորմիստներին։ ԱԸԿ-ի ղեկավար Դ'Արագոնան պնդում էր, որպեսզի բանվորների պահանջները դուրս չգային ձեռնարկություններում հսկողություն

սահմանելու շրջանակներից։ 1920 թ. հունիսից կառավարությունը գլխավորող քաղաքական խուսանավման վարպետ Ջոլիտին ԱԸԿ-ին անհապաղ առաջարկեց դրա հիման վրա բանակցություններ սկսել։ Սեպտեմբերի 19-ին ստորագրվեց ֆաբրիկա գրավելը դադարեցնելու վերաբերյալ համաձայնագիր։ Արդյունաբերողները տնտեսական մի շարք էական զիջումների դիմեցին. նրանք պարտավորվեցին բարձրացնել աշխատավարձը, բանվորներին խոստացան աշխատավարձ վճարել այն ամբողջ ժամանակաշրջանի համար, որի ընթացքում ձեռնարկությունները գտնվում էին նրանց ձեռքում, և բռնության որևէ միջոցներ չձեռնարկել ընդդեմ գործադուլավորների։ Բացի այդ, կառավարությունն արդյունաբերողների համաձայնությամբ խոստացավ ձեռնարկությունների բանվորական վերահսկողության մասին օրենք անցկացնել։

Ռեֆորմիստները բանվորներին հավաստիացնում էին, որ այդ համաձայնագրերով նման պայմաններում ձեռք է բերված հնարավոր առավելագույնը։ Իրականում շարժման արդյունքները չէին համապատասխանում նրա թափին։ Իտալիայի աշխատավորությունը հիասթափված էր, առավել ևս որ կառավարությունը չկատարեց իր տված խոստումների մեծ մասը։

Իտալական կոմունիստական կուսակցության ստեղծումը

Սեպտեմբերյան իրադարձություններն առաջավոր բանվորներին ու սոցիալիստներին հստակորեն ցույց տվեցին, որ անհաջողությունների պատճառները պետք է որոնել հեղափոխական ղեկավարության բացակայության մեջ։ Դա սրեց պայքարը սոցիալիստական կուսակցության մեջ և արագացրեց նրանում արդեն նշմարվող պառակտումը։

Կոմինտերնի II կոնգրեսից հետո, որը խիստ դատապարտեց իտալական ռեֆորմիստներին, սկսեց ձևավորվել ձախ հոսանքը, որը պահանջում էր սահմանադատվել ոչ միայն ռեֆորմիստներից, այլև նրանցից, ովքեր պաշտպանում էին նրանց։ 1921 թ. հունվարի 21-ին Լիվորնոյում տեղի ունեցած սոցիալիստական կուսակցության համագումարում Բորդիգան, Տերաչինին և ձախ թևի մյուս ներկայացուցիչներն առաջարկեցին կուսակցությունից վտարել ռեֆորմիստներին։ Մաքսիմալիստական մեծամասնությունը մերժեց այդ պահանջը. մաքսիմալիստների բանաձևին տրվեց 98 հազ. ձայն, այն դեպքում, երբ ձախերի բանաձևը ստացավ 58 հազ. ձայն։ Այդ ժամանակ ձախ թևի ներկայացուցիչները դուրս եկան համագումարից և հիմնեցին Իտալիայի կոմունիստական կուսակցությունը՝ Կոմունիստական ինտերնացիոնալի սեկցիան։

Նոր կուսակցության կազմի մեջ մտան աբստենցիոնիստների (բոյկոտիստների) խումբը՝ Բորդիգայի գլխավորությամբ, «Օրդինե նուովո» խումբը, որը գլխավորում էր Գրամշին, և մաքսիմալիստների ձախ թևի մի քանի ներկայացուցիչներ։ Բոյկոտիստների ֆրակցիան ամենամեծաթիվն էր նոր կուսակցության մեջ։ Բացի այդ, նա միակ խումբն էր, որն անկախ սոցիալիստական կուսակցության պաշտոնական ապարատի, շատ քաղաքներում ուներ իր սեփական բջիջները։ Այդ բոլորը հասցրեց նրան, որ կուսակցության գլուխ հայտնվեց Բորդիգան, տեսականորեն ամենանվազ պատրաստված խմբի ղեկավարը, մի մարդ, որին Վ. Ի. Լենինը խիստ քննադատում էր ձախ թեքման և աղանդավորության համար։ Չնայած դրան, կոմունիստական կուսակցության ստեղծումը Իտալիայի բանվոր դասակարգի կարևոր նվաճումն էր, որը մեծ նշանակություն ուներ երկրում հեղափոխական շարժման հետագա զարգացման համար։

Ռեակցիայի հարձակման անցնելը: Ֆաշիստական շարժման աճը

Հեղափոխական շարժման 1920 թ. սեպտեմբերին սկսված անկումից անհապաղ օգտվեց ռեակցիան։ 1921 թվականից Հյուսիսային Իտալիայում սկսեց արագորեն զարգանալ ֆաշիստական շարժումը։ Նացիոնալիստական լողունգների և սոցիալական դեմագոգիայի միջոցով ֆաշիստներին այդ ժամանակաշրջանում հաջողվեց բնակչության մի մասին գրավել իրենց կողմը։ Շարժման մեջ էին մտնում սեփականատերերի բազմաթիվ ու բազմազան խմբեր, որոնք ահաբեկված էին բանվոր դասակարգի ելույթներից և ձգտում էին այնպիսի «կարգ» հաստատել, որը նրանց խոստացել էին ֆաշիստական ղեկավարները։ Մանր կրպակատերերն ու արհեստանոցների տերերը, ծառայողներն ու չինովնիկները, ազատ պրոֆեսիաների տեր մարդիկ և ուսանողությունը, որոնց մի մասը հեղափոխական վերելքի ժամանակաշրջանում տրամադրված էր խոշոր բուրժուազիայի դեմ, այժմ արագորեն անցնում էր պրոլետարիատի հակառակորդների լագերը։ Քաղաքային միջին խավերի անկազմակերպ զանգվածի մեջ, որն Իտալիայում բնակչության մեծ տոկոս էր կազմում, տարածվում էր այն կարծիքը, որ սոցիալիստական կուսակցությունն ընդունակ է պրոլետարիատի պայքարն ուղղելու միայն դեպի նրա շահերի պաշտպանությունը և մոռանում է ավելի լայն խավերի հոգսերը։

Ոչ պակաս նկատելի էր գյուղական բնակչության տրամադրություններում եղած շրջադարձը։ Ունևոր գյուղացիների հետ միասին մանր սեփականատերերի մի մասը թշնամաբար էր վերաբերվում հողի սոցիալացման վերաբերյալ սոցիալիստների առաջադրած գաղափարին։ Նրանցից շատերը բատրակների և չքավորագույն գյուղացիության ելույթներում տեսնում էին անարխիայի արտահայտություն և սկսեցին հակվել դեպի «ուժեղ իշխանություն» հաստատելու գաղափարը։

Լայն արձագանք գտավ ֆաշիստների՝ արտաքին քաղաքական իրադարձությունների հետ առնչված նացիոնալիստական պրոպագանդան։ 1920 թ. նոյեմբերին Հարավսլավիայի հետ կնքվեց Ռապալոյի պայմանագիրը, որը վերջնականորեն որոշում էր Իտալիայի դրությունը հետպատերազմյան Եվրոպայում։ Իտալական կառավարությունն ստիպված էր համաձայնել Ֆիումեի հռչակմանը ինքնուրույն հանրապետության և իր զորքերն ուղարկել, որպեսզի այդ քաղաքից վռնդեն Դ'Անունցիոյի «կամավորներին»։ Իրադարձությունների նման շրջադարձը հիվանդագին ընդունվեց սեփականատերերի ամենալայն խավերի կողմից և բուռն ռեակցիա առաջացրեց նախկին ռազմաճակատային-ների և երիտասարդության մեջ։ Օգտագործելով այդ տրամադրությունները, ֆաշիստները սոցիալիստներին մեղադրում էին հայրենասիրության բացակայության, իսկ կառավարությանը՝ հանցագործ թուլության մեջ։ Նրանք բարձրաձայն վկայակոչում էին հին Հռոմի անցյալը և ընդգծում, որ մտադիր են դառնալու «ազգային վերածնության դարաշրջանի» ժառանգորդները։

1921 թ. ֆաշիստական շարժումը վերածվեց ազդեցիկ ուժի։ Եթե այդ թվականի հունիսին նրա շարքերում հաշվվում էր 180 հազ. մարդ, ապա վեց ամիս անց ֆաշիստների թիվը 300 հազարից գերազանցեց։ Դրան զգալի չափով հաջողվեց հասնել իշխող դասակարգի ցույց տված բազմակողմանի աջակցության շնորհիվ։ Ֆաշիստների ֆինանսավորումը արդյունաբերողների և խոշոր հողատերերի կողմից, որոնք նրանց մեջ տեսնում էին հակահեղափոխական ուժերի ավանգարդին, լայն մասշտաբներ ընդունեց։ Ինչ վերաբերում է լիբերալներին, ապա նրանք գտնում էին, որ սոցիալիստների դեմ մղած բ-

-ռենց պայքարով ֆաշիստները կշեղոքացնեն վերջիններիս և կոգնեն կառավարող հին խմբերին մնալու իշխանության գլուխ։

1921 թ. նոյեմբերին ֆաշիստները հավաքվեցին համագումարի, որտեղ պաշտոնապես հռչակվեց կուսակցության ստեղծումը։ Ֆաշիստները հրապարակեցին մի ծրագիր, որի առանցքն էր «ազգի վերածնության» գաղափարը։ Ազգը հռչակվում էր մարդկային հասարակության կազմակերպման բարձրագույն ձևը, ազգի ծառայությանը պետք է ենթարկվեին նրա անդամների շահերը։ Արտադրական հարաբերությունների կարգավորման համար ծրագիրն առաջարկում էր պետության տնտեսական ֆունկցիաների մի մասը հանձնել կորպորացիաների, այսինքն՝ արտադրողների տարբեր կատեգորիաների ներկայացուցիչների ձեռքը։ Զգալիորեն փոխվեց ֆաշիստների վերաբերմունքն իշխող դասակարգերի այն խմբերի հանդեպ, որոնցից նրանք ոչ առանց հիմքի հույս ունեին օժանդակություն ստանալ։ 1919 թ. ֆաշիստական շարժման հիմնադիրներն այն հռչակեցին հակաբուրժուական. երկու տարի անց Մուսոլինին հայտնագործեց «աշխատավոր բուրժուազիա» տերմինը և ամեն կերպ ընդգծում էր այդ բուրժուազիայի օգտակար դերն ազգի կյանքում։ Նախկինում ֆաշիստները բարձրաձայն հայտարարում էին, որ իրենք միապետության սկզբունքային հակառակորդներ են, այժմ Մուսոլինին ասում էր, որ միապետությունն անհրաժեշտ է որպես ազգային ավանդույթների խորհրդանշան։ Աթեիստներից ու հակակղերականներից ֆաշիստները վերածվեցին կրոնի ու Վատիկանի կողմնակիցների, այն Վատիկանի, որը «մարմնավորում էր Իտալիայի համաշխարհային փառքը»։

Վերափոխման ենթարկվեցին ֆաշիստների նաև մյուս դրույթները։ Սկզբունական ժամանակաշրջանում ֆաշիստները դատապարտում էին քաղաքական կուսակցությունների բռնադատումը և հանդես գալիս հասարակությանը «պոլիտիկաններից» ազատագրելու օգտին։ 1921 թ. աշնանը ֆաշիստները ստեղծեցին քաղաքական կուսակցություն և սկսեցին նրա մեջ սահմանել հիերարխիական խիստ կարգապահություն։ Սևվերնաշապիկավորների զինված ջոկատները վերակազմվեցին ֆաշիստական միլիցիայի՝ կուսակցության ռազմական կազմակերպության։

Իրենց գլխավոր հակառակորդի՝ պրոլետարիատի գիտակից ավանգարդի նկատմամբ ֆաշիստներն սկզբից ևեթ բռնեցին բացահայտ տեռորի ուղին։ Քողարկվելով «ազգի պաշտպանության» լողունգով, նրանք իրենց առաջին հարվածներն ուղղեցին սոցիալիստական ու կոմունիստական կուսակցությունների, բանվոր դասակարգի դասակարգային արհմիութենական կազմակերպությունների և դեմոկրատական թերթերի դեմ։ Արդեն 1920 թ. աշնանը ֆաշիստական ջոկատները կատարեցին մի շարք տեռորիստական հարձակումներ, գլխավորապես Պո գետի հովտի գյուղական վայրերում։ Նոյեմբերի 21-ին նրանք ներխուժեցին Բոլոնիա քաղաքի քաղաքապետարանի շենքը, որը ղեկավարում էին սոցիալիստները, և ցրեցին այն։ Ֆաշիստների անկարգություններն էլ ավելի մեծ թափ ստացան 1921 թ.։ Առաջին կիսամյակի ընթացքում նրանք հարձակումներ կատարեցին աշխատավորների դեմոկրատական 726 կազմակերպությունների վրա։

Ժողովրդական մասսաները տեղի ունեցածի անմասնակից վկաներ չէին լինում։ 1921 թ. ամռանը նախկին ռազմաճակատային հակաֆաշիստների նախաձեռնությամբ սկսեցին առաջանալ «ժողովրդական խիղախների» ջոկատները, որոնց ընդհարումները ֆաշիստների հետ երբեմն ընդունում էին արյունալի ճակատամարտերի բնույթ։ Մի շարք դեպքերում այդ ջոկատները սևվեր-

նաշապիկավորներին ստիպում էին նահանջել, թեև ֆաշիստները զգալիորեն ավելի լավ էին զինված։ Սակայն «ժողովրդական խիզախների» շարժումը, որը կարող էր հիմք դառնալ հակաֆաշիստական ուժերի միավորման համար, անհրաժեշտ աջակցություն չստացավ բանվոր դասակարգի կուսակցությունների կողմից։

Սոցիալիստական կուսակցությունը, որը 1921 թ. պահպանել էր կուսակցական բջիջների լավ կազմակերպված ցանցը, շարունակում էր ազդեցություն ունենալ բանվոր դասակարգի մեջ և կարող էր հակահարված կազմակերպել ֆաշիստների դեմ, սակայն նա բացահայտորեն թերագնահատում էր ֆաշիստական վտանգը։ Սոցիալիստների առաջնորդներն ընթացան «պասսիվ դիմադրության» ուղիով, որի էությունը կայանում էր բռնի գործողություններից հրաժարվելու մեջ այն հույսով, թե նման ձևով կհաջողվի ձեռք բերել հասարակական կարծիքի աջակցությունը։ Սոցիալիստները ոչինչ չարեցին բանվորական ինքնապաշտպանության ջոկատներ ստեղծելու համար և հանդես էին գալիս «ժողովրդական խիզախների» ջոկատներում մասնակցելու դեմ։ Ավելին, 1921 թ. օգոստոսին սոցիալիստական կուսակցությունը ֆաշիստների հետ կնքեց «խաղաղեցման պակտ», որի համաձայն երկու կողմերը պարտավորվեցին ձեռնպահ մնալ բռնություն գործադրելուց, որպեսզի քաղաքացիական պատերազմ թույլ չտան։ Այդ պակտը վնասակար պատրանքներ էր ստեղծում այն մասին, որ կարելի է ֆաշիստների հետ պայմանավորվել խաղաղ միջոցներով։ Այն օգտակար էր ֆաշիստներին, որոնք պակտը դիտում էին որպես տակտիկական մանևր և շուտով էլ սկսեցին բացահայտ կերպով խախտել նրա պայմանները։

Ի տարբերություն սոցիալիստների, կոմունիստները հանդես էին գալիս ֆաշիստների դեմ զինված պայքարի օգտին, բայց դեռ բավարար ուժեր չունեին, որպեսզի գլխավորեին հակաֆաշիստական շարժումը։ Բորդիգան արտահայտվում էր հակաֆաշիստական ուժերի միավորման դեմ, նա հրաժարվում էր աջակցություն ցույց տալ «ժողովրդական խիզախներին» և պնդում էր, որ հարկավոր է ստեղծել սեփական կուսակցական մարտական ջոկատներ։ Նա այդ ժամանակ կուսակցության գլխավոր խնդիրն էր համարում հեղափոխության նախապատրաստությունը, այլ ոչ թե ֆաշիզմից պաշտպանվելը։ Դրա մեջ արտահայտվում էր ֆաշիստական սպառնալիքի թերագնահատումը։ ԻԿԿ-ի ղեկավարության քաղաքական դիծը խիստ քննադատության ենթարկվեց 1921 թ. հուլիսին տեղի ունեցած Կոմինտերնի III կոնգրեսում։ Սակայն կոմկուսի՝ 1922 թ. մարտին կայացած երկրորդ համագումարում Բորդիգայի կողմնակիցներն արտահայտվեցին Կոմինտերնի հանձնարարած միասնական բանվոր դասակարգի տակտիկայի դեմ։

Բանվորական շարժումը 1921 թ. ընթանում էր դեպի անկում։ Գործադուլների ընդհանուր թիվը շարունակում էր բավական բարձր մնալ, բայց գործադուլավորների թիվը նախորդ տարվա համեմատությամբ կրճատվեց ավելի քան երկու անգամ, իսկ գլխավորը՝ գործադուլների մեծ մասն ավարտվեց բանվորների պարտությամբ։

Ֆաշիստների անցումը իշխանության գլուխ

1922 թ. աշնանը Իտալիայում հաստատվեց երկիշխանության նման մի բան։ Իշխանությունների լիակատար անգործության պայմաններում ֆաշիստները ջախջախում էին մեկ քաղաքի բանվորական ու դեմոկրատական կազմակերպությունները մյուսի ետևից։ Մուսոլինին իր օգնականներին հրաման տվեց նախապատրաստել պետական հեղաշրջում։ Հոկտեմբերի 24-ին ելույթ ունենալով Նեապոլում կայացած ֆաշիստական կուսակցության համագումարում, նա վերջնագիր ներկայացրեց կառավարությանը, ֆաշիստների համար պահանջելով վեց մինիստրական պորտֆելներ։ Երբ այն ժամանակվա պրեմիեր Ֆակտան սկսեց առարկություններ անել նրա հետ, Մուսոլինին ամբողջ Իտալիայի ֆաշիստներին կոչ արեց հոկտեմբերի 28-ին կազմակերպել «արշավ դեպի Հռոմ»։ Այդ օրը դեպի մայրաքաղաք շարժվեցին ֆաշիստների զինված զորասյունները, որոնք հագել էին սև վերնաշապիկներ։ Նրանք դիմադրության չհանդիպեցին. Վիկտոր-Էմանուիլ թագավորը հրաժարվեց պաշարողական դրություն հայտարարել և զորքեր մտցնել մայրաքաղաք։ Դրա փոխարեն հաջորդ օրը նա Մուսոլինիին առաջարկեց զբաղեցնել կառավարության ղեկավարի պաստը։ Պառլամենտում քվեարկելու ժամանակ բուրժուական կուսակցությունների 306 դեպուտատներ իրենց ձայնը տվեցին նոր կառավարությանը վստահություն հայտնելու օգտին. դեմ քվեարկեց 102 դեպուտատ՝ կոմունիստները, սոցիալիստները և հանրապետականների մի մասը։

Այսպիսով, կառավարող դասակարգի ներկայացուցիչները իշխանությունը հանձնեցին ֆաշիստների ձեռքը։ Մուսոլինիի առաջին կառավարությունը կոալիցիոն էր. մինչև 1923 թ. ապրիլը նրա մեջ մտնում էին Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները, մինչև 1924 թ. վերջը՝ լիբերալները։ Այդ ժամանակ դեռ գոյություն ունեին դեմոկրատական կուսակցություններ, արհմիություններ ու օպոզիցիոն մամուլ։ Դրա հետ մեկտեղ Մուսոլինին անմիջապես իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին դիկտատորական իշխանության հաստատմանը։ Ի շրջանցումն սահմանադրության նա ստեղծեց «ֆաշիստական մեծ խորհուրդ», որի մեջ մտան կուսակցության ղեկավարության անդամները, ֆաշիստ մինիստրները և կուսակցական տեղական ղեկավարները։ Այդ մարմինը քննարկում էր բոլոր դեկրետներն ու օրենքները դրանք պառլամենտ մտցնելուց առաջ և փաստորեն վերահսկում կառավարության գործունեությունը։ Է՛լ ավելի մեծ նշանակություն ունեցավ ֆաշիստական «ազգային անվտանգության կամավոր միլիցիայի» իրավաբանական ճանաչումը 1923 թ. հունվարին և նրա հանձնումը անմիջականորեն կառավարության ղեկավարի հրամանատարությանը։ Դրանով իսկ սևվերնաշապիկավոր ավազակները ներգրավվեցին պետության սիստեմի մեջ, որը նրանց գործողություններին տալիս էր օրինականության տեսք։

Այն ժամանակվա իր ելույթներում Մուսոլինին անփոփոխ կերպով խոսում էր «աշխատավոր դասակարգերի» հանդեպ իր ունեցած սիրո մասին։ Սակայն գործնականում նոր կառավարության միջոցառումները ելնում էին խոշոր բուրժուազիայի շահերից։ Ցրվեց ռազմական շահույթների հետաքննության հանձնաժողովը և ընդունվեցին մասնավոր խոշոր ձեռնարկությունների զարգացմանը նպաստող դեկրետներ։ Կառավարությունը կրճատեց ուղղակի հարկերը և ավելացրեց անուղղակիները, մի բան, որը շոշափում էր աշխատավորության նյութական շահերը։ Հարձակում ծավալվեց բանվոր դասակարգի նվաճումների վրա, ֆաբրիկա-գործարանային կոմիտեներն արգելվեցին և դրանց փոխարեն նշանակվեցին կառավարական կոմիսարներ։ Արդյունաբերողները ձեռնարկություններում աշխատանքի ռեժիմ սահմանելու իրավունք ստացան։ Վերացվեց գործադրկության դեմ ապահովագրվելու մասին օրենքը։ Գյուղում ֆաշիստները միջոցներ ձեռնարկեցին ունևոր գյուղացիների և կալվածատերերի դրությունն ամրապնդելու համար։

Ուժեղացան տեռորիստական գործողություններն ընդդեմ դեմոկրատական կազմակերպությունների ու գործիչների։ Այսպես, 1922 թ. դեկտեմբերի լույս

18-ի գիշերը ֆաշիստները կազմակերպեցին Թուրինի ակտիվիստ բանվորների մասսայական ջարդ. սպանվեց ավելի քան 20 մարդ։ 1923 թ. սկզբին մի քանի օրվա ընթացքում բանտերը նետվեց կոմունիստական կուսակցության ղեկավարների ու ակտիվիստների մեծ մասը, ընդամենը մոտ 5 հազ. մարդ։ Ֆաշիստներն ավելի ու ավելի քիչ էին հաշվի նստում բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչների հետ։ 1923 թ. նոյեմբերին նրանք ավերեցին նախկին պրեմիեր Նիտտիի բնակարանը, իսկ մեկ ամիս անց հարձակվեցին պառլամենտի բուրժուական օպոզիցիայի պարագլուխներից մեկի՝ Ջովաննի Ամենդոլայի վրա։

«Մատեոտտիի ճըգնաժամը»։ Ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը

1924 թ. ապրիլին տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, որոնք անցկացվեցին ֆաշիստների նախապատրաստած նոր ընտրական օրենքի հիման վրա։ Այդ օրենքի համաձայն, այն կուսակցությունը, որը հավաքում էր ձայների 50 տոկոսից ավելին, ըստանում էր պառլամենտում եղած տեղերի ոչ պակաս քան երկու երրորդը։ Սանձարձակ տեռորի իրադրության մեջ տեղի ունեցած ընտրություններում այլ լիբերալների բլոկի հետ հանդես եկած ֆաշիստներին հաջողվեց հավաքել 4,5 մլն ձայն, այն դեպքում երբ մյուս բոլոր կուսակցություններն ստացան մոտ 3,5 մլն ձայն։

Պառլամենտի առաջին իսկ նիստերում օպոզիցիայի դեպուտատները հանդես եկան ֆաշիստական անկարգությունների մերկացմամբ։ Մայիսի 30-ին սոցիալիստ Ջակոմո Մատեոտտին ցայտուն ճառ արտասանեց, մերկացնելով ֆաշիստների բռնություններն ընտրական կամպանիայի ժամանակ։ Մի քանի օր հետո ֆաշիստների բանդան նրան բռնեց փողոցում և գաղանաբար սպանեց։ Մատեոտտիի սպանությունը վիթխարի զայրույթ առաջացրեց։ Վախեցած Մուսոլինին ստիպված էր ձերբակալել առավել վարկաբեկված ֆաշիստներին, որոնք, ի դեպ, շուտով ազատվեցին։ Ստեղծվեց այնպիսի դրություն, երբ հասունացած դժգոհությունը կարող էր հասցնել Մուսոլինիի կառավարության տապալմանը։ Բայց դրա համար պահանջվում էին օպոզիցիոն կուսակցությունների վճռական գործողություններ։

Մատեոտտիի սպանությամբ առաջացած ճգնաժամի սկզբում սոցիալիստ դեպուտատները, լիբերալների և ժողովրդական կուսակցության կաթոլիկների մեծ մասը դուրս եկան պառլամենտից և ստեղծեցին «Ավենտինյան բլոկ» անունով հայտնի օպոզիցիոն կուսակցությունների կոմիտե։ Նրանք որոշեցին պառլամենտը բոյկոտի ենթարկել և պահանջում էին Մուսոլինիի կառավարության հրաժարականը։

Կոմունիստական կուսակցությունը, որի գլուխ 1923 թ. վերջից կանգնած էր Անտոնիո Գրամշին, սկզբում հարեց «Ավենտինյան բլոկին» և առաջարկեց մասսաներին ընդհանուր գործադուլի կոչ անել։ Սակայն բուրժուական կուսակցությունների ղեկավարները վախենում էին մասսաների ելույթներից և հույս ունեին Մուսոլինիին հեռացնել թագավորի օգնությամբ, որը ձևականորեն պետության ղեկավարն էր։ Նրանք մի կողմ նետեցին կոմունիստների առաջարկությունները։ Այդ ժամանակ կոմունիստները դուրս եկան «Ավենտինյան բլոկից» և հետո վերադարձան պառլամենտ, որպեսզի նրա ամբիոնից մերկացնեն ֆաշիզմը։

«Մատեոտտիի ճգնաժամի» ժամանակաշրջանում օպոզիցիայի ցուցաբերած թուլությունը նոր ուժ տվեց ֆաշիստներին։ 1925 թ. հունվարին Մուսոլինին հանդես եկավ մի ճառով, որտեղ որոշակիորեն հայտարարեց, որ ֆաշիստներն այսուհետև ոչ մեկի հետ մտադիր չեն կիսել իշխանությունը և պատրաստ են ուժով ճնշելու ամեն տեսակի օպոզիցիա։ Դրանից անմիջապես հետո կառավարությունը վերակազմվեց. իր կազմով այն դարձավ զուտ ֆաշիստական։ Մուսոլինիի հրամանով ներքին գործերի մինիստր Ֆեդերցոնին սկսեց հակաֆաշիստական կազմակերպությունների ջախջախումը և դեմոկրատական գործիչների ձերբակալությունները։

Հուլիսին ֆաշիստները երկրորդ անգամ հարձակվեցին «Ավենտինյան բլոկի» ղեկավար Ջովաննի Ամենդոլայի վրա և նրան վնասվածքներ պատճառեցին, որոնց հետևանքով նա շուտով մահացավ։ Դրանից երկու ամիս հետո ֆաշիստները արյունալի ջարդ կազմակերպեցին Ֆլորենցիայում։ Հոկտեմբերի 4-ի գիշերը նրանք մասսայական հարձակումներ կատարեցին քաղաքի առավել հայտնի հակաֆաշիստների տների վրա. նրանցից շատերն իրենց իսկ ընտանիքների աչքի առջև գաղանաբար սպանվեցին։ Նրանց տները, ովքեր հասցրեցին թաքնվել, թալանվեցին և հրկիզվեցին։

Օպոզիցիայի զինված ճնշման հետ միաժամանակ Մուսոլինին ձեռնամուխ եղավ իր դիկտատուրայի իրավաբանական ամրապնդմանը։ Որպես պատրվակ օգտագործելով Մուսոլինիի դեմ մահափորձի նախապատրաստության վերաբերյալ շշուկները, կառավարությունը 1925 թ. վերջին ընդունեց «կասկածելի» տարրերից պետական ապարատի զտման, թերթերի համարները բռնագրավելու պրեֆեկտների իրավունքի և այլ հարցերի մասին օրենքները։ Հատուկ տեղ էր գրավում 1925 թ. դեկտեմբերի 24-ի օրենքը պրեմիեր մինիստրի իրավունքների մասին։ Դրա համաձայն կառավարության ղեկավարը, այսինքն՝ Մուսոլինին ազատվում էր պառլամենտի առջև ունեցած պատասխանատվությունից և պարտավոր չէր հրաժարական տալ անվստահության քվե ստանալու դեպքում։ Օրենքների նախագծերը չէին կարող պառլամենտի քննարկմանը դրվել առանց կառավարության ղեկավարի նախնական համաձայնության։

Տոտալիտար ֆաշիստական ռեժիմի վերջնական ամրապնդումը տեղի ունեցավ հաջորդ, 1926 թ., որը Մուսոլինին անվանեց իր «նապոլեոնյան» տարին։ 1926 թ. նոյեմբերին Մուսոլինիի դեմ անհաջող մահափորձից հետո կառավարությունն ընդունեց մի շարք «արտակարգ» օրենքներ։ Բոլոր քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները, բացի ֆաշիստներից, ցրվեցին և օրենքից դուրս հայտարարվեցին։ Նախկին օպոզիցիոն կուսակցությունների դեպուտատները վտարվեցին պառլամենտից։ Այսպես կոչված պետության պաշտպանության մասին օրենքը վերականգնում էր մահապատիժը և հիմնում «հատուկ տրիբունալ» հակաֆաշիստների հետ հաշվեհարդար կատարելու համար։

Բանվորական շարժման պարտությունը և ծայրահեղ ռեակցիայի ուժերի հաղթանակը բացատրվում են մի շարք պատճառներով։ Ֆաշիստներն իրենց հարձակումն սկսեցին այն պահին, երբ բանվորական շարժման հետպատերազմյան վերելքն արդեն հասել էր իր ավարտին։ Նրանց հաջողվեց օգտվել բանվորների որոշ շփոթվածությունից, որն առաջացավ նրանց մի շարք անհաջող ելույթների հետևանքով։ Սոցիալ-ռեֆորմիստների գործունեության հետևանքով բանվոր դասակարգը ֆաշիզմի հարձակման պահին ոչ միայն թուլացած էր, այլև զրկված հաստատակամ ղեկավարությունից։ Սոցիալիստական կուսակցության և արհմիությունների պարագլուխները խաղաղեցման իրենց քաղաքականությամբ, ֆաշիստական բանդաներին զինված դիմադրություն ցույց տալուց հրաժարվելով, մեծ վնաս հասցրին բանվոր դասակարգին։ Երիտասարդ իտալական կոմունիստական կուսակցությունը բավականաչափ ուժեր

չուներ այն բանի համար, որպեսզի խոշընդոտեր ֆաշիզմի ճանապարհը։ Նրա գոյության առաջին երկու տարիներին կուսակցության գլուխ էր կանգնած ձախ հոսանքի ներկայացուցիչ Բորդիգան։ Նա ոչ միայն անհանդուրժողականությամբ էր վերաբերվում հակաֆաշիստական լայն ճակատի ստեղծման ամեն մի գաղափարի, այլև գործնականորեն խոչընդոտում էր բանվոր դասակարգի ջանքերի միավորմանը։

Այն դեպքում երբ բանվոր դասակարգի ջոկատները պառակտվեցին, պրոլետարիատի հակառակորդներն ավելի ու ավելի էին համախմբվում ֆաշիզմի շուրջը։ Բուրժուական կուսակցությունները սոցիալիզմի դեմ մղած պայքարում նրա մեջ տեսնում էին իրենց դաշնակցին և գործուն դիմադրություն ցույց չէին տալիս սևերնաշապիկավորների հարձակմանը։ Ֆաշիզմին վճռական աջակցություն ցույց տվեցին իտալական մոնոպոլիստական շրջանները, ագրարային խոշոր գործարարները և թագավորական արքունիքը։

Ֆաշիստների հաջողություններում մեծ դեր խաղաց Մուսոլինին։ Լինելով ճարպիկ պոլիտիկան և լկտի դեմագոգ, որը մղվում էր վիթխարի փառամոլությամբ և չէր զսպվում բարոյական որևէ սկզբունքով, նա ոչ միայն կարողացավ նվաճել կառավարող դասակարգի ղեկավար խմբերի վստահությունը, այլև շատ բանով նպաստեց հակահեղափոխության մասսայական բազայի ստեղծմանը։ Տեռորն ու սոցիալական դեմագոգիան հմտորեն զուգակցելով, ֆաշիստական կուսակցությունը կարողացավ տևականորեն զավթել պետական իշխանությունը։

Իտալական ֆաշիզմի արտաքին քաղաքականությունը

Արտաքին քաղաքականության ասպարեզում ֆաշիստները հանդես էին գալիս որպես իտալական նացիոնալիստների ուղղակի ժառանգորդներ. նացիոնալիստների մեծ մասը 1922 թ. հետո մտավ ֆաշիստական կուսակցության մեջ։ Ֆաշիստների պլանները նախատեսում էին էքսպանսիա Միջերկրական ծովում և տիրապետության հաստատում Մերձավոր Արևելքում։ Սակայն իր կառավարման առաջին տարիներին Մուսոլինին գործում էր շափազանց զգույշ։

1923 թ. Իտալիան փորձեց օկուպացնել Հունաստանին պատկանող Կորֆու կղզին, բայց հանդիպելով Անգլիայի հակազդեցությանը, ստիպված էր էվակուացնել իր զորքերը։

Կորֆուի միջադեպը չհասցրեց անգլո-իտալական հարաբերությունների լուրջ սառեցման։ Անգլիական իմպերիալիստները իտալական ֆաշիզմին դիտում էին որպես կարևոր հենարանի ընդդեմ Եվրոպայի հեղափոխական ուժերի։ Չեմբեռլենը, իսկ հետո նաև Չերչիլը այցելեցին Իտալիա և արեցին այնպիսի հայտարարություններ, որոնց մեջ համակրանք էին հայտնում իտալական ֆաշիզմի ղեկավարի նկատմամբ։ 1926 թ. հունիսին Անգլիան ու Իտալիան պայմանագիր կնքեցին Եթիոպիայում ազդեցության գոտիների վերաբաշխման մասին հօգուտ Իտալիայի։ Մերձեցումը Մեծ Բրիտանիայի հետ Իտալիային թույլ տվեց ուժեղացնել ճնշումը Հարավսլավիայի ու Ալբանիայի նկատմամբ։ 1924 թ. Իտալիայի ու Հարավսլավիայի միջև կնքված պայմանագրի համաձայն Իտալիան ստացավ Ֆիումե նավահանգիստը։ 1926 թ. Իտալիան Ալբանիայի հետ կնքեց «բարեկամության» պայմանագիր, իսկ հաջորդ թվականին այն փաստորեն վերածեց իր պրոտեկտորատի։

1924 թ. սկզբին Իտալիան ճանաչեց Սովետական Ռուսաստանին և նրա հետ հաստատեց դիպլոմատիական հարաբերություններ։ Այդ ակտը տեղի ունեցավ ամենից առաջ սովետական շուկա թափանցելու իտալական արդյունաբերողների ձգտման շնորհիվ, ինչպես նաև իր ռեժիմի հանդեպ ժողովրդական զանգվածների ցուցաբերած թշնամությունը որոշ չափով թուլացնելու՝ Մուսոլինիի ունեցած հույսով։ Ֆաշիստական կառավարության ճարպիկ մաneր եղավ Վատիկանի հետ պայմանագրի կնքումը։ Կաթոլիկական եկեղեցու ղեկավարները հավանությամբ վերաբերվեցին ֆաշիստների իշխանության գլուխ անցնելուն։ Նրանք նույնիսկ չպաշտպանեցին ժողովրդական կուսակցության պարագլուխ դոն Ստուրցոյի բողոքները իր կուսակցությունից հեռացնելու դեմ։ 1929 թ. փետրվարին Հռոմում ստորագրվեցին այսպես կոչված Լատերանյան համաձայնագրերը, որոնց համաձայն Իտալիան ու Վատիկանը միմյանց փոխադարձաբար ճանաչում էին սուվերեն պետություններ։ Իտալիան պարտավորվում էր Հռոմի պապին խոշոր դրամական գումարներ վճարել։ Եկեղեցին ստանում էր գերակշռող ազդեցություն դպրոցական կրթության և ամուսնա-ընտանեկան օրենսդրության ասպարեզում։ Այս զիջումները Մուսոլինիի համար ապահովեցին կաթոլիկ հոգևորականության լայն պաշտպանությունը։ 1929 թ. փետրվարի 14-ին արտասանած իր ճառում Պիոս XI պապը Մուսոլինիին անվանեց մի մարդ, որին «նախախնամությունն է Իտալիա ուղարկել»։

Իտալիայի տնտեսական զարգացումը և 1929—1933 թթ. ճգնաժամը

1921 թ. հետո, որն Իտալիայում եղավ հետպատերազմյան տնտեսական ճգնաժամի կուլմինացիոն կետը, արտադրությունն սկսեց աստիճանաբար աճել։ Դադարեց ինֆլյացիան։ Արդյունաբերության մեջ նկատելի աշխուժացում սկսվեց։ 1922 թ. համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի ինդեքսը 1925 թ. աճեց 50, էլեկտրաէներգիայի սպառումը՝ 75 տոկոսով, պողպատի ձուլումն ավելացավ ավելի քան մեկուկես անգամ։ Դրանում մեծ դեր խաղացին օտարերկրյա փոխառությունները, որոնք ֆաշիստական կառավարությունը ստացավ սկզբում ամերիկյան բանկիրներից, իսկ հետո նաև ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարություններից։

Ոչ մեծ ընդհատումներով արդյունաբերական արտադրությունը շարունակում էր աճել մինչև 1929 թ., երբ համաշխարհային տնտեսական ճգնաժամը Իտալիայում շեշտակի անկման հասցրեց գործարար ակտիվությունը։ Արդեն 1929 թ. վերջին Նյու Յորքի բորսայում սկսված գների կրախը աղետալի ազդեցություն ունեցավ երկրի դրության վրա։ Հատկապես տուժեց տեքստիլ արդյունաբերությունը, որն առաջատար դիրք էր գրավում Իտալիայի էկոնոմիկայում և սերտորեն կապված էր արտաքին շուկայի հետ։ Ճգնաժամային երևույթներն արագորեն տարածվում էին տնտեսության մյուս ճյուղերում, և շուտով անկումը համընդհանուր դարձավ։ Այն շափազանց սուր ձևեր ընդունեց ֆինանսների ասպարեզում։ Ավանդների հանումը հասցրեց իտալական խոշորագույն բանկերում եղած կանխիկ դրամի սպառմանը։ Առաջացավ Իտալական առևտրական բանկի, Իտալական վարկային բանկի, Հռոմի բանկի և մի շարք այլ բանկերի կրախի սպառնալիք, որը քայքայման հասցրեց երկրի ամբողջ տնտեսական կյանքը։

Ճգնաժամի առաջին երեք տարիներին արդյունաբերական արտադրությունն Իտալիայում կրճատվեց մեկ երրորդով, արտաքին առևտուրը՝ երեք անգամ, երկաթուղիների ապրանքաշրջանառությունը՝ ավելի քան 40 տոկոսով։ Ճգնաժամն իր բարձրակետին հասավ 1932 թ.։ Հետո արտադրության անկումը դադարեց, բայց միայն 1937 թ. մոտերքին այն հասավ մինչճգնաժամային ծավալին։ Ճգնաժամի տարիներին խիստ վատացավ իտալական աշխատավո-

թության տնտեսական դրությունը։ Արդյունաբերության մեջ աշխատավարձը կրճատվեց 12—16 տոկոսով։ Է՛լ ավելի նվազեց գյուղատնտեսական բանվորների աշխատավարձը՝ 30-ից մինչև 50 տոկոսով։ 1930 թ. կառավարական դեկրետով պետական ծառայողների աշխատավարձը իջեցվեց 12 տոկոսով։ Գործազուրկների թվաքանակն ավելացավ 5 անգամ և հասավ 1 մլն մարդու։

Ճգնաժամի հետևանքով կրախի մատնվեցին բազմաթիվ մանր ու միջին ձեռնարկություններ, որն արագացրեց արտադրության համակենտրոնացման պրոցեսը։ Դրան նպաստեց նաև մոնոպոլիստական միավորումներին օգնության հասած ֆաշիստական կառավարության քաղաքականությունը։ Խոշոր ձեռնարկություններին ֆինանսավորելու համար ստեղծվեց արդյունաբերական վերակառուցման հատուկ կառավարական ինստիտուտ (ԻՐԻ)։ Այն վարկեր էր տրամադրում խոշոր արդյունաբերողներին, դնում բաժնետոմսեր և ձեռնարկում մի ամբողջ շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին հարկադիր կարտելացմանը արդյունաբերության մեջ։ Ֆաշիստական պետությունը թույլ ձեռնարկություններին պարտավորեցնում էր մտնել պետական-մոնոպոլիստական միավորումների մեջ, որտեղ մի խումբ խոշոր արդյունաբերողների կամքը օրենք էր։ Ճգնաժամի հետևանքով ուժեղացան խոշոր մոնոպոլիաների դիրքերը և զգալիորեն աճեց պետական-մոնոպոլիստական սեկտորն էկոնոմիկայում։

Կորպորատիվ սիստեմի ստեղծումը

1926 թ. արտակարգ օրենքներից հետո լայն ծավալ ստացավ պետության միջամտությունն իտալական հասարակության կյանքի բոլոր ոլորտներում։ 1927 թ. ապրիլին ֆաշիստական մեծ խորհուրդն ընդունեց «Աշխատանքի խարտիան»։ Այդ օրենքը ֆաշիստական արհմիությունները հայտարարում էր աշխատավորության միակ պրոֆեսիոնալ միավորում և հռչակում էկոնոմիկայի ոլորտում պետության միջամտության սկզբունքը։ Պետական տնտեսական քաղաքականության անցկացման մարմիններ պետք է դառնային կորպորացիաները, որոնք ենթադրվում էր ստեղծել արհմիությունների և ձեռնարկատերերի միավորումների ներկայացուցիչներից։ «Կորպորատիվ սիստեմը», ըստ ֆաշիստական պրոպագանդայի հայտարարությունների, պետք է վերջ տար դասակարգային պայքարին և տաներ դեպի սոցիալական համագործակցություն։ Իրականում խոսքը վերաբերում էր ֆաշիստական պետության փորձերին՝ ստեղծելու «կարգապահ» տնտեսություն և «կայուն» սոցիալական օրգանիզմ, որոնք ապահովագրված լինեին ամեն տեսակի ցնցումներից և ընդունակ՝ էքսպանսիոնիստական պլաններին ծառայելու։

Կառավարական դեկրետով 1930 թ. հիմնվեց կորպորացիաների ազգային խորհուրդը, որի անելիքների մեջ էր մտնում իտալական էկոնոմիկայի ընդհանուր ղեկավարության իրականացումը և հարաբերությունների կոորդինացումն արտադրության տարբեր սեկտորների միջև։ Խորհրդին ենթարկվում էին ազգային 22 կորպորացիաներ, որոնք համապատասխանում էին իտալական էկոնոմիկայի հիմնական ճյուղերին։ Այդ կորպորացիաները պետք է որոշեին աշխատանքի պայմանները և խաղաղ միջոցներով կարգավորեին ձեռնարկատերերի ու բանվորների միջև առաջացած կոնֆլիկտները։ Կորպորացիաներում վճռական ձայնը պատկանում էր խոշոր կապիտալի ներկայացուցիչներին։ Կորպորացիայի մեջ մտնող արդյունաբերողների արհմիություններն իրական ուժ էին, այն դեպքում երբ աշխատավորներին ներկայացնում էին ֆաշիստական արհմիությունների չինովնիկները. այդ արհմիությունների ղեկավարները ոչ թե ընտրվում էին շարքային անդամների կողմից, այլ նշանակվում էին վերևից։

1934 թ. մոտերքին Իտալիայի ամբողջ ակտիվ բնակչությունը փաստորեն ընդգրկված էր կորպորատիվ սիստեմի մեջ. բանվորներն ու գյուղացիները, արդյունաբերողներն ու արհեստավորները և նույնիսկ ազատ զբաղմունքի տեր մարդիկ մտնում էին այս կամ այն արհմիության մեջ, որը կոչվում էր կորպորատիվ ֆեդերացիա։ Արհմիությունները մտցվեցին պետական սիստեմի մեջ, և դրանց առջև խնդիր դրվեց իտալացիներին համախմբել ֆաշիզմի շուրջը և նպաստել «նրա վեհության աճին»։

Կորպորացիաները մի քանի միջոցառումներ անցկացրին բանվորական օրենսդրության կարգավորման և սոցիալական ապահովության բնագավառում։ Դրանց թվում առավել մեծախոսոտում միջոցառում էր ձեռնարկություններում 8-ժամյա աշխատանքային օրվա սահմանումը 1933 թ., որն Իտալիայի պայմաններում դիտվում էր որպես գործազրկության կրճատման միջոց։ Սակայն քանի որ ֆաշիստական օրենսդիրները չէին լիմիտավորել արտաժամյա աշխատանքների ժամերը, ձեռնարկատերերը հնարավորություն ունեին սահմանել իրենց շահերին ձեռնտու աշխատօրվա տևողություն։ Գործնականորեն այդ օրենքը, ինչպես և դրան հետևած աշխատանքային շաբաթը մինչև 40 ժամի կրճատելու մասին դեկրետը, մնաց թղթի վրա։

Կորպորատիվ մարմինների գործողությունները էկոնոմիկայում ֆաշիստական պետության միջամտության ամենևին էլ միակ ձևը չէին. մաքսային պրոտեկցիոնիզմը, արտահանության կրճատումը, բանկերին ցույց տրվող օգնությունը և պետական-մոնոպոլիստական սեկտորի ստեղծումն իրականացվում էին կապիտալիստական պետության ավանդական միջոցներով, կորպորատիվ սիստեմի շրջանակներից դուրս։

Գյուղատնտեսության բնագավառում ֆաշիզմի առավել հայտնի միջոցառումներն էին լայնորեն ռեկլամված «ճակատամարտը հանուն հացի» և «կոմպլեքսային մելիորացումը»։ «Ճակատամարտը հանուն հացի» նպատակ ուներ ներմուծվող հացից երկրի կախումը նվազեցնել՝ Իտալիայում հացահատիկի արտադրության ավելացման միջոցով։ Այդ կամպանիան որոշ արդյունք տվեց. 1929 թ. ի վեր հացահատիկի արտադրությունն Իտալիայում սկսեց աճել։ 1933 թ. այն հասավ 81 մլն տոննայի, և այդ տարին հայտարարվեց «հացի համար մղվող ճակատամարտում ձեռք բերված հաղթանակի տարի»։ Սակայն հաջորդ տարվա անբերրիությունը հերքեց ֆաշիստական կառավարության պարծենկոտ հայտարարությունները։ Ներմուծվող հացից Իտալիայի կախումը թեև նվազեց, բայց շարունակում էր մնալ զգալի։

Ֆաշիստների կողմից պրոպագանդվող «կոմպլեքսային մելիորացումը» պետք է հասցներ գյուղատնտեսության համար պիտանի հողատարածությունների ընդարձակմանը։ Նախատեսվում էր ամբողջ Իտալիայում յուրացնել մոտ 4 մլն հեկտար հող։ Իրականում բանը հանգեցվեց առաջին հերթին Հռոմից ոչ հեռու գտնվող Պոնտյան ճահիճների չորացմանը։ Մայրաքաղաքին անմիջականորեն մոտիկ գյուղատնտեսական օրինակելի շրջանի ստեղծումը ուներ ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական նշանակություն և պետք է խորհրդանշեր ֆաշիստական ռեժիմի հաջողությունները։

Հակաֆաշիստական շարժումը ֆաշիստական դիկտատուրայի տարիներին

1926 թ. արտակարգ օրենքները ուժեղ հարված հասցրին հակաֆաշիստական շարժմանն Իտալիայում։ Բուրժուական կուսակցությունները՝ ժողովրդականը, լիբերալներինը և մյուսները, հայտարարեցին իրենց ինքնացրման մասին։ Սոցիալիստ-ռեֆորմիստների որոշ պարագլուխներ հեռացան քաղաքական գործունեությունից։ ԱՐԿ-ի ռեֆոր-

միստական ղեկավարությունը Դ'Արագոնայի գլխավորությամբ անցավ ֆաշիստների կողմը։

Միայն կոմունիստական կուսակցությունը վայր չդրեց զենքը և իր գործունեությունը շարունակում էր ընդհատակի ծանր պայմաններում։ Կուսակցության ղեկավարությունը Գրամշիի և Տոլյատտիի գլխավորությամբ վճռական պայքար ծավալեց կուսակցության գաղափարական և կազմակերպական ամրապնդման համար։ 1926 թ. հունվարին Լիոնում կայացած կուսակցության III համագումարում Բորդիգայի կողմնակիցները վերջնական պարտություն կրեցին։ Համագումարը հավանություն տվեց այն թեզիսներին, որոնք կուսակցությանը հիմնականում կողմնորոշում էին դեպի միասնական բանվորական ճակատի ստեղծումը։ Ֆաշիստական բռնություններն արտակարգ չափով դժվարացնում էին պայքարը։ 1926 թ. նոյեմբերին ձերբակալվեց կոմունիստական կուսակցության գրեթե ամբողջ ղեկավարությունը՝ Գրամշիի գլխավորությամբ։ 1928 թ. հունիսին կուսակցության 37 ղեկավարներ կանգնեցին «հատուկ տրիբունալի» առջև։ Գրամշին և նրա մերձավոր զինակիցները դատապարտվեցին յուրաքանչյուրը 20—25 տարվա բանտարկության։

Սակայն, չնայած դաժան բռնություններին, ֆաշիստներին չհաջողվեց լիովին ճնշել կոմունիստական և բանվորական շարժումը։ 1929—1930 թթ. աշխատավորների դրության վատացման կապակցությամբ Իտալիայում տեղի ունեցան տարերային ելույթներ, որոնք մեծ մասամբ կրում էին ձեռնարկատերերի դեմ ուղղված գործադուլների բնույթ։ Բայց մի քանի դեպքերում դրբանք ուղեկցվում էին ցույցերով և նույնիսկ ֆաշիստական ոստիկանության հետ արյունալի ընդհարումներով։ Երկրում հակաֆաշիստական շարժման աշխուժացումը կոմունիստական կուսակցության ղեկավարությանը դրդեց բարձրացնել Իտալիայում աշխատանքն աշխուժացնելու հարցը։ Սկսած 1930 թ. կոմկուսի արտասահմանյան կենտրոնը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց անլեգալ խմբերի հետ կտրված կապերը վերականգնելու և երկրում ելույթներ կազմակերպելու համար։

1931 թ. ապրիլին տեղի ունեցավ Իտալիայի կոմունիստական կուսակցության IV համագումարը։ Դա իտալական կոմունիստների վերջին համագումարն էր ֆաշիզմի տիրապետության ժամանակաշրջանում։ Կարևոր նշանակություն ունեցան համագումարի որոշումները՝ ֆաշիզմի ստեղծած մասսայական կազմակերպություններում լեգալ հնարավորություններն ավելի համարձակ օգտագործելու, առաջին հերթին արհմիություններում աշխատանք ծավալելու մասին։ Համագումարի որոշումները կոմունիստներին պարտավորեցնում էին ավելի ակտիվորեն կապեր հաստատել երիտասարդ սերնդի, մտավորականության, չինովնիկների և սոցիալական այլ խմբերի հետ, որոնց մեջ նրանք կարող էին դաշնակիցներ գտնել։

Տնտեսական ճգնաժամի տարիներին տեղի ունեցած հակաֆաշիստական արամադրությունների աճը ներգործություն ունեցավ սոցիալիստական կուսակցության վրա, որը ֆաշիստների իշխանության գլուխ անցնելու ժամանակներից ի վեր գտնվում էր պառակտման վիճակում։ 1930 թ. իտալական սոցիալիստները հավաքվեցին անլեգալ համագումարի, որտեղ որոշում ընդունվեց միավորման մասին։ Նոր ղեկավարությունը Պ. Նեննիի գլխավորությամբ բարեհաճորեն էր վերաբերվում կոմունիստների հետ միասնական ճակատ ստեղծելու գաղափարին։ 1934 թ. օգոստոսին կոմունիստների նախաձեռնությամբ երկու կուսակցությունների միջև ստորագրվեց գործողությունների մի-

ասնության վերաբերյալ պակտ։ Արձանագրելով գաղափարական ու քաղաքական շատ հարցերի ասպարեզում եղած տարբերությունը, համաձայնագիրը մի շարք կոնկրետ միջոցառումներ էր նախատեսում բանվոր դասակարգի ջանքերը կոորդինացնելու համար՝ հանուն ֆաշիզմի դեմ մղվող պայքարի։

Իտալական հակաֆաշիստական կուսակցությունների մերձեցմանը նպաստող կարևոր իրադարձություն եղավ ֆաշիստական ինտերվենցիան և քաղաքացիական պատերազմն Իսպանիայում։ Իտալական հակաֆաշիստներն առաջիններից էին, որ ոտքի ելան հանուն Իսպանական Հանրապետության պաշտպանության։ Ֆրանկոյի դեմ մարտնչող ինտերնացիոնալ բրիգադների մարտիկների ու հրամանատարների մեջ կային 3300 իտալացիներ, որոնցից 2000-ը կոմկուսի անդամներ էին։ Կոմկուսի ականավոր գործիչներ Պ. Տոլյատտին, Լ. Լոնգոն, Ջ. դի Վիտտորիոն և ուրիշներ գտնվում էին Իսպանիայում։ Գարիբալդիի անվան իտալական գումարտակը կարևոր դեր խաղաց Գվադալախարայի մոտ ֆաշիստական զորքերի ջախջախման գործում։ Կոմունիստների ու սոցիալիստների հետ Իսպանիայում մղվող պատերազմին մասնակցում էին Կարլո Ռոսսելլիի ղեկավարած «Արդարություն և ազատություն» դեմոկրատական շարժման ներկայացուցիչները*։ Իտալական կոմունիստները, սոցիալիստները, ինչպես նաև դեմոկրատական մյուս ուժերի ներկայացուցիչները Իսպանիայում առաջին անգամ միասնական ճակատով մարտնչեցին ֆաշիզմի դեմ։ 1937 թ. կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունների միջև ստորագրվեց միասնական գործողությունների նոր պակտ, որն էլ ավելի համախմբեց բանվորական երկու կուսակցություններին։

Այդ նույն թվականին Իտալական կոմկուսը ծանր կորուստ կրեց։ Ապրիլի 27-ին Հռոմում, ավելի քան տասը տարի բանտում անցկացնելուց հետո վախճանվեց Ա. Գրամշին։ Մինչև իր կյանքի վերջին տարիները իտալական կոմունիստների ղեկավարը շարունակում էր Իտալիայում կոմունիստական ու դեմոկրատական շարժման պրոբլեմների ստեղծագործական մշակումը։ Գրամշիի «Բանտային տետրակները», որոնք հրապարակվեցին պատերազմից հետո, նրան դրեցին համաշխարհային հեղափոխական շարժման ականավոր տեսաբանների շարքը։

Պատերազմին անմիջականորեն նախորդած տարիները իտալական հակաֆաշիստների կյանքում եղան առավել դժվարին ժամանակներից մեկը։ Կոմկուսը շարունակում էր մնալ միակ հակաֆաշիստական ուժը, որը երկրում պահպանել էր իր կազմակերպությունները, թեկուզ և դրանց կապը արտասահմանյան կենտրոնի հետ շատ էր թուլացել։ Այդ ժամանակ էլ երկրի շատ քաղաքներում, գլխավորապես ուսանող և բանվոր երիտասարդության շրջանում սկսեցին առաջանալ հակաֆաշիստական նոր խմբեր։ Դրանց մեջ մտնում էին ֆաշիստական ռեժիմի ժամանակ մեծացած, բայց ֆաշիզմի սոցիալական դեմագոգիայից հիասթափված և նրա քաղաքականության կործանարարությունը գիտակցած երիտասարդներ։ Քաղաքական իրադրությունը և պայքարի հեռանկարները հասկանալու ձգտումը նրանց մղում էր դեպի արդեն գո-

* Այդ շարժումը 1929 թ. առաջացավ Փարիզում գտնվող իտալական հակաֆաշիստական վտարանդիության մանրբուրժուական տարբեր խմբերից։ Շարժման անդամները ձգտում էին իրենց կազմակերպությունները ստեղծել Իտալիայում և աշխատանք ծավալել մտավորականության շրջանում։ Նոր շարժման ծրագրային դրույթները չափազանց անորոշ էին. հիմնական պահանջն էր՝ դեմոկրատական հանրապետության հաստատումը։ Նրանք ֆաշիզմի տապալման գլխավոր միջոց էին համարում ընդհանուր ապստամբությունը, բայց նրա նախապատրաստման մեջ կարևորագույն դեր էին հատկացնում միայնակ հերոսների գործողություններին։

յություն ունեցող քաղաքական կուսակցությունները։ Նրանց մեջ առավել մեծ արձագանք էին գտնում գործողության և միասնության մասին կոչերը, կառավարող դասակարգի անկոմպրոմիս դատապարտումը, որոնք պարունակվում էին կոմունիստների դիմումներում։

Իտալական ֆաշիզմի ագրեսիվ քաղաքականությունը։ «Բեռլին—Հռոմ առանցքը»

30-ական թվականների սահմանագծին իտալական ֆաշիզմը բարձրաձայն հայտ ներկայացրեց իր իմպերիալիստական հավակնությունների մասին։ 1930 թվականը ռեկորդային եղավ արտաքին քաղաքականության վերաբերյալ Մուսոլինիի արտասանած ճառերի քանակի տեսակետից։ Նա անփոփոխ կերպով անդրադառնում էր այն պնդմանը, թե Իտալիան շատ բանից զուրկ մնաց առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով, և հայտարարում էր, որ ինքը մտադիր է Միջերկրական ծովը վերածել «իտալական լճի»։

1932 թ. լույս տեսավ «Ֆաշիզմի դոկտրինան» գիրքը, որը գրել էր Մուսոլինին, ռեակցիոն փիլիսոփա Դ. Ջենտիլեի օգնությամբ։ Այդ ստեղծագործությունը հետագայում բազմիցս վերահրատարակվեց և ծառայում էր որպես իտալական ֆաշիզմի գաղափարախոսության կանոնական տեքստ։ Ֆաշիստական դոկտրինայի հիմք էր հռչակվում պետության՝ որպես ամեն տեսակ ուժի և իշխանության ու հասարակության գոյության միակ իրական ձևի աղբյուրի, կոնցեպցիան։ Ազգերը, անհատների խմբերը և իրենք իսկ անհատները ռեալականություն են միայն այնքանով, որքանով որ նրանք գոյություն ունեն պետության ներսում, ասվում էր Մուսոլինիի ստեղծագործության մեջ։ Ֆաշիստական պետության գլխավոր ֆունկցիա էր հռչակվում հզորության ու իմպերիայի, այսինքն՝ էքսպանսիայի ձգտող կամքը։ Այս հատկանիշներն էին հենց հայտարարվում «վերածնվող ժողովրդի», այսինքն՝ իտալական ժողովրդի կենսական ուժի նշան։ Կայսրության ստեղծման և Իտալիան համաշխարհային առաջատար տերության վերածելու համար Մուսոլինին իտալացիներից պահանջում էր լիակատար հնազանդություն պետությանը, դաժան կարգապահություն և ինքնազոհողություն։

Պատրաստվելով զավթողական գործողությունների, Իտալիան դեռ տընտեսական ճգնաժամի տարիներին զգալիորեն ընդարձակեց ռազմական նախապատրաստությունները։ 1933 թ. Մուսոլինին ստանձնեց ռազմական մինիստրությունների ղեկավարությունը, ընդ որում հայտարարելով. «վրա է հասել սպառազինությունների ժամանակը»։ Ընդունվեց ազգի ռազմականացման մասին օրենք, որի մեջ ասվում էր, որ ռազմական ուսուցումը պետք է սկսվի այն պահից, «երբ երեխան ի վիճակի է դառնում սովորելու, և պետք է շարունակվի այնքան, քանի դեռ քաղաքացին ի վիճակի է զենք կրելու»։ 1934 թ. գարնանը իտալական կառավարությունը հայտարարություն արեց երկու հածանավերի կառուցումն սկսելու մասին, դրանով իսկ նոր էջ բացելով ծովային սպառազինությունների մրցավազքում։ Միաժամանակ մեծացավ ռազմական ինքնաթիռների արտադրությունը. Մուսոլինին դրանք անվանեց «ֆաշիստական ռեժիմի զենք»։ Սկսվեց «մեծ մանևրների», ճոխ շքահանդեսների և Իտալիայի ռազմական ուժի այլ ցուցադրումների ժամանակաշրջանը։

Մուսոլինիի ձեռնարկած առաջին ռազմական ցույցն ուղղված էր ապագա դաշնակցի՝ ֆաշիստական Գերմանիայի դեմ, որը 1934 թ. փորձեց զավթել Ավստրիան։ Մուսոլինին, որն այն ժամանակ վախենում էր Գերմանիայի ուժեղանալուց, ավստրիական սահմանում իտալական զորքեր կենտրոնացնելու

հրաման տվեց, որը եղավ այն պատճառներից մեկը, որ Հիտլերին այն ժամանակ խանգարեց իրագործելու անշլյուսի պլանը։

1934 թ. վերջին Մուսոլինին սկսեց Եթովպիայի զավթման նախապատրաստությունը, որը կարևոր ստրատեգիական նշանակություն ուներ Աֆրիկայում տիրապետության հասնելու համար։ Օգտագործելով Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև եղած հակասությունները, նա 1935 թ. հունվարին Ֆրանսիայի հետ համաձայնագիր ստորագրեց Աֆրիկայում ազդեցության ոլորտների բաժանման մասին։ Այդ համաձայնագրի գաղտնի կետում ասվում էր Եթովպիայի դեմ իտալական ագրեսիայի վերաբերյալ Ֆրանսիայի համաձայնության մասին։ 1935 թ. հոկտեմբերի 3-ին առանց պատերազմ հայտարարելու 500-հազարանոց իտալական բանակը երկու կողմից սկսեց ներխուժել Եթովպիայի տերիտորիան։ Չնայած ուժերի և հատկապես սպառազինության վիթխարի գերազանցությանը, ֆաշիստական բանակի գործողությունները սկզբնական շրջանում անհաջող էին ընթանում։ Միայն 1935/1936 թթ. ձմռան վերջին Իտալիան բեկման հասավ ռազմական գործողությունների ընթացքում։ 1936 թ. գարնանը Եթովպիայի գրեթե ամբողջ տերիտորիան օկուպացվեց։ Մայիսի 9-ին Մուսոլինին Հռոմի Վենետիկյան պալատի պատշգամբից հայտարարեց Իտալիան կայսրության վերածվելու և իտալական թագավորի տիտղոսին Եթովպիայի կայսեր տիտղոսի ավելացման մասին։

Եթովպիայի զավթումն ուժեղացնում էր Իտալիայի դիրքերը Միջին Արևելքի և Հնդկական օվկիանոսի շրջանի հետ Անգլիայի ու Ֆրանսիայի ունեցած հաղորդակցության ուղիներում։ Այդուհանդերձ ո՛չ Ֆրանսիան, ո՛չ էլ Անգլիան լուրջ հակազդեցություն չգործեցին իտալական ագրեսիայի վրա։ Ճիշտ է, Ազգերի լիգան 1935 թ. նոյեմբերին որոշում ընդունեց Իտալիայի նկատմամբ տնտեսական սանկցիաներ կիրառելու մասին, որը նախատեսում էր Իտալիայից ամեն տեսակի ապրանքներ ներմուծելու և ստրատեգիական նշանակություն ունեցող ապրանքներ Իտալիա արտահանելու արգելք։ Բայց այդ որոշման կենսագործումը զգալի չափով կեղծ բնույթ էր կրում։ Այսպես, պատերազմի բորբոքման շրջանում Անգլիան շարունակում էր մոտորներ մատակարարել իտալական ավիացիայի համար։ Այդ նույն ժամանակ ֆաշիստական պրոպագանդան սանկցիաների մասին որոշումները հմտորեն օգտագործում էր երկրում շովինիստական տրամադրություններ բորբոքելու համար. ամենուրեք տեղի էին ունենում ցույցեր, ուր բարձրաձայն դատապարտվում էին «ճարպակալած պլուտոկրատական ազգերը», որոնք «պրոլետարական Իտալիային» զրկել էին արևի տակ տեղ ունենալուց, անց էին կացվում «հայրենիքի ֆոնդում» նվիրատվությունների կամպանիաներ և գունավոր մետաղների մասսայական հավաք։

Իտալական ֆաշիզմի ռազմական արկածախնդրությունների հաջորդ էտապը Իսպանիայում կատարած ինտերվենցիան էր։ Հենց որ 1936 թ. ամռանը ռեակցիոն գեներալները խռովություն բարձրացրին Իսպանիայի հանրապետական կառավարության դեմ, Մուսոլինին շտապեց նրանց օգնություն ցույց տալ։ Չբավականանալով սպառազինություն ուղարկելով, նա կազմեց իտալական էքսպեդիցիոն կորպուս, որը նավերով շուտով մեկնեց Իսպանիա։ Սակայն 1937 թ. մարտին Մադրիդից ոչ հեռու գտնվող Գվադալախարայի մոտ իտալական «լեգիոներները» դաժան պարտություն կրեցին։ Էքսպեդիցիոն կորպուսն այնպիսի կորուստներ ունեցավ, որ միայն Իտալիայից նոր օժանդակ ուժեր ժամանելուց հետո կարողացավ 1937 թ. վերջին վերստին մասնակցել ռազմական գործողություններին։

Իսպանիայում սկսած համատեղ ավանտյուրան ֆաշիստական Իտալիային մերձեցրեց Հիտլերյան Գերմանիային։ 1936 թ. հոկտեմբերին Իտալիայի արտաքին գործերի մինիստր Չիանոն Գերմանիայում համաձայնագիր ստորագրեց երկու ֆաշիստական ռեժիմների քաղաքական համագործակցության մասին։ Իր ճառերից մեկում Մուսոլինին այդ համաձայնագիրն անվանեց մի առանցք, որի շուրջ, նրա կարծիքով, պետք է միավորվեին եվրոպական տերությունները։ Այսպես առաջացավ տխրահռչակ «Բեռլին—Հռոմ առանցքը», որը ծնունդ առավ երկու ագրեսիվ պետությունների իմպերիալիստական ձգտումներից։ Ըստ համաձայնագրի պայմանների, Միջերկրական ծովը համարվում էր Իտալիայի շահերի ոլորտ, իսկ Իտալիան ճանաչում էր Գերմանիայի իրավունքը Կենտրոնական Եվրոպայում հաստատելու «նոր ստատուս»։ Մի հատուկ կետ վերաբերում էր «հակաբոլշևիկյան պայքարում» ֆաշիստական տերությունների համագործակցությանը։ 1937 թ. հոկտեմբերին Իտալիան հարեց «հակակոմինտերնական պակտին», որը դրանից մեկ տարի առաջ ստորագրել էին Գերմանիան և Ճապոնիան։ Նույն թվականի դեկտեմբերին Մուսոլինին հայտարարեց, որ Իտալիան դուրս է գալիս Ազգերի լիգայից և երբեք այնտեղ չի վերադառնա։

1938 թ. սեպտեմբերին Մուսոլինին ակտիվ մասնակցություն ունեցավ Մյունխենյան համաձայնագրերի կնքմանը, դրանով իսկ զգալի օգնություն ցույց տալով Հիտլերին Չեխոսլովակիայի անդամահատման գործում։ Ցցանկանալով ետ մնալ իր պարտնյորից, 1939 թ. ապրիլին Մուսոլինին ալբանական թագավոր Զոգային վերջնագիր ներկայացրեց, որից հետո իտալական զորքերն օկուպացրին Ալբանիան։

Ֆաշիստական պետություններն ուժգնորեն պատրաստվում էին համաշխարհային պատերազմի։ 1939 թ. մայիսի 22-ին Իտալիայի և Գերմանիայի միջև ստորագրվեց «պողպատե պակտը», որը երկու կողմերին պարտավորեցնում էր պատերազմ ծագելու դեպքում միմյանց պաշտպանել «ցամաքում, ծովում և օդում»։ Այսպիսով, նախորդ քաղաքական համաձայնագրերը ձևականորեն վերափոխվեցին ռազմական դաշինքի, որը ինքը՝ Մուսոլինին անվանեց «նվաճման, այլ ոչ թե պաշտպանության զենք»։ Այդ նույն ժամանակ Մուսոլինին, որը հասկանում էր, որ Իտալիան դեռ հեռու է պատերազմին պատրաստ լինելուց, Հիտլերին հայտնում էր, որ ռազմական նախապատրաստություններն ավարտելու համար իրեն դեռ հարկավոր կլինի առնվազն 2—3 տարի։

Կյանքի և էկոնոմիկայի ռազմականացումը երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին

Երկու ֆաշիստական պետությունների մերձեցումը և կայսրության հռչակումը նշանավորեցին Իտալիայի հասարակական կյանքի ֆաշիստականացման նոր էտապը։ Մուսոլինին պահանջում էր ազգային կյանքը բարձրացնել «կայսերական մակարդակի»։ Ֆաշիստական կուսակցության ղեկավարները նախապատրաստվելով նոր արշավանքների, բոլոր միջոցները ձեռնարկում էին, որպեսզի երկիրը ռազմական ճամբարի վերածեին։ «Ազգին կարգապահ դարձնելու» միջոցներից մեկը ֆաշիստական կուսակցության և նրա կողմից վերահսկվող կազմակերպությունների մեջ առավելագույն թվով իտալացիներ ներգրավելն էր։ Պետական ծառայողների և բնակչության մի շարք կատեգորիաների համար կուսակցության պատկանելիությունը պարտադիր դարձավ։ Ֆաշիստական կուսակցության թվակազմը մինչև 1937 թ. աճեց մինչև 2 մլն մարդու։ Հատուկ ուշադրություն էր դարձվում աճող սերնդին։

Նախկինում գոյություն ունեցող բոլոր երիտասարդական և մանկական կազմակերպությունները 1937 թ. միավորվեցին Իտալական լիկտորական երիտասարդության՝ ՋԻԼ-ի մեջ, որի նախագահն էր ֆաշիստական կուսակցության քարտուղարը։ Այդ կազմակերպության, ինչպես և ֆաշիստական կուսակցության լոզունգը դարձավ՝ «Հավատալ, ենթարկվել, մարտնչել»։ Հատուկ կազմակերպություններ ստեղծվեցին բնակչության բոլոր կատեգորիաների համար, ներառյալ նաև նույնիսկ տնային տնտեսուհիներին։ Մինիստրների խորհրդի հատուկ որոշմամբ բոլոր իտալացիներն ամեն շաբաթ օրը պետք է նվիրեին ռազմական, սպորտային և քաղաքական պատրաստականությանը, որն անհրաժեշտ էր «ազգի կոփման» համար։

Հասակառու բնակչության հոգու մասին մտահոգվելը հանձնարարվեց 1937 թ. ստեղծված «ժողովրդական կուլտուրայի մինիստրությանը»։ Ֆաշիստական պետության գաղափարական այդ կարևորագույն մարմինը ղեկավարում էր մամուլը, կինոն, ռադիոն և թատրոնները, նրանցից պահանջելով պրոպագանդել ֆաշիստական սկզբունքները։ Դուչեի գովաբանությունն այդ տարիներին հասավ իր բարձրակետին։ Մուսոլինիի ասույթներից վերցված մեջբերումներն ավելի ու ավելի խիտ էին ծածկում տների պատերը, այնպիսի լոզունգներ, ինչպես «Մուսոլինին միշտ իրավացի է», համառորեն կրկնվում էին պրոպագանդայի կողմից։

1938 թ. ամռանը հայտարարվեց այսպես կոչված «կուլտուրական կազդուրման» կամպանիան սկսելու մասին։ Այն ներառնում էր ազգի կյանքում «ֆաշիստական ոճի» արմատավորման և «օտարերկրյա ազդեցության» դեմ պայքարն ուժեղացնելու միջոցառումներ։ Միմյանց ձեռք սեղմելը փոխարինվեց ֆաշիստական ողջույնով, ռազմականացված կազմակերպությունների համար սահմանվեց «հռոմեական քայլ» («պրուսական քայլի» պատճեն), անց էր կացվում գրադարանների զտում պացիֆիստական գրականությունից և այլն։ Արվեստի բոլոր ձևերի առջև խնդիր էր դրվում իտալացիների մեջ դաստիարակել «դինամիզմ, ագրեսիվություն, էքսպանսիայի կիրք»։ Հատուկ ուշադրություն էր դարձվում կինեմատոգրաֆիային։ Նրա արտադրանքի մեջ առաջատար դիրք գրավեցին բազմասերիանոց փքաշուք ֆիլմերը, որոնք գովերգում էին հին հռոմեացիների և նրանց «ուղղակի ժառանգորդների»՝ ֆաշիստական սևվերնաշապիկավորների սխրագործությունը։ Մուսոլինին հատուկ ճիգեր էր թափում ճարտարապետության մեջ ֆաշիստական ոճ ներարկելու համար։ Փքաշքուքության ձգտումը և ֆաշիստական պարագլուխների ճաշակի բացակայությունը հասցրին այն բանին, որ իտալական քաղաքները այլանդակվեցին շատ կառուցվածքներով, որոնք չէին կապվում նրանց պատմականորեն ձևավորված տեսքի հետ։

Ֆաշիզմի անցկացրած բազմաթիվ «ճակատամարտերի» մեջ չափազանց ընորոշ էր բարձր ծննդաբերության համար մղվող կամպանիան։ Ֆաշիստական ռեժիմին հարկավոր էին զինվորներ՝ պատերազմի համար, և գաղութարարներ՝ կայսրության համար։ Թերթերը բյուլետեններ էին տպագրում բնակչության ամենամեծ աճի համար քաղաքների միջև կատարվող մրցության ընթացքի մասին։ Հռոմում տոնվում էին այսպես կոչված ֆաշիստական հարսանիքները, որտեղ նորապսակները Մուսոլինիին երդում էին տալիս «մեկ տարի հետո ֆաշիստական հայրենիքին երիտասարդ զինվոր պարգևել»։ Չնայած բոլոր միջոցառումներին, Իտալիայում ծննդաբերության տոկոսը տարեցտարի նվազում էր։ 1938 թ. ֆաշիստները իտալացիներին պաշտոնապես դասեցին

արիական ռասայի շարքը։ Դրանից անմիջապես հետո հրապարակվեցին առաջին հակասեմիտական օրենքները։

1939 թ. սկզբին ֆաշիստները վերացրին պառլամենտական սիստեմի վերջին մնացորդները։ Պետական նոր կառուցվածքի մասին 1939 թ. նոյեմբերի 19-ի օրենքով դեպուտատների պալատի փոխարեն ստեղծվեց «ֆաշիզմի և կորպորացիաների պալատ», որտեղ նշանակվում էին ֆաշիստական կուսակցության բարձրագույն աստիճանավորները և կորպորացիաների ներկայացուցիչները։ Այդ վերափոխությունն ավարտեց կորպորատիվ պետության իրավաբանական ձևավորումը։

Տնտեսական ասպարեզում պատերազմի նախապատրաստությունը միահյուսվեց ավտարկիայի («ինքնապահովման», առաջին հերթին ստրատեգիական հումքով) քաղաքականության անցկացման հետ։ Հենց «ավտարկիա» տերմինն էլ հանդես եկավ 30-ական թվականների կեսերին, սակայն այն միջոցառումները, որոնք ուղղված էին ստրատեգիական նշանակություն ունեցող հումքով ապահովելուն, սկսեցին իրականացվել դեռ դրանից էլ առաջ։ Այդ նպատակին էին ծառայում «ճակատամարտը հանուն հացի», քարածխի և նավթի հանքավայրեր որոնելը, ինչպես նաև հիդրոէլեկտրակայանների արագ շինարարությունը։ «Ճակատամարտը հանուն ավտարկիայի» առանձնապես լայն մասշտաբներով սկսեց իրականացվել 1937 թվականից։ Այն ներառնում էր այնպիսի միջոցառումներ, ինչպես ռեսուրսների առավելագույն օգտագործումը, փոխարինիչների արտադրության զարգացումը, վերահսկողությունը սպառման նկատմամբ և նրա սահմանափակումը, տնտեսության պետական ղեկավարման ուժեղացումը։

Տնտեսական ռեսուրսներով աղքատիկ Իտալիայի պայմաններում ավտարկիայի քաղաքականությունը չնպաստեց տնտեսության ընդհանուր վերելքին և նրա զարգացմանը տալիս էր միակողմանի ու այլանդակ բնույթ։ Էկոնոմիկայի ռազմականացման գլխավոր լծակ դարձան պետական-մոնոպոլիստական միավորումները ԻՐԻ-ի գլխավորությամբ, որի վրա դրվեց ամբողջ մետալուրգիական արդյունաբերության վերակառուցումը։ 1934 թվականից մինչև 1939 թվականը ռազմական նշանակություն ունեցող արդյունաբերության ճյուղերը էականորեն աճեցին։ Այդուհանդերձ էներգետիկ բազայի և մետաղների հիմնական տեսակների արտադրության վիճակը ամենևին էլ փայլուն չէր։ 1938 թ. Իտալիայում ձուլվում էր մոտ 2 մլն տոննա պողպատ, որը հավասար էր խաղաղ ժամանակ նրա սպառածի մոտ կեսին և ավելի քան հինգ անգամ ցածր էր ավտարկիական պլաններից։

Ավտարկիայի համար մղվող պայքարը վիթխարի միջոցներ կլանեց։ Աղքատ հանքավայրերի մշակումը և արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծումը նյութական մեծ ծախսեր էին պահանջում։ Իտալիայում արդյունահանվող վառելիքը ներմուծվածից հինգ անգամ թանկ արժեր, իսկ բամբակի հայրենական փոխարինիչը երեք անգամ թանկ էր բնականից։ Ռազմական ծախսերն այդ ժամանակ կլանում էին պետական բյուջեի մոտ կեսը։ Պատերազմին նախապատրաստվելու հիմնական միջոցները Իտալիայի կառավարությունը ստանում էր ինֆլյացիայի քաղաքականության և բնակչության հարկերի ավելացման հաշվին։ Նախապատերազմյան հինգ տարիների ընթացքում՝ 1934 թվականից մինչև 1939 թվականը հարկերն ավելացան 67 տոկոսով։ Երեք տարում՝ 1937 թվականից մինչև 1939 թվականը, դրամական շրջանառությունն Իտալիայում աճեց 50 տոկոսով։ Ինֆլյացիան իր հետևից բերեց գների աճ և

աշխատավորների ռեալ աշխատավարձի իջեցում։ 1936 թվականից մինչև 1939 թվականը սպառման առարկաների գներն Իտալիայում աճեցին 20 տոկոսով։

Միակը, ով շահում էր իտալական էկոնոմիկայի ռազմականացումից, խոշոր մոնոպոլիստական ընկերություններն էին։ Նրանց եկամուտները նախապատերազմյան տարիներին անշեղորեն աճում էին։ 1934 թվականից մինչև 1939 թվականը այնպիսի մոնոպոլիաների շահույթները, ինչպիսիք էին «Պիրելլին», «Մնիա Վիսկոզան», «Ֆիատը», «Մոնտեկատինին» և ուրիշներ, միջին հաշվով ավելացան 80 տոկոսով։ Խոշոր կապիտալի դիրքերն ուժեղանում էին նաև գյուղում։ Պատերազմից առաջ սկսված նոր հողերի յուրացման կամպանիան անց էր կենում խոշոր կապիտալիստական միավորումների ղեկավարությամբ։ Պետությունից զգալի վարկեր ստանալով, այդ միավորումները հողամասերի կատաղի սպեկուլյացիա ծավալեցին, օգտագործելով մշակելի հողատարածությունների պակասը երկրում։

Իտալիան ռազմականացված ազգի վերածելու և պատերազմի համար նրա էկոնոմիկան մոբիլիզացնելու համար ֆաշիզմի ձեռնարկած բոլոր միջոցառումներն ակնկալվող արդյունքներ չէին տալիս։ Զինված ուժերը, որոնք այնքան աչքի էին ընկնում զորահանդեսների ժամանակ, տեխնիկապես թույլ էին հագեցված, իսկ ստրատեգիական հումքի պաշարները մնում էին աննշան։ Այդ պատճառով էլ, երբ 1939 թ. օգոստոսին Հիտլերը հայտնեց պատերազմն սկսելու մասին իր որոշումը, Մուսոլինին, հակառակ իր կամքի և ի խախտումն «պողպատե պակտի» պայմանների, ստիպված էր ժամանակավորապես ձեռնպահ մնալ իր դաշնակցի կողմում հանդես գալուց։

Իտալական ֆաշիզմի պատմագրությունը

Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանի Իտալիայի պատմության վերաբերյալ սովետական հեղինակների առավել մեծ թվով աշխատությունները նվիրված են ֆաշիզմի գոյության առաջին տարիներին։ Դեռևս 20-ական թվականներին լույս տեսան մի քանի աշխատություններ, որոնց հեղինակները ձգտում էին պարզել ֆաշիզմի ծագման պատճառները, որոշել նրա սոցիալական բնութագիրն ու հեռանկարները[1]։ Նրանց համար ընդհանուր էր հեղափոխական շարժման դեմ մղված պայքարում ֆաշիզմի խաղացած դերը ճշգրտելու ձգտումը։ Կոմինտերնի Գործկոմի XIII Պլենումը, հենվելով գլխավորապես Իտալիայի փորձի վրա, տվեց ֆաշիզմի՝ որպես «ֆինանսական կապիտալի առավել ռեակցիոն, առավել շովինիստական, առավել իմպերիալիստական տարրերի բացահայտ տեռորիստական դիկտատուրայի» հայտնի բնութագիրը։ Կոմինտերնի VII կոնգրեսը 1935 թ. հաստատեց այդ բնորոշումը, հատուկ բանաձևում ճշտելով, որ ֆաշիզմը չի նույնացվում խոշոր կապիտալի հետ, այլ կատարում է նրա ծառայի դերը։ Այդ բնորոշումը սովետական պատմական գրականության մեջ մնում է ընդհանուր ճանաչման արժանացած։

Պատերազմից հետո առաջին տարիներին իտալական ֆաշիզմի պատմությանը երկու գիրք նվիրվեց[2]։ Այդ աշխատությունները գրված էին իրադար-

---

1 *Տե՛ս* **Г. Сандомирский.** Фашизм, ч. 1 и 2. М.-Пг., 1923; **Д. Антонов.** Очерки фашизма в Италии. М., 1923; «Мировой фашизм», М.-Пг., 1923; **С. Слободский.** Социальная сущность фашизма. М.-Л., 1928; **Г. Сандомирский.** Теория и практика европейского фашизма. М., 1929:

2 *Տե՛ս* **С. Слободской.** Итальянский фашизм и его крах. М., 1946; **Р. А. Авербух.** Италия в первой и второй мировых войнах. М., 1947:

ձությունների թարմ հետքերով, և դրանց հեղինակները՝ Ս. Սլոբոդսկոյը և Ռ. Ա. Ավերբուխը հիմնական ուշադրությունը դարձրել էին ֆաշիստական ռեժիմի սուր քաղաքական քննադատությանը։ Միաժամանակ Սլոբոդսկոյի գրքում փորձ է կատարվում ֆաշիզմի ծագումը կապել Իտալիայի նախորդ պատմությանը։ Բ. Ռ. Լոպուխովին է պատկանում սովետական պատմական գրականության մեջ առավել կապիտալ ուսումնասիրությունը իտալական ֆաշիզմի առաջին տաս տարվա պատմության վերաբերյալ[3]։ Այդ ուսումնասիրության կենտրոնում է գտնվում ֆաշիզմի և բանվորական շարժման հակամարտության վերլուծությունը։ Հեղինակի ծառայությունը իտալական ֆաշիստների գաղափարախոսության ու պրակտիկայի վերլուծությունն է, իշխանության և տոտալիտար ֆաշիստական պետության ստեղծման համար նրանց մղած պայքարի փաստագրված նկարագրությունը։ Ֆաշիստական ռեժիմի քայքայման ու կրախի հետ կապված պրոբլեմներն առավել լիակատարությամբ հետազոտել է Գ. Ս. Ֆիլատովը[4]։

Իտալական պատմագրությունը երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում զարգացել է երկու հակադիր ուղղություններով՝ մի կողմից դրանք ֆաշիզմի հակառակորդների, առավելապես հակաֆաշիստական կուսակցությունների ղեկավարների աշխատություններն են, մյուս կողմից՝ իտալական այն պատմաբանների աշխատությունները, որոնք ծառայության էին անցել ֆաշիզմին։

20-ական թվականներին հակաֆաշիստ պատմաբանների շրջանում աշխույժ վիճաբանություն էր տեղի ունենում բանվորական շարժման պարտության և ֆաշիստների իշխանության գլուխ անցնելու պատճառների հարցի շուրջ։ Այդ պրոբլեմների դեմ իտալական կոմունիստների տեսակետը առավել լրիվ արտահայտվեց Կոմկուսի՝ 1926 թ. Լիոնում տեղի ունեցած III համագումարի թեզիսներում։ Այնտեղ նշվում էր, որ հեղափոխական պրոլետարիատի պարտությունը հանդիսացավ աշխատավորների կուսակցության քաղաքական, կազմակերպչական, տակտիկական ու ստրատեգիական թուլությունների արդյունքը։ Այդ պատճառով 1922 թ. ֆաշիզմի տարած հաղթանակը պետք է դիտել ոչ թե հեղափոխության դեմ տարած հաղթանակ, այլ որպես այն պարտության հետևանք, որ կրեցին հեղափոխական ուժերն իրենց ներքին թուլության հետևանքով։ Իտալական կոմունիստներն առաջիններից մեկը ձգտեցին պարզել ֆաշիզմի սոցիալ-քաղաքական էությունը։ Հանդես գալով ֆաշիստների իշխանության գլուխ անցնելը որպես սովորական «բուրժուական մինիստրությունների փոփոխություն» դիտելու Ա. Բորդիգայի և նրա կողմնակիցների միտումի դեմ, Ա. Գրամշին ապացուցում էր, որ ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը նշանակում է արդյունաբերողների և խոշոր հողատերերի առավել ռեակցիոն խմբերի անցում իշխանության գլուխ։

Ֆաշիստական պատմաբանները, որոնցից առավել աչքի էր ընկնում Ջ. Վոլպեն, ջանում էին Մուսոլինիին ներկայացնել որպես «բոլշևիզմից», անարխիայից ու քայքայումից «փրկողի», իսկ ֆաշիստական ռեժիմը՝ որպես «իտալական ժողովրդի համար առավել հարմար ռեժիմ»։ Հետևելով ֆաշիզմի բաղաքական լոզունգներին, նրանք փորձում էին երկրի նախորդ պատմությունը ներկայացնել որպես Իտալիայի անշեղ ընթացք դեպի ֆաշիզմ, իսկ ֆաշիստական ռեժիմի հաստատումը՝ որպես «Ռիսորջիմենտոյի դարաշրջանի իդեալների պսակավորում»։

Ֆաշիստական պատմաբանների հետ քողարկված ձևով վիճում էր ականավոր լիբերալ փիլիսոփա և պատմաբան Բ. Կրոչեն։ 1928 թ. լույս տեսած «Իտալիայի պատմությունը 1871-ից մինչև 1915 թ.» գրքում նա ապացուցում էր, որ Ռիսորջիմենտոյի իդեալը քաղաքացիների անհատական ազատությունն էր, և Իտալիայի զարգացումը միավորումից հետո ընթանում էր անշեղ առաջադիմության ուղիով[5]։ Կրոչեի աշխատությունը այն մտքին էր հանգեցնում, որ ֆաշիզմի իշխանության գլուխ անցնելը «կանգառ» եղավ երկրի պատմական զարգացման մեջ, եղավ Ռիսորջիմենտոյի իդեալներին թշնամի ուժերի անակնկալ ճեղքում։

Իտալական ֆաշիզմի իսկական պատմության ստեղծումը հնարավոր դարձավ միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Այդ ժամանակաշրջանում իտալական պատմագրության համար բնորոշ էին մարքսիզմի ազդեցության աճը և բուրժուական մի շարք պատմաբանների հեռանալը ֆաշիզմի վերաբերյալ Կրոչեի հայացքներից։ Դրանում մեծ դեր խաղացին իտալական կոմկուսի ուժերի աճը և հասարակայնության լայնորեն ծանոթանալը Գրամշիի գաղափարական ժառանգությանը[6]։

Այն հայացքները, որոնք Գրամշին արտահայտում էր բանտարկության ժամանակ գրած իր աշխատություններում, զգալի չափով ուղղված էին Կրոչեի կոնցեպցիաների դեմ։ Գրամշին գրում էր իտալական Ռիսորջիմենտոյի անավարտվածության, մասնավորապես ագրարային հեղափոխության բացակայության մասին, որը պայմանավորեց իտալական կառավարող դասակարգի թուլությունը հաջորդ տասնամյակներում և խոչընդոտեց երկրի առաջադիմական զարգացմանը։ Այդ հանգամանքները բարենպաստ պայմաններ ստեղծեցին ֆաշիզմի ծագման համար։ Անդրադառնալով ֆաշիզմի հաղթանակի անմիջական պատճառներին, Գրամշին ընդգծում էր ազգային-պատմական գործոնի նշանակությունը, որը ֆաշիստներն օգտագործեցին բանվորական շարժման դեմ մղած պայքարում։ Հենց այդ կետում իտալական ֆաշիզմը առավել զգալի հարված հասցրեց բանվորական շարժմանը, պրոլետարիատի դասակարգային շահերի հետ համազգային շահերի բախման տեսք ստեղծելով։

Ֆաշիզմի ամբողջ ժամանակաշրջանն ընդգրկող աշխատությունների իտալական հեղինակների մեջ աչքի ընկնող տեղ է գրավում մարքսիստ պատմաբան Է. Սանտարելլիի երկհատոր ուսումնասիրությունը[7]։ Հենվելով պատերազմն ավարտվելուց հետո իտալական պատմագրության ձեռք բերած արդյունքների վրա, հեղինակը հետևողականորեն շարադրել է ֆաշիստական ռեժիմի պատմությունը, այն լուսաբանելով դասակարգային պայքարի դիրքերից։ Ֆաշիզմի ամբողջ ժամանակաշրջանին նվիրված մյուս աշխատություններից պետք է նշել միաժամանակ սոցիալիստական կուսակցության անդամ եղած պատմաբան Ֆ. Կատալանոյի «Իտալիայի ուղին դիկտատուրայից դեպի դեմոկրատիա» գիրքը[8] և լիբերալ-ռադիկալ ուղղության երկու հեղինակների՝ Լ. Սալվատորելլիի ու Ջ. Միրայի «Իտալիայի ֆաշիստական ժամանակաշրջա-

---

3 Տե՛ս Б. Р. Лопухов. Фашизм и рабочее движение в Италии. М., 1968.

4 Г. С. Филатов. Крах итальянского фашизма. М., 1973.

5 Տե՛ս B. Croce. Storia d'Italia dal 1871 al 1915. Bari, 1928.

6 Տե՛ս А. Грамши. Избранные произведения, т. I—III. М., 1957—1959.

7 Տե՛ս E. Santarelli. Storia del movimento e del regime fascista, vol. 1. 2. Roma, 1967.

8 Տե՛ս F. Catalano. L'Italia dalla dittatura alla democrazia. Milano, 1962.

նի պատմություն» կոլեկտիվ աշխատությունը[9]։ Եթե Կատալանոյի գրքում գլխավոր ուշադրությունը դարձված է ֆաշիզմի ու հակաֆաշիստական շարժման պատմության վրա, ապա Սալվատորելլին ու Միրան ջանացել են տալ այդ ժամանակաշրջանում Իտալիայի կյանքի բոլոր կողմերի սիստեմատացված պատկերը։ Կրոչեյան դպրոցի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Ֆ. Շաբոյի «Ժամանակակից Իտալիան» գիրքը 1950 թ. Սորբոնի համալսարանում նրա կարդացած դասախոսությունների դասընթացն է[10]։ Այն հետաքրքիր է նրանով, որ հեղինակը հրաժարվում է ֆաշիզմի, որպես պատմության մեջ հանկարծակի «պաուզայի», կրոչեական բնորոշումից և մեծ տեղ է հատկացնում նրա սոցիալական բնույթին։

Իտալիայի պատմաբանների՝ ֆաշիզմին նվիրված խոշոր աշխատությունների գերակշռող մասը, դրանց հեղինակների պատմամեթոդաբանական ամբողջ տարբերությամբ հանդերձ, միավորված է ֆաշիզմը վճռականորեն դատապարտելու միասնական զգացումով։ Հազվագյուտ բացառություն է Ա. Տամարոյի «Պատմության քսան տարիները» աշխատությունը[11]։ Նրա հեղինակը՝ մի մարտնչող նացիոնալիստ, թեկուզև քննադատում է ֆաշիզմի առանձին միջոցառումները, ամբողջությամբ վերցրած փորձում է ապացուցել, թե Մուսոլինիի դիկտատուրան «համապատասխանում էր Իտալիայի ազգային շահերին»։

Երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանի պատմության առանձին պրոբլեմներին նվիրված իտալական պատմաբանների աշխատությունների առավել մեծ մասը վերաբերում է հետպատերազմյան առաջին տարիներին։ Պետք է նշել այն մեծ ու արդյունավետ աշխատանքը, որ կատարում են իտալական մարքսիստներն այդ ժամանակաշրջանի բանվորական շարժման հարցերի մշակման ասպարեզում։ Պ. Տոլյատտիի, Է. Ռաջոնիերիի, Պ. Ալատրիի, Պ. Սպրիանոյի աշխատություններում, որոնք հիմնված են արխիվային նոր նյութերի վրա, խոր և բազմակողմանիորեն լուսաբանվում են այդ տարիների Իտալիայի պատմության արմատական պրոբլեմները[12]։ Մարքսիստական դիրքերում չկանգնած հեղինակների աշխատությունների մեջ առավել հիմնավոր աշխատանք է պատմաբան Ռ. Դե Ֆելիչեի՝ Մուսոլինիի քննադատական կենսագրությունը[13]։ Բազմահատոր ուսումնասիրության հեղինակն ամենևին էլ հակված չէ իտալական ֆաշիզմը հանգեցնելու Մուսոլինիի անձին, սակայն ֆաշիստական ռեժիմը հասկանալու համար չափազանց կարևոր է համարում տալ նրա գլխավոր ներկայացուցչի մանրակրկիտ բնութագիրը։

---

[9] Տե՛ս L. Salvatorelli e G. Mira. Storia d'Italia nel periodo fascista Torino. 1956:

[10] Տե՛ս F. Chabod. L'Italia contemporanea. Torino, 1965—1968։

[11] Տե՛ս A. Tamaro. Venti anni di Storia. v. 1, 2 Roma, 1953։

[12] Տե՛ս П. Платри. Происхождение фашизма. М., 1961; P. Togliatti. La formazione del gruppo dirigente del PCY nel, 1923—1924, Roma, 1962. P. Togliatti. Opere. A cura di E. Ragionieri, Roma, 1967; P. Spriano. Storia del partito comunista italiano. vol. I, II, III. Torino, 1967—1970։

[13] Տե՛ս R. De Felice. Mussolini, vol. 1, 2, 3. Torino, 1965—1968։

ԳԼՈՒԽ 10

ԻՍՊԱՆԻԱՆ
1918—1939 ԹԹ.

ԻՍՊԱՆԻԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ (ՄԻՆՉԵՎ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ)

Հետպատերազմյան Իսպանիայի սոցիալ-տնտեսական կառուցվածքը

Իմպերիալիզմն Իսպանիայում զարգանում էր ֆեոդալիզմի շատ մնացուկների պահպանման, կաթոլիկ եկեղեցու և օտարերկրյա կապիտալի հետ դաշինք կնքած ֆինանսա-կալվածատիրական օլիգարխիայի տիրապետության պայմաններում։ Ֆինանսա-կալվածատիրական օլիգարխիայի կորիզը կազմում էին այն 100 ընտանիքները, որոնց ձեռքում էր գտնվում երկրի ռեսուրսների վիթխարի մասը։ Գյուղում 150 հազ. կալվածատերերին բաժին էր ընկնում 12 մլն հա հող, այն դեպքում, երբ երկրում կային 2,5 մլն հողազուրկ բատրակներ և 1 մլն աղքատ գյուղացիներ, որոնք ունեին ընդամենը 6 մլն հա հող։ Կիսաֆեոդալական խոշոր լատիֆունդիաները գերակշռում էին երկրի հարավային մասում՝ Անդալուզիայի, Էստրեմադուրայի և Նոր Կաստիլիայի շրջաններում։

Ագրարային-արդյունաբերական Իսպանիան արդյունաբերության զարգացման մակարդակով շարունակում էր ետ մնալ առաջավոր կապիտալիստական տերություններից, չնայած առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նրա կատարած որոշակի թռիչքին։ 1920 թ. երկրի բնակչությունը կազմում էր 20,3 մլն մարդ։ Աշխատող բնակչության 57 տոկոսը զբաղված էր գյուղատնտեսության մեջ, 21,9 տոկոսը արդյունաբերության և 20,81 տոկոսը սպասարկման ոլորտում։ Ֆեոդալական մնացուկները՝ Իսպանիայի զարգացման այդ գլխավոր արգելակը, որոշում էր ներքին շուկայի նեղությունը, գյուղատնտեսության վարման պարզունակ ձևը, բնակչության հիմնական զանգվածի կուլտուրական հետամնացությունը և կալվածատեր ազնվականության գերակշիռ դերը կառավարության մեջ և ամբողջ պետական ապարատում։

Իսպանիայի համար բնորոշ էր առանձին շրջանների տնտեսական զարգացման անհավասարաչափությունը։ Հյուսիսի մարզերը՝ Կատալոնիան, Բասկոնիան և Աստուրիան տեքստիլ արդյունաբերության, մեքենաշինության, էլեկտրատեխնիկական, քիմիական, լեռնահանույթային և մետալուրգիական արդյունաբերության կենտրոնն էին։ Իսպանիայի մնացած մարզերում գոյություն ունեին սննդի, կարի, ապակու և փայտամշակման արդյունաբերության մանր ձեռնարկություններ։ Իսպանիայի հյուսիսի բուրժուազիան զգալիորեն աճեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և շարունակում էր ուժեղանալ հետպատերազմյան տարիներին՝ կառավարության պետական-մոնոպոլիստական միջոցառումների կապակցությամբ։ 20-ական թվականներին հանդես եկան մոնոպոլիստական նոր խոշոր միավորումներ ու բանկեր, ամրապնդվեցին արդեն գոյություն ունեցողները, ուժեղացավ կապիտալի համակենտրոնացումը. 1930 թ. 6 խոշորագույն բանկեր կենտրոնացրել էին երկրի բոլոր բանկային դեպոզիտների ավելի քան 45 տոկոսը։

Իսպանիայի էկոնոմիկայի մի շարք ճյուղերի զարգացման մեջ ակտիվորեն մասնակցում էր օտարերկրյա, գլխավորապես անգլիական, ֆրանսիա-

կան, բելգիական, իսկ առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ նաև ամերիկյան կապիտալը։ 1930 թ. օտարերկրյա կապիտալ ներդրումների գումարն Իսպանիայում կազմեց մոտ 1 մլրդ դոլլար, դրանից անգլիական կապիտալին բաժին էր ընկնում 20 տոկոսը։

Իսպանիայի ֆինանսա-կալվածատիրական օլիգարխիայի բաղկացուցիչ մասը և գոյություն ունեցող կարգերի կարևորագույն սոցիալ-քաղաքական հենարանը կաթոլիկ եկեղեցին էր։ Նա կառավարությունից ստանում էր 50—70 մլն պեսետ ամենամյա դրամական օժանդակություն և հանդես էր գալիս որպես խոշոր բանկիր ու արդյունաբերող։ 1931 թ. եկեղեցին տիրում էր 19.749 հողամասերի, դրանցից ստանալով տարեկան 130 մլն պեսետ ռենտա և դեռ 667 մլն պեսետ էլ որպես պետական 3-տոկոսանոց և այլ արժեթղթերի տեր։

Միապետության և ռեակցիոն մյուս ուժերի հուսալի հենարանը բանակն էր։ Իսպանական բանակն աչքի էր ընկնում մեծ թվով ռեակցիոն սպաների ու գեներալների առկայությամբ, որոնք առաջ էին քաշվել, որպես կանոն, գաղութային պատերազմներում (Պրիմո դե Ռիվերա, Սանխուրխո, Ֆրանկո, Ֆանխուլ, Օչոա և ուրիշներ) և օգտվում էին մեծ արտոնություններից։ Բանակն ակտիվորեն միջամտում էր երկրի քաղաքական կյանքին, պաշտպանելով իր կաստայական շահերը, հաճախ դառնում էր բանվորական ու դեմոկրատական շարժումը ճնշելու գործիք։ Ամենասուր ճգնաժամերի պահերին միապետությունը դիմում էր ռեակցիոն սպայությանը, որպեսզի նրա օգնությամբ երկարացնի իր գոյությունը։ Այդպես եղավ նաև 1923 թ. սեպտեմբերին, երբ գեներալ Պրիմո դե Ռիվերան թագավորի և նրա շրջապատի համաձայնությամբ ու օժանդակությամբ կատարեց պետական հեղաշրջում և հաստատեց ռազմամիապետական դիկտատուրա։ Զինվորականության օգնությամբ Իսպանիայի կառավարող դասակարգերն անողորմ կերպով ճնշում էին ազգային-ազատագրական շարժումը Մարոկկոյում։

Երկրի հասարակական-քաղաքական կյանքում կարևոր տեղ էր գրավում ազգային պրոբլեմը։ Ազգային փոքրամասնություններով բնակեցված Իսպանիայի երեք շրջաններից՝ Կատալոնիայից, Բասկոնիայից ու Գալիսիայից առաջին երկուսն արդյունաբերական տեսակետից երկրի առավել զարգացած շրջաններն էին, որոնց համար մնացած Իսպանիան ծառայում էր որպես արդյունաբերական արտադրանքի իրացման շուկա։ Կալվածատիրական-բուրժուական միապետությունը չէր ճանաչում ազգային փոքրամասնությունների ոչ մի իրավունք, արգելակում էր ազգային մշակույթի զարգացումը։ Այդ շրջաններում իսպանական իշխանությունների լուծը առաջացրեց ինքնավարության համար ազգային շարժման աճ, որի գլուխ էին կանգնած բուրժուական-նացիոնալիստական ազդեցիկ կուսակցությունները։

Միապետական կարգերի պայմաններում հողային արիստոկրատիայի քաղաքական հեգեմոնիան, ֆինանսական օլիգարխիայի կապը լատիֆունդիստների, եկեղեցու, օտարերկրյա կապիտալի, ռեակցիոն գեներալիտետի հետ ստեղծում էին պրոբլեմների մի կոմպլեքս, որոնք կարող էին լուծվել միայն բուրժուադեմոկրատական հեղափոխության միջոցով։ Միայն նրա օգնությամբ կարելի էր հասնել Իսպանիայի հետամնացության հաղթահարմանը, աշխատավորության, այդ թվում հետպատերազմյան ժամանակաշրջանում երկրում լուրջ ուժ դարձած բանվոր դասակարգի նյութական դրության բարելավմանը։

Իսպանիայի բանվոր դասակարգի դրությունը և նրա կազմակերպությունները

1930 թ. մոտերքը Իսպանիայի արդյունաբերության մեջ և տրանսպորտում զբաղված էր մոտ 2 մլն մարդ, որոնց մոտ կեսը կենտրոնացած էր չորս (50-ից) պրովինցիաներում՝ Բարսելոնայում, Բիսկայայում, Աստուրիայում և Մադրիդում։ Իսպանիայի բանվոր դասակարգի դրությունը չափազանց ծանր էր. 1930 թ. իսպանական արդյունաբերական բանվորի աշխատավարձը անգլիական բանվորի աշխատավարձի միայն 45—50 տոկոսն էր կազմում։ Իրականում աշխատանքի պահպանություն գոյություն չուներ, ծայրահեղ աղքատ էր սոցիալական օրենսդրությունը, գոյություն չուներ գործազրկության պետական նպաստ։ Բանվորական արիստոկրատիայի խավը փոքրաթիվ էր։ Է՛լ ավելի ծանր էր բատրակների կյանքը։ Գյուղատնտեսական բանվորների նոմինալ աշխատավարձը 2—3 անգամ ցածր էր արդյունաբերական բանվորների աշխատավարձից։ Մինչև 1931 թ. բատրակների համար սոցիալական ոչ մի օրենսդրություն չկար, և տարեկան 4—5 ամիս նրանք աշխատանքից զուրկ էին։

Իսպանիայի քաղաքային ու գյուղական պրոլետարիատի՝ զգալի չափով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցության տակ ընթացող պայքարը աչքի էր ընկնում հեղափոխական բարձր լարվածությամբ, ձևերի սրությամբ և խոր համերաշխության դրսևորմամբ, բայց այն թուլանում էր բանվոր դասակարգի պառակտվածությամբ, որտեղ գոյություն ունեին երեք գլխավոր հոսանքներ՝ սոցիալիստական, անարխո-սինդիկալիստական և կոմունիստական։

Իսպանական սոցիալիստական բանվորական կուսակցությունը (ԻՍԲԿ) և նրա ղեկավարած արհմիութենական միավորումը՝ Աշխատավորների ընդհանուր միությունը (ԱԸՄ) 1930 թ. գերակշռող ազդեցություն ունեին Մադրիդի, Բասկոնիայի, Աստուրիայի բանվորների և Կաստիլիայի ու Էստրեմադուրայի բատրակների շրջանում։ 1921 թ. պառակտումից հետո, երբ ԻՍԲԿ-ից առանձնացավ ձախ թևը, որը կազմավորեց Իսպանական կոմունիստական բանվորական կուսակցությունը, ԻՍԲԿ ղեկավարությունն ամբողջապես կանգնեց ռեֆորմիզմի ուղին և նույնիսկ համագործակցում էր Պրիմո դե Ռիվերայի ռեակցիոն դիկտատուրայի հետ։ Այդ համագործակցության գնով ԻՍԲԿ-ն և ԱԸՄ-ը պահպանեցին իրենց կազմակերպությունները դիկտատուրայի ժամանակաշրջանում և հաջողությամբ պայքար էին մղում մյուս բանվորական կազմակերպությունների դեմ հանուն իրենց դիրքերի ամրապնդման։ 1920 թ. ԻՍԲԿ-ն հաշվվում էր 10,5 հազ. անդամ, ԱԸՄ-ում՝ 277 հազար։ ԻՍԲԿ-ի ներսում մշտապես գոյություն ուներ ղեկավարության պաշտոնական գծի ձախ օպոզիցիա։ 1930 թ. սկզբին ԻՍԲԿ-ի ղեկավարությունը եկավ այն եզրակացության, որ Իսպանիայում հասունանում է բուրժուական հեղափոխությունը, որտեղ սոցիալիստները պետք է խաղան բուրժուական հանրապետականների կրտսեր պարտնյորի դեր։ ԻՍԲԿ-ի պարագլուխների համար խորթ էր բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը. նրանք թերագնահատում էին ագրարային ու ազգային հարցերն այդ հեղափոխության մեջ։

Անարխո-սինդիկալիստական հոսանքը նույնպես խոր արմատներ ուներ Իսպանիայում։ Աշխատանքի ազգային կոնֆեդերացիան (ԱԱԿ), անարխո-սինդիկալիստական այդ արհմիութենական միավորումը, որը 1920 թ. հաշվվում էր 1 մլն անդամ, զգալի ազդեցություն ուներ Կատալոնիայի, Վալենսիայի, Արագոնայի պրոլետարիատի և Անդալուզիայի գյուղատնտեսական պրո-

լետարիատի շրջանում։ ԱԱԿ-ը աչքի էր ընկնում հեղափոխական ֆրազեոլոգիայով, խստագույն հակակղերականությամբ և պայքարի պառլամենտական ձևերի նկատմամբ իր ունեցած բացասական վերաբերմունքով։ Ագրարային հարցում նա պահանջում էր լատիֆունդիաների սեփականազրկում և դրանց հանձնումը «հողագործների արհմիություններին», հանդես գալով հողը գյուղացիների միջև բաժանելու դեմ։ ԱԱԿ-ը մերժում էր արդյունաբերության ազգայնացումը, պահանջելով արդյունաբերական ձեռնարկությունները հանձնել արհմիություններին։ ԱԱԿ-ը սկզբունքորեն անտեսում էր ազգային հարցի գոյությունն Իսպանիայում։

ԱԱԿ-ը գտնվում էր անարխիստների ազդեցության տակ, բայց 1918—1920 թթ. հեղափոխական վերելքի տարիներին Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ազդեցությամբ անարխիստների հեղինակությունը ԱԱԿ-ի բանվորների շրջանում ուժգին խարխլվեց։ 1923 թ., երբ հաստատվեց Պրիմո դե Ռիվերայի ռազմական դիկտատուրան, ԱԱԿ-ի ղեկավարությունը որոշում ընդունեց ինքնացրման մասին։ ԱԱԿ-ի առանձին արհմիություններ հրաժարվեցին այդ որոշմանը ենթարկվել և պայքարը շարունակում էին որպես ինքնավար կազմակերպություններ։ Ծանր փորձությունների այդ տարիներին ԱԱԿ-ի լավագույն մարդիկ, այնպիսիք, ինչպես Խոզե Դիասը, Անտոնիո Միխեն, ընդունվեցին ԻԿԿ-ի շարքերը։ 1930 թ. ԱԱԿ-ը վերսկսեց իր լեգալ գործունեությունը։ Արհմիություններում իր խարխլված ազդեցությունն ամրապնդելու համար 1927 թ. հուլիսին Վալենսիայում անարխիստներն անցկացրին իրենց ընդհատակյա կոնֆերանսը, որին մասնակցեցին նաև Պորտուգալիայի անարխիստները։ Այդ ժամանակ կազմվեց Իբերիայի անարխիստների ֆեդերացիան (ԻԱՖ), որը զուտ անարխիստական կազմակերպություն էր, ժառանգելով գաղափարախոսության ու կազմակերպության ասպարեզում բակունինյան Ալյանսի շատ դրույթներ։ ԻԱՖ-ն ուներ իր դինված ուժերը՝ այսպես կոչված գործողության խմբերը, որոնք պահվում էին արհմիությունների հաշվին։ Հեղափոխության նախօրյակին ԱԱԿ-ի ղեկավարության մեծ մասը ԻԱՖ-ի անարխիստների ազդեցության տակ բանվորներին կոչ արեց անարխիստական հեղափոխություն կատարել և մյուս բանվորներից ու երկրի դեմոկրատական ուժերից կտրված հաստատել «ազատ կոմունիզմ»։

Իսպանիայի կոմունիստական կուսակցությունը կազմավորվեց 1920 թ. ապրիլի 15-ին սոցիալիստական երիտասարդության ֆեդերացիայի հիման վրա։ 1921 թ. նրա հետ միաձուլվեց Իսպանական կոմունիստական բանվորական կուսակցությունը, որը պառակտվեց ԻՍԲԿ-ից։ 1923 թ. ԻԿԿ-ն, երբ այն դեռ շատ երիտասարդ էր և չամրապնդված, արգելվեց Պրիմո դե Ռիվերայի կողմից և ընդհուպ մինչև 1931 թ. ստիպված էր գոյություն ունենալ անլեգալ պայմաններում, լինելով դիկտատուրայի հալածանքների գլխավոր օբյեկտը (կարճ ժամանակամիջոցում ԻԿԿ-ն ստիպված էր հինգ անգամ լրացնել Կենտկոմի կազմը, քանի որ նրա բոլոր անդամները բանտերում էին գտնվում)։ Նրա անդամներից շատերը ստիպված էին դիմել վտարանդիության։ 1929 թ. օգոստոսին ԻԿԿ-ն անլեգալ կերպով անցկացրեց իր III համագումարը։ Համագումարի որոշումներում նշվում էր, որ Իսպանիայում հասունանում է բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը։ Համագումարը կուսակցության առջև խնդիր դրեց ապահովել պրոլետարիատի ղեկավար դերն այդ հեղափոխության մեջ, առաջադրեց բանվորա-գյուղացիական կառավարության լոզունգ։ Սակայն ԻԿԿ-ն այդ ժամանակ դեռ մասսայական կուսակցություն չէր։ Երիտասարդության կոմունիստական կազմակերպությունների անդամների հետ միասին այնտեղ կար մոտ 1200 անդամ։

20-ական թվականների վերջերին իրենց պառակտչական գործունեությամբ ԻԿԿ-ին մեծ վնաս հասցրին տրոցկիստները, և հատկապես Կատալոնիայում ու Վալենսիայում, ուր նրանց հաջողվեց գրավել ղեկավարությունը և տեղական կազմակերպություններն անջատել կոմկուսից։

Մասնակի ու ժամանակավոր կայունացումից հետո (1924—1929 թթ.), որի գլխավոր առանձնահատկությունն Իսպանիայում այն էր, որ նա տեղի էր ունենում Պրիմո դե Ռիվերայի ռազմական դիկտատուրայի պայմաններում, վրա հասավ տնտեսական խոր ճգնաժամը։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամն սկսվելուն պես Իսպանիայի բանվոր դասակարգը վճռականորեն պայքարի ելավ։ Ավելի ու ավելի ակտիվորեն էին հանդես գալիս և՛ մանր ու միջին բուրժուազիայի լայն խավերը, և՛ առաջադեմ մտավորականությունը։ Դժգոհությունը տարածվեց նաև բանակի առաջադիմորեն տրամադրված սպաների մի խմբի մեջ։ Ֆինանսա-կալվածատիրական օլիգարխիան համոզվելով, որ Պրիմո դե Ռիվերայի դիկտատուրան այլևս չի կարող ապահովել իր շահերի անվտանգությունը, դիկտատորին զոհաբերեց։ 1920 թ. հունվարի 30-ին Պրիմո դե Ռիվերան հրաժարական տվեց, իսկ այդ նույն թվականի օգոստոսին ավարտվեց հանրապետական կուսակցությունների և սոցիալիստների դաշինքի ձևավորումը. նրանք ստորագրեցին այսպես կոչված Սան-Սեբաստյանի պակտը։ Իսպանիայում հասունանում էր բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, որն սկսվեց միապետության տապալմամբ և 1931 թ. ապրիլի 14-ին հանրապետության հռչակումով։

1931—1939 թթ.
ԲՈՒՐԺՈՒԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հեղափոխությունն անցավ երեք էտապ. առաջին էտապը՝ 1931 թ. ապրիլի 14-ից մինչև 1933 թ. նոյեմբեր, հանդիսացավ հանրապետական-սոցիալիստական կառավարությունների էտապը. երկրորդ էտապը՝ 1933 թ. նոյեմբերից մինչև 1936 թ. փետրվար, պատմության մեջ մտավ որպես «սև երկամյակ», և երրորդ էտապը՝ 1936 թ. փետրվարից, այսինքն՝ կորտեսների ընտրություններում ժողովրդական ճակատի տարած հաղթանակի պահից մինչև 1939 թ. մարտի վերջը. այս էտապը գրեթե լիովին համընկնում է իսպանական ժողովրդի մղած հեղափոխական-ազատագրական պատերազմի հետ, որը դարձավ հեղափոխության բարձրագույն պահը։

Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության առաջին էտապը 1931—1933 թթ.

1931 թ. ապրիլի 14-ին ժողովուրդն իշխանությունը հանձնեց ժամանակավոր կառավարությանը, որն իր կազմով ներկայացնում էր բոլոր այն կուսակցություններին, որոնք մասնակցում էին Սան-Սեբաստյանի պակտին. պրեմիեր մինիստր դարձավ Ալկալա Սամորան, ներքին գործերի մինիստր՝ Միգել Մաուրան, երկուսն էլ խոշոր կալվածատերեր, կաթոլիկներ, նախկինում թագավորական մինիստրներ. արտաքին գործերի մինիստր՝ Ա. Լերրուսը, մութ անցյալով մի հին դեմագոգ, որն

անձամբ կապված էր ֆինանսական օլիգարխիայի հետ*. ռազմական մինիստր՝ Մ. Ասանյան, լիբերալ մտավորականության շրջաններից ելած մի գործիչ, որը հայտնի հրապարակախոս էր և հռետոր։ Սոցիալիստները գլխավորեցին երեք մինիստրություն՝ աշխատանքի (Լարգո Կաբալյերո), ֆինանսների (Ի. Պրիետո) և արդարադատության (Ֆ. դե Լոս Ռիոս)։ Ժամանակավոր կառավարության ստեղծումը ցնծությամբ ընդունեցին ժողովրդական լայն զանգվածները, որոնք հույսեր էին փայփայում արմատական ռեֆորմների անհապաղ իրագործման մասին։ Դրա հետ մեկտեղ դեռ այդ ժամանակ մի շարք վայրերում, օրինակ, Սեվիլիայում, բանվորներն առաջադրում էին «Կեցցե՛ սովետները», «Բանվորա-գյուղացիական կառավարությո՛ւն» լոզունգները։ Կատալոնիայում նացիոնալիստները հանրապետություն հռչակեցին։

Օգտագործելով ժողովրդական զանգվածների վճռական օժանդակությունը, կառավարությունը կարող էր կարճ ժամկետում լուծել երկրի հրատապ պրոբլեմները։ Բայց նա այդ չարեց։

Ապրիլի 15-ին ժամանակավոր կառավարությունը դեկրետ հրապարակեց ներում շնորհելու մասին։ Այդ ժամանակ էլ հռչակվեցին բուրժուա-դեմոկրատական ազատությունները՝ խղճի ու դավանանքի, անձի, արհմիությունների գործունեության և այլն։ Բայց ժամանակավոր կառավարությունն ամենայն վճռականությամբ հայտարարեց, որ «մասնավոր սեփականությունը երաշխավորվում է օրենքով և, որպես դրա հետևանք, չի կարող սեփականազրկման ենթարկվել, բացառությամբ հասարակական անհրաժեշտության դեպքերի և արժեքի նախապես համապատասխան հատուցմամբ»։ Ռազմական մինիստր Ասանյայի լայնորեն ռեկլամված «դեկրետները», որոնք նպատակ ունեին իբր բանակը մաքրել հանրապետության թշնամիներից, միայն որոշ չափով կըրճատեցին սպաների թիվն ու գեներալիտետը։ Առավել ռեակցիոն գեներալները՝ Ֆրանկոն, Գոդեդը, Սանխուրխոն, Մոլան և ուրիշներ առաջվա պես մընում էին բանակում։ Չցրվեց նաև «քաղաքացիական գվարդիան», ժողովրդի համար ատելի այդ ժանդարմերիան, որը կալվածատերերին հենարան էր ծառայում գյուղում։ Ավելին, այն լայնորեն օգտագործվում էր հանրապետական իշխանությունների կողմից բանվորների և գյուղացիների ելույթները ճնշելու համար։ 1931 թ. նրա հետ միասին հանրապետականներից ստեղծվեցին ոստիկանական զորամասեր, որոնք ստացան «գրոհային գվարդիա» անունը։

Աշխատանքի մինիստր Լարգո Կաբալյերոյի առաջարկությամբ ժողովրդական կառավարությունն ապրիլի վերջին հրապարակեց մի քանի դեկրետ, որոնք թեթևացնում էին վարձակալների (արգելվում էր նրանց արտաքսումը պարտքերի համար) և գյուղատնտեսական բանվորների վիճակը։ Սակայն ոչ մի միջոցառում չձեռնարկվեց գյուղի աշխատավորության դրությունը բարելավելու համար։ Ժամանակավոր կառավարությունը չկարողացավ կազմալուծել հանրապետության թշնամիների գործողությունները, մասնավորապես կանխել կապիտալների փախուստը դեպի արտասահման, որը սկսվել էր դեռ ապրիլին և լուրջ վնաս էր հասցնում երկրի էկոնոմիկային, դեռ չխոսելով միապետական կալվածատիրական և կղերական ռեակցիայի քաղաքական լկտի հարձակումների մասին։

* Ա. Լերրուսը Ռադիկալ հանրապետական կուսակցության պարագլուխն էր. այդ կուսակցությունը միավորում էր արդյունաբերական միջին և բանկային բուրժուազիայի զգալի մասին և մանր բուրժուազիայի լայն շրջաններին, գլխավորապես արևելյան պրովինցիաներում՝ Կատալոնիայում, Վալենսիայում և Անդալուզիայի մի մասում։

Ռեակցիոն տարրերի հակահանրապետական անպատիժ պրոպագանդան առաջ բերեց ժողովրդի բուռն ռեակցիան։ Մայիս-հունիսին ժողովրդական զանգվածների զայրույթն արտահայտվեց վանքերի բազմաթիվ հրկիզումներում, պահպանողական թերթերի խմբագրությունների վրա կատարված հարձակումներում, ոստիկանության հետ տեղի ունեցած ընդհարումներում և քաղաքական մի շարք գործադուլների ու մանիֆեստացիաների անցկացման մեջ։ Ժողովրդական զանգվածները կառավարությունից պահանջում էին վճռական միջոցներ ձեռնարկել հանրապետության թշնամիների դեմ։

1931 թ. հունիսի 28-ին տեղի ունեցան սահմանադիր կորտեսների ընտրություններ։ Քվեի իրավունք ունեին միայն 23 տարուց բարձր տարիք ունեցող տղամարդիկ։ Ընտրությունների հետևանքով ձախ ուժերը՝ սոցիալիստների ու ձախ հանրապետական կուսակցությունների բլոկը, ստացան 263 դեպուտատական տեղ (դրանցից սոցիալիստները՝ 116), հաղթելով բոլոր խոշոր քաղաքներում, կենտրոնը՝ 110 (դրանցից ռադիկալները՝ 90), իսկ աջերը՝ միայն 44 տեղ (գլխավորապես Կաստիլիայի ու Նավարրայի ետամնաց ագրարային շրջանների բնակչության ձայների հաշվին)։ Սահմանադիր կորտեսները բացվեցին հուլիսի 14-ին։ Նրանք հաստատեցին կառավարության լիազորությունները, որը դադարեց ժամանակավոր լինելուց, և ստեղծեցին հանձնաժողով՝ սահմանադրություն մշակելու համար։

1931 թ. դեկտեմբերի 9-ին ընդունվեց սահմանադրությունը, այն Իսպանիան հռչակում էր «բոլոր դասակարգերի աշխատավորության դեմոկրատական հանրապետություն, որը կառուցված է ազատության ու արդարության սկզբունքների վրա» և հաստատում էր մինչ այդ նվաճված հիմնական դեմոկրատական ազատությունները։ Սահմանադրությունը ընտրական իրավունք էր տրամադրում կանանց, հայտարարում պատերազմից հրաժարվելու մասին, որպես ազգային քաղաքականության գործիքի, հռչակում, որ սեփականությունը կարող է լինել «հարկադիր օտարացման առարկա հանուն հասարակական օգտի, բայց արդարացի փոխհատուցմամբ», լայն ճանապարհ էր բացում երկրում դեմոկրատական վերափոխությունների համար։ Նոր կառավարությունը կարող էր անհապաղ անցնել հեղափոխության կարևորագույն խնդիրների լուծմանը, հատկապես 1931 թ. վերջին, երբ նրանից դուրս եկան աջ հանրապետական պարագլուխներ Ալկալա Սամորան և Միգել Մաուրան և ռադիկալների պարագլուխ Լերրուսը։ Սակայն կառավարությունը, որը գլխավորում էր Մ. Ասանյան և որի կազմում չկային ֆինանսա-կալվածատիրական օլիգարխիայի ուղղակի ներկայացուցիչներ, չընթացավ այդ ուղիով։ Նա անհրաժեշտ միջոցներ չձեռնարկեց մոնոպոլիստական ընկերությունների ու բանկերի արտոնություններն ու շահույթները սահմանափակելու ուղղությամբ, օտարերկրյա կապիտալի դիրքերը երկրում մնացին անփոփոխ, եկեղեցին առանձնացվեց պետությունից, բայց նրա կապիտալներն ու հողերը պահպանվեցին։

Հանրապետական-սոցիալիստական բլոկի ծայրահեղ անվճռականությունը արտահայտվեց նաև ագրարային հարցի լուծման մեջ։ Միայն 1932 թ. մարտին կորտեսներում սկսվեց ագրարային ռեֆորմի նախագծի քննարկումը։ Իսկ ագրարային ռեֆորմը, որը սահմանափակ բնույթ ուներ և ամենևին չէր խարխլում հողային արիստոկրատիայի տիրապետության հիմքերը, հռչակվեց միայն 1932 թ. սեպտեմբերի 15-ին, այսինքն՝ հեղափոխությունն սկսվելուց 17 ամիս հետո։ Այն նախատեսում էր սեփականազրկում՝ 13 կատեգորիայի խոշոր հողային տիրույթների փոխհատուցմամբ հանդերձ. առաջին հերթին

դրանք այն հողերն էին, որոնք կամավոր կերպով օտարացվել էին կալվածատերերի կողմից. այն հողերը, որոնք պատկանում էին մունիցիպալիտետներին, կորպորացիաներին ու հիմնարկություններին և տրվում էին վարձակալության. մեկ սեփականատիրոջ պատկանող հավելյալ հողերը, եթե դրանք գերազանցում էին մունիցիպալ օկրուգի $^1/_6$ մասին, իսկ դրանցից ստացվող եկամուտը՝ նրա եկամտի 20 տոկոսը, և այլն։ Սեփականաշրջված հողերը հանձնվում էին սակավահող գյուղացիների և գյուղատնտեսական բանվորների կազմակերպությունների օգտագործմանը։ Մինչև 1933 թ. վերջը ագրարային ռեֆորմի միջոցով նրանց հանձնվեց 111 հազ. հա հող։ Ագրարային ռեֆորմը գրեթե չշոշափեց վարձակալական հարաբերությունները։

Կառավարության քաղաքականությունը հիասթափություն էր առաջացնում գյուղի աշխատավորության մեջ, նրանց մղում դեպի հեղափոխական ուղին։ Կատալոնիայում դեռ 1931 թ. ամռանը վարձակալ գյուղացիները լայն շարժում ծավալեցին ստրկացուցիչ վարձակալության դեմ, հրաժարվելով կալվածատերերին վճարել վարձակալման վճարը։ Անդալուզիայում և Էստրեմադուրայում 1931 թ. ամռանից գյուղատնտեսական բանվորներն ու գյուղացիներն ավելի ու ավելի հաճախ էին ինքնակամ կերպով զավթում ամայի հողերը և դրանք մշակում։ 1932 թ. հունվարից կալվածատիրական հողերի բաժանման համար մղվող գյուղացիական շարժումը տարածվեց Կաստիլիայի մի շարք պրովինցիաներում։ Գյուղացիներն ու բատրակները պայքարը շարունակում էին նաև ագրարային ռեֆորմի իրականացումից հետո, քանի որ այն չէր համապատասխանում իրենց ձգտումներին։ 1933 թ. միայն հունվարից մինչև մարտ Էստրեմադուրայում և Անդալուզիայում արձանագրվել է կալվածքների զավթման 311 դեպք։

Քողարկվելով «Հանրապետության պաշտպանության մասին» 1931 թ. հոկտեմբերին ընդունված օրենքով, հանրապետականների ու սոցիալիստների կառավարությունը կանգնեց գյուղացիական ու բատրակային շարժման արյունալի ճնշման ուղին, դրանով իսկ խարխլելով իր հենարանը ժողովրդի մեջ։

Կառավարությունը հետևողական չէր նաև ազգային հարցի լուծման ասպարեզում։ Դեռ 1931 թ. ապրիլին նա ստիպված էր de facto ճանաչել Կատալոնիայի հենց նոր ստեղծված կառավարությունը։ Բայց միայն 1932 թ. սեպտեմբերին կորտեսները հաստատեցին Կատալոնիայի ինքնավարության ստատուսը, որը մշակել էր կատալոնյան կառավարությունը։ Բասկոնիայի ինքնավարության նախագիծը թաղվեց տարբեր հանձնաժողովներում և այդպես էլ չհաստատվեց։ Ինքնավար իրավունքներ չտրվեցին նաև Գալիսիային։ Այսպիսով, ազգային հարցը լուծվեց միայն մասնակիորեն։ Ինքնորոշման իրավունք չտրվեց գաղութներին, այդ թվում նաև Մարոկկոյին։

Ժողովրդական զանգվածներին չկարողացավ լիովին բավարարել հանրապետականների ու սոցիալիստների կառավարության քաղաքականությունը՝ աշխատանքի և բանվորական օրենսդրության բնագավառում։ 1931 թ. ապրիլին ժամանակավոր կառավարությունը վավերացրեց արդյունաբերության մեջ 8-ժամյա աշխատանքային օրվա մասին օրենքը, իսկ հուլիսին այն տարածվեց նաև գյուղատնտեսական բանվորների վրա, որոնց նկատմամբ սկսեց գործել աշխատանքում տեղի ունեցած դժբախտ դեպքերի համար փոխհատուցման օրենքը։ Օգոստոսին հանքահորերում աշխատանքային օրը սահմանափակվեց մինչև 7 ժամի։ Նույն թվականին սահմանվեց նվազագույն աշխատավարձ։ Գործադրկության դեմ պայքարելու համար (երկրում կային 500 հազարից ավելի գործազուրկներ) Լարգո Կաբալյերոյի առաջարկությամբ ըստեղծվեց «Ազգային դրամարկղ ընդդեմ գործազրկության», որը նպաստներ էր տալիս, բայց միայն 60 օր։

Ինքը՝ աշխատանքի մինիստր Լարգո Կաբալյերոն, ինչպես և սոցիալիստական մյուս պարագլուխները, բանվորներին կոչ էր անում հրաժարվել գործադուլային պայքարից, պնդում, թե իբր այն վնաս է հասցնում հանրապետությանը։ Արդեն վերը հիշատակված «Հանրապետության պաշտպանության մասին» օրենքն արգելում էր բոլոր քաղաքական գործադուլները, իսկ ցանկացած տնտեսական գործադուլի հայտարարմանը պետք է նախորդեր հարկադիր արբիտրաժը։

Բանվորների աշխատավարձը հանրապետության առաջին տարիներին որոշ չափով բարձրացվեց, թեև անհավասարաչափ և ուղղակիորեն կախված մասսաների մղած պայքարի ակտիվության աստիճանից։ Իսպանիայի պրոլետարիատը, որը հուսով էր, թե հանրապետության հռչակումով և աշխատանքի մինիստրի պաշտոնում սոցիալիստական կուսակցության պարագլխի նշանակումով իրեն վերաբերող պրոբլեմները կլուծվեն, շուտով վերսկսեց ակտիվ գործադուլային պայքարը։ Հանրապետության հենց միայն առաջին տարում երկրում տեղի ունեցավ 3643 գործադուլ։ Գործադուլների մեծ մասը կազմակերպեց ԱԱԿ-ը։ Այս կազմակերպության մեջ 1931 թ. սկզբին պայքար ծավալվեց Ա. Պեստանյայի գլխավորած սինդիկալիստական ռեֆորմիստական հոսանքի և ԻԱՖ-ի անարխիստական տարրերի միջև։ 1931—1932 թթ. ԻԱՖ-ի անարխիստները գրավեցին ԱԱԿ-ի ղեկավարությունը և նրա վզին փաթաթեցին «պուտչի», «ընտրություններին չմասնակցելու», «ընդհանուր գործադուլի» անարխիստական տակտիկան։ Այդ ժամանակաշրջանում անարխիստները «ազատ կոմունիզմի» հաստատման լոզունգով բազմիցս պուտչիստական ելույթներ էին կազմակերպում Բարսելոնայում, Մադրիդում և մի շարք այլ քաղաքներում ու գյուղական վայրերում։ Պուտչիստական տակտիկան վնաս էր հասցնում աշխատավոր զանգվածների պայքարին։ Բայց այդ տարիներին բանվորների զգալի մասը հավատում էր անարխիստներին, անհապաղ «սոցիալական հեղափոխություն» կատարելու և «ազատ կոմունիզմ» իրականացնելու նրանց կոչերին։ ԱԱԿ-ի ազդեցության աճին նպաստում էր սոցիալիստական ղեկավարների հակազդեցությունը պրոլետարիատի ակտիվ ելույթներին։

Մի կողմից, ԻՍԲԿ-ի պարագլուխների համաձայնողականության և մյուս կողմից անարխիստական ղեկավարության ավանտյուրիստական տակտիկայի հետևանքով Իսպանիայի պրոլետարիատը, գյուղացիության հետ միասին լինելով հեղափոխության գլխավոր շարժիչ ուժը, հեղափոխության առաջին էտապում չկարողացավ դառնալ նրա հեգեմոնը։ Այդ դերն իրականացնում էր միջին և մանր բուրժուազիան ի դեմս ձախ հանրապետական կուսակցությունների։ Այդ պատճառով բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ոչ մի գլխավոր խնդիր արմատականորեն չլուծվեց։

Իսպանիայի կոմունիստական կուսակցությունն այդ տարիներին դեռ չէր կարող վճռական ազդեցություն ունենալ իրադարձությունների ընթացքի վրա, թեև ակտիվորեն մասնակցում էր հացի ու հողի համար աշխատավորության մղած պայքարին։ Նա իր հիմնական ուժերն ուղղում էր դեպի միասնական ճակատի ստեղծումը ներքևից։ Միայն IV համագումարից հետո, որը կայացավ 1932 թ. մարտին, ինչպես նաև ԻԿԿ-ի աղանդավորական ղեկավարությանը 1932 թ. հոկտեմբերին հեռացնելուց հետո, ԻԿԿ-ն ուժեր հավաքեց և հետագայում անցավ ֆաշիզմի հարձակման դեմ մղվող պայքարի գլուխ։ 1932

թ. ԻԿԿ ղեկավարության գլուխ անցան Խոզե Դիասը և Դոլորես Իբարուրին։ Այդ թվականն ԻԿԿ-ի պատմության մեջ մտավ որպես կոմկուսը մասսայական կուսակցության վերածվելու ճանապարհին կատարված կտրուկ շրջադարձի տարի։

1932 թ. օգոստոսին ռեակցիայի հակահանրապետական ուժերը Մադրիդում ու Սեվիլիայում խռովություն բարձրացրին, որը ճնշվեց։ Դրա հետ միասին դաժանորեն ճնշվում էին նաև աշխատավոր զանգվածների ելույթները, որոնք կորցրել էին վստահությունը ձախ հանրապետականների ու սոցիալիստների կառավարության հանդեպ, մի բան, որը նպաստեց 1933 թ. սեպտեմբերին նրանց բլոկի քայքայմանը և կառավարությունից սոցիալիստների դուրս գալուն։ Այդպիսի իրադրության մեջ կորտեսները ցրվեցին և նշանակվեցին նոր պառլամենտական ընտրություններ։ 1933 թ. նոյեմբերին տեղի ունեցած ընտրություններում ռեակցիայի կուսակցությունները հանդես եկան միասնական ճակատով, ընտրական բլոկ կազմելով ՍԷԴԱ-յի (աջ ինքնավար ուժերի իսպանական կոնֆեդերացիա) շուրջ, որը ձգտում էր վերացնել հանրապետության օրենսդրությունը և բացահայտորեն պաշտպանել լատիֆունդիստների ու ֆինանսական օլիգարխիայի տնտեսական շահերը։ ՍԷԴԱ-ն գլխավորում էր եկեղեցու հետ կապված կաստիլյան խոշոր կալվածատերերի ու ֆինանսիստների հայտնի փաստաբան Խ. Մ. Խիլ Ռոբլեսը։

Ընտրական կամպանիայի ընթացքում ստեղծվեց ֆաշիստական ֆալանգիստական կուսակցությունը (1933 թ. հոկտեմբեր)։ Նրա պարագլուխն ու հիմնադիրներից մեկն էր Խ. Ա. Պրիմո դե Ռիվերան՝ դիկտատոր Մ. Պրիմո դե Ռիվերայի որդին։ Ավելի առաջ, 1931 թ. վերջին, Իսպանիայում կազմավորվեց մի այլ ֆաշիստական կուսակցություն՝ ԽՈՆՍ-ը (հարձակման ազգային-սինդիկալիստական խումբ)։ 1934 թ. փետրվարին երկու ֆաշիստական կուսակցությունները միավորվեցին մեկ՝ «Իսպանական ֆալանգա և ԽՈՆՍ» կուսակցության մեջ։

Ընտրությունների պահին ձախ ուժերը պառակտված էին. սոցիալիստները, որոնք մինչև 1933 թ. սեպտեմբերը մտնում էին կառավարությունների մեջ, հանդես էին գալիս ինքնուրույն, հայտարարելով բուրժուական հանրապետականների հետ իրենց համագործակցությունից հիասթափվելու մասին, որը բացատրվում էր կուսակցության ղեկավարության նախորդ քաղաքական գծից կուսակցության զգալի թվով անդամների դժգոհությամբ, Գերմանիայում ֆաշիզմի տարած հաղթանակից հետո բանվորական զանգվածների ձախացումով, ԻԿԿ-ի ազդեցության աճով։

ԱԱԿ-ը բանվորներին կոչ էր անում ընտրություններին չմասնակցել, դրանք բոյկոտի ենթարկել, որը օբյեկտիվորեն նպաստեց աջ ուժերի հաջողությանը։

Օգտագործելով հանրապետական-սոցիալիստական կառավարությունների քաղաքականությունից մասսաների հիասթափությունը, լայնորեն կիրառելով կաշառքը, խաբեությունն ու դեմագոգիական խոստումները, ռեակցիայի միացյալ ուժերին հաջողվեց ընտրություններում հաղթանակ տանել։ Նրանք ստացան դեպուտատական տեղերի մեծամասնությունը (թեև ոչ բացարձակ, ընդամենը 217 տեղ)։ Դեպուտատների թվով երկրորդ տեղը գրավեցին ռադիկալները։ Մի շարք պրովինցիաներում և Մադրիդում հաղթեցին սոցիալիստները։ Ձախ հանրապետական կուսակցությունները, բացառությամբ կատալոնյան «Էսկերրա» ձախ կուսակցության, որը գլխավորում էր Կատալոնիայի ինքնավարության համար մղվող պայքարը, դաժան պարտություն կրեցին։ Կոմունիստական կուսակցության օգտին տրվեց 400.000 ձայն (1931 թ.՝ 60.000), կորտեսներում առաջին անգամ մեկ կոմունիստ դեպուտատ ընտրվեց Մալագայից։

Հեղափոխության երկրորդ էտապի սկիզբը

1933 թ. նոյեմբերին աջերի տարած հաղթանակով սկսվեց Իսպանիայում բուրժուա-դեմոկրատական հեղափոխության երկրորդ էտապը («սև երկամյակ»)։ 1933 թ. դեկտեմբերին ռադիկալ Լերրուսը ՍԷԴԱ-յի հետ կայացած համաձայնությամբ կազմեց նոր կառավարություն, որտեղ ֆինանսա-կալվածատիրական օլիգարխիան ուներ իր ուղղակի ներկայացուցիչները։ Այդ կառավարությունն անմիջապես անցավ հանրապետության նախորդ երկուսուկես տարվա օրենսդրության վերացմանը։ 1934 թ. փետրվարի 11-ին կառավարական դեկրետով կարգադրվում էր արտաքսել այն գյուղացիներին, որոնք նախկինում ընդունված օրենքներով հող էին ստացել։ Մի այլ օրենք դադարեցնում էր վարձակալական պայմանագրերի վերանայումը։ Մայիսին հատուկ դեկրետով չեղյալ համարվեցին գյուղատնտեսական բանվորների աշխատանքի ընդունման, աշխատավարձի և աշխատօրվա վերաբերյալ օրենքները։ Կալվածատերերն ու ձեռնարկատերերն անհապաղ սկսեցին իջեցնել աշխատավարձը, ազատել առավել ակտիվ բանվորներին։ Ուժեղացավ իսպանական ֆաշիզմի կողմից հանրապետությանը սպառնացող վտանգը, ֆաշիզմ, որը համախմբում էր իր շարքերը և կապեր հաստատում Իտալիայի ու Գերմանիայի հետ։

Այդ ժամանակ Իսպանիայի պրոֆաշիստական ուժերի մեջ կային երեք հիմնական հոսանքներ՝ ՍԷԴԱ-ն, միապետականները (այդ թվում տրադիցիոնալիստները) և ֆալանգիստները։ Եթե ՍԷԴԱ-ն ձգտում էր ֆաշիզմը փաթաթել լեգալ միջոցներով, ապա միապետականներն ու ֆալանգիստները պետական հեղաշրջման ու ռազմական դիկտատուրայի կողմնակիցներ էին։ Ֆաշիզմի ու ռեակցիայի այդ ծայրահեղ աջ ուժերին միմյանց կապող կարևոր օղակ էր եկեղեցին։ Իսպանական ֆաշիզմը վառ արտահայտված կղերական բնույթ էր կրում։ Նա ոգեշնչվում էր իտալա-գերմանական ֆաշիստական պոստուլատների և կաթոլիկական եկեղեցու ու ինկվիզիցիայի հին դոգմաների խառնուրդով և արտահայտում էր ֆինանսական օլիգարխիայի, հողային արիստոկրատիայի ու եկեղեցու ռեակցիոն շրջանների շահերը։

Ընտրություններում ձախ ուժերի կրած պարտությունը և աշխատավորների մի շարք նոր ելույթների ճնշումը չէր նշանակում, թե պրոլետարիատը ջախջախված էր։ 1934 թ. Իսպանիայի պատմության մեջ մտավ որպես դասակարգային պայքարի շեշտակի սրման, բանվոր դասակարգի միասնության և հեղափոխության մեջ նրա հեգեմոնիայի նվաճման համար մղվող պայքարում ձեռք բերված որոշակի հաջողությունների տարի, որն արտահայտվեց հոկտեմբերյան զինված ապստամբության մեջ։

Պրոլետարիատի կրած պարտության և Գերմանիայում ֆաշիստական դիկտատուրայի հաստատման ողբերգական փորձը, ՍՍՀՄ-ի հեղինակության աճը, որը ժամկետից շուտ կատարեց առաջին հնգամյակը, այն դեպքում երբ կապիտալիստական աշխարհը տնտեսական ճգնաժամ էր ապրում, իսպանական բանվորական զանգվածների ձախացումը սոցիալիստական կուսակցության ղեկավարությանը ստիպեցին վերանայել իրենց տակտիկան։ 1933 թ. վերջերից Լարգո Կաբալյերոն և Ի. Պրիետոն սկսեցին խոսել ժողովրդին հեղափոխական ապստամբության նախապատրաստելու անհրաժեշտության մասին, որպեսզի խանգարեն իշխանության գավթմանը ռեակցիոն ուժերի կողմից։ Մո-

ցիալիստական կուսակցության նման կուրսի դեմ հանդես էր գալիս նրա աջ թևը, որը ժխտում էր ֆաշիզմի վտանգն Իսպանիայի համար և մերժում պայքարի հեղափոխական մեթոդները։ 1934 թ. հունվարին աջ թևը հեռացվեց սոցիալիստների ղեկավարած աշխատավորների ընդհանուր միությունից։ ԱԸՄ-ի գլխավոր քարտուղար ընտրվեց Լարգո Կաբալյերոն, որը միաժամանակ գլխավորեց ԻՍԲԿ-ի գործադիր հանձնաժողովը։ Այդ պահից ի վեր ԻՍԲԿ-ի և ԱԸՄ-ի ձախ թևը վերցրեց ընդհանուր քաղաքական գործադուլի և զինված ապստամբության նախապատրաստման կուրս, որպեսզի խոչընդոտի ՍԷԴԱ-յի մասնակցությամբ պրոֆաշիստական կառավարության կազմավորմանը։ Հունվարի 31-ին Մադրիդում սոցիալիստները Լարգո Կաբալյերոյի նախագահությամբ կազմեցին կենտրոնական հեղափոխական կոմիտե, որի մեջ, սակայն, մտան միայն ԻՍԲԿ-ի, ԱԸՄ-ի և ԵՍՖ-ի (Երիտասարդության սոցիալիստական ֆեդերացիայի) սոցիալիստները։

Սակայն այդ պայմաններում սոցիալիստների համար ավելի ու ավելի դժվար էր դառնում անտեսել ֆաշիզմի ու ռեակցիայի բոլոր ուժերի դեմ միասնական ճակատ ստեղծելու մասին կոչերի աճող ժողովրդականությունը, կոչեր, որոնցով բազմիցս հանդես էր գալիս ԻԿԿ-ն։ Այսպես, դեռ 1933 թ. մարտին ԻԿԿ-ն դիմեց ԻՍԲԿ-ին, ԱԱԿ-ին և ԵՍՖ-ին «ֆաշիզմի դեմ մղվող պայքարի ընդհանուր ճակատում միավորվելու» կոչով։ Հակաֆաշիստական ճակատի քաղաքականությունը վերահաստատվեց 1933 թ. ապրիլին կայացած ԻԿԿ կենտկոմի ընդլայնված պլենումում։ 1933 թ. նոյեմբերի 26-ին ԻԿԿ կենտկոմը ԻՍԲԿ-ի ղեկավարությանն ուղղված նամակում վերստին առաջարկում էր ստեղծել ռեակցիայի հարձակման դեմ պայքարի միասնական ճակատ։

Ուղղակիորեն չպատասխանելով ԻԿԿ-ի առաջարկություններին, ԻՍԲԿ-ի ղեկավարությունն այնուամենայնիվ 1934 թ. սկզբին իր հսկողության տակ սկսեց ստեղծել «բանվորական ալյանսներ», իսկ նույն թվականի ամռանը նա կոմունիստներին առաջարկեց մտնել դրանց մեջ։ «Բանվորական ալյանսներ» էին կոչվում այն կոմիտեները, որոնք ստեղծվել էին վերևից՝ արհմիութենական, կուսակցական ու երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներից. դրանց խնդիրն էր պրոլետարիատի զինված ապստամբության նախապատրաստումը։ Տեղերում ստեղծելով «բանվորական ալյանսներ», սոցիալիստները չընդլայնեցին կենտրոնական հեղափոխական կոմիտեի կազմը։

Գործողությունների միասնության ձգտումը, չնայած նրա նկատմամբ ԱԱԿ-ի՝ 1934 թ. փետրվարին կայացած պլենումի բացասական վերաբերմունքին, ուժեղանում էր նույնիսկ ԱԱԿ-ի բանվորների շրջանում։ Միասնության ձգտումը ցայտուն կերպով արտահայտվեց աշխատավորների 1934 թ. մարտական քաղաքական ելույթների ընթացքում։

1934 թ. սեպտեմբերի 12-ին ԻԿԿ կենտկոմի արտակարգ պլենումը ձգտելով միավորել հեղափոխական ուժերը, որոշեց մտնել «բանվորական ալյանսների» մեջ, որը զգալի առաջընթաց քայլ եղավ պրոլետարիատի միասնականության ամրապնդման գործում։ 1934 թ. հոկտեմբերի 3-ին ԻԿԿ-ն հրապարակեց «Հանուն հացի, հողի և ազատության» կոչը, որը ապագա բանվորա-գյուղացիական կառավարության ծրագիրն էր։ Այն պարունակում էր հետևյալ պահանջները՝ կալվածատիրական հողերի անհատույց բռնագրավում և դրանց բաժանում գյուղատնտեսական բանվորներին ու չունևոր գյուղացիներին, գյուղացիների բոլոր պարտային պարտավորությունների և կիսաֆեոդալական վարձակալության բոլոր ձևերի վերացում, արդյունաբերական խոշոր

ձեռնարկությունների, բանկերի և երկաթուղիների ազգայնացում ու բռնագրավում, 7-ժամյա աշխատանքային օրվա սահմանում, աշխատավարձի բարձրացում, գործազուրկներին օգնության կազմակերպում, հին զինված ուժերի ցրում և բանվորա-գյուղացիական բանակի ստեղծում, ՍՍՀՄ-ի հետ եղբայրական դաշինքի հաստատում, բոլոր ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրության ապահովում։

1934 թ. հոկտեմբերյան զինված ապստամբությունը և նրա նշանակությունը

Ռեակցիան, որն անհանգստացած էր պրոլետարական ուժերի համախմբումից և աշխատավորների մարտական ելույթների աճից, որոշեց արագացնել ֆաշիստական դիկտատուրայի հաստատման իր պլանների իրականացումը։ Այդ նպատակով հոկտեմբերի 4-ին կազմվեց Լերրուսի «անցման» կառավարությունը, որի մեջ ՍԷԴԱ-յից մտան երեք մինիստրներ (արդարադատության, աշխատանքի և գյուղատնտեսության)։

Այդ նույն օրը Մադրիդում ընդհանուր գործադուլ հայտարարվեց։ Մայրաքաղաքի ամբողջ աշխատանքային կյանքը կազմալուծվեց։ Աշխատում էին միայն բժշկական հիմնարկությունները։ Հոկտեմբերի 5-ին գործադուլը տարածվեց ամբողջ երկրում՝ Մադրիդում, Բիսկայայում, Կատալոնիայում, և հատկապես Աստուրիայում այն վերածվեց պրոլետարիատի զինված ապստամբության։

Շարժումը ղեկավարում էին տեղական «բանվորական ալյանսները», իսկ ազգային կենտրոնի դերում հանդես էր գալիս Մադրիդի հեղափոխական կոմիտեն՝ Լարգո Կաբալյերոյի գլխավորությամբ։ Ինքը՝ Լարգո Կաբալյերոն ապստամբության կոչ անելով, ձգտում էր ամբողջ իշխանության հանձնմանը սոցիալիստական կուսակցությանը։ Նախապես նրա մշակած պլանի համաձայն, Մադրիդում սոցիալիստական երիտասարդության զինված ջոկատները, որոնց ղեկավարում էր ՍԵՖ-ի այն ժամանակվա քարտուղար Սանտյագո Կարիլյոն, գրոհեցին մի քանի զորանոցների և քաղաքի ստրատեգիական շենքերի (գլխավոր փոստատուն, ռազմական մինիստրություն, ներքին գործերի մինիստրություն և այլն) վրա, բայց հանդիպեցին շատ անգամ գերազանցող ուժերի դիմադրությանը։ Մադրիդի պրոլետարիատը համառորեն զենք էր պահանջում, որպեսզի շարունակի պայքարը, բայց սոցիալիստները, որոնց մոտ այն կար, վախենալով կորցնել հսկողությունը շարժման նկատմամբ, հոգում էին այն մասին, որ զենքը չընկնի կոմունիստների և լայն մասսաների ձեռքը։ Դրա հետևանքով Մադրիդում ապստամբությունը պարտություն կրեց, առաջին իսկ օրերին «հեղափոխական կոմիտեն» ձերբակալվեց, բայց ընդհանուր գործադուլը և զինված ընդհարումները մայրաքաղաքում շարունակվում էին մինչև հոկտեմբերի 12-ը։ Այդ պայքարին ակտիվորեն մասնակցում էին Մադրիդի կոմունիստները։

ԻԿԿ-ն հոկտեմբերի սկզբին երկրում տիրող իրադրությունը պրոլետարիատի զինված պայքարի համար անբարենպաստ էր համարում, քանի որ քաղաքի ու գյուղի աշխատավորության համազգային մասշտաբով միասնական ճակատ չէր առաջացել։ Սակայն այդ պայմաններում էլ նա ակտիվորեն ելույթ էր ունենում հակաֆաշիստական մյուս ուժերի հետ համատեղ, որպեսզի արագացնի միասնական բանվորական և հակաֆաշիստական ճակատի ստեղծումը և խոչընդոտի ծայրահեղ ռեակցիայի իշխանության գլուխ անցնելը։

Բիսկայայի արդյունաբերական շրջանում, ինչպես և Մադրիդում ընդհանուր գործադուլն սկսվեց հոկտեմբերի 4-ի լույս 5-ի գիշերը։ Հանքագործների

շրջաններում պրոլետարիատը ոտքի կանգնեց իշխանությունը գրավելու համար։ Շատ վայրերում գրավվեցին «քաղաքացիական գվարդիայի» զորանոցները և քաղաքապետարանները։ Շարժմանն ակտիվորեն մասնակցում էին կոմունիստները։ Սակայն շրջանի հենց կենտրոնում, Բիլբաո քաղաքում ընդհանուր գործադուլը թեև միահամուռ էր, բայց այն չվերաճեց զինված ապստամբության։ Բիսկայայի սոցիալիստական կուսակցության ղեկավարությունը, որը գտնվում էր Ի. Պրիետոյի անմիջական ազդեցության տակ, իրենից կախված ամեն բան արեց, որպեսզի սահմանափակի պրոլետարիատի ելույթների մասշտաբները։ Կոմունիստների ղեկավարությամբ այստեղ ձեռք բերված առանձին հաջողությունները միասնության բացակայության պատճառով չհաջողվեց ամրապնդել։ Կառավարությունը բանվորների դեմ շարժեց 3 հետևակային գունդ և հրետանի։ Հոկտեմբերի 12-ին Բիսկայայում ընդհանուր գործադուլը ճնշվեց։

Այլ կերպ ծավալվեց պայքարը Կատալոնիայում։ Այստեղ պրոլետարիատի պայքարն ընդդեմ ֆաշիզմի միահյուսվեց ազգային շարժման հետ, որն այդ ժամանակ մեծ թափի հասավ։ 1934 թ. ապրիլին Կատալոնիայի ինքնավար պառլամենտն ընդունեց «Հողագործական կոնտրակտների մասին օրենքը», որը հարվածեց կալվածատիրական հողատիրությանը։ Մադրիդի ռեակցիոն կառավարությունն այն հայտարարեց «ոչ սահմանադրական» և 1934 թ. հունիսին վերացրեց, բայց անմիջապես երկրորդ անգամ ընդունվեց կատալոնյան պառլամենտի կողմից։ 1934 թ. աշնանը «կատալոնյան կոնֆլիկտը» դարձավ Իսպանիայի քաղաքական պայքարի սուր հարցը։ Կատալոնյան ինքնավար կառավարությունը, որը կազմված էր հիմնականում «էսկերրա» կատալոնյան ձախ կուսակցության ներկայացուցիչներից, ինչպես և կատալոնյան աշխատավորները, հիանալի հասկանում էին, որ ֆաշիզմի հաղթանակն Իսպանիայում կնշանակեր նվաճված ինքնավարության կորուստ։ Այդ պատճառով երբ հոկտեմբերի 5-ին Կատալոնիայում գործադուլ սկսվեց, որը կազմակերպել էին «բանվորական ալյանսները», կատալոնյան կառավարությունը փոքր-ինչ տատանվելուց հետո միացավ հակաֆաշիստական շարժմանը։ Հոկտեմբերի 6-ին կառավարության ղեկավար Կոմպանիսը հայտարարեց բանվորների հետ իր համերաշխության և Մադրիդի նոր կառավարության հետ բոլոր հարաբերությունները դադարեցնելու մասին, բայց այդուհանդերձ բնակչությունից պահանջեց պահպանել «կարգը» և հրաժարվեց ժողովրդին զինել։ Միայն հոկտեմբերի 7-ին առավոտյան դեմ, երբ ինքնավար կառավարության շենքը շրջապատված էր Մադրիդին ենթակա զորքերով, Կոմպանիսը բնակչությանը զենքի կոչ արեց. հոկտեմբերի 7-ի ընդհանուր գործադուլը վերաճեց ապստամբության, որին մասնակցեցին բանվորներն ու գյուղացիները։ Հինգ օր Կատալոնիայի աշխատավորությունը զինված պայքար էր մղում կատալոնյան կայազորի զորքերի դեմ։ Պայքարի ընթացքում շատ քաղաքներ (Սաբադել, Մանրեսա, Մատարո, Բադալոնա և այլն) հայտնվեցին բանվորների ձեռքում։ Ապստամբությունը ճնշվեց միայն հոկտեմբերի 12-ին։

Կատալոնիայի աշխատավորների պարտության գործում ոչ քիչ դեր խաղաց ԱԱԿ-ի անարխիստական ղեկավարությունը։ Հոկտեմբերյան ապստամբության նախօրյակին նա պրոլետարիատին կոչ արեց հասունացող ճակատամարտից ձեռնպահ մնալ այն պատրվակով, թե այն պատրաստել են «քաղաքական ուժերը»։ «Թող ոչ ոք չգնա քաղաքագետների ետևից»,— հայտարարում էր նա։ Անարխո-սինդիկալիստական արհմիությունների անդամ բանվորների մի մասը չենթարկվեց այդ ցուցումներին և ակտիվ մասնակցություն

ունեցավ պայքարին։ Ի հակակշիռ դրան ԱԱԿ-ի կատալոնյան կոմիտեն օգտագործվեց պետական ռադիոյից և հոկտեմբերի 9-ին դիմեց բանվորներին՝ կոչ անելով դադարեցնել գործադուլը։ Այդ կոչը խորացրեց պրոլետարիատի պառակտումը և շփոթություն առաջացրեց գործադուլավորների շարքերում, որը հեշտացրեց կառավարական զորքերի հաղթանակը։

Պրոլետարիատի՝ 1934 թ. հոկտեմբերի ապստամբությունն իր ամենաբարձր գագաթնակետին հասավ Աստուրիայում՝ Իսպանիայի ածխային ու մետալուրգիական արդյունաբերության այդ կենտրոնում։ Հոկտեմբերի 4-ին Աստուրիայի հեղափոխական կոմիտեն 5 սոցիալիստների, 2 անարխո-սինդիկալիստների և 2 կոմունիստների կազմով հաստատեց ապստամբության և Օվյեդո քաղաքի գրավման պլանը։ Հոկտեմբերի 4-ի լույս 5-ի գիշերը զինված ապստամբություն սկսվեց ածխային ավազանում։ Ածխահատները զինաթափեցին ժանդարմերիային, գրոհով վերցրին զորանոցները և գրավեցին իշխանությունը Միերեսում, Սամա դե Լանգրեոյում, Լա Ֆալգերայում և արդյունաբերական այլ կենտրոններում։ Մեծ նշանակություն ուներ Տրուբիայի ռազմական գործարանի գավթումը, որտեղ օրինակելի կարգուկանոն հաստատվեց։ Գործարանը շարունակում էր երկու հերթափոխով աշխատել, որպեսզի ապստամբներին ապահովեր զինամթերքով։ Հոկտեմբերի 6-ի մոտ գրեթե ամբողջ պրովինցիան գտնվում էր բանվորների ձեռքում, և միայն նրա Օվյեդո կենտրոնն էր մնում կառավարական իշխանությունների ձեռքում։ Դեպի Օվյեդո գրոհի էին շարժվում ածխահատների զինված զորասյունները։ Օվյեդոյի գրավման համար մղվող համառ մարտերը անընդհատ շարունակվում էին հոկտեմբերի 5—11-ը։ Գրոհող բանվորները օդից մշտապես ռմբակոծության էին ենթարկվում։ Չնայած հերոսությանն ու հարձակողական մարտերի կատաղությանը, բանվորներին չհաջողվեց քաղաքը լիովին գրավել. հոկտեմբերի 12-ին նրանք անցան պաշտպանության և մինչև հոկտեմբերի 18-ը իրենց ձեռքին էին պահում նրա առանձին շրջաններ և հենակետեր։

Ապստամբության առաջին օրերին ամբողջ ածխային ավազանում հաստատվեց «Բանվորական ալյանսների» հիման վրա ստեղծված հեղափոխական կոմիտեների իշխանությունն։ Դրանց գլուխ էր կանգնած աստուրիական հեղափոխական կոմիտեն։ Ըստ իրենց կազմի հեղափոխական կոմիտեները հանդիսանում էին պրոլետարիատի միասնության մարմնավորումը, դրանց մեջ մտնում էին սոցիալիստներ, կոմունիստներ, անարխո-սինդիկալիստներ, երբեմն նաև գյուղացիներ։ Ըստ անհրաժեշտության պրովինցյալ և տեղական հեղափոխական կոմիտեներն ստեղծում էին հատուկ հանձնաժողովներ, որոնց տնօրինության տակ էին գտնվում մատակարարումը, հասարակական կարգի պահպանությունը, տրանսպորտը, կապը և այլն։ Դրանց հսկողության տակ վերցվեցին բանկերը, երկաթուղիները, փոստը և հեռագիրը։ Հրապարակվեցին դեկրետներ հողը կալվածատերերից ու բուրժուազիայից բռնագրավելու և գյուղացիներին հանձնելու մասին, վերացվեց վարձակալության վճարը, բռնագրավվեցին մթերային պահեստները, հագուստի ու կոշիկի խոշոր պահեստները, կարգավորվեց բնակչության ու կարմիր բանակի մատակարարումն ու բուժսպասարկումը։ Հեղափոխական կոմիտեներն առաջին հերթին հոգ էին տանում զինված ուժերի ստեղծման մասին, որոնք ստացան կարմիր բանակ կամ կարմիր գվարդիա անունը։ Կարմիր բանակ էին վերցվում միայն 18-ից մինչև 35 տարեկան աշխատավորները, նրա մեջ շահագործող դասակարգերի ներկայացուցիչներ չկային։ Կարմիր բանակի բոլոր մարտիկները (18—20 հազ. մարդ) պարտավոր էին պահպանել երկաթյա կարգապահություն։

Պրոլետարիատի հոկտեմբերյան ապստամբությունը ծավալվում էր Աստուրիայում, բայց Իսպանիայի մնացած մասերում այն ընթանում էր դեպի անկում։ Դա կառավարությանը հնարավորություն տվեց վիթխարի ուժեր կենտրոնացնել «Կարմիր Աստուրիայի» դեմ։ Ռազմական մինիստրությունում աստուրիական ապստամբությունը ճնշելու պլանը մշակեց գեներալ Ֆրանկոն։ Նրա առաջարկությամբ Աֆրիկայից շտապ կարգով բերվեցին մարոկյան զորքեր և օտարերկրյա լեգեոնը։ Հոկտեմբերի 10-ին կառավարական 4 բանակներ բոլոր կողմերից շարժվեցին դեպի Օվյեդո։ Պրոլետարիատը խիզախորեն կռվում էր կառավարության գերակշռող ուժերի դեմ, բայց հոկտեմբերի 18-ին պրովինցյալ հեղափոխական կոմիտեն ստիպված էր արձակել «Բոլոր աշխատավորների՛ն» կոչը, որի մեջ անհրաժեշտ էր համարում «պայքարի ընդմիջում անել և ժամանակավորապես զենքը վայր դնել»։

15 օր շարունակ Աստուրիայի վրա հաղթականորեն ծածանվում էր բանվորների ու գյուղացիների կարմիր դրոշը։ Միայն հոկտեմբերի 20-ին դիմադրությունը դադարեցվեց։

Պատժիչները դաժան հաշվեհարդար կատարեցին ապստամբների հետ։ Պաշտոնական տվյալներով, մարտերի ընթացքում Աստուրիայում սպանվեց ավելի քան հազար մարդ և վիրավորվեց ավելի քան երկու հազար մարդ։ Հաշվեհարդարի օրերին միայն Օվյեդո քաղաքում գնդակահարվեց մոտ 2 հազար ապստամբ, զինվորական տրիբունալների դատին հանձնվեց ավելի քան 7 հազ. մարդ։ Ձերբակալվածների նկատմամբ կիրառվում էին դաժան տանջանքներ։ Իսպանական ռեակցիայի կատարած գազանություններն ալեկոծեցին ամբողջ առաջադեմ մարդկությանը։ Բանվորությունների զոհերին օգնություն ցույց տալու մասին ՄՕՊՐ-ի իսպանական սեկցիայի կոչին արձագանքեցին շատ երկրների աշխատավորներ։ Սովետական Միությունում անցկացվեցին Իսպանիայում ֆաշիստների կատարած գազանությունների դեմ ուղղված բողոքի բազմաթիվ միտինգներ ու ցույցեր և զգալի միջոցներ հավաքվեցին իսպանական ընկերների օգնության ֆոնդում։ 1935 թ. ապրիլի 13—14-ին կայացավ իսպանական ֆաշիզմի զոհերի օգնության միջազգային կոնֆերանս, որը լայն արձագանք գտավ։

Հոկտեմբերյան ապստամբության գլխավոր նշանակությունն այն է, որ նա եղավ պրոլետարիատի և դեմոկրատական ուժերի առաջին վճռական պատասխանը երկրում ֆաշիզմ հաստատելու փորձերին։ Եվ չնայած որ ապստամբությունը ճնշվեց, այն ռեակցիային խանգարեց համախմբելու իր ուժերը, այն դեպքում երբ պրոլետարիատն առաջընթաց քայլ կատարեց միասնական պրոլետարական ճակատի և համաժողովրդական հակաֆաշիստական ճակատի ստեղծման գործում։

Ապստամբության հետևանքով աճեց ու ամրապնդվեց ԻԿԿ-ի ազդեցությունը մասսաների մեջ։ Կոմունիստները հոկտեմբերյան օրերին ցուցաբերեցին ոչ միայն հերոսություն և հեղափոխությանն անսահման նվիրվածություն, այլև քաղաքական հասունություն և նպատակների ու խնդիրների հստակություն։ Պրոլետարիատի զանգվածներում նրանց նվաճած հեղինակությունն ամրապնդվեց հետագայում, նահանջի օրերին։

Հոկտեմբերյան ապստամբությունից հետո թուլանում էր ԱԱԿ-ի ազդեցությունը. անարխո-սինդիկալիստ շատ բանվորներ սկսում են հասկանալ, որ հաղթանակի ճանապարհին ընկած խոչընդոտներից մեկը՝ ԱԱԿ-ի և ԻԱՖ-ի պարագլուխների նպատակաուղղվածությունն էր։

Հոկտեմբերյան մարտերի հետևանքով տեղի ունեցավ դասակարգային ուժերի հետագա տարանջատում։ Կատալոնյան միջին ու մանր բուրժուազիան, ինչպես և բասկական ազգային բուրժուազիան տևական ժամանակով անցավ հակաֆաշիստական ուժերի լագերը։ Իսպանիայում տեղի ունեցած հոկտեմբերյան ապստամբությունը ճանապարհ բացեց ֆաշիզմի դեմ ժողովրդական ճակատ ստեղծելու համար։

1934 թ. հոկտեմբերին պրոլետարիատը եղավ ոչ միայն հեղափոխության գլխավոր շարժիչ ուժը, այլև հաստատուն կերպով նվաճեց հեղափոխության հեգեմոնիան։

Պայքար հանուն Ժողովրդական ճակատի

1934 թ. հոկտեմբերի իրադարձություններից հետո շեշտակիորեն ուժեղացավ միասնական հակաֆաշիստական ճակատի համար մղվող պայքարը։ Այդ պայքարի գլուխ կանգնեցին ԻԿԿ-ն, ինչպես նաև կոմունիստական ու սոցիալիստական երիտասարդական կազմակերպությունները։ Արդեն 1934 թ. վերջին ստեղծվեց ԻԿԿ-ի և ԻՍԲԿ-ի միջև կապի կոմիտե՝ կոորդինացնելու պայքարը բանվորությունների զոհերին ներում շնորհելու, ֆաշիստական կազմակերպությունների ցրման և աշխատավորների դեմոկրատական նվաճումների պաշտպանության համար։ 1935 թ. մարտին կոմկուսի ջանքերի շնորհիվ ստեղծվեց բանտարկյալների օգնության ազգային կոմիտե, որին մասնակցում էին բանվորների ու ձախ հանրապետական կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչները։ Աստուրիայի մարտերի՝ մահապատժի դատապարտված մասնակիցների օգնության շարժումն այնպիսի մասշտաբներ ընդունեց, որ կառավարությունը ստիպված էր վերացնել դատավճիռը։ Ի նշան բողոքի ՍԷԴԱ-յի ներկայացուցիչները դուրս եկան կառավարությունից։ Դա միացյալ դեմոկրատական ուժերի առաջին խոշոր հաղթանակն էր հոկտեմբերից հետո։

1935 թ. մայիսին ԻԿԿ-ն դիմեց բոլոր բանվորներին ու դեմոկրատական կազմակերպություններին՝ կոչ անելով ստեղծել հակաֆաշիստական Ժողովրդական ճակատ։ 1935 թ. ամռան սկզբին ստեղծվեցին Ժողովրդական ճակատի առաջին կոմիտեները։ Իսպանիայի պրոլետարական ու հակաֆաշիստական ուժերի ամրապնդման գործում մեծ դեր խաղացին Կոմինտերնի VII կոնգրեսի պատմական որոշումները։ 1935 թ. դեկտեմբերին կոմունիստների ղեկավարած Աշխատանքի ընդհանուր ունիտար կոնֆեդերացիա արհմիութենական միավորումը միաձուլվեց սոցիալիստների ղեկավարած Աշխատավորների ընդհանուր միության (ԱԸՄ) հետ։

Միաժամանակ զարգանում էր կառավարող ռադիկալ կուսակցության անկման պրոցեսը։ 1935 թ. միջին և մանր բուրժուազիայի զգալի մասսաներ հեռացան նրանից և Մարտինես Բարիոսի գլխավորությամբ կազմեցին Հանրապետական միություն նոր կուսակցությունը։ Կառավարության հեղինակության համար անուղղելի հարված եղավ կաշառակերության վերաբերյալ սկանդալային գործի բացահայտումը, որին, ինչպես պարզվեց, մասնակից էին Լերրուսը և նրա շրջապատը։ ՍԷԴԱ-ն պահանջում էր իրեն հանձնել ամբողջ իշխանությունը, բայց մասսայական շարժման ճնշման տակ հանրապետության պրեզիդենտ Ա. Սամորան ցրեց կորտեսները և նոր ընտրությունները նշանակեց 1936 թ. փետրվարի 16-ին։ Ընտրական կամպանիայի նախապատրաստման ընթացքում արագացավ ձախ ուժերի համախմբումը։

1936 թ. հունվարի 15-ին հրապարակվեց Ժողովրդական ճակատի ծրագիրը, որը պարունակում էր հետևյալ գլխավոր պահանջները. ներում շնորհել բոլոր 30 հազար քաղբանտարկյալներին և նրանց վերականգնել իրենց աշ-

խատանքում, դեմոկրատական ազատությունների և սահմանադրական նորմերի, այդ թվում նաև ագրարային ռեֆորմի և Կատալոնիայի ինքնավար ստատուսի գործողության վերականգնում. մանր առևտրականների և արհեստավորների հարկերի ու տուրքերի պակասեցում. բանվորների աշխատավարձի բարձրացում և սոցիալական օրենսդրության ընդլայնում. մի շարք միջոցառումների իրականացում գյուղացիության դրությունը թեթևացնելու համար. կրթության սիստեմի դեմոկրատական ռեֆորմ և այլն։ Ժողովրդական ճակատի ստեղծման մասին պակտը ստորագրեցին ԻՍԲԿ-ի, ԻԿԿ-ի, Ձախ հանրապետական կուսակցության, հանրապետական միության, ՊՕՈՒՄ-ի (տրոցկիստների), սինդիկալիստական կուսակցության, ֆեդերալ-հանրապետական կուսակցության և այլ կուսակցությունների ներկայացուցիչները։ Ժողովրդական ճակատը միավորում էր բանվորների, գյուղացիների, նրա մեջ մտնում էր մանր և միջին բուրժուազիայի ճնշող մասը, լիբերալ մտավորականությունը, այսինքն՝ երկրի բոլոր այն դեմոկրատական ուժերը, որոնք դիմագրավում էին ֆաշիզմին։

1936 թ. փետրվարի 16-ի ընտրությունները ցույց տվեցին, որ իսպանական ժողովրդի մեծամասնությունը մերժում է ֆաշիզմն ու ռեակցիան։ Կորտեսներում ընտրված 470 դեպուտատներից 286 դեպուտատներ Ժողովրդական ճակատի ներկայացուցիչներ էին։ Աջ ուժերը կորտեսներում ստացան 132 տեղ, որը նշանակում էր լեգալ ճանապարհով ֆաշիստական դիկտատուրա հաստատելու նրանց փորձերի ձախողում։

Ժողովրդական ճակատի հաղթանակից մինչև ֆաշիստական խռովության սկիզբը

1936 թ. փետրվարի 16-ին Ժողովրդական ճակատի տարած հաղթանակը նոր հեռանկարներ բացեց երկրի դեմոկրատական զարգացման համար։ Բուրժուադեմոկրատական հեղափոխության զարգացման մեջ սկսվեց երրորդ էտապը։

Նոր կառավարությունը, որը կազմվեց փետրվարի 19-ին, բաղկացած էր միայն ձախ բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչներից՝ Ասանյայի գլխավորությամբ, բայց օգտվում էր ամբողջ Ժողովրդական ճակատի աջակցությունից։ Այն դեկրետավորեց քաղբանտարկյալներին ներում շնորհելը, ձեռնամուխ եղավ հեղափոխության առաջին էտապի (1931—1933 թթ.) օրենսդրության վերականգնմանը, վերացրեց «սև երկամյակի» դեկրետները, բայց դանդաղում էր կատարել Ժողովրդական ճակատի ծրագրի մյուս կետերը և ոչինչ չարեց ռեակցիային զինաթափելու համար։

Կառավարության գործունեության առաջին ամիսներին արտակարգ կերպով աճեց աշխատավորների ակտիվությունը։ Ավելի հաճախակի դարձան հաց, աշխատանք, հող պահանջող բանվորների ու գյուղացիների զանգվածային ցույցերը։ Այնպիսի դեպքերում, երբ կառավարության միջոցառումները սարոտաժի ենթարկելու նպատակով սեփականատերերը փակում էին ձեռնարկությունները և լոկաուտներ էին հայտարարում, բանվորները գրավում էին այդ ձեռնարկությունները և շարունակում աշխատանքը։ Գյուղացիները գրավում էին անմշակ հողերը։ Աշխատավորները պահանջում էին վերջ տալ ֆաշիստական խմբերի հարձակումներին։ Ապրիլի 17-ին Մադրիդում անցկացվեց 24-ժամյա ընդհանուր գործադուլ, որը կազմակերպել էին Մադրիդի բոլոր բանվորական կազմակերպությունները՝ ԱԱԿ-ը, ԱՔՄ-ն, ԻՍԲԿ-ն, ԻԿԿ-ն և երիտասարդական կազմակերպությունները։ Մայիսի 1-ին կես միլիոն աշխատավորներ մասնակցեցին Մադրիդի ցույցին։ Արագացավ պրոլետարական ուժերի միավորման պրոցեսը։ 1936 թ. ապրիլի 1-ին սոցիալիստական երիտասարդության ֆեդերացիան և կոմունիստական երիտասարդությունը միավորվեցին մեկ կազմակերպության՝ միացյալ սոցիալիստական երիտասարդության (ՄՍԵ) մեջ, որի գլխավոր քարտուղար դարձավ Սանտյագո Կարիլիոն։ 1936 թ. հուլիսի 23-ին Կատալոնիայի կոմունիստական կուսակցությունը, ԻՍԲԿ-ի կատալոնյան սեկցիան, սոցիալիստական միությունը և պրոլետարական կուսակցությունը ստեղծեցին Կատալոնիայի միացյալ սոցիալիստական կուսակցությունը, որը մտավ Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ։

Սոցիալիստական կուսակցության (ԻՍԲԿ) մեջ շարունակում էին գոյություն ունենալ տարբեր հոսանքներ, բայց այստեղ էլ էր աճում ԻԿԿ-ի հետ գործողությունների միասնության ձգտումը, որն արտահայտվեց 1934 թ. աստուրիական ապստամբության հերոս Գոնսալես Պենյային ԻՍԲԿ գործադիր կոմիտեի նախագահ ընտրելու մեջ։ Նա փոխարինեց Լարգո Կաբալյերոյին, որը, սակայն, պահպանեց ԱՔՄ-ի նախագահի պաշտոնը։

Միասնության ձգտումը ուժեղանում էր նաև ԱԱԿ-ի շարքերում։ Թեև ԱԱԿ-ի սարագոսյան համագումարի (1936 թ. մայիս) պատգամավորների մեծամասնությունը հաստատեց իր հրաժարվելն ամեն մի քաղաքական կուսակցության հետ դաշինքի մեջ մտնելուց, Աստուրիայի, Բասկոնիայի և Գալիսիայի պատվիրակությունները համագումարում հանդես եկան ԱՔՄ-ի հետ գործողությունների միասնության օգտին։

Պրոլետարիատի միասնության համար և ֆաշիզմի վտանգի ուժեղացման դեմ մղվող պայքարում առավել հետևողականորեն ու անձնազոհաբար էր հանդես գալիս կոմունիստական կուսակցությունը։ Հենց դրա համար էլ այդքան արագորեն աճեցին նրա կազմակերպությունները. եթե 1936 թ. փետրվարին ԻԿԿ-ն հաշվվում էր 30 հազ. մարդ, ապա հուլիսի կեսերին (խռովության սկսման նախօրյակին) նրա շարքերում կար արդեն 100 հազ. անդամ։ ԻԿԿ-ն այդ պահին վերածվել էր երկրի գլխավոր քաղաքական ուժերից մեկի, Ժողովրդական ճակատի կարևոր քաղաքական ուժի, որը կանգնած էր ժողովրդի դեմոկրատական նվաճումների պահպանության դիրքերում։

Ժողովրդական ճակատի հաղթանակից հետո ռեակցիոն ուժերն անցան հանրապետության դեմ խռովության ուժեղ նախապատրաստությանը։ Ռեակցիոն գեներալներ Սանխուրխոն, Ֆրանկոն, Մոլան և մյուսները պատրաստում էին իրենց հավատարիմ զորամասեր, ֆինանսական օլիգարխիան և կալվածատերերը տնտեսական սարոտաժ էին անցկացնում՝ փակում գործարանները և ֆաբրիկաները, դաշտերը թողնում էին անմշակ, արհեստականորեն ստեղծում էին գործազրկություն, երկրից արտահանում կապիտալները։ Այդ նույն ժամանակ ֆաշիստական ջարդարարները, անցնելով բացահայտ տեռորի, փողոցներում սպանում էին բանվորական ղեկավարներին, անկարգություններ էին սարքում։ Սակայն իրենց սեփական ուժերի վրա հույս չունենալով, իսպանական ֆաշիստները ռազմական ու նյութական օգնություն ցույց տալու խնդրանքներով դիմեցին Հռոմի ու Բեռլինի ֆաշիստական կառավարություններին։

Արդեն 1934—1935 թթ. Հռոմում և Բեռլինում տեղի էին ունենում գաղտնի բանակցություններ իսպանական ռեակցիայի (ֆինանսական օլիգարխիայի, «աֆրիկացի գեներալների», միապետականների և ֆաշիստների) ներկայացուցիչների և իտալական ու գերմանական կառավարողների միջև։ 1934 թ. սկզբին Խ. Ա. Պրիմո դե Ռիվերան հանդիպեց Հիտլերի հետ. 1934 թ. մարտին Հռոմում իսպանական «տրադիցիոնալիստների», միապետականների և զինվորականության ներկայացուցիչները Մուսոլինիի հետ պայմանագիր ստորագրեցին, ըստ որի վերջինս պարտավորվում էր ռազմական ու ֆինանսական

անհրաժեշտ օգնություն ցույց տալ այդ ռեակցիոն ուժերին հանրապետությունը տապալելու համար։

Դավադիրներին ֆինանսական մեծ օգնություն էին ցույց տալիս իսպանական և օտարերկրյա մոնոպոլիստները՝ սկսած մուլտիմիլիոներ Խուան Մարչից մինչև անգլիական նավթային մագնատ Հենրի Դետերդինգը, գերմանական բանկերը և Իտալիայի, Լատինական Ամերիկայի, ԱՄՆ-ի, Անգլիայի և այլ երկրների՝ ֆաշիստներին «համակրողները»։ Ֆինանսա-կալվածատիրական օլիգարխիան առաջվա պես շեշտը դնում էր հանրապետության բանակի գլուխ կանգնած ռեակցիոն գեներալների ապստամբության վրա, որոնց պետք է միանային տրադիցիոնալիստները և ֆալանգիստները։ 1936 թ. հուլիսի սկզբին այդ երեք ուժերի ներկայացուցիչները վերջնականապես համաձայնեցրին խռովության պլաններն ու նպատակները։ Խռովությունը պետք է ղեկավարեին ռեակցիոն գեներալները՝ Մոլան՝ Նավարայում և Բուրգոսում, Ֆրանկոն՝ Մարոկկոյում, Ֆանխուլը՝ Մադրիդում, Գոդեդը՝ Կատալոնիայում և այլն։ Որպես ապստամբության կենտրոն նախատեսվեց Բուրգոս քաղաքը։ Ռեակցիան հուսով էր, որ խռովությունը արագորեն հաջողության կհասնի։ 1936 թ. հուլիսի 17-ին խռովությունը սկսվեց Իսպանական Մարոկկոյում, գեներալ Ֆրանկոյի ղեկավարությամբ։ Հուլիսի 18-ին խռովությունը տարածվեց թերակղզու վրա։

Ֆաշիստները կարողացան խռովություն բարձրացնել հանրապետականների կառավարության անհեռատես քաղաքականության շնորհիվ, կառավարություն, որը տատանվում էր, հապաղում ժողովրդական ճակատի ծրագիրն իրագործելու ասպարեզում, չդիմաթափեց հակահեղափոխությանը, բանակի հրամանատարությունից չհեռացրեց ռեակցիոն գեներալներին, թեև կոմունիստական կուսակցությունը և շատ սոցիալիստներ նախազգուշացնում էին խռովության մասին։ Որպես դրանց արդյունք հանրապետական կառավարությունը կանգնեց անակնկալի առջև։ Սակայն ժողովուրդը զգոն էր, նա դուրս եկավ փողոցները՝ լի պայքարելու վճռականությամբ։ Ժողովրդական ճակատի պատվիրակությունն այցելեց կառավարության ղեկավար Կասարես Կիրոգային և վճռականորեն պահանջեց զինել աշխատավորներին, բայց դրա փոխարեն Կասարես Կիրոգան շտապեց հրաժարական տալ։ 18-ի լույս 19-ի գիշերը չափավոր բուրժուական հանրապետականները փորձեցին խռովարարների մասնակցությամբ նոր կառավարություն կազմել, բայց վերջիններս հրաժարվեցին կոմպրոմիսից, պահանջելով լիակատար իշխանությունն իրենց հանձնել։ Հանրապետականներին մնում էր կամ կապիտուլացվել խռովարարների առջև, կամ զինել ժողովրդին և սկսել պայքարը։ Այդ հարցը Մադրիդում ժողովուրդն ինքը լուծեց։

ԱԶԳԱՅԻՆ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հուլիսի 18-ի լույս 19-ի այդ նույն գիշերը ԻԿԿ կենտկոմի անունից Մադրիդի ռադիոյով ելույթ ունեցավ Դոլորես Իբարուրին և բոլոր աշխատավոր հակաֆաշիստներին կոչ արեց ոտքի կանգնել պաշտպանելու հանրապետությունը, ազատությունն ու դեմոկրատական նվաճումները։ Այդ ժամանակ էլ նա արձակեց «Ֆաշիզմը չի՛ անցնի» («No pasaran!») կոչը, որը դարձավ բոլոր հակաֆաշիստների լոզունգը։ Հուլիսի 19-ի լուսաբացից Մադրիդի Պուերտա-դել Սոլ կենտրոնական հրապարակը լցվեց աշխատավորներով, որոնք կառավարությունից զենք էին պահանջում։

Շտապ ստեղծվեց ձախ բուրժուական նոր կառավարություն (այն գլխավորեց ձախ հանրապետական Խոսե Խիրալը), որը պրովինցիաների քաղաքացիական նահանգապետներին ցուցում տվեց զենք բաժանել բանվորական կազմակերպություններին։ Այդ ուշացած որոշումը փաստորեն օրինականացրեց ժողովրդի զինումը, որը սկսվել էր բացահայտ կերպով դեռ հուլիսի 18-ի երեկոյան, երբ բանվորների, ԻԿԿ, ԻՍԲԿ, ՄՍԵ և արհմիությունների անդամները հանրապետությանը հավատարիմ սպաների օգնությամբ հրետանային պարկի պահեստից զավթելով զենքը, շրջապատեցին Մադրիդի և նրա շրջակայքի զորանոցները, որպեսզի խռովարար զորքերին թույլ չտան այնտեղից դուրս գալ։ Մադրիդի պրոլետարիատի այդ նախաձեռնությունը ձախողեց մայրաքաղաքը կայծակնորեն գրավելու խռովարարների պլանը։ Հրետանու և ավիացիայի՝ հանրապետությանը հավատարիմ մնացած զորամասերի աջակցությամբ Մադրիդի զինված բանվորները հաղթանակ տարան։ Սակայն վտանգը չէր անցել, քանի որ հյուսիս-արևելքից, հյուսիսից և հյուսիս-արևմուտքից Մադրիդի վրա էին շարժվում գեներալ Մոլայի խռովարարների զորասյունները։ Նրանց ընդառաջ դուրս եկան ժողովրդական միլիցիայի առաջին զորաբաժանումները, որոնք կազմված էին բանվորական տարբեր կազմակերպությունների անդամներից։ Սոմոսյերայի և Սյերա-Գվադարամայի լեռնանցքներում տեղի ունեցած արյունահեղ մարտերի ընթացքում խռովարարների կանոնավոր զորքերի զորասյունները կանգնեցվեցին հերոսաբար մարտնչող բանվորների կողմից։

Շուտով կատաղի պայքարը բորբոքվեց ամբողջ Իսպանիայում։ Բարսելոնայում, Սևիլիայում և մյուս քաղաքներում մի քանի օր տեղի էին ունենում փողոցային կատաղի մարտեր։ Այդ ճակատամարտերի ընթացքում ամրապնդվում էր բանվոր դասակարգի և հակաֆաշիստական բոլոր ուժերի մարտական միասնությունը։ Հուլիսի 22-ի մոտերքը դրությունը սկսեց պարզվել։ Այնտեղ, որտեղ ժողովրդական զանգվածները, հաղթահարելով իշխանությունների պասիվությունն ու տատանումները, կարողացան նախաձեռնություն հանդես բերել և զինվել, խռովարարները ջախջախվեցին։ Արագ ու վճռական հաղթանակ տանելու ռեակցիայի պլանները ձախողվեցին։ Երկրի արդյունաբերական շրջաններում՝ Կատալոնիայում, Բասկոնիայում, Աստուրիայում, Մադրիդում, զարգացած գյուղական շրջաններում՝ Լևանտում և Անդալուզիայի մի մասում, Նոր Կաստիլիայում և Էստրեմադուրայում ժողովուրդը հաղթեց։ Խռովարարները կառչել էին երեք մեկուսացված շրջաններում՝ Իսպանական Մարոկկոյում, Արևմտյան Անդալուզիայի շրջանում (Կադիքս, Սևիլիա և Կորդովա պրովինցիաներում), ինչպես նաև Հին Կաստիլիայի, Նավարայի շրջաններում, Արագոնի, Լեոնի և Գալիսիայի մի մասում։ Դրանք բոլորը հիմնականում հետամնաց ագրարային շրջաններ էին, որտեղ մինչև խռովությունը մեծ ազդեցություն ունեին եկեղեցին, խոշոր կալվածատերերը և նրանց քաղաքական կազմակերպությունները։ Ընդհանուր առմամբ խռովարարներին հաջողվեց զավթել 175 հազ. կմ² տերիտորիա (ներառյալ Մարոկկոն), այն դեպքում, երբ հանրապետական կառավարությունը իր ձեռքում էր պահում 350 հազ. կմ², որի բնակչությունը երեք անգամ գերազանցում էր խռովարարների տերիտորիայի բնակչությանը։ Բայց հյուսիսային արդյունաբերական շրջանը (Աստուրիա, Սանտանդեր և Բասկոնիա) կտրված էր հանրապետությանը հավատարիմ մնացած մյուս տերիտորիայից։ Կառավարության կողմում էր մնացել իսպանական ռազմածովային նավատորմի մեծ մասը շնորհիվ այն բանի, որ նավաստիները ձերբակալելով ռեակցիոն հրամանատարներին, խռովությանն

այստեղ թույլ չտվեցին զարգանալ։ Հուլիսի վերջին հանրապետությունն ուներ ժողովրդական միլիցիայի արդեն 60 հազ. զինված մարտիկներ, որոնք թեև փորձառու չէին ռազմական գործում, բայց լի էին մինչև հաղթանակը պայքարելու վճռականությամբ։ Խռովարարների առավելությունը կայանում էր նրանում, որ նրանց կողմում էր մնում ցամաքային բանակի և սպայական կորպուսի հիմնական մասը, նրանց էին ենթարկվում մարոկկյան բանակը և օտարերկրյա լեգեոնը։ Բայց այդ ուժերը տեղավորված էին Հյուսիսային Աֆրիկայում, և խռովարարները միջոցներ չունեին դրանք թերակղզի փոխադրելու համար։ 1936 թ. հուլիսի 25-ին Մադրիդում գերմանական դեսպանը հեռագրում էր իր կառավարությանը. «Եթե չնախատեսված ինչ-որ բան տեղի չունենա, ապա դատելով ռազմական դրությունից, դժվար է հուսալ, որ խռովությունը կարող է հաղթանակ տանել»։ Հուլիսի 27-ին գեներալ Մոլան հայտարարեց, որ գտնում է պայքարը տանուլ տրված։ Սակայն գեներալ Ֆրանկոն հրամայեց շարունակել դիմադրությունը, հույսը դնելով դրսի օգնության վրա։

Գերմանական, իտալական և պորտուգալական ռազմական ինտերվենցիան Իսպանիայում

Հուլիսի 25-ին երեկոյան Հիտլերն ընդունելով գեներալ Ֆրանկոյից ժամանած պատվիրակությանը, հրամայեց անհապաղ խռովարարներին ուղարկել «Յու—52» տրանսպորտային 20 ինքնաթիռ։ Իր կողմից «Մուսոլինին հուլիսի 27-ին Ֆրանկոյին ուղարկեց «Սավոյա—81» 11 ինքնաթիռ։ Հուլիսի վերջին գերմանական ու իտալական ինքնաթիռներից ու օդաչուներից Ջիբրալթարի նեղուցի վրա ստեղծվեց օդային կամուրջ, որն ապահովեց առաջին 14 հազ. խռովարար զինվորների փոխադրումը դեպի թերակղզի։

Ֆաշիստական պետությունների օգնությունը խռովարարներին փրկեց խռովության հենց առաջին շաբաթներում լիակատար ջախջախվելուց։ Հետագայում այդ օգնությունը վերածվեց իսպանական ժողովրդի դեմ Գերմանիայի և Իտալիայի ավելի և ավելի ընդլայնվող ռազմական ինտերվենցիայի, որը հետապնդում էր հեռուն գնացող քաղաքական, տնտեսական և ռազմա-ստրատեգիական նպատակներ։ Այն ձևափոխեց պատերազմի բնույթը և դարձավ ֆրանկոյականների ռազմական առավելության գլխավոր գործոնը։

Քաղաքական տեսակետից գերմանական և իտալական ինտերվենցիան նպատակ ուներ մահացու հարված հասցնել Իսպանիայում Ժողովրդական ճակատին և դրանով իսկ ամբողջ աշխարհի հեղափոխական ու դեմոկրատական ուժերին։ Ռազմա-ստրատեգիական տեսակետից ֆաշիստական պետությունների համար կարևոր էր ամրանալ Պիրենեյան թերակղզում, Ֆրանսիայի թիկունքում և այն ուղիներում, որոնք Անգլիային ու Ֆրանսիային միացնում էին իրենց գաղութների հետ։ Բացի այդ, գերմանա-իտալական ֆաշիստների կողմից Իսպանիան դիտվում էր որպես ռազմական պոլիգոն, որտեղ ստուգվում էր նոր սպառազինությունը, պատերազմ վարելու նոր տակտիկան և կոփվում էին զինվորական կադրերը, որը մեծ նշանակություն ուներ նրանց կողմից համաշխարհային պատերազմը նախապատրաստելու համար։ Վերջապես, հիտլերականները հույս ունեին օգտագործել Իսպանիայի հանքային հարստությունները և ստրատեգիական հումքը, որոնք անհրաժեշտ էին Գերմանիայի ավելի ու ավելի աճող ռազմական արդյունաբերության համար։

1936 թ. օգոստոսի սկզբին գերմանական ու իտալական ինքնաթիռներով Մարոկկոյից թերակղզի փոխադրվեցին մարոկկյան բանակի հիմնական ուժերը և անհրաժեշտ ռազմամթերքը։ 1936 թ. հոկտեմբերի վերջից գերմանական ինտերվենցիան ուժեղացավ «Կոնդոր» լեգեոնի ստեղծման կապակցությամբ,

որի մարտակազմը հասնում էր 6 հազ. մարդու։ Այն ուներ ռմբակոծիչների, կործանիչների 8 էսկադրիլիա, հիդրոպլանների մեկ էսկադրիլիա։ Ամբողջությամբ վերցրած Իսպանիայում կռվում էին մոտ 50 հազ. գերմանական զինծառայողներ։ Սկզբից ևեթ խռովարարներին մեծ օգնություն սկսեց ցույց տալ գերմանական ռազմածովային նավատորմը, որն այդ ժամանակ գտնվում էր իսպանական ջրերում։

Պակաս նշանակալի չէր իտալական ինտերվենցիան։ Արդեն 1936 թ. օգոստոսից Իսպանիա ժամանեցին իտալական առաջին կանոնավոր զորամասերը։ Ամբողջ ռազմական օպերացիաներ մշակվում էին իտալական գեներալների կողմից և իրագործվում Իսպանիայում գտնվող իտալական զորամասերի կողմից։ Ամբողջությամբ վերցրած խռովարարների կողմում կռվում էին 150 հազ. իտալական զինվորներ ու սպաներ։ Մուսոլինին ֆրանկոյականներին տրամադրեց մոտ երկու հազ. հրանոթ, հազար ինքնաթիռ, մոտ հազար տանկ ու զրահատրանսպորտյոր, երկու սուզանավ, չորս էսկադրային ականակիր և շատ այլ ռազմական տեխնիկա։ Իսպանիայում իտալական ինտերվենցիայի հետ կապված ծախսերը կազմում էին 14 մլրդ լիրա։ Իտալական նավատորմն ու ավիացիան ռազմական բազա ստեղծեցին Մալյորկա կղզում և այստեղից հարձակվում էին հանրապետական Իսպանիա մեկնող առևտրանավերի վրա։

Իսպանական հանրապետության դեմ ուղղված իտալա-գերմանական ռազմական ինտերվենցիան, որն սկսվեց ֆաշիստական խռովության առաջին իսկ օրերից, ծավալվում էր հարաճուն մասշտաբներով և ի վերջո եղավ խռովարարների տարած հաղթանակի գլխավոր պատճառը։

Խռովարարների համար մեծ նշանակություն ունեցավ Պորտուգալիայի ֆաշիստական կառավարության օգնությունը, որը վերածվեց խռովարարների գլխավոր հենակետային բազաներից մեկի։ Մինչև 1936 թ. կեսերը, այսինքն՝ մինչև խռովարարների հյուսիսային ու հարավային զորամասերի միանալը, կապը նրանց միջև իրականացվում էր պորտուգալական տերիտորիայի միջոցով։ Պորտուգալիան խռովարարներին պաշտպանեց նաև թվով մոտ 20 հազ. մարդու հասնող իր զինծառայողների կոնտինգենտով, նրանց տրամադրեց խոշոր փոխառություններ։ Խռովարարները Պորտուգալիային օգտագործում էին որպես փոխաբերման կետ Գերմանիայից ու Իտալիայից սպառազինություն ստանալու համար, որը նրանց համար չափազանց կարևոր էր։

Դրան հարկավոր է ավելացնել նաև այն, որ ֆրանկոյական բանակում կռվում էին մոտ 100 հազ. մարոկկյան զինվորներ, որոնք հավաքագրվել էին Իսպանական և Ֆրանսիական Մարոկկոյում և կարևոր դեր խաղացին, հատկապես պայքարի առաջին ամիսներին։ Այսպիսով, խռովարարների կողմում կռվում էին ավելի քան 300 հազ. իտալացիներ, գերմանացիներ, մարոկկացիներ, որը էապես փոխում էր պատերազմի բնույթը։

Ազգային-հեղափոխական պատերազմը

Իսպանական ժողովուրդը ստիպված էր իր ազատության համար պայքարել ընդդեմ իսպանական և միջազգային ֆաշիզմի (իտալական, գերմանական և պորտուգալական)։ Առաջին իսկ ամիսներին իսպանական ժողովրդի հակաֆաշիստական պայքարը դուրս եկավ քաղաքացիական պատերազմի շրջանակներից և վերածվեց ազգային-հեղափոխական պատերազմի։ Դա պատերազմ էր հանուն Եվրոպայի խաղաղության, որովհետև նրա ճնշումն աչքի ընկնող դեր խաղաց ֆաշիզմի կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի նախապատրաստման ու սանձազերծման պլաններում։ Այն հեղափոխական պատերազմ էր, քանի որ պայքարելով ֆաշիզմի դեմ, իսպանական ժողովուրդը

ոչնչացնում էր նրա տնտեսական հիմքը, անցկացնում երկրի ամբողջ տնտեսական, քաղաքական ու սոցիալական կյանքի դեմոկրատացում։

Ազատագրական պատերազմի զարգացման մեջ կարելի է առանձնացնել երեք ժամանակաշրջան. առաջինը՝ մինչև 1937 թ. գարունը, այսինքն՝ մինչև Մադրիդը գրոհով գավթելու խռովարարների ու ինտերվենտների բոլոր փորձերի ձախողումը և Լարգո Կաբալյերոյի կառավարության անկումը. երկրորդը՝ 1937 թ. մայիսի կեսերից մինչև 1938 թ. սեպտեմբերի վերջը, երբ տեղի ունեցավ Մյունխենյան գործարքը, որն ամենածանր հետևանքներ ունեցավ իսպանական ժողովրդի պայքարի համար. երրորդը՝ Մյունխենից մինչև 1939 թ., երբ Մադրիդի դավաճանական հանձնումով ավարտվեց պատերազմը։

Մադրիդի պաշտպանությունը

Պատերազմի առաջին ժամանակաշրջանում խռովարարների նպատակն էր գավթել Մադրիդը, որի հետ նրանք կապում էին իրենց վերջնական հաղթանակը։ Բայց Մադրիդի համար մղված առաջին ճակատամարտը (1936 թ. հուլիս-օգոստոս) ավարտվեց խռովարարների պլանների ձախողումով։ Նոր հարձակման համար նրանք ստիպված էին սպասելու օժանդակ ուժերի։ Դրանք ստանալով, գեներալ Ֆրանկոյի բանակը Բադախոսը գավթելով՝ շարժվեց դեպի Մադրիդ։ Սեպտեմբերի 27-ին նա գրավեց Տոլեդոն։ Մադրիդի վրա նորից կախվեց մահացու սպառնալիքը։ Այդ պայմաններում 1936 թ. սեպտեմբերի 4-ին կազմվեց նոր կառավարություն սոցիալիստական կուսակցության պարագլուխ Լարգո Կաբալյերոյի գլխավորությամբ, որը նաև ռազմական մինիստրն էր։ Այդ կառավարության մեջ սոցիալիստները գլխավորում էին 6 մինիստրություն, այդ թվում ռազմածովային նավատորմի և ավիացիայի, ներքին գործերի, արտաքին գործերի և ֆինանսների մինիստրությունները։ Կառավարության մեջ առաջին անգամ մասնակցած կոմունիստները գրավեցին գյուղատնտեսության և լուսավորության մինիստրների պոստերը։ Ժողովրդական ճակատի այդ առաջին իսկական կառավարության մեջ մասնակցում էին հանրապետական կուսակցությունների և բասկական ու կատալոնյան նացիոնալիստների ներկայացուցիչները, բայց ղեկավար դերը պատկանում էր պրոլետարիատի ներկայացուցիչներին, թեև ԱԱԿ-ի—ԻԱՖ-ի ղեկավարները նրա կազմի մեջ չմտան։ Նոր կառավարությունն օգտվում էր ժողովրդի ընդհանուր աջակցությունից, այն կոչ էր անում միավորել բոլոր ջանքերը, բոլոր անհրաժեշտ վերափոխություններն անցկացնել թշնամու արագ ու լիակատար ջախջախման համար։ Առաջին հերթին անհրաժեշտ էր միավորել հանրապետականների բոլոր զինված ուժերը, որոնք դեռ ենթարկվում էին կուսակցական ու արհմիութենական կենտրոններին, և ստեղծել միասնական հրամանատարությամբ միասնական ժողովրդական բանակ։

Սակայն ժողովրդական բանակի ստեղծման նշանակությունը ոչ լիովին էին հասկանում նույնիսկ ԻՍԲԿ-ի և ԱԱԿ-ի շատ ղեկավարներ։ Կոմունիստական կուսակցությունը կանոնավոր ժողովրդական բանակի ստեղծման իսկական նախաձեռնողն ու հետևողականորեն պայքարողն էր։ Նրա հիմքը դարձավ փառաբանված 5-րդ գունդը, որը ԻԿԿ-ն ստեղծեց պատերազմի հենց սկզբին Մադրիդում։ 5-րդ գունդը ոչ միայն զորամաս էր, այլև նոր զորամասերի կազմավորման շտաբ և ժողովրդի ծոցից ելած հրամանատարական նոր կադրերի ուսուցման դպրոց։ 5-րդ գունդ ընդունվեցին իսպանական մտավորականության առաջադեմ մարդիկ, իսպանական մշակույթի հպարտությունը հանդիսացող Ռաֆայել Ալբերտին, Միգել Էռնանդեսը, Խուան Ռեխանոն, Սեսար Արկոնադան, Մարիա Թերեսա Լեոնը, Ալբերտո Սանչեսը և շատ ուրիշներ։ 5-րդ

գնդի դրոշի ներքո մարտնչում էին 70 հազ. հակաֆաշիստ կամավոր մարտիկներ։

Միայն սեպտեմբերի 30-ին, խռովարարների կողմից Տոլեդոն գրավելուց հետո, Լարգո Կաբալյերոն դեկրետ հրապարակեց ժողովրդական միլիցիայի ռազմականացման մասին, իսկ հոկտեմբերի 10-ին, երբ խռովարարները մոտենում էին Մադրիդին, դեկրետ՝ մայրաքաղաքի պաշտպանության համար ժողովրդական կանոնավոր բանակի առաջին 6 բրիգադների կազմակերպման մասին (ժողովրդական բանակի մեջ միլիցիայի միավորման գործը Իսպանիայի մյուս շրջաններում, հատկապես Կատալոնիայում և երկրի հյուսիսում շատ ամիսներ ձգձգվեց)։

Հոկտեմբերի երկրորդ կեսից մինչև նոյեմբերի վերջը խռովարարների 150-հազարանոց բանակն անընդհատ ճակատային հարձակում էր կատարում Մադրիդի վրա։ Այդ օրերին մայրաքաղաքի մատույցներում ամրություններ կառուցելու համար ԻԿԿ-ն կազմակերպեց բնակչության ընդհանուր մոբիլիզացիա։ Մադրիդի պաշտպանության ուղղությամբ ԻԿԿ-ի գործունեությունը ծավալվեց մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հանրապետական շատ գործիչներ կորցրել էին մայրաքաղաքը պաշտպանելու հնարավորության հույսը։ Նոյեմբերի 6-ին Լարգո Կաբալյերոյի կառավարությունը տեղափոխվեց Վալենսիա։ Ժողովրդական ճակատի բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչներից Մադրիդում կազմվեց պաշտպանության խունտա։ Խունտայում վճռական պաշտոնները՝ ռազմական գործերի գծով և հասարակական կարգի գծով խորհրդականների պոստերը գրավեցին կոմունիստները։ Այդ դժվարին օրերին, երբ յուրաքանչյուր կուսակցության քաղաքականությունն ու տակտիկան ստուգվում էին կյանքով, ԻԿԿ-ի թվակազմը Մադրիդում ավելացավ չորս անգամ։ Ընդունվողների մեջ շատ էին ՍԵՄ-ի շատ ղեկավարներ Սանտյագո Կարիլիոյի հետ միասին։

Մադրիդը վերածվում էր իսպանական ու միջազգային դեմոկրատիայի անմատչելի ամրոցի։ Մադրիդի մոտ տեղի ունեցած ծանր մարտերում խռովարարների լավ զինված բանակը պարտություն կրեց։ Բացի մասսաների համախմբումից ու ընդհանուր հակաֆաշիստական վերելքից, նրանց անձնուրաց հերոսությունից, հաղթանակի կարևոր գործոն եղավ միջազգային համերաշխությունը Իսպանական հանրապետության հետ և առաջին հերթին Սովետական Միության օգնությունը։ Այն բազմակողմանի էր՝ ռազմական, դիվանագիտական, տնտեսական և բարոյական։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ 1936 թ. հոկտեմբերի 16-ի հեռագրում, որը հասցեագրված էր ԻԿԿ կենտկոմին, ասվում էր. «Սովետական Միության աշխատավորները միայն իրենց պարտքն են կատարում՝ իրենց ուժերի ներածին չափ օգնություն ցույց տալով Իսպանիայի հեղափոխական մասսաներին։ Նրանք իրենց հաշիվ են տալիս, որ Իսպանիայի աղատագրումը ֆաշիստական ռեակցիոներների լծից իսպանացիների մասնավոր գործը չէ, այլ ամբողջ առաջադեմ մարդկության ընդհանուր գործը»[1]։ Հոկտեմբերի 7-ին «չմիջամտության» կոմիտեում սովետական ներկայացուցիչը հայտարարեց, որ եթե օտարերկրյա ռազմական օգնությունը խռովարարներին անհապաղ չդադարեցվի, ապա սովետական կառավարությունն իրեն ազատ կհամարի այն պարտավորություններից, որոնք բխում են վերոհիշյալ կոմիտեի համաձայնագրից։ Հոկտեմբերի 13-ին Կարտահենա ժամանեց սպառազինությամբ բեռնված սովետական առաջին նավը։ Հոկտեմբերի

[1] «Պրավդա», 1936 թ., հոկտեմբերի 16։

28-ին Մադրիդի համար մղվող մարտի մեջ մտավ սովետական տանկերի առաջին վաշտը, իսկ նոյեմբերի 5-ին Մադրիդի երկնքում ռազմական գործողություններ սկսեցին սովետական առաջին կործանիչները։ Սովետական տանկիստներն ու օդաչուները ցույց տվեցին հերոսության օրինակներ, Մադրիդի իսպանացի պաշտպանների հետ նրանք ցույց էին տալիս կարգապահության և ռազմական հմտության օրինակներ, ուսուցանում ու պատրաստում հարյուրավոր իսպանական տանկիստներ ու օդաչուներ։ Որպես խորհրդատուներ ու զինվորական մասնագետներ Իսպանիայում կռվում էին սովետական զորապետներ Ռ. Յա. Մալինովսկին, Պ. Ի. Բատովը, Ն. Ն. Վորոնովը, Ա. Ի. Ռոդիմցևը և ուրիշներ։

Մադրիդի պաշտպանության գործում պատվավոր տեղ գրավեցին Ինտերնացիոնալ բրիգադները, որոնցից առաջինը մարտի մեջ մտավ նոյեմբերի 8-ին ռազմաճակատի ամենադժվարին տեղամասերում։ Այդ Ինտերնացիոնալ բրիգադը (11-րդ) բաղկացած էր հակաֆաշիստ կամավորներից՝ գերմանացիներից, ավստրիացիներից, ֆրանսիացիներից, բելգիացիներից, լեհերից, իտալացիներից, սկանդինավցիներից և այլ ազգերի պատկանող մարտիկներից՝ ընդհանուր թվով մոտ 2000 մարդ։ Նրա հետևից ժամանեցին նաև այլ ինտերնացիոնալ բրիգադներ։ Մադրիդի մոտ փառաբանվեցին գեներալ Կլեբերը (գերմանական կոմունիստ Մ. Ստեռնը), գեներալ Լուկաչը (հունգարական գրող Մատե Զալկան), գեներալ Վալտերը (լեհական ազգային հերոս Սվերչևսկին), ինտերբրիգադների կոմիսար Գալլոն (Լուիջի Լոնգոն), Գերմանիայի կոմկուսի Կենտկոմի անդամ Հանս Բայմլերը, Անգլիայի կոմկուսի նշանավոր գործիչ Ռալֆ Ֆոքսը և շատ ուրիշներ։ Ընդհանուր առմամբ իսպանական ժողովրդի ազգային-հեղափոխական պատերազմում մասնակցեցին 35 հազ. կամավորներ։ Ինտերբրիգադներում կռվում էին 8,5 հազ. հենց միայն ֆրանսիացիներ, նրանցից մոտ 3 հազարն իրենց կյանքը տվեցին իսպանական հողում։

Մադրիդի պաշտպանության ընթացքում ստեղծվեց լավ կազմակերպված և մարտունակ ժողովրդական բանակ. ռազմաճակատի այդ հատվածում սովետական խորհրդատուների օգնությամբ աճեցին ընդունակ սպայական կադրեր։ Այդ բոլոր գործոնները Մադրիդի ռազմաճակատը դարձրին առավել դիմացկուն։ Պատերազմն ընդունեց ձգձգվող բնույթ։

Հաջողություն չունեցավ նաև նոր գլխավոր հարձակումը, որը ֆրանկոյականները ձեռնարկեցին 1937 թ. հունվարին՝ ուժերի վերախմբավորումից և Գերմանիայից ու Իտալիայից նոր տեխնիկա ստանալուց հետո։ 1937 թ. մարտին Գվադալախարայի շրջանում կործանիչ պարտություն կրեց իտալական կորպուսը, որը հաշվվում էր մոտ 50 հազ. մարդ՝ 4 մոտոռացված դիվիզիաներով և մոտ 80 մարտական ինքնաթիռներով հանդերձ, որոնց գլխավորում էր իտալական գեներալ Ռոատը։ Այդպես ձախողվեց հյուսիս-արևելքից Մադրիդ մտնելու նոր փորձը։ Այդ պահից ի վեր և՛ խռովարարները, և՛ ինտերվենտները ժամանակավորապես թողեցին Մադրիդը գրոհելու միտքը։

Պատերազմի առաջին շրջանի արդյունքները և հատկապես Մադրիդի հաջող պաշտպանության փորձը ընդգծեցին միասնական հրամանատարության առկայության, միասնական ժողովրդական բանակի ստեղծման, ռազմաճակատներում և թիկունքում գործողությունները կոորդինացնելու, ժողովրդական ճակատի կառավարության և նրա մարմինների որոշումներին բոլոր կազմակերպությունների և քաղաքացիների ենթարկման անհրաժեշտությունը։ 1936 թ. դեկտեմբերի 18-ին այդ պահանջները ԻԿԿ-ի կողմից ձևավորվեցին մի ծրագրում, որը հայտնի դարձավ «հաղթանակի ութ պայմաններ» անունով։ Բայց

1937 թ. գարնան մոտերքին հանրապետական տերիտորիայում արմատախիլ չէին արվել տարանջատվածությունը, տեղայնությունը և անվերահսկողությունը, հատկապես Կատալոնիայում և Արագոնիայում, ուր կառավարության ղեկավար Լարգո Կաբալլերոյի թողտվությամբ անարխիստներն ու տրոցկիստները շարունակում էին անցկացնել իրենց կործանարար «սոցիալական փորձերը», որոնք քայքայում էին հանրապետության մարտունակությունը։ 1937 թ. մայիսի սկզբին Բարսելոնայում տրոցկիստներն (ՊՕՈՒՄ) ու անարխիստները պուտչի դիմեցին ինքնավար կառավարության դեմ, աշխատելով լիովին գրավել իշխանությունը Կատալոնիայում։ Նրա ճնշումը թանկ նստեց հանրապետության վրա։ Մայիսյան պուտչի անմիջական հետևանքը եղավ պրեմիեր մինիստր Լարգո Կաբալլերոյի անկումը։

Մայիսի 17-ին կազմվեց ժողովրդական ճակատի նոր կառավարություն, որը գլխավորեց սոցիալիստական կուսակցության մեկ այլ պարագլուխ՝ Խուան Նեգրինը։ Առանց էական փոփոխությունների այն գոյություն ունեցավ մինչև պատերազմի վերջը։ Նոր կառավարության մեջ կոմունիստները պահպանեցին նույն երկու մինիստրությունների ղեկավարների պաստերը, թեև նրանց ազդեցությունն արտակարգ չափով աճեց. 1937 թ. մարտին հանրապետական տերիտորիայում ԻԿԿ-ն հաշվվում էր 249.140 անդամ, որոնցից 131.600 կրռվում էին ժողովրդական բանակի շարքերում։

1937 թ. գարնանից խռովարարները և ինտերվենտները Բասկոնիայի դեմ կենտրոնացնելով 60-հազարանոց բանակ, սկսեցին հարձակումը դեպի Իսպանիայի հյուսիս։ Հոկտեմբերի վերջին ֆաշիստներին հաջողվեց գրավել Աստուրիան, բայց ռազմական գործողությունները մինչև 1938 թ. աշունը շարունակվում էին փոփոխական հաջողությամբ։ 1937 թ. դեկտեմբերին հանրապետական բանակը սկսեց շարժվել դեպի Տերուել և գրավեց այն։ 1938 թ. ապրիլին ինտերվենտներն Արագոնում ճեղքեցին ճակատը և դուրս եկան Միջերկրական ծովի ափերը, սակայն այդ նույն 1938 թ. հուլիսին հանրապետական բանակը անցավ Էբրո գետը և թշնամուն ծանր պարտության մատնեց։

Հեղափոխական վերափոխությունները

Ֆաշիզմի դեմ մղված զինված պայքարի ընթացքում հանրապետական Իսպանիայում տեղի էին ունենում հեղափոխական խոր վերափոխություններ։ Ձևականորեն նրա պետական կարգը որոշվում էր 1931 թ. սահմանադրությամբ, բայց 1936—1939 թթ. հանրապետությունը էականորեն տարբերվում էր 1931 թ. հանրապետությունից։ Ազգային-հեղափոխական պատերազմի ժամանակ իշխանության գլուխ էր կանգնած բանվորների, մանր բուրժուազիայի և Կատալոնիայի ու Բասկոնիայի ազգային բուրժուազիայի մի մասի բլոկը, ընդ որում այդ բլոկի վճռական ուժը բանվոր դասակարգն էր, որը այդ էտապում լիովին դարձավ հեղափոխության հեգեմոնը։ 1936—1939 թթ. հանրապետությունը հենվում էր զինված ժողովրդի, պատերազմի ընթացքում ստեղծված դեմոկրատական ժողովրդական բանակի, պետական նոր ապարատի վրա, որովհետև հինը փշրվեց խռովությունից հետո առաջին իսկ շաբաթների ընթացքում։

Խիրալիի կառավարության՝ 1936 թ. հուլիս-օգոստոսի դեկրետներով աշխատանքից ազատվում էին հանրապետությանը ոչ լոյալ բոլոր պետական ծառայողները, ցրվում «քաղաքացիական գվարդիան» և հին ռեակցիոն դիվանագիտական ծառայությունը։ Հին դատական սիստեմի փոխարեն ստեղծվում էին արդարադատության նոր մարմիններ՝ բանվորական և դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչներից։

Հեղափոխության դեմոկրատական խնդիրների լուծումը 1936 թ. հուլիսի

18-ից հետո սերտորեն կապված էր ֆաշիզմի դեմ մղվող պատերազմի հետ։ Պատերազմում պարտություն կրելը նշանակում էր հեղափոխության պարտություն և երկրում ֆինանսական օլիգարխիայի, լատիֆունդիստների, միլիտարիստների և կաթոլիկական եկեղեցու առավել ռեակցիոն շրջանների տեռորիստական դիկտատուրայի հաստատում։ Պատերազմը շահելու համար հարկավոր էր խարխլել ռեակցիայի տնտեսական ու սոցիալ-քաղաքական արմատները, պայքարի մեջ ներգրավել բանվորներին, գյուղացիներին և բոլոր աշխատավորներին, իսկ դրան կարելի էր հասնել միայն բավարարելով նրանց պահանջները։ Իսկ հեղափոխության գլխավոր հարցը՝ իշխանության հարցը որոշվում էր մարտի դաշտում՝ խռովության առաջին իսկ օրերից ժողովրդի լայն զանգվածների մասնակցությամբ։

Բայց կառավարության վերահսկողության տակ գտնվող բոլոր տերիտորիաներում իշխանության կենտրոնացված նոր սիստեմի ստեղծումը ձգձգվեց շատ ամիսներ՝ մինչև 1937 թ. գարունը, որը որոշակիորեն բարդացրեց հեղափոխության արմատական հարցերի լուծումը։ Անհրաժեշտ էր արագ կերպով լուծել ագրարային հարցը, հողը տալ գյուղացիներին։ 1936 թ. հոկտեմբերի 6-ից կառավարությունը երկրագործության մինիստր, կոմունիստ Վիսենտե Ուրիբեի առաջարկությամբ ընդունեց դեկրետ խռովության մասնակիցների հողային տիրույթների ազգայնացման և դրանք գյուղացիության հավերժ օգտագործմանը հանձնելու մասին՝ կոլեկտիվ կամ անհատական աշխատանքով մշակելու համար։

1936 թ. հոկտեմբերից մինչև 1938 թ. ներառյալ ամբողջությամբ վերցրած գյուղացիներին բաժանվեց ավելի քան 5 մլն հեկտար հող։ Բացի այդ երկրագործության մինիստրությունը գյուղացիներին տրամադրեց ավելի քան 200 մլն պեսետ գումարով վարկեր, ավելի քան 255 տոննա պարարտանյութ, ընտրովի սերմեր, գյուղատնտեսական մեքենաներ։ Նա գյուղացիներին նաև պաշտպանում էր բռնությամբ կոլեկտիվացնելու անարխիստական «փորձերից»։ Դրա հետևանքով հանրապետական տերիտորիայում վերջ տրվեց կալվածատիրական հողատիրությանը և լուծվեց ագրարային հարցը, որը հանրապետության համար ապահովեց գյուղացիության աջակցությունը պատերազմի ժամանակ և բանակի ու քաղաքների կանոնավոր մատակարարումը սննդամթերքով։

1936 թ. հոկտեմբերի 1-ին կորտեսներն ընդունեցին Բասկոնիայի ինքնավարության ստատուտը, իսկ հոկտեմբերի 7-ին այնտեղ կազմվեց առաջին ինքնավար կառավարությունը, որին մասնակցում էին սոցիալիստական ու կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչները։ Նրա գլուխ կանգնեց բասկական ազգային բուրժուազիայի ներկայացուցիչ Խ. Ա. Ագիրրեն։

Կատալոնիան, որը ինքնավարություն էր ստացել դեռ 1932 թ., 1936 թ. սեպտեմբերին իր կառավարության կազմը ընդլայնեց՝ նրա մեջ ներգրավելով միացյալ սոցիալիստական կուսակցության և անարխո-սինդիկալիստական ԱԱԿ-ի ներկայացուցիչներին։ Ժամանակի պահանջների ազդեցության տակ ԱԱԿ-ը հրաժարվեց «քաղաքական կյանքին մասնակցելուց հրաժարվելու» իր հին լոզունգից։

Գալիսիան մնում էր խռովարարների լծի տակ, որոնք չէին ճանաչում ազգային փոքրամասնությունների ոչ մի իրավունք։ Այսպիսով, հանրապետության տերիտորիայում պատերազմի ժամանակ ազգային հարցն էլ իր լուծումն ստացավ։

Ինչ վերաբերում է արտադրության հիմնական միջոցներին, ապա դրանք

խռովության սկզբին բանվորների կողմից գրավվեցին հանրապետության ամբողջ տերիտորիայում, բացառությամբ Բասկոնիայի։ Դրանց փաստացի տերերը դարձան ԱԸՄ-ի և ԱԱԿ-ի արհմիութենական կոմիտեները։ Բասկոնիայում ձեռնարկությունների մեծ մասը շարունակում էր գոյություն ունենալ որպես մասնավոր ձեռնարկություններ, քանի որ դրանց տերերի զգալի մասը չէր փախել խռովարարների մոտ, այլ մնացել էր տեղում։ Սակայն այստեղ էլ ձեռնարկություններում իրականացվեց բանվորական վերահսկողություն։

1936 թ. օգոստոսի 2-ին կառավարությունը դեկրետ հրապարակեց խռովարարներին պատկանող արդյունաբերական ձեռնարկությունները պետության օգտին բռնագրավելու մասին։ Դրանց գործունեությունը կոորդինացնելու համար ստեղծվում էր ազգայնացման պետական խորհուրդ, բայց այն ի վիճակի չեղավ հաղթահարել արհմիությունների ինքնիշխանությունը և արդյունաբերական արտադրությունը ենթարկել պատերազմի կարիքներին։ Կործանարար հետևանքներ ունեցավ անարխիստների գործունեությունը Կատալոնիայի արդյունաբերական շրջանում։ Առաջին իսկ օրերից ԱԱԿ-ը սկսեց լայնորեն անցկացնել այսպես կոչված ձեռնարկությունների սինդիկալացում, այսինքն՝ ձեռնարկությունը վերածել անարխո-սինդիկալիստական արհմիությունների սեփականության։ Անտեսելով տնտեսական օրենքները, արհմիությունները քիչ էին հետաքրքրվում արտադրությամբ և իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրին «հավասարարական բաշխման» վրա, հավասար վարձատրություն մտցնելով սևագործ բանվորների, ինժեներների և տեխնիկների համար, չմտածելով պատերազմի կարիքների մասին։ Անարխիստների կազմալուծիչ գործունեությունը Կատալոնիայի արդյունաբերության մեջ հասցրեց արտադրության նվազմանը, ձեռնարկություններում հումքի ֆոնդերի սպառմանը, «սինդիկալացման» անարխիստական տնտեսական տեսության ձախողմանը։ 1937 թ. հունվարին ԱԱԿ-ի տնօրինության տակ գտնվող 11.000 ձեռնարկություններ պահանջում էին կառավարության կողմից ազգայնացում, այսինքն՝ պետության տնտեսական օգնություն։

ԻԿԿ-ի և Կատալոնիայի ՄՍԿ-ի հետևողական գիծը նպատակասլաց կառավարական տնտեսական քաղաքականության անցկացման բնագավառում, ռազմական արդյունաբերության ստեղծումը, Կատալոնիայի և մնացած Իսպանիայի արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության կոորդինացումը պետության կողմից և անարխո-սինդիկալիստների տնտեսական գործունեության բացահայտ ձախողումը հասցրին այն բանին, որ, թեև ուշացումով, 1938 թ. ամբողջ ռազմական արդյունաբերությունը, ամբողջ երկաթուղային, ավտոմոբիլային և ծովային տրանսպորտը, հանքերը ազգայնացվեցին և դրվեցին կառավարության ուղղակի վերահսկողության տակ։ Այսպիսով, պատերազմի ընթացքում ստեղծվեց ժողովրդական-պետական սեկտոր, որը կարևոր դեր խաղաց երկրի տնտեսական կյանքում։ Կառավարությունը հրսկողություն սահմանեց բանկերի և օտարերկրյա ընկերությունների գործունեության նկատմամբ։

Պատերազմի ընթացքում հանրապետական տերիտորիայում տեղի էին ունենում կուլտուրական խոր վերափոխումներ։ Կառավարությունը ավելացրեց կրթության համար կատարվող հատկացումները, շտապ միջոցառումներ ձեռնարկվեցին անգրագիտության լիկվիդացման ուղղությամբ։ Այդ նպատակով պարապմունքներ էին անցկացվում նույնիսկ խրամատներում, ստեղծվում էին թռուցիկ բրիգադներ, որոնք շրջում էին գյուղերում, որպեսզի գրագիտություն սովորեցնեն տասնյակ հազարավոր գյուղացիների։ Մոտ 200 հազ. զինվորներ

գրագիտություն էին սովորում ժողովրդական բանակում։ Ընդլայնվեց դրպրոցների ցանցը։ Աշխատավորները բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն ստացան։ Վալենսիայում, Բարսելոնայում և Սաբադելում բացվեցին այսպես կոչված բանվորական ինստիտուտներ, որոնք երիտասարդությանը նախապատրաստում էին համալսարան ընդունվելու համար։ Իսպանական մտավորականության ճնշող մասը ջերմ մասնակցություն ունեցավ կուլտուրական վերափոխումների իրագործման ընթացքում։ 1937 թ. մտցվեց բնակչության աշխատավոր խավերից ելած ուսանողների թոշակավորման սիստեմ։

Մեծ հաջողություններ ձեռք բերվեցին առողջապահության բնագավառում։

Այսպիսով, պատերազմի ընթացքում հանրապետության տերիտորիայում անցկացվեցին հեղափոխական խոր վերափոխություններ, որոնք դուրս էին գալիս բուրժուա-դեմոկրատական հեղափոխության շրջանակներից։ Իսպանական հանրապետությունը վերածվեց առանց խոշոր կալվածատերերի ու կապիտալիստների, նոր տիպի հանրապետության, ժողովրդական դեմոկրատիայի պետության նախատիպի։

Հեղափոխական այդ վերափոխություններն ուժեղացնում էին հանրապետությունը տապալելու նպատակով ինտերվենտների ու խռովարարների ակտիվությունը։

Խռովարարների ֆաշիստական դիկտատուրան

Դեռ 1936 թ. հոկտեմբերի 1-ին գեներալ Ֆրանկոն հռչակվեց գեներալիսիմուս, այսինքն՝ խռովարարների բոլոր զորքերի հրամանատար, և պետության ղեկավար։ Ռադիոյով դիմելով երկրին, Ֆրանկոն նշեց տոտալիտար նոր պետության ուրվանկարը, շժլատանալով դեմագոգիկ խոստումներ տալու բանվորներին ու գյուղացիներին։ Բայց խռովարարների լագերում դեռ քաղաքական միասնություն չկար։ Տարբեր քաղաքական խմբավորումների միջև եղած մրցակցությունը նույնիսկ ֆալանգիստական կուսակցության ներսում իրեն զգացնել էր տալիս 1936 և 1937 թթ. ընթացքում։ Վրճռական դեր էին խաղում խռովարար գեներալները, որոնց վրա հենվում էր ինքը՝ Ֆրանկոն որպես «պետության ղեկավար»։ 1937 թ. փետրվարին Ֆրանկոն հրապարակեց դեկրետ իր գլխավորությամբ միասնական կուսակցություն ստեղծելու մասին, որը կոչվեց «Իսպանական տրադիցիոնալիստական ֆալանգա և ԽՈՆՍ» (կրճատ՝ ԻՏՖ և ԽՈՆՍ)։

Այսպիսով, 1937 թ. գեներալ Ֆրանկոյին հաջողվեց իր վերահսկողության տակ դնել խռովարարական Իսպանիայի բոլոր ռազմական ու քաղաքական ուժերը. գեներալիսիմուս և պետության ղեկավար լինելով, նա դարձավ նաև Ֆալանգայի ղեկավար և հռչակվեց «կաուդիլյո»՝ իսպանական ֆաշիզմի առաջնորդ։ Ռեակցիայի ուժերի համախմբման համար վիթխարի նշանակություն ունեցավ կաթոլիկական եկեղեցու վերնախավի աջակցությունը խռովարարներին։ 1936 թ. իսպանական հոգևորականության մեծ մասն իր շահերը նույնացնում էր խռովարարների լագերի հետ։ Փոքրամասնությունը, որը բաղկացած էր հիմնականում բասկական հոգևորականությունից, որը սերտորեն կապված էր Բասկոնիայի ազգային շարժման և բասկական ազգային բուրժուազիայի հետ, հավատարիմ մնաց հանրապետությանը։ Եկեղեցական հիերարխիան սկզբից ևթ ֆաշիստական խռովությանը տվեց «խաչակրաց արշավանքի» բնույթ ի պաշտպանություն հավատի ու սեփականության, իսկ 1937 թ. հուլիսի 1-ին հրապարակվեց իսպանական եպիսկոպոսների կոլեկտիվ նամակը, որն ուղղված էր ամբողջ աշխարհի կաթոլիկներին, որտեղ փորձ էր կատարվում ֆաշիստական խռովությունն արդարացնել «նախապատրաստվող կոմունիստական հեղափոխության» վկայակոչմամբ։ Իսպանական եկեղեցու պրելատները ֆաշիստական խռովությունն անվանում էին «ազգային շարժում» հանուն «կարգի» պաշտպանության։

Նույն 1937 թ. ամռանը Վատիկանը պաշտոնապես ճանաչեց գեներալ Ֆրանկոյին և նրա ռազմական ուղարկեց իր դիվանագիտական ներկայացուցչին։ Այսպիսով, կաթոլիկ եկեղեցին հաստատուն կերպով իրեն կապեց Իսպանիայի ֆաշիստական դիկտատուրայի հետ։

Խռովարարների կառավարությունը բացահայտորեն գործում էր ֆինանսական օլիգարխիայի և կալվածատերերի օգտին։ Դեռ 1936 թ. սեպտեմբերին խռովարարներն օրենքից դուրս հայտարարեցին ժողովրդական ճակատի մեջ մտնող բոլոր կազմակերպությունները, այդ թվում նաև արհմիությունները, և 1938 թ. մարտին նրանք սահմանեցին «աշխատանքի խարտիա», որը ձեռնարկատերերի շահերին աշխատավորության փաստացի ենթարկման վարագույր դարձավ։ Դեկրետի համաձայն, ստեղծվում էր ազգային միակ արհմիութենական կազմակերպությունը, որի մեջ ձեռնարկատերերի ու ծառայողների հետ հարկադիր կարգով մտնում էին բոլոր բանվորները, անկախ նրանց ցանկությունից։ Հետագայում «ուղղահայաց արհմիություններ» անունով հայտնի դարձած այդ կազմակերպության բոլոր ղեկավար պաշտոններում նշանակվում էին վերևից և դրանք ենթարկվում էին ֆրանկոյական իշխանություններին։

Առաջացավ ֆաշիստական տեռորիստական տոտալիտար պետություն։ Այդ պրոցեսի գագաթնակետը եղավ 1939 թ. փետրվարի սկզբին Ֆրանկոյի հրապարակած օրենքը քաղաքական գործունեության համար պատասխանատվության մասին։ Այդ օրենքի 1 հոդվածով պատժի ենթակա պետության թշնամիներ էին հայտարարվում բոլոր այն անձինք, ովքեր 1934 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1936 թ. հուլիսի 18-ը մասնակցել էին դեմոկրատական և հակաֆաշիստական շարժմանը, ինչպես նաև նրանք, ովքեր 1938 թ. հուլիսի 18-ից հետո կամ դիմակայել էին խռովությանը, կամ էլ հրաժարվել նրան օժանդակել։ Այդ օրենքի համաձայն ստեղծվում էին արտակարգ տրիբունալներ, որոնց մեջ մտնում էին զինվորականներ և ԻՏՖ ու ԽՈՆՍ-ի ներկայացուցիչներ, որոնք արտակարգ դաժանությամբ հաշվեհարդար էին տեսնում հակաֆաշիստների հետ։

Մյունխենյան կապիտուլյացիայի հետևանքներն Իսպանիայի համար

Իսպանական խռովարարներին մեծ օգնություն ցույց տվեցին միջազգային ռեակցիայի ուժերը, որոնք կազմակերպեցին մյունխենյան գործարքը։

Մյունխենյան կապիտուլյացիայից հետո պարզ դարձավ, որ արևմտյան տերությունները Գերմանիայի ու Իտալիայի դեմ չեն հակազդի հանրապետական Իսպանիան լիովին խեղդելու գործում։ Ավելին, դեն նետելով «չմիջամտության» դիմակը, Անգլիան ու Ֆրանսիան սկսեցին ուղղակի ճնշում գործադրել Նեգրինի կառավարության վրա, որպեսզի վերջ տան ֆաշիզմի դեմ ժողովրդական դիմադրությանը։ Մյունխենում տեղի ունեցած կապիտուլյացիայի օրը Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Բոնեն ընդունեց Իսպանիայի արտաքին գործերի մինիստր Ալվարես դել Վայոյին և եռանդագին աշխատում էր, որպեսզի հանրապետական

կառավարությունը վերջ տա Իսպանիայում մղվող պատերազմին։ Իսկ դրանից առաջ կնքված իտալա-անգլիական համաձայնագրով Անգլիան պաշտոնապես ճանաչել էր իտալական ռազմական ինտերվենցիան Իսպանիայում։ Մյունխենյան կապիտուլյացիան ֆաշիստական լագերում ընդունվեց որպես սեփական հաղթանակ։

Մյունխենից հետո ժողովրդական ճակատի լագերում բացահայտորեն դրսևորվեցին պարտվողական տրամադրությունները, սկսեց ձևավորվել տարբեր քաղաքական տարրերի կապիտուլյանտական բլոկը։ Դրանով է մասնակիորեն բացատրվում հանրապետության մյուս ռազմաճակատների պասսիվությունը, երբ 1938 թ. աշնանը Էբրոյի մոտ տեղի էր ունենում վճռական ճակատամարտը։ Հանրապետական բանակը դրսևորելով հասունություն և բարձր մարտունակություն, հերոսաբար մարտնչում էր ժամանակակից տեխնիկայով զինված հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ։ 3,5 ամիս տևած անընդհատ մարտերից հետո այն արյունաքամ եղավ և 1938 թ. նոյեմբերի կեսերին ստիպված էր նահանջել։

1938 թ. դեկտեմբերին Գերմանիայից ու Իտալիայից նոր օժանդակ ուժեր ստանալով, խռովարարները Կատալոնիայի դեմ կենտրոնացրին մոտ 350 հազ. զինվոր, մոտ 300 տանկ, 800 հրանոթ և 500-ից մինչև 600 ինքնաթիռ։ Հանրապետականները Կատալոնիայում ունեին 140 հազ. մարդուց բաղկացած բանակ, 40 տանկ, 250 հրանոթ և մոտ 100 ինքնաթիռ։

1938 թ. նոյեմբերին Խ. Նեգրինը կանխատեսելով խռովարարների հարձակումը Կատալոնիայի վրա, հանրապետական ավիացիայի հրամանատար Ի. Իդալգո դե Սիսներոսի գլխավորությամբ զինվորական պատվիրակություն ուղարկեց ՍՍՀՄ՝ խնդրելով հանրապետությանն անհապաղ օգնություն տրամադրել 250 ինքնաթիռի, 250 տանկի, 650 հրանոթի, 4 հազ. գնդացիրի շափով և այլն։ Իսպանական կառավարության խնդրանքը Սովետական Միությունը լիովին բավարարեց. դրա վճարման համար սովետական կառավարությունը Նեգրինի կառավարությանը տրամադրեց ավելի քան 100 մլն դոլլարի վարկ։ Սպառազինությունը Մուրմանսկից շտապ ուղարկվեց Բորդո, բայց այն Իսպանիա հասավ հունվարի վերջին, երբ Կատալոնիայի ճակատագիրը գործնականորեն որոշված էր, իսկ հանրապետականներին ոչ մի օգնավակայան չէր մնացել, որպեսզի ընդունեին սովետական ինքնաթիռները։

Մարտերը Կատալոնիայում դեռ չէին ավարտվել, երբ անգլիական կառավարությունը «չմիջամտությունից» անցավ բացահայտ ռազմական գործողությունների՝ ընդդեմ իսպանական ժողովրդի։ 1939 թ. փետրվարի 8-ին «Դեյլոնշիր» հածանավը դավաճանաբար զավթեց Մենորկա կղզու գլխավոր նավահանգիստը՝ Մաոնը, որը անառիկ ռազմածովային բազա էր, և այն հանձնեց խռովարարներին։

1939 թ. ձմռան վերջին, թեև Կատալոնիայի կորուստը ծանր հարված եղավ հանրապետության համար, նա դեռ հնարավորություն ուներ շարունակելու պայքարը. հանրապետական կառավարության իշխանության տակ էր գտնվում 10 մլն բնակչությամբ տերիտորիա և ավելի քան կես միլիոնանոց բանակ, ռազմածովային նավատորմը, 4 խոշոր նավահանգիստ և կարևորագույն ռազմածովային բազա՝ Կարտահենան, իսկ որ ամենագլխավորն է, ժողովուրդը պատրաստ էր ամբողջ հոգով շարունակելու դիմադրությունը, որի ոգեշնչողը ԻԿԿ-ն էր։

1939 թ. փետրվարի առաջին տասնօրյակում տեղի էին ունենում ԻԿԿ պրովինցյալ կոնֆերանսներ, որոնք քննարկում էին երկրում տիրող իրադրությունը և այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ էր ձեռնարկել։ Հաշվի առնելով, որ որոշ բարձրաստիճան սպաների մեջ տարածվել էին կապիտուլյանտական տրամադրություններ, կոմկուսը պահանջեց շտապ միջոցներ ձեռնարկել, այդ թվում նաև պարտվողական տրամադրություններ ունեցող զորապետների հեռացումը և նրանց փոխարինումը Դիմադրության կողմնակիցներով։ Սակայն այդ դժվարին ժամանակաշրջանում պրեմիեր մինիստրը հանցագործ կերպով հապաղում էր, պարտվողականներին ժամանակ տալով դավադրություն կազմակերպելու համար։

Դիմադրությունը դադարեցնելու օգտին ակտիվ գործունեություն էր ծավալել սոցիալիստական կուսակցության աջ պարագլուխ, կատաղի հակակոմունիստ Խ. Բեստեյրոն։ 1938 թ. նոյեմբերին Բեստեյրոն հայտարարեց, որ եթե ժողովուրդը պատերազմը շահի, ապա «Իսպանիան կոմունիստական կդառնա». հակակոմունիզմից կուրացած՝ նա 1939 թ. գլխավորեց հանրապետության դեմ ուղղված դավադրությունը։ Դավադրության մյուս կազմակերպիչը Մադրիդի կայազորի հրամանատար Կասադոն էր, որը, ինչպես և Բեստեյրոն, սերտ կապ էր պահպանում Մադրիդի անգլիական հյուպատոսի հետ։

1939 թ. փետրվարի 27-ին անգլիական և ֆրանսիական կառավարությունները պաշտոնապես ճանաչեցին գեներալ Ֆրանկոյի կառավարությունը։ Դա ուժեղ հարված էր հանրապետության պաշտպաններին, որը հեշտացրեց կապիտուլյանտների խնդիրը։ Մարտի 3-ին խռովություն ծագեց Կարտահենայի ռազմածովային բազայում։ Նախապես ձերբակալելով նավերի վրա գտնվող բոլոր կոմունիստներին, նավատորմի հրամանատարությունը նավերը դուրս բերեց Կարտահենայից և ուղարկեց Բիզերտա, որտեղ նրանք հանձնվեցին ֆրանսիական իշխանություններին։

Մարտի 5—6-ին Կասադոն և Բեստեյրոն Մադրիդում խռովություն բարձրացրին կառավարության դեմ և ստեղծեցին այսպես կոչված պաշտպանության ազգային խունտա, որը ժողովրդի մեջ հայտնի էր որպես դավաճանության ազգային խունտա։ Նրանց դիմադրություն ցույց տվեցին մի քանի զորամասեր, որոնց գլուխ էին կանգնած կոմունիստները։ Մեկ շաբաթ Մադրիդում տեղի էին ունենում արյունալի մարտեր։ Հանդես գալով ռադիոյով, դավադիրները հակակոմունիստական զրպարտություններ էին տարածում և դեմագոգիկ խոստումներ տալիս պայքարը շարունակելու մասին, որպեսզի «պատվավոր հաշտություն» ձեռք բերեն։ Կասադո-Բեստեյրայի խունտան կոմունիստներին օրենքից դուրս հայտարարեց, նրանց ձերբակալում ու գնդակահարում էր, դրանով իսկ ոչնչացնելով ֆաշիզմին դիմադրող գլխավոր ուժը։

Մարտի 19-ին խունտան գեներալ Ֆրանկոյին առաջարկեց հաշտության բանակցություններ սկսել, բայց Ֆրանկոն պահանջեց անվերապահ կապիտուլյացիա։ Մարտի 28-ին ֆաշիստական (այդ թվում նաև իտալական) զորքերը մտան Մադրիդ։ Ապրիլի 1-ին ամբողջ Իսպանիան գտնվում էր ֆաշիստների ձեռքում։ Ներքին ու միջազգային ռեակցիայի դեմ 32 ամիս մղած հերոսական պայքարից հետո հանրապետությունն ընկավ։ Իսպանիայում հաստատվեց ֆինանսա-կալվածատիրական օլիգարխիայի առավել ռեակցիոն շրջանների տեռորիստական արյունոտ դիկտատուրա, որը հենվում էր բանակի, եկեղեցու և ֆալանգայի վրա։

Իսպանական ժողովրդի պարտության գլխավոր պատճառն օտարերկրյա ինտերվենցիան էր։ Առանց Գերմանիայի և Իտալիայի ռազմական ինտերվենն-

ցիայի իսպանական ֆաշիզմը չէր կարող հաղթել։ Երկրորդ կարևոր պատճառը Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կառավարությունների «չմիջամտության քաղաքականությունն» էր, որը իսպանական ժողովրդին զրկեց զինվելու հնարավորությունից։ Պարտությանը նպաստեցին նաև ներքին գործոնները, որոնք բխում էին բանվոր դասակարգի և ժողովրդական ճակատի շարքերի անբավարար միասնությունից։

Ֆաշիզմի կողմից իսպանական ժողովրդի հերոսական դիմադրության ճընշումը միջազգային ծանր հետևանքներ ունեցավ, այն հանդիսացավ երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման նախերգանքը։

ԳԼՈՒԽ 11

ԱՎՍՏՐԻԱՆ
1918—1939 ԹԹ.

Ավստրո-Հունգարիայի փլուզումը և Ավստրիական հանրապետության կազմավորումը

Բազմազգ Ավստրո-Հունգարիայում, որտեղ ճնշված ազգությունները բնակչության մեծամասնություն էին կազմում, սոցիալական ու ազգային հակասությունների ամբողջությունը դեռ մինչև առաջին համաշխարհային պատերազմն սկսվելը քաղաքական սուր ճգնաժամ առաջացրեց։ Պատերազմի ժամանակ հակասությունների կոմպլեքսը ծայրահեղորեն խորացավ, և դրա հետևանքով տնտեսապես հետամնաց Հաբսբուրգների միապետությունը դարձավ իմպերիալիստական մեծ տերությունների սիստեմի առավել թույլ օղակը։

Պատերազմի ձգձգվելու հետ ուժեղանում էին հակապատերազմական տրամադրությունները։ Ամենօրյա երևույթ էին դառնում չեխական և հարավսլավոնական երկրներից հավաքագրված զինվորների դասալքությունը և գերի հանձնվելը ռուսական ռազմաճակատում։ Ուժեղանում էր տնտեսական քայքայումը։ Ավստրո-Հունգարիան կարող էր պատերազմը շարունակել միայն Գերմանիայի օգնությամբ և պատերազմի վերջին փաստորեն վերածվեց նրա կամակատարի։

Ավստրո-Հունգարիայի բոլոր ազգությունների ժողովրդական զանգվածների մեջ հզոր արձագանք առաջացրեց Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը։ Հոկտեմբերի լոզունգները, և առաջին հերթին հաշտության լենինյան դեկրետը Ավստրո-Հունգարիայում արտակարգ ուժեղ տպավորություն գործեցին։ Լայն ճանաչում գտավ անհապաղ դեմոկրատական հաշտություն կնքելու, ինչպես նաև ազգերի ինքնորոշման վերաբերյալ սովետական կառավարության կոչը։ Ավստրո-Հունգարիայի բանվոր դասակարգի վրա հեղափոխականացնող ազդեցություն էր գործում Հոկտեմբերյան հեղափոխության սոցիալիստական բնույթը։

1918 թ. հունվարի կեսերին Ավստրո-Հունգարիայի արդյունաբերական կենտրոններում տարերայնորեն ծագեց ընդհանուր քաղաքական գործադուլ, որն առաջադրեց առանց աննեքսիաների և ռազմատուգանքների անհապաղ հաշտություն կնքելու պահանջ։ Հոկտեմբերի անմիջական քաղաքական ազդեցության մասին էր վկայում այն հանգամանքը, որ գործադուլավոր բանվորներն ամենուրեք ստեղծում էին բանվորական դեպուտատների սովետներ։ Ասես հունվարյան գործադուլի շարունակությունը եղավ 1918 թ. փետրվարի 1-ին Կոտոր ծովախորշում Ավստրո-Հունգարիայի ռազմական նավատորմի 6 հազ. նավաստիների ապստամբությունը։ Նավաստիներն ստեղծեցին նավաստիական դեպուտատների սովետ և փորձում էին ռադիոյի միջոցով կապ հաստատել Սովետական Ռուսաստանի հետ։

Թեև հունվարյան գործադուլը և նավաստիների ապստամբությունը ճընշվեցին, կառավարող դասակարգերն ի վիճակի չէին կանխելու քաղաքական

ճգնաժամի զարգացումը։ 1918 թ. օգոստոսին Արևմտյան ռազմաճակատում գերմանական բանակի կրած պարտությունը և Սալոնիկի ռազմաճակատի փլուզումը վերջին հարվածը հասցրին միապետությանը։ Դեռ մինչև 1918 թ. նոյեմբերի 3-ի զինադադարի պաշտոնական ստորագրումը երկրում տեղի ունեցավ բուրժուադեմոկրատական հեղափոխություն։ Ավստրո-Հունգարիան տրոհվեց ազգային պետությունների՝ Ավստրիայի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի. հարավսլավոնական հողերը մտան «Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորության» կազմի մեջ, իսկ Ավստրո-Հունգարիայի առանձին մասեր անցան Ռումինիային և Լեհաստանին։ Հաբսբուրգների բազմազգ պետությունը դադարեց գոյություն ունենալուց։

Կար նաև այլ երկընտրանք։ Ավստրո-Հունգարիայի բոլոր ազգությունների աշխատավորներին ուղղված դիմումում, որը 1918 թ. նոյեմբերի 2-ին ստորագրել էր Վ. Ի. Լենինը, ասվում էր. «Մենք խորապես համոզված ենք՝ երբ գերմանական, չեխական, կրոատական, հունգարական սլովենական բանվորներն ու գյուղացիներն իշխանությունը իրենց ձեռքը կվերցնեն և կավարտեն իրենց ազգային ազատագրության գործը, նրանք կկնքեն ազատ ժողովուրդների եղբայրական դաշինք և միացյալ ուժերով կապիտալիստներին կհաղթեն... Ոչ թե իր ազգային բուրժուազիայի հետ դաշինքում, այլ Ավստրիայում բնակվող բոլոր ազգությունների պրոլետարների դաշինքում է հաղթանակի երաշխիքը»[1]։ Սակայն սոցիալիստական հիմքի վրա ազգերի միավորում տեղի չունեցավ։ Բացառությամբ Հունգարիայի, ուր հետագայում՝ 1919 թ. մարտին հռչակվեց սովետական հանրապետություն, միապետության մնացած երկրամասերի բանվոր դասակարգը նույնիսկ ժամանակավորապես չկարողացավ իշխանությունն իր ձեռքը վերցնել։ Դրա հետևանքով չառաջացավ ժողովուրդների միություն և Ավստրո-Հունգարիան տրոհվեց բաղկացուցիչ մասերի։

Միապետության փլուզումից ծայրահեղ թուլացած՝ Ավստրիայի բուրժուազիան չկարողացավ դիմադրել ավստրիական պրոլետարիատի մասսայական ելույթներին և ստիպված էր համաձայնվել հանրապետության հռչակմանը։ Այսպիսով, ավստրիական հեղափոխությունը հաղթանակեց առանց զինված պայքարի։ Հանրապետական նոր կառավարության ձևավորման գործում ակտիվ դեր խաղացին սոցիալ-դեմոկրատները։ 1918 թ. հոկտեմբերի 30-ին Վիեննայում սոցիալ-դեմոկրատիայի և բուրժուական կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծվեց կառավարություն։ Կառավարության ղեկավար դարձավ ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի աջ թևի պարագլուխներից մեկը՝ Կարլ Ռեննները։ Որպես արտաքին գործերի մինիստր, կառավարության մեջ աչքի ընկնող դեր էր խաղում ավստրոմարքսիզմի գլխավոր տեսաբաններից մեկը՝ Օտտո Բաուերը։ Ավստրիայում ամենուրեք առաջանում էին բանվորների դեպուտատների սովետներ, սակայն դրանց ղեկավարությունը պատկանում էր սոցիալ-դեմոկրատներին։ 1918 թ. նոյեմբերի 3-ին կազմավորված Ավստրիայի կոմունիստական կուսակցությունը դեռ չափազանց թույլ էր և չէր կարող գլխավորել բանվորական զանգվածներին։ Չնայած սոցիալիստական հեղափոխության համար օբյեկտիվ նախադրյալների առկայությանը, Ավստրիան մնաց բուրժուա-դեմոկրատական հանրապետություն։

[1] «Իզվեստիա», 1918 թ., նոյեմբերի 3։

Հանրապետության առաջին տարին

Ավստրո-Հունգարիայի անկումից հետո տնտեսական կապերի խզման հետևանքով ավստրիական հանրապետությունում չափազանց սուր էին զգացվում քաղաքի և գյուղի միջև եղած անհամաչափությունները։ Ավստրիայի 6,4 մլն բնակիչներից 1,8 մլնը, այսինքն՝ բնակչության 30 տոկոսը բնակվում էր Վիեննայում. միապետության ժամանակ Վիեննան 52 միլիոնանոց մեծ տերության մայրաքաղաք էր։

Այդ տարիներին լայն տարածում գտան Ավստրիայի անկենսունակության տեսությունը և հանրապետությունը տնտեսական մեծ ամբողջության մեջ մտցնելու լոզունգը։ Ըստ իրենց տնտեսական ու քաղաքական կապերի, բուրժուազիայի առանձին խմբեր պահանջներ էին ներկայացնում նախկին Հաբսբուրգների կայսրության երկրներից Դանուբյան ֆեդերացիա ստեղծելու կամ անշլյուսի, այսինքն Ավստրիան Գերմանիայի հետ միավորելու մասին։ Անշլյուսի լոզունգը զուգակցվում էր գերմանացիներից առանձնացած ավստրիական ինքնուրույն ազգի ծագման ու զարգացման հնարավորության ժխտմամբ։

Ավստրիական ժողովրդին հետագայում անթիվ դժբախտություններ պատճառած անշլյուսի լոզունգի լայն տարածումը հնարավոր եղավ ավստրիական ազգի առաջացման առանձնահատուկ բնույթի կապակցությամբ։ Ընդհուպ մինչև ֆրանկո-պրուսական պատերազմի հետևանքով Գերմանական կայսրության ստեղծումը Հաբսբուրգների միապետության կառավարող դասակարգերը պայքար էին մղում գերմանական պետություններում ղեկավար դեր գրավելու համար։ 1848 թ. հեղափոխության ժամանակ Գերմանիայի և Ավստրիայի դեմոկրատական խավերը ձգտում էին Գերմանիայի միավորմանը Ավստրիայի մասնակցությամբ։ Շատ ժամանակ անց միայն ավստրիական գերմանացիներն սկսեցին ճյուղավորվել առանձին ազգի։ Այդ պրոցեսը համեմատաբար դանդաղ էր տեղի ունենում։ Այն ավարտվեց միայն առաջին համաշխարհային պատերազմից հետո։

Ավստրիական բուրժուազիայի հիմնական կուսակցությունը կղերական քրիստոնեա-սոցիալական կուսակցությունն էր, որը հատկապես ուժեղ ազդեցություն ուներ գյուղացիների, արհեստավորների, քաղաքային մանր բուրժուազիայի շրջանում։ Քրիստոնեա-սոցիալական կուսակցությունը Ավստրիան դիտում էր որպես «գերմանական երկրորդ պետություն»։ Իր նշանակությամբ երկրորդ բուրժուական կուսակցությունը մեծագերմանական ժողովրդական կուսակցությունն էր։ Նա կատարում էր գերմանական իմպերիալիզմի անմիջական գործակալության դերը, պահանջում անհապաղ անշլյուս և նացիզմի նախորդը եղավ Ավստրիայում։

Ռեննների կառավարությունը փորձում էր անշլյուսն իրականացնել հանրապետության գոյության առաջին իսկ օրերին։ Ազգային ժողովի ընդունած օրենքում ասվում էր. «Գերմանական Ավստրիան հանդիսանում է Գերմանական հանրապետության բաղկացուցիչ մասը»։ Սակայն Ֆրանսիայի պնդմամբ, Գերմանիայի հետ կնքված Վերսալյան հաշտության պայմանագրում մտցվեց մի հոդված, որը անշլյուսն արգելում էր։ Համանման հոդված կար նաև 1919 թ. սեպտեմբերի 10-ին Փարիզի Սեն-Ժերմեն արվարձանում Ավստրիայի հետ ստորագրված հաշտության պայմանագրում։ Իսկ ամբողջապես սեն-ժերմենյան հաշտության պայմանագիրն իր բովանդակությամբ հիշեցնում էր իմպերիալիստական Վերսալյան պայմանագիրը։ Այն նախատեսում էր Ավստրիայի համար ռեպարացիոն հանձնաժողովի ստեղծում, որն ուներ ռեպարացիոն մուծումների չափն ու ժամկետները սահմանելու լիազորություններ։

1919/20 թ. ձմռան ընթացքում Ավստրիայի տնտեսական դրությունը մընում էր աղետալի։ Հատկապես տառապում էին մութ և ցուրտ Վիեննայի բանվորները. էլեկտրակայանների և ջեռուցման համար չկար ածուխ, պակասում էր պարենամթերքը։ Բանվորական զանգվածների դժգոհության աճը սոցիալ-դեմոկրատներին դրդեց խղելու կառավարական կոալիցիան։ 1920 թ. հունիսի 10-ին Ռեննների կաբինետը հայտարարեց իր հրաժարականի մասին։ Առաջին հանրապետության գոյության ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում ավստրիական սոցիալ-դեմոկրատիան այլևս ոչ մի անգամ չմտավ կառավարության մեջ և մնում էր օպոզիցիայում։

1920—1922 թթ. քաղաքական պայքարը և Ազգերի լիգայի Ժնևյան արձանագրությունները

Ավստրիական հանրապետության սահմանադրությունն ընդունվեց 1920 թ. հոկտեմբերի 1-ին։ Զայնի իրավունք ունեին բոլոր քաղաքացիները սկսած 20 տարեկան հասակից։ Պառլամենտի ստորին պալատի հետ ստեղծվեց նաև վերին պալատ՝ ֆեդերալ խորհուրդը, որի մեջ մտնում էին երկրամասերի ներկայացուցիչները։ Երկրամասեր էին հանդիսանում Բուրգենլանդը, Կարինտիան, Վերին Ավստրիան, Ներքին Ավստրիան, Զալցբուրգը, Շտիրիան, Տիրոլը, Ֆորարլբերգը։ Երկրամասի իրավունք ստացավ նաև Վիեննան։ Երկրամասերն ունեին իրենց լանդտագները և մարզային կառավարությունները։ Այսպիսով, պետությունը կառուցվեց ֆեդերալ հիմունքներով։

Սահմանադրությունն ամրապնդեց բանվոր դասակարգի նվաճումները, որոնք ձեռք էին բերվել 1918 թ. հեղափոխության ընթացքում։ Վերացվում էին դասային բոլոր արտոնություններն ու տիտղոսները։ Հռչակվեց խոսքի, ժողովների, մամուլի, կազմակերպությունների ազատություն։ Կանայք ստացան տղամարդկանց հետ համահավասար քաղաքական իրավունքներ։ Կապիտալիստական Եվրոպայում Ավստրիան դարձավ ամենառաջավոր երկրներից մեկը նաև սոցիալական օրենսդրության ասպարեզում։ Սահմանվեց 8-ժամյա աշխատանքային օր, սոցիալական ապահովությունը ներդրավեց գրեթե բոլոր բանվորներին ու ծառայողներին, ձեռնարկություններում ստեղծվեցին գործարանային կոմիտեներ, որոնք պաշտպանում էին բանվորների իրավունքները։ Սակայն իշխանությունը մնաց բուրժուազիայի ձեռքում, որը միայն հարմար պահի էր սպասում հակահարձակման անցնելու համար։ Այդ ժամանակաշրջանում ավստրիական կոմկուսը թույլ էր, որը և՛ օբյեկտիվ գործոնների հետևանք էր, և՛ բխում էր սուբյեկտիվ բնույթի պատճառներից։ Մասնավորապես կոալիցիոն կառավարությունից դուրս գալը սոցիալ-դեմոկրատիային տալիս էր օպոզիցիոնության լուսապսակ և իր կողմը գրավում բանվորական զանգվածներին։ Մյուս կողմից, բացասական դեր խաղացին ավստրիական կոմունիստների սխալները, որոնց շրջանում տարածված էին ուլտրաձախ տրամադրությունները։ Այսպես, 1920 թ. օգոստոսին կոմկուսը հայտարարեց պառլամենտական ընտրությունների բոյկոտի մասին, բացատրելով, թե քանի որ Ավստրիայում գոյություն ունեն բանվորների դեպուտատների սովետներ, բուրժուական պառլամենտը, որպես պրոպագանդայի տրիբուն կորցրել է իր նշանակությունը։ Ավստրիական կոմունիստներին ուղղված նամակում 1920 թ. օգոստոսի 15-ին Վ. Ի. Լենինը քննադատեց այդ հայացքները[2]։ Լենինի նամակը ելակետ դարձավ պառլամենտարիզմի հանդեպ վերաբերմունքի և կոմկուսի ստրատեգիայի ու տակտիկայի մասին սկզբունքային

[2] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 324—327։

դիսկուսիայի համար։ Սակայն դեռ երկար ժամանակ ավստրիական կոմունիստները չէին կարողանում հաղթահարել նախկին սխալները։

1920 թ. աշնանից քրիստոնեա-սոցիալական կուսակցության իշխանության գլուխ անցնելուց ի վեր սկսվեց բուրժուազիայի աստիճանական հարձակումը բանվոր դասակարգի նվաճումների վրա։ Այն հատկապես ուժեղացավ, երբ 1922 թ. մայիսին կանցլեր Զեյպելի գլխավորությամբ ստեղծվեց քրիստոնեա-սոցիալական և մեծագերմանական կուսակցությունների ներկայացուցիչների բուրժուական բլոկի կառավարությունը։ Կաթոլիկական պրելատ Իգնաց Զեյպելը ձգտում էր իտալական ֆաշիստների օրինակով ստեղծել կորպորատիվ պետություն և եղավ Ավստրիայի, որպես «գերմանական երկրորդ պետության», պատմական միսիայի վերաբերյալ տեսության հեղինակներից մեկը։

Զեյպելի կառավարության ռեակցիոն ծրագիրը պաշտպանում էին արևմտյան տերությունները, նրանք պատրաստ էին փոխառություններ տրամադրել ավստրիական բուրժուազիայի դիրքերն ամրապնդելու համար։ Այդ պատրաստականությունը հաստատում էին Ազգերի լիգայի 1922 թ. հոկտեմբերի 4-ին ստորագրված Ժնևյան արձանագրությունները, որոնց համաձայն Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Չեխոսլովակիայի կառավարությունները ստանձնում էին 650 մլն ոսկե կրոնի՝ այն ժամանակվա համար խոշոր գումարով ավստրիական կառավարությանը միջազգային փոխառություն տրամադրելու երաշխիք։ Ոչ պակաս կարևոր էր Ժնևյան արձանագրություններով նախատեսված Ազգերի լիգայի գլխավոր կոմիսարի նշանակումը Ավստրիայում։ Առանց նրա թույլտվության ավստրիական կառավարությունը փոխառության գումարից ոչ մի կրոն չէր կարող ծախսել։ Ամբողջ ժողովրդական տնտեսությունը փաստորեն դրված էր գլխավոր կոմիսարի և նրա թիկունքում կանգնած անգլիական ու ամերիկյան բանկիրների վերահսկողության տակ, որոնք մուծեցին փոխառության ամբողջ գումարի մոտ 60 տոկոսը։

Օտարերկրյա բանկիրների ակտիվ միջամտությունը նպաստեց կապիտալիզմի կայունացմանն Ավստրիայում և ուժեղացրեց ռեակցիայի ռեժիմը։

Սոցիալ-դեմոկրատական պարագլուխների տակտիկան։ Բանվորների ելույթը 1927 թ. հուլիսին

Հետպատերազմյան առաջին տարիներին սոցիալ-դեմոկրատիան բուրժուազիայից զգալի զիջումներ ձեռք բերեց սոցիալական քաղաքականության, մասնավորապես բնակարանային օրենսդրության ասպարեզում։ Ավստրիական սոցիալ-դեմոկրատիան բնակարանային հարցը դարձրեց Վիեննայում իր մունիցիպալ քաղաքականության կենտրոնական կետը. մինչև 1931 թ. Վիեննայի քաղաքապետարանը կառուցեց մոտ 45 հազ. բնակարան։ Ընդհուպ մինչև 1934 թ. սոցիալ-դեմոկրատիան կայուն մեծամասնություն ուներ Վիեննայի քաղաքապետարանում։

Ավստրիական սոցիալ-դեմոկրատիան մյուս երկրների սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից տարբերվում էր որոշ առանձնահատկություններով։ Կարլ Ռեննների, Օտտո Բաուերի, Մաքս Ադլերի տեսական աշխատանքների կապակցությամբ դեռ XX դարի սկզբին ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի մեջ ձևավորված գաղափարական հոսանքը պայմանականորեն ստացավ «ավստրոմարքսիզմ» անունը։ Ամբողջությամբ վերցրած ավստրոմարքսիզմն իրենից ներկայացնում էր ինչպես ցենտրիստական (Օտտո Բաուեր), այնպես էլ աջ ռեֆորմիստական (Կարլ Ռեններ) տարբեր հայացքների մի կոնգլոմերատ։ Դրանց համար ընդհանուր էին կոմպրոմիսների հակումը, իրա-

դրությանը հարմարվելու և ձախ ֆրազներին դիմելու կարողությունը, ֆրազներ, որոնց հետևում թաքնված էր գործողություններին դիմել չցանկանալը։

Ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխները փորձում էին միջանկյալ դիրք գրավել II և III ինտերնացիոնալների միջև և ղեկավար դեր կատարեցին այսպես կոչված Երկուսուկես ինտերնացիոնալի ստեղծման գործում։ Ռեֆորմիստական ինտերնացիոնալի հետ վերջինիս ձուլվելուց հետո այնտեղ վերադարձավ նաև ավստրիական սոցիալ-դեմոկրատիան։ Հետպատերազմյան հեղափոխական վերելքի տարիներին միջազգային ռեֆորմիզմից ավստրոմարքսիստների կազմակերպված առանձնացումը զգալի չափով նպաստեց սոցիալ-դեմոկրատիայի ազդեցության պահպանմանը բանվորների մեջ։

Ավստրիական սոցիալ-դեմոկրատիան տեսականորեն ճանաչում էր պայքարի արտապառլամենտական ձևերը։ Այսպես, երբ 1923 թ. սկզբին Ավստրիայում ակտիվացան ֆաշիստական կազմակերպությունները, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ստեղծեց բանվորական ինքնապաշտպանության ջոկատներ («Հանրապետական շուցբունդ»)։ Շուցբունդի թիվը հասնում էր 100 հազարի, սակայն սոցիալ-դեմոկրատական ղեկավարությունը վճռական պահերին շուցբունդին ետ էր պահում ելույթներից։

Ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի ծրագրում, որն ընդունվեց Օտտո Բաուերի նախաձեռնությամբ 1926 թ. նոյեմբերին Լինցում կայացած համագումարում, տեսականորեն ընդունվում էր պրոլետարիատի դիկտատուրայի հռչակման հնարավորությունը, բայց այդ ընդունումը ուղեկցվում էր այնպիսի վերապահություններով, որոնք այն գործնականորեն դարձնում էին ոչ ռեալ, այսինքն՝ ձախ ֆրազներն ուղեկցվում էին օպորտունիստական պրակտիկայով։ Սոցիալ-դեմոկրատական ղեկավարությունն ակտիվ պայքար չէր մղում ավստրիական բուրժուազիայի հարձակման դեմ, որի ազդեցիկ խմբերն ավելի ու ավելի էին հակվում դեպի ֆաշիզմը։

1927 թ. սկզբին ավելի հաճախակի դարձան ֆաշիստական կազմակերպության՝ հեյմվերի անդամների ելույթները։ Բանվորների ընդհանուր զայրույթ առաջացրեց Շատենդորֆում (Բուրգենլանդ) տեղի ունեցած ֆաշիստական պրովոկացիան։ 1927 թ. հունվարի 30-ին ֆաշիստների մի խումբ կրակ բացեց բանվորական ցույցի վրա։ 1927 թ. մարտին կոմկուսը բաց նամակով դիմեց սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը, առաջարկելով համատեղ պայքարի դիմել հանուն բանվոր դասակարգի տնտեսական ու քաղաքական պահանջների կոնկրետ ծրագրի կատարման, ընդդեմ ֆաշիզմի աճող սպառնալիքի։ Սոցիալ-դեմոկրատական ղեկավարությունը մերժեց այդ առաջարկությունը և հրաժարվեց որևէ բանակցություններ վարել կոմկուսի հետ։

1927 թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում քրիստոնեական-սոցիալական և մեծագերմանական կուսակցությունները «մարքսիզմի դեմ պայքարի» լոզունգով հանդես եկան միասնական ընտրական ցուցակով և ստացան 1,7 մլն ձայն։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը հավաքեց 1,5 մլն ձայն։ Վիեննայի մունիցիպալ խորհրդում միաժամանակ տեղի ունեցած քվեարկությունն առաջվա պես մեծամասնություն տվեց սոցիալ-դեմոկրատներին՝ 120-ից 78 մանդատ։ Մոտ 700 հազ. ընտրողներ Վիեննայում քվեարկեցին սոցիալ-դեմոկրատների օգտին և միայն 421 հազարը՝ բուրժուական կուսակցությունների թեկնածուների օգտին։

Մեկնաբանելով ընտրությունների արդյունքները, Օտտո Բաուերը կոչ էր անում շարունակել պայքարն ընտրական բյուլետենի օգնությամբ։ Նա հաշվեց, որ սկսած 1920 թ. սոցիալ-դեմոկրատիան ձեռք է բերել 7 տոկոս նոր

ձայներ, և հարց էր տալիս. «Դեռ ինչքա՞ն չի բավականացնում մինչև հաղթանակը, այսինքն ևս 7 տոկոս։ Իշխանության հասնելու ճանապարհը կպահանջի մոտավորապես ևս նույնքան ժամանակ, որքան մենք անցել ենք 1920 թվականից»։ Այսպիսով, Օտտո Բաուերը ենթադրում էր, որ 1934 թ. հաղթանակ կբերի սոցիալ-դեմոկրատիային։ Մարգարեությունն իրականացավ հակադիր արդյունքով։ 1934 թ. Ավստրիայում հաղթանակ բերեց ավստրոֆաշիզմին։

Ընտրություններից հետո տեղի ունեցած մոտակա իրադարձությունները ցույց տվեցին կոմկուսի նախազգուշացումների իրավացիությունը ֆաշիզմի սպառնալիքի աճի մասին։ Զեյպելի նոր կառավարության կազմի մեջ մտան ֆաշիստական հեյմվերի ներկայացուցիչները։ Ռեակցիան անցավ ուղղակի պրովոկացիաների։ 1927 թ. հունիսին Վիեննայում տեղի էր ունենում Շատենդորֆի ֆաշիստական մարդասպանների դատավարությունը. այն կայացրեց արդարացման դատավճիռ։

Հուլիսի 15-ի առավոտյան Վիեննայի գործարաններում բռնկվեցին բողոքի տարերային գործադուլներ։ Բանվորական ցույցերն ուղղվեցին դեպի քաղաքի կենտրոնը։ Պառլամենտի շրջանում հեծյալ ոստիկանությունը գրոհեց անզեն ցուցարարների վրա։ Ցույցերն ու ոստիկանության հետ տեղի ունեցած ընդհարումները շարունակվեցին երկու օր։ Վիրավորների թիվը հազար մարդուց գերազանցեց, 85 բանվոր սպանվեց։ Ֆաշիստական մարդասպանների արդարացման և ոստիկանության գործողությունների հանդեպ բանվորների զայրույթն այնքան մեծ էր, որ հուլիսի 17-ի գիշերը սոցիալ-դեմոկրատական պարագլուխները հայտարարեցին բողոքի 24-ժամյա գործադուլ։ Սոցիալ-դեմոկրատական դեպուտատները պահանջում էին պառլամենտի անհապաղ գումարում։ Սակայն Զեյպելը վերջնագրային ձևով պահանջեց դադարեցնել տրանսպորտի և կապի միջոցների աշխատողների գործադուլը։ Սոցիալ-դեմոկրատական ղեկավարությունը կատարեց այդ պահանջները և դրանով ապակողմնորոշեց ու բարոյալքեց բանվորական զանգվածներին, որոնք պատրաստ էին շարունակելու պայքարն ընդդեմ ռեակցիայի։ Հուլիսյան ելույթներն ավարտվեցին Զեյպելի կառավարության հաղթանակով։ Դրանք ոչ միայն ելակետ չդարձան ռեակցիայի ու ֆաշիզմի դեմ լայն պայքար մղելու համար, այլև ավստրիական ռեակցիայի համար էտապ հանդիսացան Ավստրիայի ֆաշիստականացման համար մղած պայքարում։

1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամը և 1934 թ. փետրվարյան իրադարձությունները

Ավստրիայի էկոնոմիկայի կառուցվածքային թուլության պայմաններում, որոնք ամենևին չհաղթահարվեցին հանրապետության առաջին տասնամյակի ընթացքում, 1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամն ավելի կործանարար եղավ, քան Արևմտյան Եվրոպայի շատ այլ երկրներում։ Արդյունաբերության մի շարք ճյուղերում արդեն 1931 թ. վերջին զրաղված էր նախաճգնաժամային տարիների բանվորների ընդհանուր թվաքանակի միայն կեսը։ Մեքենաշինական և տեքստիլ արդյունաբերության շատ ձեռնարկություններում սարքավորումներն ապամոնտաժվում էին և վաճառվում որպես ջարդոն։ Պրովինցիայի արդյունաբերական քաղաքներում բնակչության մեծ մասը մնում էր առանց աշխատանքի և գոյությունը պահպանում էր գործազրկության համար տրվող աղքատիկ նպաստներով։

Ինչպես և ժնևյան արձանագրությունների ժամանակ, ավստրիական բուրժուազիան տնտեսական գժվարություններից ելք էր որոնում երկիրն իմպե-

բիալիստական տերություններին ենթարկելու միջոցով։ 1932 թ. հուլիսին ստորագրվեց Ազգերի լիգայի արձանագրությունը միջազգային փոխառության մասին։ Ինչպես և 1922 թ., Վիեննայում վերստին հայտնվեց Ազգերի լիգայի ֆինանսական գործակալը։

Ճգնաժամի իրադրության պայմաններում ավստրիական ռեակցիան ավելի ու ավելի լայնորեն էր դիմում ֆաշիստական կազմակերպությունների ծառայությանը։ Գերմանիայի և Իտալիայի համեմատությամբ ֆաշիզմի յուրահատկությունը կայանում էր նրա մեջ երկու մրցակցող հոսանքների՝ հեյմվերի և նացիստների առկայությամբ։ Ֆաշիզմի այս երկու տարատեսակություններն աչքի էին ընկնում ոչ միայն իրենց արտաքին քաղաքական կողմնորոշմամբ՝ հեյմվերը դեպի ֆաշիստական Իտալիան, իսկ նացիզմը՝ դեպի հիտլերականները, այլև մի շարք այլ գծերով։ Այսպես, ի տարբերություն նացիզմի, հեյմվերը սերտորեն կապված էր կաթոլիկ եկեղեցու հետ և փաստորեն կղերական քրիստոնեա-սոցիալական կուսակցության առավել ռեակցիոն թևի զինված ուժն էր։ Ինչպես և այս վերջինս, հեյմվերը հանդես էր գալիս ֆաշիստական Իտալիայի օրինակով կորպորատիվ պետության ստեղծման լոզունգով։ Ավստրիական ֆաշիզմի երկու տարատեսակությունները հանդես էին գալիս ամենևին էլ ոչ ազգային լոզունգներով, այլ որպես Գերմանիայի և Իտալիայի ուղղակի գործակալություն։

Ֆաշիզմի վտանգն Ավստրիայում ցույց տվեցին 1932 թ. ապրիլի 24-ի ընտրությունների արդյունքները, երբ Վիեննայի մունիցիպալ խորհրդում և Ներքին Ավստրիայի, Զալցբուրգի, Կարինթիայի ու Շտիրիայի լանդտագներում երևացին բազմաթիվ ֆաշիստական դեպուտատներ։

Տնտեսական ճգնաժամը հասցրեց ֆաշիզմի աճին կապիտալիստական Եվրոպայում։ Ավստրիայում այդ զարգացումն ավելի էր ուժեղանում գերմանական իմպերիալիզմի և նրա քաղաքական կազմակերպությունների ազդեցությամբ։

1932 թ. մայիսին քրիստոնեա-սոցիալական կուսակցության, հեյմվերի և լանդբունդի կուլակային կազմակերպության ներկայացուցիչներից կազմվեց Դոլֆուսի կառավարությունը։

Երկրի ֆաշիստականացման շրջադարձը հատկապես ուժեղացավ հիտլերականների կողմից Գերմանիայում իշխանությունը զավթելուց հետո։ 1933 թ. մարտին Դոլֆուսի կառավարությունը «արտակարգ դեկրետների» դիմելու միջոցով գործնականորեն վերացրեց պառլամենտը և հաստատեց ավտորիտար ռեժիմ։ 1933 թ. մայիսին արգելվեց կոմկուսը և ծայր առան կոմունիստների զանգվածային ձերբակալությունները։ Դոլֆուսի կառավարությունը միաժամանակյա ճակատային գրոհի չէր անցնում ամբողջությամբ վերցրած բանվոր դասակարգի քաղաքական իրավունքների դեմ, այլ աշխատում էր դրանք ոչնչացնել մաս առ մաս, այն հաշվով, որպեսզի որոշ ժամանակ առաջ չբերի բանվոր դասակարգի ընդհանուր հակահարվածը։ Այդ տակտիկան հեշտանում էր սոցիալ-դեմոկրատական կուսակցության և արհմիությունների պաշտպանողական դիրքով։

1933 թ. սեպտեմբերի կեսերին սոցիալ-դեմոկրատական ղեկավարությունը որոշում ընդունեց այն մասին, թե ինչպիսի դեպքերում պետք է ավտոմատ կերպով սկսվեն ընդհանուր գործադուլը և շուցբունդի ելույթը։ Ընդհանուր ելույթի համար պետք է աղդանշան ծառայեին կառավարության կողմից Վիեննայի քաղաքապետարանի գրավումը և նրա ցրումը, սոցիալ-դեմոկրատական արհմիությունների արգելումը, սոցիալ-դեմոկրատական կուսակցության արգելումը, նրա կենտրոնական օրգան «Արբեյտեր ցայտունգի» փակումը։ Գործնականում դա նշանակում էր, որ Դոլֆուսը հնարավորություն ուներ անպատիժ կերպով իրականացնելու մնացած բոլոր միջոցառումները, որոնք թույլ կտային նախապատրաստվել վճռական հարձակման անցնելու։

1934 թ. սկզբին պարզ դարձավ, որ Դոլֆուսի կառավարությունն ամենրոպն նախապատրաստում է վճռական հարվածը։ Փետրվարի 12-ին Լինցում սոցիալ-դեմոկրատական կուսակցության շենքում խուզարկություն կատարելու ոստիկանության փորձը հանդիպեց շուցբունդականների զինված դիմադրությանը։ Լինցում սկսված մարտերն անմիջապես տարածվեցին արդյունաբերական մյուս կենտրոններում և Վիեննայում։ Սոցիալ-դեմոկրատական ղեկավարությունը վերջապես ընդհանուր գործադուլ հայտարարեց և դիմադրելու կոչ արեց։ Սկսվեցին շուցբունդականների հերոսական մարտերը։ Միակ քաղաքական լոզունգը, որ առաջադրեց սոցիալ-դեմոկրատական ղեկավարությունը, բուրժուական դեմոկրատիան ֆաշիզմից պաշտպանելու կոչն էր։ Սակայն այդ լոզունգը չուղեկցվեց քաղաքական միջոցառումների որևէ ծրագրով, բացի դիմադրելու ընհանուր կոչից։ Բացի այդ զինված ընդհարումների սկզբին բանվոր դասակարգի զգալի խավեր հոգեպես ընկճված էին ռեակցիայի առջև անընդհատ նահանջելուց, չէին հավատում հաղթանակի հնարավորությանը և, բացի այդ, չունեին զենք։ Շուցբունդի զենքի մի մասը ոստիկանությունը բռնագրավեց դեռ մինչև մարտերն սկսվելը։

Շուտով պարզվեց, որ ընդհանուր գործադուլի կոչը միահամուռ արձագանք չգտավ։ Հատկապես կործանարար էր այն, որ գործադուլին չմիացան երկաթուղայինները և կառավարությունը հնարավորություն ուներ զորքեր փոխադրելու։ Շուցբունդականները համառ դիմադրություն էին ցույց տալիս։ Սակայն պասսիվ պաշտպանության սովորած լինելով, նրանք նույնիսկ չփորձեցին հարձակման անցնել։ Հնգօրյա մարտերից հետո շուցբունդի անջատանջատ ջոկատները, որոնք զրկված էին ընդհանուր ղեկավարությունից, ջախջախվեցին։ Ավստրիայում սկսվում էր ավստրոֆաշիզմի տիրապետությունը։

Ավստրոֆաշիզմի դիկտատուրան։ 1938 թ. անշլյուսը

1934 թ. մայիսի 1-ին ուժի մեջ մտավ ֆաշիստական սահմանադրությունը, որը պետական ու հասարակական կարգի հիմք հռչակեց իտալական ֆաշիզմից ընդօրինակված դասային-կորպորատիվ սկզբունքները։ Ոչնչացվեցին բանվոր դասակարգի բոլոր լեգալ կազմակերպությունները։

Այդ նույն ժամանակաշրջանում Ավստրիայում սրվեցին հակասությունները ֆաշիզմի երկու հիմնական հոսանքների միջև։ 1934 թ. հուլիսին նացիստների մի խումբ, գործելով Բեռլինից ստացված կարգադրությունների համաձայն, փորձեց զավթել իշխանությունը։ Ընդ որում սպանվեց կանցլեր Դոլֆուսը։ Սակայն դավադիրները երկրում պաշտպանություն չգտան, իսկ հիտլերյան Գերմանիան չհամարձակվեց Ավստրիա ներխուժել, վախենալով Իտալիայի հակազդեցությունից։ Դոլֆուսի սպանությունից հետո ստեղծված Շուշնիգի կառավարությունը ճնշեց ավստրիական նացիստների ելույթը։

Այն բանից հետո երբ իտալա-եթիոպական պատերազմի հետևանքով տեղի ունեցավ իտալա-գերմանական մերձեցում, ֆաշիստական Իտալիան դադարեց խոչընդոտել անշլյուսի նախապատրաստմանը։ Նացիստներն սկսեցին ուժգնորեն արմատավորվել հեյմվերի ղեկավարության մեջ, իսկ «գերմանական երկրորդ պետության» ժողովրդականություն վայելող տեսությունը հեշտացրեց Ավստրիայի ենթարկումը հիտլերյան Գերմանիայի արտաքինքաղաքական նպատակներին։ Անշլյուսի նախաշեմը եղավ 1936 թ. հուլիսի 11-ի

ավստրո-գերմանական համաձայնագիրը, որն ավստրիական հանրապետությունը վերածում էր երրորդ ռայխի կցորդի։ Շուշնիգի կառավարության մեջ մտցվեցին ավստրիական նացիստներ, շուտով նացիստները հայտնվեցին ավստրո-ֆաշիստական դիկտատուրայի ապարատի բոլոր օղակներում։

Չնայած փետրվարյան պարտությանը, ավստրիական պրոլետարիատն ակտիվ դիմադրություն էր ցույց տալիս նացիզմի արմատավորմանը։ Սոցիալ-դեմոկրատական շատ բանվորներ հասկացան, որ միայն միասնական հակաֆաշիստական ճակատը կարող է խանգարել հիտլերականների գալուն։ Այդ տարիներին աճեց կոմկուսի ազդեցությունը։ Ընդլայնվում ու ամրապնդվում էին նրա կապերը Վիեննայի և պրովինցիայի խոշոր գործարանների բանվորների հետ։ Հազարավոր օրինակներով տարածվում էր անլեգալ կոմունիստական մամուլը։ Նրա տպաքանակն ավելի մեծ էր, քան լեգալ ժամանակաշրջանում։ Կոմկուսը եռանդուն կերպով ձգտում էր անլեգալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ միասնական ճակատ ստեղծել։ Նացիզմի դեմ մղվող պայքարում վիթխարի նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ կոմկուսը Ավստրիայում միակ կուսակցությունն էր, որը պաշտպանում էր ավստրիական ինքնուրույն ազգի գոյությունը, այն դեպքում, երբ ավստրիական բուրժուազիայի բոլոր քաղաքական կուսակցությունները և սոցիալ-դեմոկրատիան շարունակում էին ավստրիացիներին համարել գերմանական ազգի մի մասը։

Ժողովրդական լայն զանգվածների զայրույթն առաջացրեց 1938 թ. փետրվարին Հիտլերի հետ Շուշնիգի Բերխտեսգադենյան խայտառակ համաձայնությունը, ըստ որի Շուշնիգը համաձայնվեց նացիստներին ղեկավար դեր տալու ավստրիական կառավարության մեջ։ Մարտի սկզբին Վիեննայի և պրովինցիայի մոտ մեկ միլիոն աշխատավորներ իրենց ստորագրությունները դրեցին մի հուշագրի տակ, որը հասցեագրված էր ավստրիական կառավարությանը և պահանջում էր դիմադրություն ցույց տալ հիտլերյան ներխուժմանը։ Սակայն Շուշնիգի կառավարությունը բանվորներից ավելի շատ էր վախենում, քան հիտլերականներից, և կապիտուլացվեց առանց դիմադրության։ 1938 թ. մարտի 11-ին Ավստրիա մտավ գերմանական բանակը։ Շատ տարիներով Ավստրիան վերածվեց Երրորդ կայսրության «արևելյան մարկայի»։ Եվրոպական բոլոր պետություններից միայն ՍՍՀՄ-ը հանդես եկավ անշլյուսի դեմ։ Արևմտյան մեծ տերություններն Ավստրիայի զավթումը խրախուսեցին այն նույն պատճառներով, որոնցով նրանք հետագայում կնքեցին Մյունխենյան խայտառակ համաձայնագիրը։

Միակ կուսակցությունը, որը հիտլերյան տեռորի ծանր պայմաններում շարունակում էր պայքարը հանուն Ավստրիայի անկախության, կոմունիստական կուսակցությունն էր։ Կոմունիստները ոչ միայն ղեկավար դեր էին խաղում դիմադրության ավստրիական շարժման մեջ, այլև պաշտպանում էին ավստրիական ազգի գաղափարը։ Ազգային հարցում կոմկուսի մշակած ճիշտ դիրքը հաջորդ տարիների ընթացքում վիթխարի դեր խաղաց նացիզմի և նրա «մեծ Գերմանիայի» պրոպագանդայի դեմ։ Կոմունիստական կուսակցությունը բարձրացրեց Ավստրիայի ազգային-ազատագրական պայքարի դրոշը։

ԳԼՈՒԽ 12

ՀՈՒՆԳԱՐԻԱՆ 1918—1939 ԹԹ.

Իրադրությունը երկրում հեղափոխության նախօրյակին

Հունգարիան Հաբսբուրգների Ավստրո-Հունգարական միապետության մի մասն էր, որտեղ տիրապետող դիրք էր գրավում Ավստրիան։ Նրա կառավարող շրջանները ձգտում էին Հունգարիան պահել որպես ավստրիական արդյունաբերության ագրարային-հումքային կցորդի, որը առաջ էր բերում հունգարական էկոնոմիկայի միակողմանի զարգացում, կաշկանդում երկրի արտադրողական ուժերը։ Իր հերթին հունգարական ազնվականությունը նույնպիսի շովինիստական չափանիշով էր վերաբերվում Հունգարիայի տերիտորիայում բնակվող ոչ հունգար ժողովուրդներին։ Խորվաթները, սերբերը, ռումինացիները, սլովենները, ուկրաինացիները, որոնք կազմում էին Հունգարիայի բնակչության կեսից ավելին (21 մլն մարդուց 11 մլն), շահագործվում էին ոչ միայն սեփական կալվածատերերի ու բուրժուազիայի կողմից, այլև ազգային կեղեքման էին ենթարկվում հունգարական կալվածատերերի ու կապիտալիստների կողմից։

Հունգարիայում պահպանվում էին ֆեոդալական մնացուկները, առաջին հերթին կալվածատիրական հողատիրության տիրապետությունը։ Երկրում մեծ ազդեցություն ուներ կաթոլիկ եկեղեցին։ Իշխանության մարմիններում (այդ թվում նաև պառլամենտի երկու պալատներում) իշխող դիրքեր էր գրավում ազնվականությունը։ Դրա հետ մեկտեղ հունգարական արդյունաբերության մեջ արագ տեմպերով ընթանում էր մոնոպոլիաների (հատկապես քարածխային, մետալուրգիական ճյուղերում) զարգացման պրոցեսը։ Լարված էր ընթանում բանկային կապիտալի միահյուսումը արդյունաբերականի հետ։ Բարձր մակարդակի հասավ պրոլետարիատի համակենտրոնացումը. ոչ մեծ թվով խոշոր ձեռնարկություններում զբաղված էր բոլոր բանվորների մոտ 40 տոկոսը։ Երկրում արդյունաբերական պրոլետարիատը հաշվվում էր հարյուր հազարավոր մարդ։ Արդյունաբերական բանվորների կեսից ավելին կենտրոնացած էր Բուդապեշտի արդյունաբերական շրջանում։ Դրա հետ մեկտեղ երկրում պահպանվում էր տնայնագործական բնույթի մանր ու մանրագույն ձեռնարկությունների մի ամբողջ զանգված (այնտեղ զբաղված էր բոլոր բանվորների մինչև 50 տոկոսը)։ Ամբողջությամբ վերցրած արդյունաբերության մեջ և լեռնային գործում զբաղված էր երկրի աշխատող բնակչության մոտ 20 տոկոսը։

Այսպիսով, Հունգարիան բզկտվում էր ազգային ու սոցիալական ամենասուր հակասություններով, որոնք առաջադրում էին մի շարք հրատապ խնդիրների լուծման անհրաժեշտությունը՝ ազգային անկախության նվաճման, միապետության ոչնչացման և դեմոկրատական հանրապետության հաստատման, կալվածատիրական հողատիրության վերացման և գյուղացիությանը հո-

ղով ապահովելու, Հունգարիայում իսկ ազգային հարցի լուծման անհրաժեշտությունը։

Հունգարիայում հեղափոխական շարժման ծավալման համար հզոր խթան հանդիսացավ Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Հոկտեմբերի ազդեցությամբ ակտիվացավ հունգարական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ձախ թևի գործունեությունը։ 1917 թ. հեղափոխականորեն տրամադրված սոցիալիստներից (մեծ մասամբ ուսանողներից, մտավորականության ներկայացուցիչներից) ձևավորվեց, այսպես կոչված, հեղափոխական սոցիալիստների ինքնուրույն խումբը, որը բացահայտորեն հանդես էր գալիս ընդդեմ պատերազմի և հանուն սոցիալիզմի։ 1917 թ. նոյեմբերի 25-ին Բուդապեշտի պրոլետարիատը հզոր ցույց կազմակերպեց ի պաշտպանություն Հոկտեմբերյան հեղափոխության, որին մասնակցեց ավելի քան 100 հազ. աշխատավոր։ Մայրաքաղաքի բանվորների միտինգներում բանաձևեր էին ընդունվում ի պաշտպանություն Սովետական հանրապետության, ընդդեմ իմպերիալիստական պատերազմի, հանուն երկրում արմատական սոցիալ-տնտեսական վերափոխությունների։ Դեկտեմբերի սկզբին նույնանման ցույցեր տեղի ունեցան Միշկոլցում, Սեգեդում, Պեչում և Հունգարիայի մյուս քաղաքներում։

1918 թ. հունվարին Բրեստ-Լիտովսկի բանակցություններում գերմանական իմպերիալիստների կողմից Սովետական Ռուսաստանին ներկայացված ղավթողական պահանջների դեմ ուղղված բողոքի հզոր գործադուլի ընթացքում Հունգարիայում սկսեցին ստեղծվել բանվորների դեպուտատների սովետներ։ Դրանք ընտրվում էին դեմոկրատական ուղիով՝ գործարանների, ֆաբրիկաների և արհմիությունների ներկայացուցիչներից, որպես բանվոր դասակարգի մարտական մարմիններ նրանց շահերը պաշտպանելու և, վերջին հաշվով, պետական իշխանությունը նվաճելու համար։ Սակայն սկզբնապես սովետներում վճռական դիրքերը գտնվում էին ռեֆորմիստների ձեռքին։

Հեղափոխական ճգնաժամը երկրում շարունակում էր խորանալ։ Հակապատերազմական տրամադրությունները համակեցին նաև Ավստրո-Հունգարական բանակին։ Զորամասերում ծագում էին խռովություններ, աճում էր դասալքությունը։ 1918 թ. ամռանը միապետության երկու մասերում հաշվվում էր ավելի քան 100 հազ. դասալիք։

1918 թ. ամռանը պարզորոշ կերպով նշմարվեց Ավստրո-Հունգարական միապետության մոտեցող կրախը։ Ռազմաճակատներում կրած ռազմական պարտությունների և Ավստրո-Հունգարիայի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման ազդեցությամբ Հաբսբուրգների ծվենավոր միապետությունը 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբերին փլուզվեց։

1918 թ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը

Հոկտեմբերի 30-ի լույս 31-ի գիշերը Հունգարիայում սկսվեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը։ Բուդապեշտի բանվորները ձախ սոցիալ-դեմոկրատների և «հեղափոխական սոցիալիստների» գլխավորությամբ զինված ապստամբություն բարձրացրին, որի ընթացքում տապալվեց կոմս Խադիկի ռեակցիոն կառավարությունը։ Չնայած 1918 թ. Հունգարական հեղափոխության գլխավոր շարժիչ ուժը՝ իր հետևից գյուղացիությանն ու քաղաքային մանր բուրժուական խավերին տանող բանվոր դասակարգն էր, հեղափոխության պտուղները բանվորների թույլ կազմակերպվածության և պրոլետարիատի իսկական մարքսիստական ավանգարդի բացակայության հետևանքով բաժին հասան ամենից առաջ բուրժուազիային։ Իշխանության գլուխ անցավ մի կառավարություն, որը կազմված էր չափավոր-լիբերալ բուրժուազիայի երկու կուսակցությունների՝ անկախության կուսակցության և ռադիկալ կուսակցության ներկայացուցիչներից։ Նրա գլուխ կանգնեց կոմս Մ. Կարոլյին։ Կառավարության մեջ մտան նաև աջ սոցիալ-դեմոկրատիայի երկու ներկայացուցիչներ՝ Գարամին և Կունֆին, դրանով իսկ ցուցադրելով աջ սոցիալ-դեմոկրատների բացահայտ միավորումը բուրժուազիայի հետ։ Դրա հետ մեկտեղ շարունակում էին լեգալ կերպով գործել նաև սովետները, որոնց թիվը արագորեն մեծանում էր։

Բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հետևանքով վերջ տրվեց Հաբսբուրգների բազմադարյան լծին, և Հունգարիան ձեռք բերեց պետական անկախություն, դառնալով հանրապետություն։ Նրա քաղաքացիներին տրվեցին որոշակի քաղաքական ազատություններ՝ ժողովների, միտինգների և սկզբնապես՝ մամուլի ազատություն։ Սակայն աշխատավորների տնտեսական դրությունը շարունակում էր մնալ ծանր։

Իշխանության գլուխ անցած բուրժուազիան չկարողացավ լուծել նաև ագրարային պրոբլեմը։ Կալվածատիրական հողատիրությունն առաջվա պես խեղդում էր հունգարական գյուղը, իսկ կառավարությունը զենքի ուժով ճնշում էր կալվածատիրական հողերի բաժանման միջոցով հող ստանալու գյուղացիների կատարած փորձերը։ Քաղաքներում իշխանությունները ակտիվորեն պաշտպանում էին ձեռնարկատերերին՝ ընդդեմ բանվորների, որոնք պահանջում էին բանվորական վերահսկողություն հաստատել արտադրության նկատմամբ և պայքարել քայքայվածության վերացման համար։

Օրըստօրե երկրում ուժեղանում էին սովն ու տնտեսական քայքայումը։ Հուսահատության հասցված մասսաները ելնում էին «սովյալ բունտերի»։ Հունգարական աշխատավորներն ավելի ու ավելի էին համոզվում իշխանության գլուխ անցած բուրժուազիայի՝ աշխատավոր ժողովրդի օգտին վերափոխություններ իրականացնելու անընդունակության մեջ։ Կոալիցիոն կառավարությունն անընդունակ գտնվեց նաև երկիրը դուրս բերելու պատերազմի վիճակից և արդարացի հաշտություն ձեռք բերելու հաղթողներից։ Երկրում աճում էր բուրժուազիայի իշխանության տապալման և սոցիալիստական հեղափոխության իրականացման համար մղվող շարժումը։

Հունգարիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը

Այդպիսի իրադրության պայմաններում, 1918 թ. նոյեմբերի 24-ին Բուդապեշտում ստեղծվեց Հունգարիայի կոմունիստական կուսակցությունը։ Այն առաջացավ հունգարական բանվորական շարժման առավել հեղափոխական երեք հոսանքների միաձուլման հիման վրա՝ օպորտունիստներին դիմակայող ձախ սոցիալ-դեմոկրատների (սրանց գլխավորում էին Լաշլո Ռուդաշը, Բելա Սանտոն, Բելա Վագոն), Ռուսաստանից վերադարձած բազմաթիվ ռազմագերիների, որոնք մասնակցել էին Հոկտեմբերյան հեղափոխությանն ու քաղաքացիական պատերազմին. սրանք դարձան Հունգարիայի աշխատավորության շրջանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների ակտիվ պրոպագանդիստներ (այս խմբից կոմկուսի ղեկավարության մեջ մտան Բելա Կունը, Էռնե Պորը, Ֆերենց Յանչիկը, Տիբոր Սամուելին). երրորդ խումբը կազմում էին «հեղափոխական սոցիալիստները», որոնք հանդես էին գալիս Հունգարիայում սոցիալիստական հեղափոխության օգտին (սրանց գլուխ անցան Օտտո Կորվինը, Անտալ Մոշոյգոն, Իմրե Շալլային, Դյուլա Խեվեշին)։ Կոմկուսի ղեկավար դարձավ իր ամբողջ կյանքը հեղափոխության գործին նվիրած Բելա Կունը։

Կոմկուսը ակտիվ գործունեություն ծավալեց ժողովրդի լայն խավերին, առաջին հերթին բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին իր կողմը գրավելու ուղղությամբ, հմտորեն զուգակցելով բանվորների, զորացրված զինվորների և գյուղական չքավորության ամենօրյա պահանջները սոցիալիստական հեղափոխության համար պայքարելու լոզունգների հետ։ Կոմունիստները բացահայտում էին կառավարության սոցիալ-տնտեսական միջոցառումների բուրժուական բնույթը, ժողովրդին կոչ անում տապալել գոյություն ունեցող կարգը, հաստատել պրոլետարիատի դիկտատուրա և ստեղծել սոցիալիստական պետություն։ Դեպի այդ նպատակը տանող ուղին կոմունիստները տեսնում էին սովետներում նստած աջ սոցիալ-դեմոկրատներին վռնդելու և դրանք իսկական ժողովրդաիշխանության օրգանների վերածելու մեջ։ Կարոլյիի կառավարության՝ դեպի Անտանտը կողմնորոշվող արտաքին քաղաքական կուրսին կոմունիստները հակադրեցին Սովետական Ռուսաստանի հետ դաշինքի պահանջը։

Կոմունիստների ակտիվությունն ամրապնդում էր նրանց դիրքերը մասսաների մեջ, ամենուրեք ստեղծվում էին կուսակցական կազմակերպություններ։ Չնայած կառավարական իշխանությունների բռնություններին, աճում էր հողի համար գյուղացիների շարժումը։ Քաղաքներում ընդլայնվում էր արտադրության նկատմամբ բանվորական վերահսկողություն սահմանելու շարժումը։ 1919 թ. սկզբին մի շարք վայրերում սովետներն սկսեցին ինքնակամ իշխանությունից հեռացնել նախկին պետական ապարատի ներկայացուցիչներին և կառավարումը իրենց ձեռքը վերցնել։ Սովետներում աճում էր կոմունիստների ազդեցությունը։

Այսպիսով, այդ ժամանակաշրջանում Հունգարիայում հանդես եկավ պրոլետարիատի կազմակերպված կուսակցությունը, որը զինված էր մարքսիզմ-լենինիզմի գաղափարներով և ընդունակ էր բանվոր դասակարգին մարտի տանելու հանուն հասարակության սոցիալիստական վերակառուցման։

1919 թ. մարտի 21-ի պրոլետարական հեղափոխությունը։ Հունգարական սովետական հանրապետության կազմավորումը

1919 թ. մարտի կեսերին Հունգարական կոմկուսը մեծ ազդեցություն ձեռք բերեց արդյունաբերական բանվորների, աշխատավոր գյուղացիության, դեմոկրատորեն տրամադրված մանր բուրժուազիայի, գյուղական բատրակների, զինվորների շրջանում։ Հենվելով աշխատավոր ժողովրդի զանգվածների վրա, կոմկուսը վերցրեց զինված ապստամբության նախապատրաստման կուրս։

Անտանտի տերությունները որոշեցին կանխել հեղափոխության զարգացումը Հունգարիայում՝ երկիրը օկուպացնելու սպառնալիքի միջոցով։ 1919 թ. մարտի 19-ին Հունգարական կառավարությանը նոտա հանձնվեց, որով վերջնագրային ձևով պահանջում էր երկրի զգալի տերիտորիաներ տրամադրել, ուր ենթադրվում էր մտցնել Անտանտի և նրա դաշնակիցների զորքեր։ Այդ պահանջն այնքան մեծ դժգոհություն առաջացրեց Հունգարիայի բնակչության մեջ, որ նույնիսկ դեպի Անտանտը կողմնորոշվող Մ. Կարոլյին և նրա համախոհները չհամարձակվեցին այն բավարարել։ Այդ նույն ժամանակ իր թիկունքում բավարար ուժ չունենալով, կառավարությունը վախեցավ վերջնագիրը մերժել և հրաժարական տվեց։ Ըստ էության, դա նրա ամբողջ ներքին ու արտաքին քաղաքականության ձախողման խոստովանությունն էր։ Ստեղծված իրադրության պայմաններում իշխող դասակարգերը դիմեցին սոցիալ-

դեմոկրատիային, նրա պարագլուխներին առաջարկելով ստեղծել «զուտ» սոցիալ-դեմոկրատական կառավարություն, այն հաշվով, որպեսզի թույլ չտրվի «բոլշևիզմ» հաստատվելու երկրում։ Սակայն սոցիալ-դեմոկրատական ղեկավարությունը հասկանալով մասսաների մեջ իր ազդեցության թուլությունը, չհամարձակվեց միանձնաբար վերցնել իշխանությունը և մի պատվիրակություն ուղարկեց կոմկուսի՝ 1919 թ. փետրվարին բանտարկված ղեկավարների մոտ՝ բանակցություններ վարելու միասնական գործողությունների մասին։ 1919 թ. մարտի 21-ին կոմունիստների և կուսակցության ձախ ուժերի ուժեղացող ճնշման տակ գործող սոցիալ-դեմոկրատների ղեկավարության միջև կնքվեց համաձայնագիր, որի հիմնական կետերն էին՝ կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների անհապաղ միավորում Հունգարիայի միասնական սոցիալիստական կուսակցության մեջ. միավորված կուսակցությունը պրոլետարիատի անունից ամբողջ իշխանությունը վերցնում է իր ձեռքը. բուրժուազիայի ռազմական ուժերի անհապաղ զինաթափում բանվորների, զինվորների և գյուղացիների սովետների կողմից. պրոլետարիատի դասակարգային բանակի ստեղծում. պրոլետարիատի դիկտատուրայի իրականացում Հունգարիայում. դաշինք Սովետական Ռուսաստանի հետ։ Այն օրերի Հունգարիայի կոնկրետ պայմաններում բանվոր դասակարգի երկու կուսակցությունների հեղափոխական պլատֆորմի վրա միավորումն ունեցավ, սակայն, նաև իր ստվերոտ կողմերը. սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը զտված չէր ռեֆորմիստներից, կոմունիստական սկզբունքների ճանաչումը նրանց կողմից հանդիսացավ իսկական մտադրությունների միայն քողարկում։ Նրանք կարևոր պոստեր գրավեցին նոր կուսակցության և հեղափոխական իշխանության մարմիններում։ Դրա հետևանքով կոմունիստական շարժումը, որպես հեղափոխության ղեկավար և ուղղություն տվող ուժ, զգալիորեն թուլացավ։

Բանվորների դեպուտատների Բուդապեշտի սովետի նիստը մարտի 21-ին վիթխարի խանդավառությամբ ողջունեց ձեռք բերված համաձայնությունը։ Հենց այդ ժամանակ էլ բանվորների զինված խմբերը, զինաթափելով նախկին կառավարությանը պաշտպանող ոստիկանության ու զորքերի մնացորդները, լիակատար վերահսկողություն հաստատեցին Բուդապեշտում։

Այդ նույն օրը ստեղծվեց Հունգարական սովետական հանրապետության առաջին կառավարությունը՝ Հեղափոխական կառավարական խորհուրդը։ Նրա և սոցիալիստական կուսակցության անունից Հունգարիան հռչակվեց սովետական հանրապետություն։ Շուտով բանվոր դասակարգը իշխանությունն իր ձեռքը վերցրեց նաև պրովինցիայում։ Պրոլետարական հեղափոխությունը հաղթանակեց խաղաղ ճանապարհով, քանի որ մասսաների աջակցությունից զրկված խոշոր բուրժուազիան և կալվածատերերը չէին կարող զինված լուրջ դիմադրություն ցույց տալ։

Հունգարիայում հեղափոխության խաղաղ հաղթանակն ապահովող կարևոր գործոն եղավ 1919 թ. մարտին ստեղծված միջազգային իրադրությունը։ Անտանտի ուժերի լարումը Սովետական Ռուսաստանի դեմ մղված պայքարում, ինչպես նաև Կենտրոնական Եվրոպայի երկրներում հեղափոխական շարժումների աճը իմպերիալիստներին հնարավորություն չտվեցին զինված ձեռքով խանգարելու սովետական իշխանության հաստատմանը Հունգարիայում։

Սոցիալիստական վերափոխությունները սովետական Հունգարիայում

Հունգարական սովետական հանրապետությունը գոյություն ունենալով 133 օր, իրականացրեց սոցիալիստական բնույթի սոցիալ-քաղաքական խոր վերափոխություններ։ Աշխատավոր ժողովրդին ոչ միայն գործնականում տրվեցին քաղաքական բոլոր իրավունքները (ժողովների, միտինգների, մամուլի և այլ ազատություններ), այլև դրանց իրագործումը երաշխավորում էր հաղթանակած բանվոր դասակարգը։ Ժողովրդի գերակշռող մեծամասնությունը (այդ թվում կանայք և 18 տարեկան հասակի երիտասարդությունը) ստացավ պետական իշխանության մարմիններում ընտրելու և ընտրվելու իրավունք։ Այդ նույն ժամանակ ուրիշի աշխատանքը շահագործող անձինք զրկվում էին ընտրական իրավունքներից։ Վերացվում էին նախկին տիտղոսներն ու կոչումները և դրանց հետ կապված արտոնությունները։ Պրոլետարական պետության առաջին ակտերից մեկը եղավ հին ոստիկանության ու ժանդարմերիայի ցրումը և դրանց փոխարեն կարմիր պահակախմբի (միլիցիայի) ստեղծումը։ Սովետական իշխանությունը վերացրեց նախկին և ստեղծեց նոր ժողովրդական դատարաններ։ Ազգայնացվեցին բոլոր բանկերը, արդյունաբերական ձեռնարկությունները, հանքերն ու տրանսպորտը։ Պետության սեփականությանն անցան կալվածատիրական հողային տիրույթները։

Չնայած տնտեսական դժվարություններին, հանրապետությանը հաջողվեց բարձրացնել բանվորների և ծառայողների աշխատավարձը (համապատասխանաբար 25 և 15 տոկոսով)։ Աշխատավորներին հանձնվեցին լավագույն առողջարաններն ու ամառանոցները, որոնք նախկինում պատկանում էին հարուստներին։ Հունգարական ազնվականների շքեղ առանձնատներում և ապարանքներում աշխատավորների երեխաների համար բացվում էին մանկապարտեզներ ու մանկամսուրներ, անապատան երեխաների համար մանկատներ։ Միաժամանակ հեղափոխական կառավարությունը ձեռնամուխ եղավ բնակարանային ճգնաժամի վերացմանը և աշխատավորների բնակարանային պայմանների բարելավմանը։ Ժողովրդի նվաճումներն ամրապնդվեցին Հունգարական սովետական հանրապետության սահմանադրությամբ, որն ընդունվեց 1919 թ. հունիսին՝ սովետների համահունգարական համագումարում։

Սովետական կառավարության նշած շատ միջոցառումներ նա չհասցրեց լիովին իրականացնել։ Բայց այն էլ, ինչ կատարվեց, ակնառու կերպով ցույց տվեց, թե աշխատավորության կենսապայմանների բարելավման գործում ինչպիսի մեծ արդյունքների կարող է հասնել բանվոր դասակարգը, իր ձեռքը վերցնելով իշխանությունը։

Սովետական իշխանության անկումը Հունգարիայում։ Հունգարական սովետական հանրապետության պատմական նշանակությունը և դասերը

Սովետական հանրապետության գոյության խաղաղ ժամանակաշրջանը Հունգարիայում կարճ տևեց։ Վախեցած հեղափոխության ևս մեկ նոր օջախի հանդես գալով, Անտանտի իմպերիալիստական շրջանները բոլոր միջոցները ձեռք առան, որպեսզի հաշվեհարդար տեսնեն սովետական Հունգարիայի հետ։ Դրա համար Անտանտն օգտագործեց թագավորական Ռումինիայի և բուրժուական Չեխոսլովակիայի զորքերը, այն երկրների, որոնց կառավարողները վախենում էին իրենց երկրների ժողովուրդների վրա Հունգարական սովետական հանրապետության հեղափոխական ազդեցությունից։ Բացի այդ, Հունգարական սովետական հանրապետությունը խիստ թուլացել էր ներսից՝ աջ սոցիալ-դեմոկրատիայի դավաճանական գործունեության և ներքին հակահեղափոխության ոտընձգությունների հետևանքով։

Բանակում և կառավարական մարմիններում բուն դրած սոցիալ-դեմոկրատների աջ թևի ներկայացուցիչները հակառակորդին էին հանձնում հանրապետության ռազմական գաղտնիքները, խուճապ ու անվստահություն սերմանում բնակչության ու զորքերի մեջ, սաբոտաժի ենթարկում կառավարության դեկրետների իրականացումը, նպաստում բուրժուազիայի հակահեղափոխական ելույթներին։

Կառավարության մեջ պատասխանատու պոստեր գրաված աջ սոցիալ-դեմոկրատները, այնպիսիք, ինչպես արդարադատության ժողկոմ Ագոշտոնը, ռազմական գործերի ժողկոմ Խաուբրիխը, հունգարական կարմիր բանակի գլխավոր հրամանատար, ապա և Վիեննայում սովետական Հունգարիայի դեսպան Բեմը գործում էին՝ անմիջական կապեր ունենալով անգլիական ու իտալական հետախուզությունների հետ։ Այսպիսով, ՍԴԿ-ի օպորտունիստական թևի պարագլուխները, որոնք միայն մասսաների ճնշման տակ էին համաձայնվել ձևականորեն համագործակցելու կոմկուսի հետ և հռչակելու սովետական հանրապետություն, կառավարության մեջ իրենց ներկայությունը օգտագործում էին սովետական իշխանությունը Հունգարիայում վերացնելու համար։

Հարկադրված լինելով մոբիլիզացնել բոլոր առկա ուժերը Դենիկինի բանակի և Անտանտից աջակցություն գտնող սպիտակգվարդիական մյուս բանակների հարձակումը կասեցնելու համար, Սովետական Ռուսաստանի աշխատավորները չկարողացան բավարար քանակությամբ զորքեր առանձնացնել, որպեսզի արշավեն Հունգարական հեղափոխական զորքերին միանալու համար։ Սովետական Հունգարիայի ռազմական դրությունը զգալիորեն բարդացրեց Հունգարական կարմիր բանակի գլխավոր շտաբի պետ Ֆերենց Ժուլիեի դավաճանությունը, որը թշնամիներին հանձնեց հանրապետության ռազմական պլանները։ Նման հանգամանքներում Հունգարական կարմիր բանակի զորամասերը, որոնք մինչ այդ հաջողությամբ կասեցնում էին ինտերվենտների գրոհները, հուլիսի երկրորդ կեսին սկսեցին ավելի ու ավելի մեծ անհաջողություններ կրել։ Կենտրոնացնելով զգալի ուժեր, որոնց մատակարարում և ուղղություն էին տալիս Անտանտի իմպերիալիստները, թագավորական Ռումինիայի զորքերը հուլիսի վերջին հարձակման անցան և սկսեցին նեղել Հունգարական կարմիր բանակի զորամասերին։

Այդ օրերին առանձնահատուկ կերպով դրսևորվեց աջ սոցիալ-դեմոկրատիայի դավաճանությունը։ Պարտվողական ագիտացիայի հետևանքով սկսեց քայքայվել բանակը։ Հակահեղափոխական սպաները, որոնք համաձայնողական սոցիալ-դեմոկրատիայի օգնությամբ տաքուկ տեղեր էին գրավել գլխավոր շտաբում և հրամանատարական կազմում, դիտավորյալ կերպով սաբոտաժի էին ենթարկում բանակի ղեկավարությունը, տալիս էին հակասական, միտումնավոր խճճված հրամաններ։ Այդ բոլորը հասցրեց նրան, որ հուլիսի վերջին օրերին ռազմաճակատն ըստ էության քայքայվեց։ Երկրում եղած հակահեղափոխական տարրերը, որոնք ոգեշնչվել էին ռազմաճակատներում սովետական իշխանության կրած անհաջողություններից, խիստ ուժեղացրին քայքայիչ գործունեությունը պրոլետարական դիկտատուրայի դեմ։ Ներքին և միջազգային հակահեղափոխության գերակշռող ուժերի ճնշման տակ 1919 թ. օգոստոսի 1-ին սովետական իշխանությունը Հունգարիայում ընկավ։ Սովետական Հունգարիայի կառավարությունը ստիպված էր հրաժարական տալ։ Նրան

փոխարինած և Պեյլղի գլխավորությամբ աջ սոցիալ-դեմոկրատներից կազմված այսպես կոչված արհմիութենական կառավարությունը անցման սոսկ «կամուրջ» եղավ հակահեղափոխական դիկտատուրա հաստատվելու ճանապարհին։ Սակայն իր կառավարման վեց օրվա ընթացքում «արհմիութենական» կառավարությունը հասցրեց վերացնելու սովետական իշխանության բոլոր դեկրետները։

Չնայած պարտությանը, 1919 թ. պրոլետարական հեղափոխությունը Հունգարիայում դարձավ հունգարական և համաշխարհային հեղափոխական շարժման վառ էջերից մեկը։ Նա շոշափելի հարված հասցրեց այն տեսություններին, որոնք ժխտում էին Ռուսաստանում կատարված Հոկտեմբերյան հեղափոխության միջազգային նշանակությունը, այն բացատրում միայն «ռուսական սպեցիֆիկ պայմաններով»։ Հունգարական սովետական հանրապետությունը անմիջական օգնություն ցույց տվեց Սովետական Ռուսաստանին, իր վրա գրավելով Անտանտի զորքերի մի մասը։ 1919 թ. Հունգարիայի աշխատավոր ժողովրդի տարած հաղթանակը նպաստեց հեղափոխական շարժման ծավալմանը Եվրոպայում։ Հունգարականից հետո առաջացան Բավարական և Սլովակյան սովետական հանրապետությունները։

Սովետական հանրապետության ժամանակաշրջանում Հունգարիան բարձրացավ իր նախորդ ողջ պատմության մեջ հասարակական զարգացման ամենաբարձր աստիճանը։ 1919 թ. սովետական իշխանությունը, որը նշանակում էր իր սեփական հողում միլիոնավոր աշխատավորների տիրապետություն, առաջին իսկապես ժողովրդական իշխանությունն էր հունգարական պետության պատմության մեջ։

Դրա հետ մեկտեղ Հունգարիայի հեղափոխության ընթացքում տեղի ունեցած դասակարգային պայքարի դասերը համոզիչ կերպով ապացուցեցին համախմբված մարքսիստական-լենինյան կուսակցության՝ պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում հեղափոխության հաջողության համար այդ ղեկավար և ուղղություն տվող ուժի անհրաժեշտությունը՝ 1919 թ. մարտին երկու բանվորական կուսակցությունների միաձուլումը տեղի ունեցավ աջ սոցիալ-դեմոկրատների կողմից կոմունիստական սկզբունքների միայն ձևական ճանաչման հիման վրա, որը վերջին հաշվով կործանարար ձևով ազդեց հեղափոխության ճակատագրի վրա։ «Ոչ մի կոմունիստ,— նշում էր Վ. Ի. Լենինը,— չպետք է մոռանա Հունգարական սովետական հանրապետության դասերը։ Հունգարական կոմունիստների միավորումը ռեֆորմիստների հետ՝ թանկ նստեց հունգարական պրոլետարիատին»[1]։

Հունգարական սովետական հանրապետության փորձը ակնհայտորեն ցույց տվեց բանվորա-գյուղացիական կայուն դաշինքի ողջ նշանակությունը պրոլետարական դիկտատուրայի պետության համար։ Կալվածատերերից հողը խլելով, սովետական Հունգարիայի կառավարությունը այն չբաժանեց երկար տարիներ նրա մասին երազող հողազուրկ և սակավահող գյուղացիների միջև, որոնք կազմում էին հունգարական գյուղացիության հիմնական մասը։ (Կալվածատերերից վերցված հողը հանձնվեց պետական տնտեսություններին և գյուղատնտեսական կոոպերատիվներին)։ Սովետական իշխանությանը խանդավառությամբ դիմավորած աշխատավոր գյուղացիությունը սկսեց նրանից հիասթափվել այն բանից հետո, երբ չբավարարվեց նրա առաջնակարգ պահանջը։ Դրանից օգտվեցին նախկին կալվածատերերը, հոգևորականությունը,

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 245։

կուլակությունը, կատաղի հակահեղափոխական ագիտացիա ծավալելով գյուղական բնակչության շրջանում։ Որպես արդյունք սովետական իշխանությունն իր համար վճռական պահերին չստացավ գյուղացիական զանգվածների լայն աջակցությունը։ Քաղաքում սովետական իշխանության կայուն մասսայական բազայի ստեղծումը թուլացավ նաև մանր ու մանրագույն արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացմամբ, արհեստավորների և տնայնագործների նկատմամբ ոչ ճկուն քաղաքականությամբ։ Կոմունիստների թույլ տված սխալները մեծ չափով բացատրվում են դասակարգային ու սոցիալական բախումների իրադրության անսովոր բարդությամբ, իրադրություն, որի պայմաններում ստիպված էր պայքարել Հունգարիայի երիտասարդ, դեռ հեղափոխական մեծ փորձ չունեցող կոմկուսը։

Խորտիի հակահեղափոխական դիկտատուրայի հաստատումը։ Ռեակցիոն ուժերի կոնսոլիդացիան

Հունգարական սովետական հանրապետության անկումից հետո երկար տարիներ երկրում հաստատվեց հակահեղափոխական ռեժիմ։ Ամբողջ Հունգարիայում մոլեգնում էր սպիտակ տեռորը, որի ընթացքում զոհվեցին Հունգարիայի կոմունիստական կուսակցության ամենաականավոր ղեկավարներն ու կազմակերպիչները՝ Տիբոր Սամուելին, Ենե Լասլոն, Օտտո Կորվինը և հազարավոր բանվորներ ու գյուղացիներ, որոնք պայքարում էին հանուն ժողովրդական իշխանության, տասնյակ հազարավոր հեղափոխականներ նետվեցին բանտերն ու համակենտրոնացման ճամբարները։

1919 թ. նոյեմբերին Անտանտի դաշնակցային միսիայի հովանավորությամբ Բուդապեշտը գրավեցին ծովակալ Խորտիի հակահեղափոխական զորքերը, որոնք կազմվել էին դրանից մի քանի ամիս առաջ երկրի հարավային մարզերում՝ հեղափոխությունը ճնշելու նպատակով։ 1920 թ. հունվարին դեմոկրատական ուժերի դաժան հալածանքի պայմաններում խորտիականները պառլամենտական ընտրություններ սարքեցին։ Իր համար ապահովելով ձայների մեծամասնություն, Խորտին «օրինական» հիմք ստացավ իշխանության գլուխ անցնելու։ 1920 թ. մարտին գումարված նոր պառլամենտը հլու գործիք դարձավ նորաթուխ դիկտատորի ձեռքում։ Հունգարիան վերստին հռչակվեց միապետություն, իսկ Խորտին «ընտրվեց» խնամակալ և օժտվեց գործնականապես անսահմանափակ իրավունքներով։

Հունգարիայում հաստատված ավտորիտար իշխանությունն իրենից ներկայացնում էր հունգարական իմպերիալիստական բուրժուազիայի և կալվածատերերի առավել ռեակցիոն ներկայացուցիչների դիկտատուրա, այսինքն՝ ֆաշիստական տիպի պետական կարգ։ Խորտիական ռեժիմի սոցիալական բազան էին ֆինանսա-մոնոպոլիստական բուրժուազիան, կալվածատերերը, կուլակությունը, հակահեղափոխականորեն տրամադրված սպայությունը և հոգևորականությունը։ Միաժամանակ անց խորտիականներին հաջողվեց իրենց կողմը գրավել նաև քաղաքի ու գյուղի մանր բուրժուազիայի զգալի մասը։

Երկրում կառավարող կուսակցություն դարձավ ազգային միասնության կուսակցությունը, որի կորիզն էին առևտրա-արդյունաբերական կապիտալիստները, խոշոր հողատերերը, բարձր չինովնիկությունը։ Կարգերի հենարան դարձան նաև կառավարության կողմից խրախուսվող ֆաշիստական-նացիոնալիստական տարբեր տեսակի միությունները՝ «Հերոսների միաբանությունը», «Գյուղական միությունը» և այլն։ Արտոնյալ վիճակում էր գտնվում իր իսկ Խորտիի գլխավորած «Ասպետների միաբանությունը», որի մեջ թույլ էր տրվում ընդունվել միայն խորտիզմի ամենակրքոտ կողմնակիցներին։ Երի-

տասարդության շրջանում ակտիվորեն գործում էր ռազմականացված «Լեվենտե» կազմակերպությունը, որն իր անդամներին դաստիարակում էր շովինիզմի, նացիոնալիզմի և հակակոմունիզմի ոգով։

Խորտիականների տիրապետության գլխավոր զենքը տեռորն էր, իշխանությունների դեմ ուղղված ամեն տեսակ ելույթների անխնա ճնշումը։ Այդ ամենը ուղեկցվում էր անզուսպ սոցիալական դեմագոգիայով, մասսաների լկտի խաբեությամբ։ Այդ նույն ժամանակ Հունգարիայի հակահեղափոխական կարգերն աչքի էին ընկնում որոշ առանձնահատկություններով։

Զգալով իրենց դիրքերի թուլությունը, մշտական վախ զգալով աշխատավորության հեղափոխական նոր ելույթների հնարավորության հանդեպ, խորտիականները ստիպված էին պահպանելու բուրժուական պառլամենտարիզմի որոշ գծեր։ Կառավարող կուսակցության հետ մեկտեղ գոյություն ունեին նաև այլ բուրժուական և մանրբուրժուական կուսակցություններ։ Կառավարող շրջանները հանդուրժում էին աջ օպորտունիստների կողմից ղեկավարվող սոցիալ-դեմոկրատական կուսակցության լեգալ գոյությունը, հասկանալով, ի միջի այլոց, նրա լիակատար անվնաս լինելը իշխանությունների համար։

Աշխատելով ամրապնդել արտաքին քաղաքական դիրքերը, խորտիականները ջանում էին Անտանտի աչքում բարձրացնել իրենց վարկը, աջակցելով սպիտակ լեհերին, նրանց ագրեսիային Սովետական Ռուսաստանում։ Բուդապեշտում պլաններ էին կազմվում ավստրո-հունգարա-լեհական հակասովետական դաշինքի ստեղծման մասին։ Սակայն կառավարող հունգարական վերնախավի վերաբերմունքը հաղթող տերությունների հանդեպ բարդանում էր պարտված Հունգարիայի առանձնահատուկ դրությամբ։ Տրիանոնյան հաշտության պայմանագրի համաձայն, որը ստորագրվեց 1920 թ. հունիսի 4-ին, հունգարական նախկին տերիտորիայի մոտ երկու երրորդը, որտեղ ապրում էր նախապատերազմյան բնակչության մոտ 60 տոկոսը, անցնում էին Չեխոսլովակիային, Ռումինիային, Հարավսլավիային։ Հաղթող տերություններն իրենց իրավունք էին վերապահում միջամտելու Հունգարիայի ներքին գործերին։ Նրա վրա դրվեցին ռեպարացիոն ծանր պարտավորություններ։

Տրիանոնյան պայմանագիրը դժգոհություն առաջացրեց Հունգարիայի բնակչության բոլոր խավերում, որից ճարպկորեն օգտվեցին կառավարող շրջանները՝ փորձելով երկրի բոլոր ներքին դժվարությունները, ինչպես նաև մասսաների թշվառությունն ու իրավազրկությունը վերագրել տերիտորիաների կորստին։ Միջպատերազմյան տարիների ամբողջ ընթացքում «Ո՛չ, ո՛չ, երբե՛ք» (այսինքն՝ Հունգարիան երբեք չպետք է հաշտվի Տրիանոնյան պայմանագրի պայմանների հետ) լոզունգը ռեակցիայի գլխավոր լոզունգն էր, որի օգնությամբ նա աշխատում էր մասսաներին շեղել սոցիալական պայքարից և նրանց ուղղել ռևանշի ուղին։ Շովինիստական ու նացիոնալիստական կոչերի ազդեցության տակ ընկավ նաև աշխատավոր բնակչության մի մասը։

1920—1921 թթ. հակահեղափոխությանը հաջողվեց համախմբել իր ուժերը և լիովին վերականգնել ֆինանսական կապիտալի, արդյունաբերական և հողային օլիգարխիայի իշխանությունը։ Դրա արտահայտությունը եղավ այն, որ 1921 թ. երկրի կառավարման գլուխ անցավ կոմս Իշտվան Բեթլենի կառավարությունը, որը ոչ մեծ փոփոխություններով հանդերձ իշխանությունն իր ձեռքում պահեց մոտ տաս տարի։

Ռեակցիոն ուժերի համախմբմանը նպաստեց աջ սոցիալ-դեմոկրատիայի համաձայնողական գործունեությունը։ 1921 թ. դեկտեմբերի 21-ին սոցիալ-դեմոկրատական կուսակցության պարագլուխ Պեյերի և պրեմիեր մինիստր

Բեթլենի միջև համաձայնագիր ստորագրվեց, ըստ որի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը լեգալ գոյության իրավունք էր ստանում, պառլամենտում նրան 25 մանդատ էր տրվում։ Դրա փոխարեն սոցիալ-դեմոկրատական ղեկավարությունը պարտավորվում էր վարել իշխանությունների նկատմամբ լոյալ քաղաքականություն, հրաժարվել քաղաքական գործադուլներ կազմակերպելուց և մասսաների մեջ ագիտացիա տանելուց։

Հակահեղափոխական ռեժիմի հաստատումը նշանավորվեց տիրող դասակարգերի լայն հարձակմամբ աշխատավորության իրավունքների վրա։ Կալվածատերերն իրենց վերադարձրին հողը, որը նրանցից խլվել էր 1919 թ. գարնանը։ Վերացվեց 8-ժամյա աշխատանքային օրվա վերաբերյալ օրենքը, աշխատանքային օրվա տևողությունն դրանից հետո որոշվում էր ձեռնարկատերերի քմահաճույքով և հասնում 11—12 ժամի։ Խիստ (50 տոկոսով) իջեցվեց բանվորների աշխատավարձը, ցենզերով սահմանափակվեցին աշխատավորների ընտրական իրավունքները։

Կիրառելով ոչ միայն «մտրակի», այլև «մեղրաբլիթի» քաղաքականություն, խորտիականները մեծ աղմուկով պրոպագանդում էին ագրարային հարցը «լուծելու» իրենց մտադրությունը։ Այդ նպատակով 1920 թ. ագրարային ռեֆորմ հռչակվեց, որի իրականացումը շատ տարիներ ձգձգվեց։ Այն էականորեն չէր շոշափում կալվածատիրական հողատիրությունը. ըստ օրենքի կալվածատերերից վերցվում էր (չափազանց մեծ փրկագնով) հողի տասերորդ մասը։ Բայց այդ հողն էլ հիմնականում ընկավ խորտիական ռեժիմի ակտիվ կողմնակիցների ձեռքը, որոնք լրացրին կուլակության շարքերը։

Կապիտալիզմի ժամանակավոր կայունացումը Հունգարիայում

20-ական թվականների կեսերին Հունգարիայում, ինչպես և կապիտալիստական մյուս երկրներում, նկատվում էր էկոնոմիկայի, ֆինանսների, առևտրի որոշ կայունացում։ Դրան նպաստեց այն տերությունների օգնությունը, որոնք չէին ցանկանում տնտեսական դժվարությունների հետևանքով խորտիական ռեժիմի քայքայում։ 1924 թ. Հունգարիան ընդունվեց Ազգերի լիգա և նրա միջոցով ստացավ «կազդուրման փոխառություն» (250 մլն ոսկե կրոն)։ Դրա առյուծի բաժինը ծախսվեց պետական բյուջեի ամրապնդման և պետական պարտքերի մարման համար։ Դրա հետ մեկտեղ զգալիորեն ավելացան բնակչության աշխատավոր խավերի հարկերը։ Միայն այդ միջոցով խորտիականներին հաջողվեց 20-ական թվականների երկրորդ կեսին հասնել պետական բյուջեի դեֆիցիտի վերացմանը։

Շարունակելով Հունգարիան արտաքին քաղաքական մեկուսացումից դուրս բերելու համար փորձերը, հունգարական կառավարողները միաժամանակ փնտրում էին դաշնակիցներ, որոնց օգնությամբ նրանք հույս ունեին որոշ ժամանակ հետո ազատվել Տրիանոնյան պայմանագրից։ Առաջին այդպիսի դաշնակիցներից մեկը դարձավ ֆաշիստական Իտալիան, որը 1927 թ. ապրիլին Հունգարիայի հետ կնքեց բարեկամության պայմանագիր։ Այդ նույն թվականի մայիսին Խորտին ձեռք բերեց մեծ տերությունների համաձայնությունը Բուդապեշտից ետ կանչելու վերահսկիչ հանձնաժողովին, որը հետևում էր Տրիանոնյան պայմանագրի պայմանների կատարմանը, և նրա ֆունկցիաները հանձնելու Ազգերի լիգային։ Իտալական ֆաշիստների օգնությամբ, Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի բացահայտ թողտվությամբ խորտիականներն սկսեցին ակտիվորեն զինվել։

Կապիտալիզմի ժամանակավոր կայունացման տարիներին Հունգարիայում ակտիվացավ Հունգարական կոմկուսի գործունեությունը, որը սովետա-

կան հանրապետության պարտությունից հետո գտնվում էր խոր ընդհատակում և ծանր ճգնաժամ էր ապրել։ 20-ական թվականների կեսերին կուսակցության առողջ ուժերին հաջողվեց հաղթահարել Հունգարիայի կոմունիստական շարժման մեջ եղած ֆրակցիոնությունը և վերսկսել կուսակցական կենտրոնական մարմինների գործունեությունը։ 1925 թ. օգոստոսին Վիեննայում տեղի ունեցավ Հունգարիայի կոմունիստական կուսակցության I համագումարը, որն ամրապնդեց կուսակցության վերականգնումը որպես երկրի հեղափոխական ուժերի մարտական ավանգարդի։ Համագումարը հավանություն տվեց կուսակցության ժամանակավոր ծրագրին, որը կոմունիստներին նպատակամղում էր դեպի հակահեղափոխական ռեժիմի տապալումը, դեմոկրատական հանրապետության հաստատումը և բանվորա-գյուղացիական կառավարության ստեղծման համար մղվող պայքարը։ Կոմկուսն իր առջև անմիջական խնդիր էր դնում նաև պայքարել ժողովրդի քաղաքական ազատությունները վերադարձնելու, աշխատավորության կենսապայմանները բարելավելու, չքավոր գյուղացիներին հող տրամադրելու համար։ Համագումարի օրերին սկսեց հրատարակվել կուսակցության քաղաքական-տեսական «Ույ Մարցիուշ» («Նոր մարտ») ամսագիրը։ Վիեննայում հրատարակվող և ապա անլեգալ հայրենիք ուղարկվող այդ ամսագրում հրապարակված նյութերը նպաստում էին հեղափոխական գաղափարների տարածմանը հունգարական բնակչության մեջ, աշխատավորներին դասակարգային նոր մարտերի կոչում։

20-ական թվականների երկրորդ կեսին կոմունիստներն ու ձախ սոցիալ-դեմոկրատները գլխավորեցին աշխատավորների մի շարք ելույթներ՝ ի պաշտպանություն նրանց կենսական շահերի։

Հունգարիան համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին

Հունգարիան համաշխարհային տնտեսական ճգնաժամի գոտին մտավ ավելի շուտ, քան մյուս երկրները։ Երկրում խորացող ագրարային ճգնաժամը միահյուսվեց էկոնոմիկայի ընդհանուր ցնցման հետ, որն ամբողջ ուժով ծավալվեց 1929 թ.։ Ճգնաժամի տարիները սնանկացման հասցրին տասնյակ ֆիրմաների, որոնք զբաղված էին մետալուրգիայում, մեքենաշինության, սննդի արդյունաբերության մեջ։ Անգործության էր մատնվել մոտ 700 արդյունաբերական ձեռնարկություն։ Արտադրության ընդհանուր մակարդակը գրեթե կրկնակի չափով կրճատվեց։

Առանձնահատուկ աղետային վիճակի մեջ ընկան բնակչության աշխատավոր խավերը։ 1933 թ. մետալուրգ բանվորը ստանում էր 1929 թ. աշխատավարձի միայն կեսը։ Պաշտոնական վիճակագրության տվյալներով գործազուրկների թիվը հասավ Հունգարիայի համար չտեսնված չափերի՝ ավելի քան 800 հազ. մարդու։ Թշվառական գոյությունը դարձավ ոչ միայն արդյունաբերական ու գյուղատնտեսական բանվորների ճնշող մեծամասնության, այլև քայքայված շատ արհեստավորների ու մանր առևտրականների բաժինը։

Բնակչության աշխատավոր խավերի թշվառ դրությունը հասցրեց դասակարգային հակասությունների նոր սրմանը երկրում։ Տնտեսական ճգնաժամի տարիները նշանավորվեցին աշխատավորների փողոցային ցույցերի, ձեռնարկություններում տեղի ունեցած գործադուլների, գյուղացիական ելույթների ալիքով։ Այդտեղ առաջադրվող հիմնական պահանջներն էին՝ գործազրկության վերացում, աշխատավարձի բարձրացում, հողի հանձնումը նրանց, ովքեր այն մշակում են։

1930 թ. փետրվարին կայացավ ՀԿԿ II համագումարը։ Համագումարի ընդունած ծրագիրը օրակարգում դնում էր պայքարը հանուն պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման, 7-ժամյա աշխատանքային օրվա սահմանման, հողազուրկ և սակավահող գյուղացիությանը հողով ապահովելու (կալվածատիրական հողատիրության անհատույց բռնագրավման հաշվին), պայքարը ընդդեմ նոր պատերազմի նախապատրաստման, ի պաշտպանություն ՍՍՀՄ-ի։ Համագումարի ընդունած կուսակցության կանոնադրության հիմքում դրվեց դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը։ Պետք է նշել, որ պրոլետարիատի դիկտատուրայի լոզունգը որպես բանվոր դասակարգի անմիջական խնդիր չէր համապատասխանում օբյեկտիվ իրադրությանը։ Երկրում դեռևս լիովին չէին լուծվել բուրժուա-դեմոկրատական հեղափոխության խնդիրները, իշխում էր դիկտատորական ռեժիմը, բացակայում էր հեղափոխական իրադրությունը։ Հեղափոխական ուժերը դեռ բավականաչափ զորեղ չէին, բանվորական շարժումը շարունակում էր պառակտված մնալ և ապահովված չէր գյուղացիության աջակցությամբ։ Դրա հետ մեկտեղ պրակտիկ գործունեության մեջ կոմկուսը պայքար էր մղում նաև մասսաների անմիջական տնտեսական պահանջների համար։

Կոմկուսի և ձախ սոցիալ-դեմոկրատների ղեկավարությամբ 1930 թ. սեպտեմբերի 1-ին Բուդապեշտում անցկացվեց մասսայական ցույց, որին մասնակցեց մոտ 100 հազ. բանվոր, մանր արհեստավոր, մերձակա գյուղերից ժամանած գյուղացիներ։ Շարժվելով բանվորական արվարձաններից դեպի քաղաքի կենտրոնը, ցուցարարները արձակում էին «Աշխատա՛նք և հա՛ց», «Պահանջում ենք օգնություն գործազուրկների՛ն», «Կեցցե՛ ազատությունը», «Կեցցե՛ Սովետական Միությունը» լոզունգները։ Մի շարք վայրերում հայտնվեցին բարիկադներ, որոնց վրա ահաբեկված բուրժուաները տեսնում էին կարմիր դրոշակներ՝ «1919» պերճախոս թվերով։ Ծայր առան բանվորների և նրանց ընտանիքների անդամների արյունալի գոտեմարտերը ցույցերը ցրելու և բարիկադները վերացնելու համար նետված ժանդարմների, ոստիկանների, զորաջոկատների հետ։ «1930 թ. սեպտեմբերի 1-ին կոմունիստներն ու ձախ սոցիալ-դեմոկրատները,— նշվում է կոմկուսի քառասնամյակի առթիվ ՀՍԲԿ Կենտկոմի թեզիսներում,— համատեղ կազմակերպեցին ու անցկացրին ցույց, որը ալեկոծեց հարյուր հազարավոր մարդկանց և հանդիսացավ հունգարական պրոլետարիատի սքանչելի մարտական սխրանքը, որն ունեցավ նաև միջազգային նշանակություն»[2]։

Աշխատավորների մասսայական ելույթներին կառավարող դասակարգերը պատասխանում էին տեռորով ու բռնություններով։ 1931 թ. սեպտեմբերին բանտարկվեցին ավելի քան հազար բանվորներ, որոնք պրովոկացիոն կերպով մեղադրվեցին Բիատորբադայի մոտ տեղի ունեցած երկաթուղային աղետի կազմակերպմանը մասնակցելու մեջ, աղետ, որի իսկական մեղավորները պահնորդական բաժինն էր և իշխանությունները։ Բալմազույվարոշում և Նիրտուրում պատժիչ զորքերը հրետանային հրանոթներով գնդակոծեցին բանվորական բարիկադները։ 1932 թ. հուլիսին բանտ նետվեցին և դաժան տանջանքներից հետո մահապատժի ենթարկվեցին ՀԿԿ Կենտկոմի քարտուղարներ Իմրե Շալլաին և Շանդոր Ֆյուրշտը, որոնց չարագործ սպանությունը ամբողջ Եվրոպայում զայրույթի ալիք առաջացրեց։

Տնտեսական ու քաղաքական ճգնաժամից ելքը, որի մեջ ընկել էր երկի-

[2] Հունգարիայի կոմունիստական կուսակցության 40-րդ տարեդարձի առթիվ։ «Новая и новейшая история», 1959, № 1, էջ 160։

ը, Հունգարիայի կառավարող շրջանները փնտրում էին խորտիական ռեժիմի տոտալիտար գծերի ուժեղացման մեջ։ 1932 թ. սեպտեմբերին իշխանության գլուխ անցավ այսպես կոչված «ուժեղ ձեռքի» կառավարությունը՝ գեներալ Դյուլա Գեմբեշի գլխավորությամբ։ Հռչակված «հունգարական ազգի վերածնության» շովինիստական ծրագիրը իրականում եղավ բուրժուական ազատությունների վերջին մնացորդների վերացման ծրագիր։

Հունգարիայի մերձեցումը հիտլերյան Գերմանիայի հետ։ Հունգարական աշխատավորության պայքարը ֆաշիզմի ու պատերազմի դեմ

Գերմանիայում ֆաշիստների իշխանության գլուխ անցնելուց հետո խորտիականներն իրենց հայացքն ավելի ու ավելի հաճախակի են հառում Բեռլինի կողմը։ Հիտլերականների ծայրահեղ ռեակցիոն ներքին ծրագիրը, արտաքին քաղաքականության ասպարեզում բացահայտ էքսպանսիոնիստական նպատակների հռչակումը չափազանց դուր էին գալիս հունգարական կառավարողներին, որոնք հույս ունեին գերմանական իմպերիալիստական գիշատչի օգնությամբ իրականացնել տերիտորյալ զավթումների սեփական պլանները և ամրապնդել կառավարող դասակարգերի դիրքերը երկրի ներսում։ 1933 թ. հունիսին պրեմիեր մինիստր Գեմբեշը Եվրոպայի պետական գործիչների մեջ առաջիններից մեկը անձամբ Բեռլին ժամանեց, որպեսզի հայտնի նացիստական Գերմանիայի հետ սերտ համագործակցելու Հունգարիայի պատրաստակամության մասին։ Հաջորդ տարիներին տեղի է ունենում Հունգարիայի՝ ֆաշիստական Գերմանիայի կամակատարի վերածման ինտենսիվ պրոցես։ 30-ական թվականների վերջին Հունգարիան խճճվեց տնտեսական ու քաղաքական համաձայնագրերի մի ամբողջ ցանցով, որոնք նրա նյութական ու մարդկային ռեսուրսներն ի սպաս էին դնում գերմանական ռազմական մեքենային։

Հունգարիայի՝ նացիստական Գերմանիայի վասալի վերածումն ուղեկցվում էր երկրի միլիտարիստական հետագա ուժեղացմամբ։ Հունգարիայի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը նպատակամղելով դեպի պատերազմի նախապատրաստությունը, մոնոպոլիստներն ու կալվածատերերը հույս ունեին նման միջոցով տնտեսությունը դուրս բերել ճգնաժամից և ավելացնել իրենց շահույթները։ Դա որոշակի չափով հաջողվեց. եթե 1932 թ. արդյունաբերական արտադրանքի ինդեքսը (1929 թ.=100) հավասար էր 81,9, ապա 1937 թ. այն բարձրացավ մինչև 129,5։ Ռազմական կոնյունկտուրան հնարավորություն տվեց մի փոքր պակասեցնել գործազրկությունը և ավելացնել բանակչության զբաղվածությունը։ 1938 թ. գարնանը նոր պրեմիեր մինիստր Դարանյին հռչակեց սպառազինությունների հնգամյա ծրագիրը, որի իրականացման համար բաց էր թողնվում հունգարական մասշտաբներով մի վիթխարի գումար՝ 1 մլրդ պենգե։

Պրեմիեր Կալման Դարանյիի (1936—1938 թթ.) անվան հետ է կապված այնպիսի ռեակցիոն որոշումների ընդունումը, ինչպես 1937 թ. ընտրական օրենքը, որն ընտրական ձայնի իրավունքից զրկում էր ավելի քան 1 մլն բանվորների ու գյուղացիների և միաժամանակ պառլամենտում տեղեր էր հատկացնում ուլտրառեակցիոն «խաչված նետեր» ազգային-սոցիալիստական կուսակցությանը, որը հանդես էր գալիս որպես Հունգարիայում հիտլերականների առավել կատաղի հետևորդ, Խորտիի դիկտատորական լիազորությունների ընդլայնման մասին օրենքը, հակասեմիտական օրենքների սերիան, որոնք հունգարական հրեաներին զրկում էին սոցիալական ու քաղաքական տարրական իրավունքներից և այլն։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի առաջացրած ցնցումները, աշխատավորների իրավունքների վրա տիրող դասակարգերի հետագա հարձակումը, ֆաշիզմի ամենածայրահեղ ձևերի հաստատման սպառնալիքը հունգարական կոմունիստներից պահանջում էին ուսումնասիրել իրադրությունը, հաղթահարել աղանդավորական սխալները սոցիալ-դեմոկրատիային ցույց տված վերաբերմունքի մեջ, առաջադրել նոր խնդիրներ։

Նոր պայմաններում կոմկուսը որպես գլխավոր խնդիր նշեց հակաֆաշիստական լայն ճակատի ստեղծումը, որն ընդունակ լիներ հանդես գալու ընդդեմ ֆաշիզմի և պատերազմի։ Այդ նպատակով 1934 թ. հունիսին ՀԿԿ ղեկավարությունը դիմեց սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը և արհմիություններին՝ առաջարկելով կնքել բանվորական կուսակցությունների միասնական գործողությունների համաձայնագիր որպես հիմք հակաֆաշիստական ճակատի ստեղծման համար։ ՍԴԿ աջ ղեկավարության կողմից կոմկուսի առաջարկության մերժումը եղավ այն բանի գլխավոր պատճառը, որ Հունգարիայում նախապատերազմյան տարիներին այդպես էլ չստեղծվեց Ժողովրդական հակաֆաշիստական ճակատ։

Բայց այնուամենայնիվ կյանքն իրենն էր անում։ Հակառակ ՍԴԿ ղեկավարության պառակտչական դիրքի, բազմաթիվ շարքային սոցիալ-դեմոկրատներ դիմում էին կոմունիստների հետ մերձեցմանը, մասնակցելով խորտիական ռեժիմի դեմ ուղղված համատեղ ելույթներին։ 1934 թ. հոկտեմբերին կոմունիստներն ու ձախ սոցիալ-դեմոկրատները համատեղ գլխավորեցին, օրինակ, Պեշի հանքափորների գործադուլը, որին մասնակցում էր մոտ 4 հազ. մարդ։ 1935 թ. ամռանը գործադուլ արեցին մայրաքաղաքի շինարար բանվորները։ Աշնանը գործադուլները տարածվեցին գավառում, ընդգրկելով Դեբրեցեն, Նիրեձխազու, Սոմբատխեյ, Սեգեդ և այլ քաղաքներ։ Գործադուլավորները պահանջում էին բարելավել աշխատանքի պայմանները, բարձրացնել աշխատավարձը, տրամադրել խոսքի, մամուլի, ժողովների ազատություն, օգնություն ցույց տալ գործազուրկներին, ազատել քաղաքական բանտարկյալներին։ Մի շարք տնտեսական գործադուլներ ավարտվեցին բանվորների հաղթանակով։

Հակաֆաշիստական լայն Ժողովրդական ճակատի ստեղծման համար Հունգարիայի կոմունիստական կուսակցության մղած պայքարի ուժեղացմանը նպաստեցին Կոմինտերնի VII կոնգրեսի որոշումները։ Այդ որոշումների ազդեցությամբ կոմունիստներն ավելի ակտիվորեն էին կապերի մեջ մտնում ձախ սոցիալ-դեմոկրատների հետ, ընդլայնում կապերը արհմիությունների, առաջադեմ մտավորականության հետ, համագործակցություն հաստատում հակակառավարական օպոզիցիայի այն շրջանների հետ, որոնք հանդես էին գալիս աճող ռազմական սպառնալիքի դեմ։ 1937 թ. ապրիլից կոմկուսը սկսեց հրատարակել «Դոլգոզոկ լապյա» («Աշխատավորների թերթ») անլեգալ թերթը, որը մերկացնում էր խորտիզմի ռեակցիոն ներքին ու արտաքին քաղաքականությունը, կոչ անում բոլոր դեմոկրատական ուժերը համախմբել ֆաշիզմի դեմ մղվող պայքարում։

Երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին ֆաշիստական Գերմանիայի օգնությամբ Հունգարիան կատարեց մի շարք տերիտորյալ զավթումներ, որոնք նրան ամուր կապեցին գերմանական իմպերիալիզմի մարտակառքին։ 1938 թ. աշնանը ի երախտագիտություն Չեխոսլովա-

կիայի անդամահատման ժամանակ Գերմանիային ցույց տված աջակցության, Հունգարիան ստացավ Սլովակիայի և Անդրկարպատյան Ուկրաինայի հարավային մասը։ 1939 թ. հունվարին Հունգարիան պաշտոնապես միացավ հակասովետական «հակակոմինտերնական պակտին»։ 1939 թ. մարտին Բեռլինի աջակցությամբ Հունգարիան զավթեց ամբողջ Անդրկարպատյան Ուկրաինան։

Կանգնելով հիտլերյան Գերմանիայի ագրեսիվ ձգտումներին աջակցություն ցույց տալու ուղու վրա, Հունգարիայի ռեակցիոն կառավարողները երկիրը ներգրավեցին պատմության մեջ ամենաարյունահեղ պատերազմի հորձանուտի մեջ։

ԳԼՈՒԽ 13

ՌՈՒՄԻՆԻԱՆ 1918—1939 ԹԹ.

Հեղափոխական վերելքի տարիները (1918—1921 թթ.)

Ռումինիան պատկանում է այն երկրների թվին, որոնք իրենց վրա զգացին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության անհապաղ և անմիջական ազդեցությունը։ Օկուպացիայից ազատ նրա արևելյան մարզերում հեղափոխական պայքարի վերելքը հատկապես ակտիվ էր։ Ռուսաստանի հարավի և Ռումինիայի սահմանային մարզերի աշխատավորության համատեղ հեղափոխական ելույթները ոչ քիչ չափով նպաստեցին այն բանին, որ արդեն 1918 թ. սկզբին Ռուսաստանում բռնկված հեղափոխական պայքարի կրակը, Վ. Ի. Լենինի խոսքերով, տարածվեց Ռումինիայում։

Հեղափոխական հրդեհի կայծերը պարարտ հողի վրա ընկան։ Բուրժուա-կալվածատիրական Ռումինիան 20-րդ դարի սկզբին եվրոպական հետամնաց երկրներից մեկն էր՝ արդյունաբերական զարգացման ցածր մակարդակով, արդյունաբերության մի քանի ճյուղերում (այնպիսին, ինչպիսին էր նավթի հանույթը) օտարերկրյա կապիտալի բռնադատմամբ, խոշոր կալվածատիրական հողատիրության և չլուծված սոցիալական պրոբլեմների մի ամբողջ կոմպլեքսի առկայությամբ հանդերձ։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին աշխատավորների վատացած տնտեսական դրությունը և գերմանական օկուպացիայի ծանրությունը հասցրին հասարակական հակասությունների հետագա խիստ սրմանը։ Երկրում աստիճանաբար հասունանում էին հեղափոխության օբյեկտիվ նախադրյալները։ Նրա առաջին ավետաբերները եղան երկրի արևելյան մարզերի (Մոլդովայի) գյուղացիների ելույթները 1917 թ. աշնանը, երկաթուղային բանվորների գործադուլային շարժման վերելքը և, վերջապես, 1918 թ. հունվարին բռնկված ծովայինների ապստամբությունը ռումինական ռազմածովային և առևտրական նավատորմի նավերում, որոնք կանգնած էին Ռուսաստանի և Ռումինիայի նավահանգստներում։

Հեղափոխության հանդեպ վախով համակված Ռումինիայի կառավարող վերնախավը շտապեց զինադադար կնքել Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ։ Դրանից հետո ռումինական կառավարությունը բոլոր ուժերը նետեց ռումինական աշխատավորների հեղափոխական շարժումները և ռումինական ռազմաճակատում կանգնած ռուսական բանակների հեղափոխական զինվորներին ճնշելու համար։ 1918 թ. սկզբին չնայած Սովետական Ռուսաստանի կառավարության բազմիցս բողոքներին, ռումինական զինվորականությունը ներխուժեց սովետական տերիտորիա՝ Բեսարաբիա և զենքի ուժով այնտեղ ճնշեց սոցիալիստական հեղափոխության նվաճումները։ Սկզբնապես բուրժուա-կալվածատիրական Ռումինիայի կառավարող շրջանները Բեսարաբիայի օկուպացիան նույնիսկ իրենք էին ընդունում որպես ժամանակավոր երևույթ։ 1918 թ. փետրվարի 20—24 (մարտի 5—9) սովետա-ռումինական համաձայնագրի հիման վրա Ռումինիան պարտավորվում էր երկու ամսվա ընթացքում

զորքերը դուրս բերել Բեսարաբիայից։ Սակայն 1918 թ. գարնանը Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի հետ կնքելով Բուխարեստի սեպարատ հաշտություն, ռումինական ռեակցիան փորձեց այդ ագրեսիվ ակտը հավերժացնել Բեսարաբիան Ռումինական թագավորության կազմի մեջ մտցնելով։

Հաշտություն կնքելով, Ռումինիան դուրս եկավ պատերազմից, բայց նրա դրությունը չափազանց ծանր էր։ 845 արդյունաբերական ձեռնարկություններից գործում էր ընդամենը մոտ երկուհարյուրը։ Խիստ կրճատվեցին ցանքատարածությունները։ Հետպատերազմյան քայքայվածությունը ծանր ձևով էր արտահայտվում աշխատավորների լայն խավերի դրության վրա։

Ավստրո-Հունգարիան համակած ընդհանուր ճգնաժամի պայմաններում ուժեղացավ այնտեղ բնակվող ժողովուրդների, այդ թվում նաև Տրանսիլվանիայի ռումինական աշխատավորության ազատագրական շարժումը։ 1918 թ. աշնանը Տրանսիլվանիայում սկսվեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն, առաջադրվեցին քաղաքական ու սոցիալական խոր վերափոխությունների իրականացման պահանջներ։ Արադում, Կլուժում, Բրաշովում, Տիմիշոարայում տեղի ունեցան աշխատավորության մասսայական ելույթներ, տեղերում ստեղծվում էին իշխանության հեղափոխական մարմիններ՝ սովետներ։ Այդ օրերին հեղափոխական շարժումն ուժեղացավ նաև Ռումինիայի մի շարք այլ քաղաքներում և ամենից առաջ Բուխարեստում։ «Իրոք, տեղի են ունեցել հսկայական կարևորություն ունեցող իրադարձություններ,— գրում էր Վ. Ի. Լենինը,— բանվորական դեպուտատների սովետներ են կազմվել Ռումինիայում և Ավստրո-Հունգարիայում»[1]։

1918 թ. դեկտեմբերի 1-ին (նոր տոմարով) Ալբա Յուլիա քաղաքում կայացած ժողովրդական մասսայական ժողովում առաջադրվեց Տրանսիլվանիան Ռումինիայի հետ միավորելու պահանջ։ Տրանսիլվանիան համակած հեղափոխական վերելքի պայմաններում աշխատավորները ենթադրում էին, որ միավորումն իրականացվելու է դեմոկրատական հանրապետության շրջանակներում։ Սակայն միավորման շարժումն սկզբից ևեթ գլխավորեցին բուրժուազիայի նացիոնալիստական շրջանների պարագլուխները, որոնք ոչ քիչ ջանքեր գործադրեցին, որպեսզի ճնշեն աշխատավոր մասսաների հեղափոխական շարժումը և ապահովեն բուրժուա-կալվածատիրական կարգերի և միապետության անվտանգությունը։

1919 թ. սկզբին բացված Փարիզի հաշտության կոնֆերանսում թագավորական Ռումինիայի կառավարողները տերիտորյալ պահանջներ ներկայացրին ոչ միայն իսկապես ռումինացիներով բնակված հողերի, այլև 1918 թ. նոյեմբերին իրենց օկուպացրած Հյուսիսային Բուկովինայի ուկրաինական, Տիսսա գետի երկայնքի հունգարական, Արևմտյան Բանատի սերբական, Հարավային Դոբրուջայի բուլղարական հողերի նկատմամբ։

Արևմտյան տերությունները հնարավոր համարեցին բավարարել թագավորական Ռումինիայի տերիտորյալ մի շարք, ինչպես հիմնավորված, այնպես էլ բացահայտ զավթողական հավակնությունները։

Հետպատերազմյան հաշտության պայմանագրերի համաձայն, Ռումինիային տրվեցին Տրանսիլվանիան, Բուկովինան և Դոբրուջան (ներառյալ Հյուսիսային Բուկովինայի և Հարավային Դոբրուջայի անօրինականորեն օկուպացված տերիտորիաները)։ Մի փոքր ավելի ուշ, 1920 թ. հոկտեմբերին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչները ստորագրեցին Ռումինիայի կողմից Բեսարաբիայի զավթումը ճանաչելու վերաբերյալ համաձայնագիր, որը, սակայն, չվավերացվելով նրա բոլոր մասնակիցների կողմից, այդպես էլ ուժի մեջ չմտավ։ Դրա հետևանքով Ռումինիայի տերիտորիան աճեց ավելի քան կրկնակի՝ 138-ից մինչև 295 հազ. կմ², իսկ նրա բնակչությունը՝ 1915 թ. 7,8 մլնից մինչև 16 մլնի՝ 1920 թ.։

Պաշտպանելով ռումինական ռեակցիայի պահանջները, արևմտյան տերությունները Ռումինիային օգտագործում էին որպես ամրակետ Սովետական Ռուսաստանի դեմ և Ավստրո-Հունգարիայի փլուզման հետևանքով կազմավորված պետություններին համակած հեղափոխական շարժման դեմ։ 1919 թ. ռումինական զորքերը ակտիվորեն մասնակցեցին Հունգարական սովետական հանրապետության դեմ Անտանտի կազմակերպած ինտերվենցիային։ Հաջորդ տարիներին բուրժուա-կալվածատիրական Ռումինիան գործուն մասնակցություն ունեցավ մի շարք արտաքինքաղաքական դաշինքների ստեղծմանը, որոնք ուղղակի կամ անուղղակի ուղղված էին Սովետական Ռուսաստանի դեմ (1921 թ. ռումինա-չեխական պայմանագիրը, 1921 թ. ռումինա-չեխոսլովակա-հարավսլավական պայմանագրերը և այլն)։ Այդ դաշինքները պաշտպանություն գտան և ակտիվորեն օգտագործվում էին արևմտյան տերությունների և առաջին հերթին իմպերիալիստական Ֆրանսիայի ռեակցիոն կառավարական շրջանների կողմից։

Ռումինական ռեակցիան դաժան հաշվեհարդար էր տեսնում իր սեփական երկրի հեղափոխական շարժման հետ։

1918 թ. նոյեմբերին գերմանական օկուպացիոն զորքերի հեռանալուց հետո Ռումինիայի աշխատավորության պայքարն ընդունեց բացահայտ հարձակողական բնույթ։ Լեգալ դրության անցավ օկուպացիայի ժամանակաշրջանում արգելված սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որն իր ստորին կազմակերպությունների հեղափոխական մեծամասնության պահանջով 1918 թ. նոյեմբերից սկսեց կոչվել սոցիալիստական։ 1918 թ. դեկտեմբերի 13 (26)-ին Բուխարեստի՝ ձախ սոցիալիստների գլխավորած բանվորները ցույցի դուրս եկան «Կեցցե՛ սոցիալիզմը», «Կեցցե՛ հանրապետությունը», «Կորչի՛ թագավորը», «Կորչի՛ բուրժուազիան» լոզունգներով։ Զորքերը հրաման ստացան կրակել բանվորների վրա։ Արյունալի հաշվեհարդարի արդյունքը եղան հարյուրավոր սպանվածները, վիրավորներն ու ձերբակալվածները, որոնցից շատերը զոհվեցին բանտերում։ Սակայն հեղափոխական շարժման վերելքը դրանով չկանխվեց։

1919 թ. գարնանն ու ամռանը տեղի ունեցան Ռումինիայի աշխատավորության մի շարք նոր ելույթներ, դրանց թվում նաև 1919 թ. հուլիսի 21-ի ընդհանուր քաղաքական գործադուլը, որն անցկացվեց Կոմունիստական ինտերնացիոնալի կոչով՝ ի նշան բողոքի ընդդեմ հակահեղափոխական ինտերվենցիայի Սովետական Ռուսաստանում և Հունգարիայում։ Ռումինիայի բանվորական ու դեմոկրատական շարժման ինտերնացիոնալիստական ավանդույթների պատմության մեջ փառավոր էջ գրեց ռումինական աշխատավոր կամավորների մասնակցությունը Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանությանը։

Հետպատերազմյան առաջին տարիներին Ռումինիայի իշխող դասակարգերի դրությունը անկայուն էր։ Բուրժուա-կալվածատիրական կառավարություններին չէր հաջողվում կանգնեցնել հեղափոխական շարժման վերելքը և գլուխ հանել արտաքինքաղաքական դժվարություններից։ 1918 թ. նոյեմբերից մինչև 1922 թ. հունվարը երկրում փոխվեց 7 պրեմիեր մինիստր։ Չնա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 243։

յած տիրող դասակարգերի խուսանավմանը՝ 1918 թ. դեկտեմբերին հռչակված ընտրական իրավունքի ռեֆորմը, ագրարային ռեֆորմ անցկացնելու խոստումները, 1918—1919 թթ. ձեռնարկությունների մեծ մասում 8-ժամյա աշխատանքային օր մտցնելը,— բանվորների և գյուղացիների հեղափոխական պայքարի վերելքն աճում էր։ 1920 թ. հոկտեմբերին երկիրը ցնցեց ընդհանուր գործադուլը, որին, չնայած սոցիալիստական կուսակցության աջ պարագլուխների հորդորանքներին, մասնակցեց Ռումինիայի պրոլետարիատի մեծամասնությունը (մոտ 400 հազ. մարդ)։ Այդ գործադուլի պարտությունը հասցրեց Ռումինիայի պրոլետարիատի կողմից նախկինում ձեռք բերած նվաճումների զգալի մասի կորստին, մասնավորապես աշխատանքային օրն ամենուրեք երկարաձգվեց։ Հիմնական դասը, որ ռումինական բանվոր դասակարգը քաղեց 1920 թ. ընդհանուր գործադուլի փորձից, իր հեղափոխական կուսակցության ստեղծման անհրաժեշտությունն էր։ Ռումինական սոցիալիստական կուսակցության ձախ թևի խնդիրների որոշման գործում մեծ նշանակություն ունեցավ 1920 թ. նոյեմբերին ռումինական սոցիալիստների այցելությունը Սովետական Ռուսաստան։ Պատվիրակների խումբն ընդունվեց Վ. Ի. Լենինի կողմից։

1921 թ. մայիսին հիմնադրվեց Ռումինիայի կոմունիստական կուսակցությունը (ՌԿԿ I համագումար)։ Բանվորական շարժման սկզբունքային հարցերի քննարկումից հետո համագումարը ձայների գերակշռող մեծամասնությամբ արտահայտվեց անվերապահորեն III Ինտերնացիոնալին միանալու օգտին։ ՌԿԿ հիմնադիր համագումարը չկարողացավ ավարտել իր աշխատանքը։ Մայիսի 13-ին ոստիկանությունը շրջապատեց այն շենքը, որտեղ տեղի էին ունենում համագումարի նիստերը, և նրա դելեգատները, որոնք կանգնած էին Կոմունիստական ինտերնացիոնալի դիրքերի վրա, ձերբակալվեցին։ Սակայն ոստիկանական հաշվեհարդարը չոչնչացրեց երիտասարդ կոմունիստական կուսակցությանը։ Նրա առաջացմամբ Ռումինիայի բանվորական շարժման մեջ նոր էտապ սկսվեց։

Սոցիալիստական կուսակցության օպորտունիստական թևը երկար ժամանակ չէր կարողանում համախմբել իր շարքերը։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը վերաստեղծվեց միայն 1927 թ.։

Կապիտալիզմի մասնակի ժամանակավոր կայունացումը Ռումինիայում (1922—1928 թթ.)

20-ական թվականների կեսերին Ռումինիայում ավելացավ արդյունաբերության հիմնական ճյուղերի արտադրության ծավալը, հիմնվեցին նոր ձեռնարկություններ։ Տնտեսական այդ աշխուժացումն զգալի չափով պայմանավորված էր առաջին համաշխարհային պատերազմից հետո Ռումինիայի տերիտորյալ ընդարձակմամբ, որի հետևանքը եղավ երկրի արդյունաբերական պոտենցիալի մեծացումն ավելի քան 2 անգամ։ 20-ական թվականների տնտեսական վերելքի կարևոր աղբյուրներից մեկը նաև աշխատավորության շահագործման ուժեղացումն էր, աշխատավորություն, որն այդ ժամանակ կորցրել էր իր սոցիալական նվաճումների զգալի մասը։ Երկրի տնտեսական զարգացման գործում էական դեր խաղաց դեռ 1918—1921 թթ. դեկրետավորված ագրարային ռեֆորմի իրականացումը, որը նպաստեց գյուղացիության հետագա շերտավորմանը և գյուղի կապիտալիստական վերնախավի ամրապնդմանը։

Ռումինիայի էկոնոմիկայի աճը ուղեկցվում էր քաղաքական դրության կայունացմամբ։ 1922—1926 թթ. իշխանության գլուխ էր կանգնած առավել խոշոր բուրժուա-կալվածատիրական քաղաքական կուսակցության՝ ազգային-

լիբերալ կուսակցության (պրեմիեր մինիստր՝ կուսակցության նախագահ Ի. Բրետիանու) կառավարությունը։ Ազգային-լիբերալ կուսակցությունն իր շարքերում միավորում էր «հին թագավորության», այսինքն՝ իր նախապատերազմյան սահմաններով Ռումինիայի բուրժուազիայի ու կալվածատերերի հիմնական խավերին։ Դեռ XIX դարի վերջին ստեղծված այդ կուսակցությունը առաջին համաշխարհային պատերազմից հետո ամրապնդեց իր դրությունը, որը վիթխարի չափով պայմանավորված էր օտարերկրյա և ռումինական մոնոպոլիստական ազդեցիկ միավորումների հետ նրա պարագլուխների աճած կապերով։ Այն ժամանակվա ռումինական թագավոր Ֆերդինանդի խոսքերի համաձայն, Բրետիանու ազգային-լիբերալ պարագլուխների ընտանիքը երկրում կազմել էր «երկրորդ դինաստիան»։ Ազգային-լիբերալների անցկացրած առավել կարևոր քաղաքական ռեֆորմը 1923 թ. մարտին ընդունված սահմանադրությունն էր, որը ձևականորեն հռչակում էր դեմոկրատական իրավունքներ ու ազատություններ. իրականում այդ իրավունքները էականորեն սահմանափակվեցին. սահմանադրությունը նախատեսում էր, օրինակ, թագավորի իրավունքը՝ միանձնաբար ցրելու իրեն անձեռնտու պառլամենտը։

20-ական թվականների երկրորդ կեսին կառավարող լագերում ուժեղացավ օպոզիցիան ընդդեմ ազգային-լիբերալ կուսակցության կուրսի։ 1926 թ. գարնանը Ռումինիայի հին մարզերի ցարանիստական («գյուղացիական») կուսակցության և Տրանսիլվանիայի ազգային կուսակցության միավորման հետևանքով ստեղծվեց նացիոնալ-ցարանիստական խոշոր օպոզիցիոն կուսակցությունը։ Ինչպես և ռումինական մյուս քաղաքական կուսակցությունները, գլխավորվելով խոշոր մոնոպոլիստների ու խոշոր կալվածատերերի կողմից, նացիոնալ-ցարանիստական կուսակցությունն ուներ այն առանձնահատկությունը, որ նրա շարքերն ընդգրկվեցին ազգայնական և իբր պրոգյուղացիական դեմագոգիկ լոզունգներով խաբված ռումինական գյուղացիության լայն խավերը։ 1928 թ. նոյեմբերին նացիոնալ-ցարանիստական կուսակցությունը առաջին անգամ անցավ իշխանության գլուխ։ Հետագայում նրա գաղափարախոսությունը և քաղաքականությունը էական ազդեցություն գործեցին Ռումինիայի սոցիալական ու քաղաքական պայքարի զարգացման վրա։

Տիրող դասակարգերին չհաջողվեց կանխել աշխատավորության պայքարը նաև մասնակի կայունացման ժամանակաշրջանում։ 20-ական թվականների կեսերին բազմիցս գործադուլ արեցին Մուրեշի հովտի անտառահատները, Ռեշիցայի մետալուրգները, Բուխուշի տեքստիլագործները։ Աշխատավորության խոշորագույն ելույթը, որն իր կնիքը դրեց այն ժամանակվա քաղաքական պայքարի ընդհանուր մակարդակի վրա, Թաթարբունարյան ապստամբությունն էր օկուպացված Բեսարաբիայում (1924 թ. սեպտեմբեր), որը տեղի ունեցավ բանվորա-գյուղացիական սովետների ստեղծման և Սովետական Ռուսաստանի հետ Բեսարաբիայի վերամիավորման լոզունգների ներքո։

Ռումինիայի աշխատավորության գաղափարական առաջնորդը և նրա մղած պայքարի գլխավոր ոգեշնչողը ՌԿԿ-ն էր, որը մշտական ու դաժան բռնություններ էր ենթարկվում։ 1924 թ. ապրիլին կոմունիստական կուսակցությունն արգելվեց։ Հակակոմունիստական «Միրզեսկուի օրենքը» բանտարկություն էր նախատեսում կոմունիստական գաղափարներ պրոպագանդելու համար։ Հարկադրված լինելով ընդհատակ անցնելու, կոմունիստական կուսակցությունն իր ջանքերն ուղղեց աշխատավորության հետագա ելույթների կազմակերպմանը, ընդ որում զուգակցելով գործունեության լեգալ ու անլեգալ ձևերը։ 1925 թ. նա ստեղծեց աշխատավորների լեգալ կազմակերպություն՝

բանվորա-գյուղացիական բլոկը, որի խնդրի մեջ էր մտնում պայքարն ընդդեմ ոստիկանական տեռորի, հանուն քաղաքական բանտարկյալների ներման, հանուն ազատ ընտրությունների անցկացման, 8-ժամյա աշխատանքային օրվա, հանուն հողազուրկ ու սակավահող գյուղացիներին հող տալու, պրոգրեսիվ եկամտահարկ սահմանելու, ինչպես նաև ընդդեմ Բեսարաբիայի բռնի գաղութացման։ 20-ական թվականների երկրորդ կեսին մասնակի կայունացումն սկսեց երևալ։ Արդյունաբերության մի շարք ճյուղերում սկսվեց արտադրության անկումը, երևան եկան ագրարային ճգնաժամի խորացման նշանները, վատացավ ֆինանսական դրությունը։ Կապիտալիստական ամբողջ աշխարհի հետ Ռումինիան հայտնվեց ճգնաժամի դեմ հանդիման։

Տնտեսական ճգնաժամը (1929—1933 թթ.)

1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամը, որն իր ամբողջ ծանրությամբ ընկավ Ռումինիայի, ինչպես և կապիտալիստական մյուս երկրների վրա, շոշափեց նրա էկոնոմիկայի բոլոր հիմնական ճյուղերը։ Արդյունաբերական ու գյուղատնտեսական ապրանքների գներն ընկան միջին հաշվով երկու անգամ, որը հասցրեց արտադրության խիստ անկմանը։ 1933 թ. հիմնական կուլտուրաների ցանքատարածությունները կազմեցին սովորական մակարդակի ընդամենը 30—40 տոկոսը, ընդ որում ցանվում էր հիմնականում եգիպտացորեն՝ գյուղացիական սննդի գլխավոր և գրեթե միակ մթերքը։ Արտադրությունը կրճատվեց նաև արդյունահանման ու մշակման մի շարք ճյուղերում՝ քարածխի, լեռնահանքային, սննդի, տեքստիլ, մետաղամշակման ճյուղերում։ Բացառություն կազմեց նավթի հանույթը, որը ճգնաժամի տարիներին աճեց 4,8-ից մինչև 7,3 մլն տոննայի։ Ներքին ու համաշխարհային շուկաներում նավթի ու նավթամթերքի գների խիստ անկման պայմաններում արտադրության աճը ձեռք բերվեց գլխավորապես նավթագործ բանվորների շահագործման ուժեղացման հաշվին։ Արդյունաբերական ու գյուղատնտեսական ճգնաժամերը սերտորեն միահյուսվեցին ֆինանսականի հետ։ 1928 թ. մինչև 1931 թ. ավելի քան 8 անգամ աճեց արդյունաբերական ու բանկային ձեռնարկությունների սնանկացումների թիվը։ Ի թիվս այլոց կրախի մատնվեց նաև Ռումինիայի խոշորագույն բանկերի վեցյակից մեկը՝ «Մարամորոշ Բլանկ և Ընկ.»։

1928 թ. մինչև 1933 թ. իշխանության գլուխ կանգնած նացիոնալ-ցարանիստների կուսակցությունը փորձում էր ճգնաժամից ելք գտնել ստրկական պայմաններով օտարերկրյա փոխառություններ ստանալու և ազգային եկամտի հիմնական աղբյուրները կոնցեսիայով հանձնելու միջոցով։ Նացիոնալ-ցարանիստական կառավարությունները լայն հարձակում ծավալեցին աշխատավորների կենսամակարդակի վրա, «ազգի շահերի օգտին» առաջադրելով դեմագոգիական «քաղաքացիական ու բարոյական ծրագիրը»։ Դրա գործնական արդյունքը եղավ երեք «զոհաբերական շեղագծերի» կենսագործումը (1931, 1932 և 1933 թթ.), որոնք պաշտոնապես իջեցնում էին աշխատավարձի մակարդակը և զգալիորեն վատացնում աշխատավորների դրությունը։

Ճգնաժամի ընթացքում ուժեղացան ռեակցիայի դիրքերը։ Արևմուտքի երկրների ուղղակի աջակցությամբ Ռումինիա վերադարձվեց 1925 թ. այնտեղից վտարված, մահացած Ֆերդինանդ թագավորի որդին՝ արքայազն Կարոլը, որը 1930 թ. հունիսին թագադրվեց Կարոլ II անվամբ։ Տիրելով երկրում ամենախոշոր հողատարածությունների, Կարոլ II, բացի այդ, իր ձեռքում կենտրոնացրեց ռումինական ու օտարերկրյա խոշորագույն բանկերի ու արդյունաբերական ձեռնարկությունների մոտ 4 մլն բաժնետոմս։ Նրա իշխանության գլուխ անցնելը նպաստեց ներքին ռեակցիայի ուժերի ակտիվացմանը։

Տիրող դասակարգի փորձերը՝ ճգնաժամից ելք գտնել աշխատավորների կենսամակարդակի իջեցման հաշվին, վերջիններիս կողմից հակահարված առաջացրին։ Դեռ 1929 թ. գործադուլների, նրանց մասնակիցների թվաքանակը և կորցված աշխատանքային օրերի քանակը ավելի քան երկու անգամ գերազանցեցին 1927 և 1928 թթ. համապատասխան ցուցանիշները։ Այդ ժամանակվա Ռումինիայի բանվոր դասակարգի առավել նշանակալից ելույթը եղավ Լուպենի հանքագործների գործադուլը (1929 թ. օգոստոս), որի դեմ զորքեր հանվեցին։ Սովետական «Պրավդա» թերթը լուպենյան իրադարձություններն անվանեց «Լենայի գնդակոծություն Ռումինիայում»։ Պայքարից մի կողմ կանգնած չմնացին նաև գյուղացիները։ Սովից ու կարիքից հուսահատության հասցված՝ նրանք խուժում էին կալվածատիրական տիրույթները, ինքնակամ կտրում պետական անտառը, հրաժարվում հարկեր ու տուրքեր վճարել։ Շատ դեպքերում գյուղացիները ոստիկանության ու ժանդարմերիայի հետ մարտի մեջ էին մտնում։ 1933 թ. հունվարին ստեղծվեց գյուղացիության «Հողագործների ճակատ» մասսայական դեմոկրատական կազմակերպությունը, որի անփոփոխ ղեկավարը եղավ հետագայում Ռումինիայի ականավոր պետական գործիչ դարձած Պ. Գրոզան։

Ռումինիայի կոմունիստական կուսակցությունը ճգնաժամի տարիներին զարգանում ու ամրապնդվում էր օպորտունիստական ու աղանդավորական հոսանքների դեմ մղած պայքարում։ Ընդհատակի պայմաններում դրանք լուրջ վնաս էին հասցնում կուսակցությանը, խախտելով նրա միասնությունն ու բանը մինչև նրա գրեթե վերացմանը հասցնելով։ 1931 թ. մոտերքին կուսակցության առողջ ուժերին հաջողվեց Կոմինտերնի օգնությամբ ամրապնդել իրենց դիրքերը։ 1931 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ ՌԿԿ V համագումարը, որը լրջորեն վերլուծեց կուսակցության վիճակը, վերականգնեց նրա միասնությունը և նշեց նրա հետագա պայքարի հեռանկարները։ Համագումարի բանաձևում նշվում էր, որ Ռումինիան գտնվում է բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ավարտման առջև և այդ հեղափոխության խնդիրն այն է, որպեսզի բռնությամբ տապալվի բուրժուա-կալվածատիրական իշխանությունը և հաստատվի պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա։ Ելնելով այդ հիմնական դրույթներից, համագումարն անհրաժեշտ համարեց պրոլետարիատի կողմը գրավել քաղաքի ու գյուղի աշխատավորության հիմնական խավերին և ամենից առաջ միասնական ճակատի տակտիկան ներքևից հետևողականորեն կիրառելու միջոցով համախմբել բանվոր դասակարգի շարքերը։

Ճգնաժամի տարիներին ռումինական պրոլետարիատի մղած պայքարի բարձրակետը եղան Գրիվիցայի (Բուխարեստ) երկաթուղայինների՝ ՌԿԿ-ի կազմակերպած ու գլխավորած 1933 թ. փետրվարյան մարտերը, որոնց միացան նաև Պլոեշտիի նավթագործները։ Ողջ ռումինական պատմության մեջ պրոլետարիատի այդ խոշորագույն ելույթներն արյան մեջ խեղդվեցին, որը բողոքների ալիք առաջացրեց Ռումինիայում և արտասահմանում։ 1933 թ. փետրվարի հեղափոխական իրադարձությունները նպաստեցին ռումինական բանվորների քաղաքական գիտակցության աճին։ Նրանք ամբողջ աշխարհի առջև ակնբախորեն ցուցադրեցին տնտեսական ու քաղաքական այն հակասությունները, որոնք բզկտում էին բուրժուա-կալվածատիրական Ռումինիան։

20—30-ական թվականների սահմանագծին ռումինական կառավարու-

թյունների արտաքին քաղաքական կուրսն ուղղված էր Ռումինիայի ձեռք բերած տերիտորիաների, այդ թվում նաև նրա կողմից զավթած սովետական հողերի պահպանմանը։ Այդ վերջին հանգամանքը ոչ նվազ չափով էր պայմանավորում ռումինական կառավարող շրջանների արտաքին քաղաքականության անփոփոխ ռեակցիոն ուղղվածությունը։ Ռումինիան հրաժարվում էր դիվանագիտորեն ճանաչել ՍՍՀՄ-ին և ակտիվորեն ներգրավվում էր միջազգային ռեակցիայի ուժերի կողմից սանձազերծված հակասովետական կամպանիաների մեջ։ Սակայն Սովետական Միության դեմ իմպերիալիստական տերությունների ռեակցիոն շրջանների մշակած թշնամական պլանների իրագործումը դժվարանում էր ՍՍՀՄ-ի միջազգային հեղինակության աճով։ Այդ պատճառով ռեակցիայի ուժերը ստիպված էին տարափոխել իրենց գործունեության մեթոդները։ 1929 թ. փետրվարին ի թիվս այլ պետությունների Ռումինիան ստորագրեց Բրիան—Կելլոգի պակտը ժամկետից շուտ ուժի մեջ մտցնելու վերաբերյալ Մոսկովյան արձանագրությունը։ Այդուհանդերձ ռումինական կառավարող շրջանները չփոխեցին ՍՍՀՄ-ի դեմ իրենց թշնամական արտաքին քաղաքական կուրսը։ 1932 թ. աշնանը նրանք ձախողեցին ՍՍՀՄ-ի նախաձեռնությամբ սկսված սովետա-ռումինական բանակցությունները՝ երկու երկրների միջև չհարձակման պակտ կնքելու վերաբերյալ։

Ռեակցիայի ու ֆաշիզմի հարձակումը։ Աշխատավորների հակաֆաշիստական պայքարը (1934—1937 թթ.)

30-ական թվականների կեսերին Ռումինիայի էկոնոմիկան սկսում էր դուրս գալ ճգնաժամի հարվածներից։ Արդեն 1934 թ. արդյունաբերական արտադրանքը մինչճգնաժամային տարիների համեմատությամբ ավելացավ գրեթե 1,5 անգամ։ Արտադրության աճը նկատվում էր գլխավորապես ծանր արդյունաբերության այն ճյուղերում, որոնք վերահսկվում էին օտարերկրյա և ռումինական մոնոպոլիաների կողմից՝ նավթային, պողպատաձուլական, քիմիական և այլն։ Այդ ճյուղերում իշխող դիրք էին գրավում այն գործամոլները, որոնք մեծ մասամբ կապված էին թագադրված մոնոպոլիստ Կարոլ II-ի հետ։ Ավելի ու ավելի բացահայտ էր դառնում պետության միջամտությունը երկրի էկոնոմիկայում, դրսևորվում էին պետական-մոնոպոլիստական տենդենցներ, որոնք կազմում էին Ռումինիայի բուրժուա-կալվածատիրական ռեակցիոն վերնախավի շարժման հիմքը դեպի ռեակցիա, միլիտարիզմ ու ֆաշիզմ։

Ճգնաժամի հետևանքների հաղթահարումը առաջատար մոնոպոլիաների հետ չկապված արդյունաբերության ճյուղերում ընթանում էր ավելի դանդաղ ու հիվանդագին։ Այսպես, օրինակ, երկաթահանքի ու պղնձահանքի արդյունահանումը 30-ական թվականների կեսերին չհասավ նախաճգնաժամային մակարդակին, այն դեպքում երբ պողպատաձուլական ու քիմիական արդյունաբերության համար արտասահմանից ներմուծվում էր ավելի էժան ու որակյալ հումք։ Ամբողջովին վերցրած, արդյունաբերությունը չէր բավարարում երկրի կարիքները նույնիսկ ներքին շուկայի ծայրահեղ նեղության պայմաններում։ Ռումինիան առաջվա պես տնտեսական տեսակետից մնում էր հետամնաց երկիր։

Զգգված ագրարային ճգնաժամը տանում էր դեպի երկրի տնտեսության հիմնական ճյուղի՝ գյուղատնտեսության հետագա անկում։ 20-ական թվականների ագրարային ռեֆորմները չավարտվեցին։ 1930 թ. պաշտոնական մարդահամարի համաձայն, հողային խոշոր տիրույթները (50 հեկտարից ավելի) կազմելով գյուղական տնտեսությունների ընդհանուր թվի 0,8 տոկոսը,

տնօրինում էին բոլոր մշակվող հողատարածությունների $^1/_3$-ը, այսինքն՝ ավելի շատ հող ունեին, քան 2,5 մլն գյուղացիական տնտեսություններ (նրանց ընդհանուր թվի $^3/_4$-ը)։

Այդ բոլորը կանխորոշում էր տնտեսական ու սոցիալական հակասությունների հետագա սրումը։

1934 թ. սկզբին իշխանությունը երկրում վերստին անցավ ազգային-լիբերալ կուսակցությանը, որը փոխարինեց նացիոնալ-ցարանիստներին, որոնց քաղաքական դիրքերն զգալիորեն խարխլվել էին ճգնաժամի տարիներին։ 1934 թ. հունվարից մինչև 1937 թ. դեկտեմբերը պրեմիեր մինիստրի պոստը գրավում էր Գ. Տատարեսկուն՝ արքայական շրջապատի ու ռումինական ագրարային-մոնոպոլիստական վերնախավի հետ սերտորեն կապված այսպես կոչված «երիտասարդ լիբերալների» ֆրակցիայի ղեկավարը։ Արտաքին քաղաքական կապերում «երիտասարդ լիբերալները» ձգտում էին դեպի անգլիական ու ֆրանսիական մոնոպոլիաները, որը, սակայն, նրանց չէր խանգարում քայլեր ձեռնարկել ավելի սերտ արտաքին առևտրական հարաբերություններ հաստատելու հիտլերյան Գերմանիայի հետ։ 1935 թ. մարտին առաջին համաշխարհային պատերազմից հետո առաջին անգամ Գ. Տատարեսկուի կառավարությունը կնքեց երկարժամկետ գերմանա-ռումինական տնտեսական պայմանագիր։ Դրա հետ մեկտեղ խորտիական Հունգարիայի ուանշիստական նրբերտումների դեմ մղվող պայքարում իր դիրքերն ամրապնդելու ձգտումը Ռումինիային մղում էր դեպի ռեգիոնալ արտաքին քաղաքական դաշինքների ամրապնդումը։ 1934 թ. հունիսին ռումինական կառավարությունը ձեռնարկեց դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը ՍՍՀՄ-ի հետ։ Երկրի արտաքին քաղաքական կուրսի որոշման մեջ այդ տարիներին մեծ դեր էր խաղում Ռումինիայի արտաքին գործերի մինիստր, նշանավոր ռումինական դիվանագետ Ն. Տիտուլեսկուն։ Սակայն 1936 թ. օգոստոսին Ն. Տիտուլեսկուն Գերմանիայի անմիջական ճնշման տակ հանվեց արտաքին գործերի մինիստրի պոստից, որից հետո Ռումինիան հրաժարվեց ՍՍՀՄ-ի հետ համագործակցությունն զարգացնելուց։

30-ական թվականների կեսերին Ռումինիայում ակտիվացան ֆաշիստական կուսակցություններն ու կազմակերպությունները («Երկաթյա գվարդիան», որը 1935 թ. գործում էր «Ամեն ինչ հայրենիքի համար» դեմագոգիկ անվան տակ, ազգային-քրիստոնեական կուսակցությունը և այլն)։ Այն դեպքում երբ կոմունիստական կուսակցությունը և նրա ստեղծած դեմոկրատական կազմակերպությունները դաժան հալածանքների էին ենթարկվում, ֆաշիստական կուսակցությունները բացահայտ կերպով ժողովներ ու կոնֆերանսներ էին անցկացնում, որոնք ուղեկցվում էին զինված ցույցերով ու զորահանդեսներով։ Երկրի կառավարող ագրարային-մոնոպոլիստական վերնախավը, որը համախմբված էր Կարոլ II թագավորի և նրա կամարիլյայի շուրջը, ամեն կերպ խրախուսում էր ֆաշիստական շարժման զարգացումը և ուղիներ որոնում նրանց պարագլուխների հետ մերձենալու համար։ Սակայն առավել զորեղ ֆաշիստական «Երկաթյա գվարդիա» կազմակերպության պարագլուխները, որոնք հիտլերյան Գերմանիայից ֆինանսական օժանդակություն էին ստանում, իրենք էին ձգտում քաղաքական առաջնության և չէին շտապում ենթարկվել թագավորական արքունիքին։

Խոր ընդհատակի պայմաններում աշխատող Ռումինիայի կոմունիստա-

կան կուսակցությունը 30-ական թվականների կեսերին իր գործունեությունն ուղղում էր դեմոկրատական լեգալ կազմակերպությունների ստեղծմանը, որոնք առաջին պլան էին մղում պայքարն ընդդեմ ֆաշիստական պետությունների հետ մերձեցման քաղաքականության, ընդդեմ ռեակցիայի ու ֆաշիզմի հարձակման, հանուն հակաֆաշիստական Ժողովրդական ճակատի ստեղծման։ Կոմունիստների նախաձեռնությամբ ստեղծվեցին «Ազգային հակաֆաշիստական կոմիտեն», «Աշխատանքի լիգան», «ՍՍՀՄ-ի բարեկամներ» ընկերությունը։ Այդ տարիներին Ռումինիայի աշխատավորության առավել ազդեցիկ դեմոկրատական կազմակերպությունը «Դեմոկրատական բլոկն» էր, որը ստեղծվեց ՌԿԿ-ի նախաձեռնությամբ 1935 թ. մայիսին։ Սակայն հակաֆաշիստական Ժողովրդական ճակատի համախմբման համար կոմունիստական կուսակցության մղած պայքարը հաջողությամբ չպսակվեց գլխավորապես բանվորական շարժման միասնության բացակայության, Ժողովրդական ճակատի գաղափարի հանդեպ սոցիալ-դեմոկրատական կուսակցության պարագլուխների հանդես բերած բացասական վերաբերմունքի և ՌԿԿ-ի կազմակերպական թուլության պատճառով։ Երկրի դեմոկրատական ուժերի միավորմանը խանգարեց նաև այն հանգամանքը, որ գյուղացիության զգալի մասը գտնվում էր ազգային-ցարանիստական գաղափարախոսության ազդեցության տակ, իսկ մանր ու միջին բուրժուազիայի միջավայրում ձախ և հակաֆաշիստական ուժերն աննշան էին։

ՌԿԿ-ի պայքարը խիստ դժվարանում էր բուրժուական կուսակցությունների ղեկավարների՝ ֆաշիզմի հարձակման հանդեպ աստիճանաբար կապիտուլացվելու քաղաքականությամբ։ Այդուհանդերձ հակաֆաշիստական շարժման շարքերում ավելի ու ավելի ակտիվորեն էին ներգրավվում Ռումինիայի առաջադեմ ուժերը։ Չնայած կառավարական բռնություններին, դեմոկրատական թերթերի ու ամսագրերի էջերում կանոնավոր կերպով տպագրվում էին հակաֆաշիստական հոդվածներ և ռեպորտաժներ, որոնց հեղինակներն էին այդ տարիներին կոմունիստական կուսակցության մեջ ընդունված ռումինական առաջադեմ ժուռնալիստները։ 1937 թ. սկզբին ռումինական խոշորագույն գրող Մ. Սադովյանուն հանդես եկավ ի պաշտպանություն հանրապետական Իսպանիայի և Ժողովրդական ճակատի։ Հանրապետական Իսպանիայի ռազմաճակատներում մարտնչում էին Ռումինիայի հակաֆաշիստական շարժման լավագույն ներկայացուցիչները։ Ռումինական կոմունիստների հերոսական պայքարն ավելի ու ավելի դաժանորեն էր ճնշվում ռեակցիոն իշխանությունների կողմից։ Հարյուրավոր կոմունիստներ այդ ժամանակ զոհվեցին սիգուրանցայի մռայլ զնդաններում և բանտերում։

1937 թ. դեկտեմբերին տեղի ունեցան համառումինական պառլամենտական ընտրություններ, որոնց գլխավոր քաղաքական արդյունքը եղավ կառավարող ազգային-լիբերալ կուսակցության պարտությունը։ Չնայած ոստիկանական տեռորին և բացահայտ կեղծարարությանը, նա չկարողացավ իր համար ապահովել ձայների 40 տոկոսը, որն անհրաժեշտ էր, ըստ մաժորիտար սիստեմի, պառլամենտական մեծամասնության կազմավորման համար։ Չկարողացան առաջ ընկնել նաև նրա քաղաքական ընդդիմախոսները։ Այդ բոլորը ուղի էր հարթում երկրում դիկտատորական ռեժիմի հաստատման համար։

Ռումինիայի ներքին ու արտաքին քաղաքականությունը երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին

1938 թ. փետրվարի 10 Կարոլ II-ը ֆինանսա-մոնոպոլիստական կապիտալի և խոշոր հողատերերի առավել ռեակցիոն շրջանների ներկայացուցիչներից կազմեց անկուսակցական կառավարություն։ Կառավարությունը փաստորեն ենթարկվում էր թագավորին, որը նշանակում էր նրա անձնական դիկտատուրայի հաստատում։ Դրանից անմիջապես հետո վերացվեց մինչ այդ գործող սահմանադրությունը, լիկվիդացվեցին քաղաքական կուսակցությունները, իսկ հետո նաև արհմիությունները, որոնք ֆաշիստական Իտալիայի օրինակով փոխարինվեցին այսպես կոչված «կորպորացիաներով»։ Փետրվարյան հեղաշրջումից անմիջապես հետո ընդունված նոր սահմանադրության համաձայն, թագավորը հռչակվում էր պետության ղեկավար և ստանում առանց պառլամենտի սանկցիայի օրենսդիր ու գործադիր իշխանություն իրականացնելու իրավունք։ Սահմանադրությունը «պետության անվտանգության դեմ գործած հանցագործությունների» համար սահմանում էր մահապատիժ։ 1938 թ. դեկտեմբերին ստեղծվեց ֆաշիստական տիպի միասնական քաղաքական կուսակցություն՝ «Ազգային վերածնության ճակատը» (ԱՎՃ)։ Դրանով իսկ դրվեցին ֆաշիստական ռեժիմի հիմքերը երկրում։

Նոր ռեժիմը իր հետ բերեց աշխատավորների լայն խավերի դրության զգալի վատացում և դժգոհության աճ։ Աշխատավորության վրա հարձակվեց իբր «ազգի շահերի համար» հավաքվող հարկերի ու տուրքերի մի ամբողջ ալիք։ Կոմունիստական կուսակցությունը, որն առաջվա պես աշխատում էր ընդհատակի պայմաններում, հետևողականորեն հանդես էր գալիս ընդդեմ թագավորական դիկտատուրայի ռեժիմի։

Արտաքին քաղաքականության հարցերում Կարոլ II-ի կառավարությունը կանգնեց երկու իմպերիալիստական բլոկների միջև հավասարակշռման ուղու վրա, աստիճանաբար սահելով դեպի հետագա զիջումները հիտլերյան Գերմանիային։ Թագավորական Ռումինիայի կառավարող շրջանները լիովին պաշտպանեցին արևմտյան իմպերիալիստական տերությունների մյունխենյան քաղաքականությունը և նրա մեջ իրենց ավանդը մուծեցին, չհամաձայնելով Ռումինիայի տերիտորիայով սովետական բանակի անցմանը, որը պատրաստ էր Չեխոսլովակիային օգնության հասնելու համար։ Գերմանական դեսպանի հետ ունեցած իր զրույցներից մեկում Կարոլն այդ օրերին հայտարարեց, որ նա «գերադասում է իր երկրում որպես թշնամիներ տեսնել գերմանացիներին, քան ռուսներին՝ որպես բարեկամների»։ 1939 թ. մարտին Ռումինիայի կառավարող շրջանները հիտլերյան Գերմանիայի հետ ստրկացուցիչ տնտեսական պայմանագիր կնքեցին։ Դրա պայմանների համաձայն, Ռումինիան պարտավորվում էր իր տնտեսությունը զարգացնել՝ հաշվի առնելով գերմանական ներմուծման կարիքները։ Դրանով իսկ Ռումինիայի կառավարող շրջանները կանգնեցին Եվրոպայում հիտլերյան ագրեսիային ակտիվորեն նպաստելու ուղին։

ԳԼՈՒԽ 14

ԱԼԲԱՆԻԱՆ
1918—1939 ԹԹ.

Ալբանիայի անկախության վերականգնումը

Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ուժեղ ազդեցություն թողեց հետպատերազմյան Ալբանիայի կյանքի բոլոր կողմերի վրա։ Արդեն 1917 թ. նոյեմբերի 8-ին կաթոլիկական «Պոստա և Շկյուպնիես» («Ալբանիայի փոստ») թերթը, որը լույս էր տեսնում Շկոդրայում (Հյուսիսային Ալբանիա), հաղորդեց Պետրոգրադում տեղի ունեցած ապստամբության մասին, որտեղ «հաղթել են բանվորներն ու գյուղացիները»։ Այն ժամանակ Ալբանիայի տերիտորիան օկուպացված էր կռվող տերությունների բանակների կողմից, որոնք հաշվի չառան չեզոք երկրի նրա ստատուսը։ Ալբանական ժողովրդի բազմամյա ազգային-ազատագրական պայքարի պտուղները իմպերիալիստական պետությունների կոպիտ միջամտության հետևանքով ոչնչացման սպառնալիքի տակ դրվեցին։

Սովետական Ռուսաստանում հաշտության դեկրետի և ցարական կառավարության կնքած բոլոր գաղտնի գործարքների, այդ թվում նաև 1915 թ. Լոնդոնի պայմանագրի, որը նախատեսում էր ալբանական պետության վերացում և երկրի տերիտորիայի մեծ մասի նկատմամբ իտալական վերահսկողության հաստատում, այդ փաստաթղթերի հրատարակման լուրը ընկալվեց որպես օկուպանտների դեմ պայքարի ծավալման կոչ։ Երկրում սկսվեց ազատագրական շարժում։ Սակայն իտալական կառավարող շրջաններին հաջողվեց շարժումն օգտագործել ալբանական սահմանադիր ժողով հրավիրելու համար, որպեսզի իշխանության գլուխ կանգնեցնեն իրենց դրածներին։ 1918 թ. դեկտեմբերի 25-ին Դուրրեսում կայացած «ալբանական կոնգրեսը» կազմեց պրոիտալական կառավարություն, որի մեջ մտան բարձր լինելիության, հոգևորականության, կալվածատերերի և առևտրականների ներկայացուցիչները։

Փարիզի խաղաղության կոնֆերանսում ալբանական հարցի քննարկման ժամանակ մեծ տերությունները հաշվի չառան Ալբանիայի ազգային շահերը։ 1919 թ. դեկտեմբերին— 1920 թ. հունվարին ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև կազմվեց մի համաձայնագիր, ըստ որի Իտալիան ստանում էր Ալբանիայի տերիտորիայի հիմնական մասի մանդատը, նրա ծայր հյուսիսային մասն անցնում էր Հարավսլավիային, իսկ հարավը՝ Հունաստանին։ Փարիզում գտնվող ալբանական ներկայացուցիչները համաձայնվեցին այդ պլանների հետ։

Անդրկուլիսյան նոր գործարքների մասին լուրը ամբողջ երկիրն ալեկոծեց։ Սկսվեց զանգվածային շարժում հանուն մինիստրների կաբինետի փոխման, որն իրեն վարկաբեկել էր իտալացիներին խոնարհաբար ծառայելու պատճառով։ Տարբեր քաղաքներում սկսեցին կազմավորվել «ազգային պաշտպանության կոմիտեներ», տեղի էին ունենում հակաիմպերիալիստական միտինգներ «Ալբանիայի լիակատար անկախության ապահովման և ալբանական

միասնության ամրապնդման» լոզունգների ներքո։ 1920 թ. հունվարի 21-ին Լյուշնյա ոչ մեծ քաղաքում գումարվեց կոնգրես, որի դելեգատները միահամուռ որոշում ընդունեցին չճանաչել օտարերկրյա ոչ մի մանդատ կամ պրոտեկտորատ։ Ստեղծվեց նոր կառավարություն Սուլեյման Դելվինայի գլխավորությամբ, ընտրվեցին բարձրագույն (խնամակալ) խորհրդի և սենատի անդամներ։ Կառավարության նստավայր ընտրվեց Տիրանան՝ 12 հազար բնակչությամբ մի ոչ մեծ քաղաք, որն այդ ժամանակվանից ի վեր դարձավ Ալբանիայի մայրաքաղաքը։ Հակաիմպերիալիստական ծրագրով հանդես եկող նոր կառավարությունը պաշտպանություն գտավ ալբանական ժողովրդի կողմից։ Երկրում ծայր առավ շարժում հանուն իտալական օկուպանտների վռնդման, որոնք ամրացել էին Վլորայում և նրա մերձակայքում։ 1920 թ. ամռանը «Վլորայի համար մղվող ճակատամարտը» իտալական պրոլետարիատի ակտիվ աջակցությամբ ալբանական ժողովուրդը շահեց։ Օգոստոսի 2-ին ստորագրվեց իտալա-ալբանական արձանագրություն, որը նախատեսում էր իտալական զորքերի դուրս բերում Ալբանիայի ամբողջ տերիտորիայից, բացառությամբ Սազանի կղզուց։ Անկախ Ալբանիան ճանաչվեց մեծ տերությունների կողմից և 1922 թ. դեկտեմբերի 17-ին դարձավ Ազգերի լիգայի անդամ։ Երկրի սահմանները վերջնականապես որոշվեցին 1922 թ. (հյուսիսայինը) և 1924 թ. (հարավայինը)։

20-ական թվականների առաջին կեսի դեմոկրատական շարժումը

Անկախության նվաճումը հնարավորություն ստեղծեց տնտեսական ու սոցիալական բնագավառներում թուրքական տիրապետության ծանր հետևանքների վերացման համար։ Սակայն արմատախիլ շարված իր ֆեոդալական կարգերով այդ թույլ զարգացած փոքր երկիրը դրա համար բավարար ներքին միջոցներ չուներ։

Կապիտալիստական նոր հարաբերությունները մեծ դժվարությամբ էին իրենց համար ուղի հարթում Ալբանիայում։ Հարկային լուծը, գյուղատնտեսություն վարելու պարզունակ ձևերը, կալվածատերերի ու վաշխառուների կամայականությունը, գյուղացիների հողազրկությունը ոչ միայն քայքայում էին գյուղը, այլև արտակարգ կործանարար ձևով էին ազդում ամբողջությամբ վերցրած երկրի զարգացման վրա։ Արդյունաբերությունը գտնվում էր սաղմնային վիճակում։ Արդյունահանող արդյունաբերության սակավաթիվ ձեռնարկությունները պատկանում էին օտարերկրացիներին։ Օգտակար հանածոների նոր հանքավայրերի հետախուզումը նույնպես օտարերկրյա ընկերություններն էին կատարում։ Ալբանական բուրժուազիային պատկանում էին միայն գյուղատնտեսական հումքի վերամշակման տնայնագործական տիպի փոքրիկ ձեռնարկությունները։ Նրա գործունեության հիմնական ոլորտը առևտուրն ու վաշխառությունն էին։ Երկրի բնակչության մոտ 90 տոկոսն անգրագետ էր։ Այնտեղ չկային ո՛չ բարձրագույն ուսումնական հաստատություններ, ո՛չ գիտական հիմնարկություններ, ո՛չ էլ թեկուզ մեկ թատրոն կամ համերգային դահլիճ։ Ունևոր ծնողների երեխաները կրթություն էին ստանում արտասահմանում։

1921—1923 թթ. ներքաղաքական դրությունն Ալբանիայում անկայուն էր։ Իշխանության համար բացահայտ պայքար էր գնում առանձին խմբավորումների ու անձանց միջև։ Հենց այդ ժամանակ էլ քաղաքական թատերաբեմում հանդես եկավ և սկսեց ակտիվ դեր խաղալ գնդապետ Ահմեդ Զոգուն, որը Հյուսիսային Ալբանիայի ֆեոդալներից էր։ Նա ռեակցիայի լագերում դարձավ կենտրոնական դեմք, անկախ այն բանից, թե հանդես էր գալիս իբրև պրե-

միեր մինիստր, ներքին գործերի մինիստր կամ «պարզապես» կուսակցական պարագլուխ։

Հիմնական դիրքերը գտնվում էին ֆեոդալների ձեռքում, որոնք ձգտում էին պահպանել հին կարգերը։ Այդ գծին հակադրվում էր զարգացող դեմոկրատական շարժումը ընդդեմ ֆեոդալական հողատիրության, հանուն բուրժուա-դեմոկրատական ազատությունների հռչակման։ Նրա գլուխ էին կանգնած բուրժուազիայի ու մտավորականության առաջադեմ խավերի ներկայացուցիչները։ Դրանում մասնակցում էր նաև սակավաթիվ ալբանական բանվոր դասակարգը, որն իր կապերը գյուղի հետ դեռ չէր կորցրել, ցրված էր կիսաարհեստագործական տիպի փոքրիկ ձեռնարկություններում։ Նա չուներ արհեստակցական կազմակերպություններ և կուսակցություններ և դեռ չէր առաջադրում իր սեփական պահանջները։

1922 թ. սեպտեմբերին կառավարության նկատմամբ օպոզիցիոն տրամադրված ուժերն ստեղծեցին «Բաշքիմի» («Միություն») ընկերությունը, որն ուներ ֆիլիալների՝ ամբողջ երկրում ճյուղավորված ցանց։ Նրա անդամների հիմնական մասը բնակչության միջին խավերն էին, բայց մի շարք քաղաքներում նրա մեջ մտնում էին նաև բանվորները։ 1924 թ. ամռանը «Բաշքիմին» գլխավորեց զինված ապստամբությունը։ Հունիսի 10-ին ապստամբները գրավեցին Տիրանան։

Նոր կառավարության գլուխ կանգնեց ալբանական ուղղափառ եկեղեցու եպիսկոպոս Ֆան Նոլին։ Նա Ալբանիայում և նրա սահմաններից դուրս ժողովրդականություն էր վայելում առաջին հերթին ալբանական ժողովրդի ազգային իրավունքների պաշտպանության համար մղած իր ակտիվ պայքարով։ Լինելով ալբաներեն լեզվով արևմտյան դասականների ստեղծագործությունների տաղանդավոր թարգմանիչ, փայլուն հրապարակախոս ու հռետոր, Ֆան Նոլին մշակեց իր գլխավորած կառավարության տվյալ ժամանակի համար առաջադիմական ծրագիր՝ դեմոկրատական ազատությունների իրականացում, վարչական ու ռազմական ասպարեզներում արմատական ռեֆորմների անցկացում, արմատական փոփոխություններ հարկատվության բնագավառում, հակաֆեոդալական ագրարային ռեֆորմի իրականացում, ազգային արդյունաբերության զարգացման խրախուսում։ Բայց Ֆան Նոլին չկարողացավ կատարել խոստացածը։ Կառավարչական ապարատի զտումն այդպես էլ չիրականացվեց։ Իր կաբինետի անդամների մեծամասնության աջակցությունը չստանալով, Ֆան Նոլին այդուհանդերձ ժողովրդական զանգվածների մեջ հենարան չորոնեց, վախենալով սոցիալական կոնֆլիկտի բացահայտ բռնկումից։ Դիվանագիտական հարաբերություններ հաստատելով Սովետական Միության հետ, Ֆան Նոլին ընկրկեց Անգլիայի, Իտալիայի և Հարավսլավիայի շանտաժի հանդեպ, որոնք վերջնագրային ձևով պահանջեցին հրաժարվել նրա հետ դիվանագիտական ներկայացուցիչներ փոխանակելուց։ Ամբողջությամբ վերցրած այն պայմանները, որոնց մեջ գործում էր դեմոկրատական կառավարությունը, նրա համար չափազանց անբարենպաստ էին ձևավորվում։ Այդ պատճառով էլ երբ Ահմեդ Զոգուի հակահեղափոխական ջոկատները, որոնք աջակցություն էին ստանում հարավսլավական կանոնավոր զորքերի և Վրանգելի սպիտակգվարդիական զորամասերի կողմից, անցան Ալբանիայի սահմանը, ապա երկշաբաթյա մարտերից հետո նրանց հաջողվեց գրավել Տիրանան (1924 թ. դեկտեմբերի 24)։

1924 թ. շարժումը, որն իր նշանակությամբ հավասարեցվում է բուրժուա-դեմոկրատական հեղափոխությանը, պարտություն կրեց։ Անհաջողության գլխավոր ներքին պատճառը դեմոկրատական ուժերի թուլությունն էր։ Բացի այդ, շարժումը ծավալվում էր Եվրոպայում հեղափոխական ալիքի անկման ժամանակաշրջանում։ Զրկված իր բնական դաշնակիցների՝ հարևան երկրների պրոլետարիատի ու գյուղացիության աջակցությունից, այն ճնշվեց օտարերկրյա միջամտության հետևանքով։

Ալբանիան միապետության տարիներին

Իշխանության գլուխ անցած Ահմեդ Զոգուն երկրում հաստատեց ռազմական դիկտատուրայի ռեժիմ։ 1925 թ. հունվարին նա դարձավ պրեմիեր մինիստր, նույն թվականի մարտին՝ հանրապետության պրեզիդենտ, իսկ 1928 թ. սեպտեմբերին՝ թագավոր։ Նրա կառավարումը, որը տևեց 15 տարի, նշանավորվեց ներքին քաղաքականության մեջ ծայրահեղ ռեակցիոնությամբ և անինքնուրույնությամբ՝ արտաքին քաղաքական պրոբլեմների լուծման մեջ։

Երկրում արգելվեցին բոլոր կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները, դաժան վերահսկողություն սահմանվեց մամուլի վրա, վիթխարի գումարներ էին ծախսվում բանակն ու ոստիկանությունը պահելու համար։ Խրախուսելով կառավարության քաղաքականությամբ, երկիր հոլդեցին օտարերկրյա ձեռնարկատերերը։ Իտալական ֆինանսիստները հիմնեցին Ալբանիայի ազգային բանկը (Բանկալբա), ստեղծեցին բազմաթիվ բաժնետիրական ընկերություններ, որոնք ֆինանսավորում էին ժողովրդական տնտեսության այն ճյուղերի զարգացումը, որոնցում շահագրգռված էր իտալական իմպերիալիզմը. նրանց մենաշնորհը դարձան նավթի, ածխի, քրոմիտների, պղնձի ու երկաթի հանքաքարի հետախուզումն ու արդյունահանումը։ Իտալական ընկերությունները թափանցում էին նաև գյուղատնտեսության մեջ, երկարժամկետ կոնցեսիաներ ստանալով առավել բերրի հովտային շրջաններում։

Ալբանիայի տնտեսական ստրկացումն «ամրապնդվում էր» պայմանագրային պարտավորություններով։ 1926 և 1927 թթ. «Տիրանյան պակտերը» և 1935 թ. մարտի տնտեսական համաձայնագրերի սերիան նպաստեցին Ալբանիայի վերածմանը իտալական իմպերիալիզմի ագրարային կիսագաղութի։ Երկրի էկոնոմիկան հիվանդագին կերպով էր ընկալում միջազգային կոնյունկտուրայում կատարված ցնկացած փոփոխությունները, բայց ամենից զորեղ Ալբանիային հարվածեց համաշխարհային տնտեսական ճգնաժամը։ Ճգնաժամի գոտուց երկիրն այդպես էլ չկարողացավ դուրս գալ ընդհուպ մինչև 1939 թ.։

Զոգուի ռեժիմին ցույց տրված դիմադրության աճումը

1924 թ. շարժման ջախջախումով Զոգուն հասավ քաղաքական թատերաբեմից իր առավել վտանգավոր քաղաքական հակառակորդների հեռացմանը։ Նրանք վտարանդվեցին Շվեյցարիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ուր միավորվում էին հակազոգիստական կազմակերպությունների մեջ, հանդես էին գալիս պարբերական մամուլում Զոգուի ռեժիմի քննադատությամբ։ Երկրի ներսում տեսորը երկար ժամանակով կաշկանդեց առաջադիմական ուժերի զարգացումը։ Միայն 30-ական թվականների սկզբին վերստին ակնբախորեն հանդես եկան համադեմոկրատական շարժման գծերը, որի մեջ ներգրավվեցին գյուղացիները, բանվորները, արհեստավորները, քաղաքային մանր բուրժուազիան, առաջադեմ մտավորականությունը, սովորող երիտասարդությունը։ Բանվորների գործադուլները, գյուղացիական հուզումները, իտալական ֆաշիզմի կողմից Ալբանիայի քաղաքական ու տնտեսական

ստրկացման դեմ ուղղված բողոքի զանգվածային ցույցերն ու միտինգները վկայում էին պայքարի նոր վերելքի սկսման մասին։ Այդ ժամանակաշրջանի տարբերիչ գիծն այն էր, որ բանվոր դասակարգն սկսեց առաջադրել իր սեփական պահանջները, փորձեր ձեռնարկվեցին ստեղծելու բանվորների դասակարգային քաղաքական կազմակերպություններ։ Նշանակություն էր ձեռք բերում առաջին կոմունիստական խմբերի գործունեությունը։

Ալբանական առաջին կոմունիստական խումբը ստեղծեցին հեղափոխական վտարանդիները 1928 թ. Սովետական Միությունում։ Իսկ Ալբանիայում առաջին կոմունիստական խումբը կազմավորվեց 1929 թ. Կորչե քաղաքում։ Նրա ղեկավարությամբ ծավալվեց առաջին արհեստակցական միության գործունեությունը, որը միավորում էր շինարար բանվորներին։ Դա «Պունա» ընկերությունն էր, ապա և նավթագործների արհմիությունը։ Հետագայում, 1936—1939 թթ. կոմունիստական խմբեր ստեղծվեցին Շկոդրայում և Տիրանայում։ Կոմունիստներն ակտիվորեն մասնակցում էին տնտեսական ու քաղաքական այնպիսի գործողությունների կազմակերպմանն ու անցկացմանը, ինչպես Կուչովի նավթահանքերում 1935/36 թթ. ձմռանը տեղի ունեցած ընդհանուր գործադուլը, Կորչեի 1936 թ. փետրվարի հակակառավարական ցույցը, Տիրանայի 1937 թ. տպագրական բանվորների գործադուլը, Ռուբիկայի հանքագործների 1938 թ. գործադուլը և այլն։ Ելնելով ինտերնացիոնալ համերաշխության զգացումից, ալբանական կոմունիստները մարտնչում էին Իսպանիայում Գարիբալդիի անվան 12-րդ բրիգադի շարքերում։

Առաջին կոմունիստական խմբերի գործունեությունը օբյեկտիվորեն բաղա նախապատրաստեց Ալբանիայի կոմունիստական կուսակցության կազմավորման համար։ Սակայն դրանց կազմակերպական ու տեսական թուլությունը, մասնավորապես աղանդավորական բնույթի սխալները խոչընդոտում էին կուսակցության ստեղծմանը մարքսիստական-լենինյան հիմքի վրա։ Ավելին, երկու հիմնական ու ամենախոշոր խմբերը (Կորչեի ու Շկոդրայի), ինչպես նաև ավելի մանր կազմակերպություններ (դրանցից մի քանիսը միայն կրում էին կոմունիստական անունը) թշնամություն էին անում միմյանց հետ։ Նրանք իրենց առջև խնդիր չէին դնում իրականացնել գործողությունների միասնություն, չէին կարողանում գլխավորել համադեմոկրատական և հակաիմպերիալիստական աճող շարժումը, որն ամբողջությամբ վերցրած շարունակում էր մնալ տարերային ու անկազմակերպ։

Ալբանիայի իտալա-ֆաշիստական օկուպացումը

30-ական թվականների վերջին ֆաշիստական պետությունների ագրեսիվության աճը անմիջական սպառնալիք ստեղծեց Ալբանիայի համար։ Հիտլերյան Գերմանիայի լայնորեն ծավալվող արտաքին քաղաքական էքսպանսիան խթանում էր իտալական ֆաշիզմի ակտիվությանը, ֆաշիզմ, որը շտապում էր ավարի իր բաժինը պոկել։ Նրանց պլաններին նպաստում էր արևմտյան տերությունների համաձայնողական քաղաքականությունը։

1939 թ. ապրիլի 7-ին իտալական 40-հազարանոց էքսպեդիցիոն կորպուսը սկսեց ափ դուրս գալ ալբանական Դուրրես, Վլորա, Շենգին և Սարանդա նավահանգիստներում։ Թագավորն ու կառավարությունը փախան Հունաստան։ Ապրիլի 10-ին օկուպացվեց ամբողջ Ալբանիան։ Իտալա-ֆաշիստական սպասարկուներից կազմված ալբանական մարիոնետային կառավարությունը ձևակերպեց Ալբանիայի մուտքը իտալական կայսրության կազմի մեջ, ալբանական թագը առաջարկելով իտալական Վիկտոր-Էմանուիլ III թագավորին։ Մուսոլինիի ֆաշիստական ռեժիմը ստացավ երկրի էկոնոմիկայում տնօրինելու անսահմանափակ հնարավորություններ և, որը նրա համար առաջնակարգ նշանակություն ուներ, շահավետ ստրատեգիական դիրքեր նվաճեց Բալկաններում։ Ադրիատիկան վերածվում էր ներքին «իտալական ծովի»։

Իմպերիալիստական մեծ տերությունները և բալկանյան երկրների կառավարությունները հանդես չեկան ի պաշտպանություն Ալբանիայի ոտնակոխ արված անկախության։ Իսկ երբ Աղգերի լիգայում սովետական ներկայացուցիչը առաջարկեց քննել ալբանական հարցը (չեխոսլովակյանի հետ միաժամանակ) և կոնկրետ միջոցներ ձեռնարկել, ապա տարբեր առիթներով այն մերժվեց, ՍՍՀՄ-ը պաշտոնապես Ալբանիայի օկուպացումը որակեց որպես ագրեսիայի ակտ և երբեք չճանաչեց այդ զավթումը։ Ալբանական ժողովուրդն զգում էր սոցիալիզմի մեծ երկրի պաշտպանությունը, և հենց այդ էր նրան վստահություն տալիս ֆաշիզմի և ներքին ռեակցիայի ուժերի դեմ հաղթանակ տանելու գործում։

ԳԼՈՒԽ 15

ՀՈՒՆԱՍՏԱՆԸ 1918—1939 ԹԹ.

Հունաստանը համաշխարհային պատերազմից հետո

Հունաստանն իր պատմության նորագույն ժամանակաշրջանը մտավ որպես ագրարային երկիր, որը կախման մեջ էր գտնվում օտարերկրյա և առաջին հերթին անգլիական կապիտալից. վերջինիս բաժին էր ընկնում գյուղատնտեսության ու արդյունաբերության կապիտալ ներդրումների գրեթե 50 տոկոսը։ Հունաստանի տնտեսական կառուցվածքի մասին պերճախոս վկայում էր 1912 թ. մարդահամարը. երկրում եղած ընդամենը 2213 մանր և միջին ձեռնարկություններում զբաղված էր 36.124 բանվոր։ Աշխատող բնակչության մոտ 70 տոկոսը զբաղված էր գյուղատնտեսության մեջ, որտեղ պահպանվել էին չիթլուքային (կալվածատիրական) հողատիրության զգալի մնացուկներ։

Իր պետական կառուցվածքով Հունաստանը մնում էր սահմանադրական միապետություն, որը հենվում էր բուրժուա-կալվածատիրական բլոկի վրա։ Երկրի քաղաքական կյանքում գլխավոր դերը կատարում էին երկու կուսակցություններ՝ լիբերալ և ժողովրդական (միապետական)։ Լիբերալ կուսակցությունը, որը հիմնականում ներկայացնում էր հունական բուրժուազիայի շահերը, ստեղծվեց 1910 թ. Է. Վենիզելոսի կողմից. ժողովրդական կուսակցությունը, որը հիմնվեց 1915 թ. Դ. Գունարիսի կողմից, պաշտպանում էր կալվածատերերի և թագավորական արքունիքի, ինչպես նաև ծայրահեղ ռեակցիոն օլիգարխիական շրջանների շահերը։ Երկու կուսակցություններն էլ սերտորեն կապված էին օտարերկրյա կապիտալի հետ։

Նորագույն ժամանակներում Հունաստանի վրա շարունակում էին մեծ ազդեցություն գործել նոր հունական պետության կազմավորման պատմական պայմանները, ինչպես նաև նրա աշխարհագրական ու ստրատեգիական դիրքը, որի հետևանքով այն դարձավ մեծ տերությունների կատաղի պայքարի օբյեկտ ու թատերաբեմ, և չկարողացավ իր իսկական անկախությանը հասնել։ Հունաստանի քաղաքական դրության վրա ազդող գործոն եղավ այն հանգամանքը, որ հունական կոմպակտ բնակչության մի մասը գտնվում էր ուրիշ պետությունների կազմում կամ կախման մեջ էր գտնվում նրանցից։ Այդպես էր Կիպրոսի, Դոդեկանեզների վիճակը։ Մեծ թվով հույներ ապրում էին Փոքր Ասիայում։ Դա կենարար հող էր ստեղծում նաև «Մեծ Հունաստանի», «հինգ ծովերի» և «երկու մայրցամաքների» Հունաստանի մեծապետական տեսությունների համար։ Դրա հետ մեկտեղ Հունաստանի նորագույն պատմության մեջ զգացվում էր հույն ժողովրդի դեմոկրատական ու ազգային-ազատագրական ավանդույթների ազդեցությունը։

Եվ այսպես, Հունաստանի առջև կանգնած էին պատմական բարդ խնդիրներ՝ ազգային հարցի լուծման, ագրարային ռեֆորմի (չիթլուքների օտարացման) ավարտման, ազգային արդյունաբերության ստեղծման, միապետության

վերացման և դեմոկրատական այլ վերափոխությունների անցկացման անհրաժեշտությունը։

Այդ բոլորին խանգարում էր իմպերիալիստական տերությունների, առաջին հերթին Անգլիայի շահագիտական քաղաքականությունը, որը դժվարացնում և բարդացնում էր Հունաստանի առաջադեմ ուժերի պայքարը հանուն երկրի իսկական ազգային անկախության։

Հեղափոխական շարժման վերելքը 1918—1922 թթ.

Հունաստանի կառավարող շրջանները երկիրը պատերազմի մեջ ներքաշեցին Անտանտի կողմում։ Պատերազմում տված զոհերը, տնտեսական դժվարությունները, բլոկադայի տառապանքները սրեցին դասակարգային պայքարը Հունաստանում։ Երկրում ծավալվեց բանվորական շարժումը, որը հատկապես ուժեղացավ Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ազդեցության տակ։ 1918 թ. նոյեմբերի սկզբին կազմավորվեց Հունաստանի բանվորների ընդհանուր կոնֆեդերացիան (ՀԲԿ)։ Դրանից անմիջապես հետո ստեղծվեց Հունաստանի սոցիալիստական բանվորական կուսակցությունը (ՀՍԲԿ), որը 1920 թ. ընդունվեց Կոմինտերնի մեջ (1924 թ. նոյեմբերին այն վերանվանվեց Հունաստանի կոմունիստական կուսակցություն՝ ՀԿԿ)։ Դեռևս ՀՍԲԿ առաջին հիմնադիր համագումարում ընդունված ծրագրում հայտարարվում էր, որ կուսակցությունն իր առջև խնդիր է դնում ղեկավարել բանվոր դասակարգի պայքարը Ռուսաստանի բանվորների օրինակով քաղաքական իշխանությունը գրավելու համար։ ՀՍԲԿ-ն ակտիվ պայքար էր մղում հակասովետական ինտերվենցիայում Հունաստանի մասնակցության դեմ։

Ձախողված հակասովետական արշավանքից հետո հունական զորքերը ստրկացված հույների ազատագրման պատրվակի տակ Փոքր Ասիա ուղարկվեցին։ 1919 թ. մայիսին Զմյուռնիան, որը պատերազմին մասնակցելու համար Անտանտը խոստացել էր Հունաստանին, օկուպացվեց հունական զորքերով։ Այն բանից հետո, երբ Քեմալի գլխավորությամբ Թուրքական նոր կառավարությունը հրաժարվեց ճանաչել Անտանտի կողմից Թուրքիայի վրին փաթաթված պայմանագրի ստրկական պայմանները, իմպերիալիստական տերությունները հրահրեցին հույն-թուրքական պատերազմ։ Այդ պատերազմում հունական ռեակցիայի և նրա հովանավորների գլխավոր նպատակն էր ճնշել Թուրք ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը։ Թուրք ժողովրդի հերոսական պայքարը, որին օգնում էր երիտասարդ Սովետական Հանրապետությունը, հացրեց հունական զորքերի պարտությանը։ Մեկկեկես միլիոն հույներ հեռացան Փոքր Ասիայից, վերաբնակվելով Հունաստանում. նրանց կարգավորման ու «հին հայրենիքում» հարմարվելու անհրաժեշտությունը չափազանց սուր պրոբլեմ ծնեց երկրի կյանքում։

Փոքր Ասիայում կրած պարտությունը սրեց հին և ստեղծեց նոր տնտեսական ու քաղաքական բարդ պրոբլեմներ։ Երկրում հասունանում էր հեղափոխական ճգնաժամը։ Սակայն բանվոր դասակարգի անբավարար հասունության և ՀԿԿ-ի թուլության պայմաններում լիբերալների կուսակցությունը և բարձր սպայությունը տիրելով դրությանը, հեղաշրջում կատարեցին (այսպես կոչված 1922 թ. հեղափոխություն)։ Դրա հետևանքով ստեղծված «հեղափոխական կոմիտեն» գահ բարձրացրեց նոր թագավորի՝ Գեորգ II-ին, անցկացրեց մասնակի ագրարային ռեֆորմ, պատժեց փոքրասիական աղետի անմիջական մեղավորներին։ Այդ ռեֆորմներով բուրժուազիային հաջողվեց սահմանափակել հեղափոխական շարժումը և փրկել միապետությունն ու բուր-

ժուա-կալվածատիրական կարգերը։ 1922 թ. հոկտեմբերի 11-ին Հունաստանի և Թուրքիայի միջև կնքվեց զինադադար, իսկ 1923 թ. հունիսի 24-ին Լոզանում՝ հաշտության պայմանագիր։

Պատերազմն ավարտվելուց հետո ֆինանսական ճգնաժամի, թանկության, աշխատավարձի անկման, գործազրկության աճի պայմաններում երկրում վերստին սրվեց դասակարգային պայքարը։ 1923 թ. օգոստոսին սոցիալիստների և աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայի ղեկավարությամբ անցկացվեց ընդհանուր գործադուլ։ Կառավարությունը գործադուլավորների դեմ զենք գործադրեց, երկրում հայտարարելով պաշարողական դրություն։ Բանվորական միությունները ցրվեցին, սոցիալիստները հալածանքի ենթարկվեցին։ Սակայն գործադուլը, թեկուզև պարտություն կրեց, մեծ ազդեցություն գործեց երկրում քաղաքական պայքարի հետագա զարգացման վրա։

Հունաստանը կապիտալիզմի ժամանակավոր կայունացման ժամանակաշրջանում

1923 թ. դեկտեմբերի 16-ին պառլամենտական ընտրություններում տեղերի մեծամասնությունը ստացան լիբերալները։ 1924 թ. մարտին կառավարություն կազմեց մանր և միջին բուրժուազիայի «Դեմոկրատական Միություն» կազմակերպության պարագլուխ Ա. Պապանաստասիուն։ 1924 թ. մարտի 25-ին Ազգային սահմանադիր ժողովը Հունաստանը հռչակեց հանրապետություն։ Գեորգ II թագավորը երկրից հեռացավ։

Այդ նույն ժամանակ էլ Պապանաստասիուի կառավարությունը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Սովետական Միության հետ։ Անցկացվեց սահմանափակ նոր ագրարային ռեֆորմ. մեծ փրկագնով գաղթականների և զորացրված զինվորների մի մասը հող ստացավ։ Սակայն մշակման համար պիտանի հողի կեսը մնաց կալվածատերերի ձեռքում։ Երկրի տնտեսական դրությունը չափազանց դանդաղ էր կայունանում. բյուջեի 30 տոկոսը (1924—1925 թթ.) ծախսվում էր օտարերկրյա փոխառությունները մարելու և դրանց տոկոսների վրա։ Աշխատավոր զանգվածների դրությունը շարունակում էր մնալ ծանր։

1925 թ. ՀԿԿ-ի ղեկավարությամբ տեղի ունեցան աշխատավորների մասսայական ելույթներ։ Դրանցից առավել նշանակալիներն էին երկաթուղայինների ընդհանուր գործադուլը, Փոքր Ասիայից եկած գաղթականների և պատերազմի վետերան գյուղացիների ելույթը հանուն հողի, ընդդեմ անչափ մեծ հարկերի և այլն։ Թեսալիայի շրջանում գյուղացիները զավթում էին չիֆլիքները։ Հունաստանի խոշոր բուրժուազիան և օտարերկրյա իմպերիալիստները, որոնք ահաբեկված էին երկրում տեղի ունեցող մասսայական պայքարի աճից, ջանում էին ամրապնդել իրենց դիրքերը ռազմական դիկտատուրայի հաստատման միջոցով։ 1925 թ. հունիսին գեներալ Պանգալոսը զավթեց իշխանությունը։ Իր գլխավոր հարվածը դիկտատորն ուղղեց բանվորական շարժման և կոմունիստների դեմ. ՀԿԿ-ն հայտարարվեց օրենքից դուրս։ Միաժամանակ Պանգալոսը լայն զիջումներ կատարեց օտարերկրացիներին, ամենից առաջ ֆրանսիական մոնոպոլիաներին, որոնք կարևոր կոնցեսիաներ ստացան։ Պանգալոսի քաղաքականությունը ոչ լիովին էր բավարարում հունական բուրժուազիային։ Օգտվելով դիկտատուրայից ժողովրդական զանգվածների դժգոհությունից, նա տապալեց Պանագալոսին (1926 թ. օգոստոս)։

Կապիտալիզմի մասնակի կայունացման տարիներին Հունաստանի զարգացման մեջ էական տեղաշարժեր չկատարվեցին։ Այն առաջվա պես մնում էր ագրարային, հետամնաց երկիր։ Գյուղում գոյություն ունեցած ֆեոդալական մնացուկները չհաղթահարվեցին։ Այդ նույն ժամանակ լիբերալ կաբինետներից հունական բուրժուազիայի ռազմական դիկտատուրային անցնելը վկայում էր երկրում տիրող քաղաքական իրադրության անկայունության մասին։

Հունաստանը համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում

1929—1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը տարածվեց նաև Հունաստանում։ Հազարավոր քայքայված գյուղացիներ հարկերը չվճարելու պատճառով վտարվեցին իրենց հողերից, գյուղատնտեսական շատ շրջաններ բռնկված էին սովով։ Արդյունաբերական արտադրանքը 1929 թ. մինչև 1931 թ. նվազեց ավելի քան 20 տոկոսով։ Գործազուրկների թիվը հասավ 280 հազ. մարդու։ Աշխատավորության դրությունը խիստ վատացավ։ Ճգնաժամը կործանարար ազդեցություն ունեցավ Հունաստանի ֆինանսների վրա, ուժեղացրեց նրա կախումը օտարերկրյա կապիտալից. 1932 թ. վճարումները փոխառությունների դիմաց կազմեցին երկրի ազգային եկամտի 54 տոկոսը։

Սովի ու գործազրկության դեմ պայքարի ելան ինչպես բանվոր դասակարգն ու գյուղացիությունը, այնպես էլ քաղաքային միջին խավերը։ Ջանալով կանխել մասսայական շարժման զարգացումը, Է. Վենիզելոսի կառավարությունը (իշխանության գլուխ էր գտնվում սկսած 1928 թ.) գործողության մեջ դրեց կոմունիստների դեմ ուղղված արտակարգ օրենքը, սահմանեց աշխատավարձի հարկադիր կարգավորում և այլն։ Սակայն Է. Վենիզելոսն ու նրա կուսակցությունը արդեն լիովին չէին բավարարում խոշոր բուրժուազիայի շահերը, որը սկսել էր աջակցություն ցույց տալ միապետական ժողովրդական կուսակցությանը։ Առաջին պլան էին մղվում առավել ռեակցիոն տարրերը, որոնք պահանջում էին վերականգնել միապետությունը։ 1933 թ. մարտին կայացած պառլամենտական ընտրություններից հետո իշխանությունն անցավ միապետական բլոկի ձեռքը։ Այդ պայմաններում Հունաստանում առաջացավ հիտլերյան Գերմանիայի երկրպագու, հունական աշխատավորների շարանենգ թշնամի Ի. Մետաքսասի ղեկավարությամբ ֆաշիստական կուսակցությունը։

ՀԿԿ-ն համառ պայքար էր մղում հանրապետության պահպանման և քաղաքական ազատությունների համար, բայց նրան չհաջողվեց քաղաքական ակտիվ գործողությունների հանել լայն մասսաներին։ Որոշակի առումով դա պայմանավորված էր ՀԿԿ-ի այդ ժամանակվա ղեկավարության քաղաքականության մեջ, առաջին հերթին ռեֆորմիստական ու գյուղացիական կուսակցությունների հանդեպ դրսևորված աղանդավորական սխալներով. դրանք բնութագրվում էին որպես սոցիալ-ֆաշիստական և ագրարային-ֆաշիստական կուսակցություններ, մի բան, որը դժվարացնում էր դեմոկրատական ուժերի համագործակցությունը։ Միայն Կոմինտերնի օժանդակությամբ ՀԿԿ Կենտկոմի VI պլենումը և ՀԿԿ V համագումարը մշակեցին ռեալիստական քաղաքականություն, նշելով բանվոր դասակարգի գլխավորությամբ հակաիմպերիալիստական լայն ճակատի ստեղծման անհրաժեշտությունը բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն կատարելու համար՝ առավել կամ նվազ արագությամբ այն սոցիալիստական հեղափոխության վերաճելու հեռանկարով հանդերձ։ Համագումարն ընդգծեց երկրում ֆաշիստական վտանգի աճի դեմ պայքարելու հատուկ կարևորությունը և կոչ արեց դրա համար ստեղծել հակաֆաշիստական ուժերի լայն կոալիցիա։

Հունաստանում առաջիկա հեղափոխության բնույթի և շարժիչ ուժերի ճիշտ որոշումը կարևորագույն նշանակություն ուներ ՀԿԿ-ի և ամբողջությամբ վերց-

բած երկրի հակաֆաշիստական դեմոկրատական շարժման զարգացման պատմության մեջ։

Հունաստանը երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին

Ֆաշիստական սպառնալիքի դեմ մղվող պայքարի ընթացքում ՀԿԿ-ն սկսեց վերածվել մասսայական կուսակցության. զգալիորեն ուժեղացան նրա դիրքերը բանվորական շարժման մեջ, աճեց նրա ազդեցությունը քաղաքի և գյուղի միջին խավերի շրջանում։ 1934 թ. ՀԿԿ-ի նախաձեռնությամբ գործողությունների միասնության վերաբերյալ համաձայնություն ստորագրվեց գյուղացիական կուսակցության, սոցիալիստական կուսակցության, բանվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցության, Հունաստանի բանվորների ընդհանուր կոնֆեդերացիայի, Բանվորների ունիտար կոնֆեդերացիայի և անկախ արհմիությունների հետ։ Երկրում հասունանում էր գործադուլային պայքարը. հենց միայն 1934 թ. տեղի ունեցավ 482 գործադուլ, որոնց մասնակցեց 182 հազ. մարդ։ 1936 թ. սկզբին ՀԿԿ-ն մի շարք բուրժուա-դեմոկրատական կուսակցությունների և կազմակերպությունների ղեկավարների հետ համաձայնագիր կնքեց աճող ֆաշիստական վտանգի պայմաններում համատեղ գործողությունների վերաբերյալ։ Սակայն այդ կուսակցությունների՝ մասսայական ժողովրդական ելույթներից վախեցող պարագլուխների դիրքը հասցրեց այն բանին, որ Հունաստանում ծնունդ առնող հակաֆաշիստական ժողովրդական ճակատին վիճակված չէր կազմավորվելու։

Դեմոկրատական ուժերի պառակտումից և գործողությունների անհամաձայնությունից հունական ռեակցիան օգտվեց աշխատավորների, երկրում դեմոկրատական ազատությունների վրա վճռական հարձակում գործելու համար։ 1935 թ. նոյեմբերին Հունաստանում վերականգնվեցին միապետական կարգերը։ 1936 թ. մայիսին նրա պրեմիեր մինիստր դարձավ Ի. Մետաքսասը, որն սկսեց պետական հեղաշրջման ակտիվ նախապատրաստությունը։ Այդ նույն թվականի օգոստոսին բանակի և ռազմածովային նավատորմի միջոցով ճնշելով մասսայական հակաֆաշիստական ելույթը Հյուսիսային Հունաստանում, որը լայն աջակցություն գտավ երկրի մյուս մարզերի աշխատավորության կողմից, Ի. Մետաքսասը կազմակերպեց ռազմա-ֆաշիստական խռովություն։ Աշխատելով վերջ տալ աշխատավորության՝ երկրի պատմության մեջ աննախընթաց պայքարի վերելքին, Հունաստանի օլիգարխիական վերնախավն ու թագավորական արքունիքը, որոնց թիկունքում կանգնած էին օտարերկրյա, գլխավորապես անգլիական մոնոպոլիաները, իշխանությունը հանձնեցին ծայրահեղ ռեակցիայի ուժերին։ Պառլամենտը ցրվեց, բոլոր քաղաքական կուսակցություններն ու կազմակերպություններն արգելվեցին, վերացվեց խոսքի և ժողովների ազատությունը։ Այսպես կոչված «Կոմունիզմի և նրա հետևանքների դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ» արտակարգ օրենքի հիման վրա բանտերը նետվեցին հազարավոր կոմունիստներ և այլ հակաֆաշիստներ։ 1936-ից մինչև 1940 թ. ձերբակալվեցին 97 հազ. կոմունիստներ և դիկտատուրայի այլ հակառակորդներ։

Մետաքսասի ռեժիմը արտացոլում էր Հունաստանի կապիտալիստական սիստեմի խոր հակասությունները. տնտեսական և քաղաքական տեսակետից այն կախման մեջ էր գտնվում բրիտանական մոնոպոլիաներից, իսկ գաղափարախոսությունն ընդօրինակել էր գերմանական ու իտալական ֆաշիզմից։ Այդ առանձնահատկությունն իր կնիքը դրեց նաև Հունաստանի արտաքին քաղաքականության վրա՝ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին։

Չնայած Անգլիայից Հունաստանի ունեցած տնտեսական կախմանը (Հունական պարտքի 53 տոկոսն ընկնում էր Անգլիային), Մետաքսասը մերձեցման դիմեց հիտլերյան Գերմանիայի հետ, որը Հունաստանի վզին փաթաթեց մի շարք ստրկական առևտրական համաձայնագրեր (համաշխարհային պատերազմի նախօրյակին Հունաստանը Գերմանիային պարտք էր ավելի քան 1,5 միլրդ դրահմ)։

Վերահաս երկրորդ համաշխարհային պատերազմի պայմաններում հունական դիկտատորը գործելով «չեզոքության» դիմակի տակ, պաշտպանում էր մյունխենյան քաղաքականությունը, հավասարակշռություն պահպանում բուրժուա-դեմոկրատական պետությունների և ֆաշիստական առանցքի տերությունների միջև։ Այդ վիճակից ելքը Մետաքսասը տեսնում էր սովետական պետության դեմ ընդհանուր արշավանքում Հունաստանի մասնակցության մեջ, որի պլաններն այդ ժամանակ նյութում էին արևմտյան տերությունների ռեակցիոն իմպերիալիստական շրջանները։

ԳԼՈՒԽ 16

ԲԵԼԳԻԱՆ
1918—1939 ԹԹ.

Բելգիան առաջին համաշխարհային պատերազմից հետո

Բելգիական թագավորությունը բարձր ինդուստրիալ երկիր է, որը դեռ XX դարի սկզբից բնակչության ամեն շնչին ընկնող մի շարք արտադրանքի արտադրությամբ գտնվում էր աշխարհի հինգ առաջավոր երկրների թվում։ Պատերազմից հետո աշխատող բնակչության 46,8 տոկոսը զբաղված էր արդյունաբերության, իսկ 15,2 տոկոսը՝ զարգացած գյուղատնտեսության մեջ։ Արտադրության և կապիտալի համակենտրոնացման մեծ աստիճանը հիմք դարձավ մոնոպոլիաների ստեղծման համար, որոնց մեջ հիմնական դեր էր խաղում «Սոսիետե ժեներալը»։ Բելգիայում պատրաստվող արտադրանքի 50—60 տոկոսը (մի քանի ճյուղերում մինչև 80—90 տոկոսը) արտահանվում էր, չափազանց զգալի էր նաև կապիտալի արտահանումը։ Բելգիայի կապիտալիստական էկոնոմիկայի զարգացման բարձր տեմպերին շատ բանով նպաստեց «Բելգիական» Կոնգոյի գաղութային գիշատիչ շահագործումը։

Բարձր զարգացած մյուս երկրների համեմատությամբ Բելգիայում գոյություն ունեին ավելի ցածր աշխատավարձ, ավելի երկարատև աշխատանքային օր. բացի այդ, շատ բանվորներ գյուղում պահում էին փոքրիկ հողամասեր, որտեղ և նրանք ապրում էին՝ ամեն օր քաղաք գալով աշխատելու։

Բելգիայի բնակչությունը կազմված է էթնիկական երկու խմբերից՝ ֆլամանդցիներից (մոտ 4 մլն մարդ) և վալլոններից (մոտ 3,5 մլն մարդ)։ Երկրում իշխող դիրքեր էր գրավում վալլոնական բուրժուազիան. ֆլամանդական կապիտալը ենթարկվող դեր էր խաղում։ Ֆլանդրիան Բելգիայի տնտեսապես նվազ զարգացած մասն էր. կյանքի ու աշխատանքի պայմաններն այնտեղ ավելի վատ էին, զգացվում էր նաև ֆլամանդցիների ազգային անհավասարությունը մշակույթի ասպարեզում, մասնավորապես արտոնյալ վիճակում էր գտնվում ֆրանսերեն լեզուն, որին Ֆլանդրիայի բնակչության գերակշռող մասը չէր տիրապետում։

Բելգիայի քաղաքական կյանքում առաջատար դեր էր խաղում կաթոլիկական կուսակցությունը (ավելի ուշ՝ կաթոլիկական միությունը), որը հենվում էր մասսայական կաթոլիկական կազմակերպությունների՝ կոոպերատիվների, արհմիությունների և այլնի վրա, որոնք առավել մեծ տարածում էին գտել Ֆլանդրիայում։ Կուսակցության ղեկավար պոստերը գտնվում էին խոշոր բուրժուազիայի և կաթոլիկական բարձր հոգևորականության ձեռքում։ Մյուս խոշոր բուրժուական կուսակցությունը՝ լիբերալ կուսակցությունն էր։ Բանվորների, հատկապես վալլոնյան շրջաններում մեծ ազդեցություն ուներ բելգիական բանվորական կուսակցությունը (ԲԲԿ), որի մեջ իշխում էին ռեֆորմիստական հայացքները։ Նրա պարագլուխներ է. Վանդերվելդեն, Կ. Դյուսմանսը, Լ. դը Բրուկկերը, Գ. դը Մանը աչքի ընկնող դեր էին խաղում II Ինտերնացիոնալում։ ԲԲԿ-ն հենվում էր արհմիութենական հանձնաժողովի միջոցով միավորված արհմիությունների, լայնորեն զարգացած կոոպերատիվ շարժման և երիտասարդական կազմակերպությունների վրա։

Բելգիայի տնտեսական ու քաղաքական դրությունը 20-ական թվականներին

Պատերազմը Բելգիայի համար ծանր հետևանքներ ունեցավ. երկրի մեծ մասը օկուպացվեց գերմանական բանակի կողմից կամ գտնվում էր մարտական գործողությունների գոտում։ Արդյունաբերական արտադրությունը գրեթե կանգ առավ, հատկապես տուժեց մետալուրգիական արդյունաբերությունը։ Երկրում զգացվում էր պարենամթերքի սուր պակաս, աճում էին գներն ու ինֆլյացիան, գործազուրկների թիվը հասավ 1 մլն մարդու։

Պատերազմի ժամանակ սրվեց ազգային հարցը։ Ֆլամանդական նացիոնալիստները կոչ էին անում ստեղծել անկախ Ֆլանդրիա, օգտագործելով իմպերիալիզմի դարաշրջանում ազգային ճնշման ուժեղացումը և ազգային ինքնագիտակցության աճը։ Բելգիական բանակում գործում էր անլեգալ ֆրոնտիստական կուսակցություն, որը կողմնորոշվում էր դեպի Գերմանիայի հաղթանակը. օկուպացված տերիտորիայում առաջացան ֆրոնտիստական կուսակցությանը մերձակա ֆլամանդական ակտիվիստների խմբեր, որոնք համագործակցում էին գերմանական իշխանությունների հետ։ Սակայն ֆլամանդական աշխատավորության հիմնական զանգվածը կայզերական Գերմանիայի դաժան օկուպացիոն քաղաքականության պայմաններում, ամբողջությամբ վերցրած, բացասական էր վերաբերվում ֆլամանդական ակտիվիստների գործունեությանը։

Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխության, Գերմանիայում՝ Նոյեմբերյան հեղափոխության և Եվրոպայի հարևան երկրներում զարգացող հեղափոխական շարժումների ազդեցության տակ Բելգիայում սկսեց ծավալվել մասսայական պայքարը։ Աշխատելով արգելակել հեղափոխական պրոցեսների զարգացումը, Բելգիայի կառավարող շրջանները կանգնեցին սոցիալական լայն մանևրման ուղու վրա։ Երեք սոցիալիստների մասնակցությամբ 1918 թ. նոյեմբերին կազմված կառավարությունը խոստացավ մի ամբողջ շարք ռեֆորմներ անցկացնել։ 1919—1921 թթ. իրականացվեցին մի քանի ռեֆորմներ. զգալիորեն ընդլայնվեց ընտրողների թիվը, ընդունվեց էժան բնակարանների շինարարության ծրագիր, թոշակներ սահմանվեցին պատերազմի զոհերի և ծերության համար (65 տ հետո), մտցվեց 8-ժամյա բանվորական օր, վերացվեցին գործադուլների և արհմիությունների դեմ եղած օրենքները և այլն։

Տիրող դասակարգերի դրության ամրապնդմանը նպաստեց որպես Ֆրանսիայի կրտսեր մրցակից հանդես եկող բելգիական իմպերիալիզմի դիրքերի բավական արագ վերականգնումը պատերազմն ավարտվելուց հետո։ Բելգիան նշանակալից դեր էր խաղում Վերսալյան սիստեմում, նրա արտաքին քաղաքականությունը բնութագրվում էր հակասովետական ուղղվածությամբ (Բելգիան ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց միայն 1935 թ.)։ Հետպատերազմյան խաղաղ կարգավորման հետևանքով Բելգիային միացվեցին Էյպենի ու Մալմեդիի օկրուգները՝ վալլոնա-գերմանական խառն բնակչությամբ հանդերձ և տրվեց Աֆրիկայում Ռուանդա-Ուրունդիի մանդատը։ Փոխառություններն ու հարկային եկամուտները, Գերմանիայից ստացվող ռեպարացիաները, Կոնգոյի գաղութային շահագործման ուժեղացումը նպաստեցին էկոնոմիկայի արագ վերականգնմանը։ Հետպատերազմյան բումի

պայմաններում, օգտագործելով պետության օգնությունը, բելգիական մոնոպոլիաները ոչ միայն վերականգնում էին, այլև մոդեռնացնում արդյունաբերությունը։ Արդեն պատերազմից հետո առաջին տարիներին զգալիորեն կրճատվեց գործազրկությունը (բացառությամբ ճգնաժամային 1920—1921 թթ., երբ այն հասավ ապահովագրված բանվորների գրեթե $^1/_3$-ին), բարելավվեց բանվոր դասակարգի դրությունը, որը պայմանավորեց հեղափոխական շարժման անկումը երկրում և բանվորների մի մասի մեջ շովինիստական ու գաղութատիրական տրամադրությունների տարածումը։

Կապիտալիստական ժամանակավոր կայունացման տարիներին Բելգիայի արդյունաբերական արտադրությունը հասավ միջպատերազմյան ժամանակաշրջանի բարձրագույն մակարդակին։ Հատկապես արագ էր զարգանում Ֆլանդրիայի էկոնոմիկան, առաջին հերթին արդյունաբերության շինարարական, քիմիական, ավտոմոբիլային ճյուղերը, ընդարձակվում էր Կոնգոյից ստացվող հումքի վերամշակումը, որը նպաստեց ֆլամանդական բուրժուազիայի ուժերի համախմբմանը և նացիոնալիստական տարրերի գործունեության ակտիվացմանը։ Սակայն ազգային ֆրոնտիստական կուսակցությունը (ֆլամանդական նացիոնալիստների կազմակերպությունը) առաջադրելով «ազգային ազատագրության» պահանջ, չուներ ֆլամանդական պրոբլեմի լուծման ուղիների ու ձևերի վերաբերյալ միասնական կոնցեպցիա։ Բացի այդ, ֆլամանդական նացիոնալիստների ծայրահեղ աջ թևում տարեցտարի ուժեղանում էին ֆաշիստական տենդենցները, իսկ գաղութատեր ֆլամանդացիները տխուր հրաշակ ձեռք բերեցին Կոնգոյի բնակչության շահագործման դաժանությամբ։ Այդ պայմաններում կաթոլիկական միությունը, որը ճկուն տակտիկայի և ռեֆորմների կողմնակից էր, մնում էր որպես երկրի առաջատար քաղաքական կուսակցությունը և վճռական ուժը կոալիցիոն կառավարություններում։ Կաթոլիկական միությունը և ԲԲԿ-ն 20—30-ական թվականներին կանգնեցին ֆլամանդական լեզվի իրավահավասարություն մտցնելու՝ անցկացվելիք ռեֆորմների ուղին։

Բանվորական շարժումը։ ԲԿԿ-ի կազմավորումը

ԲԲԿ ղեկավարության ռեֆորմիստական քաղաքականությունը, բուրժուազիայի հետ նրա համագործակցությունը արտաքին ու գաղութային քաղաքականության անցկացման գործում, երկրի ներսում արմատական սոցիալական վերափոխումներից հրաժարվելը հասցրին կուսակցության ձախ թևի ուժեղացմանը։ Այն գլխավորում էր Ժոզեֆ Ժակմոտը՝ Բրյուսելի ծառայողների արհմիության քարտուղարը և արհմիութենական հանձնաժողովի անդամը։ Ժոզեֆ Ժակմոտը և նրա կողմնակիցները հրատարակում էին «Էքսպլուատե» թերթը, պահանջում հեղափոխական տակտիկա իրականացնել, հանդես էին գալիս ի պաշտպանություն Սովետական Ռուսաստանի։ 1920 թ. գարնանը ԲԲԿ գլխավոր խորհրդի բյուրոյում ընտրված Ժակմոտը ջանում էր ակտիվացնել կուսակցության մեջ եղած ձախ ուժերը, բայց նա հանդես էր գալիս ԲԲԿ-ից դուրս գալու դեմ, հուսալով այն վերածել հեղափոխական կուսակցության։ Այդ նպատակով Ժակմոտը ստեղծում էր «Էքսպլուատեի» բարեկամների խմբեր։ 1920 թ. հուլիսին կայացած այդ խմբերի կոնգրեսում Ժակմոտի գլխավորությամբ ստեղծվեց «Էքսպլուատեի» բարեկամների ազգային ֆեդերացիա։ Ֆեդերացիայի հետ 1919—1920 թթ. Գենտում, Անտվերպենում, Բրյուսելում և այլ քաղաքներում առաջացան կոմունիստական

խմբեր, որոնց անդամների մի մասը գտնվում էր անարխիզմի գաղափարների ազդեցության տակ։ 1920 թ. սեպտեմբերին այդ խմբերը միավորվեցին և ընդունեցին կոմունիստական կուսակցություն անունը, որը և ներկայացվեց Կոմինտերնի II կոնգրեսում։ Նրա անդամները կանգնած էին ծայրահեղ աղանդավորական դիրքերում, ժխտում էին պառլամենտական պայքարը, անտեսում սիստեմատիկ աշխատանքը մասսաների մեջ։ Եվ թեկուզ նրանց ազդեցությունը բանվորների մեջ աննշան էր, նրանք կոչ էին անում զավթել իշխանությունը, ժակմոտիստներին մեղադրում ոչ հեղափոխականության և նույնիսկ ցենտրիզմի մեջ, որը դժվարացնում էր նրանց մերձեցումը Բելգիայի մյուս հեղափոխական հոսանքների հետ։

Երկրի հեղափոխական շարժման մեջ եղած տարաձայնությունների հաղթահարման գործում որոշակի նշանակություն ունեցավ տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում (1920—1921 թթ.) բելգիական բանվոր դասակարգի պայքարը հանուն տնտեսական դրության բարելավման, ինչպես նաև ի պաշտպանություն Սովետական Ռուսաստանի։ 1920 թ. հուլիսին և օգոստոսին Անտվերպենի նավահանգստային բանվորները հրաժարվեցին բեռնել սպիտակ լեհերի համար նախատեսված ռազմական հանդերձանքը։ Նավահանգստային բանվորների ելույթը պաշտպանություն գտավ մյուս ձեռնարկությունների բանվորների կողմից, բանվորների ճնշման տակ Լեհաստան սպառազինություն փոխադրելը դադարեցվեց։

Այն բանից հետո երբ ԲԲԿ կոնգրեսը ռեֆորմիստների ճնշման տակ որոշում ընդունեց «Էքսպլուատեի» բարեկամների ֆեդերացիայի ցրման մասին (1920 թ. դեկտեմբեր), նա խզեց կապերը ԲԲԿ-ի հետ։ Ֆեդերացիայի II կոնգրեսը (1921 թ. փետրվար) հավանություն տվեց Կոմինտերնի թեզիսներին. 1921 թ. մայիսին (III կոնգրեսում) նա որոշում ընդունեց կոմկուսի ստեղծման, Կոմինտերնին միանալու և Բելգիայի բոլոր կոմունիստական խմբերի միավորման անհրաժեշտության մասին։ Կոմինտերնի III կոնգրեսում ներկա էին երկու կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչները։ 1921 թ. սեպտեմբերին կայացած միացյալ կոնգրեսում ստեղծվեց Բելգիայի կոմունիստական կուսակցությունը, որի ղեկավար դարձավ նրա հիմնադիր Ժ. Ժակմոտը, իսկ կենտրոնական օրգանը՝ «Դրապո ռուժ» թերթը։ Չնայած սակավաթվությանը և աղանդավորական հաճախակի սխալներին, կոմունիստներն աչքի ընկնող դեր էին խաղում 20—30-ական թվականների բանվորական շարժման մեջ և ազդեցություն ունեին հատկապես մետաղագործների, երկաթուղայինների և հանքագործների շրջանում։

ԲԲԿ-ի պարագլուխները կայունացման ժամանակաշրջանում շարունակում էին խոշոր կապիտալի հետ համագործակցության քաղաքականությունը։ 1925 թ. ընտրություններում ԲԲԿ-ն հավաքեց 820 հազ. ձայն, առաջին տեղ դուրս գալով դեպուտատների պալատի մանդատների թվով։ 1925 թ. ամռանը կաթոլիկների և սոցիալիստների (Պուլե-Վանդերվելդե) ներկայացուցիչներից ստեղծվեց կառավարություն, որը էկոնոմիկայի կայունացման գլխավոր ծանրությունը դրեց աշխատավորության ուսերին։ ԲԲԿ-ի պարագլուխները հրաժարվելով իրենց նախընտրական խոստումներից, հանդես էին գալիս գործադուլների դեմ, հալածում կոմունիստներին, նրանց վտարելով արհմիություններից, պաշտպանում կառավարող շրջանների հակասովետական քաղաքականությունը։

Բելգիայի տնտեսական և քաղաքական դրությունը 1930—1939 թթ.

1930 թ. Բելգիայի էկոնոմիկային հարվածեց ճգնաժամը, խիստ ընկավ արտադրությունը, 47 տոկոսով կրճատվեց արտահանությունը։ 1932 թ. վերջին երկրում հաշվվում էր 300 հազ. լիովին և մասնակի գործազուրկ. զգալիորեն նվազեց բանվորների և ծառայողների աշխատավարձը։ Ճգնաժամի տարիներին երկրում աճեց գործադուլային շարժումը։ Առանձնապես սուր դասակարգային մարտեր էին տեղի ունենում Ֆլանդրիայում։ 1932 թ. մասսայական գործադուլները տարածվեցին նաև Վալլոնիայում։ Հուլիսին Բորինաժում գործադուլ էին անում 220 հազ. հանքագործներ, մետաղագործներ և այլ մասնագիտությունների տեր բանվորներ։ Մի շարք շրջաններում պայքարին ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում կոմունիստները։ Շատ վայրերում հանքագործները կառուցում էին բարիկադներ, կազմակերպում մասսայական ցույցեր։ Բանվորների դեմ նետվեցին ժանդարմներ ու զորքեր, արյունալի ընդհարումների ժամանակ բանվորների մեջ եղան սպանվածներ, հարյուրավոր բանվորներ վիրավորվեցին կամ ձերբակալվեցին։ Մի շարք տեղերում ֆլամանդացի զինվորները հրաժարվում էին կրակել վալլոնցի բանվորների վրա կամ շտեյկերեխերներ դառնալ։ 1932 թ. մասսայական գործադուլները վկայում էին բանվոր դասակարգի ակտիվության նոր վերելքի մասին։

ԲԲԿ-ի աջ պարագլուխները փաստորեն պաշտպանում էին այն բոլոր միջոցառումները, որոնք ուղղված էին աշխատավորության դեմ, սաբոտաժի էին ենթարկում գործադուլային շարժումը։ ԲԲԿ-ի պարագլուխներից մեկը՝ դը Մանը մշակեց ճգնաժամից «դուրս գալու» պլան (այսպես կոչված աշխատանքի պլան), որը 1933 թ. արժանացավ ԲԲԿ կոնգրեսի հավանությանը։ Պլանը նախատեսում էր արդյունաբերության հիմնական ճյուղերի և բանկերի ազգայնացում։ Սակայն 1935 թ. մտնելով կառավարության մեջ, ԲԲԿ ղեկավարությունը «աշխատանքի պլանը» իրականացնելու մտադրություններ չէր դրսևորում։ Պատերազմը սկսվելու պահին արդյունաբերական արտադրությունը այդպես էլ չհասավ 1929 թ. մակարդակին։ Ավելի քան 400 հազ. մարդ (1938 թ. վերջին) աշխատանք չուներ։

Ճգնաժամի և մասսայական բանվորական շարժման տարիներին ռեակցիոն ուժերը ֆաշիստական տարրերին օգտագործում էին ֆլամանդացիների և վալլոնցիների միջև թշնամություն սերմանելու համար։ Մի շարք վայրերում նրանք կազմակերպեցին անկարգություններ ու ընդհարումներ։ Ֆրոնտիստական կուսակցության մեջ ուժեղացավ ֆաշիստական թևը, որը կոչ էր անում ջարդել «վալլոնցիներին ու կոմունիստներին»։ Նրա բազայի վրա ստեղծվեց «ազգային-համերաշխականներ միությունը», որը պահանջում էր Ֆլանդրիան անջատել Բելգիայից և ստեղծել «Մեծ Նիդերլանդներ» նացիստական Գերմանիայի հետ կապված ազգային-համերաշխական Ֆլանդրիայի ղեկավարությամբ։ Ռեքսիստների ֆաշիստական կազմակերպությունները (նրանց նշանաբանում եղած «քրիստոս-ռեքս»—թագավոր արտահայտությունից) Լ. Դեգրելի գլխավորությամբ վալլոնյան պրովինցիաներում և Բրյուսելում, որոնք հանդես էին գալիս թագավորի ուժեղ իշխանության օգտին, և ֆլամանդական ազգային համերաշխականները Բելգիայում եղած երկու հիմնական էթնիկական խմբերի առկայությունը փորձում էին իրենց պրոպագանդայում օգտագործել

ազգային թշնամանք սերմանելու և Ֆլանդրիայի ու Վալլոնիայի բանվորների դասակարգային համերաշխությունը թուլացնելու համար։ Սակայն նրանք չկարողացան մեծ հաջողությունների հասնել։ Բելգիական բանվորները հակահարված տվեցին ֆաշիստական ջարդարարներին։ 1936 թ. հոկտեմբերին հեղաշրջում կատարելու նրանց փորձերը ձախողվեցին։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ֆաշիստական կազմակերպությունների ազդեցությունը խիստ ընկավ։ Ֆաշիստական շարժման թուլացման մեջ մեծ էր բելգիական բանվորների և ԲԲԿ-ի ծառայությունը։ 1935 թ. կայացած կոնֆերանսից հետո, ուր քննադատվեցին կուսակցության ղեկավարության աղանդավորական սխալները և ընտրվեց ԲԿԿ նոր կենտրոնական կոմիտե, կոմկուսի ազդեցությունն ուժեղացավ։ 1936 թ. ընտրություններին նա եռապատկեց դեպուտատական տեղերի թիվը։ Բելգիական կոմունիստներն ընթանում էին խաղաղության պահպանության համար մղվող պայքարի ավանգարդում, ակտիվորեն հանդես գալիս Եթովպիայում, Իսպանիայում և Կենտրոնական Եվրոպայում ֆաշիստական ագրեսիայի դեմ։ Իսպանիայի ինտերնացիոնալ բրիգադներում մարտնչում էին 2 հազ. բելգիական կամավորներ։

1936 թ. ֆրանսիական հակաֆաշիստական և դեմոկրատական ուժերի և ֆրանսիական բանվոր դասակարգի պայքարի հաջողությունների ազդեցության տակ Բելգիայում ուժեղացավ գործադուլային շարժումը, որը հարձակողական բնույթ էր կրում։ Առավել մեծ նշանակություն ձեռք բերեց 1936 թ. տեղի ունեցած 500 հազ. հանքագործների գործադուլը։ Շատ գործադուլներում առաջատար դեր էին խաղում կոմունիստները։ Բելգիայի կոմկուսը հանդես եկավ երկրում ժողովրդական ճակատ ստեղծելու նախաձեռնությամբ։ Այդ կոչը պաշտպանեցին ձախ մտավորականության որոշ ներկայացուցիչներ, բայց արհմիութենական հանձնաժողովը և ԲԲԿ-ն մերժեցին ԲԿԿ-ի առաջարկությունները։ Բելգիական կառավարությունը մասսաների ճնշման և Ֆրանսիայում ժողովրդական ճակատի տարած հաղթանակի ազդեցության տակ անցկացրեց մի քանի ռեֆորմներ. սահմանվեց աշխատավարձի մինիմում, ընդունվեց բոլոր բանվորների ու ծառայողների ամենամյա վարձատրվող արձակուրդների մասին օրենք, իսկ 1937 թվականից ծանր արդյունաբերության ձեռնարկություններում ու ճյուղերում մտցվեց 40-ժամյա աշխատանքային շաբաթ։

Սակայն տնտեսական դրությունը երկրում շարունակում էր մնալ ծանր։ 1938 թ. վերջին ավելի քան 400 հազ. մարդ աշխատանք չուներ։ 1939 թ. արդյունաբերական արտադրությունը հասավ 1929 թ. մակարդակի միայն 76 տոկոսին։ Աշխարհում տեղի ունեցող սպառազինությունների մրցավազքը ավելի ու ավելի մեծ ազդեցություն էին գործում Բելգիայի էկոնոմիկայի վրա, ավելացավ պատերազմի համար նախատեսված ապրանքների արտադրությունն ու արտահանությունը։ Նման պայմաններում զգալիորեն աճեց խոշոր մոնոպոլիաների դերը, որոնք ուժգնորեն շահագործում էին Կոնգոն, ուր միայն «Սոսիետե ժեներալը» վերահսկում էր բոլոր կապիտալ ներդրումների 50 տոկոսը։ Կոնգոյի բնակչությունը գաղութային կեղեքմանը պատասխանում էր մասսայական հուզումներով, որոնք չէին դադարում, չնայած 1931 թ. ապրստամբության գաղանային ճնշմանը։

30-ական թվականների երկրորդ կեսի բելգիական կառավարության, այդ թվում նաև այն կառավարության, որտեղ սկսած 1938 թ. մայիսից պրեմիեր մինիստրի պոստը գրավում էր սոցիալիստ Սպաակը, արտաքին քաղաքականության համար բնորոշ էին ֆաշիստական պետություններին՝ Գերմանիային և Իտալիային կատարվող զիջումների տենդենցները։ 1936 թ. Բելգիայի կառավարությունը չեղյալ հայտարարեց 1920 թ. ֆրանս-բելգիական ռազմական կոնվենցիան և հայտարարեց Լոկարնոյի համաձայնագրերով իր ստանձնած պարտավորություններից հրաժարվելու և «ազատ ձեռքերի» քաղաքականությանը վերադառնալու մասին, որը խրախուսում էր ֆաշիստական պետությունների ագրեսիան։

ԳԼՈՒԽ 17

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԸ 1918—1939 ԹԹ.

Ընդհանուր բնութագիր

Նիդերլանդները (Հոլանդիա) աչքի ընկնող տեղ էին գրավում իմպերիալիստական պետությունների սիստեմում։ Տերիտորիայով և բնակչության թվով այդ ոչ մեծ երկրի նշանակությունը պայմանավորված էր հոլանդական բուրժուազիայի ֆինանսական հզորությամբ, գաղութային ընդարձակ կայսրության (որի կազմի մեջ մտնում էր Ինդոնեզիան) նկատմամբ նրա վերահսկողությամբ, աշխարհի շատ երկրների հետ ունեցած ավանդական առևտրական կապերով։ Նիդերլանդների արդյունաբերության մեջ գերակշռում էր մանր արտադրությունը, բայց կար նաև բարձր զարգացած նավաշինություն, տեքստիլ և սննդի արդյունաբերություն. զգալիորեն զարգացած էր նաև գյուղատնտեսությունը, հատկապես անասնապահությունը, որի արտադրանքը կազմում էր հոլանդական արտահանության կարևոր հոդվածը։ Բնակչության մեծամասնությունն ապրում էր քաղաքներում, միայն արևելյան ու հարավային պրովինցիաներում գերակշռում էր գյուղական բնակչությունը։

Նիդերլանդների քաղաքական կարգը սահմանադրական միապետությունն է։ Երկրի քաղաքական կյանքի վրա զգալի ազդեցություն էին գործում կղերական կուսակցությունները՝ հակահեղափոխականը, որը ներկայացնում էր բողոքական բուրժուազիայի շահերը, և հռոմեա-կաթոլիկականը, որի սոցիալական հենարանն էր Նիդերլանդների հարավային ու արևելյան պրովինցիաների միջին ու մանր բուրժուազիան։ Բանվորական շարժման մեջ նշանակալի դեր էր խաղում սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը (ՍԴԲԿ)։ 1909 թ. ՍԴԲԿ-ի հեղափոխական թևից առաջացավ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (ՍԴԿ) իր մամուլի օրգանով՝ «Դե Տրիբյունե» թերթով հանդերձ (նրա կողմնակիցներին հաճախ անվանում էին տրիբունականներ)։ Սակայն ՍԴԿ-ն սակավաթիվ էր, իսկ նրա ազդեցությունը մասսաների վրա՝ սահմանափակ։

Առաջին համաշխարհային պատերազմը դանդաղեցրեց քաղաքական ճգնաժամի սկսվելը Նիդերլանդներում, բայց վերջին հաշվով հասցրեց հակասությունների հետագա խորացմանը և սոցիալական լուրջ ցնցումներին։

Դասակարգային պայքարը Նիդերլանդներում առաջին համաշխարհային պատերազմից հետո

Չնայած պատերազմում իր գրված չեզոք դիրքին և կռվող երկու կողմերի հետ կատարած շահավետ առևտրին, Նիդերլանդների տնտեսական դրությունը պատերազմի վերջին խիստ վատացավ։ 1918 թ. բլոկադայի հետևանքով երկրի նավահանգստներ այցելեցին 10 անգամ ավելի քիչ նավեր, քան նախապատերազմյան 1913 թ.։ Հացահատիկի և քարածխի ներմուծումը կրճատվեց մինչև աննշան չափերի։ Ամստերդամի և մյուս քաղաքների մատակարարումը կատարվում էր ընդհատումներով. երկիրը գտնվում էր սովի եզրին։ Այդ նույն

ժամանակ սև շուկայում գործող սպեկուլյանտները և գործամոլները, որոնք գաղտնի կերպով պարենամթերքը վաճառքի էին հանում Գերմանիայում, վիթխարի շահ էին ստանում։

Պատերազմն է՛լ ավելի պարզորոշությամբ մերկացրեց սոցիալական հակադրությունները և հասցրեց դասակարգային պայքարի խիստ սրմանը Նիդերլանդներում։ Ամենուրեք ծագում էին տարերային հուզումներ։ Երկրում ձևավորվում էին հեղափոխական իրադրության նախադրյալները, սակայն բանվորների հիմնական մասը շարունակում էր գտնվել ռեֆորմիստական ՍԴԲԿ-ի ազդեցության տակ։ Այդուհանդերձ Հոկտեմբերյան հեղափոխությունը Նիդերլանդներում ամենալայն արձագանք գտավ և բանվորական զանգվածների մեջ ոգևորություն առաջացրեց։ «Տրիբունիստների» նախաձեռնությամբ 1917 թ. ստեղծվեց հեղափոխական կոմիտե, որի կազմի մեջ մտան քաղաքական մի քանի կազմակերպություններ և արհմիություններ։ Երկրում ուժեղացավ սոցիալական ուժերի բևեռացումը։ Երկրորդ պալատի ընտրությունների ժամանակ, 1918 թ. հուլիսին աջ կուսակցությունների մեջ առաջին պլան մղվեց հռոմեա-կաթոլիկական կուսակցությունը (100-ից 30 դեպուտատ)։ ՍԴԲԿ-ն ստացավ 22 տեղ (1913 թ.՝ 14 տեղ)։ Առաջին անգամ պառլամենտի կազմում ընտրվեց 2 դեպուտատ ՍԴԿ-ից։ Այդ ոչ մեծ կուսակցության առաջադրած պահանջները (հանրապետության հաստատում, 8-ժամյա աշխատանքային օրվա սահմանում, Ինդոնեզիային Նիդերլանդներից անջատվելու ազատության տրամադրում) նրա համար ժողովրդականություն էին նվաճում՝ հատկապես Ամստերդամի բանվորների շրջանում։ 1918 թ. աշնան մոտերքին հուզումները տարածվեցին նաև զորամասերում։ Հարսկամպի զինվորական ճամբարում հոկտեմբերի վերջին զինվորները հրաժարվեցին հնազանդվել սպաներին, հրկիզեցին զորանոցները և կազմակերպեցին զինվորների խորհուրդներ։ Ամստերդամի և մյուս քաղաքների մի քանի ձեռնարկություններում նույնպես առաջացան բանվորների խորհուրդներ։

Վճռական պահը վրա հասավ նոյեմբերի սկզբին, երբ հարևան Գերմանիայում սկսվեց հեղափոխությունը։ Երկրով մեկ ծավալվեց ցույցերի ու միտինգների ալիքը։ Մթնոլորտն արտակարգ կերպով շիկացավ և նոյեմբերի 11-ին «Դե Տրիբյունեն» զետեղեց ՍԴԿ-ի ղեկավարության դիմումը բանվորներին ու զինվորներին, որտեղ կոչ էր անում ստեղծել խորհուրդներ և իր ձեռքը վերցնել իշխանությունը։ Դավիթ Վայնկոպը, Լուիս դե Ֆիսերը, Հենրիետա Ռոլանդ-Հոլստը և ՍԴԿ-ի այլ գործիչներ եռանդուն պրոպագանդա ծավալեցին բանվորների և զինվորների շրջանում։

Պրոլետարիատի հեղափոխական ելույթները ՍԴԲԿ-ի որոշ ղեկավարների ստիպեցին հանդես գալ ձախ լոզունգներով։ Նոյեմբերի 11-ին Ռոտերդամի միտինգներից մեկում ՍԴԲԿ-ի պարագլուխ Պ. Տրուլստրան բանվորներին կոչ արեց իշխանությունն իրենց ձեռքը վերցնել, սակայն, հրաժարվելով բռնի միջոցների դիմելուց։ Այդ մանները ապակողմնորոշեց բանվորական զանգվածներին, բայց դրա հետ մեկտեղ դժգոհություն առաջացրեց ՍԴԲԿ-ի մյուս պարագլուխների մեջ, որոնք հանդես էին գալիս մասսաների ակտիվության ամեն մի խրախուսման և ՍԴԿ-ի ու հեղափոխական կոմիտեի հետ համատեղ գործողությունների դեմ։ Այդ վճռական օրերին ռեֆորմիստները փաստորեն դավաճանեցին հոլանդական բանվոր դասակարգի շահերին և բուրժուազիային օգնեցին ուշքի գալու վերահաս հեղափոխության դեմ պայքարելու համար։

Նոյեմբերի 13-ին Ամստերդամում ՍԴԿ-ի կազմակերպած բանվորական խաղաղ ցույցն առանց նախազգուշացման գնդակոծվեց զորքերի կողմից։ Մի

քանի մարդ սպանվեց, շատերը վիրավորվեցին։ Այդ պրովոկացիայի թելերը տանում էին դեպի բատավյան նավթային ընկերության գլխավոր գրասենյակը, որի դիրեկտորն էր այդ ժամանակ Կոլենը՝ հակահեղափոխական կուսակցության պարագլուխը։ Գոյություն ունեցող կարգերի պաշտպանությամբ ակտիվորեն հանդես եկան կղերական կուսակցությունները։ Առանձնահատուկ կրքոտություն էին հանդես բերում կաթոլիկները, որոնք մասսաների հեղափոխական ակտիվությունը ճնշելու համար հիմնականում մոբիլիզացրել էին մանրբուրժուական «քաղաքացիական գվարդիան»։ Նոյեմբերի 18-ին ռեակցիան Հաագայում կազմակերպեց միապետական ցույց։ Իր հակահեղափոխական ջոկատներն էր ստեղծում ռեակցիոն սպայությունը։ Այդ բոլորի հետևանքով ռեակցիայի համախմբված ուժերին հաջողվեց խոչընդոտել հեղափոխական իրադարձությունների հետագա զարգացումը։

Նոյեմբերյան շաբաթն ասես հանրագումարի բերեց Նիդերլանդների բանվորական շարժման մեջ գոյություն ունեցող երկու ուղղությունների զարգացումը։ ՍԴԲԿ-ն նոյեմբերի 16—17-ին Ռոտերդամում կայացած համագումարում դատապարտեց և մերժեց պայքարի հեղափոխական մեթոդները, իրեն համարելով ռեֆորմների կուսակցություն։ Այդ նույն ժամանակ Լեյդենում կայացած ՍԴԿ համագումարում որոշում ընդունվեց ՍԴԿ-ն Հոլանդիայի կոմունիստական կուսակցություն վերանվանելու մասին։ 1919 թ. ապրիլին ՀԿԿ-ն առաջիններից մեկը միացավ Կոմինտերնին։

Նոյեմբերյան իրադարձությունները չկոտրեցին հոլանդական բանվոր դասակարգի մարտական ոգին։ Նրա քաղաքական ակտիվությունն ու դասակարգային համերաշխությունը դրսևորվեցին և՛ Ամստերդամի ու Ռոտերդամի նավահանգստային բանվորների գործադուլում, որն անցկացվեց 1919 թ. հուլիսի 21-ին «Ձեռքներդ հեռո՛ւ Սովետական Ռուսաստանից» լոզունգի ներքո, և՛ սպիտակ լեհերի համար 1920 թ. օգոստոսին զենք փոխադրելուց հոլանդական տրանսպորտային-ների հրաժարվելու մեջ, և՛ Պոլոլժիեի սովյալների համար 1921 թ. ամռանն ակտիվորեն միջոցներ հավաքելու մեջ։ Նույնքան էլ բարձր գիտակցականություն ու ինտերնացիոնալիզմ հանդես բերեց հոլանդական պրոլետարիատը նաև հետագա տարիներին։ 1926—1927 թթ. Ինդոնեզիայում տեղի ունեցած ապստամբության ժամանակ հոլանդական բանվորները հանդես էին գալիս ի պաշտպանություն ինդոնեզիական ժողովրդի։

20-ական թվականներին չտեսնված թափ ստացավ գործադուլային պայքարը։ 1919—1920 թթ. գործադուլների 80—90 տոկոսը կրում էր հարձակողական բնույթ և մեծ մասամբ ավարտվեց բանվորների հեղթանակով։ Մասսաների շարժման հանդեպ ունեցած վախը կառավարությանը հարկադրեց սոցիալական ու քաղաքական մի շարք զիջումների դիմել։ Դրանցից ամենաէականները 1919 թ. հուլիսին պառլամենտի ընդունած օրենքներն էին 45-ժամյա աշխատանքային շաբաթվա և ընդհանուր ընտրական իրավունքը կանանց վրա տարածելու վերաբերյալ։ 1921 թվականից պատկերն սկսում է փոխվել։ Խոշոր բուրժուազիան ամրապնդելով իր դիրքերը, հարձակման է անցնում։ Օգտվելով բանվոր դասակարգի պառակտվածությունից և պրոլետարիատի հեղափոխական ավանգարդի թուլությունից, ձեռնարկատերերը պառլամենտից ձեռք բերեցին բանվորներին արված օրենսդրական զիջումների մասնակի վերացում։

Մեծ նշանակություն ունեցավ բանվոր դասակարգի պայքարն ընդդեմ միլիտարիզմի։ 1923 թ. կառավարությանը չհաջողվեց պառլամենտում հատկացումներ հաստատել ծովային սպառազինությունների ավելացման համար, քա-

նի որ պառլամենտին տրված խնդրագիրը, որի տակ ստորագրել էր 1,2 մլն մարդ, դրդեց նոր սպառազինությունների դեմ քվեարկել նույնիսկ կաթոլիկական կուսակցության դեպուտատների մի մասին։ Քվեարկության արդյունքների հետևանքով կղերական կուսակցությունների կոալիցիան պառակտվեց, կոալիցիա, որը մի քանի տասնամյակ իշխում էր Նիդերլանդների քաղաքական կյանքում։

Երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը 1920—1930 թթ.

Համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում Նիդերլանդների էկոնոմիկայում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ երկրի հետագա ինդուստրացման ուղղությամբ։ Նախապատերազմյան տարիների համեմատությամբ բնակչությունն աճեց գրեթե 2 միլիոնով և հասավ 9 մլն մարդու. արդյունաբերության մեջ զբաղված անձանց թիվն ավելացավ 1,3 մլն մարդով (գյուղատնտեսության մեջ զբաղված էր կրկնակի պակաս)։ Այնպիսի ավանդական ճյուղերի հետ միասին, ինչպիսին էր նավաշինությունը, հաջողությամբ զարգանում էին նորերը՝ արդյունաբերության քիմիական և էլեկտրատեխնիկական ճյուղերը, մետալուրգիան։ Խիստ աճեց ածխի հանույթը։ Մեծ թափ ստացան շինարարական աշխատանքները։ 1932 թ. ավարտվեց վիթխարի պատնեշի կառուցումը, որը Զեյդերզեե ծովածոցը բաժանեց Հյուսիսային ծովից։ Դրա շնորհիվ ծովից նվաճվեցին նոր պոլդերներ՝ 68 հազ. հեկտար տարածությամբ։ Ուժեղացավ կապիտալի մոնոպոլացումը (օրինակ, էլեկտրատեխնիկական Ֆիլիպս կոնցերնի կապիտալն ավելացավ 6 անգամ)։ Այնպիսի հին ընկերությունների հետ, ինչպիսին էր «Ռոյալ Դաչ Շելլը», առաջացան նոր գիգանտներ, այնպիսիք, ինչպես «Յունիլեվերը», որն արտադրում էր ճարպեր և պարֆյումերիա և նույնպես սերտորեն կապված էր անգլիական կապիտալի հետ, և ԱԿՅՈՒ-ն, որը 20-ական թվականներին իր ձեռքում էր կենտրոնացրել վիսկոզի համաշխարհային արտադրության 16 տոկոսը։

Ինդոնեզիայի բնական հարստությունների և մարդկային ռեսուրսների ուժեղ շահագործումը, որը Նիդերլանդներին տալիս էր նրա «ազգային» եկամտի մեկ երրորդը (1938 թ. 4,9 մլրդ ընդհանուր գումարից 1,4 մլրդ գուլդեն), էլ ավելի ամրապնդեց հոլանդական կապիտալի միջազգային դիրքերը։ Նիդերլանդները երրորդ տեղն էին գրավում (Անգլիայից և ԱՄՆ-ից հետո) արտասահմանում կատարած կապիտալ ներդրումների տեսակետից։ Նիդերլանդներին զգալի շահույթներ էր բերում նաև նավափոխադրավարձը։ Այդ լրացուցիչ աղբյուրները նրան թույլ էին տալիս հավասարակշռել հաշվեկշիռը արտաքին առևտրի բնագավառում։

Միջազգային սերտ կապերը պայմանավորեցին Նիդերլանդների էկոնոմիկայի առանձնահատուկ խոցելիությունը արտաքին կոնյունկտուրային բոլոր փոփոխությունների ժամանակ։ 20-ական թվականների վերջի— 30-ական թվականների սկզբի համաշխարհային տնտեսական ճգնաժամն այստեղ շատ սուր արտահայտվեց և ընդունեց ձգձգված բնույթ (1931-ից մինչև 1936 թ.)։ Նիդերլանդների էկոնոմիկան հազիվ իր նախկին մակարդակին հասավ միայն երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին։ Ճգնաժամի շրջանում արտադրությունը կրճատվեց համարյա 70 տոկոսով, խոշորագույն ընկերությունների բաժնետոմսերի արժեքը միջին հաշվով ընկավ 8 անգամ, իսկ միջին ու մանր ձեռնարկությունների սնանկացումների թիվը հասավ տարեկան 3—4 հազարի։ Ժողովրդական զանգվածների համար ճգնաժամի ամենադաժան հետևանքը գործազրկությունն էր։ Մի շարք տարիների ընթացքում գործազուրկների թիվը կազմում էր 300—400 հազ. մարդ, իսկ 1936 թ. այն, ըստ բուրժուական տնտեսագետների հաշվումների, 600 հազարից գերազանցեց։ Պետական նպաստները և հասարակական աշխատանքները միայն շատ անշան չափով էին թեթևացնում այդ դժբախտությունը, որն անխուսափելիորեն տանում էր դեպի սոցիալական նոր կոնֆլիկտներ։

Քաղաքական իրադրությունը Նիդերլանդներում 30-ական թվականներին։ Արտաքին քաղաքականությունը

Տնտեսական ճգնաժամի և Եվրոպայում լարվածության աճի ազդեցության տակ իրադրությունը Նիդերլանդներում 30-ական թվականների սկզբին չափազանց անկայուն էր։ Իր ուժերի հանդեպ բուրժուազիայի անվստահությունը, ճգնաժամից ելք գտնելու նրա փորձերն արտահայտվեցին հին կուսակցությունների մանրատման, բազմաթիվ մանր ու անկարակայց քաղաքական միավորումների առաջացման մեջ։ Այսպես, օրինակ, երկրորդ պալատի 1933 թ. ընտրություններին մասնակցեցին 54 կուսակցություններ։ Այդ տարիներին իրար փոխարինած մինիստրների կաբինետները, որոնց ղեկավարում էին մերթ կաթոլիկ Ռեյս դե Բերենբրուկը, մերթ բողոքական Կոլեյնը, ներքին քաղաքականության ասպարեզում վարում էին, ըստ էության, միևնույն կուրսը՝ ուժի միջոցով ժողովրդական դժգոհության ճնշում, խնայողության ռեժիմ (Կոլեյնի ժամանակ դա կոչվում էր «հարմարվել»)՝ սոցիալական կարիքների համար կատարվող ծախսերի կրճատման և պետական ծառայողների աշխատավարձի նվազեցման հաշվին և, վերջապես, պետական ապարատի և պետական միջոցների օգտագործում մոնոպոլիաներին օժանդակություն ցույց տալու համար։ Տարբերությունը միայն այն էր, որ հոլանդական բուրժուազիայի «զորեղ մարդու»՝ Կոլեյնի ժամանակ այդ կուրսը իրականացվում էր ավելի դաժանորեն ու հետևողականորեն։

Ժողովրդական զանգվածների դիմադրությունն այդ տարիներին սուր ձևեր է ընդունում։ Երկրում վերստին տարածվում է գործադուլների ալիքը։ Հինգուկես ամիս տևեց Գրոնինգեն պրովինցիայի գյուղատնտեսական բանվորների՝ Նիդերլանդների պատմության մեջ խոշորագույն գործադուլը։ Մեծ համառություն հանդես բերեցին պայքարում նաև Տվենտեի տեքստիլագործները, որոնք գործադուլ արեցին 1931 թ. աշնանից մինչև 1932 թ. գարունը։ Գործադուլներն ուղեկցվում էին գործազուրկների ցույցերով, ոստիկանության հետ մասսայական ընդհարումներով։

Սոցիալական կոնֆլիկտն ավելի սուր ձևեր էլ էր ընդունում։ Նավատորմում աշխատավարձն իջեցնելու վերաբերյալ կառավարության որոշման առթիվ սուր դժգոհություն առաջացավ զինվորական նավաստիների շրջանում, որոնք ծառայում էին Ինդոնեզիայում։ «Դե զվեն պրովինսիեն» հածանավի անձնակազմը, որը բաղկացած էր հոլանդական ու ինդոնեզիական ծովային-ներից, 1933 թ. փետրվարին ապստամբության դրոշ բարձրացրեց և բաց ծով դուրս եկավ։ Հուզումներ սկսվեցին նաև մյուս նավերում և առափնյա ծառայության նավաստիների շրջանում։ Հոլանդական կառավարությունը դիմեց ամենադաժան միջոցների՝ հածանավը օդից ռմբակոծվեց, տասնյակ ծովային-ներ սպանվեցին ու վիրավորվեցին, ապստամբության մասնակիցները ձերբակալվեցին և դատապարտվեցին 16—18 տարվա բանտարկության։

1934 թ. հուլիսին գործազուրկների պետական նպաստների նվազեցման կապակցությամբ ժողովրդի մեջ առաջ եկած դժգոհությունը վերաճեց իշխանություններին ցույց տրվող բացահայտ դիմադրության։ Ամստերդամի արվարձան Իորդանում առաջացան բարիկադներ, հուզումները տարածվեցին քա-

դաքի մյուս շրջանները և Ռոտերդամ։ Իորդանում բորբոքվեց իսկական ճակատամարտ. կառավարությունը բանվորների դեմ ուղարկեց կանոնավոր զորքեր, զրահապատներ, վիրավորվեց մոտ 200 մարդ, եղան սպանվածներ։ Այդ օրերին արգելվեց կոմունիստական կուսակցության «Դե Տրիբյունե» թերթի լույս ընծայումը։

Ձախ ուժերին ճնշելով, հոլանդական բուրժուազիան այդ նույն ժամանակ ներողամտորեն և նույնիսկ համակրանքով էր վերաբերվում ֆաշիստների գործունեությանը, որոնց մեջ կային կառավարական շատ չինովնիկներ։ 1931 թ. ֆաշիստական խմբերը միավորվեցին ինքնուրույն կուսակցության («Նացիոնալ-սոցիալիստական շարժում») մեջ, որի առաջնորդ դարձավ Մյուսերտը։ Ճգնաժամի տարիներին սնանկացած մանր բուրժուազիայի զայրույթը նպաստեց այդ միջավայրում ֆաշիզմի ազդեցության աճին։ 1935 թ. մունիցիպալ ընտրություններում «Նացիոնալ-սոցիալիստական շարժում» կուսակցության օգտին տրվեց ձայների 8 տոկոսը, սակայն նրա ժողովրդականությունը շուտով սկսեց ընկնել հակաֆաշիստական ուժերի ակտիվացման հետևանքով։

30-ական թվականներին ՍԴԲԿ-ն այնպիսի գործիչների ղեկավարությամբ, ինչպիսին էին Ալբարդան ու Ֆորինկը, ավելի ու ավելի հեռուն էր գնում բուրժուական կուսակցությունների հետ մերձեցման ուղիով։ 1935 թ. նա տնտեսական պրոբլեմների լուծման համար առաջադրեց «աշխատանքային պլան», որը նախատեսում էր էկոնոմիկայի մեջ պետական միջամտություն (մասնավորապես, գործազրկության կրճատման միջոցառումներ)։

Նախապատերազմյան տարիներին ուժեղանում է կոմունիստական կուսակցության դերը Նիդերլանդների կյանքում։ Կոմինտերնի ակտիվ օգնությամբ կուսակցությունը հաղթահարում է ձախ աղանդավորական սխալները, որոնք պառակտում առաջացրին նրա շարքերում և թուլացնում էին նրա ազդեցությունը մասսաների վրա։ Միավորիչ համագումարից (1930 թ. փետրվար) հետո ՀԿԿ-ն արագորեն ամրապնդվում է, նրա անդամների թիվը աճում է 1-ից մինչև 9 հազարի։ Ֆաշիզմի ու պատերազմի դեմ մղված պայքարում կուսակցության հանդես բերած ակտիվությունը նպաստում է մասսաների մեջ նրա ժողովրդականության աճին։ Եվրոպայի խաղաղության համար ճգնաժամային 1938 թ. Նիդերլանդների կոմունիստական կուսակցությունը երկրի միակ կուսակցությունն էր, որը հաստատուն դիրք էր գրավում, պահանջելով ագրեսորների սանձահարում։

Երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում հոլանդական բուրժուազիան իր արտաքին քաղաքական կուրսն իրականացնում էր մեծ տերությունների միջև ավանդաբար խուսանավելու ոգով։ 20-ական թվականներին Նիդերլանդները կողմնորոշվում էին առավելապես դեպի Անգլիան, պաշտպանելով այդ երկրի ռեակցիոն կուրսը։ 1922 թ. անգլո-հոլանդական «Ռոյալ Դատչ Շելլ» ընկերության ղեկավար Հենրի Դետերդինգի թելադրանքով գործող հոլանդական դիվանագիտության ինտրիգները նպաստեցին Հաագայի կոնֆերանսում Սովետական Ռուսաստանի հետ մղվող բանակցությունների ձախողմանը։ ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին միայն 20 տարի անց, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ։

30-ական թվականներին, Եվրոպայում ֆաշիստական բլոկի ռազմական սպառնալիքի աճին զուգընթաց Նիդերլանդները փորձում էին իրենց չեզոքությունը պահպանել կոլեկտիվ անվտանգության քաղաքականությունից հրաժարվելու գնով։ Նիդերլանդների կառավարող շրջանները, ագրեսորների հետ բացահայտ սիրախաղ անելով, առաջինը ճանաչեցին Եթովպիայի զավթումը ֆաշիստական Իտալիայի կողմից։ Հոլանդական բուրժուազիան, ինչպես և արևմտյան մյուս երկրների բուրժուազիան, հույս ուներ ֆաշիստական ագրեսիան ուղղել ՍՍՀՄ-ի դեմ։ 1940 թ. մայիսին Հիտլերի հարձակումը Նիդերլանդների վրա ակնհայտորեն ցույց տվեց հոլանդական կառավարող շրջանների վարած արտաքին քաղաքականության սնանկությունը։

ԳԼՈՒԽ 18

ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ 1918—1939 ԹԹ.

Սկանդինավյան երեք թագավորությունները՝ Դանիան, Շվեդիան և Նորվեգիան նոր ժամանակաշրջանի վերջին հիմնականում ազգային միատեսակ պետություններ էին։ Բոլոր երեք պետություններն էլ XIX դարից հետևում էին չեզոքության քաղաքականությանը, որը նրանց հաջողվեց պահպանել նաև առաջին համաշխարհային պատերազմում։ Ֆինլանդիայի և Իսլանդիայի հետ, որոնք ինքնուրույնություն ստացան միայն նորագույն ժամանակաշրջանի սկզբին, սկանդինավյան պետությունները կազմում են Հյուսիսային Եվրոպայի երկրների խումբը։

Պատերազմական առաջին տարիների արդյունաբերական բումը Սկանդինավիայում և տնտեսական պետական կարգավորման քաղաքականությունը արագորեն առաջ մղեցին կապիտալիստական մոնոպոլիաների կազմավորման դեռ պատերազմի ժամանակ սկսված պրոցեսը։ Պատերազմի վերջին նուվորիշների (սրանց անվանում էին «գուլյաշ-բարոններ») պերճանքի և թերասնվող, ցրտահարվող, երկար հերթեր կանգնող աշխատավորների տառապանքների միջև եղած աղաղակող հակադրությունը սրեց դասակարգային հակասությունները չեզոք Սկանդինավիայում։ Մասսաների մեջ աճում էին ռադիկալ և նույնիսկ հեղափոխական տրամադրությունները, առավել ևս որ բանվորական կուսակցություններն այստեղ, կռվող երկրների բանվորական շարժման համեմատությամբ, ավելի նվազ չափով էին վարակված սոցիալ-շովինիզմով։ Շվեդիայի և Նորվեգիայի ձախ սոցիալ-դեմոկրատները ոգևորությամբ ներգրավվեցին սոցիալիստ-ինտերնացիոնալիստների միջազգային հակապատերազմական շարժման մեջ և ագահորեն կլանում էին լենինյան գաղափարները։ Սակայն սկանդինավյան ձախերի նույնիսկ լավագույն մասի թուլությունը՝ նրանց պացիֆիզմն էր, և այստեղից էլ տատանումները բոլշևիկների ու ցենտրիստների (կաուցկիականների) միջև։

1917—1919 թթ. մասսայական բանվորական շարժման վերելքը Սկանդինավիայի քաղաքներում վերածվեց ցույցերի, միտինգների, առևտրականներից պարենամթերքի խլման, գործադուլների, իսկ Նորվեգիայում նույնիսկ կյանքի կոչեց աշխատավորների տեղական սովետներ։ Սոցիալ-դեմոկրատիայի ձախ թևի, երիտասարդության սոցիալիստական միությունների և անարխո-սինդիկալիստական կազմակերպությունների բազայի վրա առաջացան հեղափոխական բանվորական կուսակցություններ, որոնք դարձան Կոմինտերնի սեկցիաներ։ Սակայն դրանց մեջ պահպանվեցին խոշոր ցենտրիստական և պարզապես ցենտրիստական խմբավորումները։

Սեփական աշխատավորության ճնշման և Ռուսաստանում և այլ երկրներում տեղի ունեցած հեղափոխության տպավորության տակ Սկանդինավիայի տիրող դասակարգերն ստիպված էին դիմելու 8-ժամյա բանվորական օրվան, աշխատավարձի զգալի բարձրացմանը, ինչպես նաև քաղաքական (պառլամենտական, ընտրական) և մասամբ սոցիալական տարբեր ռեֆորմներին։ Սկանդինավյան երեք երկրներում հաստատվեց բուրժուական դեմոկրատիայի կարգ։ Նոր երևույթ էին գյուղացիական կուսակցությունները, որոնք առաջին անգամ (Նորվեգիայում) կամ նորից (Շվեդիայում) առաջացան պատերազմի և հետպատերազմյան առաջին տարիներին։ Այդ կուսակցություններն արտահայտում էին գյուղական բուրժուազիայի շահերը։

Իրենց արտաքին քաղաքականության մեջ սկանդինավյան չեզոքները իմպերիալիստական պատերազմի վերջում կողմնորոշվում էին դեպի ապագա հաղթողները՝ Անտանտը։ 1920 թ. բոլոր երեք երկրները մտան Ազգերի լիգայի մեջ, որտեղ անց էին կացնում համաձայնեցված քաղաքականություն, պաշտպանելով իրենց ավանդական չեզոքությունը։ Նրանք չմասնակցեցին հակասովետական ինտերվենցիային և Սովետական Ռուսաստանի բլոկադայի վերացումից հետո առաջինը սկսեցին առևտուր անել նրա հետ։ Սկանդինավիայի բանվոր դասակարգը և առաջադեմ մտավորականությունն ակտիվորեն պաշտպանում էին սովետական ժողովրդին, բողոքում Անտանտի կողմից սպիտակգվարդիականներին ցույց տրվող օգնության դեմ, միջոցներ հավաքում Պովոլժիեի սովյալ բնակիչների օգտին։

ԴԱՆԻԱ

Ընդհանուր բնութագիր

Բերրի հողեր ու մեղմ կլիմա ունեցող Դանիայի էկոնոմիկայում առաջատար տեղն առաջվա պես պատկանում էր անասնապահությանը։ Դանիական գյուղատնտեսությունը համարվում էր կապիտալիստական Եվրոպայի ամենաառաջավորներից մեկը։ Ինչ վերաբերում է արդյունաբերությանը, ապա այն կամ վերամշակում էր գյուղատնտեսական հումքը (սննդի, կաշվի, քիմիական ճյուղերը), կամ մասնագիտանում մեքենաների ու սարքերի առանձին տեսակների (օրինակ, նավերի, դիզելների, գյուղատնտեսական մեքենաների, էլեկտրասարքավորումների) արտադրության մեջ, կամ էլ, վերջապես, արտադրում լայն սպառման բարձրորակ ապրանքներ՝ հագուստեղեն, կահույք, ամանեղեն, սիգարներ։

Ագրարային-ինդուստրիալ Դանիայի քաղաքական կյանքում երկար ժամանակ գլխավոր դեր էին խաղում այսպես կոչված լիբերալ «վենստրեները» (տառացիորեն «ձախերը»), կամ լիբերալները՝ գյուղական բուրժուազիայի կուսակցությունը։ Արդյունաբերողների շահերը պաշտպանում էին պահպանողականները, որոնք սովորաբար գտնվում էին օպոզիցիայում։ Խոշոր բուրժուազիայի կուսակցություններին հակադրվում էին ռադիկալները՝ քաղաքի մանր բուրժուազիայի, գյուղական մանր տնտեսատերերի (խուսմենների), դեմոկրատական մտավորականության կուսակցությունը և սոցիալ-դեմոկրատները՝ բանվոր դասակարգի կուսակցությունը։ Դանիական սոցիալ-դեմոկրատիան և նրա ղեկավարությունը աչքի էին ընկնում ծայրահեղ օպորտունիզմով, և նրա առաջնորդները Սկանդինավիայում առաջինը մտան բուրժուական կառավարության մեջ (1916 թ.)։

Դանիան բուրժուա-դեմոկրատական պետություն դարձավ դեռ XX դարի հենց սկզբին, երբ նրա կառավարության կազմն սկսեց որոշվել դանիական պառլամենտի (ռիկստագ) ստորին պալատի (ֆոլկետինգ) մեծամասնության կամքով։ Ավելի ուշ 1915 թ. սահմանադրությունը ընդհանուր և հավասար ընտրական իրավունք տրամադրեց երկու սեռի քաղաքացիներին, թեև մի շարք սահ-

մանափակումներով (նստակեցության ցենզ և ընտրողների տարիքային բարձր ցենզ՝ 25 տարեկանից)։ Սահմանադրության ժամանակին կատարված փոփոխությունը պատերազմի տարիներին մասսաների կրած՝ Շվեդիայի ու Նորվեգիայի համեմատությամբ ավելի նվազ տառապանքների զուգակցությամբ մեղմացնում էին դասակարգային հակասությունների սրությունը Դանիայում։

Բանվորական շարժման վերելքը 1920 թ.

Հեղափոխական խմորումներն ընդգրկեցին գլխավորապես Դանիայի մայրաքաղաքը՝ Կոպենհագենը և իրենց բարձրակետին հասան 1918 թ. նոյեմբերին, երբ հայտնի դարձավ գերմանական կայզերի տապալման մասին։ Նոյեմբերի 13-ին Կոպենհագենի կենտրոնում տեղի ունեցավ մասսայական ցույց։ Մեկ տարի անց հեղափոխական երկու խմբավորումներից առաջացավ Դանիայի Ձախ սոցիալիստական ոչ մեծ կուսակցությունը, որը հետո ընդունվեց Կոմինտերնի մեջ։ Ցալեի ռադիկալ կառավարությունը, հենվելով աջ սոցիալ-դեմոկրատների աջակցության վրա, շտապեց ռեֆորմներ անցկացնել, օրենքներ ընդունեց մանր վարձակալ-խուսմեններին հող տրամադրելու, դատարանավարության նոր, ավելի դեմոկրատական ձևերի մասին։ 1918 թ. ձևական անկախություն ստացավ Իսլանդիան, որն այսուհետև Դանիայի հետ կապվեց միայն ընդհանուր միապետով, արտաքին գործերի և պաշտպանության ընդհանուր մինիստրներով։ Դանիա-իսլանդական ունիայի վերաբերյալ ակտը կարող էր վերանայվել և չեղյալ համարվել կողմերից մեկի ցանկությամբ, 25 տարի հետո։

Համաշխարհային պատերազմում Գերմանիայի կրած պարտությունը դանիական կառավարությանը թույլ տվեց բարձրացնել Շլեզվիգի հիվանդոտ հարցը, որը մինչև 1864 թ. պատկանում էր դանիական թագավորներին։ 1920 թ. սկզբին Վերսալյան հաշտության պայմանագրի համաձայն հանրաքվե անցկացվեց գերմանական Շլեզվիգի հյուսիսային և միջին շրջաններում։ Հյուսիսային Շլեզվիգում Դանիայի հետ վերամիավորվելու կողմնակիցները հաղթեցին, Միջին Շլեզվիգում նրանք մնացին փոքրամասնության մեջ։ Դանիական շովինիստները, որոնք դժգոհ էին քվեարկության արդյունքներից, պահանջեցին Շլեզվիգի հնագույն կենտրոնի՝ Ֆլենսբուրգ քաղաքի անեքսիան։ Նրանց ճնշմանը ենթարկվեց Քրիստիան X թագավորը։ Հանդիպելով պրեմիեր Ցալեի դիմադրությանը, թագավորը հակառակ սահմանադրական պրակտիկայի, հրաժարեցրեց նրա կաբինետին և նշանակեց շինովնիկների ռեակցիոն կառավարություն։ Այդ գործողությունը պատմության մեջ մտավ 1920 թ. «զատկի հեղաշրջում» անունով։ Միաժամանակ հարևան Գերմանիայում հակահեղափոխության հաջողություններից ոգեշնչված, դանիական արդյունաբերողների միությունը հայտարարություն արեց առաջիկա խոշոր լոկաուտի մասին։ Սակայն ռեակցիոն շրջանների հետագա մտադրությունները չիրականացան։ Մարտյան «զատկի հեղաշրջումը» ղայրացրեց նույնիսկ դանիական օպորտունիստական սոցիալ-դեմոկրատիային։ Կուսակցությունն ու արհմիությունները, ընդհանուր գործադուլով սպառնալով, հասան լոկաուտի վերացմանը, ընտրական սիստեմի հետագա դեմոկրատացմանը (քաղաքային, այսինքն՝ պրոլետարական օկրուգներից պառլամենտական մանդատների թվի ավելացում) և այլ զիջումների։ Դանիա-գերմանական սահմանն անցկացվեց քվեարկության արդյունքների խստիվ համաձայն։ Գերմանական փոքրամասնության համար ապահովվեց կուլտուրական ինքնավարություն։

1920 թ. արտահերթ պառլամենտական ընտրություններում դանիական ընտրողների մանրբուրժուական մեծամասնությունը ենթարկվեց «կարմիր վտանգով» ահաբեկելուն և, դրա հետ, դժգոհ լինելով պատերազմի տարիներին արտադրության ու իրացման կառավարական կարգավորումից, իր ձայնը տվեց պահպանողականներին և «վենստրեններին»։ Դրա հետևանքով իշխանության գլուխ անցավ «վենստրեների», այսինքն՝ գյուղական բուրժուազիայի կառավարությունը։

Կապիտալիստական կայունացումը

Գյուղատնտեսական արտադրության և արտահանության (Դանիան դարձավ բեկոնի, կենդանական յուղի, ձվի համաշխարհային խոշորագույն մատակարարող)՝ 1920-ական թվականների շեշտակի վերելքը զուգակցվում էր արդյունաբերական խիստ անկումով և բանկային կրախներով։ Մասսայական գործազրկությունը պահպանվում էր նույնիսկ «բարգավաճման» տարիներին. 1920 թ. աշխատանք չուներ արհմիությունների անդամների 15 տոկոսը։ 20-ական թվականների կեսերին երկիրն ապրեց իր պատմության մեջ խոշորագույն լոկաուտներ ու գործադուլներ. 1921 թ. գործադուլ արեցին տրանսպորտային բանվորները։ Իշխանության մեջ գերակշռում էին «վենստրեների» կաբինետները։ Հովանավորելով գյուղական խոշոր տնտեսատերերին, նրանք բացահայտորեն թշնամաբար էին տրամադրված բանվոր դասակարգի հանդեպ (շտրեյկբրեխերների պաշտպանության 1929 թ. օրենքը), խնայողություն էին անում պետական բյուջեի սոցիալական ծախսերի հաշվին և այլն։

Սոցիալ-դեմոկրատները լիբերալներին հակադրեցին սոցիալական տարբեր ռեֆորմների ծրագիրը և 1920 թ. պառլամենտական ընտրություններում հաղթանակ տարան ֆոլկետինգում, առաջին անգամ ստանալով ձայների 42 տոկոսը։ Կառավարությանը մասնակցելու համար հրավիրելով իրենց հին դաշնակիցներին՝ ռադիկալներին, սոցիալ-դեմոկրատներն առանց ընդմիջման երկիրը կառավարեցին ընդհուպ մինչև 1940 թ. գերմանական օկուպացումը։ Այդ ժամանակաշրջանի սոցիալ-դեմոկրատական բոլոր կաբինետները գլխավորում էր դանիական ռեֆորմիստների ճանաչված առաջնորդ Տ. Ստաունինգը (1873—1942 թթ.)։ Անցյալում լինելով սիգարի ֆաբրիկայի բանվոր, մասսաների ընդունակ կազմակերպիչ, նա դարձավ օպորտունիստ, չափավորության ու պատկառելիության մարմնացում։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և «Կանսլերգադեի կոմպրոմիսը» (1933 թ.)

Նոր կառավարություն ստեղծվելուց անմիջապես հետո երկրում սկսվեց տնտեսական ճգնաժամ։ Դանիական անասնապահության արտադրանքի գները, ապա և դրա նկատմամբ եղած պահանջարկը խիստ ընկավ։ 1933 թ. փետրվարի մոտերքին կազմակերպված բանվորների 40 տոկոսից ավելին (200 հազ. բանվոր) մնաց առանց աշխատանքի։ Ամեն օր ամբոխի էին հանվում տասնյակ գյուղացիական տնտեսություններ։ Քաղաքներում տեղի ունեցող գործազուրկների ցույցերը երբեմն արյունալի ընդհարումների էին վերածվում ոստիկանության հետ, հատկապես 1931 թ. գարնանը Լոլան կղզու վրա գտնվող Նակսկովում։ Ճգնաժամի տարիներին արագորեն աճեց նախկինում թույլ կոմկուսի ազդեցությունը։ 1932 թ. ընտրություններին ԴԿԿ-ն գլխավորապես գործազուրկների ձայների օգնությամբ առաջին անգամ ռիկստագի ստորին պալատ անցկացրեց իր երկու դեպուտատներին (նրանց թվում էր կուսակցության նոր նախագահ Ակսել Լարսենը)։

1932/33 թ. ձմռանը դրությունը երկրում հատկապես սրվեց։ Ստաունինգի կառավարությունը եռակի ճնշման ենթարկվեց՝ գյուղացիների, ֆաբրիկանտների և գործազուրկների կողմից։ Արդյունաբերության մեջ խոշոր կոնֆլիկտ

էր հասունանում. ձեռնարկատերերը չստանալով արհմիությունների համաձայնությունը 20 տոկոսով աշխատավարձն իջեցնելու մասին, սպառնում էին փետրվարի 1-ից դիմել մասսայական լոկաուտի։ Ֆոլկեթինգում կայուն մեծամասնություն ունենալով, բայց փոքրամասնություն կազմելով լանդստինգում (վերին պալատ), կառավարությունն իր հակաճգնաժամային ծրագրի իրագործման համար զգում էր օպոզիցիայի գլխավոր ուժի՝ «վենստրե» կուսակցության կարիքը։ 1933 թ. հունվարին Ստաունինգի բնակարանում (Կոպենհագենի Կանսլերգադե փողոցում) տեղի ունեցած բանակցություններից հետո համաձայնություն կայացավ։ «Վենստրեն» համաձայնվեց նախկին աշխատավարձի պահպանման պայմանով մեկ տարով բոլոր լոկաուտներն ու գործադուլներն արգելելու հետ և խոստացավ նույնպես պաշտպանել գործազուրկների օգտին կատարվելիք հատկացումները և սոցիալական ապահովության ռեֆորմը։ Կառավարական կուսակցություններն իրենց հերթին ընդունեցին «վենստրեի» պահանջները գյուղատնտեսությանն օգնություն ցույց տալու միջոցառումների մասին, այնպիսի միջոցառումների, ինչպես հարկերի նվազեցումը, պարտքերի հետաձգումը և դանիական կրոնի 25-տոկոսանոց դեվալվացիան։ Դեվալվացիան ուժեղացնում էր դանիական արտահանության մրցունակությունը և դանիական արտահանողների համար ավելի մեծ եկամուտ էր ապահովում օտարերկրյա վալյուտայով նրանց ստացածը դանիական կրոնով փոխանակելու դեպքում։

30-ական թվականների սոցիալ-տնտեսական ռեֆորմները

«Կանսլերգադեի կոմպրոմիսը», որը ձեռք բերվեց դանիական բուրժուազիայի թուլացման, մասսաների խոր դժգոհության և սոցիալ-դեմոկրատների համաձայնողականության պայմաններում, հեշտացրեց պետական իշխանության ակտիվ միջամտությունը երկրի տնտեսական ու սոցիալական կյանքում։ Խաղաղ ժամանակ առաջին անգամ ներմուծումն ու արտահանությունը դրվեցին կառավարական վերահսկողության տակ։ Արտահանողները պարտավոր էին օտարերկրյա ամբողջ վալյուտան հանձնել հատուկ «վալյուտային կենտրոն» դանիական դրամով փոխանակելու համար։ Արտահանողներին օտարերկրյա վալյուտա տրվում էր իշխանությունների հայեցողությամբ։ Սահմանվեցին անասունների մորթման ծայրագույն նորմերը, գյուղատնտեսական մթերքների կայուն գներ, մի խոսքով, գյուղատնտեսական արտադրությունը ենթարկվում էր խիստ կարգավորման։ Այնուհետև սոցիալ-դեմոկրատները կարողացան իրականացնել սոցիալական օրենսդրության խոստացված ռեֆորմը. քաղաքացիների ամենաընչազուրկ մասը հիվանդության համար այսուհետև ապահովագրվում էր պետության հաշվին։ Սոցիալական նպաստների մեծությունը կարգավորվում էր կյանքի գնի ինդեքսի համաձայն։ Աղքատության համար օգնության տրամադրումն այսուհետև չէր ուղեկցվում իրավունքների սահմանափակմամբ (հասարակական խնամակալության վերաբերյալ 1933 թ. օրենքը)։ Չնայած սոցիալական նպաստների համեստ չափերին, «Ստեյնկեի օրենքները» որոշ չափով թեթևացրին աշխատավորների դրությունը։ Վերացվեցին նաև 20-ական թվականների վերջերի հակաբանվորական օրենքները։

1935 թ. «գյուղացիական արշավը»

Դանիան իր առավելապես ագրարային էկոնոմիկայով սկանդինավյան մյուս երկրներից ավելի դանդաղ էր դուրս գալիս ճգնաժամից։ Գյուղական տընտեսատերերի ունևոր խավերը պահանջում էին ուժեղացնել պետական օգնությունը և իրենց պահանջների բավարարման, մասնավորապես կրոնի նոր դեվալվացիայի համար 1935 թ. կազմակերպեցին 50-հազարանոց արշավ դեպի Կոպենհագեն՝ թագավորի մոտ։ Արշավը որոշակի պրոֆաշիստական երանգ ուներ և ձայնակցում էր 1930 թ. դեպի Հելսինկի կատարած ֆիննական լապուասականների արշավին (տե՛ս էջ 498)։ Սակայն թագավորը կուլակներին վերահասցեագրեց Ստաունինգին, որը մերժեց նրանց վերջնագիրը։ «Հողագործների միավորում» կուլակային կազմակերպությունը փորձեց ձախողել ֆունտ ստերլինգի հանձնումը պետական վալյուտային կենտրոնին (դանիական անասնապահներն ամենից շատ առևտուր էին անում Անգլիայի հետ) և կթի մատակարարումը քաղաքին, բայց հաջողություն չունեցավ։ 1935 թ. ընտրությունները սոցիալ-դեմոկրատները շահեցին «Ստաունի՛նգը կամ քաոս» լոզունգի տակ, ստանալով ձայների 46 տոկոսը։ Կոմունիստները նրանց պաշտպանեցին։ Այդուհանդերձ պատերազմի նախօրյակին դանիական պառլամենտը միակն էր Սկանդինավիայում, ուր թափանցեցին մի քանի նացիստներ՝ դանիական և գերմանական (Հյուսիսային Շլեզվիգից)։

Դանիայի արտաքին քաղաքականությունը

20-ական թվականների ընթացքում Դանիան, բաժանելով այն ժամանակ տարածված պացիֆիստական պատրանքները, զգալիորեն կրճատեց իր զինված ուժերը։ Դանիացիների օրինակին հետևեցին նորվեգացիները։ Իսկ Իսլանդիան առհասարակ զինված ուժեր չուներ, իրեն հռչակեց մշտապես չեզոք և ձեռնպահ մնաց Ազգերի լիգա ընդունելուց։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Դանիան հասավ այն բանին, որ իմպերիալիստական տերությունները ճանաչեցին նրա սուվերեն իրավունքները Գրենլանդիայի, իր վերջին գաղութի նկատմամբ։ Այդ սուվերենիտետը չճանաչեց Նորվեգիան, որը հատուկ տնտեսական շահեր ուներ Գրենլանդիայում։ Կղզու արևելյան մասը նորվեգացիները համարում էին ոչ ոքու հող և 1931 թ. այնտեղ նույնիսկ էքսպեդիցիա ափ հանեցին՝ այն աննեքսիայի ենթարկելու նպատակով։ Երկու կողմերը, սակայն, համաձայնեցին իրենց վեճը հանձնել Հաագայի միջազգային դատարանին, որը հարցը լուծեց հօգուտ Դանիայի (1933 թ.)։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին Դանիան արտաքին քաղաքականությունն անց էր կացնում՝ հաշվի առնելով ֆաշիստական Գերմանիայի վտանգավոր հարևանությունը, հույս չունենալով դրսից ռեալ օգնություն ստանալ գերմանական ագրեսիայի դեպքում։ Ստաունինգի կառավարությունը Հիտլերին սիրաշահում էր առևտրական զիջումներով, կոլեկտիվ անվտանգության ցանկացած տարատեսակությանը մասնակցություն չունենալով։ Դանիական քաղաքագետներին հետապնդում էր Հյուսիսային Շլեզվիգը վերստին կորցնելու կոշմարը, որտեղ տեղական գերմանական նացիստներն ավելի ու ավելի բացահայտորեն էին կոչ անում վերանայել 1920 թ. հանրաքվեի արդյունքները։ Դանիան Արևմտյան Եվրոպայի երկրներից միակն էր, որ 1939 թ. մայիսին ստորագրեց դեմագոգաբար Հիտլերի կողմից առաջարկված չհարձակման պակտը, հույս ունենալով դրանով իրեն վնասազերծել հնարավոր ագրեսորից։

ՇՎԵԴԻԱ

Ընդհանուր բնութագիր

Շվեդիան արդյունաբերական տեսակետից առավել զարգացած, բնակչությամբ ամենախոշոր երկիրն է ոչ միայն Սկանդինավիայում, այլև հյուսիսեվրոպական բոլոր հինգ երկրների մեջ։ Դեռ առաջին համաշխարհային պատերազմի

սկզբին նա դարձավ ինդուստրիալ-ագրարային երկիր. ինդուստրիայի գլխավոր ճյուղերն էին լեռնային գործը և սև մետալուրգիան, անտառաթղթի արտադրությունը և մեքենաշինությունը (սարքավորումներ էլեկտրակայանների և էլեկտրակապի, անտառային ու սննդի արդյունաբերության համար)։ Շվեդիայի համար բնորոշ էին ձեռնարկությունների, արդյունաբերական կորպորացիաների ու բանկերի, ինչպես նաև երկրից արտահանվող կապիտալի համապատասխանաբար ավելի մեծ չափերը։ Նա ուներ նաև անասնապահության ու դաշտավարության թեքմամբ զարգացած գյուղատնտեսություն։ Շվեդական ագրարային կարգերի բնորոշ գիծը ազնվական-կալվածատերերի ուժեղ դիրքերն էին Ստոկհոլմի շրջանում և երկրի ծայր հարավում՝ Սկոնեի արգավանդ պրովինցիայում։

Այսպիսով, Շվեդիան Հյուսիսի և՛ ամենապրոլետարական, և՛ ամենապահպանողական երկիրն էր։ Զարգացած ինդուստրիան, լավ կազմակերպված բանվորական շարժումն այնտեղ համատեղվում էին չափազանց հետամնաց քաղաքական կարգերով և բուրժուական հեղափոխության անավարտվածությամբ։ Ռիկստագի վերին պալատը մինչև նոր ժամանակաշրջանի վերջը պահպանում էր իր արիստոկրատական-բուրժուական կազմը, լայն լիազորություններ ուներ թագավորը։ Շվեդական կառավարող շրջանները կողմնորոշվում էին դեպի կայզերական Գերմանիան, քանի դեռ որոշակի չէր դարձել նրա պարտությունը համաշխարհային պատերազմում։ Շվեդական ռեակցիայի շահերն արտահայտում էր պահպանողական (տառացիորեն՝ աջ) կուսակցությունը՝ «հյոգերները», որը մինչև 1917 թ. սովորաբար գտնվում էր իշխանության գլուխ։ Միջին և մանր բուրժուաների լայն խավերի խոսափողը լիբերալներն էին. կուլակությունը սկսած 1910-ական թվականներից ուներ իր գյուղացիական կուսակցությունը, որը հարում էր պահպանողականներին։ Պրոլետարիատը հաստատուն կերպով պաշտպանում էր սոցիալ-դեմոկրատներին։

Հեղափոխական վերելքը և 1918 թ. պառլամենտական երրորդ ռեֆորմը

Քաղաքական կարգերի հարաբերական ռեակցիոնությունը, անգլիական բլոկադայի հետևանքով առաջացած վառելիքա-պարենային սուր դեֆիցիտը, վերջապես, համաշխարհային հեղափոխական շարժման կենտրոնին՝ Ռուսաստանին մոտիկ լինելը բացատրում են Շվեդիայում մասսաների սոցիալական խմորումների առանձնահատուկ խորությունը։ Այստեղ սուր կերպով էր ընթանում նաև սոցիալ-դեմոկրատիայի մեջ եղած երկու ուղղությունների պայքարը։ Շվեդական ձախ սոցիալ-դեմոկրատները դեռ 1917 թ. մայիսին Արևմուտքում առաջիններից մեկը կազմակերպչորեն խզեցին իրենց կապերը բացահայտ օպորտունիստների հետ և հիմնեցին Շվեդիայի ձախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը՝ շվեդական կոմկուսի նախորդը։

Ռոմանովների դինաստիայի տապալումը Ռուսաստանում արագացրեց Համերշելդի (որը «հունգեր»—«սով» բառից կոչվում էր Հունգերշելդ)՝ ժողովրդին ատելի պահպանողական կառավարության հրաժարականը (1917 թ. մարտ)։ Երկիրը բռնկվեց թանկության, սպեկուլյացիայի և պարենամթերքը Գերմանիա արտահանելու դեմ ուղղված մասսայական ելույթներով։ Դրանք գլխավորում էին ձախ սոցիալիստները։ 1917 թ. աշնանը աջ սոցիալ-դեմոկրատները լիբերալների հետ կազմեցին կոալիցիոն կաբինետ։ Սակայն կառավարության մեջ սոցիալ-դեմոկրատների մտնելը չկանխեց մասսայական շարժման աճը։ Դրա նոր վերելքը սկսվեց Գերմանիայում տեղի ունեցած նոյեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո։ Խոշոր քաղաքների բան-

վորները փողոց դուրս եկան։ Ձախ սոցիալիստները հանդես եկան հեղափոխական մանիֆեստով, պահանջելով հանրապետություն, խոշոր կապիտալի և հողատիրության ունեզրկում և կոչ անելով կազմակերպել սովետներ և ընդհանուր քաղաքական գործադուլ։ Բանակն անհուսալի էր, և թագավոր-ռեակցիոներ Գուստավ V-ը արդեն պատրաստվում էր հետևելու Վիլհելմ II-ի օրինակին։ Սակայն աջ սոցիալ-դեմոկրատների ջանքերով հեղափոխական իրադրությունը հաղթահարվեց։ Նրանց հեղինակավոր պարագլուխ, պառլամենտի փորձառու անդամ, հրապարակախոս Յա. Բրանտինգի ղեկավարությամբ հապճեպ նախապատրաստվեցին և ընդունվեցին օրենքներ կոմունալ և պառլամենտական ռեֆորմի մասին (1918—1919 թթ.)։ Դրանք սահմանում էին ընդհանուր ընտրական իրավունք, այդ թվում նաև կանանց համար, երկրորդ պալատի ընտրությունների ժամանակ (սկսած 1921 թ.) և ընտրական իրավունք առաջին պալատի՝ մինչ այդ ռեակցիայի այդ միջնաբերդի ոչ ուղղակի ընտրությունների ժամանակ։ 1920 թ. սոցիալ-դեմոկրատները, մասսաների ճնշման տակ կապերը խզելով լիբերալների հետ, կազմեցին Սկանդինավիայում առաջին այսպես կոչված բանվորական կառավարությունը՝ նույն այդ Բրանտինգի գլխավորությամբ։ 20-ական թվականների Սկանդինավիայի սոցիալ-դեմոկրատական մյուս կաբինետների նման այս կառավարությունն էլ չուներ պառլամենտական մեծամասնություն և շուտով ընկավ, հիասթափեցնելով պրոլետարիատին՝ նրա ակնկալություններում։

20-ական թվականների շվեդական «բարգավաճումը»։ Կոմկուսի դրությունը

Շվեդիան իր հարևաններից ավելի լավ օգտվեց 20-ական թվականների կապիտալիստական կայունացումից։ 1923—1930 թթ. արդյունաբերական արտադրանքն աճեց 64 տոկոսով, արտահանությունը՝ 70 տոկոսով։ Ոչ միայն մնացած Սկանդինավիայում (բացի Ֆինլանդիայից), այլև Արևմուտքի մյուս խոշոր երկրներում արտադրության աճի տեմպերը զգալիորեն ցածր էին շվեդականից։ Շվեդական մետաղարդյունաբերության պատենտավորված ապրանքները Եվրոպայի սահմաններից այժմ դուրս ելան, շվեդական կոմպանիաները ստացան միջազգային բնույթ, իսկ շվեդական «լուցկու արքա» Իվար Կրեյգերը, որն իր կարիերան սկսեց Պետերբուրգում որպես շինարար ինժեներ, մոնոպոլացրեց լուցկու համաշխարհային արտադրության հիմնական բաժինը և ապա դարձավ համաշխարհային մասշտաբի ֆինանսական մագնատ։ Դրա հետ մեկտեղ 20-ական թվականների Շվեդիային չշրջանցեցին խոշոր և հաճախակի աշխատանքային կոնֆլիկտները։ Բարձր կոնյունկտուրան օգտագործելով, արհմիությունները հասան աշխատավարձի զգալի բարձրացման. շվեդական որակյալ բանվորները Հյուսիսում առաջինը ձեռք բերեցին իրենց սեփական «Ֆորդերը»։ Բարգավաճման շրջանը բանվորների զգալի մասի մեջ սնունդ տվեց կապիտալիզմի՝ աստիճանաբար սոցիալիզմին վերաճելու օպորտունիստական պատրանքներին։ Այդ պատրանքները թափանցում էին Սկանդինավիայում ամենախոշոր շվեդական կոմկուսի շարքերը, որտեղ 20-ական թվականների վերջին հաշվվում էր մոտ 18 հազ. անդամ։ Կոմկուսում սուր պայքար էր ընթանում աջ օպորտունիստական ղեկավարության և ձախ օպոզիցիայի միջև։ 1924 և 1929 թթ. ՇԿԿ-ն երկու պառակտում ապրեց։ Առաջին դեպքում նրանից հեռացավ կուսակցության հիմնադիրների խումբը (Հյոգլունդ-Ստրյոմ), որը կորցրել էր հեղափոխական հեռանկարը և շրջվել դեպի սոցիալ-դեմոկրատները։ Նոր պառլամենտից հետո ՇԿԿ-ի աջ թևի բազայի վրա ստեղծվեց Զիլբուրմի ղեկավարությամբ «անկախ» կոմունիստական (հետագայում սոցիալիստական) կուսակցությունը։ 30-ական թվականներին

ռենեգատները հիմնականում ձուլվեցին սոցիալ-դեմոկրատների հետ։ ՇԿԿ-ի ձախ թևը (նախկին կուսակցության մի մասը) Սիլլենի և Լինդերուտի գլխավորությամբ մնացին որպես Կոմինտերնի սեկցիա։

Մասսայական շարժման վերելքը ճգնաժամի տարիներին և սոցիալ-դեմոկրատների անցնելն իշխանության գլուխ (1932 թ.)

Ճգնաժամը Շվեդիային հարվածեց ավելի ուշ և ավելի թույլ, քան Արևմտյան Եվրոպայի մյուս երկրներին։ Արդյունաբերական արտադրության ծավալը 1930—1932 թթ. նվազեց միայն 13 տոկոսով։ Այդուհանդերձ բոլոր բանվորների մեկ հինգերորդը (արհմիություններում կազմակերպված բանվորների 30 տոկոսը) 1932—1933 թթ. աշխատանք չուներ։ Հասարակական աշխատանքներում զբաղված աշխատավորները վարձատրվում էին աղքատիկ ձևով։ Շվեդական կապիտալիզմի միջազգային վարկը տուժեց Կրեյգերի ֆինանսական մեքենայությունների բացահայտումից, նրա ինքնասպանությունից և նրա կոնցերնի կրախից (1932 թ.) հետո։ Երկրում անշեղորեն աճում և ավելի ռադիկալ բնույթ էր ընդունում բանվորական շարժումը։ Դրա հետ միասին շվեդական բուրժուազիան լի էր վճռականությամբ պահպանելու իր դիրքերը և սանձահարելու շարժման մեջ ընկած մասսաներին։ Շտրեյկբրեխերների խոշոր ջոկատները գործադուլ անող մեկ շրջանից մյուսն էին նետվում, առաջ բերելով գիտակից բանվորների արդարացի զայրույթը։ Շտրեյկբրեխերների պահպանության համար բերվում էին ոչ միայն ոստիկաններ, այլև զորքեր։ 1931 թ. մայիսին Օդալեն հյուսիսային արդյունաբերական շրջանում զինվորները գնդակոծեցին խաղաղ ցույցը և սպանեցին հինգ ցուցարարի։ Հասարակական կարծիքը ցնցված էր։ Մայրաքաղաքում տեղի ունեցած բողոքի ցույցում մասնակցում էին 150 հազար մարդ, կոմկուսի ղեկավարները, որոնք ցույցի ժամանակ հեղափոխական գործողությունների դիմելու կոչ էին անում, ձերբակալվեցին։ Այդուհանդերձ լիբերալ կառավարությունը, որն իր վրա բիծ էր դրել Օդալենի հաշվեհարդարով և անուղղակիորեն խառն էր Կրեյգերի սկանդալային գործում, 1932 թ. ամռանն ընկավ։

1932 թ. սեպտեմբերին տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում ՇՍԴԿ-ն հանդես եկավ ճգնաժամը հաղթահարելու ծրագրով, որի հիմքը կազմում էր կապիտալիստական էկոնոմիկայի պետական կարգավորումը, այդ թվում տուժած ճյուղերին բյուջետային միջոցներով ֆինանսավորելը և աշխատանքի՝ նախկինից ավելի բարձր վարձատրությամբ հասարակական աշխատանքները։ Հանդես գալով սոցիալիստների հետ բլոկ կազմած, ՇՍԴԿ-ն առաջին անգամ հավաքեց ձայների 47 տոկոսը (կոմկուսը՝ 3 տոկոսը)։ Սոցիալ-դեմոկրատական կառավարությունը գլխավորեց կուսակցության նոր պարագլուխ Պ. Ա. Հանսոնը, որը անցյալում բանվոր էր, հմուտ տակտիկ և «հասարակ մարդու» իր տեսքով լայն ժողովրդականություն էր ձեռք բերել։ Խոշոր կալվածատերերի հետ կայացած համաձայնությունը (1933 թ.) կառավարությանն ապահովեց պառլամենտական մեծամասնությամբ և զինաթափեց օպոզիցիային։

Նախապատերազմյան տարիների բարձր տնտեսական կոնյունկտուրան (1929—1939 թթ. ամբողջությամբ վերցրած Շվեդիայի արդյունաբերական արտադրության ծավալն աճեց 66 տոկոսով) ռեֆորմիստների համար հեշտացրեց նրանց կառավարական ծրագրի կատարումը։ Կապիտալի արտահանությունը դրվեց կառավարական վերահսկողության տակ և խիստ կրճատվեց, որն ապահովեց երկրի ներսում կատարվող կապիտալ ներդրումների ավելացումը։ Թեթևացվեցին արդյունաբերողների վարկավորման պայմանները (նվազեցվեց վարկի տոկոսը), նրանց տրամադրվում էր նաև դրամական խոշոր օժանդակություն։ Պետությունը ֆինանսավորում էր նոր կապիտալ շինարարությունը, այնպես որ պետական սեկտորի բաժինը արտադրության ու տրանսպորտի մեջ 1939 թ. աճեց մինչև 15 տոկոսի։

Գյուղատնտեսությունը պատսպարվեց օտարերկրյա մրցակցությունից, նրա արտադրանքի իրացումը մոնոպոլացրին պետական-կոոպերատիվ խոշոր կազմակերպությունները, նրա գները բարձրացվեցին և երաշխավորվեցին։ Առաջին անգամ սկսեց կիրառվել պետական բյուջեից գյուղական տնտեսատերերի կանոնավոր վարկավորում (ինչպես և Նորվեգիայում)։ Որոշ չափով բարձրացվեցին խոշոր սեփականատերերի հարկերը։ Կառավարության սոցիալական միջոցառումներից պետք է նշել մոր ու մանկան առողջության պահպանության մասին օրենքը (1937 թ.), որը կանխեց ծնելիության աղետային անկումը, ձեռնարկատերերի հաշվին երկշաբաթյա արձակուրդների մասին օրենքը, ինչպես նաև պետության կողմից բնակարանային շինարարության մասնակի ֆինանսավորումը և գործազրկության համար տրվող նպաստները։

Տնտեսական նպաստավոր կոնյունկտուրան, սոցիալ-դեմոկրատական կառավարության օրոք արհմիությունների ամրապնդված դիրքերը և կառավարական օգնության մեջ արդյունաբերողների հանդես բերած շահագրգռվածությունը շվեդական ռեֆորմիստներին թույլ տվեցին 30-ական թվականների կեսերից թուլացնել կոնֆլիկտներն աշխատանքի և կապիտալի միջև։ 1938 թ. արհմիությունների և ձեռնարկատերերի կենտրոնական կազմակերպությունները ստորագրեցին առանց դատարանին դիմելու աշխատանքային կոնֆլիկտները լուծելու վերաբերյալ «գլխավոր համաձայնագիրը»։ 1933—1939 թթ. կոնֆլիկտների պատճառով կորցված աշխատանքային օրերի թիվը նվազեց 21 անգամ։

Այդ կապակցությամբ էլ Շվեդիան դարձավ արտասահմանյան սոցիալ-դեմոկրատների և բուրժուական ռեֆորմիստների «ուխտագնացության» վայրը։ Արևմտյան մամուլը երկինք էր բարձրացնում «սկանդինավյան սոցիալիզմը», կապիտալիզմի և կոմունիզմի միջև առաջացած շվեդական «միջին գիծը» և այլն։ Սակայն այդ ռեկլամը հեռու էր իրականությունից։ Պետական կարգավորումը, ընդհակառակը, շվեդական մասնավոր կորպորացիաներին օգնեց ավելի արագ ուշքի գալ վերապրած ցնցումներից, իսկ սոցիալ-դեմոկրատական կառավարությունը հանգստացրեց մասսաներին և կայունացրեց «խաղաղությունը» արդյունաբերության ասպարեզում։ Խոշոր կարողությունների ընդհանուր արժեքը (որոնցից վերցվում էր ունեցվածքի հարկ) 1930—1942 թթ. աճեց մինչև 50 մլրդ կրոնի, այն դեպքում, երբ մոտավորապես յուրաքանչյուր տասներեքերորդ շվեդացին 1940 թ. աղքատության նպաստ էր ստանում։

Արտաքին քաղաքականությունը

Հյուսիսային պետությունների մեջ խոշորագույնը հանդիսացող հետպատերազմյան Շվեդիան զգալի հեղինակություն ուներ իր հարևանների շրջանում, հատկապես բուրժուական Մերձբալթիկայում։ Սակայն շվեդական քաղաքագետները համառորեն խուսափում էին դաշնակցային պարտավորություններ ստանձնել դրանց հանդեպ, վախենալով ներգրավվել հակագերմանական կամ հակասովետական կոալիցիայի մեջ։ Շվեդական բուրժուազիայի և կալվածատերերի ողջ հակակոմունիզմով հանդերձ Շվեդիայի մետաղի արդյունաբերությունը երկու անգամ դարձավ Սովետների Երկրի խոշոր մատակարարողը՝ ՆԷՊ-ին անցնելու ժամանակ և առաջին հնգամյակի տարիներին։ Շվեդա- և նորվե-

դա-սովետական հարաբերությունների ամրապնդմանը մեծ չափով օգնեց սքանչելի սովետական կին դիվանագետ, Սկանդինավիայի մեծ գիտակ Ա. Մ. Կոլոնտայը՝ Նորվեգիայում, ապա և Շվեդիայում սովետական լիազոր ներկայացուցիչը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, խուսափելով կոլեկտիվ անվտանգության միջոցառումներին մասնակցելուց, Շվեդիան դրա հետ մեկտեղ որոշ չափով ավելի եռանդուն, քան Դանիան ու Նորվեգիան, պատրաստվում էր իր չեզոքության զինված պաշտպանությանը։

ՆՈՐՎԵԳԻԱ

Ընդհանուր բնութագիր

Բնակչությամբ և ազգային եկամտի չափերով Նորվեգիան ետ էր մնում Դանիայից ու Շվեդիայից։ Նրա արդյունաբերությունը շվեդականից թույլ էր, իսկ մանրգյուղացիական գյուղատնտեսությունը զիջում էր դանիականին։ Չնայած ամենաարժեքավոր հանքանյութերի (պիրիտներ և գունավոր մետաղներ) առատությանը և ջրային էներգիայի հարուստ ռեսուրսներին, այստեղ ինդուստրացումն սկսվեց միայն XIX դարի վերջին։ Երկիրն զգում էր ոչ միայն օտարերկրյա պարենամթերքի, այլև օտարերկրյա կապիտալների կարիքը։ Նորվեգիայի հպարտությունը՝ աշխարհում խոշորագույններից մեկը հանդիսացող նրա առևտրական նավատորմն էր, ձկնորսական ու գաղանորսական արդյունագործությունը և երիտասարդ ճյուղերը՝ էլեկտրաքիմիան ու էլեկտրամետալուրգիան։ Արդյունաբերական ու առևտրական բուրժուազիայի քաղաքական համակրանքը շահելու համար միմյանց հետ պայքարում էին լիբերալները («վենստրե») և պահպանողականները («խյոյրե»), որոնք էլ միմյանց հաջորդում էին իշխանության մեջ։ Ինչպես և Շվեդիայում, Նորվեգական գյուղացիների անունից հանդես էր գալիս մի հատուկ կուսակցություն, որը մոտ էր պահպանողականներին։ Բանվոր դասակարգը գնում էր սոցիալ-դեմոկրատների՝ Նորվեգական բանվորական կուսակցության (ՆԲԿ) ետևից։ Բուրժուադեմոկրատական ռեֆորմներ Նորվեգիայում անց էին կացվել դեռևս XIX դարի վերջին։ 1905 թ. երկիրը խաղաղ ձևով խզեց Շվեդիայի հետ ունեցած գրեթե հարյուրամյա անիրավահավասար ունիան։ Անկախ Նորվեգիան կողմնորոշվում էր դեպի Մեծ Բրիտանիան՝ իր գլխավոր գործարար պարտնյորը։

Նորվեգիայի հասարակական կյանքի առանձնահատուկ գիծը «լեզվական վեճն» էր երկրում գերիշխող Նորվեգա-դանիական լեզվի (ռիկսմոլա) և գյուղացիական բարբառների հիման վրա XIX դարում Նորվեգիայի ազգային ու կուլտուրական վերածնության կողմնակիցների վերաստեղծած Նորվեգական մաքուր լեզվի ջատագովների (լանսմոլա) միջև։ 1917 թ. ռեֆորմն ընդառաջեց վերջիններիս և «Նորվեգացրեց» ռիկսմոլայի ինչպես ուղղագրությունը, այնպես էլ արտասանությունը։

Սովետները Նորվեգիայում և սոցիալ-դեմոկրատիայի անցումը հեղափոխական դիրքերը

Նորվեգիայում հեղափոխական վերելքը սկսվեց, ինչպես և Շվեդիայում, դեռևս 1917 թ.։ Հունիսի 6-ին տեղի ունեցավ թանկության ու սպեկուլյացիայի դեմ բողոքի ընդհանուր գործադուլ։ Դեֆիցիտ ապրանքների արտադրության ու բաշխման նկատմամբ հասարակական գործուն վերահսկողության համար մասսաների մղած պայքարը, ՆԲԿ-ի պառլամենտական դիրքերի թուլությունը, ռուսական պրոլետարիատի հեղափոխական օրինակի հետ, դեռևս 1917 թ.

վերջին Նորվեգիայի քաղաքներում կյանքի կոչեցին բանվորների դեպուտատների տասնյակ սովետներ։ 1918 թ. մարտին Քրիստիանիայում (Օսլո) կայացավ սովետների համազգային կոնֆերանս։ Նորվեգական սովետներն անց էին կացնում պարենամթերքի բռնագրավում մասնավոր տերերից և վերահսկում կայուն գներով դրա վաճառքը։ Իշխանության համար նրանք չէին պայքարում։ Մատակարարման բարելավման համեմատ 1918 թ. ընթացքում սովետներն ինքնացրման ենթարկվեցին։

Մասսաների ձախացումն արտահայտվեց նաև ՆԲԿ-ում ուժերի դասավորության մեջ։ 1918 թ. գարնանը տեղի ունեցած կուսակցական համագումարը նախկին ռեֆորմիստականի փոխարեն ընտրեց նոր, ռադիկալ ղեկավարություն, պաշտպանեց սովետների ստեղծումը, ողջունեց Հոկտեմբերյան հեղափոխությունը (այդ արեցին նաև դանիական սոցիալ-դեմոկրատները 1918 թ. փետրվարին կայացած իրենց համագումարում) և արտահայտվեց իշխանությունը արտապառլամենտական ուղիով գրավելու օգտին։ 1919 թ. Նորվեգական սոցիալ-դեմոկրատները նոր քայլ կատարեցին դեպի ձախ և միացան III Ինտերնացիոնալին (նման տեսակի առաջին օրինակը Արևմտյան Եվրոպայում)։ Կուսակցության ոգին դարձավ նրա քարտուղար Մ. Տրանմելը, որը պատանեկության տարիներին եղել էր անարխո-սինդիկալիստ, անխոնջ ագիտատոր, սակայն հեղափոխական ֆրազին ավելի հակված, քան հեղափոխական գործողությանը։

ՆԲԿ-ի հեղափոխական նոր պլատֆորմը բուրժուազիայի կողմից ճարպկորեն օգտագործվեց քաղքենուն ահաբեկելու համար։ 1918 թ. աշնանային ընտրություններում բուրժուական կուսակցությունները հաղթանակ տարան և մնացին իշխանության գլուխ։ Այդ տարիներին նրանց իրագործած ռեֆորմները գլխավորապես հանգեցին պառլամենտական մանդատների ավելի համամասնական բաշխմանը, սակայն տեղերի երկու երրորդը գյուղական օկրուգներին տալու հին սկզբունքը՝ «գյուղացիական կետը» պահպանվեց։

20-ական թվականների տնտեսական լճացումը և դասակարգային մարտերը։ Նորվեգական բանվորական կուսակցության պառակտումը

Ուրիշ երկրների համեմատությամբ կապիտալիզմի մասնակի կայունացումը Նորվեգիայում սկսվեց մեծ ուշացումով և չափազանց կարճատև եղավ։ Հետպատերազմյան կարճատև բումը 1920 թ. վերջին փոխարինվեց ճգնաժամով, որը Նորվեգիային ավելի ուժեղ հարվածեց, քան նրա հարևաններին։ Մետաղի արդյունաբերությունը և նավաշինությունը կազմալուծվեցին։ Լճացումը շարունակվեց տասնամյակի մեծ մասի ընթացքում, ավելի խորանալով խոշորագույն բանկերի սկանդալային կրախներով և խրոնիկական ագրարային ճգնաժամով, և ուղեկցվում էր դասակարգային սուր կոնֆլիկտներով։ 1921 և 1924 թթ. երկրում տարածվեցին գործադուլներ։ Բուրժուազիան այլևս չէր բավարարվում ոստիկանության և շտրեյկբրեխերների կազմակերպությունների օգնությամբ և աշխատավորների դեմ պայքարելու համար ներգրավում էր իր կողմից ֆինանսավորվող ռազմականացված կիսաֆաշիստական միավորումներ։

Շվեդիայի և հատկապես Դանիայի բանվորների համեմատությամբ Նորվեգական պրոլետարիատը, որը ձևավորվել էր ուշացած, բայց սրընթաց տեղի ունեցող ինդուստրացման ընթացքում, չուներ արհեստագործական-համքարական ավանդույթներ, զգալիորեն ավելի հեղափոխականորեն էր տրամադրված և 20-ական թվականների սկզբին շարունակում էր ընթանալ Կոմունիս-

տական ինտերնացիոնալի հետևից։ Նորվեգական բանվորական կուսակցությունն ընդունեց Կոմինտերնի ծրագրային փաստաթղթերը և առաջադրեց պրոլետարիատի դիկտատուրայի, մասսայական հեղափոխական գործողությունների և Սովետների Հանրապետության լոզունգ[1]։ Սակայն կուսակցության (Գրեպ, Տրանմել) և նրա մեջ կոլեկտիվ կերպով մտնող արհմիությունների (Լիան) ղեկավարությունը կանգնած էր ցենտրիստական դիրքերում և III Ինտերնացիոնալի մեջ ընդունվելու 21 պայմանն ընդունեց վերապահումներով և զգալապես ձևականորեն։ ՆԲԿ-ի ղեկավարության և Կոմինտերնի ղեկավարության միջև 1921—1923 թթ. չէին դադարում տարաձայնությունները միասնական ճակատի տակտիկայի, արհմիությունների ու կուսակցության փոխհարաբերությունների, բանվորա-գյուղացիական կառավարության լոզունգի և կուսակցության հենց անվան հարցերի ասպարեզում։ Չափազանցնելով Նորվեգական բանվորական շարժման պայմանների ու ավանդույթների յուրահատկությունը, ցենտրիստները, ի տարբերություն կուսակցության ձախ թևի, հրաժարվում էին ընդունել Կոմինտերնի ընդհանուր ստրատեգիան և տակտիկան։ 1923 թ. վերջին բանը հասավ պառակտման։ Կուսակցության մեծամասնությունը խզեց իր կապերը Կոմինտերնի հետ, իսկ փոքրամասնությունը հիմնադրեց Նորվեգիայի կոմկուսը։ ՆԿԿ-ն տառապում էր ադանդավորական սխալներով և մինչև երկրորդ համաշխարհային պատերազմն այդպես էլ չդարձավ մասսայական կուսակցություն։ Ձևականորեն պահպանելով հեղափոխական ծրագիրը, ՆԲԿ-ն ստիճանաբար ընթանում էր դեպի աջ և 1927 թ. միաձուլվեց սոցիալ-դեմոկրատների հետ, դրա հետ միասին մնալով միջազգային ռեֆորմիզմի ձախ թևում։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը։ ՆԲԿ-ի վերջնական անցումը ռեֆորմիստական ուղին

Հաղիվ դուրս գալով լճացումից, Նորվեգիան խորասուզվեց նոր տնտեսական ճգնաժամի մեջ։ 1932/33 թ. ձմռանը 150 հազ. մարդ (արհմիությունների անդամների մեկ երրորդը) աշխատանք չուներ։ Կոլեկտիվ պայմանագրերի նախկին պայմանները պաշտպանելու ուղղությամբ արհմիությունների գործադրած ջանքերին ֆաբրիկանտները պատասխանում էին մասսայական լոկաուտներով։ Մենստադում, Հյուսիսային ծովի ափին, աշխատավորները 1931 թ. ամռանը վոնդեցին ժամանած շտրեյկբրեխերներին և նրանց պաշտպանող ոստիկաններին։ Ի պատասխան գյուղացիական կուսակցության կառավարությունը, որի պաշտպանության մինիստրն էր Վ. Կվիսլինգը (հետագայում Նորվեգիայի նացիստական «ֆյուրեր»), զորքեր ուղարկեց Մենստադ և դատի տվեց բանվորական առաջնորդ կոմունիստներին։ Կոմկուսի աղդեցությունը պրոլետարիատի վրա վերստին սկսեց աճել։ Միաժամանակ թալանված մանր գյուղացիության և գործազուրկ ծառայողների մի մասը սոցիալական հող դարձավ ֆաշիզմի համար։ 1933 թ. Կվիսլինգը, հրաժարական տալով, հիմնեց «Նորվեգական համերաշխություն» նացիստական կուսակցությունը. առաջացան աջ այլ կուսակցություններ ևս։ Սակայն այդ տարիներին երկրում ֆաշիզմի հետագա ուժեղացման համար պայմաններ չկային։

1930 թ. ընտրություններում տպավորիչ հաղթանակ տարած բուրժուական կուսակցությունների համախմբման պայմաններում ՆԲԿ-ն սոցիալիստական վերափոխությունների հեղափոխական պահանջները փոխեց կապիտալիզմի շրջանակներում ճգնաժամը հաղթահարելու ռեֆորմիստական ծրագրով։ Այժմ կուսակցության ճանաչված առաջնորդ դարձավ Յու. Նյուգորսվոլը, որը երիտասարդական տարիներին Հյուսիսում աշխատել էր փայտամշակող բանվոր և ոչ հեռու անցյալում էլ եղել էր կոմունիստ։

ՆԲԿ-ն իշխանության գլուխ։ Համաձայնագիր գյուղացիական կուսակցության հետ

1933 թ. աշնանային ընտրությունները ՆԲԿ-ին խոշորագույն հաջողություն բերեցին՝ 150-ից 69 մանդատ։ Երբ պրոֆաշիստական տարրերն ստիպված էին հեռանալ գյուղացիական կուսակցության ղեկավարությունից, այն դարձավ սոցիալ-դեմոկրատների դաշնակիցը։ Գյուղացիական քաղաքագետները ապարդյուն կերպով ձգտում էին խոշոր բուրժուազիայի կուսակցություններից ձեռք բերել երկրի թույլ գյուղատնտեսության համար անհրաժեշտ պետական պաշտպանական միջոցառումների կոմպլեքս, և համաձայնության դիմեցին ՆԲԿ-ի հետ (1935 թ. գարուն)։ Դրա հետևանքով լիբերալների կաբինետը հրաժարական տվեց և Նյուգորսվոլը ստացավ պրեմիերի պոստը (գյուղացիական կուսակցությունը չմտավ կառավարության մեջ)։

Առաջադրելով «Ողջ ժողովուրդը՝ դեպի աշխատա՛նք» լոզունգը ՆԲԿ-ի կառավարությունը ձեռնամուխ եղավ գործազուրկներին աշխատանքի մեջ տեղավորելուն, ծավալելով պետական խճուղային և երկաթուղային ճանապարհաշինությունը։ Նա արդյունաբերողներին մասնավոր փոխառություններ ելրաշխիք տվեց՝ ձեռնարկություններում նրանց կողմից զբաղվածությունն ավելացնելու դեպքում։ Ձեռնարկատերերի համար վարկավորումը հեշտացնելու նպատակով հիմնվեց Սկանդինավիայում առաջին պետական արդյունաբերական բանկը (1936 թ.)։ Նորվեգական և շվեդական ռեֆորմիստներին օգնում էր սպառազինությունների եվրոպական մրցավազքի «ուղեկից քամին», ստրատեգիական հումքի նկատմամբ եղած աճող պահանջարկը, որը նրանց չէր խանգարում իրենց վերագրելու գլխավոր ծառայությունները լճացումը հաղթահարելու գործում։ Կատարելով նախընտրական ծրագիրը, ՆԲԿ-ի կառավարությունը վերացրեց նախորդ տարիների հակաբանվորական օրենքները, սահմանեց 2-շաբաթյա վարձատրվող արձակուրդ, 8-ժամյա աշխատանքային օրը տարածեց ծովայինների և գյուղատնտեսական բանվորների վրա, ընդունեց ծերության թոշակների և աշխատանքի պաշտպանության վերաբերյալ օրենքներ, վերջապես, 1938 թ. պարտադիր ապահովագրություն սահմանեց գործազրկության համար։

Նորվեգիայի արտաքին քաղաքականությունը։ «Խաղաղ էքսպանսիան» դեպի Բևեռային գոտուց այն կողմ

Առաջին իմպերիալիստական պատերազմի ընթացքում եվրոպական բոլոր չեզոք երկրների մեջ առավել պրոանտանտական դիրք գրավելով, Նորվեգիան առանց մեծ դժվարության Վերսալյան հաշտության կոնֆերանսից ձեռք բերեց իր սուվերենությունը «ոչ ոքու հողի»՝ Շպիցբերգեն արշիպելագի (Նորվ. Սվալբարդ) վրա տարածելու իրավունք։ 1920 թ. Փարիզի Միջազգային պայմանագիրը դա պայմանավորեց արշիպելագի մշտական չեզոքացմամբ և նրա տնտեսական յուրացմանը պայմանագրի մասնակից բոլոր երկրներին անարգել թույլ տալով։ Շպիցբերգենի հարցի լուծումից հեռացված Սովետական Ռուսաստանի կառավարությունը պայմանագրին միացավ միայն այն բանից հետո, երբ Նորվեգիան դե յուրե ճանաչեց Սովետական Միությանը։ Հետագայում ՍՍՀՄ-ը դարձավ Շպիցբերգենում ածուխ արդյու-

[1] ՆԲԿ-ի սոցիալ-դեմոկրատական օպոզիցիան, որը բացահայտ կերպով առարկում էր Կոմինտերնի մեջ ընդունվելու 21 պայմաններին, կուսակցությունից դուրս եկավ և 1921 թ. հիմնեց Նորվեգիայի ոչ մեծ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը։

նահանջող խոշորագույն տերություն։ Նորվեգիայի հարաբերական լոյալությունը քաղաքացիական պատերազմի և ինտերվենցիայի տարիներին, Անդրբևեռում եղած ընդհանուր տնտեսական շահերը, Ֆր. Նանսենի առաքինի դերը Պովոլժիեի սովյալներին միջազգային հասարակական օգնություն կազմակերպելու գործում, վերջապես, նորվեգական բանվորական շարժման ռադիկալիզմը՝ այս բոլորը պայմանավորեց սովետա-նորվեգական հարաբերությունների համեմատաբար ավելի բարեկամական բնույթը՝ սովետա-շվեդական և առավել ևս սովետա-դանիական հարաբերությունների համեմատությամբ։

Շպիցբերգենի վրա նորվեգական դրոշակի բարձրացմամբ (1925 թ. ՍՍՀՄ-ի համաձայնությամբ) «խաղաղ էքսպանսիան», որը թելադրված էր նորվեգական կետորսական, ձկնորսական ու նավատիրական ընկերությունների շահերով, չսահմանափակվեց։ 1928—1939 թթ. Նորվեգիան իր տիրույթը հռչակեց Անտարկտիդայի մի քանի կղզիներ (Բուվե, Պյոտր Մեծի), բայց Արևմտյան Գրենլանդիայում անհաջողություն կրեց։

Եվրոպական պատերազմի աճող սպառնալիքը Նորվեգիայի սոցիալ-դեմոկրատական կառավարությանը և նրա արտաքին գործերի մինիստր, հայտնի պատմաբան Խ. Կուտին դրդեց հանդես գալու որպես 30-ական թվականների հյուսիսային մեկուսացման կողմնակից։ Գերազանց բնական սահմանները և ավանդական ապավինությունը բրիտանական նավատորմի հզորության վրա՝ ինքնահանգստացման էին տրամադրում։ Նորվեգական ռազմական բյուջեն ամենանվազներից մեկն էր նախապատերազմյան Եվրոպայում։

* * *

Միջպատերազմյան տարիներին ավարտվեց սկանդինավյան «ազատ» կապիտալիզմի վերաճումը մոնոպոլիստական կապիտալիզմի։ Համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո Սկանդինավիայում սկսեց զարգանալ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը, որը որպես սիստեմ ձևավորվեց արդեն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ 30-ական թվականների ճգնաժամը ծնունդ տվեց մասսաների նոր խոշոր քաղաքական տեղաշարժին դեպի ձախ։ Այդ տեղաշարժից օգտվեցին գլխավորապես ռեֆորմիստները՝ աջ սոցիալ-դեմոկրատները։ Զգալիորեն աճեցին արհմիությունները, որոնք, սակայն, մնացին այդ նույն ռեֆորմիստների վերահսկողության տակ։ Աշխատավորների կենսամակարդակը և մարդկային արժանապատվությունը Սկանդինավիայում ավելի լավ էին ապահովված, քան եվրոպական երկրների մեծ մասում, ուր իշխանության գլուխ էին կանգնած բուրժուական կաբինետները կամ ֆաշիստական ռեժիմները։ Այդուհանդերձ Սկանդինավիայում ևս կարիքն ու գործազրկությունը մնում էին որպես մասսայական երևույթներ, իսկ միջնակարգ կրթությունը բանվորական ու գյուղացիական ընտանիքներում՝ որպես հազվագյուտ դեպք։ Սոցիալ-դեմոկրատների իշխանության գլուխ անցնելով գործադուլները դարձան ավելի հազվադեպ և մասնակիցների թվի տեսակետից ավելի մանր։ Պատերազմից առաջ միայն սկսված սոցիալական ռեֆորմների սերիան որոշ չափով թեթևացրեց զառամյալների, բազմազավակների, գործազուրկների և բնակչության առանձնապես կարիքավոր խմբերի վիճակը։ Աշխատավորները ձեռք բերեցին վարձատրվող արձակուրդներ։ Սակայն սոցիալ-դեմոկրատների կառավարություններ ստեղծվելուց հետո էլ արտադրության միջոցների սեփականությունը, էկոնոմիկայի ղեկավարումը և պետական կառավարման ապարատն ամբողջապես գտնվում էին բուրժուազիայի ձեռքում։

30-ական թվականների սոցիալ-դեմոկրատական կաբինետների կայունությունը հիմնվում էր գյուղացիական և ձախ բուրժուական կուսակցությունների հետ ռեֆորմիստների համաձայնության վրա։ Այդ համաձայնությունները տնտեսական ճգնաժամից ահաբեկված միջին խավերին դուրս էին բերում հնարավոր ֆաշիստական ազդեցությունից։ Գլխավորապես ճգնաժամի տարիներին առաջացած սկանդինավյան երկրների նացիստական կուսակցությունները մնում էին սակավաթիվ և մեկուսացված։ Նրանք գաղտնի կերպով պատրաստվում էին կատարելու Հիտլերյան «5-րդ զորասյան» խնդիրները պատերազմի ժամանակ։

Կոմինտերնի VII կոնգրեսը սկանդինավյան կոմկուսներին օգնեց վերանայելու տակտիկան, հաղթահարելու նրանց ազանդավորության զգալի մասը և վերացնելու 20-ական թվականների ներկուսակցական ճգնաժամերի ծանր հետևանքները։ Հանրապետական Իսպանիային օգնություն կազմակերպելով, կոմունիստները կարողացան ստեղծել, հատկապես Շվեդիայում, հակաֆաշիստական ժողովրդական ճակատի սաղմերը։ Հարյուրավոր սկանդինավցիներ մարտնչում էին ինտերնացիոնալ բրիգադների շարքերում։ Վերադարձած վետերանները հետագայում դարձան գերմանական օկուպանտների դիմադրության մարտական խմբերի կազմակերպիչներ։

Սկանդինավյան բոլոր երկրների կառավարող շրջանները, ընդհակառակը, ընթացան ֆաշիստական տերությունների խրախուսման ուղիով։ Գերմանիան, գնելով ստրատեգիական հումքը, հաջողությամբ պայքարում էր առաջին տեղի համար սկանդինավցիների արտաքին առևտրի բնագավառում։ Իտալա-եթիոպական պատերազմից հետո սկանդինավյան և մի քանի այլ փոքր պետություններ ընդհանուր լսողության համար իրենց ազատ հայտարարեցին (1936 և 1938 թթ.) կոլեկտիվ անվտանգության միջոցառումներին (սանկցիաներին) մասնակցելու պարտականություններից, որոնք նախատեսված էին Ազգերի լիգայի կանոնադրությամբ։ Կոլեկտիվ անվտանգության նման քայքայումը ամենևին չէր հատուցվում հյուսիսային երկրների միջև արտաքին ու մաքսային քաղաքականության, սոցիալական և այլ օրենսդրության, մշակույթի, սպորտի ասպարեզում միջպատերազմյան ժամանակաշրջանում ծավալված համագործակցությամբ։

ԳԼՈՒԽ 19

ՖԻՆԼԱՆԴԻԱՆ 1918—1939 ԹԹ.

Ընդհանուր բնութագիր

Ֆինլանդիան, որի բնակչությունը 1918 թ. կազմում էր 3,3 մլն մարդ (88 տոկոսը ֆիններ, գրեթե մնացած բոլորը՝ շվեդներ), 1809 թվականից մտնում էր Ռուսաստանի կազմի մեջ, նա օգտվում էր լայն ինքնավարությունից, ուներ սեյմ, սեփական դրամական և մաքսային սիստեմ։ Գրագիտության մակարդակով, թերթերի ու ամսագրերի տարածմամբ, հաղորդակցության ուղիների վիճակով Ֆինլանդիան գտնվում էր առավել կուլտուրական եվրոպական երկրների թվում։ Նրա բանվոր դասակարգը լավ կազմակերպված էր, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն ու արհմիությունները գործում էին լեգալ պայմաններում։ 1905—1907 թթ. ռուսական հեղափոխությունը ֆիններին հնարավորություն տվեց ինքնակալությունից ձեռք բերել այդ ժամանակվա համար ամենադեմոկրատական պառլամենտական սիստեմ՝ մեկպալատանի սեյմ (մինչ այդ սեյմը չորսպալատանի էր և դասային) և ընդհանուր ընտրական իրավունք, որը տարածվում էր նաև կանանց վրա։ 1916 թ. ֆիննական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը բանվորական կուսակցություններից առաջինը պառլամենտում ստացավ տեղերի մեծամասնություն։

Նիկոլայ II-ի կառավարման օրոք ինքնակալության վարած ռուսացման քաղաքականությունը նպաստեց բուրժուական նացիոնալիզմի ուժեղացմանը Ֆինլանդիայում, հակառուսական տրամադրությունների արմատավորմանը, որոնք ուժգին կերպով բորբոքվում էին ռեակցիոն նացիոնալիստական շրջանների կողմից։ Ռուսական ինքնակալության տապալումը հասցրեց Ֆինլանդիայում գործադուլային շարժման չտեսնված վերելքին։ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ազդեցության տակ 1917 թ. նոյեմբերի 14-ին Ֆինլանդիայում սկսվեց ընդհանուր գործադուլ։ Բուրժուազիայի տիրապետությունը կազմալուծվեց, բանվոր դասակարգի առջև բացվեց իշխանության գրավման հեռանկարը։ Բայց գործադուլը ղեկավարող բանվորական պարագլուխները ձեռքից բաց թողեցին այդ հնարավորությունը։ Սվինխուվուդի կազմած բուրժուական կառավարությունն իր առջև նպատակ դրեց «կարգ հաստատել» Ֆինլանդիայում և այն բաժանել հեղափոխական Ռուսաստանից։

Ֆինլանդիայի անկախություն ստանալը։ Ֆիննական հեղափոխությունը

1917 թ. դեկտեմբերին ֆիննական կառավարությունը դիմեց սովետական կառավարությանը, իսկ Ֆինլանդիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարությունը՝ ՌՍԴՌ(բ)Կ Կենտկոմին, խնդրելով ճանաչել Ֆինլանդիայի անկախությունը։ Այդ խնդրանքն անհապաղ բավարարվեց։ 1917 թ. դեկտեմբերի 31-ին Ժողկոմսովետը որոշում ընդունեց Ֆինլանդիայի անկախության ճանաչման մասին։

Հեղափոխական Ռուսաստանից բաժանվելը չկանխեց հեղափոխական ճգնաժամի զարգացումը Ֆինլանդիայում։ Կառավարությունը, պատրաստվելով մասսայական ելույթները ճնշելու, ոչինչ չէր անում բանվորների և տորպարների (մանր վարձակալների) թշվառ վիճակը թեթևացնելու համար։ Իր հերթին բանվոր դասակարգի առաջավոր մասը պատրաստվում էր վճռական պայքարի, ամրապնդելով կարմիր գվարդիայի բանվորական ջոկատները, որոնք սկսեցին ստեղծվել 1917 թ. ամռանը։ Այդ տենդենցի արտահայտությունը եղավ ՖՍԴԿ-ի ձախ թևի ուժեղացումը։

1918 թ. հունվարի 27-ին Ֆինլանդիայում սկսվեց հեղափոխությունը։ Այն գլխավորում էին ֆիննական բանվորական շարժման ականավոր գործիչներ Կ. Մաննները (հեղափոխական կառավարության՝ Ժողովրդական լիազորների խորհրդի—ԺԼԽ—նախագահ), Յու. Սիրոլան (արտաքին գործերի լիազոր), կուսակցության խոշորագույն տեսաբան Օ. Կուուսինենը և ուրիշներ։ Բայց հեղափոխությունը հաղթանակեց Ֆինլանդիայի միայն հարավային, առավել արդյունաբերական մասում։ Երկրի չորս հինգերորդ մասում, ուր ապրում էր բընակչության մոտ կեսը, հիմնականում գյուղացիությունը, մնացին բուրժուազիայի իշխանության ներքո։ Հեղափոխական իշխանությունը հռչակեց և մասամբ իրականացրեց աշխատավորների շահերից ելնող մի ամբողջ շարք միջոցառումներ։ Տորպարները հռչակվեցին իրենց վարձակալած հողի տերեր, բարելավվեց բատրակների և սպասավորների դրությունը և այլն։ Թեև հեղափոխության ծրագրային փաստաթղթերը չէին նախատեսում արմատական սոցիալական վերափոխությունների իրականացում, սակայն գործնականում կառավարությունը գործում էր որպես պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրա։ Բուրժուազիան փաստորեն զրկվեց քաղաքական իրավունքներից, նրա թերթերն ու կազմակերպություններն արգելվեցին։ Ֆիննական բանկն անցավ հեղափոխական իշխանությունների ձեռքը, ձեռնարկատերերի կողմից կանգնեցված ձեռնարկությունները բանվորների հսկողությամբ գործի դրվեցին։ Կատաղի պայքարի ընթացքում ֆիննական հեղափոխականներն ավելի ու ավելի էին ազատագրվում նրանց յուրահատուկ բուրժուա-դեմոկրատական պատրանքներից։ «Ֆինլանդիայի բանվորական հեղափոխությունը սոցիալիստական էր, թեև հեղափոխական կառավարությունը պայքարի սկզբում չուներ սոցիալիստական հստակ ծրագիր»[1]։

Սակայն այժմ հակահեղափոխության ուժերն ավելի լավ էին նախապատրաստված, քան 1917 թ. նոյեմբերին։ Եռանդուն, լավ կազմակերպված, նյութական մեծ ռեսուրսներ ունեցող ֆիննական բուրժուազիան զինված պայքար սկսեց հեղափոխության դեմ, հակահեղափոխության շահերի համար օգտագործելով գյուղացիության նացիոնալիստական տրամադրությունները, որին բանվոր դասակարգը չհասցրեց և չկարողացավ վերածել իր դաշնակցի։ Հակահեղափոխության ուժերի ավանգարդում ընթանում էին ֆիննական բուրժուազիայի բազմահազարանոց ռազմականացված միավորումները (շյուցկոր)։ Մաններհայմը չկարողացավ հաղթանակ տանել կարմիր գվարդիայի դեմ, որը օգնություն էր ստանում Սովետական Հանրապետությունից։ Այդ ժամանակ հակահեղափոխության ղեկավարները դիմեցին կայզերական Գերմանիայի օգնությանը, հանուն դրա նրա հետ ստորագրելով ստրկացուցիչ պայմանագիր։ 1918 թ. ապրիլի սկզբին ափ դուրս բերվեց գերմանական մի դիվիզիա գեներալ Ֆոն դեր Հոլցի հրամանատարությամբ։ Ինտերվենցիան փոխեց ստրատեգիական իրադրությունն ու ուժերի փոխհարաբերակցությունը հօգուտ սպի-

[1] «Ֆինլանդիայի բանվորական հեղափոխության 40 տարին։ ՖԿԿ Կենտկոմի դիմումը»։ «Новая и новейшая история», 1958, № 2, էջ 122։

տակների և դարձավ նրանց հաղթանակի վճռական պատճառը։ Մայիսի սկզբին ճնշվեցին դիմադրության վերջին կարմիրգվարդիական օջախները։ Հեղափոխության հաղարավոր մասնակիցներ անցան Սովետական Ռուսաստան։ Ֆինլանդիայում մի քանի ամիս մոլեգնում էր սպիտակ տեռորը։ Հեղափոխության պարտությունը պայմանավորված էր ոչ միայն հակահեղափոխական ուժերի ռազմական առավելությամբ, այլև հեղափոխական կառավարության գործունեության մեջ տեղ գտած թերություններով, կառավարություն, որը չուներ գործողությունների պարզորոշ ծրագիր։ Ֆինլանդիայի բանվոր դասակարգը, որը հեղափոխության գլխավոր շարժիչ ուժն էր, դեռ չուներ նոր տիպի կուսակցություն, չկարողացավ իր ետևից տանել գյուղացիությանը։

Ֆինլանդիան մասնակի կայունացման և տնտեսական ճգնաժամի տարիներին

1919 թ. հուլիսին Ֆինլանդիայում հաստատվեց կառավարման հանրապետական ձև։ Սեյմում տեղերի մեկ երրորդից ավելին ընկնում էր բանվորական կուսակցությունների դեպուտատներին, մոտ մեկ երրորդը՝ կենտրոնի բուրժուական երկու կուսակցություններին (ագրարային միություն և առաջադիմական կուսակցություն) և մեկ երրորդից պակաս՝ աջ կուսակցություններին (կոալիցիոն, շվեդական, իսկ 1933 թվականից՝ նաև ֆաշիստական)։ Նման հարաբերակցությունը առանց մեծ փոփոխությունների պահպանվում էր միջպատերազմյան ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում։ Այդ պայմաններում մեծամասնության կայուն աջակցություն կարող էր ունենալ միայն մի քանի կուսակցությունների կոալիցիան, բայց նրանց մեջ եղած տարաձայնությունների պատճառով կոալիցիաները լինում էին ոչ երկարակյաց։ Այդ պատճառով էլ 20-ական թվականների Ֆինլանդիայի համար բնորոշ էին կառավարական հաճախակի ճգնաժամերը։ Հեղափոխության պարտությունից հետո առաջին տասնամյակում փոխվեց 14 կաբինետ։ 1926 թ. դեկտեմբերից սկսած մեկ տարի երկիրը կառավարեց Տանների սոցիալ-դեմոկրատական կաբինետը, որն իր համար ամրապնդեց ֆիննական սոցիալ-դեմոկրատիայի՝ որպես համաձայնողական ռեֆորմիստական կուսակցության, համբավը։

Ռուսաստանի հետ ունեցած ավանդական տնտեսական կապերի խզման և համաշխարհային առևտրի՝ համաշխարհային պատերազմի առաջացրած քայքայման հետևանքով անկախության առաջին տարիներին Ֆինլանդիան ապրում էր տնտեսական ու ֆինանսական ճգնաժամ։ Բայց հետո անտառափայտի նկատմամբ առաջացած հետպատերազմյան մեծ պահանջարկն ու բարձր գները հասցրին ֆիննական էկոնոմիկայի գլխավոր ճյուղերի՝ անտառային և ցելյուլոզի ու թղթի արդյունաբերության աճին։ 1920 թ. մինչև 1928 թ. անտառափայտի արտահանությունն աճեց կրկնակի, ֆաներայի և թղթի արտադրությունը՝ 6 անգամ։ Տեղի էր ունենում ոչ միայն արդյունաբերողների ու խոշոր հողատերերի, հատկապես էկոնոմիկայի գլխավոր ճյուղերի վերահսկողությունն իրենց ձեռքում կենտրոնացրած «20 ընտանիքների», այլև անտառային զգալի տեղամասեր ունեցող գյուղացիության վերնախավի հարստացում։ Բանվորների ռեալ աշխատավարձը 1919 թ. մինչև 1928 թ. ավելացավ գրեթե կրկնակի, բայց մնում էր Եվրոպայում ամենացածրերից մեկը։ Նույնիսկ հարաբերական «բարգավաճման» այդ տարիներին մշտական երևույթներ էին գործազրկությունն ու վտարանդիությունը՝ վաստակ որոնելու համար։

20-ական թվականների վերջերից սկսված տնտեսական ճգնաժամը հասցրեց հաղարավոր ձեռնարկությունների փակմանը, իսկ գործողները աշխատում էին ոչ լրիվ շաբաթով։ Գործազուրկների թիվը 100 հաղարից գերազանցեց։ Գյուղատնտեսական մթերքների իրացման անհնարինությունը շատ գյուղացիների սնանկացրեց, հարյուրավոր տնտեսություններ պարտքերի դիմաց աճուրդի հանվեցին։ Լուրջ մասշտաբներ ընդունեց ֆիննն աշխատավորների փախուստը ՍՍՀՄ։ Միայն սկսած 1933 թ. ֆիննական էկոնոմիկան սկսեց դուրս գալ ճգնաժամից։ Գործազրկությունը կրճատվեց, սակայն ճգնաժամի ժամանակ իջեցված աշխատավարձը չբարձրացավ. կապիտալիստները բանվորների հաշվին ապահովում էին արտաքին շուկաների նվաճման համար անհրաժեշտ ֆիննական ապրանքների բարձր մրցունակությունը։

Բանվորական շարժումը

Սովետական Ռուսաստան վտարանդված ֆիննական ձախ սոցիալ-դեմոկրատները՝ հեղափոխության մասնակիցները, 1918 թ. օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին Մոսկվայում տեղի ունեցած իրենց համագումարում ստեղծեցին Ֆինլանդիայի կոմկուսը (ՖԿԿ), որը ստիպված էր իր երկրում պայքարել անլեգալ պայմաններում։ Սկզբում երիտասարդ կոմունիստական կուսակցությունը տառապում էր «ձախությամբ» (պառլամենտն օգտագործելուց հրաժարվելը, ամենամոտ ժամանակներում բանվորական հեղափոխության նախապատրաստվելու և իրականացնելու կոչերը և այլն)։ Իսկ Ֆինլանդիայում մնացած սոցիալ-դեմոկրատական աջ պարագլուխները, որոնք չէին մասնակցել հեղափոխությանը, վերաստեղծեցին ռեֆորմիստական ուղղության սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը։ Երկու կուսակցությունների միջև տեղի էր ունենում սուր պայքար։ Իր իսկ սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ կազմավորվեց ուժեղ ձախ թևը, որը օպոզիցիայի մեջ էր գտնվում ղեկավարության նկատմամբ։

1920 թ. ամռանը սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից բաժանված նրա ձախ թևի բազայի վրա և կոմունիստների մասնակցությամբ ստեղծվեց սոցիալիստական բանվորական կուսակցությունը (ՍԲԿ)։ 1922 թ. ընտրություններին այն ստացավ 27 տեղ (ՖՍԴԿ-ն՝ 53)։ ՍԲԿ-ի գործունեությունը և Սովետական Ռուսաստանի հետ նրա համերաշխությունը տագնապ առաջացրին ֆիննական բուրժուազիայի ռեակցիոն վերնախավում։ 1923 թ. օգոստոսին Կալիոյի կառավարությունը ձերբակալեց պառլամենտական ֆրակցիային և սոցիալիստական բանվորական կուսակցության մի քանի հարյուր ֆունկցիոներների և հակապետական գործունեության մեղադրանքով նրանց դատի տրվեց։ Կուսակցությունն արգելվեց։ Սակայն ձախերը, այդ թվում կոմունիստները, դրանից հետո էլ ընտրվեցին պառլամենտում (բանվորների և մանր հողատերերի սոցիալիստական միության ցուցակներով)։

20-ական թվականների երկրորդ կեսին ուժեղացավ գործադուլային պայքարը, որը բանվորների ավելի ու ավելի լայն մասսաների գրավեց. գործադուլները երբեմն ընդունում էին բացառիկ համառ բնույթ։ Նավահանգստային բանվորների և ռետինագործների՝ 1928 թ. սկսված գործադուլները գրեթե մեկ տարի տևեցին։ Գործադուլավորները օգնություն էին ստանում ՍՍՀՄ-ի և այլ երկրների բանվորներից։ Արհմիություններում ձախերի և սոցիալ-դեմոկրատների միջև տեղի ունեցող պայքարը հասցրեց ձախերի ազդեցության գերակշռմանը. 1929 թ. մայիսին տեղի ունեցած արհմիութենական համագումարում նրանց պաշտպանում էր դելեգատների գրեթե $^4/_5$-ը։ 1930 թ. կառավարությունն արգելեց ձախ արհմիությունները։ Լեգալ կերպով կարող էին գոյություն ունենալ միայն այն արհմիությունները, որոնք գտնվում էին սոցիալ-դեմոկրատների ազդեցության տակ։

Տնտեսական ճգնաժամն սկսվելուն պես ուժեղացավ ՖԿԿ-ի քաղաքական

ակտիվությունը։ 1929 թ. օգոստոսի 1-ին և նոյեմբերի 7-ին նա կազմակերպեց ցույցեր, իսկ նոյեմբերի 16-ին սովադուլ հայտարարած քաղբանտարկյալների հետ համերաշխության մեկօրյա գործադուլ։ Սակայն ՖՍԴԿ-ի ղեկավարությունը չպաշտպանեց ՖԿԿ-ի կազմակերպած ելույթները, որի հետևանքով դրանք չընդունեցին բավականաչափ լայն բնույթ։ Այդուհանդերձ բուրժուական պրոպագանդան սկսեց փողահարել «կոմունիստական սպառնալիքի» և «ամենավճռական միջոցներով» այն կանխելու անհրաժեշտության մասին։

Լապուասական շարժումը և նրա կրախը

Այդ իրադրության պայմաններում 1929 թ. աշնանը Լապուա բնակավայրում ծնունդ առավ ֆաշիստական շարժումը, որը ստացավ լապուասական անունը։ Նրա դասակարգային հիմքն էին կազմում նախկին սպիտակգվարդիականները, շյուցկորականները, կուլակությունը, հոգևորականությունը և ճգնաժամի տարիներին անանկացած մանր բուրժուազիայի այն շրջանները, որոնց հուսահատությունն ու կատաղությունը ռեակցիոն պրոպագանդան ուղղում էր կոմունիստների ու ՍՍՀՄ-ի դեմ։ Կոմունիստների և օպոզիցիոն տրամադրված բանվորների կողմից սովետական կառավարության քաղաքականությանը հավանություն տալը և հեղափոխականորեն տրամադրված երիտասարդության կողմից հենց Ֆինլանդիայում սկսված հակակրոնական կամպանիան լապուասականներն օգտագործեցին որպես առիթ ելույթներ ունենալու համար։ Լապուասականները առևանգում, ծեծում, իսկ երբեմն էլ սպանում էին կոմունիստներին և ռադիկալ տրամադրված գործիչներին, ջախջախեցին Վասասում հրատարակվող ձախ բանվորական թերթի տպարանը և այլն։ Սկզբում, քանի դեռ լապուասական շարժումն իր նպատակն էր հռչակում «կոմունիզմն արմատախիլ անելը», այն օգտվում էր խոշոր կապիտալի բարոյական ու նյութական օժանդակությունից, իսկ իշխանությունները թողտվություն էին անում լապուասականների ապօրինի գործողություններին և հետապնդում ձախերին։ Այսպես, 1930 թ. հուլիսի սկզբին ստեղծված Սվինխուվուդի կառավարությունը ձերբակալեց բանվորների և մանր հողատերերի միության պառլամենտական ֆրակցիային։ 1930 թ. հուլիսի 7-ին լապուասականները կազմակերպեցին արշավ դեպի Հելսինկի։ Նրանց ճնշման տակ հետո ընդունվեց հակակոմունիստական օրենքների մի սերիա։ Բայց լապուասականների հետագա մտադրությունները՝ սոցիալ-դեմոկրատիային վերջ տալու և պառլամենտական ռեժիմը երկրում վերացնելու ձգտումն աջակցություն չստացան ֆիննական խոշոր բուրժուազիայի ազդեցիկ շրջանների կողմից։ Դավադրության բացահայտումը, որը ֆաշիստական հեղաշրջման նպատակ ուներ, և 1932 թ. փետրվարին կատարված պուտչի փորձը կառավարությանը ստիպեցին միջոցներ ձեռնարկել լապուասական շարժման դեմ։

Երկրի ներսում ֆաշիզմի հարձակման սպառնալիքը և 1933 թ. Գերմանիայում տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին բանվոր դասակարգի պառակտման ամբողջ վնասակարությունը։ ՖԿԿ-ն հեղափոխականորեն տրամադրված բանվորներին կոչ արեց մտնել սոցիալ-դեմոկրատական արհմիությունները։ Այլ միջոցառումներ ևս ձեռնարկվեցին դեմոկրատական ուժերի համախմբման համար։ Դրա հետևանքով բանվորական կազմակերպություններն ավելի մասսայական ու մարտունակ դարձան։ Ֆաշիզմի սպառնալիքի դեմ ակտիվ պայքար էին մղում առաջադիմական կազմակերպությունները, որտեղ զգացվում էր ՖԿԿ-ի ազդեցությունը,— ուսանողական «Ակադեմիական սոցիալիստական ընկերությունը», «Մարդու իրավունքների միությունը», «Ազգային հակապատերազմական կոմիտեն» և ուրիշներ։

Հակաֆաշիստական ուժերի ճնշման տակ կառավարությունը ստիպված էր արգելել լապուասական շարժումը, իսկ հետո՝ նաև ֆաշիստական մի այլ կազմակերպություն, այսպես կոչված կապտա-սեերի կազմակերպությունը։ Սակայն ի դեմս «Հայրենասիրական ժողովրդական շարժման» կուսակցության ֆաշիստական շարժումը շարունակում էր գոյություն ունենալ։ Սեյմում ունենալով տեղերի մինչև 7 տոկոսը, ֆաշիստները չէին մասնակցում կառավարությանը, սակայն հաճախ զբաղեցնում էին կարևոր պետական պաստեր։

Ֆինլանդիայի արտաքին քաղաքականությունը 1918—1939 թթ.

Անկախ Ֆինլանդիայի գոյության առաջին տարիներին սպիտակֆիննական «կամավորների» ջոկատները հաճախ ներխուժում էին Սովետական Կարելիա, մտադրվելով նրա անեքսիայի միջոցով իրականացնել ֆիննական անեքսիոնիստների հին երազանքները «Մեծ Ֆինլանդիայի» ստեղծման մասին, ճնշում հեղափոխությունը Էստոնիայում, օգնում Յուդենիչին։ Սակայն Պետրոգրադի համար մղված մարտերի վճռական պահին, 1919 թ. աշնանը, ֆիննական կառավարությունը իրեն զգույշ էր պահում։ Նա չենթարկվեց Անտանտի, սեփական ինտերվենցիոնիստների և ռուսական սպիտակգվարդիականների ճնշմանը և իր բանակը չշարժեց դեպի Պետրոգրադ։ 1920 թ. հոկտեմբերի 14-ին Ֆինլանդիայի և ՌՍՖՍՀ-ի միջև կնքվեց հաշտության պայմանագիր։

20-ական թվականներին ֆիննական կառավարությունը հետևում էր քաղաքական կամ ռազմական դաշինքներին չմիանալու կուրսին։ 1932 թ. Ֆինլանդիան ՍՍՀՄ-ի հետ կնքեց չհարձակման պայմանագիր։ 1934 թ. այն երկարաձգվեց մինչև 1945 թ. վերջը։ Ֆինլանդիայի տնտեսական սերտ կապերը Անգլիայի և Գերմանիայի հետ, որոնք առաջին և երկրորդ տեղերն էին գրավում նրա արտաքին առևտրական շրջանառության մեջ, ստիպում էին Ֆինլանդիային լավ հարաբերություններ պահպանել այդ երկու մրցակցող իմպերիալիստական տերությունների հետ։ 1935 թ. դեկտեմբերին Ֆինլանդիայի կառավարությունն ու պառլամենտը որոշում ընդունեցին սկանդինավյան երկրների նկատմամբ կողմնորոշվելու և չեզոքության քաղաքականության մասին։ Ֆինլանդիայի հետ այդ երկրները 1938 թ. մայիսին հրապարակեցին մի դեկլարացիա՝ մեծ տերությունների միջև կոնֆլիկտ ծագելու դեպքում չեզոքություն պահպանելու մասին։ Վկայակոչելով չեզոքություն պահպանելու ցանկությունը և վախենալով հարաբերությունները փչացնել Գերմանիայի հետ, Ֆինլանդիան հրաժարվեց մասնակցել կոլեկտիվ անվտանգության սիստեմին, ինչպես նաև սովետական առաջարկություններից, որոնց նպատակն էր ամրապնդել Լենինգրադի, Ֆիննական ծոցի և հենց Ֆինլանդիայի անվտանգությունը գերմանական ագրեսիայի դեպքում։ Ֆիննական բուրժուազիան ՍՍՀՄ-ին կասկածում էր Ֆինլանդիան «սովետականացնելու» մտադրության մեջ։ ՍՍՀՄ-ի հետ ունեցած սահմանում կառուցվեցին զրեթե անմատչելի ամրություններ՝ «Մաններհայմի գիծը»։ Դրանք ցուցադրվում էին օտարերկրյա զինվորականներին, դրանց մոտ անց էին կացվում մանևրներ։ Հակառակ 1921 թ. միջազգային կոնվենցիայի, Ֆինլանդիան ամրացրեց նաև Ալանդյան կղզիները։

Ֆինլանդիան չեզոքություն պահպանելու ցանկությամբ բացատրեց նաև 1939 թ. ապրիլին չհարձակման պակտ կնքելու վերաբերյալ Գերմանիայի կողմից իրեն արված առաջարկությունների մերժումը։ Սակայն օտարերկրյա էսկադրաների և զինվորական պատվիրակությունների հաճախակի այցելությունները Ֆինլանդիա, նրա աջ խմբավորումների բացահայտ համակրանքը Հիտ-

լերի նկատմամբ, ֆիննական բուրժուազիայի բացահայտ և ակտիվ հակակոմունիզմը, «Մեծ Ֆինլանդիայի» գաղափարի բացահայտ պրոպագանդան երկրում, Ռուսաստանին իր դարավոր թշնամի ներկայացնելը՝ այս բոլորը խոսում էր ՍՍՀՄ-ի դեմ Ֆինլանդիան որպես իմպերիալիստական պլացդարմ օգտագործվելու հնարավորության մասին։ Հետագայում Ֆինլանդիայի պրեզիդենտներ Յու. Կ. Պասսիկիվին և Ու. Կեկոնենը, գնահատելով Ֆինլանդիայի քաղաքականությունը 30-ական թվականներին, այն համարում էին սխալ և գրտնում, որ այդ իրադրության պայմաններում ՍՍՀՄ-ը հիմքեր ուներ չվստահելու Ֆինլանդիայի կառավարող շրջանների կուրսին։

ԳԼՈՒԽ 20

ԻՌԼԱՆԴԻԱՆ
1918—1939 ԹԹ.

1919—1923 թթ. ազգային-ազատագրական հակաիմպերիալիստական հեղափոխությունը

Իռլանդիան թևակոխեց նորագույն ժամանակը որպես հետամնաց ագրարային երկիր՝ Անգլիայի եվրոպական գաղութը։ Նրա բնակչության զգալի մեծամասնությունը կիսաաղքատ, անգրագետ հողազուրկ կամ սակավահող գյուղացիությունն էր։ Չնայած XIX դարի վերջերից «վերից» իրականացվող ագրարային ռեֆորմին, հողերի զգալի մասը դեռևս պատկանում էր անգլիական կալվածատերերին՝ լենդլորդերին։ Երկրում վիթխարի ազդեցություն ուներ կաթոլիկական եկեղեցին։ Արդյունաբերությունը (գլխավորապես մշակող) թույլ էր զարգացած։ Բացառություն էր կազմում Իռլանդիայի հյուսիս-արևելյան անկյունը՝ արդյունաբերական Օլստերը։ Սակավաթիվ խոշոր ձեռնարկությունները, որպես կանոն, պատկանում էին անգլիական կապիտալին։

Իռլանդական բանվոր դասակարգը մի քանի հարյուր հազար, գլխավորապես ոչ որակյալ, տրանսպորտային ու գյուղատնտեսական բանվորներն էին, որոնք պառակտված էին քաղաքականապես և կազմակերպչորեն, դեռ չունեին դասակարգային բավարար ինքնագիտակցություն և գաղափարական հասունություն։ Բանվոր դասակարգի կազմակերպությունները՝ արհմիությունները և Իռլանդական լեյբորիստական կուսակցությունը գտնվում էին բուրժուական, ռեֆորմիստական և անարխո-սինդիկալիստական կոնցեպցիաների ուժեղ ազդեցության տակ։ Դրա հետ մեկտեղ նրա ավանգարդը իռլանդական և միջազգային սոցիալիստական և բանվորական շարժման ականավոր գործիչ Ջեյմս Կոննոլիի (1868—1916 թթ.) և արհմիութենական ճանաչված առաջնորդ Ջ. Լարկինի (1876—1947 թթ.) ղեկավարությամբ արդեն ելավ դասակարգային սուր պայքարի ուղին։ 1913 թ. դուբլինյան ընդհանուր գործադուլը բարձր գնահատվեց Վ. Ի. Լենինի կողմից։

XIX դարի վերջին—XX դարի սկզբին Իռլանդիայում առաջացավ այսպես կոչված գելյան[1] Վերածննդի լայն և ազդեցիկ շարժումը, որն ի հակակշիռ անգլիականի պրոպագանդում էր իռլանդական ազգային մշակույթը և լեզուն, պաշտպանում իռլանդական ինքնատիպ ազգի գաղափարը։ Այդ ժամանակ աճում է իռլանդական ազգային բուրժուազիան (ֆերմերներ, մանր ձեռնարկատերեր, առևտրականներ)։ Ազգային շարժման մեջ մեծ դեր էր խաղում մտավորականությունը՝ ուսուցիչները, իրավաբանները, գրականագետները, ինչպես նաև ծառայողները։ Ազգային անկախության, տնտեսական ու կուլտուրական ազատ զարգացման պահանջներ առաջադրող ամենամեծ ժողովրդականություն վայելող քաղաքական կազմակերպություն է դառնում Շին-ֆեյնը (գելերեն՝ «Մենք ինքներս»), որը հիմնվեց 1905 թ. հրապարակախոս Արթուր Գրիֆիտսի

[1] Գելեր—հին իռլանդացիների՝ կելտերի անունը։

կողմից։ Շին-ֆեյնի ծրագիրը ավելի կամ պակաս հստակությամբ արտահայտում էր երկրում հասունացող ազգային-ազատագրական հեղափոխության խնդիրները։

1916 թ. ապրիլին, առաջին համաշխարհային պատերազմի բորբոքուն պահին Դուբլինի առաջավոր բանվորները Կոննոլիի գլխավորությամբ «Իռլանդական վոլոնտերներ» հեղափոխական-դեմոկրատական զինվորական կազմակերպության հետ դաշինք կնքած ապստամբություն բարձրացրեցին և հռչակեցին անկախ Իռլանդական Հանրապետություն։ Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց։ Նրա առաջնորդները, ներառյալ նաև Կոննոլին, գնդակահարվեցին անգլիացիների կողմից։

Դրանից հետո իռլանդական ժողովրդի հեղափոխականացման պրոցեսը զարգացավ արագ տեմպերով։ Արդեն 1917 թ. երկրի քաղաքներում և գյուղական օկրուգներում հաշվվում էր Շին-ֆեյնի 2 հազ. բաժանմունք 250—300 հազ. մարդու անդամությամբ։ Իրենց աճող ազդեցությունը Շին-ֆեյնի առաջնորդները «1916 թ. վերջին մայոր» (նա Դուբլինյան ապստամբության ողջ մնացած միակ ռազմական ղեկավարն էր) Իմոն դե Վալերայի գլխավորությամբ օգտագործում էին ոչ միայն անգլիական իմպերիալիզմի դեմ ամբողջ երկրի մասշտաբով պայքար նախապատրաստելու համար։ Նրանք ամեն ինչ անում էին անգլիացիների՝ այդ ընդհանուր թշնամու դեմ դիմաց «ազգային միասնության» լոզունգների տակ մասսաների սոցիալական պայքարի՝ ձեռնարկատերերի դեմ բանվորների դասակարգային ելույթների, հողի համար վարձակալների և բատրակների պայքարի սառեցման համար։ «Ազգային միասնության» և «վերդասակարգային ազգային կառավարության» շինֆեյնական կոնցեպցիան փաստորեն հավանության արժանացավ 1918 թ. նոյեմբերին կայացած տրեդ-յունիոնների իռլանդական կոնգրեսի (ՏԻԿ) և Իռլանդական լեյբորիստական կուսակցության հատուկ համագումարի կողմից։ Դրա հետևանքով իռլանդական ազգային բուրժուազիան սկսեց անբաժան կերպով իշխել երկրի քաղաքական կյանքում։

Իռլանդիայում հեղափոխական ճգնաժամի զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Ռուսաստանում։ 1918 թ. ՏԻԿ-ը հատուկ բանաձև ընդունեց, որով շնորհավորում էր մեծ Հոկտեմբերը և պահանջում անհապաղ դադարեցնել իմպերիալիստական ինտերվենցիան սովետական պետության դեմ։ Շատ քաղաքներում տեղի էին ունենում Սովետների Հանրապետության հետ համերաշխության ցույցեր ու միտինգներ։ Ռուսաստանում կատարվող իրադարձությունների ազդեցությամբ իռլանդական բանվորներն սկսում էին առաջադրել արտադրության նկատմամբ վերահսկողության պահանջներ. տեղ-տեղ ստեղծվում էին սովետներ։ Սակայն իռլանդական պայմաններում Ռուսաստանի սոցիալիստական հեղափոխության փորձի շատ կողմեր չէին կարող խոր ըմբռնվել ու յուրացվել։

1919 թ. հունվարի 21-ին Դուբլինում ինքնակամ կերպով գումարվեց իռլանդական դոյլը (պառլամենտը), որն ընտրվել էր երկրի բնակչության կողմից նախորդ տարվա վերջին։ Կազմվեց Իռլանդիայի հեղափոխական կառավարություն Ի. դե Վալերայի գլխավորությամբ։ Դոյլի դելեգատները՝ Շին-ֆեյնի անդամներն ընդունեցին անկախության դեկլարացիա և պահանջեցին անհապաղ Իռլանդիայի տերիտորիայից դուրս բերել անգլիական զորքերը։ Ի պատասխան անգլիական կառավարությունը օրենքից դուրս հայտարարեց դոյլը։

1919 թ. աշնանից մինչև 1921 թ. ամառը երկիրը կատաղի գինված պայքարի թատերաբեմ էր դարձել՝ իռլանդական կառավարության կողմից ընդհատակում ստեղծված Իռլանդական հանրապետական բանակի (ԻՀԲ) և անգլիական պատժիչ ուժերի միջև։ Անգլիական իմպերիալիզմին չհաջողվեց ռազմական հաղթանակի հասնել։ Իռլանդական ժողովրդի բազմակողմանի աջակցությամբ զորեղ ԻՀԲ-ի արագաշարժ ջոկատները պարտիզանական ակտիվ գործողություններ էին մղում ամբողջ երկրում, մնալով անորսալի։ Պատերազմի ընթացքում տեղերում ստեղծվեց վարչական և դատական մարմինների նոր համակարգ։ ԻՀԲ-ի ռազմական հաջողություններին շատ բանով նպաստեց իռլանդական բանվորների գործադուլային պայքարը, որը դժվարացնում էր անգլիական զինվորական իշխանությունների գործունեությունը։ «Առաջին իմպերիալիստական սպանդում այժմյան «հաղթողները» անզոր են հաղթելու նույնիսկ փոքրիկ, չնչինորեն փոքրիկ Իռլանդիային...»[2],— գրել է Վ. Ի. Լենինը։

1921 թ. հունիսին Լոնդոնում բանակցություններ սկսվեցին անգլիական կառավարության և մարտնչող Իռլանդիայի ղեկավարների միջև։ Շին-ֆեյնի ղեկավարության մի մասը, որ վախենում էր պատերազմի շարունակումից ի նկատի ունենալով հենց իռլանդական բուրժուազիայի համար վտանգավոր քաղաքի ու գյուղի աշխատավորության դասակարգային ելույթների աճը, դիմեց անգլիացիների հետ համաձայնության։

1921 թ. դեկտեմբերի 6-ին Լոնդոնում պայմանագիր ստորագրվեց Անգլիայի և Իռլանդիայի միջև։ Վերջինս դառնում էր «Իռլանդական ազատ պետություն»—դոմինիոն, Բրիտանական Համագործակցության անդամ, սակայն Իռլանդիայի արդյունաբերական հյուսիս-արևելքը՝ Օլստերը մնում էր Մեծ Բրիտանիայի ինքնավար մասը։ Իռլանդական երեք նավահանգստներում պահպանվում էին անգլիական ռազմածովային բազաները, նոր դոմինիոնի վրա դրվեցին ֆինանսական ծանր պարտավորություններ բրիտանական թագի հանդեպ։ Այսպես, անհաջողություն կրելով հին «ճակատային» մեթոդներով Իռլանդիան հնազանդեցնելու իր կատարած փորձում, անգլիական իմպերիալիզմը ստիպված եղավ իր պրակտիկայում առաջին անգամ դիմել նոր գաղութատիրության զենքին։

1921 թ. պայմանագիրը խոր պառակտում առաջացրեց երկրում։ Նրա դեմ հանդես եկան շատ բանվորներ, ֆերմերներ, բատրակներ, ազգային մտավորականության ազդեցիկ մասը, մանր ձեռնարկատերերը, ԻՀԲ-ի զինվորների և սպաների մեծ մասը։ Սակայն պայմանագրի հակառակորդների մեջ չկար միասնություն. եթե «մաքուրները» կամ քաղաքական հանրապետականները դե Վալերայի գլխավորությամբ իրենց առջև նպատակ էին դնում շարունակել պայքարը հանուն Անգլիայից լիովին անկախ Իռլանդական Հանրապետության ստեղծման և շեշտակիորեն հանդես էին գալիս սոցիալական պայքարի բոլոր ձևերի դեմ, ապա իռլանդական ժողովրդական զանգվածները հանրապետություն հասկացության մեջ ներդնում էին լիապես որոշակի դասակարգային բովանդակություն։ Գյուղացիներն ու բատրակները պահանջում էին հող, բանվորները՝ վերահսկողություն արդյունաբերության նկատմամբ, իսկ երբեմն էլ առաջադրում բանվորական հանրապետության լոզունգ։

Ա. Գրիֆիտսի գլխավորած դոմինիոնի նոր կառավարության շուրջը, որը հավանություն տվեց պայմանագրին, համախմբվեցին քաղաքի ու գյուղի խոշոր և մասսամբ էլ միջին սեփականատերերը՝ իռլանդացիներն ու անգլո-իռ-

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 412։

լանդացիները, ծառայողների մի մասը, մեծաթիվ և ազդեցիկ կաթոլիկական հոգևորականությունը։ Գրիֆիտսի կողմնակիցներին ռազմական ու տնտեսական մեծ օգնություն էր ցույց տալիս Անգլիան։ Նրա օգնությամբ կառավարությունը կարողացավ ստեղծել մեծաքանակ, լավ զինված բանակ։

1922 թ. հունիսի վերջին Իռլանդիայում սկսվեց կատաղի քաղաքացիական պատերազմ, որը շարունակվեց մինչև 1923 թ. գարունը։ Անգլիայի վրձռական աջակցությունը, ազգային լոզունգները մասսաների դասակարգային պայքարի հետ միացնելուց հանրապետական ղեկավարության հրաժարվելը, զինված կոնֆլիկտում անսկզբունք «չեղոքության» դիրքորոշումը, որ գրավել էր բանվորական շարժման պաշտոնական ղեկավարությունը, վերջին հաշվով հասցրին ԻՀԲ-ի մարտիկների պարտությանը։ Ազգային-ազատագրական հեղափոխությունը խորացնելու փորձը ձախողվեց։ Ջախջախված ԻՀԲ-ի մնացորդներն անցան ընդհատակ։

Իռլանդիան պրոիմպերիալիստական բուրժուազիայի իշխանության տակ (1923—1931 թթ.)

Քաղաքացիական պատերազմից հետո սկսված տարիներն իռլանդական ժողովրդին համոզիչ կերպով ցույց տվեցին, որ «Իռլանդական ազատ պետության» կառավարող շրջանները լուրջ մտադրություն չունեին անհրաժեշտ պայմաններ ստեղծելու երկրի ազատ ազգային զարգացման համար։ Այդ ժամանակ իշխանության գլուխ կանգնած Ուիլյամ Կոսգրեյվի պրոիմպերիալիստական կառավարությունը, որը ներկայացնում էր քաղաքացիական պատերազմում հաղթողների ստեղծած Կուման-նա-գել քաղաքական կուսակցությանը, արդյունավետ միջոցներ չձեռնարկեց ազգային էկոնոմիկայի կառուցման համար։ 1923 թ. մտցված մասնակի հովանավորական մաքսերը չամրապնդվեցին կիսաազատ քայքայված երկրի պայմաններում անհրաժեշտ արդյունաբերական նախաձեռնության պետական ֆինանսավորմամբ, արդյունաբերական նոր ճյուղերի ստեղծման մեջ պետության մասնակցությամբ։ Անգլիական արդյունաբերական արտադրանքը շարունակում էր հեղեղել իռլանդական շուկան, իսկ գործազուրկ իռլանդացիները հազարներով լքում էին երկիրը։

Արտակարգ սրությամբ էր կանգնած կապիտալ ներդրումների պրոբլեմը նաև իռլանդական գյուղատնտեսության մեջ, որտեղ խիստ ուժեղացավ գյուղացիության կապիտալիստական շերտավորման պրոցեսը (20-ական թվականների կեսերին իռլանդական բոլոր ֆերմաների 60 տոկոսը զբաղեցնում էր մշակվող հողերի միայն 23 տոկոսը)։ Երես դարձնելով քայքայված մանր ֆերմերից, կառավարությունը ամեն տեսակի աջակցություն էր ցույց տալիս խոշոր կապիտալիստական ֆերմերներին, որոնք անասուններ էին աճեցնում Անգլիայում վաճառելու համար։

Քաղաքական ասպարեզում դոմինիոնի ռեժիմն իրեն դրսևորեց որպես անգլո-իռլանդական «դաշինքի» մոլի պաշտպան և ինչպես իրենց իրավունքների համար մասսաների մղած սոցիալական պայքարի, այնպես էլ ամեն տեսակ քաղաքական ռադիկալիզմի, այսինքն անավարտ մնացած իռլանդական հակաիմպերիալիստական հեղափոխությունը առաջ մղելու բոլոր փորձերի դաժան խեղդող։

1923—1925 թթ. երկրում տեղի էին ունենում տրանսպորտայինների, նավահանգստային բանվորների, շինարարների, սեզոնային բանվորների չափազանց սուր գործադուլային ելույթներ։ Այդ ժամանակ էլ ստեղծվեց պրոլետարական քաղաքական կազմակերպությունը՝ Իռլանդական բանվորական լիգան (ԻԲԼ) Ջիմ Լարկինի գլխավորությամբ, որը 1924 թ. մտավ Կոմինտերնի մեջ։

Այս բոլորը վկայում էր ազգային-ռեֆորմիստական բանվորական պարագլուխների դիրքերի թուլացման մասին, այն մասին, որ իռլանդական բանվոր դասակարգը որոնում էր պայքարի նոր ուղիներ։ Սակայն իռլանդական բանվորական շարժման մեջ շեշտակի շրջադարձի համար պայմաններ դեռևս չկային։ ԻԲԼ-ն այդպես էլ չդարձավ նոր տիպի պրոլետարական կուսակցություն։ Նա չկարողացավ հաղթահարել անարխո-սինդիկալիստական սխալների բեռը և 20-ական թվականների վերջերին դադարեցրեց իր գոյությունը։

1926 թ. երկրի քաղաքական թատերաբեմում հանդես է գալիս Ի. դե Վալերայի ստեղծած ֆիաննա ֆոյլ («Ճակատագրի զինվորներ») նոր օպոզիցիոն քաղաքական կուսակցությունը։ Նա առաջադրեց բարձր մաքսային խոչընդոտներով պատսպարված ազգային արդյունաբերության ստեղծման պահանջներ այն հաշվով, որպեսզի ներքին շուկան ամեն անհրաժեշտ բանով ապահովվի և վերջ տրվի գործազրկությանը։ Նա պահանջեց նաև վերակողմնորոշել իռլանդական գյուղատնտեսությունը (անասնապահությունից դեպի հացահատիկային կուլտուրաների մշակությունը) երկիրը սեփական պարենով ապահովելու համար և այլն։ Քաղաքական ասպարեզում ֆիաննա ֆոյլը պահանջում էր վերամիավորել երկիրը, վերացնել անգլիական ռազմածովային բազաները և վերջին հաշվով հռչակել անկախ, Բրիտանական համագործակցության հետ չկապված Իռլանդական Հանրապետություն։

Նոր կուսակցության կոչերը լայն արձագանք գտան։ Նրա մեջ էին մտնում Կոսգրեյվի կառավարության առջև լեյբորիստական պարագլուխների ստորաքարշությունից հիասթափված շատ բանվորներ, մանր ու միջին ձեռնարկատերեր, որոնք դոմինիոնի ռեժիմի հովանու տակ իրենց համար ապագա չէին տեսնում։ 1932 թ. հունվարի վերջին, համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում, որը ծայրահեղ սրության հասցրեց աշխատավոր մասսաների կարիքն ու զրկանքները, այդ թվում նաև Իռլանդիայում, ֆիաննա ֆոյլը հաղթանակ տարավ պառլամենտական ընտրություններում և անցավ իշխանության գլուխ։

Ազգային-ազատագրական և դասակարգային պայքարի վերելքն Իռլանդիայում 1932—1935 թթ.

Ֆիաննա ֆոյլի իշխանության գլուխ անցնելը նշանավորվեց տնտեսական ու քաղաքական ասպարեզներում մի շարք առաջադիմական միջոցառումների իրականացմամբ։ Բարձր մաքսավճարներ սահմանվեցին լայն շրջանակի արդյունաբերական ապրանքների վրա, որոնք, կառավարական փորձագետների գնահատմամբ, կարող էին արտադրվել երկրում։ Ընդունվեց չափազանց կարևոր օրենք՝ արդյունաբերության նկատմամբ վերահսկողության մասին, որը խիստ դժվարացրեց օտարերկրյա (գլխավորապես անգլիական) կապիտալի թափանցումը դեպի նրա նոր ճյուղերը։ Արդյունաբերական նախաձեռնության խթանման համար ստեղծվեց արդյունաբերական վարկի կորպորացիան, որը իռլանդական մասշտաբներով զգալի գումարներ էր տրամադրում մեծ թվով ստեղծվող ազգային ձեռնարկություններին։ Այսպիսով, ազգային զարգացումն արագացնելու համար պետությունը ակտիվորեն միջամտում էր տնտեսական կյանքին։ Այդ բարենպաստ իրադրության մեջ ազգային արդյունաբերությունը, գլխավորապես ներքին շուկան սպասարկող արդյունաբերությունն աճում էր, ասես, խմորիչի մեջ լիներ։ Մի շարք ճյուղերում, ուր առավել խոշոր կապիտալ ներդրումներ էին պահանջվում, իսկ արագորեն շահույթ ստանալու հույսերը պրոբլեմատիկ (տորֆաարդյունահանում, հիդրոէներգետիկա, մետալուրգիա, նավաշինություն), ստեղծվում էին պետական սեկտորի ձեռնարկություն-

ներ։ Ավելացվեց կորպորացիաների վրա դրված հարկը, զգալի գումարներ բաց թողնվեցին գործազուրկների, մանր ֆերմերների նպաստների համար։

30-ական թվականների կեսերին երկրում խիստ նվազեց գործազրկությունը, կրճատվեց արտագնացությունը։ Դրա հետ մեկտեղ տնտեսական կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները նպաստում էին ֆիաննա ֆոյլի սոցիալական ու քաղաքական մետամորֆոզի արդեն նկատելի պրոցեսին։ Տարիների հետ կուսակցությունը դառնում էր ավելի ու ավելի պահպանողական, նրա համար ավելի ու ավելի խորթ էին դառնում հակաիմպերիալիստական պայքարի «ծայրահեղ» միջոցները։ Նրա մեջ ավելի ու ավելի շատ էին հայտնվում պատկառելի, կայուն եկամուտներ ունեցող անձինք։

1932 թ. վերջին սպեկուլյացիայի աճի պայմաններում կառավարությունը մասսաների ճնշման տակ ընդունեց մի օրենք սննդի, հագուստի և վառելիքի գների նկատմամբ վերահսկողության մասին, ինչպես նաև ձեռնարկատերերի մեջ խիստ դժգոհություն առաջացրած մի այլ օրենք՝ արդյունաբերության մեջ աշխատավարձի մինիմումի և աշխատանքի պայմանների մասին։ Այդ միջոցառումներով նա ձգտում էր բթացնել արտադրության մեջ ծագող դասակարգային կոնֆլիկտների սրությունը։ Դրանց պատճառը կանանց և մանկական աշխատանքի դաժանագույն շահագործումն էր նոր ֆաբրիկաներում ու գործարաններում, 14—15-ժամյա աշխատանքային օրը, ցածր աշխատավարձը։

Մանր ֆերմերների ու բատրակների ագրարային ելույթների աճը գյուղում, ինչպես նաև «ինքնամատակարարող Իռլանդիայի» ստեղծման ֆիաննա ֆոյլի բռնած գիծը պայմաններ էին ստեղծում անասնապահական պրոֆիլից հացահատիկայինին անցնելու համար։ Կառավարությունը պարտադիր կարգով ֆերմերներից պահանջեց ավելացնել վարելահողերը, երաշխավորեց ցորենի կայուն գները, խրախուսում էր անասունների մորթը։ Միաժամանակ արագացվում էր մնացած լատիֆունդիաների հարկադիր փրկագնումն ու բաժանումը, հայտարարվեց պարտքերի մուծման երկարատև մորատորիում, կանխվեց արտաքսումը պարտքերի համար։ Այս բոլոր միջոցառումները ագրարային դաժան ճգնաժամի պայմաններում բարեհաճ ընդունելություն գտան գյուղական բնակչության մեծամասնության, հատկապես մանր ֆերմերների կողմից։ Դրա հետ մեկտեղ դրանք սուր դժգոհություն և կառավարության հանդեպ ատելություն առաջացրին խոշորֆերմերական տարրերի մեջ, որոնք կողմնորոշվում էին դեպի անասնապահությունը և անգլիական շուկան և դուրս էին մղվել քաղաքական իշխանության բարձունքներից։

Իշխանության գլուխ անցնելուց հետո կառավարությունն ազատեց հաղարավոր քաղբանտարկյալներ, լեգալացրեց ընդհատակում գտնվող ԻՀԲ-ն, վերացրեց իռլանդական պառլամենտականների երդումն անգլիական թագավորին։ 1937 թ. ընդունվեց նոր սահմանադրությունը, որը երկիրը հռչակում էր «Էյրեի սուվերեն, անկախ դեմոկրատական պետություն» (Էյրե—Իռլանդիայի հնագույն անունը)։ Անգլիացիների իշխանության տակ մնացած Օլստերը սահմանադրության մեջ անվանվեց «Էյրեի ազգային տերիտորիայի մի մասը, որի վրա ներկայումս չի տարածվում նրա իրավասությունը»։ Դե Վալերան հույս ուներ հասնել երկրի երկու մասերի միավորմանը խաղաղ միջոցներով։ Այս վերջին հարցում կառավարությունը խստորեն բաժանվեց ԻՀԲ-ի ղեկավարությունից, որը պնդում էր ազգային միասնությունն իրականացնել զինված ուժով։ 1936 թ. Իռլանդական հանրապետական բանակը վերստին հայտնվեց օրենքից դուրս վիճակում։

Անգլիական իմպերիալիստական շրջանները չափազանց անհանգստացած

էին Իռլանդիայում տեղի ունեցող իրադարձություններից։ 1932 թ. հուլիսին բրիտանական կառավարությունն անհնազանդ դոմինիոնի դեմ «տնտեսական պատերազմ» սկսեց, դեպի Մեծ Բրիտանիա կատարվող իռլանդական գյուղատնտեսական արտահանության վրա լրացուցիչ կրկնակի մաքսավճարներ դնելով։ Անգլիան կլանում էր իռլանդական արտահանության 90 տոկոսը, և նրա կառավարող շրջանները ենթադրում էին, որ նման միջոցառումը Իռլանդիայի նոր ռեժիմին կհասցնի տնտեսական սնանկացման և կպայմանավորի նրա փոխարինումը երկրի ներսում եղած բրիտանական իմպերիալիզմի դաշնակիցներով։

Իռլանդական ռեակցիայի հարվածային ուժը, որը ձգտում էր երկիրը վերադարձնել անգլիական իմպերիալիզմի թևի տակ և կանխել ազգային-ազատագրական և դասակարգային պայքարի զարգացումը, դարձավ իռլանդական ֆաշիզմը։ 1931 թ. ստեղծված իռլանդական «կապույտվերնաշապիկավորների» կազմակերպությունը շուտով երկրում ձեռք բերեց մասսայական բազա (1933 թ. նրա շարքերում հաշվվում էր տասնյակ հազար մարդ)։ Քաղաքներում ու գյուղական վայրերում նրա ռազմականացված ջոկատներն էին ընդունվում բանակային և ոստիկանական նախկին սպաները, խոշոր ֆերմերների որդիները, կուլակները, ռանտիեները, ապադասակարգայնացված տարրերը։ Սանձարձակ հակակոմունիզմ, կատաղի հարձակումներ բուրժուական դեմոկրատիայի և պառլամենտարիզմի դեմ, երկրում իտալական տիպի տոտալիտար դիկտատուրայի հաստատման ձգտում՝ այսպիսին էին իռլանդական ֆաշիզմի բնորոշ գծերը։ 1933 թվականից կապույտվերնաշապիկավորների «ֆյուրեր» դարձավ գեներալ Էոյն Օ'Դաֆֆին, որը ֆիաննա ֆոյլի կողմից հեռացվել էր Կոսգրեյվի կառավարությանն առընթեր ոստիկանության պետի պոստից։ Մուսոլինիի ֆանատիկ երկրպագու լինելով, նա ստացավ «իռլանդական դուչե» անունը։

Ֆաշիստների զինված բանդաներն ակտիվորեն պատրաստվում էին իշխանությունը զավթելու։ 1934 թ. աշնանը զինված խռովություն բարձրացվեց երկրի հարավի գյուղական շրջաններում։ Սակայն նրանց բոլոր փորձերը հանդիպում էին աշխատավորության, ԻՀԲ-ի ջոկատների վճռական դիմադրությանը։ Իռլանդական հակաֆաշիստներն ուժով ցրում էին ֆաշիստական միտինգներն ու ցույցերը, հաճախ գործի էր դրվում զենքը։ 1934 թ. ամռանը կառավարությունը ֆաշիստական կազմակերպությունները օրենքից դուրս հայտարարեց։ 30-ական թվականների կեսերին ֆաշիստական սպառնալիքը վերացվեց։ Դրանում մեծ դեր խաղաց «կապույտ վերնաշապիկների» պրոանգլիական լոզունգների հեղինակությունն չվայելելը ժողովրդի մեջ, ինչպես նաև այն հանգամանքը, որ իռլանդական մանր բուրժուան իր զանգվածով այդ տարիներին կանգնած էր ազգային դիրքերի վրա և ամուր կերպով պաշտպանում էր ֆիաննա ֆոյլի հակաիմպերիալիստական կուրսը։

Հակաֆաշիստական ուժերի միավորման գործում կարևոր դեր խաղաց 1933 թ. հուլիսի սկզբին Դուբլինում ստեղծված Իռլանդիայի կոմունիստական կուսակցությունը։ Այն ստեղծվեց ճգնաժամի տարիներին իռլանդական պրոլետարիատի դասակարգային սուր մարտերի ընթացքում առաջացած հեղափոխական բանվորական խմբերի (ՀԲԽ) բազայի վրա և միավորում էր ինչպես հարավի, այնպես էլ երկրի հյուսիսի առաջավոր բանվորներին ու գյուղացիներին։

ԻԿԿ-ի մասնակցությամբ 1934 թ. ստեղծվեց Իռլանդական հակաֆաշիս-

տական բանվորական լիգան, որի մեջ մտնում էին նաև լեյբորիստները, արհմիությունների անդամները, ֆիաննա ֆոյլի և ԻՀԲ-ի կողմնակիցները։ Լիգան ֆաշիստական սպառնալիքի դեմ հաջողությամբ պայքարում էր ինչպես Դուբլինում, այնպես էլ իռլանդական մյուս քաղաքներում։

Իռլանդական կոմունիստները կոչ էին անում Իռլանդիան լիովին անջատել Անգլիայից, երկրում հաստատել բանվորա-գյուղացիական հանրապետություն։ «Սոսկ միայն բանվոր դասակարգն է ընդունակ աշխատավոր ֆերմերության աջակցությամբ ազգային ու սոցիալական պայքարը հասցնել լիակատար հաղթանակի»,— հիմնավոր կերպով պնդում էին նրանք։ ԻԿԿ-ն իրավացիորեն քննադատում էր իռլանդական «նոր» բուրժուազիայի կողմից հազարավոր իռլանդական բանվորների դաժան շահագործումը, ֆիաննա ֆոյլի ղեկավարության տատանումներն ու անհետևողականությունը հակաիմպերիալիստական գծի իրականացման ընթացքում, նրա վախը մասսայական հեղափոխական ելույթներից, աշխատավորների գործադուլային պայքարի ճնշումը նրա կողմից։

Դրա հետ մեկտեղ իռլանդական կոմունիստներն անիրավացիորեն ֆիաննա ֆոյլ կուսակցությունը նույնացնում էին ծայրահեղ ռեակցիայի լագերի նրա պրոիմպերիալիստական ընդիմախոսների հետ, չէին տեսնում այն պոզիտիվ ավանդը, որ իրենց ամբողջ դասակարգային սահմանափակությամբ հանդերձ մուծում էր այդ կուսակցությունը ազգային զարգացման գործում իմպերիալիզմի դեմ իռլանդական ժողովրդի մղած ազատագրական շարժման տվյալ էտապում։ Ժամանակից առաջ էր ընկնում իռլանդական կոմունիստների առաջադրած «Սովետական Իռլանդիայի» լոզունգը։ Այս բոլորը դժվարացնում և բարդացնում էր ԻԿԿ-ի ուղին դեպի բանվորա-ֆերմերական մասսաները՝ դասակարգային և ազգային կոնֆլիկտների սերտ միահյուսման այդ բարդ պայմաններում։

30-ական թվականների կեսերին իռլանդական ազգային բուրժուազիան հասավ որոշակի սահմանագծի, երբ իմպերիալիզմի դիրքերի դեմ հարձակման շարունակումը պահանջում էր ակտիվ միջամտություն մասնավորսեփականատիրական իրավունքի մեջ (առաջին հերթին արտասահմանում իրենց կապիտալները ներդնելու իռլանդական կապիտալիստների իրավունքի մեջ), զանգվածային հակաիմպերիալիստական պայքարի հետագա խորացում և ընդլայնում։ Ֆիաննա ֆոյլը չհամարձակվեց դիմել դրան։ Իռլանդական բանկերը՝ երկրի ներսում գտնվող իմպերիալիզմի այդ ամրակետերը չազգայնացվեցին, 1935 թ. բյուջեն՝ «հարուստների բյուջեն», ինչպես այն անվանում էին ժողովրդի մեջ, նախատեսնում էր լայն սպառման առարկաների վրա սահմանված հարկերի ավելացում։ Պակասեցվեցին գործազուրկների նպաստները, այրիների և որբերի թոշակները. 1935—1937 թթ. իրենց հետ բերեցին գործադուլային պայքարի շեշտակի սրում։

Երկրում ծավալվող ազգային հզոր վերելքը և հակաիմպերիալիստական մի շարք արդյունավետ միջոցառումների անցկացումը իռլանդական ժողովրդին թույլ տվեցին դիմանալ անգլիական իմպերիալիզմի կողմից Իռլանդիայի հարկադրված «տնտեսական պատերազմին»։ Սակայն այդ միջոցառումներն անբավարար էին իմպերիալիզմի ոտքի տակի հողը խարխլելու համար։ Վերջինս Իռլանդիայում բավականաչափ դիրքեր էր պահպանում հակահարձակման անցնելու համար։

Իռլանդիայի արտաքին քաղաքականությունը 1918—1939 թթ.

Իռլանդիա դոմինիոնի ինքնուրույն արտաքին քաղաքականության ավանդույթները հարուստ չեն։ 1919—1920 թթ., այսինքն՝ անգլո-իռլանդական պատերազմի տարիներին իռլանդական ընդհատակյա կառավարությունը փորձեց Իռլանդիան հռչակել որպես ինքնուրույն միավոր միջազգային քաղաքականության մեջ, որպեսզի անգլո-իռլանդական կոնֆլիկտը ներկայացներական շրջանակներից դուրս բերի դեպի եվրոպական և համաշխարհային թատերաբեմ։ Իռլանդական պատվիրակությունը ժամանեց Փարիզի հաշտության կոնֆերանսն այն հաշվով, որպեսզի հասնի Իռլանդիայի ճանաչմանը որպես անկախ պետություն։ Սակայն Անգլիայի հակազդեցությունը և ԱՄՆ-ի անտարբերությունը խանգարեցին այդ հույսերի իրականացմանը։

Միակ երկիրը, որը պատրաստակամություն հայտնեց ճանաչելու Իռլանդական Հանրապետությունը և նրա հետ հաստատելու դիվանագիտական ու առևտրական հարաբերություններ, Սովետական Ռուսաստանն էր։ Սակայն դե Վալերայի կառավարությունը, դրսևորելով իր դասակարգային սահմանափակությունը, վերջիվերջո չհամարձակվեց դիմել համապատասխան պայմանագրի ստորագրմանը, արհեստականորեն նեղացնելով Իռլանդիայի արտաքին-քաղաքական կապերի դիապազոնը կապիտալիստական աշխարհի երկրներով։ Այդ վիճակը բացասականորեն արտահայտվեց երկրի պատմական ճակատագրում։

Կումման-նա-գելի տիրապետության ժամանակաշրջանում դոմինիոնի արտաքին քաղաքական դիապազոնը գրեթե ամբողջապես հանգում էր Անգլիայի հետ ունեցած կապերին։ Եվրոպական և համաշխարհային արտաքին քաղաքականության մեջ Իռլանդիան, ինչպես և անցյալում, ոչ մի դեր չէր խաղում։

Դրությունը փոխվեց ֆիաննա ֆոյլի իշխանության գլուխ անցնելով, երբ արտաքին գործերի մինիստրությունը գլխավորեց Իմոն դե Վալերան։ Իռլանդիան դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի շատ երկրների հետ, նրա ներկայացուցիչներն Ազգերի լիգայում հաճախ հանդես էին գալիս հանուն խաղաղության պահպանման ու ամրապնդման, ընդդեմ ագրեսիայի և տերիտորյալ զավթումների։ Սակայն Իռլանդիայի արտաքին քաղաքական կուրսը 30-ական թվականներին հետևողական չէր, արտացոլելով իռլանդական ազգային բուրժուազիայի հակասական սոցիալական էությունն ու քաղաքական դրությունը։ Նա առաջիններից մեկը ճանաչեց գեներալ Ֆրանկոյի խռովարարական կլիկին որպես Իսպանիայի «օրինական կառավարության», Անգլիայից անմիջապես հետո մտավ իսպանական գործերին չմիջամտելու «մյունխենյան» կոմիտե։

1938 թ. ապրիլին ստորագրվեց անգլո-իռլանդական համաձայնագիր, որը որոշակիորեն նորմալացնում էր հարաբերությունները երկու երկրների միջև։ Անգլիան վերացրեց իռլանդական գյուղատնտեսական արտահանության նկատմամբ սահմանած «ռազմական մաքսերը», լիկվիդացրեց իռլանդական հողում գտնվող իր ռազմածովային բազաները։ Ի պատասխան էյրեի կառավարությունը պակասեցրեց անգլիական արդյունաբերական շատ ապրանքների վրա սահմանած մաքսավճարները։ Համաձայնագիրը նշանակում էր, որ անգլիական իմպերիալիզմը երկրորդ համաշխարհային պատերազմի նախաշեմին ստիպված եղավ մեկ անգամ ևս կոմպրոմիսի դիմել մեծ կենսադիմացկունություն դրսևորած մի փոքրիկ երկրի հետ, որը գտնվում էր նրա՝ ստրատեգիական տեսակետից խոցելի թևում։ Դրա հետ միասին Օլստերի պրոբլեմը մնում էր լուծված, որը շատ բանով կանխորոշեց Իռլանդիայի դիրքը երկրորդ

համաշխարհային պատերազմի տարիներին։ «Իռլանդիան չի կարող որևէ ռազմական դաշինքի մեջ մտնել Անգլիայի հետ, քանի դեռ վերջինս իր ձեռքում է պահում իռլանդական ազգային տերիտորիայի մի մասը»,— հայտարարեց իռլանդական կառավարությունը 1939 թ. սեպտեմբերի սկզբին։ Իռլանդիան Բրիտանական համագործակցության միակ անդամն էր, որը չեզոքություն պահպանեց ֆաշիզմի դեմ մղվող պայքարի ծանր տարիներին։ Նրա պետական գործիչները չկարողացան օբյեկտիվորեն գնահատել ուժերի հարաբերակցությունը միջազգային թատերաբեմում, որտեղ դեմոկրատիայի և ժողովուրդների ազգային անկախության գլխավոր վտանգն այդ տարիներին ներկայացնում էր գերմանական ֆաշիզմը։

ԳԼՈՒԽ 21

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՆ 1918—1939 ԹԹ.

Պորտուգալիայի տնտեսական և քաղաքական դրությունը առաջին համաշխարհային պատերազմից հետո

Պորտուգալիան կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի ժամանակաշրջանը ոտք դրեց մի կողմից, որպես գաղութատեր տերություն, մյուս կողմից՝ որպես հետամնաց երկիր, որը ֆինանսական ու դիվանագիտական կախման մեջ էր գտնվում Անգլիայից։ 1910 թ. վերնախավային բուրժուական հեղափոխությունը, որը տապալեց միապետությունը և հռչակեց բուրժուական պառլամենտական հանրապետություն, չլուծեց սոցիալական ու ազգային հիմնական պրոբլեմները, չիրականացրեց ագրարային ռեֆորմ, չբարելավեց աշխատավոր մասսաների դրությունը, երկիրը չազատեց օտարերկրյա բռնադատումից։ Խոշոր կալվածատերերն ու կապիտալիստներն անձեռնմխելիորեն պահպանում էին իրենց արտոնությունները։

Սոցիալական հակասություններն էլ ավելի էին խորանում առաջին համաշխարհային պատերազմին Անտանտի կողմում Պորտուգալիայի մասնակցության ծանր հետևանքների կապակցությամբ։ Ժողովրդական զանգվածները մեծ զրկանքներ էին կրում ինֆլացիայից և թանկության աճից։ Բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձը զգալիորեն իջավ նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ։

Պորտուգալիայի հետամնացությունն արտահայտվում էր մասնավորապես այն բանում, որ նրա արդյունաբերության հիմքը կազմում էին հազարավոր կիսատնայնագործական բամբակագործվածքային ֆաբրիկաները, խաղողի, խցանակաղնու արմտիքի վերամշակման և ձկան պահածոների պատրաստման ձեռնարկությունները։ Ոչ շատ խոշոր ձեռնարկությունները, երկաթուղային և քաղաքային տրանսպորտն զգալի չափով գտնվում էին անգլիական կապիտալի հսկողության տակ։ Արդյունաբերական պրոլետարիատի թիվը քառորդ միլիոն մարդուց չէր գերազանցում։ Աշխատող բնակչության 60 տոկոսից ավելին զբաղված էր գյուղատնտեսության մեջ։

Գյուղում գերակշռում էին կիսաֆեոդալական հարաբերությունները։ Հարավի արգավանդ հողերը պատկանում էին խոշոր լատիֆունդիստներին։ Հյուսիսի լեռնային շրջաններում գերակշռում էր մանր հողատիրությունը, գյուղացիների մեծամասնությունն ուներ 0,5 մինչև 2 հա հողամասեր։ Ամբողջ երկրում կալվածատերերը հողը տալիս էին վարձակալության, դրամականի հետ պահպանվում էր բնամթերային ռենտան։

Հանրապետական կուսակցությունը, որը գլխավորում էր պառլամենտական հանրապետությունը, կատարում էր կալվածատերերի և խոշոր բուրժուազիայի կամքը։ Նա ամենից շատ վախենում էր մասսաների հեղափոխական ակտիվությունից և իր գլխավոր ջանքերն ուղղում էր գործադուլային շարժումը ճնշելուն, որը հատկապես ակտիվացավ Հոկտեմբերյան մեծ հեղափոխու-

թյան ազդեցության տակ, 1919—1921 թթ.։ Սակայն Պորտուգալիայի բանվոր դասակարգը, որը զգալիորեն ուժեղացրել էր պայքարն իր տնտեսական պահանջների համար, դեռևս թույլ էր մասնակցում քաղաքական պայքարին։ Սոցիալիստական կուսակցությունը օպորտունիստական քաղաքականություն էր վարում և սակավազդեցիկ էր։ 1921 թ. մարտին առաջացած երիտասարդ կոմունիստական կուսակցությունն իր գոյության առաջին տարիներին փոքրամասնությամբ էր, դեռ լիովին չէր ազատագրվել մանրբուրժուական գաղափարախոսությունից և չէր կարող էական ազդեցություն գործել երկրի իրադարձությունների ընթացքի վրա։ Պորտուգալիայի բանվորական շարժման մեջ իշխում էին անարխո-սինդիկալիստները, որոնք գլխավորում էին 1919 թ. ստեղծված Աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիան։ Անարխիստներն ամեն ինչ անում էին, որպեսզի բանվորներին թույլ չտային ներգրավվելու քաղաքական պայքարի մեջ։

Պորտուգալիայի քաղաքական դրությունը դառնում էր ավելի ու ավելի անկայուն։ Կառավարությունների հաճախակի փոփոխություններին հաջորդում էին միապետականների դավադրություններն ու զինվորական հեղաշրջումների փորձերը։ Երկիրը ոտք դրեց սոցիալ-քաղաքական սուր ճգնաժամի գոտին։ 1925—1926 թթ. իրադրությունը բարդացավ երկրի ֆինանսական դրության խիստ վատացման կապակցությամբ։ Ռեակցիոն զինվորականությունը դրանից օգտվեց պառլամենտական սիստեմի վրա հարձակումներն ուժեղացնելու համար։

1926 թ. զինվորական հեղաշրջումը և ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը

1926 թ. մայիսի 28-ին բանակի ռեակցիոն շրջանները կատարեցին պետական հեղաշրջում և հաստատեցին զինվորական եռապետության դիկտատուրա, որը շուտով քայքայվեց, իսկ իշխանությունը երկրում զավթեց գեներալ Կարմոնան։ 1926 թ. նոյեմբերին նա իրեն հռչակեց պրեզիդենտ։ 1928 թ. էկոնոմիկայի ասպարեզում արտակարգ լիազորությունները նոր պրեզիդենտը տրամադրեց էկոնոմիկայի և ֆինանսների պրոֆեսոր Օլիվեյրա Սալազարին, որը նշանակվեց ֆինանսների մինիստր։

Երկրի ֆաշիստականացման պրոցեսը, ժողովրդի լայն խավերի դիմադրության կապակցությամբ, մի քանի տարի ձգձգվեց։ Սակայն այն բանից հետո, երբ Սալազարն անուղղակի հարկերի բարձրացման, բանվորների և ծառայողների աշխատավարձի իջեցման, գաղութների ժողովուրդների շահագործման ուժեղացման, ինչպես նաև անգլիական փոխառությունների օգնությամբ «կայունացրեց» երկրի ֆինանսական դրությունը, 1932 թ. հուլիսին նա նշանակվեց մինիստրների խորհրդի նախագահ և օժտվեց դիկտատորական լիազորություններով։ 1933 թ. Սալազարն ավարտեց զինվորականության սկսած երկրի ֆաշիստականացումը։ Միակ լեգալ կուսակցությունը դարձավ «Ազգային դաշինք» ֆաշիստական կուսակցությունը, որն ստեղծել էր Սալազարը 1930 թ.։ 1933 թ. մարտի 19-ին երկրի վզին փաթաթվեց նոր սահմանադրությունը, որը մշակել էր ֆաշիստական կուսակցությունը և որը «օրինականացրեց» ֆաշիստական ռեժիմը։

Այդ սահմանադրության համաձայն, Պորտուգալիան հռչակվում էր «նոր պետություն»— «ունիտար կորպորատիվ հանրապետություն»՝ պրեզիդենտով հանդերձ, որը ընտրվում էր յոթնամյա ժամկետով, ազգային ժողովով և կորպորատիվ պալատով, որն օժտված էր սոսկ խորհրդակցական ֆունկցիաներով, մինիստրների խորհրդի նախագահ Սալազարի գործնականորեն անսահմանափակ իշխանությամբ հանդերձ։ Հասակավոր բնակչության երեք քառորդը փաստորեն զրկված էր ընտրական իրավունքից։ Համաձայն «Աշխատանքի խարտիայի», որը հրապարակվեց 1933 թ. սեպտեմբերի 23-ին, ֆաշիստական Իտալիայի «Աշխատանքի խարտիայի» օրինակով, երկրում սահմանվում էր կորպորատիվ սիստեմ. դասակարգային արհմիությունների փոխարեն ստեղծվում էին ֆաշիստական «ազգային արհմիություններ»— բանվորների նկատմամբ պետության և ձեռնարկատերերի վերահսկողության մարմիններ։ 1933 թ. դեկտեմբերին հրապարակված դեկրետով բանվորները զրկվում էին գործադուլի իրավունքից։ Կաթոլիկական եկեղեցու արտոնությունները, որոնք խիստ կրճատվել էին 1910 թ. հեղափոխության հետևանքով, վերականգնվեցին և ընդլայնվեցին։ Եկեղեցին, բանակը և գաղտնի քաղաքական ոստիկանության՝ ՊԻԴԵ-ի գլխավորությամբ, ճյուղավորված պատժիչ ապարատը դարձան ֆաշիստական դիկտատուրայի հենարանը, դիկտատուրա, որը կատարում էր նրբան իշխանության գլուխ դրած անգլիական կապիտալի հետ կապված խոշոր կապիտալիստների և կալվածատերերի կամքը։

Սալազարն ուժեղացրեց պորտուգալական գաղութների ժողովուրդների շահագործումն ու քաղաքական կեղեքումը։ Այսպես կոչված գաղութային ակտի համաձայն, որը հրապարակվեց 1930 թ. հուլիսին, պորտուգալական Անգոլա, Մոզամբիկ, Գոա և այլ գաղութների բնակչությունը զրկվում էր նույնիսկ այն պատրանքային ինքնավարությունից, որը նա ուներ նախկինում։ Սալազարի կառավարությունն անգլիական ընկերություններին նոր զիջումներ կատարեց Պորտուգալիայի գաղութներում և հենց մետրոպոլիայում։

Որքան ժողովրդական զանգվածները գիտակցում էին երկրում տեղի ունեցող փոփոխությունների իմաստը, այնքան նրանց պայքարը ֆաշիստական ռեժիմի դեմ ուժեղանում էր։ Նրա ավանգարդում ընթանում էր բանվոր դասակարգը և նրա կոմունիստական կուսակցությունը, որը 1929 թ. անցկացված վերակառուցումից հետո, գլխավոր քարտուղար Բենտո Գոնսալվեսի ղեկավարությամբ կանգնեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի և գիտական սոցիալիզմի տեսության յուրացման դիրքերի վրա։

Պրոպագանդիստական մեծ աշխատանք էր կատարում ՊԿԿ-ի «Օ Պրոլետարիո» թերթը, իսկ 1931 թվականից՝ կուսակցության կենտրոնական օրգան «Ավանտե» թերթը։ Կուսակցական բջիջներ սկսեցին առաջանալ շատ ձեռնարկություններում։ Կոմկուսի նախաձեռնությամբ ստեղծվեցին կոմունիստական երիտասարդության ֆեդերացիա, ՄՕՊՐ-ի պորտուգալական բաժանմունք, ՍՍՀՄ-ի բարեկամների լիգա, Պատերազմի և ֆաշիզմի դեմ պայքարի լիգա, ուսանողական ձախ միավորումներ։ Աճում էր ՊԿԿ-ի ազդեցությունը բանվորների մեջ, որոնք հանձին կոմունիստների տեսնում էին խոշոր բուրժուազիայի և կալվածատերերի դիկտատուրային հակահարված տալու կազմակերպիչներին։

Ֆաշիստական դիկտատուրայի դեմ ուղղված առաջին խոշոր ելույթը 1934 թ. հունվարին տեղի ունեցած գործադուլն էր, որին մասնակցեց 60 հազ. մարդ։ Այդ գործադուլի ընթացքում կոմունիստները, սոցիալիստները և անարխո-սինդիկալիստներն առաջին անգամ հանդես եկան միասնական ճակատով։ Գործադուլը դաժանորեն ճնշվեց, բայց մեծ արձագանք գտավ Պորտուգալիայում և արտասահմանում։

Աշխատավորության պայքարը ֆաշիզմի դեմ ազատության և անկախության համար

Հունվարյան գործադուլն ուժեղացրեց սալազարականների անհանգստությունն իրենց ներքաղաքական դիրքերի համար։ Ֆաշիստական դիկտատուրային չէր հաջողվում երկրում ստեղծել լայն զանգվածային բազա։ «Ազգային դաշինք» կուսակցությունն ըստ էության բյուրոկրատական կազմակերպություն էր։ Կաթոլիկական եկեղեցու և բնակչության մանրբուրժուական շրջաններում տարածված ավանդական գաղութատիրական գաղափարախոսության օգտագործման միջոցով մասսաների վրա ներազդելն անբավարար եղավ։

Ժողովրդի դիմադրությունը ճնշելու համար Սալազարի ռեժիմը մշտապես զգում էր դրսի ավելի ու ավելի աճող աջակցության կարիքը։ Սկզբից ևեթ նրան աջակցություն ցույց տվեց Անգլիան, որի կապիտալն իշխող դիրքեր էր գրավում Պորտուգալիայի և նրա գաղութների էկոնոմիկայում։ Անգլիան Պորտուգալիայի գլխավոր վարկատուն էր։ 1935 թ. նրան բաժին էր ընկնում Պորտուգալիայի 30,9 մլն ֆունտ ստերլինգի հասնող արտաքին պարտքից 22 մլն ֆունտ ստերլինգը։ Անգլիան պորտուգալական բանակին հիմնական զենք մատակարարողն էր։ Անգլիայի աջակցության վրա Պորտուգալիան առաջվա պես հենվում էր նաև դիվանագիտական ասպարեզում։ Սակայն սալազարականների ձգտումը՝ կայունացնելու իրենց ներքաղաքական դիրքերը, նրանց գաղափարական մոտիկությունը մայրցամաքային տոտալիտար դիկտատուրաների հետ ավելի ու ավելի շատ էր նրանց մղում դեպի մերձեցումը ֆաշիստական Գերմանիայի և Իտալիայի հետ, որոնք ակտիվացրել էին իրենց քաղաքականությունը Պիրենեյներում։

30-ական թվականների կեսերից սկսած Պորտուգալիան գերմանական կապիտալի առջև լայնորեն բացեց ինչպես մետրոպոլիայի, այնպես էլ գաղութների դռները։ Ուժեղացավ նրա քաղաքական համագործակցությունը ֆաշիստական առանցքի տերությունների հետ։ 1936—1939 թթ. Պորտուգալիան բազա էր ծառայում Իսպանիայում իտալա-գերմանական ինտերվենցիայի համար։ Ֆրանկոյականներին օգնելու համար Սալազարը Իսպանիա ուղարկեց պորտուգալական բանակի զորամասեր։ Իսպանական Հանրապետությունը խեղդելուց հետո Սալազարը Ֆրանկոյի հետ իր դաշինքն ամրապնդեց 1939 թ. մարտի 17-ին Լիսաբոնում ստորագրված «Իսպանիայի և Պորտուգալիայի միջև բարեկամության և չհարձակման» պայմանագրով՝ այսպես կոչված Իբերիական պակտով։

Ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը, Պորտուգալիայի մասնակցությունն Իսպանական Հանրապետության ճնշմանը հասցրին ռազմական ծախսերի զգալի ավելացմանը, աշխատավորության դրության խիստ վատացմանը։ Նրանց ուսերի վրա ընկան 1929—1933 թթ. տնտեսական ճգնաժամի հետևանքները, որոնք Պորտուգալիայում, ինչպես և ագրարային երկրների մեծ մասում արտահայտվեցին մի փոքր ավելի ուշ։ Միայն արդյունաբերության մեջ 1935 թ. հաշվվում էր 150 հազ. գործազուրկ։ Քաղաքային բանվորների աշխատավարձը 1935 թ. 1926 թ. նկատմամբ նվազեց 40—45 տոկոսով, իսկ գյուղատնտեսական բանվորների աշխատավարձը՝ 75 տոկոսով։ Աշխատավորության դիմադրությունը ճնշելու նպատակով Սալազարի կառավարությունը 30-ական թվականների կեսերին մի շարք նոր դեկրետներ հրապարակեց բրոնություններն ուժեղացնելու մասին։ Գերմանական գեստապոյի հետ սերտորեն կապված գաղտնի ոստիկանությունն սկսեց գաղանային տանջանքներ կիրառել բանտային զնդաններում։ Կանաչ Հրվանդան արշիպելագի կղզիներից մեկում քաղբանտարկյալների համար ստեղծվեց «Տարրաֆալ» համակենտրոնացման ճամբարը։ Դեմոկրատական ուժերի դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով ստեղծվեցին կիսազինվորական «Պորտուգալական լեգեոն» և «Պորտուգալական երիտասարդություն» ֆաշիստական կազմակերպությունները։

Բայց չնայած բռնություններին, աշխատավորները շարունակում էին պայքարն ընդդեմ ֆաշիստական դիկտատուրայի։ Բանվորները դիմադրում էին արհմիությունների ֆաշիստականացմանը, կազմակերպում գործադրկության, աշխատավարձի իջեցման, սոցիալական ճնշման ուժեղացման դեմ բողոքի գործադուլներ։ Կոմունիստական կուսակցությունն իր «Ավանտե» թերթի և մյուս ընդհատակյա հրատարակությունների միջոցով ուղղություն էր տալիս հակաֆաշիստական պայքարին, պաշտպանում բանվորական միասնության ամրապնդման կուրսը, մերկացնում Ֆրանկոյի և ֆաշիստական առանցքի տերությունների հետ Սալազարի գործարքը։ Պորտուգալական շատ դեմոկրատներ, կոմկուսի կոչով, 1936—1939 թթ. Իսպանիայի հողում մարտնչեցին ընդհանուր թշնամու՝ ֆաշիզմի դեմ։ Գործողությունների միասնության համար և աղանդավորության մնացուկների դեմ մղված պայքարում կոմկուսին մեծ օգնություն ցույց տվեցին Կոմունիստական ինտերնացիոնալի VII կոնգրեսի որոշումները, կոնգրես, որի աշխատանքներին մասնակցում էին Բենտո Գոնսալվեսը և ՊԿԿ-ի այլ ներկայացուցիչներ։

ԳԼՈՒԽ 22

ԿՈՒԲԱՆ 1918—1939 ԹԹ.

Կուբան առաջին համաշխարհային պատերազմից հետո

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բարենպաստ պայմաններ առաջացան Կուբայի էկոնոմիկայի զարգացման համար։ Պատերազմը մեծ պահանջարկ առաջացրեց շաքարի՝ կուբայական արտադրության այդ հիմնական ապրանքի նկատմամբ։ ԱՄՆ-ի մոնոպոլիստները, որոնք վերահսկում էին շաքարի արտադրությունը Կուբայում, և տեղական շաքարագործարանատերերը շտապ կարգով ընդարձակում էին շաքարեղեգնի պլանտացիաները, մոդեռնացնում շաքարի գործարանները՝ շաքարի արտադրությունն ավելացնելու համար (1913 թ. արտադրվեց 2,4 մլն տոննա շաքար, 1919 թ.՝ 4 մլն տոննա)։ Համաշխարհային շուկայում աճում էին շաքարի գները։ 1913 թ. Կուբայում արտադրված շաքարի արժեքը գնահատվում էր 106 մլն, իսկ 1920 թ.՝ 1 միլրդ դոլլար։ ԱՄՆ-ի մոնոպոլիաների և կուբայական խոշոր հողատերերի ու կապիտալիստների գրպաններն էին հոսում հեքիաթային շահույթներ։ Միաժամանակ զարգանում էին ծխախոտի, կոշկի, շինարարական, գարեջրի և արդյունաբերության մյուս ճյուղերը։ Նկատելիորեն աճեցին Հավանան և կուբայական մի շարք այլ քաղաքներ, ընդարձակվեցին նավահանգստները։ «Մոլեգին հարստացման ժամանակաշրջան», «Կուբայական բարգավաճում», «Միլիոնների պար»,— այսպիսի վերնագրերով էին փայլում Կուբայի բուրժուական թերթերը։

Կուբայական հասարակության սոցիալական կառուցվածքն այդ տարիներին բավական բարդ էր, սակայն պրոլետարիատը (ներառյալ գյուղատնտեսական բանվորները) և բուրժուազիան արդեն նրա հիմնական դասակարգերն էին։ Ըստ 1919 թ. մարդահամարի, Կուբայի աշխատունակ բնակչությունը կազմում էր 949 հազ. մարդ (մոտ 2,9 մլն մարդ՝ բնակչության ընդհանուր թվի դեպքում)։ Ամբողջ պրոլետարիատը՝ արդյունաբերական, տրանսպորտային և գյուղատնտեսական բանվորները կազմում էին 342,7 հազ. մարդ։ Արհեստավորները, միայնակ տնայնագործները և տանն աշխատող բանվորները հաշվվում էին ավելի քան 115 հազ. մարդ։

Տեղական և արտասահմանյան մոնոպոլիստական բուրժուազիան, ռազմական դրության պատրվակի տակ ուժեղացնելով կեղեքումն ու շահագործումը, հեքիաթային ձևով հարստանում էր աշխատավորների հաշվին, որոնք, մնալով իրավազուրկ, ստիպված էին օրեկան 9-ից մինչև 12 ժամ աշխատել։ Սոցիալական անտագոնիզմն ու դասակարգային պայքարը խիստ սրվեցին։

Պահպանողական Մ. Մենոկալի ռեակցիոն կառավարությունը (1912—1920 թթ.), հենվելով ԱՄՆ-ի իմպերիալիզմի աջակցության վրա, դաժանորեն ճնշում էր բանվորական ու դեմոկրատական շարժումը։

1917 թ. ապրիլին Կուբան Անտանտի կողմում մտավ համաշխարհային պատերազմի մեջ։ Այդ պատրվակով ԱՄՆ-ը զորքեր մացրեց կղզի, որոնք այնտեղ մնացին մինչև 1922 թ.։

Քանի դեռ տնտեսական կոնյունկտուրան բարենպաստ էր, կառավարող շրջաններին հաջողվում էր խոստումներով, որոշ զիջումներով, սինդիկալիստական վերնախավին կաշառելով զսպել բանվորներին։ Բայց 1920 թ. վերջին Եվրոպայում և ԱՄՆ-ում շաքարի ճակնդեղից պատրաստվող շաքարի արտադրության վերականգնման կապակցությամբ համաշխարհային շուկայում շաքարեղեգնի շաքարի գները խիստ ընկան։ Կուբայական շաքարի նկատմամբ պահանջարկը շեշտակիորեն կրճատվեց։ Կուբայի մոնոկուլտուրային էկոնոմիկան, որը կախման մեջ էր գտնվում ԱՄՆ-ից, հայտնվեց սնանկացման եզրին։ Մանր արտադրողները քայքայվում էին, կանգ առան հարյուրավոր ֆաբրիկաներ ու գործարաններ, սնանկացան կուբայական ազգային բանկն ու 17 այլ բանկեր։ 1920 թ. մինչև 1922 թ. Կուբայում արտադրված շաքարի արժեքը նվազեց 4 անգամ։ Սկսվեց աշխատավորների մասսայական գործազրկությունն ու սովը։

Կուբայի կառավարությունը դիմեց ԱՄՆ-ի օգնությանը։ Մորգանի բանկիրական տունը Կուբային տրամադրեց 50 մլն դոլլարի ստրկական փոխառություն, որը նրան ավելի ամուր գամեց ԱՄՆ-ին։

Բանվորական ու դեմոկրատական շարժման վերելքը (1918—1925 թթ.)

Բանվոր դասակարգը, որն ընթանում էր մասսաների հակաօլիգարխիական և հակաիմպերիալիստական պայքարի առաջին շարքերում, այդ ժամանակ արդեն որոշակի փորձ էր կուտակել։ Դասակարգային ձևավորման ու զարգացման ներքին պրոցեսների, ինչպես նաև Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տակ կուբայական պրոլետարիատը ոտք դրեց դասակարգային քաղաքական կազմակերպության և մասսայական ելույթների ուղին։ 1918—1919 թթ. կուբայական բանվորներն անցկացրին երեք ընդհանուր գործադուլ։ 1918 թ. ապրիլյան գործադուլն ավարտվեց Հավանայի աշխատավորության մասսայական ցույցով և Սովետական Ռուսաստանի հետ համերաշխության միտինգով։ Սիգարի ֆաբրիկաների բանվորները և տպագրիչներն առաջինը ձեռք բերեցին 8-ժամյա աշխատանքային օր։ Նոյեմբերին նոր ընդհանուր գործադուլ ծագեց, որն սկսեցին նավահանգստային բանվորները, որոնք հասան աշխատավարձի բարձրացման և բանտերից իրենց ղեկավարների ազատմանը։

Նախորդներից ավելի դրամատիկ անցավ Կուբայի աշխատավորության՝ 1919 թ. մարտին տեղի ունեցած ընդհանուր գործադուլը։ Այն սկսվեց Հավանայում՝ տրամվայի աշխատողների և շինարարների ելույթներով։ Նրանց պաշտպանեցին նավահանգստային բանվորներն ու ավտովարորդները։ Գործադուլի ժամանակ ԱՄՆ-ի ռազմանավերը մտան Հավանայի և Սյենֆուեգոսի նավահանգիստները։ ԱՄՆ-ի ծովային հետևակայինները գնդակահարում էին գործադուլավորներին։ Ռեակցիայի միացյալ ուժերը ճնշեցին գործադուլը։ Դրան նպաստեց գործադուլավորների միասնության բացակայությունը. գործադուլի ժամանակ նրա ղեկավարության մեջ պայքար էր գնում հեղափոխական ուժերի և ռեֆորմիստների ու անարխիստների միջև։

Բանվորների շատ ղեկավարներ Հոկտեմբերի գաղափարների ազդեցության տակ խզում էին կապերն անարխիստական անցյալի հետ, աշխատելով նոր ուղիներ գտնել։ Նախկին անարխիստների շրջանում այդ տենդենցի ցայտուն ներկայացուցիչը պոլիգրաֆիական արդյունաբերության արհմիության քարտուղար Ալֆրեդո Լոպեսն էր՝ մի տաղանդավոր կազմակերպիչ և կրքոտ

մարտիկ, որի մեջ խելքը, լրջամտությունն ու վճռականությունը զուգակցվում էին բանվոր դասակարգի հաղթանակի հանդեպ ունեցած աննկուն համոզվածության հետ։ Նա բանվորների բոլոր խոշոր ելույթների ոգին էր։

1920 թ. ապրիլին Ա. Լոպեսին, Ա. Բարեյրոյին և պրոլետարական մյուս մարտական ղեկավարներին հաջողվեց Հավանայում գումարել բանվորական կոնգրես, որտեղ բոլոր խոշոր արհմիությունները միավորվեցին Հավանայի բանվորների ֆեդերացիայի մեջ։ Կոնգրեսը ջերմ համերաշխություն հայտնեց Սովետական Ռուսաստանի հետ, դատապարտեց կապիտալիզմը որպես շահագործողական, անարդարացի հասարակարգ, պահանջեց բարելավել բանվորների կյանքի ու աշխատանքի պայմանները և ֆեդերացիայի ղեկավարությանը հանձնարարեց նախապատրաստել արհմիությունների ազգային կոնգրեսի գումարումը։ Այդ կոնգրեսը կայացավ Կամագուեյ քաղաքում 1925 թ. օգոստոսին, և այնտեղ ստեղծվեց Կուբայական բանվորների ազգային կոնֆեդերացիան (ԿՆՕԿ)։

Բանվորների շարժման հետ ուժեղանում էր լայն մասսաների դեմոկրատական շարժումը։ Կուբայական գյուղացիությունը, որը տառապում էր հողազրկությունից ու հարկերից, հանդես էր գալիս հանուն վարձավճարի պակասեցման և ընդդեմ շահագործման ստրկական ձևերի։ Մի շարք շրջաններում գյուղացիները տարերայնորեն պայքարի էին ելնում և ղավթում ամայի հողերը։

Հայրենասիրական լայն շարժում ծավալվեց ԱՄՆ-ի ծովային հետևակը Կուբայից դուրս բերելու համար, ընդդեմ կուբայական Պինոս կղզու նկատմամբ Միացյալ Նահանգների հավակնությունների, հանուն ազգային սուվերենությունը ոտնահարող «Պլատտի ուղղման» վերացման։ Աճող հակաիմպերիալիստական ալիքի ճնշման տակ ԱՄՆ-ը ստիպված էր իր զորքերը դուրս բերել Կուբայից (1922 թ.) և ճանաչել Կուբայի իրավունքները Պինոս կղզու նկատմամբ (1925 թ.)։ Սակայն կուբայական կառավարող շրջանների օգնությամբ ԱՄՆ-ի իմպերիալիզմին հաջողվեց պառակտել հայրենասիրական ճակատը։ Լիբերալ Ա. Սայասի կառավարությունը (1921—1924 թթ.) հաճոյանում էր բանվորների առջև, կաշառում անկայուն ռեֆորմիստ ղեկավարներին, փորձում իր կողմը գրավել արհմիություններին։

Իմպերիալիզմի ու ներքին ռեակցիայի դեմ ակտիվորեն հանդես եկան մտավորականության և ուսանողության առաջավոր խավերը։ 1923 թ. մարտին մշակույթի երիտասարդ գործիչների մի խումբ հեղափոխական պոետ Ռուբեն Մարտինես Վիլլենայի գլխավորությամբ դիմեց մտավորականությանը և ամբողջ կուբայական ժողովրդին՝ կոչ անելով վճռական պայքար մղել յանկիի իմպերիալիզմի և ծախու կառավարության տիրապետության դեմ, հանուն ազատ, դեմոկրատական Կուբայի («Տասներեքի մանիֆեստը»)։ «Մինորիստների» մանիֆեստը (այսպես սկսեցին կոչել Ռ. Մարտինես Վիլլենայի, Խուան Մարինելլոյի և մյուսների խումբը) երկրում մեծ արձագանք գտավ։

Այդ ժամանակ ուսանողական շարժումը մեծ թափի հասավ։ 1923 թ. հոկտեմբերին հեղափոխական երիտասարդության բոցաշունչ ղեկավար Խուլիո Անտոնիո Մելյայի գլխավորությամբ Հավանայում տեղի ունեցավ ուսանողության առաջին հեղափոխական կոնգրեսը, որը հիմնեց համալսարանական ուսանողների ֆեդերացիան և Խոսե Մարտիի անվան Ժողովրդական համալսարանը՝ բանվորների համար այդ երեկոյան քաղաքական ուսումնական կենտրոնը։ Առաջավոր ուսանողները, ինչպես և բանվորները ջերմ համակրանք էին հայտնում Սովետական Ռուսաստանի նկատմամբ։

Կուբայական աշխատավորության տրամադրությունների մասին վառ կերպով վկայում են Հավանայի բանվորական արվարձանում՝ Ռեգլայում տեղի ունեցած իրադարձությունները, որոնք կապված էին Վ. Ի. Լենինի մահվան լուրը ստանալու հետ։ Ռեգլայի աշխատավորները 1924 թ. հունվարի 24-ին «մոլորակի մեծ քաղաքացու մահվան կապակցությամբ» հայտարարեցին սգո օր և միտինգի դուրս եկան քաղաքային բլրակում։ Սգո հանդիսավոր իրադրության պայմաններում նրանք որոշում ընդունեցին բլրակը կոչել Լենինի անվամբ։ Ի հիշատակ Լենինի, բարձունքի վրա ձիթենու ծառ տնկեցին և պարկ դցեցին։

Երկրում տիրող հեղափոխական վերելքն ակտիվացրեց մարքսիստական քաղաքական կուսակցության կազմավորման պրոցեսը։ 1925 թ. օգոստոսի 16-ից մինչև 18-ը Հավանայում, 77-ամյա հեղափոխական վետերան Կ. Բալինիոյի նախագահությամբ, տեղի ունեցավ հեղափոխական սոցիալիստական և կոմունիստական խմբերի կոնգրեսը, որտեղ ստեղծվեց Կուբայի կոմկուսը։ Կուսակցության պարագլուխն ու ոգին դարձավ 22-ամյա Խ. Ա. Մելյան։ Կուբայի կոմկուսը ծնվեց որպես մեծ Հոկտեմբերների ազդեցությամբ երկրում ծավալված հեղափոխական շարժման վերելքի օրինաչափ հետևանք։ Կոմկուսի կազմավորմամբ Կուբայի բանվոր դասակարգի առջև բացվեցին դասակարգային գիտակցականության բարձրացման և պայքարի նոր հեռանկարներ։

Դասակարգային պայքարը Կուբայում Մաչադոյի դիկտատուրայի ժամանակաշրջանում

1925 թ. մայիսի 20-ին Կուբայի պրեզիդենտի պաշտոնը ստանձնեց ներքին գործերի նախկին մինիստր Խերարդո Մաչադո-ի-Մորալեսը՝ ցեմենտի և այլ գործարանների տեր «Էլեկտրիկ բոնդ էնդ շեր» ամերիկյան մոնոպոլիայի ֆիլիալ «Կուբայական էլեկտրական ընկերության» խոշոր բաժնետերը և փոխպրեզիդենտը։ Մաչադոն իշխանության գլուխ անցավ այն պահին, երբ Կուբայի ազատագրական հեղափոխական շարժման մեջ տեղի ունեցավ ուժերի որոշակի բևեռացում։ Բանվոր դասակարգը շարունակում էր ամրապնդել իր մարտական միասնությունը և կազմակերպությունը, իսկ ազգային բուրժուազիայի, այդ թվում և մանր բուրժուազիայի զգալի խավեր բավարարվեցին կառավարության մի քանի զիջումներով և հեռացան պայքարից։ ԱՄՆ-ի իմպերիալիզմը և կուբայական բուրժուազիան, որի տնտեսական դրությունը ժամանակավորապես կայունացել էր, հաշվի առնելով վերջին տարիների փորձը, հակվում էին այն բանին, որպեսզի իշխանությունը հանձնեն «զորեղ անձի», որն ընդունակ լիներ կանխելու բանվորական շարժման աճը։ Մաչադոն, իտալական դիկտատոր Մուսոլինիի այդ երկրպագուն, ինչպես ուրիշ ոչ մեկը, համապատասխանում էր այդ դերին։

Մաչադոյի ռեժիմը ներկայացնում էր Կուբայի՝ ԱՄՆ-ի մոնոպոլիաների հետ սերտորեն կապված բուրժուա-կալվածատիրական օլիգարխիայի դիկտատուրան։ Նա Միացյալ Նահանգների մոնոպոլիստների համար ավելի լայն ելք բացեց դեպի Կուբայի հարստությունները և վերահսկողությունը նրա էկոնոմիկայի նկատմամբ։ Առ 1932 թ. ԱՄՆ-ի կապիտալ ներդրումները Կուբայում հասան ամբողջ պատմության մեջ ռեկորդային գումարի՝ 1,5 միլիարդ դոլլարի։ ԱՄՆ-ի մոնոպոլիաների վերահսկողության տակ ընկան մարգանեցի և նիկելի հանքավայրերը, Կուբային էլեկտրաէներգիա մատակարարելու գործը, հեռախոսային ցանցը և հասարակական սպասարկման մյուս տեսակները, նավահանգիստները, երկաթուղիները, բանկերը և շաքարի ու ծխախոտի արդյունաբերության ամենախոշոր ձեռնարկությունները։

Կատարելով ԱՄՆ-ի բիզնեսմենների և տեղական ռեակցիայի կամքը, Մա-

չադոն ոչնչացրեց բուրժուական ազատությունների մնացորդները, երկիրը պահում էր պաշարողական դրության, սարսափի ու տեռորի մեջ։ Մեքենայությունների ու կաշառքի միջոցով Մաչադոն «զումարեց» մարիոնետային կոնգրես, որը, հակառակ սահմանադրության, նրա պրեզիդենտության ժամկետը երկարացրեց ևս 6 տարով։ Առաջադիմական բոլոր կուսակցություններն ու կազմակերպություններն արգելվեցին։ Փակվեց Խոսե Մարտիի անվան Ժողովրդական համալսարանը, Հավանայի համալսարանից և ուսումնական մյուս հաստատություններից վտարվում էին առաջադեմ և լիբերալ պրոֆեսորները։

Մաչադոյի հանցագործ կլիկը դաժան հաշվեհարդար էր տեսնում հեղափոխականների, բանվորական ղեկավարների և հատկապես կոմունիստների հետ։ 1926 թ. հուլիսի 20-ին Մաչադոյի դահիճների ձեռքով զոհվեց Ալֆրեդո Լոպեսը, իսկ 1929 թ. հունվարի 10-ին Մեքսիկայում սպանվեց Կուբայի կոմկուսի ղեկավար, ականավոր հեղափոխական Խուլիո Անտոնիո Մելյան։

1929 թ. սկսված կործանարար տնտեսական ճգնաժամը ծայրահեղորեն սրեց սոցիալական հակասությունները Կուբայում։ Շաքարի արտադրությունն ընկավ 1929 թ. 5 մլն տոննայից մինչև 1,9 մլն տոննայի՝ 1933 թ., իսկ ըստ արժեքի՝ 200 մլն դոլլարից մինչև 43 մլն դոլլարի։ Կուբան ապրում էր խսկական ազգային աղետ։ Հազարավոր բանվորներ փողոց նետվեցին։

Մասսաների դժգոհությունն աճում էր։ Աշխատավորները պահանջում էին ազատություն տալ քաղբանտարկյալներին, լեգալացնել արհմիությունների և բանվորական մյուս կազմակերպությունների գործունեությունը, անհապաղ հրաժարեցնել Մաչադոյին և դեմոկրատացնել ռեժիմը։ Գործադուլային շարժման մեջ մեծ դեր խաղաց Կուբայական բանվորների ազգային կոնֆեդերացիան, որը ղեկավարում էր տաղանդավոր կազմակերպիչ, կոմունիստ Ռ. Մարտինես Վիլենան։ 1930 թ. մարտին Մարտինես Վիլենան գլխավորեց ընդհանուր քաղաքական գործադուլը, որին ակտիվորեն մասնակցեցին քաղաքային տրանսպորտի բանվորները, երկաթուղայինները, տպագրիչները, կոմունալ տնտեսության բանվորները և ուսանողները։ Գործադուլը ճնշվեց, բայց այն դրեց աշխատավորների մասսայական ելույթների սկիզբը։

Ճգնաժամի տարիներին ռեակցիայի ուժեղացրած տեռորին պրոլետարիատը պատասխանեց խոշոր ցույցերով, գործադուլների արշավներով ու գործադուլներով, որոնք վերաճում էին ընդհանուր գործադուլի։ Պրոլետարիատի պայքարի օբյեկտիվ նպատակն էր հակաիմպերիալիստական, դեմոկրատական, ագրարային հեղափոխության իրականացումը։ Բայց այդ խնդիրը նա այն տարիներին բավարար հստակությամբ չէր գիտակցում։ Կոմկուսի քաղաքականության մեջ գերակշռում էին զինված ապստամբության և բանվորագյուղացիական (սովետական) իշխանության հաստատման լոզունգները։

Կոմունիստները մեծ ջանքեր էին ուղղում կուբայական պրոլետարիատի հիմնական ջոկատի՝ շաքարի արդյունաբերության բանվորների կազմակերպմանը։ 1932 թ. դեկտեմբերին անվեհեր հեղափոխական կոմունիստ Խեսուս Մենենդեսի ղեկավարությամբ ստեղծվեց շաքարի արդյունաբերության բանվորների ազգային արհմիությունը։ Այդ նույն ժամանակ էլ Օրիենտե, Լաս Վիլյաս և Կամագուեյ պրովինցիաներում գյուղացիական շարժում ծավալվեց «Հողը նրանց, ովքեր այն մշակում են» լոզունգով։ Բայց գյուղացիների պայքարը կրում էր հիմնականում տարերային բնույթ, նրանց կազմակերպվածությունը ծայրահեղ թույլ էր։ Միայն 1932 թ. պրովինցիաներում կոմունիստների ղեկավարությամբ սկսեցին ստեղծվել «Գյուղացիների և վարձակալների լիգաներ», բայց դրանց չէր բավարարում պայքարի փորձը։

1933 թ. ապրիլից ինչպես արհմիությունները, այնպես էլ Կուբայի կոմունիստական կուսակցությունը սկսեցին նախապատրաստվել Մաչադոյի դիկտատուրայի դեմ ուղղված ընդհանուր քաղաքական գործադուլին։

Բանվորների և գյուղացիների ելույթներն ակտիվորեն պաշտպանում էր առաջավոր երիտասարդությունը, որը միավորված էր «Ուսանողական հեղափոխական դիրեկտորատ» և «Երիտասարդ Կուբա» մարտական կազմակերպությունների մեջ։ Արյունարբու դիկտատուրայի ռեժիմի դեմ հանդես էր գալիս նաև բուրժուական լայն քաղաքական օպոզիցիան՝ մանր և միջին ազգային բուրժուազիան, մտավորականությունը։ Բուրժուական քաղաքական կուսակցությունները պահանջում էին փոխել ռեժիմը։ Դրանց մեջ առավել ակտիվ դեր էր խաղում ազգայնական միությունը («մեջտեղի կուսակցությունը») և մանրբուրժուական լայն կուսակցությունը, որը կոչվում էր լատինական այբուբենի առաջին երեք տառերով՝ ABC։ «Կորչի՛ Մաչադոն» լոզունգի ներքո ABC-ն մի շարք տեռորիստական ակտեր ու ռեժիմի բարձրաստիճան չինովնիկների դեմ մահափորձեր ձեռնարկեց։ Դիկտատորը պատասխանեց մասսայական բռնություններով։

Բայց ճնշել ժողովրդի դիմադրությունն արդեն հնարավոր չէր։ Աշխատավորության պայքարն աճում էր։ Մաչադոյի ռեժիմը թուլանում էր։ Վախենալով հեղափոխական պոռթկումից, ԱՄՆ-ը Կուբա ուղարկեց պետական քարտուղարի օգնական Ս. Ուելլեսին՝ Մաչադոյի և օպոզիցիայի միջև միջնորդելու նպատակով։ «Միջնորդության» միսիան հաջողությամբ չպսակվեց։ Այն ուժեղացրեց կուբայական ժողովրդի մասսաների հակաիմպերիալիստական տրամադրությունները։ Կոմունիստները գլխավորեցին աշխատավորության շարժումն ընդդեմ «միջնորդության» քաղաքականության։

1933—1935 թթ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը

Երկրում հասունանում էր հեղափոխական իրադրություն։ 1933 թ. օգոստոսի 7-ին, երբ քաղաքական ճգնաժամը Կուբայում մեծ լարվածության հասավ, ընդհատակյա ռադիոկայանը դիկտատուրայի տապալման համար մասսաներին ոտքի հանելու նպատակով հայտնեց, որ Մաչադոն հրաժարական է տվել։ Այդ լուրը կայծակնորեն տարածվեց ամենուրեք։ Ժողովուրդը փողոց ելավ։ Երկրում սկսվեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն։ Հեղափոխությունն անմիջականորեն ուղղված էր Մաչադոյի բռնակալության դեմ, իսկ ըստ էության այն հետապնդում էր սոցիալական հետամնացությանը և օտարերկրյա կապիտալից ունեցած տնտեսական ու քաղաքական ենթակայությանը վերջ տալու նպատակ, որից տառապում էր երկիրը։

Արհմիությունների կոչով երկրում սկսվեց ընդհանուր քաղաքական գործադուլ։ «Կորչի՛ դիկտատորը», «Թող Կուբայից կորչե՛ն յանկիի իմպերիալիստները», «Կուբան՝ կուբացիների համար»— այս լոզունգները տիրում էին մասսաներին։ Դիկտատորի դեմ հանդես եկան մայրաքաղաքի կայազորի սպաները։ Մաչադոն իր մերձավորների հետ փախավ Մայամի (ԱՄՆ)։ Ուելլեսի խորհրդով, օգոստոսի 12-ին Կուբայում իշխանությունը հանձնվեց պրոֆեսիոնալ դիվանագետ Կ. Մ. Սեսպեդեսին, որը ԱՄՆ-ի մոնոպոլիաների հետ համագործակցող կուբայական բուրժուազիայի աջ լիբերալ շրջանների ներկայացուցիչն էր։ Սեսպեդեսի կառավարությունը երկրում պաշարողական դրություն հայտարարեց, արգելեց գործադուլներն ու ցույցերը, բռնությունների ու խուսանավման միջոցով փորձում էր կանխել հեղափոխական շարժման աճը։ Մինչդեռ բանվորներն իրենց ձեռքն էին վերցնում շաքարի գործարանները, ակտիվանում էր ուսանողությունը, խմորումները տարածվեցին բանակում։ Հեղափոխական այդ ալիքի

մեջ սեպտեմբերի 4-ին բռնկվեց մայրաքաղաքի կայազորի զինվորների ապըստամբությունը, որը ղեկավարում էր ստորին աստիճանավորների մի խումբ, որտեղ աչքի ընկավ սերժանտ Ֆուլգենսիո Բատիստան։ Ապստամբները կապ հաստատեցին ուսանողական կազմակերպությունների ժողովրդականություն վայելող ղեկավարների հետ։

Այդ պայմաններում Սեսպեդեսին փոխարինելու եկավ «Հեղափոխական խունտան», որը շուտով վերակազմվեց Ժամանակավոր կառավարության՝ պրեզիդենտ Գրաու Սան-Մարտինի գլխավորությամբ, որը Հավանայի համալսարանի բժշկագիտության համբավավոր լիբերալ պրոֆեսոր էր։

Ներկայացնելով ազգային բուրժուազիայի շահերը և հաշվի առնելով մասսաների հեղափոխական վերելքը, Գրաուի կառավարությունը վճռականորեն հայտարարեց «Պլատտի ուղղումը» չճանաչելու մասին։ Ի պատասխան ԱՄՆ-ի ռազմանավերի կուբայական նավահանգստներ մտնելուն, նա պաշտպանական միջոցառումներ իրականացրեց, պատրաստվելով հակահարված տալ ԱՄՆ-ի ինտերվենցիային։ Գրաուի կառավարությունը վերահսկողություն հաստատեց էլեկտրական ընկերության «Զեյդ բենկ» բանկի, «Զապարա» շաքարի խոշորագույն ձեռնարկության և ԱՄՆ-ի մոնոպոլիաների մի քանի այլ ֆիլիալների գործունեության նկատմամբ, որոնք առավել անպատկառությամբ էին կողոպտում Կուբան։ Գրաուի կառավարությունը ժողովրդին տրամադրեց բուրժուական տարրական ազատություններ՝ խոսքի, մամուլի, քաղաքական կուսակցությունների, արհմիությունների և բանվորական այլ կազմակերպությունների գործունեության ազատություն։ Նա օրինականացրեց 8-ժամյա աշխատանքային օրը, աշխատավարձի մինիմումը և իրականացրեց մի քանի այլ սոցիալական միջոցառումներ։ Գյուղացիական հարցում նա պաշտպանեց գյուղացիական կազմակերպության՝ «Կոլոնների ասոցիացիայի» ստեղծումը, միջոցներ ձեռնարկեց ամայի հողերի հաշվառման համար՝ հողաբաժիններով դրանք կարիքավոր գյուղացիներին վաճառելու նպատակով։ Մտցվեց նաև համալսարանական ինքնավարություն։

Ազգային սուվերենության պաշտպանության՝ Գրաուի կառավարության ձեռնարկած միջոցառումները և սոցիալական ռեֆորմներն առաջացրին ԱՄՆ-ի իմպերիալիզմի և ներքին ռեակցիայի ատելությունը։ ԱՄՆ-ը հրաժարվում էր նրան ճանաչել և հրահրում էր կուբայական ռեակցիայի ելույթներ։ Հատկապես վտանգավոր էր զինվորականության նոյեմբերյան խռովությունը Հավանայում։ Երկու օր տևեց կառավարության զորքերի ճակատամարտը հակահեղափոխականների դեմ։ Խռովարարների ճնշումը ղեկավարող Ֆ. Բատիստան դրանով իր համար քաղաքական կապիտալ ձեռք բերեց, որը նա ճարպկորեն օգտագործեց անձնական իշխանության հասնելու նպատակով։

Գրաուի կառավարությունը միատարր չէր. նրա մեջ մտնում էին ինչպես անսկզբունք կարիերիստ Ֆ. Բատիստայի և բանկիր Պ. Ֆրանկի տիպի աջեր, այնպես էլ հեղափոխական Անտոնիո Գիտերասը (ներքին գործերի մինիստր), որին Ֆիդել Կաստրոն անվանեց «Կուբայի առաջին ժողովրդական մինիստր»։ Պրեզիդենտ Գրաուն գրավում էր միջանկյալ դիրք և հաճախ տատանվում էր աջերի կողմը, հատկապես բանվորական ու կոմունիստական շարժման դեմ պայքարելու հարցերում։ Հենց Կուբայի ազգային բուրժուազիայի ոչ միատարր կազմն ու թուլությունը, որին ընդհանուր առմամբ ներկայացնում էր Գրաուի կառավարությունը, վերջին հաշվով պայմանավորեցին նրա տատանումներն ու անկայունությունը։ Կանխատեսելով աջ օպոզիցիայի միավորման հնարավորությունը, Ա. Գիտերասը առաջարկեց արմատական զտում կատարել բանակում և ոստիկանության մեջ, որպեսզի ազատվել ռեակցիոն տարրերից։ Գրաուն դրան չդիմեց, իսկ նոյեմբերյան խռովության ճնշումից հետո Բատիստան անսահմանափակ իրավունքներ տրամադրեց բանակի «վերակազմավորման» համար։

Կուբայում ԱՄՆ-ի դեսպան Կեֆֆերին, որը փոխարինել էր նոյեմբերյան զինվորական խռովությանը բացահայտ մասնակցությամբ իրեն վարկաբեկած Ուելլեսին, լեղու գտավ իշխանությանը մոլեգնորեն ձգտող Բատիստայի հետ և, հենվելով աջ օպոզիցիոն ուժերի վրա, Գրաուին ստիպեց հրաժարական տալ։ 1934 թ. հունվարի 18-ին Կուբայի պրեզիդենտ դարձավ ազգային միության պարագլուխ գնդապետ Մենդիետան, որի կառավարությանը հինգ օր հետո ճանաչեց ԱՄՆ-ը։ Ինչպես Մենդիետան, այնպես էլ պրեզիդենտի պաստում նրան փոխարինածները (Խ. Ա. Բարնետը, Մ. Մարիանո Դոմեսը, Լ. Բրուն) հանդիսանում էին ԱՄՆ-ի դիվանագիտության գրածոները և «զորեղ մարդու»՝ Բատիստայի մարիոնետները։ 1940 թ. հոկտեմբերին պրեզիդենտական բազկաթոռը զբաղեցրեց ինքը՝ Բատիստան։

Մենդիետան իշխանության գլուխ անցավ այն պահին, երբ հեղափոխական ալիքը դեռ չէր մարել։ 1934 թ. հունվարին Հավանայում տեղի ունեցավ ազգային բանվորական IV համագումարը, որի 3 հազ. դելեգատները ներկայացնում էին ավելի քան 300 հազ. բանվորների։ Համագումարը ղեկավարում էին կոմունիստները՝ Ռ. Մարտինես Վիլլենայի գլխավորությամբ։ Համագումարը որոշում ընդունեց արհմիությունների ինտերնացիոնալին միանալու վերաբերյալ և բանվոր դասակարգին կոչ արեց է՛լ ավելի վճռականորեն պայքարել իմպերիալիզմի ու ռեակցիայի դեմ։ Այդ նպատակով մարտի սկզբին անցկացվեց ընդհանուր քաղաքական գործադուլ։ Հակաիմպերիալիստական հզոր ալիքի ճնշման տակ ԱՄՆ-ը ստիպված էր հրաժարվել «Պլատտի ուղղումից»։ Աշխատավորների գործադուլներն ու ցույցերն ավելի լայնորեն էին տարածվում պրովինցիաներում ու շաքարի գործարաններում։ Բանվորները գրավում էին գործարանները, իսկ գյուղացիները՝ կալվածատերերի հողերը։ Կուբայական գյուղացիության պայքարի դրոշ դարձավ «Ռեալենգո» փոքրիկ գյուղացիական հանրապետությունը, որը ստեղծվեց 1934 թ. Օրիենտե պրովինցիայի շրջաններից մեկում՝ ղեկը ձեռքին կալվածատերերի հողերը զավթած գյուղացիների կողմից։ Գյուղացիների պայքարը գլխավորում էր նեգր Լինո Ալվարեսը։ Զավթված տերիտորիայում գյուղացիները ստեղծեցին իրենց իշխանության մարմինները։ Գյուղացիական հանրապետությունը գոյություն ունեցավ հինգ տարի։

1935 թ. մարտին Կուբայի աշխատավորները կատարեցին աջ կառավարությունը տապալելու նոր փորձ ընդհանուր գործադուլի միջոցով, որին մասնակցում էր մոտ 400 հազ. մարդ։ Նրա գլխավոր ղեկավարներից մեկը Ա. Գիտերասն էր։ Մենդիետա-Բատիստայի կառավարությունը գործադուլավորների նկատմամբ արյունալի հաշվեհարդար կատարեց։ Երկիրը հայտարարելով ռազմական դրության մեջ, նա գնդացիրներով գնդակահարում էր գործադուլավորներին։ Հարյուրավոր սպանվածներ ու վիրավորներ, հազարավոր ձերբակալվածներ՝ այսպիսին էր մարտյան գործադուլի արդյունքը, որը ավարտեց բուրժուադեմոկրատական հեղափոխության ժամանակաշրջանը։ Աշխատավոր մասսաները պարտություն կրեցին։ Բայց հեղափոխությունը անհետ չանցավ։ Այդ ժամանակից ի վեր Կուբայի պատմության մեջ սկսվեց շրջադարձը կալվածատիրական-բուրժուական կիսագաղութայինից դեպի 30—50-ական թվականների բուրժուա-կալվածատիրական հանրապետությունը։ Բանվոր դասակարգը

և գյուղացիության հեղափոխական խավերը պարտությունից հետո չկորցրին մարտական ոգին և միասնության ձգտումը, մեծ փորձ ձեռք բերեցին հակաիմպերիալիստական պայքարում։

Կուբայի կոմունիստների պայքարը հակաիմպերիալիստական Ժողովրդական ճակատի ստեղծման համար

Հեղափոխության ժամանակաշրջանում իրեն հետևողական հեղափոխական քաղաքական ուժ դրսևորեց կոմունիստական կուսակցությունը՝ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական ելույթների նախաձեռնողը։ Նրան հարում էր «Հեղափոխական միությունը»՝ հեղափոխական մտավորականության մարտական կազմակերպությունը, Խուան Մարինելիոյի գլխավորությամբ։ Միության ստեղծման ակունքները սկիզբ են առնում 20-ական թվականների «մինորիստների» ձախ հոսանքից։ 1934 թ. ապրիլից «Հեղափոխական միությունը» լիովին պաշտպանում էր կոմկուսի գիծը։ Կոմկուսը հենվում էր Կուբայի բանվորների ազգային կոնֆեդերացիայի, շաքարի արդյունաբերության բանվորների ազգային միության, Հավանայի բանվորական ֆեդերացիայի, մետաղագործների միության, գյուղացիական լիգաների և այլ կազմակերպությունների վրա։

Երիտասարդ, դեռ քաղաքական փորձ չկուտակած կոմկուսը իր տակտիկական պայքարում թույլ էր տալիս նաև որոշ սխալներ։ Մանրբուրժուական կուսակցությունների և խմբերի հետ ունեցած իր հարաբերություններում միշտ չէ, որ ճկուն էր։ Դա դրսևորվեց Գրաուի կառավարության նկատմամբ նրա բռնած բացասական վերաբերմունքի մեջ։ 1934 թ. ապրիլին կայացած իր II համագումարում կոմկուսը քննադատեց այդ թերությունները և բանվոր դասակարգին կոչ արեց պրոլետարիատի ղեկավարությամբ ստեղծել միասնական հակաիմպերիալիստական ճակատ։ Կոմինտերնի VII կոնգրեսի որոշումները, որոնք աշխարհի բոլոր ժողովուրդներին կոչ արեցին ստեղծել ֆաշիզմի, իմպերիալիզմի ու պատերազմի դեմ պայքարի Ժողովրդական ճակատ, ամրապնդեցին Կուբայի կոմկուսի դիրքերը։ Գտնվելով անլեգալ վիճակում, կոմկուսը ուժեղացրեց պայքարը բանվոր դասակարգի միասնության համար։

Երբ 1936 թ. հուլիսին Իսպանիայում սկսվեց ֆաշիստական խռովությունը, կուբայական կոմունիստները կոչ նետեցին. «Հանո՜ւն Իսպանիայի ազատության ու դեմոկրատիայի։ Կուբայցինե՛ր և Կուբայում ապրող իսպանացինե՛ր, օգնեցե՛ք Իսպանիայի պաշտպաններին ամեն ինչով՝ դրամով, հագուստով, ծխախոտով։ Բոլորս ֆաշիզմի դեմ, հանո՜ւն ազատության»։ 1938 թ. մայիսին կոմկուսը սկսեց հրատարակել «Նոտիսաս դե օյ» իր մասսայական թերթը, իսկ 1938 թ. սեպտեմբերին հասավ իր գործունեության լեգալացմանը։

1939 թ. հունվարին վերաստեղծվեց 1935 թ. մարտին ջախջախված միասնական արհմիութենական կենտրոնը՝ Կուբայի աշխատավորության կոնֆեդերացիան (ԿԱԿ)։ Նրա գլխավոր քարտուղար ընտրվեց կոմունիստ Լասարո Պենյան։ Այդ նույն թվականի ամռանը տեղի ունեցավ գյուղացիական ազգային համագումարը, որտեղ կազմավորվեց գյուղացիական ազգային ֆեդերացիան (ԳԱՖ)։ 1939 թ. օգոստոսին տեղի ունեցավ կոմկուսի միավորումը հեղափոխական միության հետ և դրա հիման վրա ստեղծվեց մարքս-լենինյան միասնական կուսակցությունը՝ հեղափոխական-կոմունիստական միությունը (ՀԿՄ)։ Հեղափոխական միության ղեկավար Խ. Մարինելիոն դարձավ ՀԿՄ-ի նախագահ, իսկ Բլաս Ռոկան՝ նրա գլխավոր քարտուղար։

ԳԼՈՒԽ 23

ՄԵՔՍԻԿԱՆ 1918—1939 ԹԹ.

1910—1917 թթ. հեղափոխության հետևանքները

1910—1917 ԹԹ. Մեքսիկայում տեղի ունեցավ ազրարային հեղափոխություն, որը կրում էր բուրժուադեմոկրատական բնույթ։ Այդ հեղափոխության շարժիչ ուժը գյուղացիությունն էր, որը հանդես էր գալիս քաղաքային մանր բուրժուազիայի առավել հեղափոխական մասի հետ դաշն կնքած։

Մեքսիկայի բանվոր դասակարգը, որը դեռ թույլ էր կազմակերպված և լիապես չէր գիտակցում իր դասակարգային շահերը, ի վիճակի չէր գլխավորելու հեղափոխական պայքարը, դաշինքի մեջ մտնելու գյուղացիության հետ։ Դրա հետևանքով հեղափոխության առավել առաջադեմ հոսանքը, որը ներկայացված էր հեղափոխական գյուղացիությամբ, պարտություն կրեց։ Իշխանության գլուխ անցան «սահմանադրականները», որոնք արտահայտում էին ազգային մանր և միջին բուրժուազիայի և լիբերալ կալվածատերերի շահերը։ Մի շարք զիջումների գնով նրանց հաջողվեց իրենց կողմը գրավել բանվոր դասակարգի մի մասին։ Անարխո-սինդիկալիստական պարագլուխների աջակցությամբ ստեղծվեցին «բանվորական կարմիր գումարտակներ», որոնք բուրժուազիայի կողմից օգտագործվեցին գյուղացիական բանակների դեմ։

Մինչև 1917 թ. Մեքսիկան շարունակում էր մնալ հետամնաց ազրարային երկիր, որն ուժեղ կախման մեջ էր գտնվում օտարերկրյա կապիտալից։ Գյուղում պահպանվում էին մինչկապիտալիստական մնացուկները։ 1923 թ. խոշոր լատիֆունդիաներին (1 հազ. հեկտարից ավելի), որոնք կազմում էին հողային տիրույթների ընդամենը 2,2 տոկոսը, ընկնում էր հողի 83,5 տոկոսը։ Երկրում կար 2,2 մլն հողազուրկ գյուղացիական տնտեսություն և 3,6 մլն գյուղատնտեսական բանվոր։ Լագունայի և Յուկատանի շրջանում գտնվող վիթխարի հողային զանգվածները պատկանում էին օտարերկրյա մոնոպոլիաներին։ Ծանր վիճակում էր գտնվում և ողորմելի գոյություն էր քարշ տալիս մեքսիկական արդյունաբերությունը։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ուժեղացավ օտարերկրյա կապիտալի թափանցումը Մեքսիկա։ Լատինական Ամերիկայի երկրների մեջ այն երկրորդ տեղն էր գրավում ամերիկյան ուղղակի կապիտալ ներդրումների չափերով։ Օտարերկրյա մոնոպոլիաները լիովին իրենց ձեռքում էին պահում լեռնահանույթային արդյունաբերության հիմնական ճյուղերը և նավթային արդյունաբերությունը, էլեկտրաէներգետիկան, վերամշակող արդյունաբերության ձեռնարկությունների մոտ կեսը և տրանսպորտի զգալի մասը։ Անհրաժեշտ էին տնտեսական խոր վերափոխություններ, որպեսզի մինչև վերջ հասցվեր հեղափոխությունը և մեքսիկական ժողովրդի առջև բացվեր իսկական տնտեսական անկախության ու երկրի դեմոկրատացմանը հասնելու ուղին։

Հեղափոխական գյուղացիական բանակների շարունակվող դիմադրության, բանվոր դասակարգի գործադուլային պայքարի աճման և կառավարող լագերում հակասությունների ուժեղացման պայմաններում 1917 թ. փետրվարին ընդունվեց մեքսիկական նոր սահմանադրությունը՝ բուրժուական ամենադեմոկրատական սահմանադրություններից մեկը։ Հողը հռչակվում էր ազգի սեփականությունը, սահմանվում էր ազգի իրավունքը՝ սահմանափակելու խոշոր հողային սեփականությունը և վերացնելու երկրի բնական հարստությունները շահագործող օտարերկրյա կոնցեսիաները։ Սահմանադրության մեջ մտցվեցին «մարդու իրավունքների երաշխիքներ», որոնք հռչակում էին բուրժուադեմոկրատական ազատություններ. եկեղեցին բաժանվում էր պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց։ Սահմանադրության մեջ մտցվեցին բանվորական օրենսդրության մի քանի հիմունքներ (բանվորների 8-ժամյա աշխատանքային օրվա իրավունքը, արհմիություններ ստեղծելու իրավունքը և այլն)։ Սակայն, ճանաչելով բանվորների գործադուլի իրավունքը, սահմանադրությունը հաստատում էր ձեռնարկատերերի լոկաուտի իրավունքը։

1917 թ. սահմանադրությունը հող էր ստեղծում Մեքսիկայի աշխատավոր զանգվածների և առաջադիմական բոլոր ուժերի հակաիմպերիալիստական պայքարի զարգացման համար։ Միաժամանակ հաճախ այն դեմագոգիկ նպատակներով օգտագործում էին կառավարող շրջանների ներկայացուցիչները, որոնք պնդում էին, թե իբր մեքսիկական ամբողջ հասարակությունը մշտապես հեղափոխական պայքարի մեջ է գտնվում հանուն սահմանադրության հռչակած սկզբունքների իրականացման։

Մեքսիկան 1918—1923 թթ. «հեղափոխական կաուդիլիզմի» ռեժիմը

Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը խոշոր ազդեցություն գործեց Մեքսիկայի վրա։ Մեծ Հոկտեմբերի նկատմամբ մեքսիկական ժողովրդի առաջադիմական ուժերի վերաբերմունքն արտահայտեց մեքսիկական գյուղացիության առասպելական առաջնորդ Էմիլիանո Սապատան. «Այն գործը, որի համար պայքարում են հեղափոխական Մեքսիկան և վերջերս ազատագրված Ռուսաստանը՝ ամբողջ մարդկության ընդհանուր գործն է, որով շահագրգռված են բոլոր կեղեքված ժողովուրդները»։ Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ որոշակի տեղաշարժեր կատարվեցին Մեքսիկայի բանվորական շարժման մեջ։ Դա իր արտահայտությունը գտավ բանվոր դասակարգի ակտիվության աճի և հակաիմպերիալիստական պայքարում նրա ներգրավվելու մեջ։ 1918—1919 թթ. մեքսիկական բանվոր դասակարգը թևակոխեց վերելքի գոտին, որը տևեց մինչև 1923 թ.։

1919 թ. սեպտեմբերին Մեխիկո քաղաքում տեղի ունեցավ սոցիալիստական և կոմունիստական խմբերի և բանվորական կազմակերպությունների ներկայացուցիչների I ազգային կոնգրեսը, որտեղ ստեղծվեց Մեքսիկայի կոմունիստական կուսակցությունը։ Այն ժամանակ երբ 1918 թ. հիմնված Մեքսիկական բանվորական կոնֆեդերացիան (ԿՐՈՄ), որը սկզբնապես կանգնած էր անարխո-սինդիկալիզմի դիրքերում, ավելի ու ավելի էր սահում դեպի ռեֆորմիստական ռելսերը, կոմունիստական կուսակցությունը հանդես էր գալիս որպես ռեֆորմիզմի դեմ անհաշտ մարտիկ, աշխատելով խանգարել ԿՐՈՄ-ին՝ իր ազդեցությանը ենթարկելու անկախ արհմիությունները։ Սակայն այդ տարիներին կոմկուսը դեռ չափազանց թույլ էր, որպեսզի սահմաներ բանվորական շարժման զարգացումը։ Բանվորական շարժման հիմնական մասը պաշտպանում էր ԿՐՈՄ-ին, որի ղեկավարությունն ավելի ու ավելի էր մերձենում «սահմանադրականների» ձախ թևի ներկայացուցիչների հետ։ 1920 թ. մայիսին վերջիններս ղենքը ձեռքին հանդես եկան մասսաների մեջ ժողովրդականություն չվայելող Վ. Կարանսայի կառավարության դեմ, որը ստեղծվել էր 1915 թ. ազգային բուրժուազիայի մի մասի և հողային օլիգարխիայի միջև կայացած կոմպրոմիսի հիման վրա։ Նրանց զորքերը գրավեցին մայրաքաղաքը, Վ. Կարանսան սպանվեց։ Պրեզիդենտ դարձավ հեղափոխության ակտիվ մասնակից գեներալ Այվարո Օբրեգոնը։

20-ական թվականների սկզբին Մեքսիկայի էկոնոմիկան տուժեց հետպատերազմյան տնտեսական ճգնաժամից։ Հումքի գնումների կրճատումը հասցրեց լեռնահանույթային արդյունաբերության շատ ձեռնարկությունների փակմանը, բամբակի ու խենեկենի պլանտացիաներում աշխատանքի կրճատմանը։ Գործազրկության աճը և աշխատավորների դրության վատացումն առաջ բերեցին դասակարգային պայքարի սրում։ Գյուղում նոր ուժով բորբոքվեց պայքարը հողի համար, հաճախակի դարձան կալվածատիրական հողերի գրավման ու բաժանման դեպքերը։ Բարձրացավ գործադուլների նոր ալիքը։ 1921 թ. ամռանը Յուկատանի գործադուլավոր բանվորներն առաջադրեցին սովետական իշխանության հաստատման լոզունգ։ Երկրի մի շարք շրջաններում առաջացան սովետներ, որոնք, սակայն, շուտով ջախջախվեցին Օբրեգոնի զորքերի կողմից։ Այդ պայմաններում մեքսիկական բուրժուազիան դիմեց երկրում այնպիսի քաղաքական ռեժիմի հաստատմանը, որը հայտնի է «հեղափոխական կաուդիլիզմ»[1] անունով։ Այդ ռեժիմի հիմքը՝ խուսանավումն էր երկրում առաջացած ուժերի հավասարակշռության պայմաններում և այն, որ իշխանության գլուխ էին կանգնած ժողովրդի ծոցից ելած և հեղափոխության տարիներին աչքի ընկած գինվորականները։ Իսկ նրա գլխավոր նպատակն էր երկրի անկախ ազգային-բուրժուական, կապիտալիստական զարգացման ապահովումը։ Իշխանության այդ ձևի առաջացումը կապված էր այն բանի հետ, որ Մեքսիկայում 1910—1917 թթ. հեղափոխությունից հետո՝ 1) բուրժուա-կալվածատիրական օլիգարխիայի առավել ռեակցիոն ուժերը ջախջախված էին, 2) հեղափոխական գյուղացիությունը պարտություն էր կրել և թուլացած էր, 3) բանվոր դասակարգը դեռ չէր դարձել իշխանության համար պայքարելու ընդունակ քաղաքական ուժ, 4) կազմավորվող ազգային բուրժուազիան դեռ բավականաչափ ուժեղ չէր, որպեսզի հաստատեր իր անմիջական քաղաքական տիրապետությունը և կառավարեր սահմանադրական մեթոդների օգնությամբ։

Դաժանորեն ճնշելով պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական ելույթները, Օբրեգոնը ձեռնամուխ եղավ ագրարային ռեֆորմի անցկացմանը, որի օգնությամբ ցանկանում էր իր համար հենարան ստեղծել ունևոր գյուղացիության մեջ։ Լայնորեն օգտագործելով ԿՐՈՄ-ի աջակցությունը և հենվելով գյուղացիական «ագրարային» կուսակցության վրա, Օբրեգոնի կառավարությունը դրա հետ մեկտեղ նրանց միջև թշնամանք էր բորբոքում, բանվոր դասակարգին հրահրում գյուղացիության դեմ։ Իր կառավարման առաջին տարիներին Օբրեգոնը փորձում էր խաղալ ժողովրդի հակաիմպերիալիստական տրամադրությունների վրա, խոստանալով կենսագործել սահմանադրության այն հոդվածները, որոնք ուղղված էին օտարերկրյա կապիտալի բռնագրաման դեմ։ Գործնականում նա չհամարձակվեց հանդես գալ օտարերկրյա մոնոպոլիաների դեմ։

[1] Կաուդիլյո (իս.) բառից— առաջնորդ։

1924 թ. Օբրեգոնի կառավարությունը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Սովետական Միության հետ։

Մեքսիկան կապիտալիզմի մասնակի կայունացման ժամանակաշրջանում

1924—1929 թթ. գեներալ Կալիեսի պրեզիդենտության ժամանակաշրջանում «հեղափոխական կաուդիլիզմի» ռեժիմը ճգնաժամ էր ապրում։ Զևավորվող ազգային խոշոր բուրժուազիայի, որին նա ներկայացնում էր, և բուրժուականացած կալվածատերերի շահերը մերձենում էին օտարերկրյա կապիտալի հետ կապված հին կոմպրադորական բուրժուազիայի և լատիֆունդիստների շահերի հետ։ Այդ պայմաններում իշխանությունն իր ձեռքում պահելու համար Կալիեսը պետք է իր քաղաքականությունն ավելի շատ քողարկեր մեքսիկական պետության «պրոլետարական բնույթի» վերաբերյալ ֆրազներով, ԿՐՈՄ-ի պարագլուխներին ներգրավեր մասնակցելու կառավարությանը։ ԿՐՈՄ-ի ղեկավար Մորոնեսը նրա մեջ գրավեց արդյունաբերության մինիստրի պոստը։ Կալիեսի օրոք ԿՐՈՄ-ը վերջնականապես վերածվեց կառավարող ռեժիմի գործիքի, բանվորներին կոչ անելով դասակարգային հաշտություն ու համագործակցություն հաստատել բուրժուազիայի հետ։ Պատահական չէր, որ այդ ժամանակ սերտ կապեր հաստատվեցին ԿՐՈՄ-ի և ԱԱՖ-ի միջև։

Հռչակելով «տնտեսական նացիոնալիզմի» սկզբունքներ, ԿՐՈՄ-ի պարագլուխները հանդես էին գալիս ազգային արդյունաբերության խոշոր ձեռնարկություններ ստեղծելու և հները վերասարքավորելու դեմ՝ այն պատրվակով, որ դա կհասցնի երկրում գործազրկության աճին։ Դրա հետ մեկտեղ նրանք պայքարում էին «օտարերկրյա կապիտալի համար լայն բացված դրռանք պայքարում էին «օտարերկրյա կապիտալի համար լայն բացված դրռներին» քաղաքականության համար, որն իրր շահագործում է Մեքսիկայի սոսկ միայն բնական հարստությունները, բայց ոչ մեքսիկական ժողովրդին։ ԿՐՈՄ-ի վերահսկողության տակ էին գտնվում արդյունաբերության առավել զարգացած ճյուղերի՝ տեքստիլ և սննդի արդյունաբերության արհմիությունները։

Իր կառավարման առաջին տարիներին Կալիեսն ակտիվացրեց ագրարային ռեֆորմի անցկացումը։ Գյուղացիներին բաժանվեց 3,6 մլն հա հող, այսինքն՝ 2 անգամ ավելի, քան Օբրեգոնի օրոք։ Կալիեսը դիմում էր մեքսիկացիների ազգային զգացմունքներին, 1926 թ. ազմկալի կամպանիա ծավալելով ամերիկյան նավթային ընկերությունների իրավունքների կրճատման համար, որը, սակայն, ոչնչի չհասցրեց։ Իսկ 1930 թ. ԱՄՆ-ի ճնշման տակ մեքսիկական կառավարությունը խզեց դիվանագիտական հարաբերությունները Սովետական Միության հետ, այդ նույն թվականին արգելվեց մեքսիկական կոմկուսը և փակվեց նրա օրգանը՝ «էլ Մաշետե» թերթը։ Սկսվեցին բանվորական ու կոմունիստական շարժման պարագլուխների ձերբակալությունները, ագրարային ռեֆորմը փաստորեն դադարեցվեց։

Կալիեսի քաղաքականության մեջ հատուկ տեղ էր գրավում կաթոլիկական եկեղեցու հետ ունեցած կոնֆլիկտը։ 20-ական թվականներին կաթոլիկական եկեղեցին Մեքսիկայում արդեն կորցրել էր իր նախկին ազդեցությունը։ Սակայն նրա ղեկավարներն ակտիվորեն դիմադրում էին ամեն տեսակ սոցիալական վերափոխությունների և 1917 թ. սահմանադրության հոդվածների կենսագործմանը։ Կոնֆլիկտը հատուկ սրության հասավ 1926 թ., երբ կառավարությունը, գործելով վարչական կոպիտ միջոցներով, փակեց մի քանի եկեղեցի ու վանք և երկրից արտաքսեց օտարերկրյա ծագում ունեցող հոգևոր անձանց։ Ի նշան բողոքի եկեղեցին դադարեցրեց ժամերգությունն ամբողջ երկրում։ Կոնֆլիկտը վերաճեց զինված պայքարի, որի մեջ ներգրավվեցին գյուղացիական լայն զանգվածներ և բանվոր դասակարգի մի մասը։ Մարտնչող կաթոլիկների՝ «քրիստերոսների» դեմ, որոնց հիմնական զանգվածը կազմում էր գյուղացիությունը, կառավարությունն օգտագործեց զորքերին և բանվորական ջոկատներին։ Հմտորեն թշնամանք բորբոքելով կաթոլիկ գյուղացիների և հակակղերականների միջև, նա շեղում էր աշխատավոր զանգվածների ուշադրությունը սոցիալական ռեֆորմների համար մղվող պայքարից։

Մեքսիկան 1929—1934 թթ.։ «Հեղափոխական կաուդիլիզմի» ռեժիմի կրախը։

Լատինական Ամերիկայի մյուս երկրների պես Մեքսիկան խիստ տուժեց համաշխարհային տնտեսական ճգնաժամից։ Խիստ ընկավ նավթի, ոսկու, գունավոր մետաղների հանույթը։ Օտարերկրյա ձեռնարկատերերը, որոնք իրենց ձեռքում էին պահում լեռնահանույթային արդյունաբերության ձեռնարկությունները, փակեցին շատ հանքեր և մասսայաբար ազատեցին բանվորներին։ 1930 մինչև 1933 թ. գործազուրկ բանվորների թիվն աճեց 3,5 անգամ։ Ճգնաժամը տարածվեց նաև սննդի և տեքստիլ արդյունաբերության վրա, որը հասցրեց գյուղատնտեսական հումքի նկատմամբ եղած պահանջարկի անկմանը։ Հատկապես ուժգնորեն ճգնաժամը հարվածեց գյուղատնտեսության արտահանման ճյուղերին, ստիպելով կրճատել բամբակի ու խենեկենի ցանքատարածությունները և շատ պլանտացիաներում դադարեցնել աշխատանքները։

Ճգնաժամի տարիներին դանդաղորեն, բայց անշեղորեն աճում էր բանվոր դասակարգի քաղաքական ակտիվությունը, սակայն երկրի քաղաքական կյանքի վրա նրա ազդեցությանը ուժեղացմանը խանգարում էր բանվորական կազմակերպությունների մանրատվածությունը։ Երկրում հաշվվում էր 2800 ինքնուրույն արհմիություն և 9 արհմիութենական կենտրոն։ 1930 թվականից կոմկուսն աշխատում էր ընդհատակում, այն մնում էր դեռ փոքրաթիվ և գաղափարապես էլ ոչ բավարար չափով հասունացած։ Մի շարք հարցերի գծով կոմունիստները կանգնած էին աղանդավորական դիրքերում, հրաժարվելով աշխատավորների ամենօրյա պահանջների բավարարման համար պայքարելուց, բավարար ուշադրություն չդարձնելով գյուղացիության շրջանում կատարվող աշխատանքին, որը թուլացնում էր նրանց ազդեցությունը մեքսիկական ժողովրդի զանգվածների վրա։

1929 թ. երկրում փոխվեց քաղաքական ուժերի տեղաբաշխումը։ Ամրապնդված ազգային բուրժուազիան արդեն ի վիճակի էր նացիոնալ-ռեֆորմիզմի սկզբունքների վրա հենված քաղաքականության միջոցով իրականացնել անմիջական քաղաքական տիրապետությունը և այլևս չէր զգում ԿՐՈՄ-ի օգնության կարիքը։ Այդ ժամանակ ԿՐՈՄ-ի ազդեցությունը բանվոր դասակարգի մեջ նկատելիորեն ընկել էր, 1930 թ. սկսվեց արհմիությունների զանգվածաբար դուրս գալը ԿՐՈՄ-ից։ Դա կապված էր բանվոր դասակարգի քաղաքական գիտակցականության աճի, բանվորական շարժման մեջ հեղափոխական հոսանքների ազդեցության ուժեղացման հետ։ 1933 թ. ԿՐՈՄ-ի կազմից առանձնացավ ձախ թևը, որը Լոմբարդո Տոլեդանոյի գլխավորությամբ ստեղծեց նոր կազմակերպություն՝ Մեքսիկայի բանվորների ու գյուղացիների ընդհանուր կոնֆեդերացիան։ Կոնֆեդերացիայի ծրագրում դրված էին աշխատավորների տնտեսական ու քաղաքական պահանջների, կալվածատիրական հողի բռնագրավման համար պայքարի խնդիրները։ Ծրագրում կարևոր տեղ էին գրավում հակաիմպերիալիստական պահանջները։

Տիրող դասակարգերի ներսում եռում էր կատաղի պայքարը. «հեղափոխական կաուդիլիզմի» ռեժիմը քաղաքական կայունություն այլևս չէր ապա-

հովում։ Երկրում գոյություն ունեին 50-ից ավելի կուսակցություններ ու բազմաթիվ խմբավորումներ, գավառում չէր դադարում պայքարը տեղական կուդիլիոների միջև։ Թշնամի ֆրակցիաների մրցակցությունը կազմալուծում էր կոնգրեսի աշխատանքը։ Այդ պայմաններում ազգային բուրժուազիան ձգտում էր թշնամի խմբավորումներին միավորել միասնական կուսակցության մեջ, որը կարողանար իշխել երկրի քաղաքական կյանքում և վերահսկել մասսայական կազմակերպությունների գործունեությունը։ 1929 թ. մարտին Կերետերո քաղաքում ստեղծվեց նոր այսպես կոչված ազգային-հեղափոխական կուսակցությունը (ԱՀԿ), որի մեջ մտան քաղաքական տարբեր խմբերի ներկայացուցիչներ։ Նոր կուսակցության գլխավոր նպատակ հռչակվեց «բոլոր հեղափոխական տարրերի նկատմամբ վերահսկողության կազմակերպում՝ միասնական քաղաքական ինստիտուտի մեջ դրանց միավորելու միջոցով»։ Կուսակցության շարքերում աստիճանաբար ուժեղանում էր մանր բուրժուազիայից, մտավորականությունից և բանակի առաջադեմ մասից ելած դեմոկրատական տարրերի ձախ թևի ազդեցությունը, տարրեր, որոնք ավելի ու ավելի հստակորեն էին հասկանում երկրում բուրժուա-դեմոկրատական վերափոխություններ անցկացնելու անհրաժեշտությունը։ ԱՀԿ-ի մեջ աջ խմբավորումների՝ բյուրոկրատիայի, առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի և ռեակցիոն զինվորական շրջանների ներկայացուցիչների դեմ հատկապես սուր պայքար ծավալվեց 1934 թ. պրեզիդենտական ընտրությունների նախօրյակին։ Հաղթանակ տարավ մեքսիկական հեղափոխության աջի ընկնող գործիչ, իմպերիալիզմի դեմ անհաշտ մարտնչող Լասարո Կարդենասը։ Իր բացառիկ ընդունակությունների ու խիզախության համար 27 տարեկան հասակում նա ստացավ բրիգադային գեներալի աստիճան։ Հեղափոխությունից հետո, լինելով Միչոական նահանգի նահանգապետ, Կարդենասը շատ բան արեց ագրարային ռեֆորմի իրականացման, ժողովրդական կրթության զարգացման համար, աջակցում էր նահանգում արհմիութենական շարժմանը։ Կարդենասի իշխանության գլուխ անցնելը նշանակում էր կառավարող կուսակցության մեջ գոյություն ունեցող դեմոկրատական հոսանքի հաղթանակ։ Բայց չնայած դրան ԱՀԿ-ի ներսում նրա պրեզիդենտության ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում (1934—1940 թթ.) չէր դադարում պայքարը Կարդենասի կողմնակիցների և պահպանողական տարրերի միջև։

Կարդենասի պրեզիդենտությունը։ Հակաիմպերիալիստական և դեմոկրատական վերափոխումները երկրում

Ի տարբերություն նախորդ կառավարությունների, Կարդենասի կառավարությունը սկսեց անցկացնել ագրարային լայն ռեֆորմ, որի գլխավոր նպատակն էր գյուղացիական համայնքի՝ էխիդոյի ընդարձակումն ու ամրապնդումը։ Գործնականորեն առանց փոխհատուցման երկրում բռնագրավվեցին օտարերկրյա մոնոպոլիաներին պատկանող շատ խոշոր լատիֆունդիաներ ու պլանտացիաներ, հատկապես Լագունայի և Յուկատանի շրջանում։ Խոշոր կապիտալիստական տնտեսությունները, որոնք զբաղված էին բամբակի և խենեկենի արտադրությամբ, չմանրատվեցին և բռնագրավումից հետո վերածվում էին խոշոր կոոպերատիվ տնտեսությունների։ Գոյություն ուներ էխիդոյի երկու տիպ. 1) պարցելացված էխիդոներ, որտեղ մշակվող հողը բաժանվեց հողամասերի, իսկ մնացած հողակտորները օգտագործվում էին համատեղ, 2) կոոպերատիվ էխիդոներ, որտեղ հողը մշակվում

էր համայնքի բոլոր անդամների հետ միասին, համատեղ օգտագործվում էր տեխնիկան, կառուցվում էին իրրիգացիոն շինություններ։ Պետությունը էխիդոներին օգնում էր վարկեր տրամադրելով։ Հողի մասնավոր սեփականությունը պահպանվում էր, և համայնքներին հող տրամադրելու հետ մեկտեղ իրականացվում էր մանր կտորներով հողի բաժանում։ 1934—1940 թթ. 1 մլն գյուղացիական ընտանիքների միջև բաժանվեց ընդամենը 18,1 մլն հա հող։

Ագրարային ռեֆորմի անցկացումը ուժեղագույն հարված հասցրեց խոշոր կալվածատիրական հողատիրությանը և օտարերկրյա մոնոպոլիաների տիրապետությանը Մեքսիկայի գյուղատնտեսության մեջ։ Էխիդոյի մեջ մտնող գյուղացիների տեսակարար կշիռը աշխատող ամբողջ բնակչության համեմատ մեծացավ 15-ից մինչև 41,8 տոկոսի, իսկ էխիդոների զբաղեցրած հողի տոկոսը 6-ից աճեց մինչև 21 տոկոսի։ Այդուհանդերձ ագրարային ռեֆորմը լիովին չվերացրեց լատիֆունդիաներն ու գյուղացիների հողազրկությունը։ Առ 1940 թ. խոշոր հողատերերի ձեռքում մնում էր 80 մլն հա հող, երկրում հաշվվում էր 2 մլն հողազուրկ գյուղացի։ Բացի այդ, էխիդոյի ներսում կապիտալիստական շուկայական հարաբերությունների մեջ դրանց ներքաշմանը համեմատ ուժեղանում էր գյուղացիության շերտավորման պրոցեսը։ Աճեց այն համայնականների խավը, որոնք վարձակալում էին հողը և շահագործում համայնքի սնանկացած անդամների աշխատանքը։ Աճեց գյուղատնտեսական պրոլետարիատի խավը, որը էխիդոյի հողը վարձակալության էր տալիս և մեկնում կենսամիջոցներ որոնելու։

Կարդենասի կառավարությունը պայքարում էր երկրի նավթարդյունաբերության մեջ օտարերկրյա կապիտալի բռնագրավման դեմ։ Մեքսիկայում նավթի հանույթն ու արտադրությունը մոնոպոլացրել էին անգլիական ու ամերիկյան նավթային 17 ընկերություններ՝ «Ռոյալ Դաչ շելլի» և «Ստանդարդ Օյլի» ֆիլիալները։ 1934—1935 թթ. երկրում ստեղծվեց Պեմեքս նավթային պետական ընկերությունը։ Սկզբում նրա ձեռքում գտնվում էր նավթի հանույթի աննշան մասը, որը բավարարում էր երկրի կարիքների միայն 0,2 տոկոսը։ Ամերիկյան մոնոպոլիաները բազմիցս փորձում էին հասնել Պեմեքսի վերացմանը։ Չգալով աշխատավոր զանգվածների հարաճուն ճնշումը, Կարդենասի կառավարությունը 1938 թ. մարտի 18-ին դեկրետ ստորագրեց անգլիական ու հյուսիսամերիկյան նավթային ընկերությունների ունեցվածքի ազգայնացման և այն Պեմեքս ընկերությանը հանձնելու մասին։ Դա հասցրեց դիվանագիտական հարաբերությունների խզմանը Անգլիայի հետ։ ԱՄՆ-ը տնտեսական բոյկոտ հայտարարեց Մեքսիկային, հրաժարվելով մեքսիկական նավթ և այլ հումք գնել։ Միաժամանակ մերժեց Մեքսիկային նավթային արդյունաբերության սարքավորումներ մատակարարել։ Անգլիայի ճնշման տակ մեքսիկական նավթ գնելը դադարեցրին Ֆրանսիան, Բելգիան և Հոլանդիան։ Երկրի ծանր դրությունը խորանում էր տանկերային նավատորմի բացակայությամբ։ Մեքսիկան տնտեսական զգալի դժվարություններ էր կրում և ստիպված էր իրացման նոր շուկաներ որոնել։ Նավթային ընկերությունները մի շարք դիվերսիաներ կազմակերպեցին նավթահորերում, ակտիվ օգնություն էին ցույց տալիս ներքին ռեակցիային (գեներալ Սեդիլիոյի ռեակցիոն խռովությունը)։ Սակայն, չնայած բոլոր դժվարություններին, մեքսիկական կառավարությունը զիջումների չդիմեց։ Նավթարդյունաբերության, ինչպես նաև երկաթուղիների ազգայնա-

ցումը զգալիորեն ամրապնդեց պետական սեկտորը և կարևոր ավանդ հանդիսացավ ազգային անկախ էկոնոմիկայի ստեղծման գործում։

30-ական թվականների կեսերին Մեքսիկայում, ինչպես և Լատինական Ամերիկայի մյուս երկրներում, հատուկ կարևորություն ստացավ հակաիմպերիալիստական ժողովրդական ճակատի ստեղծման հարցը։ Դրա համար երկրում նպաստավոր պայմաններ էին առաջանում. 1936 թ. բանվորական միասնության կոնգրեսում ստեղծվեց Մեքսիկայի աշխատավորության կոնֆեդերացիան (ՄԱԿ)։ Նրա կազմի մեջ մտան Մեքսիկայի բանվորների ու գյուղացիների կոնֆեդերացիան, մի շարք արհմիութենական կենտրոններ և առանձին արհմիություններ։ Առ 1940 թ. ՄԱԿ-ը հաշվվում էր 1,5 մլն անդամ։ Դրանից անմիջապես հետո ընդհատակից դուրս եկած կոմկուսի նախաձեռնությամբ գումարվեց ՄԱԿ-ի և դեմոկրատական կուսակցությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչների համագումար, որը հռչակեց Ժողովրդական ճակատի ստեղծումը։ Կարդենասի կառավարության քաղաքականությունը, մասնավորապես հանրապետական Իսպանիային ցույց տված նրա օգնությունը օբյեկտիվորեն նպաստեց հակաիմպերիալիստական ազգային ուժերի միավորմանը։

Այդ պայմաններում և Կոմինտերնի VII կոնգրեսի որոշումների կապակցությամբ ՄԱԿ-ը ավելի ճիշտ կուրս մշակեց, խիստ և անվերապահ քննադատությունից անցնելով մեքսիկական կառավարության առաջադիմական կուրսի պաշտպանությանը։ Ժողովրդական ճակատ ստեղծելու վերաբերյալ որոշման գործնական իրականացումը յուրահատուկ զարգացում ստացավ ԱՀԿ կառավարական կուսակցությունը 1938 թ. Կարդենասի կողմից Մեքսիկական հեղափոխության կուսակցության (ՄՀԿ) վերակազմելու կապակցությամբ, որը հռչակեց «Հանուն աշխատավորների դեմոկրատիայի» լոզունգը։ ՄՀԿ-ի ծրագիրը հատուկ կետեր էր պարունակում երկաթուղային տրանսպորտի և նավթարդյունաբերության ազգայնացման, էկոնոմիկայում պետական և կոոպերատիվ սեկտորներ ստեղծելու, ձեռնարկություններում բանվորական վերահսկողություն իրականացնելու մասին։ Բուրժուական քաղաքական խմբավորումների հետ միասին նոր կուսակցության կազմի մեջ էին մտցվում արհմիությունները, գյուղացիական լիգաները և աշխատավորական այլ կազմակերպությունները։

Կարդենասի կառավարության գործունեությունը բնութագրելով որպես կարևոր քայլ «նոր տիպի դեմոկրատական պետության» կառուցման ճանապարհին, ՄԱԿ-ը կառավարող նոր կուսակցությունը համարում էր Ժողովրդական ճակատի յուրահատուկ սկզբնական ձև։

Մեքսիկայում տեղի ունեցած իրադարձությունների հետագա զարգացումը չնպաստեց այն բանին, որպեսզի ՄՀԿ-ն դառնար առաջադիմական ուժերի պայքարի արդյունավետ ղեկավար ուժ։ Աշխատավորների ուժերի իսկական միասնությունը դեռ միայն սկսում էր կազմավորվել, կոմկուսը դեռ բավարար ուժ ու ազդեցություն չուներ, որպեսզի համախմբեր բոլոր առաջավոր ուժերին՝ ՄԱԿ-ի ղեկավարության վրա արդյունավետորեն ներգործելու համար։ Այս վերջինս Կարդենասի գլխավորությամբ ելնում էր պետական իշխանության առաջնայնության վերաբերյալ պատերնալիստական գաղափարից, իշխանություն, որը հենց միայն ինքն է ընդունակ որոշելու հասարակական զարգացման նպատակն ու խնդիրները և կոչված է կարգավորելու մասսաների գործողությունները. նա խստորեն հանդես էր գալիս նրանց հեղափոխական նախաձեռնության ամեն մի դրսևորման դեմ։

Այդ պայմաններում երկրում անշեղորեն աճում էր ազգային բուրժուազիայի միջավայրից ելած պահպանողական տարրերի ազդեցությունը, բուրժուազիա, որի տնտեսական և, վերջին հաշվով, քաղաքական դիրքերի ամրապնդմանն էր օբյեկտիվորեն ուղղված Կարդենասի կառավարության գործունեությունը։ 40-ական թվականների սկզբին վերջին հաշվով այդ պրոցեսները հասցրին նրա փոխարինմանը պահպանողական կաբինետով և նրա հակաիմպերիալիստական ու ազգային-հեղափոխական առավել հեռուն գնացող լոզունգների հանմանը։

ԳԼՈՒԽ 24

ԱՐԳԵՆՏԻՆԱՆ
1918—1939 ԹԹ.

Առաջին համաշխարհային պատերազմի ազդեցությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա

Մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Արգենտինան Լատինական Ամերիկայի տնտեսապես ամենազարգացած երկիրն էր։ Պատերազմի տարիներին արգենտինական էկոնոմիկայի համար ավելի բարենպաստ պայմաններ առաջացան։ Եվրոպայի երկրներում մեծացավ հացահատիկի ու մսի պահանջարկը, որոնք Արգենտինայի արտահանության հիմնական մթերքներն էին. դրանց արտադրությամբ նա աշխարհում գրավում էր առաջին տեղերից մեկը։ Դա նպաստեց կապիտալի կուտակմանը և արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացմանը։ 1914 թ. մինչև 1920 թ. Արգենտինայի ոսկու պաշարն աճեց կրկնակի։ Պատերազմի տարիներին ներմուծվող ապրանքների կրճատումը նույնպես խթանեց ազգային արդյունաբերության աճին։ Հատկապես արագ էին զարգանում տեքստիլ և թեթև արդյունաբերության մյուս ճյուղերը, ինչպես նաև ցեմենտի ու քիմիական արդյունաբերությունը. սկսվեց նավթի արտադրությունը (1912 թ.՝ 7 հազ. տ, 1922 թ.՝ 455,5 հազ. տ), ավելացավ էլեկտրաէներգիայի արտադրությունը։ Արագորեն աճում էին քաղաքները, որտեղ ապրում էր Արգենտինայի 9-միլիոնանոց բնակչության կեսից ավելին։ Հանրապետության մայրաքաղաք Բուենոս Այրեսում 20-ական թվականների սկզբին հաշվվում էր 2 մլն-ից ավելի բնակիչ։ Արագացավ ազգային բուրժուազիայի ձևավորման պրոցեսը, որը ներկայացված էր տեքստիլ, սննդի և արդյունաբերության մի քանի այլ ճյուղերի մանր ու միջին ձեռնարկատերերով, ինչպես նաև առևտրականներով։ Աճում էր բանվոր դասակարգի թիվը. գրեթե կես միլիոն բանվորներ զբաղված էին արդյունաբերության մեջ (չհաշված շինարարներին, տրանսպորտայիններին և գյուղատնտեսական բանվորներին)։ Կապիտալիզմը զարգանում էր նաև գյուղատնտեսության մեջ։

Եվ այնուամենայնիվ չնայած այդ տեղաշարժերին, Արգենտինան առաջին համաշխարհային պատերազմից հետո էլ մնում էր արդյունաբերական տեսակետից թույլ զարգացած երկիր, որը տնտեսապես կախման մեջ էր գտնվում իմպերիալիստական պետություններից։ Օտարերկրյա կապիտալը վերահսկում էր հիմնականում բանկերին, երկաթուղիներին, արդյունաբերական խոշոր ձեռնարկություններին, ընդարձակ հողային տիրույթներին։ Պատերազմի նախօրյակին օտարերկրյա բոլոր կապիտալներդրումների $^2/_3$-ը, մոտ 2 միլդ դոլլար, բաժին էր ընկնում Անգլիային։ Պատերազմի և հետպատերազմյան տարիներին, օգտվելով Լատինական Ամերիկայի նկատմամբ եվրոպական տերությունների ուշադրության թուլացումից, երկրում ակտիվ էքսպանսիա ծավալեց ԱՄՆ-ը։ 1913 թ. մինչև 1929 թ. ամերիկյան կապիտալներդրումների գումարն Արգենտինայում աճեց 40 մլն-ից մինչև 331,8 մլն դոլլարի, այն դեպքում երբ անգլիական կապիտալներդրումները համարյա չավելացան։ Դա հասցրեց անգլո-ամերիկյան միջիմպերիալիստական հակասությունների սրմանը Արգենտինայում։

Գյուղատնտեսության մեջ տիրապետում էր լատիֆունդիզմը։ Օգտագործվող հողի 80 տոկոսից ավելին բաժին էր ընկնում ավելի քան 1000 հա ունեցող լատիֆունդիաներին։ Հողագործների 72 տոկոսը, սեփական հողաբաժիններ չունենալով, աշխատում էր լատիֆունդիստների հողում։ Լատիֆունդիաներում կապիտալիստական վարձակալությունը զուգակցվում էր ստրկական վարձակալության կիսաֆեոդալական ձևերի, բատրակ-պեոնների հարկադիր աշխատանքի հետ։ Կալվածատերերը վարում էին մոնոկուլտուրական տնտեսություն, որը կողմնորոշվում էր դեպի արտահանությունը, և շահագրգռված չէին ազգային արդյունաբերության և ներքին շուկայի զարգացմամբ։ Դա կալվածատիրական օլիգարխիային դարձնում էր օտարերկրյա կապիտալի և նրա հետ կապված առևտրական ու ֆինանսական շրջանների բնական դաշնակիցը։

Արգենտինայի ժողովրդական մասսաները գտնվում էին կրկնակի՝ օտարերկրյա մոնոպոլիաների և «սեփական» շահագործողների կեղեքման տակ։ Կապիտալիստների կամայականությունը փաստորեն սահմանափակված չէր, աշխատանքային օրենսդրություն գործնականում գոյություն չուներ։ Աշխատանքի և կյանքի ծանր պայմանները պատերազմի տարիներին է՛լ ավելի վատացան թանկության և հարկերի աճի հետևանքով։ Բուենոս Այրեսում, օրինակ, բանվորների ռեալ աշխատավարձը 1918 թ. 1914 թ. համեմատությամբ կրճատվեց 38 տոկոսով։

Սոցիալական ու դասակարգային հակասությունների աճը պատերազմի վերջին և հետպատերազմյան առաջին տարիներին բանվորական ու դեմոկրատական շարժման վերելք առաջացրեց։

Ռադիկալների իշխանության գալուխ անցնելը։ Իրիգոյենի կառավարությունը (1916—1922 թթ.)

Համաժողովրդական դեմոկրատական շարժման վերելքը 1916 թ. հասցրեց օտարերկրյա, գլխավորապես անգլիական կապիտալի հետ կապված հողագործական օլիգարխիայի հեռացմանն իշխանությունից։ Պրեզիդենտական ընտրություններում հաղթեց օպոզիցիայի առաջատար կուսակցությունը՝ քաղաքացիական ռադիկալ միությունը (ռադիկալներ), որն օլիգարխիական ռեժիմի դեմ մղած տեսական պայքարի միջոցով իր կողմն էր գրավել բնակչության լայն խավերին։ 1916 թ. հոկտեմբերի 12-ին հանրապետության պրեզիդենտ դարձավ մասսաների մեջ ժողովրդականություն վայելող 64-ամյա Իպոլիտո Իրիգոյենը, որը ռադիկալների կուսակցության պարագլուխն էր և նրա հիմնադիրներից մեկը։ Քաղաքացիական ռադիկալ միությունը օլիգարխիական ռեժիմի հանդեպ օպոզիցիոն տրամադրված արգենտինական հասարակության՝ լիբերալ կալվածատերերից մինչև աշխատավորները, տարբեր խավերի ներկայացուցիչների խայտաբղետ միավորումն էր։ Սակայն հիմնականում կուսակցությունն արտահայտում էր արգենտինական ազգային բուրժուազիայի շահերը։

Ժողովրդական շարժման շնորհիվ անցնելով իշխանության գլուխ, Իրիգոյենի կառավարությունը անցկացրեց մի քանի առաջադիմական միջոցառումներ։ Երկար տարիներից հետո առաջին անգամ երկրում հաստատվեց սահմանադրական ռեժիմ և վերականգնվեցին բուրժուա-դեմոկրատական ազատությունները։ Անցկացվեց ռեակցիոն տարրերից իշխանության կենտրոնական ու պրովինցիալ մարմինների զտում։ Իրիգոյենը փորձեց սահմանափակել լատիֆունդիզմի տիրապետությունը գյուղատնտեսության մեջ, պաշտպանել մանր ու միջին սեփականատերերին։ Այդ նպատակով ձեռնարկվեց մի

քանի խոշոր լատիֆունդիաների մասնակի բռնագրավում, որոշ չափով բարելավվեց վարձակալների դրությունը։

Նոր կառավարությունը խրախուսում էր ազգային արդյունաբերության զարգացումը, ձգտում թուլացնել օտարերկրյա մոնոպոլիաների բռնադատումը։ Արտասահմանից ունեցած տնտեսական կախումը հաղթահարելու գործում Իրիգոյենը առաջնակարգ նշանակություն էր տալիս պետական վերահսկողության ներքո նավթային և նավթավերամշակման արդյունաբերության զարգացմանը։

Կառավարությունը մեծ ջանքեր ձեռնարկեց լուսավորության և բարձրագույն կրթության ասպարեզում։ Բացվեցին հազարավոր նոր դպրոցներ։ 1919 թ. անցկացվեց դեմոկրատական համալսարանական ռեֆորմ։

Իրիգոյենի կառավարության առաջադիմական միջոցառումները, սակայն, չշոշափեցին օտարերկրյա մոնոպոլիաների և կալվածատիրական վերնախավի հիմնական տնտեսական դիրքերը։ Դրա մեջ արտահայտվեցին ռադիկալների դասակարգային սահմանափակությունը և անհետևողականությունը։ Ինքը՝ Իրիգոյենը, լինելով անկեղծ դեմոկրատ ու հայրենասեր, միաժամանակ հեղափոխական բռնության ու դասակարգային պայքարի հակառակորդ էր։ Հանուն ազգի անիրական «միասնության» պահպանման նա պատրաստ էր անորոշ ժամանակով հետաձգել նախատեսված շատ վերափոխությունների իրականացումը։

Իրիգոյենի կառավարության քաղաքականության դասակարգային բնույթը ցայտուն կերպով արտահայտվեց բանվորական շարժման հանդեպ նրա ունեցած վերաբերմունքի մեջ։ Դասակարգային պայքարի սրման պայմաններում ռադիկալների կառավարությունը զգալի զիջումների դիմեց բանվոր դասակարգի օգտին։ Հռչակվեց 8-ժամյա աշխատանքային օր, զգալիորեն բարձրացվեց աշխատավարձը, սահմանափակվեց անչափահասների ու կանանց աշխատանքի շահագործումը, մի քանի ճյուղերի բանվորների համար մտցվեց թոշակային ապահովություն։ Առաջին անգամ, թեկուզև վերապահումներով, ճանաչվեց կազմակերպությունների ստեղծման և գործադուլների՝ բանվորների ունեցած իրավունքը։ Իրիգոյենի կառավարության բանվորական օրենսդրությունը ինչ-որ չափով սահմանափակում էր ձեռնարկատերերի կամայականությունները և թեթևացնում աշխատավորների իրավական ու նյութական դրությունը։ Սակայն ինքնըստինքյան այն չէր կարող արմատականորեն փոխել բանվորների դրությունը, կյանքի մեջ արմատավորվում էր ծայրահեղորեն դանդաղ և մշտապես խախտվում էր։ Դրա հետ միասին կառավարությունն ամեն կերպ ձգտում էր բանվոր դասակարգի մեջ արմատավորել դասակարգային համագործակցության տրամադրություններ։ Նա միաժամանակ երկաթով ու արյունով ճնշեց Բուենոս Այրեսի բանվորների (1919 թ.) և Պատագոնիայի բատրակների (1921 թ.) ելույթները, որով և իրենից վանեց աշխատավորների զգալի մասին։

Արտաքին քաղաքականության մեջ Իրիգոյենի կառավարությունը պաշտպանում էր ազգային սուվերենության, պետության ներքին գործերում չմիջամտելու, միջազգային համագործակցության և խաղաղության պաշտպանության սկզբունքները։ Նա հրաժարվեց մտնել համաշխարհային պատերազմի մեջ, այն դատապարտելով որպես զավթողական ու թալանչիական, չնայած ԱՄՆ-ի և Անտանտի մյուս տերությունների, ինչպես նաև երկրի ներքին օպոզիցիայի ճնշման։ Արգենտինան դատապարտեց Վերսալյան սիստեմը, հայտարարելով, որ այն հղի է նոր պատերազմով։ Իրիգոյենի կառավարությունն

արտահայտվեց Սովետական Ռուսաստանում Անտանտի ինտերվենցիայի դեմ և նրա հետ հաստատեց առևտրական ու տնտեսական կապեր։ 1921 թ. Արգենտինան պարենային օգնություն ցույց տվեց սովի մեջ գտնվող Պովոլժիային։

Արգենտինան հանդես եկավ լատինաամերիկյան հանրապետությունների գործերում ԱՄՆ-ի միջամտության դեմ, համերաշխություն հայտնեց ամերիկյան ինտերվենտների դեմ Կենտրոնական Ամերիկայի հայրենասերների մղած պայքարի հետ։ Իրիգոյենը փորձում էր ստեղծել լատինաամերիկյան հանրապետությունների դաշինք, որը կարողանար դիմակայել ԱՄՆ-ի էքսպանսիային։ Սակայն լատինաամերիկյան ոչ մի կառավարություն չհամարձակվեց պաշտպանել այդ մարտակոչը։ «Լատինական Ամերիկայում հազիվ թե լինի մի պրեզիդենտ, որն ընդունակ լինի կանգնել այնպիսի ատրճանակի կրակոցի առջև, որի լիցքը 200 հազ. դոլլար է»,— դառնությամբ ասում էր Իրիգոյենը։

Բանվորական շարժման վերելքը 1917—1921 թթ.։ Կոմկուսի կազմավորումը

Արգենտինայի քաղաքական թատերաբեմում ազգային բուրժուազիայի ակտիվացումը համընկավ պրոլետարիատի դասակարգային պայքարի աճի հետ։ Պատերազմի տարիներին աշխատավորության դրությունը վատացումը անմիջական պատճառ դարձավ 1917 թ. Արգենտինայում սկսված բանվորական շարժման վերելքի համար։ Այդ պայքարի հաջող զարգացմանը նպաստեցին արդյունաբերական բանվորների ավելի քան կեսի համակենտրոնացումը Բուենոս Այրեսի շրջանում, խոշոր ձեռնարկությունների առկայությունն արտադրության մի քանի ճյուղերում, Եվրոպայի առաջավոր կապիտալիստական երկրներից բանվորների մասսայական իմիգրացիան Արգենտինա։ Դրա հետ մեկտեղ շահագործման կապիտալիստական ձևերի՝ իմպերիալիստական կեղեքման հետ սերտ միահյուսումը, մանր արտադրության գերակշռությունը, ինդուստրիալ պրոլետարիատի ձևավորված կադրերի բացակայությունը նպաստավոր հող էին ստեղծում ռեֆորմիզմի ու անարխո-սինդիկալիզմի տարածման համար։

Բանվորների շրջանում զգալի ազդեցություն ուներ սոցիալիստական կուսակցությունը։ Սակայն կուսակցության ռեֆորմիստական ղեկավարությունը Խուան Բ. Խուստոյի գլխավորությամբ ավելի ու ավելի էր գլորվում դասակարգային համագործակցության դիրքերը։ Նոր Արգենտինայի կառուցումը սոցիալիստների պարագլուխները կապում էին «ԱՄՆ-ի եռանդուն կապիտալիզմի» օգնության հույսերի հետ։

Դասակարգային պայքարի աճմանը համեմատ, ի հակակշիռ ռեֆորմիզմի, ուժեղանում էր անարխո-սինդիկալիզմի ազդեցությունը։ Առաջին պահին անարխո-սինդիկալիստները նպաստում էին կապիտալի ու ռեակցիայի դեմ մղվող ակտիվ պայքարի մեջ բանվորների ներգրավմանը։ Այդ նույն ժամանակ անարխո-սինդիկալիզմի, ինչպես և ռեֆորմիզմի լայն տարածումը վկայում էր արգենտինական պրոլետարիատի դաղափարական թուլության մասին։

Այսպիսին էր իրադրությունն արգենտինական բանվորական շարժման մեջ 1917 թ., երբ երկրում սկսեց բարձրանալ գործադուլային շարժման ալիքը։ Ֆեդերալ օկրուգում (մայրաքաղաքն առանց արվարձանների) 1917 թ. գործադուլ արեց 136 հազ. մարդ, իսկ 1919 թ.՝ արդեն 300 հազարից ավելի (1916 թ.՝ 24 հազ.)։ Գործադուլները տարածվեցին նաև Ռոսարիոյում, Կորդովայում և մյուս քաղաքներում։ Բանվորները պահանջում էին 8-ժամյա աշխատանքային օր, աշխատավարձի բարձրացում, աշխատանքի պայմանների բարելավում։

Արգենտինայի բանվորական շարժման վրա մեծ ազդեցություն ունեցավ

Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Բանվորների միտինգներում ու ժողովներում հաճախ էին հնչում Սովետական Ռուսաստանի հետ համերաշխության լոզունգներ, նրա օրինակին հետևելու կոչեր։ Ճիշտ է, Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը և նրա փորձը այդ տարիներին չէին կարող իսկապես գիտակցվել արգենտինական բանվորների կողմից (բացի ամենաառաջավորներից), բայց նրանք դասակարգային բնազդով գլխի էին ընկնում, որ խոսքը վերաբերում է շահագործումից աշխատավորների ազատագրությանը և նոր արդարացի հասարակության կառուցմանը։ Դա նպաստեց մարտական տրամադրությունների աճին։ Բանվորական շարժման վերելքի բարձրագույն կետ դարձավ Բուենոս Այրեսի բանվորների 1919 թ. հունվարի 9—15 կայացած ընդհանուր գործադուլը, որը վերաճեց փողոցային ընդհարումների և բարիկադային մարտերի։ Միայն մի քանի օր դիմադրելուց հետո զորքերը կարողացան ճնշել մայրաքաղաքի բանվորների ելույթը, որի հետ դաժանորեն հաշվեհարդար տեսնելու համար այն ստացավ «արյունոտ շաբաթ» անունը։

Պայքարը փոխանցվեց գյուղական վայրերը։ Հատկապես համառ ու տևական էր 1919—1921 թթ. Սանտա Ֆե պրովինցիայում և Պատագոնիայում մաները սեփականատերերի, վարձակալների ու բատրակների շարժումը։ Պատագոնիայում բատրակների պայքարը 1921 թ. վերաճեց ապստամբության։ Ապստամբներն ավերում էին լատիֆունդիստների կալվածատները։ Միայն զորքեր ուղարկելով և բռնությունների դիմելով, իշխանությունները կարողացան ճնշել ապստամբությունը։

Աշխատավորներից անմիջապես հետո 1918—1919 թթ. պայքարի ելան ուսանողությունը և առաջադեմ մտավորականությունը, որոնք պահանջում էին լուսավորության սիստեմի դեմոկրատացում և համալսարանական ռեֆորմներ։ Շարժումը գլխավորեց ականավոր գիտնական ու հասարակական գործիչ Խոսե Ինխենիերոսը, որը մեծ դեր խաղաց Արգենտինայում Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարների պրոպագանդման գործում։ 1919 թ. այդ շարժումն ավարտվեց նրա մասնակիցների հիմնական պահանջների բավարարմամբ։

1917—1921 թթ. դասակարգային մարտերը և Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարների թափանցումը Արգենտինա արագացրին առաջավոր բանվորների անցումը դեպի գիտական սոցիալիզմի դիրքերը։ Դեռ 1917 թ. աշնանը ձախ սոցիալիստները Վիկտորիո Կոդովիլյայի և Ռոդոլֆո Գիոլդիի գլխավորությամբ դուրս եկան սոցիալիստական կուսակցությունից։ 1918 թ. հունվարի 5—6-ը նրանք համագումար հրավիրեցին Բուենոս Այրեսում և հիմնադրեցին արևմտյան կիսագնդում առաջին կոմունիստական կուսակցությունը (մինչև 1920 թ. այն կոչվում էր ինտերնացիոնալ սոցիալիստական կուսակցություն)։ Սկզբում Արգենտինայի երիտասարդ և անփորձ կոմկուսին հատուկ էին աղանդավորական բնույթի որոշ սխալներ (հակախմբերիալիստական և ագրարային հեղափոխության, բուրժուա-դեմոկրատական ազատությունների պաշտպանության համար պայքարի էտապի անհրաժեշտության չհասկանալը, ազգային բուրժուազիային ռեակցիայի լագերի մեջ մտցնելը, ռեֆորմիստական արհմիություններում աշխատելու կարևորության չհասկանալը և այլն)։ Սակայն, չնայած իր փոքրաթվությանն ու սխալներին, կոմկուսը սկզբից ևեթ ակտիվ մասնակցություն ունեցավ դասակարգային մարտերին, անձնազոհաբար պաշտպանեց բանվորների դասակարգային շահերը, ծավալեց գիտական սոցիալիզմի գաղափարների և Հոկտեմբերյան հեղափոխության փորձի պրոպագանդա։

1921 թ. վերջին բանվորական շարժման ալիքն Արգենտինայում ընկավ։ Ի հայտ եկան պրոլետարական ելույթների տարերայնությունը, անկազմակերպվածությունը և գաղափարական թուլությունը։ Տեղի չունեցավ բանվորների, գյուղացիների և ուսանողության ելույթների միաձուլում ընդհանուր հոսանքի մեջ։ Այստեղ իր դերը խաղաց նաև ռադիկալների կառավարության ճկուն քաղաքականությունը։ Սակայն 1917—1921 թթ. մարտերը կառավարող դասակարգերին ստիպեցին զգալի զիջումների դիմել։ Հատկապես 1919 թ. հունվարյան իրադարձություններից հետո բավարարվեցին աշխատավորության շատ պահանջներ։

Քաղաքական իրադրությունն Արգենտինայում 20-ական թվականների վերջին։ 1930 թ. զինվորական հեղաշրջումը և կառավարող դասակարգերի քաղաքականությունը

20-ական թվականների կեսերին ռադիկալների կառավարող կուսակցությունը պառակտվեց երկու խմբավորման։ Ռադիկալների առաջին խումբը, որի պարագլուխ Մարսելո Ալվեարը 1922—1928 թթ. զբաղեցնում էր հանրապետության պրեզիդենտի պոստը, արտահայտում էր լիբերալ կալվածատերերի և բուրժուազիայի չափավոր շրջանների շահերը և ձգտում էր կոմպրոմիսի հասնել ռեակցիայի և իմպերիալիզմի ուժերի հետ։ Ալվեարի կառավարությունը հրաժարվեց իր նախորդի կողմից սկսված ռեֆորմների հետագա իրականացումից։ Իրիգոյենի կողմնակիցները, որի հետևից գնում էր ռադիկալների մեծամասնությունը, պահանջում էին հետագայում ևս անցկացնել այնպիսի չափավոր ռեֆորմներ, որոնք աստիճանաբար թուլացնեին օտարերկրյա կապիտալի և կալվածատիրական-առևտրական օլիգարխիայի դիրքերը։ Իրիգոյենի երկրորդ կառավարությունը, որն իշխանության գլուխ անցավ 1928 թ., եռանդուն փորձ ձեռնարկեց ազգայնացնելու նավթային և նավթավերամշակման արդյունաբերությունը, որը սուր կոնֆլիկտ առաջացրեց ամերիկյան նավթային ընկերությունների և երկրի ներսի աջ ուժերի հետ։ Իրիգոյենի կառավարությունը շարունակում էր հանդես գալ Լատինական Ամերիկայի գործերում ԱՄՆ-ի միջամտության դեմ, համերաշխվեց ամերիկյան օկուպանտների դեմ Սանդինոյի գլխավորությամբ նիկարագուական ապստամբների մղած հերոսական պայքարի հետ։ Այս բոլորը հասցրեց արգենտինա-ամերիկյան հարաբերությունների խիստ սրմանը։ Բանը հասավ դեսպանների փոխադարձ ետ կանչմանը։

Կոնֆլիկտի մեջ գտնվելով ամերիկյան մոնոպոլիաների և ԱՄՆ-ի կառավարության հետ, Իրիգոյենի կառավարությունն աշխատում էր պահպանել ավանդական կապերը Անգլիայի՝ ամերիկյան այդ մրցակցի հետ։

Ելնելով ազգային շահերից, Իրիգոյենի կառավարությունը ընդլայնեց առևտրական ու տնտեսական հարաբերությունները Սովետական Միության հետ։ Ստորագրվեց համաձայնագիր Արգենտինային նավթ և նավթային արդյունաբերության համար սարքավորումներ մատակարարելու մասին։

Իրիգոյենի ներքին ու արտաքին քաղաքականությունը նրա դեմ առաջ բերեց ամերիկյան մոնոպոլիաների, կալվածատիրական-առևտրական ու ֆինանսական օլիգարխիայի և զինվորականության համախմբում։ Ռեակցիայի լագերին հարեցին աջ ռադիկալները։ Այդ նույն ժամանակ, սոցիալ-տնտեսական արմատական վերափոխություններ չանցկացնելով, ճնշելով աշխատավորների մասսայական պայքարը, Իրիգոյենի կառավարությունը վախենում էր հեղա-

փոխական նոր վերելքից և վճռական միջոցներ չէր ձեռնարկում ռեակցիային ճնշելու համար։ Իսկ վերջինս պատրաստվում էր բացահայտ ելույթի, միայն հարմար պահի սպասելով։

Այդ պահը ներկայացավ 1929 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի սկսվելով։ Կրճատվեց Արգենտինայի արտաքին առևտուրը (բացառությամբ ՍՍՀՄ-ի հետ առևտրի), ընկավ գյուղատնտեսական ու արդյունաբերական արտադրությունը։ Ազգային արտադրանքի ընդհանուր արժեքը 1931 թ. նվազեց գրեթե 30 տոկոսով։ Քայքայվեցին ֆինանսները։ Սնանկանում էին քաղաքի ու գյուղի մանր սեփականատերերը։ Գործազուրկների թիվը երկրում հասնում էր մինչև կես միլիոնի։ Իջավ ռեալ աշխատավարձը։

Տնտեսական դրության սրումը և դժգոհության աճը օգտագործեց աջ ռեակցիան, որին օգնում էր ամերիկյան իմպերիալիզմը։ 1930 թ. սեպտեմբերի 6-ին բանակային զորամասերը գեներալ Խոսե Ուրիբուրուի հրամանատարությամբ հեղաշրջում կատարեցին։ Ակտիվ դիմադրություն ցույց չտված Իրիգոյենը, չնայած 78-ամյա տարիքին, ձերբակալվեց և աքսորվեց Լա-Պլատայի կղզիներից մեկը։ Խոսե Ուրիբուրուն իրեն հռչակեց արտակարգ լիազորություններով օժտված ժամանակավոր պրեզիդենտ։ Իշխանությունն անցավ օտարերկրյա կապիտալի հետ կապված կալվածատիրական-առևտրական և ֆինանսական օլիգարխիայի, ինչպես նաև զինվորականության ու բարձր հոգևորականության ձեռքը։ Սահմանադրական երաշխիքները վերացվեցին և մտցվեց պաշարողական դրություն, սկսվեցին բռնությունները։ Ստեղծվեց «կոմունիստական գործունեության» դեմ պայքարելու «հատուկ բաժին»։ Առաջացավ ֆաշիստական տիպի «Արգենտինյան քաղաքացիական լեգեոն» տեռորիստական զինվորականացված կազմակերպությունը։ Նոր կառավարությունը անմիջապես ստացավ ԱՄՆ-ի աջակցությունն ու ճանաչումը, երկրում ծավալվեց հակասովետական կամպանիա։

Սակայն Ուրիբուրուի կառավարության ծայրահեղ ոչ ժողովրդականությունը բնակչության լայն խավերում և սրանց աճող հակազդեցությունը նոր ուժիմի կողմնակիցներին ստիպեց 1931 թ. հրաժարվել կառավարման բացահայտ դիկտատորական մեթոդներից։ 1932 թ. փետրվարին սահմանադրական ռեժիմը ձևականորեն վերականգնվեց։ Պրեզիդենտ դարձավ երկրի պահպանողական ուժերին իր շարքերում համախմբած նոր ազգային-դեմոկրատական կուսակցության թեկնածու գեներալ Ավգուստին Խուստոն (1932—1938 թթ.), որն անցյալում աջ ռադիկալ էր, ապա 1930 թ. հեղաշրջման ակտիվ մասնակից։

Խուստոյի կառավարությունը հիմնականում շարունակում էր իր նախորդի քաղաքականությունը։ 1932 թ. վերջից նա վերստին սկսեց երկարատև ժամանակով պաշարողական դրություն մտցնել, անցկացնել դեմոկրատական ազատությունների սահմանափակման և կրճատման, բանվորական ու դեմոկրատական շարժման հանդեպ բռնությունների քաղաքականություն։ Մշակվեց մի օրինագիծ «կոմունիստական գործունեության» արգելման մասին։

Իրենց տնտեսական քաղաքականությամբ կառավարող շրջաններն աշխատում էին աջակցել լատիֆունդիստներին ու խոշոր ձեռնարկատերերին, ներգրավել օտարերկրյա կապիտալներ և տնտեսական ճգնաժամի հիմնական ծանրությունը դնել աշխատավորության վրա։ 1933 թ. Անգլիայի հետ ստորագրվեց առևտրական պայմանագիր, որն Արգենտինային ապահովում էր տավարի մսի իրացման կայուն շուկայով։ Դրա փոխարեն անգլիական մոնոպոլիաներն Արգենտինայի էկոնոմիկայում ստացան մի շարք նոր արտոնություններ։ 1934 թ.

սկսվեց արդյունաբերության աշխուժացումը, որը 1935—1937 թթ. վերաճեց արդյունաբերական արտադրության վերելքի։ Սակայն շարունակվում էր հարձակումը ժողովրդական զանգվածների կենսապայմանների վրա։ Կյանքի գինն անընդհատ աճեց ընդհուպ մինչև 1936 թ. երկրորդ կեսը։ Իշխանություններն ստիպված էին խոստովանել, որ նույնիսկ մայրաքաղաքում՝ նրա առավել բարձր կենսամակարդակով հանդերձ, բանվորների մեծ մասի աշխատավարձը չէր հասնում կենսական մինիմումին։ Գործազուրկների թիվը երկրում մնում էր 300 հազ. մարդու մակարդակի վրա։

30-ական թվականներին Արգենտինայի անգլիական կողմնորոշումը պահպանվեց արգենտինական էկոնոմիկայում և արտաքին առևտրում Անգլիայի գերակշռող դիրքերի կապակցությամբ։ Այդ տարիներին ուժեղացավ գերմանական կապիտալի էքսպանսիան Արգենտինայում։ Հիտլերյան Գերմանիան ջանում էր Արգենտինան, Չիլին ու Բրազիլիան հենակետ դարձնել Արևմտյան կիսագունդ թափանցելու համար։ 1933 թվականից Արգենտինայում ակտիվ գործունեություն ծավալեցին գերմանական իմիգրանտները, որոնք արգենտինական տերիտորիայում ստեղծեցին գերմանական նացիոնալ-սոցիալիստական կուսակցության մասնաճյուղ։

Կառավարող շրջանների ռեակցիոն ներքին քաղաքականությունը ճանապարհ էր հարթում ծայրահեղ աջ ուժերի համար, որոնք համակրում էին Եվրոպայի ֆաշիստական ռեժիմներին, ձգտում լիովին վերացնել սահմանադրական դրությունները և հասնել տեռորիստական դիկտատուրայի։ 1933 թվականից ավելի հաճախակի դարձան «արգենտինյան քաղաքացիական լեգեոնի» հարձակումները բանվորական միտինգների և առաջադիմական կազմակերպությունների վրա։ 1935 թ. կոնգրեսի պատերի ներսում տեռորիստական ակտեր կատարվեցին օպոզիցիայի դեպուտատների դեմ։ Ծայրահեղական տարրերն ուժեղ ազդեցություն ունեին կառավարող կուսակցության մեջ, բանակում, կառավարչական ապարատում։ Նրանց պարագլուխներից մեկը՝ Մանուել Ֆրեսկոն, գրավեց Բուենոս Այրեսի պրովինցիայի նահանգապետի պաստը։ Բռնությունների ռեժիմ հաստատելով երկրի գլխավոր պրովինցիայում, նա ջանում էր իշխանությունն իր ձեռքը գցել։ Ծայրահեղական տարրերի հետ կոմպրոմիսի հասնելու Խուստոյի կառավարության ձգտումն է՛լ ավելի լարեց իրադրությունը։

Պայքար հանուն միասնական բանվորական և Ժողովրդական ճակատի

Օտարերկրյա մոնոպոլիաների, կառավարության և ծայրահեղ ռեակցիայի ուժերի հարձակումը 30-ական թվականների կեսերին առաջ բերեց բանվորական ու դեմոկրատական շարժման ակտիվացում։ 1933 թ. հուլիսին շնորհազրկված պրեզիդենտ և ռադիկալների առաջնորդ Իպոլիտո Իրիգոյենի թաղումը վերածվեց հակակառավարական վիթխարի ցույցի, որին մասնակցեց մի քանի հարյուր հազար մարդ։ 1935 թ. փետրվար-ապրիլին Սանտա Ֆեում, Լա Պլատայում, Տուկումանում տեղի ունեցած ժողովրդական մասսայական ելույթների ընթացքում իրականացվեց կոմունիստների, սոցիալիստների և ռադիկալների համագործակցություն։ 1935 թ. մայիսի 1-ին Բուենոս Այրեսում բազմամարդ ցույց կայացավ բանվոր դասակարգի և դեմոկրատական ուժերի միասնության լոզունգների ներքո։ 30-ական թվականների կեսերին գյուղացիների և գյուղատնտեսական բանվորների հուզումներն ու գործադուլները տարածվեցին Սանտա Ֆե, Տուկուման պրովինցիաներում և երկրի հյուսիս-արևմտյան շրջաններում։

Երկար ժամանակ կոմկուսը, որը չէր ազատվել աղանդավորական սր-

խալներից, չէր կարողանում տակտիկական ու ստրատեգիական ճիշտ գիծ իրականացնել։ 1928 թ. VIII համագումարում ԱԿԿ-ը ճիշտ որոշեց առաջիկա հեղափոխության բնույթն Արգենտինայում որպես բուրժուա-դեմոկրատական, ագրարային և հակաիմպերիալիստական հեղափոխություն, սակայն նրա կոնկրետ մեկնաբանման մեջ դեռևս տեղ էին գտել սխալ պատկերացումներ։ Ենթադրվում էր, որ այդ հեղափոխությունը պետք է իրականացնի գյուղացիության հետ դաշինք կնքած բանվոր դասակարգը և հասատի սովետների ձևով հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա։ Բուրժուական և մանրբուրժուական բոլոր կուսակցությունները, ինչպես նաև ռադիկալներն ու սոցիալիստները մտցվում էին ռեակցիայի միասնական լագերի մեջ։ 1929 թ. կոմունիստները սակավաթիվ ձախ արհմիությունները միավորեցին «Դասակարգային կոմիտեի» մեջ։ Դա նրանց մեկուսացրեց երկրի հիմնական արհմիութենական կենտրոնից՝ աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիայից (ԱԿԿ), որը 1930 թ. ստեղծեցին ռեֆորմիստներն ու աջ անարխո-սինդիկալիստները։

Դասակարգային և դեմոկրատական պայքարում գրաված ակտիվ ավանգարդային դերը, ինչպես նաև Կոմինտերնի VII կոնգրեսի նախապատրաստման ու անցկացման ժամանակաշրջանում միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման փորձի յուրացումը Արգենտինայի կոմկուսին թույլ տվեցին ազատվել այդ սխալներից։ 1935 թ. առաջին կեսին արգենտինական կոմկուսը հանեց բանվորա-գյուղացիական հեղափոխության և սովետական իշխանության լոզունգը և մշակեց երկրի բոլոր առաջադիմական ուժերի, այդ թվում նաև մանր և ազգային բուրժուազիայի Ժողովրդական ճակատի համար պայքարի ծրագիրը։ Ժողովրդական ճակատի նպատակը, նշում էր ԱԿԿ Կենտկոմը 1935 թ. հունիսին, պետք է դառնան համաժողովրդական դիմադրության կազմակերպումը ռեակցիայի ուժերի հարձակման դեմ և կալվածատիրական-ֆինանսական օլիգարխիայի հեռացումը իշխանությունից։ Միայն այդ նախնական խնդիրների իրականացումը կարող էր ուղի բացել դեմոկրատական և հակաիմպերիալիստական արմատական վերափոխությունների համար։ Կոմկուսը նորովի առաջադրեց միասնական բանվորական ճակատի հարցը։ 1935 թ. օգոստոսին «դասակարգային կոմիտեն» հայտարարեց իր ինքնացրման մասին և բոլոր ձախ արհմիություններին կոչ արեց մտնել ԱԿԿ-ի մեջ, որպեսզի երկրի հիմնական արհմիութենական կենտրոնը վերածի բանվորական շարժման միասնության համար պայքարի թատերաբեմի։

1935 թ. հոկտեմբերի 23-ին ծագեց Բուենոս Այրեսի շինարարների ընդհանուր գործադուլը, որը ղեկավարում էին կոմունիստները։ Գործադուլի մեջ ներգրավվեց ավելի քան 60 հազ. մարդ։ Մայրաքաղաքի պրոլետարական կազմակերպությունները, ի նշան շինարարների հետ համերաշխության, 1936 թ. հունվարի 7—8-ը անցկացրին Բուենոս Այրեսի բանվորների 48-ժամյա ընդհանուր գործադուլ, որին մասնակցեցին բնակչության նաև ոչ պրոլետարական խավերը։ Միտինգներում և ցույցերում այդ օրերին նրանց մասնակիցները պահանջում էին դադարեցնել սովի ու աղքատության քաղաքականությունը, միջոցներ ձեռնարկել օտարերկրյա մոնոպոլիաների բռնադատման դեմ, համախմբել բոլոր առաջադիմական ուժերն ընդդեմ ռեակցիայի ու ֆաշիզմի սպառնալիքի։ Մի քանի վայրերում կառուցվեցին բարիկադներ, տեղի ունեցան ոստիկանության ու զորքերի հետ ընդհարումներ։ Հունվարի 7—8-ի իրադարձություններից հետո բավարարվեցին շինարարների պահանջներն աշխատանքի պայմանների բարելավման և աշխատավարձի բարձրացման մասին։ Ամբողջ 1936 թ. ընթացքում տեղի էին ունենում մի շարք ճյուղերի բանվորների հաջող գործադուլներ։

Շինարարների գործադուլի ժամանակաշրջանում և հունվարյան օրերին պրոլետարական կազմակերպությունների գործողությունների միասնությունը կարևոր տեղաշարժերի հասցրեց միասնական բանվորական ճակատի համար մղվող պայքարում։ 1936 թ. մարտի 31—ապրիլի 2-ին տեղի ունեցավ ԱԿԿ-ի համագումարը, որն անցավ միասնության նշանարանով։ Համագումարի պահին ԱԿԿ-ը աճեց թվապես, կոնֆեդերացիայի մի շարք խոշոր արհմիություններ գնում էին կոմունիստների հետևից։ Բանվորների ճնշման տակ ԱԿԿ-ի ռեֆորմիստական ղեկավարությունն ընդունեց գործողությունների մի ծրագիր, որը համապատասխանում էր բանվոր դասակարգի կենսական խնդիրներին։ Առաջին անգամ մի քանի կոմունիստներ ընտրվեցին ԱԿԿ-ի ընդլայնված ղեկավարության կազմում։

Բանվորական շարժման վերելքը և պրոլետարական կազմակերպությունների գործողությունների միասնության ասպարեզում եղած հաջողությունները հասցրին դեմոկրատական ուժերի ակտիվացմանը։ 1936 թ. մարտին օպոզիցիոն դեմոկրատական կազմակերպությունները ձայների մեծամասնություն ստացան կոնգրեսի դեպուտատների պալատի ընտրություններում։ Ապրիլի 25-ին սոցիալիստները, ռադիկալները և մի քանի ավելի փոքր խմբեր «Ժողովրդական ճակատ» բազմանշանակ անվան տակ ստեղծեցին միասնական պառլամենտական բլոկ։ Դեպուտատների պալատը կոնգրեսի աշխատանքը բոյկոտի ենթարկեց, կառավարությունից պահանջելով պահպանել սահմանադրական ազատությունները։ 1936 թ. մայիսի 1-ին ռադիկալները, սոցիալիստներն ու կոմունիստները Ժողովրդական ճակատի լոզունգով Բուենոս Այրեսում կազմակերպեցին 100-հազարանոց միասնական ցույց։ Իսկական առաջացավ Ժողովրդական ճակատի ստեղծման համար, որը պետք է ընդունակ լիներ իշխանությունից հեռացնելու Խուստոյի կառավարությունը։ Սոցիալիստական կուսակցության համագումարը ձայների մեծամասնությամբ արտահայտվեց Ժողովրդական ճակատի ստեղծման օգտին։

Սակայն, անտեսելով իրենց կուսակցությունների շարքային անդամների տրամադրությունները, ռադիկալների ու սոցիալիստների ղեկավարները մերժեցին կոմունիստների համառ պահանջները Ժողովրդական ճակատի ստեղծման մասին և գերադասեցին պայքարը սահմանափակել կոնգրեսի պատերով։ Դա կանխորոշեց նրա ելքը։ 1936 թ. սեպտեմբերին միջկուսակցական մրցակցության և նրա մասնակիցների տատանումների պատճառով «Ժողովրդական ճակատի» պառլամենտական բլոկը քայքայվեց։

Հետագա զարգացում չստացան բանվոր դասակարգի միասնության համար 1935—1936 թթ. մղված պայքարում եղած հաջողությունները։ Տիրող դասակարգերի որոշակի զիջումներից հետո բանվորական շարժման ալիքը 1937 թ. սկսեց անկում ապրել։ ԱԿԿ-ի ղեկավարության ռեֆորմիստական մեծամասնությունը չէր ցանկանում ընթանալ 1936 թ. համագումարի որոշումների իրականացման ուղիով։

Թեև 30-ական թվականներին միասնական բանվորական և Ժողովրդական ճակատ չստեղծվեցին, դրանց իրականացման համար մղված պայքարը հասցրեց որոշակի հաջողությունների։ Բանվորական շարժման, մասնավորապես ԱԿԿ-ի ներսում ուժեղացան ձախ տենդենցները, ուժեղացավ կոմունիստների ազդեցությունը։ 30-ական թվականների կեսերի բանվորական շարժման վերելքը կանգնեցրեց ռեակցիայի հարձակումը աշխատավորության կենսա-

պայմանների և իրավունքների վրա։ Մի շարք ճյուղերի բանվորներ հասան աշխատանքային օրվա կրճատմանը, աշխատավարձի բարձրացմանը և այլ զիջումների։

Դասակարգային պայքարի սրումը և ժողովրդական ճակատի համար մղված շարժումը կառավարող դասակարգերին ստիպեցին հրաժարվել տեռորիստական ռեժիմ հաստատելու փորձերից։ 1936 թ. հետո բռնությունները թուլացան, մերժվեց «կոմունիստական գործունեության արգելման» մասին օրինագիծը։ 1938 թ. փետրվարին պրեզիդենտ դարձավ ազգային-դեմոկրատական կուսակցության ձախ թևի ներկայացուցիչ Ռոբերտո Օրտիսը, որը օպոզիցիոն ուժերի նկատմամբ զիջումների դիմեց։ Միջոցներ ձեռնարկվեցին սահմանադրական ռեժիմի ամրապնդման և ծայրահեղ ռեակցիայի դիրքերի թուլացման համար։ Մասնավորապես Բուենոս Այրեսի պրովինցիայի նահանգապետի պաշտոնից հեռացվեց Մ. Ֆրեսկոն։

Ձեռք բերված հաջողություններն ավելի բարենպաստ պայմաններ էին ստեղծում բանվորական և դեմոկրատական շարժման հետագա զարգացման համար։

ԳԼՈՒԽ 25

ԲՐԱԶԻԼԻԱՆ
1918—1939 ԹԹ.

Ընդհանուր բնութագիր

Բրազիլիան աշխարհի խոշորագույն պետություններից մեկն է։ Տերիտորիայով նա գերազանցում է ամբողջ Եվրոպային (առանց ՍՍՀՄ-ի)՝ 8,5 մլն կմ²։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Բրազիլիայում ապրում էր 25—30 մլն մարդ։ Երկրի էկոնոմիկան այդ ժամանակ հետամնաց էր, արդյունաբերության մեջ գերակշռում էին մանր արհեստանոցները, երկրագործության մեջ տիրապետում էին մինչկապիտալիստական հարաբերությունները։ Իշխանությունը պատկանում էր Սան Պաուլու և Մինաս Ժերաիս պրովինցիաների պահպանողական բուրժուա-կալվածատիրական «սրճային» օլիգարխիային։ Բրազիլիան պատկանում էր այն երկրների կատեգորիային, որը Վ. Ի. Լենինը, բնութագրելով Արգենտինան, դասում էր այն երկրների շարքին, որոնք «քաղաքականապես, ձևականորեն անկախ են, այնինչ իրապես խճճված են ֆինանսական ու դիվանագիտական կախման ցանցերում»[1]։

Իմպերիալիզմի դարաշրջանի սկսվելով խիստ սրվեց Բրազիլիայում ազդեցության համար մրցակցությունն Անգլիայի, Գերմանիայի և ԱՄՆ-ի միջև։ XX դարի սկզբին զգալիորեն ընդլայնվեց հյուսիս-ամերիկյան և գերմանական կապիտալի էքսպանսիան, բայց իշխող դիրքերն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին պատկանում էին Անգլիային։ Բրազիլիայի ընդհանուր պետական պարտքը օտարերկրյա տերություններին մինչև 1915 թ. հասավ 0,5 մլրդ դոլլարի։ Անգլիական կապիտալներդրումները գնահատվում էին 1,1 մլրդ դոլլար՝ ԱՄՆ-ի 50 մլն դոլլարի ուղղակի կապիտալ ներդրումների համեմատությամբ։ Առևտրի ոլորտում գոյություն ուներ հակառակ վիճակ։ 1908—1913 թթ. ԱՄՆ-ին բաժին էր ընկնում բրազիլական ամբողջ արտահանության (հիմնականում սուրճ) 38,1 տոկոսը, Անգլիային՝ միայն 16,9 տոկոսը։

XIX դարի վերջին— XX դարի սկզբին դասակարգային հակասությունները խիստ սրվեցին բանվորների ու ձեռնարկատերերի, գյուղացիների ու կալվածատերերի միջև։ Այդ ժամանակաշրջանում բանվորական շարժման մեջ, որն ամբողջությամբ վերցրած դեռ կրում էր տարերային բնույթ, ամուր դիրքեր էին գրավում անարխո-սինդիկալիստները։ Որպես կանոն, նրանք կանգնած էին արհմիությունների գլուխ և ղեկավարում էին մասսայական գործադուլային շարժումը։

Քաղաքական տեսակետից բրազիլական բանվոր դասակարգը դեռ ծայրահեղ չափով անփորձ էր և թույլ։ Նա չուներ հեղափոխական քաղաքական կազմակերպություններ։ 1902 թ. ստեղծված սոցիալիստական կուսակցությունը կանգնած էր մանրբուրժուական, ռեֆորմիստական դիրքերում և գրեթե կապված չէր բանվորական մասսաների հետ։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 349։

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքները Բրազիլիայի համար

Բրազիլիան, որը տնտեսապես կապված էր Անտանտի երկրների հետ, մասնակցեց Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ մղված մարտական գործողություններին։ Անտանտի կողմում էր բրազիլական բանակչության մեծամասնության նաև քաղաքական համակրանքը, բացառությամբ երկրի հարավում եղած կեսմիլիոնանոց գերմանական գաղութի։ Եվ չնայած, որ Բրազիլիան փաստորեն գրեթե չկռվեց, ձևականորեն նա իրավունք ստացավ մասնակցելու Փարիզի խաղաղության կոնֆերանսին և ստորագրելու Վերսալյան պայմանագիրը։

Պատերազմը Բրազիլիայի համար հեռուն գնացող հետևանքներ ունեցավ ինչպես էկոնոմիկայի ասպարեզում, այնպես էլ քաղաքական ոլորտում։ Եվրոպայի երկրների հետ տնտեսական կապերի թուլացման հետևանքով արտակարգ կերպով աճեց հյուսիսամերիկյան կապիտալի դերը, որը լայն հոսանքով ուղղվեց դեպի Բրազիլիա։ Սուրճի, կաուչուկի, կաշվի, բամբակի և այլ մթերքների արտահանության կրճատումը Բրազիլիային ստիպեց խիստ կրճատել արդյունաբերական թանկ ապրանքների ներմուծումը, որը խթանեց սեփական ինդուստրիայի զարգացմանը։ Ռազմական բումի տարիներին, որոնք հասցրին խոշոր ֆաբրիկային արտադրության առաջացմանը, շարք մտան 6 հազ. նոր ձեռնարկություններ, այսինքն՝ գրեթե այնքան, որքան հանրապետության գոյության նախորդ 25 տարվա ընթացքում։ Սակայն արդյունաբերության կառուցվածքն արմատական փոփոխությունների չենթարկվեց։ Առաջվա պես նրա հիմքն էին մնում տեքստիլ և սննդի ճյուղերը, որոնց բաժին էր ընկնում արտադրության մոտ 70 տոկոսը։ Ձեռնարկությունների հիմնական զանգվածը տնայնագործական-մանուֆակտուրային բնույթ ուներ։ 1920 թ. ցենզի տվյալների համաձայն, բոլոր ձեռնարկությունների կեսն ընդհանրապես որևէ մեխանիկական շարժիչ չուներ։ Դրա հետ մեկտեղ ֆաբրիկաների ոչ մեծ մի խումբն էր (50-ից ավելի մարդկանցով զբաղված և ավելի քան 50 ձիաուժ մեխանիկական շարժիչների հզորությամբ) հենց արտադրում արդյունաբերական արտադրանքի ավելի քան $^1/_2$-ը և վերահսկում բանվորական ուժի $^2/_3$-ը։ Կապիտալիստական արտադրության զարգացման պրոցեսի սոցիալական արդյունքը երկու հասարակական դասակարգերի՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի ձևավորումն էր։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին խոշոր ընդհարումներ տեղի ունեցան աշխատանքի ու կապիտալի միջև, ընդ որում բրազիլական պրոլետարիատը հատկապես ակտիվ պայքար ծավալեց իմպերիալիստական պատերազմի դեմ։ Հեղափոխական սինդիկալիստների կողմից ղեկավարվող բրազիլական բանվորները հաճախ հակաիմպերիալիստական, հակապատերազմական մասսայական ելույթներ էին կազմակերպում «Կորչի՛ պատերազմը, կեցցե՛ բոլոր աշխատավորների ինտերնացիոնալ համերաշխությունը» լոզունգներով։ 1915 թ. հոկտեմբերին անցկացվեց համաբրազիլական հակապատերազմական կոնգրես։ 1917 թ. հունիս-հուլիսին Սան Պաուլույում՝ Բրազիլիայի այդ արդյունաբերական սրտում, խոշոր ընդհարում տեղի ունեցավ մի կողմից, բանվորների և մյուս կողմից ձեռնարկատերերի, օտարերկրյա կապիտալի և կառավարության միջև։ Ընդհանուր տնտեսական գործադուլը, որն ընդգրկեց ավելի քան 150 հազ. բանվորների, որոնք պահանջում էին աշխատավարձի բարձրացում, վարձատրվող արձակուրդների սահմանում և այլն, վերաճեց համազգային նշանակություն ունեցող իրադարձության։ Մեկ ամսից ավելի տեղի էր ունենում լարված պայքար, որը պսակվեց պրոլետարիատի

լիակատար հաղթանակով։ Հակապատերազմական մասսայական շարժումը և 1917 թ. ընդհանուր գործադուլը վկայում էին այն մասին, որ բրազիլական պրոլետարիատը դուրս է եկել ինքնուրույն դասակարգային պայքարի թատերաբեմ։ Այդ պայմաններում Բրազիլիայում հակաիմպերիալիստական ազատագրական և բանվորական շարժման աճի և հետագա ամբողջ զարգացման վրա հատկապես ուժեղ քաղաքական ազդեցություն ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությունը։ Բրազիլական կոմունիստական կուսակցության ստեղծումը

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի լուրն ալեկոծեց ամբողջ Բրազիլիան։ Բուրժուական թերթերը տագնապով էին գրում «քաղաքակրթության համար անարխիայի հարյուր գլխանի հիդրայի սպառնալիքի» մասին։ Բրազիլական բանվոր դասակարգի, դեմոկրատորեն տրամադրված մտավորականության առաջավոր, հեղափոխական ուժերը ջերմ համակրանքով վերաբերվեցին Ռուսաստանում տեղի ունեցած պրոլետարական հեղափոխությանը, Լենինին և բոլշևիկներին։ Բրազիլական ականավոր գրող դեմոկրատ Աֆոնսո Էնրիկե Լիմա Բարետոյի խոսքերով, «Չկա ոչ մի ողջամիտ մարդ, որը, խորհելով բոլշևիկյան սքանչելի շարժման մասին, չհասկանա, որ խոսքը վերաբերում է խորապես ապշեցուցիչ հասարակական մի երևույթի, որը վիթխարի հետաքրքրություն է ներկայացնում ամբողջ մարդկության համար և ունի անսահման թափ։ Ռուսական հեղափոխությունը ցնցեց ոչ միայն գահերը, այլև մեր ամբողջ ստոր ու ագահ բուրժուական հասարակության սոցիալական հիմքերը»։

Ռիո դե Ժանեյրոյի տպագրիչների «Ու կոսմոպոլիտա» թերթի 1917 թ. դեկտեմբերյան համարում հպարտությամբ էր ասվում, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը «միջազգային ամբողջ պրոլետարիատի վիթխարի հաղթանակն է»։ 1918 թ. մայիսի 1-ին բրազիլական մայրաքաղաքի աշխատավորության բազմահազարանոց միտինգում խանդավառությամբ ընդունվեց բանաձև, որտեղ արտահայտվում էր «խոր համակրանք ռուս ժողովրդի նկատմամբ, որը հերոսաբար պայքարում է կապիտալիզմի դեմ»։ Բրազիլիայի աշխատավորությունը բազմիցս եռանդուն կերպով հանդես եկավ սովետների երիտասարդ հանրապետության նկատմամբ իմպերիալիստական տերությունների ռազմական ինտերվենցիայի դեմ։ Ամենուրեք տեղի էին ունենում միտինգներ ու ժողովներ, ցույցեր ու հասարակական դիսկուսիաներ ռուսական հեղափոխության մասին։ Սովետական Ռուսաստանի հետ համերաշխության շարժումն ի վերջո ընդունեց մասսայական թափ, կարևոր դեր խաղալով բանվորական շարժման գաղափարական վերակառուցման մեջ, որը խորացրեց անարխիզմի և անարխո-սինդիկալիզմի գաղափարական ճգնաժամը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը բրազիլական պրոլետարիատին համոզեց սեփական հեղափոխական քաղաքական կազմակերպության ստեղծման անհրաժեշտությունը, «ուղղակի գործողությունների» (տնտեսական գործադուլներ) տակտիկայի սահմանափակությունը, պրոլետարական ինտերնացիոնալ կապերի ամրապնդման անհրաժեշտությունը։

1917—1921 թթ. դասակարգային մարտերի դասերը, բոլշևիկների միջազգային հեղինակության աճը հասցրին այն բանին, որ արհմիությունների անարխո-սինդիկալիստական ղեկավարության, առաջավոր մտավորականության և առավել գիտակից բանվորների մի մասի միջավայրից աստիճանաբար սկսեց առանձնանալ հեղափոխական ձախ թևը։ Այդ թևի գլուխ անցան բանվորական

արհմիութենական մամուլի ակտիվիստներ Աստրոժիլդո Պերեյրան և Օտավիո Բրանդաոն, առանձին սինդիկատների ղեկավարներ Էվերարդո Դիասը, Անտոնիո Կանելասը և ուրիշներ։

1921 թ. վերջերին երկրում գործում էին արդեն 10—15 կոմունիստական խմբեր։ 1922 թ. մարտին տեղի ունեցավ Բրազիլական կոմունիստական կուսակցության հիմնադիր համագումարը։ Համագումարը հավանություն տվեց Կոմինտերնի մեջ ընդունվելու 21 պայմաններին, ընդունեց կուսակցության կանոնադրությունը, որտեղ գրված էր. «Բանվոր դասակարգի կուսակցությունը կազմակերպվում է պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանությունը նվաճելու և կապիտալիստական հասարակությունը քաղաքականապես ու տնտեսապես կոմունիստականի վերափոխելու նպատակով»։ Համագումարը ողջույն ուղարկեց Կոմինտերնի հասցեով։

Իր գոյության առաջին տարիներին ԲԿԿ-ն մասսայական կուսակցություն չէր։ Նրա շարքերում հաշվվում էր 500—800 անդամ։ ԲԿԿ-ի գործունեության համար տիպիկ էին «ձախության մանկական հիվանդության» մի քանի գծեր, որոնց մասին գրել է Վ. Ի. Լենինը։ Բրազիլիայի կոմունիստները հերոսական ու անձնուրաց պայքար էին մղում, բայց հաճախ գրավում էին աղանդավորական դիրքեր, իրենց պահանջներում «առաջ էին վազում», դեռ չունեին մասսաների մեջ ամենօրյա աշխատանքի փորձ։ Աճի այդ բոլոր դժվարություններն աստիճանաբար հաղթահարվում էին հեղափոխական պայքարի ընթացքում։

Բանվորական շարժման միացումը մարքսիստական հեղափոխական տեսության հետ և Բրազիլական կոմունիստական կուսակցության ստեղծումը կարևոր առաջընթաց քայլ էին, որոնք բանվորական շարժման զարգացման մեջ նշանավորեցին նոր էտապ։

«Տենենտիզմը» և «Անպարտելի զորասյան» արշավը (1922—1927 թթ.)

Բուռն 20-ական թվականները եղան Բրազիլիայի պատմության կարևոր ժամանակաշրջանը։ Կապիտալիստական շահագործման, իմպերիալիզմի և ռեակցիոն օլիգարխիայի անսահման իշխանության դեմ հեղափոխական պայքար էր մղում ոչ միայն պրոլետարիատը։ Այդ գործում մեծ ավանդ մուծեցին մանրբուրժուական դեմոկրատիայի ներկայացուցիչները հանձին բրազիլական բանակի հայրենասիրաբար տրամադրված երիտասարդ սպաների՝ «տեննենտիստների (tenente-լեյտենանտ)։ «Տեննենտիստական» շարժումը, չնայած իր քաղաքական ու գաղափարական սահմանափակությանը, երկրում վիթխարի ժողովրդականություն նվաճեց, որովհետև բացահայտ կերպով զենքը ձեռքին հանդես եկավ Սան Պաուլուի և Մինաս Ժերաիսի բուրժուա-կալվածատիրական ատելի օլիգարխիայի, Արտուր Բերնարդեսի ռեակցիոն կառավարության դեմ։ Բանվոր դասակարգը, որը շարունակում էր համառ պայքարն ի պաշտպանություն աշխատավորության շահերի, այդ տարիներին մնում էր պառակտված, այդ պատճառով իր հիմնական ուժերը նա կենտրոնացնում էր դասակարգային հեղափոխական հիմունքներով արհմիությունները միավորելու պայքարի վրա։ Գյուղացիական շարժումը զարգանում էր տարերայնորեն, վերածվելով տեղական, մեկուսի խռովությունների ու բունտերի նվազ արդյունավետ ձևի։ Գյուղացիների զինված ջոկատները՝ կանգասեյրոսները (կանգասո— ոչ մեծ ջոկատ) խստորեն վրեժ էին առնում կալվածատերերից, հրկիզելով նրանց կալվածքներն ու սպանելով առանձնապես ատելիներին։ Սակայն կանգասեյրոսների շարժումը հաճախ օգտագործվում էր հենց կալվածատերերի կողմից, որոնք գյուղացիներին գրգռում էին իրենց քաղաքական թշնամիների դեմ։ Քաղաքական ռեակցիայի տիրապետության և

հեղափոխական ուժերի տարանջատման պայմաններում «տեննենտիստները» կարողացան աչքի ընկնող դեր խաղալ ատելի «սրճային» օլիգարխիայի դեմ, հասարակական կյանքի դեմոկրատացման համար մղվող պայքարում։ «Տեննենտիստները» հստակ ծրագիր չունեին, նրանք իրենց գլխավոր նպատակն էին համարում պայքարն ընդդեմ լատիֆունդիզմի և կառավարման դիկտատորական մեթոդների, ի պաշտպանություն ժողովրդի լայն խավերի շահերի՝ «երկրում օրենքի, արդարության տիրապետության հաստատման և գործադիր իշխանության այնպիսի շրջանակներով սահմանափակման նպատակով, որոնք համատեղելի են հանրապետական ռեժիմի հետ»։ Դրա հետ միասին սպայության առավել հեղափոխական ներկայացուցիչները՝ Սիկեյրա Կամպոսը, Ֆրուտուոզո Մենդեսը, Լուիս Կարլոս Պրեստեսը հանդես էին գալիս գոյություն ունեցող կարգերը արմատապես վերափոխելու օգտին։ Դրանում նրանք մոտենում էին ԲԿԿ-ի դիրքին, որն իր գոյության առաջին օրերից հանդես էր գալիս ագրարային և հակաիմպերիալիստական հեղափոխության նախապատրաստման ու անցկացման օգտին։ Կոմունիստներն ամենից առաջ անհրաժեշտ էին համարում վերջ տալ խոշոր կալվածատիրական սեփականությանը, որը կենտրոնացնում էր ամբողջ հողի $^{9}/_{10}$-ը, 23 մլն գյուղական բնակիչների մատնելով սովի, աղքատության ու հողազրկության։ Սակայն, այդ հարցում ուլտրաձախ դիրք գրավելով, ԲԿԿ-ն հրաժարվեց «տեննենտիստների» հետ որևէ համագործակցությունից, այդ մանրբուրժուական հակաօլիգարխիական շարժումը դիտելով որպես իր գաղափարական ու քաղաքական հակառակորդի։

1922 թ. սկզբին Մանուասում, Սալվադորում, Ռեսիֆիում, Կամպո Գրանդեում և այլ վայրերում «տեննենտիստները» տեղական կայազորների ապստամբություններ բարձրացրին, պահանջելով իշխանությունը չտալ ռեակցիայի դրածո Ա. Բերնարդեսին։ Կառավարությունը դաժանորեն ճնշեց այդ ելույթները, սակայն 1922 թ. հուլիսի 5-ին նոր ապստամբություն ծագեց լեյտենանտ Անտոնիո Սիկեյրա Կամպոսի գլխավորությամբ, այս անգամ Ռիո դե Ժանեյրոյի Կոպակաբանա ֆորտում։ Այն աջակցություն գտավ Ռեալենգոյի դինվորական դպրոցի կուրսանտների և Վիժիա ֆորտի կայազորի կողմից։ Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց։ Կառավարությունը գաղանային հաշվեհարդար կատարեց ապստամբների հետ, մի քանի հարյուր սպաներ ու զինվորներ ձերբակալվեցին, երկրում մտցվեց պաշարողական դրություն։

Սակայն դաժան բռնությունները չէին կարող կանխել հեղափոխական իրադարձությունների զարգացումը։ Կոպակաբանայի հերոսների սկսած պայքարն ալեկոծեց ամբողջ երկիրը։ «Տեննենտիստները» բանակում ստեղծեցին գաղտնի բջիջների լայն ցանց։ 1924 թ. հուլիսի 5-ին նրանք գլխավորեցին Սան Պաուլուի կայազորի ապստամբությունը։ Եռօրյա մարտերից հետո քաղաքն ընկավ հեղափոխականների ձեռքը, որոնց գործողություններն աջակցություն էին գտնում աշխատավոր ժողովրդի կողմից։ Ավելի քան երեք շաբաթ կառավարական զորքերը պաշարել էին քաղաքը։ Մարտերում զոհվեց ավելի քան 4 հազ. մարդ։ Հուլիսի 27-ին ապստամբները, ճեղքելով շրջապատման օղակը, արշավ սկսեցին դեպի երկրի խորքը։

Այդ նույն թվականի հոկտեմբերի 24-ին երկրի հարավում, Սանտո Անժելո փոքրիկ քաղաքում Սան Պաուլուի ապստամբներին միանալու համար հանդես եկավ ինժեներական զորքերի կապիտան Լուիս Կարլոս Պրեստեսի հրամանատարությամբ գործող կայազորը։ Այսպես սկսվեց «Անպարտելի զորասյան» առասպելական արշավը, որը տևեց 647 օր։ Երկրի ներքին շրջաններում նա մարտերով անցավ ավելի քան 24 000 կմ։ Զորասյան արշավում մասնակցեց

800 մինչև 1000 մարդ։ Մարտերում զոհվեց մոտ 600 զինվոր և 70 սպա։ Այդ անօրինակ արշավը խոր հետք թողեց բրազիլական ժողովրդի գիտակցության մեջ։ Չնայած այն բանին, որ զորասյունը 1927 թ. փետրվարին ստիպված էր դադարեցնել պայքարը, «տենենտիստների» զինված պայքարը բացառիկ մեծ նշանակություն ունեցավ երկրի հետագա ճակատագրի համար։ Այն լրջորեն խարխլեց օլիգարխիայի քաղաքական հզորությունը, հող նախապատրաստելով 1930 թ. նրան ջախջախելու համար։

Այդ պահին իր ուժերը կարողացավ զգալիորեն համախմբել նաև բրազիլական պրոլետարիատը։ 1925 թ. մայիսին տեղի ունեցավ ԲԿԿ II համագումարը, որն ընդունեց միասնական արհմիութենական կենտրոն ստեղծելու կուրս։ 1929 թ. ապրիլին ստեղծվեց աշխատավորների ընդհանուր կոնֆեդերացիան, որը միավորեց մոտ 80 հազ. բանվորների։ Մեծ նշանակություն ունեցավ բանվորա-գյուղացիական լեգալ բլոկի ստեղծումը, որը ղեկավարում էին կոմունիստները։ 1928 թ. հոկտեմբերին բլոկի երկու թեկնածուներ ընտրվեցին մայրաքաղաքի մունիցիպալիտետում։ 1928 թ. վերջին— 1929 թ. սկզբին տեղի ունեցավ Բրազիլական կոմունիստական կուսակցության III համագումարը, որը հետևություն արեց այն մասին, որ Բրազիլիայի տնտեսական ու սոցիալական պայմանները տանում են «հեղափոխական իրադրության արագ հասունացմանը»։ Այդ գնահատականը շուտով լիովին հաստատվեց։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և 1930 թ. բուրժուական հեղափոխությունը

1929—1933 թ. տնտեսական ճգնաժամը ուժեղ հարված հասցրեց բրազիլական էկոնոմիկային։ Հատկապես ծանր ազդեց նրա վրա այն հանգամանքը, որ համաշխարհային շուկայում սրճի գները գրեթե երեք անգամ ընկան։ Ճգնաժամը սնանկության եզրին կանգնեցրեց արտահանության ուղարկվող նաև այլ ապրանքների՝ բամբակի, կաուչուկի, մսի և կաշվի, շաքարի արտադրողներին։ Հաղարավոր պլանտացիաների գործունեությունը կազմալուծվեց։ Գյուղացիների ու բատրակների վիթխարի զանգվածները իրենց ընտանիքներով հեղեղեցին քաղաքները։ Ճգնաժամը տարածվեց նաև բրազիլական արդյունաբերության մեջ։ Սնանկացումների ալիքը համակեց երկիրը։ Արդեն 1930 թ. Սան Պաուլույում, օրինակ, փակվեց բոլոր գործարանների ու ֆաբրիկաների ավելի քան 50 տոկոսը, իսկ մյուսներն աշխատում էին շաբաթական 2—3 օր։ Առանց աշխատանքի մնաց 2 մլն-ից ավելի մարդ։ Ժողովրդի առանց այն էլ թշվառական դրության վատացումը հասցրեց գործադուլային շարժման աճին, գյուղացիների, ուսանողների պայքարի ակտիվացմանը։

Ճգնաժամը սրեց հակասությունները նաև տիրող դասակարգերի լագերում։ «Սրճային» օլիգարխիայի քաղաքական վարկը քայքայվեց։ Առևտրական ու արդյունաբերական բուրժուազիան, կալվածատերերի մի մասը ձգտում էին փոխել քաղաքական կուրսը և կողմնորոշվել դեպի ԱՄՆ-ի հետ համագործակցությունը։ Արդեն 1928 թ. այդ խմբերը կազմեցին իրենց քաղաքական բլոկը, որը ստացավ «Լիբերալ ալյանս» անունը։ Այդ պայմաններում երկրում տեղի էր ունենում նոր պրեզիդենտի ընտրությունների նախապատրաստությունը. ընտրությունները պետք է կայանային 1930 թ. մարտին։

Լիբերալ ալյանսից պրեզիդենտի պոստի թեկնածու առաջադրվեց խոշոր կալվածատեր և Ռիո Գրանդե դո Սուլ անասնապահական նահանգի նախկին նահանգապետ Ժետուլիո Դորնելես Վարգասը։ Նա մի ճարպիկ ու խելոք քաղաքագետ էր, որը մասսաների մեջ ժողովրդականություն էր վայելում։ Մասսաներին իրենց կողմը գրավելու նպատակով ալյանսի ղեկավարները օգտագործեցին «տենենտիստների» հեղինակությունը, նրանց քաղաքական ծրագրից փոխառնելով մի շարք լոզունգներ։ Մասնավորապես նրանք խոստանում էին իրականացնել ընդհանուր ներում, ինչպես նաև մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին հասարակական կյանքի դեմոկրատացմանը և երկրի ագրարային կառուցվածքի վերակառուցմանը՝ հանուն «համազգային մեծ հեղափոխության ի շահ ողջ ժողովրդի»։ «Տենենտիստների» աջ թևը հաճույքով դաշինքի մեջ մտավ բուրժուական լիբերալների հետ։ Լուիս Կարլոս Պրեստեսի գլխավորությամբ մի ոչ մեծ խումբ հրաժարվեց նրանց հետ համագործակցել և վերցրեց պրոլետարիատի ու նրա կուսակցության գլխավորությամբ բոլոր հեղափոխական ուժերի միավորման կուրս։

Կառավարական աջ կոալիցիան (այսպես կոչված պահպանողական խմբավորումը), որը գլխավորում էր Սան Պաուլի բուրժուա-կալվածատիրական օլիգարխիան, պրեզիդենտության թեկնածու առաջադրեց այդ նահանգի նահանգապետ Ժուլիո Պրեստես դե Ալբուկերկեին։ Այդ բլոկը հանդես էր գալիս ամեն տեսակի վերափոխությունների դեմ։ Սակայն մասսաներին իրենց կողմը գրավելու համար պահպանողականները խոստացան վերջ տալ գործազրկությանը, մտցնել 8-ժամյա աշխատանքային օր, իրականացնել բնակարանային շինարարության լայն ծրագիր և աջակցել ազգային ձեռնարկությունների ստեղծմանը։ Օգտագործելով անգլիական կապիտալի աջակցությունը, մոբիլիզացնելով ամբողջ պրոպագանդիստական մեքենան և պետական ապարատը, պահպանողականներն ընտրություններին հաղթանակ տարան։ Դրանից անմիջապես հետո լիբերալ ալյանսի ղեկավարությունն սկսեց գաղտնի կերպով նախապատրաստել պետական հեղաշրջում։ Վախենալով օլիգարխիայի դեմ մասսայական հեղափոխական շարժման պոռթկումից, լիբերալները որոշեցին օգտագործել մասսաների եռանդն իրենց նպատակների համար, կոչ անելով զենքը ձեռքին վերջ տալ Սան Պաուլուի «սրճային» արքաների տիրապետությանը։ Լիբերալ ալյանսի պարագլուխներից մեկի խոսքերի համաձայն, իրենց նպատակն այն էր, որպեսզի «հեղափոխությունը կատարվեր ավելի շուտ, քան այն կկատարեր ժողովուրդը, նրան խանգարել կատարելու ի՛ր հեղափոխությունը, որը վերջ կտար մեր տիրապետությանը»։

1930 թ. հոկտեմբերի 3-ին Ռիո Գրանդե դո Սուլ, Պարաիբա և Մինաս Ժերաիս նահանգներում զինված գործողություններ սկսվեցին։ Հոկտեմբերի 23-ին գեներալների մի խումբ տապալեց կենտրոնական կառավարությունը։ Լիբերալների զորքերը ժողովրդի աջակցությամբ վերահսկողություն հաստատեցին երկրի տերիտորիայի մեծ մասում, 1930 թ. շարժման պոպուլիստական բնույթը, շարժում, որը հասցրեց օլիգարխիայի տապալմանը, թույլ է տալիս 1930 թ. իրադարձությունները բնութագրել որպես բուրժուական քաղաքական հեղափոխություն։

Ժ. Վարգասի ժամանակավոր կառավարության քաղաքականությունը

1930 թ. նոյեմբերի 3-ին իշխանությունն իր ձեռքը վերցրած Ժ. Վարգասի նոր կառավարությունը մի քանի տարի շարունակ կառավարում էր դիկտատորական մեթոդներով։ Դա բացատրվում էր կենտրոնական իշխանության թուլությամբ, որը միավորել էր քաղաքային լիբերալ բուրժուազիայի, մանրբուրժուական աջ «տենենտիստների» և «սրճային» օլիգարխիայի քաղաքականության հետ չկապված կալվածատերերի ներկայացուցիչներին, ինչպես նաև օլիգարխիայի կողմից ռե-

վանշ վերցնելու փորձերից պաշտպանվելու անհրաժեշտությամբ։ Դիկտատուրայի կարևոր խնդիրը սկզբից ևեթ դարձավ մասսայական հեղափոխական շարժման բռնի ճնշումը։

Տնտեսական ասպարեզում օրենքներ անցկացվեցին արտահանության տարիֆների բարձրացման, երկրի նահանգների միջև առևտրական մաքսերի վերացման մասին և այլ միջոցառումներ, որոնք ուղղված էին ազգային կապիտալի դիրքերի ամրապնդմանը։

Ջանալով կանխել բանվորական շարժման զարգացումը և դրա հետ մեկտեղ կառավարական վերահսկողություն հաստատել արհմիութենական կազմակերպությունների նկատմամբ, Ժ. Վարգասի կառավարությունն առաջին անգամ մշակեց բանվորական օրենսդրություն (օրենքներ արձակուրդների, 8-ժամյա աշխատանքային օր մտցնելու, աշխատավարձի մինիմումի, հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության, աշխատանքային կոնֆլիկտների հարթման գծով հանձնաժողովների, կանանց և անչափահասների աշխատանքի մասին և այլն)։ Միաժամանակ կառավարության նախաձեռնությամբ երկրում սկսեցին ստեղծվել կորպորատիվ արհմիություններ, որոնց մեջ բանվորների հետ մտնում էին նաև ձեռնարկատերերը։ Կորպորատիվ արհմիությունները պետք է ապահովեին նոր իշխանության գլխավոր նպատակը՝ ցանկացած միջոցով վերջ տալ դասակարգային պայքարին, մասսաներին համոզել, որ ազգային շահերը միավորում են Բրազիլիայի բոլոր դասակարգերին, թույլ են տալիս ստեղծելու «սոցիալական ներդաշնակության» հասարակություն։

Կառավարման դիկտատորական մեթոդները, սակայն, ծնում էին աշխատավոր լայն մասսաների դժգոհություն։ Գործադուլային շարժումն ավելի լայն թափ ստացավ, քան առաջ։ Ռեսիֆիում, Նիտերոյում և մի շարք այլ քաղաքներում տեղի ունեցան զինվորական կայազորների հակակառավարական ապստամբություններ։ Սան Պաուլու, Պարանա, Սանտա Կատարինա նահանգներում գյուղացիները հարձակվում էին կալվածատիրական տների և ոչ մեծ քաղաքների վրա։ Վերստին ուժեղացավ գյուղացիների՝ կանգասեյրոսների շարժումը երկրի հյուսիս-արևելքում։

Օգտվելով բարենպաստ իրադրությունից, Սան Պաուլուի օլիգարխիան 1932 թ. հուլիսին փորձեց զենքի ոգնությամբ նորից իշխանության գլուխ անցնել, բայց չախջախվեց։

1934 թ. հուլիսին ընդունվեց Բրազիլիայի նոր սահմանադրությունը։ Ժ. Վարգասն ընտրվեց սահմանադրական պրեզիդենտ։ 1934 թ. սահմանադրությունը նշանավորում էր ազգային բուրժուազիայի և պաուլիստական օլիգարխիայի կոմպրոմիսը։ Այդ նույն ժամանակ նա վերականգնեց մի քանի ձևական դեմոկրատական ազատություններ ու ինստիտուտներ։ Սակայն «սոցիալական խաղաղությունը», որի կոչն էր անում Ժ. Վարգասը, այնուամենայնիվ ձեռք չբերվեց։ Ընդհակառակը, 30-ական թվականների կեսերին հեղափոխական-ազատագրական և մասսայական դեմոկրատական շարժումը Բրազիլիայում չտեսնված թափ ընդունեց։ 1934 թ. կոմունիստների գլխավորությամբ ստեղծվեց ունիտար արհմիութենական կոնֆեդերացիան։ 1934—1935 թթ. գործադուլներին մասնակցեց ավելի քան 1,2 մլն մարդ։

Ժողովրդական ճակատը և 1935 թ. զինված հեղափոխական ապստամբությունները

1930 թ. հետո հեղափոխական պրոցեսի զարգացումն ընթանում էր երեք հիմնական ուղղություններով՝ 1) պայքար ընդդեմ օտարերկրյա իմպերիալիզմի և լատիֆունդիզմի լծի, 2) պայքար հանուն դեմոկրատիայի, 3) պայքար հանուն աշխատավորության հիմնական տնտեսական ու սոցիալական շահերի պաշտպանության։ Այս բոլոր պրոբլեմների գծով առավել հստակ ծրագիր մշակեց Բրազիլական կոմունիստական կուսակցությունը, որի մեջ 1934 թ. ընդունվեց բրազիլական ժողովրդի հերոս, «հուսո ասպետ» Լուիս Կարլոս Պրեստեսը։ 30-ական թվականների կեսերին հեղափոխական շարժումը բախվեց նոր թշնամու՝ տիրող դասակարգերի և նրանց մանրբուրժուական դաշնակիցների քաղաքականության և գործունեության մեջ դրսևորված ֆաշիստական տենդենցների հետ։

30-ական թվականներին Բրազիլիայում քաղաքականապես ձևավորվեց ֆաշիստական հոսանքը և ստեղծվեց այսպես կոչված ինտեգրալիստական կուսակցությունը։ «Աստված, հայրենիք, ընտանիք» լոզունգների դիմակի տակ ինտեգրալիստները կոչ էին անում ստեղծել «բրազիլական ինտեգրալ և ուժեղ պետություն», որն անկախ լիներ անգլիական և հյուսիսամերիկյան իմպերիալիզմից, բայց սերտորեն կապված Եվրոպայի «նոր կարգերի» հետ։ Կոմունիստական և հակաիմպերիալիստական շարժման դեմ մղվող պայքարում նրանք հանդես եկան որպես ռեակցիոն ուժերի հարվածային ջոկատ։

Ֆաշիստական ուժերի ջախջախման և ռեակցիայի դեմ համազգային լայն պայքարի ծավալման նպատակով կոմունիստների նախաձեռնությամբ 1935 թ. մարտ-ապրիլին ստեղծվեց ազգային-ազատագրական ալյանս։ Միասնական ճակատի մեջ մտան ԲԿԿ-ն, սոցիալիստների մի մասը, ձախ «տենենտիստները», առաջադիմական արհմիությունները, դեմոկրատական և հակաֆաշիստական կազմակերպությունները։ Ամբողջ երկրում ստեղծվեց միասնական ժողովրդական ճակատի 1500 բջիջ, որոնք միավորում էին 1,5 մլն հայրենասերների։ Ալյանսի պատվավոր նախագահ ընտրվեց Լուիս Կարլոս Պրեստեսը։ Ալյանսը հռչակում էր պայքար հանուն օտարերկրյա իմպերիալիզմի լծից երկրի ազատագրման, հանուն ագրարային խոր հեղափոխության անցկացման, ինտեգրալիզմի արգելում, Ժ. Վարգասի հեռացում իշխանությունից և ժողովրդի համար իսկական դեմոկրատիայի ապահովում։ 1935 թ. մայիսին ալյանսի ղեկավարությունը հանձին ձախ «տենենտիստների», գերագնահատելով մի կողմից, աշխատավորների հեղափոխական հնարավորությունները և պայքարելու նրանց պատրաստականությունը և մյուս կողմից՝ «վերնախավերի» ճգնաժամը, վերցրեց զինված ապստամբության նախապատրաստման կուրս, առաջադրելով «Ամբողջ իշխանությունը ազգային-ազատագրական ալյանսին» լոզունգը։

Կոմինտերնի VII կոնգրեսը (1935 թ. օգոստոս) հավանություն տվեց ժողովրդական ճակատի համար մղվող պայքարում բրազիլական հեղափոխականների գործունեությանը, մատնացույց անելով գյուղացիության հետ բանվոր դասակարգի դաշինքի հետագա ամրապնդման անհրաժեշտությունը։ Սակայն չնայած դրան ԲԿԿ Կենտկոմի այն ժամանակվա ղեկավարությունն սկսեց ապստամբություն նախապատրաստել։ 1935 թ. նոյեմբերին երկրի մի քանի նահանգներում զինված ապստամբություններ ծագեցին։ Նատալ քաղաքում, որը գտնվում է Բրազիլիայի հյուսիս-արևելքում, ստեղծվեց Ժողովրդա-հեղափոխական կառավարություն։ Արյունահեղ ճակատամարտեր ծավալվեցին Ռիո

դեպ Ժանեյրոյում և Ռեսիֆիում։ Միայն դաժանագույն միջոցներով կառավարությանը հաջողվեց ճնշել ապստամբությունները։ Դատապարտվածների մեջ էր նաև Լ. Կ. Պրեստեսը։

1935 թ. ապստամբությունները պարտություն կրեցին, քանի որ լայն մասսաները դեռ պատրաստ չէին զինված պայքարին։ Բանվոր դասակարգն ու գյուղացիությունը միմյանց միջև չունեին ամուր հեղափոխական կապեր։ ԲԿԿ-ն դեռ մասսայական կուսակցություն չէր։

1935 թ. հեղափոխական իրադարձություններն այնուամենայնիվ փառավոր էջ եղան Բրազիլիայի պատմության մեջ։ Ազգային-ազատագրական ալյանսի պայքարը և այն հակաֆաշիստական ոգին, որը նա դրեց բրազիլական ժողովրդի մեջ, փակեցին երկրի ֆաշիստականացման ուղին։

«Նոր պետությունը» և նրա սոցիալական բնույթը

Երկրում հեղափոխական շարժումը ճնշելու, քաղաքական օպոզիցիայի վերացման և իր բուրժուա-նացիոնալիստական քաղաքականությունը շարունակելու նպատակով Ժ. Վարգասը 1937 թ. նոյեմբերին հեղաշրջում կատարեց։ Կոնգրեսը ցրվեց, 1934 թ. սահմանադրությունը վերացվեց։ Դիկտատորը հռչակեց նոր սահմանադրություն և հայտարարեց այսպես կոչված Նոր պետության ստեղծման մասին, սեփական ձեռքում պահելով ամբողջ իշխանությունը։ Մեկ ամիս անց քաղաքական բոլոր կուսակցությունները ցրվեցին և նրանց գործունեությունը հայտարարվեց օրենքից դուրս։ Այդ դեկրետն առաջ բերեց ինտեգրալիստների դժգոհությունը, որոնք 1938 թ. մայիսին նույնիսկ փորձեցին զինված պուտչ կազմակերպել։ Բայց նրանց խռովությունը հեշտությամբ ճնշվեց։

1937 թ. սահմանադրության համաձայն, առանձին ֆաբրիկաներում ու գործարաններում արտադրության ղեկավարումը, հասարակական կազմակերպությունների և առաջին հերթին արհմիությունների գործունեությունը, գաղափարական ու մշակութային կյանքը, քաղաքական ակտիվությունը՝ բոլորը պետք է կառուցվեր բանվորների, ծառայողների և ձեռնարկատերերի ձևականորեն հավասար ներկայացուցչության կորպորատիվ սիստեմի վրա։ «Կորպորացիաները որպես ազգային աշխատանքի ուժերի ներկայացուցիչներ ու արտահայտիչներ,— նշվում էր սահմանադրության մեջ,— գտնվում են պետության հսկողության ու հովանավորության տակ»։ Դասակարգային պայքարը հայտարարվում էր «Նոր պետության» ռեժիմին չհամապատասխանող, «պետություն», որտեղ պետք է գերակշռեր «ազգային միավորման», «սոցիալական համագործակցության և պարտնյորության» ոգին։ Դիկտատորական ռեժիմն, այսպիսով, լրացվեց իտալական ֆաշիստական օրինակով կորպորատիվիզմի գաղափարախոսությամբ։ Տեռորի ու սոցիալական լայն դեմագոգիայի օգնությամբ կառավարող դասակարգերին հաջողվեց ժամանակավորապես ճնշել մասսայական հեղափոխական շարժումը։

Էկոնոմիկայի ասպարեզում «Նոր պետությունը» կենսագործեց բուրժուա-նացիոնալիստական միջոցառումների մի ամբողջ սերիա, որոնք խթանում էին ազգային արդյունաբերության զարգացումը, սահմանափակեց մի շարք օտարերկրյա մոնոպոլիաների գործունեությունը, մասնավորապես ընդունեց նավթային արդյունաբերության մի շարք ձեռնարկությունների ազգայնացման մասին օրենքը և այլն։ 1939 թ. հունվարին մշակվեց տնտեսական զարգացման հնգամյա պլան, որը նախատեսում էր ծանր արդյունաբերության զարգացում։

«Նոր պետությունը» իրենից ներկայացնում էր Բրազիլիայի նացիոնալիստական բուրժուազիայի վերնախավի դիկտատուրայի յուրահատուկ վարիանտը, որն ուղղված էր առաջին հերթին մասսայական դեմոկրատական և բանվորական շարժման դեմ։ Դրա հետ մեկտեղ իր պրակտիկ գործունեության մեջ Ժ. Վարգասի ռեժիմը ձգտում էր հաշվի առնել ազգային զարգացման պահանջները, նպաստել բրազիլական էկոնոմիկայի աճին։ «Նոր պետության» ռեժիմն անկայուն գտնվեց։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիզմի ջախջախումը վիթխարի ներգործություն ունեցավ Բրազիլիայի վրա, նպաստելով հեղափոխական պրոցեսի վերածնմանը։ «Նոր պետության» էրախը անխուսափելի դարձավ։

ԳԼՈՒԽ 26

ՉԻԼԻՆ
1918—1939 ԹԹ.

Չիլիի սոցիալ-տնտեսական զարգացումը առաջին համաշխարհային պատերազմից հետո

Անկախության պատերազմից (1810—1818 թթ.) հետո մի ամբողջ հարյուրամյակ Չիլին մնում էր ագրարային երկիր։ Գյուղատնտեսության կիսաֆեոդալական բնույթը պահպանում էր հետամնաց սոցիալ-տնտեսական կառուցվածքը։ Համեմատաբար զարգացած էր միայն լեռնահանույթային արդյունաբերությունը, որը գտնվում էր օտարերկրյա կապիտալի ձեռքում։ Զարգացման կապիտալիստական ուղին անցնելու պրոցեսը Չիլիում ընթանում էր ծայրահեղ դանդաղ և ավարտվեց ընդհուպ մինչև 1938 թ. ժողովրդական ճակատի հաղթանակը։

Ըստ 1936 թ. մարդահամարի, Չիլիում հաշվվում էր 201 341 տնտեսություն, այդ թվում 150 568 մանր և միջին տնտեսություն և 626 խոշոր լատիֆունդիաներ. ամբողջ գյուղատնտեսական արտադրանքի 77 տոկոսը տալիս էին մանր և միջին գյուղացիական տնտեսությունները։ Կալվածատերերը, որոնց ձեռքում գտնվում էր մշակվող հողերի մինչև 80 տոկոսը, դրանց զգալի մասը չէին օգտագործում։ «Իրենց պետք չէ, ուրիշին էլ չեն տալիս»,— այսպես էին արտահայտվում լատիֆունդիստների մասին Չիլիում։ Չիլիի կոմունիստական կուսակցության XI համագումարում (1939 թ. դեկտեմբեր) նշվում էր, որ երկիրը կարող էր դառնալ գյուղատնտեսական մթերքների խոշոր արտահանող, բայց դրա համար հարկավոր էր մտցնել հողօգտագործման նոր սիստեմ, բարելավել հողերի բերքատվությունը և այլն։

Երկրի տնտեսական զարգացումն արգելակվում էր ոչ միայն հողագործական օլիգարխիայի քաղաքականությամբ, այլև օտարերկրյա կապիտալի և առաջին հերթին լեռնահանույթային արդյունաբերությունը զավթած ԱՄՆ-ի իմպերիալիստական մոնոպոլիաների բռնադատմամբ։ Օտարերկրյա թափանցումը Չիլիի էկոնոմիկայում հասցրեց արդյունաբերական զարգացման միակողմանիության՝ բացառապես հումքի հանույթի մեջ մասնագիտացման (Չիլիի արտահանության 70 տոկոսը կազմում էին պղինձն ու սելիտրան), որն իր հերթին տանում էր դեպի արտաքին շուկայից Չիլիի ունեցած կախման ուժեղացում։ 1939 թ. լեռնային արդյունաբերության ամբողջ արտադրանքը դրամական արտահայտությամբ կազմեց 2317 մլն պեսո։ Այդ գումարի միայն 22 տոկոսն էր ընկնում ազգային կապիտալին, իսկ 78 տոկոսը՝ օտարերկրյա կապիտալին։ Չիլիի ներմուծման գրեթե 70 տոկոսն ընկնում էր ԱՄՆ-ին (27,8 տոկոս), Գերմանիային (25,3 տոկոս) և Անգլիային (16 տոկոս)։ Չիլիական ներմուծման կարևորագույն ապրանքներն էին նավթամթերքները, մեքենաներն ու տրանսպորտային սարքավորումները, տեքստիլը, սննդամթերքը, ինչպես նաև պտրաստի իրերն ու կիսաֆաբրիկատները։ ԱՄՆ-ը, Գերմանիան և Անգլիան նաև չիլիական արտահանության հիմնական սպառողներն էին։ Երկու

համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում Չիլին դարձավ նշված երկրների միջև իմպերիալիստական սուր պայքարի թատերաբեմ։

Հողատիրության հետամնաց սիստեմը և հումքի ներմուծումից ունեցած կախումը խրոնիկական ճգնաժամի էին դատապարտում վերամշակող արդյունաբերությունը, որը միջպատերազմյան ժամանակաշրջանում աշխատում էր իր հզորության ոչ ավելի, քան 50 տոկոսով։

Իսկ ինչ վերաբերում է օտարերկրյա կապիտալներդրումներին, որոնք 1939 թ. հասան 1160 մլն դոլլարի, որից 700 մլնը պատկանում էր ԱՄՆ-ին, ապա այդ կապիտալը Չիլին տրամադրվում էր հիմնականում կապիտալ արտահանող երկրների արդյունաբերության հումքի մատակարարման աղբյուրներն ընդլայնելու համար։

Հողագործական օլիգարխիայի ներկայացուցիչները իշխող դիրքեր էին գրավում կառավարության մեջ և կոնգրեսում։ Նրանք ղեկավարում էին կառավարող բուրժուա-կալվածատիրական կուսակցությունները և իրենց ձեռքում էին պահում մասսաների վրա գաղափարական ու բարոյա-քաղաքական ներգործության միջոցները։ Իր դասակարգային շահերի պաշտպանության համար օլիգարխիան օգտագործում էր ամբողջ պետական ապարատը և կաթոլիկական եկեղեցու վերնախավին։

Այդ նույն ժամանակ երկրում զարգանում էր տեղական ազգային կապիտալը, ակտիվանում ազգային միջին ու մանր բուրժուազիայի քաղաքական գործունեությունը։ Չիլիում ձևավորվեցին պրոլետարիատի զգալի կադրեր, որի հիմնական և առավել մարտական ջոկատը հանքափորներն էին։

Հողագործական օլիգարխիայի դեմ մղվող պայքարը, որը հենվում էր ֆինանսական բուրժուազիայի և իմպերիալիզմի ուժերի հետ դաշինքի վրա, ագրարային ռեֆորմի անցկացումը և երկրի ազատագրումն օտարերկրյա կապիտալի տիրապետությունից Չիլիի ժողովրդի արմատական խնդիրներն էին, որոնց լուծումը միայն կարող էր պայմաններ ստեղծել անկախ, առաջադիմական ազգային զարգացման համար։

Չիլիի աշխատավորության սոցիալական դրությունը և քաղաքական պայքարը (1918 թ.— 30-ական թվականների սկիզբ)

1915—1918 թթ. տնտեսական բումը, որը պայմանավորված էր չիլիական սելիտրայի վիթխարի պահանջարկով, որի արտահանությունը գլխավորապես ուղղվում էր դեպի ԱՄՆ-ն և հանդիսանում ազգային եկամտի հիմնական հոդվածը, 1919 թ. փոխարինվեց դրա արտադրության խիստ անկմամբ։ Չիլին անցավ տնտեսական խոր ճգնաժամի գոտին։ Փակվեց սելիտրայի և լեռնահանքային այլ ձեռնարկությունների մեծ մասը։ Սելիտրայի հանույթով զբաղվող 40 հազ. բանվոր զրկվեց աշխատանքից։ Գործազուրկների ընդհանուր թիվը 1922 թ. հասավ 100 հազ. մարդու։

Տնտեսական ճգնաժամը խորությամբ շոշափեց ժողովրդական մասսաների կենսական շահերը։ Զանգվածային գործազրկությունը, աղքատությունն ու սովը առաջացնում էին աշխատավորության, ինչպես նաև ճգնաժամից ու օտարերկրյա մոնոպոլիաների տիրապետությունից տառապող մանր և մասամբ միջին բուրժուազիայի ուժեղ դժգոհությունը։ Ժողովրդի դիմադրությունը հողագործական օլիգարխիայի քաղաքականությանը, որի շահերն էր արտահայտում կալվածատեր Խուան Լ. Սանֆուենտեսի կառավարությունը (1915—1920 թթ.), ուղեկցվում էր բանվորների գործադուլային պայքարով և դառնում էր ավելի ու ավելի ինտենսիվ։ Աշխատավորների մասսայական գործադուլ-

ները և սովի քաղաքականության դեմ ուղղված բողոքի ցույցերը դարձան ամենօրյա երևույթներ։ Միայն 1918—1919 թթ. տեղի ունեցավ մոտ 300 գործադուլ։

Այդ պայմաններում իշխանության գլուխ անցավ լիբերալ կուսակցության պարագլուխ Արտուրո Ալեսանդրիի բուրժուական կառավարությունը (1920—1925 թթ.), որին աջակցում էր «լիբերալ ալյանսը», որը միավորում էր ռադիկալներին, դեմոկրատներին ու լիբերալներին։ Հաշվի առնելով լայն մասսաների դժգոհությունը և բանվորական շարժման աճը, Ալեսանդրին մի քանի զիջումներ արեց աշխատավորներին. անցկացվեցին մի շարք ռեֆորմներ՝ հրատարակվեց 8-ժամյա աշխատանքային օր և պարտադիր սոցիալական ապահովություն, ընդունվեց աշխատանքային օրենսդրություն և թույլատրվեց արդյունաբերական բանվորների արհմիությունների ստեղծում։ Սակայն հողագործական օլիգարխիայի և օտարերկրյա կապիտալի արտոնությունները պահպանվեցին։ Այդ նույն ժամանակ Ալեսանդրիի կառավարությունը դաժան բռնություններ գործադրեց բանվոր դասակարգի իրավունքների համար մարտնչողների նկատմամբ։

Բանվոր դասակարգի հետապնդումը պատահական չէր։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն առաջ բերեց համաշխարհային հեղափոխական շարժման չտեսնված թափ։ Չիլիի բանվորական շարժման մեջ նույնպես սկսվեց հեղափոխական մեծ վերելքի ժամանակաշրջան։ Չիլիի բանվորական ֆեդերացիան (ՖՕՉ), որը ստեղծվել էր դեռ 1909 թ. և միավորում էր հանքափորներին, երկաթուղիներին և բանվորների այլ խավերի, դարձավ բանվոր դասակարգի բավականաչափ մասսայական հեղափոխական կազմակերպություն։ ՖՕՉ-ը դատապարտեց անարխո-սինդիկալիզմը բանվոր դասակարգի շարքերում, համերաշխություն հայտնեց Հոկտեմբերյան հեղափոխությանը և 1921 թ. վերջին մտավ արհմիութենական ինտերնացիոնալի մեջ։ Սոցիալիստական բանվորական կուսակցությունը, որն առաջացել էր 1912 թ. առաջավոր բանվորների նախաձեռնությամբ, 1922 թ. հունվարին վերակազմվեց Չիլիի կոմունիստական կուսակցության և միացավ կոմունիստական Ինտերնացիոնալին։

ՖՕՉ-ի ստեղծման և նրա՝ երկրի առաջին արհեստակցական կենտրոնի վերածման և ՉԿԿ-ի վերափոխված սոցիալիստական բանվորական կուսակցության ստեղծման գործում աչքի ընկնող դեր խաղաց չիլիական և ամբողջ լատինաամերիկյան հեղափոխական շարժման ականավոր գործիչ, տպագրիչ բանվոր Լուիս Էմիլիո Ռեկաբարրենը (1876—1924 թթ.)։ Նա ջերմորեն ողջունեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակը և աշխատում էր նրա գաղափարները մարմնավորել Չիլիի կոնկրետ պայմաններում։ «Սովետական իշխանության հաստատմամբ,— գրում էր Ռեկաբարրենը 1922 թ. ՍՍՀՄ այցելելուց հետո,— սոցիալիստների երազանքը ոչ միայն դարձավ իրականություն, այլև մարդկության առաջադիմության ու երջանկության աղբյուր»։

Կանխել հեղափոխական պրոցեսի զարգացումը Չիլիում և սոցիալական դեմագոգիայի միջոցով մասսաներին իր կողմը գրավել՝ դրանում էր կայանում Ալեսանդրիի ներքին քաղաքականությունը։ Սակայն նրան չհաջողվեց հասնել իր ռեժիմի կայունացմանը։ Բանվոր դասակարգին զիջումներ կատարելու քաղաքականությունը առաջ էր բերում ամեն տեսակ սոցիալական ռեֆորմների դեմ հանդես եկող օլիգարխիայի և ֆինանսական բուրժուազիայի կուսակցությունների օպոզիցիան։ Ալեսանդրիի արտաքին քաղաքական կողմնորոշումը դեպի եվրոպական երկրները, մասնավորապես դեպի Անգլիան, նույնպես դի-

մադրության էր հանդիպում այն շրջանների կողմից, որոնք գերապատվությունը տալիս էին ԱՄՆ-ին, մյուս կողմից, շարունակվում էր աշխատավորների պայքարն իրենց պահանջների համար։ Դրա հետևանքով 1924 թ. սեպտեմբերի 5-ին ազգայնականորեն տրամադրված սպաների մի խումբ պետական հեղաշրջում կատարեց և Ալեսանդրիին երկրից արտաքսեց։ Սակայն քաղաքական կյանքին միջամտելու բանակի ներկայացուցիչների փորձը երկրում լայն աջակցություն չստացավ։ Բացի այդ, զինվորականների մեջ զորեղ էին սահմանադրական ռեժիմի կողմնակիցների դիրքերը։ 1925 թ. հունվարի 23-ին հետևվեց երկրորդ զինվորական հեղաշրջումը, որը կատարվեց երիտասարդ սպաների մի խմբի կողմից, որոնք Ալեսանդրիին վերադարձրին իշխանության։ Հեղաշրջման մասնակիցներից մեկը՝ գնդապետ Կարլոս Իբանիես դել Կամպոն, գրավեց ռազմական մինիստրի պոստը։ 1925 թ. սեպտեմբերի 18-ին ընդունվեց Չիլիի նոր, ավելի առաջադիմական սահմանադրությունը, որն ամրապնդում և ընդլայնում էր բուրժուա-դեմոկրատական ռեժիմի օրենսդրական հիմքերը։

Այդ նույն ժամանակ Ալեսանդրիի իշխանության վերադառնալը նշանավորվեց բանվոր դասակարգի դեմ ուղղված բռնություններով։ 1925 թ. հունիսին սելիտրայի «Լա Կորունյա» հանքավայրի բանվորների հետ, որոնք պահանջում էին կյանքի և աշխատանքի պայմանների բարելավում, դաժան հաշվեհարդար կատարեցին զորքերը։ Սպանվեցին շատ բանվորներ, ձերբակալվեց մոտ 500 մարդ։ Երկրում ծավալվեց հակասովետական կամպանիա։

«Լա Կորունյայում» տեղի ունեցած արյունալի իրադարձություններն անհետ չանցան։ Աշխատավորների զայրալից բողոքներն ու ցասումը լայն ալիքով տարածվեցին ամբողջ երկրով մեկ։ Օգտագործելով կառավարության մեջ եղած տարաձայնությունները 1925 թ. սեպտեմբերին ընդունված նոր սահմանադրության կենսագործման վերաբերյալ, Կ. Իբանիեսը հասավ Ալեսանդրիի հրաժարականին՝ նրա կաբինետի լիազորությունների ժամկետը լրանալուց երկու ամիս առաջ։ 1927 թ. սկզբին Իբանիեսը հաստատեց կաուդիլիզմի երանգներով անձնական ռազմական դիկտատուրա։ Նա ՉԿԿ-ին ստիպեց անցնել ընդհատակ, բռնությունների ենթարկեց բանվորական և բուրժուական կուսակցությունների շատ պարագլուխների և ստեղծեց նացիոնալիստական բանվորական կազմակերպություններ։ Իբանիեսի կողմնակիցները «Նոր Չիլիի» ստեղծման լոզունգով ծավալեցին նացիոնալիստական պրոպագանդայի լայն կամպանիա։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի բազայի վրա 1929 թ. ծագած համաշխարհային տնտեսական ճգնաժամը Չիլիին չափազանց դաժան հարված հասցրեց։ Երկրի գործարար կյանքը կանգ առավ, 200 հազ. աշխատավորներ զրկվեցին գոյության միջոցներից, զբաղված բանվորներն աշխատում էին շաբաթական 2—3 օր։ Չիլիի ծանր տնտեսական դրությունը օգտագործեցին ԱՄՆ-ի մոնոպոլիաները, որոնք Իբանիեսի աջակցությամբ գրեթե լիովին զավթեցին պղնձի արտադրությունը և անգլիացիների ձեռքից խլեցին սելիտրայի արդյունաբերությունը։ Ճգնաժամից ելք գտնելու անվան տակ Իբանիեսի կառավարությունը ի վնաս երկրի ազգային շահերի գործարք կնքեց ԱՄՆ-ի հետ. 1931 թ. մարտին կազմվեց «Կոմպանիա Սալիտրերա դե Չիլի» խառն փայատիրական ընկերությունը («ԿՈՍԱՉ»), որի բաժնետոմսերի 49 տոկոսը պատկանում էր ԱՄՆ-ին։ «Փորձը ցույց է տալիս,— գրում էր Վ. Ի. Լենինը,— որ ակցիոներական ընկերության գործերի տնօրինության համար բավական է

ունենալ ակցիաների 40%-ը»[1]։ Այդ գործարքը լայն դժգոհություն առաջացրեց։ Հասարակայնությունը պահանջում էր վերացնել «ԿՈՍԱՁ»-ը։ Նրա ստեղծման դեմ բանվորների ելույթները ճնշվեցին իշխանությունների կողմից։

Տնտեսական ճգնաժամը ուժգին կերպով ռադիկալացրեց մասսաներին և հիմնովին խարխլեց Իբանիեսի ռեժիմը։ Նրա կառավարության կազմը մշտապես փոխվում էր։ Դաժան, հատկապես ուսանողների դեմ կատարված բռնությունները հակառակ արդյունք էին տալիս։ Երկրում արագորեն հասունանում էր հեղափոխական իրադրությունը, և վերնախավերն արդեն չէին կարող գլուխ հանել իրավիճակից։ 1931 թ. հուլիսի 26-ին ամեն մի աջակցությունից զրկված Իբանիեսի դիկտատուրան ընկավ։ Ինքը՝ դիկտատորը փախավ Արգենտինա։ Սեպտեմբերի 1-ին ծագեց Չիլիի ռազմածովային նավատորմի 13 հազ. ծովայինների ապստամբությունը, որը ճնշվեց ավիացիայի միջոցով, ժամանակավոր կառավարության ցուցումով։ Հոկտեմբերին իշխանության գլուխ անցած աջ ռադիկալ Խ. Մոնտերոյի կառավարությունը ուժեղացրեց հեղափոխական շարժումը ճնշելու միջոցառումները, բայց նա չկարողացավ հաղթահարել տնտեսական ճգնաժամը և շուտով կորցրեց ամեն մի հեղինակություն։ 1932 թ. հունիսի 4-ին պետական հեղաշրջման հետևանքով իշխանությունը գրավեց մանրբուրժուական խունտան, որը Չիլին հռչակեց «սոցիալիստական հանրապետություն»։ Խունտայի կազմած «սոցիալիստական» կառավարությունը ցրեց ազգային կոնգրեսը, ազատեց բոլոր քաղաքական բանտարկյալներին, վերականգնեց դեմոկրատական ազատությունները և անցկացրեց մի քանի սոցիալ-տնտեսական ռեֆորմներ։ Կառավարության մեջ աչքի ընկնող դեր էր խաղում սոցիալիստ, գնդապետ Մ. Գրովեն, որը 1925 թ. զինվորական հեղաշրջման ակտիվ մասնակից էր։ Չնայած լայն մասսաների աջակցությանը, հանրապետության կառավարությունը չուներ հստակ ու հետևողական ծրագիր, անհետևողական ու հակասական էր իր գործողություններում։ Ռեակցիոն զինվորականության ճնշման տակ «սոցիալիստական հանրապետությունը» շուտով ընկավ։ 1932 թ. հունիսի 16-ին ներքին ռեակցիայի և անգլո-ամերիկյան իմպերիալիստների աջակցությամբ իշխանությունը զավթեց խունտայի անդամ Կ. Դավիլան, մանրբուրժուական մի փաստաբան, որը ԱՄՆ-ի հետ Չիլիի համագործակցության մոլի կողմնակից էր։ Սկսվեց դիկտատորական ռեժիմի նոր գոտին։

«Սոցիալիստական հանրապետության» անկման առավել կարևոր պատճառներից մեկը բանվոր դասակարգի թուլությունն էր և պառակտվածությունը։ Չիլիի կոմունիստական կուսակցությունը չպաշտպանեց «սոցիալիստական հանրապետությանը» և նրան հակադրեց բանվորների, զինվորների և գյուղացիների իր ստեղծած սովետները։ Այդ սովետները արտահայտում էին կոմունիստների ձգտումը՝ արագացնել հեղափոխական պրոցեսը, և հանդիսանում էին ՉԿԿ-ում գոյություն ունեցած «ձախության» արտահայտությունը։ Սովետներն ընկան «սոցիալիստական հանրապետության» պարտության հետ միասին։

Շուտով պարտություն կրեց նաև Դավիլայի դիկտատուրան, որը չկարողացավ սանձահարել բանվորական շարժումը և դեն շպրտվեց սահմանադրական ռեժիմի կողմնակիցների կողմից։ Հոկտեմբերի վերջին դարձյալ երկրի պրեզիդենտ ընտրվեց Ա. Ալեսանդրին (1932—1938 թթ.), որին աջակցում էին

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 299։

պահպանողականները, լիբերալներն ու բուրժուական մյուս կուսակցությունները։

ՉԿԿ-ի պայքարը միասնական բանվորական և ժողովրդական ճակատի համար

Պահպանողականներն ու լիբերալները, որոնք վախեցել էին 1931—1932 թթ. հեղափոխական իրադարձություններից, Ալեսանդրիին առաջադրելով պրեզիդենտի պոստում, նրանից պահանջում էին վճռականապես ճնշել բանվորական ու դեմոկրատական շարժումը։ Ահա թե ինչու, հանդես գալով հօգուտ «սահմանադրական ռեժիմի» վերականգնման, Ալեսանդրին խոստացավ միաժամանակ չխնայել ձախերի ու օպոզիցիոն տարրերի «քայքայիչ գործունեությունը»։ «Ազգային վերակառուցման» նշանաբանով Ալեսանդրին ըստ ամենայնի ամրապնդում էր խոշոր կապիտալի և հողագործական օլիգարխիայի տնտեսական դիրքերը, տնտեսական ճգնաժամի բոլոր հետևանքները բարդելով աշխատավորների և մանր ու միջին ազգային բուրժուազիայի ուսերին։ Արագացավ կապիտալի համակենտրոնացման պրոցեսը։ Բնակչությունից գանձվող հարկերը, հատկապես անուղղակի հարկերը Ալեսանդրիի օրոք աճեցին ավելի քան 2,5 անգամ, իսկ խոշոր լատիֆունդիաներից գանձվող հարկերը զգալիորեն նվազեցին։ Ամբողջությամբ վերցրած Ալեսանդրիի «սահմանադրական ռեժիմը» հակաժողովրդական բնույթ ուներ և նպաստում էր ռեակցիայի ուժեղացմանը։ Երկրում ծավալվեց ֆաշիստական նացիոնալ-սոցիալիստական կուսակցության գործունեությունը, որի գրոհային ջոկատները հարձակումներ էին գործում առաջադիմական բանվորական կազմակերպությունների վրա։ Ֆաշիզմը իրական վտանգի էր վերածվում։ Ֆաշիզմի գաղափարախոսությամբ էին վարակված կառավարող վերնախավի աչքի ընկնող գործիչները, օրինակ, ֆինանսների մինիստր, ռեակցիայի գաղափարախոս Գ. Ռոսը։ Ռեակցիան բացահայտ կերպով պայքարում էր Չիլին հակակոմինտերնական պակտի մասնակից դարձնելու համար և կոչ էր անում համանման պակտ կնքել Հարավային Ամերիկայում։ Ռեակցիային ձեռնտու էր նաև Ալեսանդրիի արտաքին քաղաքականությունը, որը ձևականորեն հռչակում էր խաղաղության քաղաքականություն, բայց գործնականում համակրում ֆաշիստական պետություններին։

Պատմական զարգացման փորձը ցույց է տվել, որ առանց ագրարային ռեֆորմի իրականացման և իմպերիալիզմից ունեցած տնտեսական կախումը վերացնելու ոչ մի «սահմանադրական ռեժիմ» և ոչ մի «ազգային վերակառուցում» չեն կարող պայմաններ ստեղծել Չիլիի իսկական ազգային առաջադիմության համար։ Այդ արմատական վերափոխությունները կարող էին իրականացվել միայն հեղափոխության հետևանքով, որի բնույթը, ըստ Չիլիի կոմունիստական կուսակցության բնորոշման, պետք է լիներ բուրժուա-դեմոկրատական, ագրարային և հակաիմպերիալիստական։ Ղեկավարվելով ազգային կոնֆերանսի որոշմամբ (1933 թ. հուլիս), որը մերժեց ամենամերձավոր ապագայում սոցիալիզմի համար պայքարելու նախկին դիրքորոշումը, ՉԿԿ-ն վերցրեց առաջին հերթին միասնական բանվորական և ժողովրդական ճակատի ստեղծման միջոցով բուրժուա-դեմոկրատական, ազատագրական հեղափոխության նախապատրաստության կուրս։ Միասնական ճակատի կազմավորման համար կային բոլոր նախադրյալները՝ Ալեսանդրիի ներքին ու արտաքին քաղաքականության դեմ բողոքում էին բանվորները, գյուղացիները (1934 թ. երկրի հարավում տեղի ունեցած ապստամբությունն ընդդեմ կալվածատերերի), մտավորականությունը, ծառայողները, մանր առևտրականները և այլն։

Տեղի էր ունենում պայքար աշխատանքի վարձատրության բարձրացման համար, ընդդեմ սովի ու աղքատության, ընդդեմ ԱՄՆ-ի մոնոպոլիաների օգտին նոր զիջումների, ընդդեմ ֆաշիզմի ու պատերազմի սպառնալիքի։ Քաղաքական պայքարի մակարդակով ու սրությամբ Չիլին առաջատար տեղ էր գրավում մայրցամաքում։ Այդ պայմաններում ՖՕՉ-ը աշխատավորությանը կոչ արեց դասակարգային պայքարի սկզբունքների հիման վրա ստեղծել պրոլետարիատի միասնական ճակատ։ Պրոլետարական ճակատի ստեղծման վրա վճռական ազդեցություն ունեցավ 1936 թ. փետրվարին տեղի ունեցած 18 հազ. երկաթուղայինների ընդհանուր գործադուլը, որին պաշտպանեց ամբողջ բանվոր դասակարգը։ Գործադուլը ճնշվեց զորքերի օգնությամբ, բայց այն ունեցավ կարևոր հետևանքներ. ստեղծվեց հեղափոխական (ՖՕՉ) և ռեֆորմիստական արհմիությունների արհմիութենական միասնության ճակատ։ Ճակատը նախապատրաստեց արհմիությունների միավորիչ համագումարի գումարումը. այն տեղի ունեցավ 1936 թ. դեկտեմբերին։ Համագումարը ստեղծեց Չիլիի աշխատավորների կոնֆեդերացիան (ՉԱԿ), որի շրջանակներում միավորվեցին բոլոր հոսանքները, բացի անարխիստներից։ ՉԱԿ-ն իր առջև խնդիր էր դնում պայքարել կապիտալիզմի դեմ, հանուն սոցիալիզմի։ 1938 թ. ՉԱԿ-ը մտավ Լատինական Ամերիկայի աշխատավորների կոնֆեդերացիայի մեջ։

Պրոլետարիատի դասակարգային պայքարի սրման ազդեցության տակ, պրոլետարիատ, որը ձգտում էր հասնել գործողությունների միասնության, երկրում աճում էր մանր և միջին ազգային բուրժուազիայի լայն օպոզիցիան ընդդեմ Ալեսանդրիի քաղաքականության։ Մ. Գրովեի գլխավորությամբ «սոցիալիստական հանրապետության» մասնակիցների ու կողմնակիցների կողմից 1933 թ. կազմված սոցիալիստական կուսակցության, ռադիկալ սոցիալիստների (ռադիկալ կուսակցությունից հեռացած «հակամոնոտերնականների» խումբ) և «ձախ» կոմունիստների (տրոցկիստներ) կազմով ազգային կոնգրեսում ստեղծվեց «Ձախ բլոկ»։ Բլոկը հանդես էր գալիս Ալեսանդրիի ներքին ու արտաքին քաղաքականության փոփոխման օգտին և ֆաշիզմի դեմ։ Օպոզիցիայի աճը հասցրեց կառավարությունից ռադիկալ կուսակցության դուրս գալուն։ XIX դարի կեսին ստեղծված այս կուսակցությունը 30-ական թվականներին պաշտպանություն էր գտնում բնակչության լայն խավերի կողմից։ Դեռ 1931 թ. նա դեկլարացիա ընդունեց, որը դատապարտում էր կապիտալիստական սիստեմը և դիկտատուրայի բոլոր ձևերը։ Ռադիկալ կուսակցությունը հիմնականում արտահայտում էր զարգացող ազգային բուրժուազիայի շահերը։

Բացի տրոցկիստներից այդ բոլոր կուսակցությունները ՉԿԿ-ի բնական դաշնակիցներն էին։ ՉԿԿ-ն ղեկավար դեր խաղաց պրոլետարիատի դասակարգային պայքարի կազմակերպման գործում։

ՉԱԿ-ի կազմավորման հետ միաժամանակ Չիլիի կոմունիստական կուսակցությունը դիմեց «ձախ բլոկի» կուսակցություններին և ռադիկալներին՝ առաջարկելով ստեղծել Ժողովրդական ճակատ ազգային ազատագրության լայն ծրագրի իրականացման համար։ Ներքևի ճնշման տակ Ժողովրդական ճակատին միացան նաև «Ձախ բլոկի» կուսակցությունները։ Ժողովրդական ճակատի մեջ մտան նաև արհմիություններն ու դեմոկրատական կուսակցությունը։ 1936 թ. մարտի 25-ին Ժողովրդական ճակատը սկսեց գործել։ Ապրիլի 8-ին ընդունված ծրագրում Ժողովրդական ճակատի բոլոր մասնակիցները պահանջում էին ուղի բացել արտադրողական ուժերի զարգացման համար, երկրում ուժեղացնել պայքարն ընդդեմ իմպերիալիզմի ու մոնոպոլիաների, ձեռնամուխ լինել ագրարային ռեֆորմին, բարձրացնել ժողովրդական զանգվածների կեն-

սամակարդակն ու կուլտուրան և Չիլին միավորել այն պետությունների հետ, որոնք պայքարում են դեմոկրատիայի ու խաղաղության համար։ Ժողովրդական ճակատի նախապատրաստման ժամանակ լայնորեն օգտագործվեց հանրապետական Իսպանիայում ու Ֆրանսիայում, ինչպես նաև Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում գործող Ժողովրդական ճակատի փորձը։ Ժողովրդական ճակատի ծրագրի արդյունավետ իրականացումը, ՉԿԿ-ի կարծիքով, կարող էր ելակետ ծառայել հակաիմպերիալիստական և հակաօլիգարխիական արմատական վերափոխությունների անցկացման համար։

Չիլիում Ժողովրդական ճակատի ստեղծումը կոմունիստական կուսակցության խոշոր հաջողությունն էր, կուսակցություն, որի եռանդուն գործունեությունը դեմոկրատական և ձախ ուժերի համախմբման գործում ցույց տվեց, որ նա խորապես ազգային կուսակցություն է, որն արտահայտում է բանվոր դասակարգի և բոլոր առաջադիմական ուժերի արմատական շահերը։ ՉԿԿ-ն և Չիլիի բանվոր դասակարգը վճռական դեր խաղացին Ժողովրդական ճակատի ստեղծման գործում։

1938 թ. պրեզիդենտական ընտրություններում Ժողովրդական ճակատի թեկնածու, ռադիկալ Պեդրո Ագիրրե Սերդան, որն ազգային բուրժուազիայի պարագլուխն էր, հաղթանակ տարավ։ Օլիգարխիայի և իմպերիալիզմի ուժերը հեռացվեցին քաղաքական իշխանությունից։ Ագիրրե Սերդայի հաղթանակը միջազգային մեծ արձագանք գտավ։ Չիլիի պատմության մեջ առաջին անգամ առաջադիմական ուժերը կարողացան միավորվել միասնական ճակատի մեջ և, օգտագործելով սահմանադրական ուղին, ռեակցիային պարտություն մատնել և իշխանության գլուխ անցնել։

Ժողովրդական ճակատի ծրագրի հիման վրա Ագիրրե Սերդայի կառավարությունը հռչակեց երկրի ազգային շահերին համապատասխանող ներքին ու արտաքին քաղաքականություն և սկսեց այն իրագործել։ Ժողովրդական ճակատի կառավարությունն ընդլայնեց դեմոկրատական ազատությունները, բարձրացրեց բանվորների շատ կատեգորիաների աշխատավարձը, իջեցրեց սննդամթերքի գները, բացեց բանվորական երիտասարդության համալսարաններ։ Ժողովրդական ճակատի առաջարկությամբ կառավարությունը հիմնեց արտադրության զարգացման կորպորացիա (ԿՈՐՖՈ), որի խնդիրն էր իրականացնել տնտեսական վերափոխություններ։ Երկրի ինդուստրացման գլխավոր պլանի հիման վրա ԿՈՐՖՈ-ն շարք մտցրեց բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, ավելացրեց էլեկտրաէներգիայի, վառելիքի արտադրությունը։ Չիլիում ձևավորվում էր պետական կապիտալիզմի սեկտորը, որն այն պայմաններում առաջադիմական դեր խաղաց երկրի տնտեսական զարգացման բնագավառում։

Ագիրրե Սերդայի կառավարությունն առաջին իսկ օրերից հանդիպեց խոշոր կապիտալի և կալվածատերերի համառ դիմադրությանը, որոնք սարոտաժի էին ենթարկում Ժողովրդական ճակատի ծրագրի իրագործումը։ 1939 թ. օգոստոսին ռեակցիոն ուժերը հակակառավարական խռովություն բարձրացրին, բայց վճռական հակահարված ստացան բանվոր դասակարգի կողմից։ Խռովությունը արագորեն ճնշվեց։

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբով ռեակցիան ուժեղացրեց հարձակումը Ժողովրդական ճակատի դեմ։ Պատերազմը նոր ֆինանսատնտեսական դժվարություններ առաջացրեց։ Այդ պայմաններում Ագիրրե Սերդայի կառավարությունը դիմեց ԱՄՆ-ի հետ կապերի ընդլայնմանը։ Դա Վաշինգտոնին թույլ տվեց ճնշում գործադրել Չիլիի կառավարության վրա և ակ-

տիվացնել չիլիական ռեակցիան։ Գործելով Ժողովրդական ճակատի ներսում, աջ ռադիկալները 1940 թ. փետրվարին կառավարական ճգնաժամ հրահրեցին և ուժեղացրին իրենց դիրքերը կառավարության մեջ։ Ավելի ուշ ռադիկալները պահպանողականների ու լիբերալների հետ կնքեցին «քաղաքական հաշտություն»։ Այդ իրադրության մեջ Ագիրրե Սերդան սկսեց ավտորիտար տենդենցներ դրսևորել, նկատելիորեն հեռանալ Ժողովրդական ճակատի ծրագրից և բանվորների դեմ բռնությունների սանկցիա տալ։ Պահպանողականները մտցրին ՉԿԿ-ն արգելելու վերաբերյալ օրինագիծ։ Այդ բոլորը Ժողովրդական ճակատին հրեց դեպի քայքայում, ճակատ, որի թիկունքին հարված հասցրին ԱՄՆ-ի իմպերիալիզմի հետ համագործակցելու դիրքերն անցած սոցիալիստական կուսակցության աջ ռեֆորմիստները։ 1941 թ. հունվարին Ժողովրդական ճակատը քայքայվեց։

Ժողովրդական ճակատի ծրագիրը շատ բաներով մնաց չկատարված։ Հակաիմպերիալիստական և ագրարային արմատական վերափոխումները չիրականացվեցին։ 30-ական թվականների կոնկրետ պայմաններում բանվոր դասակարգին չհաջողվեց պահպանել իր վճռական դերը Ժողովրդական ճակատի գործունեության մեջ. կառավարության և ճակատի ղեկավարության մեջ գերակշռությունը պահպանեցին մանր և միջին ազգային բուրժուազիայի շափավոր շրջանները, որոնք սահմանափակեցին նրա գործունեության մասշտաբները։

Սակայն Չիլիում իշխանության մեջ Ժողովրդական ճակատի գոյատևման ժամանակաշրջանը կարևոր պատմական հետևանքներ ունեցավ։ Դրվեցին պետական սեկտորի հիմքերը, ուժգնորեն խթանվեց ազգային էկոնոմիկայի զարգացումը, ընդլայնվեցին աշխատավորների սոցիալական ու դեմոկրատական նվաճումները։ Հակահարված տրվեց ռեակցիայի հարձակումներին և ապահովվեց Չիլիի զարգացումը սահմանադրական բուրժուա-դեմոկրատական ռեժիմի շրջանակներում։ Ժողովրդական ճակատի տարիներին խիստ ուժեղացավ բանվոր դասակարգի և կոմկուսի ազդեցությունը հանրապետության քաղաքական կյանքում։ Եթե 1937 թ. ՉԿԿ-ի թեկնածուների օգտին քվեարկում էր ընտրողների 4 տոկոսը, ապա 1941 թ.՝ արդեն 11 տոկոսից ավելին։ 30-ական թվականների Ժողովրդական ճակատը հիմնեց Չիլիի ձախ ուժերի միասնության ավանդույթները։ Այս բոլորը նպաստավոր նախադրյալներ էր ստեղծում Չիլիի բանվորական ու դեմոկրատական շարժման հետագա զարգացման համար, շարժում, որը նոր պայմաններում լայնորեն օգտագործում էր Ժողովրդական ճակատի փորձը։

ԳԼՈՒԽ 27

ԿԱՆԱԴԱՆ 1918—1939 ԹԹ.

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքները Կանադայի համար

Կանադան, որը տերիտորիայով երկրորդ տեղն է գրավում աշխարհում, կենտրոնացված բուրժուական պետություն դարձավ 1867 թ. հուլիսի 1-ին, երբ ընդունվեց Բրիտանական Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ակտը։ 1921 թ. երկրի բնակչությունը կազմում էր միայն 8,7 մլն մարդ։ Կանադայում պատմականորեն ձևավորվեց երկու ազգ՝ անգլո-կանադացիներ (43 տոկոս) և ֆրանկո-կանադացիներ (30 տոկոս). տարբեր երկրներից եկած իմմիգրանտների ազգային այլ բաղադրիչներ աստիճանաբար ձուլվում են այս ազգերից մեկի հետ։ Կանադայի համար բնորոշ է ռեգիոնալիզմը՝ բացի ֆեդերալից կան նաև պրովինցյալ կառավարություններ՝ պրովինցյալ խնդիրները լուծելու որոշակի ինքնավարությամբ հանդերձ։

Մինչև XX դարի սկիզբը Կանադայում կապիտալիզմը զարգանում էր դանդաղորեն։ 1900—1914 թթ. զանգվածային իմմիգրացիան և պրերիաների գաղութաբնակեցումը նպաստեցին երկրի տնտեսական զարգացման տեմպերի արագացմանը։ Այդ նույն տարիներին կանադական կապիտալիզմն սկսեց վերաճել մոնոպոլիստական ստադիայի։ Իմպերիալիզմի դարաշրջանում Կանադայում պարբերաբար սկսեցին սրվել ոչ միայն սոցիալական, այլև ազգային կոնֆլիկտները։

1914 թ. օգոստոսի 4-ին Կանադան Անգլիայի կողմում մտավ առաջին համաշխարհային պատերազմի մեջ։ Պատերազմը խթանեց լուրջ տեղաշարժերը Կանադայի սոցիալ-տնտեսական կառուցվածքում և արագացրեց նրա վերածումն ինդուստրիալ-ագրարային երկրի։ Հատկապես զգալի զարգացում ստացավ ռազմական արդյունաբերությունը, որը մինչ այդ Կանադայում չկար։ 1916 թ. ռազմական ձեռնարկություններում զբաղված էր ավելի քան 300 հազ. մարդ։ Անտանտի յուրաքանչյուր երրորդ արկը, որը պայթեցվում էր Արևմտյան ռազմաճակատում, պատրաստված էր Կանադայում։ Երկրի բնակչությունը կրում էր կեսմիլիոնանոց բանակի պահպանման ծանր բեռը։ Սպեկուլյացիայի և պետական պատվերներից հարստանալու օրգիաները ծնեցին տասնյակ նոր միլիոնատերեր։ Կանադական բուրժուազիան հարստացավ պատերազմում։ Դրան նպաստեցին պետական-մոնոպոլիստական տենդենցները։ Ռազմական բումը փոխարինվեց 1920—1921 թթ. տնտեսական ճգնաժամով և դրան հետևած լճացմամբ։ Կանադական էկոնոմիկան միայն 1925 թ. մտավ տնտեսական վերելքի փուլը։

Պատերազմի տարիներին աճեց գյուղատնտեսական արտադրանքի, հատկապես ցորենի արտադրությունը։ Պատերազմն ավարտվելուց հետո հացահատիկի գների անկման կապակցությամբ սկսվեց տևական ու անշարժ ագրա-

բային ճգնաժամ, որը հասցրեց կանադական ֆերմերության հիմնական դանդվածի դրության լուրջ վատացմանը։

Պատերազմի տարիներին Ռ. Բորդենի պահպանողական կառավարությունը կառավարում էր արտակարգ դեկրետների օգնությամբ, որոնցից շատերն ընդունվեցին ի շրջանցումն պառլամենտի և ուժի մեջ էին մնում մինչև 1924 թ.։ Սակայն ռեպրեսիվ օրենսդրությունը, որը սահմանափակում էր դեմոկրատական իրավունքները և քաղաքական գործունեության ազատությունը, չէր կարող կանգնեցնել, հատկապես պատերազմի եզրափակիչ էտապում, սոցիալական ու ազգային կոնֆլիկտների և բանվորների ու ֆերմերների հակապատերազմական շարժման աճը։ 1917 թ. հունիսին մտցված զինապարտությունը քայքայեց պահպանողականների կառավարության դրությունը, որը իշխող դասակարգին ստիպեց ստեղծել պահպանողականների և «պատերազմը մինչև հաղթական ավարտը հասցնելու» կողմնակից լիբերալների կոալիցիոն, «յունիոնիստական» կառավարություն։ Թեև 1917 թ. դեկտեմբերին կայացած ընտրությունները հաղթանակ բերեցին «յունիոնիստներին», բայց դրանք ի հայտ բերեցին երկրում գոյություն ունեցող խոր պառակտումը։ Կվեբեկ պրովինցիան գրեթե միահամուռ կերպով քվեարկեց «յունիոնիստների» դեմ։

Բանվորական շարժման վերելքը։ Կանադայի կոմունիստական կուսակցության ստեղծումը

Դեռ մինչև 1913 թ. Կանադայի բանվոր դասակարգի որակավորում ունեցող մասը, որը կազմակերպված էր արհմիություններում, զգալի չափով բուրժուականացավ։ Բացի այդ, արհմիութենական շարժումը պառակտված էր. գոյություն ունեին ազգամիջյան միություններ, այսինքն՝ ԱԲԿ-ի հետ կապված արհմիություններ և կանադական ազգային արհմիություններ։ Գլխավոր արհմիութենական միավորումը՝ Կանադայի արհեստակցական և բանվորական կոնգրեսը (ԿԱԲԿ), կառուցված էր արտադրամասային սկզբունքով և կանգնած էր Գոմպերսի «գործարար յունիոնիզմի» դիրքերում։ Սակայն պատերազմի դժվարությունների, ինչպես նաև եվրոպական երկրներում ծագած հեղափոխությունների ու աշխատավորների ակտիվ մարտերի վերաբերյալ լուրերի ազդեցության տակ մարտական տրամադրություններն ավելի մեծ չափով էին տիրում կանադական բանվոր դասակարգին։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության անմիջական ազդեցությունն արտահայտվեց ժողովրդական ելույթների աճի վրա։ Նրա ներգործության երկարատև բնույթն արտահայտվեց տեսական այն բագաժի վերագնահատման մեջ, որն իրենց հետ նոր դարաշրջան բերեցին կանադական սոցիալիստները, մարքսիզմ-լենինիզմն ընդունելու և յուրացնելու բազայի վրա բանվոր դասակարգի առաջավոր խմբերի գաղափարական վերազինման մեջ։

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաշրջանի մեջ Կանադայի մրտնելով բանվորական շարժումն ակտիվացավ։ Բուռն կերպով աճում էին արհմիությունների շարքերը. 1918 թ. նրանցում հաշվվում էր գրեթե 250 հազ., իսկ 1919 թ.՝ 378 հազ. անդամ, 1916 թ. եղած 160 հազարի դիմաց։ Ուժեղացավ գործադուլային շարժումը։ Բանվոր դասակարգի մարտական մասը պահանջում էր փոխել արհմիությունների քաղաքականությունը և դրանց կազմակերպական կառուցվածքը։ Լայն ճանաչում էին գտնում արհմիություններն արտադրական սկզբունքով կառուցելու և արտադրամասային արհմիությունները վերացնելու վերաբերյալ առաջարկությունները։ 1919 թ. մարտին Կալգարի քաղաքում տեղի ունեցավ Արևմտյան Կանադայի արհմիությունների կոնֆերանսը, որը ներկայացնում էր կանադական արհմիութենական շարժման առավել

հեղափոխական տարրերին։ Կոնֆերանսը միահամուռ կերպով ողջունեց Հոկտեմբերյան հեղափոխությունը և ողջույն ուղարկեց Վ. Ի. Լենինին։ Սակայն այդ պահին դեռ չկային բավականաչափ համախմբված բանվորական խմբեր, որոնք արտահայտեին և պաշտպանեին հասունացած մարքսիզմի սկզբունքները։ Դեռ դարի սկզբին կազմավորված սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները վարակված էին դոկտրինյորությամբ և աղանդավորությամբ և չէին կարող գլխավորել բանվորական շարժման տարերային վերելքը։ Այդ պատճառով բանվոր դասակարգի ակտիվ ուժերի պայքարը 1918—1920 թթ. ընթանում էր «հեղափոխական յունիոնիզմի» դրոշի ներքո։ «Հեղափոխական յունիոնիզմը» իրենից ներկայացնում էր անարխո-սինդիկալիզմի ամերիկյան տարատեսակությունը։

Արևմտյան Կանադայի արհմիությունների կոնֆերանսի ղեկավարները, որոնց մեջ քիչ չէին հեղափոխականորեն տրամադրված սոցիալիստները, նրա մասնակիցներին տարան սխալ ճանապարհով, կոչ անելով խզել կապերը ազգամիջյան միությունների հետ, դուրս գալ դրանց կազմից և ստեղծել «զուտ» հեղափոխական «մի մեծ միություն» (ՄՄՄ)։ Այդ կոչը տարընթացություն առաջացրեց բանվորական շարժման մեջ նրա հենց առավել խոշոր ճակատամարտերի պահին։ Կոնֆերանսի մասնակիցների մեծամասնությունը մերժեց քաղաքական պայքարը և բանվոր դասակարգի քաղաքական կուսակցության անհրաժեշտությունը։ Սակայն ՄՄՄ-ն, որի մեջ 1919 թ. միանգամից մտավ ավելի քան 40 հազ. բանվոր, չդիմացավ ժամանակի փորձությանը և ձեռնարկատերերի, կառավարության ու արտադրամասային միությունների ռեֆորմիստական ղեկավարության հարվածներին։ 1921 թ. վերջին Կանադայում անարխո-սինդիկալիստական տեսություն ու պրակտիկա կիրառելու այդ վերջին խոշոր փորձը մարեց։

1919 թ. համար բնորոշ է գործադուլների ու դրանց մասնակիցների՝ երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ամբողջ ժամանակաշրջանի համար ռեկորդային տարեկան թիվը (140 հազ. մարդ)։ Այդ պայքարի ամենավառ էջը Վինիպեգ քաղաքի ընդհանուր գործադուլն էր, որը սկսվեց մայիսի 2-ին՝ մետաղագործների նոր ստեղծված արհմիության հետ նրանց տընտեսական պահանջների վերաբերյալ բանակցություններ վարելուց ձեռնարկատերերի հրաժարվելու կապակցությամբ։ Մայիսի կեսերին մետաղագործներին պաշտպանեցին Վինիպեգի 35 հազ. բանվորներ։ 180 հազ. բնակչությամբ այդ քաղաքը գործադուլի հետևանքով կաղմալուծվեց (գործադուլ էին անում նաև ոստիկանությունը, փոստի աշխատողները, հրդեհաշեջները)։ Գործադուլային կոմիտեն իր վրա վերցրեց կարգի պահպանումը և բնակչության պարենամատակարարման կազմակերպումը։ Միայն հունիսի վերջին կառավարության, ձեռնարկատերերի և ԿԱԲԿ-ի ռեֆորմիստական ղեկավարների միացյալ ջանքերով Վինիպեգի գործադուլը ճնշվեց։ Բանվորների տնտեսական պայքարը կառավարությունը հայտարարեց «հեղափոխություն», դրանով իսկ «պատճառ» ստեղծելով գործադուլը խեղդելու համար և հապճեպ թխելով իրավական «հիմնավորում»։ Նա Քրեական օրենսգրքի մեջ մտցրեց հատուկ 98-րդ հոդվածը «հանցագործ դավադրության վերաբերյալ»։ Պաշտոնական ստահոդ վարկածը ժառանգեց վինիպեգյան գործադուլի բուրժուական հետագա պատմագրությունը։

1918—1920 թթ. բանվորական շարժման փորձից բանվոր դասակարգի առավել գիտակից մասի համար է՛լ ավելի ակնհայտ դարձավ նոր տեսության և բանվոր դասակարգի ղեկավար նոր կենտրոնի ստեղծման անհրաժեշտու-

թյունը։ Առաջացած կոմունիստական խմբերը 1919 թ. փետրվարին ձևնարկեցին կոմունիստական կուսակցություն ստեղծելու առաջին փորձը, բայց դրան խոչնդոտեցին ոստիկանական բռնությունները և կոմունիստական մի շարք խմբերի ղեկավարների ձերբակալությունը։ Միայն 1921 թ. հունիսին Գուելֆ քաղաքի մերձակայքում հաջողվեց գումարել անլեգալ համագումար և ստեղծել Կանադայի կոմունիստական կուսակցությունը։ Քանի որ երկրում պահպանվում էր ռեպրեսիվ օրենսդրությունը, կուսակցությունն անլեգալ էր։ Քաղաքական լեգալ կազմակերպության ստեղծումը հնարավոր դարձավ 1921 թ. դեկտեմբերի ընտրություններին պահպանողականների կրած պարտությունից հետո։ Կոմունիստների նախապատրաստած հիմնադիր համագումարը, որը կայացավ 1922 թ. փետրվարի 22—23-ը Տորոնտոյում, հռչակեց Կանադայի բանվորական կուսակցության ստեղծումը։ Համագումարում դիսկուսիա ծավալվեց ամենից առաջ արհմիութենական քաղաքականության հարցերի շուրջը։ Իր որոշումներում ԿԲԿ-ն մերժեց սինդիկալիստների տակտիկան և աղանդավորությունը, որոնց պրոպագանդիստներ էին հանդես գալիս ՄՄՄ-ի ներկայացուցիչները, հռչակեց միասնական ճակատի տակտիկա և առաջադրեց «Ե՞տ, դեպի արհմիությունները» լոզունգը։ Համագումարի որոշումները նշանավորեցին կանադական բանվորների կողմից մարքսիզմ-լենինիզմի տեսության յուրացման սկիզբը։ Արհմիութենական շարժման մեջ նոր տակտիկական գծի իրականացման գործում մեծ դեր խաղաց արհմիութենական պրոպագանդայի լիգան (ԱՊԼ), որն առաջացավ 1920 թ. ԱՄՆ-ում։ Այն ղեկավարում էր Ու. Ֆոստերը, իսկ կանադական սեկցիան՝ Տիմ Բակը։ Երրորդ համագումարում (1924 թ.) ԿԲԿ-ն ընդունեց Կանադայի կոմունիստական կուսակցություն անունը։

Ֆերմերական շարժման վերելքը։ Ազգային առաջադիմական կուսակցությունը

Կանադայում 1918—1922 թթ. դասակարգային պայքարի արտահայտություններից մեկը ֆերմերական շարժումն էր։ Ագրարային ռադիկալիզմը եղավ ֆերմերության դրության մեջ տեղի ունեցած լուրջ փոփոխության հետևանքը, հատկապես պրերիաների շրջանում. առաջին համաշխարհային պատերազմի հենց նախօրյակին Արևմուտքի «ազատ» հողերը բնակեցվեցին և բացվեց մոնոպոլիստական կապիտալի կողմից ֆերմերության էքսպրոպրիացիայի պրոցեսը։ «Գների մկրատները» 1919—1920 թթ. ոչ միայն «խուզեցին» պատերազմի ժամանակվա կուտակումները, այլև ֆերմերական էկոնոմիկան դրեցին ծանր փորձությունների առջև։ Այդ պատճառով 1919 թ. դարձավ ֆերմերական կազմակերպություններում բուռն դիսկուսիաների տարի։ Լայն ճանաչում գտավ տնտեսական պայքարից, որն իրենց բազմաթիվ կոոպերատիվ կազմակերպությունների միջոցով մղում էին ֆերմերներն ընդդեմ սպեկուլյանտ-միջնորդների ու մոնոպոլիաների, իր սեփական ծրագրով քաղաքական պայքարի անմիջական մասնակցությանն անցնելու դաղափարը։ 1920 թ. հունվարին տեղի ունեցավ Կանադայի ֆերմերական կազմակերպությունների համագումարը, որը հիմնեց ազգային առաջադիմական կուսակցությունը և ընդունեց ֆերմերական պլատֆորմը։ ԱԱԿ-ի պլատֆորմում արտացոլվեցին ֆերմերների հակամոնոպոլիստական պահանջները՝ երկաթուղային վճարների ու տարիֆների կրճատում, ուղղակի հարկերի սահմանում, պրոգրեսիվ հարկ կորպորացիաների վրա, տրանսպորտի և կապի միջոցների հասարակական սեփականություն, սենատի ռեֆորմ, ժողովրդական հանրաքվե, օրենսդրություն ընդդեմ հողային սպեկուլյանտների, արտակարգ օրենքների վերացում և այլն։ 1921 թ. ֆեդերալ

ընտրություններում ԱԱԿ-ը ստացավ 65 տեղ, պառլամենտում դառնալով երկրորդ կուսակցությունը։ Սակայն կուսակցության ղեկի մոտ հայտնվեց չափավոր թևը, որն արտահայտում էր խոշոր կապիտալիստական ֆերմերության շահերը։ Հետագայում ֆերմերական պարագլուխների այդ մասը, բավարարվելով կառավարության զիջումներով՝ զանազան վճարների ու տարիֆների որոշ իջեցմամբ, կանգնեց շարժումը կծկելու ուղին։ Այստեղ իր դերը խաղաց նաև այն փաստը, որ ֆերմերների շարժումը տեղի էր ունենում բանվոր դասակարգի շարժումից անջատ։ 1925 թ. ֆերմերական կուսակցությունը քաղաքական թատերաբեմից դուրս եկավ, իսկ նրա մի քանի պարագլուխներ վերադարձան լիբերալ կուսակցություն։

Մասսայական շարժումների ազդեցությունը բուրժուազիայի քաղաքականության վրա

Աշխատավորության ելույթների վերելքի ժամանակաշրջանում կոալիցիոն կառավարությունն սկսեց փլուզվել։ Կաբինետն առաջինը 1919 թ. լքեց չափավոր ֆերմերական պարագլուխ Տ. Կրերարը։ 1920 թ. հունիսին Ռ. Բորդենային փոխարինեց Ա. Միլլենը, որը կաբինետի մինիստրների տեղաշարժ կատարեց, բայց փրկել «առանց ժողովրդի կառավարությունն» այլևս հնարավոր չէր։ 1921 թ. նոյեմբերին պառլամենտը ցրվեց, և նոր ընտրությունները նշանակվեցին դեկտեմբերի 6-ին։

Ընտրությունների նախաշեմին նոր իրադրությունը հաշվի առնելու առավել նվազ ընդունակ գտնվեց պահպանողական կուսակցությունը։ 1920 թ. հունիսին տեղի ունեցած իր համագումարում նա փոխեց անունը և սկսեց կոչվել ազգային լիբերալ և պահպանողական կուսակցություն։ Սակայն նրա ծրագիրը ծայրահեղ դժգույն էր. նրա մեջ խոստումներ կային տարիֆների վերանայման, կառավարման ծախսերի տնտեսման, վերադարձած զինվորներին օգնություն ցույց տալու մասին և այլն։

Ավելի շուտ, 1919 թ. օգոստոսին կայացած լիբերալ կուսակցության համագումարը իր խոստումներում պահպանողականներից ավելի հեռուն գնաց։ Այստեղ արտահայտվեցին կուսակցության լուրջ պառակտումը, ֆերմերական շարժման արագ ռադիկալացումը և նրա հեռանալը լիբերալներից և, վերջապես, վախը աճող բանվորական շարժումից։ Լիբերալների համագումարում բախվեցին երկու գիծ՝ կուսակցության աջ գործիչ Ու. Ֆիլդինգի, որը հնարավոր էր համարում կոալիցիոն կառավարության պնդաճակատ քաղաքականության շարունակումը, և չափավոր լիբերալ Ու. Լ. Մակենզի Կինգինը, որը կարողացավ իրեն ներկայացնել որպես սոցիալական մի քանի ռեֆորմների և ժողովրդական մասսաների պահանջները հաշվի առնելու կողմնակից։ Դրա հետ մեկտեղ Մակենզի Կինգը, նախապատերազմյան կառավարություններում մի շարք տարիներ լինելով աշխատանքի մինիստրի տեղակալ և մինիստր, արդեն սոցիալական մանևրման մեծ փորձ ուներ աշխատանքային կոնֆլիկտների միջնորդական լուծման բնագավառում։ Նա հայտնի էր նաև նրանով, որ իր «Արդյունաբերությունն ու մարդկայնությունը» գրքում հանդես եկավ որպես դասակարգային համագործակցության դաղափարախոս, կանխագուշակելով «արդյունաբերության մեջ մարդկային հարաբերությունների» հետագա տեսության մի քանի տարրեր։ Այդ բոլոր հատկությունները Կինգի համար ապահովեցին համագումարի մեծամասնության աջակցությունը և կանադական բուրժուազիայի վստահությունը։ Հաղթելով 1921 թ. ընտրություններում, Մակենզի Կինգը երկար ժամանակով բնակություն հաստատեց իր նստավայրում՝ Օտտավայի մեծ Լորիե Հաուզում։ Այդ խոշոր քաղաքական գործիչը կանգնած էր լի-

բերալ կուսակցության գլուխ և գլխավորում էր կանադական կառավարությունները ընդհուպ մինչև 1948 թ. (բացառությամբ 1930—1935 թթ., երբ իշխանությունը գտնվում էր պահպանողականների ձեռքում)։

Նորագույն ժամանակներում լիբերալ կուսակցությունը հանդես եկավ իբրև կանադական բուրժուազիայի քաղաքական գլխավոր ուժ։ Սակայն լիբերալները պառլամենտում բացարձակ մեծամասնություն չստացան (235-ից 177 տեղ)։ Սենսացիոն հաջողության հասավ ֆերմերական կուսակցությունը (65 տեղ), որն առաջ անցավ պահպանողականներից (50 տեղ)։ Այսպիսով, Կինգին բաժին ընկավ դժվարին խնդիր՝ պրոգրեսիստների աջակցությունը ստանալով, ապահովել կաբինետի կայունությունը և միևնույն ժամանակ ֆերմերներին վերադարձնել լիբերալ կուսակցություն։ Այդ խնդիրը Մակենզի Կինգը լուծեց զանազան վճարների ու տարիֆների նվազեցման բնագավառում ֆերմերներին կատարած զիջումների միջոցով։

1926 թ. ընտրությունները բացարձակ մեծամասնություն չտվեցին լիբերալներին (116 տեղ) և Կինգի երկրորդ լիբերալ կառավարության բախտը կախված էր 3—4 դեպուտատ ունեցող մի ոչ մեծ խմբի աջակցությունից։ Այդ խումբը պառլամենտում ընտրվել էր հիմնականում բանվորական ցուցակներով։ Խմբի աջակցությունը գնվեց 1926—1927 թթ. պառլամենտում ծերության (70 տարին անց) կենսաթոշակային ապահովման վերաբերյալ բիլլը անցկացնելու միջոցով։ Գործնականում դա լիբերալների 1919 թ. մեծախոստում ծրագրի միակ կետն էր, որ կատարվեց։ 20-ական թվականներին կառավարության վրա պառլամենտից դուրս մասսաների լուրջ կազմակերպված ճնշման բացակայությունը բացատրում է Կինգի չափավոր լիբերալիզմը։

Կանադան համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին։ Ռ. Բենետի պահպանողական կաբինետը

1925—1929 թթ. վերելքի կարճատև փուլից հետո կանադական էկոնոմիկան վերստին հայտնվեց իր խորությամբ ու տևողությամբ չտեսնված ճգնաժամի աքցանի մեջ։ Միակողմանիորեն դեպի արտահանությունը կողմնորոշվելու կապակցությամբ ճգնաժամից առավել մեծ չափով տուժեցին այն ճյուղերը, որոնք արտադրում էին հումքային մթերքներ (երկրի արտահանության $^{2}/_{3}$-ը)։ Ճգնաժամի կործանիչ ուժը գյուղատնտեսության մեջ լրացվեց դաժանագույն երաշտով և փոշեխառն հողմերով, որոնք ընդգրկեցին պրերիաները։ Բնակչության եկամուտներն ընկան կիսով չափ, իսկ ֆերմերականը՝ հինգ անգամ. գործնականորեն վարձու աշխատանքով զբաղված յուրաքանչյուր երկրորդ աշխատող զրկվեց աշխատանքից և հարյուր հազարավոր ընտանիքներ մնացին առանց գոյության միջոցների։ Ճգնաժամի տարերքի առջև բանվորները լիովին անպաշտպան գտնվեցին. գործազրկությունից ապահովագրվելու ոչ մի սիստեմ Կանադայում չկար։ 1933 թ. երկրի 10 մլն բնակչությունից ավելի քան 1 մլն 350 հազ. մարդ աղքատության կապակցությամբ այս կամ այն ձևով ժամանակավոր օգնություն էին ստանում։ Տասնյակ հազարավոր հիմնականում երիտասարդ մարդիկ տեղավորվել էին «աշխատանքային ճամբարներում»։

1930 թ. ամռանը, ճգնաժամի եռուն պահին տեղի ունեցան հերթական պառլամենտական ընտրությունները։ Պահպանողականները հեշտությամբ հաղթանակ տարան. մասսաների դժգոհությունն ուղղվեց իշխանության գլուխ կանգնած կուսակցության դեմ։ Կառավարությունը գլխավորեց պնդաճակատ տորի, միլիոնատեր Ռ. Բեննետը։ Ներքին քաղաքականության մեջ կառավարությունը լայնորեն օգտվում էր բռնության մեթոդից, որի համար նրան անվանում էին «երկաթյա կրունկի» կառավարություն։ 30-ական թվականների առաջին կեսի առավել նշանակալի գործադուլները ճնշվեցին ոստիկանության օգնությամբ։ Կոմկուսի հալածանքը, որը ճգնաժամի տարիներին իրենց ամենօրյա կարիքների պաշտպանության համար մասսաների մղած պայքարի գլխավոր կազմակերպիչն էր, 1931 թ. օգոստոսին ավարտվեց Տիմ Բակի գլխավորությամբ կուսակցության պարագլուխների ձերբակալությամբ և Քրեական օրենսգրքի տխրահռչակ 98-րդ հոդվածի հիման վրա նրա արգելմամբ։

1935 թ. սկզբին, հերթական համընդհանուր ընտրությունների նախօրյակին, պահպանողականների տիրապետության արդյունքները ծայրահեղ մռայլ էին. երկրում մոլեգնում էր մասսայական գործազրկությունը, թվում էր, թե հասարակական զայրույթը ծայր աստիճանի է հասել. գրեթե բոլոր պրովինցիաներում պրովինցիալ լեգիսլատուրաների ընտրությունների ժամանակ պահպանողականները կործանարար ջախջախման ենթարկվեցին. պահպանողական կուսակցությունը պառակտվեց, նրանից բաժանվեց մանրբուրժուական օպոզիցիոն վերակառուցման կուսակցությունը։ Այդ պայմաններում պրեմիեր Բեննետը 1935 թ. հունվարին կանադական ռադիոյով հանդես եկավ ճառերի մի սերիայով, որոնցում հռչակեց կառավարության վճռականությունը «վերջ տալ անհավասարությանը և ժամանակակից սոցիալական կարգերի անարդարությանը» և առաջարկեց իր «նոր կուրսը»՝ գործարար ակտիվության կարգավորման, գործազրկության գծով սոցիալական ապահովման սիստեմի, 8-ժամյա աշխատանքային օրվա, աշխատավարձի մինիմումի, հանգստի ամենշաբաթյա օրվա, ֆերմերների արտոնյալ վարկավորման և այլ հարցերի վերաբերյալ օրենքները։ 1935 թ. ամռանը օրենքներն ընդունվեցին պառլամենտի կողմից, չնայած այն բանին, որ և՛ պահպանողականները, և՛ լիբերալները գիտակցում էին դրանց կենսագործման անհնարինությունն առանց սահմանադրության մեջ լրացումներ կատարելու (օրինակ, աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ օրենսդրությունը մտնում էր պրովինցիաների իրավասության մեջ)։ Բեննետի ուշացած և ցուցադրական ռեֆորմիզմը պահպանողական կուսակցությանը չփրկեց ընտրություններում դաժան պարտությունից, որը գրեթե քառորդ դարով նրա առջև փակեց երկիրը կառավարելու ճանապարհը։

1935 թ. հոկտեմբերին կայացած համընդհանուր ընտրություններում հաղթեց լիբերալ կուսակցությունը, որը հանդես էր գալիս «Կի՛նգը կամ քաոս» լոզունգով։ Ու. Լ. Մակենզի Կինգը կազմեց իր երրորդ կառավարությունը։

1935 թ. ընտրությունները նշանակալից էին նրանով, որ դրանցում ընտրողների 25 տոկոսն իրենց ձայնը տվեց քաղաքական նոր կուսակցություններին, որոնք առաջացել էին ճգնաժամի ժամանակ որպես մասսաների հակամոնոպոլիստական և հակակապիտալիստական տրամադրությունների արդյունք։ Դա երկու ավանդական կուսակցությունների քաղաքականությունից մասսաների խոր հիասթափության վկայությունն էր։ 1932 թ. օգոստոսին առաջացավ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որն ընդունեց Կոոպերատիվ համագործակցության ֆեդերացիա (ԿՀՖ) անունը։ Իր սոցիալական կազմով, գաղափարական սկզբունքներով խիստ խայտաբղետ այդ կուսակցությունը իրենից ներկայացնում էր պրովինցյալ բանվորական կուսակցությունների և ֆերմերական կազմակերպությունների ֆեդերացիա. նա ակտիվորեն հանդես էր գալիս արդյունաբերության առանձին ճյուղերի ազգայնացման, պլանավորում մտցնելու և «համընդհանուր բարգավաճման» հասարակություն հաստատելու լոզունգներով։ 30-ական թվականների կեսերին Ալբերտ պրովինցիայում

ձևավորվեց սոցիալական վարկի կուսակցությունը, որը գլխավորեց ֆերմերների ու մանրբուրժուական խավերի պայքարը մոնոպոլիաների և բանկային կապիտալի բռնադատման դեմ։ 1935 թ. համընդհանուր ընտրություններում մասնակցեց վերակառուցման մանրբուրժուական ռեֆորմիստական կուսակցությունը, որին գլխավորում էր նախկին բեննետյան մինիստր Դ. Ստիվենսը։ Բանվորների, ֆերմերների, քաղաքի մանրբուրժուական խավերի դեմոկրատական, հակամոնոպոլիստական շարժումների վերելքն իր արտահայտությունը գտավ նաև մի շարք այլ մանր քաղաքական կուսակցությունների ստեղծման մեջ։ Այդ նույն ժամանակ մանրբուրժուական զանգվածների հիասթափությունից ու աղքատությունից փորձեցին օգտվել ֆաշիստական խմբերը (օրինակ, ժողովրդական կուսակցությունը), որոնք առաջացել էին Մանիտոբում, Բրիտանական Կոլումբիայում, Կվեբեկում և այլ պրովինցիաներում։ Կվեբեկում Մ. Դյուպլեսիի ղեկավարությամբ, որը իտալական ֆաշիստների կորպորատիվ սիստեմի կողմնակից էր, ձևավորվեց «ազգային դաշինք» կուսակցությունը։

30-ական թվականներին առաջացած քաղաքական նոր կուսակցություններից հետագայում միայն սոցիալ-դեմոկրատականը կայունացավ կանադական պառլամենտարիզմի սիստեմում որպես երրորդ կուսակցություն։ Այսպիսով Կանադայի համար բնորոշ դարձավ նրա քաղաքական կառուցվածքի բազմակուսակցականությունը։

Կանադան երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին

Կինգի կառավարության առաջին գործողություններից մեկը բեննետյան «նոր կուրսի» ամբողջ օրենսդրության հանձնումն էր Կանադայի գերագույն դատարանին, որը 1936—1937 թթ. այն համարեց սահմանադրությանը հակասող։ Ճիշտ է, լիբերալները զիջումների դիմեցին բանվորական կազմակերպությունների պահանջներին և վերացրին Քրեական օրենսգրքի 98-րդ հոդվածը, և կոմկուսը ընդհատակից դուրս եկավ։ Նրանք մերժեցին Խաղաղօվկիանոսյան մասնավոր երկաթուղու պլանը, որը հույս ուներ կլանել պետական ազգային երկաթուղին։ Սակայն լիբերալների կառավարությունը ձգձգում էր արհմիությունների առաջադրած գլխավոր հարցի՝ գործազրկության գծով ապահովագրության սիստեմ մտցնելու խնդրի լուծումը։ Այդ և մյուս սուր հարցերը նա հանձնեց հատուկ հանձնաժողովների քննարկմանը, որոնք միայն երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին ներկայացրին իրենց հանձնարարականները։

30-ական թվականների երկրորդ կեսը նշանավորվեց բանվորական շարժման մեջ կատարված դրական տեղաշարժերով։ Արհմիությունները հաղթահարեցին լճացումը, և նրանց անդամների թիվը 1935 թ. 280 հազարից 1937 թ. հասավ մինչև 383 հազարի, գերազանցելով 1919 թ. ռեկորդային տվյալները։ Այդ փոփոխությունների կարևորագույն գործոնն արտադրական արհմիությունների ստեղծման համար ծավալված շարժման հաջող զարգացումն էր, որը կապված էր Կանադայի արտադրական արհմիությունների կոնգրեսի գործունեության և կանադական կոմունիստների ակտիվության հետ։ Կոմունիստների ղեկավարած բանվորական միասնության լիգան, որը ստեղծվել էր 1929 թ. ԱՊԼ-ի բազայի վրա, ցրվեց և նրա անդամները մտան ԿԱԲԿ-ի կազմակերպությունների մեջ. նրա մեջ մտան նաև արտադրական միություններ։ Այսպես եղավ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին արհմիութենական միասնության համար։ Սակայն ԱԱՖ-ի ռեակցիոն պարագլուխների պահանջով արտադրական արհմիությունները, որոնք հաշվվում էին 50 հազ. անդամ, 1939 թ. հունվարին վտարվեցին ԿԱԲԿ-ից։ Առանձին պրովինցիաներում բանվոր դասակարգը հասավ կազմակերպություններ ունենալու, աշխատավարձի մինիմումի, 8-ժամյա աշխատանքային օրվա և այլ հարցերի վերաբերյալ օրենքների ընդունմանը։ Բանվորները պայքարում էին աշխատանքային օրենսդրությունը ֆեդերալ մասշտաբով միասնականացնելու համար։ Բանվորական շարժումը պաշտպանեց հանրապետական Իսպանիային, նրա կողմից կռվելու համար ուղարկելով Մակենզի-Պապինոյի անվան գումարտակը։ Բացի այդ, Իսպանիա ուղարկվեց արյան փոխներարկման դաշտային մի կայան՝ կոմունիստ բժիշկ Ն. Բեթյունի ղեկավարությամբ։

Այդ տարիներին Կանադայի կոմունիստական կուսակցությունը, ղեկավարվելով Կոմինտերնի VII կոնգրեսի պատմական որոշումներով, վարում էր դեմոկրատական ուժերի համախմբման քաղաքականություն ընդդեմ կանադական ռեակցիայի ու ֆաշիզմի ուժերի։ Կուսակցությունը հաղթահարեց անցյալի աղանդավորական սխալները և ամրապնդեց իր ազդեցությունը բանվոր դասակարգի մեջ, 1938 թ. նրա շարքերում հաշվվում էր 16 հազ. անդամ՝ 1931 թ. 3 հազարի փոխարեն։ Նա հանդիսանում էր 30-ական թվականների հիմնական մասսայական դեմոկրատական կազմակերպությունների՝ Բանվորների պաշտպանության լիգայի, Ֆաշիզմի և պատերազմի դեմ պայքարի լիգայի, Կվեբեկի Քաղաքացիական ազատությունների պաշտպանության լիգայի և այլ կազմակերպությունների գլխավոր կազմակերպիչ ուժը։ Այդ գործունեությունը մեծ նշանակություն ուներ, քանի որ կանադական մոնոպոլիաներն ակտիվորեն խրախուսում էին աջ ուժերի գործունեությունը։ 1936 թվականից Կվեբեկում իշխանության գլուխ էր կանգնած Մ. Դյուպլեսիի ռեակցիոն նացիոնալիստական-կղերական կաբինետը։ Կոմունիստական գործունեությունն արգելող 1937 թ. «կախովի կողպեքի» օրենքը Կվեբեկում մասսաների ամեն մի դեմոկրատական պահանջների նկատմամբ ստեղծեց անհանդուրժողականության մթնոլորտ։ Օնտարիոյում պրովինցիալ կառավարությունը գլխավորում էր աջ լիբերալ Մ. Հեպբեռնը, որը վարում էր կոպիտ հակաբանվորական քաղաքականություն։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին Տորոնտոյի և Մոնրեալի խոշոր ֆինանսիստների անմիջական մասնակցությամբ ստեղծվեց Ղեկավարության լիգան, որը հանդես էր գալիս «ուժեղ» վերկուսակցական կաբինետի օգտին։

Արտաքին առևտրական հարաբերությունների ասպարեզում Մակենզի Կինգի կառավարությունն այդ տարիներին ավարտեց ԱՄՆ-ի հետ առևտրական պատերազմի շրջադարձը, պատերազմ, որը փորձում էին պահպանողականները վարել ճգնաժամի ժամանակաշրջանում, դեպի փոխադարձ զիջումները և առևտրական պայմանագրերի կնքումը։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ձևավորված անգլո-ամերիկյան բլոկում Կանադան հանդես էր գալիս որպես «կապող օղակ»։ Կանադայի այդ վիճակը պայմանավորված էր ԱՄՆ-ից ունեցած նրա աճող կախմամբ և կանադական էկոնոմիկայում ամերիկյան մոնոպոլիաների դիրքերի ամրապնդմամբ։

Կանադայի արտաքին քաղաքականությունը 1919—1939 թթ.

Առաջին համաշխարհային պատերազմի և կանադական մոնոպոլիստական կապիտալիզմի հետագա զարգացման հետևանքով կանադական բուրժուազիայի դիրքերի ամրապնդումը երկրում հանդիսացավ այն հիմքը, որը պայմանավորեց Կանադայի վիճակը որպես Բրիտանական կայսրության մեջ կենտրոնախույս տենդենցների ակտիվ հարուցող։ 20-ական թվականներին ժողովրդականություն վայելող լոզունգ դարձավ «կայսրությունում հավասար ստատուսի» պահանջը։ Կանադական արտաքինքաղաքական անկա-

խության հիմքում առաջին քարերը դրվեցին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Կանադան ներկայացվեց կայսերական ռազմական կաբինետներում և Անգլիան դոմինիոնները ճանաչեց որպես կայսերական միության ինքնավար մասնակիցներ։ Այդ զիջումներն Անգլիան դիտում էր որպես պատերազմի ժամանակաշրջանի ժամանակավոր մաններ։ Սակայն նորագույն ժամանակներում աշխարհում տեղի ունեցած արմատական փոփոխությունները անհնարին դարձրին վերադարձը դեպի հին հարաբերությունները Կանադայի և Անգլիայի միջև։ 1919 թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսում Կանադայի դելեգատներն անգլիական դելեգատների հետ ստորագրեցին Վերսալյան պայմանագիրը։ 1923 թ. առաջացավ մի նախադեպ, երբ Կանադան, հակառակ Անգլիայի առարկություններին, «Կանադա դոմինիոնի» անունից ԱՄՆ-ի հետ համաձայնագիր ստորագրեց Խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասում վահանաձկան պահպանման վերաբերյալ։ 1926 թ. կայսերական կոնֆերանսի սկսման պահին ձևավորվեց Կանադայի արտաքինքաղաքական ակտերի սիստեմը, որը բոլոր դոմինիոնների համար դարձավ նրանց արտաքինքաղաքական սուվերենությունը պաշտոնապես ճանաչելու պահանջների հիմք։ Ելնելով այդ կոնֆերանսի որոշումներից, 1927 թ. փետրվարին Կանադան իր առաջին դեսպանն ուղարկեց ԱՄՆ։ Ապա դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին մի շարք այլ երկրների հետ։ 1931 թ. Վեստմինստերյան ստատուտը ճանաչեց դոմինիոնների արտաքինքաղաքական սուվերենությունը և օրենսդիր իրավասությունը։ Սակայն ստատուտը իրավունք չէր տալիս առանց Անգլիայի սանկցիայի ուղղումներ կամ լրացումներ մտցնել Բրիտանական Հյուսիսային Ամերիկայի մասին 1867 թ. ակտի մեջ։ Սուվերենության համար կանադական բուրժուազիայի մղած պայքարի դասակարգային սահմանափակությունն արտահայտվեց նաև գաղութային կախման այլ մնացուկների պահպանման մեջ. Կանադան չուներ իր դրոշակը, հիմնը և զուտ կանադական քաղաքացիությունը, նա չէր կարող ինքնուրույնորեն լուծել պատերազմի ու խաղաղության հարցերը։ Անգլիայից արտաքինքաղաքական ինքնուրույնության ընդարձակման տենդենցի հետ Կանադայի համար այդ տարիներին բնորոշ էին մերձեցումը ԱՄՆ-ի հետ և ԱՄՆ-ից նրա ունեցած կախման աճը։

Կանադա-սովետական հարաբերությունների բնագավառում Կանադայի կառավարությունները 1919—1939 թթ. ընթանում էին Անգլիայի հակասովետական քաղաքականության ետևից։ Բորդենի կառավարությունը մասնակցեց հակասովետական ինտերվենցիային, Վլադիվոստոկ ուղարկելով մոտ 4 հազ. զինվոր և մեկ հրետանային բրիգադ Մուրմանսկ ու Արխանգելսկ՝ անգլիական ինտերվենցիոն ուժերի կազմում։ Մինչև 1942 թ. Կանադայի և ՍՍՀՄ-ի միջև դիվանագիտական հարաբերություններ չկային։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին կանադական կառավարությունը պաշտպանում էր արևմտյան տերությունների մյունխենյան քաղաքականությունը։

ԳԼՈՒԽ 28

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ 1924—1939 ԹԹ.

Միջազգային բանվորական շարժման հիմնական առանձնահատկությունները կապիտալիզմի մասնակի կայունացման պայմաններում

Կապիտալիզմի մասնակի կայունացումը, որը մի շարք երկրներում սկսվեց դեռ 1922—1923 թթ., Գերմանիայում, Բուլղարիայում և Լեհաստանում 1923 թ. աշնանը հեղափոխական պրոլետարական ելույթների կրած պարտությունից հետո դարձավ կապիտալիստական աշխարհում ձևավորված իրադրության գլխավոր գիծը։ Կապիտալիստական էկոնոմիկան դուրս եկավ հետպատերազմյան ճգնաժամի վիճակից և թեվակոխեց վերելքի փուլը։ Կապիտալի հետագա համակենտրոնացման ու կենտրոնացման հիման վրա վիթխարի մոնոպոլիաներն է՛լ ավելի զորեղացան։ Նրանք իրենց վերահսկողության տակ էին դնում արդյունաբերության ամբողջական ճյուղեր։

Որոշ ժամանակով ավելի խաղաղ բնույթ ընդունեցին նաև կապիտալիստական պետությունների փոխհարաբերությունները։ Վերսալյան պայմանագրում և Վաշինգտոնյան համաձայնագրերում արձանագրված աշխարհի իմպերիալիստական բաժանման արդյունքները, ինչպես նաև «Դաուեսի պլանը», որը ժամանակավորապես մեղմացրեց հակասությունները Գերմանիայի և հաղթող երկրների միջև և ուներ հակասովետական ուղղվածություն, դարձան առաջատար կապիտալիստական տերությունների ազդեցության ոլորտների վերաբերյալ համաձայնագրերի հիմքը։

Ժամանակավոր, մասնակի կայունացումը վերաբերում էր նաև բուրժուական պետական ռեժիմներին։ Նրանց դրությունը որոշ չափով կայունացավ։ Այդ պայմաններում ուժեղացավ բուրժուազիայի գաղափարա-քաղաքական ներգործությունն աշխատավորության վրա։ Տնտեսական վերելքը, գործազրկության կրճատումը, աշխատավորների առանձին խավերի կենսամակարդակի որոշակի բարձրացումը՝ այս բոլորը բուրժուազիան օգտագործում էր մասսաների մեջ պատկերացումներ պատվաստելու այն մասին, որ կապիտալիզմն իրը կարողացել է հաղթահարել իր ամենավատ կողմերը։ Բացահայտ բռնությունն ամրապնդելով սոցիալական մաններներով և մասսաների գաղափարական մշակմամբ, բուրժուազիան հույս ուներ իր կարգերին վերադարձնել նախկին կայունությունը։ Համաշխարհային բուրժուազիայի այդ հույսերը կապված էին աշխարհի առաջին պրոլետարական պետությունը՝ Սովետական Միությունը վերացնելու նրա ձգտման հետ։

Կապիտալիզմի կայունացումը չէր կարող կայուն ու երկարատև լինել, քանի որ այն ծավալվում էր կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում։ Կայունացումը չէր կարող փոխել այն վճռական փաստը, որ աշխարհի $^1/_6$ մասում զարգանում ու ամրապնդվում էին սոցիալիստական հարաբերությունները։ ՍՍՀՄ-ի հենց գոյությունն ու ամրապնդումը, ամբողջ աշխարհի վրա նրա ազդեցության աճը նպաստում էին իմպերիալիզմի հիմքերի հետա-

դա խարխլմանը։ Կայունացման հարաբերական բնույթը բխում էր նաև այն բանից, որ հակասություններն աշխատանքի ու կապիտալի, մետրոպոլիաների ու գաղութների միջև, իմպերիալիստական տերությունների միջև պահպանվում էին և կապիտալիզմի հենց բնույթի հետևանքով անխուսափելիորեն պետք է սրվեին։

Կապիտալիզմի մասնակի կայունացման պայմաններում միջազգային բանվոր դասակարգի զարգացումն աչքի էր ընկնում մի շարք առանձնահատկություններով։ Կապիտալիստական երկրներում նկատվում էր հեղափոխական բանվորական շարժման անկում։ Չնայած առանձին խոշոր դասակարգային կոնֆլիկտներին, պրոլետարական ելույթների ակտիվությունը նվազում էր։ Դա իր արտահայտությունը գտավ նաև գործադուլային պայքարի նկատելի նվազման մեջ։ Այդ նույն ժամանակ բանվորական շարժման մեջ ուժեղացավ ռեֆորմիստական կուսակցությունների ազդեցությունը։ Սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխները բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության ուղին էին ներքաշում ռեֆորմիստական տարբեր կազմակերպությունների մեջ մտնող միլիոնավոր աշխատավորների, դրանով իսկ օգնելով կապիտալիստական ռեժիմների ամրապնդմանը։

Եվրոպայի մի շարք երկրներում (Անգլիա, Շվեդիա, Դանիա) սոցիալ-դեմոկրատիան առավել նվազ կամ տևական ժամկետով իշխանության գլուխ անցավ։ Սակայն սոցիալ-դեմոկրատական կառավարությունների իրականացրած ռեֆորմները սոսկ մասնակիորեն բարելավեցին աշխատավորների նյութական ու իրավական դրությունը և ոչ մի տեղ չդրեցին սոցիալ-տնտեսական խոր վերափոխությունների սկիզբը։ Ո՛չ Մակդոնալդի կառավարությունն Անգլիայում, ո՛չ Բրանտինգի կառավարությունը Շվեդիայում, ո՛չ էլ Ստաունինգի կառավարությունը Դանիայում չփորձեցին ոտնձգություն կատարել կապիտալի որևէ էական դիրքերի վրա։ Գլխավորելով իշխանությունը, սոցիալ-դեմոկրատիան շարունակում էր ավելի ճկուն մեթոդներով անցկացնել սովորական բուրժուական քաղաքականությունը։

Սոցիալ-դեմոկրատիայի տեսաբաններ Կ. Կաուցկին, Ռ. Հիլֆերդինգը և մյուսները հենց այդ ժամանակ առաջադրեցին այն թեզը, որ կապիտալի համակենտրոնացման ուժեղացումը, մոնոպոլիաների և պետական-մոնոպոլիստական կարգավորման աճը իբր նշանակում են արտադրության անարխիայի հաղթահարում, անճգնաժամ զարգացման հնարավորություն և «կազմակերպված կապիտալիզմի» ստադիայի հաստատում։ Մոնոպոլիաներն ու պետական մարմինները, ասում էր Հիլֆերդինգը, տնտեսական կյանքում ավելի ու ավելի մեծ չափերով են պլանավորման տարրեր մտցնում, հարկավոր է դրանք ամեն կերպ պաշտպանել, որովհետև հենց դա պետք է հասցնի «ազատ մրցակցության կապիտալիստական սկզբունքի փոխարինմանը պլանաչափ արտադրության սոցիալիստական սկզբունքով»։ Պնդելով, թե «կազմակերպված կապիտալիզմը» աստիճանաբար վերաճում է տնտեսության սոցիալիստական սիստեմի, սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդները պրոլետարիատին կոչ էին անում իրեն համարել արդեն ոչ թե բուրժուազիայի գերեզմանափոր, այլ նրա խաղաղ ժառանգորդ։ Ֆրանսիայում Լ. Բլյումը մի դրույթ առաջադրեց այն մասին, որ սոցիալիստական կուսակցությունը, գտնվելով կառավարության մեջ, պետք է լոյալ կերպով կատարի «կապիտալիստական հասարակության կառավարչի» պարտականությունները, որպեսզի նպաստի նրա աստիճանական վերակառուցմանը։ Բուրժուական պացիֆիստների ետևից աջ սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդները մասսաների մեջ պատրանքներ էին տարածում

կապիտալիստական երկրների միջև հավերժական խաղաղության հնարավորության, գաղութների շահագործման մեղմացման մասին։

Այդ բոլոր փաստարկները օգտագործվում էին այն բանի համար, որպեսզի ռեֆորմիստական քաղաքականությունը հռչակեին միակ ճշմարիտը, իսկ կոմունիստականը՝ անընդունելի։

Սոցիալիստական բանվորական Ինտերնացիոնալի Մարսելի կոնգրեսում, որը տեղի ունեցավ 1925 թ. օգոստոսին, սոցիալ-դեմոկրատիան առաջադրեց կապիտալիզմի կայունացմանը և կապիտալիստական հասարակության հետագա «կազդուրմանն ու բարելավմանը» աջակցություն ցույց տալու պլաններ։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մեծամասնությունը կոնգրեսում հանդես եկավ հակասովետական դիրքերից, իսկ մյուսները (Ավստրիայի սոցիալ-դեմոկրատները, Անգլիայի լեյբորիստները) սահմանափակվում էին Սովետական Ռուսաստանի բանավոր կիսաճանաչմամբ։ Մարսելի կոնգրեսի՝ ռազմական վտանգի հարցի գծով բանաձևը նշում էր ռազմական վտանգի երկու աղբյուր՝ առաջին, իմպերիալիստների վախը Ասիայում հեղափոխական շարժման հանդեպ, որը նրանց մղում է ագրեսիվ քաղաքականություն վարել ՍՍՀՄ-ի նկատմամբ, երկրորդ, ՍՍՀՄ-ի և Կոմինտերնի կողմից իբր իրականացվող «հեղափոխության արտահանությունը»։ Դրանով իսկ սոցիալ-դեմոկրատիան փորձում էր արդարացնել իմպերիալիզմի արտաքին քաղաքականությունը և ՍՍՀՄ-ին զրպարտչորեն մեղադրում էր ագրեսիվ արտաքին քաղաքականություն վարելու մեջ։

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները շատ երկրներում առաջադրեցին կապիտալիզմի աստիճանական վերափոխման գործնական ծրագրեր։ Գերմանիայում և Ավստրիայում դա այսպես կոչված տնտեսական դեմոկրատիայի ծրագիրն էր։

Անգլիայում ռեֆորմիստական արհմիությունները և լեյբորիստական կուսակցությունը պաշտպանեցին «արտադրության ռացիոնալացման» կամպանիան։

ԱՄՆ-ում աշխատանքի ամերիկյան կոնֆեդերացիան (ԱԱՖ) դատապարտեց գործադուլները որպես «պայքարի հնացած մեթոդ» և հայտարարեց, որ բանվորների շահերը «ամենից լավ կարող են ապահովվել արտադրանքի ավելացման, նրա որակի բարելավման և աշխատավարձի բարձր մակարդակով»։

«Տնտեսական դեմոկրատիայի», «արտադրության ռացիոնալացման» և դրանց նման մյուս լոզունգները հիմք հանդիսացան բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության պրակտիկայի համար, որն այդ տարիներին լայնորեն իրականացվում էր ռեֆորմիստական կուսակցությունների և արհմիությունների կողմից։ Բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության քաղաքականությունը, որը կոչված էր զինաթափելու բանվորներին, խորացնում էր բանվորական շարժման մեջ գոյություն ունեցող պառակտվածությունը։

Կապիտալիզմի մասնակի կայունացման տարիներին սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի մեջ մտնում էին մոտ 40 կուսակցություններ 6,5—7 մլն անդամ ընդհանուր թվով։ Արհմիությունների Ամստերդամի Ինտերնացիոնալը միավորում էր 17 մլն բանվոր։ Այդ կազմակերպությունները բանվորական շարժման մեջ մտցնում էին ռեֆորմիզմի, բուրժուազիայի հետ համաձայնողականության ոգի, հակադրում առաջավոր բանվորների դասակարգային պայքարին։ Այս բոլորը զգալի դժվարություններ էր ստեղծում հեղափոխական պրոլետարական պայքարի զարգացման համար։

Կապիտալիզմի մասնակի կայունացման կապակցությամբ Արևմուտքի երկրների կոմկուսների առջև նոր խնդիրներ կանգնեցին՝ պաշտպանողական պայքարը կապիտալի տնտեսական, քաղաքական և գաղափարական հարձակման դեմ։ Բուրժուազիայի դիրքերի ժամանակավոր ամրապնդման և աշխատավորության վրա ռեֆորմիստական գաղափարախոսության ներգործության ուժեղացման իրադրության պայմաններում հատուկ դեր էր ստանում կոմկուսների գաղափարա-քաղաքական և կազմակերպական ամրապնդման խնդիրը։

Կոմինտերնի V կոնգրեսը։ Կոմկուսների գաղափարա-քաղաքական և կազմակերպական ամրապնդման կուրսը

1924 թ. հունիսի 17-ից— հուլիսի 8-ը Մոսկվայում կայացավ Կոմինտերնի V կոնգրեսը։ Այնտեղ ներկա էին 49 կոմկուսների, ժողովրդա-հեղափոխական մեկ կուսակցության և միջազգային 10 կազմակերպությունների պատվիրակներ։ Կոմունիստներն առաջին անգամ իրենց համաշխարհային կոնգրեսում հավաքվեցին առանց Վ. Ի. Լենինի։ Միջազգային կոմունիստական շարժման առաջնորդի, Կոմինտերնի հիմնադրի ու ղեկավարի մահը ծանր կորուստ էր բոլոր հեղափոխականների համար։ Կոնգրեսի երկրորդ օրը նրա պատվիրակները հավաքվեցին Դամբարանի մոտ և լսեցին Մ. Ի. Կալինինի «Լենինիզմը և Կոմինտերնը» զեկուցումը, որտեղ ընդգծվում էր լենինիզմի, որպես միջազգային կոմունիստական շարժման գաղափարա-տեսական պլատֆորմի նշանակությունը։

Կոմինտերնի V կոնգրեսը նշեց, որ ամենակարևոր խնդիրը կոմկուսների բոլշևիկացումն է, այսինքն՝ գաղափարա-քաղաքական և կազմակերպական ամրապնդումը։ Կոմինտերնը ելնում էր այն բանից, որ անհրաժեշտ է օգտագործել բոլոր հնարավորությունները պրոլետարական ավանգարդի ամրապնդման համար այն հաշվով, որպեսզի այն պահին, երբ հասունանան հեղափոխական նոր վերելքի օբյեկտիվ նախադրյալները, պրոլետարիատն ունենա կոփված և ուժեղ կոմկուսներ, որոնք ընդունակ լինեն աշխատավորներին առաջնորդելու դեպի հաղթանակ։ Կոմկուսների բոլշևիկացման լոզունգի հիմքում ընկած էին լենինյան գաղափարները բոլշևիզմի փորձը եղբայրական կուսակցությունների կողմից յուրացնելու վերաբերյալ։ Կոնգրեսն ընդգծեց, որ բոլշևիկացումը «նշանակում է այն ամենի փոխանցումը մեր սեկցիաները, ինչը որ ռուսական բոլշևիզմի մեջ եղել է ու կա միջազգային, համանշանակալի»։ Դա ոչ մի դեպքում չի նշանակում բոլշևիկյան փորձի մեխանիկական փոխանցում բոլոր մյուս կուսակցություններին, այլ պահանջում է բոլշևիկյան փորձի ստեղծագործական յուրացում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի կոնկրետ իրադրությունը։ Իսկական բոլշևիկյան կուսակցությունը, ըստ կոնգրեսի բնորոշման, պետք է լինի աշխատավորների հետ անխզելիորեն կապված և նրանց կարիքներն ու ձգտումներն արտահայտող իսկապես մասսայական կուսակցություն։ Նա պետք է լինի կոմունիզմի նպատակներին միշտ հավատարիմ, հեղափոխական մարքսիստական կուսակցություն, նա պետք է լինի կուսակցական կամքով և կուսակցական գործողությամբ միասնական կազմակերպություն, անհաշտ աջ օպորտունիզմի հանդեպ, ազատ դոգմատիզմից ու «ձախ» աղանդավորությունից և ընդունակ կիրառելու ճկուն տակտիկա, որն օգտագործի բոլոր ռեզերվները դասակարգային թշնամու դեմ պայքարելու համար։

Անդրադառնալով կոմկուսները մասսայական կուսակցությունների վերածելու անհրաժեշտությանը, կոնգրեսը նշեց, որ դրա համար հարկավոր է կազ-

մակերպչական վերակառուցում այն հաշվով, որպեսզի կուսակցության հիմք դառնան ձեռնարկություններում եղած բջիջները, հարկավոր է կոմունիստների համառ սիստեմատիկ աշխատանք արհմիություններում, ինչպես նաև գյուղացիության շրջանում։

Կոնգրեսը մեծ նշանակություն տվեց կոմունիստական շարժման միասնության հարցին։ Այն քննարկվեց այն կապակցությամբ, որ ՌԿ(բ)Կ-ի ներսում տրոցկիստական օպոզիցիան և մյուս կուսակցություններում եղած ֆրակցիոն խմբավորումները փորձում էին ոչնչացնել կոմկուսների միասնությունը, ձեռք բերել ֆրակցիաների գոյության աղատություն։ V կոնգրեսը ՌԿ(բ)Կ-ին պաշտպանեց հակալենինյան օպոզիցիայի դեմ մղվող պայքարում, դատապարտեց տրոցկիստների պլատֆորմը և նրանց գործողությունները որպես կուսակցության միասնությանը և, հետևապես, ՍՍՀՄ-ում պրոլետարիատի դիկտատուրային սպառնացող գործողություններ։

V կոնգրեսը միասնական բանվորական ճակատի տակտիկան համարեց ճիշտ և անհրաժեշտ։ Նա մեծ ուշադրություն դարձրեց այդ տակտիկայի իրականացմանն արհմիութենական շարժման մեջ, արհմիությունների միասնության, դրանց կոմկուսների կողմը գրավելու համար մղվող պայքարի խնդիրներին։

Դրա հետ մեկտեղ կոնգրեսը «ձախ» տարրերի ճնշման տակ ընդունեց մի քանի որոշումներ, որոնք նեղացնում էին միասնական ճակատի քաղաքականությունը։ Բանվորա-գյուղացիական կառավարության լոզունգը, ի հակասություն նախկին որոշումների, բնութագրվեց ոչ թե որպես պրոլետարական իշխանության մոտեցման ուղի, այլ որպես «պրոլետարիատի դիկտատուրայի հոմանիշ»։ Դրանով իսկ այդ լոզունգի իրական բովանդակությունը, որպես լայն մասսաների միավորման համար նախատեսված անցողիկ լոզունգ, վերացավ։ 1923 թ. դասակարգային մարտերի դասերի գնահատականը միակողմանի էր, այն ընդգծում էր միայն աջ օպորտունիստական թեքման վտանգը։ Մի քանի ձևակերպումներում սոցիալ-դեմոկրատիան համեմատվում էր ֆաշիզմի հետ։ Այդ բոլոր սխալները խանգարում էին միասնական բանվորական ճակատի, կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների գործողությունների միասնության համար կոմունիստների մղած արդյունավետ պայքարին։

Կոմինտերնի V կոդրեսից հետո կոմկուսները մեծ աշխատանք ծավալեցին իրենց շարքերի բոլշևիկացման համար։ Նրանք ստիպված էին սուր պայքար մղել աջ օպորտունիստական թեքման դեմ։ Աջ օպորտունիստները գերագնահատում էին կապիտալիստական կայունացման փաստը, գլորվում էին ռեֆորմիզմի դիրքերը։ Նրանց դեմ տարած վճռական պայքարը նպաստում էր սոցիալ-դեմոկրատական վերապրուկների հաղթահարմանը կոմկուսների շարքերում։ Միևնույն ժամանակ Կոմինտերնը և կոմկուսները, պայքարելով իրենց շարքերի բոլշևիկացման համար, հարվածն ուղղում էին նաև «ուլտրաձախ» թեքումների դեմ։ «Ուլտրաձախերը» ժխտում էին կապիտալիզմի կայունացման առկայությունը և փորձում հեղափոխական շարժման տեղատվության պայմաններում կոմկուսներին հրել դեպի անմիջական պայքարը իշխանության համար, արհամարհում էին մասսաների մեջ կատարվող աշխատանքը, սաբոտաժի ենթարկում միասնական բանվորական ճակատի քաղաքականությունը։ 1925—1926 թթ. Գերմանիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների կոմկուսներ Կոմինտերնի օգնությամբ հասան «ուլտրաձախերի» գաղափարական ու կազմակերպական ջախջախմանը։

Կոմկուսները որոշակի հաջողությունների հասան միասնական բանվորական ճակատի քաղաքականության իրականացման գործում։ Այդ մասին էր վկայում Գերմանիայում տիրակալ իշխանների ունեցվածքի էքսպրոպրիացիայի համար մղվող լայն կամպանիան, որն անցկացվեց 1925—1926 թթ. կոմունիստների նախաձեռնությամբ, 1925 թ. ֆրանսիական բանվորների քաղաքական գործադուլն ընդդեմ Մարոկկոյում ու Սիրիայում մղված գաղութային պատերազմի, արհմիութենական միասնության անգլո-ռուսական կոմիտեի ստեղծումը և մի շարք այլ փաստեր։ Առաջավոր բանվորների մեջ մարտական հեղափոխական տրամադրությունների պահպանմանը նպաստում էին դասակարգային այնպիսի խոշոր կոնֆլիկտներ, ինչպես ընդհանուր գործադուլն Անգլիայում (1926 թ. մայիս) և ոստիկանության հետ բանվորների սուր ընդհարումներն Ավստրիայում (1927 թ.)։

Կապիտալիստական երկրների բանվորական մասսաների շրջանում սոցիալիստական գաղափարների ավելի լայն տարածմանը նպաստող հզոր գործոն եղան Սովետական Միության առաջին հաջողությունները ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման և սոցիալական խոր վերափոխումների ասպարեզում։ Աշխարհի շատ երկրներում հաջողությամբ զարգանում էր ՍՍՀՄ-ի հետ բարեկամների շարժումը։ 1927 թ. նոյեմբերին, Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի տոնակատարության օրերին, Մոսկվայում կայացավ ՍՍՀՄ-ի հետ բարեկամների Կոնգրես, որը բոլոր աշխատավորներին կոչ արեց պաշտպանել Հոկտեմբերի նվաճումները և ՍՍՀՄ-ին՝ խաղաղության այդ հենարանին, սոցիալիզմի ամրոցին։ Միջազգային պրոլետարիատի շարքերում աճում էր բանվորների՝ աշխարհում առաջին պետության պաշտպանությունը։

Կոմունիստական շարժման պայքարը տրոցկիզմի դեմ

Կապիտալիզմի մասնակի կայունացման տարիներին միջազգային կոմունիստական շարժման պատմության կարևոր էջ հանդիսացավ տրոցկիստական օպոզիցիայի դեմ մղված պայքարը։ Տրոցկիստական-զինովևական օպոզիցիան 1926 թ. ամռանն ու աշնանը գրոհներ ձեռնարկեց Կոմինտերնի գլխավոր գծի, ՀամԿ(բ)Կ-ի վարած լենինյան կուրսի դեմ։ Գլխավոր հարցը, որի շուրջ ծավալվեց սուր պայքար, մեկ երկրում, ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման հնարավորության հարցն էր։

Սովետների երկրի կոմունիստական կուսակցությունը ելնում էր լենինյան այն դրույթից, որ Սովետական Ռուսաստանում, չնայած թշնամի կապիտալիստական երկրներով շրջապատված լինելուն, սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է անկախ այն բանից, թե այդ ժամանակաշրջանում մյուս երկրներում բանվոր դասակարգը կանցնի՞, արդյոք, իշխանության գլուխ։ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցումը Կոմինտերնը և կոմկուսները դիտում էին որպես համաշխարհային հեղափոխական պայքարի գլխավոր ճակատ։ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման հաջողությունից կախված էր աշխարհում ուժերի հարաբերակցության փոփոխությունը հօգուտ միջազգային բանվոր դասակարգի։ Կառուցվող սոցիալիզմի օրինակն իսկ վիթխարի հեղափոխականացնող ներգործություն էր ունենում ամբողջ մարդկության վրա։

Տրոցկիստները հանդես եկան ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման կուրսի դեմ, պնդելով, թե սոցիալիզմի հաղթանակը մեկ երկրում հնարավոր չէ առանց Արևմուտքի երկրների հաղթանակած պրոլետարիատի անմիջական պետական աջակցության։ Նրանք կոմկուսներին ահաբեկում էին այն բանով, որ ՍՍՀՄ-ի պայմաններում պրոլետարիատն իբր ի վիճակի չէ սոցիալիզմի կառուցման մեջ ներգրավելու մանրսեփականատիրական գյուղացիությանը և նրա հետ անլուծելի հակասությունների մեջ է մտնելու։ Օպոզիցիոներները առաջարկում էին ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցումից հրաժարվելու կապիտուլյանտական դիրքորոշում։

Փորձելով «անցկացնել «պերմանենտ հեղափոխության» իրենց գաղափարը, տրոցկիստները պնդում էին, որ ՍՍՀՄ-ի և Կոմինտերնի հիմնական նպատակը պետք է լինի հեղափոխության «առաջմղումը» Արևմուտքում, ընդ որում առաջմղումը հարկավոր է իրականացնել ցանկացած միջոցներով, ընդհուպ մինչև համաշխարհային պատերազմ սանձազերծելը։ ՀամԿ(բ)Կ-ին զրպարտչորեն մեղադրելով համաշխարհային հեղափոխությունը «մոռացության մատնելու», «ազգային սահմանափակության» մեջ, տրոցկիստական օպոզիցիան ջանում էր միջազգային կոմունիստական շարժման վզին կործանարար ավանտյուրիստական կուրս փաթաթել։ Տրոցկիստները փորձում էին ոչնչացնել Կոմինտերնի և նրա սեկցիաների գաղափարական ու կազմակերպական միասնությունը, ձգտում էին հասնել կոմունիստական շարժման մեջ հակակուսակցական ֆրակցիաների գոյության ազատությանը։

Կոմինտերնն ու ՀամԿ(բ)Կ-ն վճռական պայքար ծավալեցին տրոցկիզմի դեմ։ Տրոցկիզմի դեմ մարքսիստական-լենինյան գծի պաշտպանության գործում այդ ժամանակ կարևոր դեր խաղացին Ի. Վ. Ստալինը և ՀամԿ(բ)Կ-ի և եղբայրական կոմկուսների մյուս ղեկավարները։ ԿԻԳԿ ընդլայնված VII պլենումում (1926 թ. նոյեմբեր-դեկտեմբեր) տրոցկիստական-զինովևական օպոզիցիային կործանիչ հարված հասցվեց։ Դատապարտելով տրոցկիզմի պլատֆորմը, պլենումը նշեց, որ «ՀամԿ(բ)Կ-ն միանգամայն ճիշտ է վարում սոցիալիստական շինարարության քաղաքականությունը՝ լիովին համոզված լինելով, որ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը երկրի ներսում «անհրաժեշտ ու բավարար ամեն ինչ» ունի լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար»[1]։ Պլենումի որոշումներում ընդգծվում էր այն միտքը, որ, իրականացնելով ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակության կառուցման ղեկավարությունը, ՀամԿ(բ)Կ-ն ամենամեծ օժանդակությունն է ցույց տալիս միջազգային հեղափոխական բանվորական շարժմանը, ժողովուրդների մղած ազգային-ազատագրական պայքարին, գործնականում ապացուցում իր իսկական ինտերնացիոնալիզմը։ Սովետական երկիրը օբյեկտիվորեն հանդիսանում է միջազգային հեղափոխության գլխավոր կազմակերպիչ կենտրոնը։

ԿԻԳԿ IX պլենումը (1928 թ. փետրվար) տրոցկիստական օպոզիցիային պատկանելը համարեց կոմունիստական կուսակցության անդամության հետ անհամատեղելի։ Տրոցկիզմի գաղափարա-քաղաքական և կազմակերպական ջախջախումը նշանակում էր, որ մարքսիզմ-լենինիզմի հիմունքների վրա միջազգային կոմունիստական շարժման զարգացման ու ամրապնդման ճանապարհին եղած լուրջ խոչընդոտը վերացվեց։

[1] «Коммунистический Интернационал в документах. 1919—1932». М., 1933, стр. 680.

Ազգային-ազատագրական պայքարի պրոբլեմները կապիտալիզմի մասնակի կայունացման ժամանակաշրջանում

Կապիտալիզմի կայունացումը խարխլող գործոններից մեկը ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի աճումն էր։ 1925—1927 թթ. ազգային-ազատագրական հեղափոխություն ծավալվեց Չինաստանում։ Իր սուր կողմով այն ուղղված էր օտարերկրյա իմպերիալիստական կեղեքման և Չինաստանում ֆեոդալական-կոմպրադորական կլիկների դեմ, որոնք հանդիսանում էին գաղութարարների ագենտուրան։

Դեռ մինչև հեղափոխությունն սկսվելը Չինաստանի կոմկուսը Կոմինտերնի օգնությամբ ճիշտ դիրք գրավեց Գոմինդանի՝ մանր և ազգային բուրժուազիայի լայն խավերին միավորող այդ կուսակցության նկատմամբ։ Կոմկուսը մտավ Գոմինդանի մեջ, պահպանելով իր գաղափարական և կազմակերպական ինքնուրույնությունը, և սկսեց պայքարել այն ազգային-հեղափոխական բոլոր ուժերի բլոկի վերածելու համար, միաժամանակ պայքարելով աջ գոմինդանականների դեմ, որոնք ձգտում էին անցկացնել բուրժուա-կալվածատիրական քաղաքականություն։ Կոմկուսի և Գոմինդանի բլոկը նշանակում էր բանվոր դասակարգի, գյուղացիության, քաղաքային մանր և ազգային բուրժուազիայի հեղափոխական դաշինքի քաղաքական ձևավորում։

Կոմինտերնը ճիշտ բնորոշեց Չինաստանի հեղափոխության բնույթը, որպես համազգային, հակաիմպերիալիստական, բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն։ Ընդ որում նշվում էր, որ դասակարգային ուժերի համաշխարհային և ներքին տեղաբաշխումն այնպիսին է, որ Չինաստանում հեղափոխության հաջող ընթացքը կարող է երկրի զարգացումը տանել ոչ կապիտալիստական ուղիով, դեպի այնպիսի պետության ստեղծումը, որն իրենից ներկայացնի պրոլետարիատի, գյուղացիության և շահագործվող այլ դասակարգերի դեմոկրատական դիկտատուրա, որ հեղափոխությունը գնալու է սովորական բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից անհամեմատ ավելի հեռու։ Կոմինտերնը հակահարված տվեց ինչպես լիկվիդատորներին, որոնք անտեսում էին հեղափոխության մեջ պրոլետարիատի ինքնուրույն խնդիրները, այնպես էլ ՉԿԿ-ի ձախերին, որոնք փորձում էին անմիջական նպատակ դարձնել պրոլետարական դիկտատուրայի նվաճումը։ ԿԻԳԿ ընդլայնված VII պլենումի (1926 թ. նոյեմբեր-դեկտեմբեր) բանաձևը նշում էր. «Չինական կոմունիստական կուսակցության գլխավոր նպատակը ներկայումս բոլոր ուժերի համախմբումն է ընդդեմ օտարերկրյա իմպերիալիստների և «սեփական» միլիտարիստների։ Չի կարելի լուծել հետագա խնդիրները, թոչել հեղափոխական պայքարի այդ էտապի վրայով»[2]։

Հակաիմպերիալիստական ուժերի միասնական ճակատն ապահովեց հեղափոխության բուռն ծավալումը։ 1927 թ. ապրիլին հարավից հարձակվող ազգային-հեղափոխական բանակը, ամենուրեք հանդիպելով բանվորների ու գյուղացիների օգնությանը, կարողացավ ազատագրել ամբողջ Կենտրոնական Չինաստանը, գրավել Խանկոուն, Շանհայը, մոտենալ Նանկինին։ Դա մի հզոր հարված էր անգլիական և ամերիկյան իմպերիալիզմի ազդեցության գոտուն։

Անգլիայի և ԱՄՆ-ի բացահայտ ռազմական ինտերվենցիան և աջ գոմինդանականների պարագլուխ, իմպերիալիստների հետ գործարքի մեջ մտած Չան Կայշիի հակահեղափոխական հեղաշրջումը ծանրագույն հարված հասցրին ազգային-ազատագրական շարժմանը։ 1927 թ. ամռանը հակահեղափոխականների ճնշման տակ «ձախ» գոմինդանականները նույնպես խզեցին բլոկը կոմունիստների հետ։ Դա նշանակում էր, որ ազգային բուրժուազիան շրջադարձ կատարեց դեպի աջ և դուրս եկավ հեղափոխական ուժերի բլոկից։

1927 թ. աշնանից սկսվեց չինական հեղափոխության նոր էտապը, որի բովանդակությունն ու խնդիրները Կոմինտերնն ամբողջությամբ վերցրած ճիշտ բնորոշեց։ Կոմինտերնը մերժեց այն գիծը, որն այդ ժամանակ նախանշվում էր ՉԿԿ մի շարք փաստաթղթերում, գիծ, որը ելնում էր այն բանից, որ չինական հեղափոխությունը իբր «վերաճում է կամ արդեն վերաճել է սոցիալիստականի»։ ԿԻԳԿ-ի VIII պլենումը (1927 թ. մայիս) և IX պլենումը (1928 թ. փետրվար) հանգեցին այն եզրակացության, որ Չինաստանում բուրժուա-դեմոկրատական բովանդակության հիմնական խնդիրները և իմպերիալիզմի դեմ մղվող ազգային պայքարի խնդիրները լուծված չեն։ «Չինական հեղափոխության ընթացիկ էտապի բնութագիրը, որպես մի հեղափոխության, որն արդեն վերաճել է սոցիալիստական հեղափոխության, ճիշտ չէ»[3],— նշում էր ԿԻԳԿ պլենումը։ Հեղափոխության նոր էտապի հիմնական բովանդակությունը պետք է դառնա ագրարային հեղափոխությունը, ֆեոդալիզմի մնացուկների ոչնչացումը, Չինաստանի միավորումը և նրա անկախության նվաճումը պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի ստեղծման միջոցով, ընդ որում պետք է հեղափոխության կենտրոնում դնել ագրարային հարցի լուծումը կալվածատիրական հողերի բռնագրավման և գյուղացիների միջև դրանք բաժանելու հիման վրա։ Չինաստանում հեղափոխական մարտերի շրջաններում առաջացող սովետները պետք է ընդունեն մի այնպիսի ձև, որն իրականացնի ոչ թե պրոլետարիատի դիկտատուրա, այլ այնպիսի «սովետներ, որոնք կատարեն հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի խնդիրներ»[3]։

Կապիտալիզմի մասնակի կայունացման տարիներին իմպերիալիզմի գաղութային սիստեմին զորեղ հարվածներ էր հասցնում ազատագրական շարժումը Սիրիայում և Մարոկկոյում, Ինդոնեզիայում, Հնդկաստանում և մյուս երկրներում։ 1925—1927 թթ. Սիրիայում մոլեգնում էր ազգային-ազատագրական պատերազմը ֆրանսիական իմպերիալիզմի դեմ։ 1925—1926 թթ. Իսպանիան և Ֆրանսիան դժվարությամբ ճնշեցին ռիֆերի ապստամբությունը Մարոկկոյում։ 1926—1927 թթ. Ինդոնեզիայում ազգային ապստամբություններ տեղի ունեցան հոլանդական գաղութարարների դեմ։ Այդ ապստամբություններում ակտիվորեն մասնակցում էին բանվորները, գյուղացիները, մանր բուրժուազիան։ Լայն թափ ընդունեց ազգային-ազատագրության համար մղվող պայքարը Հնդկաստանում, որտեղ 1928 թ. բանը հասավ անգլիական տիրապետության դեմ ուղղված բուռն ցույցերին և մասսայական գործադուլներին։

ԱՄՆ-ի և Անգլիայի իմպերիալիզմի էքսպանսիայի ուժեղացումը Լատինական Ամերիկայում աճող հակահարվածի էր հանդիպում։ 1924—1925 թթ. այստեղ տեղի ունեցան ապստամբություններ հանուն իսկական անկախության և դեմոկրատիայի։ Բրազիլիայում սկսվում է Պրեստեսի զորասյան առասպելական արշավը։ Երկրի իշխանության գլուխ կանգնած մեքսիկական բուրժուական հեղափոխականները փորձում էին սահմանափակել ամերիկյան նավթային մոնոպոլիաների և կաթոլիկական եկեղեցու բռնադատությունը։

---

[2] «Коммунистический Интернационал», 1928, № 10, стр. 25.

[3] «Комумнистический Интернационал», 1927, № 41, стр. 7.

Նիկարագուայում Սանդինոյի ղեկավարությամբ ծավալվեց դեմոկրատական շարժումը (1926—1932 թթ.), բայց այն ճնշվեց ԱՄՆ-ի զինված ինտերվենցիայի հետևանքով։ Այդ ժամանակաշրջանում ազգային-ազատագրական բընույթ էին կրում Չիլիի, Արգենտինայի, Կուբայի աշխատավորների շատ ելույթներ, ընդ որում դրանց գլխավոր հարվածն ուղղված էր լատիֆունդիստների և տեղական խոշոր բուրժուազիայի դեմ, որոնք գրավում էին պրոիմպերիալիստական դիրքեր։

Կապիտալիզմի մասնակի կայունացման տարիներին ժողովուրդների ծավալած ազգային-ազատագրական պայքարը վկայում էր այն մասին, որ շատ գաղութներում և կիսագաղութներում ուղղակի գրոհ է սկսվել իմպերիալիզմի դիրքերի դեմ։ Իմպերիալիզմը դեռ բավականաչափ ուժեղ էր, որպեսզի իր լծի տակ պահեր երկրագնդի բնակչության մեծամասնությանը, բայց ազգային-ազատագրական պայքարն արդեն քայքայում էր գաղութային սիստեմի հիմքերը։

Իմպերիալիզմի դեմ ուղղված ազգային-ազատագրական առաջին ելույթները, որոնք վերաճեցին ազգային-ազատագրական հեղափոխության, միևնույն ժամանակ հակաիմպերիալիստական ուժերի միավորման ուղիների գործնական ստուգում էին, ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումներում երիտասարդ կոմկուսների քաղաքականության ստուգում։

Շնորհիվ այն բանի, որ գոյություն ուներ և ամրապնդվում էր Սովետական Միությունը և ծավալվում կոմունիստական շարժումը, պատմության մեջ առաջին անգամ ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական ելույթները վիթխարի միջազգային աջակցություն գտան։ Չինական հեղափոխականները Սովետական Միությունից ստացան զենք, պարենամթերք, դեղորայք։ Սուն Յաթսենի խնդրանքով որպես Գուանչժոուի (Կանտոնի) հեղափոխական կառավարության գլխավոր քաղաքական խորհրդատու Չինաստան ուղարկվեց Մ. Մ. Բորոդինը։ Հեղափոխական զինված ուժերի գլխավոր ռազմական խորհրդատուն էր սովետական ականավոր զորավար Վ. Կ. Բլյուխերը։ Օգնություն ցույց տրվեց ժողովրդա-հեղափոխական բանակի հրամանատարական ու քաղաքական կադրերի պատրաստմանը։ Կարմիր բանակի հրամանատարների, քաղաքացիական պատերազմի վետերանների մի խումբ օգնում էր ժողովրդա-հեղափոխական բանակի ամրապնդմանը և նրա ստրատեգիական պլանների մշակմանը։ Չինական հեղափոխականների հետ նրանք մասնակցում էին մարտական գործողություններին, նրանցից մի քանիսը զոհվեցին չին ժողովրդի ազատագրման համար մղված պայքարում։

ՀամԿ(բ)Կ-ն և միջազգային կոմունիստական շարժումը չինական հեղափոխությանը անգնահատելի ծառայություն մատուցեցին, Կոմինտերնի միջոցով օգնելով Չինաստանի կոմկուսին հեղափոխության զարգացման հեռանկարների և հեղափոխական ուժերի խնդիրների որոշման գործում։

Կոմինտերնը մշտական օժանդակություն էր ցույց տալիս Արևելքի կոմունիստներին՝ նրանց մղած պայքարում։ Այդ տարիներին նա օգնեց Ինդոնեզիայի կոմկուսին, քննադատության ենթարկելով գյուղացիության, մանրբուրժուական կուսակցությունների ու կազմակերպությունների նկատմամբ վերաբերմունքի հարցերում նրա թույլ տված աղանդավորական սխալները։

Հակաիմպերիալիստական ուժերի միասնական ճակատի համար մղված պայքարում կարևոր դեր խաղաց 1927 թ. փետրվարին Բրյուսելի կոնգրեսում ստեղծված «Իմպերիալիզմի, գաղութային ճնշման դեմ և հանուն ազգային անկախության լիգան»։ Հակաիմպերիալիստական լիգան (1927—1935 թթ.) մի-

ջազգային բանվոր դասակարգի և Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների առաջին հակաիմպերիալիստական կազմակերպությունն էր։ Նրա գործունեությանը մասնակցում էին նաև կապիտալիստական երկրների առաջադեմ մտավորականության աշքի ընկնող ներկայացուցիչները, նրան հարում էին բոլոր մայրցամաքների մեծ թվով քաղաքական, արհմիութենական, կուլտուրական, հասարակական կազմակերպություններ։

Սոցիալիստական բանվորական Ինտերնացիոնալի Բրյուսելի կոնգրեսը

Միջազգային սոցիալ-դեմոկրատիան, իրականացնելով բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության քաղաքականություն, ավելի ու ավելի բացահայտորեն էր հանդես գալիս որպես ՍՍՀՄ-ում Հոկտեմբերյան հեղափոխության գործի, կապիտալիստական երկրներում հեղափոխական բանվորական շարժման և գաղութներում ու կիսագաղութներում ազգային-ազատագրական հեղափոխությունների հակառակորդ։ Այդ էին վկայում սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի Բրյուսելի կոնգրեսի (1928 թ. օգոստոս) որոշումները։

Թեև կոնգրեսը խոսեց կապիտալիզմի հակասությունների մասին, բայց դրանք բացահայտ կերպով թերագնահատեց։ Պրոպագանդելով «կազմակերպված կապիտալիզմի» տեսությունը, կոնգրեսը կոչ արեց պայքարել «կապիտալիստական մոնոպոլիաները բանվորների կազմակերպված հասարակական վերահսկողությանը ենթարկելու համար»։ Բանվոր դասակարգն այնքան ավելի արագ կհասնի այդ նպատակին, պնդվում էր կոնգրեսի «Ամբողջ աշխարհի բանվորներին» ուղղված դիմումում, և այնքան ավելի հետևողականորեն նա իր պայքարը կմղի բուրժուական դեմոկրատիայի շրջանակներում, որքան ավելի եռանդով նա օգտագործի քաղաքական իրավունքներն ու ազատությունները՝ իր դիրքերն ամրապնդելու և պրոլետարական դեմոկրատիայի իրականացման պայմաններ ստեղծելու համար։ Սոցիալիստական հեղափոխության լոզունգն, այսպիսով, լիովին մերժվում էր, միայն ճանաչվում էր բուրժուական դեմոկրատիայի շրջանակներում մղվող պայքարը։ Սոցիալ-դեմոկրատիան մասսաների մեջ պատրանքներ էր տարածում, թե իբր ռեֆորմիստական գործունեության միջոցով կարելի է հասնել իշխանության մեջ պրոլետարիատի ավելի մեծ մասնակցության։

Խոսելով ֆաշիստական սպառնալիքի առկայության մասին, կոնգրեսը դրա հետ մեկտեղ կոմունիստներին և հատկապես Ռուսաստանի պրոլետարական իշխանությանը մեղադրեց այն բանում, որ իբր նրանք պառակտում են բանվոր դասակարգին և բուրժուազիային օգնում «ուժեղացնելու իր տիրապետության ձևերը»։ Կոնգրեսի որոշումների հակասովետական ուղղվածությունը առանձնապես ակնհայտորեն դրսևորվեց արևմտաեվրոպական տիպի պառլամենտական ռեժիմը վերականգնելու, այսինքն՝ փաստորեն կապիտալիզմը վերականգնելու մասին ՍՍՀՄ-ի աշխատավորներին ուղղված «կոչում»։

Կոնգրեսի գլխավոր զեկուցող ցենտրիստ Օ. Բաուերը փորձում էր ապացուցել, թե հեղափոխական հեռանկարն առհասարակ վերացել է և այժմ անհրաժեշտ է բանվոր դասակարգի միասնականությանը հասնել սոցիալ-դեմոկրատիայի պլատֆորմի վրա։

Ազգային-գաղութային հարցի վերաբերյալ որոշումներում կոնգրեսը ստիպված էր արտահայտվել այն ժողովուրդների անկախության օգտին, որոնք արդեն ունեն «ժամանակակից անկախ քաղաքակրթության անհրաժեշտ նախադրյալներ» (Չինաստան, Եգիպտոս, Սիրիա, Իրաք)։ Բայց գործնականո-

բեն սոցիալ-դեմոկրատիան այդ ուղղությամբ ոչ մի միջոց չէր առաջադրում։ Ընդհակառակը, նա անհրաժեշտ էր համարում օտարերկրյա կապիտալի ներկայությունը գաղութներում։ Գաղութային տերությունների սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները Բրյուսելի կոնգրեսից հետո էլ էին շարունակում ժխտել ինքնորոշման սկզբունքն այդ երկրների գաղութների համար։

Պատերազմի դեմ պայքարի հարցերի առթիվ Բրյուսելի կոնգրեսը թեկուզև խոսքով նշեց մոնոպոլիստական կապիտալի ագրեսիվ բնույթը, բայց գործով նսեմացնում էր իմպերիալիստական պատերազմի սպառնալիքը և հույսը դնում Ազգերի լիգայի վրա, որպես խաղաղության պահպանման հիմնական գործիքի։

Կոմինտերնի VI կոնգրեսը։ Կոմինտերնի ծրագրի ընդունումը

1928 թ. հուլիս-սեպտեմբերին Մոսկվայում կայացավ Կոմունիստական ինտերնացիոնալի VI կոնգրեսը։ Նրա աշխատանքին մասնակցում էին 57 կոմկուսների և միջազգային 9 կազմակերպությունների պատվիրակներ։ Կոմկուսները, չհաշված ՀամԿ(բ)Կ-ն, այդ ժամանակ միավորում էին 445 հազ. անդամ։ 1924 թ. մինչև 1928 թ. ընկած ժամանակաշրջանում կապիտալիստական երկրների կոմունիստական կուսակցությունների թվակազմի մոտ 300 հազ. մարդով պակասելը բացատրվում էր պայքարի բարդ պայմաններով, բանվոր դասակարգի վրա ռեֆորմիզմի ազդեցության ուժեղացմամբ, տատանվող և անկայուն տարրերի հեռանալով։ Իսկ ամբողջությամբ վերցրած կոմկուսները պահպանեցին ազդեցությունը բանվոր դասակարգի առաջավոր մասի վրա։ Տարբեր տեսակի օպորտունիստական թեքումների դեմ մղված պայքարում կոմկուսները ամրապնդվեցին գաղափարա-քաղաքական տեսակետից։

Կոմինտերնի VI կոնգրեսը, քննարկելով ՍՍՀՄ-ի և ՀամԿ(բ)Կ-ի դրության վերաբերյալ հարցը, ընդգծեց սոցիալիստական շինարարության հաջողությունների նշանակությունը միջազգային բանվոր դասակարգի դիրքերի ամրապնդման համար և նշեց, որ ՀամԿ(բ)Կ-ի ճիշտ քաղաքականությունը հասցրել է սովետական երկրի հեղինակության ուժեղացմանը միջազգային թատերաբեմում։

Գնահատելով կապիտալիստական աշխարհում տիրող իրադրությունը, կոնգրեսն արտակարգ կարևոր հետևություն արեց այն մասին, որ սկսվում է մի այնպիսի ժամանակաշրջան, երբ կապիտալիստական կայունացման հակասությունների զարգացումը տանում է նրա ավելի խարխլմանը և կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խիստ սրմանը։ Դա կապիտալիստական աշխարհում իրադարձությունների հետագա զարգացման գիտական կանխատեսում էր։

Կոնգրեսը կոմկուսներին կողմնորոշեց դեպի պրոլետարիատի ուժգին նախապատրաստությունը դասակարգային խոշոր մարտերին։ Ելնելով մոտակա սոցիալ-տնտեսական ցնցումների հեռանկարներից և դասակարգային պայքարի սրումից, կոնգրեսը նշեց աջ թեքման առաձնահատուկ վտանգը կոմկուսների համար, որը գերագնահատում էր կապիտալիստական կայունացման փաստը և ըստ էության պաշտպանում սոցիալ-ռեֆորմիստներին։ Կոնգրեսն աջ թեքումը գնահատեց որպես կոմունիստական շարժման ներսում գլխավոր վտանգ, որի դեմ, հաշվի առնելով համեմատաբար ամուր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ազդեցությունը բանվորների վրա, հարկավոր է հատկապես ակտիվ, սիստեմատիկ պայքար մղել։

Կոնգրեսը հաստատեց միասնական բանվորական ճակատի տակտիկան իրականացնելու անհրաժեշտությունը կոմկուսների համար, բայց միևնույն ժամանակ նա կոմունիստներից պահանջեց սրել պայքարը ոչ միայն բուրժուական կուսակցությունների, այլև սոցիալ-դեմոկրատիայի և նրա կազմակերպությունների դեմ, գտնելով, որ սոցիալ-դեմոկրատիան գնում է ֆաշիստականացման ուղիով։ Սոցիալ-դեմոկրատիայի դեմ մղվող պայքարի չափից դուրս սրումը խանգարում էր ռեֆորմիստական կազմակերպություններում գտնվող բանվորների վրա ազդեցության համար կոմունիստների մղած հաջող պայքարին։

Կոնգրեսի աշխատանքում մեծ տեղ գրավեց գաղութային և կիսագաղութային երկրներում հեղափոխական շարժման, այդ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի խնդիրների մասին հարցերը։ Կոնգրեսն ընդգծեց Կոմինտերնի II կոնգրեսի ընդունած լենինյան «Ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ թեզիսների» նշանակությունը, որպես Արևելքի երկրների կոմկուսների աշխատանքի ուղենիշ։ Կոնգրեսի թեզիսներում նշվում էր, որ ճնշված ժողովուրդների հեղափոխական պայքարը բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն է, որի հիմնական բովանդակությունը երկրի ազատագրումն է իմպերիալիզմից, ագրարային հեղափոխության անցկացումը, ուժերի հարաբերակցության մեջ տեղաշարժի իրականացումը հօգուտ պրոլետարիատի։

Կոնգրեսը բացահայտեց «ապագաղութացման» սոցիալ-դեմոկրատական տեսության ռեակցիոն էությունը, տեսություն, ըստ որի իմպերիալիզմն իբր նպաստում է գաղութների ինդուստրացմանը և նրանց վերածմանն ինքնուրույն պետությունների։

Գնահատելով ազգային բուրժուազիայի դերն ազգային-ազատագրական շարժման մեջ, կոնգրեսը նշեց, որ այդ բուրժուազիան միասնական դիրք չի գրավում իմպերիալիզմի հանդեպ։ Կոմկուսներին առաջարկվում էր տարբերություն դնել ազգային շարժման հողի վրա կանգնած բուրժուական ազգային ռեֆորմիզմի (բուրժուա-դեմոկրատական ուղղության) և ֆեոդալա-իմպերիալիստական լագերի միջև։ Դրա հետ մեկտեղ գաղութային և կիսագաղութային երկրների ազգային բուրժուազիայի դերի ընդհանուր գնահատականը աղանդավորության որոշակի երանգ էր կրում։ Պնդվում էր, որ «ազգային բուրժուազիան չունի իմպերիալիզմի դեմ պայքարող ուժի նշանակություն»։ Այդ կապակցությամբ մերժվում էր ազգային-ռեֆորմիստական կազմակերպությունների հետ կոմկուսների բլոկի հնարավորությունը։ Հակաիմպերիալիստական միասնական ճակատի լոզունգն, այսպիսով, կարծես հանվում էր օրակարգից, որը հիմնավորված չէր։

Կոնգրեսը քննարկեց իմպերիալիստական պատերազմի սպառնալիքի հարցը և որոշեց միջազգային կոմունիստական շարժման գլխավոր խնդիրները իմպերիալիստական պատերազմի նախապատրաստման, հակասովետական պատերազմի նախապատրաստման դեմ մղվող պայքարում։ Ռազմական սպառնալիքի դեմ մղվող պայքարի կենտրոնում, հայտարարեց կոնգրեսը, պետք է լինի Սովետական Միության պաշտպանությունը։ Իմպերիալիստական պատերազմ ծագելու դեպքում կոնգրեսը առաջարկում էր պայքարել այդ պատերազմը վերածելու բուրժուազիայի դեմ պրոլետարիատի մղած քաղաքացիական պատերազմի։

VI կոնգրեսի աշխատանքի կենտրոնական պահը Կոմունիստական ինտերնացիոնալի ծրագրի ընդունումն էր։ Ծրագրի նախագիծը պատրաստվեց մի քանի տարվա ընթացքում և հանդիսացավ ամբողջ կոմունիստական շարժման կոլեկտիվ աշխատանքի պտուղը։ Նրա մշակման գործում կարևոր դեր

խաղացին Կոմինտերնում Համկ(բ)Կ-ի ներկայացուցիչները։ Կոնգրեսը նշում էր, որ այդ ծրագիրը, լինելով պրոլետարիատի միջազգային շարժման ամբողջ պատմական փորձի ընդհանրացումը, հանդիսանում է համաշխարհային պրոլետարական դիկտատուրայի, համաշխարհային կոմունիզմի համար պայքարի ծրագիրը։ Ծրագրում ընդգծվում էր, որ Կոմինտերնը լիովին և անվերապահորեն կանգնած է հեղափոխական մարքսիզմի տեսակետի վրա, որն իր հետագա զարգացումն է ստացել լենինիզմի մեջ։

Կոմինտերնի ծրագիրը պարունակում էր իմպերիալիզմի ուժերի և համաշխարհային հեղափոխության ուժերի բնութագիրը, տալիս էր կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի վերլուծությունը և հիմնավորում կապիտալիզմի անխուսափելի կործանման և համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հաղթանակի վերաբերյալ հետևությունը։

Ծրագրում քննարկվում էին սոցիալիստական հեղափոխության և կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու հիմնական օրինաչափությունները։ Ըստ որում նշվում էր, որ կապիտալիստական երկրների սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր մակարդակը, դրանց պայմանների կոնկրետ առանձնահատկությունը պատմականորեն լիովին անխուսափելի են դարձնում պրոլետարիատի իշխանության գլուխ անցնելու ուղիների ու տեմպերի բազմազանությունը, մի շարք երկրներում պրոլետարիատի դիկտատուրային անցնելու որոշակի աստիճանների անհրաժեշտությունը, իսկ հետո նաև առանձին երկրներում կառուցվող սոցիալիզմի ձևերի բազմազանությունը։

Ծրագրում ասվում էր, որ գաղութային հետամնաց երկրներում հնարավոր է զարգացումը դեպի սոցիալիզմ առանց կապիտալիզմի ստադիան ընդհանրապես անցնելու, եթե նրանց օգնություն ու աջակցություն ցույց տան պրոլետարական դիկտատուրայի երկրները և միջազգային պրոլետարական շարժումը։

Կոմինտերնի ծրագիրը մեծ նշանակություն էր տալիս միջազգային կոմունիստական շարժման միասնությանը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին, միջազգային դասակարգային կարգապահության պահպանմանը։

Բնութագրելով ՍՍՀՄ-ի նշանակությունը, որպես երկու սիստեմների միջև մղվող պայքարում գլխավոր օղակի, ծրագիրը նշում էր, որ ՍՍՀՄ-ում պրոլետարական դիկտատուրայի ներքին ամրապնդումը, սոցիալիստական շինարարության հաջողությունը, ՍՍՀՄ-ի ազդեցության և հեղինակության աճը պրոլետարական մասսաների և գաղութների ճնշված ժողովուրդների շրջանում նշանակում են միջազգային սոցիալիստական հեղափոխության շարունակում, ուժեղացում և ծավալում։

Ծրագրի մի քանի բաժիններ պարունակում էին առանձին չհիմնավորված եզրակացություններ։ Մասնավորապես, որոշ չափով սխեմատիկորեն էր բնութագրված զարգացած կապիտալիստական երկրներում իշխանության համար մղվող պայքարի ուղին։ Այստեղ ծրագրի հիմնական պահանջը հանդիսանում էր «անմիջականորեն պրոլետարիատի դիկտատուրային անցնելը», ժխտվում էր պրոլետարիատի դիկտատուրայի հանդեպ տարբեր մոտեցումների կամ համադեմոկրատական պահանջների համար պայքարի՝ այդ հեղափոխությանը նախորդող էտապների հնարավորությունն այդ երկրների համար։

Ծրագրում, ինչպես նաև կոնգրեսի մի քանի այլ փաստաթղթերում էական տարբերություն չէր դրվում սոցիալ-դեմոկրատիայի և ֆաշիզմի միջև։ Սոցիալ-դեմոկրատների ձախ թևը, որի շարքերում խմբավորվել էին կոմունիստների

հետ մերձենալու շատ կողմնակիցներ, բնութագրվում էր որպես «սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների առավել վտանգավոր ֆրակցիա»։ Կոմինտերնն ու կոմկուսները դեռ պետք է հաղթահարեին այդ դրույթները։ Իսկ ամբողջությամբ վերցրած ծրագիրը հանդիսանում էր միջազգային կոմունիստական շարժման կարևորագույն փաստաթուղթը։

Դասակարգային պայքարի սրումը 1929—1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում

1929 թ. կապիտալիստական աշխարհում սկսվեց տնտեսական խոր ճգնաժամ, որը տևեց մինչև 1933 թ.։ Այդ ճգնաժամը, որն ընթանում էր կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում, ուժեղագույն հարվածներ հասցրեց բուրժուական հասարակության էկոնոմիկային, քաղաքական հիմքերին և գաղափարախոսությանը։ Այն տարածվեց կապիտալիստական տնտեսության բոլոր կողմերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, վարկա-ֆինանսական համակարգի, առևտրի, միջազգային տնտեսական կապերի վրա։ Այդ ճգնաժամը կապիտալիզմի պատմությանը հայտնի բոլոր ճգնաժամերից ամենախորն ու կործանարարն էր։ Արդյունաբերական արտադրությունը կապիտալիստական աշխարհում 1929—1933 թթ. ամբողջությամբ վերցրած կրճատվեց 33 տոկոսով, գյուղատնտեսական արտադրության ծավալն ընկավ ավելի քան $^1/_3$-ով։

Ամբողջ կապիտալիստական աշխարհն ընդգրկած ճգնաժամի կործանարար գործողությունների ֆոնի վրա առանձնահատուկ նշանակություն ունեին Սովետական Միության էկոնոմիկայի զարգացման բարձր տեմպերը։ Սովետական աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հենց այդ տարիներին էին հաջողությամբ իրականացնում առաջին հնգամյա պլանի վիթխարի խնդիրները, աշխարհին զարմացնելով սոցիալիստական շինարարության ասպարեզում ձեռք բերած նվաճումներով։ Առաջին անգամ ըստեղծված պլանային, ճգնաժամեր չգիտցող սոցիալիստական էկոնոմիկան, գործադրկության լիակատար վերացումը՝ այս բոլորը չտեսնված ուժով բացահայտում էր երկու սոցիալ-տնտեսական սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի զարգացման ուղիների հակադրությունը։ Այն ժամանակ, երբ կապիտալիզմի արդյունաբերական արտադրությունն ընկնում էր, ՍՍՀՄ-ում 1929—1932 թթ. այն աճեց կրկնակի։ 1932 թ. ժամկետից շուտ կատարված առաջին հնգամյակի տարիներին Սովետական Միությունը վիթխարի քայլ կատարեց ինդուստրացման ուղիով։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը ծանր հարված հասցրեց կապիտալիստական աշխարհի բնակչության ամենալայն մասսաների, հատկապես պրոլետարիատի դրությանը։ Բանվոր դասակարգը կրկնակի չափով էր տառապում ճգնաժամի հարվածներից՝ աշխատավարձի մշտական իջեցումից և գործազրկության ահաբեկող աճից։ Կապիտալիստական երկրների մեծ մասում բանվորներին և ծառայողներին վճարվող աշխատավարձի ընդհանուր ֆոնդը նվազեց 30—50 տոկոսով։ Ավելի քան 35 մլն բանվորներ ֆաբրիկաների դարպասներից դուրս շպրտվեցին և դարձան լիովին գործազուրկներ։ Ոչ նվազ թվով բանվորներ էլ ընկան կիսագործազուրկի վիճակի մեջ։ Այդ բոլորը հասցրեց բանվոր դասակարգի կենսամակարդակի խիստ իջեցմանը։

Ճգնաժամը քայքայեց միլիոնավոր գյուղացիների։ Նրա հարվածների տակ իրենց գոյության նյութական հիմքը կորցրին հարյուր հազարավոր արհեստավորներ, ձեռնարկատերեր և առևտրականներ, ծառայողներ, չինովնիկներ։

Ժողովրդական կարիքը հատկապես սուր էր արտահայտվում գաղութնե-

ռում ու կիսագաղութներում։ Գաղութների ու կիսագաղութների հիմնական արտադրանքը՝ գյուղատնտեսական հումքն ու պարենամթերքը համաշխարհային շուկայում արժեզրկվեցին։ Այդ նույն ժամանակ գաղութների իմպերիալիստական կողոպուտն ուժեղացավ։ Այդ բոլորը խորացնում էր մասսաների ատելությունը իմպերիալիստ-գաղութատերերի նկատմամբ։

Կապիտալիստական երկրների պրոլետարների և միջին խավերի նյութական և իրավական վիճակի արտակարգ վատացումն առաջ բերեց դասակարգային պայքարի խիստ սրում։ Սկսվեց հեղափոխական ուժերի ակտիվացում։ Աճեց գործադուլային շարժումը։ Չնայած տնտեսական ճգնաժամի արտակարգ ծանր պայմաններին, 1929—1932 թթ. 15 խոշոր երկրներում տեղի ունեցավ մոտ 19 հազ. գործադուլ՝ 8,5 մլն մասնակիցներով հանդերձ։ Միաժամանակ լայնորեն ծավալվեց գործազուրկների շարժումը։

Բանվոր դասակարգը պայքարում էր աշխատավարձի իջեցման, աշխատանքից ազատելու, սոցիալական նպաստների կրճատման, աշխատավորների դեմոկրատական նվաճումները ոչնչացնող կառավարությունների արտակարգ միջոցառումների դեմ։ Կոմինտերնի և կոմկուսների նախաձեռնությամբ 1930 թ. մարտի 6-ին և 1931 թ. փետրվարի 25-ին անցկացվեցին գործազրկության դեմ պայքարի միջազգային օրեր, որոնք նշանավորվեցին գործազուրկների մասսայական ցույցերով, միտինգներով, ժողովներով։

Կապիտալիստական շատ երկրներում բանվորների գործադուլային ելույթները և գործազուրկների արշավները վերածվում էին ոստիկանության և կանոնավոր զորքերի հետ կատաղի ընդհարումների։ Հեղափոխական ուժերի ակտիվացման մասին էր վկայում 1931 թ. միապետության տապալումը և բուրժուա-դեմոկրատական հեղափոխության զարգացումն Իսպանիայում։

Մի շարք երկրներում, հատկապես Լեհաստանում բարձր ալիքով էր ընթանում գյուղացիական շարժումը, որի մասնակիցները պահանջում էին ոչ միայն պակասեցնել կամ վերացնել պարտքերը, այլև բաժանել հողերը։

Ուժեղացավ հեղափոխական-ազատագրական պայքարը գաղութներում ու կախյալ երկրներում։ Չինաստանում ընդլայնվեց գյուղացիության հակաֆեոդալական պայքարը։ Պարտիզանական ջոկատներից կազմվում էին հեղափոխության զինված ուժերը, որոնք հակահարված էին տալիս գոմինդանականների պատժիչ արշավներին։

Հնդկաստանում 1930 թ. մի շարք քաղաքներում ու շրջաններում տեղի են ունենում հակաիմպերիալիստական ապստամբություններ։ Այդ նույն թվականին Հնդկաչինի մի շարք շրջաններում ֆրանսիական գաղութարարների դեմ ծագեց ապստամբություն, որի ընթացքում ստեղծվում էին ժողովրդական իշխանության մարմիններ։ Հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական պայքարն ընդգրկում է նաև Բիրման, Եգիպտոսը, Ֆիլիպինները։

1933 թ. հոլանդական ռազմածովային նավատորմի նավերում ապստամբեցին ինդոնեզական ծովայինները։ 1931 թ. ծովայինների ապստամբություն տեղի ունեցավ Չիլիում. հաջորդ թվականին ապստամբ բանվորները փորձեցին սովետական իշխանություն հռչակել Չիլիում։

Կապիտալիզմի հարաբերական կայունացման ժամանակաշրջանից հետո աշխարհում այսպես սկսեց աճել հեղափոխական բանվորական և ազգային-ազատագրական շարժումը։ Տնտեսական ճգնաժամի խորացումը և դասակարգային պայքարի սրումը խարխլում էին կապիտալիստական ռեժիմների կայունությունը, բուրժուազիայի մեջ սարսափ առաջացնում այդ ռեժիմների ճակատագրի հանդեպ։

Բուրժուական ռեակցիան, մոնոպոլիստական, կալվածատիրական և զինվորական վերնախավն այն պայմաններում, երբ մաներելու ու բուրժուական դեմոկրատիայի մեթոդներն այլևս չէին կարող կանգնեցնել դասակարգային պայքարի աճը, շեշտը դրեցին ֆաշիզմի վրա։ Դրա մեջ նրանք տեսնում էին աշխատավորների ելույթներն անողոք ճնշելու միջոցով հեղափոխության ուժերի աճը կանխելու միակ միջոցը։

Ճգնաժամի տարիներին սկսված իմպերիալիստական ռեակցիայի և ֆաշիզմի հարձակումը բանվոր դասակարգից պահանջում էր իր ուժերի արագ մոբիլիզացում։

Սոցիալ-դեմոկրատների քաղաքականությունը համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին

Սոցիալ-դեմոկրատիան ճգնաժամի տարիներին, որոնք կործանիչ հարված հասցրին նրա «կազմակերպված կապիտալիզմի» տեսությանը, շարունակում էր իրականացնել բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության քաղաքականություն։ Նա անց էր կացնում փլուզումից, հեղափոխությունից կապիտալիզմի փրկման գիծ։ Սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխները բանվորներին կոչ էին անում սպասել մինչև ճգնաժամի վերջը, այդպիսի պայմաններում նույնիսկ գործադուլային պայքարի չդիմել, համաձայնվել զոհաբերությունների հետ, մի շարք նվաճումների կորստյան հետ, բայց թույլ չտալ քաղաքացիական պատերազմ, հեղափոխական ցնցումներ։ Պրուսական լանդտագում սոցիալ-դեմոկրատների ֆրակցիայի պարագլուխն առանց ամաչելու հայտարարեց, թե «ամբողջ սոցիալ-դեմոկրատիան աշխատում է այն բանի համար, որպեսզի կանխի կապիտալիզմի խորտակումը»։

Հիմնական հարվածները սոցիալ-դեմոկրատական առաջնորդներն ուղղում էին հեղափոխական բանվորների, կոմունիստների դեմ, նրանց մեղադրելով քաոսի ձգտման մեջ, թեև տնտեսական քաոսին, աղքատությանն ու սովին հենց կապիտալիզմն էր հասցրել։ Ռեֆորմիստական պարագլուխներն աշխատավոր մասսաներին ահաբեկում էին, պնդելով, թե ցանկացած հեղափոխության տված վնասները շատ անգամ ավելի ծանր ու հիվանդագին կլինեն, քան ամենախոր ճգնաժամը։ Հեղափոխության հանդեպ ունեցած վախը պայմանավորում էր սոցիալ-դեմոկրատիայի քաղաքականությունը։ Սոցիալ-դեմոկրատիան բուրժուա-պառլամենտական ռեժիմները համարում էր այն միակ հողը, որի վրա հնարավոր է ռեֆորմիստական քաղաքականության իրականացումը. այդ պատճառով նա պաշտպանում էր այդ բուրժուա-պառլամենտական ռեժիմները, չնայած այն բանին, որ դրանք ճգնաժամի տարիներին դարձել էին ավելի ռեակցիոն, իսկ մի շարք երկրներում էլ նպաստում էին հասարակական կարգերի ֆաշիստականացմանը։

Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի IV կոնգրեսը (1931 թ. հուլիս-օգոստոս) հիմնական ուշադրությունը դարձրեց ոչ թե կապիտալի ու ֆաշիզմի հարձակման դեմ մղվող պայքարի հարցին, այլ այն բանին, թե ինչպես փրկել կապիտալիստական Գերմանիան տնտեսական կրախից, որպեսզի դրանով իսկ ամբողջ Եվրոպան վնասազերծել սոցիալական ցնցումներից։

Տնտեսական ճգնաժամի խորացման հետ աջ սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդները բռնեցին ավելի խիստ արտահայտված հակակոմունիստական դիրքեր։ Պաշտպանելով բուրժուական կառավարությունների ռեակցիոն հակաբանվորական միջոցառումները, նրանք հայտարարում էին, որ դա անհրա-

ժեշտ է անել հանուն «ավելի փոքր չարիքի», հանուն այն բանի, որպեսզի կանխել ինչպես ֆաշիզմի, այնպես էլ «ձախից եկող ռադիկալիզմի»՝ այսինքն կոմունիզմի հաղթանակը։ Բացի դուստ ֆաշիստականից, բոլոր բուրժուական կառավարություններին պաշտպանել՝ այսպիսին էր «փոքր չարիքի» տակտիկայի հիմնական բովանդակությունը։ Իրենց հայտարարություններում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները խոսում էին ֆաշիզմի դեմ պայքարելու անհրաժեշտության մասին, բայց սոցիալ-դեմոկրատիայի հակակոմունիզմը և խոշոր բուրժուազիայի շափավոր թևերի հետ համագործակցելու նրա բրոնած գիծը նրան տանում էին ռեակցիայի հանդեպ կատարված մեկ զիջումից դեպի մյուսը, դեպի ֆաշիզմի հարձակման դեմ վճռական պայքար մղելուց հրաժարվելը։ Ֆաշիզմի հարձակման առջև անգործության մատնվելով, աջ սոցիալ-դեմոկրատական միևնույն ժամանակ ակտիվացնում էր հակասովետական և հակակոմունիստական կամպանիան։ Նման քաղաքականությունը տանում էր դեպի բանվոր դասակարգի պառակտման խորացում, ֆաշիստական ահեղ վտանգի առջև նրա թուլացում։ Այդ քաղաքականությունը տանում էր դեպի հենց նաև բուրժուա-դեմոկրատական ռեժիմների քայքայումը, ռեժիմներ, որոնք սոցիալ-դեմոկրատիան համարում էր իր ստեղծագործությունը։

Կոմինտերնը և կոմունիստական կուսակցությունները համաշխարհային տընտեսական ճգնաժամի տարիներին

Միակ կազմակերպված քաղաքական ուժը, որը համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին հանդես էր գալիս կապիտալի, ֆաշիզմի և պատերազմի հարձակման դեմ, կոմունիստական շարժումն էր։ Չնայած այն բանին, որ շատ կուսակցություններ հարկադրված էին աշխատել դաժան բռնությունների ու հալածանքների պայմաններում, կոմունիստները խիզախաբար ընթանում էին աշխատավորության գործի համար պայքարի առաջին շարքերում։

ԿԻԳԿ XI պլենումը, որը կայացավ 1931 թ. մարտ-ապրիլին, նշեց, որ բուրժուազիան ջանում է ճգնաժամի բոլոր հետևանքները գցել աշխատավորության ուսերին, հարձակում է կազմակերպում բանվոր դասակարգի և աշխատավորության մյուս խավերի վրա, կանգնում քաղաքական ռեակցիայի ուժեղացման, ֆաշիզմի ուղու վրա։ Դրա հետ մեկտեղ պլենումը խստորեն հանդես եկավ այնպիսի հայացքների դեմ, որոնք ֆաշիզմը համարում էին կապիտալիզմի քայքայման մեջ պատմական անխուսափելի աստիճան։ Պլենումն ընդգծեց, որ ֆաշիզմը ոչ միայն կապիտալիզմի ճգնաժամի ու թուլության նշանն է, այլև կապիտալի հարձակման ամենավտանգավոր ձևերից մեկը։ Այդ պատճառով Կոմինտերնը կոմկուսներին նպատակամղում էր դեպի ոչ միայն գոյություն ունեցող ֆաշիստական դիկտատուրաների, այլև ֆաշիստականացման, ֆաշիզմի ճանապարհը հարթող ամեն մի միջոցառման դեմ։

Ֆաշիզմի դեմ մղվող պայքարի ընթացքում կոմկուսներն ավելի ու ավելի էին զգում բոլոր աշխատավորների ուժերն այդ անողոք թշնամու դեմ համախմբելու անհրաժեշտությունը։ Գերմանիայում, ուր ֆաշիստական կուսակցությունը երկրում ամենաուժեղ կուսակցության վերածվելու կապակցությամբ իրադրությունը հատկապես տագնապալից էր, ԳԿԿ-ն ջանում էր հակաֆաշիստ բանվորներին միավորել աղգային ու սոցիալական ազատագրման ծրագրի հիման վրա, որը մշակվել էր 1930 թ.։ Գերմանիայի կոմունիստները պայքարում էին ֆաշիզմի դեմ միասնական ճակատի ստեղծման համար։ Ահեղ ԳԿԿ-ի հեղինակությունն ու թվակազմը։

Ֆաշիզմի դեմ պայքարն ուժեղացնում էին Ֆրանսիայի, Իսպանիայի, Չեխոսլովակիայի, Լեհաստանի, Բուլղարիայի, Հունաստանի և ուրիշ շատ երկրների կոմկուսներ։

Սակայն ֆաշիզմն ու ռեակցիան, որոնք դրամական շռայլ օժանդակություն էին ստանում մոնոպոլիաներից, իրենց ուժերի մոբիլիզացումն իրականացնում էին ավելի արագ տեմպերով, քան բանվոր դասակարգն ու նրա դաշնակիցները։ Այդ հանգամանքը շարագուշակ կնիք էր դնում Եվրոպայի ամբողջ իրադրության վրա։

Աշխատավորությանը մոբիլիզացնելով ընդդեմ ֆաշիզմի հարձակման, կոմկուսներն ուժեղացնում էին պայքարն ընդդեմ իրենց շարքերում գոյություն ունեցող ձախ աղանդավորական տարրերի և խմբերի (Բարբե-Սելորի խումբը Ֆրանսիայում, Նեյման-Ռեմմելեի խումբը Գերմանիայում, Բուլիեխոս-Տրիլլայի խումբն Իսպանիայում և այլն), որոնք խանգարում էին ճիշտ քաղաքականություն մշակելուն և իսկական մասսայական հակաֆաշիստական աշխատանք կատարելուն։

Կոմինտերնի գործկոմի XII պլենումը (1932 թ. օգոստոս-սեպտեմբեր), նշելով դասակարգային պայքարի հետագա սրումը, առանձնահատուկ ուժով ընդգծեց մասսաների մեջ կոմունիստների աշխատանքի ուժեղացման անհրաժեշտությունը։ Նա կոմունիստներին կոչ արեց աշխատավորության ամենօրյա տնտեսական ու քաղաքական պահանջների համար մղվող պայքարում կոնտակտներ հաստատել ռեֆորմիստական արհմիութենական ստորին կազմակերպությունների և սոցիալ-դեմոկրատական տեղական կազմակերպությունների հետ։ Դրանով իսկ հաղթահարվեց այն դրությունը, որը բացառում էր նույնիսկ ռեֆորմիստական ստորին կազմակերպությունների հետ միասնական գործողությունների հնարավորությունը։

Այդ ժամանակի դասակարգային մարտերում, կոմկուսների գաղափարաքաղաքական ամրապնդման համար մղվող պայքարում կոփվում էին Կոմինտերնի և նրա սեկցիաների կադրերը։ Շատ կոմկուսների ղեկավար մարմիններում եղած մարքսիստական-լենինյան կայուն կորիզը համախմբվում էր այնպիսի գործիչների շուրջը, ինչպիսիք էին Մ. Թորեզը, Մարսել Կաշենը, Ժ. Դյուկլոն (Ֆրանսիա), Ա. Գրամշին, Պ. Տոլյատտին (Իտալիա), Է. Թելմանը, Վ. Պիկը, Վ. Ուլբրիխտը (Գերմանիա), Գ. Դիմիտրովը, Վ. Կոլարովը (Բուլղարիա), Ու. Ֆոստերը (ԱՄՆ), Կ. Գոտվալդը, Ա. Զապոտոցկին, Յա. Շվերման (Չեխոսլովակիա), Ու. Գալլախերը, Հ. Պոլլիտը (Անգլիա), Խ. Դիասը, Դ. Իբարուրին (Իսպանիա), Վ. Կոդովիլյան, Ռ. Դիոլդին (Արգենտինա), Տիմ Բակը (Կանադա), Հո Շի Մինը (Հնդկաչին) և ուրիշներ։ Ահեղ մասսաներին պայքարի համար մոբիլիզացնելու կոմկուսների ընդունակությունը։

Սակայն այդ ժամանակ կոմկուսներն իրենց քաղաքականության մեջ միշտ չէր, որ հաշվի էին առնում ֆաշիստական վտանգի մասշտաբները, գերագնահատում էին հեղափոխական ճգնաժամի հասունացման տեմպերը, անհրաժեշտ նշանակություն չէին տալիս պայքարի համադեմոկրատական լոզունգներին, արմատախիլ չարեցին աղանդավորական մի քանի սխալներ։ Դա իր արտահայտությունը գտավ ԿԻԳԿ XI և XII պլենումների որոշումներում։

Կոմինտերնն ու կոմկուսները ձգտում էին ռեակցիայի ու ֆաշիզմի հարձակման դեմ բանվորների մղած պայքարը կապել սոցիալիստական հեղափոխության անմիջական նախապատրաստման խնդրի հետ։ Պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման լոզունգն առաջադրվում էր որպես անմիջական քաղաքական պայքարի լոզունգ։ Բայց այդ լոզունգը, որը վկայում էր կոմունիստների հեղափոխականության մասին և ճիշտ էր որպես կապիտալիզմի պայ-

մաններում նրանց մղած պայքարի վերջնական նպատակ, չէր համապատասխանում այն բարդ և հակասական կոնկրետ իրադրությանը, որը ձևավորվեց այդ ժամանակ կապիտալիստական երկրներում։ Այդ լոզունգը դեռ չէր նվաճել բանվոր դասակարգի և աշխատավոր մյուս խավերի մեծամասնության պաշտպանությունը։

Ինքը՝ օբյեկտիվ իրադրությունն, այդ ժամանակ այնպիսին էր, որ իմպերիալիզմի հակասությունների խորացմանը, ռեակցիայի ու ֆաշիզմի ուժեղացմանը զուգընթաց առաջին պլան էին մղվում համադեմոկրատական խնդիրները, որոնք ունեին վառ արտահայտված հակաֆաշիստական, հակամոնոպոլիստական բովանդակություն։ Այսպիսով, օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառների շնորհիվ հեղափոխական պայքարը իմպերիալիզմի երկրներում իր առաջին էտապում պետք է անխուսափելիորեն կրեր համադեմոկրատական, հակաֆաշիստական բնույթ։ Սոցիալիստական հեղափոխության ուղին ուրվագծվում, որոշվում էր որպես մի այնպիսի ուղի, որն անցնում էր պայքարի հակաֆաշիստական համադեմոկրատական անցման փուլի միջով։ Դրան համապատասխան էլ հարկավոր էր կոմունիստական շարժման շրջադարձ դեպի նոր քաղաքականություն։ Կոմինտերնն ու կոմկուսները ոչ անմիջապես հաշվի առան փոխված իրադրության յուրահատկությունը և բոլոր ջանքերը սկզբնապես համադեմոկրատական հակաֆաշիստական խնդիրների վրա կենտրոնացնելու՝ դրանից բխող անհրաժեշտությունը։

Քաղաքականապես սխալ էր վերաբերմունքը սոցիալ-դեմոկրատիայի՝ որպես սոցիալ-ֆաշիզմի, նկատմամբ։ ԿԻԳԿ X պլենումը 1929 թ. հուլիսին, երբ դեռ թարմ էր Բեռլինի պոլիցայ-պրեզիդենտ, սոցիալ-դեմոկրատ Ցերգիբելի հրամանով գնդակահարված բանվորների արյունը, սոցիալ-դեմոկրատիային գնահատեց որպես «սոցիալ-ֆաշիզմ»։ Այդ գնահատականն արտահայտում էր բանվորների ծայրահեղ զայրույթն այն բանից, որ սոցիալ-դեմոկրատական առաջնորդներից մի քանիսը հեղափոխական զանգվածների դեմ ավելի ու ավելի հաճախակի էին օգտագործում բռնության միջոցները, ընդհուպ մինչև զենքը։ Բայց ամբողջությամբ վերցրած «սոցիալ-ֆաշիզմի» բանաձևը, որի տեսական հիմքը Ի. Ստալինի դրույթն էր այն մասին, թե սոցիալ-դեմոկրատիան ու ֆաշիզմը երկվորյակներ են, սխալ էր, որը մերժում էր ֆաշիզմի դեմ, աշխատավորության հրատապ կարիքների համար մղվող պայքարում կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների համաձայնության հնարավորությունը։

Աղանդավորական սխալների հետ էր կապված նաև կոմկուսների կողմից անցկացվող «դասակարգն ընդդեմ դասակարգի» տակտիկան։ Մտահղացմամբ այդ տակտիկան պետք է լիներ բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության սոցիալ-դեմոկրատական քաղաքականության ալտերնատիվը, ամրապնդեր պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցությունը, նրան մոբիլիզացներ ընդդեմ բուրժուազիայի։ Դրա մեջ կար նոր տակտիկայի առողջ կորիզ։ Սակայն այդ տակտիկան ելնում էր այն ենթադրությունից, որ ռեֆորմիստական բոլոր կազմակերպություններն արդեն ամբողջապես անցել են բուրժուազիայի կողմը, դարձել բուրժուազիայի «երրորդ կուսակցությունը»։ Գործնականում «դասակարգն ընդդեմ դասակարգի» տակտիկան սկսեց խոչընդոտել կոմունիստների ու սոցիալ-դեմոկրատների գործողությունների միասնությանն ընդդեմ հարձակվող ֆաշիզմի, այն չնպաստեց նաև աշխատավորության ոչ պրոլետարական խավերին հակաֆաշիստական ճակատի մեջ ներգրավելուն։

Աղանդավորական սխալներից զերծ չէր նաև կոմունիստների արհմիութենական քաղաքականությունը։ Հեղափոխական արհմիութենական օպոզիցիան (ՀԱՕ) մի շարք երկրներում ինքնուրույն կարմիր արհմիությունների վերածելու կուրսը հասցրեց նրան, որ փոքրամասնություն կազմող հեղափոխական բանվորները բաժանվեցին բանվորների հիմնական զանգվածից։

Դասակարգային պայքարի, ֆաշիզմի դեմ մղված մարտերի փորձի վրա կոմունիստական շարժումն ստիպված եղավ գիտակցում էր այդ սխալները և մոտենում բոլոր հակաֆաշիստների միավորման նպատակին ուղղված նոր քաղաքականության մշակմանը։

Գերմանիայում ֆաշիստների կողմից իշխանության զավթման դասերը։ Կոմինտերնի առաջին քայլերը դեպի նոր քաղաքականություն

Հիտլերականների անցումն իշխանության գլուխ և ֆաշիստական բանդաների վայրենի մոլեգնությունները Գերմանիայում, գերմանական բանվոր դասակարգի քաղաքական և տնտեսական բոլոր կազմակերպությունների ջախջախումը, նացիստներին ոչ մի դիմադրություն ցույց չտված սոցիալ-դեմոկրատների քաղաքականությունը՝ այս բոլորը խորապես ցնցեց միջազգային բանվորական շարժումը։ Ամբողջ Եվրոպայի բանվոր դասակարգը հիտլերականների իշխանության գլուխ անցնելն ընդունեց որպես մի այնպիսի վտանգ, որը հրամայաբար կոչ էր անում դիմադրել և հավաքագրել պրոլետարական ուժերը։

Աշխատավորները տեսնում էին, որ Գերմանիայում ֆաշիզմի տարած հաղթանակով այդ երկիրը վերածվել է համաշխարհային ռեակցիայի հենարանի, Եվրոպայում պատերազմի հիմնական օջախի, ՍՍՀՄ-ի դեմ պայքարի հարվածային բռունցքի։ Հիտլերականների հաղթանակը խթանեց աշխարհի ամենառեակցիոն ուժերին, դրան հետևեց ֆաշիստական հարձակման ալիքը Ֆրանսիայում, Իսպանիայում, Ավստրիայում, ուրիշ շատ երկրներում։

Գերմանիայում ֆաշիստների իշխանության գլուխ անցնելու նախօրեին մի շարք երկրների սոցիալ-դեմոկրատական բանվորների շրջանում միտք առաջացավ II և III ինտերնացիոնալների միջև «չհարձակման պակտի» մասին։ Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալն այլևս չէր կարող անտեսել ֆաշիզմի դեմ բանվորների գործողությունների միասնության հարաճուն ձգտումը։ 1933 թ. փետրվարի 19-ին սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի գործկոմի բյուրոն կոչ ուղղեց ամբողջ աշխարհի բանվորներին, որի մեջ հռչակվում էր սոցիալիստների համաձայնությունը հակաֆաշիստական ընդհանուր գործողությունների նպատակով Կոմինտերնի հետ բանակցություններ վարելու մասին։ Սակայն կոչը պայքարի ոչ մի կոնկրետ ծրագիր չէր առաջադրում։ Միայն առաջարկվում էր դադարեցնել կոմունիստների ու սոցիալ-դեմոկրատների փոխադարձ հարձակումները։ Կոչը պարունակում էր նաև դիմագրգիռի բավականաչափ մեծ բաժին, որը կոչված էր գունաթափելու աջ սոցիալ-դեմոկրատիայի քաղաքականությունը։

1933 թ. մարտի 5-ին Կոմինտերնի գործկոմը կոչով դիմեց բոլոր երկրների բանվորներին։ ԿԻԳԿ-ն հայտարարում էր. «Գերմանիայում բանվոր դասակարգի դեմ համաշխարհային ռեակցիայի բոլոր ուժերը սանձազերծած ֆաշիզմի հարձակման պայմաններում Կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմը բոլոր կոմունիստական կուսակցություններին կոչ է անում ևս մեկ փորձ կատարել սոցիալ-դեմոկրատական բանվորական մասսաների հետ, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միջոցով միասնական ճակատ ստեղ-

ծելու»[4]։ Այսպիսով, Կոմինտերնը 1923 թ. հետո առաջին անգամ համաձայնություն էր առաջարկում կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ղեկավարության մակարդակով։ Դա կարևոր քայլ էր միասնական բանվորական ճակատի քաղաքականության զարգացման մեջ։ Առաջադրվում էր երկու բանվորական կազմակերպությունների միասնական գործողությունների կոնկրետ պլատֆորմ՝ համատեղորեն ձեռնամուխ լինել բանվորների քաղաքական, արհմիութենական և այլ կազմակերպությունների դեմ ֆաշիզմի ու ռեակցիայի գրոհների հակահարվածի կազմակերպմանը, ինքնապաշտպանության համատեղ ջոկատների ստեղծմանը, աշխատավարձի, գործազրկության նպաստների իջեցման դեմ համատեղ պայքարի կազմակերպմանը և այլն։ Այս առաջարկությունները հիմք էին ստեղծում միասնական բանվորական ճակատի ավելի լայն, քան անցյալում, քաղաքականության համար։ Կոմինտերնը կոմկուսներին հանձնարարեց հրաժարվել կապիտալի ու ֆաշիզմի հարձակման դեմ մղվող համատեղ պայքարի ժամանակ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների դեմ վիճաբանությունները սրելուց։

Սակայն սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալը հրաժարումով պատասխանեց Կոմինտերնի առաջարկությանը։ Բոլոր սոցիալիստական կուսակցությունները, որոնց դիմեցին կոմկուսները միասնական հակաֆաշիստական ճակատ ստեղծելու առաջարկությամբ, զանազան պատրվակներով մերժեցին այդ առաջարկությունը։ Չնայած այդ հրաժարմանը, կոմունիստները շարունակում էին ուղիներ որոնել բոլոր հակաֆաշիստ բանվորների և ֆաշիզմի դեմ նրանց դաշնակիցների համախմբման համար։

Բոլոր հակաֆաշիստների մարտական միասնական լայն ճակատի կազմակերպման գաղափարով էր տոգորված եվրոպական հակաֆաշիստական բանվորական կոնգրեսի գործունեությունը, որը տեղի ունեցավ Փարիզի Պլեյել դահլիճում (1933 թ. հունիս)։ Կոնգրեսն առաջադրեց ֆաշիզմի և իմպերիալիստական պատերազմի դեմ, աշխատավորների դեմոկրատական իրավունքների և տնտեսական պահանջների պաշտպանության համար պայքարի կոնկրետ ծրագիր։

Ամբողջ աշխարհում հակաֆաշիստական ուժերի ակտիվացմանը շատ բանով նպաստեց Լայպցիգի դատավարությունում (1933 թ.) Գ. Դիմիտրովի խիզախ ելույթը։ Այդ դատավարությունը կազմակերպել էին ֆաշիստները կոմունիստներին ռայխստագի հրկիզման մեջ մեղադրելու նպատակով։ Գ. Դիմիտրովը մերկացրեց հիտլերականների արյունալի հանցագործությունները և ֆաշիզմի հակաժողովրդական տեռորիստական քաղաքականությունը։ Այդ բոցաշունչ հեղափոխականի և մեղադրված մյուս կոմունիստների պաշտպանության միջազգային կամպանիան, ֆաշիստական տեռորի դեմ ուղղված շարժումը ընդգրկեցին ոչ միայն կոմունիստ բանվորներին, այլև սոցիալ-դեմոկրատ բանվորներին, ռեֆորմիստական և քրիստոնեական արհմիությունների անդամներին, առաջադեմ մտավորականությանը։

Ֆաշիզմի, իմպերիալիզմի ու պատերազմի դեմ պայքարելու համար միջազգային պրոլետարիատի մոբիլիզացման հարցերը քննարկվեցին Կոմինտերնի XIII պլենումում (1933 թ. նոյեմբեր-դեկտեմբեր)։ Պլենումը տվեց ֆաշիզմի՝ որպես ֆինանսական կապիտալի առավել ռեակցիոն, առավել շովինիստական և առավել իմպերիալիստական տարրերի, բացահայտ տեռորիստական դիկտատուրայի բնորոշումը։ Այդ բնորոշումը բացահայտում էր ֆաշիզմի դասակարգային բնույթը, կոմկուսներին օգնում ավելի ճշտորեն կառուցելու հակաֆաշիստական քաղաքականությունը։

Քննարկելով հակապատերազմական պայքարի հարցերը, ԿԻԳԿ XIII պլենումը սկզբունքային եզրակացություն արեց այն մասին, որ պրոլետարիատն իր պայքարով կարող է հետաձգել, ետ մղել պատերազմը։ Կոմկուսները պետք է պայքարեին ֆաշիստական այն հայացքի դեմ, թե իբր չի կարելի խանգարել իմպերիալիստական պատերազմի սանձազերծմանը, թե իսկական հեղափոխությունն սկսվելու է միայն իմպերիալիստական նոր պատերազմի հետևանքով։

Պլենումի որոշումներում, սակայն, կային մի շարք նախկին, ոչ ճիշտ դրույթներ։ Չնայած ֆաշիզմի հարձակման կապակցությամբ պայմանների փոփոխությանը, պլենումը զարգացած կապիտալիստական երկրների կոմկուսներին նախկին ձևով կողմնորոշեց դեպի անմիջականորեն սոցիալիստական հեղաշրջման նախապատրաստությունը։ Պլենումը հաստատեց նաև սոցիալ-դեմոկրատիայի՝ որպես բուրժուազիայի, այդ թվում նաև ֆաշիստական երկրների բուրժուազիայի գլխավոր սոցիալական հենարանի գնահատականը։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին Կոմինտերնը վիթխարի աշխատանք էր կատարում ազգային-ազատագրական շարժման հեղափոխական ուժերի ամրապնդման ուղղությամբ։

Կոմինտերնը զգալի օգնություն ցույց տվեց Չինաստանի կոմկուսին Լի Լիսանի «ձախ աղանդավորական» խմբի դեմ նրա մղած պայքարում, խումբ, որը փորձում էր կուսակցության վզին ավանտյուրիստական պուտչիստական գիծ փաթաթել։ ՉԿԿ-ի ղեկավարության ձախ սխալների վերաբերյալ Կոմինտերնի գործկոմի որոշումները հիմք ստեղծեցին Լի Լիսանի և նրա կողմնակիցների «ուլտրահեղափոխական», մանրբուրժուական-նացիոնալիստական կուրսի վերացման համար։ Կոմինտերնը մեծ օգնություն ցույց տվեց ճնշված երկրների նաև մյուս կոմկուսներին, մասնակցելով նրանց քաղաքական գծի մշակմանը, սովորեցնելով նրանց կադրերին, ըստ ամենայնի պաշտպանելով նրանց քաղաքական ու տնտեսական պայքարը։

Շրջադարձի սկիզբը Կոմինտերնի ստրատեգիայում ու տակտիկայում

30-ական թվականների կեսերին աշխարհում առաջացած իրադրությունը բնորոշվում էր երկու կարևորագույն գործոնով՝ ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման համաշխարհային-պատմական հաջողություններով և կապիտալիստական երկրներում ֆաշիզմի ու իմպերիալիստական ռեակցիայի հարձակմամբ։

Սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում, շահագործող դասակարգերի վերացումը, արտադրության միջոցների նկատմամբ սոցիալիստական հասարակական սեփականության լիակատար տիրապետությունը, սովետական երկրի վերածումը առաջավոր ինդուստրիալ-ագրարային տերության՝ այս բոլորը էականորեն փոխում էր դասակարգային ուժերի տեղաբաշխումն աշխարհում ի վնաս կապիտալիզմի։ Հանձին Սովետական Միության միջազգային բանվոր դասակարգն այժմ ուներ առաջավոր ջոկատ, որը ուժեղացնում էր իր նյութական հզորությունը, սոցիալիզմի նվաճումները պաշտպանելու և ամրապնդելու իր ընդունակությունը։

Կապիտալիստական աշխարհում ֆաշիզմը, շարունակելով ծավալել հարձակումը, հիմնական հարվածն ուղղում էր բանվոր դասակարգի, կոմունիստական կուսակցությունների դեմ։ Այդ նույն ժամանակ նա հանդես էր գալիս

[4] «Правда», 1933, 6 марта.

որպես բոլոր դեմոկրատական խավերին թշնամի ուժ։ Ֆաշիստները կատաղի գրոհներ էին ձեռնարկում բուրժուա-դեմոկրատական ինստիտուտների, պառլամենտական ռեժիմների դեմ։

Ֆաշիզմը համաշխարհային թատերաբեմում իր հետ մահացու վտանգ էր բերում սոցիալիզմի երկրների, միջազգային բանվոր դասակարգի, աշխատավորների դեմոկրատական իրավունքների ու ազատությունների, շատ ժողովուրդների ազգային գոյության համար։ Իրադարձությունների զարգացումը միջազգային բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների և բոլոր դեմոկրատների առջև դրեց ֆաշիզմի դեմ պայքարի ընդհանուր խնդիրներ։

Կոմունիստական ինտերնացիոնալը և կոմկուսներն այդ պայմաններում սկսեցին մշակել նոր ստրատեգիա, որի ելակետն էր հեղափոխական ու դեմոկրատական բոլոր ուժերի համախմբումն ընդդեմ ֆաշիզմի։ 1934 թ. Ֆրանսիայի փետրվարյան իրադարձությունները, երբ կոմունիստ և սոցիալիստ բանվորների համատեղ ելույթները վճռական հակահարված հասցրին ֆաշիզմին, կարևոր էտապ հանդիսացան երկրում հակաֆաշիստական գործողությունների միասնության ճանապարհին։ Ֆրանսիայի կոմկուսը 1934 թ. հուլիսին համաձայնություն ձեռք բերեց սոցիալիստական կուսակցության հետ։ Գործողությունների միասնության պակտում, որը ստորագրել էին կոմունիստներն ու սոցիալիստները, խոսվում էր այն մասին, որ երկու կուսակցությունները պարտավորվում են համատեղ պայքարել ֆաշիզմի ու ռեակցիայի դեմ, կիրառելով դասակարգային պայքարի գործուն մեթոդներ։ Միասնական բանվոր դասակարգը Ֆրանսիայում մոբիլիզացնող օրինակ դարձավ նաև ուրիշ կապիտալիստական երկրների բանվորական շարժման համար։

Եթե ամբողջ աշխարհի բանվորները Ֆրանսիայի օրինակով տեսան միացյալ ուժերով ֆաշիզմին հաջող հակահարված հասցնելու հնարավորությունը, ապա 1934 թ. սկզբին Ավստրիայում տեղի ունեցած իրադարձությունները մի այլ կարևոր դաս էին տալիս։ Այստեղ խոսքով ձախ լոզունգներով հանդես եկած սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որին պաշտպանում էր բանվոր դասակարգի ճնշող մեծամասնությունը, հրաժարվեց ֆաշիզմի դեմ վճռական գործողություններից և դրանով իսկ բանվորներին դատապարտեց պարտության։ 1934 թ. փետրվարին ֆաշիզմին ավստրիական բանվորների ցույց տված ուշացած և անբավարար կազմակերպված զինված դիմադրությունն ավարտվեց նրանց ջախջախմամբ։ Բայց Ավստրիայի իրադարձությունները նաև ցույց տվեցին, որ ռեֆորմիստական կազմակերպությունների հետևից ընթացող բանվորները ձգտում են կոմունիստների հետ ելնել ֆաշիզմի դեմ ակտիվ պայքարի ուղին։

Իսպանիայի կոմկուսի փորձը, հատկապես 1934 թ. հոկտեմբերին իսպանական բանվորների ընդհանուր գործադուլի բուռն օրերին, գործադուլ, որը մի շարք շրջաններում վերաճեց զինված ապստամբության, նույնպես ցույց էր տալիս, որ կոմունիստ, սոցիալիստ և անարխիստ բանվորների միասնությունը հնարավոր է և կենսականորեն անհրաժեշտ՝ ֆաշիզմի հարձակմանը հակահարված տալու համար։

Միջազգային կոմունիստական շարժման նոր քաղաքական կողմնորոշումը ձևավորվեց աստիճանաբար՝ կոմունիստական կուսակցությունների և Կոմունիստական ինտերնացիոնալի ընդհանուր ջանքերի հետևանքով։ Դասակարգային պայքարի դասերի խոր, բազմակողմանի քննարկումները, տաք դիսկուսիաները, որոնց ընթացքում վերանայվում էին հնացած դրույթները, Կոմինտերնում ծավալվեցին 1934 թ. ամռանն ու աշնանը՝ Կոմինտերնի VII կոնգ-

րեսի նախապատրաստության կապակցությամբ։ Կոնգրեսի օրակարգի հիմնական կետերի նախապատրաստման հանձնաժողովներում, որոնց աշխատանքում չափազանց կարևոր դեր խաղացին ՀամԿ(բ)Կ-ի ներկայացուցիչները, քննարկվում էին միջազգային բանվորական շարժման արմատական պրոբլեմները։ Դիսկուսիաների ընթացքում աստիճանաբար հաղթահարվում էին ստրատեգիական հին կոնցեպցիաներին դեռ դերի մնացած, քննարկումների մի քանի մասնակիցների հայացքները։

Քաղաքական նոր կողմնորոշման մշակման գործում կարևոր ավանդ հանդիսացավ Ժողովրդական ճակատի լոզունգի առաջադրումը։ Ֆրանսիայի կոմկուսի կողմից 1934 թ. հոկտեմբերի վերջին առաջադրված այդ լոզունգը 1934 թ. դեկտեմբերին աջակցություն գտավ ԿԻԳԿ նախագահության նիստերում։ Ժողովրդական ճակատի գաղափարը հանդիսանում էր իմպերիալիստական ռեակցիայի դեմ պայքարի համար ժողովրդի մյուս խավերի հետ բանվոր դասակարգի դաշինքի վերաբերյալ լենինյան ուսմունքի զարգացումը։ Ժողովրդական ճակատը աշխատավոր լայն մասսաների միավորումն է նրանց համատեղ գործողությունների հիման վրա։ Ժողովրդական ճակատի առաջատար ուժը բանվոր դասակարգն էր, որը հանդես էր գալիս գյուղացիության և քաղաքի մանրբուրժուական խավերի հետ դաշինք կնքած։ Ժողովրդական ճակատի գլխավոր նպատակները համապատասխանում էին ֆաշիզմին հակահարված տալու, մասսաների իրավունքները պաշտպանելու և ընդլայնելու՝ բոլոր աշխատավորների, բոլոր դեմոկրատների կրքոտ ձգտումներին։

Կապիտալիստական երկրների մի շարք կոմկուսներ արդեն 1935 թ. սկզբից գործնական քայլեր ձեռնարկեցին Ժողովրդական ճակատ ստեղծելու համար, կուտակում էին հակաֆաշիստների համախմբման պայքարի փորձ։

Միաժամանակ քաղաքական նոր որոշումների որոնումներ էին կատարվում նաև գաղութային ու կախյալ երկրների կոմկուսներում։ Այդ երկրներում տիրող դրությունը համառորեն պահանջում էր հակաիմպերիալիստական բոլոր ուժերի գործողությունների միասնություն։ Այդ ժամանակ ծանր դրության մեջ էր գտնվում Չինաստանի կոմկուսը։ Կուսակցության ղեկի մոտ կանգնած ձախ-աղանդավորական տարրերը, հաշվի չնստելով ռեալ պայմանների հետ, վերցրեցին քաղաքների անհապաղ զինված զավթման և գոմինդանական բանակի դեմ ճակատային մարտեր մղելու կուրս։ Ավանտյուրիզմը, «ձախ» թեքումը, այն բանի չըմբռնելը, որ կենսականորեն անհրաժեշտ էր համազգային ճակատ ստեղծել ճապոնական իմպերիալիստական զավթիչների դեմ, ոչ ճկուն տակտիկան վիթխարի վնաս հասցրին ՉԿԿ-ի քաղաքականությանը։ Այդ սխալները եղան Չինաստանի կարմիր բանակի ռազմական պարտությունների և հեղափոխական բազաների ընդարձակ շրջանների կորստյան պատճառներից մեկը։

ԿԻԳԿ-ն վիթխարի օգնություն ցույց տվեց Չինաստանի կոմկուսին բոլոր հակաիմպերիալիստական, հայրենասիրական ուժերի համախմբման քաղաքականություն մշակելու գործում։ ԿԻԳԿ-ի ամենաակտիվ մասնակցությամբ պատրաստվեց ՉԿԿ Կենտկոմի և բանվորա-գյուղացիական ժամանակավոր կառավարության 1935 թ. օգոստոսի 1-ի դիմումը, որտեղ առաջարկվում էր դադարեցնել երկրում մղվող երկպառակտչական պայքարը և համատեղ ռազմական գործողություններ կազմակերպել ճապոնական իմպերիալիզմի դեմ։ Դիմումը կարևոր շրջադարձային պահ հանդիսացավ Չինաստանում հակաիմպերիալիստական ուժերի համախմբման քաղաքականության ասպարեզում։

Գաղութային և կախյալ շատ երկրներում կոմկուսները վերստին հռչակեցին

հակաիմպերիալիստական միասնական ճակատի համար պայքարի լոզունգներ։ Լատինական Ամերիկայի երկրների կոմկուսների կոնֆերանսը 1934 թ. հոկտեմբերին, չնայած այն բանին, որ դեռ իրեն չէր հաջողվել լիովին հաղթահարել նախկին վերաբերմունքը ազգային-ռեֆորմիստական և մանրբուրժուական կուսակցությունների նկատմամբ, անհրաժեշտ գտավ այդ կազմակերպությունների հետ համաձայնության գալ իմպերիալիստական լծի դեմ ընդհանուր պայքար կազմակերպելու համար։

Ֆաշիզմի և իմպերիալիզմի դեմ մղված մարտերում ծնունդ առած կոմունիստների նոր քաղաքականությունը ազդեցություն էր գործում սոցիալ-դեմոկրատական բանվորների վրա։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցություններում գոյություն ունեցող ձախ հոսանքները զգալիորեն ուժեղացան։ Չնայած այն բանին, որ սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի գործկոմը մերժեց Կոմինտերնի առաջարկությունները միասնական գործողությունների վերաբերյալ, նա ստիպված էր 1934 թ. վերջին ներքնախավերի ճնշման տակ իր սեկցիաների վրայից հանել միասնական ճակատի մասին կոմկուսների հետ համաձայնության գալու արգելքը։

Բոլոր հակաֆաշիստների գործողությունների միասնության գաղափարը, որը հռչակել էին կոմկուսները, ավելի խորն էր թափանցում նաև առաջադեմ մտավորականության շարքերը։ Հակաֆաշիստների համախմբման համար ջերմորեն կոչ էին անում մշակույթի և գիտության՝ աշխարհում հայտնի այնպիսի գործիչներ, ինչպես Մ. Գորկին, Հ. Բարբյուսը, Ռ. Ռոլանը, Պ. Լանժեվենը, Թ. Մանը, Լ. Ֆեյխթվանգերը, Մ. Ա. Նեքսեն, Ռ. Ալբերտին, Ռ. Տագորը և շատ ուրիշներ։

Կոմինտերնի VII կոնգրեսի նախօրյակին արդեն պարզ էր, որ հակաֆաշիստների համախմբման քաղաքականությունը համապատասխանում է իրենց իրավունքների ու ազատությունների պաշտպանության ու ընդլայնման մասին ամենալայն մասսաների ձգտումներին։

Կոմինտերնի VII կոնգրեսը

1935 թ. հուլիս-օգոստոսին Մոսկվայում տեղի ունեցավ Կոմունիստական ինտերնացիոնալի VII կոնգրեսը։ Նրա աշխատանքին մասնակցում էին 65 կոմկուսների և միջազգային մի քանի կազմակերպությունների պատվիրակներ։ Այդ ժամանակ Կոմինտերնն իր շարքերում միավորում էր ավելի քան 3 140 000 կոմունիստների, նրանցից 785 000-ը կապիտալիստական երկրներում։

Օրակարգի կենտրոնական հարցը Դ. Դիմիտրովի «Ֆաշիզմի հարձակումը և Կոմունիստական ինտերնացիոնալի խնդիրները ֆաշիզմի դեմ բանվոր դասակարգի միասնության համար մղվող պայքարում» զեկուցումն էր։ Դնահատելով աշխարհում տիրող իրադրությունը, զեկուցողը նշեց, որ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի սրման և աշխատավոր զանգվածների հեղափոխականացման պայմաններում «տիրապետող բուրժուազիան ավելի ու ավելի է փբրկություն որոնում ֆաշիզմի մեջ՝ աշխատավորության դեմ բացառիկ թալանչիական միջոցառումներ իրականացնելու, գիշատիչ իմպերիալիստական պատերազմ նախապատրաստելու նպատակով», հեղափոխությունը կանխելու նպատակով։ Զեկուցման մեջ ընդգծվում էր, որ գերմանական ֆաշիզմը հանդես է գալիս միջազգային հակահեղափոխության հարվածային բռունցքի դերում, հանդիսանում է համաշխարհային ֆաշիստական ռեակցիայի գլխավոր ուժը, իմպերիալիստական նոր պատերազմի գլխավոր հրձիգը, ՍՍՀՄ-ի մահացու թշնամին։

Սկզբունքային նշանակություն ուներ կոնգրեսի եզրակացությունն այն

մասին, որ ֆաշիզմի իշխանության գլուխ անցնելը բուրժուական մեկ կառավարության սովորական փոխարինում չէ մյուսով, այլ բուրժուազիայի դասակարգային տիրապետության պետական մեկ ձևի՝ բուրժուական դեմոկրատիայի փոխարինում մի այլ ձևով՝ բացահայտ տեռորիստական դիկտատուրայով։ Կոնգրեսը նշեց, որ մի կողմից ֆաշիզմի և մյուս կողմից բանվոր դասակարգի ու դեմոկրատական բոլոր խավերի միջև գոյություն ունի խոր հակասություն։ Ինքը՝ կյանքն է, այսպիսով, օբյեկտիվ հիմք ստեղծել տարբեր դասակարգերի ու խավերի համախմբման համար ընդդեմ ֆաշիզմի, որը հանդիսանում է նրանց ընդհանուր թշնամին։

Հեղափոխական և դեմոկրատական բոլոր ուժերի համախմբում ընդդեմ ֆաշիզմի՝ ահա այն գլխավոր նպատակը, որը VII կոնգրեսը դրեց կոմունիստների առջև։ Ընդ որում կոնգրեսը առաջնակարգ նշանակություն տվեց միասնական բանվորական ճակատի համար մղվող պայքարին։ Ֆաշիզմը կարողացավ իշխանության գլուխ անցնել ամենից առաջ այն պատճառով, նշվում էր կոնգրեսում, որ բանվոր դասակարգը սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդների կողմից իրականացված դասակարգային համագործակցության քաղաքականության պատճառով պառակտվեց, քաղաքականապես և կազմակերպորեն զինաթափվեց հարձակվող բուրժուազիայի առջև։ Իսկ կոմունիստական կուսակցությունները բավականաչափ ուժեղ չէին, որպեսզի, անկախ և հակառակ սոցիալ-դեմոկրատիայի, մասսաներին ոտքի հաներին և վճռական մարտի տաներին ընդդեմ ֆաշիզմի։

Պրոլետարիատի գործողությունների միասնությունն ազգային և միջազգային մասշտաբով դիտվում էր որպես հզոր զենք, որը բանվոր դասակարգին ընդունակ է դարձնում ոչ միայն հաջող պաշտպանության, այլև ֆաշիզմի դեմ հաջող հակահարձակման համար։ Դնահատելով միասնական բանվորական ճակատի համար Ֆրանսիայի, Իսպանիայի և մի շարք այլ երկրների կոմկուսների մղած պայքարի նոր փորձը, VII կոնգրեսը հստակորեն նշեց, որ առավել հաջողությամբ կարող է նման ճակատ ստեղծվել հակաֆաշիստական, համադեմոկրատական լոզունգների շուրջը։ Այսպիսով, փոխվում էր միասնական բանվորական ճակատի քաղաքականության հենց բովանդակությունը։ Եթե նախկինում այն հետապնդում էր սոցիալիստական հեղափոխության անմիջական նախապատրաստման համար բանվոր դասակարգի մեծամասնության նվաճման նպատակ, ապա այժմ նրա բովանդակությունն ամենից առաջ հակաֆաշիստական պայքարն էր։

Միասնական բանվորական ճակատի ստեղծման հաջողությունը կախված էր նախ և առաջ կոմունիստների և սոցիալ-դեմոկրատների փոխհարաբերություններից։ Հաշվի առնելով հակաֆաշիստական տրամադրությունների աճը սոցիալ-դեմոկրատական կուսակցություններում, կոնգրեսը կոմկուսներին կոչ արեց ֆաշիզմի դեմ միասնական ճակատի համար սոցիալ-դեմոկրատիայի հետ պայքարել բոլոր մակարդակներով՝ ձեռնարկություններում, քաղաքներում, ազգային շրջանակներում և ինտերնացիոնալների մակարդակով։ Դրա հետ մեկտեղ նման դիրքն, իհարկե, չէր նշանակում, որ կոմունիստները դադարեցնում են պայքարն ընդդեմ բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության գաղափարախոսության։

Արհմիութենական շարժման միասնության հարցը նմանապես դրվեց նոր ձևով, ելնելով արհմիությունները հակաֆաշիստական պայքարի կարևորագույն հենարան դարձնելու անհրաժեշտությունից։ Որոշվեց բոլոր գործնական միջոցառումները ձեռնարկել արտադրական և համազգային մասշտաբով արհ-

միությունների միասնության իրականացման համար, յուրաքանչյուր երկրում և միջազգային մասշտաբով պայքարել հանուն դասակարգային միասնական արհմիությունների՝ որպես կապիտալի ու ֆաշիզմի հարձակման դեմ բանվոր դասակարգի կարևորագույն հենարաններից մեկի։

VII կոնգրեսը դրեց նաև քաղաքական միասնության հասնելու, այսինքն յուրաքանչյուր երկրում բանվոր դասակարգի միասնական մասսայական քաղաքական կուսակցությունների ստեղծման հնարավորության հարցը։ Նման միասնություն կարելի էր իրականացնել միայն մարքսիստական-լենինյան հիմունքների վրա։ Այդպիսի միասնության պայմաններն էին, ինչպես նշվում էր կոնգրեսի որոշումներում, բուրժուազիայի հետ սոցիալ-դեմոկրատիայի բլոկի խզումը և բուրժուազիայից լիակատար անկախությունը, գործողությունների միասնության նախնական իրականացումը, բուրժուազիայի տիրապետության հեղափոխական տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման անհրաժեշտության ճանաչումը, հրաժարումն իմպերիալիստական պատերազմում իր բուրժուազիային պաշտպանելուց, կուսակցության կառուցումը դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքների վրա։ Այդ պայմանները որոշում էին ապագա միասնական բանվորական կուսակցությունների հեղափոխական դեմքը։

Պրոլետարական միասնության քաղաքականությունը կոնգրեսում քննարկվում էր հակաֆաշիստական բոլոր ուժերի համախմբման խնդրի հետ անխզելիորեն կապակցված։ Զարգացնելով լենինյան ուսմունքը պրոլետարիատի լայն դաշինքների և դեմոկրատիայի համար պայքարի՝ որպես սոցիալիզմի համար պայքարի բաղկացուցիչ մասի, կոնգրեսը հիմնավորեց Ժողովրդական ճակատի քաղաքականությունը։ Այդ քաղաքականության հիմքում ընկած էր այն գաղափարը, որ համադեմոկրատական պահանջների համար մղվող պայքարում կարելի է հասնել կապիտալի իշխանության սահմանափակմանը և նրպաստավոր ելակետային պայմանների ստեղծմանը հանուն սոցիալիզմի հետագա պայքար մղելու համար։ Կոնգրեսը կարևոր տեսական եզրակացություն արեց հակաֆաշիստական, համադեմոկրատական պայքարում յուրաքանչյուր երկրի բնակչության ճնշող մեծամասնության՝ պրոլետարիատի, գյուղացիության, քաղաքի մանր բուրժուազիայի, արհեստավորների, աշխատավոր մտավորականության գործողությունների միասնության հնարավորության մասին։ Բանվոր դասակարգը կարող է դեմոկրատական խավերին Ժողովրդական ճակատի մեջ ներգրավել, մատնանշվում էր կոնգրեսում, միայն այդ խավերի պահանջների պաշտպանության, պրոլետարիատի շահերին չհակասող բոլոր պահանջների պաշտպանության համար իր մղած ակտիվ պայքարի միջոցով։ Ժողովրդական ճակատում բանվոր դասակարգը պետք է հանդես գար որպես առաջատար ուժ։

Կոնգրեսը կանխատեսեց այնպիսի իրադրություններ, երբ Ժողովրդական ճակատի շարժման վերելքի հետևանքով ռեակցիոն հին կառավարությունները դեն կնետվեն և օրակարգում հարց կբարձրանա միասնական բանվորական կամ հակաֆաշիստական Ժողովրդական ճակատի կառավարության ստեղծման մասին։ Հիմնավորելով Ժողովրդական ճակատի կառավարության լոզունգը, VII կոնգրեսը հենվում էր Կոմինտերնի III և IV կոնգրեսների՝ Վ. Ի. Լենինի մասնակցությամբ կատարած եզրակացությունների, «բանվորա-գյուղացիական կառավարության» լոզունգի վրա։

Բոլոր դեպքերում Ժողովրդական ճակատի կառավարության վրա դրվում էր ֆաշիզմի ու ռեակցիայի ջախջախման, մոնոպոլիաների հզորության սահմանափակման, բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների դիրքերի ամրապնդման խնդիր։ Ելնելով դասակարգային ուժերի հարաբերակցությունից, այդ կառավարությունը կարող էր տարբեր դեր խաղալ, այդ թվում նաև պրոլետարիատի դիկտատուրային անցնելու կառավարության դեր։ Կոնգրեսը կոմունիստներին պարտավորեցրեց ամեն կերպ պաշտպանել Ժողովրդական ճակատի կառավարությանը։ Ցանկալի համարվեց որոշակի պայմաններում կոմունիստների մասնակցությունը իշխանության այն մարմիններում, որոնք պրոլետարիատի դիկտատուրա չեն հանդիսանում, բայց պայքարում են ռեակցիայի ու ֆաշիզմի դեմ։ Կոմունիստները պատրաստ էին Ժողովրդական ճակատի կառավարության մեջ և պառլամենտում բաժանել պատասխանատվությունը դեմոկրատական խոր վերափոխությունների համար։

Միասնական բանվորական և հակաֆաշիստական Ժողովրդական ճակատի քաղաքականությունը, որը առաջին պլան էր մղում համադեմոկրատական խնդիրները, չէր նշանակում, թե սոցիալիստական նպատակները երկար ժամանակով հետաձգվում են։ Ընդհակառակը, միասնական բանվորական և Ժողովրդական ճակատի միջոցով էր անցնում սոցիալիզմի համար մղվող պայքարում լայն զանգվածներին ներգրավելու ուղին։ Այսպես էին նախանշվում հեղափոխական պրոցեսի զարգացման ուղիները կապիտալիստական երկրներում՝ հակաֆաշիստական համադեմոկրատական պայքարի միջոցով դեպի նոր դեմոկրատիայի հաղթանակ, դեմոկրատիա, որը նախադրյալներ է ստեղծում սոցիալիստական հեղափոխության համար։ Դրանում էլ հենց կայանում էր Ժողովրդական ճակատի քաղաքականության գլխավոր իմաստը։ Կոմունիստական շարժման նոր ստրատեգիան այսպիսով բացահայտում էր սոցիալիստական հեղափոխության մոտեցման նոր հեռանկարները։

Վիթխարի նշանակություն ունեին Կոմինտերնի VII կոնգրեսի հետևություններն ազգային-ազատագրական շարժման հարցի վերաբերյալ։ Կոնգրեսը մերժեց այն ձախ դրույթները, որոնց համաձայն գաղութային երկրների հեղափոխությունը բնորոշվում էր որպես բուրժուա-դեմոկրատական, որը արագորեն վերաճում է սոցիալիստականի։ Նա նշեց, որ գաղութների և կիսագաղութների մեծամասնության համար իսկապես ժողովրդական հեղափոխության առաջին քայլը անխուսափելիորեն լինելու է իմպերիալիստական կեղեքիչների դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի էտապը։

Միասնական հակաիմպերիալիստական ճակատի ստեղծում՝ այսպիսին էր կոնգրեսի կողմից գաղութային ու կախյալ երկրների կոմունիստների առջև դրված կարևորագույն խնդիրը։ Կոնգրեսը քննադատեց նրանց հայացքները, ովքեր ազգային բուրժուազիային համարում էին ամբողջովին պրոիմպերիալիստական։ Կոնգրեսը կոմունիստներին կոչնորոշեց միասնական ճակատում համախմբելու համարձակ քաղաքականություն վարել բոլոր նրանց նկատմամբ, ովքեր ընդունակ էին պայքարելու իմպերիալիզմի դեմ, այդ թվում նաև ազգային բուրժուազիայի նկատմամբ, որի հակասություններն իմպերիալիզմի հետ ոչ միայն պահպանվում էին, այլև մի շարք երկրներում խիստ սրվեցին։ Հակաիմպերիալիստական ճակատի ստեղծման համար հատուկ նշանակություն ուներ պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հետ, որը կազմում էր ստրկացված երկրների բնակչության մեծամասնությունը։

Կոնգրեսը մեծ ուժով ընդգծեց միջազգային բանվոր դասակարգի հետ ստրկացված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դաշինքի գաղափարը։ Ֆաշիզմի, իմպերիալիզմի ջախջախման մեջ, համաշխարհային պատերազմը կանխելու մեջ ունեցած ընդհանուր շահագրգռվածությունը հող

էր ստեղծում միջազգային բանվորական շարժման և ազգային-ազատագրական պայքարի ամենասերտ միասնության համար։

Կոմինտերնի VII կոնգրեսի աշխատանքում կարևոր տեղ գրավեց Պ. Տոլյատտիի զեկուցումը խաղաղության համար, համաշխարհային նոր պատերազմի և հակասովետական ինտերվենցիայի սպառնալիքի դեմ պայքարելու մասին։ Նշելով պատերազմի ահավոր վտանգը, VII կոնգրեսը ամբողջ վճռականությամբ ընդգծեց. «Կոմունիստական կուսակցությունների կենտրոնական լոզունգը պետք է լինի խաղաղության համար պայքարի լոզունգը»։ Ըստ որում խաղաղության, պատերազմի կանխման համար պայքարը կոմունիստների կողմից դիտվում էր որպես հեղափոխության ուժերի կայունացման պայման։

Կոնգրեսը հանդես եկավ խաղաղության համար մղվող պայքարի ձախ օպորտունիստական թերագնահատման և պատերազմի, իբր որպես հեղափոխության ուղին հարթող միջոցի, մասին տրոցկիստական հայացքների դեմ։ Մերժելով ֆատալիստական պատկերացումները պատերազմի անխուսափելիության մասին, կոնգրեսը նշեց, որ խաղաղության պայքարի նոր հնարավորությունները բխում են համաշխարհային թատերաբեմում դասակարգային ուժերի փոխված հարաբերակցությունից, ՍՍՀՄ-ի քաղաքական, տնտեսական և ռազմական հզորության աճից և համաշխարհային հեղափոխական շարժման մյուս ջոկատների ուժեղացումից։

VII կոնգրեսը մերժեց գոյություն ունեցող կարծիքը՝ պատերազմի սանձազերծման համար բոլոր կապիտալիստական պետությունների հավասար պատասխանատվության մասին և իր գլխավոր հարվածն ուղղեց պատերազմի ֆաշիստական հրձիգների՝ Գերմանիայի, Ճապոնիայի, Իտալիայի դեմ։

Սկզբունքային նշանակություն ուներ կոնգրեսի հետևությունն այն մասին, որ այնպիսի պայմաններում, երբ ֆաշիստական ագրեսիան սպառնում է ոչ միայն Սովետական Միությանը, այլև մյուս երկրներին, Եվրոպայում հնարավոր են ազգային-ազատագրական պատերազմներ ընդդեմ ֆաշիստական ագրեսորների։ Նման դեպքում պրոլետարիատն ու կոմկուսները պետք է ակտիվորեն պաշտպանեն իրենց երկրի ազգային անկախությունը։ Պրոլետարիատը պետք է ազգային-ազատագրական պայքարում հայրենիքի պաշտպանությունը հմտորեն ու ճկուն կերպով զուգակցի աշխատավորների լայն զանգվածների դասակարգային ձգտումների պաշտպանության հետ, հասնի ռեժիմի դեմոկրատացմանը, հատկապես բանակի դեմոկրատացմանը, կանխի բուրժուազիայի կապիտուլյանտական մտադրությունները։

Կոնգրեսում լսվեց Դ. Մանուիլսկու զեկուցումը ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության արդյունքների մասին։ Սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում, սոցիալիստական ինդուստրացումը, ինչպես նշում էին կոնգրեսի պատվիրակները, հանդիսացան մարդկության զարգացման վրա սոցիալիզմի ունեցած ամենախոր ազդեցության աղբյուրը։ Հենվելով ՍՍՀՄ-ի մեծ նվաճումների վրա, ամբողջ աշխարհի աշխատավորությունը կարող էր վստահորեն և հաջողությամբ պայքարել ֆաշիզմի, իմպերիալիստական ռեակցիայի հարձակման և պատերազմի դեմ։ Կոնգրեսի բանաձևում նշվում էր, որ սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում նշանակում է համաշխարհային մասշտաբով դասակարգային ուժերի հարաբերակցության մեջ նոր խոշորագույն տեղաշարժ հօգուտ սոցիալիզմի, ի վնաս կապիտալիզմի, որ ՍՍՀՄ-ը դարձել է պետական-քաղաքական, տնտեսական և կուլտուրական խոշոր գործոն, որը ներգործում է համաշխարհային քաղաքականության վրա, իմպերիալիստական ռեակցիայի, ֆաշիզմի և պատերազմի դեմ պայքարող բոլոր ուժերի ձգողական կենտրոնը։

Կոնգրեսն ընդգծեց միջազգային բանվոր դասակարգի և բոլոր կոմկուսների պարտականությունը բոլոր ուժերով ու միջոցներով օգնելու ՍՍՀՄ-ի ամրապնդմանը, պայքարելու ՍՍՀՄ-ի թշնամիների դեմ։

Կոնգրեսը կարևոր որոշումներ ընդունեց կազմակերպական հարցերի վերաբերյալ։ Նա Կոմինտերնի գործկոմին հանձնարարեց իր գործունեության ծանրության կենտրոնը փոխադրել համաշխարհային բանվորական շարժման քաղաքական ու տակտիկական հիմնական դրույթների մշակման վրա և խուսափել կոմունիստական կուսակցությունների ներքին կազմակերպական գործերին անմիջականորեն միջամտելուց։ Դրանով իսկ Կոմինտերնը նպաստեց կոմկուսների ինքնուրույն նախաձեռնության զարգացմանը, կուսակցություններին օգնեց ավելի արդյունավետորեն հաշվի առնելու իրենց երկրների առանձնահատուկ կոնկրետ պայմանները, միշտ պահպանելով հավատարմությունը ինտերնացիոնալ ընդհանուր նպատակներին։

VII կոնգրեսը շրջադարձային նշանակություն ունեցավ Կոմինտերնի պատմության և քաղաքականության մեջ։ Իրականության մարքսիստական-լենինյան խոր վերլուծության և դասակարգային մարտերի փորձի ընդհանրացման հիման վրա կոնգրեսը մշակեց միասնական բանվորական և լայն Ժողովրդական ճակատի քաղաքականություն՝ հակաֆաշիստական, համադեմոկրատական խնդիրների լուծման համար, որը նոր հեռանկարներ էր բացում հեղափոխական պայքարի սոցիալիստական էտապին անցնելու համար։ Դա ոչ միայն նոր տակտիկա էր, այլև նոր ստրատեգիական գիծ, որը բխում էր աշխարհում դասակարգային ուժերի փոխված տեղաբաշխումից, բնակչության ավելի ու ավելի լայն խավերին թշնամի դարձող մոնոպոլիստական կապիտալի հակասությունների աճից։ Այդ գիծը նշանակում էր նաև Կոմինտերնի 1924—1933 թթ. քաղաքականության մեջ եղած ձախ աղանդավորական դրույթների հաղթահարում։ Կոնգրեսը հարստացրեց մարքսիստական-լենինյան տեսությունը, կոմունիստական շարժումը բարձրացրեց նոր աստիճանի, նրան զինեց ֆաշիզմի և պատերազմի դեմ պայքարի պարզ գիտակցությամբ։ Կոնգրեսը գաղափարական-տեսական մեծ դպրոց եղավ կոմունիստական կուսակցությունների կադրերի համար։

Կոմինտերնի և կոմկուսների պայքարը միասնական բանվորական և լայն Ժողովրդական ճակատի համար 1935—1937 թթ.

Կոմինտերնի VII կոնգրեսի մշակած քաղաքական կողմնորոշումը կոմկուսներին թույլ տվեց մոբիլիզացնել աշխատավորների լայն մասսաներին ռեակցիայի, ֆաշիզմի և պատերազմի ուժերին հակահարված տալու համար։ 1935—1937 թվականները դարձան միջազգային բանվորական և դեմոկրատական շարժման զգալի վերելքի տարիներ։ Այդ վերելքի կարևորագույն բնորոշ գիծը բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների գործողությունների միասնության ամրապնդումն էր։ Միասնական բանվորական և Ժողովրդական ճակատի քաղաքականությունը զգալի արդյունքներ տվեց Ֆրանսիայի, Իսպանիայի և մի շարք այլ երկրների աշխատավորներին։ Նրա հաջողությունները հատկապես խոշոր էին Ֆրանսիայում։ ՖԿԿ-ին հաջողվեց Ժողովրդական ճակատի կողմը գրավել սոցիալիստական և ռադիկալ կուսակցությունների անդամների մեծամասնությանը։ Ամրապնդվեց նաև Ժողովրդական ճակատի հիմքը՝ միասնական բանվորական ճակատը։ ԱՀԿ-ի և ԱՈՒՀԿ-ի միավորման միջոցում Ֆրանսիայում 1936 թ.

ստեղծվեց միասնական արհմիութենական կազմակերպություն՝ աշխատանքի ընդհանուր կոնֆեդերացիան, որի ղեկավարության մեջ մտան նաև կոմունիստները։ Մեկ տարում ԱԲԿ-ի թվակազմը աճեց մինչև 5 մլն՝ մինչև միավորումը երկու կազմակերպություններում եղած 1 մլն մարդու փոխարեն։ 1936 թ. ընտրություններում Ժողովրդական ճակատի տարած հաղթանակը լայն հնարավորություններ բացեց բանվոր դասակարգի, գյուղացիության և քաղաքի միջին խավերի պայքարի հետագա ծավալման համար։ Նրանք հասան մի շարք առաջադիմական սոցիալական միջոցառումների անցկացմանը։

Ֆրանսիայում Ժողովրդական ճակատի մեծ ծառայությունն այն էր, որ նա այն ժամանակ երկիրը փրկեց ֆաշիստական բարբարոսներից։ Երկրի բանվոր դասակարգը, ապահովելով իր շարքերի միասնությունը, խափանեց ֆաշիստական լիգաների պլաններն ու ոտնձգությունները։ Ֆաշիզմի դեմ մղվող պայքարում ֆրանսիական աշխատավորների հաջողությունները վիթխարի միջազգային նշանակություն ունեին։ Ֆաշիզմին չհաջողվեց այդ ժամանակ Արևմտյան Եվրոպան դարձնել իր բաստիոնը։

Իրականացնելով Ժողովրդական ճակատի քաղաքականությունը, Ֆրանսիայի բանվոր դասակարգն իրեն հաստատեց որպես համադեմոկրատական պայքարի առաջատար, որպես ազգի գլխավոր շարժիչ ուժ։

Հակաֆաշիստական Ժողովրդական ճակատի քաղաքականությունը վիթխարի դեր խաղաց իր իսկ կոմունիստական կուսակցության զարգացման գործում։ ՖԿԿ-ն ուժեղացրեց իր ազդեցությունը մասսաների մեջ, ամրապնդեց իր կապերը աշխատավորության մասսայական կազմակերպությունների հետ։ 1935—1937 թթ. ընթացքում կուսակցության թվակազմը մեծացավ 8 անգամ և հասավ 320 հազ. մարդու։ Իր պայքարում Ֆրանսիայի կոմունիստական կուսակցությունը ստանում էր Կոմինտերնի մշտական աջակցությունը։

30-ական թվականների կեսերին բանվորական և դեմոկրատական շարժումը չափազանց մեծ թափի հասավ Իսպանիայում։ Կոմկուսի հետևողական քաղաքականության շնորհիվ երկրում ստեղծվեց Ժողովրդական ճակատ, որը միավորեց բանվորական կազմակերպություններն ու ձախ հանրապետական կուսակցությունները։ Պառլամենտի 1936 թ. ընտրություններին այն պարտության մատնեց ռեակցիոն կուսակցություններին։ Սակայն հետագայում Իսպանիայի դեմոկրատական հեղափոխությունը զարգանում էր արդեն իսպանական ժողովրդի հեղափոխական-ազատագրական պատերազմի պայմաններում ընդդեմ ներքին ֆաշիզմի, որին աջակցություն էին ցույց տալիս արտաքին ֆաշիզմի ուժերը։ Այդ պայքարում ԻԿԿ-ն հատուկ դեր էր խաղում. նա դարձավ մասսայական կուսակցություն, ամբողջ ժողովրդի մարտական ավանգարդը. նրա քաղաքական կշիռն ու հեղինակությունը չտեսնված բարձրության հասան։

Կոմինտերնը Իսպանիայի կոմկուսին մեծ օգնություն ցույց տվեց ոչ միայն կադրերով, այլև այն բանով, որ մասնակցում էր իսպանական ժողովրդի կարևորագույն պրոբլեմների մշակմանը։ 1936 թ. սեպտեմբերին քննարկելով Իսպանիայի հեղափոխության բնույթի հարցը, ԿԻԳԿ-ի Քարտուղարությունը վիթխարի նշանակություն ունեցող հետևություն արեց. Իսպանական դեմոկրատական հանրապետությունը, որի հաղթանակի համար պայքարում է ժողովուրդը, հին դեմոկրատական հանրապետություն չի լինելու, այլ լինելու է իսկական ժողովրդական դեմոկրատիայի հատուկ պետություն։ ԿԻԳԿ գլխավոր քարտուղար Գ. Դիմիտրովն ասում էր, որ Իսպանիայում հակաֆաշիստական պայքարի ընթացքում ծնունդ է առնում այնպիսի պետություն, որտեղ Ժողովրդական ճակատն ունի վճռական ազդեցություն, մի պետություն, որն իրենից ներկայացնում է բանվոր դասակարգի և գյուղացիության դեմոկրատական դիկտատուրայի հատուկ ձև։

1936 թ. դեկտեմբերին ԿԻԳԿ-ի նախագահությունը, հավանություն տալով հանրապետության պաշտպանության և Ժողովրդական ճակատի ամրապնդման՝ կոմկուսի վարած գծին, իսպանական կոմունիստներին մի շարք հանձնարարականներ տվեց։ Նա առաջարկեց, որպեսզի ազգայնացումը պայմանավորվի հանրապետության պաշտպանության շահերով և որպեսզի այն անցկացվի միայն այն ձեռնարկությունների նկատմամբ, որոնք պատկանում են խռովության ուղղակի կամ անուղղակի մասնակիցներին։ ԿԻԳԿ-ն հավանություն տվեց նաև ֆաշիստ հողատերերից խլված հողերի հանձնմանը գյուղացիներին և մանր ու միջին սեփականատիրության ունեցվածքային իրավունքների ու շահերի պատսպարման ու ապահովման, քաղաքի կամ գյուղի աշխատավոր բնակչությունից բռնագրավումները կանխելու կուրսին։ ԿԻԳԿ-ն դատապարտում էր ձախությունը և այդ թվում գյուղացիական տնտեսության կոլեկտիվացում անցկացնելու փորձերը որպես մի այնպիսի քաղաքականության, որը առաջացած պայմաններում կարող է սոսկ դժվարացնել Ժողովրդական ճակատի գործը ֆաշիստական խռովարարների դեմ մղվող պայքարում։

Երբ խռովարարներին ու ինտերվենտներին հաջողվեց զգալի տերիտորիաներ զավթել և երկրում առաջացավ ծանր իրադրություն, կոմկուսը Կոմինտերնի հանձնարարականների համաձայն հանդես եկավ ազգի բոլոր առողջ ուժերի համախմբման, Ժողովրդական ճակատի շրջանակների ընդլայնման օգտին։ Կոմկուսը հռչակեց «Իսպանիայի փրկության համար ազգային միավորման» լոզունգը։ Այնպիսի պայմաններում, երբ իրադարձությունների զարգացումը սպառնալիքի տակ էր դրել համազգային շահերը, Իսպանիայի Ժողովրդական ճակատը սկսեց վերածվել ազգային ճակատի։ Ժողովրդական ճակատն իրեն դրսևորում էր որպես առաջադիմական ուժերի միասնության բավական ճկուն և շարժունակ ձև։

Իսպանական հանրապետության փորձը ոչ միայն հաստատեց Կոմինտերնի VII կոնգրեսի որոշումների իրավացիությունը, այլև զգալիորեն հարստացրեց միջազգային կոմունիստական և բանվորական շարժման տեսությունն ու պրակտիկան։ Իսպանիան առաջին երկիրն էր, ասում էր Դ. Իբարուրին, որտեղ ֆաշիզմի դեմ մղված պայքարի ընթացքում հաստատվեց բանվորների, գյուղացիների, մանր և միջին բուրժուազիայի դեմոկրատական դիկտատուրա։ Ժողովրդական այդ իշխանությունը, զարգանալով և ավելի ու ավելի հետևողականորեն մարմնավորելով նոր դեմոկրատիան, աստիճանաբար բացում էր սոցիալիստական վերափոխումների անմիջական ուղին։ Զարգացման այդ տենդենցը դրսևորվեց միանգամայն պարզորոշ ձևով, չնայած Իսպանական հանրապետության կրած պարտությանը։

Միասնական բանվորական և Ժողովրդական ճակատի համար մղվող պայքարի լոզունգների տակ իրենց գործունեությունն ակտիվացնում էին եվրոպական շատ այլ երկրների կոմկուսները, աշխատելով համախմբել ժողովրդական զանգվածներին ընդդեմ ֆաշիզմի ու ռեակցիայի։

Իտալիայում կոմկուսը 1934 թ. ամրապնդեց գործողությունների միասնությունը սոցիալիստների հետ։ Այդ կուսակցությունների միջև կնքվեց համագործակցության պակտ։ Կոմունիստներն ու սոցիալիստները միասին էին հանդես գալիս հանուն նոր հանրապետության, որի շրջանակներում պետք է լուծվեին հողի մասին պահանջները, ոչնչացվեր մոնոպոլիաների իշխանու-

թյունը և ապահովվեին ժողովրդի իրավունքները։ Այսպես էին դրվում հակաֆաշիստական լայն շարժման հիմքերն Իտալիայում։

Անգլիայի կոմկուսը երկրում աշխատավորական մասսային հանեց ֆաշիստական շարժման դեմ։ Վճռական, մարտական ելույթներն ընդդեմ ֆաշիստական պրովոկացիաների, մասնավորապես արևելյան Լոնդոնի աշխատավորության 1936 թ. հոկտեմբերի ելույթը, որի նախաձեռնողը կոմկուսն էր, ծանրը հարված հասցրին ֆաշիզմին Անգլիայում։ Ֆաշիստ Մոսլիի շարժումը սկսեց անկում ապրել։

Միասնական բանվորական և ժողովրդական լայն ճակատի քաղաքականությունը ԱՄՆ-ի պայմաններում եղավ այն քաղաքականությունը, որը կոմկուսին օգնեց արագորեն ընդլայնելու իր ազդեցությունը բանվորական շարժման մեջ և աշխատավորների մյուս խավերի շրջանում, թափանցել քաղաքական պայքարի խորքը, բարձրացնել արհմիությունների քաղաքական ակտիվությունը։ Աշխատավորների շարժումը կառավարող շրջաններին ստիպեց լուրջ զիջումների դիմել սոցիալական օրենսդրության բնագավառում։

Այն երկրներում, ուր տիրում էին ֆաշիստական կամ կիսաֆաշիստական ռեժիմներ, այսինքն՝ Գերմանիայում, Իտալիայում, Ավստրիայում, Հունաստանում, Հունգարիայում, Լեհաստանում, Բուլգարիայում և մի քանի այլ երկրներում, կոմկուսները ստիպված էին աշխատել արտակարգ դժվարին պայմաններում, ենթարկվելով իշխանությունների անընդհատ հարվածներին։ Բայց կոմկուսները ոչ մի տեղ չընկճվեցին։ Նրանք վիթխարի, ամենօրյա ռիսկի հետ կապված աշխատանք էին կատարում հակաֆաշիստական ուժերի միավորման, ժողովրդական ճակատի կոմիտեներ ստեղծելու համար։ Այդ երկրներում ժողովրդական ճակատի քաղաքականության համար մեծ նշանակություն ուներ պայքարի գլխավոր նպատակի՝ հակաֆաշիստական դեմոկրատական հանրապետությունների հաստատման հստակ բնորոշումը։ Առաջադրելով այդ նպատակը, կոմկուսները ձգտում էին մոբիլիզացնել բոլոր նրանց, ովքեր մերժում էին բռնությունների, սպանությունների, դաժանագույն շահագործման ֆաշիստական ռեժիմը։

Կապիտալիստական երկրներում ամենուրեք նոր կողմնորոշմամբ զինված կոմկուսները ակտիվացնում էին իրենց գործունեությունը, ֆաշիզմի և պատերազմի դեմ մոբիլիզացնելով աշխատավորության լայն մասսաներին։

1936—1939 թթ. կախյալ և գաղութային երկրներում մղվող պայքարը հանուն հակաիմպերիալիստական ուժերի միասնության

Կոմունիստների մշակած նոր քաղաքականությունը դարձավ կախյալ և գաղութային երկրների մասսաների հակաֆեոդալական, հակաիմպերիալիստական և հակաֆաշիստական պայքարի զարգացման հզոր արագացուցիչը։ Ժողովրդական և հակաիմպերիալիստական ճակատի քաղաքականության շնորհիվ լուրջ հաջողությունների հասան Լատինական Ամերիկայի աշխատավորները։

Չիլիում 1936 թ. կոմկուսի գործուն մասնակցությամբ ստեղծվեց Ժողովրդական ճակատ, որը միավորում էր բնակչության բոլոր առաջադիմական խավերին։ Կոմունիստները ջանում էին ուժերի այդ լայն դաշինքն ուղղել ԱՄՆ-ի և Գերմանիայի իմպերիալիստների բռնադատման, ինչպես նաև չիլիական կալվածատերերի և չիլիական օլիգարխիայի դեմ։ 1938 թ. իշխանության գլուխ անցավ Ժողովրդական ճակատի կառավարությունը։ Ռազմա-ֆաշիստական դիկտատուրայի հաստատման մասին ռեակցիայի հաշիվները ջնջվեցին մասսաների միջոցով։ Չիլիի աշխատավորությունը ձեռք բերեց սոցիալ-տնտեսա-

կան մի քանի նվաճումներ։ Սակայն Չիլիի բանվոր դասակարգը դեռ ղեկավար դեր չէր խաղում ժողովրդական ճակատում, և դրանում էր կայանում ճակատի թուլությունը։

Այդ ժամանակ ձախ ուժերի լայն ճակատ առաջացավ Արգենտինայում և Կուբայում։ Ժողովրդական ճակատի քաղաքականությունը էական դեր խաղաց հակաիմպերիալիստական ռեֆորմների անցկացման համար 30-ական թվականների վերջին Մեքսիկայի աշխատավորության մղած պայքարում։

Հակաիմպերիալիստական դաշինքի ստեղծման քաղաքականությունը մեծ նշանակություն ունեցավ Չինաստանի իրադարձությունների զարգացման համար, ուր ճապոնական իմպերիալիստները ընդլայնեցին իրենց ագրեսիայի շրջանները։ Քաղաքական նոր գծի մշակման գործում չին կոմունիստներին մեծ օգնություն ցույց տվեց Կոմինտերնի գործկոմը, որը ՉԿԿ-ին հանձնարարականներ էր տալիս ազգային, հակաճապոնական, հակաիմպերիալիստական ճակատի ստեղծման հարցերի մասին։

Չինաստանի կոմկուսի զարգացման մեջ այդ ժամանակ նկատվում էին հակասական տենդենցներ։ Միասնական հակաիմպերիալիստական ճակատի համար ՉԿԿ-ի մղած պայքարը նպաստեց նրա հեղինակության ու ազդեցության աճին։ Պոզիտիվ ու անհրաժեշտ էր կուսակցության աշխատանքի ուժեղացումը գյուղացիության մեջ, քանի որ գյուղացիական զանգվածները հակաիմպերիալիստական ճակատի առավել մեծաթիվ ուժն էին։ Սակայն այն փաստը, որ ՉԿԿ-ն, կորցնելով հարավի հեղափոխական բազաները, անցավ գյուղական խուլ շրջանները և հեռու գտնվեց արդյունաբերական կենտրոններից, հասցնում էր կուսակցության որոշակի խզվածությանը բանվորական զանգվածներից։ Կուսակցության շարքերում գյուղացիական և մանրբուրժուական զանգվածի գերակշռության հետ էր կապված մանրբուրժուական-նացիոնալիստական տրամադրությունների աճը, կուսակցության ղեկավար մարմիններում Մաո Ցզեդունի և նրա կողմնակիցների դիրքերի ամրապնդումը, որոնք նման տենդենցներն օգտագործում էին իրենց քաղաքականության մեջ։ Կոմինտերնը տեսնում էր ՉԿԿ-ի զարգացման բացասական կողմերը և ջանում էր նրան օգնել արմատախիլ անելու դրանք։

Հակաիմպերիալիստական ճակատի քաղաքականությունը նպաստեց ազգային-ազատագրական շարժման խորացմանը Հնդկաստանում։ Կոմունիստները մտան Հնդկական ազգային կոնգրես կուսակցության մեջ, որից հետո ազգային բուրժուազիայի այդ կուսակցության մեջ երևան եկավ ուժեղ ձախ թև։ Հենվելով միավորված արհմիությունների, ազգային միասնական գյուղացիական կազմակերպության վրա, այդ ձախ թևը բավական զգալի ազդեցություն գործեց ազգային-ազատագրական շարժման ծրագրի ձևավորման և նրա զարգացման վրա։

Իսպանական հանրապետության հետ համերաշխության միջազգային կամպանիան

Ֆաշիստական խռովարարների և ինտերվենտների դեմ իսպանական ժողովրդի մղած պայքարը համերաշխության հզոր շարժում առաջացրեց ամբողջ աշխարհում։ Կոմինտերնի կոչով ամենուրեք տեղի էին ունենում մարտնչող իսպանական ժողովրդի հետ համերաշխության ցույցեր ու միտինգներ, անց էր կացվում միջոցների հանգանակություն։ Կոմունիստների կոչով շատ երկրներից Իսպանիա ուղղվեց կամավորների հոսանքը։ Այդ կամավորներից կազմվեցին ինտերնացիոնալ բրիգադներ։ Դրանց կազմակերպման, մարտական գործողությունների ղեկավարման ասպարեզում առաջատար դեր էին կատարում կո-

մունիստները՝ Պ. Տոլյատտին, Լ. Լոնգոն, Վ. Կոդովիլյան, Մատե Զալկան, Հ. Բայմլերը, Կ. Սվերչևսկին և շատ ուրիշներ։ Բայց այդ բրիգադները զուտ կոմունիստական զորամիավորումներ չէին, այլ Ժողովրդական ճակատի կենդանի մարմնացումն էին։ Դրանք բոլոր երկրների հակաֆաշիստների կողմից իսպանական ժողովրդի արդար գործին ցույց տրված աջակցության կենդանի վկայությունն էին։ Իսպանական հանրապետությանը մեծ օգնություն ցույց տվեց Սովետական Միությունը։ Նա պաշտպանում էր նրան միջազգային թատերաբեմում։ Սովետական աշխատավորները Իսպանիա ուղարկեցին պարենամթերքով, դեղորայքով, զենքով բեռնված տասնյակ նավեր։ Իսպանիայի ռազմաճակատներում կռվում էին սովետական օդաչուներ, տանկիստներ, հրետանավորներ, նավաստիներ, ինժեներատեխնիկական մասնագետներ։

Կոմինտերնն ու կոմկուսները Իսպանիայում տեղի ունեցած խռովությունից անմիջապես հետո սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալին առաջարկեցին համատեղ հանդես գալ ի պաշտպանություն Իսպանական հանրապետության։ Բայց սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխները հրաժարվեցին այդ անհրաժեշտ քայլն անել։ Իսպանիային ցույց տված իրենց օգնությունը նրանք սահմանափակեցին պարենամթերքով, միջոցների հանգանակությամբ։ Նրանք գործնականորեն ոչինչ չձեռնարկեցին Իսպանական հանրապետության բլոկադայի վերացմանը հասնելու համար։ Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի և Ամստերդամի ինտերնացիոնալի 1937 թ. մարտին Լոնդոնում կայացած կոնֆերանսում նրանք սահմանափակվեցին «համաշխարհային հասարակական կարծիքն արթնացնելու» խոստումով, այն դեպքում, երբ իսպանական սոցիալիստները զենք էին պահանջում։ Իսպանական սոցիալիստական կուսակցությունը հեռացավ կոնֆերանսից ի նշան բողոքի նրա ընդունած որոշումներից։ 1937 թ. ամռանը ֆրանսիական Աննեմաս քաղաքում Կոմինտերնի և Սոցինտերնի միջև, վերջապես, համաձայնություն ձեռք բերվեց մի շարք համատեղ ելույթների մասին՝ ի պաշտպանություն Իսպանական հանրապետության։ Բայց աջ սոցիալ-դեմոկրատիայի համար այդ սահմանափակ համաձայնությունն էլ գործնականում անընդունելի եղավ։ Սոցիալ-դեմոկրատները, որոնք պատասխանատու պոստեր էին զբաղեցնում մի շարք երկրների կառավարություններում, վախենում էին Իսպանիայում ժողովրդական իշխանություն հաստատվելուց և այդ պատճառով դավաճանեցին Իսպանական հանրապետությանը։

Բանվորական շարժման ուժերի մոբիլիզացումն ընդդեմ պատերազմի։ Ֆաշիզմի և պատերազմի դեմ կոմկուսների մղած պայքարի դժվարությունները

Միջազգային բանվորական շարժման առջև առանձնահատուկ խնդիրներ էին առաջանում պատերազմի սպառնալիքի աճի և ֆաշիստական տերությունների նորանոր ագրեսիվ գործողությունների կապակցությամբ։ 1935 թ. հոկտեմբերին ֆաշիստական Իտալիան հարձակվեց Եթիոպիայի վրա։ Կոմինտերնը, որը դեռ սեպտեմբերին դիմեց սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալին, կոչ անելով քննարկել համատեղ մասսայական հակապատերազմական կամպանիաների հարցը, նորից առաջարկեց շտապ համաձայնության գալ պատերազմի ֆաշիստական հրձիգներին սանձահարելու համար։ Սակայն աջ սոցիալիստական պարագլուխները հրաժարվեցին կոմունիստների հետ հակապատերազմական գործողությունների միասնությունից, կողմնորոշվելով բացառապես դեպի Ազգերի լիգայի միջոցառումները։

Աջ սոցիալիստական առաջնորդները ձախողեցին նաև արհմիությունների

միջազգային միասնության գործը։ Կոմունիստները, հետևողականորեն հանդես գալով արհմիութենական շարժման միասնության օգտին, ձգտում էին հասնել իրենց ազդեցության տակ գտնվող արհմիությունների միաձուլմանը մասսայական ռեֆորմիստական արհմիությունների հետ, այդ նույն ժամանակ պայքարելով հանուն նրանց քաղաքականության փոփոխման։ 1937 թ. կապիտալիստական երկրներում արհմիութենական ինտերնացիոնալի սեկցիաները դադարեցրին իրենց գոյությունը։ Այդ կապակցությամբ շուտով իր գործունեությունը դադարեցրեց նաև արհմիությունների կարմիր ինտերնացիոնալը, որը շատ բան էր արել միջազգային արհմիութենական շարժման հեղափոխական ուժերի համախմբման համար։ Սովետական արհմիությունները, որոնք հանդիսանում էին արհմիությունների ինտերնացիոնալի ամենախոշոր կազմակերպությունը, հարց բարձրացրին արհմիությունների միջազգային միավորման (Ամստերդամի ինտերնացիոնալ) մեջ մտնելու մասին։ Ընդ որում նրանք միայն մեկ պայման էին դնում՝ միջազգային միավորումը պետք է հետևողական պայքար մղի ֆաշիզմի և պատերազմի դեմ։ Ամստերդամի ինտերնացիոնալի առաջնորդները մասսաների ճնշման տակ 1937 թ. աշնանը պատվիրակություն ուղարկեցին Մոսկվա բանակցությունների համար։ Ձեռք բերվեց համապատասխան համաձայնություն։ Սակայն ռեֆորմիստական պարագլուխները սաբոտաժի ենթարկեցին այդ համաձայնության կենսագործումը, արգելակում էին միջազգային արհմիութենական շարժման միասնությանը։

Կոմունիստական շարժումը մշտապես հանդես էր գալիս իմպերիալիստական պատերազմի դեմ մարտնչող ուժերի ավանգարդում, մերկացնում պատերազմի հրձիգների հանցագործ ագրեսիվ պլանները, մատնացույց անում կապիտալիստական տերությունների ասոցիացիոնական սահումը դեպի պատերազմ։

1936 թ. հոկտեմբերին Գերմանիան և Իտալիան ստեղծեցին «Բեռլին—Հռոմ առանցքը»։ 1936 թ. վերջին Գերմանիան ու Ճապոնիան ձևավորեցին այսպես կոչված հակակոմինտերնական պակտը, որն առաջին հերթին ուղղված էր ՍՍՀՄ-ի, միջազգային բանվորական և ազգային-ազատագրական շարժման դեմ և նպատակ ուներ նաև վերաբաժանել գաղութները, ստրկացնել Եվրոպայի և Ասիայի ամբողջ երկրներ ու ժողովուրդներ։ Մեկ տարի անց հակակոմինտերնական պակտին միացավ Իտալիան։

Այդ պայմաններում Կոմինտերնը եռապատիկ եռանդով պայքար ծավալեց խաղաղության բոլոր կողմնակիցների համախմբման համար։ 1936 թ. սեպտեմբերին Բրյուսելում կայացավ խաղաղության միջազգային կոնգրես, որին մասնակցեցին 35 երկրների 4,5 հազ. պատգամավոր։ Կոմունիստները կոնգրեսում հատուկ պլատֆորմ չէին առաջադրում, բայց ելնում էին նրանից, որ հարկավոր է պայքարել այնպիսի նպատակների համար, որոնք ընդունելի լինեն խաղաղության բոլոր ազնիվ կողմնակիցների համար։ Որպես հիմնական պլատֆորմ կոնգրեսը հռչակեց չորս կետ. 1) պայմանագրերի անխզելիություն, 2) սպառազինությունների կրճատում կամ սահմանափակում, 3) կոլեկտիվ անվտանգություն և Ազգերի լիգայի ամրապնդում, 4) Ազգերի լիգայի շրջանակներում մի այնպիսի գործուն սիստեմի ստեղծում, որն ընդունակ լիներ հաղթահարել միջազգային այն լարվածությունը, որը կարող էր պատերազմ առաջացնել։ Առաջարկվեց խաղաղության միջազգային հանրաքվե անցկացնել։ Կոնգրեսի արդյունքները վկայում էին իմպերիալիստական ագրեսորների դեմ հանդես եկող ուժերի աճող համախմբման մասին։

Կոմինտերնն իր քաղաքականությունն անց էր կացնում, հենվելով Սովետական Միության նյութական հզորության վրա։ ՍՍՀՄ-ի, որպես խաղաղու-

թյան ամրոցի, դերը ավելի ու ավելի էր աճում համաշխարհային պատերազմի սպառնալիքի ուժեղացման համեմատ։ ՍՍՀՄ-ի ամրապնդումից այժմ ավելի, քան երբևիցե, կախված էր համաշխարհային հեղափոխական շարժման բախտը։ Համկ(բ)կ-ն, սովետական աշխատավորները գիտակցում էին այդ պատմական մեծ պատասխանատվությունը և ջանքեր չէին խնայում սոցիալիստական հասարակության կառուցման, իրենց երկրի պաշտպանունակության ամրապնդման համար։ Սովետական տերության ռազմա-տնտեսական և քաղաքական հզորությունն ամենահուսալի երաշխիքն էր այն բանի, որ սոցիալիզմի գործն աշխարհում չի կործանվի ագրեսորների կողմից։ Այդպիսի հզորության ստեղծումը սովետական մարդիկ դիտում էին որպես ինտերնացիոնալ սրբազան պարտք։

Կոմինտերնի և կոմկուսների պայքարի ճանապարհին այդ ժամանակ հանդես էին գալիս մեծ դժվարություններ։ 1938 թվականից պարզ դարձավ, որ իմպերիալիստական ռեակցիան, ֆաշիզմը, պատերազմի ուժերը նորից նկատելիորեն ճնշում են բանվորական և դեմոկրատական շարժումը։ Աջ սոցիալ-դեմոկրատիան ավելի ու ավելի էր գրոհում միասնական բանվորական և ժողովրդական ճակատի քաղաքականության վրա և ժողովրդական ճակատը ներսից քանդում այն երկրներում, որտեղ այն գոյություն ուներ։

Միջազգային թատերաբեմում ծագում էր իմպերիալիստների հակասովետական գործարք, որն իր ցայտուն արտահայտությունը գտավ Մյունխենյան համաձայնագրում (1938 թ. սեպտեմբեր)։ Չորս պետությունների՝ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների այդ համաձայնագիրը Չեխոսլովակիան հանձնում էր գերմանա-ֆաշիստական ագրեսորների հոշոտմանը և խրախուսում նրանց ձգտումները՝ հարձակվելու ՍՍՀՄ-ի վրա։ Մյունխենյան համաձայնագիրը չափազանց ծանր դրության մեջ դրեց Իսպանական Հանրապետությանը, որը և շուտով ընկավ։

Այն ժամանակ երբ Կոմինտերնն ու կոմկուսները մասսաներին մոբիլիզացնում էին պայքարելու ֆաշիստական ագրեսորների խրախուսման մյունխենյան քաղաքականության դեմ, սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալը փաստորեն դադարեցրեց իր գոյությունը որպես միջազգային կազմակերպություն։ Նրա կուսակցությունները, հետևելով «իրենց» բուրժուազիային, ամենատարբեր դիրքեր գրավեցին միջազգային հարցերի նկատմամբ. ոմանք պաշտպանում էին Մյունխենյան համաձայնագիրը, մյուսները հանդես եկան նրա դեմ, երրորդները արտահայտվեցին հօգուտ չեզոքության։

Կոմունիստական շարժման մեջ որոշակի դժվարություններ առաջացան ինչպես Սովետական Միության ներսում, այնպես էլ Կոմինտերնում Ստալինի անձի պաշտամունքի և դրան ուղեկցած բացասական երևույթների կապակցությամբ։ Կոմունիստական շարժմանը մեծ կորուստ պատճառեցին սոցիալիստական օրինականության խախտումները և չհիմնավորված բռնությունները։ Բուրժուական ռեակցիան և աջ սոցիալ-դեմոկրատիան դրանք օգտագործում էին հակակոմունիստական և հակասովետական հիստերիա բորբոքելու, բանվորական և ժողովրդական ճակատի քաղաքականության դեմ նոր գրոհներ կատարելու համար։

Իմպերիալիզմը, որն այն ժամանակ տնտեսական ու ռազմական տիրապետող դիրքեր էր գրավում աշխարհում, զգալի չափով որոշում էր միջազգային իրադարձությունների ընթացքը։

1939 թ. միանգամայն ակնհայտ դարձան համաշխարհային իմպերիալիստական ռեակցիայի պլանները, որոնք ուղղված էին այն բանին, որպեսզի

կապիտալիստական տերությունների «խաչակրաց արշավանք» կազմակերպվեր ՍՍՀՄ-ի դեմ և նրա հաշվին Գերմանիան «խաղաղեցվեր»։ Սովետական կառավարությունը կանգնեց չհարձակման պայմանագիր կնքելու վերաբերյալ գերմանական կառավարության առաջարկությունն ընդունելու անհրաժեշտության առջև։ Այդ պայմանագիրը ձախողեց համաշխարհային հակասովետական կոալիցիայի կազմակերպման հնարավորությունը և Սովետական Միությանը որոշ ժամանակ տվեց ֆաշիզմի հետ ռազմական ընդհարման նախօրյակին ամրապնդելու իր հզորությունը։

Կոմունիստական շարժման քաղաքականությունն այդ տարիներին հանդիսացավ միջազգային բանվոր դասակարգի և նրա դաշնակիցների գաղափարա-քաղաքական խոր նախապատրաստությունը ֆաշիզմի հետ զինված ընդհարման, պատմական այդ մեծ ճակատամարտում Սովետական Միության հետ ժողովուրդների համագործակցության համար։

* * *

Աշխարհի բանվորական և կոմունիստական շարժումը 1917 թ. մինչև երկրորդ համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանում անցավ մեծ ուղի, աճեց ու ամրապնդվեց իմպերիալիզմի դեմ մղված կատաղի պայքարում։ Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, որը հագեցած էր հեղափոխական մարտերով, դասակարգային սուր ճակատամարտերով, ազգային-ազատագրական ապստամբություններով։

Հեղափոխական ուժերին, որոնց գլխավոր ճակատն էին կազմում կոմունիստների գլխավորած առաջավոր բանվորները, շատ դեպքերում դեռևս չհաջողվեց հասնել առաջադրված նպատակներին։ Հեղափոխական գրոհի տարիներին (1918—1920 թթ.) բուրժուական ռեժիմների դիրքերը մի շարք երկրներում սասանվեցին, բայց պրոլետարիատն այնուամենայնիվ ոչ մի տեղ, բացառությամբ Ռուսաստանի, չկարողացավ իր քաղաքական տիրապետությունը հաստատել, պարտություն կրելով բուրժուազիայի գերակշռող ուժերի դեմ մղվող պայքարում։ Ազգային-ազատագրական շարժումներն ու հեղափոխությունները, որոնք ծավալվեցին 20-ական և 30-ական թվականներին, թեև քայքայում էին իմպերիալիզմի դիրքերը գաղութներում ու կիսագաղութներում, բայց չհասան այնպիսի թափի ու հզորության, որպեսզի պսակվեին հաղթանակով։ Միջազգային բանվոր դասակարգին ու նրա դաշնակիցներին չհաջողվեց կանխել ֆաշիզմի հարձակումը, նրա հաղթանակը Գերմանիայում և մյուս երկրներում։ Ֆաշիզմը խեղդեց Իսպանական Հանրապետությունը։ Միջազգային բանվոր դասակարգը, հակաֆաշիստական և հակապատերազմական շարժումը 30-ական թվականների երկրորդ կեսին դեռ բավականաչափ հզոր չէին, որպեսզի անսասան խոչընդոտ ստեղծեին համաշխարհային նոր պատերազմի սանձազերծման համար։ Ինքը՝ բանվոր դասակարգը, դեռ մնում էր քաղաքականապես պառակտված և նրա զգալի մասը դեռ գնում էր ռեֆորմիստների ետևից։

Սակայն վճռական գործոնն այդ անբարենպաստ պահերը չէին, այլ այդ ժամանակաշրջանում միջազգային պրոլետարիատի ձեռք բերած վիթխարի նվաճումները։

Միջազգային բանվորական շարժման ճակատագրի համար համաշխարհային-պատմական նշանակություն ունեցավ սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում և սովետական երկրի վերածվելն ինդուստրիալ հզոր տերության, համաշ-

խարհային սոցիալիստական հեղափոխության հուսալի հենարանի։ Այդ փաստը աշխարհում փոխում էր ուժերի հարաբերակցությունը, և ֆաշիզմի հետ մահացու ընդհարման պահին ՍՍՀՄ-ը կարողացավ պաշտպանել մարդկության ապագան առաջադիմության ուղիներում։ Դա Սովետական Միության կոմունիստական կուսակցության լենինյան քաղաքականության պատմական իրավացիության ամենավառ վկայությունն էր։

1918—1939 թթ. ընթացքում զգալիորեն աճեց միջազգային բանվոր դասակարգի կազմակերպվածությունը, բարձրացավ նրա գիտակցության մակարդակը։ Դրա վճռական ցուցանիշը կոմունիստական կուսակցությունների ձևավորումն ու ամրապնդումն էր։ Վ. Ի. Լենինի և Կոմինտերնի ղեկավարությամբ կոմունիստական շարժումը, տարածվելով բոլոր մայրցամաքներում, իսկապես համաշխարհային դարձավ։ Հաղթահարելով դժվարությունները, մշտական պայքար մղելով ռեֆորմիստական պատրանքների, աջ ու «ձախ» օպորտունիզմի, նացիոնալիզմի դեմ, կոմունիստական շարժումը ամրապնդում էր իր ազդեցությունը բանվոր դասակարգի մեջ, դառնում քաղաքական հզոր ուժ, որն աշխատավորներին առաջնորդում էր սոցիալիզմի ուղիով։ Կոմկուսների անդամների թիվը 1939 թ. կազմեց 4200 հազ. մարդ, նրանցից 1750 հազար մարդ՝ կապիտալիստական աշխարհում։ Կոմունիստների այդ բանակը ցուցադրում էր բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների շահերին ծառայելու օրինակ, այն ժամանակ երբ աջ սոցիալ-դեմոկրատիան բուրժուազիայի հետ դասակարգային համագործակցության իր քաղաքականությամբ իրեն ավելի ու ավելի էր մերկացնում մասսաների աչքում։ Հանձին միջազգային կոմունիստական շարժման համաշխարհային բանվոր դասակարգն ուներ անկուն և կոփված հեղափոխական ղեկավար։ Մի շարք երկրներում (Ֆրանսիա, Չեխոսլովակիա, Իսպանիա և այլն) կոմկուսները, 30-ական թվականներին գլխավորելով ֆաշիզմի ու պատերազմի դեմ մղվող պայքարը, նվաճեցին մասսաների լայն աջակցությունը և խոշորագույն գործոն դարձան ազգային քաղաքական թատերաբեմում։ Աճեց և պայքարում փորձարկվեց կոմունիստների ինտերնացիոնալ համերաշխությունը։

Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում իր զարգացման մեջ վիթխարի քայլ կատարեցին կոմունիստական ստրատեգիան ու տակտիկան։ Վ. Ի. Լենինի անմիջական և ամենակենդանի մասնակցությամբ մշակված կոմունիստական քաղաքականությունը զարգանում ու հարստանում էր հեղափոխական մարտերի փորձով։ Մի շարք աղանդավորական սխալներ հաղթահարելուց հետո կոմունիստական շարժումը, Կոմինտերնի գլխավորությամբ, 30-ական թվականների կեսերին մշակեց նոր կողմնորոշում, որը հանդիսացավ պայքարի փոփոխված պայմաններում կիրառելի լենինյան դրույթների ստեղծագործական զարգացումը։ Նոր կողմնորոշումը կապիտալիստական երկրների աշխատավորության առջև բացում էր հակաֆաշիստական, համադեմոկրատական հեղափոխության էտապի միջոցով դեպի սոցիալիզմ ընթանալու հեռանկարը։ Այդ գիծը փայլուն կերպով հաստատվեց պատմության կողմից և հիմք տվեց կոմունիստական քաղաքականության հետագա զարգացման համար։

Սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում, համաշխարհային կոմունիստական շարժման գաղափարա-քաղաքական և կազմակերպական աճը, նրա ստրատեգիայի ու տակտիկայի ստեղծագործական զարգացումը՝ այս բոլորը բանվորական շարժման մեջ ամրապնդում էր հեղափոխական ուղղությունը, դարձավ նրա ապագա հաղթանակների կայուն հիմքը։

Կոմունիստական ինտերնացիոնալի պատմագրությունը

Միջազգային բանվորական շարժման մեջ Կոմինտերնի գրաված տեղն ու դերը գաղափարական սուր պայքարի առարկա են պատմագրության ասպարեզում։ Այն ժամանակ երբ մարքսիստական-լենինյան պատմագրությունը, հետազոտելով Կոմինտերնի պրոբլեմները, բացահայտում է նրա կարևոր նշանակությունը աշխարհում հասարակական ամբողջ պայքարի զարգացման համար, բուրժուազիայի և աջ սոցիալ-դեմոկրատիայի գաղափարախոսներն ի հաճույս իրենց հակակոմունիստական կոնցեպցիաների աղավաղում են Կոմինտերնի իսկական դերը։

Կոմինտերնի պատմության գծով ընդամենը հրատարակվել է ավելի քան 2 հազ. աշխատություն, ներառյալ մենագրությունները, փաստաթղթերի ժողովածուները, հուշերը, առանձին գրքույկները, հոդվածները, որոնք լույս են տեսել տարբեր երկրներում։ Կոմինտերնի պատմության ըմբռնման համար բացառիկ նշանակություն ունեն Վ. Ի. Լենինի աշխատությունները։ Կոմինտերնի ստեղծման համար մղված պայքարի ժամանակաշրջանին վերաբերող լենինյան հոդվածները, Վ. Ի. Լենինի ելույթները Կոմինտերնի կոնգրեսներում, նրա ««Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գիրքը, որոշումների նրա կազմած նախագծերը, որոնք հետո քննարկվում և ընդունվում էին Կոմինտերնի կողմից, Կոմինտերնի և առանձին կուսակցությունների խնդիրների մասին նրա հոդվածները, կոմունիստական շարժման ականավոր գործիչների հետ նրա նամակագրությունը՝ սրանք պատմական փաստաթղթեր են, որոնք պարունակում են Կոմինտերնի կարևորագույն քաղաքական բոլոր քայլերի և տեսական պրոբլեմների խոր գնահատականը՝ նրա գործունեության առաջին տարիներին։

Կոմինտերնի պատմության շատ պրոբլեմների բնութագիրը տրվում է Կոմինտերնի աշխատանքին ակտիվորեն մասնակցած, կոմունիստական շարժման ականավոր գործիչների՝ Գ. Դիմիտրովի, Պ. Տոլյատտիի, Մ. Թորեզի, Կ. Գոտվալդի, Կ. Ցետկինի, Դ. Իբարուրիի, Ու. Գալլախերի, Է. Թելմանի, Վ. Ուլբրիխտի, Դ. Մանուիլսկու, Օ. Պյատնիցկու, Վ. Կոդովիլյայի և մյուսների հոդվածներում ու հուշերում։

20-ական թվականներին և 30-ական թվականների սկզբին երևան եկան գիտահանրամատչելի աշխատություններ, որոնք նվիրված էին Կոմինտերնի առաջացմանը, նրա առաջին կոնգրեսներին։ Այդ գրքերի և գրքույկների հեղինակներն էին Կոմինտերնի ապարատի աշխատողներ Խ. Կարակչիևը, Ի. Մինգուլինը, Յա. Յաբլոնսկին, Ֆ. Կոնը և ուրիշներ։ 1940 թ. Մոսկվայում հրատարակվեց Ի. Ս. Յուզեֆովիչի «Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնումը» մենագրական աշխատությունը։ Այդ աշխատությունը, որը հիմնված է փաստական մեծ նյութի վրա և շատ բաներում հիմնվում է լենինյան բնութագրումների վրա, պարունակում է, սակայն, մի շարք սխալ դրույթներ։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Կոմինտերնի մարքսիստական-լենինյան պատմագրությունը լրացվեց Ուիլյամ Զ. Ֆոստերի «Երեք ինտերնացիոնալների պատմությունն» ընդհանրացնող չափազանց կարևոր աշխատությամբ, որը 50-ական թվականների սկզբին հրատարակվեց ԱՄՆ-ում, ապա և ՍՍՀՄ-ում և սոցիալիստական մի քանի երկրներում։

1959 թ. Կոմինտերնի պատմության կարևորագույն պրոբլեմներին նվիրված մեծ հոդվածով հանդես եկավ Պ. Տոլյատտին («Խաղաղության և սոցիալիզմի պրոբլեմները», 1959, № 11), որը նպաստեց այդ պրոբլեմների ուսումնասիրության ընդլայնմանը՝ հաշվի առնելով դրանց ամբողջ բարդությունը։

60-ական թվականներին ՍՍՀՄ-ում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում լույս տեսան Կոմինտերնի պատմության վերաբերյալ հետազոտական լուրջ աշխատություններ, ինչպես նաև Ռ. Պալմ Դաթտի «Ինտերնացիոնալ։ 1848—1963 թթ. կոմունիստական շարժման պատմության ակնարկ» աշխատությունը (1963 թ. գիրքը լույս ընծայվեց Լոնդոնում, 1966 թ.՝ Մոսկվայում)։ Ռ. Պալմ Դաթտի գրքում գիտական լուսաբանություն են գտել Կոմինտերնի քաղաքականության կարևորագույն պրոբլեմները։

Կոմինտերնի VII կոնգրեսի 30-ամյակի առթիվ 1965 թ. Պրագայում տեղի ունեցավ միջազգային հանդիպում, որի նյութերը (կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչների ելույթները) լուսաբանեցին միասնական բանվորական և հակաֆաշիստական ժողովրդական ճակատի կոմունիստական քաղաքականության շատ կողմերը, բացահայտեցին այդ քաղաքականության համաշխարհային-պատմական նշանակությունը («Կոմինտերնի VII կոնգրեսի 30-ամյակը»։ Պրագա, 1966)։ Այդ նույն հարցին է նվիրված Վ. Մ. Լեյբզոնի և Կ. Կ. Շիրինյայի 1965 թ. լույս տեսած «Շրջադարձը Կոմինտերնի քաղաքականության մեջ» մենագրությունը։

Վերջին տարիներին մարքսիստական-լենինյան պատմագրությունը հարստացել է Կոմինտերնի պատմության հարցերի մասին մի շարք լուրջ ուսումնասիրություններով։ ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը 1969 թ. լույս է ընծայել «Կոմունիստական ինտերնացիոնալ։ Համառոտ պատմական ակնարկ» գիրքը, որը առաջին անգամ տալիս է Կոմինտերնի պատմության ամբողջական կոնցեպցիան և բացահայտում նրա գործունեության գլխավոր կողմերը, առաջին հերթին նրա ստրատեգիայի ու տակտիկայի զարգացման էտապները։ Այդ մենագրությունը գիտական շրջանառության մեջ դրեց արխիվային բազմաթիվ նոր նյութեր։ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը 1970 թ. լույս է ընծայել նաև «Վ. Ի. Լենինը և Կոմունիստական ինտերնացիոնալը» գիրքը, որի մեջ ամփոփված են Կոմինտերնի գործունեությանը, նրա ստրատեգիայի ու տակտիկայի մշակմանը նվիրված լենինյան հիմնական փաստաթղթերը։ Լույս են տեսել նաև այնպիսի գրքեր, ինչպիսիք են «Կոմինտերնը և Արևելքը» (1969 թ. պատրաստել է Միջազգային բանվորական շարժման ինստիտուտը), «Լենինը հեղափոխական ինտերնացիոնալի համար մղված պայքարում» (Մ., 1971, պատրաստել է ՍՍՀՄ ԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտը), Ի. Մ. Կրիվոգուզի և Յու. Լ. Մոլչանովի «Լենինը և բանվորական շարժման միասնության համար մղված պայքարը» (Մ., 1967, երկրորդ հրատարակությունը՝ 1969), Յու. Լ. Մոլչանովի «Կոմինտերնը միասնական պրոլետարական ճակատի քաղաքականության ակունքներում» (Մ., 1969) աշխատությունները, «Կոմինտերնի երկրորդ կոնգրեսը» հոդվածների ժողովածուն (Մ., 1972) և այլն։ Կոմինտերնի պատմության վերաբերյալ զգալի թվով հոդվածներ են լույս տեսել կոմունիստական կուսակցությունների ամսագրերում, սոցիալիստական երկրների պատմական ամսագրերում։

Կոմինտերնի անցած պատմական ուղուն և նրա ծառայություններին, նրա հեղափոխական ավանդույթներին, ինչպես նաև նրա մղած պայքարի դասերին չափազանց կարևոր գնահատականներ տրվեցին ՍՄԿԿ ղեկավար գործիչներ Մ. Ա. Սուսլովի, Բ. Ն. Պոնոմարյովի և եղբայրական կուսակցությունների գործիչներ Վ. Ուլբրիխտի, Դ. Իբարուրիի, Ժ. Դյուկլոյի և մյուսների կողմից Մոսկվայում կայացած գիտական նստաշրջանում, որը նվիրված էր Կոմինտերնի հիմնադրման 50-ամյակին։ Նստաշրջանի նյութերը լույս տեսան «Կոմինտերնը և նրա հեղափոխական ավանդույթները» առանձին գրքով (Մ., 1970)։

Սոցիալ-դեմոկրատական պատմագրության ներկայացուցիչներից Կոմինտերնի պրոբլեմներով առավել ակտիվորեն զբաղվել են անգլիական լեյբորիստ Դ. Խ. Կոուլը և ավստրիական սոցիալիստ Յու. Բրաունտալը։ Նրանց գրքերը հետաքրքիր են նրանով, որ այդ հեղինակները ստիպված են մի շարք դեպքերում քննադատել սոցիալ-դեմոկրատիայի գրաված դիրքերը։ Եթե Կոուլն իր բազմաթիվ աշխատություններում, հետևելով ռեֆորմիստական դիրքերին, այնուամենայնիվ ստիպված է գրել Կոմինտերնի «որոշակի ծառայությունների» մասին, հատկապես ֆաշիզմի դեմ մղված պայքարում, ապա Յու. Բրաունտալը „Geschichte der Internationale". Bd. 2 (Hannover, 1963) գրքում փորձում է ժխտել Կոմինտերնի որևէ նվաճումներ, նրան մեղադրում է բանվորական շարժման պառակտման և այն բոլոր պարտությունների մեջ, որ բանվորական շարժումը ստիպված էր ճաշակել 1917 թ. Հոկտեմբերից հետո։ Նենգափոխելով պատմական փաստերը, Բրաունտալը փորձում է ապացուցել, որ Կոմինտերնը իր ոտքի տակ ոչ մի հող չուներ Արևմուտքի կապիտալիստական երկրների բանվորական շարժման մեջ և իբր հանդիսանում էր Սովետական Միության, նրա արտաքին քաղաքականության գործիքը։

Կոմինտերնի պատմության մասին բուրժուական հեղինակներ Ֆ. Բորկենաուի, Գ. Նոլլաուի, Խ. Սետոն-Ուոտսոնի, Դ. Հալսի և մյուսների աշխատությունները գիտական լուրջ նշանակություն չունեն, քանի որ զգալի չափով կոմունիզմին դավաճանած և շարությամբ նրան զրպարտող ռենեգատների ձեռքի գործն են, կամ կանխապես ելնում են հակակոմունիստական նախապաղարյալներից։

Կոմինտերնի պատմության մարքսիստական, լենինյան հետազոտությունների ընդլայնումը վիթխարի նշանակություն ունի հակակոմունիստական հերյուրանքների մերկացման և Կոմինտերնի ժառանգության մեջ եղած ամբողջ լավագույնի գիտականորեն գնահատման և զարգացման համար։

ԳԼՈՒԽ 29

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1924—1939 ԹԹ.

ՍՍՀՄ-ը ճանաչելու գոտին

1924 թ. աշխարհի դրությունը որոշվում էր երկու գլխավոր գործոնով՝ կապիտալիզմի ժամանակավոր մասնակի կայունացման սկսվելով և Սովետական Միության ներքին ու արտաքին քաղաքական ամրապնդմամբ։

Միջազգային հարաբերությունների ասպարեզում կապիտալիզմի կայունացումն արտահայտվում էր նրանում, որ առաջատար կապիտալիստական տերությունները՝ ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և Ճապոնիան եվրոպական պրոբլեմների, ներառյալ նաև Գերմանիայի հարցը, Հեռավոր Արևելքի և Չինաստանի պրոբլեմների վերաբերյալ, ինչպես թվում էր, ձեռք են բերել որոշակի պայմանավորվածություն, բաժանել էին Գերմանիայից խլած գաղութները և ստեղծել Ազգերի լիգան։ Ամենամոտ ապագան, սակայն, ցույց տվեց կապիտալիզմի կայունացման ժամանակավոր բնույթը։ Նրան ծվատում էին միջիմպերիալիստական անհաղթահարելի հակասությունները, նա ճռնչում էր ազգային-ազատագրական շարժման հասցրած հարվածներից, նրան քայքայում էր դասակարգային պայքարը, որն ակտիվորեն ծավալվում էր կապիտալիստական երկրներում։

ՍՍՀՄ-ի միջազգային դիրքերի ամրապնդումը հիմնվում էր սովետական պետության տնտեսական, քաղաքական և ռազմական հզորության վրա, որը տարեցտարի աճում էր՝ սոցիալիստական շինարարության ուղիով սովետական ժողովրդի հաղթական առաջընթացի համեմատ։ ՍՍՀՄ-ի ներքին ու արտաքին քաղաքականության միջև եղած ուղղակի կախումն այդ տարիներին արտահայտվում էր նրանում, որ արտաքին քաղաքականությունը նպաստավոր արտաքին-քաղաքական հնարավորություններ էր ապահովում սոցիալիստական շինարարության համար, իսկ այդ շինարարության հաջողություններն ամրապնդում էին Սովետական Միության միջազգային դիրքերը, նրա արտաքին քաղաքականությունը դարձնում ավելի արդյունավետ։ Ինչպես և նախկինում, այդ քաղաքականության հիմքում ընկած էին լենինյան սկզբունքները՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմը և տարբեր սոցիալ-տնտեսական կարգեր ունեցող պետությունների խաղաղ գոյակցությունը։

ՍՍՀՄ-ը մշտական համառ պայքար էր մղում ուրիշ պետությունների կողմից իրեն ճանաչելու և դրանց հետ նորմալ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար։ Դրանք խաղաղ գոյակցության կուրսի իրականացման գործնական քայլերն էին։ Սակայն բուրժուական երկրները ՍՍՀՄ-ի ճանաչմանը դիմեցին միայն այն բանից հետո, երբ ձախողվեց նրանց կազմակերպած ինտերվենցիան, որի նպատակն էր խեղդել երիտասարդ սովետական պետությունը, և նրանք համոզվեցին, որ սովետական կարգերը հաջողությամբ լուծում են երկրի տնտեսական ու քաղաքական հրատապ խնդիրները։ Կուսակցության XIII համագումարը 1924 թ. մայիսին նշեց ՍՍՀՄ-ի տնտեսական զարգացման խոշոր հաջողությունները և սոցիալիզմի դիրքերի կայունացումը։ Այդ թվականը միջազգային հարաբերությունների պատմության մեջ մտավ որպես բուրժուական աշխարհի կողմից ՍՍՀՄ-ը ճանաչելու տարի։ Սովետական Միությանը դե-յուրե ճանաչեցին և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին 12 պետություններ՝ Անգլիան, Իտալիան, Չինաստանը, Նորվեգիան, Շվեդիան, Դանիան, Հունաստանը, Մեքսիկան, Ավստրիան, Ֆրանսիան, Ճապոնիան և Հեջազը։ 1925 թ. սկզբին ՍՍՀՄ-ը դիվանագիտական հարաբերություններ էր պահպանում արդեն 22 պետությունների հետ։

Նորմալ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը պետք է երկարաձգեր նվաճված դադարը, բուրժուական կառավարություններին զրկեր ինչպես ՍՍՀՄ-ի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս սպիտակգվարդիական հակահեղափոխական ուժերին պաշտպանելու հնարավորությունից և դժվարացներ նոր ինտերվենցիայի կազմակերպումը Սովետական Միության դեմ։ Իսկ խաղաղությունը ՍՍՀՄ-ի համար սոցիալիստական հաջող շինարարության կարևորագույն պայմանն էր։ Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կարևոր նախադրյալ էր ՍՍՀՄ-ի արտաքին առևտրի կարգավորման համար, որն իր հերթին նպաստեց երկրի տնտեսական զարգացմանը և ինդուստրացման պլանների կատարմանը։ Վերջապես, առանց նորմալ դիվանագիտական հարաբերությունների հնարավոր չէր հուսալ համաձայնության գալու ՍՍՀՄ-ի և մյուս երկրների միջև այն վիճելի հարցերի վերաբերյալ, որոնք տարբեր ժամանակ առաջանում էին նրանց միջև։ Այդ հարցերի կարգավորումը կարևոր էր ինչպես խաղաղության շահերի, այնպես էլ տնտեսական հարաբերությունների զարգացման համար։ Սովետական Միության ճանաչումը մյուս երկրների կողմից կարևոր էր ոչ միայն ՍՍՀՄ-ի համար։ Դրանում օբյեկտիվորեն շահագրգռված էին նաև մյուս տերությունները, որոնք ձգտում էին կայունացնել պատերազմի հետևանքով խարխլված եվրոպական տնտեսական օրգանիզմը և վերականգնել արտաքինառևտրական կապերը։

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը համառորեն չէր կամենում ՍՍՀՄ-ին ճանաչել և այդ տեսակետից մեկ տասնամյակով ետ մնաց եվրոպական տերություններից։ Եթե Անգլիան ու Ֆրանսիան որպես ճանաչման պայման պահանջում էին սովետական կառավարության համաձայնությունը ցարիզմի պատերազմական և նախապատերազմական պարտքերը վճարելու մասին, ապա ամերիկյան կառավարությունը դրա հետ պահանջում էր փոխել ՍՍՀՄ-ում գոյություն ունեցող սոցիալական կարգերը, այսինքն՝ վերականգնել կապիտալիզմը։ Ե՛վ սրանք, և՛ նրանք վերջիվերջո ստիպված էին զիջել, և Սովետական Միությունը ճանաչման հասավ արդարացի հիմունքներով, այսինքն՝ պահպանելով սոցիալիստական կարգերը և իր ուսերին չդնելով անօրինական և անարդարացի ֆինանսական պարտավորությունների բեռը։ Սովետական քաղաքականության հաջողությունը կասկածից վեր էր։ Այն Սովետական Միությանը հնարավորություն տվեց ավելի լայն ճակատով ծավալել խաղաղ գոյակցության համար մղվող պայքարը։

Դաուեսի պլանը։ Լոկարնո

Մինչդեռ դրությունը կապիտալիստական աշխարհում նույնիսկ կայունացման սկզբնական ժամանակաշրջանում անհանգիստ էր։ Գերմանիայից ռեպարացիաներ ստանալու հարցի վերաբերյալ Անգլիայի և Ֆրանսիայի միջև առաջացած սուր կոնֆլիկտի հիմքում ընկած էր եվրոպական հեգեմոնիայի համար մղվող պայքարը։ Այդ կոնֆլիկտի հետևանքով իրադրությունը Եվրոպայում 1923 թ.

սրվեց։ Գերմանիան, որը զգում էր Անգլիայի աջակցությունը, ամեն կերպ սաբոտաժի էր ենթարկում ռեպարացիաների վճարումը։ Այդ դիմադրությունը կոտրելու համար Ֆրանսիան Բելգիայի հետ 1923 թ. օկուպացրեց Գերմանիայի Ռուրի արդյունաբերական շրջանը։ Դա Գերմանիայում առաջ բերեց տնտեսական քաոս, որը գերմանական մոնոպոլիաներն օգտագործեցին իրենց դիրքերը քայքայված ավելի թույլ մրցակիցների հաշվին ամրապնդելու համար։ Ռուրի օկուպացիան շարդարացրեց Ֆրանսիայի հաշիվները, և երբ Անգլիան ու ԱՄՆ-ը ռեպարացիոն պրոբլեմի լուծումն իրենց ձեռքը վերցրին, Ֆրանսիան ստիպված էր համաձայնվել։

Հաղթող տերությունների՝ 1924 թ. հուլիս-օգոստոսին Լոնդոնում կայացած կոնֆերանսն ընդունեց Գերմանիայից ռեպարացիաներ գանձելու վերաբերյալ պլանը, որը մշակել էր ամերիկյան բանկիր Դաուեսի գլխավորած կոմիտեն, ինչպես նաև ֆրանսիական զորքերը Ռուրից դուրս բերելու մասին որոշումը։ Դա ֆրանսիական քաղաքականության խոշոր պարտությունն էր։ Դաուեսի պլանը նախատեսում էր գերմանական էկոնոմիկայի վերականգնում այն հաշվով, որպեսզի, գերմանական կապիտալիզմը տնտեսապես ամրապնդելով, օգնել նրան հաշիվ տեսնելու երկրում ծավալված հեղափոխական շարժման հետ։ Պլանը պետք է օժանդակեր ամենից առաջ գերմանական ծանր ինդուստրիայի, այսինքն՝ ռազմա-արդյունաբերական պոտենցիալի վերականգնմանը։ Այդ նպատակով Գերմանիային տրամադրվում էր 800 մլն ոսկե մարկ գումարի միջազգային փոխառություն։ Ռեպարացիաների ընդհանուր չափը պլանում չէր նշվում։ Սահմանվում էր միայն ամենամյա մուծումների չափը՝ 2,5 մլրդ մարկ։ Մուծումների համար միջոցները նախատեսվում էր ստանալ արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղիների շահույթների գումարներից և լայն սպառման առարկաների վրա հատուկ սահմանված անուղղակի հարկերի հաշվին։

Դաուեսի պլանի համաձայն Գերմանիան 1924 թ. մինչև 1932 թ. փոխառությունների և կապիտալ ներդրումների ձևով հիմնականում ԱՄՆ-ից և Անգլիայից ստացավ 31 819 մլն մարկ։ Այդ նույն ժամանակամիջոցում նա հաղթողներին վճարեց 11 464 մլն մարկ ռեպարացիա և 7830 մլն մարկ՝ փոխառությունների դիմաց։ Դրա հետևանքով երկրում մնաց 12 525 մլն մարկ, որը ստացվել էր արտասահմանից։ Անգլո-ամերիկյան այդ ոսկով էլ մինչև 1930 թ. վերականգնվեց Գերմանիայի ռազմա-արդյունաբերական պոտենցիալը։ Դաուեսի պլանն ուներ հակասովետական ուղղվածություն, քանի որ այն օժանդակում էր իմպերիալիստական Գերմանիայի վերականգնմանն ու ամրապնդմանը, այն Գերմանիայի, որին այդ պլանի հեղինակները մտադիր էին օգտագործել Սովետական Միության դեմ պայքարելու համար։

Դաուեսի պլանի քաղաքական վերնաշենք հանդիսացան լոկարնյան պայմանագրերը, որոնք ստորագրվեցին 1925 թ. դեկտեմբերի 1-ին Լոկարնոյում (Շվեյցարիա) տեղի ունեցած կոնֆերանսում։ Դրանցից դյուրավորը հռենոսյան երաշխիքային պակտն էր, ըստ որի Ֆրանսիան, Բելգիան և Գերմանիան պարտավորվում էին անձեռնմխելի պահել Գերմանիայի ու Ֆրանսիայի և Գերմանիայի ու Բելգիայի միջև գոյություն ունեցող սահմանները, որոնք նշվել էին Վերսալյան հաշտության պայմանագրով։ Պակտի մասնակիցները պարտավորվեցին նաև պահպանել Վերսալյան պայմանագրի որոշումներն ապառազմականացված հռենոսյան գոտու վերաբերյալ։ Անգլիան և Իտալիան ստանձնեցին հռենոսյան պակտի պահպանման երաշխավորների դեր։

Երաշխավորելով Գերմանիայի արևմտյան հարևանների սահմանները, Լոկարնոյի պայմանագրերը համանման երաշխիքներ չէին նախատեսում նրա արևելյան հարևանների համար։ Լեհաստանի և Չեխոսլովակիայի հետ Ֆրանսիայի կնքած երաշխիքային պայմանագրերը, ըստ էության, միայն այն փաստի քողարկումն էին, որ Լոկարնոն պետք է գերմանական էքսպանսիան ուղղեր դեպի Արևելք։

Լոկարնոյի պայմանագրերը նախատեսում էին Գերմանիայի մտնելը Ազգերի լիգա՝ բացահայտ հակասովետական նպատակներով։ Սակայն գերմանական կառավարությունը, թեև մտավ լիգա, բայց շտապեցնեց հակասովետական պլաններում մասնակցելու որոշակի պարտավորություններ։ Դա բացատրվում էր ձեռքերի ազատությունն պահպանելու նրա ցանկությամբ, որպեսզի, չխախտելով քաղաքական և տնտեսական նորմալ հարաբերությունները ՍՍՀՄ-ի հետ, իրեն ավելի վստահ զգա Անգլիայի և Ֆրանսիայի հետ ունեցած հարաբերություններում։

Լոկարնոն Գերմանիայի քաղաքական խոշոր հաջողությունն էր, որը պատերազմից հետո առաջին անգամ Անգլիայի և Ֆրանսիայի հետ հանդես էր գալիս իրավաբանորեն հավասար հիմունքներով։ Այն հանրագումարի բերեց Անգլիայի և Ֆրանսիայի միջև առաջին համաշխարհային պատերազմից հետո մղվող պայքարը հանուն Եվրոպայում ղեկավար դեր գրավելու։ Արդյունքները Ֆրանսիայի օգտին չէին։ Այդ ժամանակից ի վեր մի շարք տարիների ընթացքում առաջատար դերը եվրոպական գործերում պատկանում էր Անգլիային։ Անգլիական կառավարող շրջանները իրենց ամրապնդված դիրքերն ամենից առաջ օգտագործում էին այն բանի համար, որպեսզի ակտիվացնեին և ընդլայնեին Սովետական Միության դեմ մղվող պայքարը։

ՍՍՀՄ-ի պայքարը խաղաղության համար

Այդ ժամանակ առաջացած միջազգային իրադրությունը սովետական կառավարությունից պահանջում էր բարձր զգոնություն ու ակտիվություն հանդես բերել խաղաղության համար մղվող պայքարում։ Լոկարնոյի պայմանագրերի հակասովետական ուղղվածությունն ակնհայտ էր։ Պահանջվում էին անհետաձգելի միջոցառումներ իմպերիալիստական տերությունների՝ ՍՍՀՄ-ի նկատմամբ թշնամական այդ քայլը կասեցնելու համար։ Սովետական Միությունը հաշվի էր առնում, որ Գերմանիայի և Լոկարնոյի կազմակերպիչների միջև գոյություն ունեին խոր հակասություններ։ Այդ հակասություններն անհրաժեշտ էր օգտագործել սոցիալիստական պետության շահերի օգտին։ ՍՍՀՄ-ի ջանքերի արդյունքը հանդիսացավ 1926 թ. ապրիլին Սովետական Միության և Գերմանիայի միջև չեզոքության մասին պայմանագրի ստորագրումը։ Պայմանագիրը նախատեսում էր, որ երկու երկրների փոխհարաբերությունների հիմքում պետք է լինի Ռապալոյի պայմանագիրը։ Չեզոքության մասին պայմանագիրն Ազգերի լիգայում տերությունների տերությունների համար զգալիորեն դժվարացնում էր Գերմանիային ՍՍՀՄ-ի դեմ օգտագործելու հնարավորությունները։

Սակայն շուտով Սովետական Միության արտաքին քաղաքական դրությունը դարձավ ավելի սպառնալի։ Անգլիական պահպանողական կառավարությունը, որը այն ժամանակ հակասովետական գլխավոր դերն էր խաղում միջազգային հարաբերությունների բնագավառում, պրովոկացիաների մի սերիա ծավալեց ՍՍՀՄ-ին չեզոքացնելու, նրա դեմ թշնամի պետությունների բլոկ ստեղծելու նպատակով, վերջին հաշվով ի նկատի ունենալով սոցիալիստական պետության դեմ կազմակերպել նոր ռազմական արշավանք։ Համկ(բ)կ XV համագումարը 1927 թ. նշում էր, որ «Լոնդոնի պահպանողական կաբինետի դե-

կավարությամբ միջազգային բուրժուազիայի ռեակցիոն տարրերը սկսել են հող նախապատրաստել ՍՍՀՄ-ի դեմ ղեկված հարձակում կատարելու համար, այն պատելով պրովոկացիաների մի ամբողջ կծիկով»։ Անգլիական կառավարությունը 1927 թ. դիմեց դիվանագիտական հարաբերությունների խզմանը Սովետական Միության հետ, հույս ունենալով, որ իր օրինակին կհետևեն նաև մի քանի այլ տերություններ։ Նա հակասովետական խոշոր պրովոկացիա կազմակերպեց Չինաստանում՝ չին ժողովրդին Սովետական Միության դեմ հրահրելու նպատակով։ Այդ գործողությունների հիմքում ընկած էր անգլիական և չինական բուրժուազիայի դասակարգային ատելությունն աշխատավորների պետության հանդեպ, որը հաջողությամբ իրականացնում էր սոցիալիստական շինարարության իր պլանները։

Սովետական կառավարությունն այդ մարտահրավերին պատասխանեց չհարձակման և չեզոքության պայմանագրեր կնքելու ուղղությամբ ակտիվ գործունեություն ծավալելով։ Հարկավոր էր Անգլիային խանգարել հակասովետական կոմբինացիաների մեջ ներգրավելու ՍՍՀՄ-ի հարևան և այլ երկրների։ 1926—1927 թթ. չհարձակման և չեզոքության պայմանագրեր կնքվեցին Գերմանիայի, Լիտվայի, Թուրքիայի, Աֆղանստանի և Իրանի հետ։ Այդպիսին էր Անգլիայի հակասովետական ոտնձգությունների հաջող կասեցումը սովետական դիվանագիտության կողմից։

Խաղաղության սովետական քաղաքականության կարևոր տարրը ՍՍՀՄ-ի մղած պայքարն էր հանուն զինաթափման, որը ծավալվել էր դեռևս Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ։ Զինաթափման կոնֆերանսի նախապատրաստական հանձնաժողովում 1927 թ. սովետական կառավարությունը պաշտոնապես առաջարկեց ընդհանուր և լիակատար զինաթափում։ Սովետական ծրագիրը նախատեսում էր այդ կարևորագույն նպատակին հասնելու կոնկրետ միջոցառումներ և ժողովուրդների միջև խաղաղության ապահովման միջոցներ։ Նախապատրաստական հանձնաժողովն, ըստ էության, չզրաղվեց սովետական առաջարկությունների լուրջ քննարկմամբ, որովհետև դրանք ձեռնտու չէին իմպերիալիստական առաջատար տերություններին։ Որպեսզի խանգարի նրանց խուսափելու զինաթափման պրոբլեմի քննարկումից, ՍՍՀՄ-ն առաջարկեց «սպառազինությունների վերաբերյալ կոնվենցիայի նախագիծ»։ Այս անգամ առաջարկվում էր մասնակի զինաթափում՝ բոլոր տեսակի ու կատեգորիայի սպառազինությունների աստիճանական կրճատման հիման վրա։ Եվ սովետական առաջարկությունների դեմ դարձյալ հանդես եկան Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը։ Սովետական առաջարկությունները չընդունվեցին, բայց համաշխարհային հասարակական կարծիքը հնարավորություն ունեցավ համոզվելու ՍՍՀՄ-ի խաղաղասիրության մեջ և այն բանում, որ Ազգերի լիգայում տերուտնօրինություն անող իմպերիալիստական տերությունները չեն ցանկանում թեկուզև մեկ քայլ կատարել սպառազինությունների կրճատման ուղղությամբ։

Այլ երկրների հետ տնտեսական ու առևտրական հարաբերությունների զարգացումը կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը դիտում էին որպես ՍՍՀՄ-ի էկոնոմիկայի համար արտասահմանից անհրաժեշտ նյութեր ստանալու աղբյուր և որպես մյուս երկրների ու ժողովուրդների հետ հարաբերություններն ամրապնդելու միջոց, որը պետք է նպաստեր ՍՍՀՄ-ի տնտեսական ու քաղաքական դիրքերի ամրապնդմանը և ոչ մի դեպքում չհասցներ այլ տերություններից թեկուզև աննշան չափով կախման մեջ ընկնելուն։

1928 թ. Ֆրանսիայի և ԱՄՆ-ի նախաձեռնությամբ սկսված բանակցությունների հետևանքով մի շարք երկրներ ստորագրեցին պատերազմի՝ որպես ազգային քաղաքականության գործիքի, արգելման մասին Փարիզի պայմանագիրը կամ այլ կերպ՝ Բրիան—Կելլոգի պակտը։ Դա ամենից առաջ մի տուրք էր պացիֆիստական այն տրամադրություններին, որոնք տարածվել էին շատ երկրներում 20-ական թվականներին։ Բանակցությունների ընթացքում Ֆրանսիան, ԱՄՆ-ը և Անգլիան ջանում էին պակտին տալ հակասովետական ուղղվածություն և այն ձևակերպել այնպես, որպեսզի նա համապատասխանի ամենից առաջ նրանցից յուրաքանչյուրի իմպերիալիստական շահերին։ Ո՛չ մեկը ստացվեց, ո՛չ էլ մյուսը, և պակտը եղավ մի կոմպրոմիս։ Այն հռչակում էր նրա մասնակիցների հրաժարումը պատերազմից՝ որպես միջազգային վեճերի կարգավորման միջոցի և ազգային քաղաքականության գործիքի։ Պետությունների միջև ծագած ցանկացած վեճերն ու կոնֆլիկտները ենթակա էին խաղաղ միջոցներով լուծման։ Պակտը հեռու էր կատարյալ լինելուց, բայց նրա արժանիքն այն էր, որ ուղղված էր ագրեսիվ պատերազմների դեմ։ Պակտի մասնակից դարձան մի քանի տասնյակ երկրներ։

Սովետական Միությանը չհրավիրեցին մասնակցելու պակտի վերաբերյալ բանակցություններին։ Բայց համաշխարհային գործերում սովետական երկրի աճող դերը պակտի կազմակերպիչներին ստիպեց ՍՍՀՄ-ին հրավիրել միանալու Բրիան—Կելլոգի պակտին։ Սովետական կառավարությունը պատասխանեց համաձայնությամբ և պակտի արդյունավետությունը մեծացնելու նպատակով առաջարկեց ընդլայնել նրա գործողության ոլորտը։ ՍՍՀՄ կառավարությունը ելնում էր այն բանից, որ պակտը հասարակական կարծիքի առջև տերությունների վրա օբյեկտիվորեն որոշակի պարտականություններ է դնում և սովետական կառավարությանը հնարավորություն է տալիս պակտի մասնակիցների առջև վերստին բարձրացնել զինաթափման հարցը։ Սովետական Միությունը ոչ միայն առաջինը վավերացրեց պակտը, այլև իր հարևանների՝ Լեհաստանի, Լիտվայի, Ֆինլանդիայի, Էստոնիայի, Լատվիայի և Ռումինիայի հետ պայմանավորվեց միմյանց հարաբերությունների միջև պակտը ժամկետից շուտ գործողության մեջ դնելու մասին, չսպասելով նրա ընդհանուր վավերացմանը։ Այդ մասին արձանագրությունը ստորագրվեց 1929 թ. փետրվարի 9-ին Մոսկվայում։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և միջազգային հարաբերությունները

1929 թ. բռնկվեց ամենաուժեղ տնտեսական ճգնաժամը, որը մինչև հիմքերը ցնցեց ամբողջ կապիտալիստական աշխարհը։ Նրա ազդեցությունն արտահայտվեց նաև միջազգային հարաբերությունների զարգացման վրա։ Համաշխարհային քաղաքականության բոլոր հիմնական հակասությունները ծայր աստիճանի հասան, որի հետևանքով խորտակվեց հետպատերազմյան այն շենքը, որը հայտնի էր որպես Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմ։

Ճգնաժամը սկսվեց 1929 թ. ԱՄՆ-ում Նյույորքյան բորսայի կրախով և շուտով տարածվեց մյուս երկրներում։ Արդյունաբերական արտադրությունը խիստ ընկավ, որն առաջ բերեց գործազրկության չտեսնված աճ։ 1932 թ. գործազուրկների թիվը կապիտալիստական երկրներում հասավ 30 մլն հարգու։ Շուտով գերարտադրության ճգնաժամը բարդացավ ամենասուր ֆինանսական ճգնաժամով։ Շատ խոշոր բանկեր սնանկացան և դադարեցրին վճարումները։ Դասակարգային հակասություններն ու դասակարգային պայքարը բուրժուական աշխարհում աճում էր։ Մի շարք երկրների բուրժուազիան իր տիրապե-

տությունը պահպանելու նպատակով դիմեց ֆաշիզմին՝ մոնոպոլիստական կապիտալի այդ բացահայտ տեռորիստական դիկտատուրային, որն իրականացվում էր իմպերիալիստական բուրժուազիայի ամենաագրեսիվ շրջանների շահերի օգտին։

Բուրժուական աշխարհի բոլոր հակասությունների սրումն առաջացրեց իմպերիալիստական նոր պատերազմների վտանգի աճ։ Այն ուղեկցվում էր նաև Սովետական Միության և նրան շրջապատող կապիտալիստական աշխարհի միջև հակասությունների սրմամբ։ Սովետական պետության կատաղի թշնամիները նորից փորձեցին կազմակերպել ՍՍՀՄ-ի տնտեսական բլոկադա։ Չնայելով նյութական վնասներին, նրանք կծկում էին առևտրական հարաբերությունները Սովետական Միության հետ։ Հայտնվեցին հակասովետական բլոկների ստեղծման նոր պլաններ։ Այս բոլորը նշանակում էր, որ ՍՍՀՄ-ի դեմ պատերազմի նախապատրաստությունն ուժեղացել էր։

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը թաղեց ռեպարացիաների պրոբլեմը։ 1929 թ. Դաուեսի պլանը փոխարինվեց Յունգի պլանով, որը մշակեց փորձագետների կոմիտեն ամերիկյան բանկիր Յունգի գլխավորությամբ։ Յունգի պլանը ռեպարացիաների ընդհանուր գումարը սահմանում էր 113,9 մլրդ մարկ, որը վճարման ենթակա էր 37 տարվա ընթացքում՝ 2 մլրդ մարկ ամենամյա մուծմամբ հանդերձ։ Այսպիսով, մուծումների չափը հին պլանի համեմատությամբ նվազում էր 20 տոկոսով։ Ռեպարացիոն հանձնաժողովը վերացվում էր, վերացվում էր նաև օտարերկրյա վերահսկողությունը գերմանական երկաթուղիների և ձեռնարկությունների նկատմամբ։ Միաժամանակ որոշում ընդունվեց մինչև 1930 թ. կեսերը դաշնակից զորքերը Հռենոսի գոտուց էվակուացնելու մասին։

1930 թ. հունիսին Յունգի պլանն ուժի մեջ մտավ, իսկ մեկ տարի անց Գերմանիան դիմեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Հուվերին, խնդրելով դադարեցնել ռեպարացիոն մուծումները։ Ի մեծ դժգոհություն Ֆրանսիայի, 1931 թ. հունիսին Հուվերը հանդես եկավ ռեպարացիաների գծով բոլոր վճարումների մեկ տարվա հետաձգում՝ մորատորիում սահմանելու առաջարկությամբ։ Մորատորիումն ավարտվելուց հետո 1932 թ. հունիսին Լոզանում գումարված միջազգային կոնֆերանսը ռեպարացիաները վերջնականապես չեղյալ համարեց։ Դրանով իսկ վերացվեց Վերսալյան հաշտության պայմանագրի կարևոր մասերից մեկը։

Ռեպարացիաների վերացումն ամենից առաջ Ֆրանսիայի պարտությունն էր, որը առավելագույն կորուստներ էր կրել համաշխարհային պատերազմի ընթացքում։ Անհաջողության մատնվեց նաև Եվրոպայում իր քաղաքական դիրքերն ամրապնդելու՝ ճգնաժամի տարիներին նրա առաջադրած պլանը, որը հայտնի դարձավ որպես «պան-Եվրոպայի» պլան։ Եվրոպական միության ստեղծման գաղափարն առաջին անգամ առաջադրեց ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Բրիանը 1929 թ.։ Մեկ տարի անց ֆրանսիական կառավարությունը պաշտոնապես արտահայտվեց հօգուտ եվրոպական ֆեդերալ միության ստեղծման։ Խոսքը վերաբերում էր եվրոպական պետությունների այնպիսի քաղաքական միության ստեղծմանը, որը կարողանար դիմակայել «քաղաքական, տնտեսական և սոցիալական տեսակետից եվրոպական աշխարհին սպառնացող վտանգին»։ Այդ բանաձևը նշանակում էր, որ «պան-Եվրոպան» նշանառության տակ էր վերցնում ՍՍՀՄ-ին և հեղափոխական շարժումը։ «Պան-Եվրոպայի» հակասովետիզմը ֆրանսիական պլանի համար պետք է երաշխավորեր իմպերիալիստական մյուս տերությունների աջակցությունը։ Սակայն քանի որ պլանը հղացվել էր նաև Եվրոպայում Ֆրանսիայի ազդեցության

ուժեղացման նպատակով, մյուս երկրները և առաջին հերթին Անգլիան բացասաբար վերաբերվեցին նրան, և Բրիանի նախաձեռնությունը հաջողություն չունեցավ։

Իմպերիալիստական հակասությունների սրումը Հեռավոր Արևելքում ավելի արագ էր ընթանում, քան Եվրոպայում։ Հենց այնտեղ առաջացավ պատերազմի առաջին օջախը։ Վաշինգտոնի կոնֆերանսից անմիջապես հետո ակտիվացավ իմպերիալիստական տերությունների ներխուժումը Չինաստան։ Այստեղ ամենից ավելի սուր էր արտահայտվում ամերիկա-ճապոնական մրցակցությունը։ 1927 թ. հետո, երբ չինական բուրժուազիայի դավաճանության պատճառով չինական հեղափոխությունը ժամանակավոր պարտություն կրեց, ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին երկրում իմպերիալիստական ներխուժման համար։ Չինական բուրժուազիան զգում էր արտաքին ուժերի օգնության կարիքը սեփական ժողովրդի դեմ պայքարելու համար և այդ պատճառով պատրաստակամություն էր հայտնում այդ ուժերի հետ գործարքներ կնքել Չինաստանի ազգային շահերի հաշվին։

Ճապոնական իմպերիալիզմի ագրեսիվ բնույթը պարզորոշ կերպով դրսևորվեց 1927 թ. կեսերին ճապոնական կառավարության ընդունած գեներալ Տանակայի «Չինաստանում վարելիք գործողությունների ծրագրի մասին» փաստաթղթում։ Դա, ըստ էության, ամբողջ Արևելյան Ասիայի և Խաղաղ օվկիանոսի երկրների նվաճման ծրագիր էր։ «Չինաստանը նվաճելու համար,— ասվում էր փաստաթղթում,— մենք պետք է սկզբում նվաճենք Մանջուրիան և Մոնղոլիան... Եթե մենք կարողանանք Չինաստանը նվաճել, ասիական մյուս փոքր երկրները, Հնդկաստանը, ինչպես նաև հարավային ծովերի երկրները մեզանից կվախենան և կկապիտուլացվեն մեր առջև։ Այդ ժամանակ աշխարհը կհասկանա, որ Արևելյան Ասիան մերն է, և չի համարձակվի վիճարկել մեր իրավունքները»։ Տանակայի հուշագիրը նախատեսում էր նաև Ճապոնիայի պատերազմը ՍՍՀՄ-ի դեմ, առանց որի չէր կարելի հուսալ Ասիայում ճապոնական տիրապետություն հաստատելը։

Շուտով ճապոնական կառավարող շրջանները ձեռնամուխ եղան իմպերիալիստական կողոպուտի իրենց ծրագրի իրականացմանը։ Օկուպացնելով Շանդունը, նրանք դիմադրության չհանդիպեցին ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից։ Այդ տերությունները պատրաստ էին Չինաստանում «իրենց» շահերը որոշ չափով զոհաբերել, միայն թե ճապոնացիները Չան Կայշիին օգնեին ճնշելու երկրում ծավալված հեղափոխական շարժումը։ Հաշիվներ էին կառուցվում նաև այն մասին, որ Ճապոնիան, իրականացնելով էքսպանսիան Հյուսիս-Արևելյան Չինաստանում, վերջիվերջո պատերազմ կսկսի Սովետական Միության դեմ։ Իսկ դեռ այժմ իմպերիալիստական տերությունները չինական զինվորականությանը դրդեցին Չին-Արևելյան երկաթուղին զավթելու փորձ կատարել, երկաթուղի, որը համատեղ կառավարում էին Չինաստանն ու ՍՍՀՄ-ը։ 1929 թ. երկաթուղու զավթմանը հետևեց չինական և սպիտակգվարդիական զորքերի ներխուժումը ՍՍՀՄ-ի տերիտորիա։ Ներխուժումը վճռականորեն կանխվեց սովետական Հեռավորարևելյան հատուկ բանակի գործողությունների միջոցով։

1931 թ. սեպտեմբերին Ճապոնիան սկսեց Հյուսիս-Արևելյան Չինաստանի զինված զավթումը։ Երեք ամսում նրա զորքերը գրավեցին Չինաստանի հյուսիս-արևելյան պրովինցիաները։ Ագրեսիան հեշտացավ Չան Կայշիի գլխավորությամբ գոմինդանի դավաճանական քաղաքականության և իմպերիալիստական տերությունների խրախուսման շնորհիվ։ ԱՄՆ-ը, ըստ էության,

սահմանափակվեց «Ստիմսոնի դոկտրինայի», այսինքն՝ Չինաստանում ճապոնական զավթումները «չճանաչելու դոկտրինայի» հռչակմամբ։ Դա «բաց դռների» ամերիկյան ավանդական իմպերիալիստական դոկտրինայի հաստատումն էր։ Ազգերի լիգան, ուր տնօրինում էին Անգլիան ու Ֆրանսիան, անպտուղ վեճեր էր մղում Չինաստանում Ճապոնիայի գործողությունների առթիվ և ի վերջո որոշեց հանձնաժողով ուղարկել հարցը տեղում ուսումնասիրելու համար։ Լիտտոնի հանձնաժողովի (նրա նախագահի՝ անգլիացի լորդ Լիտտոնի անունով) ստեղծմանը Ճապոնիան պատասխանեց 1932 թ. մարտի 9-ին «Մանջուրական անկախ պետության՝ Մանջոու-Գոյի կազմակերպմամբ, որի գլուխ անցավ Պու Ին՝ 1911—1913 թթ. չինական հեղափոխության կողմից տապալված մանջուրական 3ին դինաստիայի չինական վերջին կայսրը։

Լիտտոնի հանձնաժողովի ներկայացրած զեկուցագիրը խոսում էր Չինաստանում ազգային-ազատագրական շարժման ճնշման և Սովետական Միության դեմ բուրժուական պետությունների միավորման անհրաժեշտության մասին։ Զեկուցագիրը հանձնարարում էր ստեղծել միջազգային համագործակցություն Չինաստանի «վերականուցման» համար, այսինքն՝ հաստատել իմպերիալիստական տերությունների կողմից չին ժողովրդի համատեղ շահագործում։ Ճապոնիային ձեռնտու չէր Չինաստանի համատեղ «վերականուցումը»։ 1933 թ. սկզբին նա իր զորքերն ուղարկեց արդեն Ներքին Չինաստանի հյուսիսային պրովինցիաները։ Երբ 1933 թ. սկզբին Ազգերի լիգան արտահայտվեց Լիգայի կանոնադրության և Բրիան—Կելլոգի պակտի հիման վրա ճապոնա-չինական հարաբերությունները կարգավորելու օգտին, 1933 թ. մարտի 28-ին Ճապոնիան պաշտոնական հայտարարություն արեց Ազգերի լիգայից դուրս գալու մասին։ Խաղաղության Վաշինգտոնյան սիստեմը Հեռավոր Արևելքում ընկավ։ Ճապոնիան իր ձեռքերն արձակեց մեծ պատերազմի համար։

Պատմությունն այսպիսով, արդարացնում էր համաշխարհային զարգացման այն կանխատեսումները, որոնք իր ժամանակ արվել էին Սովետական Միության կոմունիստական կուսակցության կողմից։

Պատմությունը հաստատեց նաև լենինյան ցուցումը իմպերիալիստական տերությունների միջև հակասությունների անխուսափելի սրման վերաբերյալ։ Դա հատկապես դրսևորվեց համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին։ Էկոնոմիկան ներգործում էր քաղաքականության վրա, դասակարգային պայքարը սրվում էր, և մոնոպոլիստական բուրժուազիան իր հայացքը դարձրեց դեպի ֆաշիզմը։ 1933 թ. Գերմանիայում ֆաշիզմի իշխանության գալուն անցնելը և մի շարք այլ երկրներում ֆաշիստական տենդենցների զարգացումը նրանց դարձնում էին ծայրահեղ ագրեսիվ։ Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունն իշխանության գլուխ անցավ ռևանշի և աշխարհի նոր բաժանման դրոշի ներքո, որը նշանակում էր նոր համաշխարհային պատերազմի կուրս։ Դրա հետևանքով Եվրոպայում առաջացավ պատերազմի չափազանց վտանգավոր, գլխավոր օջախը։

Այդ պայմաններում զգալիորեն մեծացավ Սովետական Միության դերը խաղաղության պահպանության գործում։ Սովետական Միությունն արդեն զգալի ռազմական ուժեր ուներ հնարավոր ագրեսիային հակազդելու համար։ Դա նշանակում էր, որ նա ձգողական կենտրոն էր դառնում խաղաղության պահպանմամբ շահագրգռված նաև մյուս պետությունների համար։ Իմպերիալիստական տերությունների միջև հակասությունների շեշտակի սրումը պայմաններ էր ստեղծում սովետական արտաքին քաղաքականության ակտիվացման

համար, որը, օգտագործելով այդ հակասությունները, կարող էր խոչընդոտել հակասովետական միասնական ճակատի կազմակերպմանը։ Կուսակցությունն ու կառավարությունը լիակատար չափով այդ բարենպաստ պայմաններն օգտագործեցին արտաքին քաղաքական ակտիվ գործունեության համար ի շահ սոցիալիզմի, ի շահ խաղաղության քաղաքականության։

Համաշխարհային հակասությունների սրման և նոր համաշխարհային պատերազմի սպառնալիքի աճի պայմաններում Սովետական Միությունը հանդես եկավ զինաթափման հարցի կոնստրուկտիվ լուծմանը հասնելու և դրանով իսկ խաղաղությունն ամրապնդելու առաջարկությամբ։ Համաշխարհային հասարակական կարծիքը ռազմական վտանգի աճի կապակցությամբ ավելի ու ավելի բարձրաձայն էր արտահայտվում հանուն զինաթափման։ 1932 թ. փետրվարի 2-ին Ժնևում բացվեց զինաթափման միջազգային կոնֆերանսը։ Սովետական պատվիրակությունը հանդես եկավ ընդհանուր և լիակատար զինաթափման ծրագրով, որը կարող էր գործուն և միանման անվտանգություն ապահովել բոլորի համար։ Սակայն հասկանալով, որ զինաթափման արմատական միջոցառումները կարող են անընդունելի լինել կոնֆերանսի մասնակիցների համար, սովետական պատվիրակությունը պատրաստակամություն հայտնեց քննարկելու ցանկացած առաջարկություն, եթե դրանք ուղղված են սպառազինությունների մրցավազքի թուլացմանը։ Ի զարգացումն այդ դիրքորոշման մտցվեց սպառազինությունների համամասն կրճատման վերաբերյալ կոնվենցիայի սովետական նախագիծը։ Իմպերիալիստական տերությունների պատվիրակությունները խանգարեցին սովետական առաջարկությունների ընդունմանը։

1933 թ. փետրվարին սովետական կառավարությունը զինաթափման կոնֆերանսի քննարկմանը հանձնեց հարձակվող կողմի բնորոշման վերաբերյալ դեկլարացիայի նախագիծը, որը հայտնի դարձավ որպես «Ժողովուրդների ազատության խարտիա»։ Նախագիծը բնութագրում էր այն գործողությունները, որոնց կատարումը պետության կողմից նշանակում է, որ նա հանդիսանում է հարձակվող կողմ։ Համաշխարհային հասարակական կարծիքը դրականորեն ընդունեց սովետական դեկլարացիան, և դրա համար էլ 1933 թ. մայիսին զինաթափման կոնֆերանսի անվտանգության կոմիտեն հավանություն տվեց սովետական նախագծի հիմնական գաղափարներին։ Դա սովետական արտաքին քաղաքականության խոշոր հաջողությունն էր։ Եվ եթե կոնֆերանսը հետագայում ամբողջությամբ չընդունեց սովետական նախագիծը, ապա այդ տեղի ունեցավ այն պատճառով, որ Անգլիայի, Իտալիայի և մի շարք այլ տերությունների պատվիրակությունները համառ պայքար էին մղում նրա դեմ։

Իմպերիալիստական տերությունների կառավարությունները, որոնք ժնևվում հանդես էին գալիս ընդդեմ սովետական առաջարկությունների, միաժամանակ հանդես էին գալիս նաև այլ առաջարկությունների դեմ, որոնք ուղղված էին սպառազինությունների ընդհանուր կրճատմանը, այդ նույն ժամանակ ջանալով հասնել իրենց պարտնյորների սպառազինությունների կրճատմանը։ Դա ձեռնտու էր Գերմանիայի համար, որը պահանջեց կամ կրճատել մյուս պետությունների սպառազինությունը, կամ հանել այն սահմանափակումները, որոնք դրվել էին Վերսալյան պայմանագրի կողմից գերմանական սպառազինությունների վրա։ «Սպառազինությունների հավասարության» գերմանական պահանջը նշանակում էր Վերսալյան պայմանագրի ռազմական հոդվածների վերացման և Գերմանիային ոչնչով չսահմանափակված սպառազինման իրավարանական իրավունքի տրամադրման պահանջ։ Անգլիան այդ պահանջի բա-

վարարման կողմնակից էր, Ֆրանսիան համառորեն առարկում էր։ Անգլիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և Իտալիայի համատեղ ջանքերով ֆրանսիական դիմադրությունը հաղթահարվեց և ճանաչվեց Գերմանիայի լրացուցիչ սպառազինման իրավունքը։ Զինաթափման կոնֆերանսը Անգլիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Իտալիայի և մի քանի այլ երկրների ջանքերով այսպես վերածվեց սպառազինման կոնֆերանսի։ Ստանալով սպառազինվելու պաշտոնական թույլտվություն, 1933 թ. հոկտեմբերին Գերմանիան հեռացավ զինաթափման կոնֆերանսից և հայտարարություն արեց Ազգերի լիգայից իր դուրս գալու մասին։

Պատերազմի գլխավոր օջախի առաջացումը Եվրոպայում և ՍՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը (1933—1935 թթ.)

1933 թ. հունվարին Գերմանիայում Հիտլերի գլխավորությամբ նացիոնալ-սոցիալիստական կուսակցության իշխանության գլուխ անցնելը նշանակում էր, որ Եվրոպայում ստեղծվում է պատերազմի երկրորդ, գլխավոր օջախը, որովհետև սկսած այդ պահից Գերմանիայի կառավարությունը բացահայտ կերպով իր առջև նպատակ դրեց նախապատրաստվել նոր պատերազմի հանուն համաշխարհային տիրապետության։ Նացիստական Գերմանիայի արտաքին քաղաքական ծրագիրը, որը շարադրվել էր Հիտլերի «Իմ պայքարը» գրքում, նախատեսում էր ամենից առաջ պատերազմի նախապատրաստություն ընդդեմ Սովետական Միության՝ սոցիալիստական կարգերը վերացնելու և ՍՍՀՄ-ի ընդարձակ տարածությունները գերմանական գաղութացման ասպարեզի վերածելու նպատակով։

Հիտլերի գերմանական կառավարությունը, որպես համաշխարհային կողոպուտի իր ծրագրի գաղափարական հիմնավորում, առաջադրեց «կենսական տարածության» կոնցեպցիան և ռասայական տեսությունը։ Ծայրահեղ ցինիզմով պաշտոնապես պնդվում էր, որ գերմանացիները «տերերի ռասան են», որի համար ճակատագիրը նախատեսել է իշխել «ստորին ռասաների» վրա։ Քանի որ գերմանացիները բավականաչափ կենսական տարածություն չունեն, նրանք պետք է սրի ուժով այն խլեն «ստորին ռասաներից», ամենից առաջ սլավոններից, որոնք պետք է ֆիզիկապես ոչնչացվեն կամ վերածվեն «տերերի ռասայի» ստրուկների։ Եվրոպայի և ամբողջ աշխարհի վրա կախվեց ահավոր սպառնալիքը։ Բայց այն կարելի էր կանխել, նացիստական Գերմանիային սանձահարելով խաղաղասեր երկրների և ժողովուրդների միացյալ ջանքերով։

Հենց այդ էր Սովետական Միության արտաքին քաղաքականության անփոփոխ նպատակը 30-ական թվականներին։ 1933 թ. վերջին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց կոլեկտիվ անվտանգության համար պայքար ծավալելու մասին։ Որոշումը նախատեսում էր Սովետական Միության՝ Ազգերի լիգա ընդունվելու և եվրոպական պետությունների լայն շրջանակի մասնակցությամբ ագրեսիայից փոխադարձ կերպով պաշտպանվելու մասին ռեգիոնալ պակտ կնքելու հնարավորությունը։ Այդ որոշումը կարևոր էտապ հանդիսացավ Սովետական Միության արտաքին քաղաքականության մեջ։ Միջազգային փոխված պայմանները հաշվի առնելով, կուսակցությունն ու կառավարությունը ձևակերպեցին սովետական արտաքին քաղաքականության նոր խնդիրները, որոնք նախատեսում էին ակտիվ արտաքինքաղաքական գործունեություն՝ ֆաշիզմի դեմ և խաղաղության համար մղվող պայքարի ասպարեզում։

ՀամԿ(բ)Կ XVII համագումարը, որը տեղի ունեցավ 1934 թ. հունվարին, ընդգծեց ՍՍՀՄ-ի արտաքին քաղաքականության խաղաղասիրական բնույթը, նրա պատրաստակամությունը ի շահ խաղաղության համագործակցելու բոլոր պետությունների հետ և նրա հավատարմությունը իր ինտերնացիոնալ պար-

տավորություններին։ Համագումարում նշվեց, որ իրականացնելով այդ քաղաքականությունը, Սովետական Միությունը հենվում է իր հարաճուն տնտեսական և քաղաքական հզորության վրա, բոլոր երկրների՝ խաղաղության պահպանմամբ կենսականորեն շահագրգռված բանվոր դասակարգի բարոյական աջակցության վրա, այն երկրների ողջամտության վրա, որոնք ցանկանում են զարգացնել առևտուրը ՍՍՀՄ-ի հետ, ինչպես նաև կարմիր բանակի վրա, որը պատրաստ է իր երկրի պաշտպանությանը։

1934 թ. սեպտեմբերի 18-ին Սովետական Միությունը մտավ Ազգերի լիգա։ Դա չէր նշանակում, թե Ազգերի լիգան ազատագրվել էր հակասովետական այն տենդենցներից, որոնք բնութագրում էին նրա նախորդ գործունեությունը։ Սովետական կառավարությունը հաշվի էր առնում, որ Ազգերի լիգայից Գերմանիայի և Ճապոնիայի հեռանալը և հակասությունների սրումը Գերմանիայի և Լիգայում առաջատար դեր խաղացող պետությունների միջև հնարավորություն էին տալիս այդ կազմակերպությունը թեկուզև ինչ-որ չափով օգտագործել դանդաղեցնելու շարժումը դեպի նոր համաշխարհային պատերազմ։ Լիգան կարող էր դառնալ մյուս պետությունների հետ ՍՍՀՄ-ի՝ խաղաղության շահերից ելնող համագործակցությունը կարգավորելու վայր։ Վերջապես, այդ նույն նպատակներով սովետական ներկայացուցիչները կարող էին և պետք է օգտագործեին Ազգերի լիգայի տրիբունը։ ՍՍՀՄ-ի մտնելը Լիգայի մեջ չէր նշանակում, որ նա հրաժարվում է քաղաքական որևէ սկզբունքից։ Լիգայի մեջ ՍՍՀՄ-ի մտնելու ժամանակ սովետական ներկայացուցիչ Մ. Մ. Լիտվինովը նրա պլենար նիստում հայտարարեց. «Մենք այսօր Լիգա ենք մտնում որպես պետության սոցիալ-տնտեսական նոր սիստեմի ներկայացուցիչներ, չհրաժարվելով այդ պետության և ոչ մի առանձնահատկությունից և լիովին պահպանելով մեր դեմքը, ինչպես այն պահպանում են այստեղ ներկայացված մյուս պետությունները»։

Կոլեկտիվ անվտանգության պայքարի ծավալման մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. վերջին ընդունած որոշման համաձայն սովետական կառավարությունը նախաձեռնություն հանդես բերեց, առաջադրելով խաղաղության անբաժանելիության գաղափարը, որը նշանակում էր, որ խաղաղության գործի համար լուրջ վտանգ են ներկայացնում ցանկացած լոկալ ռազմական կոնֆլիկտները, անկախ այն բանից, թե երկրագնդի որ շրջանում են նրանք ծագում։ «Խաղաղությունն անբաժան է» բանաձևը նշանակում էր, որ բոլոր պետությունները պետք է միավորվեն ագրեսիայի դեմ մղվող պայքարում և որ նրանց անվտանգությունը կախված է նրանց իսկ համատեղ ջանքերից։ Այդ ջանքերը պետք է ձեռնարկվեն փոխադարձ օգնության ռեգիոնալ պակտերի կնքման միջոցով։ Նման պակտերը պետք է ընդգրկեն այս կամ այն շրջանի բոլոր պետությունները, նրանց համար երաշխավորելով օգնությունն ընդդեմ ագրեսիայի։ Փոխադարձ օգնության ռեգիոնալ պակտը ագրեսիվ տերություններին հակադրված պետությունների միասնական ճակատն է։ Սովետական արտաքին քաղաքականությունն այդ ուղղությամբ մի շարք եռանդուն քայլեր ձեռնարկեց։

Եվրոպայի անվտանգության պրոբլեմների վերաբերյալ Ֆրանսիայի հետ, որի վրա նույնպես կախվել էր Գերմանիայի ագրեսիայի վտանգը, մղված բանակցությունների ընթացքում Սովետական Միությունը առաջադրեց կոլեկտիվ պակտի նախագիծ։ Այսպես ծագեց Արևելյան պակտի գաղափարը, որը ակտիվորեն քննարկվում էր մի շարք եվրոպական տերությունների կառավարությունների կողմից։ Նկատի էր առնվում, որ պակտի մասնակիցները պետք է

կնքեն պայմանագիր, որով պետք է պարտավորվեն փոխադարձաբար երաշխավորելու իրենց սահմանների անխախտությունը և միմյանց օգնություն ցույց տան իրենց վրա կատարված հարձակման դեպքում։ Արևելյան պակտի գաղափարը, բնականաբար, դուր չեկավ Գերմանիային, այն դուր չեկավ նաև Անգլիային, որը մտածում էր այն մասին, թե ինչպես սեպարատ համաձայնություն կնքի Գերմանիայի հետ։ Դա խանգարեց սովետա-ֆրանսիական նախաձեռնության իրականացմանը։

1933 թ. վերջին սովետական կառավարությունը ԱՄՆ-ի առջև բարձրացրեց ԱՄՆ-ի, ՍՍՀՄ-ի, Չինաստանի և Ճապոնիայի միջև չհարձակման մասին պակտ կնքելու գաղափարը։ Նման պակտը կարող էր նպաստել խաղաղության պահպանմանը Հեռավոր Արևելքում և լինել Ճապոնիայի ագրեսիվությունը զսպող միջոց։ Միացյալ Նահանգների կառավարությունը հրաժարվեց պաշտպանել սովետական նախաձեռնությունը։ Համանման դիրք գրավեց նաև չինական կառավարությունը, որը հույս ուներ ինչ-որ ձևով համաձայնության գալ ագրեսորի հետ։

Անվտանգության ռեգիոնալ սիստեմներ ստեղծելու ճանապարհին դիմադրության հանդիպելով, սովետական կառավարությունն իր ջանքերն ուղղեց փոխադարձ օգնության առանձին պայմանագրերի կնքմանը, որոնք վերջին հաշվով հետապնդում էին նույն նպատակը, այսինքն՝ Եվրոպայի անվտանգության ամրապնդումը։ 1935 թ. Ֆրանսիայի հետ ստորագրվեց պայմանագիր, որը նախատեսում էր նրա մասնակիցների կողմից միմյանց անհապաղ օգնություն ցույց տալ եվրոպական որևէ պետության կողմից նրանց դեմ չհրահրված հարձակման դեպքում։ Պայմանագիրը նախատեսում էր նաև նրա մասնակիցների միջև կոնսուլտացիաներ անցկացնել՝ Ֆրանսիայի կամ ՍՍՀՄ-ի դեմ եվրոպական որևէ պետության հարձակման սպառնալիքի դեպքում։ Այդ կոնսուլտացիաները պետք է վերաբերեին այն միջոցառումներին, որոնք նախատեսված էին Ազգերի լիգայի կանոնադրությամբ։ Կնքելով փոխադարձ օգնության պայմանագիր, Սովետական Միությունն ու Ֆրանսիան ընդգծեցին, որ նրանք առաջվա պես հանդես են գալիս կոլեկտիվ անվտանգության սիստեմի ստեղծման օգտին։

Նույն 1935 թ. համանման պայմանագիր ստորագրվեց Սովետական Միության և Չեխոսլովակիայի միջև։ Այդ պայմանագիրը, սակայն, պարունակում էր մի վերապահում, որն ասում էր, թե նրա պայմաններն ուժի մեջ են մնում, եթե նրա մասնակիցները, իրենց դեմ հարձակում կատարվելու դեպքում, օգնություն ստանան Ֆրանսիայից։ Վերապահումն առաջարկվեց Չեխոսլովակիայի կառավարության կողմից, որը այն կախման մեջ դրեց Ֆրանսիայի գրավելիք դիրքից։ Դա վկայում էր այն մասին, որ Բեննեշի չեխոսլովակյան կառավարությունը պատրաստ չէր ՍՍՀՄ-ի հետ արդյունավետ համագործակցելու համար։

30-ական թվականների կեսերին Ֆրանսիայի որոշ պետական գործիչներ պատկերացնում էին իրենց երկրին սպառնացող այն վտանգը, որը ելնում էր Գերմանիայից։ Դա իր արտահայտությունը գտավ անվտանգության նպատակով Ֆրանսիայի և ՍՍՀՄ-ի ձեռնարկած համատեղ գործողություններում, թեպետև ձեռնարկված միջոցառումները զգալի չափով արժեզրկվում էին Ֆրանսիայի ռեակցիոն ուժերի ոտնձգություններից։ Անգլիայում այդ ուժերը զգալիորեն ավելի մեծ չափով, քան Ֆրանսիայում, որոշում էին երկրի քաղաքականությունը։ Եթե ֆրանսիական որոշ գործիչներ փորձում էին ինչ-որ բան անել ապագա պատերազմի կանխման համար, թեև դա անում էին ոչ այնքան հետևողականորեն ու վստահ, ապա անգլիական կառավարությունը վարում էր այնպիսի գիծ, որը չէր կարող չնպաստել համաշխարհային նոր պատերազմի մոտեցմանը։ Անգլիայի քաղաքականությունն իրականացնում էր այնպիսի անձանց մի խումբ, որը մտադիր էր Հիտլերի հետ պայմանավորվել ամենից առաջ Սովետական Միության հաշվին, ապա արևելաեվրոպական պետությունների, ինչպես նաև, գուցե, մի քանի այլ երկրների հաշվին։ Այդ կուրսի կործանարարությունը կռահած մարդկանց (օրինակ, Չերչիլի) ձայնն այդ ժամանակ չափազանց թույլ էր հնչում։ Այստեղից էլ Անգլիայի կողմից Եվրոպայի ռեգիոնալ անվտանգության սիստեմի ստեղծման գործը սաբոտաժի ենթարկելը, հիտլերյան ռեժիմին նրա ցույց տված բարոյա-քաղաքական աջակցությունը, նրան հակազդել չցանկանալն այն դեպքում, երբ Գերմանիան պատառոտում էր Վերսալյան հաշտության պայմանագիրը։ Ավելին, 1935 թ. անգլիական կառավարությունը Հիտլերի հետ կնքեց ռազմածովային համաձայնագիր, որը Վերսալյան պայմանագրի խախտում էր հանդիսանում և նպաստեց ապագա պատերազմին Գերմանիայի նախապատրաստվելուն։ Սոցիալիզմի, Սովետական Միության հանդեպ ունեցած ատելությունն անգլիական քաղաքագետներին զրկում էր քաղաքական իրադրությունը ողջամտորեն գնահատելու նրանց ավանդական ընդունակությունից։

Ֆաշիզմի բացահայտ ագրեսիայի սկիզբը և «չմիջամտելու» քաղաքականությունը

30-ական թվականների կեսերին Եվրոպայի ագրեսիվ տերություններն այնքան ուժեղացան, որ ձեռնամուխ եղան ագրեսիայի ուղղակի և բացահայտ ակտերին։ Առաջինը սկսեց Իտալիան։

Իտալական իմպերիալիզմը, որը առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով իրեն կողոպտված էր համարում, Աֆրիկայում գաղութային լայն էքսպանսիայի պլաններ էր մշակում։ Նրա բաղձանքների առարկան Եթովպիա (Հաբեշստան) անկախ պետությունն էր։ Ֆրանսիան բարեհաճորեն վերաբերվեց Իտալիայի այդ մտադրություններին, քանի որ դրանց իրագործումը պետք է Իտալիայի ուշադրությունը հեռացներ Բալկաններից և Դանուբի ավազանից։ Անգլիային խոցում էր իտալական ակտիվությունը՝ Սուեզի ջրանցքով դեպի Ասիա տանող իր ծովային ստրատեգիական ուղուց ոչ հեռու ընկած վայրերում, բայց անգլիական քաղաքագետներն էլ, որ ձգտում էին մերձենալ իտալական ֆաշիզմի հետ, ամուր դիրքեր չգրավեցին։

1935 թ. հոկտեմբերի 3-ին Իտալիան առանց պատերազմ հայտարարելու ռազմական գործողություններ սկսեց Եթովպիայի դեմ։ ԱՄՆ-ը «չեզոքության» մասին օրենքի հիման վրա արգելեց զենքի վաճառքը Իտալիային և Եթովպիային, որից տուժեց միայն Եթովպիան, որը չուներ սեփական զենքի արտադրություն։ Հասարակական կարծիքի դայրույթն այնքան մեծ էր, որ Ազգերի լիգան որոշում ընդունեց Իտալիայի դեմ սանկցիաներ կիրառելու մասին, որը դիմել էր ագրեսիայի։ ՍՍՀՄ-ը Ազգերի լիգայում հանդես էր գալիս այնպիսի սանկցիաների օգտին, որոնք կարողանային Իտալիային ստիպել դադարեցնելու ագրեսիան, բայց մյուս տերությունները, և ամենից առաջ Անգլիան, բանը հանգեցրին միայն տնտեսական սանկցիաներին, որոնք դրա հետ մեկտեղ կիրառվում էին ոչ լիովին և անհետևողականորեն։ 1935 թ. դեկտեմբերի 9-ին անգլիական արտաքին գործերի մինիստր Խորը Փարիզում ֆրանսիական պրեմիեր-մինիստր Լավալի հետ մի համաձայնագիր ստորագրեց Եթովպիայում Իտալիայի գրաված բոլոր տերիտորիաները վերջինիս հանձնելու մասին։ Այդ համաձայնագիրը բացահայտեց Անգլիայի ու Ֆրանսիայի դիրքը իտալա-Եթով-

պական պատերազմում։ Զայրացած հասարակական կարծիքը թաղեց այդ գործարքը։ Խորը ստիպված էր հրաժարական տալ, բայց Անգլիայի ու Ֆրանսիայի դիրքը, չնայած ավելի զգույշ դարձավ, ըստ էության, չփոխվեց։ Մուսոլինին հնարավորություն ուներ իրագործելու իր պլանները։ 1936 թ. մայիսի 5-ին իտալական զորքերը գրավեցին Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբան, իսկ 1936 թ. մայիսի 9-ին հռչակվեց Եթովպիայի միացումը Իտալիային։

Անգլիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կողմից կիրառվող ագրեսորների թողտվության քաղաքականությունը, արևմտյան տերությունների կողմից իտալական ագրեսիայի խրախուսումը Գերմանիային դրդեցին 1936 թ. մարտի 7-ին զորքեր մտցնելու Հռենոսի ապառազմականացված գոտին։ Դրանով իսկ Գերմանիան պատռեց Վերսալյան և Լոկարնյան պայմանագրերի կարևորագույն դրույթները։ Ֆրանսիան փորձեց, թեև չափազանց անհամարձակ, հակագործողություններ կազմակերպել, բայց Անգլիան և ԱՄՆ-ը խանգարեցին գերմանական ագրեսորի դեմ որևէ միջոցառումների ընդունմանը։ Ագրեսորի հովանավորները հույս ունեին, որ Գերմանիան, ամրապնդելով իր դիրքերն արևմուտքում, կշրջվի դեպի արևելք, ընդդեմ ՍՍՀՄ-ի։

Եվրոպայում պատերազմի վտանգի աճը և ուժերի հարաբերակցության փոփոխությունը, հատկապես ՍՍՀՄ-ի հզորության ու ազդեցության աճի կապակցությամբ տեղի ունեցած փոփոխությունը հասցրին այն բանին, որ անհրաժեշտ դարձավ վերանայել 1923 թ. Լոզանի կոնֆերանսի սահմանած սևծովյան նեղուցների ռեժիմը։ 1936 թ. հունիսին Թուրքիայի նախաձեռնությամբ Մոնտրեում գումարված կոնֆերանսը նոր կոնվենցիա մշակեց նեղուցների ռեժիմի վերաբերյալ, որը ստորագրվեց 1936 թ. հուլիսի 20-ին։ Նոր կոնվենցիան էական առաջընթաց քայլ կատարեց սևծովյան տերությունների հատուկ իրավունքների ճանաչման ասպարեզում։ Նա խաղաղ և պատերազմի ժամանակ պահպանում էր նեղուցներով առևտրանավերի ազատ անցնելու իրավունքը։ Սևծովյան տերությունների ռազմանավերը կարող էին նեղուցներով անցնել առանց լուրջ սահմանափակումների։ Ոչ սևծովյան երկրների ռազմանավերի անցումը սահմանափակվեց նավերի կարգով, նրանց որոշակի թվով և առավելագույն ընդհանուր ջրատարողությամբ։ Սահմանափակվում էր նաև Սև ծովում նրանց մնալու ժամկետը։ Պատերազմի ժամանակ, եթե Թուրքիան պատերազմին չի մասնակցում, կռվող երկրների նավերի անցումը նեղուցներով արգելվեց։ Նոր կոնվենցիայի համեմատաբար նպաստավոր պայմանները հանդիսացան ՍՍՀՄ-ի և Անգլիայի պատվիրակությունների միջև տեղի ունեցած չափազանց սուր պայքարի արդյունքը, որի հետևանքով անգլիացիները բազմիցս ստիպված էին զիջել։

Հենց որ Գերմանիան համոզվեց, որ Հռենոսյան մարզի վերառազմականացումն իրեն հաջողվեց անպատիժ կերպով, նա Իտալիայի հետ ինտերվենցիա ձեռնարկեց Իսպանիայում։ 1936 թ. հուլիսի 18-ին ռեակցիան Իսպանիայում ռազմա-ֆաշիստական խռովություն բարձրացրեց։ Գերմանիան ու Իտալիան իսպանական ֆաշիզմին օգնության շտապեցին։ Սովետական Միությունը անմիջապես հանդես եկավ իսպանական ժողովրդի պաշտպանությամբ ընդդեմ նրան սպառնացող ֆաշիստական ստրկացման։ Անգլիան և Ֆրանսիան, թեև շահագրգռված չէին, որպեսզի Գերմանիան ու Իտալիան ամրանան Պիրենեյան թերակղզում, օբյեկտիվորեն անցան խռովարարների կողմը։ Նրանց համար Իսպանիայում դեմոկրատական կարգերի հաստատումն ավելի վտանգավոր էր թվում, քան օտարերկրյա օգնությամբ իսպանական ֆաշիզմի հաղթանակը։ Երբ բացահայտվեց «չեզոքության կոմիտեի»՝ Լոնդոնում ու Փարիզում հորինված խեղկատակությունը, այսինքն՝ պարզվեց, որ կոմիտեն, ըստ էության, քող է ծառայում գերմանա-իտալական ինտերվենցիայի համար, Սովետական Միությունը դուրս եկավ նրա կազմից և սկսեց իսպանական հանրապետականներին ռազմական ու նյութական լայն օգնություն ցույց տալ։

Իսպանիային ցույց տված իր օգնությունը ՍՍՀՄ-ը դիտում էր որպես ինտերնացիոնալ պարտքի կատարում միջազգային հեղափոխական շարժման հանդեպ։ Սովետական Միությունը միայն 1936 թ. հոկտեմբերից մինչև 1937 թ. սեպտեմբերը Իսպանիա ուղարկեց զենքով բեռնված 23 ծովային տրանսպորտ։ Իսպանիայի ռազմաճակատներում գործում էին սովետական ինքնաթիռներ ու տանկեր, կռվում սովետական կամավորներ։ ՍՍՀՄ-ի աշխատավորությունը միջոցներ էր հավաքում և Իսպանիա ուղարկում պարենամթերքով, դեղորայքով, հագուստով բեռնված նավեր։ Իսպանիայի առաջադիմական ուժերը միշտ կհիշեն իրենց հետ սովետական ժողովրդի համերաշխության այդ հոյակապ արտահայտությունը։

Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կառավարող շրջանները ոչ պատահականորեն դավաճանեցին իսպանական ազատության գործին։ Իսպանիայի հանդեպ ցուցաբերած նրանց վարքագիծը ֆաշիստական ագրեսորներին «խաղաղեցնելու» քաղաքականության օղակներից միայն մեկն էր։ Նրանք հույս ունեին, որ, խրախուսելով Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի իրականացրած կողոպուտը, այդ տերությունների ամրապնդումը միայն այնքան կհանդուրժեն, որ նրանք ի վիճակի լինեն պատերազմ սկսելու ընդդեմ Սովետական Միության, որի ընթացքում սովետական պետությունը կործանիչ պարտություն կկրի և սովետական իշխանությունը կվերացվի կամ ծայրահեղ դեպքում չափազանց կթուլանա։ Դրա հետ միասին հնարավոր կլինի կարգավորել իր հակասություններն ագրեսիվ տերությունների հետ, նրանց թուլացնելով հակասովետական պատերազմի ընթացքում։ Հենց դրա համար էլ Գերմանիայի ագրեսիայի ակտերը դիմադրության չէին հանդիպում Անգլիայի և նրա հետևից ընթացող Ֆրանսիայի կողմից։ Ազդու հակահարված չստանալով, ագրեսորներն իրավաբանորեն ձևակերպեցին իրենց ավազակային դաշինքը։ Անգլիային, ԱՄՆ-ին և Ֆրանսիային հանգստացնելու համար նրանք ամեն կերպ ընդգծում էին իրենց բլոկի հակասովետական ուղղվածությունը և քողարկում արևմտյան տերությունների հանդեպ նրա ունեցած թշնամությունը։ 1936 թ. հոկտեմբերի 25-ին Գերմանիան ու Իտալիան Բեռլինում ստորագրեցին համաձայնագիր Բալկաններում և Դանուբի ավազանում իրենց տնտեսական էքսպանսիայի ոլորտները սահմանազծելու մասին։ Նրանք միաժամանակ պայմանավորվեցին Իսպանիայում պատերազմի հետագա վարման և Իտալիայի կողմից Եթովպիայի զավթումը Գերմանիայի կողմից ճանաչելու մասին։ Այսպես ձևավորվեց գերմանա-իտալական բլոկը, որը հայտնի է «Բեռլին—Հռոմ առանցք» անունով։

Մեկ ամիս անց, 1936 թ. նոյեմբերի 25-ին Բեռլինում պակտ ստորագրվեց Ճապոնիայի ու Գերմանիայի միջև։ Խոսքը վերաբերում էր Կոմունիստական ինտերնացիոնալի դեմ մղվող պայքարում երկու իմպերիալիստական տերությունների համագործակցությանը, այդ պատճառով էլ ստորագրված փաստաթուղթը հայտնի դարձավ որպես Հակակոմինտերնական պակտ։ Գերմանիան ու Ճապոնիան պարտավորվեցին պայքարել Կոմինտերնի ու հեղափոխական շարժման դեմ, կանգ չառնելով երրորդ երկրների ներքին գործերին միջամտելու առջև։ Պակտի մասնակիցները պայմանավորվեցին, որ եթե Գերմանիան կամ Ճապոնիան պատերազմի մեջ մտնի ՍՍՀՄ-ի դեմ, ապա մյուս

կողմը պետք է բարյացակամ չեզոքություն պահպանի։ 1937 թ. նոյեմբերին Հակակոմինտերնական պակտին հարեց ֆաշիստական Իտալիան։

Այսպես, 30-ական թվականների կեսերին ձևավորվեց ագրեսիվ, ֆաշիստական տերությունների բլոկը, որն իր սուր ծայրով ուղղված էր ամենից առաջ ՍՍՀՄ-ի և ամբողջ աշխարհի հեղափոխական շարժման դեմ։ Արևմտյան տերություններն իրենց խաբում էին այն հույսերով, թե այդ նպատակներով էլ ագրեսորներն իրոք կսահմանափակվեն, թե նրանց գործողությունները վտանգավոր չեն ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի շահերի համար։ Մոտ ապագան ցրեց նրանց այդ մոլորությունները։

«Չմիջամտելու» և ագրեսորներին «խաղաղեցնելու» քաղաքականությունը, որը իրականացնում էին Անգլիան, ԱՄՆ-ը և Ֆրանսիան, խաղաղության գործը քայքայում էր ոչ միայն Եվրոպայում, Միջերկրական ծովում, Աֆրիկայում, այլև Հեռավոր Արևելքում։ Այստեղ Ճապոնիան, օգտվելով եվրոպական գործերով մեծ տերությունների զբաղված լինելուց և նրանց թողտվությունից, ագրեսիա էր ծավալում ՍՍՀՄ-ի դեմ՝ նրա սահմաններում բավական խոշոր պրովոկացիաների ձևով, Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության դեմ, ինչպես նաև Չինաստանի դեմ։ 1936 թ. մարտին ՄԺՀ-ի կառավարության հետ ստորագրելով փոխադարձ օգնության արձանագրությունը, սովետական կառավարությունը ցուցադրեց իր պատրաստակամությունը հանդես գալու ի պաշտպանություն այդ ոչ մեծ երկրի և աջակցելու նոր կյանքի շինարարությանը ձեռնամուխ եղած նրա ժողովրդին։

Ազգերի լիգան բաղմիցս զբաղվեց Չինաստանում Ճապոնիայի կատարած ագրեսիայի հարցով, և Սովետական Միությունը միակ տերությունն էր, որ պնդում էր արմատական միջոցներ ձեռնարկել այդ ագրեսիան կանխելու համար։ Սակայն Լիգան իրական ոչինչ չարեց Չինաստանին պաշտպանելու համար։ Երբ 1927 թ. Ճապոնիան լայն ճակատով ռազմական գործողություններ սկսեց Չինաստանում՝ այդ վիթխարի երկիրը լիովին զավթելու նպատակով, Սովետական Միությունը բազմակողմանի և բավական գործունյա օգնություն ու աջակցություն ցույց տվեց Չինաստանին։ 1937 թ. օգոստոսին չհարձակման մասին սովետա-չինական պայմանագրի ստորագրումը էական քաղաքական աջակցություն եղավ Չինաստանի համար, որը ամրապնդեց նրա դրությունը հակաճապոնական պատերազմում։ Չինաստանի համար դժվարին 1938 և 1939 թթ. նա Սովետական Միությունից նյութական մեծ օգնություն ստացավ։ Կարմիր Խաչի և Կարմիր կիսալուսնի ընկերությունների միությունը Չինաստանին էր հանձնում մեծ քանակությամբ դեղորայք։ Չինական աշխատավորներին օգնում էին սովետական արհմիությունները։ Արտասահմանի հետ մշակութային կապի համամիութենական ընկերությունն անց էր կացնում համերաշխության և չին ժողովրդի պաշտպանության միջոցառումներ։

Սովետական կառավարությունը արտոնյալ պայմաններով և երկարաժամկետ վարկեր տրամադրեց զենք ձեռք բերելու համար։ 1937 թ. հոկտեմբերից Չինաստանը սկսեց զենք ստանալ Սովետական Միությունից։ ՍՍՀՄ-ը Չինաստանի հետ առևտուր էր անում վերջինիս համար բավական շահավետ պայմաններով և իր տրանսպորտային միջոցներով ապահովում զենքի առաքումը Չինաստան։ Հակաճապոնական պատերազմի առաջին ժամանակաշրջանում Չինաստանը ՍՍՀՄ-ից ստացավ 885 մարտական ինքնաթիռ։ Մինչև 1939 թ. փետրվարի կեսերը Չինաստան ուղարկվեց 82 տանկ, 690 հրանոթ, 3900 ձեռքի և հաստոցավոր գնդացիր, մեծ քանակությամբ արկեր, փամփուշտներ և այլ սպառազինություն։ Այդ ժամանակ Չինաստանում գտնվում էին մեծ թվով

կամավորներ, որոնք օգնում էին չինական զինծառայողներին մատակարարվող տեխնիկան յուրացնելու գործում և ակտիվ մասնակցություն ցուցաբերում ճապոնացիների դեմ մղվող մարտական գործողություններին։ Մինչև 1939 թ. փետրվարի կեսերը Չինաստանում աշխատում էին 3665 սովետական ռազմական մասնագետներ։ Սովետական մարդկանցից շատերը իրենց կյանքը տվեցին, չինացիների հետ մարտնչելով ճապոնական ագրեսիայի դեմ։

Մյունխենյան գործարքը։ ՍՍՀՄ-ի պայքարն ագրեսորներին կոլեկտիվ հակահարված տալու համար

1937 թ. վերջին Գերմանիան ու Իտալիան արդեն լայն նախապատրաստություն էին տեսնում Եվրոպայում մեծ պատերազմ սանձազերծելու համար։ Ֆաշիստական դիկտատորները և նրանց մինիստրները հաճախակի խորհրդակցություններ էին անց կացնում, պայմանավորվելով ագրեսիայի հերթական ակտերի և իրենց բլոկի մեջ նոր մասնակիցներ ներգրավելու մասին։ Բուլղարիայի, Հունգարիայի, Ռումինիայի կառավարություններն աստիճանաբար ավելի ու ավելի մեծ չափով էին իրենց կապում Գերմանիայի ու Իտալիայի հետ։

Միաժամանակ Անգլիան, որի կառավարությունը 1937 թ. մայիսին գլխավորեց Գերմանիայի և Իտալիայի հետ ամեն գնով գործարք կնքելու կողմնակից և անհեռատես քաղաքագետ, ռեակցիոներ Նեիլ Չեմբերլենը, ձեռնարկեց այնպիսի գործողություններ, որոնք Գերմանիային ու Իտալիային խրախուսում էին հետագա թալանչիական գործողություններ կատարելու։ Նոյեմբերին Չեմբերլենի կառավարության անդամ Հալիֆաքսը հանդիպեց Հիտլերի հետ և հասկացնել տվեց, որ Անգլիան համաձայն է Վերսալյան սիստեմի լիակատար վերացմանը և Գերմանիայի կողմից Ավստրիայի, Չեխոսլովակիայի ու Դանցիգի (Գդանսկի) զավթմանը, քանի որ իբր Գերմանիան «իրավամբ կարող է համարվել Արևմուտքի բաստիոնն ընդդեմ բոլշևիզմի»։ Հալիֆաքսն առաջարկեց, որպեսզի Անգլիան ու Ֆրանսիան միանան գերմանա-իտալական դաշինքին, և դրանով իսկ ստեղծվի չորս տերությունների բլոկ ընդդեմ Սովետական Միության։

Հալիֆաքսի միջոցով Հիտլերին արված անգլիական կառավարության առաջարկությունները հանցագործություն էին Եվրոպայի ժողովուրդների դեմ։ Այն բանից հետո երբ Անգլիան հայտնեց իր պատրաստակամությունը որոշակի պայմաններով Ավստրիան, Չեխոսլովակիան և Լեհաստանը ֆաշիստական Գերմանիային տալու մասին, Հիտլերը հասկացավ, որ ինքը կարող է այդ երկրները զավթել իր իսկ սեփական պայմաններով։ Ֆրանսիան այդ պահին այնքան էր իրեն կապել անգլիական քաղաքականությանը, որ նրա ինքնուրույնությունը արտաքին քաղաքական ոլորտում բավական սահմանափակ էր։

Ամերիկայի Միացյալ Նահանգներն ագրեսորներին խրախուսելու քաղաքականությունը պաշտպանում էին՝ ելնելով իրենց հակասովետական նպատակներից։

Զարմանալի չէ, որ այդպիսի պայմաններում Գերմանայի կողմից Ավստրիայի զավթումը չհանդիպեց արևմտյան տերությունների հակազդեցությանը։ 1938 թ. մարտի 12-ին Սովետական Միությունը հայտարարեց, որ այս անգամ Եվրոպայի կենտրոնում կատարված բռնությունն անտարակուսելի վտանգ է ստեղծում եվրոպական և ոչ եվրոպական բոլոր երկրների համար և որ այդ վտանգը սպառնում է ամենից առաջ Չեխոսլովակիային։ Սովետական Միությունը Անգլիային, ԱՄՆ-ին և Ֆրանսիային կոչ արեց կոլեկտիվ գործողություններ ձեռնարկել ագրեսորի դեմ, հայտարարելով, որ «վաղը կարող է

արդեն ուշ լինել, բայց այսօր ժամանակը դրա համար դեռ չի անցել, եթե բոլոր պետությունները, հատկապես մեծ տերություններն աներկմիտ ամուր դիրք գրավեն խաղաղության կոլեկտիվ փրկության պրոբլեմի հանդեպ»։ Այդ կոչը Լոնդոնում, Փարիզում և Վաշինգտոնում արձագանք չգտավ։ Եվ դա չնայած այն բանին, որ բոլորի համար պարզ էր, որ Ավստրիայից հետո Գերմանիան մտադիր է զավթել ամբողջ Չեխոսլովակիան կամ ծայրահեղ դեպքում նրա մի մասը։

Սովետական կառավարությունը աներկմիտ հայտարարում էր, որ ինքը պատրաստ է իր պարտավորությունները կատարելու ըստ Չեխոսլովակիայի հետ կնքված փոխօգնության պայմանագրի։ Փաստաթղթերը համոզիչ կերպով խոսում են այն մասին, որ Սովետական Միությունը հստակ դիրք գրավեց այդ հարցում։ Այդ դիրքը շարադրվեց ինչպես Չեխոսլովակիայի ներկայացուցիչներին սովետական ղեկավարների արած գաղտնի հայտարարություններում, այնպես էլ հրապարակավ։ 1938 թ. մարտի 15-ին ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Վ. Պ. Պոտյոմկինն այդ մասին հայտնեց ՍՍՀՄ-ում չեխոսլովակյան դեսպանորդ Ֆիրլինգերին։ Նույն ժամանակ էլ նա համապատասխան հայտարարություն արեց ամերիկյան թղթակիցներին։ 1938 թ. մարտի 28-ին Չեխոսլովակիայում գտնվող սովետական զինվորական պատվիրակությունը չեխոսլովակյան բանակի Գլխավոր շտաբի պետին հայտնեց, որ Չեխոսլովակիան, եթե նրա դեմ հարձակում կատարվի, օգնություն կստանա ՍՍՀՄ-ից։

Սովետա-չեխոսլովակյան պայմանագիրը նախատեսում էր, որ նման օգնությունը կհետևի, եթե Ֆրանսիան իր կողմից նույնպես օգնի Չեխոսլովակիային։ Սովետական Միությունը մտադիր չէր օգտվել այդ վերապահումից, և, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մ. Ի. Կալինինի 1938 թ. ապրիլի 26-ի հայտարարության համաձայն, ՍՍՀՄ-ը պատրաստ էր Չեխոսլովակիային օգնելու, անկախ Ֆրանսիայի գրաված դիրքից։ Ի. Վ. Ստալինը Չեխոսլովակիայի կոմկուսի ղեկավար Կ. Գոտվալդի միջոցով համանման ծանուցում արեց Չեխոսլովակիայի պրեզիդենտ Բեննեշին։ Որպեսզի Գերմանիան այդ հաշվով ոչ մի պատրանքներ չստեղծի իր համար, ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Մ. Մ. Լիտվինովը օգոստոսի 22-ին Մոսկվայում գերմանական դեսպան Շուլենբուրգին տեղեկացրեց, որ եթե բանը հասնի պատերազմի, ապա Սովետական Միությունը կաջակցի Չեխոսլովակիային, «իր խոսքը կպահի և իրենից կախված ամեն ինչ կանի»։ Այս թվարկումն ամենևին չի սպառում տվյալ հարցի վերաբերյալ սովետական կառավարության հայտարարությունները։ Սովետական դիրքորոշումը ծայրահեղ պարզ էր բոլորի համար՝ և՛ Չեխոսլովակիայի ղեկավարների, և՛ Գերմանիայի ղեկավարների, և՛ Անգլիայի ու Ֆրանսիայի ղեկավարների համար։

Բանը չսահմանափակվեց դիվանագիտական հայտարարություններով։ Սովետական կառավարությունը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց կարմիր բանակը մարտական պատրաստության մեջ դնելու համար այն հաշվով, որպեսզի առաջին իսկ աղդանշանով կարելի լինի այն շարժել Չեխոսլովակիային օգնություն ցույց տալու համար։ ՍՍՀՄ-ի արևմտյան սահմանների մոտ կենտրոնացվեցին 30 հրաձգային, 10 հեծելազորային դիվիզիաներ, 1 տանկային կորպուս, 3 տանկային և 12 ավիացիոն բրիգադներ։ Բացի այդ մարտական պատրաստության բերվեցին ևս 30 հրաձգային և 6 հեծելազորային դիվիզիաներ, 2 տանկային կորպուսներ և առանձին 15 տանկային բրիգադներ։ Իրականացվեցին նաև այլ միջոցառումներ այն ուժերի մոբիլիզացման համար,

որոնք նախատեսված էին օգտագործել Չեխոսլովակիային օգնություն ցույց տալու պլանների համապատասխան։

Չեխոսլովակիային օգնության հասնելու ՍՍՀՄ-ի պատրաստակամությունը, իր անկախությունը պաշտպանելու ուղղությամբ չեխոսլովակյան ժողովրդի վճռականության հետ միասին, կարող էր երկրի հուսալի պաշտպանություն հանդիսանալ Գերմանիայի ոտնձգություններից։ Բայց Չեխոսլովակիային դավաճանեցին նրա կառավարողները և նրա արևմտյան դաշնակիցները։ Չեխոսլովակյան կառավարող շրջանները պատրաստ էին իրենց երկիրը Հիտլերի ոտքերի առջև դնել, միայն թե նրա պաշտպանության գործում չհամագործակցեին ՍՍՀՄ-ի հետ։

Անգլիական կառավարությունը մտադիր էր Չեխոսլովակիան Հիտլերին հանձնելով վճարել վերջինիս համաձայնության համար՝ Անգլիայի հետ կնքելու մի այնպիսի համաձայնագիր, որը ապահովեր նրա գաղութների անձեռնմխելիությունը և նրա անվտանգությունը։ Հիտլերի հետ գործարքը տեղի ունեցավ 1938 թ. սեպտեմբերի 29-ին Մյունխենում, որտեղ Անգլիայի պրեմիեր մինիստր Չեմբեռլենը, ֆրանսիական կառավարության ղեկավար Դալադիեն, ֆաշիստական Իտալիայի ղեկավար Մուսոլինիի մասնակցությամբ Չեխոսլովակիան հանձնեցին Հիտլերին։ Չեխոսլովակիայից վերցվում էր նրա տերիտորիայի մի մասը հօգուտ Գերմանիայի. երկրի մնացած մասը մնաց անպաշտպան և 1939 թ. մարտին Գերմանիան այն զավթեց։ Դրա փոխարեն Հիտլերը Չեմբեռլենի հետ ստորագրեց մի դեկլարացիա այն մասին, որ Գերմանիան ու Անգլիան միմյանց դեմ երբեք պատերազմ չեն մղի։ Դեկտեմբերին համանման մի դեկլարացիա էլ ստորագրվեց Ֆրանսիայի և Գերմանիայի միջև։ Անգլիայի և Ֆրանսիայի ղեկավարները Չեխոսլովակիան այսպես հանձնելով Հիտլերին, նրա հետ կնքեցին չհարձակվելու վերաբերյալ պակտ։

Մյունխենի գործարքը ուղղված էր ոչ միայն չեխոսլովակյան ժողովրդի, այլև Սովետական Միության դեմ։ Բուրժուական լագերի օբյեկտիվ պատմաբաններից և ոչ մեկը ներկայումս հայտնի դարձած դիվանագիտական փաստաթղթերի լույսի տակ այլևս չի կասկածում, որ Չեխոսլովակիան Հիտլերին հանձնվեց որպես Սովետական Միության դեմ ապագա ագրեսիայի վճար։ Բերենք նման բնույթի միայն մեկ վկայություն։ Ամերիկյան պրոֆեսոր Բրյուվերը նշում է, որ «Մյունխենի և նրան նախորդած իրադարձությունների քաղաքական նշանակությունը ըմբռնելու համար անհրաժեշտ է հիշել, որ... Անգլիայի պահպանողական կուսակցությունը... սարսափով էր համակված Սովետական Միության և կոմունիզմի հանդեպ։ Այդ պատճառով նա անց էր կացնում նոր մակիավելիական քաղաքականություն, որը հիմնվում էր այն հույսի վրա, թե նացիզմն ու կոմունիզմը կընդհարվեն և միմյանց կոչնչացնեն»։

«Խաղաղարարները» Մյունխենում խիստ փոխեցին ուժերի հաշվեկշիռը Եվրոպայում հօգուտ Գերմանիայի և դրանով իսկ օժանդակեցին երկրորդ համաշխարհային պատերազմի ծագմանը մեկ տարի հետո։ Մյունխենից հետո Գերմանիան տերիտորյալ հավակնություններ ներկայացրեց Լեհաստանին, և ռազմական վտանգն արտակարգ չափով մեծացավ։ Անգլիական գործիչները, որոնք սկզբում հայտարարում էին, թե Մյունխենը մի ամբողջ սերնդի համար ապահովեց խաղաղությունը, մոլեգին միջոցառումներ էին ձեռնարկում լրացուցիչ սպառազինվելու համար։ Բայց Անգլիան վերասպառազինվում էր ոչ թե ագրեսիայի դեմ պայքարելու համար, այլ այն բանի համար, որպեսզի ավելի շահավետ դիրքերից շարունակի մյունխենյան քաղաքականությունը։

30-ական թվականների վերջին տնտեսական ու քաղաքական հակասու-

թյունները կապիտալիստական սիստեմի ներսում ծայրահեղ սրման հասան։ Այդ ժամանակ բուրժուական պետությունների զարգացման անհավասարաչափությունը հասցրեց այն բանին, որ նրանց միջև գոյություն ունեցող ուժերի հարաբերակցությունը, որը մի ժամանակ որոշում էր առաջին համաշխարհային պատերազմից հետո խաղաղ կարգավորման պայմանները, արմատականորեն փոխվեց։ 30-ական թվականների երկրորդ կեսին Գերմանիան ԱՄՆ-ից հետո արդեն երկրորդ տեղն էր գրավում արդյունաբերական արտադրության ծավալով։ Մի շարք կարևոր սինթետիկ նյութերի, մետաղամշակման հաստոցների և մի քանի այլ արտադրանքների գծով Գերմանիան առաջ անցավ ԱՄՆ-ից և առաջին տեղն էր գրավում կապիտալիստական աշխարհում։ Գերմանիան Կենտրոնական և Հարավ-Արևելյան Եվրոպայի շուկաներում համառորեն նեղում էր Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ապրանքներին, ամենասուր մրցակցային պայքարում նվաճելով այդ շուկաները։ Իրացման շուկաների համար մղվող պայքարը Գերմանիան փոխադրեց նաև Լատինական Ամերիկայի երկրները, որտեղ նա հանդիպում էր ԱՄՆ-ի կատաղի մրցակցությանը։ Ձեռքը մեկնելով նավթի աղբյուրներին, Գերմանիան ամեն կերպ ակտիվացնում էր առևտուրը Միջին Արևելքի երկրների հետ, որը մեծ տագնապ էր առաջացնում Անգլիայում։ Վերջապես Գերմանիան ավելի ու ավելի համառորեն էր պահանջում ետ վերադարձնել առաջին համաշխարհային պատերազմից հետո իրենից խլված գաղութները։ Այդ պահանջը ուղղված էր ամենից առաջ Անգլիայի դեմ։

Միջիմպերիալիստական հակասությունների սրումը կապիտալիստական աշխարհին մոտեցնում էր մեծ պատերազմի եզրը։ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի քաղաքական անհեռատես ղեկավարները պատրանքային հաշիվներ էին կառուցում այն մասին, թե իրենց կհաջողվի միջիմպերիալիստական հիմնական հակասությունները լուծել ՍՍՀՄ-ի հաշվին, պատերազմ կազմակերպելով ֆաշիստական տերությունների և Սովետական Միության միջև։ Արևմտյան տերությունների հակասովետական այդ քաղաքականությունն ուժեղացնում էր նոր համաշխարհային պատերազմի ծագման վտանգը։

1939 թ. անգլո-ֆրանս-սովետական բանակցությունները

1939 թ. սկզբին միջազգային իրադրությունը Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության առջև դրեց չափազանց բարդ խնդիր՝ հարկավոր էր որոշել, թե արտաքին քաղաքական ինչպիսի անհետաձգելի գործողություններ պետք է ձեռնարկել ստեղծված իրադրության պայմաններում։ Միջազգային իրադրության վերլուծությունը և սովետական արտաքին քաղաքականության խնդիրների ձևակերպումը կատարվեցին 1939 թ. մարտին Համկ(բ)Կ XVIII համագումարի կողմից։ Համկ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը պարունակում էր համաշխարհային այն հակասությունների վերլուծությունը, որոնք հասցրին իմպերիալիստական խոշոր տերությունների բաժանմանը միմյանց հակադրված երկու լագերների։ Զեկուցման մեջ ցույց էր տրվում, թե ինչպես այդ լագերներից մեկը «չմիջամտության» քաղաքականության օգնությամբ փորձում է պատերազմն ուղղել ՍՍՀՄ-ի կողմը և հրահրում ագրեսիվ պետությունների հարձակումը Սովետական Միության վրա։ «Չմիջամտելու քաղաքականությունը,— հայտարարվում էր զեկուցման մեջ,— նշանակում է ագրեսիայի թողտվություն, պատերազմի սանձազերծում... Չմիջամտության քաղաքականության մեջ զգացվում է հետևյալ ձգտումը, ցանկությունը. չխանգարել ագրեսորներին կատարելու իրենց սև գործը, չխանգարել, ասենք, Ճապոնիային խճճվելու պատերազմի մեջ Չինաստանի, իսկ ավելի լավ է Սովետական Միության հետ, չխանգարել, ասենք,

Գերմանիային խրվելու եվրոպական գործերի մեջ, խճճվելու պատերազմի մեջ ընդդեմ Սովետական Միության, պատերազմի բոլոր մասնակիցներին թույլ տալ ... միմյանց թուլացնելու և քայքայելու, իսկ հետո, երբ նրանք բավականաչափ թուլանան, հանդես գալ բեմում թարմ ուժերով, հանդես գալ, իհարկե, «ի շահ խաղաղության», և պատերազմի թուլացած մասնակիցներին իր պայմանները թելադրել։

Ե՞վ էժան է, և՛ հաճելի»[1]։ «Խաղաղարարներին» նախազգուշացում արվեց այն մասին, որ նրանց պրովոկացիոն խաղը կարող է իրենց իսկ համար լուրջ ձախողմամբ ավարտվել։ Հաշվի առնելով առաջացած իրադրությունը, Համկ(բ)Կ Կենտկոմի զեկուցման մեջ նշվում էր, որ կուսակցության և կառավարության առջև կանգնած է հետևյալ խնդիրը՝ բոլոր երկրների հետ այսուհետև ևս իրականացնել խաղաղության և գործարար կապերի ամրապնդման քաղաքականություն, պահպանել զգուշություն և պատերազմի պրովոկատորներին թույլ չտալ կոնֆլիկտների մեջ ներգրավելու մեր երկիրը, ամեն կերպ ամրապնդել կարմիր բանակի և ռազմածովային նավատորմի հզորությունը, ամրապնդել բարեկամության միջազգային կապերը բոլոր այն երկրների աշխատավորների հետ, որոնք շահագրգռված են խաղաղությամբ և ժողովուրդների միջև բարեկամությամբ։

XVIII համագումարում կատարված միջազգային հարաբերությունների վերլուծության ճշգրտությունը հավաստված է պատմությամբ։ Իրադրության ճշգրիտ վերլուծությունը սովետական կառավարությանն օգնեց արտաքին քաղաքական պրոբլեմների նկատմամբ ճիշտ դիրք գրավել մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը մնացած ամիսների ընթացքում։

1939 թ. գարնան և ամռան միջազգային խոշոր իրադարձություն եղան Եվրոպայում ագրեսիային հակազդելու նպատակով ՍՍՀՄ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև տեղի ունեցած բանակցությունները ռազմա-քաղաքական դաշինք կնքելու վերաբերյալ։ Մեկ ամսվա ընթացքում՝ մարտի 18-ից մինչև ապրիլի 17-ը անգլիական կառավարությունը Սովետական Միությանը բացահայտ պրովոկացիոն բնույթի առաջարկություններ էր անում։ Սովետական կառավարությանը առաջարկում էին այս կամ այն ձևով հանդես գալ Գերմանիայի դեմ, ընդ որում ոչ մի աջակցություն ու օգնություն չխոստանալով։ Դրանք ՍՍՀՄ-ին Գերմանիայի հետ բախելու նախկին փորձերն էին։ Սովետական կառավարությունը այդ դեմարշներին պատասխանեց ապրիլի 17-ին Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների քննարկմանը ներկայացնելով երեք երկրների միջև փոխադարձ օգնության արդյունավետ պայմանագիր կնքելու առաջարկությունը։ Սովետական նախագիծը նախատեսում էր, որ Անգլիան, Ֆրանսիան և ՍՍՀՄ-ը համաձայնագիր են կնքելու անհապաղ փոխօգնության մասին, ներառյալ նաև ռազմականը, պայմանավորված յուրաքանչյուր պետության դեմ Եվրոպայում ագրեսիա կատարվելու դեպքում։ Միաժամանակ Անգլիան, Ֆրանսիան և ՍՍՀՄ-ը պետք է պարտավորվեն ամեն տեսակի, այդ թվում նաև ռազմական օգնություն ցույց տալ Բալթիկ և Սև ծովերի միջև գտնվող և ՍՍՀՄ-ին սահմանակցող արևելաեվրոպական պետություններին՝ նրանց դեմ կատարված ագրեսիայի դեպքում։ Այն ժամանակ գոյություն ունեցած պայմաններում միայն այդպիսի ռազմա-քաղաքական դաշինքը կարող էր կանխել գերմանական ագրեսիան կամ էլ, եթե բանը պատերազմի հասներ, ապահովել արագ հաղթանակը Գերմանիայի դեմ։ Դա հասկանում էին ոչ մի-

[1] XVIII съезд ВКП(б), М., 1939, стр. 13.

այն ՍՍՀՄ-ում, այլև Անգլիայում և Ֆրանսիայում, ուր այդ ժամանակ կառավարող շրջաններում, չխոսելով այլևս առաջադիմական կազմակերպությունների մասին, ավելի հզոր էին հնչում այն ձայները, որոնք պահանջում էին դաշնակցային հարաբերություններ հաստատել։ Այդ պահանջների հիմքում ընկած էր Անգլիայի և Ֆրանսիայի արմատական շահերի, նրանց անվտանգության մասին մտահոգությունը, անվտանգություն, որը չէր կարող ապահովվել առանց ՍՍՀՄ-ի հետ դաշինքի։

Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները դիմեցին Սովետական Միության հետ բանակցություններին, թեև, ինչպես ցույց տվեց բանակցությունների ժամանակ նրանց գրաված դիրքը, նրանք մտադիր չէին ՍՍՀՄ-ի հետ ռեալ դաշինք կնքելու։ Եթե Ֆրանսիայի կառավարող շրջանները դեռ ինչ-որ տատանումներ էին թույլ տալիս այդ հարցում, ապա անգլիական կառավարող շրջանների համար բանակցությունները սոսկ մանևր էին ծառայում։

Անգլիական կառավարությունը ՍՍՀՄ-ի հետ բանակցություններն օգտագործեց համընդգրկուն համաձայնագրի վերաբերյալ անգլո-գերմանական բանակցություններում իր դիրքերն ամրապնդելու և Գերմանիայի վրա ճնշում գործադրելու համար։ Այդ համաձայնագիրը Անգլիային և նացիստական Գերմանիային կդարձներ Եվրոպայում և աշխարհում տիրող դրության տերը։ Բանակցությունները Սովետական Միությունից խորապես գաղտնի վարվում էին Լոնդոնում, մոսկովյան բանակցություններին զուգընթաց։ Այդ գործողություններում արտահայտվեց անգլիական կառավարության՝ ՍՍՀՄ-ի հետ նրա ունեցած հարաբերություններում ուխտադրժության ամբողջ խորությունը։ Մոսկովյան բանակցությունները Անգլիայի համար նաև յուրահատուկ ապահովագրում էին այն դեպքի համար, եթե չհաջողվեր Գերմանիայի հետ պայմանավորվել։ Այդ դեպքում ի նկատի էր առնվում ՍՍՀՄ-ից պարտավորություններ ձեռք բերել հանդես գալու ի պաշտպանություն Անգլիայի և նրա դաշնակիցների՝ առանց նրանց կողմից փոխադարձության։ Անգլիայի, ինչպես և Ֆրանսիայի մասնակցությունը ՍՍՀՄ-ի հետ վարվող բանակցություններին նաև տուրք էր այդ երկրների հասարակական կարծիքին, որն ավելի ու ավելի հաստատակամորեն էր պահանջում պայմանավորվածության հասնել ՍՍՀՄ-ի հետ։

Անգլիան և նրան խոնարհաբար հետևող Ֆրանսիան յուրացրին բանակցությունների ժամանակ ձգձգումների տակտիկան։ ՍՍՀՄ-ի պարտնյորները համառորեն խուսափում էին փոխադարձ պարտավորություններ ընդունելուց։ Ըստ էության, գործը տարվում էր դեպի այն բանը, որ ՍՍՀՄ-ը պետք է հանդես գար Անգլիային, Ֆրանսիային և նրանց դաշնակիցներին օգնելու համար, իսկ Անգլիան ու Ֆրանսիան ՍՍՀՄ-ի դեմ ագրեսորի հարձակման դեպքում մտադիր էին այս կամ այն ձևով ձեռքերի ազատություն պահպանել։

Բանակցությունները գործնական որոշումների ռելսերը փոխադրելու համար սովետական կառավարությունը պնդում էր, որ դաշինքի պայմանագրի հետ միաժամանակ ստորագրվի ռազմական կոնվենցիա, որը նախատեսի դաշինքի մասնակիցների փոխադարձ օգնության ձևերն ու չափերը։ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները դժկամությամբ համաձայնեցին դրա հետ և Մոսկվա ուղարկեցին բավական նվազ հեղինակավոր զինվորական միսիաներ, նրանց հանձնարարելով «բանակցությունները վարել չափազանց դանդաղ»։ Այն դիրեկտիվի էությունը, որը անգլիական կառավարությունը տվեց իր զինվորական միսիային, հանգում էր նրան, որ այդ կառավարությունը չի ցանկանում որևէ որոշակի պարտավորություններ ստանձնել, որոնք կարող էին նրա ձեռքերը կապել։

Անգլիայի և Ֆրանսիայի զինվորական պատվիրակությունները ոչ միայն խուսափում էին ռեալ պարտավորություններ ստանձնելուց։ Նրանք փորձում էին սովետական զինվորական պատվիրակության հետ մղվող բանակցություններն օգտագործել բացահայտորեն հետախուզական բնույթի տեղեկություններ ստանալու համար։ Նրանց մանրամասն հետաքրքրում էր նաև սովետական բանակի և ռազմածովային նավատորմի վիճակը, նրանց հնարավոր մոբիլիզացման տեմպերը, սովետական հրամանատարության ստրատեգիական պլանները։ Միսիաները Անգլիայի և Ֆրանսիայի համապատասխան մարմիններից ստացել էին հարցերի հատուկ ցուցակներ, որոնք պետք է պարզաբանվեին Մոսկվայի բանակցությունների ընթացքում։ Այդ հարցատոմսերը նրանք սովորել էին անգիր և դրանց տեքստերը ոչնչացրել մինչև Մոսկվա ժամանելը։ Այդ հարցերի մեջ կային նաև այնպիսիները, ինչպես պատերազմ վարելու հարցերում ՍՍՀՄ-ի քաղաքականության հիմնական գաղափարը, սովետական գլխավոր շտաբի կարծիքը Գերմանիայի և Իտալիայի ստրատեգիայի մասին, ՍՍՀՄ-ի նավթի պաշարները, սովետական ավիացիոն բենզինի սպեցիֆիկացումը։

Ինչ վերաբերում է սովետական զինվորական պատվիրակությանը, ապա նա համոզիչ կերպով ցուցադրեց Սովետական Միության ցանկությունը՝ դիմել Անգլիայի և Ֆրանսիայի հետ ռազմական ջանքերի միավորմանը Գերմանիային կոլեկտիվ հակահարված տալու համար։ Սովետական պատվիրակությունը հայտարարեց, որ Գերմանիայի դեմ համատեղ պայքարելու համար ՍՍՀՄ-ը պատրաստ է 8—20 օրվա ընթացքում դուրս բերել 120 հետևակային և 16 հեծելազորային դիվիզիա, 5 հազ. ծանր հրանոթ, 9—10 հազ. տանկ, ավելի քան 5 հազ. մարտական ինքնաթիռ։ Սովետական Միությունը Անգլիայի և Ֆրանսիայի դեմ Գերմանիայի հարձակման դեպքում պատրաստ էր դուրս բերել այն զինված ուժերի քանակության 70 տոկոսը, որ Անգլիան ու Ֆրանսիան կշարժեին Գերմանիայի դեմ։ Դա նշանակում էր, որ Սովետական Միությունը դուրս կբերի 63 հետևակային և 6 հեծելազորային դիվիզիա՝ անհրաժեշտ մարտական տեխնիկայով հանդերձավորված ընդհանուր թվով մոտ 2 մլն մարդ։

Չհարձակման վերաբերյալ սովետա-գերմանական պայմանագրի կնքումը

Համոզվելով, որ բանակցություններն Անգլիայի ու Ֆրանսիայի հետ արդյունք չեն տալիս, չնայած սովետական կառավարության գործադրած ջանքերին՝ իր պարտնյորներին ապացուցելու, որ ագրեսիայի դեմ ուղղված դաշինքը հավասարապես անհրաժեշտ է բանակցությունների բոլոր երեք մասնակիցներին, սովետական կառավարությունը ստիպված էր ընդունել դժվարին և շտապ որոշումներ։ Մի քանի ամիս շարունակ նա տարբեր ձևերով առաջարկություններ էր ստանում գերմանական կառավարությունից չհարձակման վերաբերյալ պակտ կնքելու մասին։ Անգլիայի ու Ֆրանսիայի հետ բանակցություններ վարելու ժամանակ ՍՍՀՄ կառավարությունն անտեսում էր գերմանական այդ դեմարշները։ Նա ցանկանում էր Անգլիայի ու Ֆրանսիայի հետ դաշինք կնքել ընդդեմ գերմանական ագրեսիայի, այլ ոչ թե Գերմանիայի հետ չհարձակման մասին պայմանագիր։ Քանի որ դաշինքն Անգլիայի ու Ֆրանսիայի հետ չէր ստացվում, Գերմանիայի հետ չհարձակման մասին պայմանագրից սովետական կառավարության հրաժարվելն անխուսափելիորեն կնշանակեր նրա հետ միայնակ, առանց դաշնակիցների շուտափույթ պատերազմ։ Դա կլիներ երկու ճակատով պատերազմ, որովհետև 1939 թ. ամռանը Սովետական Միությունը Հեռավոր Արևելքում ռազմական գործողություններ էր մղում ճապոնական ագրեսորի դեմ։ Ճապո-

նական ռազմամոլների հակասովետական պրովոկացիաները սովետական հեռավորարևելյան սահմաններում հակահարված ստացան կարմիր բանակի կողմից։ Սակայն ՍՍՀՄ-ի վրա Ճապոնիայի ռազմական մեծ հարձակման վտանգը բավական իրական էր։ 1939 թ. չէր կարելի հուսալ, թե Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը ՍՍՀՄ-ին օգնության կհասնեն երկու ճակատով նրա մղած պատերազմում։

Այդպիսի պայմաններում սովետական կառավարությունն արեց այն ժամանակ միակ հնարավոր քայլը՝ օգոստոսի 23-ին ստորագրեց չհարձակման սովետա-գերմանական պակտը։ Այդ էին պահանջում սովետական պետության ազգային շահերը և ՍՍՀՄ-ի ինտերնացիոնալ պարտքը։ Անգլիան ու Ֆրանսիան իրենց քաղաքականությամբ Սովետական Միությանը ստիպեցին դիմել Գերմանիայի հետ պակտ կնքելուն։

Պատմությունը ցույց է տվել Սովետական Միության արտաքին քաղաքականության ճշտությունը 1939 թ.։ Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության գործողությունները համապատասխանում էին լենինյան պահանջներին այն մասին, որ սոցիալիստական պետության քաղաքականությունը լինի առավելագույնս ճկուն։ 1939 թ. սովետական արտաքին քաղաքականությունը ցույց տվեց, թե ինչպես պետք է սոցիալիզմի շահերի համար օգտագործել իմպերիալիստական լագերի ներսում եղած հակասությունները։ Գերմանիայի հետ կնքված չհարձակման պակտը Սովետական Միությանն անհրաժեշտ էր այն բանի համար, որպեսզի ժամանակ շահի և շարունակի ՍՍՀՄ-ի վրա Գերմանիայի հավանական հարձակմանը հակահարված տալու նախապատրաստությունը։ Հիտլերի խոսքին սովետական կառավարությունը, իհարկե, չէր հավատում։ Բայց նա գտնում էր, որ պակտը ՍՍՀՄ-ին կտա պատերազմի որոշ հետաձգում։ Այդպես էլ ստացվեց։ Իր ժամանակ Վ. Ի. Լենինն ասում էր. «Այն ամենը..., ինչ կարող է տալ մեր դիվանագիտությունը, որպեսզի հետաձգի պատերազմի մոտենալը հեռացնելու համար..., մենք բանվորներին ու գյուղացիներին խոստանում ենք ամեն ինչ անել հաշտության համար։ Եվ մենք այդ կանենք»[2]։ Լենինյան այդ դրույթին համապատասխան էին գործում 1939 թ. կուսակցությունն ու կառավարությունը։ Գերմանիայի հետ կնքված չհարձակման պակտը ոչ միայն հետաձգեց ՍՍՀՄ-ի պատերազմի սկիզբը, այլև նրան թույլ տվեց զգալիորեն բարելավելու ստրատեգիական դիրքերը և 1941 թ. Գերմանիայի դեմ պաշտպանությունը վարել ավելի արևմուտք տեղափոխված սահմաններում։

Սովետա-գերմանական պակտը սրեց ագրեսորների լագերում եղած հակասությունները, որոնք թուլացնում էին այդ լագերը։ ՍՍՀՄ-ը կարողացավ խուսափել երկու ճակատով պատերազմից։ Գերմանիան ու Ճապոնիան միաժամանակ հանդես չեկան սովետական պետության դեմ։ Դա Սովետական Միությանն օգնեց դիմանալ Գերմանիայի դեմ մղված պայքարի ծանրությանը։ Վերջապես չհարձակման պակտը, կանխելով իմպերիալիստական տերությունների միասնական հակասովետական ճակատի ստեղծումը, անհրաժեշտ պայմաններ նախապատրաստեց հակահիտլերյան կոալիցիայի կազմավորման համար հետագայում, երբ իրադարձությունների ընթացքը Անգլիային ու ԱՄՆ-ին համոզեց, որ միայն ՍՍՀՄ-ի հետ դաշինք կնքած կարող են նրանք շահել երկրորդ համաշխարհային պատերազմը։

Ստորագրելով չհարձակման պակտը, Սովետական Միությունը աշխարհում միակ խոշոր սոցիալիստական պետությունն էր։ Այն բանից, թե հետագայում ևս, արդյոք, կշարունակի՞ գոյություն ունենալ այդ պետությունը, կախված էր համաշխարհային սոցիալիստական հեղափոխության բախտը։ Այդ պատճառով, միջոցառումներ ձեռնարկելով սոցիալիզմը ՍՍՀՄ-ում պահպանելու համար, կուսակցությունն ու սովետական կառավարությունը գործում էին ինտերնացիոնալորեն, հոգատարություն հանդես բերելով ոչ միայն իրենց երկրի ազգային շահերի մասին, այլև հանուն համաշխարհային սոցիալիզմի շահերի։

ՍՍՀՄ-ի քաղաքական ու զաղափարական հակառակորդները Սովետական Միության այդ ժամանակվա գործողություններին վերագրում են տարբեր անբարեհաս մոտիվներ։ Դա բացատրվում է իմպերիալիստական տերությունների պրովոկացիոն քաղաքականությունից հասարակայնության ուշադրությունը շեղելու ձգտումով, տերություններ, որոնք այն ժամանակ խաղում էին ժողովուրդների բախտի հետ։ Բայց մեզ թշնամի լագերում էլ կարելի է հանդիպել 1939 թ. սովետական արտաքին քաղաքականության ռեալիստական գնահատականներ։ Այսպիսին է անվիճելի փաստերի ուժը։ «Այդ պակտը,— գրում է, օրինակ, անգլիական պատմաբան Թեյլորը,— ո՛չ դաշինք էր, ո՛չ էլ Լեհաստանի բաժանման մասին համաձայնագիր։ Մյունխենը իրոք դաշինք էր, որը ստեղծվել էր բաժանման համար. անգլիացիներն ու ֆրանսիացիները բաժանումը թելադրեցին չեխերին։ Սովետական կառավարությունը այդպիսի գործողություններ չձեռնարկեց լեհերի նկատմամբ։ Նա պարզապես խոստացավ չեղոք մնալ, այսինքն՝ արեց այն, ինչի մասին նրան միշտ խնդրում էին լեհերը և ինչը նախատեսնում էր արևմուտքի քաղաքականությունը։ Ավելին, համաձայնագիրը վերջին հաշվով հակագերմանական էր, որովհետև պատերազմի դեպքում այն սահմանափակում էր գերմանական առաջխաղացումը դեպի Արևելք»։

Անգլիան ու Ֆրանսիան, հրաժարվելով ՍՍՀՄ-ի հետ դաշինքի մեջ մտնել ընդդեմ ծավալված ագրեսիայի, Գերմանիային հնարավորություն տվեցին սանձազերծել երկրորդ համաշխարհային պատերազմը։ Դա ագրեսորներին խաղաղեցնելու քաղաքականության, Մյունխենի քաղաքականության օրինաչափ հետևանքն էր, որի համար պատասխանատվություն են կրում Անգլիայի, Ֆրանսիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի այն ժամանակվա կառավարությունները։ Հենց արևմտյան տերությունների կառավարող շրջաններն էին, որ, հրաժարվելով ընդունել սովետական կառավարության բազմաթիվ առաջարկությունները կոլեկտիվ անվտանգության սիստեմի ստեղծման վերաբերյալ, օգնեցին մարդկությանը նետելու նրա պատմությանը հայտնի պատերազմներից ամենասարսափելի պատերազմի մեջ։ Նրանց քաղաքականությունն ագրեսորների հետ գործարքի քաղաքականություն էր, այսինքն՝ օբյեկտիվորեն հենց իմպերիալիզմի էությունից բխող պատերազմի քաղաքականություն։

ՍՍՀՄ-ի՝ 1924—1939 թթ., ինչպես և ցանկացած այլ ժամանակվա արտաքին քաղաքականությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի լենինյան քաղաքականություն էր։ Վիթխարի դժվարություններ հաղթահարելով, Սովետական Միությունը կատարեց իր ինտերնացիոնալ պարտքը, բազմակողմանի օգնություն ցույց տալով համաշխարհային բանվորական, հեղափոխական, դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժմանը։ ՍՍՀՄ-ի արտաքին քաղաքականության մեջ զուգակցում և սերտորեն միահյուսվում էին ինտերնացիոնալի և ազգայինի տարրերը։ Սոցիալիստական հասարակության կառուցումը ՍՍՀՄ-ում համապատասխանում էր ոչ միայն նրա ժողովուրդների

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 465։

ազգային շահերին, այլև միջազգային սոցիալիզմի շահերին։ Սովետական Միությունն այդ ժամանակաշրջանում հետևողականորեն կենսագործում էր նաև տարբեր սոցիալ-տնտեսական սիստեմներ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության լենինյան սկզբունքը։ Ի շահ խաղաղության համար մղվող պայքարի նա տարբեր կոնտակտների ու համագործակցության դիմեց բուրժուական պետությունների հետ։ Սովետական կառավարության այդ գործողությունները նույնպես համապատասխանում էին պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին, քանի որ դրանք ուղղված էին ժողովուրդների միջև խաղաղության ապահովմանը, ինչում որ միշտ շահագրգռված էին աշխատավոր դասակարգերը, և ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը։

Քննարկվող ժամանակաշրջանում սովետական արտաքին քաղաքականության հաջողությունն անվիճելի է։ Նա կարողացավ արտաքին պայմաններ ապահովել ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։ Սովետական արտաքին քաղաքականությունը միջազգային ավելի բարենպաստ պայմաններ ստեղծեց նաև սոցիալիստական կարգերի պաշտպանության համար, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը։

1924—1939 թթ. միջազգային հարաբերությունների աղբյուրներն ու պատմագրությունը

Վ. Ի. Լենինի աշխատությունները պատմագիտությանը հնարավորություն են տալիս ճիշտ մոտեցում գտնել 1924—1939 թթ. ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների ծայրահեղ բարդ պրոբլեմների նկատմամբ։ Առանց լենինյան տեսական ժառանգությունը հաշվի առնելու չի կարելի հասկանալ 20—30-ական թվականների իմպերիալիզմի էկոնոմիկան ու քաղաքականությունը, նրա հակասություններն ու զարգացման տենդենցները։ Այդ տեսակետից տվյալ ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունները հասկանալու համար վիթխարի նշանակություն ունի Վ. Ի. Լենինի «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» աշխատությունը։ Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմի լենինյան վերլուծությունը ամբողջապես և լիովին հաստատվել է միջազգային հարաբերությունների պատմությամբ։ Ինչպես և կանխատեսել էր Վ. Ի. Լենինը, իմպերիալիզմի և Վերսալ-Վաշինգտոնյան սիստեմի մեջ եղած հակասությունները պայթեցրին այն և մարդկությանը հասցրին երկրորդ համաշխարհային պատերազմին։

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախապատմությունը, նրա ծագման պայմաններն ու պատճառները հասկանալու համար անգնահատելի նշանակություն ունի լենինյան ցուցումը ժողովուրդների հասարակական կյանքի բացատրությունը ոչ միայն նրանց ժամանակակից դրության մեջ, այլև նրանց նախորդ զարգացման մեջ որոնելու անհրաժեշտության մասին։ «... Եթե դուք չեք ուսումնասիրել պատերազմող տերությունների երկու խմբերի քաղաքականությունը տասնամյակների ընթացքում,— որպեսզի չլինեն պատահականություններ, որպեսզի չվերցվեն առանձին օրինակներ,— եթե դուք ցույց չեք տվել այդ պատերազմի կապը նախընթաց քաղաքականության հետ, դուք ոչինչ չեք հասկացել այդ պատերազմից»[3]։

Որքան պատերազմներն անբաժանելի են իմպերիալիզմի էությունից, այնքան նրանք հակասում են աշխատավորների շահերին։ Հենց այդ պատճառով է, որ Սովետական Միության արտաքին քաղաքական գլխավոր լոզունգն է՝ «Խաղաղությո՞ւն ժողովուրդներին»։ «Պատերազմների ավարտումը, խաղաղությունը ժողովուրդների միջև, կողոպուտների ու բռնությունների դադարեցումը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— հենց մեր իդեալն է...»[4]։

Միջազգային հարաբերությունների գիտական վերլուծության լենինյան կարևոր սկզբունքը՝ ինչպես սոցիալիստական, այնպես էլ բուրժուական պետությունների ներքին ու արտաքին քաղաքականության անխզելի կապը հաշվի առնելն է։ Ընդհանրապես քաղաքականությունից առանձնացնել «արտաքին քաղաքականությունը»,— գրում էր Վ. Ի. Լենինը,— կամ առավել ևս՝ հակադրել արտաքին քաղաքականությանը ներքին քաղաքականությունը՝ արմատականորեն սխալ, ոչ մարքսիստական, ոչ գիտական միտք է»[5]։ Հետևաբար, 20—30-ական թվականների միջազգային հարաբերությունները կարելի է ճիշտ հասկանալ միայն այդ ժամանակաշրջանի կարևորագույն երկրների ներքին զարգացման պատմության և հատկապես դրանց տնտեսական ու սոցիալական զարգացման պատմության հետ զուգակցելով։

Միջազգային հարաբերությունների վերլուծության լենինյան սկզբունքներն առավել լիակատարությամբ մարմնավորվել են ՍՄԿԿ և սովետական կառավարության փաստաթղթերում։ Քննարկվող ժամանակաշրջանի գծով դրանք ամենից առաջ ՍՄԿԿ XIII—XVIII համագումարների նյութերն են։ Միջազգային հարաբերությունների վերլուծություն են պարունակում ՍՄԿԿ Կենտկոմի՝ համագումարներին տված զեկուցումները և համագումարներում ընդունված համապատասխան բանաձևերը։ Այդ նյութերը մտնում են համագումարների՝ հրապարակված սղագրական հաշվետվությունների մեջ։ Առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՍՄԿԿ Կենտկոմի զեկուցումը XVIII համագումարին (1939 թ.), որտեղ տրված է երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակի միջազգային հարաբերությունների և այդ պատերազմի ծագման պատճառների խորապես գիտական, հետագայում պատմության կողմից հաստատված վերլուծությունը։

Աղբյուրների այդ խմբին են հարում Կոմունիստական ինտերնացիոնալի, նրա V—VII կոնգրեսների և այդ կոնգրեսների միջև ընկած ժամանակաշրջանում ԿԻԳԿ պլենումների նյութերը։ Այդ նյութերը համաշխարհային կոմունիստական շարժման գործիչների կոլեկտիվ մարքսիստական մտքի արգասիքն են[6]։ Նախապատերազմյան միջազգային հարաբերությունների առաջատար տենդենցները հասկանալու համար անգնահատելի նշանակություն ունեն Կոմինտերնի VII կոնգրեսի (1935 թ.) նյութերը։

Միջազգային հարաբերությունների և ՍՍՀՄ-ի արտաքին քաղաքականության ուսումնասիրության համար կարևորագույն աղբյուրներ են դիվանագիտական փաստաթղթերի սովետական հրապարակումները։ «ՍՍՀՄ արտաքին քաղաքականության փաստաթղթերի» հրատարակությունն իրականացնում է ՍՍՀՄ Արտաքին գործերի մինիստրությանն առընթեր դիվանագիտական փաստաթղթերի հրատարակման հանձնաժողովը։ 1924 թ. հետո մինչև ներկայիս ժամանակն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ լույս են տեսել 8 հատորներ (VII—XIV), որոնք ընդգրկում են 1924—1931 թթ. իրադարձությունները։ Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերի հետ մեկտեղ այդ հատորներում հրապարակվում են նաև օտարերկրյա փաստաթղթեր, որոնք

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 505։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 370։

[5] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 43։

[6] Տե՛ս «Коммунистический Интернационал в документах. 1919—1932». М., 1933.

օգնում են լավ հասկանալու ինչպես սովետական դիվանագիտության գործունեությունները, այնպես էլ միջազգային հարաբերություններն առհասարակ։

1948 թ. Սովետական ինֆորմացիոն բյուրոն հրապարակեց «Պատմության կեղծարարները» պատմական տեղեկանքը, որը օգնում է պարզելու երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների ամբողջ կոմպլեքսը։ Տեղեկանքում օգտագործված են մեծ քանակությամբ նյութեր ու փաստաթղթեր։ Դրանց զգալի մասը այդ ժամանակ հրապարակվեց առաջին անգամ։

Միաժամանակ ՍՍՀՄ արտգործմինիստրությունը հրապարակեց Գերմանիայի արտգործմինիստրության արխիվից վերցված ռազմավարական դիվանագիտական փաստաթղթերի երկու հատոր՝ «Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակի փաստաթղթեր և նյութեր»։ Այդ հատորները համոզիչ կերպով մերկացրին գործարքի ու ագրեսիաների խրախուսման քաղաքականությունը, որն իրականացվում էր 1939 թ. Անգլիայի կառավարության կողմից։

1959 թ. «Միջազգային կյանք» ամսագրում (№ 2—3) հրապարակված են 1939 թ. օգոստոսին ՍՍՀՄ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի զինվորական ներկայացուցիչների խորհրդակցության արձանագրությունները։ Դրանց հետ ծանոթանալն օգնում է հասկանալու ագրեսիային հակահարված տալու կոլեկտիվ ճակատի ստեղծումը սաբոտաժի ենթարկած Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների իսկական դիրքը։

1924—1939 թթ. միջազգային հարաբերությունների գծով սովետական գիտնականների ընդհանրացնող աշխատությունների թվից հարկավոր է նշել հետևյալ հրապարակումների համապատասխան գլուխները՝ «Միջազգային հարաբերությունների և ՍՍՀՄ արտաքին քաղաքականության պատմություն», հ. I։ Ա. Ա. Ախտամզյանի խմբ.։ Մ. 1967, «Դիվանագիտության պատմություն», հ. III։ Ա. Ա. Գրոմիկոյի, Ի. Ն. Զեմսկովի, Վ. Ա. Զորինի և ուրիշների խմբ., «ՍՍՀՄ արտաքին քաղաքականության պատմություն», մ. I, 1917—1945 թթ.։ Բ. Ն. Պոնոմարյովի, Ա. Ա. Գրոմիկոյի, Վ. Մ. Խվոստովի խմբ.։ Մ., 1966։ Այդ ընդհանրացնող աշխատությունների համառոտ գնահատականը պարունակվում է ներկա դասագրքի IV գլխում։ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ հեղինակների մի խումբ՝ Ա. Ա. Ախտամզյանը, Ն. Ի. Կապչենկոն, Վ. Գ. Տրուխանովսկին և Ն. Ն. Յակովլևը լույս ընծայեցին «Վ. Ի. Լենինը և սովետական արտաքին քաղաքականությունը» գիրքը, որի մեջ մանրամասն քննարկվում է միջազգային հարաբերությունների և սոցիալիստական արտաքին քաղաքականության՝ Վ. Ի. Լենինի ստեղծած տեսությունը և ցույց տրվում, թե ինչպես Վ. Ի. Լենինի մահից հետո կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը լենինյան արտաքին քաղաքական սկզբունքները մարմնավորում էին միջազգային հարաբերությունների պատմության կարևորագույն էտապներում։ 1924—1939 թթ. ժամանակաշրջանին նվիրված է հատուկ գլուխ։

Սովետական պատմաբանները վերջին տարիներին հրապարակել են խոշորագույն բուրժուական պետությունների արտաքին քաղաքականության վերաբերյալ մի շարք ուսումնասիրություններ։ Այդ աշխատությունները հիմնվում են քննադատաբար օգտագործված և վերամշակված դիվանագիտական փաստաթղթերի արտասահմանյան հրապարակումներից, մամուլից, օտարերկրյա պատմաբաններից և այլ աղբյուրներից վերցված հարուստ փաստական նյութի վրա։ Վերլուծելով համապատասխան պետությունների կոնկրետ քաղաքականությունը, նրանք դրանով իսկ օգնում են ավելի լիակատար, հստակ ու խորը հասկանալ 1924—1939 թթ. միջազգային հարաբերությունների ամբողջ սիստեմը։ Ն. Ն. Ինոզեմցևը հրապարակել է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությանը նվիրված «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը իմպերիալիզմի դարաշրջանում» գիրքը (Մ., 1960), որտեղ 1924—1939 թթ. ժամանակաշրջանին են վերաբերում 2 և 3 գլուխները։ Վ. Գ. Տրուխանովսկու գրչին է պատկանում «Անգլիայի արտաքին քաղաքականությունը երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում» աշխատությունը (Մ., 1963)։ Ֆրանսիայի արտաքին քաղաքականության մասին պատմվում է Յու. Վ. Բորիսովի «Սովետա-ֆրանսիական հարաբերությունները (1924—1945)» աշխատության մեջ (Մ., 1964)։ Վ. Բ. Ուշակովը «Գերմանիայի արտաքին քաղաքականությունը Վայմարյան հանրապետության ժամանակաշրջանում (1918—1932 թթ.)» (Մ., 1958) և «Հիտլերյան Գերմանիայի արտաքին քաղաքականությունը (1933—1945 թթ.)» (Մ., 1961) գրքերում վերլուծում է Գերմանիայի արտաքին քաղաքականությունը։

Սովետական միջազգայնագետ-պատմաբանների ուսումնասիրությունները, որպես կանոն, ակտիվ բանավիճական են և ուղղված են բուրժուական կեղծարարների դեմ։ Այդ հանգամանքը դրանք օգտակար է դարձնում նաև միջազգային հարաբերությունների ժամանակակից պատմագրության ըմբռնման տեսակետից։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բոլոր բաժինների և գլուխների համար

Լենին Վ. Ի., *Զեկուցում հաշտության մասին հոկտեմբերի 26 (նոյեմբերի 8), Երկեր, հ. 26։*

Լենին Վ. Ի., *Նամակ ամերիկյան բանվորներին, Երկեր, հ. 28։*

Լենին Վ. Ի., *Պրոլետարական հեղափոխությունը և ռենեգատ Կաուցկին, Երկեր, հ. 28։*

Լենին Վ. Ի., *Նամակ Եվրոպայի և Ամերիկայի բանվորներին, Երկեր, հ. 28։*

Լենին Վ. Ի., *Թեզիսներ և զեկուցում բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին մարտի 4-ին, Երկեր, հ. 28։*

Լենին Վ. Ի., *Երրորդ Ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ, Երկեր, հ. 29։*

Լենին Վ. Ի., *Ողջույն հունգարական բանվորներին, Երկեր, հ. 29։*

Լենին Վ. Ի., *Ողջույն Բավարական Սովետական Հանրապետությանը, Երկեր, հ. 29։*

Լենին Վ. Ի., *Կենտրոնական կոմիտեի քաղաքական զեկուցումը դեկտեմբերի 2-ին, Երկեր, հ. 30։*

Լենին Վ. Ի., *«Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ», Երկեր, հ. 31։*

Լենին Վ. Ի., *Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ ընդունվելու պայմանները, Երկեր, հ. 31։*

Լենին Վ. Ի., *Զեկուցում միջազգային դրության և Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնական խնդիրների մասին հուլիսի 19-ին, Երկեր, հ. 31։*

Լենին Վ. Ի., *Ճառ կոմունիստական կուսակցության դերի մասին հուլիսի 23-ին, Երկեր, հ. 31։*

Լենին Վ. Ի., *Ազգային և գաղութային հարցերի հանձնաժողովի զեկուցումը հուլիսի 26-ին, Երկեր, հ. 31։*

Լենին Վ. Ի., *Ճառ Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ ընդունվելու պայմանների մասին հուլիսի 30-ին, Երկեր, հ. 31։*

Լենին Վ. Ի., *Զեկուցում ՌԿԿ տակտիկայի մասին 1921 թ. հուլիսի 5-ին, Երկեր, հ. 32։*

Լենին Վ. Ի., *Նամակ գերմանական կոմունիստներին, Երկեր, հ. 32։*

Լենին Վ. Ի., *Ռուսաստանի հեղափոխության հինգ տարին և համաշխարհային հեղափոխության հեռանկարները։ Զեկուցում Կոմինտերնի IV կոնգրեսում, 13 նոյեմբերի 1922 թ., Երկեր, հ. 33։*

Լենին Վ. Ի., *Հացի և հաշտության համար, Երկեր, հ. 26։*

Լենին Վ. Ի., *Նամակ Համառուսաստանյան Կենտգործկոմի, Մոսկվայի սովետի միացյալ նիստին, զոմարված ֆաբրիկա-գործարանային կոմիտեների և պրոֆեսիոնալ միությունների ներկայացուցիչների մասնակցությամբ 1918 թ. հոկտեմբերի 3-ին, Երկեր, հ. 28։*

Լենին Վ. Ի., *Նվաճվածը և գրանցվածը, Երկեր, հ. 28։*

Լենին Վ. Ի., *Նամակ Սիլվիա Պանկհերստին, Երկեր, հ. 29։*

Լենին Վ. Ի., *Ողջույն իտալական, ֆրանսիական և գերմանական կոմունիստներին, Երկեր, հ. 30։*

Լենին Վ. Ի., *Նամակ անգլիական բանվորներին, Երկեր, հ. 31։*

Լենին Վ. Ի., *Ճառ Բրիտանական բանվորական կուսակցության մեջ մտնելու մասին օգոստոսի 6-ին, Երկեր, հ. 31։*

Լենին Վ. Ի., *Իտալական սոցիալիստական կուսակցության ներսում մղվող պայքարի մասին, Երկեր, հ. 31։*

Լենին Վ. Ի., *Ճառ իտալական հարցի առթիվ հունիսի 28-ին, Երկեր, հ. 32։*

Լենին Վ. Ի., *Ընկեր Թոմաս Բելլին, Երկեր, հ. 32։*

Լենին Վ. Ի., *Ֆրանսիական կոմունիստական կուսակցության ագրարային հարցի վերաբերյալ թեզիսների մասին, Երկեր, հ. 33։*

Լենին Վ. Ի., *Հրապարակախոսի նոթեր, Երկեր, հ. 33։*

Լենին Վ. Ի., *Մենք չափազանց թանկ վճարեցինք, Երկեր, հ. 33։*

Լենին Վ. Ի., *«Սպարտակ» խմբի անդամներին, Երկերի լիակատար ժողովածու (ռուս.)։ հ. 50։*

Լենին Վ. Ի., *Ամերիկյան պրեզիդենտական ընտրությունների հանրագումարները ու նշանակությունը, Երկեր, հ. 18։*

Լենին Վ. Ի., *Նոր տվյալներ կապիտալիզմի զարգացման օրենքների մասին հոդվածների մեջ, Երկեր, հ. 22։*

Լենին Վ. Ի., *Պատասխան ամերիկյան „The Chicago Daili News" թերթի թղթակցի հարցերին, Երկեր, հ. 30։*

Լենին Վ. Ի., *Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա, Երկեր, հ. 22։*

Լենին Վ. Ի., *Սոցիալիզմը և պատերազմը (ՌՍԴԲԿ-ի վերաբերմունքը դեպի պատերազմը), Երկեր, հ. 21։*

Լենին Վ. Ի., *Պատերազմ և հեղափոխություն։ Դասախոսություն 1917 թ. մայիսի 14-ին (27)-ին, Երկեր, հ. 24։*

* * *

«Программа и Устав Коммунистического Интернационала», М., 1937.

Դիմիտրով Գ., *Ֆաշիզմի հարձակումը և Կոմունիստական ինտերնացիոնալի խնդիրները ֆաշիզմի դեմ բանվոր դասակարգի միասնության համար մղվող պայքարում, Ե., 1935։*

Тольятти П. (Эрколи). О задачах Коммунистического Интернационала в связи с подготовкой империалистами новой мировой войны. М., 1935.

«Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը», Ե., 1974։

«50 лет Великой Октябрьской социалистической революции». Тезисы ЦК КПСС. М., 1967.

«Тезисы ЦК КПСС к 100-летию со дня рождения В. И. Ленина». М., 1970.

Брежнев Л. И. Дело Ленина живет и побеждает. М., 1970.

* * *

«Всемирная история», т. VII-X, М., 1961—1963.

«Новейшая история стран Западной Европы и Америки», т. I, М., 1959.

Розанов Г. Л., Яковлев Н. Н. Новейшая история (1917—1945). Пособие для учителей. М., 1972.

«История зарубежных стран (1917—1945)». Учебное пособие. М., 1967.

«Хрестоматия по новейшей истории», т. I-III. М., 1960—1961.

«Историография новой и новейшей истории стран Европы и Америки». Учебное пособие. М., 1968.

1, 2, 3 և 28 գլուխների համար

«В. И. Ленин и Коммунистический Интернационал». М., 1970.

«Коммунистический Интернационал в документах. 1919—1932». М., 1933.

«Коммунистический Интернационал. Краткий исторический очерк», М., 1969.

«Коминтерн и его революционные традиции». М., 1969.

Палм Датт Р. Интернационал. Очерк истории коммунистического движения. 1848—1963. М., 1966.

«Ленин в борьбе за революционный Интернационал». М., 1970.

Лейбзон Б. М., Ширина К. К. Поворот в политике Коминтерна. М., 1965.

«Из истории Коминтерна». М., 1970.

Молчанов Ю. Л. Коминтерн у истоков политики единого пролетарского фронта. М., 1969.

«Основные этапы развития мирового революционного процесса после Октября». М., 1968.

«Великий Октябрь и мировой революционный процесс». М., 1967.

«Международное значение Великой Октябрьской социалистической революции». М., 1968.

4 և 29 գլուխների համար

«Документы внешней политики СССР», т. I-16 (1917-1923 гг.). М., 1957—1970.
«СССР в борьбе за мир накануне второй мировой войны (сентябрь 1938—август 1939 гг.)». Документы и материалы. Под ред. Громыко А. А. и др. М., 1971.
«История международных отношений и внешней политики СССР», т I, 1917--1939 гг. Редактор тома Ахтамзян В. А., М., 1967.
«В. И. Ленин и советская внешняя политика». Отв. Трухановский В. Г., М., 1969.
«История дипломатии», т. III, 1914—1939 гг. Изд. 2. Под ред. Громыко А. А., Земскова И. Н., Зорина В. В., Семенова В. С., Сказкина С. Д. и Хвостова В. М. М., 1965.
«История внешней политики СССР», т. I, 1917-1945 гг. Под ред. Пономарева Б. Н., Громыко А. А. и Хвостова В. М., М., 1966.

5 գլխի համար

Ульбрихт В. О ноябрьской революции 1918 г. в Германии. «Новая и новейшая история», 1959, № 1.
Тельман Э. Избранные речи и статьи, т. I-II. М., 1957—1958.
Пик В. Избранные произведения. М., 1956.
Гейден К. История германского фашизма, М., 1935.
Драбкин Я. С. Ноябрьская революция в Германии. М., 1967.
Розанов Г. Л. Германия под властью фашизма (1933—1939.). М., 1964.
Галкин А. Германский фашизм. М., 1967.
Файнгар И. М. Очерк развития германского монополистического капитала. М., 1958.
Винцер О. 12 лет борьбы против фашизма и войны. М., 1956.
«Германская история в новое и новейшее время», т. II, М., 1970.
Орлова М. И. Уроки немецкого Октября. М., 1965.

6 գլխի համար

Поллит Г. Избранные статьи и речи (1918—1939). М., 1955.
Аронович С. Британский монополистический капитал. М., 1956.
Волков Ф. Д. Англо-советские отношения (1924—1929). М., 1958.
Гурович П. В. Подъем рабочего движения в Англии в 1918—1926 гг. М., 1956.
Кучинский Ю. Положение рабочего класса в Англии (1832—1956). М., 1958.
Мочульский Н. Ф. Рабочее движение в Англии накануне второй мировой войны (1934—1939). М., 1968.
Милибенд Р. Парламентский социализм. М., 1964.
Мочульский Н. Ф. Кризис лейбористской партии в 1931 г. М., 1956.
Мэррей Д. Всеобщая стачка 1926 г. в Англии. М., 1954.
Трухановский В. Г. Новейшая история Англии. М., 1958.
Трухановский В. Г. Внешняя политика Англии на первом этапе общего кризиса капитализма (1918—1939). М., 1962.
Хатт А. Английское профсоюзное движение. М., 1954.

7 գլխի համար

Торез М., Избранные произведения, т. I, М., 1959.
Торез М. Народный фронт во Франции. М., 1937.
Торез М. Сын народа. М., 1960.
Дюкло Ж. Октябрь 1917 г. и Франция. М., 1967.
Бендрикова Л. А. Франция в 1829—1939 гг. М., 1957.
История Франции, т. III, М., 1973.
Кожевникова Л. П. Рабочее и социалистическое движение во Франции в 1917—1920 гг. М., 1959.
Рубинский Ю. И. Тревожные годы Франции. М., 1973.
Салычев С. С. Французская социалистическая партия между двумя войнами. М., 1973.

8 գլխի համար

«Очерки новой и новейшей истории США», т. II, М., 1960.
Лан В. И. США от первой до второй мировой войны. М., 1947.
Зубок Л. И., Яковлев Н. Н. Новейшая история США. М., 1972.
Ландберг Ф. Богачи и сверхбогачи. М., 1971.
Иноземцев Н. Н. Внешняя политика США в эпоху империализма. М., 1960.
Попова Е. И. США: борьба по вопросам внешней политики. 1919—1922 гг. М., 1966.
Фураев В. К. Советско-американские отношения, 1917—1939 гг., М., 1964.
Мальков В. Л. и **Наджафов Д. Г.** Америка на перепутье. Очерк социально-политической истории «нового курса» в США. М., 1967.
«История рабочего движения США в новейшее время», т. I, М., 1970.
Сивачев Н. В. Политическая борьба в США в середине 30-х годов XX в. М., 1966.
Яковлев Н. Н. Франклин Рузвельт—человек и политик. М., 1969.
Мальков В. Л. «Новый курс» в США. Социальные движения и социальная политика. М., 1973.
Золотухин В. П. Фермеры и Вашингтон. М., 1968.
Сивачев Н. В., Языков Е. Ф. Новейшая история США. 1917—1972 гг., М., 1972.

9 գլխի համար

Грамши А. Избранные произведения, т. I—III. М., 1957—1959.
Тольятти П. Избранные статьи и речи, т. I, М., 1965.
Тольятти П. Итальянская коммунистическая партия. М., 1959.
«Тридцать лет жизни и борьбы Итальянской коммунистической партии». М., 1953.
Алатри П. Происхождение фашизма. М., 1966.
История Италии, т. 3. М., 1971.
Филатов Г. С. Крах итальянского фашизма. М., 1961.
Лопухов Б. Р. Фашизм и рабочее движение в Италии. 1919—1922 г. М., 1968.
Кобылянский К. В. Великий Октябрь и революционное движение в Италии. (1917—1921). М., 1968.
Слободской С. М. Итальянский фашизм и его крах. М., 1946.

10 գլխի համար

«История Коммунистической партии Испании». М., 1961.
«Война и революция в Испании 1936—1939», т. 1, М., 1968.
Диас Хосе. Под знаменем Народного фронта. М., 1937.
Ибаррури Д. Единственный путь. М., 1962.
Ибаррури Д. Октябрьская социалистическая революция и испанский рабочий класс. М., 1960.
Гарсия Хосе. Испания Народного фронта. М., 1957.
Гарсия Хосе. Диктатура Примо де Ривера. М., 1963.
Гарсия Хосе. Испания XX века. М., 1967.
Лонго Л. Интернациональные бригады в Испании. М., 1960.
Майский И. М. Испанские тетради. М., 1962.
Пономарева Л. В. Рабочее движение в Испании в годы революции 1931—1934. М., 1965.
Пожарская С. П. Социалистическая рабочая партия Испании. 1931—1939. М., 1966.
Майданик К. Д. Испанский пролетариат и национально-революционная война. 1936—1937. М., 1960.
Прицкер Д. П. Подвиг испанской республики 1936—1939. М., 1962.
Тепер Е. М. Пламя над Овьедо. М., 1965.
«Проблемы рабочего и антифашистского движения в Испании». Сб. статей. М., 1960.

11 գլխի համար

Димитров Г. М. Письмо австрийским рабочим. М., 1934.
Копленинг Иоганн. Избранные произведения. М., 1963.

«Коммунисты в борьбе за независимость Австрии». М., 1956.
«СССР в борьбе за независимость Австрии». М., 1965.
Рубинштейн Е. И. Крушение Австро-Венгерской монархии. М., 1963.
Турок В. М. Очерки истории Австрии 1918—1922. М., 1955.
Турок В. М. Очерки истории Австрии. 1929—1938. М., 1962.

12 գլխի համար

«История венгерского революционного рабочего движения», т. 1. М., 1970.
Кун Бела. О Венгерской Советской республике. Избранные статьи и речи. М., 1966.
История Венгрии, т. 3. М., 1972.
Немеш Дэжё. Великая Октябрьская социалистическая революция и развитие революционных сил в Венгрии в 1917—1918 гг. М., 1957.
Липтан Эрвин. Венгерская Советская республика. М., 1970.
Немеш Дэжё. Венгрия в годы контрреволюции 1919—1920 гг. М., 1964.
Исраэлян В. Л., Нежинский Л. Н. Новейшая история Венгрии. М., 1962.

13 գլխի համար

«История Румынии (1918—1970 гг.)». М., 1971.
Виноградов В. Н., Карпещенко Е. Д., Лебедев Н. И., Языкова А. А. История Румынии нового и новейшего времени. М., 1964.
Лебедев Н. И. «Железная гвардия». Король II и Гитлер. М., 1968.
Языкова А. А. Румыния накануне второй мировой войны. 1934—1939 гг. М., 1963.
Копанский Я. М., Левит И. Э. Советско-румынские отношения (1929—1934 гг.). М., 1971.

14, 15, 17 և 20 գլուխների համար

Брандт Д. М. Нидерланды. М., 1953.
Грозос Апостолос. Непобедимая сила Октября. «Великий Октябрь и мировое революционное движение», М., 1967.
Кирьякидис Г. Д. Греция во второй мировой войне. М., 1967.
Колпаков А. Д. Ирландия — остров мятежный. М., 1965.
«Краткая история Албании». М., 1965.
Сегал Я. Е. Голландия (Нидерланды). М., 1940.
Орлова М. Е. Ирландия в поисках путей независимого развития. М., 1973.

18 գլխի համար

Кан А. С. Новейшая история Швеции. М., 1964.
Кан А. С. История Скандинавских стран. М., 1971.
Карпова Р. Ф. Признание СССР де-юре Норвегией, Швецией и Данией. «Скандинавский сборник», XII. Таллин, 1967.
Левлиен Э. Рабочий класс Норвегии и Октябрьская революция. «Международная жизнь», 1967, № 10.
Сегал Я. Е. Рабочее движение в скандинавских странах. (Швеция, Дания, Норвегия). М., 1927.
Фульгсанг В. Из истории рабочего и коммунистического движения Дании. «Скандинавский сборник», VI. Таллин, 1963.
Чернышева О. В. Рабочее движение в Швеции накануне второй мировой войны (1929—1939 гг.). М., 1971.

19 գլխի համար

«Из истории Коммунистической партии Финляндии». М., 1960.
Петров В. Финляндия в планах империалистических держав в 1918—1920 гг. Петрозаводск, 1961.
Сюкияйнен И. И. Революционные события 1917—1918 гг. в Финляндии. Петрозаводск, 1962.

Сюкияйнен И. И. Советско-финляндские отношения 1918—1920 гг. Петрозаводск, 1948.
Холодковский В. М. Революция 1918 года в Финляндии и германская интервенция. М., 1967.

21 գլխի համար

Куньял Алваро. Путь к победе. М., 1967.
Коломиец Г. Н. Очерки новейшей истории Португалии. М., 1965.

22, 23, 24, 25 և 26 գլուխների համար

Арисменди Р. Ленин, революция и Латинская Америка. М., 1973.
Кастро Ф. Речи и выступления. М., 1960.
Кодовилья В. Избранные статьи и речи. М., 1970.
Корвалан Л. Путь победы. М., 1971.
Мариатеги Х. К. Семь очерков истолкования перуанской действительности. М., 1963.
Ж. Амаду. Луис Карлос Престес. М., 1951.
Гаранин Ф. А. Народный фронт в Чили. 1936—1941. М., 1973.
Зубок Л. Империалистическая политика США в странах Карибского бассейна. 1900—1939 гг. М.-Л., 1948.
Коваль Б. И. История бразильского пролетариата. М., 1968.
«Куба: 10 лет революции». Под ред. Вольского В. и др. М., 1968.
Лаферте Э. Жизнь коммуниста. М., 1961.
Марианети Б. Аргентина: Современное положение и перспективы. М., 1966.
«Очерки истории Аргентины». М., 1961.
«Очерки истории Бразилии». М., 1962.
«Очерки истории Чили». М., 1967.
«Очерки новой и новейшей истории Мексики 1810—1945». М., 1960.
«Путь революционера. Жизнь и деятельность чилийского коммуниста Рикардо Фонсека» (1906—1949). М., 1955.
Рамирес Некочеа Э. История империализма в Чили. М., 1964.
Рока Б. Основы социализма на Кубе. М., 1961.
Слезкин Л. История Кубинской республики. М., 1966.
Строганов А. И. Борьба за единый рабочий и Народный фронт в Аргентине в 1933—1936 гг. М., 1969.
Фостер У. Очерк политической истории Америки, ч. III. М., 1953.
«Чили. Политика, экономика, культура». М., 1965.
Шульговский А. Ф. Мексика на крутом повороте своей истории. М., 1967.

27 գլխի համար

«Конституции государств Американского континента», ч. II. М., 1959. Канада.
Тим Бак. Тридцать лет коммунистического движения в Канаде (1921—1952). М., 1954.
Тим Бак. Влияние Великой Октябрьской революции на канадское рабочее движение. М., 1967.
Милейковский А. Г. Канада и англо-американские противоречия. М., 1958.
Лидин А. Государственный строй Канады. М., 1960.
«Распад Британской империи». М., 1964 **(Կանադայի մասին տե՛ս 289—320 էջերը).**

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1917 թվական

Նոյեմբեր, 7—8 — Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Ռուսաստանում։

1918 թվական

Հունվար, 6 — Արգենտինայի ինտերնացիոնալ սոցիալիստական կուսակցության (1920 թ.՝ կոմունիստական կուսակցություն) կազմավորումը։

Հունվար, 8 — Վ. Վիլսոնի 14 կետերը՝ «Աշխարհի հետպատերազմյան կարգավորման ծրագիրը»։

Հունվար, 14—25 — Քաղաքական ընդհանուր գործադուլը Ավստրո-Հունգարիայի խոշորագույն արդյունաբերական կենտրոններում։ Բանվորական դեպուտատների սովետների ստեղծումը։

Հունվար — Ֆինլանդական անկախ պետության ստեղծումը։

Հունվար-փետրվար — Բեսարաբիայի օկուպացումը Ռումինիայի կողմից։

Հունվար-ապրիլ — Բանվորական հեղափոխությունը Ֆինլանդիայում։

փետրվար, 1 — Ավստրո-Հունգարական ռազմական նավատորմի նավաստիների ապստամբությունը Կոտոր ծովախորշում։

մարտ, 3 — Սովետական պետության և Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլգարիայի, Թուրքիայի միջև հաշտության պայմանագրի ստորագրումը Բրեստ-Լիտովսկում։

մարտ — Սովետական պետության դեմ օտարերկրյա ինտերվենցիայի սկիզբը։

հուլիս — Գերմանական զորքերի վերջին հարձակումը Մարնայում։

օգոստոս, 29 — Ֆինլանդիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։

հոկտեմբեր, 7 — «Սպարտակ» խմբի և ձախ սոցիալիստների համագերմանական անլեգալ կոնֆերանսը։

հոկտեմբեր, 30 — Ավստրիայի առաջին բուրժուական կառավարության կազմավորումը։

հոկտեմբեր, 30—31 — Բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը Հունգարիայում։

հոկտեմբեր — Բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը Ավստրիայում։

հոկտեմբեր-նոյեմբեր — Հարսբուրգների Ավստրո-Հունգարական միապետության փլուզումը։

նոյեմբեր, 3 — Ավստրո-Հունգարիայի դուրս գալը պատերազմից։

նոյեմբեր, 3 — Ավստրիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։

նոյեմբեր, 3 — Նոյեմբերյան հեղափոխության սկիզբը Գերմանիայում (Քիլի նավաստիների զինված ապստամբությունը)։

նոյեմբեր, 9 — Գերմանական հանրապետության հռչակումը։ Էբերտի սոցիալ-դեմոկրատական կառավարության կազմավորումը։

նոյեմբեր, 11 — Զինադադարի պայմանների ստորագրումը Գերմանիայի կողմից՝ Կոմպիենում։

նոյեմբեր, սկիզբ — Հունաստանի բանվորների ընդհանուր կոնֆեդերացիայի (ՀԲԿ) կազմավորումը։

նոյեմբեր, 16 — Հունգարիայի հռչակումը հանրապետություն։

նոյեմբեր, 16—17 — Հոլանդիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։

նոյեմբեր, 24 — Հունգարիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։

նոյեմբեր — Հունաստանի սոցիալիստական բանվորական կուսակցության կազմավորումը (1924 թ. նոյեմբերից՝ կոմունիստական կուսակցություն)։

դեկտեմբեր, 14 — Ընդհանուր ընտրություններն Անգլիայում։ Պահպանողական-լիբերալ կոալիցիայի հաղթանակը։

դեկտեմբեր, 16—21 — Սովետների համագերմանական I համագումարը։

1918, դեկտեմբեր, 30—1919, հունվար, 1 — Գերմանիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։

1919 թվական

Հունվար, 15 — Կ. Լիբկնեխտի և Ռ. Լյուքսեմբուրգի սպանությունը։

Հունվար, 18—1920, հունվար, 21 — Փարիզի հաշտության կոնֆերանսը։

փետրվար, 6 — Ազգային սահմանադիր ժողովի բացումը Վեյմարում։

մարտ, 2—6 — III Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադիր I կոնգրեսը Մոսկվայում։

մարտ, 21 — Հունգարական Սովետական Հանրապետության հռչակումը։

ապրիլ, 13—30 — Բավարական Սովետական Հանրապետությունը։

ապրիլ — Ֆրանսիական էսկադրայի նավաստիների ապստամբությունը Սև ծովում։

մայիս, 1 — «Օրդինե նուովո» թերթի հիմնումը Գրամշիի գլխավորությամբ։

մայիս-հունիս — Ընդհանուր գործադուլը Վիննիպեգում (Կանադա)։

հունիս — Հունգարական Սովետական Հանրապետության սահմանադրության ընդունումը։

հունիս, 28 — Անտանտի երկրների կողմից Վերսալյան հաշտության պայմանագրի ստորագրումը Գերմանիայի հետ։

հուլիս, 28 — Արհմիությունների միջազգային միավորման (ամստերդամյան ինտերնացիոնալի) կազմավորումը։

հուլիս, 31 — Վեյմարյան սահմանադրության ընդունումը Գերմանիայի ազգային ժողովի կողմից։

օգոստոս, 1 — Հունգարական Սովետական Հանրապետության անկումը։

սեպտեմբեր, 10 — Սեն-Ժերմենի հաշտության պայմանագրի ստորագրումը Անտանտի երկրների և Ավստրո-Հունգարիայի միջև։

սեպտեմբեր — Մեքսիկայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։

1919, սեպտեմբեր—1920, հունվար — ԱՄՆ-ի հանքափորների և պողպատաձուլական արդյունաբերության բանվորների խոշորագույն գործադուլները։

սեպտեմբեր, 26—հոկտեմբեր, 5 — Երկաթուղայինների ընդհանուր գործադուլն Անգլիայում։

նոյեմբեր — Դանիայի ձախ սոցիալիստական կուսակցության կազմավորումը (1920 թ. նոյեմբերից, նրա Կոմինտերն ընդունվելուց հետո սկսեց կոչվել կոմունիստական կուսակցություն)։

նոյեմբեր — ԱՄՆ-ի ազգային բանվորական կուսակցության կազմավորումը (1920 թ. հուլիսին վերակազմվեց ԱՄՆ-ի ֆերմերա-բանվորական կուսակցության)։

1919 — Շվեդիայի ձախ սոցիալ-դեմոկրատական կուսակցության մբանները Կոմինտերնի մեջ (1921 թվականից սկսեց կոչվել կոմունիստական կուսակցություն)։

1920 թվական

Հունվար, 21—31 — Համազգային կոնգրեսը Լյուշնայում։ Ալբանիայի հռչակումը անկախ պետություն։

փետրվար, 23 — Երկաթուղայինների ընդհանուր գործադուլը Ֆրանսիայում։

մարտ, 1 — Հակահեղափոխական դիկտատուրայի հաստատումը Հունգարիայում։

մարտ, 13—17 — Կապպի պուտչը Գերմանիայում։

մարտ — ԱՄՆ-ի սենատի հրաժարվելը Վերսալյան հաշտության պայմանագիրը վավերացնելուց։

ապրիլ, 15 — Իսպանիայի կոմունիստական կուսակցության (ԻԿԿ) կազմավորումը։

ապրիլ — Բանվորական կոնգրեսի գումարումը Հավանայում (Կուբա),

որը բոլոր խոշոր արհմիությունները միավորեց Հավանայի բանվորների ֆեդերացիայում։

Հունիս, 4 — Տրիանոնյան հաշտության պայմանագրի ստորագրումը Հունգարիայի հետ։

Հուլիս, 19—օգոստոս, 7 — Կոմինտերնի II կոնգրեսը։

Հուլիս, 31—օգոստոս, 1 — Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցության (ԲԿԿ) հիմնադիր համագումարը Լոնդոնում։

Հուլիս — Սոցիալիստական ինտերնացիոնալի ստեղծումը։

օգոստոս, 10 — Իտալիայի Սևրի պայմանագրի ստորագրումը Թուրքիայի հետ։

Հոկտեմբեր, 1 — Ավստրիական հանրապետության սահմանադրության ընդունումը։

դեկտեմբեր, 25—30 — Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության համագումարը Թուրում, ֆրանսիական կոմունիստական կուսակցության կազմավորումը։

դեկտեմբեր — ԳԱՍԴԿ-ի հեղափոխական մասի և ԳԿԿ-ի միավորիչ համագումարը։

Գերմանիայի միացյալ կոմունիստական կուսակցության կազմավորումը։

1921 թվական

Հունվար, 21 — Իտալական սոցիալիստական կուսակցության պառակտումը։ Իտալական կոմունիստական կուսակցության կազմավորումը։

փետրվար — Սոցիալիստական ցենտրիստական կուսակցությունների միջազգային միավորման, այսպես կոչված II $^1/_2$ Ինտերնացիոնալի ստեղծումը։

մարտ, 16 — Առևտրական պայմանագրի ստորագրումը Անգլիայի և Սովետական Ռուսաստանի միջև։

մարտ, 21 — Մանսֆելդի հանքավայրերի բանվորների ընդհանուր գործադուլը Գերմանիայում, որը մարտի 23-ից վերածվեց զինված ապստամբության։

մարտ — Պորտուգալիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։

ապրիլ, 15 — «Սև ուրբաթը» Անգլիայում։

մայիս, 7—13 — Ռումինիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։

մայիս — Ամերիկայի միասնական կոմունիստական կուսակցության ստեղծումը։

Հունիս, 1 — Կանադայի բանվորական կուսակցության կազմավորումը (հիմնադիր համագումարը կայացավ 1922 թ. փետրվարի 22—23։ 1924 թ. վերանվանվել է կոմունիստական կուսակցություն)։

Հունիս, 22—հուլիս, 12 — Կոմինտերնի III կոնգրեսը։

Հուլիս, 3—19 — Հեղափոխական արհեստակցական և արտադրական միությունների միջազգային I կոնգրեսը, որը ձևավորվեց որպես արհմիությունների կարմիր ինտերնացիոնալ (Պրոֆինտերն)։

օգոստոս — «Խաղաղեցման պակտի» ստորագրումը Իտալիայի ֆաշիստների և ռեֆորմիստների միջև։

օգոստոս — Սնպարատ հաշտության պայմանագրի ստորագրումը ԱՄՆ-ի և Գերմանիայի միջև։

սեպտեմբեր — Բելգիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։

1921, նոյեմբեր, 12—1922, փետրվար, 6 — Վաշինգտոնի կոնֆերանսը։

դեկտեմբեր, 6 — Պայմանագիր Իռլանդիայի և Անգլիայի միջև Իռլանդական դոմինիոնի կազմավորման մասին։

դեկտեմբեր — Միասնական բանվորական ճակատի տակտիկայի մասին թեզիսների ընդունումը ԿԻԴԿ-ի կողմից։

դեկտեմբեր — Ամերիկայի լեգալ բանվորական կուսակցության ստեղծումը։

1922 թվական

Հունվար — Չիլիի կոմունիստական կուսակցության կազմավորումը և նրա ընդունվելը Կոմինտերն։

փետրվար — Առաջադիմական քաղաքական գործողությունների կոնֆերանսի (ԱՔԳԿ) կազմավորումը Չիկագոյի համագումարում։

մարտ, 25 — Բրազիլական կոմունիստական կուսակցության հիմնադիր համագումարը։

ապրիլ, 2—5 — Համաշխարհային բանվորական կոնգրեսի նախապատրաստական գծով երեք ինտերնացիոնալների ներկայացուցիչների կոնֆերանսը։

ապրիլ, 10—մայիս, 19 — Ջենովայի կոնֆերանսը։

ապրիլ, 16 — Ռապալոյի պայմանագրի ստորագրումը Սովետական Ռուսաստանի և Գերմանիայի միջև։ Դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը երկու երկրների միջև։

Հունիս, 15—հուլիս, 20 — Հաագայի կոնֆերանսը։

Հունիս — Ֆրանսիայի հեղափոխական արհմիութենական կազմակերպության՝ աշխատանքի ունիտար ընդհանուր կոնֆեդերացիայի (ԱՈՒԿԿ) կազմավորումը։

հուլիս, 5 — Կապակաբանա ֆորտի «տեննենտիստների» ապստամբությունը Ռիո դե Ժանեյրոյում։

օգոստոս, 1 — Հակաֆաշիստական ընդհանուր գործադուլը Իտալիայում։

1922, ամառ—1923, գարուն — Քաղաքացիական պատերազմը Իռլանդիայում։

Հոկտեմբեր, 28—29 — Ֆաշիստների «արշավանքը դեպի Հռոմ» և Մուսոլինիի կողմից իշխանության զավթումը Իտալիայում։

Նոյեմբեր, 5—դեկտեմբեր, 5 — Կոմինտերնի IV կոնգրեսը։

դեկտեմբեր, 30 — ՍՍՀՄ-ի կազմավորումը։

1922 — ԱՄՆ-ի զորքերի դուրս բերումը Կուբայից։

1923 թվական

Հունվար, 11 — Ռուրի մարզի օկուպացումը ֆրանսիական և բելգիական զորքերի կողմից և Ռուրի կոնֆլիկտի սկիզբը։

մայիս, 8 — Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Քերզոնի վերջնագիրը Սովետական Ռուսաստանին։

մայիս — II և II $^1/_2$ ինտերնացիոնալների միավորումը սոցիալիստական բանվորական Ինտերնացիոնալի մեջ։

օգոստոս, 11—14 — Ընդհանուր գործադուլը Գերմանիայում և Կունոյի կառավարության հրաժարականը։

սեպտեմբեր, 13 — Պրիմո դե Ռիվերայի ռազմա-միապետական դիկտատուրայի հաստատումն Իսպանիայում։

Հոկտեմբեր, 10—29 — Բանվորական կառավարությունը Սաքսոնիայում։

Հոկտեմբեր, 23—25 — Համբուրգի զինված ապստամբությունը։

Հոկտեմբեր, 16—նոյեմբեր, 12 — Բանվորական կառավարությունը Թյուրինգիայում։

նոյեմբեր, 4 — Նորվեգիայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։

1924 թվական

Հունվար, 21 — Վ. Ի. Լենինի մահը։

Հունվար-նոյեմբեր — Մակդոնալդի առաջին լեյբորիստական կառավարությունն Անգլիայում։

փետրվար, 2—6 — Դիվանագիտական և առևտրական հարաբերությունների հաստատումը ՍՍՀՄ-ի և Անգլիայի միջև։

փետրվար-մարտ — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Սովետական Միության և Իտալիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Հունաստանի միջև։

մարտ — Հունաստանի հռչակումը հանրապետություն։

Հունիս, 10 — Զինված ապստամբությունն Ալբանիայում և Ֆան Նոլի բուրժուա-դեմոկրատական կառավարության կազմավորումը։

Հունիս, 17—Հուլիս, 8 — Կոմինտերնի V կոնգրեսը։
Հունիս, 18 — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ՍՍՀՄ-ի և Դանիայի միջև։
Հունիս — «Մատեոտտիի ճգնաժամը» Իտալիայում Ավենտինյան բլոկի ստեղծումը։
Հունիս, 1924—Հուլիս, 1926 — «Զախ բլոկի» կառավարությունը Ֆրանսիայում։
Հուլիս, 16—օգոստոս, 16 — Լոնդոնի կոնֆերանսը։ Դաուեսի պլանի ընդունումը։
օգոստոս, 4 — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ՍՍՀՄ-ի և Մեքսիկայի միջև։
Հոկտեմբեր, 24 — Բրազիլիայում Անպարտելի զորասյան առասպելական արշավի սկիզբը Լ. Կ. Պրեստեսի ղեկավարությամբ։
Հոկտեմբեր, 28 — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ՍՍՀՄ-ի և Ֆրանսիայի միջև։
դեկտեմբեր — Հակահեղափոխական խռովությունն Ալբանիայում և բուրժուադեմոկրատական շարժման պարտությունը։

1925 թվական

Հուլիս, 10—21 — «Կապկային դատավարությունը» Տեննեսիի նահանգի Դեյտրոյտ քաղաքում (ԱՄՆ)։
Հուլիս, 31 — «Կարմիր ուրբաթ» Անգլիայում։
օգոստոս, 16 — Կուբայի կոմունիստական կուսակցության կազմավորումը։
օգոստոս — Կուբայի բանվորների ազգային կոնֆեդերացիայի (ԿՆՕԿ) ստեղծումը։
Հոկտեմբեր, 5—16 — Լոկարնոյի կոնֆերանսը։
1925 — ԳՍԴԿ Հայդելբերգյան ծրագրի ընդունումը։

1926 թվական

ապրիլ, 24 — Բարեկամության ու չեզոքության պայմանագրի կնքումը ՍՍՀՄ-ի և Գերմանիայի միջև։
մայիս, 4—12 — Ընդհանուր գործադուլն Անգլիայում։
մայիս — Ռեակցիոն զինվորական պետական հեղաշրջումը Պորտուգալիայում։
մարտ — Նացիոնալ-ցարանիստական կուսակցության կազմավորումը Ռումինիայում։
սեպտեմբեր, 8 — Գերմանիայի ընդունվելը Ազգերի լիգա։
նոյեմբեր — Իտալական կառավարության «արտակարգ օրենքները»։
նոյեմբեր-դեկտեմբեր — Կոմինտերնի ԳԿ VII ընդլայնված պլենումը։

1927 թվական

մայիս, 27 — ՍՍՀՄ-ի հետ դիվանագիտական ու առևտրական հարաբերությունների խզումը Անգլիայի կողմից։
Հուլիս — Վիեննայի պրոլետարիատի հակաֆաշիստական խոշոր ցույցերն ու գործադուլները։
օգոստոս, 23 — Սակկոյի և Վանցետտիի մահապատիժը։
1927 — «Արդյունաբերական կոնֆլիկտների և տրեդյունիոնների մասին» ռեակցիոն օրենքի ընդունումը անգլիական կառավարության կողմից։

1928 թվական

փետրվար — Կոմինտերնի ԳԿ IX պլենումը։
Հուլիս, 17—սեպտեմբեր, 1 — Կոմինտերնի VI կոնգրեսը։ Ծրագրի ընդունումը։
օգոստոս, 27 — Բրիան—Կելլոգի պակտի ստորագրումը Փարիզում։
սեպտեմբեր, 1 — Բուրժուական հանրապետության վերացումն Ալբանիայում և Ահմեդ Զոգուի հռչակումը թագավոր։
1928 — «Լիբերալ ալյանսի» կազմավորումը Բրազիլիայում։
1928 — Ընտրական ռեֆորմն Անգլիայում։

1929 թվական

փետրվար, 9 — Բրիան—Կելլոգի պակտը ժամկետից շուտ գործողության մեջ մտցնելու վերաբերյալ համաձայնագրի 1928 թ. Մոսկովյան արձանագրության ստորագրումը ՍՍՀՄ-ի, Լեհաստանի, Ռումինիայի, Էստոնիայի և Լատվիայի կողմից (Նրանց միացան փետրվարի 27-ին՝ Թուրքիան, ապրիլի 3-ին՝ Իրանը և ապրիլի 5-ին Լիտվան)։
փետրվար, 11 — Լատերանյան համաձայնագրերի ստորագրումը Իտալիայի ֆաշիստական կառավարության և Վատիկանի միջև։
1929, Հունիս—1931, օգոստոս — Երկրորդ լեյբորիստական կառավարությունը Անգլիայում։
Հուլիս — Կոմինտերնի ԳԿ X Պլենումը։
Հոկտեմբեր, 3 — Անգլո-սովետական դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը։
1929 — Ալբանական առաջին կոմունիստական խմբի կազմավորումը Կորչայում (Ալբանիա)։

1930 թվական

Հունվար — Յունգի պլանի ընդունումը։
փետրվար — Հունգարիայի կոմկուսի II համագումարը։ Ծրագրի և կանոնադրության ընդունումը։
մարտ, 6 — Գործազրկության դեմ բողոքի մասսայական ցույցերը ԱՄՆ-ում։
գարուն — Անգլիայի գործազուրկների ազգային արշավը դեպի Լոնդոն («սովյալ արշավը»)։
Հուլիս, 4 — ԱՄՆ-ի գործազուրկների I համազգային համագումարը։
սեպտեմբեր, 6 — Ռեակցիոն զինվորական հեղաշրջումը Արգենտինայում։ Գենեռալ Ուրիբուրուի դիկտատուրայի հաստատումը։
նոյեմբեր, 3 — Ժ. Վարգասի կառավարության իշխանության գլուխ անցնելը Բրազիլիայում։

1931 թվական

մարտ-ապրիլ — ԿԻԳԿ XI Պլենումը։
ապրիլ, 14 — Միապետության տապալումը և Իսպանիայի հռչակումը հանրապետություն՝ բուրժուադեմոկրատական հեղափոխության սկիզբը։
Հուլիս-օգոստոս — Սոցիալիստական բանվորական ինտերնացիոնալի IV կոնգրեսը։
օգոստոս — Մակդոնալդի գլխավորությամբ կոալիցիոն «ազգային կառավարության» կազմավորումը Անգլիայում։
դեկտեմբեր — Գործազուրկների «սովյալ արշավը» դեպի Վաշինգտոն։
դեկտեմբեր, 9 — Սահմանադրության ընդունումը Իսպանիայում։
դեկտեմբեր, 11 — Վեստմինստերյան statute։
1931 — Ռեպարացիաների գծով մորատորիումի սահմանումը Գերմանիայի համար։
1931 — Լեյբորիստական կուսակցության ճգնաժամը Անգլիայում։

1932 թվական

Հունվար, 21 — Չհարձակման պայմանագրի ստորագրումը ՍՍՀՄ-ի և Ֆինլանդիայի միջև։
փետրվար, 2 — Զինաթափման գծով միջազգային կոնֆերանսի բացումը Ժնևում։
մարտ — Իսպանիայի կոմկուսի IV համագումարը։
1932, Հուլիս—1938 — Իռլանդիայի մաքսային պատերազմը Անգլիայի հետ։
օգոստոս, 8 — Ֆերմերական գործադուլի սկիզբը ԱՄՆ-ի Միջին Արևմուտքի նահանգներում։
օգոստոս — Սանխուրխոյի հակահանրապետական խռովությունը Իսպանիայում։
օգոստոս-սեպտեմբեր — ԿԻԳԿ XII Պլենումը։
սեպտեմբեր, 15 — Ագրարային ռեֆորմի ընդունումն Իսպանիայում։
նոյեմբեր, 29 — Չհարձակման պակտի կնքումը ՍՍՀՄ-ի և Ֆրանսիայի միջև։
դեկտեմբեր, 7—10 — ԱՄՆ-ի ֆերմերական ազգային I կոնֆերանսը։

1933 թվական

Հունվար, 30 — Ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը Գերմանիայում։
փետրվար, 27 — Ֆաշիստների կողմից ռայխստագի հրկիզումը Բեռլինում։

փետրվար — Ռումինիայի պատմության մեջ պրոկեստարիատի խոշորագույն քաղաքական գործադուլը։

մարտ, 5 — Ֆաշիզմի դեմ գործողությունների միասնության վերաբերյալ կոչով ԿԻԳԿ-ի դիմումը։

մարտ, 9 — Բանկային արտակարգ օրենքը ԱՄՆ-ում։

մարտ, 17 — Գործողությունների միասնության համաձայնագրի կնքումը Մեծ Բրիտանիայի կոմկուսի և ԱԳԿ-ի միջև։

մարտ — Դոլֆուսի կառավարության ավտորիտար ռեժիմի հաստատումը Ավստրիայում։

1933, մարտ, 4—1945, ապրիլ, 12 — Ֆ. Ռուզվելտի կառավարությունը։

մայիս, 4 — Անգլիական թագին երդվելու վերացման մասին օրենքի ընդունումը Իռլանդիայում։

մայիս, 12 — ԱՄՆ-ի կառավարության՝ ֆերմերներին օգնություն ցույց տալու մասին օրենքը (ԱԱԱ)։

հունիս, 16 — ԱՄՆ-ի արդյունաբերության վերականգնման մասին օրենքի (ՆԻՐԱ) ընդունումը։

հուլիս — Իռլանդիայի կոմկուսի կազմավորումը։

օգոստոս — Բուրժուադեմոկրատական հեղափոխությունը Կուբայում։ Գեներալ Մաչադոյի դիկտատուրայի տապալումը։

սեպտեմբեր, 21—դեկտեմբեր, 23 — Ռայխստագի հրկիզման վերաբերյալ Լայպցիգի դատավարությունը։

հոկտեմբեր, 4 — Գերմանիայի դուրս գալը Ազգերի լիգայից։

նոյեմբեր, 16 — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև։

նոյեմբեր-դեկտեմբեր — ԿԻԳԿ XIII պլենումը։

դեկտեմբեր — «Բարի դրացու» քաղաքականության հռչակումը ԱՄՆ-ի կողմից։

1934 թվական

փետրվար, 6 — Ֆաշիստական խռովությունը Ֆրանսիայում։

փետրվար, 12 — Ընդհանուր գործադուլը և հակաֆաշիստական ցույցերը Ֆրանսիայում։

փետրվար — Ռեակցիայի ուժերին շուցբունդի ցույց տված զինված դիմադրությունը Ավստրիայում։

մայիս, 29 — «Պլատտի ուղղման» վերացումը։

հունիս, 9 — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ՍՍՀՄ-ի և Ռումինիայի միջև։

հունիս, 30 — «Երկար դանակների գիշերը» Գերմանիայում։

հունիս — Ֆրանսիական կոմկուսի կոնֆերանսը Իվրիում։

հուլիս, 16—19 — Ընդհանուր գործադուլը Սան Ֆրանցիսկոյում։

հուլիս, 27 — Գործողությունների միասնության պակտի ստորագրումը ՖԿԿ-ի և ՍՖԻՕ-ի միջև։

հուլիս — Նացիստական հեղաշրջման փորձը Ավստրիայում։ Դոլֆուսի սպանությունը։

օգոստոս, 17 — Գործողությունների միասնության վերաբերյալ Իտալիայի կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունների համաձայնագիրը։

1934 — Գործաղուրկների «սովյալ արշավը» դեպի Լոնդոն։

1934 — ԴՍԳԿ «Պրագայի մանիֆեստի» հրապարակումը։

նոյեմբեր, 13 — «Հասարակության մասին օրենքի» ընդունումը Անգլիայում։

1934—1940 — Լ. Կարդենասի պրեզիդենտությունը Մեքսիկայում։

1935 թվական

մարտ — Ազգային-ազատագրական ալյանսի կազմավորումը Բրազիլիայում։

մարտ, 20 — Նյուգորսվոլի գլխավորությամբ ԱԲԿ-ի կառավարության իշխանության գլուխ անցնելը Նորվեգիայում։

մայիս, 2 — Փոխադարձ օգնության վերաբերյալ ֆրանս-սովետական պայմանագրի ստորագրումը։

մայիս, 16 — Չեխոսլովակիայի միանալը փոխադարձ օգնության ֆրանս-սովետական պայմանագրին։

հուլիս, 5 — Աշխատանքային հարաբերությունների ակտի, կամ Վագների օրենքի ուժի մեջ մտնելը ԱՄՆ-ում։

հուլիս, 12 — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ՍՍՀՄ-ի և Բելգիայի միջև։

հուլիս, 14 — Հակաֆաշիստական ժողովրդական ճակատի ստեղծումը Ֆրանսիայում։

հուլիս, 25—օգոստոս, 20 — Կոմինտերնի VII կոնգրեսը։

օգոստոս, 14 — Սոցիալական ապահովության վերաբերյալ I ֆեդերալ օրենքը ԱՄՆ-ում։

օգոստոս, 31 — «Չեզոքության մասին» օրենքի ընդունումն ԱՄՆ-ում։

1935, հոկտեմբեր—1936, մայիս — Իտալա-եթիոպական պատերազմը։ Եթիոպիայի զավթումը Իտալիայի կողմից։

1935—1936 — Միասնական բանվորական և ժողովրդական ճակատի համար մղված պայքարի վերելքն Արգենտինայում։

1936 թվական

հունվար, 15 — Ժողովրդական ճակատի ծրագրի հրապարակումը Իսպանիայում։

հունվար — Ժողովրդական ճակատի ծրագրի ընդունումը Ֆրանսիայում։

փետրվար, 16 — Պառլամենտական ընտրություններում ժողովրդական ճակատի տարած հաղթանակը Իսպանիայում։

փետրվար — Մեքսիկայի աշխատավորների կոնֆեդերացիայի (ՄԱԿ) ստեղծումը։

մարտ — ԱԲԿ-ի և ԱՈՒԲԿ-ի միավորումը Ֆրանսիայում։

ապրիլ-մայիս — Պառլամենտական ընտրություններում ժողովրդական ճակատի հաղթանակը Ֆրանսիայում։

մայիս-հունիս — Գործադուլային լայն շարժումը Ֆրանսիայում։ Մատինյոնյան համաձայնագրի ստորագրումը ԱԲԿ-ի և ֆրանսիական արդյունաբերողների ընդհանուր կոնֆեդերացիայի միջև։

1936, հունիս—1937, հունիս — Ժողովրդական ճակատի վրա հենվող Լ. Բլյումի կառավարությունը Ֆրանսիայում։

հուլիս, 11 — Ավստրո-գերմանական համաձայնագրի ստորագրումը։

հուլիս, 18 — Հանրապետության դեմ գեներալ Ֆրանկոյի ֆաշիստական խռովության սկիզբը Իսպանիայում։

հուլիս — Իսպանիայում գերմանա-իտալական ինտերվենցիայի սկիզբը։

1936, հուլիս—1937 — Մադրիդի պաշտպանությունը։

1936, հուլիս—1939, մարտ — Իսպանական ժողովրդի ազգային-հեղափոխական պատերազմը ֆաշիստական խռովարարների և իտալա-գերմանական ինտերվենտների դեմ։

սեպտեմբեր, 4 — Լարգո Կաբալյերոյի գլխավորությամբ ժողովրդական ճակատի կառավարության կազմավորումն Իսպանիայում։

սեպտեմբեր — Խաղաղության միջազգային կոնգրեսը Բրյուսելում։

հոկտեմբեր, 1 — Ինքնավարության տրամադրումը Բասկոնիային։

հոկտեմբեր, 7 — Ագրարային ռեֆորմի վերաբերյալ օրենքը Իսպանիայում։

հոկտեմբեր, 25 — «Բեռլին—Հռոմ առանցքի» գերմանա-իտալական համաձայնագրի ստորագրումը։

հոկտեմբեր — Ֆաշիստական «քառամյա պլանի» գործողության մեջ մտնելը Գերմանիայում։

հոկտեմբեր — Կանոնավոր ժողովրդական հանրապետական բանակի կազմավորման մասին դեկրետները Իսպանիայում։

նոյեմբեր, 25 — «Հակակոմինտերնական պակտի» ստորագրումը Գերմանիայի և Ճապոնիայի միջև։

դեկտեմբեր — Չիլիի աշխատավորների կոնֆեդերացիայի (ՉԱԿ) կազմավորումը։

1937 թվական

մարտ — Ֆաշիստական խռովարարների և ինտերվենտների ջախջախումը Գվադալախարայի շրջանում (Իսպանիա)։

մայիս, 17 — Նեգրինի գլխավորությամբ ժողովրդական ճակատի նոր կառավարության կազմավորումը Իսպանիայում։

հուլիս, 26 — Գործողությունների միասնության վերաբերյալ նոր համաձայնագիրը Իտալիայի կոմունիստական և սոցիալիստական կուսակցությունների միջև։

հոկտեմբեր, 5 — ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռուզվելտի «կարանտինային ճառը»։

նոյեմբեր, 6 — Իտալիայի միանալը «հակակոմինտերնական պակտին»։

նոյեմբեր — Նոր բրազիլական սահմանադրությունը, որը Բրազիլիան հռչակում էր կորպորատիվ պետություն։

դեկտեմբեր — Իտալիայի դուրս գալը Ազգերի լիգայից։

1937 — Նոր սահմանադրության ընդունումը Էյրե անկախ պետության կողմից։

1938 թվական

փետրվար — Շուշնիգի բերխտեսգադենյան համաձայնագիրը Հիտլերի հետ։

փետրվար — Կարոլ II-ի անձնական դիկտատուրայի հաստատումը Ռումինիայում։

մարտ, 11—12 — Ավստրիայի զավթումը ֆաշիստական Գերմանիայի կողմից (անշլյուս)։

մարտ, 18 — Օտարերկրյա նավթային ընկերությունների ձեռնարկությունների ազգայնացման մասին դեկրետը Մեքսիկայում։

սեպտեմբեր, 29—30 — Մյունխենյան համաձայնագիրը Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Գերմանիայի միջև։

հոկտեմբեր, 25 — Ժողովրդական ճակատի հաղթանակը պրեզիդենտական ընտրություններում և Ժողովրդական ճակատի կառավարության ստեղծումը Չիլիում։

նոյեմբեր — Համաամերիկյան երկրորդ արհմիութենական կենտրոնի՝ Արտադրական արհմիությունների կոնգրեսի (ԱԱԿ) կազմավորումը Պիտսբուրգում կայացած համագումարում։

1939 թվական

հունվար, 30—փետրվար, 1 — Գերմանիայի կոմկուսի Բեռնում կայացած կոնֆերանսը։

մարտ, 5—6 — Հակահեղափոխական պուտշը Մադրիդում։

մարտ, 17 — Բարեկամության և չհարձակման պայմանագրի, այսպես կոչված, Իբերիական պակտի ստորագրումը Իսպանիայի և Պորտուգալիայի միջև։

մարտ, 23 — Գերմանա-ռումինական տնտեսական պայմանագրի ստորագրումը։

ապրիլ, 1 — Իսպանական հանրապետության անկումը։ Ֆաշիստական դիկտատուրայի հաստատումը ամբողջ Իսպանիայում։

ապրիլ, 7—12 — Ալբանիայի օկուպացումը ֆաշիստական Իտալիայի կողմից։

մայիս, 22 — Իտալիայի և Գերմանիայի միջև ռազմական և քաղաքական դաշինքի՝ «պողպատե պակտի» ստորագրումը։

մայիս — Չհարձակման պակտի ստորագրումը Դանիայի և Գերմանիայի միջև։

մարտ-օգոստոս — Անգլո-ֆրանս-սովետական բանակցությունները։

օգոստոս, 23 — Չհարձակման սովետա-գերմանական պակտի ստորագրումը։

օգոստոս — Կուբայի կոմկուսի միավորումը Կուբայի հեղափոխական միության հետ և միասնական մարքսիստական-լենինյան կուսակցության՝ հեղափոխական-կոմունիստական միության (ՀԿՄ) կազմավորումը։

սեպտեմբեր, 1 — Գերմանիայի հարձակումը Լեհաստանի վրա։ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը։

սեպտեմբեր, 2 — Դանիայի կողմից չեզոքության հռչակումը երկրորդ համաշխարհային պատերազմում։

սեպտեմբեր, 1—3 — Շվեդիայի և Նորվեգիայի կողմից չեզոքության հռչակումը երկրորդ համաշխարհային պատերազմում։

սեպտեմբեր, 3 — Անգլիայի և Ֆրանսիայի պատերազմ հայտարարելը Գերմանիային։

սեպտեմբեր — Իռլանդական կառավարության՝ չեզոքության մասին հայտարարությունը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1. *Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության համաշխարհային-պատմական նշանակությունը* 9

Գլուխ 2. *Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի առաջին էտապը (1918—1939 թթ.)* . 29

Գլուխ 3. *Միջազգային բանվորական շարժումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո։ Կոմինտերնի կազմավորումը և նրա գործունեությունը (1919—1923 թթ.)* 47

Գլուխ 4. *Միջազգային հարաբերությունները Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո* 80

Գլուխ 5. *Գերմանիան 1918—1939 թթ.* 108

Գլուխ 6. *Անգլիան 1918—1939 թթ.* 186

Գլուխ 7. *Ֆրանսիան 1918—1939 թթ.* 244

Գլուխ 8. *ԱՄՆ-ը 1918—1939 թթ.* 286

Գլուխ 9. *Իտալիան 1918—1939 թթ.* 352

Գլուխ 10. *Իսպանիան 1918—1939 թթ.* 381

Գլուխ 11. *Ավստրիան 1918—1939 թթ.* 415

Գլուխ 12. *Հունգարիան 1918—1939 թթ.* 425

Գլուխ 13. *Ռումինիան 1918—1939 թթ.* 441

Գլուխ 14. *Ալբանիան 1918—1939 թթ.* 452

Գլուխ 15. *Հունաստանը 1918—1939 թթ.* 458

Գլուխ 16. *Բելգիան 1918—1939 թթ.* 464

Գլուխ 17. *Նիդերլանդիան 1918—1939 թ.* 471

Գլուխ 18. *Սկանդինավյան երկրները 1918—1939 թթ.* 478

Գլուխ 19. *Ֆինլանդիան 1918—1939 թթ.* 494

Գլուխ 20. *Իրլանդիան 1918—1939 թթ.* 501

Գլուխ 21. *Պորտուգալիան 1918—1939 թթ.* 511

Գլուխ 22. *Կուբան 1918—1939 թթ.* 516

Գլուխ 23. *Մեքսիկան 1918—1939 թթ.* 525

Գլուխ 24. *Արգենտինան 1918—1939 թթ.* 534

Գլուխ 25. *Բրազիլիան 1918—1939 թթ.* 545

Գլուխ 26. *Չիլին 1918—1939 թթ.* 556

Գլուխ 27. *Կանադան 1918—1939 թթ.* 565

Գլուխ 28. *Միջազգային բանվորական շարժումը և Կոմունիստական ինտերնացիոնալը 1924—1939 թթ.* 575

Գլուխ 29. *Միջազգային հարաբերությունները 1924—1939 թթ.* 618

Աղբյուրներ և գրականություն 648

Ժամանակագրություն 654

ՆՈՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության է
ներկայացրել համալսարանի
ընդհանուր պատմության
ամբիոնը

Թարգմանեց՝ Ս. Լ. ՀԱՎԱՀՆՈՒՄՅԱՆ

Հրատարակչության խմբագիր՝
Օ. Պ. Համբարձումյան

Գեղարվեստական խմբագիր՝
Ն. Ա. Թովմասյան

Տեխնիկական խմբագիր՝
Ֆ. Գ. Տոնոյան

Վերստուգող սրբագրիչներ՝
Ս. Վ. Ղազարյան,
Ս. Ա. Ղալբախչյան

Պատվեր 1223։ Տպաքանակ 3000։
Հանձնված է շարվածքի 04. 09. 1982 թ.։
Ստորագրված է տպագրության 11. 01. 1983 թ.։
Թուղթ № 1, չափսը՝ 70×108¹/₁₆։ Տառատեսակը՝ «Սովորական»։
Տպագրության եղանակը՝ «Բարձր»։
Հրատարակչական 49,5 մամուլ։
Տպագրական 41,5 մամուլ=58,1 պայմանական մամուլ։
Գինը՝ 1 ռ. 80 կոպ.։
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ. № 1։
Издательство Ереванского университета,
Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան,
Երևան, Ավոբյան փ. № 52։
Типография Ереванского университета,
Ереван, ул. Абовяна № 52.